Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

5826

235
Ч-34

1 OCT 2009

206.2
L-36

P 100 S#

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԵԱՑ

ՎԱՐՔ ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՑ

ՅԻՇԱՏԱԿ

Մ Ա Դ Ա Ֆ Ե Ա Ն

Տ Ո Հ Մ Ի Ն

ՍՊԱՐԱՊԱՏ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

235
Վ-34
143

ՎԱՍՐԻ

ԵՒ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

Ս Ր Բ Ո Յ

ՀԱՏԿՈՒԹԻՒՆ ՔԱՂԱԾԱԼՔ Ի ՀԱՒԱՏՔՆՏՐԱՑ

Ե 006
4963

ՀԱՏՈՐ Ա.

Z.U.Խ.Z ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A Публичная Библиотека
7/XI-1922
именн. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՑԱՄՍԻ – 1874 – ՌՑՀԳ

4797

09.08.2013

ՋԵԿՈՒՑՈՒՄՆ

Զարմանալի և երկնահրաշ էր հանդէս աստուածախրախոյս սիրոյն և մըցանաց, զոր անդատին յաւէլին ժամանակաց քրիստոսական կրօնիցս ուղղութեան՝ զինուորեալս երևեցուցանէր եկեղեցի, յաւէլտրդն և՛ի հանդիսադիրն աւետարծոյց, և՛ ի միածին Որդին Աստուծոյ, և փոխանակ անպարտական և փըլը կագործ արեան նորա՝ զարիւն և զկեանս մատղիւը յօժարութեամբ նուիրելով:

Ցիրաւի էր ապաքէն հաւատացելոց նախնի ժամանակացն՝ ոչ միայն ընդ առաքինակրօն հանդէս վըկայութեան նոցա սիրանալ, տօնս և յիշատակս՛ի պատիւ նոցա սահմանել, վկայարանս՛ի վերայ գերեզմանաց նոցա բարձրացուցանել, այլ և՛ի խրախոյս և՛ի յորդոր նմանութեան առ յաւէտ եկեղեցին՝ դիտել տալ՛ի մատենի և զպատմութիւն աստուածհաճոյ վարուց նոցա և զիտառատ նահատակութեան: Եւ վկայեն եկեղեցասատում դպրութիւնք և յիշատակարանք, զի՛ի մոլեգնել շամբշութեամբ կայսերաց և բռնաւորաց՝ ոխերիմ թշնամեաց հաւատոցն Քրիստոսի և Աշմարտութեան աւետարանին, և՛ կարծել՝ արեամբ վկայից շիջուցանել զսէրն զայն աստուածահրատ, յորժամ աւելանս և ժողովս կարգէին, հրամանս պատուիրանաց ընդ ամենայն աշխարհ առաքէին, զսաստ ընդ ողբանաց խառնէին, զպատիւ և զփառս՝ ընդ տանջանաց և անարգութեան, ոչք աշխուժականի իմն և երկնաւորաց ցանկա-

ցեալքն էին վառաց քրիստոնեայք, ոչ՝ ի սպառնալեաց նոցա ահաբեկեալք և ոչ յողոքանացն տկարացեալ, զիմեին խայտալով յաստարեզ անդր՝ քան զգրգռանս աշխարհալար կենաց՝ զմահն վասն Քրիստոսի ընտրելով։ Այլ ի խառն բազմութեան հանդիսատեսացն՝ գոյին և վկայողիր նոտարք առ՝ ի յեղեցւոյ կարգեալք, ոտց գործ էր հաւատարիմ գգուշութեամբ տալ՝ ի քարտի զոր լսէինն և տեսանէին, զբան և զհրապոյրս դատաւորաց, և զրբոյն առ նոսա պատասխանիս, զազգս ազգս տանջանաց և զմահ վկայութեան, զոր յունկն հաւատացելոց ընթերցեալ՝ ամիսուիէին ապա՝ ի գիւանս եկեղեցւոյ։ Այս սկիզբն եղև Մարտիրոսոց կոչեցեալ գրոց կամ Վկայաբանութեանց, զոր երկիւղած գգուշութեամբ պահպանեալ եկեղեցեացն արևելից և արևմտեայց՝ հասուցին մինչև առ մեզ։

Եւ զի նոյնպիսի կարգօք բարեպաշտութեան պայծառացաւ և Հայաստան եկեղեցի, յորում աշխարհն և բազումք ձօնեցան երկնից վկայական մահուամբ, յայտ անտի է՝ զի եհաս մեզ ընթեռնուլ և զգեղեցիկ վկայաբանութիւն սրբոյ առաքելոյն Թադէի, և զվկայակից նորա՝ զաթբայադատերն Սանդխտոյ, զարձանագրեալն՝ որպէս հաւանութեան Թուի, ՚ի ժամանակացս անտի նոցա։ Սկսա և յայլոց ազգաց սովրեցան յեղուլ՚ի մեզ, և առաւել՚ի յունէն և յասորւոյն, և մատուցանել տալ՚ի վայելս սրբատեր բարեպաշտից։ Զորս ահաւասիկ հասընտիր քաղեալ խնամով՚ի ձառընտիր մատենից, կամ եղև մեզ հրաման տարակել տպագրութեամբ, և սկիզն ունիմք զի հաճոյական ընծայեացին՝ յիշատակարանքն պանծալիք, յուշարարք յաղթանակացն հաւատոց, յանդիմանութիւնք տխուր ժամանակացս մերոց, յորում օր ըստ օրէ նուազեալ պակասեն հաւատք և թուլացեալ տկարանան հրահանգք բարեպաշտութեան։

Եւ զի յայլևայլ ժամանակս և՛ ի զանազանից լեալ են Թարգմանութիւնքս, վասն որոյ և չիարեմք ինչ ստուգութեամբ ասել Թէ ևրբ կամ յորոց փոխադրեցան՝ ի մեզ. զի Թէպէտ յոմանց և՛ ի հնութենէ լեզուին մարթ է կարծել զմանոյ Թէ անդստին՝ ի հինգերորդ դարէ Թարգմանեցան, ապա և յԱտոմայ՝ գագիայ վանից առաջնորդէ, այլ շատք՝ ի գրիգորէ կաթողիկոսէ Պահլաւունւոյ՝ որ Վկայասէրն կոչեցաւ, և յաշակերտէ նորա՝ ի Կիրակոսէ: Վասն որոյ և զանուանս նոցա, մանաւանդ զԳրիգորեայ, կրեն ոմանք՝ ի յիշատակարանս: Զի և ինքն իսկ Վկայասէր ասէ ուրեք յինքնագիրսն յիշատակարանին, Թէ «(Զգրեցոյ) զվարս քաղաքավարական պատմութեանց՝ զոր ոչ գոյր առ մեզ հայ գրով, մեծ աշխատութեամբ Թարգմանեցաք՝ ի յունականէն՝ ի մեր գիր և բառ»:

Մարթ, նա և արժան էր, յաւելուլ՝ ի գիրս յայս և ծանօթութիւնս բազումս և քննութիւնս կարեւորս. այլ մեք զանհրաժեշտն ևեթ ամփոփեցաք՝ ի տուրես ինչ տեղեկութիւնս հաւատոմս, զի մի յոյժ ծանրացի մատեանս. և զի արդէն յաւելեալ կանխեալ էր՝ ի սոյն վաստակ՝ բարւոյ յիշատակաց արժանաւորն՝ Հ. Մկրտիչ Վ. Ակերեան, ուր և առաքեմք զցանկայողսն, ի յօրինեալն առ՝ ի նմանէ Վիճատառ վարս և վկայաբանութիւնս Սրբոց:

Իբրև յերեսուն ձառընտրաց հաւաքեցաք զամ փոխեալսն՝ ի մատենիս: Թէպէտ և բազումք՝ ի գրոց հայոց տան հինք էին և ընտիրք, այլ որիշ և այլ եայլս՝ ի միմեանց ունելով չատս և վկայաբանութիւնս, յաձախ՝ ի վերայ միոյ եւեթ օրինակի տան պեցաք առնել զտպագիրս, յորմէ ուրեք մեծին կամ անհմանալի միայ բանիցն:

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՑ

Վկայաբանութիւն Սրբոյն Աբդայ Եպիսկոպոսի և Որմզդանայ և Սահակի և Բեհիսարհիի Սարկաւագի։

Ի ժամանակս Թագաւորութեան Հռոմոց Թէոդոսի Փոքու, և՝ ի քահանայութեան աթանարիշտ արքային Պարսից Յազկերտի, շարժեաց սատանայ պատերազմ՝ ի ձեռն անօրէնն Թագաւորին՝ ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ։ Եւ լուաւ Աբդայ եպիսկոպոսն Պարսից, և շարժեցաւ աստուածային նախանձուն, և հրով վառեաց զսիւռխոնն (1) Պարսից, զոր տաճար հրոյ անուանէին, յորում զՀուրն բորբոքէին հրապաշտքըն։ Եւ զայն լուեալ մոգուցն Պարսից՝ պատմեցին արքային. և նորա կոչեցեալ զսուրբ եպիսկոպոսն, և նախ հանդարտութեամբ մեղադիր նմա վասն գործոյն այնորիկ լինէր. և ապա հրամայէր նմա վերանգամ շինել զսիւռխոնն զոր այրեաց։ Իսկ սուրբ եպիսկոպոսն հաւատակաբանէր առաջի արքային և ասէր, թէ՝ Ընդհանար է գործեալ վերատին շինել զիա ինձ, զոր այրեցի, զանոր տէր տեղի մոխրատապաշտից, և մանաւանդ թէ անաստուածից։

Եւ՝ ի նմին ժամու առաջի Թագաւորին ապանին զսուրբ եպիսկոպոսն Աբդայ, և զամենայն եկեղեցին աւերեցին, և զան երեսուն զմբրիկ հալածանացն՝ ի քրիստոնէից ոչ վերացոյց։ Եւ հրամայեաց մոգուցն զբանաշուութեան գաւազանսըն ընդունել և հատանել

(1) Ի Յունէն Πυρεῖον որ է Աստուան։

զամանց զձեռս և զոտս, և զամանց զականջս և զունչս, և զամանց զերկոսին աչսն խաւարեցուցանել. և զամանց խակ զվկային սրբոց, ի գլխոյն մինչև ի լանջսն մորթել. և զամանս եղեգամբք ձեղքեալ զմարմինս՝ քանդէին. և զամանց զձեռս և զոտս կապէին և ձարպով օծանէին, և ընկենուն ի խորափոսս գբոց, և արկանէին անդ մինչև բազումն և աքիսս, և զպռանչանային խորտիճեան գբոյն, զի մի կարասցեն կայտառքն փախչել. և ի քաղցոյն զկծեալք կրծէին զմարմինս սրբոցն: Եւ զայս առնելով անօրինացն՝ ոչ կարացին երկեցուցանել զերանելի վկայն Քրիստոսի. այլ մանաւանդ յորժամ տեսանէին զայնպիսի խոտամբերութիւն տանջանաց՝ ինքնակամ յօժարութեամբ, և փափաքանքն մեծաւ ընդանային ի մահ, և գոհանալով զԱստուծոյ՝ կատարէին զընթացս իւրեանց:

Եւ ոմն մի ի մեծամեծ իշխանացն Պարսից, մեծատուն յոյժ և բազմատանեայ հաւատով, որում անուն էր Որմզդան, զնամանէ լուաւ սրբոյ՝ եթէ բազմատանեայ է. կոչեաց զնա զառաջեաւ, և պատուիրեաց նմա, զի մի առնուանեսցէ զինքն բազմատանեայ, այլ զի ուրացցի զՔրիստոս: Եւ առ Որմզդան ցաւքայ. Ո՛վ ազբայ, եթէ ոք ի քո ծառայից ուրացցի զքեզ՝ որ մահկանացուդ ես, և ապստամբեալ առ այլոգի թագաւոր երթիցէ, մեծաց տանջանաց և մահու արժանի է, ոչչափ ևս առաւել մանաւանդ պատուհասից արժանի է՝ որ զԱստուած երկնից և երկրի ուրանայցէ, զանմահ թագաւորն յաւիտենական, անշէջ հրոյն մատնեացի:

Զայս լուեալ ազբայի ընկէց զնա ի պատուոյ իշխանութեան, և արտաքսեաց զնա ի տանէ և ի տասցուածոյ իւրոց. և հրամայեաց մերկացուցանել զնա ի պատմուճանաց իւրոց, զի արածեսցէ զուղտսն թագաւորին մերկ և աշխատեալ զինն ուղտուցն, և առաքեաց նմա շապիկ, և ասէ. Յիշեա զքո զառաջինն ազնուականութիւնն և զփառսն, և զքաղցրն կեանքն, և ուրացիր զքրիստոնէութիւնդ, և հաւատա՛ պաշտամանց մերոց: Եւ նորա լուեալ զմահաշունչ բանս թագաւորին, և առեալ զշապիկն պատառեաց բազում ծոմիս: Խակ ազբայի բարկացեալ սրտմտութեամբ՝ ի

վերայ նորա, հրամայեաց ի տեղւոջն սպանանել զնա. և կատարեցաւ ի նմին ժամու սրով վասն ի Քրիստոս հաւատոյն:

Եւ զոմն մի այլ ի մեծատուն իշխանացն Պարսից քրիստոնեայ, որ ունէր ծառայս հազար, որոյ անուն էր Սահն, զոր բազում անգամ ջանայր արքայն ի քրիստոնական հաւատոյն ի մոգութիւն դարձուցանել. և յորժամ ոչ կարայր ածել ի հաւանութիւն՝ զատոյց ի հազար ծառայիցն, և զմինն՝ որ քան զամենեսեան անարդ էր և անպիտան և ազտեղի և դարշատեսիլ դիմօք՝ մեծացոյց, և ետ նմա զտէրն իւր ի ծառայ, և զտիկինն ի կնութիւն նմա. և հրամայեաց նոցա ծառայել նմա հնազանդութեամբ. և այն ամենայն նեղութիւնք արհամարհանաց եկին ի վերայ նորա, և ոչ եկաց ի բաց ի յուսոյն Քրիստոսի: Կալան և զոմն ի սարկաւագաց եկեղեցւոյն՝ որում անուն էր Բենիամին, և արկին ի բանտ զերկուս ամս:

Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ առաքեցան զեսպանք ի Թագաւորէն Հոռոմոց ի Թէոդոսէ ի Պարս: Եւ լուան զսարկաւագէն զԲենիամինէ, եթէ վասն Քրիստոսի սպասէ արդեւնաւ կայ ի բանդի, խնդրեցին Յազկերտէ արքայէն հանել զնա ի բանդէն: Եւ ասէ արքայն. Վատահացուսցէ զմեզ ձեռնագրով իւրով, զի ի Պարսից մոգ մի դարձուսցէ ի հաւատս իւր. և ոչ վարպապետութեամբն իւրով ուսուսցէ զոք յերկիրս մերում; և ապա վասն խնդրոյ ձերոց ազատեցից զնա ի կապանացն: Եւ լուեալ զայս Բենիամին, ոչ առ յանձն առնել զհրամանս արքային, ասելով. Ընդունար է ինձ արդեւնել զկնարհն Աստուծոյ իմոյ ի մարդկանէ. այլ արասցէ կարող իցեմ՝ լուսաւորեմ զնաւարեալն ի մոլորութենէ, զի մի պատիժս կրեցից ընդ Թաքուցանողին զտաղանդ տեառն իւրոյ: Եւ արքայն Պարսից վասն աղերսանաց և խնդրոյ դեսպանացն կայսերն Հոռոմոց Թէոդոսի՝ ազատեաց զերանելի խոստովանողն Քրիստոսի զսարկաւագն Բենիամին: Իսկ նորա եկեալ ոչ դադարէր յուսուցանելոյ և ի վերստին զկրակին պաշտօնեայն և զմոգն Պարսից: Եւ յետ ամի միոյ անցանելոյ, յորժամ դարձան դեսպանքն Հոռոմոց, ազդեցին վասն նորա արքային Յազկերտի զոր առնէր, և

Հրամայեաց բերել զնա. և կալեալ տարան զառաջեաւ, և առեալն զնա ուրանալ՝ի հաւատոյն, և երկիր պագանել արեգական և լրակի: Եւ նա առաւածխնամ բանիւք յանդիմանէր զանհաւատութիւն նոցա և ասէր. Աստուածք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն՝ի նեղջոյ երկնից: Ես զարարեալս աստուած ոչ խոստովանիմ, և ոչ մնոյց և Հրոյ զոհ մատուցանեմ: զոր ինչ կամիս՝ արա վաղվաղակի:

Յայնժամ Հրամայեաց անօրէնն արքայն Յազկերտ, ընդ քանեսին եղնդունս ձեռացն և առնել արեալ եղեգունս վարել. իսկ արիւնն իջեալ զյորդաւուխս առաւ Հասեր՝ի ձեռացն և յոտիցն և առդանէր զերկիրն: Եւ դարձեալ արեցին երկայնատոյն եղեգն, և արկին՝ի յարուածիւն նեղջոյն անդամոյն. և առեալ Հանեին և արկանէին. և յայնչափ դառն և չարակրաւիծ կուժ կառանացն՝ ոչ զանգիտեալ զարհուրեցաւ. այլ փառաւորէր զԱստուած և զոհանայր, և՛ի զոհանայ և յաղօթելոյ ոչ դադարէր: Եւ աղաչէաց զդահիճսն փոքր ինչ Թուլացուցանել զտանջանսն, և ասէ. Ներեցէք վայր մի, զի ունիմ ինչ խօսել ընդ ձեզ. և նոքա Թոյլ եառնն նմա: Իսկ նա ամբարձեալ զձեռս իւր յերկինս ընդ արևելս և սկսաւ աղօթել և ասել այսպէս. Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Տէրդ և արարիչդ ամենայն արարածոց, որ առաքեցեր զիաճին Որդիդ քո, զՀառապայթդ և զնախարտդիր հաւթեան քո, որ կրկ զամենայն բանիւ զօրութեամբ իւրով, որ եկն և կՀ յարդանդ կուսին կամաւ քո, և մարմին զգեցաւ Հշմարտապէս և առանց կարծեաց, որ՛ի յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ, և Հանապարհորդեաց ընդ ամենայն մարմնական կիրս կենցաղոյս, և խաչի և մահու Համբերեաց. Թաղեցաւ և յարեաւ յաւուր երրորդի, և Համբարձաւ առ քեզ, Հայր, յերկինս, ուր էրդ յառաջ. և զսուրբ զՀոգին զեաւիկոյն և զմիանջենաւորակիցն առաքեաց յաշխարհ, որով ծանոյց զաստուածութիւն քո: Աղաչեմ զքեզ, Տէր իմ և Աստուած, սուր ինձ զպատիկն՝ զոր խնդրեցի, զի զոմ ինքնին գիտես, զի ես ինձէն խնդրեցի. զի ամենայն մտօք և ոգւովք և կենօք սիրեցի զքեզ, զի առանց զքեզ և ուրախ եղէց և Հանգեայց. և այլ մի՛ ես կացից յաշ

խարհի, և տեսանիցեմ զբարչարանս ժողովրդեանն, և զաւերն եկեղեցեաց քոց, զկործանումն սեղանոյն, և զնեղութիւն սրբոց ուխտին, զվհատութիւնն հաւատացելոցն, զզանդիտանս դարձելոցն՝ ի չքմարտութենէն. այլ յոր կոչեցայս՝ ի սմին հաստատուն կացից, և յոր հրաւիրեցայն՝ զնոյն և կատարեցից արդեամբք: Եւ եղէց օրինակ ամենայն ժողովրդեան քոմէ՝ որ յարևելս, և տայց զարիւն իմ առաջի նոցա, և առից ընդ նոսա զկեանս իմ, ուր ոչ հոգն է և ոչ ծուխք, ոչ տրտմութիւն և ոչ յոյզք խորհրդոց, ոչ սպառնալիք և ոչ ահք թագաւորաց. ոչ որ կոչէ և երկեցուցանէ, և ոչ որ տագնապէ, և զարհուրեցուցանէ: Լուծութիւն ոտից քեւ զօրացի, Հանապարհդ ամենայն. վաստակք անդամոց քո հանգիցէ, օծեալդ. վիշտք սրտիս քո մոռացին, բաժակ փրկութեան մերոյ. վտակք արտասուաց աչաց քո արբեցին, մխիթարութիւն ցնծութեան մերոյ:

Եւ իբրև առաց զայս, և մինչդեռ կամէր յերկարել զաղօթան, վազվազակի եղ Հրաման յարքայէ ներել նմա եթէ երկիր պագանիցէ արեգական և կրակի, ապա թէ ոչ՝ մի թողացուցանել նմա զտանջանսն, և այնու տանջել զնա ընդ երկար: Եւ Հարցեալ թէ զո՞ Հիցէ, և նորա ոչ Հաւանեալ և ոչ Համարեալ զտանջանսն, Հրամայեաց արքայն երկայն գաւազան ցցել երկաւայր սլաքով, և Հարկանել ընդ որովայն նորա: Եւ այնպէս անպարտել զօրականն Քրիստոսի աւանդեաց զՀոգին՝ ի ձեռս Հրեշտակաց, ՝ի մարտն առնոյ՝ ի քանն և ջրոս. փառաւորեալ զՀայրն և զՄորդի և զսուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոյն Աբդէլմեհի։

Սկիզբն արարքս նահատակութեան սրբոյն Աբդէլմեհի, որ Թարգմանի Ծառայ Քրիստոսի. նոյն պէս և յաղագս սքանչելի զօրութեանցն և բժշկութեանցն՝ զոր առնէր Աստուած յանուն նորա՝ առնեցուն որ ապաւինէին ի նա։ Գանգի արդարև սքանչելի է Աստուած ի սուրբս իւր, և փառաւորեալ է մահ նոցա՝ առաջի նորա. և աղօթից նոցա լսէ հանապազ, և փրկէ զժողովուրդ իւր ի ձեռն բարեխոսութեան նոցա, և նահատակութեամբ նոցա յամօթ առնէ զանաստուածսն դիւաց, և զխորամանկութիւնն վիշապին խորտակեալ խափանէ, որ մարտնչէին ընդ սուրբս իւր։ Նոքա արմատ կենաց են, և տան առողջութիւն ախտացելոց, ըստ անսուտ բանին Տեառն, թէ՝ Որ հաւատայ ինձ՝ զգործսն զոր ես գործեմ և նա գործեսցէ։ Եւ այժմ ընդ ամենայն տիեզերս են յիշատակք նոցա, և երանելիք են ի կեանս իւրեանց, և ի մահու նոցա փառաւորի անուն Տեառն, և եկեղեցիք սրբոց նոքօք պայծառանան, և զարդարեն զմանկունս իւրեանց պսակաւն Քրիստոսիւ։ Նոքա են ակունք պատուականք բանաւոր, փայլեալ առաւել քան զլուսաւորս, ի թագ երկնաւոր թագաւորին Քրիստոսի անմահ արքային։ Զոր և աղաչեմք աղօթիւք նոցա օգնել մեզ յամենայն նեղութիւնս մեր, և փրկել զմեզ յամենայն փորձութենէ։ Սկսանիս սկիզբն արարացուք պատմութեան սրբոյն Աբդէլմեհի, որ Թարգմանի Ծառայ Քրիստոսի։

Սկիզբն արարացուք նահատակութեան սրբոյն Աբդէլմեհի, որ Թարգմանի Ծառայ Քրիստոսի. նոյն պէս և յաղագս սքանչելի զօրութեանցն և բժշկութեանցն՝ զոր առնէր Աստուած յանուն նորա՝ առնեցուն որ ապաւինէին ի նա։ Գանգի արդարև սքանչելի է Աստուած ի սուրբս իւր, և փառաւորեալ է մահ նոցա՝ առաջի նորա. և աղօթից նոցա լսէ հանապազ, և փրկէ զժողովուրդ իւր ի ձեռն բարեխոսութեան նոցա, և նահատակութեամբ նոցա յամօթ առնէ զանաստուածսն դիւաց, և զխորամանկութիւնն վիշապին խորտակեալ խափանէ, որ մարտնչէին ընդ սուրբս իւր։ Նոքա արմատ կենաց են, և տան առողջութիւն ախտացելոց, ըստ անսուտ բանին Տեառն, թէ՝ Որ հաւատայ ինձ՝ զգործսն զոր ես գործեմ և նա գործեսցէ։ Եւ այժմ ընդ ամենայն տիեզերս են յիշատակք նոցա, և երանելիք են ի կեանս իւրեանց, և ի մահու նոցա փառաւորի անուն Տեառն, և եկեղեցիք սրբոց նոքօք պայծառանան, և զարդարեն զմանկունս իւրեանց պսակաւն Քրիստոսիւ։ Նոքա են ակունք պատուականք բանաւոր, փայլեալ առաւել քան զլուսաւորս, ի թագ երկնաւոր թագաւորին Քրիստոսի անմահ արքային։ Զոր և աղաչեմք աղօթիւք նոցա օգնել մեզ յամենայն նեղութիւնս մեր, և փրկել զմեզ յամենայն փորձութենէ։ Սկսանիս սկիզբն արարացուք պատմութեան սրբոյն Աբդէլմեհի, որ Թարգմանի Ծառայ Քրիստոսի։

Յամին չորրորդի առաջնեւորդի (1) Թուականին Հայոց, մինչև խափառնուազեալ էր մպռութիւն իշխա նութեան Պարսից, և Հրեայքն համարձակագոյն էին ի Ներպարացւոց աշխարհին. այր ոմն էր Հրեայ ի Ներպարացւոց քաղաքէ մեծաւուն յոյժ, որոյ առացուածք բազում էին, և անուն Յանսէլ առնուն Վնէ. նախապէտս էր Հրէից ի ժամանակին յայնմիկ. նորա էին որդիք բազումք, և առաքէր զնի ի նոցանէ արածել զխաշինս իւր: Եւ զնի ի նոցանէ էր կրտսերագոյն ամաց մեռուասնից, որոյ անուն էր Աբեր. սա արածէր զհօտս եղանց հօր իւր, և աճէր արբուցանել ջուր, ուր ամենայն հօտ վիւքն գային պատրաստել զարբուն խաշանցն իւրեանց. և բազում հասակակիցք նորա գային և ժողովէին յայն տեղին. ոմանք ի նոցանէ էին ի զաւակաց քրիստոնէից, և ոմանք ի մոգուց: Եւ մինչ բազում տուարածականք ժողովէին յայն տեղւոջ ուստե հաց, որոշ ի նոցանէ առանձինն նստէին քրիստոնեայք, և սակաւիկ մի հեռագոյն ի նոցանէ որդիք մոգուցն. և Աբեր միայր ի նոցանէ միայն, զի ոչ գոյր Հրեայ ընկեր նորին: Եւ ցանկայր ուստե ընդ մանկանցն քրիստոնէից. և նոքա գարշ համարէին յաղագս Հրէութեան. և էր սիրեցեալ ի քրիստոնէից: Եւ խնդրէին Հնարս, եթէ զիարդ կարասցեն մերձենալ զնա առ իւրեանս, և զօր հանապազ պատմէին նմա վասն Քրիստոսի հաւատոյն, և զՀնութիւն սրբոց մարտիրոսացն, զոր լուեալ էին ի ծնողացն իւրեանց: Յետ այսորիկ ժողովեալ էին ըստ սովորութեան իւրեանց ի մօտաւոր տեղիս ուստե հաց. և յարուցեալ Աբեր՝ փութապէս ընթացաւ առ նոսա, և ասէ. Ո՞վ եղբարք իմ սիրելիք, պատմեցէք, եթէ զինչ է Հնար մերձենալ ինձ առ ձեզ, և ուստե կերակուր, և ոչ լինիմ գարշելի յաչս ձեր: Պատասխանի եառն միաբան մանկունքն և ասեն. Եթէ հաւատաս քոլորով սրտիւ քով, և մկրտիս յանուն Յիսուսի Քրիստոսի՝ առ ժամայն խառնիս ի գունդս մեր, և մերձենաս առ

(1) Յայտնի վրիպակ գրչի է ի Թուականդ. Թերևս չփոթեալ ընդ Դ. որով լինի Ղ.Ա. կամ 91 Թուական Հայոց որ է 642 ամ Քրիստ.՝ արդարև ժամանակ նուաղելոյ իշխանութեան Պարսից:

մեզ անցաւոցդ, և ի կերակուրս մեր և յըմպելիս և յամենայն ինչ, զի չէ պարտ քրիստոնէից ընդ հրեայս ուտել և ըմպել: Պատասխանի եւս Աբեր և ասէր. Ահա ջուր, զինչ արգելու զիս ի մկրտելոյ: Աբեն մանկունքն. Ոչ այդպէս, այլ պարտ է յեկեղեցւոջն ի ձեռն քահանային մկրտել: Աբեր ասէ. Այժմ մինչ եկեղեցի հեռագոյն է և քահանայ ոչ գոյ ընդ մեզ, և ես յաղագս երկիւղի հօրն և եղբարց իմոց՝ յայտնապէս ոչ կարեմ մկրտել, և ահա զրկեալ լինիմ ի մասնաւոր թենէդ ձերմէ, և լինիցին խորհուրդք իմ ունայն. եթէ արդարև Հնարիւտ է Աստուածն ձեր Քրիստոս, և հոգի խոնարհ ընդունել է առաջի նորա, առաւել քան զողջակէզս, որպէս ուսուցանէք զիս, ընդունի զաստարաւոյ խորհրդոյ իմոյ, և ոչ անտես առնէ զյօժարութիւն կամաց իմոց, և կատարէ զիս ի ձեռն ձեր մկրտել. արդ մի յապաղէք, այլ յարուցեալ մեծաւ զօրութեամբ և յուսով Քրիստոսի, մկրտեցէք զիս յաղնուն նորա, և նա կատարեսցէ զամենայն: Յայնժամ իբրև տեսին մանկունքն զյօժարութիւն նորա և կատարեալ հաւատսն՝ որ ի Քրիստոս, մեկնացին զհանդերձեան որ զնոսա, և իջուցեալ զնա ի ջուրն, և մկրտեցին այսպէս. Մկրտի ծառայս Քրիստոսի յանուն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. և յաղօթեն իբրեանց՝ ասէին ի ժամ մկրտութեանն. Դու Քրիստոս Աստուած, հաստատեա զօրհնութիւնս ամենայն՝ զոր ասեն քահանայքն ի ժամ լուսաւոր մկրտութեանն, և ընկալ զսա կատարեալ մկրտութեամբ ընդ ամենայն հաւատացեալս ի քեզ: Եւ երկնցս ընկղմեցուցին զնա ի ջուրն, ըստ որում յառաջագոյն տեսեալ և ուսեալ էին:

Իսկ յորժամ հանին զնա ի ջրոյն, մատուցեալք մի ոմն նա հաստատէին զնա, և վերամբարձեալ զնա ի գերկիս իւրեանց պատուէին մեծաւ պատուով, նա և ի հանդերձից իւրեանց նորոց զգեցուցանէին զնա. և նստան մեծաւ ուրախութեամբ ուտել կերակուր հանդերձ նոսին. և պատուէին զնա որպէս փեսայ յարտաքսեալ. և պայծառացան երեսք նորա և լուսաւորեալ Հաւատովքեալ ի Քրիստոս, զի ոչ ամաչէին ի նմանէ, քանզի ընկալաւ զնոսա Հոգւոյն սրբոյ, ի ձեռն բանից մանկանցն. և

կոչեցին նմա անուն Աբդլմանեհ, որ Թարգմանի Ծառայ Քրիստոսի: Իսկ ժողովք հավատացին և որդիք մեծացուցին, աքանչացեալ զարմանային ընդ հրաշալի գործն՝ որ՝ի ձեռն մանկանցն կատարեցաւ. քանզի հոտ անուշ բուրեաց նոցա, և ասեն. Մեծ է խորհուրդս այս քրիստոնէից: Եւ մինչդեռ նստէին մանկունքն ցնծալեամբ, պատուէր տային ծառային Քրիստոսի զգուշանալով պահել զաւանդն զոր առ՚ի Տեառնէ, և մի՛ խառնել ընդ Հրեայն, և մի՛ կերակուրս նոցա: Եւ նորա հաւանեալ մեծամեծս խոստանայր առնել զայսպիսեան՚ի նոցանէ ջերմեռանդն սրտիւ՝ յանուն Քրիստոսի:

Մի ոմն՚ի նոցանէ ունէր գինդ ոսկի յականջս իւր: Նա առէ ցընկերսն իւր. Արդ մինչ զայսպիսի գործս հաւատոյ հաւանութեամբ առնել, պարտ է մեզ առանց երկմտելի հաստատուն կալ: Ահա գիտեմք զի Հրեայք ոչ ծակեն զունկն արուի՚ի յինքեանց, արդ եկայք հատոյք զդառնալ դորա՚ի հրեութիւն, ծակեցուք զունկն սորա և արկցուք՚ինեքեան զգինդս ոսկի. և հաճոյ Թուեցաւ մանկանցն: Ասեն ցնա. Բարւոք է զոր խոսեցար, այդպէս արժան է առնել. և ծակեցին զականջ ունկն նորա և արկին զգինդն ոսկի. և յաւելեան ըստ սովորութեան արածել զհօտս իւրեանց. և ասէին ընդ միմս իւրեանց եթէ զիարդ հանդիպի ծնողացն, և կամ ուրեք ընդունիցին զնա՝ յորժամ առնեն զգինդն:

Յայնժամ ծառայն Քրիստոսի ընդ մտանել արեւուն գայ՚ի տուն մեր իւրոյ հանդերձ խաշամբքն. և՚ի մտանել նորա ի տունն՝ ետես զնա մայր իւր, և ամբարձեալ զձայն իւր հառաչմամբ, և ասէ. Որդեակ իմ, Ասեր, զի եղև քեզ. զինչ է այդ յականջս քո. կամ ոչ խաբեաց քեզ, և ածեր՚ի վերայ տան հօր քո զայսպիսի չարիս մեծամեծս. ոչ ապաքէն լուեալ էիր յօրինացն՝ զոր Մովսէս պատուիրեաց, եթէ զի ծակեցի ունկն արուի յԱստուածէ, բայց որ կամիցի ծառայ քնակել ընդ տեառն իւրում յաւիտեան. արդ եթէ գիտասցէ հայրք՝ նա ինքն լինի վերծիմանդիր օրինացն՚ի քէն, և եթէ զինչ արարից զքեզ՝ ոչ գիտեմ, զի անծածկելի կնշանդ՝ յականջս քո: Յայնժամ խոսել սկսաւ տուրքն ցմայր

իւր քաղցրութեամբ, և ասէ. Մի երկնչիր, մայր իմ, և մի ամխաթանար զքեզ խորհուրդք քո վասն այսորիկ, քանզի ես այժմ քրիստոնեայ եմ և ծառայ Քրիստոսի. և յաւիտեան պաշտեմ զնա, և նա է իմ Տէր և Աստուած. օրէնքն Մովսէսի ոչ պատժեն զծառայս՝ որք սիրեն զտեարս իւրեանց. այլ և որ հրամայեաց զունկն առ դրան գաւթին ծակել, մի ծառայեսցէ տեառն իւրում յաւիտեան, սոյնպէս և ինձ պատահեաց յայսմ աւուր, առ դրան վկրտութեան ծակեցաւ ունկն իմ. և հաստատեցաւ ախտ իմ ընդ նմա յաւիտեան: Ասէ ցնա մայրն իւր. Ցիսէրդ եղեր այդպէս վաղվաղակի քրիստոնեայ, և կամ ով արար զքեզ ծառայ Քրիստոսի, և կամ ով ուսոյց քեզ զայդպիսի բանսդ՝ զոր խօսիսդ. Սուրբն ասէ. Որ ասաց ցաշակերտսն իւր, թէ՝ Որ հաւատայ յիս մի ամաչեսցէ յաւիտեան, և դարձեալ ասէ. Թէ՝ Յորժամ տանիցին զձեզ առաջի դատաւորաց, մի հոգայցէք զինչ խօսիցիք. զի ես տայց ձեզ՝ի ժամուն յայնմիկ բան, որ ոչ կարեն կալ հակառակ Հոգւոյն ձեր. նա է որ ուսոյցն զիս, և խոստացաւ այլ ևս բազում ուսուցանել: Եւ պատմեաց մօրն իւրում զամենայն զոր լսեալ էր՝ի մանկանցն, և թէ զիարդ միշտ տեղին զնա ջրով, և կամ զիարդ վերացաւ՝ի նմանէ աղտեղութիւն նեխութեան, և բուրեաց հոտ անուշութեան՝ի Քրիստոս: Նաև մայրն նորա խնամոտութեամբ լսէր զամենայն՝ի նմանէ, և՝ի միտ առեալ պահէր ընդ տեսիլ գեղոյ նորա, և թագուցանէր զնա՝ի տան իւրում աւուրս երեսուն, և խանդաղատէր զնովաւ, և լինէր յերկիւղի թէ մի գուցէ արդեօք զի՛տասցէ հայր նորա, և բարկացեալ սպանցէ զնա յաղագս նախատանաց ազգին իւրոյ և երկիւղի Հրէից: Նաև սուրբն օր ըստ օրէ կանխեալ ընդ աւուրսն էր՝ թայր՝ի դաշտն արածել զհօտսկնս իւր ընդ նոսա, և ուսանէր յընկերացն իւրոյ հաստատուն կալ՝ի հաւատսն որ՝ի Քրիստոս: Եւ ընդ մանկն երեկոյին դառնայր առ մայր իւր. և հայր նորա քանզի զբաղեալ էր զհոգոյն աշխարհականօք տան իւրոյ, ոչ առնէր փոյթ վասն որդւոյն իւրոյ զաւուրսն զայնոսիկ:

Ոմանք՝ի հարց մանկանցն այնոցիկ, որք աւելի եղեն քրկութեան նորա՝ պատահեցին՝ի վանս ուրեմն որ էր

՚ի վերին Եփեսոս, ՚ի ոճն արբոյն Պօղոսի (1), և երից մանկանցն որ ընդ նմա վիպեցին. և լուան զպատմութիւն արբոյն այնոցիկ, և եկեալ պատմեցին ՚ի տունս իւրեանց առ երեսս զնահատակութիւն արբոյն, և օրհնէին զԱստուած. և մանկանցն լսեալ զայն՝ երթին առ մայրն իւրեանց՝ խօսէին առ Միմեանս ՚ի տեղւոջն ուր սովոր էին ժողովել՝ ՚ի միասին: Եւ սուրբն նոքա լսէր զայն՝ առաւել ևս հաստատէր ՚ի հաւատսն, և էր բորբոքեալ՝ ՚ի սէրն Աստուծոյ. զի ծագեալ էր ՚ի նա լոյս Քրիստոսի, և ՚ի միտ առեալ զՀնութիւն արբոյ՝ աղօթիր արբութեամբ արժանի լինել պսակաց արբոյն այնոցիկ:

Եւ ՚ի միում գիշերի մինչդեռ ննջէր ՚ի տան մօր իւրոյ, տեսանէր զինքն որպէս թէ լինէր՝ ՚ի գբի խաւարի, և չարչարեալ տանջէր ընդ ժողովրդեանն Դատեայ և Աբիրոնի: Եւ մնէր Հառաչանօք և լայր դառնապէս ՚ի ներքս ՚ի խաւարն, ուր ըմբռնեալն էր. ածէր զմտաւ զասացեալսն ՚ի մանկանցն, և զլոյս Քրիստոսի: Եւ մինչդեռ տագնապէր ՚ի տանջանսն, և խորհէր ՚ի միտս իւր թէ զինչ լինիցի, յանկարծակի երևեցաւ երիտասարդ մի լուսաւոր կերպարանօք, և իշխանաբար բացեաց զխաւարային գուբն, և կալեալ զաջոյ մանկանն հանէր ՚ի գբոյն. և կացոյց զնա ՚ի մէջ մանկանցն՝ որ շուրջ էին զնովաւ, և ամբարձեալ զձայնս իւրեանց օրհնէին զԱստուած: Եւ եղեալ ՚ի միտս իւր՝ ասէ. Ո՞վ ես Տէր. արդեօք վերակացու եղեր հնձ ՚ի նեղութեանս և փրկեցեր զնա: Նա երիտասարդն. Ես եմ Քրիստոս յոր յուսացարդ դու կիս, և կարդացեր զանուն իմ. արդ զօրացիր և մի երկնչիր, զի օթևանք պատրաստեալ են քեզ ընդ մանկանցս այսոցիկ, և կան և պահին քեզ պսակքն անապականք և յաւիտենականք: Եւ յետ փոքր ի աւուրց ընկալցայց զքեզ առ ինս, յորմէ հետէ զգեցար զնա զնա՝ ՚ի ձեռն մանկանցս այսոցիկ, և հաստատեցից զերեսս իմ՝ ի վերայ քո՝ առնել զքեզ ժառանգորդ արքայութեան իմոյ: Յայնժամ սուրբն ըմբռնեալ երկիւղ զնա, անկեալ՝ ի վերայ երեսաց իւրոց փառաւորէր զԱստուած, և ասէր. Գոհանամ զքէն Քրիստոս Տէր

(1) Ի նմանօրինակ վկայաբանութեան՝ Սրբոյ Վիճէն Պաւլոյի:

իմ և Աստուած իմ, որ փրկեցեր զիս ՚ի խաւարային կապարանէն, և ՚ի չարաչար տանջանացն, աղաչեմ զքեզ, Տէր իմ, պատմեա ինձ զայնցանէ՝ որք տանջին ընդ իս Թէ ուր են. զի ահա ընդ եւանելն իմում ՚ի գբոյն՝ դարձեալ կափոյց խորխորատն զբերան իւր անդրէն ՚ի վերայ նորա: Ասէ ցնա Քրիստոս. Նոքա են այնոքիկ՝ որք խաչեցինն զիս, ազգ տան Հօր քո: Սուրբն ասէ. Տէր Յիսուս, մի հեռի առներ զիս յողորմութենէ քումմէ, այլ հաստատեա զիս առնել զկամս քո, լինել քարոզ Հնազանդութեան քում: զի տեսից և յադեցայց լսով աստուածգութեան քո յերևել փառաց քոց: Եւ մինչ զայս ամենայն սուրբն խօսէր, զարթեաւ մայր նորա ՚ի քաղցր քունէց նորա. զարթոյց զորդին իւր և ասէ. Չի՞ ես քեզ ոդեակ իմ, և համ զինչ ես քանդիր, զոր նբերն ընդ սիրելոյ խօսիս: Պատասխանի ետ սուրբն զոհութեամբ, և ասէ ցմայրն իւր. Քրիստոս ե յոր հաւատացի և միրտեցայ յանուն նորա, և եհան զիս ՚ի զբոյ խաւարին, և յանդնդոց ժոխոց, և՚ի տանէ կապանաց. նա էր որ խօսէրն ցիս. Ասէ ցնա մայրն իւր. Չինչ ե նանատութիւն նորա. Սուրբն ասէ. Երիտասարդ զեղեցիկ տեսլեամբ, զոր ոչ բաւեմ պատմել, և փայլատակունք հատանէին յերեսաց նորա. և ձոյձ իւր պատառեալ, և կոշն խոցեալ և ձեռք և ոտք իւր ծակեալ բերեռօք, և զիր՚ի վերայ նորա, Թէ՝ Սա ե Քրիստոս Յիսուս՝ զոր Հրեայքն խաչեցին Յերուսաղէմ. որ յանձն առ զչանցեանն Ադամայ. և սա ե զառնն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի. և ինքն ե օրհնարէր, և ժողովարան սրբոց, և պատկերահատակաց: Եւ տեսի ես զհատակակից իմ շուրջ զինեւ, զոր օրհնէին զնա և ասէին. Ո՛վ Տէր, փրկեա, ո՛վ Տէր, առաջնորդեա. օրհնեալ որ գայդ յանուն Տեառն, ոմանցնոյ ՚ի բարձունս, օրհնութիւն որդւոյ Դաւթի: Եւ մինչդեռ նորա զանազան պատկօք փայլէին, ոմանք ՚ի նոցանէ ունէին ՚ի ձեռս խաչեանց ոտս արմատեղեաց, և այլք՚ի նոցանէ ոսկի բաժակս մատուցանէին զարիւնս խաչեանց, առաջի երկնաւոր թագաւորին ցընծալից ուրախութեամբ, և ասէին. Սա է Աստուած մեր՝ յոր յուսացեալն էաք, ցնծացուք և ուրախ լինիմք ՚ի փրկութեան նորա: Այնպէս և ես, մայր իմ, ցանկացայ

դասակից լինել նոսայ մանկանց առաքաստին, և ընդ նոսա երթել զերկս օրհնութեան, և ոչ տային ինձ առ ժամայն մերձենալ՝ի նոսա: Եւ արդ խառնիլ՝ի նոսա կարօտ անձն իմ: և երանի թէ միայնակեալ էի՝ի տեսլեանն ուրախանալ՝ի մէջ սրբոցն այնոցիկ. առաւել քան զարթնութիւն՝ լաւագոյն էր քունն այն: Զի եթէ՝ի տեսլեանն այնպէս լուաւար և հնազանդէր էր երևումն այն, ուրեմն և առաւել եթէ դէմ յանդիման լինիցիմ տեսանել զլոյսն անմատչելի և զանապատելի: Եւ ահ պէ զիս բաղձանք հոգւոյս իմոյ լինել ընդ բազմութեան նոցա, և յոյժ հարեալ եմ՝ի սէր նոցա. և լաւ էր ինձ մեռանել ընդ նոսա՝ քան առանձնակեցեալ զվայելչութիւն լուսեղէն աշխարհիս:

Արդ յոյժ լաւ մայրն զայս ամենայն յորդոյ իւրմէ, առաջնորդեալ պղտորեցաւ սիրտ նորա վասն բազնից այնոցիկ, և ջանայր թաքուցանել զբանն. զի մի լուիցէ հայրն և եղբարքն նորա: Եւ ասէ. Որդեակ, պղտորեցին զիսորհուրդս իմ բանք քո, զի շատ են այն են երանք որ սուտ են: Սուրբն ասէ. Աւաւելագոյն այն է որ ձշմարիտ է, որպէս առ Խորայէլացւոքն, և կամ յայնժամ Յովսէփայն առ փարաւոնն, և Դանիէլ էլին առ Բաբելացւոքն, ի ձեռն մեկնութեան արդարանային. այլ ես դէմ յանդիման տեսի զքանչելիս նորա՝ զոր Տէր Յիսուս Քրիստոս ինձ յայտնեաց: Արդ դու եղիցես սկիզբն քարոզութեանս իմոյ, ով մայր իմ, և հաւատամ յոր են հաւատացեալ, և պատրաստեցի զիս մեռանել ընդ նմա: Արդ յոյժ մեռանել լաւ յորդւոյն իւրմէ, յայնժամ յորդաբուխ արտասուօք լալ սկսաւ: Ասէ ցնա սուրբն. Ո՞վ մայր իմ մի լար, և մի խռովեցներ սիրտ քո, զի ահա սկիզբն Յովսեփայ յեա մեռանելոյ իւրոյ, պարիսպ ամուր եղեն ազգին իւրոյ, և թէ ոչ էին կենդանիքն Աբրահամ և Սահակ և Յակոբ, ոչ ասէր Աստուած ցՄովսէս. Ես եմ Աստուած Աբրահամու և Սահակայ և Յակոբայ, և ոչ է Աստուած մեռելոց այլ կենդանեաց. արդ Ձշմարիտ կենդանի են առ Աստուած՝ որք մեռանին յտուել Նորա: Արդ աղաչեմ զքեզ, մայր իմ, լուր բանից իմոց, և հաւատա՛ի Քրիստոս, և մկրտեա յանուն Նորա, և փրկիչ՝ի չարութեան տանջանացն այնոցիկ՝ որ խաչեցինն

գնա. և կատարեալ լեցի անուն քո առ որդի քո բեր-
կրանօք՝ յանանցական աշխարհին, և լինել ինձ մայր
յերկոցունց յաւիտեանից: Արդ ամի Թողուր՝ի մոայ
քոյ զլանս և զպատուիրս իմ; այլ հաւատաւ ձչմար-
տութեան նորա, որ՝ի վեր է քան զամենայն գիտս
և զխորհուրդս:

Յայնժամ ծագեաց լոյս աստուածգիտութեան՝ի
խաւարեալ միտս նորա, և պատասխանի տուեալ որ-
դւոյն՝ ասէ. Հաւատամ յԱստուած յոր դու հաւատա-
ցեր, որդեակ իմ: և՝ի պատշաճ ժամանակի արդիւ-
նագուշից զբանս իմ: առ այժմ ծածկեացին խորհուրդք
մեր՝ի հօրէն և յեղբարց քոց, զի ամի լուիցեն և սատա-
ցեն զիս և զքեզ: Արդ առեալ սրբոյն զմախատգն, և
զցուպ հովուութեան իւրոյ, և ասէ. Ո՛ղջ լեր մայր
իմ, յանձն արարից զքեզ Քրիստոսի: Ես գնացեալ եր-
թամ առ ընկերս իմ; և եթէ յապաղեմ՝ եկեսջիր և
դու զկնի իմ: Զայս ասէր նշանակեալ զմահ իւր, և
զհաւատս մօրն:

Եւ ելեալ բստ սովորութեան գնաց զկնի հօտից իւ-
րոց. և իբրև մերձեցաւ սակաւիկ մի, հանդիպեցաւ
եպիսկոպոս մի, և ընծացեալ սուրբն անկաւ առ ոտս
նորա, և ասէ. Աղաչեմ զքեզ, տէր իմ, օրհնեա զիս
և ինքեա նշանաւ սուրբ խաչին, և կատարեա զմեր-
տութեն իմ: Ասէ եպիսկոպոսն. Ուսոյ ձանաչես զիս,
և կամ ո պատճառ քեզ զինէն, զի ահա ոչ ունիմ
զգեաստ եպիսկոպոսութեան: Ասէ սուրբն. Որ զիս քեզ
յայտնեաց, և կարզեաց քեզ ձանապարհ գալ առ իս,
նա ծանոյց զքեզ ինձ: Զարմացեալ եպիսկոպոսն, ասէ
ցնա. Եւ իմ առեալ պատուէր օրհնել զքեզ նախ քան
զպսակելն քո, և եղիցիս օրհնեալ: Եւ եդեալ զաջ ձեռն
իւր՝ի վերայ գլխոյ նորա՝ աւանդեաց՝ի նա զշնորհս Հո-
գւոյն սրբոյ, և ասէ. Երթ՝ի խաղաղութիւն, անուանք
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հաճոյ եղեալ առա-
ջի նորա, և արժան լեր չարչարանաց մահուն Քրիս-
տոսի. և մանկունքն՝ որք մկրտեցին զքեզ՝ հրաւիրեալ
եղիցին՝ի կարգս հրեշտակաց: Եւ այսպէս արարեալ
ծերոյն՝ գնաց զձանապարհս իւր:

Իսկ սուրբն գնաց առ մանկունս առ ընկերս իւր, և
պատմեաց նոցա զամենայն իւր զոր եառ, և զամենայն

եղեալան. և զարմացան ընդ աքանչելին և լցան երկիւղիւ՝ի վերայ այնոցիկ զոր լուանն. քանզի կատարեցաւ խորհուրդ մկրտութեան նորա, և թէ որպէս զօրութեամբն զպեցաւ Ծառայն Քրիստոսի՝ տեսլեամբն զոր եառնու: Եւ էր օրն այն ուրբաթ, և ոճն մեծ էր Հրէիցն, և առնէր հայր նորա ուրախութիւն մեծ յաւուրս յայնմիկ, և հրաւիրեաց զազգատոհմն իւր և զսիրելին յընթերիս, և առաքեաց կոչել զորդին իւր. և զեղբարս նորա՝ի շաբաթամտին՝ ժողովել՝ի հրաւիրեալ տեղին: Իբրև մտ եղև Աբել, խոտորեցաւ մտանել՝ի տուն մօր իւրոյ, և հետամուտ եղեալ Ծառայքն ըմբռնեցին զնա, և առեալ տարան՝ի ժողովն Հրէից:

Իբրև եառնս հայր նորա և այլ Հրեայքն՝ զգինովն յարևանջս նորա, բարկացեալ խռովեցաւ հայր նորա, և ասէ ցնա. Աբել, ո՛վ խաբեայ զքեզ, և արար այդպիսի խայտառակ. ո՛չ ապաքէն այդ կերտարանք ծառայից են՝ որ ծնացեալ են յարտաւութեան իւրեանց: Աւրբեն ասէ. Մի խռովիր հայր, քանզի գիտեմ զասացեալդ, զի ես գրեցի զանձն իմ Ծառայ Քրիստոսի և քրիստոնեայ եմ: Նակ յորժամ լուաւ զայս հայրն՝ զայրացեալ լի ցասմամբ, զարկ զերես նորա, ընկէց՝ի մէջ ժողովրդեանն, և կոխեր ոտիւքն: Յարեան թափել զնա ժողովեալքն, և ասեն. Մի խոպան բարկանար, եղբայր, զի մանուկ է, և ունի զղջանալ և գալ յուղղութիւն. մանաւանդ՝ յաւուր յայսմիկ, Թոյլ տուր զմա, զի ո՛չ խաղճան լեցի ուրախութեան մերոյ, քանզի զաւուիկ մեծ է օրս այս:

Յայնժամ լուեցին ամենեքեան և նստան յուտել և յըմպել և ուրախ լինել: Եւ կոչէին զնա ողբանօք զի կերիցէ ընդ նոսա. և նա ասէ ցնոսա. Մի խռովիք, զի ես քրիստոնեայ եմ, և ոչ է արժան քրիստոնէի ուտել ընդ հրէի: Եւ ամօթալից եղեալ հայրն յաղագս բանիցս այսոցիկ, յարեաւ դարձեալ հարկանել զնա, և ոչ թողին:

Ասէն ցաւուրն երկրորդ անգամ: Ե՛կ, որդեակ, կեր ընդ մեզ, և ցածո՛ զսրտմտութիւն հօր քո, քանզի թողաք քեզ զարհամարհանս պատուհասացն Մովսէսի՝ վասն այդպիսիկ որ յականջալ քո, յաղագս տգիտութեան քո, և պատուոյ ոճխս. այլ լո՛ւր, որդեակ, և ե՛կ կեր ընդ

մեզ։ Սուրբն ասէ. Եթէ գիտէիք զեղեալ պատանէլման, ոչ բռնադատէիք զիս ուտել ընդ ձեզ. այլ զի դեռևնոյն առաջաստ օրինացն Մովսէսի կայ՝ի վերայ սրտից ձեզոց, վասն այնորիկ խորհիք զայդ։ Նակ նոքա երբեմն լսեան՝ զարմանային ընդ կտրուականութիւն բանիցն, և ասէին ցմիմեանս. Մեթէ տեսիլ ինչ եղեւ առ դմա, զի այդպիսի բանք ոչ են Հրէից, այլ ոչ տկարանայ այդ առաջի Աստուծոյ։ Գանգի բազում փառաւորութիւնս եղեւ առ մարգարէսն՝ի մանկութեան ժամանակին, որպէս առ Մովսէսիւն, և Յեսուայն, և Գեդէոնիւնին, և Սամփսոնին, և Դաւթին, Սողոմոնին, Երեմիային, և Դանիէլին, և Ազանիայնոյն, և որք սոցին նմանք են։ Ապաքէն ոչ ինչ է մեծ, եթէ լինիցի այժմ՝ի յազգէս մերմէ. քանզի ոչ փոքր ինչ եմք՝ի մէջ ցեղիցդ Իսրայէլի, և օրէնքն Աստուծոյ պարծանք մեր։ Այն ցնոսա սուրբն. Ձոր խաչեցին Հարքն մեր Յերուսաղէմ՝ զնա տեսի, և գիտեմ զի նա է գառն Աստուծոյ, յորոյ վերայ վկայեաց Յովհաննէս՝ի Յորդանան, և ես վկրտեցայ յանուն նորա, և փոխանակ Աշմարտութեան նորա մերանիմ։ Եւ դուք եթէ ոչ քաւիցէք վկրտութեամբ նորա՝ պատուականք էք գործոց Հարցն ձերոց, քանզի արիւն արդար հեղին և ինքեանք կորեան յանօրէնութեան իւրեանց։ Իսկ որք հաւատացինն՝ի նա՝ փըրկեցան. ահա ասացի ձեզ. առէք զպատրուակդ որ կայ՝ի վերայ սրտից ձերոց, և հաւատացէք և վկրտեսջիք, և քաւեսցին մեղքն ձեր։

Յայնժամ լցեալ ամենեքին ցասմամբ վասն բանիցս այսոցիկ և զրգռէին զՀայր նորա զի կորուսցէ զնա։ Իսկ ծառայքն նորա յորժամ առեին զաղմուկն՝ Թողին զսուրբն զի փախիցէ։ Յայնժամ յարուցեալ Ալի Հայր նորա, զաղաւնաբար յարձակեալ դառնացեալ սրտիւ, առեալ զդանակն՝ի սեղանոյն ընծայացաւ զՀետ նորա, և մանուկն երթայր առաջի նորա արագ արագ մինչև՝ի ջրհորն ուր վկրտեցաւ, և էր ընդ երեսս։ Եւ դարձեալ առ Հայրն՝ ասէ. Ալի դաղան արիւնարբու, պահեա զշաբաթդ. ես, և դարձիր զսուր քո՝ի տեղի իւր. եթէ աշակերտ ես Մովսէսի, մի պատուարեր զանձն քո, և լինիս օրինադանց. ապա թէ քրիստոնեայ ես իբրև զիս, մի շաղախեր զձեռն քո յարիւն ծառա-

ին Քրիստոսի: Ոչ եթէ վասն սպանման իմոյ ա-
սեմ զայս, այլ զի մի լինիցիս դու որդի գեհենի: Եւ
յորժամ լսէր հայրն նորա զայս ամենայն՝ առաւել ևս
զայրանայր, և կրճտէր զատամունս իւր՝ ի վերայ նո-
ցա: Իսկ սուրբն հասեալ՝ ի տեղին՝ ուր մկրտեցաւ,
ծունր կրկնեալ լալով կայր յաղօթս և ասէր. Ո՛վ
Քրիստոս, յոր հաւատացի, ընկալ զիս՝ ի թիւ մկրտե-
ցելոցն յանուն քո սուրբ. և՝ ի վերայ ջրհորոյս այսորիկ
քայ լինէ դուռն մտանել առ վիայն քո, և խառնիլ՝ ի
դասս նահատակաց քոց. ահա մատուցանեմ քեզ զա-
րիւնս իմ պատարագ սուրբ, զի եղիցի հաճոյ տէրու-
թեան քում՝ ի հոտ անուշից. և՝ ի թիւ ընկերաց իմոց,
զոր ցուցեր ինձ, փառաբանել զքեզ արժանաւորեա և
զիս, փառաւորել զքեզ և մտանել առաջի սեղանոյդ
Աստուծոյ իմոյ, որ ուրախ առնես զմանկտութիւն իմ:
Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուած, Աս-
տուած իմ: և Թշուառական և նեղեալ հօր իմոյ
մի համարիր զայս մեղս, զի ոչ գիտէ զինչ գործէ. և
մօր իմոյ որ ծնաւ զիս՝ արա չարչարակից լինել մա-
հուան իմոյ՝ պատակակից հաւուցմանդ քոյ: Եւ այք կա-
տարեն զխնդրատակ իմ և յիշեն զիս՝ ի նեղութեան,
լուր և ողորմեա, և օգնեա նոցա և բժշկեա զախտս և
զցաւս հոգւոյ և մարմնոյ: Ահա զխոստովանդ սրտի իմոյ
և զարիւն իմ մատուցից քեզ պատարագ, փոխանակ
զի անուանեցեր զիս եղբայր քեզ, և հաներ զիս՝ ի
գերոյն տղմոյ և ցուցեր ինձ զՀիմարտութիւն քո, և ա-
րարեր զիս քարոզ անուանդ քո. և ոչ գարշեցար՝ ի
հայրենէն պղծութենէ իմմէ: Ահա ոտիկս գառն՝ ի
սպանդ մատուցի զիս քեզ. վասն քո եռաւ զարարանոց
իմ ընդդէմ սրոյ, և եղէ օտար յեղբարց իմոց, և հե-
ռացեալ յորդւոց մօր իմոյ: Ո՛ւր էք, եղբարք իմ սի-
րելիք, եկայք տեսէք զպատերազմս իմ: փոխանակ քա-
րոզութեան ձերոյ՝ եկայք ուրախ լերուք ընդ պսուղ
վարդապետութեան ձերոյ. ահա այժմ արդեամբ կա-
տարեմ զՀանապարհս իմ՝ զոր հօրդեցէք ինձ: Եկայք
զուարճակից եղերուք ինձ յաւուր վերայութեան
իմոյ, և ուրախասցուք՝ ի բղխանն արեան իմոյ, որ հե-
ղու՝ ի վերայ սուրբ ատենն Քրիստոսի: Ընկերակից
իմ և մերնդակից, ով Թաթոյ՝ ի հնոյ զոր պահման

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Ս.Ս.Ռ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
7/3 1922

իմոյ. այս է ժամանակ յայտնելոյ երեւեցայ, և որք Հաւատային զերեսաց։ Ո՛վ յուզեցեալ ձեզ զՀեղուսին արեւանա իմոյ, և նահատակակից լինել Քրիստոսի։ Ո՛ղջ լերուք այժմ, և աղօթեցէք արժանի լինել ինձ տեսանել զձեզ յաւուրսն Թագաւորին։ Ո՛ղջ լերուք, ասէ, մայր իմ որ ծնար զիս և՝ ի գիրկս քո կրեցեր զիս։ Ո՛ղջ լերուք եղբարք իմ, որպէս մօր իմոյ. երանի Թէ յարգանդին կենայ լեալ էիք եղբարք ինձ։

Եւ մինչ տուրքն զայս ամենայն խօսէր, յայնժամ գազանաբար յարձակեալ Հայրն՝ ի վերայ նորա, և խոնարհեցուցեալ զարբոյն զգլուխն՝ ի վերայ վիմին՝ որ կայր յատին ջրհորոյն, և եհատ զպարանոցն՝ որպէս զոր ունէր՝ ի ձեռին իւրում։ և եհեղ զարիւնն՝ ի վերայ վիմին։ Եւ տուրքն Թաւալեալ ընդ արիւն անձին իւրոյ՝ ասէր. Տէր իմ Յիսուս Քրիստոս, ՚ի ձեռս քո յանձն առնեմ զՀոգի իմ։ Իսկ Հայրն յետ վախճանելոյ նորա գնաց՝ ի տուն իւր յիմարեալ. աւետիս տայր մօրն և եղբարցն՝ վասն մահուանն Աստեղայ. և եցոյց նոցա զտուրն Թաղեալ յարեան սրբոյն. զոր իբրև լուան՝ կոծ մեծ արարին՝ ի վերայ նորա։ Իսկ մայրն Թէպէտ և դառնացեալ էր սգալ՝ ի վերայ մահուան որդւոյն իւրոյ, սակայն քաջալերեալ մխիթարէր զինքն բանիւքն՝ զոր լուեալ էր յորդւոյն իւրոյ, և խորհէր ժամանակ գտանել, զի հաւատացէ և մկրտեսցի՝ ի Քրիստոս. և յուսայր Թէ հաւատով սրբոյն արժանի լինի տեսլեանն՝ որ երեւեցաւ։ Եւ յետ սակաւ աւուրց շինեցաւ վկայարան սրբոյն, և մկրտեցաւ՝ ի ծածուկ մայրն աւ զերեզմանի որդւոյն իւրոյ։

Եւ՚ի վաղիւն լսա տոլորութեան մանկունքն եկին՝ ի տեղին յայն. և տեսեալ զմարմին սրբոյն Թաղեալ յարեան, հարթարձեալ զձայնս իւրեանց լացին դառնապէս, և պատառեալ զՀանդերձս իւրեանց ծեծկէին զերեսս իւրեանց, և ասէին. Ո՛վ տուրք գառն Աստուծոյ, ոլ նախանձեցաւ ընդ զեղեցկութիւն քո. կամ ոլ ապականեաց զպայծառութիւն զեղջ քո. ոլ շաղախեաց զձեռն իւր յարիւն քո, եղբայր մեր, և կամ ոլ զրկեաց զմեզ յեղբայրութենէ քումմէ։ Ո՛վ ծնունդ քարոզութեան մերում, և ծաղիկ յանկաւղի՝ ուսման մերում, պատարագ հանգեալ ձեռամբ մերով։ Ա՛ղ

Հիմարտիւ գիտեմք եթէ հաձեցաւ Տէր ընդ պատուհասել քո, որ եհան զքեզ՝ի գերոյ տղմոյն, որպէս պատմեցեր մեզ։ Ահա անդ եղբարք բազում են քո զոր դուն տեսեր, և այժմ մեք որ աստ՝ անջատեալ են լսելիք մեր լսել զքաղցրաբարբառ բանս քո։ Ծաղոյ Գրիգոր և վկայ Հիմարիտ, աղաչեա վասն մեր որ այժմ մերձ ես առ Նա, արժանաւորել տեսլեան քոյ՝ի վերին Երուսաղէմ, և ցնծալ ընդ քեզ յորժամ խառնիս՝ի դաս Հզնաւորացն. և ընդ առաջ ելանել գալստեան նորա պատրաստեալ և յաղթական ազաւօք։

Բազում և այլ այսպիսի բանիւք լային և ողբային զնա։ Եւ առեալ իւրաքանչիւր զգուշ՝ բրեցին զերկիրն, և թաղեցին զմարմին երանելոյն, և ժողովեալ զհողն արիւնախառն՝ արկին՝ի հանդիստն. և հառաչմամբ հայէին ընդ երկինս, և ասէին. Աղդ քաջասերեցեալ, Գրիգոր, կարդալ առ քեզ. լուր այժմ, կատարեա զօրհնութիւնս, որ լինիս՝ի վերայ հրաւիրելոց՝ի ժամ թաղման, ՝ի ձեռն քահանայից, կատարեա այժմ՝ի վերայ թաղման սրբոյս։ Եւ եդին կափարիչ զվէմն յոր ետուն զնա վերայ զենաւ ծառային Գրիգորի, և գնացին սրբոյն մատին՝ի տուն իւրեանց։ Զայս ամենայն արարին վտանգանակի, վասն զի ընդ երեկս էր օրն, և երկիրն բնակութիւն էր գազանաց. և ոչ ոք՝ի նոցանէ պատմեաց՝ի տուն իւր զեղեալն, զի մի ասիցեն ցնոսա, եթէ Դուք եղերուք պարտականք մահուան նորա յաղագս մերսեալն զնա. այլ նոքա ոչ դադարէին օր ըստ օրէ գա՛լ՝ի հանդիստ նորա, և լային ողբալով։

Իսկ յետ սակաւ աւուրց, գային անցաւորք վաճառականաց հանդերձ ուղտուք իւրեանց, և երթային յարևելից յարևմուտս. և՝ի գիշերի եկեալ մօտ՝ի դիւրս հանգստի սրբոյն, տեսանէին զի հուր վառեալ կայր՝ի վերայ գերեզմանի սրբոյն, և լուսաւորէր զամենայն վայրն։ Ումանք՝ի վաճառականացն խոստովանեցան տեսանել զմեծ պատուհասն։ և յորժամ հասին՝ի դիւրս սրբոյն, տեսանէին զվէմն զկնի՝ի նոքօք՝ի նեղլոյ նորա լոյս, որպէս զձառագայթս արեգական՝ և սքանչացան. և հուր անոյշ բուրմունք՝ի տեղւոջէն յայնմանէ, առաւել քան զամենայն խունկս անուշունս։ Եւ քանզ

ղի հաւատայեալք էին որ ջոգան՝ի զերեզման սրբոյն, խնայեալ՝ի միտս իւրեանց՝ ասեն. Գանձ մեծ է այս. և սին՝ի սրբոյ վկայից և ոչ յայտնեցաւ յաշխարհս այսորիկ. եկայք առցուք զդա և տարցուք յաշխարհն մեր, և առցուք շահս հոգևորս՝ի Քրիստոս, յոր հաւատացաքն. քանզի նա պատմեաց մեզ և եցոյց և կամեցաւ շահաւէտ առնել պատուական ոսկերօք վկային: Եւ՝ի բաց արարեալ զհողն՝ առին զվէմն կափարիչ՝ի զերեզմանէն, և առեալ զմարմին սրբոյն առնանձամաձախ, և առեալ զմանկապոյն տիսն՝ զիսացին եթէ առ ժամայն է կատարեալ սուրբն: Եւ սկսեալ հանդերձս պատուականս պատեցին զնա և առեալ զնացին առ ընկերս իւրեանց՝ աւետիս տալով, եթէ գանձ մեծ գտաք յաւուր յայսմիկ: Եւ առ խնդութեան ոչ հեռանէին՝ի տեղւոյն՝ յոր և երթայ լոց էին, այլ գարձան յաշխարհն իւրեանց. և ահա այլ ոչ ևս երևեցաւ լոյս՝ի զերեզմանն, և հաստատեցան՝ի հաւատս իւրեանց յաղագս սրբոյն:

Ս.յր ոմն էր՝ի նոցանէ հաւատացեալ, յոյժ մեծատուն բազում առացուածովք, և անուն նորա Նաթէր, և կին նորա անուն էր. նա ախտեաց յայտնապէս առաջի ընկերացն իւր, և ասէ. Եթէ տացէ ինձ Ս.ս տուած աղօթիւք սրբոյս այսորիկ զաւակ արու, և միխթարեսցէ զիս և զամուսինն իմ, շինեցից անա տուն աղօթից յընչից իմոց, և պատուեցից՝ի նմա զոսկերս նորա զամենայն աւուրս կենաց իմոց, և զարդարեցից զամենայն եղելութիւն սպասուք՝ որ ինչ պէտս է նմա. և զինքս զուարթ՝ արարից ինձ սրտի և ժառանգորդ փոխանակ ծննդոց իմոց. և յորժամ առաքեցից վասն առնուն տոհմ, արարից անա տուն աւ՝ի յիշատակ առնուն տոհմ, և կոչեցից զորդին իմ զոր տացէ ինձ Ս.ս տուած՝ի ձեռն աղօթից սրբոյս՝ յանուն դորա, և ելոյն տուրդ ինձ տացէ, և ես եղէց աշակերտ և ծառայ դորա. և հանցէ Քրիստոս ինձ ընդ դմա մնան յանուանցեալսն աշխարհին:

Եակ յորժամ հասին յաշխարհն իւրեանց՝ առեալ սուն այսորիկ զմարմին սրբոյ վկային, եդ՝ի տան իւրում՝ մեծաւ պատուով. եղոյց սուն ընտանեացն, և պատեաց զսենեակն զոր գաւանեցաւ առաջի Ս.ս տուածոյ

յանուն սրբոյն։ Եւ յորժամ լուան՝ ցնծացան և փա-
ռաւորեցին զԱստուած, զի ընկալցի զսխան և կատա-
րեցէք զխնդրուածս նոցա աղօթիւք սրբոյն։ Եւ եբաց
Աստուած զարգանդ կնոջ նորա, և յղացաւ և եղև ու-
րախութիւն ի մէջ նորա։ Յայնժամ այրն Հաւատա-
ցեալ փութացաւ վկայարան շինել սրբոյն, և վաղվա-
ղակի կատարեաց և զարդարեաց ինչպէս տպատուք, և
կանխեալ լինէր և ընտանիք նր անդ յաղօթս կային,
և աղաչէին զԱստուած, զի շնորհեսցէ զխնդրուածս
նոցա, և գիտացեն զանուն նահատակին Քրիստոսի։

Խակ մանկունք՝ ընկերք սրբոյն, յորժամ եկին ի տե-
ղին ըստ սովորութեան ողբալ, տեսին զվէմն թաւա-
լեալ, և զդիրեզմանն ունայն ի մարմնոյն, բայց միայն
հոտ անոյշ բուրէր ի տեղւոջէն. հիացան երկիւղիւ
մեծաւ ու հառաչակ, մեծաբարբառ հառաչէին։
Ոմն ասէր. Գազան յարիշտակեաց. Եւ ոմն ասէր, Թէ՝
Հայր նր տարաւ թաղել զնա։ Եւ աբանչացեալք գնա-
ցին յարկս նրեանց, և պատմեցին ամենեցուն զե-
ղեալն, եթէ զնայր մկրտեցին զնա, կամ զնայր նա
խօսէր ընդ նոսա, կամ զնայր գոյն գնա անկեղծա-
նի (1) լեալ, կամ որպէս թաղեցին զնահատակն։ Եւ
կանխեալ յառաջագոյն էլ Համբաւ նորա ընդ ամե-
նայն աշխարհն, եթէ Վկի սպան զոյդին նր վանս
քրիստոնեայ լինելոյ նորա։ Ի Համբաւէս յայսմանէ և
ի բանից մանկանցն գիտացին Հշմարտութեամբ, Թէ
վանն Քրիստոսի սպանաւ Ասէր ի Հօրէն նրմէ. և ար-
դարև այժմ Ասէր Հարուստ է և Հարստացուցիչ. քան-
զի Ասէր՝ Հարստութիւն Թարգմանի։ Յարեան Հաւա-
տացեալքն այնօրիկ ջերմեռանդն Հաւատով ջոգան ի
տեղին յայն, և տեսին զվէմն գլորեալ արեամբ նորա,
և Հետ գնդին ի քարէն, որ նշանակեալ ունէր զպճճ
չափոյ գնդին և ասեն. Արդարև զանձ մեծ Հեռացաւ
յաշխարհէս մերմէ։ Եւ շինեցին վկայարան փոքրիկ ի
վերայ գերեզմանին, և եդին զվէմն զայն ի մէջ վկա-
յարանին։ Եւ գնացան տէրտէրական խաչին ի վերայ վի-
մին կանգնեցին և գրեցին ի նմա, Թէ՝ Ս. յս տեղի
կատարման վկային Քրիստոսի սրբոյն Ասդամեհի։ Եւ

(1) Յօր. կենդանի։

զայնն հաւատացեալք աշխարհին այնորիկ՝ ի կողմանց կողմանց հանապազ յանուն նորա, և բժշկէին յախտից իւրեանց. և սիրեցաւ հաճեցաւ բժշկութեան զոր առնէր Տէր՝ ի ձեռն սրբոյն՝ ընդ ամենայն աշխարհն արևելից։ Եւ՝ ի գալ միւս տարւոյն՝ եկեալ վաճառականացն այնոցիկ անցանել ընդ նոյն Հանապարհս հանգատիս սրբոյն. իսկ յորժամ հասին՝ ի վերայ անուան երանելոյն՝ մեծաւ փափաքանօք մտին աղօթել՝ ի վկայարան սրբոյն։ Եւ տեսին զվէմն՝ ի մէջ վկայարանին եդեալ, և զնշան տուրբ խաչին՝ ի վերայ նորա. հարցին ցանցառսն, թէ՝ ոմանք ասուն է սրբոյդ, և զիարդ եղև պահել զդոն. և պատմեցին նոցա զամենայն Հրաշս։

Իսկ նոցա խնդրութեամբ լցեալ պատմեցին զերեալ աքանչելիսն, եթէ զիարդ հուրն բոլբոքեր՝ ի վերայ զերեզմանին և կամ ոչպէս առեալ զմարմին սրբոյն՝ տարան յաշխարհ իւրեանց, և շինեալ վկայարան՝ ի ձեռն հաւատացելոյ առնն, և բժշկութիւնք որ լինէին՝ ի ձեռն տուրբ վկային։ Իսկ սպասաւորքն խնդրէին մանն ինչ՝ ի նշխարաց սրբոյն, առ՝ ի պատիւ վկայարանին. զոր յետ սակաւ աւուրց ընտրեցին զլուձալին՝ սպասաւորացն։ Իսկ այրն հաւատացեալ՝ որ առ զմարմին սրբոյն, յորժամ դարձաւ՝ ի տուն իւր՝ եդեալ զկին իւր ծնեալ որդի պեղեցկատեսակ և զուարթ երեսօք. և առեալ զորդին մկրտեաց՝ ի վկայարանի սրբոյն, և անուանեաց զանուն նորա Աբդլմեհ՝ յանուն սրբոյն, որպէս և եռես զգրեալն՝ ի վերայ վկային. և արար ուրախութիւն մեծ յաւուր յայնմիկ ամենայն ժողովրդեանն։ Իսկ սուրբն երեւեր՝ ի տեսլեան ինոջ նորա՝ նախ քան զծնանելն, և ասէր. Ահա ծնցիս որդի ըստ նմանութեան կերպարանաց իմոց, և կոչեսցես զնա յանուն իմ։ Ասէ ցնա կինն. Եւ ոմն ես, տէր իմ, որ կոչէցից յանուն քո զորդի իմ։ Ասէ ցնա սուրբն. Յորժամ գառնայ այրն քո՝ ի Հանապարհէն, և գայ խաղաղութեամբ յաշխարհն՝ ուր եմն եմ մնալ, նա պատմեսցէ զանուն իմ։ Եւ զարհուրեալ կինն ազանչանայր. և յորժամ եկն այր իւր պատմեաց նմա զտեսիլն. և եղև այն ամենայն՝ ի հրաշս[ի] թիւն և յուրախութիւն ամենայն հաւատացելոց. և անուն սրբոյն

հոչակեցաւ ընդ ամենայն աշխարհս, յարևելս և յա-
րևմուտս. և ամենեքին այք խնդրէին յանուն նորա՝
առաքէր Աստուած զբժշկութիւն և զառողջութիւն
հիւանդացս. և բուրէր հոտ Հգնութեան նորա ընդ ա-
մենայն տիեզերս, առաւել քան զամենայն խունկս ա-
նոյշս. և նահատակութիւնն նորա լեալ լինէր յամենայն
բերանոյ, առաւել քան զթագաւորաց և զօրավա-
րաց զախտյանից՝ որք յաղթութեամբ գառնայցեն 'ի
պատերազմէն. և ամենայն քրիստոնեայք պարծէին
նովաւ, և ամէն անուն նորա հաւատային՝ որ 'ի Քրիս-
տոս. և 'ի ձեռն նորա՝ ընդհէր Աստուած զբժշկու-
թիւն աշխարհի. և ամենայն հաւատացեալք տային
օրհնութիւն Քրիստոսի Աստուծոյ:

Իսկ Վկի հայր նորա 'ի ծերութեան ժամանակին
տագնապէր 'ի դիւաց. և 'ի միում աւուր լկեալ յոյժ՝
զարկոյց զինա զգետնի, և լուան 'ի նմանէն, որ ասէր
այսպէս. Ողբեա՛կ իմ; Աւեր, մի ըստ արժանեաց իմոց
ընկալայց հատուցումն 'ի քէն: Եւ բարձեալ զինա առ
ժամայն ոտիւոց իւրոց՝ ածեալ կապեցին առ վիմին,
որ ներկեալ էր արեամբ ծառային Քրիստոսի, և փու-
թապէս ընկալաւ զբժշկութիւն, և հաւատաց 'ի Քրիս-
տոս և 'ի ծառայ նորա, և մկրտեցաւ ամենայն տանբն
իւրով'ի նմին ջրհորի: Եւ այսպէս որսայր սուրբն զամե-
նեսեան 'ի հաւատս Քրիստոսի, և զարթուցանէր յա-
մենայն կողմանց զալ'ի հաւատս, և ընդունէին զա-
ռողջութիւն հոգւոց և մարմնոց:

Իսկ 'ի միում աւուրց առն միոց յոյժ մեծատան, որ
էր 'ի Տաճկաց մեծատունից, երամակ ուղտուցն խու-
ճապեցան, և գնացին յանապատ տեղիս, և ամենևին
ոչ գիտացին զնեաս նոցա: Իսկ յորժամ հատաւ յոյս
գտանելոյ գնոսա, դէմս արարին առ'ի յաղօթել, և
ուխտեաց ասելով. Ծառայ Քրիստոսի և վկայ սուրբ,
եթէ գարձուսցես յիս զկորուստն իմ, մի'ի տասանցն
յորոց գառնան տայ քեզ տասանորդս: Եւ յորժամ
գարձաւ այրն'ի տուն իւր, ահա ուղտք նորա ամե-
նեքեան հանդերձ կորստեամբքն կային առ տանն իւ-
րոյ, և ոչ կորեաւ'ի նոցանէն և ոչ մի: Եւ յորժամ
թուեաց գնոսա՝ ուրախ եղև յոյժ, և զղջացաւ, և
ոչ եւս տանել սրբոյն զառաքելոյն՝ զոր խոստա-

ցաւ, և ասէ. Բաւական է սրբոյն տանն ուզտ միայն, քանզի ոչ աշխատեցաւ'ի ժողովելն, և ոչինչ ծախեաց վասն նորա: Եւ ասեն ցնա բարեկամքն իւր. Ոչ այդպէս, այլ մեծդ, այլ զոր խոստացար՝ հատո նմա, զուցէ այլ ինչ պատահիցէ քեզ, և կարօտացես և ոչ օգնեսցէ քեզ: Այլ նա ոչ կամեցաւ, զմտաւ ածեալ զբազմութիւն ուղտուցն՝ որ պակասէին'ի նմանէ, և տագնապէր. և որոշեաց'ի նոցանէ տասն ուղտ զոր ինքն կամեցաւ, և առաքեաց զնոսա'ի վիճակաւոր սրբոյն: Իսկ'ի միում աւուր հանեալ զուզոյն յարօտ, և ընդ երանելին առ ժամայն ցրուեցան և տարան զծառայսն որ հեծեալ էին յուզոյն, և հետք նոցա ոչ ևս ուրեք յայտնեցան. և լուեալ առնն զկորուստ ուզտուցն իւրոց՝ զգեցաւ ամօթ, և առաքեր զբարեկամանն իւր, զի երթիցեն առ սուրբն, և լինիցին երաշխաւոր վասն որոյ ուխտեացն: Եւ եղև իբրև ջոգան'ի տեղին՝ տեսեալ'ի հեռաստանէ զի ժողովեալ էին ուզտքն, և գայլն'ի վիճակաւոր սրբոյն: Իսկ նոցա տեսեալ զբազմութիւն ուզտուցն՝ լցան երկիւղիւ, համարեցան թէ գունդ թշնամեաց լինէ. և յորժամ մօտ եղեն և տեսին զինչանան ուզտուցն իւրեանց՝ զարհուրեալ ասէին. Արդարև մեծ և զօրաւոր է նահատակս այս. փոխանակ զի տեղին յուխտէ նուա, տահատակ զամենայն ուզտս առ ինքն ամիոխեաց: Եւ արդ առաւելեցէք՝ զի առցէ զիւրն լսա առաջին խոստմանն, և թողցէ զմեզ երթալ զկնի մեր: Եւ որ շեղին և եռուն տատանտրդս'ի լսացն և'ի վաճառացն, և'ի ծառայիցն եռուն արածել զուզտան. և յորժամ կարդեցին զայս, աղօթեցին (1) առ Աստուած, և կարդացին զանուն սրբոյն, և ասեն. Ո՛վ սուրբ ծառայ Քրիստոսի և քաջ նահատակ, առ զքոյդ և արձակեա զմեզ գալ զկնի մեր: Եւ գարձուցեալ ուզտուցն զերեսս իւրեանց՝ երթային զկնի նոցա:

Բազում և այլ սքանչելիս առնէր Տէր'ի ձեռն սրբոյն Սեղբեստեայ, օրհնեալ գՀայր

(1) Ցօր. աղաչեաց:

արարիչ արարածոց, և զՈրդին հաստիչ և հաստատոյ, և զՀոգին սուրբ՝ զօրացուցիչ և պարգևաբաշխ ամենեցուն. և զնոյն ինքն զծառայն Քրիստոսի, և զամենայն սուրբս, բարեխօս ունել առ բոլորիցն Աստուած. զի խոստացեալց բարեացն հաստուք, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. որում վայել է փառք և զօրութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Ս. Աթիոքայոսի եւ կնոջ նորա Ալիտողեայ։

Եւ եղև յերկրորդումն գալստեանն Տաքսիմիանոսի Թագաւորին՝ի Նիկոմիդացւոց քաղաքն, և ապան զանձնեանս որք ըստ տեղեաց տեղեաց հաւատացեալք էին՝ի Քրիստոս. և դիմեալ՝ի տաճարն՝ երկիր պագանէր աստուածոյն. և հրամայեաց զիւր զոհան մատուցանել յատաջ, և յետ այնորիկ զքրիստոնէն։ Լուեալ այնուհետև ամենեցուն՝ գայլին՝ի մատուցանել, ոմանք ցուլս և զուարակս, և ոմանք գառինս և խոյս և հաւս, քանզի կատարեաց էր քաղաքն։ Եւ զինուորն յամենայն հրապարակս և՝ի փողոցս և՝ի տունս. մինչև ամենայն քաղաքն հոտեալ՝ի շարուց և՝ի ձենձերոյ զոհից. և պատուիրակքն շրջէին քարոզել ամենեցուն՝ի զոհել մեռոյ աստուածոյն. քանզի պատուհասեալ հրամայեաց Թագաւորն զայնոսիկ որք ոչ զոհեացեն, և զգտեալ քրիստոնեայն հրով այրել։ Կարգեցին յայնոսիկս որք ոմանք քննել զհրապարակն և զամենայն քաղաքն. զի եթէ գտանիցեն այս կամ կանայս հաւատացեալս՝ի Քրիստոս, ածցեն առ Թագաւորն առ՝ի խոշտանգել զնոսայոսիկ տանջանօք և բռնակից հրով. որք և ինչս բազումս տային գուշակելոցն գահիճքն։ Ստանէին այնուհետև զրացիք զդրացիս և սիրելիք զսիրելիս և ազգականք զազգականս, ՚ի տուրն ընչից հայհոյեալք. ոմանք վասն երկիւղի Թագաւորին մատնէին զհաւատացեալսն առ՝ի յինքեանց. վասն զի պատուհաս սահմանեալ էր այնոցիկ որք Թաքուցանէին զքրիստոնեայսն։

Յայնժամ ազդ լինէր ոքք զինդիրն առնէին՝ի Թագաւորէն, եթէ են ոմանք յայրի ուռենի Թագուցեալ. քանզի լուան զձայն սաղմոսի սրբոցն՝ի գիշերի մօտակաց եղեալ, և եկեալ գուշակեցին. և նոցա վաղվաղակի առեալ զբազմութիւն զինուորացն՝ հասին՝ի վերայ այրին. և ըմբռնեալ զնոսա ածին՝ի քաղաքն ուր էր Թագաւորն, կապեալ զամենեսեան երկաթի կապանօք: Եւ եղև յորժամ էլ Թագաւորն երկիր պագանել և զոհել՝ի տաճարի աստուածոցն, և ահա զինուորքն մատուցին զնոսա առաջի Թագաւորին և ասեն. Թագաւոր, յաւիտեան կաց. զոք զամենայն քաղաքս և շուրջ զգեօղն՝ յերկրպագութիւն աստուածոցն, հաւանեալ քոյոց հրամանացդ, բայց միայն սոքա Թշնամանեցին զաստուածսն, չհաւանեալք քոյոց պատուիրանացդ:

Եւ տեսեալ զսուրբն առժամայն հրամայեաց կացուցանել զվառան, և մերձեցուցանել զնոսա՝ի վառն. ասէ ցնոսա. Ուստի էք, աստի եթէ այլ ուստեք: Եւ նոքա ասեն. Ազգաւ աստի էնք, այլ հաւատովք գալիլեացիք:

Ասէ ցնոսա Թագաւորն. Եւ ոչ լուարուք եթէ որպիսի պատիժս սահմանեալ է ոքք յայդպիսի հաւատոգ գտանին, և կամ ուրպէս գան վախճանիւ զրաւեցան՝ի բուռն անկեալք: Սուրբքն ասեն. Լուաք և ծիծաղեցաք զանմիտ հրամանատդ քով. ծիծաղեցաք և զաստանայիս որ զօրացեալ է յոգիսն անհաւատութեան, որոց և զօրապետն դու ես: Թագաւորն ասէ. Եւ յինմէ իշխեցէք ասել զմեր հրամանսն. մեծոքք աստուածոքն երդուեալ, գան և անհնարին տանջանօք մաշեցից զմարմինս ձեր: Եւ ասէ. Պրկեսցին և տանջեսցին բոլոք, և եկեալ աստուածն դոցա օգնեսցէ դոցա, և փրկեսցէ զդոսա՝ի ժամս յայսմանէ: Եւ սկսան երեք դատիչքն ջաղտուկ տանջել զնոսա: Սուրբքն ասեն. Յաւել և այլ ևս տանջուչք, ոլ աստուածդ ամարտ, քանզի որչափ յաւելուս զտանջուչքդ՝ այնչափ առաւելուսք զպարգեւին: Եւ բռնաւորն ասէ ցնոսա. Ա՛յ Թշուառականք, այժմ զգեստս ձեր բառնամ, և դուք պատկաց ակն ունիք. այլ մանաւանդ դարձիք յայդպիսի յամառ կամացդ, և մի ընդ վայր կորուսանիցէք զձեզ:

Սուրբքն ասեն. կորուսիչ զքեզ Աստուած, զի զծա-
ւայս նորա՝ի զուր և՝ի նանիր խոշտանգէս, առանց
միոյ իրիք յանցանաց: Եւ բարկացեալ Թագաւորն
հրամայեաց բռնաբարանքիք բեւհանել զկզակս նոցա. և
գահճացն առեալ քարինս՝ ջարդեցին զբերանս նոցա.
և սրբոցն ընկալեալ զտանջանսն՝ ասացին. Ուրե՛ի չա-
րագործութեան ըմբռնեալ՝ ընդ այսպիսի գառն և
անողորմ տանջանօք սրկեր զմեզ. Հարցէ զքեզ Հրեշ-
տակ Աստուծոյ, և զամենայն ամբարիշտ տուն քո, ում
անօրէն և Թշնամի Աստուծոյ. ոչ արդեօք յագեցար
տանջանօքս զոր ածեր՝ի վերայ մեր, և ոչ ձանձրացար
յայնչափ յերկար ժամս ձգեալ զազգի ազգի տանջանս
քո. և ոչ զմտաւ ածեր եթէ և մեք մարմին զգեցեալ
եմք որպէս և դու, Թէպէտ և քոյդ անօրէն ես և ամբա-
րիշտ. զքարինսդ արդեօք ապառաժս ազաւաղ ևս առ-
ներ այսչափ տանջանաւքս քո, ում որդի սատանայի:

Բարկացեալ Թագաւորն և ասէ. Մեծամէք առաւա-
ծոմքն երդուեալ, զկեզուս ձեր հատից, զի ձեօք ուցիցեն
մարդիկ մի կալ հակառակ տերանց իւրեանց: Սուրբքն
ասեն. Եւ առնս զայնոսիկ որ հակառակ կան տերանց
իւրեանց: Եւ ասէ. Այո՛, առեմ, և պատուհաս ևս առ-
նեմ: Սուրբքն ասեն. Լսեր և դու, ում ամբարիշտ, զի
եթէ դու զանհնազանդս երկրաւոր տերանց իւրեանց
առես և պատուհասես, ապա զիարդ բռնադատես
զմեզ ընդդիմանալ Աստուծոյն մերոյ, ապստամբե՛ի
Տեառնէ մերմէ և՝ի Փրկչէն. զի չարչարեացուք և մեք
զայն՝ որ քեզն է պատրաստեալ: Եւ նա ասէ ցնոսա.
Ջի՞նչ պատրաստեալն է ինձ, այդ դատապարտք: Սուրբքն
ասեն. Այն որ պատրաստեալն է սատանայի և հրեշ-
տակաց նորա, և անօթից նորա, որ էք դուք ամբա-
րիշտք. հուր անշէջ և որդն անքուն, տանջանքն ան-
վախճանք և պատուհասքն յաւիտենականք. դուքն ա-
պականեցաք և խաւարն արտաքին, ուր լալ աչացն
է և կրճել առամանցն, և այլ ևս տանջանարանք,
զորոց տեսիլն դիտէ այն որ պատրաստեացն ձեզ զայն:
Եւ նա ասէ ցնոսա. Աստուածոմքն, զի զկեզուս ձեր
հատանեմ այժմիկ: Սուրբքն ասեն. Ո՛վ անմիտ և ամ-
բարիշտ, Թէպէտ և հատցես զգործն փրկութեան
Թեառն, կարող է հեծումն արտից առաւել ազա-

*ղակել առ Աստուածն մեր. և արիւնա այս ղոր Հե-
ղեալ ունի բերան մեր՝ մեծաբարբառ ևս քան զարիւն
գոչէ առ Աստուածն մեր, վասն որոյ և չարչարիմք,
Բարկացեալ Թագաւորն և ասէ. Նշանակեցէք զա-
նուանս գոցա գրով զամենեցունն, և կապեալ ղգոսա
երկաթի կապանօք և տարէք՝ի բանտարան գատա-
պարտելոցն, և ամենևին նեղեցէք. և որպէս ինձ կամ
է՝ այնպէս խոշտանգեցից ղգոսա. ոչ եթէ սրոյ պա-
տուհաս միայն արժանի են, այլ և պարտ է դոքօք
խրատել և զգաստացուցանել զամենայն գաւառս:*

*Այլ ոմն մեծ և երևելի իշխան՝ի դրան արքունի,
որոյ անուն Սդրիանոս, իբրև եառ զտանջանացն խըղ-
ճութիւն, և զնոցա ժուժկալութիւն, ասէ ցառըն
վիայան. Երդմնեցուցանեմ զձեզ յաստուածն ձեր՝ վասն
որոյ չարչարիքդ, ասացէք ինձ զՀնարիւտն, զինչ է այն
որում դուք աչն ունիք առնուլ արժանի ընդ այդչափ
տանջանացդ. Թուի ինձ եթէ մեծ և պատուելի իմն ե-
րևի: Ասեն ցնա տուրքն. Ոչ մեր բերանք բաւական են
պատմել վասն այնորիկ, և ոչ քո լսելիքդ կարող են ըն-
դունել: Ասէ ցնոսա Սդրիանոս. Բնաւ ամենևին ոչ
ինչ լուարուք վասն այսոցիկ, ոչ յօրինաց և ոչ՝ի մար-
գարէից և ոչ յայլոց գրոց: Տուրքն ասեն. Եւ ոչ հո-
գին իսկ մարգարէքն որպէս պարտ է գիտել, քանզի
և նոքա մարդիկ էին աստուածապաշտք, և որչափ կա-
րացին առնուլ՝ի Հոգւոյն սրբոյ՝ գնոյն և խօսեցան. այլ
վասն այնորիկ գրեալ է, Թէ՝Ձոր ակն ոչ եառ և ունկն
ոչ լուաւ և՝ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաս-
տեաց Աստուած սիրելեաց իւրոց սրբոց: Ձայս լուեալ
Սդրիանոսի՝վաղվաղակի՝ի նեղըն գիմեաց. և կացեալ՝ի
մէջ առեալն ասէ ցդպիրսն. Գրեցէք և զիմ անուանս ընդ
սուրբ նահատակսդ, քանզի և ես քրիստոնեայ եմ: Իսկ
իբրև եառ բռնաւորն յանդիմանակաց՝ կարծեաց եթէ
չարախօսութիւն զրոյցն մատուցանիցէ. և ասէ ցդպիր-
սն. Գրեցէք վաղվաղակի և զպատուականդ Սդրիա-
նոսի ձեռնարկեալ զնոցանէ ամբաստանութիւն: Ասեն
ցնա դպիրքն. Ոչ զնոցանէ չարախօսէ, այլ զինքն քրիս-
տոնեայ անուանէ, և ազատէ զանուն իւր գրել ընդ մա-
հատարացն: Իբրև լուաւ Թագաւորն բարկացաւ և
ասէ ցնա. Մոլորեցար, Սդրիանէ, կամիս և դու չա-*

բաչալ կոմնչիլ։ Եւ նա պատասխանի տուեալ ասէ. Ո՛չ մոլորեցայ, Թագաւոր, այլ՝ի բազում մոլորութենէ այժմ զգաստացայ։ Այն ինա Թագաւորն. Խնդրեա յինէն Թողութիւն, և սուա առաջի ամենեցուն եթէ ընդ խաբս խաբեցայ. և ջոգ ընչեա զանուն քո՝ի միջս դատապարտելոցն։ Աղրիանոս ասէ. Յայսմհետէ յԱստուծոյն իմոյ խնդրեմ զԹողութիւն վասն անուանդ կենաց իմոց, և վասն առաջին և անօրէն գնացից իմոց։ Եւ բարկացեալ Մաքսիմիանոս հրամայեաց կապել զնա և տանել՝ի բանտն ընդ տուրբ վիայն, օր յայտ արտաբեալ՝ յորում հարցանիցէ զնա և զնոսա։ Մի ոմն՝ի նոցանէ՝ի ծառայից Աղրիանոսի իբրև եառնս զայն՝ ընթացեալ վաղվաղակի՝ի տուն և պատմեաց կնոջ նորա Ընխատոլեայ և ասէ. Զտէրն իմ կապեցին երկաթի և պանօք և արկին՝ի բանտ։

Նա իբրև զայն լուաւ, պատառեաց զպատմուճանն իւր և սկսաւ լալագառնապէս և ողոլանել. և ձիչ բարձեալ ասէ ցպատանին. Այս ինձ, այր դու, վասն որոյ պատճառանաց կապեցաւ տէրն իմ։ Եւ ասէ ցնա պատանին. Եառ զոմանս խոշտանգեալս վասն անուանն այնորիկ զոր Քրիստոս ասեն, ոչ հաւանեալ ըստ հրամանի Թագաւորին առ՝ի չզոհել կուռցն, և վաղվաղակի ևս առանց բռնադատելոյ ասէ ցդպիրսն. Գրեցէք և զիմ անուանս ընդ արսն ընդ այնոսիկ, քանզի մեծաւ ցանկութեամբ ախորժեմ մեռանել ընդ նոսա։ Այն ժամ ասէ ցնա կինն. Եւ ո՛չ դիտացեր թէ վասն ի՛ր տանջեցան արքն այնոքիկ։ Եւ պատասխան ասէ. Այսպէս գիտեմ թէ ոչ կամեցան զոհել աստուածոցն։ Իբրև նա զայն լուաւ, վաղվաղակի յարեաւ և խնդալից եղեալ փոխեաց զպատառեալ պատմուճանն իւր, և մեծաւ փութով դիմեաց՝ի բանտն առ նա, քանզի էր՝ի ծնօղաց հաւատացեալց և սիրոց դուստր, և երկնչէր խոստովանել վասն ամբարշտութեանն զօրացելոյ յայնժամ։ Եւ հասեալ՝ի բանտն եմուտ՝ի ներքս և անկաւ առ ոտս տանն իւրում, համբուրէր զկապանս նորա և ասէր. Երանելի ես դու, տէր իմ Աղրիանէ, զի դուք զայն ինչ զոր ոչ Թողին հարքն քո քեզ. արդարև այսպէս օրհնեցեալ ամենայն մարդ որ երկնչի՝ի Տեառնէ. և այժմ, տէր իմ, հաւաքեցեր՝ի մանկութեան քում՝ զոր ոչ արդեօք

պատանելոց էիր՝ ի ծերութեան քումմ. արդարև, տէր իմ, անհոգ երթիցես յայն յաշխարհն, համբարեալ քեզ զայն մեծութիւն բազում՝ զոր գտցես՝ ի ժամանակի սկսողից, յորժամ կարօտանայցեն բազումք մեծատունք. յորժամ չիք փոխարդւոյ ժամանակ և ոչ յանօթառնոյ. յորժամ ոչ փրկեսցէ ոք զոք՝ ի տանջանաց, և ոչ ոք ումեք երևեսցի, ոչ հայր որդւոյ և ոչ մայր զրաստեր, և ոչ ինչք ժողովելեաց իւրեանց, և ոչ ծառայք տեառն, և սիրելիք ոչ երևին սիրելեաց, այլ ամենեքեան զիւրաքանչիւր բեռանց հոգայցեն. դու տէր իմ, միայն զքոյդ առաքեզ առեալ երթաս խաղաղութեամբ՝ ընկալեալ զխոստումն Աստուծոյ. դու երթաս վաստահութեամբ չերկուցեալ ամենևին յահագին յառաջիկայից. դու իբրև զպարտս զվարձանն քո պահանջեսցես Աստուծոյ. ակարացեալ է այսուհետև բանասարկուն ընդդէմ քո: Արդ աղաչեմ զքեզ, տէր իմ, հաստատուն կալ՝ ի կոչմանդ քումմ յոր կոչեցարդ, և մի ինչ ամենևին զքեզ՝ ի գեղեցիկ առաջիկայիցդ վերպեցուսցէ, մի ագգ և մի տոհմ, մի ծնօղք և մի ինչք, մի ստացուածք և մի ծառայք և աղախնայք, և մի այլ ինչ յերկրաւորացս. զի ամենայն ինչ անցանելոց է և ապականելոց. յաւիտենականին միայն Թեարկեա, զոր յետ սակաւ ժամու տեսցես զանանցանելոյն. (1) և մի զքո ոտդ մեղկացուցանեն աղերս բանք բարեկամաց քոց, և գոլասցեն զՀաւատս քո գեղեցիկ՝ նողկասալի և հրապուրիչ բանիք նոցա. առեա զողջոյն նոցա, ուրացիր զամբարիշտ խրատս նոցա: Ընդ տուրբս ընդ այնոսիկ միայն հայեաց, նմանեա ժուժկալութեան նոցա, նմանեա հաւատոյ նոցա: Մի խոտորեսցի զքեզ մեերմութիւն Թագաւորին. մի զարհուրեցուսցէ զքեզ տեսիլք տանջանացն. մի զանդիտեցուսցէ զքեզ հուրս այս, որովհետև խրոխտացար՝ ի վերայ յաւիտենական անշէջ հրոյն:

Եւ յորժամ կատարեաց զամս զայսոսիկ՝ լուեաց, քանզի երեկոյ խնկէր այնուհետև: Յայնժամ ասէ ցնա Աղբիանոս. Երթ՝ ի տուն քո և անդ լեր. և յորժամ գիտացից զմեռս քո՝ գամ ասացից զմերոյ՝ կո-

(1) Յոր. զտանցանելոյն:

չեկիր զքեզ առաջի Թագաւորին, զի եկեալ տեսցես զվախճանն մեր։ Եւ յարուցեալ Ընխտալն շուրջ եկն զբոլոքովքն, և համբուրելով զիւրաքանչիւր կապանս նոցա, քանզի էին Թուով արք երկու քառասուն և երեք. և մեծաւ աղաչանօք առ ցնոսա. Փոխանակ ձեր, տեառքդ Աստուծոյ, ձեռնտուք լերուք ոչխարիդ Քրիստոսի, ուսուցէք զմա զինշանակ համբերութեանդ, խեղճութեան արարիչք անանց պարգեւաց, զորոց ժուժիւք լութիւն առիթ լինի. սա է պատուական ձերոց տանջանացդ. ահաւասիկ շահեցարուք զորս հոգիս ընդ ձերումդ. փոխառու լեցի ձեզ և յայսմ Քրիստոս. լերուք զմա հարք փոխանակ մարմնական ամբարիշտ ծնօղացն. հաւատարմացուցէք վասն երանելի վախճանին, զի անյապաղ եղեալ այնու փոխադանօք՝ կարասցէ տեւել՝ի նահատակութեանն։

Եւ զայս ասացեալ անկաւ առ ոտս նոցա և երկիր եպագ նոցա, և դարձաւ ջոգաւ առ Աբրիանոս, քանզի էր՝ի նեղքնութիւն բանտին սմդեալ՝ի կոձեղ, և ասէ ցնա. Տէս քաջ տէր իմ. մի հայիր՝ի դեղեցկութիւնն մարմնոյ քո, և մի՝ի բարձրութիւն հասակիդ քո, զի այդ ամենայն կերակուր որդանց է. մի զբաղեցուսցէ զքեզ ոսկի կամ արծաթ կամ հանդերձս կամ առնցուածս, կամ այլ երկք պալատականք, զի ոչ ինչ ամենևին մնասակաց լինի՝ի ժամուն յայնմիկ, այլ ամենայն առեալ մուսացեալ կայ. չկիր անդ կարշառ ումեք տալ վասն անձին իւրոյ, այլ միայն տուրդ հոգւոյդ կարշառել Աստուած։ Եւ զայս ասացեալ ողջոյն եառնամա և եկն գնաց՝ի տուն իւր. և անդ աղաչէր զԱստուած զտիս և զգիշեր զի հաստատուն կացցէ՝ի խոստովանութեան այր իւր։

Յետ աւուրց ինչ յորժամ գիտաց երանելին Աբրիանոս եթէ՝ի հարց և՝ի փորձ դատաստանաց մատնեալ էր, ասէ ցտուրեան. Հրամայեցէք ինձ երթալ ածել զաղախինն ձեր, զի առնիցեր կացցէ՝ի վկայութեանս մերում, և տեսցէ զվախճանն մեր. քանզի զայս խոստացեալ նմա էրդմամբ հանդերձ։ Եւ նոցա հրամայեալ, և եառ ինչս բանտապետացն և եկն գնաց, և եառ երաշխաւոր ընդ ինքեան զժողովս սրբոցն։ Եւ մինչդեռ երթայր՝ի Քաղքն՝ի Նիկեան, ետես զնա ոմն ծանօթ՝ի քա-

*ղաքացեացն և ընթացեալ պատմեաց Անիտոլեայ ա-
մուսնոյ իւրոյ և ասէ. Ամձակեցաւ Ադրիանոս՝ի կա-
պանաց և գայ մօտ՝ի տուն.՝ի Ճանապարհի թողլ զնա:
Իսկ նա ոչ հաւատաց և ասէ. Ո՞վ արձակէ զնա յայնց
կապանաց. քաւ լիցի նմա թուլանալ և որոշիլ՝ի սըր-
քոյն յայնցանէ: Եւ մինչդեռ զայն խօսէին, ահա այլ
ոմն ծառայ նորին եկն ետուտ թափ՝ի դրէ և ասէ.
Տէրն իմ արձակեցաւ և ահաւասիկ գայ: Իբրև լուաւ
կինն կարծեաց եթէ՝ի մարտիրոսութենէ փախու-
ցեալ է. տրտմեցաւ յոյժ և լայր դառնապէս: Եւ իբրև
եառես զնա՝ յոտն եկաց, և թողեալ զգործն զոր ունէր
՝ի ձեռաց անտի, և ընթացեալ վազվազակի փակեաց
զդուրս տանն և աղաղակ բարձեալ ասէ. Հեռի լիցի
կինէն անկեանէն Անտուծոյ, և որ առեաց տեառն Ան-
տուծոյ իւրոյ. քաւ լիցի ինձ խօսել ընդ բանի նորա՝ որ
ուրացեալ է զԱստուած, և լսել բան՝ի լեզուէ նենգա-
ւորէ՝ որ զժնեաց արարչին իւրոյ: Եւ ասէ ցայրն իւր
առ դուրսն. Ա՛յ Թշուառական և անաստուած այր, ո
արար քեզ հարկ ձեռնամուխս լինել կիրս՝ որում չեր
սահակ կատարել. ո տուն արձակեալ ձգեաց եհան զգ-
քեզ յայնպիսի խաղաղական և հանգստական կայանէ.
աղէ սաս զդս, զինարդ փախեար չես Հակատեալ՝ի պա-
տերազմի. զինարդ զենուիեց եղեր չես տեսեալ զնահա-
տակն. զինարդ վիրաւորեցար չես նեաս՝ի գրկաց ոստո-
ցեալ. զինարդ յազգէ սպանողաց պատերազմ մաքուր
Աստուծոյ մատչիցի. հնար էր արդեօք յարհնահեղ
տեղւոջէ և՝ի շաղախեալ օդոյ անուշահոտ խունկ մա-
տուցանել Աստուծոյ: Ա՛յլեւս հեղգս զինչ գործեցիր որ
գիպեցայ առն ամբարշտի և յամբարշտաց գաւակէ. և
ոչ մի ժամ կոչեցայ կին մարտիրոսի, այլ վազվազակի
եղէ ուրացողն. առ սակաւ ժամն եղեն պարծանքս իմ,
և ահա յաւիտեանս յաւիտենից նախատինք իմ. առ
մի ժամ պարծեցայ՝ի կանայս, և արդ զնամ կորակոր
անհնչեցեալ՝ի մէջ նոցա:*

*Իսկ երանելին Ադրիանոս լսէր՝ի դրացն և հաւմբե-
ր. քանզի յոյժ ուրախ էր ընդ բանս նորա. առաւել
և Նեմէր կատարել զայն յորս փութայր. և զարմա-
ցեալ էր զի կին մարդ այնպէս խօսէր, և այն և զի
մանուկ էր և նորահարսն. քանզի չև և էր երեքտա-*

սան ամիս Հարսանեաց նոցա։ Ա.յլ յորժամ եւս կարէ տագնապեալ զկինն՝ ասէ ցնա. Բաց ինձ զքոյրս, տիկին իմ Աննատալի. ոչ որպէս դու կարծես եթէ փախուցեալ եմ՝ ի մարտիրոսութենէն, քաւ լիցի. այլ եկի առնուլ զքեզ, զի մօտակաց եղեալ տեսցես զվախճանն մեր, որպէս և բանս իսկ եղի ընդ քեզ։ Եւ նա ոչ հաւատայր նմա, այլ ասէր. Ահա և զիս ևս նենդէ անօրէնս. ահա ասէ միւս ևս Յուդա. ՚ի բաց գնա յինէն, ապա թէ ոչ՝ անձամբ անձին դաս առնեմ, քանզի այդ առաջի կայ ինձ։ Իսկ երբեւ կարի յաւեաց և ոչ եբաց, ասէ ցնա. Բայց. ապա թէ ոչ՝ գնամ և ոչ ևս տեսանես զիս. յայնժամ սուգ առնուցուս զի ոչ տեսեր զիս յառաջ քան զերս իմ յաշխարհս։ Եւ ասէ ցնա. Ես զքեզ ոչ ձգեմ զքեզ, մինչեւ եւս զիս ընդ քեզ զգուշով սրբեցեն. և եթէ ընդդէմ լինիցի ինձ և ոչ գայցեն՝ կրեցից եւս և զիս տանջանաւն ՚ի վերայ իւրեանց վիրաւորն. և ոչ կարեն ժուժել, քանզի գրկ թէմեռեալ իսկ եմ՚ի տանջանացն։

Եւ յորժամ լուաւ եթէ նեղին սուրբքն, վաղվաղակի եբաց զքուրան, և անկեալ զիմեամբք փարէին. և ասէ ցնա սուրբն Աղրիանոս. Երանելի ես դու՚ի կանայս, զի դու միայն գիտացեր շահել զայր քո. արդարև դու միայն երևեցար յերկրի այրասէր. օրհնեցեալ պսակ քո. դու ուղեփաձեցեր զպատուական յաղթութեան, քանզի և դու մարտիրոսանաս, թէպէտ և ոչ չարչարիս։ Եւ առեալ զնա գնաց. և մինչդեռ երթային՚ի Նիկոմեդիա, ասէ ցնա Աղրիանոս. Ո՛վ կին, զիա՞րդ յանձն արարեր զինչս տանն քո։ Եւ նորա պատասխանի տուեալ ասէ. Մի, տէր իմ, մի փոյթ առներ զերկրաւորացս, զի մի զբաղեցուցանեն զքեզ զինքեանդ. զինն միայն Հոգա, թէ ուրպէս կատարեսցես յոր կոչեցարդ։ Ի բաց արա՚ի քէն զաշխարհս զայս՝ որ ապականելոց է. զայն միայն փութա կատարել որ առանց ապականութեան է, զառաքինական քեզ և արբոյն այնոցիկ ընդ որս Հանապարհորդես։

Եւ մեռեալ նոցա՚ի բանտն, դիմեաց ազախինն Քրիստոսի Աննատալի առ սուրբն, և անկեալ երկիր պադանէր կապանաց նոցա. և եռես զմարմինս նոցա արբեալ՚ի տանջանացն, մինչև որդանցն եռալ՚ի նոցանէ և գնալ՚ի գետն. և հրաշացեալ ընդ սաստիկ

Թիւնն, և յղեաց մի'ի ծառայից իւրոց'ի տունն և հրամայեաց բերել զամենայն բարակ կտաւս զգեղնլիս նր' բազում և մեծագնի, քանզի էր յազատ յազգէ և մեծ. և առեալ պատառեաց զկտաւն զայն և մաքրեաց զթաղ նախ վկրաց նոցա, և պատեաց զձեռս նոցա և զոտս, քանզի էին լուծեալք և ընդարմացեալք յերկաթոյն. և ձնաց առ նոսա'ի բանտին աւուրս եօթն, և առնայն իրօք զարմանէր զաւուրքն:

Եւ եկեալ հասեալ աւուրն յորում զՀարցուփորձն առնէր բռնաւորն, և հրամայեաց ածել զաւուրքն զառաջեաւն. և վաղվաղակի երթեալ'ի բանտն հանին զամենեսեան, և բարձեալ բերէին'ի վերայ տըրմուղ գրաստից, քանզի էին լուծեալք'ի տանջանացն, և ամենեքեան կապեալք շղթայիւք. բայց միայն Ս. դրիանոս երթայր գնայր կապեալ ձեռս'ի յետս. և երանելին Ն՚իտոլէ երթայր զկնի նորա աղաչելով և ասէր. Տէր իմ Ա՚դրիանէ, ախոյան լեր ընդդէմ առ տանայի վաւեալ զինուքն Քրիստոսի. մի երկնչիր'ի տանջանացն, ահա մօտակայ է փրկիչն Յիսուս և օգնէ քեզ: Եւ իբրև մերձ եղեն'ի տեղի զգաստատնին, տեսեալ զնոսա դահձապետին՝ եմուտ և ասէ զթափաւորն. Ահաւասիկ հասեալ կան մօտ յատեանդ գաստապարտեալքն: Եւ իբրև լուաւ բռնաւորն, ասէ. Մերկացուցէք զամենեսեան և ածէք'ի ներքս, զի տեսցեն զխիմեանց տանջանացն: Եւ ասէ դահձապետն. Ահաւասիկ որ յառաջագոյն տանջեցան՝ ոչ կարեն հարցանել, զի կարի նուաղեալ են. այլ կայ Ա՚դրիանոս մատաղագոյն և բաւական'ի համբերել ամենայն հարցմանց. այլ այնոցիկ շրջեալ ամենայն մարմինքն, մինչև կուղք նոցա երևին արտաքոյ. արդ եթէ հարցցին՝ թաւանան. և ահա բուժին յայլոց և յառաջիկայ տանջանացն: Այլ մեք ոչ կամիմք հանդուրժել տեսանել զխիմեանց տանջանան: Եւ ասէ դահձապետն. Ահաւասիկ որ յառաջագոյն տանջեցան՝ ոչ կարեն հարցանել, զի կարի նուաղեալ են. այլ կայ Ա՚դրիանոս մատաղագոյն և բաւական'ի համբերել ամենայն հարցմանց. այլ այնոցիկ շրջեալ ամենայն մարմինքն, մինչև չ

փայտ իւր։ Եւ յերթալն նորա ասէն տուրքն ցնա. Սդրիանէ, ահա արժանի եղեր առնուլ զխաչ քո և երթալ զհետ Քրիստոսի. զգոյշ լեր մի դառնայցես՝ի նանիր առ՝ի յետոյն քո. մի զգանձդ քո կատեսցէ քանաարկուն. մի երկիցես յոյոց տեսանելոյ. ծաղր արա զհրամանս քոնաւորին, զի չեն արժանի չարչարանք այժմեան ժամանակիս՝հանդերձեալ փառացն որ յայտնելոց են՝ի մեզ։ Եւ երանելին Սիխտոսէ հուպ լեալ՝ի նա ասէ. Ցես քայլ, տէր իմ, առ Սուտաճ միայն դէր զուշդ քո. մի զարհուրեցուսցէ զքեզ տեսիլ տանջանացն. սակաւ մնչ է երկիւղդ և յաւիտեանս յաւիտենից է հանդիստն. խոսն են խոշտանգանքն և յաւիտենական գալուԹիւնքն. փոքր մի չարչարիս, և ընդհրեշտակս ուրախանաս յաւիտեան. զի եԹէ յոյժամ մարմնապէս զինուորեալն էիր, բազում անգամ յիշխանաց և՝ի զօրագլխաց ձաղկէիր վասն սակաւ մի Թոշակի, զինաւդ ոչ առաւել ևս համբերեցես եկեղցոյ տանջանացդ՝ի վերայ քո՝ որ վասն երկնից արքայուԹեանն։ Եւ զայս ասացեալ երանելոյն Սիխտոսէայ՝ մուծին՝ի նեղքս զՍդրիանոս։

Իբրև եառես զնա բռնաւորն ասէ. Չի՞ է Սդրիանէ, սակաւին՝ի մոլորուԹիւն քոյմ կաս և կամիս չարաչար կորնչել։ Եւ ասէ Սդրիանոս. Սատի քեզ Թէ՝ի մոլորուԹենէ այժմ զգաստացայ, այսուհետև ոչ կամիմ կորնչել։ Ասէ ցնա բռնաւորն. Ուրեմն ոչ կամիս զոհել աստուածոցն, և ոչ երկիր պատանելոցդ որպէս ես և ամենեքեան։ Սդրիանոս ասէ. Ընդէր մոլորիս և զայլս մոլորեցուցանես, և զանձդ կորուսանես և զբազմուԹիւնս զայս, երկիր պատանելով անշնչոցն, Թողեալ զՍուտաճ զարարիչն երկնի և երկրի և ծովու և ցամաքի և ամենայն որ՝ի նոսա։ Ասէ ցնա բռնաւորն. Եւ զմեծ աստուածդն՝ փոքրունս հանարիս։ Սդրիանոս ասէ. Բանդի ոչ իսկ են և ոչինչ։ Եւ բարկացեալ Թագաւորն հրամայեաց տանջել զնա բզօք։ Եւ լսեալ երանելոյն Սիխտոսէայ Թէ սկսաւ՝ տանջել, ընԹացաւ առ տուրքն, և ասէ ցնա և ասէ. Տէրն իմ սկիզբն արար վկայուԹեան։ Եւ նոցա լսեալ վաղվա-

1 Յօր. սակս փանջելոյ։

ղակի յաղօթս կացին վասն նորա: Եւ ՚ի տանջել սրբոյն Ադրիանոսի՝ ասէ բռնաւորն ցղահիճն. Ա՛տացէք զմա թէ մի՛ հայհոյեր զաստուածսն: Ադրիանոս ասէ. Չի եթէ ես այսչափ տանջիմ հայհոյել զոչինչսն, քեզ արդեօք ոտիկս տապիս՝ տանջանք ամբարեալ պահին՝ հայհոյել զիշխանջնեաւորն Աստուած: Ասէ ցնա բռնաւորն. Մոլորեցուցիչքն այն ուսուցին քեզ զդանդ զայդ: Ադրիանոս ասէ. Ընդէր մոլորեցուցիչս կոչես զառաքեալսն տարտամ կենաց. զոր էք մոլորեցուցիչք ողք պատրիք զմարդիկ ՚ի հրապոյրս կորստեան:

Ա՛ռաւել՚ի ցասումն բարկութեան շարժեալ թագաւորն, հրամայեաց ջրից դահճաց տանջել զնա ատուար չարաչար: Ադրիանոս ասէ. Որչափ յաւելուս զպատճառանաց՝ բազմապատիկ յօրինես զդեղ պատկացն: Իսկ երանելին Ա՛նիտոլի զամենայն զբանս թագաւորին և զպատասխանինսն Ադրիանոսի՝ որչափ և լսէր՝ երբեմն պատմէր սրբոցն: Ասէ ցնա բռնաւորն. Ի՞նչ էր քեզ և ՚ի մանկութիւն քո. ընդէր ընդ վայր կորընչէիս. մեծովք աստուածովքն երդուեալ, զի տեսանեմ զդեղ քո և ողորմիմ քեզ: Ադրիանոս ասէ. Ա՛հաւասիկ ինձ յայսմհետէ, զի մի և իսպառ կորեայց: Բռնաւորն ասէ. Խոստովանեա յաստուածն՝ զի քաւէսցին քեզ, և ես մեծարեցից զքեզ և ՚ի քո յաւելջին կարդն հաստատեցից. քանզի ոչ դու երբեւ զնոսա ես, այլ ազատ ես և մեծատան որդի. զի թէպէտ և մանուկ ես, այլ մեծ պատիւ ունիս. նոքա չինականք են և որդիք տնանկաց և անմտաց: Ադրիանոս ասէ. Ասեմ[1] և ես եթէ դիտես դու զգաւառն իմ. և ձանաչես զազգն իմ և զնախնիսն. այլ եթէ զնոցա զազատութիւնն դիտէիր և զմեծութիւնն, և զգաւառն որում անկն ունէին անկանէիր արդեօք առ ոտս նոցա և աղաչէիր ազօթս առնել վասն քո, և քոյին ձեռօքդ փշրէիր զդատկերս աստուածոցն քոց: Չայրացեալ դարձեալ բռնաւորն հրամայեաց տանջել զնաստոյ տեղն նորա՝ ջրից զինաւորաց. և յորժամ եառնս այնուհետև վայրեալ զանգնան նորա, հրամայեաց թեթևացուցանել զտանջանսն. քանզի էր փափուկ յոյժ և մանուկ երբեմն քան և ա-

1 Յօր. ապէմ:

Թէց ամաց։ Եւ ասէ ցնա բռնաւորն. Տեսանե՞ս զրչաւէ
լանայեմ՝ի քեզ. եթէ միայն անուանիդ զաստուածն՝
կոչէի զբժիշկան և հրամայէի բժշկել զքեզ, և յայնմ
օրէ ընդ իս չըջէիր՝ի նեղըս՝ի գլան ազքանէի։ Ագրիա
նոս ասէ. Որովհետև խոստացար բժշկել զիս և պա-
տուել և մեծանել՝ի Թագաւորական ապարանս քո,
պատմեցեն ինձ աստուածդքն քո Թէ զինչ կամեցկին
ինձ առնել և խոստացին ինձ զհաշտութիւն իւրեանց,
և ես երկիր պատից նոցա և զոհեցից որպէս և դու կա-
միս։ Ասէ ցնա Թագաւորն. Ամէն նոքա ոչ խօսին։ Ա-
գրիանոս ասէ. Ո՛վ ամբարիշտ և անօրէն, և դու զի՞
զոհես զխօսուն՝ անխօսից։ Եւ բարկացեալ Թա-
գաւորն հրամայեաց կապել զնա և տանել՝ի բանտ.
օր յայտ արարեալ յորում դարձեալ զամենեսեան
միանգամայն ածցէ՝ի դատաստան։ Եւ առեալ զինուո-
րացն զնոսա տարան՝ի բանտն, զոմանս՝ի ձիւդ և
զոմանս՝ի քարշ, ոմն՝ի տանջանաց անտի լուծեալք
էին։

Իսկ երանելին Ցնիտոլն օժանդակէր սրբոյն Ագրիա-
նոսի, և եղեալ զձեռնն՝ի ներքոյ պարանոցի նորա և
ասէ ցնա. Երանելի ես դու, տէր իմ, զի արժանի եղեր
Թուեալ՝ի գունդս սրբոցն. երանելի ես դու տէր իմ,
զի արժանի եղեր և չարչարեցար փոխանակ այնորիկ
որ վասն քո չարչարեցաւ. ահա արդարև երիթաս տե-
սանես զփառս նորա, զի որք կցորդ եղեն չարչարա-
նաց նորա՝ հաղորդ լինին և փառաց նորա։ Եւ երբև
մտին՝ի բանտն արդելան, ժողովեալ ամենայն սրբոցն
ազջոյն տային Ագրիանոսի, մինչև անգամ որ լուծեալ
անկեալքն էին և կային՝ի գետնի, ստիլալ՝ի ձեռս՝
գնային տալ նմա զիաղաղութիւն և համբուրէին
զնա ազջունիւ սրբութեան։ Իսկ երանելին Ցնիտոլն
մատիկն զարիւնն՝ի սրբոյն Ագրիանոսէ և օծանէր
զինքն. և տուրքն ազջոյն տուեալ Ագրիանոսի և ասէն
ցնա. Ուրախ լեր՝ի Տէր, քանզի դրեցաւ անուն քո ընդ
առաքինի նահատական։ Ասէ ցնոսա Ագրիանոս. Եւ
դուք ուրախ լերուք, քանզի ձեր է վաստակ և ձեր է
պսակն. այլ ազօթս արարէք զի մի՛ չար ինչ սերմանեա-
ցէ չիս բանասարկուն, քանզի յոյժ նուաղեալ եմ։ Ասեն
ցնա սուրբքն. Քաջալերեաց, ոչ յաղթահարէ զքեզ

ստատանայ, քանզի փախեաւ ի քէն յորժամ եաես զմեծ ժուժկալութիւն քո. և մեք երկնչեմք յորժամ էիրն մարդ, այլ յորժամ ի վերոյ եղեր քան զմարդկայինն բնութիւն՝ ոչ կարէ այլանդակս ինչ իմանալ վասն քո բանսարկուն. մի այսուհետեւ յերկուանալ ինչ:

Կանայք ոմանք պաշտօնեայք և այլ ևս բազումք ի ծանօթ կանայց էին ցանկալեալք առ տուրքան, սպաս տանելով նոցա, և այլք կտաւով մաքրէին զթաշ նախ վիրացն. և այսպէս ամենեքեան բաժանէին ըզտուրքան ի միջի իւրեանց, վշտակից լինել չարչարանացն նոցա արբանեկութեամբն իւրեանց: Եւ լուեալ զայն Թագաւորին՝ եթէ Թափեցաւ ի քաղաքէն բազմութիւն կանանց մանուանդ ազատաց ի տես սրբոցն, պատմեցաւ յոյժ և հրամայեաց մի զոք ամենևին ի կա նանց Թողացուցանել մտանել առ տուրքան: Իբրև գիտաց երանելին Անիտոլի Թէ արգելան կանայք մտանել ի բանտն առ ի սպասաւորել սրբոցն, յարուցեալ մաքրեաց զհեծս իւր և զգեցաւ զգեստ առնտղի, մտանէր առ նոսա իբրև զայր մարդ և սպասաւորէր նոցա՝ միայն, որպէս յառաջն ամենայն կանայքն. և յորժամ ընդ զարձ ամենեցուն՝ նաեր առ ոտն Սրբիանոսի և մեծաւ աղերսանօք սկսեր ցնա. Աղաչեմ զքեզ, տէր իմ, յուշ լեցի քեզ զոյգ բնակութիւնն մեր. յիշեա, տէր իմ, զի գործակից եղէ քեզ ի մարտիրոսութեանդ. յիշեա զի ես կրթեցի ի նահատակութիւնդ զքեզ. յիշեա զի ես եղէ առիթ պսակացդ այդոյիկ. աղաչեա զտէր մեր Քրիստոս՝ առնուլ միանգամայն ընդ քեզ զիս. զի որպէս կցորդ եղաք յայսմ աշխարհիս՝ ի վերստին և ի մեղսասէր կեանս, նոյնպէս և հաղորդ լեցուք յայսմ երանելի վախճանիս: Սկսաւ աղաչեմ զքեզ, տէր իմ, զայդ հատուցումն ինձ նախ հայցեա՝ ի Քրիստէն, և լեցի քեզ սիրելն ընդերաւածոյ այդ. և դիտեմ Թէ տայ քեզ, քանզի ախորժէ հայցել ի ձէնջ. զի դու քեզինն տեղեակ ես և դիտես զանտառակութիւն քաղաքիս և զամբարշտութիւն Թագաւորին. զդոյշ, եթէ ուրուք ի քանս անկեալ բռնաւորն՝ զուգեսցէ զիս ընդ ումեք անաստուած անօրինացն. մի պղծեսցեն ամբարիշտք զսուրբ անկողինն քո. զայդ խոկ ուսար յերանելի առաքեալն: Տուր ինձ զանձն զոգաստութեան՝ զվախճա-

նիլն[1] զկնի քո. ուսցին և այլ կանայք երախտաւոր լինել արանց իւրեանց, տեսանելով զքո զուարճ որ առ իս։

Եւ զայս առացեալ՝ դարձեալ յարեաւ առնի կերպանոք, և շուրջ եկն զտրճուքն դարմանելով զնոսա, որպէս զիարդ ումեք պիտոյ էր. կերակրէր զոյգն և տուղ ինչ աղապէտօք, քանզի յոյժ տկարացեալ էին. և սկսան այնուհետև Հաշակ լինել վիրացն։ Կուեալ և այլոց կանանցն եթէ մաքրեաց Աստուած զՏերս իւր և առնի կերպարանօք սպասաւորէ տրճոյն, նախանձեցան զտարիսք նախանձն և մաքրեցին զիւրա քանչիւր Տերս, և այնպէս առնի զգեստիս մտանէին և սպասաւորէին տրճոյն, մինչև անգամ յաշխարհական նացն ոմանք և յազատացն ոչ սակաւք զնոյն առնէին։

Իակ իբրև լուաւ բռնաւորն զոր առնէին կանայքն, և զի այնուհետև մերձ՝ի մահ էին տուրքն՝ հրամա յեաց տանել սատ դարբնական՝ի բանտն և դնել՝ի նեղ քոյ ոտից նոցա և նգաւ մեծաւ բեկանել զսրունս նոցա. և ասէր թէ՝ Մի՛ ըստ օրինակի այլոց մարդկան վճա բեսցին՝ի կենացս։ Եւ զայն լուեալ վաղվաղակի գայլն բերկին զահիճքն զհրամայեալ գործն՝ի կատարման։

Իբրև գիտաց երանելին Աստուածն զվճիռ մահուն, յարուցեալ ընդ առաջ ընթանայր զահճացն և ասէր ցնոսա. Աղաչեմ զձեզ, տեառնք, ասէ Աստուածոյ բա կնզքն արարիչք. զգոյշ, եթէ տեսանեմ զտրճոյն զայն պիսի զգաստն տանջանօք՝ զարհուրեցի ինչ և զանգե տեցի։ Եւ յոյժ եղին զայն առ ոտս նորա, առեալ երանելոյն Աստուածոյ զոտս տրճոյն Աստուածոյ պարզեր՝ի վերայ սալին. և մեծաւ ուժով բախեալ զահճացն նգաւ՝՝ի քայ կտրեցին զոտս նորա ջախջախելով զամե նայն ոսկերան։ Այն ցնա Աստուածն. Աղաչեմ զքեզ, ծա ռայ Քրիստոսի, մինչդեռ յոգւոջ ես՝ ձգեա զձեռն քո և հատցես՝ի քէն զայդ ևս, զի հաւասար տրճոյդ լինիս ցիս և զոտ. քանզի դոքա առել չարչարեցան քան զքեզ։ Եւ նորա կարկառեալ զթագուհին, և նա դնէր՝ի վերայ սալին. և զահճին զարկեալ՝ի բաց կտրէր՝ի սալէն. և տուրքն վաղվաղակի աւանդեաց զոգին։ Եւ զահճացն շուրջ եկեալ հանդերձ սալունն[2] և կեդի[3] ջարդեցին

1. Յօր. զվախճան էլին։
2. Յօր. սայլիսն։
3. Յոյն բնագիրն ևգաս առէ որպէս՝՝ի վեր անդր։

զարունան ամենեցուն. մինչև հասեալ առ նոսա գահ-
Ձայն, սուրբքն յառաջագոյն պարզեին զոտան՝ գոչելով
և ասելով. Տէր Ցիսուս ընկալ զհոգիս մեր։ Եւ ամենե-
քեան աւանդեցին զհոգիս իւրեանց։

Ցայնժամ խորհուրդ՚ի մէջ առեալ բռնաւորին հան-
դերձ պղծովք և անիրաւօք՝ հրամայեաց՚ի հուր ար-
կանել զմարմինս նոցա. ասէ. Գայցեն գաղիլեացիքն և
առնուն զնոսա։ Իսկ երանելոյն Ա՛նիտոլեայ դիմեալ
հայհոյանօք զհասեալ ձեռնն Ադրիանոսի և ընկէց
՚ի ծով իւր։ Բարձին այնուհետև զահիճքն զմարմինս
սրբոցն և տարան արկանել՚ի հուրն, քանզի էր յառա-
ջագոյն չերեւեցեալ զհնոցն. զինի երիթայր և երանելին
Ա՛նիտոլի և ընդունէր զհաճս սրեան սրբոյն՚ի ձեռս
իւր և օծանէր զինքն. նոյնպէս և այլ բարեպաշտ կա-
նայք զինի երթային, և յազատաց ոչ սակաւք, ընդու-
նելով պատուական կտաւովք և ծիրանեօք զինջեալ ա-
րիւնն՚ի մարմնոց սրբոցն, և թաքուցանէին՚ի ծոցս
իւրեանց. մինչև զհանդերձս անգամ գահճայն քա-
զում ոսկւով և ակամբք պատուականօք զարդու գնէին,
քանզի թաթաւեալ էին արեամբ սրբոցն։ Եւ հասեալ
՚ի հնոց անդր՝ ընկեցին՚ի ներքս՚ի վերուստ կոզմանէ.
կային և մօտ անդր բարեպաշտ կանայք որ և մեծաւ
գոչմամբ լային և ասէին. Ցիշեցէք զմեզ, տեարք, ՚ի
հանգըստեան ձերում։ Իսկ երանելին Ա՛նիտոլի կամէր
ընկենուլ զինքն՚ի հնոցն, և ձիչ բարձեալ ասէր. Ա՛զա-
չեմ զձեզ, ծառայք Ա՛ստուծոյ, եկայք և ես ընդ ձեզ։ Եւ
իբրև ընկեցին զսուրբսն՚ի հնոցն, յանկարծակի որո-
տումն եղև և անձրև սաստիկ և փայլատակունք և շար-
ժումն մեծ, մինչև սասանել քաղաքին և ամենայն տե
ղեացն, և շինջանել հնոցի հրոյն՚ի բազմութենէ ջուց
անձրևացն։ Իբրև տեսին գահիճքն զարհաւիրան զայ-
նոսիկ՝ փախեան. և ումանք՚ի նոցանէ մեռան, անկեալք
յերեսս առ փախստեանն. և դիմեցին հաւատացեալքն
որ անդ կային, հանդերձ երանելեաւն Ա՛նիտոլիւ և այ-
լովք ևս կանամբք, յափշտակեցին զինչեարս վկայիցն, և
գտին անվնաս, մինչև մազ անգամ ոչ էր այրեցեալ՚ի
հրոյ անտի։

Ա՛յր ոմն բարեպաշտ և երկիւղած յԱ՛ստուծոյ հան-
դերձ կնաւ իւրում մատուցեալ առ երանելին Ա՛նիտոլի

և առ այլ եղբարան, աղաչէր և ասէր. Մեք յայնկոյս քա-
ղաքիս այսորիկ լինիմք, քանզի տեսեալ զամբարշտու-
թիւն քաղաքիս և զարհուհեղութիւն անօրէնն Թագա-
ւորին, ի բազում ժամանակաց հետէ փախստէաք ի
Բիւզանդիոն, առեալ հաստատեալ զմեր վայրս. արդ
եթէ կամ է ձեզ՝ տուք ի մեզ զտուրբ վկայդ, և դի-
ցուք ի նաւի, և երթեալ յայնկոյս՝ պահեսցուք առ մեզ
մինչև ի վախճանել անօրէնն Թագաւորին. և ապա յայն-
ժամ կատարեալ դիցես ամենայն ցոցա ի տեղւոջ եր-
կրպագութեան. քանզի սովորութիւն է մեզ այսպէս
առնել. ապա եթէ աստ Թողումք, լսէ Թագաւորն և
հրամայէ դարձեալ միւսանգամ այրել զդոսա, և զտա-
ճարիմք մեք մատնիչք այնոցիկ զոյս Աստուած փրկեաց ի
հրոյն՝ հանդերձ շարժմամբ և որոտմամբ և անձրևաց:
Եւ Հաձոյ Թուեցաւ բանն առաջի նոցա. և առեալ դիմն
գնացին ի նաւի և տարան ի Բիւզանդիոն, աջողակ հող
մոյ ուղեվից լեալ նոցա: Իսկ երանելին Ստեփաննէ ծնաց
անդէն ունելով զձեռն Ստեփանոսի. քանզի ասէր, զու-
ցէ յաւիտեանական մարմինք սրբոցն և զոսայց մատնիչ
եղեալ յուսոյն իմոյ: Ստեալ այնուհետև զձեռն և
պատեաց ի ծիրանուջ խնկօք և խոզմիք և եդ ի մա-
հիճան իւր ի մարմնոյ կողմանէն, առանց ուրուք գի-
տելոյ:

Եւ յետ սակաւ ինչ աւուրց այր մի քաղաքացի հա-
զարապետ մատուցեալ առ Թագաւորն, խնդրեաց իւր
ի կնութեան զերանելին Ստեփանէ, քանզի էր ընչաւէտ
և առաջին յազատ կանանց և ամենևին պարկեշտ: Ա-
ռաքէ այրն զոմանս ի ծանօթ կանանցն խօսել ընդ
Ստեփանէայ: Իսկ նորա պատասխանի տուեալ ասէ ցե-
կեալ կանայսն. Եւ ես երբեք լուայ յոյժ ուրախ եղէ.
քանզի ո՞ տայր ինձ արդեօք գուժել ընդ այնպիսւոյ
առնն. այլ Թողացուցէք ինձ ամիս մի, որպէս զի
պատրաստեցայց, քանզի ոչ եթէ փոքր ինչ է որ խընդ-
դրէն զինն զիս: Եւ զայս Հնարէր, քանզի կամէր փախչել
անդր ուր մարմինք սրբոցն էր. և առ անդամ մի առա-
քեաց Հաձելով զինուս կանանցն: Եւ երբեք գնացին
կանայքն՝ յարեաւ երանելին Ստեփանէ, և չոգաւ մօտ ի
մահիճան ուր կայր ձեռն երանելոյն Ստեփանոսի, և ան-
կեալ ի վերայ երկրի՝ ասէր. Տէր Աստուած իմ, Աս-

տուաճ նեղեալոց, որ օգնականդ ես անօգնականից, որ մերձ ես առ մաշեալս սրտիւք. Հայեաց յիս՝ի մեղաւոր աղախին քո, և մի տար՝ի պղծութիւն զմարմնաւկից Ադրիանոսի վկային քո. մի Տէր իմ, մի մոռանար զտանջանս Ադրիանոսի ծառայի քո. քաւ լեալ Տէր, եթէ մոռացիս զկապանսն զայնոսիկ՝ զորոց զփորձ առ վասն անուանդ քո. քաւ լեալ Տէր, եթէ մոռացիս զբեհկումն բարձիցն և զհատուածն ձեռացս այսորիկ. քաւ լեալ Տէր, եթէ ընդունայն առնիցես զՋանս և զտանջանս զոր տեսին ծառայքն քո վասն անուանդ քո. այլ զայնոսիկ յիշեա Տէր, և ազատեա զնա՝ի պատահարից թըշնամեաց քոց. մի պղծեսցէ նենգոտ բանսարկուն զանկողինս Ադրիանոսի ծառայի քո: Դու ես որ փրկեցեր զծառայն քո՝ի հրոյն բոլբոքելոյ, փրկեա և զնա յաւիտենական ամբաստանութենէ: Եւ յասել նորա զայս՝ի ձանձրութենէ և՝ի խանդաղատութենէ սրտին՝ի քուն մտեալ, և ահա մի ոմն՝ի սրբոցն յայնցանէ երևեր նմա և ասէր. Խաղաղութիւն ընդ քեզ, Ընիտոլէ աղախին Քրիստոսի. քաջալերեաց, ոչ անտես արար զքեզ Աստուած, և ոչ մեք մոռացաք զվաստակն քո զոր ցուցեր մեզ. այլ վաղվաղակի յերևեն մեզ Քրիստոս, աղաչեցաք վասն քո զի եկեսցես առ մեզ, և պրեցաւ անուն քո՝ի գիրս սրբոցն: Այժ ցնա երանելին Ընիտոլէ. Երևեցաւ քեզ Քրիստոս և տեառն իմաւ: Այժ. Այո՛, և յառաջ քան զմեզ երևեցաւ Քրիստոս տուի տէրն քո Ադրիանոս. այլ դու յարուցեալ մուտ՝ի նա և ել առ մեզ. քանզի անդ այց արասցէ քեզ Աստուած և ածցէ առ մեզ:

Եւ՝ի միում իւր աղօթեալ յարեաւ՝ի քնոյն, և թողեալ զամենայն ինչ, զձեռնն Ադրիանոսի առ ընդ իւր և նաւեաց. և փութացեալ երթայր ուր էին մարմինք սրբոցն. եգիտ և զայլս ոմանս հաւատացեալս փախեալս տակաւին յերեսաց թագաւորին, և նաւեաց ընդ նոսա: Իբրև լուաւ հազարապետն որ խնդրէր զնա իւր՝ի կատուեան՝ եթէ փախեաւ, և մտեալ առ թագաւորն խնդրեաց իւր օգնականութիւն. և զօրք բազումս առեալ ընդ իւր՝ եմուտ նոքօք՝ի նաւ և երթայր զհետ նորա. և նաւեալ առագաստիք իբրև հազար, հողմ ընդհիմակաց յարեաւ և ընկէց զնոսա անդրկեն յերես կոյս

ասաի նաւէցան. և ումանք ՚ի նոցանէ մեռան ՚ի ստա-
կուԹենէ աչեացն ընկղմեալք: Եւ իբրև ՚ի մէջ գի-
շերի եղեալ, Հոգի մոլորուԹեան ստացայ երևեցաւ
Անիտոլեայ և որոց ընդ նմա ՚ի կերպարանս նաւի, յո-
րում էին նաւապետք և նաւավարք յոյժ խելամուտք.
և ասէ ցնոսա նաւապետն մեծաձայն. Ոասո՛ւ եկէք, և
համ՛յն ուշ ունիք երԹալ: Եւ նոքա ասեն. Ի Նիկոմի-
դեայ եմք, և ՚ի Բիւզանդիոն նաւեմք: Ասէ ցնոսա.
Մոլորեալ էք, չէ այդ Ճանապարհն, այլ կողմն եր-
Թայք, ՚ի ձախակողմն խոտորեցարուք: Բանզի համէր
զնոսա յանդունդս տանել, զի անդ կորուսցէ. և կար-
ծեալ նոցա Թէ հաւաստիս նաւարդք էցեն՝ յարեան և
փոխեցին զառագաստն՝ զի դիմեացեն ընդ որ ասաց մոլո-
րեցուցիչն այն: Եւ ահա յանկարծակի սուրբն Մէրխա-
նոս երևեցաւ իբրև ՚ի նաւարկի [1], և Ճիչ բարձեալ
ասէր. Եկայք որպէս և գայիքն, և մի՛ լսէք նմա, քանզի
նա ինքն է սատանայ. կորուսանել կամի զձեզ: Եւ նոյն
ժամայն չկաք եղև այն պիղծ: Եւ երանելոյն Անիտոլեայ
յարուցեալ ետես զսուրբն Մէրխանոս զի երԹայր ա-
ռաջի նոցա: Եւ խնդալից եղեալ ասէ մեծաձայն. Ահա
ահեր իմ. և նա ոչ ևս երևեցաւ նոցա: Եւ այնուհետև
հոգևոյ աջողակի յարուցեալ՝ տարաւ եհան զնոսա ՚ի
Բիւզանդիոն ընդ արշալուսն. և եկեալ ՚ի նաւէն՝ դիմե-
ցին ՚ի տունն ուր էին մարմինք սրբոցն. և անկեալ առ
նոքօք երանելոյն Անիտոլեայ և երկիր եպագ համբե-
րող և տեառական ակերպաց նոցա. և բերեալ զհատեալ
ձեռն եդ մօտ առ Մէրխանոս. և ծունր խոնարհեցու-
ցեալ յաղօթս կայր: Եւ իբրև յարեաւ յաղօթից՝ ե-
մուտ և ետ ողջոյն ամենայն եղբարց և քերց սրբոցն,
և աղաչեաց զնոսա աղօթս առնել վասն նորա. քանզի
անդ էին ժողովեալ ամենայն հաւատացեալքն Բրիստո-
սի և օրհնէին զԱստուած. ոլք և աղաչէին զերանե-
լին Անաստոլի հանգչել սակաւիկ մի, քանզի էր աշխա-
տեալ յոյժ: Եւ ՚ի մտանելն ՚ի քուն՝ ահա երևեր նմա
սուրբն Մէրխանոս յանուրջս և ասէ. Ողջ եկիր, Անա-
տոլի, աղաւնին Բրիստոսի և զուտ մարտիրոսաց. եկ
այսուհետև ՚ի հանգիստ քո, և ընկալ զվարձս վաստա-
կոց քոց: Եւ նոյնժամայն աւանդեաց զոգին: Եւ յետ

1. Ցոյն քնագիրն ՚ի նաւուն:

սակաւ ժամու եկեալ եղբարց զարթուցանել զնա, և պատին վախճանեալ. և յարեան ամենեքեան կացին յաղօթս, և առեալ եդին զնա ընդ սուրբ վկայսն. և լուան դրեցին աղօթս առնել՝ի դիւրս սրբոցն. և այնպէս կինքեցին զնա: Եւ բազմութիւն արանց և կանանց միաց ելին անդէն ամենևեին յամենայնէ հրաժարեալք, ձառայեալ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում զօրութիւն և փառք ընդ Հօր և սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ:

Վկայաբանութիւն Սրբոյն Սրապիոնի եպիսկոպոսի։

Սուրբս այս Սթանոպինէս եղև քրիստոնեայ՝ ի քրիստոնէից ծնողաց՝ յեպիկացւոց գաւառէն. այսպէս կոչեցեալ գեղջ ստրա՝ Փիլաքթուիէ, ըստ որում և սահմանեն ասացեալ Սապրուպինէ [1], ընդ հարկաւ անկեալ Սեբաստեայ քաղաքին քաղաքացւոց՝ գիւղ ստրա։ Իսկ եղեալ այր՝ միաբանեաց ընդ ամուսնութեան. զայս և ծնողաց նորա կամեցեալ հաւանելոյ [2]։ Եւ ծնեալ որդի՝ անուանեաց զնա Պատրուիւլոս [3]։ Եւայր կեանս բարեպաշտականս. Սեբաստու եպիսկոպոսին զնա քահանայ օծեալ։ Եւ դարձեալ՝ ի յիշեցեալ գաւառին քորեպիսկոպոս կացուցեալ. և վարեալ նորա զքորեպիսկոպոսութիւնն ըստ պատուիրանին։

Եւ պատահեաց այնուհետև՝ ի ժամանակին յայնմիկ բարբարոսական ազգին Գ.թաց գալ հասանել՝ ի բոլոր աշխարհն, և բազում արս և կանայս և մանկիկս գերեալ՝ տարան յաշխարհն իւրեանց։ Իսկ սուրբս այս Սթանոպինէս՝ իբրև Աստուծոյ հաւատացեալ քահանայապետ՝ ի վերայ գերելոցն տրտմէր։ Եւ ժողովեալ ինչս բազումս ամենաբարեպաշտութեամբ, գնայ յաշխարհն բարբարոսաց փրկել զգերեալսն, և անդրէն դարձուցանել զնոսա ոչխարսն. քանզի էր հո-

1. Ա.յլ օր. Սաբոպինէ։
2. Ա.յլ օր. Ե ծնողաց նորա կամեցեալ։
3. Ա.յլ օր. Պապրիուղոս։

վիս բարի և առաքինի. զոր բազում անգամ արար։ Եւթայր՝ի Հանապարհն արդարութեամբ, և պատուէր բանայն Աստուծոյ կատարէր։ Եւ հասեալ՝ի գիւղ մի, և մերձ՝ի նա էր լեառն մի, և ծուխ խորին յոյժ։ Եւ յայս տեղի բնակեալ էր մեծագոյն վիշապ մի ահաւոր, և ապականէր զմերձակայ բնակիչսն. յաւիշտակէր զանասունս նոցա և զմանկտի։ Եւ բնակիչք գաւառին այնորիկ երկիւղիս բազմաւ ըմբռնեալք, որպէս թէ դիւական ինչ խորանաց մոգութեամբ՝ վիճակս արկանէին. և ումմ հասանէր՝ մանուկ կապէին ժամանակաւ և ընկենուին՝ի տեղին յայն վիշապին. որպէս զի մահուամբ նորա հաշտեացի զաղանն ընդ նոսա, յորժամ ապանանէր զմանուկն։ Զայս տեսեալ արքայն Աթանագինէ, և զարմացեալ ընդ երթն, և ուսեալ՝ի մանկանէն թէ վասն որոյ պատճառաց նաց կապեալ և ընկեցեալ կայ, և զի հանդերձեալ էր ծախել՝ի վիշապին. և աղօթեալ առ. Տէր Աստուած, օգնական լեր։ Եւ կնքեալ զմանուկն, ելոյծ զկապանսն։ Եւ մերձ կացեալ առ մանուկն աղաչէր և կարդայր զանուն Տեառն Յիսուսի. և պատրաստեալ ձգեաց զձեռն հանդերձ մանկամբն, և ոչք ընդ նմայն էին. և ասէ այսպէս. Տէր Աստուած յաւիտենից, որ հրամայեցեր ինձ հասանել՝ի տեղիս յայս, և տեսանել զմանուկս զայս՝ որ հանդերձեալ էր ծախել՝ի գազանն, լուր ծառայի քումմ, Տէր, և առաւել ևս մանկանս բարերաւեցելոց առ քեզ՝ի սուրբ սրտէ։ Եւ Տէր յօգնականութիւն, և ցոյց առ զօրութիւն բարերարութեան քո, և զկոչեցեալ վիշապն հզօր հարեալ՝ արաւ անարի անզօր, հերձանեալով զինա. որպէս զի ամենեքեան տեսողք և բնակիչք աշխարհիս այնորիկ՝ ուսեալ զանբաւ և զանհասանելի զօրութիւնդ քո, փառաւորեսցեն զմեծ և զքաջանչելի անուն քո՝ յաւիտեան։ Եւ ես ծառայ քո ուրախ եղեալ գնացից ընդ Հանապարհս անուան քումմ։ Իսկ՝ի յաղօթելն նորա տղեցաւ վիշապն արտաքս, և երևեցաւ ահարկելի և ահաւոր տեսլեամբ։ Եւ սուրբն Աթանագինէս հայեցեալ յերկինս, և մեծագոյն հառաչեալ առ Տէր, եհար երկոցս՝ի վերայ գլխոյ վիշապին բաւականակի զաւազանաւն զոր ունէր՝ի ձեռին իւրում, քանզի կրկին

սովորաբար. և առ ժամայն հերձեալ գազանն ապա-
կանեցաւ: Յայնժամ երանելոյն սքանչելի զարմանա
արարեալ, և ծնօղաց մանկանն խնայեալ, ՚ի քայ և-
տուն այնուհետեւ զմանուկն ցՈւրբն. և պատրաստեաց
հաւատացեալ զամենայն քնակիչս վայրին. գոհանալով
զՏեառնէ Յիսուսէ՝ որ ծանուցաւ նոցա:

Զայս տեսեալ եպիսկոպոսին աշխարհին, և յաստու-
ծային յայտնութենէն խնայեալ զարժանաւորութիւն
նորա, ձեռնադրեաց քահանայապետ զաստուածա-
զգեաց այրն, տուեալ նմա զեպիսկոպոսական իշխանու-
թիւնն: Սէրդ արժանի լեալ այս երանելիս Սթեփանոսի
նէս երիցս այսպիսի շնորհաց, գնաց զՀանապարհ իւր.
և զբազումս դարձուցեալ ետ իւրաքանչիւրոցն ՚ի բար-
բարոսական աշխարհէն, և ածեալ ետ յիւրաքանչիւր
տեղիս եղբարց և ծնօղաց իւրեանց: Եւ ինքն եկեալ
յիւր գեօղն որ անուանեալ կոչէր Փիլաքթոսիէ, թա-
գուցանելով զտուեալ եպիսկոպոսական շնորհսն. որ-
պէս զի մի տրտմեցուսցէ զՍեբաստիա քաղաքին եպիս-
կոպոսն, որոյ արարեալ էր զնա քորեպիսկոպոս: Եւ
անդ լինէր հանդերձ որդւովն իւրով կոչեցեալ Պատ-
րոյիւլոս, որ և զկնի մահուան հօրն զաթոռ քորե-
պիսկոպոսութեանն և զհոգաբարձութեան արժանի
եղև ընդունել: Եւ միջոցեաւ էր խակ ՚ի նմին գեօղն
Փիլաքթոսիէ, մեծապոյն ընկալաւ շնորհս ՚ի Տեառնէ:
Եւ էլ հոգի ջրախառն ՚ի հարուածս այլազգեացն.
զի դարձեալ հասեալ բարբարոսական գնդին, և
առեալ զաշխարհն, զեկեղեցի նորա որ էր ՚ի գեօղն
զոր իւր խակ շինեալ տրբոյն՝ այրեցին: Եւ միջոցեա-
ցեալ էր, եաես և խնդրեաց ՚ի Տեառնէ, և էլ հոգի
ջրախառն ՚ի միջոց սրահի եկեղեցւոյն և շնջոյց գՀուրն.
և միւնչև ցայժմ յեկեղեցւոջն և ՚ի տեղին տեսանի ու-
տի էլ հոգին. և առ նմին տեղւոջ և մարդակք եկե-
ղեցւոյն կան կիսայրեացք: Բազում և այլ ինչ ՚ի Տեառն
շնորհեին զոր էառ ՚ի Տեառնէ Քրիստոսէ՝ կատարել
զարմանս. զոմանս յանդիմանելով ածէր ՚ի հաւատս,
առաւել տուեալ խնամոտութեամբն իւրով և մնաւո-
ղութեամբ. իսկ զայլս խրատելով, և զամենայն քա-
րիս զործելով, առ՚ի խաղաղացուցանել զամենեսեան
առ միմեանս սէրմբն Աստուծոյ:

Իսկ ի Սագրուպինեցւոց [1] սահմանին եղեալ այսպիսի զարմանա։ Գողոյկ ագարակի անուն է, հեռի է հինգ կամ վեց մղոնաւ ի փեղաքաղաքէ. յոմանց՝ ի միջի ագարակին՝ յաղագս մատակաց ընդ միմեանս ախուեթուն եղև խռովութեամբ. և մեծ հակառակութիւն էր ի մէջ նոցա։ Երթեմն ի գաւտ եկեալ առ արքեպս Ա.թանագինէս, և ոչ միաբանէք առ ի նմանէն կարպեցելոց, այնչափ բորբոքեցան ի թշնամութիւն՝ մինչև զէնս ի վերայ միմեանց վերկացուցեալ, և կատաղութեամբ ընդ միմեանս խառնեալ. և այնչափ վախճան հակառակութեան նոցա վառեցաւ, մինչ զի ոմանք ի նոցանէ սրով վիրաւորեալ վախճանեցան։ Զայս տեսեալ ելոյս երանելոյն Ներսիսեայ Ա.թանագինէն, և արքեպսմաւ ի վերայ այսչափ հակառակութեան և խռովութեան, ձգեաց զսուրբ ձեռս իւր առ Աստուած, և աղաչեաց զսպել զնոյն խռովարար ագարակն զմատակն, վասն որոյ իսկ և կուէին, և յայնմ հետէ մի ևս լինել ի նմա վտանգ մատակաց։ Եւ այսուհետև վաղվաղակի առ ժամայն դիմեալք և դիպեալք. և զոր խնդրեաց Աստուծոյ զընտրհան, անդէն տուաւ նմա փութապէս։ Այս զրկումն անկաւ ի տեարսն մատակացն՝ յաղագս չար գործելոյն. և ժողովեալք բազմութիւնն անկանէին առ ոտս Սրբոյն, և աղաչէին զի զարձեալ աղօթս արասցէ ի բաց բառնալ զնզովսն։ Իսկ Սուրբն ոչ հաւանեցաւ խոնարհել յաղաչանս նոցա, ասէ. Զնեաղն առ Աստուած խնդրուածս յաղագս արդար պատճառին՝ լուծանել ոչ կարեմ. բայց խնդրեցէք ի Տեառնէ Աստուծոյ տալ ձեզ ընդ մատակացն այլ մեծ մխիթարութիւն, զյաջողութիւն ծննդոց առեջնայն անասնոց։ Սրդ և այժմ ի յաղագսկին ի Գողոյկ ագարակին՝ յաղագս չար գործելոյն ի Սրբոյն աղօթից՝ յոյժ աջողաբար կեան [2]. իսկ եթէ ձեռնարկիցէ ոք մատակ առանալ [3], մեծ վնասու պատահէ վաղվաղակի, և այլ անասունքն ևս մեռանին. և ևս աքանչելագոյն զարմանք այս են, որ մինչև ցարդ իսկ կայ ճեպ. քանզի յայլոց ագարակացն առնդրդացին

1. Մի օր. Աապուպէցւոց. և միւս այլ օր. Աափուպէմացւոց։
2. Ա.յլ օր. յոյժ աջողաբար կեանս յաջողեցաւ։
3. Ա.յլ օր. իսկ եթէ ոք յեղաս ոչ արձակիցէ մատակ պնդել։

Գողգի՝ հանապազ տեսանելք ոչ սակաւ վտանգ մատակաց գալ Ճարակել՝ ի խարձին Գողգէ. և ոչ լինէ ժեռեալք յաղագս չեղելոյ նզովիցն՝ ի նոսա երեւեալ, ոչ ազդեալ և զնոցայն սատակել: Ա.յս ամենայն եղեալ է՝ ի ձեռն սրբոյն Ա.Թանասկևնէ:

Եւ խաղաղութիւն եղեալ՝ ի բարբարոսացն, այնուհետև թագաւորել Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս, կոչեցեալն Հերկուղիս [1]: Եւ՝ ի ժամանակս Ա.գրիկողայոսի հեգեմոնի բազում հալածանս գործէին քրիստոնէից գաւառս ունէր՝ ի թագաւորացն՝ յաղագս՝ ի Քրիստոս Հաւատոցն, և նոցին աստուածութեանն. և հրամայեալ տուեալ, եթէ որ ըմբռնեսցի քրիստոնեայ և ոչ կամեսցի զոհել Աստուածոցն, տանջեսցի և չարչարեսցի: Եւ կալեալ լինէին քրիստոնեայք արք հինգ, որոց էին անուանքն այսոքիկ, Թէոդիրատոս, Մաքսիմիանոս, Պատրոփիլոս, Հեսեքիոս, և Կղէոնիկոս. և երկայնութիւք կապեալ տարան առ անօրէնն, զոր չարաչար չարչարեալ սպանանէին: Ձայս ծանուցեալ սրբոյն Ա.Թանասկևնէ՝ գոչեալ տեսանել զսուրբսն մինչդեռ էին՝ ի բանդին. և բանիւք մխիթարութեամբ լցոյց զնոսա, և գնաց անդրէն. և դարձեալ անդրէն թուղթ առաքեաց առ սուրբսն՝ հաստատել զնոսա՝ ի հաւատսն և պինդ կալ, զայս ունելով օրինակ գրոյն.

Տէրանց իմոց երանելեաց, ընտրելոց վկայից Քրիստոսի, որոց անուանքն՝ ի գրին կենաց գրեալ են, Թէոդիրատոս, Մաքսիմիանոս, Պատրոփիլոս, Հեսեքիոս, Կղէոնիկոս, Ա.Թանասկևնէս՝ Տէրամբ խնդալ:

Ոսեալ ձեր իւրաքանչիւր զԱստուծոյն երկնաւորի զջօրութիւնն և զզանազանութիւնն հաստուցանեն վասն սուց վաստակոց զոր ընդունիք, և փորձեալ ծանեալք եթէ ոչ ինչ մեծագոյն Աստուծոյ քան զայդ յայտ գաւոր լինել կամ ընտիր և երանաւոր, եթէ ոչ վըճռանալ և կապել և չարչարել վասն Տեառն. և հաղորդակից լինել նոյնպիսի աշխատութեանց, և նշաւակ և տեսիլ լինել վասն երկնաւորին. և ձաղանօք և աշխատանօք և նեղութեամբ հաճոյ լինել բարեբարին Աստուծոյ: Ա.յդ ուրախ լերուք, և երանի՛ ձեզ. վասն

1. Ա.յսինքն՝ Հերակլէս:

որոյ և ես յօժարութեամբ՝ ոչ միայն եկեալ առ ձեզ ցուցի զիմ սէրն, այլև՝ի ձեռն գրելոցս զցանկութիւնդ ձեր լցի: Սակ և դուք զիոխարէնս այսորիկ առնիցէք յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ առ մեզ: Իսկ ձեր բարի գործօդ և ընդ լաւ ընտրութեանդ՝ յորժամ վախճանիցիք՝ ի մերձակայումն յայտնեսցի. և բազմաց լուեալ զձեր հաճոյ առնելոյ ձեր հանդերձութեան՝ հասատատեսցին ի հաւատս: Եւ զինչ պարտ էր ինձ առնել որ գրեմ, եթէ ոչ այսպիսի յոժարական գրով հաստատել զձեր ոգիս, զձեր ևս լցեալ ամենայն բարութեամբ և զաւանելեալդ զիմաստութեամբ, և զկարօղ և զյաղթօղդ, նայելով՝ի ձեր հաճելութիւնդ՝ որով և այլք խրատին: Եւ արդ մեք այսուհետև աղօթեմք անդադար վասն ձեր առ երկնաւորն Աստուած, տալ ձեզ զկատարեալ շընորհսն. որպէս թէ առնուլ ձեզ զյաղթանակ վերինն ընտրեացն, ըստ ձերում յօժարական կամացդ. և որպէս աղաչեցաք՝ի գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ յորժամ արժանի լինիցիք նահատակական պսակացն, բարեխօսեցէք առ Տէրն Փրկիչ Յիսուս Քրիստոս, արժանի լինել և մեզ մասին ձերոյ:

Ասյսոքիւք գրեցեալզ առ սուրբ վկայն՝ երանելի հանգստեացս պատրաստել նոցա՝ի Փիլաքթոսէ՝ տուն հանգստեան, և զայս զմնաս ածեալ սկսաս շինել յառաջ քան զվախճանել նոցա տուն աղօթարանի [1], ուխանկիւնի սրահաձեղուն ձևով, որ մինչև ցայժմ գոմբեթաձև կոչի. և համբաւեալ եթէ լոկ ապատանս շինէ նա, յաղագս այսորիկ ոչ՝ի միում կողմանց զղէմս արևելից նշանակեաց. քանզի՝ի նմին գեօղ պատուհասացեալ եկեղեցին շինեալ էր իսկ. ի նեղջոյ գոմբեթին շինեաց գետնափոր դիրս սրբոցն, ուր եղ զատացեալ վկայն. և ինքն իսկ սուրբ վկայն Աթանասիոս այժմիկ՝ի նոյն դիրս կայ սրբեալ զատունն:

Եւ այսոքիկ այսպէս եղելոց, հնչեցեալ համբաւ բարեպաշտութեան առնն սրբոյ, եհաս մինչև յանուն երկն Թագաւորն. և գժկամակ լինէին ընդ նմա իշ-

1. Մի օր. պատ աղօնարանութեան:

*խանըն վան այսորիկ, եթէ զաղանէ քրիստոնէից մի-
ծացուցանէ։ Եւ հրաման տուեալ զանուանի և զա-
ւաքինի վկայն և զնահատակն զՍԹանասպինէս՝ զօ-
րականացն գտանել և ածել առ Սգրիկոզոս հե-
գեմոն՝ ի Սեբաստիա, զի չարչարեալ սպանցէ զնա։
Եւ լուեալ զայս երանելոյն և ոչ կամեցեալ՝ ի բուռն
անկանել անօրինացն, Թաքուցանէր զինքն յիւրում
խոկ գեօղն Փիլաքթոսէ. և՝ ի բազմանալ ևս խնդրա-
կանացն, գնայեալ անտի հասանէր՝ ի լեառն բարձր՝
որ էր հանդէպ գեղջն, վկնուտ և ամենևին անա-
պատ, և բազում ժամն ժուժկալեալ՝ ի տեղւոջն և
՝ի յոյժ տօթոյն ծարաւեալ յանչուր վայրկին, կար-
գաց առ Տէր և ասէ. Յիսուս Քրիստոս, ցոյց յիս՝ ի
քում ծառայիս զվճռաւոր ընտրհ քո, և հան ջուր՝ ի
վկնէս յայսմանէ. որպէս զի ըմպեալ իմ և զովացեալ՝
փառաւորեցից զքեզ։ Եւ այսպէս աղօթեալ՝ ի բոլոր
հաւատոց՝ ի բազում ժամն, արժանի եղև ընտրհին զոր
հայցեաց։ Եւ բերանացեալ վկնին եհան զջուր բազ-
մաման, ուստի արբեալ զոհացաւ զտուտղէն՝ և մինչև
ցայժմ կայ յայսպիսի ջուր՝ ի փոքր քարէն։ Եւ
փոքր ինչ ցածուցեալ զնովաւ խուռնութեանցն, էջ՝ ի
լեռնէն, և ժողովս մեծ կատարէր յարարակէն, որ
կոչէր Մովսաուն. և լուեալ աշակերտաց նորա ժողո-
վեցան առ նա. և նոքօք եւ՝ ի խարճն որ էր մերձ՝ ի
Փիլաքթոսէ ագարակ. կամեցեալ անդ փոքր մի հանգ-
չել, և աշակերտացն հրամայեաց պահ ունել Հանա-
պարհին, վասն կասկածին խնդրակացաց իշխանին։ Եւ
նկրհեալ մեծին՝ եռես յանուրջս՝ ի հասարակ աւուր
աստղ փայլեալ՝ ի վերայ նորա. և յայտնի ծանեաւ
այրն Աստուծոյ աստուածածախէր, եթէ իւր առաջի կա-
ցեալ վկայութիւնն է։ Եւ հրամայեաց ոչք ընդ իւրն
էին՝ աղօթել. և անդէն նկրհեալ, եռես դարձեալ մըր-
ջեանց բազմութիւն յուզելոց խառնել զինս ըստ հան-
դերձելոցն հասանել նմա խառնութեանցն. և զար-
թուցեալ զոհանայր զՏեառնէ։ Եւ իբրև անապին
փոքր մի, սեռանէն՝ ի դիմաց կոզմանէ կապեալ զոմանս
քրիստոնեայս, ածեալ զօրականացն ընդ Հանապարհն
Սեբաստեայ, որոց սեռեալ զսուրբ այրն՝ ի խարճին
հանգուցեալ մերձ՝ ի Հանապարհն, փոքր մի խոտորե-*

ցան առ նա և ասեն. Եթէ գիտիցէս ուր բնակեալ
լիցէ այրն Աթանապինեան, ցոյց մեզ: Եւ ստրա ուրա-
ցեալ զայս եթէ ես ոչ գիտեմ, երթայք յանդաստանն
Փիլաքթոսէ, և անդ վասն այսորիկ հարցեալ ուսանիք:
Եւ նոքա այսպէս հանդերձ կապելովք գնացին ոչ ինչ
մեղուցեալք: Իսկ տեղին այն մինչև յայժմ անուն ժա-
ռանգեաց՝ ի պատահմանէն, զի կոչի Ուր տէրն ըմբըռ-
նեցաւ: Իսկ ստրքն Աթանապինէս զղջացեալ մի գու-
ցէ երթեալ խռովութիւն արասցեն երկրապուծացն,
յարուցեալ հասանէր նոցա փութապէս. և ազաչէր
հանդիսել՝ ի Փիլաքթոսէ և չաշակել կերակուր յիւ-
րում տանն. և նոցա ոչ կամելով՝ հապիւ ուրեմն խո-
նարհեալք պատկառեալք՝ ի պատուաւոր տեսլենէ
առն և՝ ի շքեղաշուք ծերունի հասակէն, և իջեալ առ
նա առին կերակուր. ապա արի և քաջ նահատակն ոչ
ևս թաքոյց զինքն, այլ ասէ. Որդեակք, Աթանապի-
նէսն զոր խնդրէքն՝ ես եմ, արարէք ընդ իս որպէս իշ-
խանն հրամայեաց: Եւ նոքա ունկին երկաթի կապանս,
և արկանել զինս՝ ի շղթայսն դանդաղէին, պատկա-
ռեալք՝ ի ծերութենէ նորա. մանաւանդ երբեմն տես-
անէին ևս զառաջինն եդեալ զպատուականիրաբար պա-
տուական սեղանն. աղաչէին զինս ձգել անդէն, և ա-
սէին. եթէ Երիտասք սասքն այնմիկ որ առաքեացն ըզ-
մեզ՝ եթէ զինս ոչ գտանք: Իսկ ստրքն ոչ հաւանեցաւ
ձգել, ասացեալ զայս. եթէ Մինչ՝ ի սահման գեղջս
իմոյ եկանեմ՝ մի կապէք զիս. և յորժամ ընդ այս ան-
ցանեմ, յայնժամ արկէք ընդ ինև շղթայսդ, և տա-
րայք որպէս և հրամայեալ է ձեզ, զի մի և դուք անկանիք
ցնծք ընդ ցասմանէ իշխանին ձերոյ. և ես պատրաստ և
կազմ եմ ընդունել և չարչարիլ և խաչտանդիլ վասն
Տեառն: Եւ այնուհետև գնացեալ նոցա և հասեալ՝ ի
գեօղ մի որում անուն կոչէին Սադոպոն [1], և եղեալ
անդ աւուրս, կոչեաց ստրքն զպատահին երիցուհան և
խրատէր զնոսա աղաչելով, ասէ. Եղբարք և հարք,
ազատք և պատուականք, ազգակիցք և բարեկամք իմ,
սիրելիք և որդիք, ամենայն ժողովուրդք, աղօթս ա-
րարէք վասն իմ հանդերձ պահօք, որպէս զի առցի

1. Երիս օր. Սոփոպոն:

ինձ Աստուած զբարի յօժարութիւն նահատակութեան կատարել, և ցանկութեամբ գտանել ընդ առաջն նորա. որպէս զի և ես այնուհետեւ միշտ բարեխօսեմ վասն ձեր ամենեցուն. իսկ եթէ դիպեսցի ինձ իբրև զմարդ դասալիք լինել, և փախչիցեմ 'ի մարտիրոսութենէն, աղաչեմ զձեզ զի պատեալ վինեւ քարամբք և փշրեալք հալածեցէք զիս. բայց յուսամ 'ի Տէր իմ Յիսուս Քրիստոս, զի ոչ թողցէ զիս նորա մարդասիրութիւնն:

Եւ զայս ասացեալ՝ կամեցաւ զոր յառաջագոյն ծանեալն էր յայտնել, այսինքն և զպատիւ եպիսկոպոսութեանն. և կոչեաց մօտ առ ինքն զմերձակայ երիցսն և ասէ. Այժմ յայտնեմ ձեզ եղբարք և հարք և տեարք իմ, քանզի 'ի վաղնջուց հետէ արժանի եղեայ առաքելական եպիսկոպոսութեան, և ոչ կամեցայ զայս յայտնել, զի զերծայց 'ի մեսապարծութենէ. բայց յիշեցէք տեարք իմ և եղբարք իրաւունս իմում իսօսելոց առ ձեզ, և հաւանեցուցանելոց զձեր սէրդ, որպէս զի զամենայն կանոնականն գործաւորութիւն և գասատուութիւն պինդ ունիցիք զեկեղեցւոյ, ըզկարգս նախատատրոց և պատարագաց և այլոց զանազան իրաց, եկեղեցական իրաց կարգաց. յիւրաքանչիւր գեօղ հանդերձ բազում փութով և անզբօս ցանկութեամբ լցիք, զոր կարգեալ է իմ կրտսերոյ և նուաստ. և հանդերձ երկիւղածութեամբ սիրով և փութով՝ մեծացուսջիք պշնութիւն եկեղեցւոյ, և ապա ունել սրբութեամբ, և դարձուցանել զաշխարհականն 'ի Քրիստոսէ Աստուծոյ. և մի ինչ նուազեսցի յիմոց կարգելոցդ. որպէս զի մի և դուք ընդ դատապարտութեամբ անկանիցիք 'ի հանդերձեալ արդար դատաստանին. այլ յամենայն 'ի կարգեալսն բարի կամօք և յօժարական վաստակովք յաւելուլ քան թէ նուազեցուցանել. որպէս զի և դուք մեծագոյն վարձս ընդունիցիք 'ի Քրիստոսէ Աստուծոյ: Եւ այսպիսի բանիւք խրատէր զնոսա. դարձեալ ասէ. Չի մի ամենևին կուրացին որ յիս չնորհքն, զոր առի, արժանի լեալ եպիսկոպոսութեանն, կամիմ երկուս ոմանս 'ի վիճակաւորութենէն ածել՝ զորս փորձեցի, և թողուլ ձեզ: Եւ զերեցս առ քաղաքին եպիսկոպոսն ողջացուցանելով և

հաւանեալ զմիաս նորա, եթէ ոչ վտառաւորեալ և ոչ աչառեալ, այլ զի մի գատարկեացի՝ որպէս ասացի՝ որ յիս ջնորհքն, որ տուեալ ես ինձ ՚ի Տեառնէ. և ընկալեալ սուգս յինէն զպատուս քահանայութեանն, հո վաւեայեն զձեզ ըստ իմում հրամանին:

Ձայս նորա ասացեալ, ամենեքեան առ ոտս նորա անկանէին հանդերձ արտասուօք և ասէին. Ողջեմք զքեզ, հայր ծերուն, աղօթս արա ՚ի վերայ մեր, որպէս և հոգալով ընդ մեր զհաճոյն Տեառն արարեր. և մեք ամենեքեան հաւանիմք գումարութեանդ ՚ի վերայ կանոնեցոյս ՚ի գումիզ աստուածասիրութենէն. և դարձեալ, այժմուցս ՚ի քէն յառաջ եկեալոյս ՚ի ժառանգաւորութիւն՝ հնազանդիմք: Եւ յանձնեաց զնոսա և զգաւառն ամենայն եպիսկոպոսի քաղաքին. բայց առաւել զանդաստանն Փիլաքթոսէ: Եւ ապրեալ գնոսա գնաց այնուհետև:

Եւ զայրացեալ էր որպէս յառաջագոյն ասացաք իշխանն Ագրիկողոս[1] Սրբոյն, յաղագս այսպիսի պատճառանաց, եթէ աղանդոյն քրիստոնէից գլուխ է. առ որ տարան իսկ զՍուրբն: Եւ մինչ չև հասեալ էր երանելոյն ՚ի քաղաքն Սեբաստիա, աշակերտք երանելոյն սրբոյն Ա.Թանագինեայ՝ Ա.րիստոն և Ա.ևերիանոս անուն, յորոց մինն գրակարդաց նորա, և միւսն սաղմոսերգող, և խնայեալ նոցա զհալածուսին քրիստոնէից, նախանձող եղեն պաշինն մարտիրոսութեան. և յօժարեցուցին զինքեանս ՚ի նահատակութիւն, առանց գիտելոյ աւուն Ա.տուծոյ. և գիմեալք ՚ի Սեբաստացւոց քաղաքն, գիր յիւրեանց անուն մատուցին առ իշխանին Ագրիկողոսի, բազում թլպատեալս նամանս գրել ընդդէմ Թագաւորաց և իշխանաց, որպէս թէ անպարշտաբար հալածեն զքրիստոնեայս, և ոչ են արժանի Թագաւորութեանն: Ձայս, և ևս յաղագոյնս մատուցին իշխանին. որպէս թէ նորա ընթերցեալ զԹուղթն՝ վաղվաղակի ապանցէ գնոսա և մարտիրոսանան: Եւ առեալ իշխանին Ագրիկողոսի զԹուղթն, և տեսեալ զի նմայեան, զայրացաւ ՚ի վերայ նոցա, առաւել ՚ի վերայ սրբոյն Ա.Թանագինէի, յոր-

1. Երկու օր. Ագրիպպոս:

ժամ գիտաց եթէ աշակերտաք նորա էին. քանզի կալ ծեաց եթէ նորա կամօք եղեալ է գիրն ամբաստանի։

Եւ նստեալ յատենի նախ քան զՀինգ կաղանդին յունուարի [1], հրամայեաց ածել ՚ի նեղքս զՍ.բիատոն և զԱևերիանոս. և ասէ. Ձգիրս զոր հրապարակաւ առաջի բերէք, ո այսպէս չարաչար գրեաց։ Սուրբն Ս.բիատոն ասէ. Ես։ Իշխանն ասէ. Եւ Ասևերիանոս ընդ քո՞ղ էր։ Ս.բիատոն ասէ. Ա.յո՛ ընդ ես էր. քանզի դա առաց և ես գրեցի։ Ա.գրիկողոս առաց. Քանզի գրեցիք ՚ի գրին բազում ինչ ընդդէմ Թագաւորաց և իշխանաց՝ զոր ոչ է պարտ առել և կամ լսել, և անպատեհս գրեցիք. և դրոշմեալ ևս էր ՚ի Թղթին, եթէ մեհեանս այրեցաք, ատ՚ոյգ է Թէ ոչ։ Սուրբն Ս.բիատոն առաց. Ընդ որ անցաք և գտաք, այրեցաք. բայց զտեղեացն անուանն ոչ գիտեմք։ Իշխանն ասէ ցսպասաւորսն. Կախեցէք զդա և քերեցէք։ Եւ բազում ժամն քերեալ, ասէ ցսպասաւորսն. Ինայեցէք ՚ի դա, զի առաջ էք Թէ ուսումն է և կամ յումէ՛ խրատեալ և դրդռեալ գրեցաւ յայս կամն գալ։ Սուրբն Ս.բիատոն առաց. Ես ոչ յումէք յորդորեալ առաքեցայ, այլ ինձէն կամ եկի մեռանել վասն Տեառն։ Իշխանն ասէ. Հարկ է քեզ ասել և զայս ևս, եթէ զմի մեհեանս այրեցէք։ Սուրբն Ս.բիատոն ասէ. Ոչ գիտեմ։ Իշխանն ասէ. Պանզի անկար ՚ի մտաց քոց։ Սուրբն Ս.բիատոն ասէ. Ես զմիոս իմ առ ինս ունիմ։ Իշխանն ասէ. Ի միոյ քոց յայտ է, եթէ ոչ ես ՚ի քեզ ինքեան։ Ս.բիատոն ասէ. Ողջ եմ ոգւով։ Եւ սրտմտեալ իշխանն հրամայեաց կրկին քերել զնա։ Իսկ սուրբն Ս.բիատոն ՚ի քերելն աղօթէր առ Ա.ստուած և ասէր. Տէր Յիսուս Քրիստոս, օգնեա ինձ։ Ա.յն իշխանն. Ինչո՞ւ կաց զդա, և կախեսցի Ասևերիանոս։ Եւ կախեալ զնա, ասէ իշխանն. Պատմեա յառաջ մեզ միտքդ քերեալ լցես, և առա զմի մեհեանս այրեցէք։ Ասևերիանոս ասէ. Ոչ գիտեմ։ Իշխանն ասէ. Ո՞ր որդի ես։ Ասևերիանոս ասէ. Ոչ հայր ունիմ և ոչ մայր։ Իշխանն ասէ. Ա.պա զիա՞րդ ծնար։ Ասևերիանոս ասէ. Ոչ գիտեմ։ Յայնժամ բարկացեալ իշխանն ՚ի վերայ նորա, հրա-

1. Երկու օր. յառաջ։

մայեաց քերել զնա և ասէ. Այս, զի՛ մեհեան այրեցէք: Սևերիանոս ասէ. Ուր և զտաք այրեցաք: Իշխանն. Ո՞ր հարկ վտանգեաց զքեզ առնել զայս: Սևերիանոս ասէ. Գնալով ՚ի Հանապարհորդութենա քրիստոնէութեան՝ արարաք զայս: Իշխանն ասէ. Ո՞ հաւանեցոյց զձեզ առնել և զայդ: Սևերիանոս ասէ. Եւ ոչ ոք: Իշխանն ասէ ցսպասաւորն. Արդ հրամայեալ իմ խաւսափոյն քերել զնա: Եւ մինչդեռ քերէին՝ ասէ Սևերիանոս. Ինձուցէք զիս և ես ասեմ ձեզ թէ ո՛րպէս եղև: Ապրիկոզոս ասէ. Զայս միայն խընդրեմ; ասա. ընդէ՞ր զմեհեանն այրեցէք: Սևերիանոս ասէ. Սատկի քեզ, եթէ ՚ի Հանապարհի մինչ գայաք ասա՝ այրեցաք: Իշխանն ասէ. Եւ ո՞ յորդորեաց զձեզ զայդ առնել: Սևերիանոս ասէ. Եւ ոչ ոք: Իշխանն ասէ. Եւ տակաւին ևս յամառեալ եմ ՚ի նոյնս. արդ խաւսափոյն քերեցէք զդա ուժգին ևս: Եւ քերեալ երկիցս անգամ՝ ասէ. Թողէք զիս և ես ասացից. և թողացուցին: Ասէ Իշխանն. Այս զՀիմարիսն, ո՞ առաքեաց զքեզ այսր, կամ ո՞ հաւանեցոյց կամ ո՞ զդիրն բառնման գրեաց: Սևերիանոս ասէ. Յանդաստանի քնալ կեալ է որ յորդորեացն զմեզ, օթիւ[1] հեռի է ՚ի գամբացս: Իշխանն ասէ. Եւ զինչ անուն կոչի անդաստանին: Սևերիանոս ասէ. Սագուպինէ տահմանակիցն, իսկ անդաստանին Փիլաքթոսկէ[2]: Իշխանն ասէ. Արդ որ յորդորեաց զքեզ՝ զինչ կոչի: Սևերիանոս ասէ. Ալեքսանդրոս եպիսկոպոս: Իշխանն ասէ. Յորմէ՞ գեղջէ է: Սևերիանոս ասէ. Ի Փիլաքթոսկէ: Իշխանն ասէ. Եւ զինչ Ալեքսանդրոսն՝ զոր ասեն լինել եպիսկոպոս, ասէր՝ որ առաքեացն զձեզ: Սևերիանոս ասէ. Այսպէս ասաց, եթէ երթայք և որպէս ասեմ ձեզ և մարտիրոսանայք: Իշխանն ասէ. Զդիրն ո՞ շարադրեաց, և ընդէ՞ր ձեր անուանքդ են ՚ի գիրս և ոչ նորայն: Սևերիանոս ասէ. Զդիրն Ալեքսանդրոսն գրեաց, բայց թէ զինո՞րդ զմեր անուանս շարադրեաց ՚ի գիրն՝ զայն ոչ գիտեմք: Իշխանն ասէ. Ալիտոն ընկեր քո գիտէ: Սևերիանոս ասէ. Այո՛, Ալեքսանդրոսն գրեաց և եա

1. Մի օր. Ե անդաստանն անվճա հեռաւոր է:
2. Մի օր. Սագուպին խոչի անդաստանն, իսկ տահմանն Փիլաքթոսկէ:

ցմեզ: Իշխանն ասէ. Աւետիանէ, եթէ կամիս կեալ զոհեա: Աւետիանոս ասէ. Եկեսցէ նա որ ընդ իս էր: Իշխանն ասէ. Դու հրամանաց մերոց հաւանեա, երթ ընդ կռոնեելն զաւառապետի, զոհեա: Եւ նոցա երթեալ զոհել, հրամայեաց ածել զԱվիատոն և ասէ ցնա. Ամբարտաւանդ քո բարբդ և չար մոածուելիւնքդ՝ թաքչել ոչ կարացին: Սուրբն Ավիատոն ասէ. Աստուած այնպէս հրամայեաց: Իշխանն ասէ. Ահա ընկեր քո զոհեաց, դու զի՞ յապաղես: Սուրբն Ավիատոն ասէ. Վասն զի ոչ կարացի հաւանելոյն հաւատոցն որ՚ի Քրիստոս: Իշխանն ասէ. Իսկ քո մարմինդ անցաւ է: Ավիատոն ասէ. Կամօքն Աստուծոյ: Իշխանն ասէ. Մի եթ յերկնից ես դու: Սուրբն Ավիատոն ասէ. Այո՛, յերկնից եմ:

Յայնժամ իշխանն ծանուցեալ զանփոխելի հաստատութիւն մտացն՝ եհատ զվէրս՚ի վերայ նորա. ասէ. Վասն զի ոչ ժամանեցին[1] քննութիւնք, և ոչ մարդասիրութիւն աներեսյաղթ տերանց ինքնակալացդ կարացին ածել զքեզ՚ի լաւութիւն՚ի վերայ այսպիսի դժպատեհութեան զրոյ՝ զոր մատուցեր իմում պատուասիրութեանս, և զպաշտօն Աստուածոյն Ճանաչել ոչ կարացեր, և յանդգնեցար՚ի նմին յամառութեան մնալ, ընկալ դու զայսպիսի վէրս: Եւ՚ի քարտանէն զայսոսիկ ընթերցեալ զիր ասէ. Որ քան զաներեսյն անպատեհն էր, եառ ինձ, զոր ոչ ոք՚ի մարդկանէ զպատուաւորաց ասել կամ լսել յօժարէ, վասն այր ամենայնի զսա հրոյ մատնել հրամայեցի: Եւ այսպիսի օրինակաւ եղև նահատակութիւն սրբոյն Ավիատոնի, նախ քան զտանն կաղանդացն օգոստեայ:

Պարապեալ այնուհետև զաւուրն առ Սեբիանոս և ասէ ցնա. Ձոհեցի՛ր աստուածոցն, Սեբիանէ: Եւ նա ասէ. Ա՛յժ: Ասէ իշխանն. Պարկեշտ մարդասիրութիւնն տերանց մերոց և քաջութիւն Աստուածոցն զքեզ՚ի լաւութիւն ածին, իսկ զԱվիատոն վասն յամառութեան իւրոյ և մոլորութեան, հաստուցի նմա ըստ արժանեաց իւրոց. ուստի՚ի քանդ հրամայեմ դնել և զքեզ խնամակալութեամբ, մինչև՚ի գալն

1. Յօր. ժամեցին:

Ա.Թանագինէ, որպէս զի տուգիս քննեցից վասն պղտին։

Սուրբն Ա.լիխտոն այսպէս կատարեցաւ ՚ի Սեբաստիա. այլ կարծեն ոմանք անպիտութեամբ զՀռեգինոս լինել, որ և սա՚ի սպասաւորաց Ա.Թանագինէ էր. այլ գիտեմ իւրաքանչիւր ոք զի սուրբն Հռեգինոս ոչ՚ի Սեբաստիա կատարեցաւ, այլ ՚ի Ակտարիա քաղաքի, և անդէ ի վկայարանն նորա մինչև ցայսօր. զի վասն յոյժ և սաստիկ հալածանաց եկեղեցւոյ՝ անդ էր առաքեալ զնա սրբոյն Ա.Թանագինէ, որպէս զի ուսանիցի զքրիստոնէից պատուհասն, և զելս պատմեցէ նմա։ Եւ խնացեալ՚ի քաղաքին զգալուստ զՀռեգինոսի՝ հալածողացն, և ըմբռնեալ չարչարեցին. և ուրախացեալ գոհանայր զՏեառնէ Աստուծոյ, և բարի վկայութեամբ կատարեցաւ։ Եւ լուեալ զնահատակութիւնն նորա սրբոյն Ա.Թանագինէ, մինչդեռ էր ՚ի Սակոպինիա, և փառաւորեաց զԱստուած. բայց ՚ի Սեբաստիա կարծեալն ամենեցունն՝ Ա.լիխտոն է, և ոչ Հռեգինոս։

Իակ ապա ածեալ զինուորացն զսուրբն Ա.Թանագինէ նէս ՚ի քաղաքն Սեբաստիա. և լուեալ հինգ Ա.պրիկոզոսի վասն առաքինասէր վարուց աստուածասէրն առնն, և ընդ առաջ ելեալ պատահեաց սրբոյն, և անվեալ առ ոտս նորա և ասէ. Ողորմ, տէր իմ, և առաւել եւս հաւատացեալ եմ զի արժանաւոր ծառայ ես քոյ էիցեն Քրիստոսի. և զոր ինչ խնդրես ՚ի նմանէ՝ վաղվաղակի տայ քեզ. արդ աղաչեմ անկանիմ առաջի քո, որպէս զի և ինձ ընտրհեացես զինդիրս իմ անմահանձաբար. քանզի ունիս դու զամենայն ՚ի Տեառնէ քումմէ և ՚ի վարդապետէն յոր յուսաս։ Ողորմ է իմ, և բազում ժամանակք են որ ըմբռնեցաւ ՚ի դիւոյ պղծոյ. արդ աղօթեա՚ի քայ կալ ՚ի նմանէ պիղծ ոգւոյն. և Թախանձէցից ես զայր իմ և հաւանեցուցից արձակել զքեզ, և չարկանել ընդ մեզ զադրութեամբ։ Ասէ Սուրբն. Եթէ հաւատաս զինդ արժանի լինել Տեառն խնդրուածք քո. քայց եթէ խօսեացիս ՚ի գործս իմ խափան լինել կոչմանս իմոյ, հանապատ վտանգէ զնա դէմն առաքել քան զառաջինն. այլ ընկալեալ զքոյդ՝ երթ զնա ՚ի

տուն քո. և նորա մեծաւ արտասուօք յուզարկեալ զաւուրքն ՚ի քաղաքն՝ դարձաւ ՚ի տուն իւր:

Եւ յոյժ ամօթ գիտայ իշխանն Աբրիկոզոս, ածեալ զայրն արդար՝ կապանօք, որպէս հրամայեալ էր. և իբրև ածին, հրամայեաց նմա յառաջ գալ: Եւ ասէ. Զիա՞րդ համարձակեցար և զԱւետրիանոս: Ամենապիղծ ասէ. Զո՞րս: Իշխանն ասէ. Աւետրիան յաղագս յանդգնութեան իւրոյ անխնայ սպանանելն պատուհասի լիր բռնեցեալ. իսկ Աւետրիանոս ըստ իւրում յիշատակարանի գրութեան դեռ ՚ի միջի կայ. զոր ամենայն իրօք տեսեալ՝ կարկեցաս խմանալ թէ զինչ՞ս հանդամանքն իցեն. քանզի ես ամ մեզ գիր լեալ չարութեամբ քո բանիւք, որ ունէր հայհոյութիւն զԱստուածոյն, և զԹագաւորացն, զոր և կրկնել ոչ է պարտ: Ամենապիղծ ասէ. Այդ անուանք աշակերտաց իմոց են վասն որոյ հարցեր, և ոչ ուրանամ. քայց գիտեմ գործոյ ամենևին էին օտար եմ: զի Տէր մեր Յիսուս Քրիստոս ուսոյց մեզ այսպիսի ինչ չգործել. վասն որոյ և գրել իսկ ոչ պարտիմ: Իշխանն ասէ. Լուար զինչ արարի: Ամենապիղծ ասէ. Ոչ: Իշխանն ասէ. Ապա ուրեմն մուացար զոր յառաջագոյն տուր յիշատակաւ գրեցեր: Աւետրիանոս ասէ. Նա արար որ ընդ իս էր: Իշխանն ասէ. Կամիս ընթեռնուլ զբան քո: Աւետրիանոս ասէ. Այո վասնզինն ասացի: Իշխանն պատմեալ ասէ. Կախեցէք: Իսկ նորա պատասխանի տուեալ ասէ. Սա եւս ինձ: Իշխանն ասէ. Մինչ ընդ միայն եւս քեզ: Աւետրիանոս ասէ. Այո: Պատուէրն ասէ.

Ո՞չ ոք ետես յորժամ էտ զգիրն զայն, և զինչ ասաց։ Սևերիանոս ասաց. Յորժամ էտ՝ չէտես ոք. և ասաց եթէ երթայք և մատուրասանայք։ Դատաւորն ասէ. Ընթերցաւ առաջի ձեր զգրեանն, զի գիտասջիք եթէ զինչ մատուցէք դատաւորին։ Սևերիանոս ասէ. Այո՛ ընթերցաւ։ Դատաւորն ասէ. Այդպա ուրեմն լուար զայն ախոյ չարաչար զգրեալն, և զնածդ յանդգնեցար բերել առ իս։ Սևերիանոս ասէ. Ոչ կարացի իմանալ։ Դատաւորն ասէ. Դու ինքնին ես յասել եթէ ընթերցաւ, ապա զնածդ ոչ իմացար. կամ մարդ յայդպիսի հասակի եղեալ՝ դեռ ևս մանկատոյն ընդէր հեշտացար առ՝ի մահ դիմեցեր, կամ ընդէր ոչ ասացեր դմա, եթէ այր ծեր ես՝ի մահ մերձեալ, երթ դու վկայեա։ Սևերիանոս ասէ. Այո՛, ասացի դմա։ Դատաւորն ասէ. Գուցէ յումեքէ զրպեալ ստես յառնէս յայտանել։ Դատաւորն ասէ. Ցինչ ասես, Աթանագինէս. ցքեզ ասեմ ընդէր յանդգնեցար։ Աթանագինէս ասէ. Օտար եմ՝ի շատխօսութենդ յայդմանէ, և ոչ գիտեմ զինչ ասես, և ոչ այդպիսի ինչ լուայ։ Դատաւորն ասէ. Ո՞չ է այն վայրապար մեղադրութիւն որ՝ի քո վերայ բերեալ լինի. և քո թէ կամեցեալ էր զանձնէ անմեղադիր առնել, դիւրին էր քեզ։ Աթանագինէս ասէ. Որպէս և կամիս դատեա զիս, զի յինմէ գիտութեանս այսպիսի ինչ ոչ է գործեալ։ Դատաւորն ասէ. Սևերիանոս, յիշէս յորժամ զգրոն մատուցանէիք և ասէիք յերկինից իջեալ զանձինս ձեր, վանն էր յանդգնեցայք զայս առնել։ Սևերիանոս ասէ. Ելնական էի և ոչ գիտէի զինչ ասէի։ Դատաւորն ասէ. Աթանագինէս, ահա լուար զամենայն թէ ոչ ինչ պակաս թողի՛ի հարցափորձ առնելոյ և՛ի պատուհասից, և՛ի նմին անդեաց դա։ Աթանագինէս ասէ. Որպէս կամիս դատեա զիս առաւել քան զդա, բայց ասացի քեզ եթէ յայսպիսի ինչ իրս ես ոչ գտանիմ. խակ եթէ զև ունի և մոլի, ես զինչ առնեմ։ Դատաւորն ասէ. Սևերիանէ, լսէս զի՛ի վերայ քո բերեալ լինի Աթանագինէս, և ուրանայ թէ ոչ գիտեմ զոր ինչ դա ասէ։ Տես այսուհետև մի դրպեալ յումեքէ ստես զառնէս։ Սևերիանոս ասէ. Ոչ ստեմ, սա ետ ցիս։ Դատաւորն ասէ. Յորմէ ստեղծ ես, կամ

յորմէմ ժամու, կամ եաէս ոք յորժամ զամբաստանելն առնիցէ: Աբրահամ ասէ. Զգիրն այդ վաղապոյն էտ, քայց եաես ոչ ոք: Դատաւորն ասէ. Ի միջէ գեղջէ հիք դու և Ա.Թանապհինէս: Աբրահամ ասէ. Ոչ, այլ հնդետասան մղոնօք հեռի են 'ի միմեանց գեօղքն: Դատաւորն ասէ. Եւ առաքեա զանն առ քեզ զի երթիցես առ դա: Աբրահամ. Զմայր իմ առաքեաց զՄակեդոնիա: Դատաւորն ասէ. Ի մարդոյ ուրեմն ծնեալ էս և մայր ունիս արդեօք, որ երբեմն յուրատ լինելը, և յերկինից իջեալ ասիլը գքեզ: Աբրահամ ասէ. Ա.յն խորհուրդն սպառեցաւ: Այլ դատաւորն ցՈ.Թանապհինէս. ՁՄակեդոնիա Ճանապհինէս ասէ. Ոչ գիտեմ: Դատաւորն ցԱբրահամ ասէ. Այժմ յընտրութեան է. գնալ, առ մեզ առանց երկիւղի զՃշմարիտն. սա էտ զգիրն եթէ ոչ. և զինչ առաց 'ի տալն: Աբրահամ առաց. Սա էտ և առաց. երթայք և մարտիրոսանայք: Դատաւորն ասէ. Ա.րդ դու ոչ իբրև զվկայ մեռանիս, այլ իբրև զամբարիշտ և զհայհոյող: Եւ դարձեալ առ տուրն Ա.Թանապհինէս ասէ. Ցայդպիսի, հասակի և յայդպիսի պատուի եղեալ՝ ոչ պարտէիր այնպիսի գիր շարադրել, և հաւանեցուցանել առ իս քեզ: Ա.Թանապհինէս ասէ. Երբև զամբարիշտ ունիմ դատել յԱ.ստուծոյ, եթէ դեռ լինիմ ստուտ զումեքէ ասել, կամ յայնպիսի գիր ինչ ձեռն արկեալ եմ: Դատաւորն ասէ. Ահա առ որ 'ի տանջանս ես Աբրահամի՝ ստել, և ընդ քեզ Ճշմարտել[1]. արդ դոնեա 'ի քեզ ինքեան խորհեաջիր, զի այդպիսի վարդապետ ես, որպէս առես գրել և պատմել՝ կարես, և ուսուցանել զքրիստոնեայս. և 'ի դէպ է թէ դու գրեալ լցես զայդպիսի շատխօսութեան ամբաստանութիւն. ապա թէ ոչ յանդիմանեաս զգա որ ստեացն: Ա.Թանապհինէս ասէ. Նա ըստ իւրում յանմտելոյն ինքն գիտէ. ես ոչ լինիմ նմա պատճառ առնել տանջանաց. բայցում առացի քեզ, եթէ տուրդ գիտակցութեամբն կացի 'ի տղայական հասակին. և եթէ կասիս, զբոլոր Պոնտոս քննեա եթէ զնարդ կացի, և ըստ հրամանի Տեառն իմոյ ուսուցի

1. Մի օր. Ինչ պա ասես որ 'ի փանջանդ է սրել ի չեզ ճշմարիտ:

տալ զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ. ուստի ոչ կարեմ և զատահական իմանալ: Դատաւորն ասէ. Թէ արդարև սրբութեամբ կեցեր, և՝ լաւ վարուց գքեզ լինել հաստատես, ըստ կարգի Թագաւորական հրամանաց, ըստ որում հրամայեալ են գնալ ըստ սէր եղելի օրէնից, արդ մեք ընդունիմք ընդ մեօք զուղղութիւնս քո. արա զոհելոցսէս ամենեքեան, և կեաց ընդ մեզ: Սուրբն Աթանագինէս ասէ. Յայդմհետ օրէնս ոչ կայցի, և ոչ այլ կեաւտ: բայց զօրէնս երկնաւորին բազում անգամ ուսուցի և ուսուցանեմ և՝ ի նոյն մեռանիմ: բայց Սևերիանոս առեաց գինին բոլոր ամբիոն: Դատաւորն ասէ. Ո՛չ երբեք գքրիստոնեայ մեռանել նախ նախ քան զսրբեցն գքեզ՝ ի մեղադրութենէ գրոյն ամենայն առնպարշտութեամբ լցեալ: Աթանագինէս ասէ. Դատեցէք զիս Աստուած, թէ ոչ զՀնչմարիտն աստի ձեզ: Դատաւորն ասէ. Իսկ յանդիմանեա զՍեվերիանոս տուտ լինել: Աթանագինէս ասէ. կարծես ունել իմաստութիւն մեծ, և ընդ իրսդ անցանել ոչ կարես, և գտանել զպատճառս աշխարհական կրօնիւք: Իսկ ես օտար և պարզամիտ՝ ի տեսութենէ հնարից, զինքդ կարեմ գնորա գտանել մտածութիւնն: Դատաւորն ասէ. Հրաժարեա յատելին մոլորութենէն, և զԹագաւորական հրամանն արա: Սուրբն ասէ. Զինչ արարից. ոչպէս հրամայեցաւ նոցա յերկինից: Ասէ ա՛նօրէնն. Զի քրիստոնեայք չարաչար կորնչեն, և մի ուրեք երևեսցին: Սուրբն Աթանագինէս ասէ. Այսպէս ես քրիստոնեայ եմ ծնեալ, և քրիստոնեայ մնեալ և կեցեալ, և քրիստոնեայ մեռանիմ: Դատաւորն ասէ. Ո՛չ սասցի քեզ զի մեռանիս, այլ զի կեցցես Թողեալ զմոլորութիւնդ: Սուրբն ասէ. Վաթսուն ամ աւելի ունիմ որ՝ ի քրիստոնէութեան եմ: և ունիմ քանամամ, յորս եպիսկոպոս եմ: վասն որոյ այլ ինչ ոչ յօժարիմ լինել, այլ քրիստոնեայ մեռանել: Դատաւորն ասէ. Սասցի քեզ, եթէ ոչ երբեք զքրիստոնեայ մեռանիս ցորքան ընդ այդպիսի պարտաւորութեամբ ես: Սուրբն ասէ. Գիտեն նա որ զծածուկսն առեալ, զի՝ ի զուր սասցանէք զինեն. և մի մտաի խաբիք, եթէ յայդմանէ խախտեալ կործանեցայց՝ ի սուրբ Հաւատոյ որ՝ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս: Դատաւորն

ասէ. Թագաւորական հրամանացն և բարեկարգ օրինացն աստուածոցն՝ ոչ հնազանդիս որպէս և մեք: Սուրբն ասէ. Չօրէնս անօրէնս, և զԹագաւորս նոքօք վՀարեալս [1] ոչ Հանապէմ: և աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին կորիցեն՝ի ներքոյ երկնից: Դատաւորն ասէ. Եւ զինչ էին գրեալքն՝ի քէն, եթէ ոչ այդ դոքիկ զոր բերան քո խոստովանեաց: Սուրբն ասէ. Զգրեալն ոչ գիտեմ, բայց վասն անխոտոր սրտի իմոյ որ առ Աստուած՝ ընդ անձին պատասխանիք այդ էին զոր լսարդ, և՝ի դմին մեռանիմ: աւելի աշխատ մի լինիր:

Յայնժամ դատաւորին տեսեալ զանշարժ և զՀաստատուն միտս զերանելւոյն, յետ այսչափ Հարց և փորձից փութացաւ վՀետ առնել գործոցն այսպէս. և ասէ. Զինքեանդ ինէս եպիսկոպոս որ ձեռնադրես Թեառն Հայհոյեաց զԱստուածն և զԹագաւորն և զմեզ զամենեսեան՝ այսպէս բանիւք՝ զոր և լսել չէ արժան. զոր և՝ի ձեռն տանջանաց խոստովանեաց Սերբիանոս՝ Ամենապինի գրեալ, և տակաւին և՝ի նմին յամառեաց, զոր կենդանւոյն այրել Հաճոյ եղև ինձ, արդ գիտացէք ամենայն բազմութիւն տերանց Աստուածոց մերոց: Եւ զայս ընթերցեալ ամենեցուն՝ի լսելիս՝ի քարտէն: Նակ անօրէնն ապստաւորացն ըզբանան քան զգործն արագ կատարէին: Լուցին զՀրոյ վառումն՝ի տեղւոջն յորում այժմ է՝ի Սեբաստիա փոքր աղօթատուն, յորում տեղւոջ կատարեալ սուրբ եպիսկոպոսն Սեբաստիոյ Պետրոս՝ բարեկամ Ամանապինի գինի. և բոլորեալ զՀուրն տարան զսուրբն. և նորա խնդրեալ ներումն, եկայ յաղօթս առ Աստուած մեծաւ զոհութեամբ, և բազում խնդրուածս Հայցեաց, որ յետոյ յայտնի երևեր ընտրն՝ի սուրբ նշխարս նորա: Եւ միմեանս աղօթէր, կին ումն մեծատուն և լաւ, ազգաւ Հեթանոս, անուն Եւսեբիա, անկաւ առաջի նորա մեծաւ Հառաչմամբ և ասէ. Աղօթեա վասն իմ, սի Թեթևասցին մեղք իմ: Նակ սուրբ վկայն ասէ. Հաւատաց՝ի Տէր Յիսուս Քրիստոս սրտիւ, և զոր պատուիրեմ քեզ արա, և կատարին խնդրուածք քո

1. Մի օր. Էրէցեաս:

յամենասեաւտանէն. ա՛ռ զմարմին իմ անխախուտ և ամբողջ, հասո յազատական փիլաքթոսէ, և դիր՛ ի տանն զոր ինձէն աշխատեալ շինեցի՛ ի Հանգիստ սրբոցն, որոց անուանքն են այս. Թէոդորատոս, Հիւսնիքիոս, Մաքսիմիանոս, Պատրոփիլոս, Կղէոնիկոս. անդ տուր տանել և զիմ մարմինս: Եւ նորա յօժարութեամբ ընկալեալ զբանն՝ ողջունեաց զսուրբն:

Եւ զինուորքն մատուցին զերանելին՛ ի տեղի կատարման: Իսկ նորա մեծաւ ուրախութեամբ ինքեան զամենայն անդամանն նշանաւն Քրիստոսի, և մտեալ՛ ի հուրն՝ աւանդեաց զհոգին յանուն Տեառն: Եւ նոյն ժամայն Եւսեբիա գնաց առ դատաւորն Ադրիկողոս և լնդրեաց զմարմին վկային. և նորա չնորհեալ դաղտ՛ ի բազմութենէն վասն պատուին զոր ունէր առ կինն. զոր և ընկալեալ պատեաց ազնիւ պատանօք և խունկք անուշիւք, և եդ՛ ի կառս. և հաւատարիմ ծառայիւք խունկք ետ տանել՛ ի Փիլաքթոսէ, ՛ի հրամայեալ սրբոյն բարանն. և հանդուցին ընդ սուրբսն:

Բայց պարտ է ոչ զանց առնել զչնորհօքն զոր աւր՛ ի Տեառնէ երանելին լսատ որում խնդրեալ առաջի մտելոյ մայն ոլք յուղարկէին զնա՛ ի հրայրեցութենէն. նախ զիրկութենն կինջն՝ որ պաղատեցաւն առ նա. և այլ ևս մեծագոյն, զի թէ ոք՛ ի մարդկանէ յերազի տեսցէ սխալանս ինչ և զարհուրեցի, և բարեխօս կացցէ զսուրբն առ Աստուած, վճարեալ լինի՛ ի փորձութենէ երազոցն, և փոխեսցի՛ ի բարի լաւագոյն պատահել երի: Եւ զայս վասն այնր հոգացաւ, զի յորժամ նաւէր նա՛ ի Թաքսաեան՛ ի նեղլոյ վիմին զոր աղբեւրացոյց, նկրհեալ՛ ի քուն եմուտ. և Թուէր երազ տեսանել, որպէս թէ տարեալ զնա առ իշխանն և՛ ի զոհելոյն Ձաշակելնոյ. և զարթուցեալ նոյն խուռնեցաւ՛ ի վերայ այսորիկ. և կրկնեալ ծուն՝ աղօթեաց բոլորով սրտիւ փոխել՛ ի բարի երազոյն. որ և եղեն իսկ: Եւ յորժամ հանդերձեալն էր կատարել ընթաց և զայս, և խնդրեաց վասն ամենայն մարդոյ զարհուրելոյ յաւնուէլն: Ըստ այնմ օրինակի և այլ բազում և հրաշալի չնորհօք երևեալ երանելի վկայն. քանզի յաճախեանն յուլիսի [1] կատարի յիշատակ նորա, և բազում ոսկ

1. Երկու օր. յոյնիք:

լինի, զի առատն է. և ամենևին ոչ լինի ի մասևաձա-
ռութեանն Հանձ կամ այլ ինչ ի վերակուրան. եւթէ
եթէ երևեսցի ի տան ուրեք՝ անզօր նմին լինի, և երբև
ի ձեռայինն ընդարմանալ. և եթէ ոք տարցի ի մոյն
որ ի յիշատակ սրբոյն՝ զանիւ օրհնութեան, անխա-
ռատ պահելի մինչև ցուր կամիցինն տանել. և տա-
րեալ՝ եթէ ոչ առժամայն ծախեսցէ, ապականի վաղ-
վաղակի. և որ ոք փութացի ի յիշատակ նորա և պէտս
ունելի ջրոյ, քանզի սակաւագոյն է ջուր ի տեղւոջն
յայնմիկ, և ի յիւրում տաղաւարին փորեսցէ ոք ջուր-
հոր, ապ ըստ բաւականին ջուր յաւուր յիշատակի
նորա, և ապա պակասի: Եւ զկնի կատարելոց ծոմին
խմբեալ բազում ամպոց, բազում ևս անձրև ի ջամն
ի շնորհս սուրբ Հոգւոյն, և ուրախանի զերաշտութիւն
գաւառին, և զանմաքրութիւն կենդանեացն և զմարդ-
կան. և զերծաւոր մօտակայն գետն ի վայր բերէ, և
լուանին տեղիք. և ամենայն խնդրուածք ուխտաւո-
րացն կատարին բարեխօսութեամբ սրբոյն:

Բայց և ոչ զբարեպաշտութիւն կինոջն եւսեբեայ
եթող նահատակն առանց շնորհակալութեան, այլ
ըստ խոստմանն մերձ եկաց առ նա ի տեսլեանն և ա-
սէ. Յառաջնումն կարդի մաղթանաց իմոց պարտաե-
ցայ մարդասիրին Քրիստոսի վասն քո, և տուաւ ինձ
խնդրուածք իմ ի Տեառնէ, և Թողան մեղք քո
քեզ, վասն մեծութեամբ հաւատոյն քո՝ ի նա ի-
մոլ բանիւ: Եւ զամենայն ժամանակս կենաց իւրոց
ամ յամէ գայր կինն ի տեղին մեծաւ պաղատանօք,
իւղովք և խնկովք անուշոք, և զարժանաւոր պատիւն
հատուցանէր, և զբազում հաստատէր ի հաւատս
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Արդ վասն զի ոչ արժան էր պակասեցուցանել ի
կարգեցեալոց սրբոյն՝ զոր ի կենդանութեան իւրում
արար նշանս, և զոր ի վախճանին եթող օրհնութիւն,
այնմիկ աղագաւ սակաւուք նշանակեցաք զսուրբ
վկային Աթանագինէ, որ պայծառ և հանդարձակ կեաց
ցաղաւարեալ պահեցաւ: Այլ զպատուէր և զկարգ
նորա ի Սարդուպինա և շուրջ զգաւառաւն պահեն
մինչև ցայսօր. քանզի կարգեաց զանապատն բարիս ի
Սարդուպինիա և եկեղեցեացն և Սեբաստացւոց քա-

զաքին խորհրդակցացն. և օրհնեալ զամենեսեան յանձն արար զորդին իւր զՊատրոկիլոս, և նստուցեալ զնա յաթոռ քրիստիանութեան, և արժանի էր իսկ եղև յամենայն ժամ պայծառ ունել զկարգս եկեղեցւոյ, զսուրբ տունն որ 'ի Փիլաքթովէ յանձնեաց նմա։

Ոմն Հեղիարոս [1] լաւ և առուսածասէր, որ յայնժամ խորհրդականութեան գլխաւոր էր, որդի Հիպաղաքեայ [2] մեծափառի և պատուաւորի, որ մնեալ ուսաւ զկարգս և զվկայաբանութիւն սրբոյն Ս.Թանադինի. և ժողովեալ իմաստակասութեամբ և ճշմարտապէս դրոշմեաց զամենայն պատմութիւնս զայս. և այսպէս թղթով ուղղափառեաց զՀատեցեալսն։ Նոյն Հեղիարոս խնդրեալ էր յերանելոյն Ս.Թանադինէ 'ի կենդանութեան նորա զմի 'ի հնգից օրհնութեանց գլուխ, զոր արարեալ երանելոյն. և մինչև ցայսօր պաշտեն որդիքն և տունն Հեղարեայ՝ ուսեալք 'ի մեծանց վանն յիշատակի երանելոյն վկայութեան։

Կատարեցաւ սուրբն Ս.Թանադինէս 'ի հուր՝ մարտիրոսական վկայութեամբ՝ 'ի հոտ անուշից, 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. զոր փառք յաւիտեանս. ամէն։

1. Մի օր. Հեղարէոն։
2. Ա.յլ օր. Հէպատայ գահանայի։

Վկայաբանութիւն Սրբոյն Աբգարայ Վկային։

Մաքսիմեանոսի անպարշտի առեալ զնշխարս Թիւդն Թադաւորութեանն Հռոմայեցւոց, որ ըստ օրէ՛ն չարաչէր բանսարկուէն բորբոքեալ՝ սհադին որոտմամբ և դժնդակ սպառնալեօք, վերամբարձեալ հաւասս չարութեանն ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ։ Եւ՛ ի մեռ եղեալ զամենայն հաւատացեալս առնան նորա կորուսանել և բառնալ ջնջել՛ ի միջոյ։ Եւ չարութիւնն ոչ միայն՛ ի նոցանէ էր, այլ և՛ ի հմախոհ նոցին՝ աստուածամարտութիւն առաւելեալ լինէր։ Քանզի քաղաքք ամենայն և գաւառք՝ իբրև ծովածուփ մրրկով պատառեալ խոկ՛ ի սոցունց՝ ընկղմեալ լինէր յայնժամ և կործանեալ։

Արդ որպէս բանիւք ոչ հաւատեաւ պատմել կարեալ զայնմ ժամանակի վրդովմանն նաւակործանութեանցն և խռովութեանցն. որ իբրև զմէջ խաւարային և մառախլապատ ամպովք տարածեալ լինէր երկիւղածացն Աստուծոյ։ Քանզի խռովեալ լինէին քաղաքք և դղրդեալ գեօղք և աւանք. և որք՛ ի բարեպաշտութեանն գտեալք լինէին՝ այնպիսիք որ զհետ երթային աստուածապաշտութեան կրօնից, ընկըղմեալ լինէին յանաստուածդ գահՀայն, և վաղվաղակի հանդերձ կապանօք ածեալ լինէին յատեան։ Ցորոց զայնոսիկ՝ որք հաւանէին՝ զվախճանական զարդարել և զչնմարիտ հաւատս ուրանալ, և ընդ չշմարտութիւնն՝ աստղութիւնք մնասի կենցաղոյս և պատիւք մեծա-

գոյնք և բազում գարուն հատուցմունք պար-
պեաւ լինէր։ Իսկ զայնոսիկ որ զհետ արդարու-
զբարի մտան ընտրեալ և զամենայն տանջանարան
չարչարանաց համբերութեամբ յանձն առնուին, հաս-
տատեն և անխոտորնակ հաւատովք կալ՚ի գարե-
տութեան և՚ի սէր աստուածպաշտութեան մինչև՚ի
սպառ, այնոցիկ՝ տոյժք տուգանաց գոյից, և չարա-
չար և գառն տանջանօք մահ անարգանաց և ամե-
նայն տեսակք դժնդակ պատուհասից պատրաստեալք
լինէին։

Ընդ այնմիկ ժամանակին այնուհետև Գրիստոսի
անարատ գառնն, կատարելութեացդ շառաւիղն, մեծ
վկայն Գրիստոսի՝ Ս.Կակիոս, ՚ի վինտոբոնեան գաս
ընտրեալ ընդ ձեռամբ Փլաբիոսի հազարապետի, և
յաղագս արիական յառաջադիմութեան նորա պար-
գեալ պատիւս ընկալեալ՚ի թագաւորէն։ Ի սոյն իսկ
ժամանակի եկին եհաս՚ի վինտոբոնեան գաւառն յայն յո-
րում տուրբ վկայն էր վինտոբոնեալ. անմաքուր աւան-
դիցն այնոցիկ՝ առ ամենայն տիեզերս՝ զօրէն ցաւոց ու-
րուք ընթանալով. հանդիպեցաւ՚ի գաւառն յայնմիկ հա-
սանել յորում Գրիստոսի վինտոբոնն էր գաւակարը-
գեալ։

Յայնժամ հրամանն տայր զօրապետն ամենայն զօ-
րականացն որք ընդ ձեռամբ նորա էին՝ անցանել՚ի
հանդիպի, վի վիրաբանչիւր կրօնաց գիտել մարթա-
ցէ։ Ընդ այնուհետև բազումք յաղթահարեալք յեր-
կիւղէ մահու՝ զհետ ամպարշտութեանն գնային, ու-
րանային զՔրիստոսութիւնն, մերացեալք՚ի կենաց լու-
սոյն։ Եւ ոմանք թաղնաբար ունէին՚ի միտս իւրեանց
զուխտ սուրբ հաւատոյն։

Ընդ այնուհետև՚ի մէջ ածեալ արիագոյն նահա-
տակն Գրիստոսի և աստուածաբանողն հանդգոյ եր-
ջանկութեանն. սա հարցեալ լինէր՚ի հազարապետէն
զտեսակ հաւատոյն, եթէ որով պաշտամամբ և բախտի
էցէ հաղորդեալ կամ հաւանեալ։ Իսկ սրբոյ վկայն
ոչ զանգիտեալ և ոչ զարհուրեալ՚ի սպառնալեաց էշ-
խանին, համարձակութեամբ յառաջ մատուցեալ, և
քաղցրագոյն բարբառով ձայն արձակեալ՝ ասէր. Գրիս-
տոնեայ եմ և ծառայ բարձրելոյն Աստուծոյ, արարո-

ղին զերկինս և զերկիր և որ ՚ի նոսա ստեղծեալքն են։ Յայնժամ դատաւորն ցասմամբ սեծաւ և բարկութեամբ լցեալ և խեթիւ նայեցեալ ՚ի նա՝ ասէ. Ուա՜ուի կամ յորմէ զայդպիսի ուսեալ և բարբառեալ այ չարագուշա այր. կամ ո՞վ ևս Գրիստոնեայ ոյն՝ զոր ոչ պատշաճ իշխեցեր ՚ի յիշատակ բերել բերանովդ առաջի իմ. պատասխանի տուր փութով ինձ մի ըստ միոջէ առաջի ամենայն դատարանիս. երդուեալ յառաւածան ամենայն՝ զի ոչ ինչ ծածկեցից ՚ի մանկութենէն դէղեցկազոյն Հաւակիտ այդորիկ, վասն բանիդ այդորիկ։

Պատասխանի եւս տուրքն Ակակիոս և ասէ ցնա. Եթէ ոչ էիր խորին և խաւարային միգով ամբարշտութեան պարտնակեալ, թերևս ցուցանէի քեզ զինն Գրիստոս՝ Աստուած զոլով, Տէր և Թագաւոր, արարիչ երևելեացդ և աներևութից։

Ա.ր այսոսիկ ասէ դատաւորն. Տեսանել զքեզ հանդուգն զեղեցիկ և վայելուչ հասակաւ, և վասն այդորիկ յոյժ խանդաղատիմ ՚ի վերայ քո։ Ա.րդ ՚ի յերկար շաղփաղփութեանցդ հրաժարեաւ՝ տուր և զուգնաքեզ բանիւք ասեմ քեզ. լուր ինձ և մատուցեալ զոհեա աստուածոցն, և լեր երանելի ՚ի վերայ երկրի, և ընկալցիս պարգեւս յինքնակալէն։

Տուրքն Ակակիոս ասէ. Որո՞յ աստուածոցն հրամայեա զոհ մատուցանել։ Հազարապետն ասէ. Ա.յնոցիկ որոց ինքնակալքն զպաշտօն երկրպագութեանն մատուցանեն, և ամենայն հնազանդեալքն նոցա։ Եւ ցուցանէր ձեռամբ իւրով զաստուածսն որ շուրջ կային զինքեամբ, և ասէր. եթէ Սոքա են որ ընտրեն զխաղաղութիւն և զկենդանութիւն աշխարհի. որոց եթէ ոչ զոհեցես և ոչ յանձն առցես զհրաման ինքնակալին՝ ՚ի չարաչար և յանդուլմբռնելի տանջանս մատնեցից զքեզ. և ոչ ոք է այլ աստուած որ կարող իցէ հանել զքեզ ՚ի ձեռաց իմոց։

Պատասխանի եւս տուրբ վիայն և ասէ ցհազարապետն. Կարող է իմ Աստուածն ոչ միայն ՚ի ձեռաց քոց փրկել զիս, այլ և զոր դու աստուածս անուանես՝ տապակել. և զքեզ ՚ի նոցա մտոի յուսոյն ՚ի բաց կորզել, և առ ինքն վերադարձանել զիւսն որոյ քո՝ ՚ի ձեռն Ջնմարիտ գիտութեան իւրոյ։

Դարձեալ ասէ ցնա Հազարապետն. Երդուեալ յաստուածն ամենայն և 'ի բախտ ինքնակալին. զի եթէ ոչ ըստ հաճոյից ինքնակալին տացես պատասխանի, կամ անմահից դիցն զնա երկրպագութեան ոչ մատուցանիցես՝ չարաչար և դառն պատուհաս կալցեն զքեզ։

Սուրբն Ակակիոս ասէ. Ուղղապէս լուր ինձ, ով դատաւոր, քանզի անշունչ դիւաց խլից և կուրաց և կուց մեռելոց ոչ երբէք զոհեցից. քանզի գրեալ է. Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն 'ի ներքոյ երկնից. և դարձեալ, եթէ Երկիր պագցես Տեառն Աստուծոյ քումմ, և զնա միայն պաշտեսցես։

Յայնժամ Հազարապետն ասէ ցնա. Ո՛վ Ակակիէ, յանդուգն ոմն երևիս դու և պաճուճաբան. և ոչ վայել է այդպիսի հասակիդ՝ զամբարհաւածութեան և զնոտիս բարբառելոց զՀետ երթալ. ոչ գիտես եթէ ընդ իշխանի խօսիս. մանաւանդ քոյդ գլխոյդ իշխանութիւն ունողի, այլ մի գոլով 'ի բազմաց որ ընդ իմով ձեռամբ անկեալ են։

Սուրբն ասէ. Ո՛վ դատաւոր, ոչ եմ տգէտ այդմ ամենայնի և անտեղեակ, այլ 'ի Քրիստոս բարեպաշտեալ ուսայ. զի նա ընտրեաց ինձ համարձակութիւն և համբերութիւն, յաղթել քեզ և հօրն քումմ սատանայի. քանզի զօրութիւն ձայնի նորա սասանեցոյց զամուրս բանսարկուին և խորտակեաց զբռնութիւնն մահու։

Յայնժամ Հազարապետն՝ հրամայեաց զկնուորացն առ ժամայն Թողացուցանել զնա 'ի տանջանացն, և խորհէր ողջական բանիւք հաւանեցուցանել զնա, և միանգամայն ընկենուլ զնա 'ի կորստեան խորխորատն։ Եւ մերձ առ ինքն կոչեալ զսուրբ վկայն, խօսէր ողջախոհան և հեշտալի բանիւք՝ և ասէր. Լուր ինձ, հօր քումմ, ով Ակակիէ, քաջ և անպարտելի զինուոր ինքնակալին. զոհեա անմահ աստուածոցն, և արարից զքեզ աթոռակից ինձ. և ինչ և ստացուածս բազումս պարգևեցից քեզ, և եղիցիս առաջին 'ի բարեկամաց ինքնակալին։ Այլ եթէ ոչ լսիցես բանից իմոց, և ոչ լինիցիս հպատակ օրինաց Հռոմէացեացդ և հրամանիդ թագաւորին, կարծրագոյն և դառն կատաղութ առա-

քեզնից զքեզ առ Բիբլիանոս իշխան ԵՀոսպայեցւոց՝ յաՄենիմաստն և ՚ի հանձարեղն, ՚ի հռչակաւորն և ՚ի պատուաբանն, որ և զանշուն արձանն կարող ե՛ս աՃել յուղղութիւն, և ոչ ևս լինի քեզ հնար ձողտալ ՚ի ձեռաց նորա: Ա՛րդ ողորմեա անձին քումմ և մի՛ անկանիր յանդիր յանդաստան առեան դատաստանի նորա: Ա՛ռ այս պատասխանի եւ տուր վկայն և ասէ. Ինձ ոչ ինչ զանազանեալ ե՛ առ ՚ի քէն կամ առ ՚ի Բիբլիանոսէ մեռանելն. քանզի եՀէ դու և եՀէ նա տանջիցէք զիս, նոյն վախճան մահու ինձ սպասեալ առաջի կայ: Քանզի և երկոցունց նոյն կամք են դիտողութեան, տանջելն և սպանանելն զիարհոդոմն բարեպաշտութեան և զիստատելոցն անմահ Աստուծոյ ինդ:

Ա՛րդ երբոր եառես դատաւորն զանպարտելի Հաւատոն վկային Քրիստոսի, տարակուսեալ ՚ի միտս իւր, պատշաճ համարեցաւ առաքել զնա առ իշխանն Բիբլիանոս, գրեալ առ նա Թուղթ որ ունէր օրինակ զայս.

Ի Փլաբիանոսէ դատապետէ գինուորական՝ մեծապատիւ իշխողութեան և ըղձալի սիրոյ ողջոյն.

Ձբարեյաղթ Թագաւորդ մերոց ամենայն իրօք գՀաւատեալսն յաստուածս բարեպաշտութիւն, և ըզՀաճոյս արարողաց նոցա գիտեմք յօժարական ինամոյն, և գքրիստոնէից դժուարահաւան չարաբարոյութիւնն՝ որ ոչ երբեք սակաւ են ողբական բանից Հաւանել և կամ պատրել ՚ի ձեռն պարգեւաց, և կամ պատուոց մեծարանաց խնքնակալին գՀետ երթալ, եՀէ ոչ արհաւիրս տանջանաց առ նոսա ՚ի կիր արկցուք. այլ մեք ոչ ունելով այդոցիկ համարձակութիւն, առ քոյդ զդա արձակեցաք անպարտելի և ահեղ դատաւորդ. գի դա է մի ՚ի գինուորացս յայտնանէ՝ որ ընդ ձեռամբ լոյոլ են. զոր չգիտասիցես հետազօտեալ մեր՝ գատաք զդա Հետեւեալ աղանդոյն գաղիլիացւոց. և բազում ողբանս աղաչանաց և սպառնալից տանջանաց առ՚ի մէնջ ընկալեալ, գի ընտանացն աստուածոյն բարեպաշտութեան, և արհամարհեաց զզօրութիւնն փառաց նոցա, և երբև անօթ բրտի Համարեցան յաչս դորա: Ա՛յլ մեք երևեցաք դմա երբև յակամայս մեռանելոց խօսելով: Ա՛րդ զդա որ անպարիշտ կրօնիցդ Հաւանեալ է, և ոչ ՚ի բաց կացեալ ՚ի մեռանելոյ, առաքեցէք

առ քեզ կապանօք և անարգութեամբ. զի ընդ դատաստանօք Հարուածոց արասցես զդա, և խելամուտ արասցես զդա առ աստուածն բարեպաշտել. և ընծայաբեր լինել զոհիւք և ձօնմամբք: Ա.յլ զոր ինչ պատշաճ վարիանես վասն դորա՝ արասցես, զհետ երթալով հրամանի ինքնակալին. Ողջ լեր:

Ա.րդ առեալ զհրովարտակն գինուորացն և զմեծ վիայն Բրիտոսի զԱ.կակիոս՝ շարաչար կապանօք, յորժամ էր անկեալ հատանիքն յԱ.ղեքսիկ, առ դատաւորն Բիբեանոս: Եւ յանդիման լեալ նշխանին՝ մատուցին և զհրովարտակն Փլաբեանոսի հազարապետի՝ հանդերձ երանեալ տուրբ վիային Ա.կակիոսիւ:

Ա.րդ նոքա ընթերցան զթուղթն առաջի նշխանին և քննեալ վերահասու եղև ամենայն իրացն և դործոցն եղելոց. յայնժամ հրամայեաց ՚ի բանտ արկանել զնա և զդուշութեամբ պահել մինչև ՚ի վաղիւն: Եւ իակոփն հրամայեաց քարոզ կարդալ ՚ի քաղաքին և շուրջ զամենայն բնակիչս նորա, զի ամենեքեան առ հասարակ ՚ի տեսարանն ժողովեսցին:

Եւ ինքն յարուցեալ ընդ այգն ընդ առաւօտն, հրամայեաց բեմն բարձրագոյնս կազմել ՚ի մէջ Թէատրոնին. և ամբոխ բազմութեան ժողովեցան նոքա զամենայն ՚ի մերկել բերեալ լինելին: Եւ նշխանն Բիբեանոս նստաւ ՚ի վերայ բեմին. և հրամայեաց ածել զերանելին Ա.կակիոս և կայուցանել առաջի նորա. և զդատաւճիռն նամակին Փլաբեանոսի հրամայեր միւսանդամ ընթեռնուլ առաջի հրապարակին: Յայնժամ դատաւորն Բիբեանոս խոժոռ դէմօք և ցասմնալի սպառնալեօք հայեցեալ ՚ի տուրբն՝ ասէ ցնա. Դու ես Ա.կակիոս վիայ խաչելոյն Յիսուսի: Եւ տուրբ վիայն ասէ. Ես եմ ծառայ Բրիտոսի Աստուծոյ, որ հաւատացեալքն ՚ի նա յանօթ ոչ լինին: Դատաւորն ասէ. Զոհեա կամ և մեռո ՚ի նոյն յամառութեանդ, և զինչ ոք զանձն իւր ոչ կարաց փրկել ՚ի մահուանէ, այլ և բազմաց ևս պատճառ եղև մահու. այլ թէպէտ և յառաջագոյն ոչ զգացեր և ոչ եկիր յուղղութիւն, զէթ այժմիկ լուր ինձ և ՚ի բաց լեր մատի յուսոյն յայն-

մանէ, և զոհեա աստուածոյն և Հոդսպրեա ՚ի տանջանաց։

Պատասխանի եւս արիապէս նահատակն և ասէ ցբռնաւորն. Յառժամանակէս մինչեւ Թէպէտ և բազում անգամ կամեցայց՝ ոչ կարացից Հոդսպրել. զի քնութիւնս զնոյն պահանջէ հատուցանել զպարտս հարցին, մարդ գոլով. այլ պարտ է ապականացու մարմինս այսուիկ և անցաւոր կենօքս ստանալ զմիանջէ նաւտր և զյաւիտենական և զանապական կեանն, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց. զոր և ես այժմիկ կենդանութեան ապասել ակն ունիմ ժառանգորդ լինել։ Այլ և բազում ես արդեօք ընտրն ունիմ քեզ, եթէ նպաստ լինիս ինձ առ յաղթանակ վերին բրաբեռնին հատուցմանց. արագ ժամանել ինձ ՚ի նաւահանգիստն անուտ խոստմանցն և անապատ բարեացն կենացն յաւիտենից։

Այս այսոսիկ ցասմամբ մեծաւ և անհնարին ոգոտմամբ սպառնալեօք լցեալ անօրէնն Քրիստոս, հրամայեաց տանջանօք հատանել զբանս ՚ի բերանոյ նորա։ Եւ զինուորացն մերկացուցեալ զերանելին տաքանէին քառակուսի պրկմամբ, արհեստաւորեալ տանջանարանօքն, և լարիւք ուժգնակի քարշէին զյօդսդուածս ոտից և ձեռաց նորա, և կարծրագոյն արջառաջղօք հարկանէին զթիկունս և զորովայն նորա։ Եւ մինչդեռ այնպէս հարկանէին զնա, ձայն արձակեալ առ նա գաստաւորն աղաղակեաց և ասէ. Ո՛վ Աւետիս, քաջ զինուոր Քրիստոսի, միայն առ քեզ նիւ Թէ զոհեմ, և ՚ի նմին ժամու ազատեսցիս ՚ի տանջանացդ։

Ցայսոսիկ լուեալ սուրբն, քանզհելով զբանն ծիծաղէր ՚ի վերայ չարաբարուԹեան անօրէնն գաստաւորին և ասէր. Ո՛վ երջանիկ, ով գաստաւոր, յանձն առեալ ուրանալ զմին Աստուած, զկենդանանին և զՀնչմարիտն, որ կարող է յաւերժական կեցուցանել և կորուսանել։ Արդ եԹէ քեզ դիւրին Թուի սուտ աստուածս արծաթոյ և ոսկւոյ, և այլ յայլոց այլակերպ առնել, ոմանք և քինեն աչխատուԹիւն լոյն քեզ ՚ի ներհակացն ինչ Թերութիւն լինել. քանզի ես նոյն Աւետիս զոլով պատիս այժ-

միկ եմ՝ ոչ փոխեմ զբանս իմ, և ոչ հրաժարեմ՝ ի զոյացուցչէն իմմէ և յարարողէն, որ ևման պարտեաց մարդկան՝ կրեաց զայն ամենայն կիրս մարմնով, բայց՝ ի մեղաց. և եկն կամաւորութեամբ՝ ի չարչարանս խաչի և մահու։

Դատաւորն ասէ ցնա. Իբրու թէ ոդեքանաց ինչ բանս և հեշտալիս խօսեաք առ քեզ, ոմ Ակակիէ, և այնու ոչ՝ ի բաց լինելիր՝ ի խոստովանութենէդ քոյոյդ հաւատոյ, այլ՝ ի նոյն կացեր և ճնացեր, քրիստոնէութեան խնամ տանելով։ Եւ առ դահիճսն դարձեալ՝ ասէր ուժգնակի բարբառով. Փութացուցանէք և արագագոյն հատուցանէք՝ ի վերայ դորա զառնը ջանադ, զի մոռնիքեալ՝ ի դառնութենէ հարուածոցն՝ անագան ուրեմն՝ ի բաց կացցէ՝ ի շաղփաղփութեան բանից նորա։

Եւ առըբ վկայէն մարմնէք այնու հետև՝ ի առաքութենէ առանձանացն քանցեաալ և վառնեալ լինէին. այլ՝ ի վերին զօրութենէն զօրացեալ լինէր Հոգւովն և զաւրթանայր ջերմութեամբ սիրոյն Քրիստոսի. և բարբառէր միշտ առ բարեպաշտութիւնն։ Այլ մինչ դեռ ատէպ՝ ի վերայ մարմնոյ վկային զօրանայրն հատածքն առանձանացն, յայնժամ խօսել սկսաւ դատաւորն Ռոբեհանոս իբրև խաղ ինչ առնելով, ասէ. Ո՞չ ես իմացար զառանձանդ, ոմ Ակակիէ. և ոչ ես առեր զչափ զօրութեան անմահից աստուածոցն. և ոչ ես գանգիտեցեր զէթ այժմիկ՝ ի հրամանէ քաջարանց ինքնակալաց։

Պատասխանի ետ սուրբ վկայն և ասէ. Յայդմ առնայնէ ոչ զգացի, և ոչ երբէք զգացայց. բայց զի՛ տեմ զի դու իմացեալ ծանեար զախտալից սկարութիւն քո, և զի ոչ կարացեր շրջել զմիտս իմ՝ ի բաց ընեպաշտութենէ աւանդիցն, ձգել զիս զկնի գարշելի և անպարկիշտ բանից քոց, և մի՛ այլ լինի ոչչափ՝ ի մարմնի առ իս կենդանի գոլոյ։ Եւ մինչդեռ զայս խօսէր երանելի վկայն Քրիստոսի, դահիճքն զմիաձեռն ետուն փութով՝ ի հարկանելն, ծանրագոյն նմա զցաւն հատուցանէին. և նա ազատակէր և ասէր. Այսուհետև յաւիտենական անակնջն, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայեաց յերկինից՝ ի պատրաստ

*բնակութենէն քումմէ և փրկեա զնա յորոգայթէ յոր-
ստոյց. զի դու ես Համբերութիւն իմ և յոյս՝ի ժա-
մանակի նեղութեան: Զօրացո զտկարութիւնս իմ, և
տուր Համբերութիւն անձին իմոյ, զի հաստատուն և
անշարժ կացից՝ի խոստովանութեանդ որ՝ի քեզ. և
արժանի եղէց ժառանգել զխոստացեալ պարգևանն ընդ
ամենայն տուրբս և ընդ սիրելիս անուանդ քումմ սըր-
բոց. և քեզ փառք յաւիտեանս:*

*Ա՛րդ լըսել եառ դատաւորն զանխոտխորեալն և ըզ-
հաստատունն միոս սրբոց վկային որով արհամարհէր
զվնաս չարչարանացն զոր ածէին՝ի վերայ նորա, տա-
րակուսեալ վարանէր յանձն իւր անօրէնն. հրամայէր
անօրէնն դահձացն Թողացուցանել զնա՝ի բանտն:
Ձայնժամ առեալ զինուորացն զսուրբ վկայն Քրիս-
տոսի՝ ըստ հրամանի դատաւորին, տարին զնա յար-
դեանս բանտին. և նա բերկրալի ցնծութեամբ և
անպատում ուրախութեամբ հետևէր զվնասն նոցա: Եւ
մինչդեռ անցանէր սուրբն ընդ փողոցամէջ քաղաքին՝
հանդէրձ կապանօք և գանակից վիրաւորեալ անդա-
մօք, արիաբար ազատակէր մեծաձայն՝ի լուր ամենայն
բազմութեանն և ասէր. Ոյք զվէրս տեսանէք զնահա-
տակացս Քրիստոսի, ՚ի միտ առէք զձերս փոխարինացն
այնոցիկ, եթէ ժլքան և որպիսի բարութիւնք պատ-
րաստեալ ամբարեալ պահի այնոցիկ՝ յանապատելի յա-
խտեանան յանմահ Թագաւորէն՝ վասն նորա չարչա-
րեալցն, զոր ոչ է մտաց հասանելի և բանից չառելի:
Վասն որոյ և չարչարել վասն նորա ետ քան զևս քաղ
ցրատոյն քան զամենայն բարութիւնս երևելի մեծու-
թեանց աշխարհիս:*

*Ա՛րդ առ այսոսիկ քաղցրահնչիւն ձայնս փրկական
բարբառոյ՝ շարժեալ լինէին ամենայն բազմութիւն
քաղաքին յիւրաքանչիւր տեղւոջէ՝ զինչ սրբոյ վկային
մինչև՝ի դրունս բանտին, լսէին՝ի նմանէ զբանն կե-
նաց. և նա ոչ դադարէր անփակ բերանով և անհան-
գիստ բարբառով զսերմանս արդարութեան հաւա-
տոյն տարածանել՝ի լսելիս բազմութեան: Մինչև ա-
ծէին մուծին յարգելանս խաւարչտին բանտին, կա-
պեալ ոտիւք և պարտանդեալ ձեռօք. և փակեալ
զդուրս բանտին ինքեանէն մատանեաւ նշխանէն. և տա-*

ցա կալով ՚ի կապարանի անդ ուրախութեամբ և ցընծութեամբ բազմաւ, գոհութիւն և օրհնութիւն առաքէր։

Յայնժամ և ՚ի բարձանց երկնից եկեալ հասեալ լինէր առ նա զօրացուցիչն Քրիստոս, և անճառելի շնորհագայթիւք իւրովք զնորս խաւարին մեծութեանն լուսաւորէր, և զաստուածային ձայնն առ նա առաքեալ՝ արիանալ անպարտելի վկային հրամայէր, և հաստատուն կալ յերանաւէտ կոչումն, ասելով. Ընդ քեզ եմ, և միշտ կիս, և եղէց անմեկնելի մինչև ՚ի սպառ. արդ մի վհատիր այլ համբերեա քաջութեամբ, զի արժանի լինիս զհնանջնեալսուր հանդիսան ժառանգել յաղթայութեան իմում, զոր ես և Հայր իմ պատրաստեցաք քեզ։ Նոր յոյսիւն բարբառոյս խրախուցեալ հրճուանօք զուարճանայր սուրբ վկայն։ Եւ նոյն ժամայն երևեցին գունդ հրեշտակաց շուրջ զնովաւ եղ զակից լինել նորա գիշերային պաշտամանցն. իսկ երբեմն խրախակից լինելով նմա, և զուարթացեալք քաջ ջաներկին զնա, զօրացուցանելով յառաջիկայ մրցմանն հանդիսի նահատակութեան. և ոմանք ՚ի սրբոց զընթարթոյն ՚ի վերայ գոյն ՚ի վերայ գոյն. սպեղանիս լինն արկանէին ՚ի վերայ քանցեալ մարմնոյն, և զաւուրս բազումս այնպէս անվհատել լինէին ՚ի նմանէ բանակք անմահից, և ողջ անդամ և անարատ զմարմինն նորա կազմէին։

Յայնժամ երբեմն գիտաց անօրէնն իշխանն եթէ դեռևս կենդանի է սուրբ վկայն Քրիստոսի, հրամայեաց զինուորացն աճել զնա յատեան դատարանին։ Եւ երբեմն աճին՝ կացուցին զնա առաջի բեմին յոտն նստեալ իշխանին. և հայեցեալ հիանայր ընդ ապրատոյն բժշկութիւն վերայ մարմնոյ նորա. և հեղծաւորեալ՝ խորամանկութեամբ փոխաբերել հնարաւորէր զմիտս ՚ի բարեպաշտութեան առնդիցն, ասելով. Վասն ատուածդ ամենայն, ուր Աւակիս, զի յոյժ զարմացեալ զարհուրեալ եմ, զմտաւ ածելով թէ զիարդ այդպիսի բարեվայելուչ գեղեցկութեան հասակի և զարհուրանք քաջութիւն... զինուորական կարգի և զխոհեմութիւն իմաստութեան յանձին բերելով, և յայտնապէս կամայտրդոր մտօք

ընտրեա զչարագործսդ մահ մեռանել, և զկնի՛ քաղցր լուսոյ աշխարհիս այսորիկ: Յոյժ դուխեմ զքո հաստատուն և անխոտորելի միտդ և զարիական մըտմտուխդ. այլ այնպէս էր գոլել թէ ընդդէմ թշնամեաց ինքնակալին վարեալ լինէր քո այդպիսի ջան աշխատուխեանդ. այլ ընդ երկաթոյ և ընդ հրոյ և գազանաց և ընդ վիսաց մարտնչելն՝ յոյժ յիմարութեան գործ է, և՛ մեղուխենէ ոչ ազատ: Արդ ոչ տեսանես թէ ուր քան նուաղեալ է զօրութիւն ամենակալութեան քո, և թաւամեալ նոյն իսկ մարմինդ և թուլացեալ է յօդք անդամոցդ, և գունատեալ ես՛ի բարեվայելչութենէ գեղոյ երիտասարդութեանդ: Արդ ողորմիմ յոյժ և խանդաղատիմ՛ի վերայ մանկական տխոցդ, մանաւանդ և սիրեմ իսկ յաղագս քոյդ և պինդ հաստատութեանդ: Եւ եթէ լուիցես ինձ և հաւանեսցիս քաջ նկից խնդ, մեծաց բարութեանց և պարգևաց առնէիր քեզ: Եւ գրեցից առ ինքնակալն, զի բարձրացոյն պատիւ գաւառական իշխանութեան տացէ քեզ, և եղիցես երևելի յաշխարհիս, և մերձաւոր և բարեկամ անմահիցդ առաուածոցն: Եւ այսպիսի խորհրդով գրեցի առ Փրկչին մերոյ Աստուծոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի: Վասն որոյ ասեմ քեզ, ով դաստուր, զի ոչ կարասցես մտաւ և չարխնաց բանիւք քո պատրել և մերժել զիս՛ի սիրոյն Քրիստոսի, և տարագիր առնել յորդեգրութենէն Հօրն երկնաւորի: Եւ արդ զոր ինչ առնելոց ես, արա վաղվաղակի. զի փութամ եղանել՛ի մարմնոյ աստի և մտանել առ Աստուած, առ որ անձկացեալն եմ: և պատրաստ եմ յամենայն տանջարանս քո, ի՛ սուր, ի՛ հուր, ի՛ քարկոծանս, ի՛ գերանս, ի՛ յօշոուիս անդամոց, գազանակուր լինելոյ. և զամենայն մեքենաւոր չգոնաս աշխատուխեանդ՝ զոր ինչ կամիս ածել

'ի վերայ իմ, մի՛ յապաղեր. վասն զի ոչ կ'նազանդիմ ես անօրինաց Թագաւորաց քոց, և զոհս աղտեղութեան մատուցանեմ դիւաձոյլ և ապականագործ պատկերաց աստուածոց նոցա: Եւ պարսպեալ եմ զհոգի իմ առնակարող զօրութեամբ Աստուծոյն իմոյ անմահ Թագաւորին յաւիտենից. և ոչ կարէ բանտարկու չարութեան նախանձն իբրև զաղախին ումն գերի տանել զիս յանդիման:

Այդ իբրև զայս առնայն և որ տոկին նման էր՝ խոսեցաւ առ վիշայն, և առնապինդ իշխանն Բելթեսնոս զկեղծաւորութիւն խորամանկութեանն վառվառակի'ն բաց ընկեցեալ, և չարաբարութեամբ և սրտմրտութեամբ դարձեալ լցեալ լինէր և անողորմութեամբ. և հրամայէր անօրէն դահձացն կապարեայ գնտիւք խորտակել զբերան սրբոյ վիշային Քրիստոսի, և այնչափ առատացուցանել'ի վերայ նորա զհարուածս տանջանացն, մինչև Թափուճն լինել առեն առնայն առատանց նորա և ջարդել մերոց բերանոյ նորա: Եւ հանդգնանայն բողոքեալ առ նա՝ ասէր դատաւորն հանդերձ առնայն առեներական խառնիճաղանճ բազմութեամբ. Ո՛վ եղկելի և արբեալդ յիմարութեամբ խորհրդոց՝ Ակակիէ, մի առ լեզուդ քո չընչեցուցաներ զիսաչելեանն Քրիստոս, և մի զանուն նորա յիշելով զիմս տաղտկացուցաներ զլսելիս: Իսկ սուրբ նահատակն Ակակիոս՝ ընդ այնպիսի տանջանօք լինելով պատճառս պատուհասից իւրոց յաւելոյր, Թշուառական և դիւաց բնակարան զինա կարդալով, և շառնարան առնայն չարեաց բանսարկուին: Ցերաւի ոչ կարեն առնապինդ լսելիք ականջաց քոց ընդունել'ի յինքեան զահաւոր և զսարսափելի անուն Աստուծոյ իմոյ, զայն որ ահաւոր ձայն հրամանի նորա զողացուցանէ զերկինս և զերկիր:

Ա՛ր այսոսիկ դարձեալ ասէ իշխանն առ վիշայն. Ես ողջախոհագոյն կամեցայ քեզ լինել և զերծանել յառաջիկայ տանջանացն, և բանի ևս հաղորդ արարի զքեզ, և որպէս պարտ և պատշաճ էր մարդասիրութեամբ ցուցանելով՝ ողոքեցի զքեզ խանդաղատելով'ի վերայ մանկական գեղոյ քոյ. այլ քանզի դու մնասանդ յաղթել փութաս ինձ, արդ այսուհետև վաղ-

վաղակի ցուցից քեզ զլօրութիւն Քրիստոսին քո. և ծանիցես եթէ ինչ է Բնբհանոս իշխան, և ինչ Ա-ղակիոս. և փորձիւ ցուցանեմ քեզ թէ և ոչ սուղ ինչ կարիցէ օգնել քեզ Քրիստոսն քո յոր ցուսացեալ եաւ է:

Ասացօղ երանելի վկայն լցեալ աստուածային հօ-գւով, ընդ Պաւղոսի գոչէր ասելով. Ոչ գիտեմք զե-րևելոս այլ զաներևոյթսն, զի երևելիքս առ ժամա-նակ մի են, և աներևոյթքն յաւիտենականք. զի թէ-պէտև առժամայն տաճար շինուածոյս մերոյ քակտե-ցի, շինած Աստուծոյ ունիմք տաճար առանց ձեռա-գործի յաւիտենական յերկինս. և եկեսցէ տէրն յերկնից և այց արասցէ և զեկեալ հասեալ տանջանաց որ՝ ի քէն՝ ի վերայ իմ՝ մատի և ունայն ցուցանիցէ, և անվթար և անարատ պահեսցէ զիս՝ ի խոստովանու-թեան որ առ տէրըն անուն նորա:

Չայսոսիկ սրբոյն պատասխանատրելով դատաւորին, անհնարին ցասումն բարկութեան շարժելով, դարձեալ ասէ դատաւորն այնոցիկ որ շուրջն կային զնովա-. Բանդի Ադակիոս բռնամահս այս և չարաբաստի պա-տահեալս, այլ ևս յոլովից քան զառաջինն եկեալ հա-սեալ տանջանաց կամեցոյն թէ եկեսցէ՝ ի վերայ նորա, զի մեծաց վարձուց և փոխարինաց լինի ժառանգորդ, որում և ակն ունի հասանել վաղվաղակի, զոր և փառք անձին երթայ հասանիլ. արդ տարածեցի դարձեալ՝ ի դեմն, և զմարմին նորա ամենայն գործիք տանջա-նաց չարաչեցցեն, և եղիցին շուրջ զդահաւ բազմու-թիւն ժողովրդոց զինուորաց. զի և տանջանքն ու-ժգնակի լինիցին, թերևս առաւելագոյն ընտրիս մեզ խոստովանեացն, յոլովագոյնս այսպիսի բարութեանց պատճառս սա եղեալ:

Չայսոսիկ անօրէնն իշխանն Բնբհանոս հնդկելով ինն առագեաւ, և բազմութիւն դահճացն շուրջ զնո-ւաւ լինելով, և պարզեալ զնա քառակուսի պրկմամբ՝ ի վերայ գետնոյ, և առաւ արկաւածքն զորսայնն և զձիսունան գազանաբար յանխնայ հարկանէին: Իսկ երանելի քաջ նահատակն Քրիստոսի, առ սէր արար-չին իւրոյ Յիսուսի՝ զամենայն տանջանս չարչարանացն առ ոչ ինչ համարէր:

Յայնժամ դատաւորն ինքնիսա ձայն արձակեաւ առ նա՝ ասէր. Զոհեա, ով Ակակիէ, աստուածոյն: Իսկ բարեյաղթ վկայն ոչ ինչ փոյթ առնէր բանից նորա, և ոչ ինչ արժանի համարէր զնա պատասխանւոյ. այլ միայն քաղցր և հեզ ասէր. Ոչ ինչ են արժանի չարչարանք ժամանակիս առ հանդերձեալ փառացն որ յայտնեցին ի:

Ապրէ որմէ բանիւք ոք կամ լեզուաւ զքաջ համարձակութիւն սրբոյ վկային պատմել կարասցէ՝ որ յայնժամ. քանզի տանջեաւ լինէր, և հաճելիքն վասն յուսոյն. խոցոտեալ սրով, և հանդուրժէր. շրջապատեալ մեքենայիւքն, քամահեաւ ծիծաղէր: Ընդ ինամակաց լինելով մատաղ բնութեանն բռնութեան խստագոյն տանջանացն, և անողորմ լկանօք քերանացն յերկիր տարածեաւ լինէր, և հոգւոյն ուղղութեամբ ոչ դիմադուէր. այլ հրճուեաւ լինէր և ցնծացեալ, մանաւանդ Տեառն չարչարանօքն:

Գոչէր մեծաձայն այսպէս և ասէր. Ցաւել ևս, ասէ, ով բռնաւոր, և այլ ևս տանջանարանս. զի ես առ Տէր պատրաստ եմ, և առ սուր, և՛ ի դազանս վայրենիս և ևս պատրաստագոյն. ոչ սիրեմ զկենդանութիւն առաջ եել քան զարարիչն իմ, ոչ յօժարիմ փառաց ապականացուի: Հանդիստ ինձ յօդից քակտումն. բանդք քո պատրաստեալ են ինձ երկար զդրախտ փափկութեան՝ առ որ փութացեալն եմ:

Մի ոմն՛ի նահատակացն որ առաջի կայր իշխանին, երկար ընդհատ առնելով սրբոյն, մատուցեալ յոտնկին նորա՝ ասէ այսպէս. Զինչ ունիս շահել, ով եղկելի, և զինչ եղեալ ես՛ի մոլ. զի յօժամ վատնի մարմինդ բնաւին և՛ ի վերջին հասանիցես շունչ, յայնժամ իմացիս զպատշաճն՝ յորմէ ոչ ինչ օգտեսցիս: Սրտմտեա կայ ևս հնարս ճար քեզ՛ի կենդանութիւն, սր բանիւ խորհրդակցութեան լսոյ, և ամիտթեա և փոխադրեա զիւրս քո՛ի մտոտի յուսոյն յայնմանէ. և հնազանդ լեր հրամանաց ինքնակալին, և զոհեա բարեպար աստուածոց մերոց, և մեծաձիրը պարգևաց արժանի լինիս: Ո՞չ տեսանես զինչխանին առ քեզ զնեռոտութիւն, և զխանդաղատանս ջերմագոյն սիրոյն, եթէ ոչ պակս տրամադիր ազատութեանդ և հաւաչ-

մամբ սրտի յոյսոց հանէ ՚ի վերայ քոյոց թշուառու-
թեանց։

Յայնժամ զնաթէութիւն առեղծաբանութեան նո-
ցա իմացեալ սուրբ վկայն՝ ասէ. ի քաց կայէք լինէն
ամենեքին այք զոլծէք զանօրէնութիւն. զի Տէր է իմ
օգնական և ես ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ։

Ա՛րդ երբեմն լուաւ զայսոսիկ դատաւորն, տա-
րակուսեալ ՚ի միտս իւր՝ թողացուցանել զնա ՚ի տան-
ջանացն հրամայէր, և արկանել զնա միւսանգամ ՚ի
կապարանս բանտին. և անուաղ թողուլ զնա ՚ի զար-
մանոյ մարմնական պիտոյից, և զոտս նորա պնդել ՚ի
կոճէղս, և անուր երկաթի արկանել ՚ի պարանոց նո-
ցա, և անապատ թողուլ զնա յամենայն նախախնա-
մութենէ։ Ա՛յլ ստուգապէս կատարէր առ նա բան
մարգարէութեանն Դաւթայ. Թէ Ոչ տեսի զարդարն
արհամարհեալ, և ոչ զաւակ նորա մուրացիկ հայե-
քանզի տրկիճն Յիսուս՝ վասն որոյ յանձն առեալ կրէր
զջարչարանսն, երևեալ ՚ի բանտի անդ խոսէր ընդ նմա
և փարէր զնովաւ. և քաղցրագոյն խոստմամբ զմիտս
նորա զարթուցանէր՝ ասելով ցնա. Սիրեմ, անպար-
տելի և անյաղթ զինուորդ իմ, զօրացիր և քաջալերեա
՚ի Տոգևոր ասպարիզիդ, զի ես ընդ քեզ եմ զամենայն
աւուրս կենաց քոց. զի որպէս կոյրդ եղեր յանցաւ և
յապականացու յաւխտենից՝ իմոյ շարչարանաց, նոյն-
պէս և Տաղտկացար արարչից յանտեսելեացն որ երե-
ւեցաւ նմա։ Եւ սկսաւ սաղմոսել և օրհնել զանձնաւ
մարդասիրութիւն ամենակալին Աստուծոյ, և զարթ-
զահա օգնականութիւնն և զզօրութիւնն։ Յայնժամ
և բազումք ՚ի նմանէ յերկնային զօրութեանց Տրեշտա-
կաց ՚ի Տանդերձս լուսափայլ սպիտակութեան՝ երգա-
կից լինէին սրբոյ վկային։

Նախ քանատապետն յարուցեալ փութանակի առ պուռս քանտէն հասանէր. և տեսեալ զի առաջին ըզդուշութեամբ կինքեալ կային զբունք քանտէն, և տեսանէր՝ ի նեղքս անտ բազմութիւն զօրաց երկիւղածաց և հանդերձս լուսափայլս, ոյք քաղցրաձայն հնչմամբ երգակից լինէին սրբոյն, և՝ ի զարմացման եղեալ և յերկիւղ ահին ընդունեալ:

Եւ զինի աւուրց եօթանց անցելոց, կոչեալ լինէր նշանն Ռիբեանոս՝ ի քաղաքն Ռուզանդիոն՝ յաղագս նրոյց ինչ պիտոյից. և նորա յուղի անկեալ հրամայէր զինուորսն զայն զինի բերել զՍիակիոս. զայս ինչ ածելոյ զինուորսն, որպէս զի թէ կինքն ոչ կարէին հաւանեցուցանել զնա, առ այլ սին չարաբաստ և անպարկիշտ և անողորմ արձակէին զառաւոտ. զի այսպէս դժուարէին և անբուժելի արասցէ զվախճան պատուհասի նորա: Ս. յառնեալ առ խաղացեալ զնայր զառաւոտն, և Սիակիոս ընդ նմա չեռուեալ զնայր բազում և զառն նեղութեամբ և տառապանօք. քանզի սաստիկ նեղէին զնա վէրքն հարուածոյն և ծանրութիւն կապանացն, և վաստակք աշխատութեանց չգանց չանդադարէին. և զահչոյն տպատնուելոք և կարօտութիւն կերակրոյն և պատքուժն ծարաւոյն, և արհաւիրք առաջիկայ տանջանացն, և ոչ տեսանել զոմանս՝ ի տալոտական սիրելեաց: Ս. յապիսի և այսքան նեղութիւնք փորձութեանց շուրջ եղև զերանելեսն, և նա հրձուանօք և անձառ զոհութեամբ ըղձայեալ զոհանայրն և օրհնէր զՔրիստոս:

Եւ զինի վեցերորդ աւուր վճարելոյ զերկայնութիւն չանապարհին՝ գայր հասանէին՝ ի քաղաքն Ռիւզանդացւոց: Եւ գարձեալ հրամայէր զուռսն տալին կապանօք՝ ի բանտ արկանել. և յետ ոչ բազում ինչ աւուց, հրամայէր յարկանել զվեհատրոնն բազմանդակս՝ ի մէջ քաղաքին, մերձ՝ ի վաճառոց փողոցն: Յորմէ նաեւ զուռսն՝ ի վերոյ բերելով, և հրամայեաց ածել զառաջնումն զոտքն Սիակիոս. և այսպիսի բանիւք ասէ ցնա. Ո՛վ Սիակիս, յայսմ հետէ լինիցիս հպատակ հրամանաց իմոցդ և երկիր պատանիցիս առաւածոյն, եթէ ասէպ կաս և ինաս՝ ի քումէ յանդգնութենէն: Սորին Սիակիոս ասէ.

Աւաւել քան զամենայն մոլեկանս զօք մոլորեալ է՛ի չշմարիտ գիտութենէն. զի զմարդիկ որ զկնի արդար և չշմարիտ օրինացն Աստուծոյ գնան, և նմա զպաշտօն երկրպագութեան մատուցանեն, և հաւատան յայն՝ որ արար զերկինս և զաներևոյթ արարածս, և զօք հնարիք զպաշտօն և զպատիւ այնր անեղ բնութեան՝ դիւաց մատուցանել և կռոց մեռեալոտեաց և մոլորեցուցանողաց. և վասն այսպիսի երից զմեզ՛ի զօր և՛ի նանիր գաւեալ սպանանէք:

Զայս երբեմն լուաւ անօրէնն Ներսիանոս, զի եղև սրտմտութեամբ. և հրամայեաց բերել գաւազան փշալից՛ի նռնենեաց, և նօքօք հարկանել չարաչար զԹիւրնա և զորսեայն սրբոյ վկային. որոյ առեսիլն էր դժուարին և անհանդուրժելի ամենայն առաղացն. քանզի այն պէս սաստիկ չարութեամբ վարեցան առ նա անաստուած դահիճքն անօրինին Ներսիանոսի, իբրև ոչ և մի ինչ խանդարանաց կամ խնայութիւն բերեալ՛ի միտս, և կամ հայեցեալ՛ի հասարակաց բնութեանս տկարութիւնս, այլ իբրև ընդ անշունչ արձանաց մարտին էին, միսէ գրեթէ ամենայն մարմինք նորա քանգեալ պատառ պատառ յերկիր անկանէին:

Խակ սուրբ վկայն կայր և միայր մեծաւ զօրութեամբ՛ի նահատակութեանն, և արիական խորհրդով զանց արարեալ զնոցա դաժանաբարութեամբն, և առ բերանոյն ոչ ինչ բարբառեալ, այլ հանդարտութեամբ հայեցեալ յերկինս, ասէր. Քրիստոս փրկիչ, օգնական լեր ծառայից քոց, և տուր համբերութիւն տկարութեան իմոյ, և յաղթող արա զպաշտօնեայս քանարկուին, և մի՛ տար յոպականութիւն զքո ժառանգութիւնս:

Եւ տան անգամ փոխեցին զմիմեանս դահիճքն զօք հարկանէին զսուրբն: Յայնժամ առ որովայնէն հարկանէին զսուրբն սաստկապէս գաւազանաւ, որ երբեմն տիզաւ խոցոտէին. և նա յոյժ անհնարին յաւազնեալ լինէր, և առ վշտին նեղութեան ցաւոցն մեծաձայն աղաղակէաց. Տէր Աստուած, ասելով, հայեաց յերկինից՛ի պատրաստ բնակութենէդ քումմէ և հաս ինձ յօգնականութիւն. զի զքեզ եմ յոյս և ապաւէն ամենեցուն՝ զօք կարդան առ քեզ: Եւ երբեմն զայս

առաց երանելի վկայն, վաղվաղակի Թուլացան ձեռք դահձացն, և ափշեալք՝ ի հրաշէից՝ ոչ կարէին շարժել։

Ապա յետ այսր ամենայնի բազում քննութեանց և հարցափորձութեանց, դատաւորն՝ ի մէջ առեալ՝ ասէ ցնա. Ջինչ կամիս այսուհետև, այլ Թշուառական և եղկելի, ընդ մեզ լինել՝ Թէ ընդ Քրիստոսին քում։ Ցայս լուեալ սրբոյ վկային և ոչ դուշնաքեայ ինչ պատասխանի տայր դատաւորին առ ժամայն, այլ միայն համարձակապէս զոչէր մեծաւ ձայնիւ՝ ի մէջ հրապարակին և ասէր. Ընդ Քրիստոսին իմում եմ, և էի և եղէց յաւիտեան։

Ապա նորին դիտաց դատաւորն զհամբերութիւնն սրբոյ վկային, և զանպարտելի և զհաստատուն հաւատն որ՝ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, և վաստակեալ պարտեցաւ՝ ի հարցափորձ լինելոյ, մանաւանդ զի տաղտկացաւ սկսաւ ամպարշտին յանդիմբերել տանջանացն զոր ած՝ ի վերայ սրբոյն։ Յայնժամ խորհեցաւ առաքել զնա առ Փիղիմոնոս անթխպատոս, և խորհեցաւ դրել առ նա զամենայն անցս չարչարանաց զոր անցոյց ընդ սուրբ վկայն, և ընդ հարցմունս և ընդ պատասխանիս։ Ապա ընկալեալ անթխպատոսին Փիղիմոնոսի զվերաբերեալսն գիրս Բաբիլանոսի իշխանին, և հրամայեաց վերանելլին՝ ի բանդ արկանել առանց կապանաց, վասն աղաչանաց ամուսնոյ իւրոյ. քանզի քրիստոնեայ էր և պարտեալ ամուսնացեալն հաւատոմն և երկիւղիւ. և բազում անգամ հայցուածս մաղթանաց առնէր առ նա, զի մի չարաչար տանջեսցէ զհաւատացեալսն՝ ի Տէր, այլ արագագոյն և փութապահի հասուսցէ նոցա զվախճան կատարածին. զոր և խոնարհեալ յաղաչանս ամուսնոյ իւրոյ՝ խորհեցաւ առնել այնպէս։ Եւ յետ հինգերորդ աւուրն հանեալ զսուրբ վկայն՝ ի բանտէ անտի և առաջի բեմին կացուցեալ, տայր ընթեռնուլ զնամակ Բիբլիանոսի։ Եւ յընթերցանի, դարմանեալ հայհոյեաց անթխպատոսն զամպարիշտ հոգեմոլնն Բիբլիանոս, զի զայնպիսի այր ընդ ձեռամբ անկեալ անյաղթելի և հաստատուն և անշարժ, ոչ սպան վաղագոյն, այլ այնչափ՝ ի կիր արկ առ նա զչարտարութիւնն։ Յայնժամ անթխպատոսն

ասէ ցերանելլին. Ո՛վ Աւետիս, ես զաւետեայն գործէ տանջանացն զոր առ քեզ վերձեցուցեալ էն, և գՀայրապետութեանն և զպատասխանին՝ խնայեալ ծանեայ՝ ի ձեռն գրոյն Բնիքանոսի. և քան զերկաթ ես կարծրացոյն երևի ինձ անձն քո, և կամօքդ անխոնջել: Բայց այժմ առ՝ ի կատարածիս, զինչ եղեալ ես՝ ի մոլ. գալ առ աստուածոյն բարեպաշտութեան, և զոհել և հնազանդել ինքնակալին Հրամանաց, եթէ չարաչար զրաւումն կենաց ընդունել. քանզի և ոչնար ինչ է այս զոր Հրամայեմն քեզ, այլ յաւուրս քան զառաջ ժամանակս սկսեալ է՝ ի նախնեաց մերոց, զոր անհնար է արձակել զքեզ առանց պատժոյ, զարհամարհողդ Հրամանաց ինքնակալին և զանարգողդ աստուածոց մերոց:

Յայնժամ բարձր բարբառով աղաղակեաց տուրքն և ասէ. Ո՛վ յանդուգն խորամիտեան կատարածին մըրտիչ, և կուռքեան իմանալի աչացդ որ պարտուն կեալ է զքեզ. որ այդպիսի աղջամղջին մթութեան ախտիւժէք լինել առաջնորդ այլոց, և առ կորստեան խորխորատան յուղարկէք զանհնդէսն ձերոց չարաչարս խորհուրդ կամացդ: Արդ ո՞ր՝ ի բարեխորհ մորդ կանէ՝ ի յիմաստոց՝ որ զՀոգի դիտութեան յանձին ունելոյ, ՝ի քաց կարասիք լինել՝ ի չշնարհաւորեանէն Աստուծոյն՝ որոյ գործք ձեռաց են երկինք և երկիր և որ՝ ի նոսա արարածք նկեն, և գործոց ձեռաց մերոց կայեն նուիրել զերկրպագութիւն և զպաշտօն: Արդ գործեա յիս զինչ և կամիցիս այսուհետև, և արա զինչ և խորհիցիս վաղվաղակի. արդ զի յապաղես և ցտրեցուցանես զիմս քո, զոր ոչ ինչ եմ առնելիս ըստ կարծեաց կռոտական բանից քոց:

Արդ երբեմն լուաւ անմիխայեան զՀամարձակութիւն բանից սրբոյ վկային, միանգամայն և զպարտութիւն՝ ի նմանէ, հիանալով զարմանալով. եթէ յետ այնչափ տանջանաց՝ դեռ ևս հաստատուն կաց և ճշդիւ հնչեալ յինքնահաճոյ յամառութեանն: Յայնժամ դառնալով մահու հատանէր՝ ի վերայ սրբոյն, զի՝ ի ձեռն սրոյ առաքի առնելոյ զնորա քաղցրութիւն բերկրանացոյ զվախճան մահու ընկալցի. և այսպէս հրամայէր դրել զդատաւճիռն նորա. ԶԱւետիս, ասէ, անհաւատ

լեալ հրամանաց անյապաղ ինքնակալացն, և անհնազանդ լեալ առ պատիւ և պաշտօն բարերար աստուածոյն մերոյ, մանաւանդ զհետ գնացեալ չար աղանդոյն Նաղովրացւոցն, և հաւատացեալ՝ ի խաչելեալն, Նազովրայի զանձն կոչելով, հրամայեմք ըստ օրինակի Հռովմայեցւոց՝ տուսերաւ հատանել զանխոնարհելին զպարանոց նորա:

Այլ եւբրև ընթերցեալ եղև դատակնիքս այս՝ ի մէջ հրապարակին բազմամբոխ ոամկի քաղաքացւոցն, փութանակի շուրջ եղեալ զնուաւս անօրինութեան դահճացն անթիւապատոսին, և ածին նովքին կապանօք ընդ մէջ քաղաքին՝ ի տեղին որ կոչի Ծառ-ընկուզի: Եւ եւբրև եկն եհաս՝ ի տեղին յայն, աղաչեաց զդահիճսն՝ թոյլ տալ նմա առ սակաւ մի ղի յաղօթս կացցէ. և առեալ համարձակութիւն՝ ի նոցանէ, և համբարձեալ զաչս իւր սկսաւ աղօթել, և ասէր այսպէս. Տէր Աստուած ամենակալ, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ սիրելի որդւոյ քո, ՝ի ձեռն որոյ զգիտութիւն ընկալայ, Աստուած զօրութեանց, Աստուած ամենայն արարածոց, և Աստուած ամենայն ազգաց, կենդանեաց և մեռելոց. զոհանամ զքէն զի հովանեաւ և պաշտպան եղեր ինձ յամենայն ՝ի մըցմունս հանդիպեալ չարչարանացս որ վասն քո. և ծածկեցեր զիս աջովդ քո, և ոչ ետուր յորս ատամանց զանձն ծառային քո՝ այնոցիկ որ խնդրէինն կորուսանել զիս ՝ի խորս դժոխոց. այլ հաստատուն պահեցեր ՝ի վերայ վիմի հաւատոյ անշարժ խոստովանութեան քո, և ուղղեցեր զկնացս իմ ՝ի չանապարհս արդարութեան ՝ի կեանս յաւիտենից: Եւ այժմ աղաչեմ զքեզ Տէր Աստուած, որ տարածեցեր զանարատ և զաշխարհաստեղծ ձեռս քո ՝ի վերայ կենսատուի փայտին՝ վասն կենաց և փրկութեան մերոյ, ընկալ զհոգի իմ խաղաղութեամբ, և անցս անարգել ընդ իշխանութիւնս և պետութիւնս որ յօդս են, ընդ այս ջարութեան. և յիշեա զի մարմինս տկարութեամբ զգացեալ է. և զոր անդիտութեամբ յանցեալ եմ՝ զկամայ և զակամայ յանցանս, և զհատուածն արեան որ վասն անուան քո սրբոյ. յորժամ կայցեմ առաջի ահաւոր բեմի աստուածութեանդ քո, նեբրեա և թողութիւն

ընդհեա և անտես արար։ Ընդհեա, Տէր, և այսոքիկ ոլք կարդան զանուն իմ ՚ի ժամանակի նեղութեանց և փորձութեանց, ՚ի ձեռն աղաչանաց և բարեխօսութեան իմոյ, զամենայն հայցուածս շահասէից ՚ի պէտս հոգւոյ և մարմնոյ՝ կատարեա. զի ՚ի ձեռն ամենեցունց փառաւորեսցի անուն քո սուրբ, այժմ և յաւիտեանս. ամէն։ Եւ ահա ձայն լսեալ լինէր ՚ի գօրացն երկնաւորաց ձայնակից լինելով նորա, ասէին զամէնին։ Եւ իբրև կատարեաց զաղօթսն, յորդորէր զվիճակաւորն կատարել զհրամայեալսն ՚ի բռնաւորէն. և խոնարհեցուցեալ զպարանոցն՝ հատին զամենասուրբ գլուխն նորա, և աւանդեաց զհոգին ՚ի ձեռս Աստուծոյ։

Կատարեցաւ Հզնադղեաց սուրբ վկայն Քրիստոսի Աւակիոս ՚ի հիւպատոսէն Մաքսիմիանոսէ, յանթիպատութենէն Փիլիմանոսի, ՚ի Բիւթանացւոց նահանգին, ՚ի մայրաքաղաքին Բիւզանդիոն՝ որ այժմ կոչի Կոստանդնուպօլիս, յամենեսեան մայիս, յաւուր ութերորդի. և ընկալաւ զպսակն անեղծութեանն ՚ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. որում վայել է փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ զկնի գաղարման հալածանաց եկեղեցւոյն, թագաւորեաց մեծն Կոստանդիանոս, և շինեաց ՚ի նմին քաղաքի վկայարան սրբոյն՝ մեծապայծառ յօրինմամբ, և եդ ՚ի նմա զմասն անյաղթ վկային Քրիստոսի, որ կայ ամբողջ մինչև ցայսօր ժամանակի. և բժշկութիւն բազում կատարէ Տէր ՚ի ձեռն նորին բարեխօսութեան՝ որք հաւատով ՚ի նա ապաւինին. զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ, այժմ և ՚ի հանդերձեալսն. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Աբիբայ և Ամիրանայ և Յովսեփայ։

Ասացեալ է Աստուած՝ ի վերայ սրբոց իւրոց. Ամենայն բարեաւ աստուածահայր մարգարէն և նահապետն Հոգւոյն սրբոյ՝ արքայն Դաւիթ։ Եւ դարձեալ. Պարծեսցին սուրբքն փառօք և ցնծասցեն՝ ի հանգիստս իւրեանց։ Եւ ես զինի հետևեալ նորին բանից, և նուաստ մեօք առ խորս ծովացեալ անբաւ իմաստից նորա՝ նրբաձայն լեզուաւ բարբառ արձակեցից, լինելով զրիչ Հոգւոյն սրբոյ արտագիր դպրի Ճարտարի. և այսպէս աղաղակելով ասեմ, թէ Ասքանչելի է Աստուած՝ ի վերայ սրբոց իւրոց։ Եւ որպիսի՞ է բանս. զի ոչ եթէ Աստուած սքանչելի է սրբովք իւրովք. և յորժամ ոչ էին սուրբք՝ ո՞չ էր սքանչելի։ Ի բաց տար զբանդ յամենատուրեան. այլ յորժամ սքանչելիս գործէին՝ ի ձեռն սրբոց իւրոց, յայնժամ անուն նորա փառաւոր և սքանչելի երևեալ լինի՝ ի մէջ սրբոց իւրոց. որպէս և՝ ի ժամանակս Նաբուզոդոնոսորայ արքայի, յորժամ կամեցաւ հակառակ Աստուծոյ կանգնել զպատկերն ոսկի, յորմէհետ զիւա Աստուած հրով փորձել զերիս մանկունսն, զի զայն զոր ինքն Աստուած պաշտէր՝ տեսանէր արհամարհեալ՝ ի ծառայէին Աստուծոյ. և այնպէս սքանչելի երևեցեր Աստուած՝ ի սուրբս իւր։ Այլ ես որ արուսպ եմ ամենեցուն և ոչէտ՝ ի գարուն ենէ խմաստից, ազաչեմ զերանելին Ամիխոխոնա՝ զի տացէ ինձ զօրութիւն բանի, զԱրիմաղա՝ շնորհել պարզութիւն մտացս, և

զառաքեն Յովսէփ՝ զի օժանդակեսցէ առաքելութեանն իմոյ, գրել և յօրինել զիրառս պատմութեան վկայութեան նոցին։ Եւ զձեզ աղաչեմ զի զարթուցանիցէք զականջս մտաց ձերոց՝ առ՝ի լսել յօժարութեամբ զնահատակութիւնս նոցա, և փառաւորել զԱստուած որ փառաւորէ զիրառսնորս իւր։

Յերեքհարիւրորդի եօթներորդի յամի հալածանաց մերոց՝ զկնի անձառ ծադման բանին Աստուծոյ, եւ հրաման գառնութեան յարքայէն Տաճկոց, և առաւ իշխանութիւն մոգուց և մոգպետաց՝ ի վերայ ամենայն ազգին քրիստոնէից, որպէս զի ամենայն օրինակօք առնջանաց պատժեացին և չարչարեացին հաւատացեալքն, և սպանմամբ և չարչարանօք վճռով մահու ընկալցին։

Յայնմ ժամանակի հօտապետք և դլխաւորք ժողովրդոց քրիստոսական հաւատոյն՝ առաջնորդք եկեղեցեաց, արիաբար հաւանձակութեամբ յայտնապէս ոչ թագուցանէին զանձինս իւրեանց վասն հալածանաց անօրինացն և սպառաւորաց ամբարշտութեան։ Իսկ այնուհետև մանկին զնոսա մոգակոյտ բազմութիւնն՝ի ձեռս դառաւորացն, և չարախօս լինէին զնոցանէ և առնէին. Թէ Ս.Հանդարհեալ լինի հանապազ վարդապետութիւն հաւատոյս մերոյ՝ի նոցանէ։ Եւ ուսուցանեն զմարդիկ զի Աստուած պաշտել, և արեգական ոչ երկիր պագանել, և զՏէր ոչ պատուել և զՔրիստ։ Եւ զանեղծանելիս և զԹոչնոնս առանց խորհրդական զոհից զեղուլ և ուտել։ Եւ ոչ այս միայն, այլ և զմեռեալս թաղել՝ի հող և պղծել զերկիր. և ասել Թէ զամենայն կենդանիս Աստուած արար և ոչ այլ ոք։ Իսկ երբեմն լուան զայս դառաւորքն ամբարշտութեան՝ի մոգուց անտի, բորբոքեցան սրտմտութեամբ մեծաւ։ Եւ՝ի ժամանակին յայնմիկ ընկեցաւ սուրբ եպիսկոպոսն Ա.Ներսիսիա, ծեր յոյժ առաջնոյ երբեմն ուխտին, այլ մարմնական ուժովն պնդութեամբ և հաւատովն ջերմ և պնդակազմ, և նա զեղեցիկ տեսլեամբ. ազգաւ ազնուական և երևելի և մեծատուն յոյժ. արդարատաւ և ողորմած առ աղքատս և տնանկս։ Եւ՝ի ձեռն առատաձայնն Քրիստոսի և երկիւղին որ ընտակեալ էր՝ի նմա, բազումք՝ի հեթանոսաց դառնայէին

առ Այտուած՝ ի ձեռն վարդապետութեան նորա և
Հլմարիտ և ամբիծ քաղաքավարութեան. քանզի էր
բանիւ կատարեալ և հոգւով լցեալ: Եւ միշտ և հա-
նապազ յաստուածայինն խոկայր ևեթ, և յաղօթս
էայր արտաստաւօք զցայգ և զցերեկ: Եւ նախ քան զըմ
բռնելն ամբարիշտ ինուողային զերանելին, ՚ի միում
աւուրցն դէպ եղև եղբօր միոյ մաքրել զգետս նորա.
և քանզի կուստ էր բնութեամբ, խակ ոչ մաքրեցն հաւ
բուրեր զնա և ասէր. Երանի ե զկնոյս այսոքիկ՝ զի վա-
րեն Քրիստոսի վկայութեամբ զՀատուածն ընդունելոց ե:
Խակ նա զիրկս առեալ Հաճբուրեր զնա և ասէր. Եղիր
ի Հլմարիտ մարգարէութիւն քո, որդեակ, և լուիցէ
Այտուած բանից բերանոյ քո, և պարգևեսցէ Այ-
տուած ինձ զմանն բարեացդ այդոցիկ որ ելնն ՚ի բե-
րանոյ քումէ:

Եւ էր նստեալ անդ այլ ումն եպիսկոպոս, եկեալ առ
՚ի տեսանել զերանելին Ամփիանոս: Եւ իբրև լուաւ
զայս՝ ասէ ցերջայրն ցայն, իբրև ընդ ծառը անցուցա-
նելով զբանն, և ասէ. Խակ եթէ գիտիցես զայդ՝ առ
ինձ, ընդ ես գինչ անցք անցանելոց իցեն: Եւ ասէ
ցնա. Ցերեքեան քումդ ընդ Հանատարէն որ տանի յաշ-
խարհն որ կոչի Ադրանա, անդ վախճանելոց ես դու:
Եւ որպէս ասացն այնպէս եղև. երանելի եպիսկոպոսն
Ամփիանոս անդ կատարեցաւ վանն Քրիստոսի վկա-
յութեամբ. խակ միւս այլն երեքեան իւրաքանչիւր
նեցաւ յԱդրանա:

Խակ յորժամ ընթանեցաւ տուրբ եպիսկոպոսն Ամփի-
անոս, և տանէին զնա կապեալ երկաթեղէն կապա-
նօք, և մինչդեռ գայր անցանէր ընդ դրունս տան ի-
րոյ, ոմն ի յայնցանէ որ ընդ նմայն էին, ասէ ցնա
խոնհրդատուր. Ա՛լ երանելի ՚ի վիայս, ահաւասիկ
մերձեալ ե ժամանակ երկից քոյ յանցաւոր կենաց աս-
տի առ Հանդերձեալ աշխարհն. պատուիրեա վանն տան
և ընկից քոյ, զի մի աւար Հարկանիցեն: Եւ նորա տա-
րածեալ զձեռս իւր՝ ի վեր՝ ասէ. Տունս այս ոչ ե տուն
իմ, և ժառանգութիւնս այս ոչ ե ժառանգութիւն
իմ, այլ տուն իմ և ժառանգութիւն իմ Քրիստոս ե,
զի ոչ սիրեցի զոք բայց ՚ի նմանէ:

Եւ յորժամ տարան ՚ի քաղաքն, որ անուանի կոչի

Աղբիւր, և կային առաջի մոգպետին՝ որոյ անուն էր Աղբաքուսիթ, և նա եհարց զնա և ասէ. Ընդհատնեայ եա՞ս։ Պատասխանի ետ ձայնիւ մեծաւ և ասէ. Ա՛յո, Ձիմարիտ քրիստոնեայ եմ; երկիր պագանեմ Աստուծոյ Հօր և Որդւոյ որպէս միածնի, և Հոգւոյն սրբոյ։ Եւ ասէ մոգպետան. Ապա ուրեմն Ձիմարիտ էր առաքեալքն վասն քո զոր լուաքն, զի ուսուցանես ըզմարդիկ հակառակ կալ օրինաց մերոց, և արհամարհել զհրամանս Թագաւորին։ Երանելին Աղիւխիանա ասաց. Զոր ինչ լսար զայդպիսի նրոյգ զամենայն վասն մեր՝ արդարև այդպէս Ձիմարիտ են. զի զմի Աստուած միայն քարոզեմք մարդկան, որպէս զի զղջասցին և դարձցին առ նա՛ի չար Ձանապարհէ նորա յամենայն ժամ, որպէս և գրեալ է յաստուածաշունչ կտակարանս մեր։

Մոգպետն ասէ. Լուայ ես վասն քո Թէ այր իմաստուն ես դու, կեցեալ ամն բազումն, և գիարդ որպէս մանուկ մոլորեալ ոչ երկիր պագանես արեգական և ոչ պատուես զՀուր և զջուր, որպէս պատուեն Թագաւորքն և ամենայն աշխարհ Պարսից և պատուեն զնոսա։

Սուրբ եպիսկոպոսն Աղիւխիանա ասաց. Բազում յինամարդեամբ լցեալ են երկիր Պարսից, զի Թողեալ զարարիչն իւրեանց զԱստուած և երկիր պագանեն արարածոց նորա։ Բանդի դուք նախ մոլորեցայք և մոլորեցուցիք զնոսա՝ չար և անօրէն վարդապետութեամբ ձերով, ՛ի Թիւ արկանել ձեզ աստուածս բազումս, որ են արարածք միոյ արարչի՝ որ և Աստուած ՛ի վերայ ամենայնի։

Մոգպետն ասէ. Անօրէնն կոչես զՁիմարիտ վարդապետութիւնս մեր, որով ՛ի հաստատութիւն կայ և ծնայ այսպիսի Թագաւորութիւն յաղթող լեալ ամենայն Թագաւորութեանց որ ՛ի վերայ երկրի, ոչ չաթծեր և արժանի մահու։

Եպիսկոպոսն ասէ. Ո՞ւր է Ձիմարտութիւն վարդապետութեան ձերոյ, զի ահաւասիկ ուրանայք զՁիմարտութիւն, և զարարածս և զստեղծուածս[1] վարկանիք աստուածս, և նոցա երկիր պագանէք։

Մոգպետն ասէ. Աւրժանայս լուր ինձ և երկիր պագ-

1. Ալ օր. ըստեղծուածս։

արեգական, և կաց և Հոգսպրեաց ՚ի տանջանաց որ կան և պահին քեզ. քանզի խնայեմ ես ՚ի ծերութիւն քո, զի մի լքանիցես արեամբ ՚ի գժոխս:

Սուրբն Ակիփսիմա ասաց. Ինչ զամենամբարիշտ բերան քո, և մի յաւելցես խօսել կամ երկրորդել առ իս զբան անօրինութեան, այլ բռնաւոր. քանզի ես ՚ի մայրական խանձարրոցն ՚ի մանկութենէդ լսեմ զինչ ցայժմ ՚ի հաւատս յայս մնեալ եմ և զարդացեալ. իսկ այժմ ՚ի ժամանակի ծերութեան առաւել պարտ է ինձ քաջութեամբ և բարւոք խոստովանութեամբ հաստատուն կալ և ճշտիլ ՚ի հաւատս, զի պսակեցայց ՚ի Քրիստոսէն Աստուծոյ իմոյ:

Յայնժամ լցեալ սրտմտութեամբ և բարկութեամբ ամբարիշտ մոգպետն, հրամայեաց չարչարել զնա քառակուսի պրկմամբ, և ապտակել զնա չարաչար հարուածովք մինչև արիւնն ոտգանէր զերկիրն: Պատասխանի ետ ամբարիշտն և ասէ ցսուրբն. Ո՞ւր է Աստուած քո զի եկեսցէ փրկեսցէ զքեզ ՚ի ձեռաց իմոց: Իսկ երանելի եպիսկոպոսն Ակիփսիմա ասէ. Գոյ իմ Աստուած յերկինս և յերկրի որ կարող է փրկել զիս ՚ի ձեռաց քոց, այլ ամենապիղծդ և գարշելիդ: Եւ մի դու պարծիր, քանզի նըբրև զծաղիկ թառշամելոց ես, և փառք քո որպէս խոտոյ վայրի անցանելոց է: Եւ մի ամբարհաւաձեալ ամբարտաւանիս՝ որ մեռեալդ ես՚ի կենդանութենէ և հեռացեալդ յԱստուծոյ կենդանոյ, որ ոչ հաւատացեալ երկիր պադանես Հզմարտին Աստուծոյ մերոյ: Քանզի այս ժամանակիս մահս՝ ոչ է յաւիտենական, և ոչ կենդանութիւնս անվախճան. նոյնպէս և կեանքն այն և հաստուցմունք բարեացն որ մեզ պատրաստեալ է Աստուծոյ մերոյ՝ անվախճան են: Իսկ որ ձեզն է պատրաստեալ՝ ոչ ևս ունի վախճան. Հուրն անշէջ փոխանակ շինծուոց հրոյդ՝ զոր դուք պաշտէք, որ միշտ կհոգիդ ձեր և զմարմին:

Յայնժամ սրտմտեալ մոգպետն հրամայեաց զնա ծանր շղթայիւք կապել և ՚ի խաւարչտին բանտի հանել դերձ կապանօք արկանել: Իսկ ՚ի վաղիւն կալեալ զսուրբ քահանայն Յուլիտի ՚ի գերէզն որ կոչի Բիլիքա Թուբա, որ Թարգմանի Գեօղ գայլոց. և նա էր ծեր յոյժ աւուրց հօթանասնից, պատուեալ յամենեցունց.

և ունէր նախանձ մեծ առ Աթոռած և ջան. և անպարտաելի քաղաքավարութեամբ կայր՝ ի սպասաւորութիւն քահանայութեան իւրոյ: Եւ յաւուր յայնմիկ ըմբռնեցաւ դարձեալ Աւիթալա սարկաւագ, ՚ի գեղջէ որ կոչի Բիթնէբրի [1]. որ էր այր ծերունի առատ իբրև վաթսնից, և էր լցեալ երկիւղիւն Աստուծոյ: Եւ յամենայն անձնէ և զօրութենէ սիրէր զԱստուած ջերմաջերմ հաւատովք. և երեսօք և դիմօք պայծառ և զուարթ, և յանդիմանող բանիւք: Որոյ համարձակութեամբ առաջի կացեալ մոգպետին՝ ՚ի քաղաքին որ կոչի Աբբիլ, և ասէ ցնա. Ո՛վ անօրէնք և չարասահք. ընդէր զմարդիկ պատրէք սատանայական աղանդաւորութեամբ և անօրէն և մեռեալ վարդապետութեամբ, և առնէք որդի գեհենին կրկին ևս քան զձեզ:

Մոգպետն ասէ. Եւ ո՞ր վարդապետութիւն մեծ լոյէ և սքանչելի, ոյլ անմիտք. մե՞րս՝ զոր ազբայիկ ազբայ ամենայն երկրի՝ հանդերձ մեծամեծ իշխանօք և զօրօք պաշտէ, եթէ ձե՞րդ՝ որ նուաղունքդ էք և յաղթեալքդ ՚ի մէնջ և ընդ լծոյ հարկի մերոյ անկեալ էք: Պատասխանեն ևս երանելին Յովսէփ և ասէ ցնա. Աստուածն մեր ոչ հաձի ընդ հպարտութիւն, այլ հաւատակ է ամբարտաւանից և սիրէ զխոնարհութիւն: Վասն այնորիկ և մեք արհամարհեմք զմեծութիւն աշխարհի և զփառս, և սիրեմք զաղքատութիւն, զի անանց փառացն արժանի եղիցուք և կենացն յաւիտենից:

Մոգպետն ասէ. Վասն զի ոչ սիրէք [2] գործել և վաստակօք կերակրել՝ վասն հեղգութեան ձերոյ. այլ ջղջել տանէ ՚ի տուն և մուրանալ զհացն և աղքատութեամբ պարծիլ:

Երանելին Յովսէփ ասէ. Եւ վասն զի նախատեցեր զմեզ՝ կոչելով հեղգս և ծոյլս և վատս, ոյլ թշուառական. եթէ կամեցեալ էաք վաստակոց և ձեռագործացս զհետ երթալ, մեծք և փառքաւքն լինէաք քան զձեզ՝ որ ՚ի յափշտակութենէ և ՚ի զրկանաց աղքատացեալ էք մեծացեալ: Մեք զոր ինչ ժողովեալ էաք՝ Քրիս-

1. Ան յԼօր. Բնէրէբի:
2. Մի օր. գիտէք:

տոսի նուիրեցաք, աղքատաց բաշխելով զամենայնին. ևսկ դուք վասն աղքատութեան կողոպտէք զաղքատս և զտանկս: Մոպսեստն ասէ. Բազմաց ըղձալի և սիրելի է հարստութիւն, և ոչ ոք է որ ատէ զինս, այլ սիրեցեալ լինի յամենեցունց. և ոչ պէտ արդեօք հաւատայ ոք ձեզ և ատէ զինս:

Յովհէփ ասէ ցնս. Խնայեալ ծանեաք Աշմարտութեանդ, զի ոչ կայ և ինայ առ ոմեք հարստութիւն և մեծութիւն երկրաւորացս. այլ իբրև առաւել անցանէ, և իբրև զանիւ հոլովի. և ոչ ինայ և ոչ առ քեզդ՝ որ սիրես զինս: Նոյնպէս և իշխանութիւն և թագաւորութիւն փախչի՝ ի նոցանէ, և ինքանէն՝ ի ժժոխս և ի տանջանս՝ ի հոդ. վասն այսորիկ և մեք ոչ ցանկամք փառացս որ անցանէ, այլ յաւիտենականին որ կայ և պահի յաւիտեան, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց:

Մոպսեստն ասէ. Թոյլ տուր այժմ ամենայնի՝ զի աւելորդ է և շաղխապխանք և առասպելք անմիտ մարդկան, և զոր Հարցանեմն ասա ինձ, Թէ առնես զկամս իմ և զՀրամանս արքայի, և երկիր պագանես արեգական և մեծի և ապրեցուցանես զանձն քո՝ ի դառնապոյն տանջանացն՝ զոր պատրաստեալն եմք մատնել զքեզ, և ածել՝ ի վերայ ևս չարաչար և դառն տանջանք: Պատասխանի ետ տուրքն Յովհէփ և ասէ. Մի մոլորիր այսու, ով ամենամպարիշտ, և մի ակն ունիր Թէ ես արեգական երկիր պագանեմ: վասն զի ոչ է աստուած՝ այլ արարած Աստուծոյ:

Յայնժամ սրտմտութեամբ մեծաւ լցեալ իշխանն՝ Հրամայեաց պրկել զինս լարիւք՝ ի գետն, և երկոտասան արանց չարչարել զինս արկաւածքօք և դժնիկ փշալից գաւազանօք. և այսպէս հարկանէին զինս չարաչար տանջանօք, մինչև փոքր մի յաւանդել նորա պՀոգին: Իսկ արիաբար Համբերէր տանջանացն քրիստոնէական վիպոյն Գրիգորեան, և ոչ ինչ բարբառէր՝ ի տանջանն, այլ միայն յերկինս Հայեցեալ և կարդայր զԱստուած՝ ի սրտի իւրում կոչելով յօգնականութիւն ինքեան, զի տացէ զօրութիւն նմա Համբերել տանջանացն: Յայնժամ՝ ի բազում և՝ ի չարաչար տանջանացն և յատենէն ներկեալ լինէին ամենայն անդ

դանք մարմնոյն։ Յայնժամ ձայնիւ մեծաւ սկսաւ տալբն յաղօթս կալ, և ասէ այսպէս. Գոհանամ զքէն Տէրեառս յոյս իմ և ապաւէն, որդի Աստուծոյ կենդանւոյ. զի արժանի արարեր զիս երկրորդ ծնեան թեանս, զի լուացայց վկայութեամբ և արեամբ մաքրեալ յամենայն անօրէնութեանց իմոց, զի եղէց տաճար և բնակարան սրբոյ Երրորդութեանդ։

Եւ զայս իբրև լուան՝ կարի յոյժ՝ ի բարկութիւն ցասման շարժեցան անօրէնքն. և հրամայեաց դահճապետն կրկին և սանձանօք զքերանս երկաթոյն մինչև ի ներքին անդամանն հասուցանեն, մինչև ոչ ևս ինայ առաջ տեղի ի մարմնին սրբոյ վկային։ Եւ երկաթէ կապանօք կապեցին զնա, և ամուր երկաթէ արկին ի պարանոց նորա. և տարեալ արկին զնա ի բանտ, յորում տեղւոջ արգելեալ կայր տուրբ եպիսկոպոսն և վկայն Աւիտիսիմաս։

Աստ անօրէնն մոգպետն ցերանելն վկայն Աւիթալաս. Եւ դու զինչ խորհիս, ում Աւիթալիս, առնել զկատն ազքայի և երկիր պագանել արեգական և Քահանել յարենէ զոհիցն, և ամուամանաւ ըստ օրինացն մերոց, և ապրել մեծապատ[1], և վայելել ընդ մեզ կենդանօք, եթէ կրկին ևս չարաչար մեռանել տանջանօք զչարաչարծաց մահ[2]։

Պատասխանի ետ Աւիթալաս ձայնիւ մեծաւ և ասէ ցբռնաւորն. Ո՛վ անասուրբ և պիղծ շուն դու, դու երկիր պագ անշունչ աստուածոյն քո արեգական, և դու Քահանեա յաղտեղի արենէ զոհից նորա, որ այդպէս կուրացեալ ես անմտութեամբ. զի ոչ կարացեր հայել և ուսանել զպայծառութիւն և զմշանջենաւոր լուսոյն Քրիստոսի, որ ծագեաց ամենայն տիեզերաց, և զքարոզութիւնն սուրբ աւետարանին՝ որ լսելի եղև մինչև ի ծագս երկրի. զի ինձ լաւ է մեռանել ի ձեռաց քոց, զի ապրեցայց յաւիտենից մահուանէն և յանշէջ հրոյ գեհենեայն, քան սպաս տանել շինանուտ հրոյ և մնայրոյ աստուածոց քոց։

1. Ար. օր. կամ ինձ ապրուստ։
2. Ար. օր. ունի կրկին եւս ընդարմիլ պանջանօք ի մեռանել։

Իակ իբրև լսեր զայս անօրէն բռնաւորն՝ ի սաստիկ զայրացմանէն փոխեալ լինէր գոյն երեսաց նորա, և ասէ. Ո՛հ անմիտ և շուայտեալ դառնածեր. ահաւասիկ զպէտս քո վաղվաղակի բառնալ հրամայեմ ի քէն և զրկեալ լինիս ի քաղցր լուսոյ աշխարհէն, ըստ անմիտ տուեալ բարբառոյդ զոր խօսեար։

Սուրբն Սիլիաստ ասէ ցնա. Ձքեզ կոչեմ յանուանէ Քրիստոսի։ Բանզի Փրկիչն մեր Աստուած այսպէս գրեալ է մեզ, սիրել զկեանս՝ զոր դուք մահ կոչէք, և ատել զմահ՝ զոր դուք կեանս անուանէք. զի առժամանակեայ մահս այս՝ զյաւիտենական կենացն մատակարարել մեզ գիրկուԹիւն։ Ձի որք մեռանին վասն բարեպաշտուԹեան, գիշանջենաւոր և զանապց զբրաբեանն ընդ սուրբս ընդունելոց են։

Յայնժամ դաժանամիտ[1] և անօրէն մոգպետն հրամայեաց անօրէն դահձացն կապել զձեռս նորա ի ներքոյ ծնգաց նորա, և վեցից արանց զօրաւորաց կախել փայտ ստուար ի ներքոյ ձեռացն՝ որ կապեալ էր ի ներքոյ ծնգացն, և ի միս կողմանէ այլ ևս վեց արանց ապտակել զանձն նորա փշալից գաւազանօք։ Եւ չարաչար և անագորոյն էին հարուածքն այն տանջանաց և առանց գԹուԹեան և խնայելոյ։

Իակ Հիմարիտ վկայն Քրիստոսի Սիլիաստ՝ ի ձայն բարձր աղաղակէր և անարգէր զմոգպետն, և ասէր այսպէս. Պիղծ և անօրէն կատաղի շուն և վայրենամիտ գազան անասուրբ, որ ուտես զմարմինս անմեղաց. ոչ երկնչիմ ես ի տանջանաց քոց, և զաստուածդ քո ես ոչ պաշտեմ. և կրակէն և մոխրոյ երկիր ոչ պագանեմ, այլ վայրենամիտ և անաստուած և երկից Թշուառականս։

Իակ անօրէն բռնաւորն զայրացեալ կրճտէր զատամունս ի վերայ նորա, և բարկանայր դահձացն և ասէր. Վասն էր անխայեալով տանջէք զԹշնամանողդ աստուածոցն մերոց։

Իակ երկից երանելի վկային ի տաստկուԹենէ չարչար կապանացն մանրեցան բազուկք ձեռաց նորա,

1. Այլ օր. դժնէպիտ։

և ջարդեցան ամենայն յօդուածք ոսկերացն, և բաժանեցան ՚ի միմեանց անդամք մարմնոյն. և ապա տալ բեալ ընկեցին զնա ՚ի բանան ուր էին ընկերքն նորա:

Եւ զկնի հինգ աւուր հանին զնոսա ՚ի բանտէ անտի: Եւ հրամայեաց մուծանել զնոսա ՚ի բուրաստանն՝ յոր մերձ էր տաճար հրոյն՝ յորում երկիր պագանէին: Եւ անդ նստեալ յատեան գառաստանի անօրէնն մոպեան հարցափորձել զնոսա, և ասէ. Ասացէք ինձ, ով անմիտք, եթէ դեռ ևս պնդեալ կայք ՚ի նմին յամառութեան, ոչ հնազանդելով հրամանաց թագաւորին, և ՚ի նոյն չար ազանդն յիմարեալ միայք, եթէ յայսմհետէ զգաստացեալք առնէք զկաման նորա: Նոքա տուէքն էբրև ընդ մի բերան պատասխանի ետուն և ասեն. Մեք միով խորհրդով և միով մտօք կացեալ եմք հաստատուն և անշարժք ՚ի հաւատս յայս, և ոչն պէս կամք և միտք ՚ի հաւատս յայս մինչև ՚ի վախճան. և Աչմարտին Աստուծոյ երկիր պագանեմք, արարչին երկնի և արեգական և որ ինչ յերկրի արարածք են: Նոքա հրամանաց ամբարիշտ և անաստուած թագաւորացն՝ ոչ հնազանդիմք և ոչ լսեմք քեզ. արդ զոր կամիս՝ արա վաղվաղակի, և առնոյն մեքենաւոր նեղութեամբք զոր խորհեալ ես՝ տանջեա զմեզ. և մեք պատրաստ եմք յաղթել քեզ և խորհրդակցին քումմ բանսարկուին:

Յայնժամ ևս առաւել զայրացեալ ՚ի վերայ սրբոցն անօրէնն, հրամայեաց բերել տուընս յայծէից բառակս մանեալս, և պատել նոքօք զթիկունս և զկողս սրբոցն, և փայտիւք պնդել չարաչար այնչափ՝ մինչև ձարձառէին ոսկերքն նոցա և փշրէին: Եւ ասէր ցնոսա. Ամենաթշուառք և չարաբախտք, արարէք զկաման թագաւորին, և ապրեցուցէք զանձինս ձեր ՚ի չար և ՚ի դառն տանջանացն: Նոքա տուրք վկայքն պատասխանի ետուն ձայնիւ մեծաւ և ասեն. Մեք զկաման Աստուծոյ և զՓրկիչն անձանց մերոց արատաւք, նոքա զկաման անօրէնն թագաւորին ոչ արատաւք: Եւ յերրորդ ժամ աւուրն մինչև ցկնին ժամն տանջեալք լինէին սուրբքն նոքին տանջանօքն հարց և փորձ լինէր ՚ի բանտաւորէն: Ա՛յլ ոսկայն համբերէին այնչափ տանջանացն, և աբանէր երևէին սուրբքն ՚ի մէջ ան-

հաւատից. և Աստուած փառաւորեալ լինէր ի նա-
սա: Իսկ անօրէնն դահճացն բարձեալ զնոսա իբրև ըզ
մեռեալ՝ և միւսանգամ տարան ի բանտն, և ոչ թոյլ
տային ումեք մտանել ի բանտն առ նոսա և կերա-
կրել մարմնական կերակրօք նոցա: Զայն հրաման ըն-
կալեալ ի մոգպետէն բանտապահացն՝ զի սպառնա-
ցեալ սակը. Թէ ոք մտցէ առ նոսա, այս պատուհաս
սահմանեալ լինի ի վերայ նոցա. զի բոլոք գալարօք
ընդ երկարս տանջեցին հարուածովք, և հաւատալ
լոյին ոչնկունք և ականջքն: Այլ արիապոյն վիպքն
Քրիստոսի յօժարութեամբ ներէին ազգի ազգի տան-
ջանացն. մերկք և քաղցեալք և ծարաւիք զերիս աւո
ի բանտին արգելեալք: Իսկ առ աստուածպաշտու-
սովոյն, որ ընդ նոսա կալանաւորք էին ի բանտին՝ եկա-
նէին և մուրանային զհացիկն և տանէին նոցա և կե-
րակրէին գուշնաքեայ կերակրօք, սուղ ինչ պիտոյիւք:
Ապրեալ բանտապահացն տեսեալք զանհնարին նե-
ղութիւնսն և զոտնուրմեկի կեանսն՝ լային և աշխարէին զնո-
սա իբրև զընտանիս:

Իսկ զկնի երից ամաց չարչարանաց սրբոց վիպիցն,
էկն արքայն ի կոչեցեալ գաւառն ի Դաբէրամադան,
և արձակեալ զնոսա ի կապանացն. և ահա ի բազում
նեղութենէ կապանացն էին նոքա նման մեռելոց որ
ի գերեզմանին են, մինչև անգութ հեթանոսացն
լալ և աշխարել զնոսա: Եւ տարեալ զնոսա ի պալատն,
և կացուցեալ զնոսա առաջի մոգպետին ամենայն
Արեաց աշխարհին, որում անուն կոչէր Դերսաբուր:
Եւ նստան ամենայն մեծամեծք մերձ առ նա առա-
նոյն Պարսից աշխարհին և այլ մոգք բազումք: Եւ մը-
տեալ սրբոցն առաջի նոցա՝ երկիր պագին նմա: Եւ ասէ
ցնոսա. Ասացէք ինձ եթէ որո՞յ պաշտաման հնազան-
դեալ էք դուք, և կամ թէ որպէս լուայ՝ քրիստո-
նեայք էք դուք: Պատասխանի ետուն արիապոյն վը-
կայքն և ասեն. Այո, քրիստոնեայք եմք, և միայնոյ
Աստուծոյ պաշտօն մատուցանեմք և երկիր պագանեմք:

Մոգպետն ասէ դարձեալ ցնոսա. Որպէս տեսանեմ
զձեզ ահա ալք ծերք էք, և բազում ձգանց տանջա-
նաց զիրարձ առեալ անձինք ձեր. վասն այսորիկ խրատ
տամ ձեզ, և իբրև զբարեկամ ձեր՝ լուարուք ինձ,

յայսմհետեւ լինայեցէք յանձինս ձեր և մի տարապարտուց մեռանիք: Հնազանդեցարուք օրինաց Թագաւորին, և երկիր պապէք արեգական և ապրեսջիք: Գանգի վճիռ մահու սահմանեալ է՝ի վերայ ամենեցուն՝ որք գնան՝ի Հանապարհս քրիստոնէից:

Պատասխանի ետու երանելին Սիմէոնիոս և ասէ ցնա. Գիտեմ զի բազում փոյթ յօժարութեան ունիս դու վասն ջախջախեալ իշխանութեանդ քո վերադրնդիր լինել աստուծոյն քո զոր պաշտես. արդ մի յաւելր և մի յապաղեր յանօրէն խորհրդոյդ՝ զոր խրոխտանաս դու՝ի վերայ մեր. զոր ինչ առնելոց ես արա վաղվաղակի. զի ոչ զարհուրիմք՝ի սպառնալեաց քոց, և ոչ երկնչիմք՝ի տանջանաց քոց. զի հաստատուն է յոյս մեր առ Քրիստոս Աստուծոյն մերոյ, և զհրամանս անօրէնն Թագաւորի ոչ առնումք յանձն:

Ասէ ցնոսա ամբարիշտն. Գիտեմ զի զմահ լռտրիք դուք քրիստոնեայքդ, զոր և հանդիստ կոչէք. այլ զոր ցանկայք ոչ արարից վաղվաղակի, մինչև դարձեալ դառն տանջանօք կատամահ արարից զձեզ. և ապա զգլուխս ձեր հատից սրով. զի աներեայն աղանդաւոր քրիստոնեայքդ տեսեալ զարհուրեսցին, և մի կացցեն հակառակ օրինաց մերոց: Ասէ ցնա երանելին եպիսկոպոսն Սիմէոնիոս. Ոչ՝ի տանջանաց քոց երկնչիմք և ոչ՝ի սրոյ քումմէ, և՝ի վճիռ տալոյ վասն մահու՝ ոչ զարհուրիմք: Վասն այսորիկ որ զօրացոյցն զմեզ Քրիստոս, զոր և մեք ունիմք խորհուրդ քո. և յանդիմանեսցի մոլորութիւն քո՝ի հշմարիտ հաւատոյ մերոյ:

Յայնժամ ամբարիշտ և անօրէն իշխանն լի եղև սրտմտութեամբ և ցասմամբ մեծաւ, և հրամայեաց բերել Քաւտես սուտ և արհաւիրալից չորացեալս, և ասէ ցնա. Երդուեալ եմ՝ի մեծ աստուածն արեգական և՝ի բախտ և՝ի Քաւտապէր մեծ արքային ար-

քայլին Եապհոյ, զի թէ ոչ առնէք զկամն Թագաւորին, ապականեմ տանջանօք զմարմինս ձեր, և Թաւեղիոյ արեամբ զալիս ձեր, և ոչ ամենևին խնայեցից ՚ի ձեզ, մինչև ՚ի ձեռն չարաչար տանջանացն արձակիցէք զՀոգիս ձեր: Պատասխանի եառ երանելին Ակիփսիմաս՝ և ասէ ցնա. Վասն որոյ երդուար յաստուածդ, որոմեցայ, զի ոչ ես աստուածդ. և ՚ի Թշուառական բախտ բռնաւորին, երկնչիմ Թէ ոչ կատարես զերդումնդ քո և լինիցիս օրինազանց և ստուգ: Ա.Հաւասիկ առացաք եԹէ մեք ՚ի չշմարիտ հաւատս յոր կացեալ եմք՝ ոչ ուրանամք, այլ մատնեմք զմարմինս մեր ՚ի ձեռս քո տանջանացդ. իսկ զՀոգիս մեր ՚ի ձեռս Աստուծոյ աւանդեմք՝ որ եառ զսա: Զոր առնելոց ես մ՚ի յատկեր, այլ կատարեա վաղվաղակի զի մեք պատրաստ եմք:

Յայնժամ աղաղակեաց ամբարիշտ բռնաւորն, և հրամայեաց զահՀասոյն քառակուսի պարզել ՚ի գետնի զերանելին. և հրամայեաց արանց զօրաւորաց տանջել զորոյն նորա և զԹիկունս, մինչև արիւնախառն մարմինն պատառ պատառ յերկիր անկանէր:

Իսկ ամբոխ մարդկանն աղաղակէին և ասէին, Թէ Ա.րա զկամն Թագաւորին և ապրեցո զանձն քո ՚ի տանջանացդ: Իսկ տուրքն ձայն արձակեալ մինչդեռ էր ՚ի տանջանսն և ասէր ցբազմութիւնան. Ես զկամն Ա.ստուծոյ արարի ՚ի մանկութենէ իմմէ և արարից, այլ ոչ զկամն բռնաւորաց: Եւ ՚ի տառակուսիեն տանջանացն զկնի զկծեալ՝ ոչ կարէր խօսել, այլ աչօքն նկատէր և ՚ի սրտի իւրում աղաչէր զԱստուած՝ խոստովանէր զՀշմարիտ զՀաւատն: Եւ մինչդեռ ՚ի տանջանսն էր՝ աւանդեաց զՀոգին:

Եւ յետ վախճանելոյ նորա փոխեցան հարկատուք դահիճքն, և տակաւին տանջէին զմեռեալ մարմինն. և ՚ի բազում ժամս տանջեալ զնա մինչև փշրեցան ամենայն ոսկերք նորա, և ընկեցին զնա ՚ի բարձանց ՚ի խոնարհ և քակտեցան պարանոցք նորա, և քարշեալ ընկենուն զնա ՚ի փողոցամէջ քաղաքին. և պահապանքն շուրջ նստեալ պահէին:

Եւ զկնի երից աւուրց գողացան զաստուածական նշխարս նորա գաղտաբար, հրամանաւ Թագաւորա-

զինն դասեր Թագաւորին՝ որ էր յազգէն Հայոց, տալ Գրիգորեայ զառհասաւէտ խաղաղութիւն աշխարհի։

Վկայեաց երանելին Ագիփսիմաս եպիսկոպոս՝ի տանն եղբորդւոյ ամենայնի հոգեմբեբի, ՚ի Թագաւորեալ Թեանն Պարսից Շապհոյ. և ՚ի մեզ Թագաւորելոյ Տեառն մերոյ Յիսուսի Գրիգորեայ, ընդ որում Հօր և սուրբ Հոգւոյն վայել փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սիւրբի Զօրավարի, և զօրից նորա՝ երկոց հազար և ոչք հարիւրիցն։

Զաստուածային զանձառելն և զանխմանալն խորհուրդն, զանհասանելն և զանպարագրելն զաքանչելիսն, զանյաւ և զանպատմելն բարերարութիւնն, զանբաւ նորա մարդասիրութեանն զողորմութիւնն, զաքանչելն և զառաւաձիրն պարգեւանն, ո՛ բաւական լինի պատմել կամ իմանալ. զոր մտաց մերոց անտեսանելի է և մակաբ ծութեանց անխմանալի. որ ոչ լեզուաւ պատմի, և ոչ հանձարով մարդկան իմանի, ոչ բերանով ձառի, և ոչ տեսութեամբ աչաց բացայայտի. մեծահրաշ և աքանչելի բարիսն պատրաստեաւն ՅԱստուծոյ սիրելեաց իւրոց. որոց ընկալեալք զպատուէր արարչական հրամանին. Եթէ ոք թողուցու զհայր կամ զմայր, զբեօղս և զագարակս, նոցա է ժառանգութիւն երկնից արքայութեանն. և խոստումն անձառելի բարեացն՝ զոր աչն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և՛ի սիրտ մարդոյ ոչ անկաւ։ Զայս պատուէր, և առաւել քան զայն ընկալեալ երանելի սուրբ վկայքն. զի ոչ միայն զտունս և զբեօղս և զագարակս թողին, այլ և զաշխարհ ամենայն, ամենայն վայելչութեամբ իւրով. և ոչ միայն զհայր կամ զմայր և զազգ, այլ և զանձինս իւրեանց եւս տանջանաց և մահու, զկեանս իւրեանց փոխանակ երկնային կենացն, և զարիւնս իւրեանց հեղին փոխանակ արեան Քրիստոսի, և զիւրաքանչիւր բարձեալ ընթացան զհետ կոչման կենարարին։ Եւ այսպիսիս ոչ տակաւ և ոչ մի կողմն մատնաւոր երկրի, այլ բազում անգամ

’ի բազում տեղիս անբաւ բազմութիւնք՝ որք սիրովք Աստուծոյ վառեալք ընդ Աստուծոյ միացան։

Սակայն այժմ ոչ վասն բազմաց է պատմութիւնս, այլ յաղագս երիցս երանեալ մեծի և հռչակաւոր վկայի սրբոյն Աֆրկէի զօրավարի և զօրաց իւրոց աստուածազանից ընտրելոց մարտիրոսաց, որ ’ի ժամանակս անօրէնն և ամպարիշտ Թագաւորացն Ադրիկէ. անոնի և Մաքսիմիանոսի, զարթուցեալ բռնութիւն սատանայական խորհրդոյն ’ի վերայ երկրի՝ ’ի ձեռն անաստուած հրամանաց չարագործեաց Թագաւորացն, չանային ջնջուցանել զՔաւազապետս աստուածային պատուիրանացն, և զամենեսեան յորդորէին ’ի պաշտօն մնատի և խաւարային պաշտամունս կռոցն։ Ի նոյն ժամանակի էր սուրբ և երանեալ նահատակն Աֆրկէ, հաւատացեալ Յաստուած կենդանի, և աստուածային յուսոյն վառեալ, պահէր զանձն իւր քրիստոնէական հաւատոյն. և զայլս ոմանս քաջալերեալ յորդորէր յարդարութեան Քրիստոսի, և հաստատէր ’ի հաւատս Ձշմարիտ, խոստովանել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին։ Բայց ոչ յայտնի հանդարձակէր պատուել զքրիստոնէութեանն հաւատս. վասն զի աստիճանի աշխարհն և Թագաւորքն և իշխանք աշխարհին հային՝ մոլեալ պաշտէին զկուռսն։ Եւ էր երանելին այս զօրավար առ Աֆտոխրատ բռնակալն՝ ’ի կոչմանս Աստուց քաջ և առաքինի, և յաղթող ’ի մարտս պատերազմի, քաջամարտիկ լինելով արիաբար ընդդէմ անօրէն բարբարոսացն, և վանէր զպատերազմունս Թշնամեացն ’ի վերայ յարուցելոցն՝ մարտակցութեամբն Քրիստոսի. և ծաղիկն բարեպաշտութեամբ քրիստոնական հաւատոյն, կեայր մեծաւ զօրութեամբ ախոյեան ընդդէմ զօրաց Թշնամեացն, և խրատեալ ուսուցանէր զկնի ’ի սէր պատուհրանացն Աստուծոյ։ Խոտանէալ մանր զզօրութիւն հեթանոսական զօրուն, և քարոզէր զաւետարանական բանն ’ի լսելիս այնոցիկ որք հեառոզք լինէին ընդ նմա ’ի մարտ պատերազմաց. նահատակէր արիաբար ընդդէմ բռնութեան հակառակամարտիցն, և վարձս լինէր սատուածածանօթիցն, հաստատուն կալ ’ի յոյս երկնային փառացն. տայր պատերազմ

զօրութեամբ՝ ընդ սատակեալ հակառակորդացն, և վանեալ զնոսա յաղթութեամբ մեծաւ, զօրութեամբն Քրիստոսի։ Եւ էր սիրեցեալ յաչս մեծին Անտիոքայ, և առնային նախարարացն և մեծամեծացն, և մեծարեալ լինէր յամենեցունց ըստ կարգի իւրեանց մելար օրինացն։

Եւ եղև յաւուրն յայնմիկ յարուցմունք թշնամեաց քաղութեան զօրաց ՚ի վերայ գաւառին, և յուզմունք պատերազմայ, հակառակ թագաւորութեան Հռոմայեցւոց։ Եւ անկեալ երկիւղ մեծ ՚ի վերայ աշխարհին կողմանցն այնոցիկ, և էին ՚ի տագնապ մեծ։ Եւ ասէ Անտիոքոս ցզօրավարն իւր Անդրէաս. Արութեան և քաջութեան անուն քո՝ առաջին ուրեք քարոզեալ է, զի վասնի առաջին պատերազմաց ՚ի ձեռն քո ծանուցաւ առաջին մարդկան, վասն որոյ և յայդպիսի պատիւ վերամբարձար, և այժմ առաւել ցուցցես զքաջութիւն յաղթութեան քո յայսմ պատերազմի, զի առաւել պատուեցիս և գովեցիս և մեծարեսցիս։

Իսկ արքայն և առաքինի նահատակն զօրավարն Անդրէաս, յուսացեալ յԱստուած՝ որ խորտակէն զպատերազմունս, եւ զինքն Աստուծոյ և հրամանի բռնատուրն, ընտրեաց իւր արս հինգ հարիւր ինսաուն և ինն, և դէմ եդեալ գնաց ընդ առաջ թշնամեացն, ՚ի հանդիպումն մեծի պատերազմին։ Եւ տեսեալ զբազմութիւն թշնամեացն և զոհարութիւն նորա զօրացն, քանզի սակաւք էին, և զանդիտեցին ՚ի բազմութենէ հակառակամարտիցն, քաջալերեցաւ յանձն իւր և սկսաւ քաջալերել զզօրս իւր, և զաստուածպաշտութեան հաւատս քարոզեալ ուսուցանէր նոցա, և այնու զյաղթութիւն ՚ի վերայ թշնամեացն ընդունել Աստուածոյ խոստանայր նոցա՝ ասելով. Եղբարք, այժմ է ժամանակ աստուածածանութեան, զատնալ ՚ի մոլորութենէ կռոցն, և հաւատալ յԱստուած երկնի և երկրի. և ՚ի վերին օգնականութենէն հայցել զերկիւղութիւն անձանց մերոց. քանզի նա է Աստուած արարիչ ամենայնի և անյաղթելի թագաւոր, և օգնական լինի ամենեցուն՝ որ կարդան առնա, և վրկեսցէ յամենայն նեղութենէ։ Ամէն այսուհետև հաւատացէք յամե-

նաւուըք Երուսղէմեան՝ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, և այնպէս շարամերձեացուք ի պատերազմին. և գիտեմ վստահութեամբ ի մարգասիրութիւնն Աստուծոյ իմոյ, զի գթասցի իւրով հաւատացեալ ժողովուրդ՝ զօրավիգ լինելով մեզ, մանաւանդ զթշնամին ի ձեռս մեր հալածական առնուլ մեր, զի փոխեացուք որպէս կաւ գոհեհոյ ըստ մարգարէական բանին։

Զայս լուեալ զօրացն՝ առժամայն ծագեաց ի նոսա լոյս աստուածգիտութեան և լուսաւորեաց զմիտս նոցա, և որպէս ի միջէ բերանոյ աղաղակեցին և ասեն. Հաւատամք և մեք ի Հայր ամենակալ և յՈրդին միածնին և ի սուրբ Հոգին՝ ի մի Աստուած, որ փառօք և զօրութեամբ և իշխանութեամբ օրհնեալ գոլի և փառաւորի յերկնաւորաց և յերկրաւորաց, և օգնական լինի հաւատացելոց իւրոց, որպէս և մեզ քարոզեցեալ, զի նորա զօրութեամբն յաղթեացուք թշնամեացն։ Եւ ապա այսմ այսպէս լինելով՝ յուսացեալք Աստուած զօրացան յանձինս իւրեանց. քաջալերեալ զմիմեանս՝ յարձակեցան ի վերայ թշնամեացն։ Եւ խոնեցաւ պատերազմին, և եղև Տէր յաղթութիւն մեծ յաւուր յայնմիկ սրբոյն Աստուածածնի և իւրոց հաւատացեալ զօրականացն. և զամենայն զօրս թշնամեացն վանեալ ի փախուստ դարձուցին, զօրս ընդդէմ սուրբ բանակին մարտնչէին. զբազումս ի նոցանէ սպանին, և զմնացեալսն ցրուեալ յիւրաքանչիւր տեղիս փախուցանէին. և արար Տէր յաղթութիւն մեծ նոքօք ի փառս անուան իւրոյ։ Եւ յետ յաղթութեանն՝ ասէ սուրբն Աստուածս ցհաւատացեալ զօրսն իւր. Տեսէք զմեծամեծս Աստուծոյ, որպէս արար փրկութիւն այսօր, և ապրեցոյց զմեզ ի ձեռաց նեղչաց մերոց, և զհալածիչսն մեր հալածական արար առաջի մերս։ Աստուհետև հաստատուն կացէք ի հաւատս, զի արժանաւորք լիցուք յաւիտենական երանութեանցն՝ որ պահի յուսացելոց իւրոց։

Խակ բանասիրսուն կերպարանեալ զինքն ի հրեշտակ լուսոյ, եկաց առաջի սրբոյն Աստուածի, բանս առնոյր ասել ցհաւանելն՝ որպէս յերկինից եկեալ։ Խակ նա իմացեալ չնորհօքն Քրիստոսի ասէ. Ո՛վ բարեպաշտ և աստեղաց չքմարտութեան թշնամի, ոչ դադարիս

՚ի խորամանկութենէ, որ վասն այդորիկ յերկնայնոց դասուցն անկաւ ՚ի վիհ կորստեան։ Յայժամ կըշտամբեաց զնա Անդրէաս ասելով. Ո՛չ կայից յեռս միոջէ ցկատարումն փորձել զքեզ։ Նակ տուըն Աստըծոյ ասէ. Դարձիր յետս՝ Քրիստոսի զօրութեամբն։

Եւ եղև յետ յաղթութեան մեծի պատերազմին, և վանելոյ զբազմութիւն զօրացն Հնաստեացն՝ դառնալ անդրէն առ խրոխտացեալ իշխանն Աստիոքայ, և ըզյաղթութեան գովութիւնն՝ Քրիստոսի ընծայեցուցանէին։ Եւ լուեալ մեծին Աստիոքայ՝ յարանց ոմանց չարաց, թէ ոչ նմին տան զփառս յաղթութեան՝ այլ Քրիստոսի, և ՚ի խարդախութենէ բանսարկուին զբաւեցաւ. սակայն զբազութիւն խորհրդոյն իւրոց ՚ի սրտի իւրում պահէր։ Առաքէ զինուորս երկերիւր ընդ առաջ նորա սպասաւորել նմա, միանգամայն և գիտել վասն որոյ լուաւն. Թէ զՔրիստոս փառաւորէ՛ հանդերձ զօրօքն իւրովք և զաստուածս նորա և զպաշտօնեան արհամարհէ։ Եւ երբեմն հասին առ նա, և նա խօսեցաւ ընդ նոսա վասն հաւատոյ աներեսութեան երկրպագութեան, և առաքինի վարուց, և զբարութեան մեռելոց, և հաւատացելոց արդարոց և մեղաւորաց. և եղև ահ մեծ ՚ի վերայ նոցա, և հաւատացին Աստուած, վասն զի ապրեցաւ նոցա ՚ի վերուստ աստուածգիտութեան ընտրեն. և օրհնէին զոմէին և փառաւոր առնէին զԱստուած հանդերձ սուրբ բանակաւն և զօրաւորաւն Անդրէիւ։ Եւ երբեմն եկին սուրբն ՚ի քաղաքն՝ իւրով սուրբ զօրականօքն, և պատմեաց իշխանին զյաղթութիւն պատերազմին և զկործանումն Հնաստեացն, իսկ նա տայր զփոխութիւնն կուռցն իւրոց։ Նակ սուրբն Անդրէաս ընդդէմ կայր և տայր զփառս ամենայնումբք Երրորդութեանն, և Քրիստոսիւ առէր զյաղթութիւնն։ Նակ նա հակառակէր դարձուցանել զինա ՚ի չշմարիտ խոստովանութենէն, և ասէ ցԱնդրէաս. Ո՞չ գիտես թէ քանի բազմութիւնք, որպէս ասացաք՝ որպէս մաշեցի, որք ՚ի Քրիստոս հաւատացին, և ոչ ումեք ողորմեցայ։ Եւ արդ՝ դու զի այդպէս յամառեալ պնդես ՚ի վերայ խաչեցելոյն՝ Աստուած զինա խոստանալով, և նովաւ զյաղթութիւնն հռչակեցուցա՞ նես, որ ոչ փրկէ զՀաւատացեալս իւր ՚ի ձեռաց մերոց։

Իսկ տուրքն Անդրէասա ասէ. Ամենայն տուրք որ վասն անուանն Քրիստոսի չարչարեցան և մեռան, դարձեալ վերստին նորոգին. և սպասկին յաւուր յայտնութեանն և դալստեանն Քրիստոսի: Ամէն յոտոյ ես ցանկացեալ սպասեմ, Թերևս արժանի գտայց ընդ արժանաւորացն՝ յաւուրն այցելութեան: Բարւոք Թեամբ և սրտմտութեամբ լի եղև բռնաւորն, և ակն ածեալ յառնէն՝ հրամայեաց գնալնոմա, զի խորհեսցի Թէ զինչ արասցէ վասն նորա:

Եւ այսոցիկ եղելոց այսպէս՝ ի խորհրդածութենէ չարին կամեցաւ հալածել զնա հանդերձ ամենեքեան, որք ընդ նմա միաբանեցան ի հեռաքնակ աշխարհ: Եւ հրամայեաց երկուց հազարաց զինուորաց հանել զտուրք բանակն ի քաղաքէն, զի գիտասց զանխափելի միտս ամենեցուն: Նաև ակն ունէր զղջանալ և դառնալ յիւրաքանչիւր յայդ իւր և յերկիր:

Իսկ նորա յանձն առին զչարչարանս վասն արքայութեանն երկնից, քան առ ժամանակ մի վայելել ի մեղս, և յապականացու կեանս: Եւ ամբարձ զձայն իւր տուրքն Անդրէաս՝ և ասէ ցտուրք բանակն. Ցիշեցէք զաւետարանական բանն՝ որ ասաց Քրիստոս Փըրկիչն աշխարհաց. Երանի, ասէ, որ հալածեալ լինին վասն արդարութեանն, զի նոցա է արքայութիւնն երկնից: Արդ՝ մի ոք ի ձէնջ խորհրդոցիս Թիւրեսցի, և վերնասցի յայնմ երանութենէն. զի ոչ սասանելի և քակտելի են կեանքն, և ոչ երբեք լուծանի, այլ կայ և միայ յաւիտեան:

Զայսոսիկ լուեալ տուրք բանակին, խրախուսեալք յԱստուած, ուրախութեամբ սրտիւ գոհանալով զԱստուած ոչնչացոյ օրհնէին գովէին և փառաւոր առնէին զաստուածութիւնն Երրորդութիւնն, զՀայր և զՈրդի և զտուրք Հոգին: Իսկ երկուց հազարացն զայսոսիկ լուեալ, զղջացան յանձինս իւրեանց, ազդեալ ի նոսա ընտրեալ տուրք Հոգւոյն, և յարտասուս եղեալ աղաչէին զամենակալն Աստուած, ընդ տուրք բանակին ի թիւս անկանել հաւատով յորդիգրութեան ընտրչ: Եւ միաբանեալ ամենեքեան բարձրացուցանէին զօրհնութիւն ի բարձունս ամենասուրբ Երրորդութեանն:

Եհաս այս ի լսելիս չարախտիհարդ և ամբարիշտ

իշխանին Անտիոքու. խոսվեցաւ և զարհուրեցաւ յանձն իւր և ոչ գիտէր թէ զինչ արասցէ եւս իրացն։ Կոչեաց առ ինքն զԱինկղտոսն և զխորհրդականն ամենայն, խորհեալ նոքօք գրել նամակ առ Սելևկիոս՝ օրինակ զայս. Անտիոքոս մեծ և հռչակելի և յաղթող, իշխեցող և հրամանատար ամենայն նահանգի կողմանց Ասորեստանի, սիրելի եղբօր մերոյ Սելևկիոսի մեծի կոսսակալի, խնդալ. Որպէս զի ոչ անպիտացի քոյին զօրութիւնդ յաղագս Անդրէի զօրավարին մերոյ, մեծաւ պատուով պատուեալ՝ի մէնջ, ապստամբեալ արհամարհեաց զպատիւ մեր և զաստուածն, հատուածեալ առ խաչէսէն Բրիտոս. վասն որոյ հալածեալ՝ի մէնջ զբազում յինքն յարոյց, ամենեքումբք խոստուվանել զԲրիտոս Աստուած և թագաւոր յաւիտենից, հակառակ ինքնակալ թագաւորացն կարծեցեալ զեղեալսն։ Արդ՝ յայսմ երևեցի քաջութիւն եղբօր մերոյ, զի ուր և հանդիպեացիս՝ մաշեացես զնոսա սրով սուսերի. Ո՛ղջ լեր, քաջդ Սելևկիոս։

Եւ իբրև տարեալ եղև թուղթն և ընթերցան առաջի նորա, առժամայն իբրև զգազան չար զայրացեալ՝ի միտս իւր լի թունօք դառնութեան, ՝ի խորհուրդ մըտեալ՝ հնարէր թէ որով կերպիւ կամ որպիսի հնարիւք կարասցէ որսալ զնոսա։ Պատրաստէր զինքն, և ամենայն զօրաց իւրոց պատրաստ լինել հրամայէր. խնդրէր երանելի զօրավարն Անդրէաս հալածական եղեալ սուրբ բանակաւն յաղագս Բրիտոսի՝ յԱնտիոքայ մայրաքաղաքէ Ասորւոց, եկեալ յԱղեքսանդրիա, և Հանապարհ կալեալ առ ծովեզերբն Ովկիանոսի, ընդ սահմանս Կիլիկեցւոց գաւառին, հասանէն՝ի Տարսոն Կիլիկեցւոց, և հանդիպեցան եպիսկոպոսին Տարսոն քաղաքին, և Նոսնոսի եպիսկոպոսի Բերիայ քաղաքի. և մկրտեցան՝ի նոցանէ զօրավարն Անդրէաս, և զօրքն ամենայն առհասարակ՝ի Հայր և յՈրդի և՝ի սուրբ Հոգին, և լուսաւորեցան լուսով աստուածգիտութեանն։ Եւ նոյն ժամայն երևեցաւ տեսեալ զլոյս՝ի վերոյ անձանց՝ի վերուստ՝ի ջուրն մկրտութեան, և զնահատակութեան պսակն որում հանդիպելոց էին առաջակայ երանութեանցն։ Եւ ողջունեալ օրհնեցան՝ի սուրբ եպիսկոպոսացն, և Հանապարհ կալեալ ընդ

կողմն Տաւրոսի։ Ապա այնուհետեւ տեղեկացեալ Սելեւկիայեաց այլազանեաց զդէմս իւր, որպէս զառիւծ մռընջող և յափշտակող. զնետ մտեալ հալածէր զսուրբ քահանան, և ուր հասանէին գազանաբար յարձակեալ՝ի վերայ, անխնայ կատորել կամելով զամենեսեան։ Սակայն նոցա օգնականութիւն՝ի վերուստ ընկալեալ՝ յաղթահարէին զնոսա, մինչ զի ոչ զօրէին զդէմ ունել զերանելի նահատակին. վասն զի Հոգին սուրբ առաջնորդէր նոցա մինչև ցահմանեալ տեղին Ամասիոյ, ուր և կատարելոյն էին։ Եւ հասեալ մինչև՝ի Տարսոն ընկէց, և՝ի կողմ Եգեանի, և բանակեցան՝ի տեղւոջն՝ որ կոչի Բաւտարիս և Բարապաղեան, և՝ի գիւղաքաղաքն վայրս՝ի հովտի միում՝ի մէջ լերանց, զետի փոքու ընդ մէջ անցանելով։

Իսկ Սելևկիոս ամբեցաւ զհետ նոցա և հասանէ՝ի ներքուստ Բաւտարայ [1]. և պաշարեաց զնա։ Իսկ սուրբ քահանայն դիմեալ առ հասարակ յերկիւղս և՝ի զէնս լերանց, պատերազմել ընդ նոսա, և ոչ կարէին յաղթահարել ունել զնոսա։ Քանզի Հոգին սուրբ առաջնորդեաց՝ի տեղւոջն ուր կատարելոցն էին. ուր և քահանայն որպէս զառանակ Աստուծոյ։

Եւ սկսաւ սուրբ զօրավարն քաջալերել զօրս իւր՝ և ասէ այսպէս. Եղբարք իմ սիրելիք և քաջ նիզակակիցք իմ, ահաւասիկ ժամ արիաբար քաջանալ և հաստատուն լինել՝ի պատերազմին. ահաւասիկ ժամ մարտի և յաղթութեան, զի անթառամ պսակացն արժանացուք. այսուհետեւ հաստատուն կացէք՝ի հաւատն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զինք կալք զէնտրէն որ ընձեռեցաւ ձեզ. յիշեցէք զերանելի պարգևան, զխոստացեալն ձեզ՝ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։ Մի ոք՝ի ձէնջ խարհրդոյն թխրեցի՝ի ջնարհացն յոր ընկալարուք. մի ոք երկրաւոր կենացս ցանկացեալ՝ի յաւիտենական կենացն զրկեցի։ Ի զուտն զաւթի հասեալ կամք, մի ոք արտաքս դարձցի և՝ի հարսանեաց առագաստին վերկեցի։ Զքաջութիւնք պատերազմի պատերազմեցաք, զընթացսն կատարեցաք, և ահաւասիկ պատրաստեալ կամք վարձուցն

1. Յօր. ՝ի Նեղոս գետոյ։

հատուցման, և Թագաւորն մերձ է երկնային փառաւքն պսակել զմեզ: Բարւոք է մեռանել վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի ընդ նմա կեն-դանացուք, և փառաւորեցուք յանձառ և յանապական բարիսն: Բարւոք է փոխանակել զայս մնոտի և զապականացու կեանս ընդ անմահական կենացն, բարւոք է ուրանալ զաշխարհական մեծութիւնս, զի ժանդերձելոյն շահեցուք զբազմապատիկ արդիւնացեալսն, ընդ միոյն երեսուն, ընդ միոյն վաթսուն, ընդ միոյն հարիւր. նաև առաւել ևս, որ ոչ ընդ Թուոյ անկանի. զի և փոխանակ հալածական լինելոյ մեզ յերկրաւոր Թագաւորաց, երկնաւոր Թագաւորին մերձաւորք լիցուք, և ընդ նմա Թագաւորեցուք: Եւ փոխանակ երկրական սիրելեաց էգերաց և ազգականաց՝ որոց Թողաք յերկրի, ընդ զուարթունս երկնից խառնեալ միանայք, և ընդ նոսա զուարճացեալ պահեմք յանձառելի ուրախութիւնն: Եւ փոխանակ հայրենի ժառանգութեանցն յորոց անջատեալ արտաքսեցաք՝ յաթթայութիւնն երկնից ժառանգեսցուք, և յանապատումն բարութիւնն վայելեսցուք, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր:

Զայս և առաւել քան զսոյն խօսեցաւ սուրբն Անդրէաս ցլօրս իւր. և նոյա քաջալերեալ ընդ հօքն Քրիստոսի, զօրացան յանձինս իւրեանց, և դիմեցին առհասարակ ընդդէմ սրոյն՝ յօժարութեամբ մեռանել վասն մեծի յուսոյն որում ակն ունէին:

Իսկ Սեբաստիոս զայրացեալ ցասմամբ մեծաւ, և բարկութեամբ և սրտմտութեամբ, հրամայեաց կոտորել զամենեսեան: Որ այսպէս ասէր ի ժամ կատարման իւրոյ սուրբ զօրավարն Անդրէաս հանդերձ սուրբ բանակաւն. Տէր Աստուած ամենակալ, որ կոչեցեր զմեզ յորդիդրութեան ընտրհս, և զօրացուցեր զմեզ ի կամս ողորմութեան քո, արժանաւորեա զմեզ սրբոցն դասուց. զի վասն քո մեռանիմք՝ ածեալք որպէս զոչխարս ի սպանումն: Մի Թողուր զմեզ ի քումմէ բարերարութենէդ, զյուսացեալքս և զապաւինեալքս ի քեզ: Տուր, Տէր, զողորմութեան ընտրհս ի տեղիս հանդստեան մերոյ. և բժշկեա զցաւս ախտաժետատացդ: ըստ իւրաքանչիւր հայցուածոյ հոգւոյ և մարմնոյ,

և հալածումն այսոց պղծոց, և յամենայն վտանգից զերծս գՀաւատացեալս ի քեզ, զի փառաւորեսցի անունդ քո սուրբ: Եւ զայս ասացեալ առհասարակ սպառեցան ի սուր սուսերի, բարի խոստովանութեամբ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: Եկն բարբառ ի վերուստ՝ որ ասէր. Եկայք ընկալարուք զվիճակս թութիւն յարտաքին ամենեցուն, և ի տեղւոջ հեղմանն արեան ձերոյ բղխեսցէ աղբիւր բժշկութեան, և անմեռանելոյ վտանգելոց առողջութիւն յիւրաքանչիւր ախտից, և ի հալածումն այսոց պղծոց:

Այսպէս կատարեցան սուրբ նահատակքն Քրիստոսի, յինեւտասան օրուսում ամսոյ: Եւ էր թիւ սուրբ նահատակին երկու հազար և ութ հարիւր: Իսկ ի խնդիր եղեալ անօրէնն Դատաւորացն երանելի եպիսկոպոսացն Պետրոսի և Նոննոսի՝ որք վկայեցին զսուրբ նահատակն, և նոքա փախստական եղեալ հանդերձ պաշտօնեիւքն իւրեանց երկիւղածովք Աստուծոյ՝ եկին մինչև ի տեղի կատարման սրբոցն. և տեսեալ զաղբիւր բժշկութեան և զնշխարան սրբոց նահատակին, և ամփոփեցին ի տեղի հանգստեան անյայտաբար, փառաւորելով զամենասուրբ Երրորդութիւնն: Եւ դարձան յիւրաքանչիւր էութ տեղիս, և դադարեաց հալածումն: Եւ զնշխարսն վկայութեան նոցա ածնախումբքն առ յամէ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. որում վայել փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոյն Աւետիսի Եպիսկոպոսի։

Սրբոյ եկեղեցւոյն Աստուծոյ մայրաքաղաքին Նիկոմիդացւոց աշխարհ, և Բրիսառոսի հօտին բազմանալով, բարեաւետացն բանասարկուն և Քրիստոսի արդարութեան և ապականչին հոգւոց մարդկան, դարձն չարութեան, յեղանակաւ ոչխարի ծածկոյթ զգեցեալ, եմուտ՚ի հօտն Բրիսառոսի՝ ըստ նենգելոյն նորա։ Քանզի՚ի ժամանակին յայնմիկ եգիտ իւր արբանեակս և զոր ծակից իւրոյ չարութեանն զամպարիշտն և զանօրէնն Թագաւորն զՄաքսիմիանոս՝ հանդերձ Դեոկղետիանոսիւ, խաւարայինք և վայրենամիտք, ապարտասանք և խայտառակեալք մօք և խաբեբայք սովորութեամբ։ Որոյ եկեալ՚ի քաղաքն Նիկոմիդացւոց կորուսանել խորհելով զազգն քրիստոնէից, մոլորութեան բանսարկուին հեռուելով առ՚ի մոլորութիւն կուռցն մեռելոցն։ Քանզի ճանաչեալ մեսրոպատարիր աստուածոյ ոմանց երկիր պաշտանէին, և անմաքուր և պիղծ դիւացն զոհս չենչերայիցս, ծխամած, միգաստեան շամանդաղատեսակ մատուցանէին։ Եւ անդադար եկեալ լինէին դատարանք պատուհասից, տանջանս հատուցանէին երկիւղածոց սիրելեացն Աստուծոյ։ Եւ յաւուրսն յայնմանիկ այրեցին կիզմամբ հրոյ արս և կանայս՚ի քրիստոնէից երկուս բիւրս։ Իսկ հաւատացելոց երջարց տեսեալ զայսպիսի ազէտս տառապանացն որ լինէր՚ի ժամանակին յայնմիկ՝ յայնցանէ որք հակառակորդք էին չքմարտութեանն և ոչ

Ձանաչէին զՍուտուածծ, խոյս տուեալ՝ի քաղաքէ անտի սիւռեցան՝ի լերինս և յայգարակս, զանձինս Թագուցանելով՝ի հալածանաց բռնաւորացն. Համարեալ զագարական՝ քաղաք, և զլերինան՝ որպէս վայրս առ քաղաքի: Գանգի ունէին ընդ իւրեանց զԹագաւորն անմահ Քրիստոս. Համանմանեալք սրբոց աշակերտացն նորա՝ Հանդերձ Յիսուսիւ ելանելով՝ի լեառն: Եւ անդադար՝ի լերինան և շուրջ յայգարակն ուսուցանէին զբանն կենաց և զկրօնս բարեպաշտութեան:

*Արդ՝ի ժամանակին յայնմիկ սուրբ այրն Սուտուածծ վերատեսուչ և հովիւն բանաւոր հօտին Քրիստոսի ուրամ անուն էր Անթիմոս, սա վասն երկիւղի հալածանացն զօղեալ Թագուցեալ էր զանձն իւր՝ի նմին քաղաքի՝ի տուն ուրեմն, և անդ անյագադադար Ձայնիւ Հանապազորդեալ էր՝ի պաշտամանն, և անհատական աղօթիւք միշտ ընդ Սուտուածծ խօսակցեալ: Գանգի էր զարդարեալ ամենայն գործովք արդարութեան խնամատուն և խոհեմ բանիւք, պարկեշտ կենցաղավարութեամբ. արագ առ՝ի հանդէս բարեպաշտութեանն, պատրաստ առ՝ի վարդապետութիւնն, պատկառեալ տեսակաւ, քաղաքավարութեամբն անպարտաւոր. ոչ և միոյ առաքինութեան պակաս գոլով գտեալ՝ի նմանէ, Թոյլ տուեալ՝ի քաղաքէ այսի վասն աղաւեղի գործոյ օրինացն, և գնացեալ՝ի տեղի ուրեք Թաքուցեալ՝ի լերինան, նմանեալ Տեառն իւրում և վարդապետին, որ տեղի տայր գնալով յանապատ. և էր անդ աղօթելով և սաղմոսելով այսպէս. Ի Տէր յուսացայ, ընդէ՞ս ասէք ցանձն իմ Թէ փոխեցիր՝ի լերինս որպէս Ճնճղուկ: Զի ահա մեղաւորք լարեցին զաղեղունս իւրեանց. պատրաստ արարին զնետս՝ի կապարձս իւրեանց առ՝ի սպանանել զանբիծս՝ի գաղտնիս: Եւ արարեալ տաղտապար ինքեան՝ի տեղւոջն տեսարանաձև, բնակեալ լինէր անդադար խոկալով զբանն Սուտուածծ. բժշկելով զցաւսն՝ի հիւանդութեանց իւրեանց, և զդէս հալածելով անտառաձև Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ ունէր զտաղտապարն օձեանսն առ՝ի հանդիստ գիշերոյ. առ՝ի քաջալերութիւն տալ և ուսուցանել զաւանդութիւն բարեպաշտութեանն բնակչաց լեռնակողմանն այնմիկ. և՝ի տուընջեան ժա-

մանակի՝ ի լերինս շրջէր, հրձուելով սաղմոսերգու Թեամբ՝ ի մէջ ոստոց ծառոց։ Եւ հանդերձ մարմնոյ աչօք և գհոգւոյ աին՝ ի վեր համբառնալով յերկինս առէր. Համբարձի զաչս իմ՝ ի լերինս՝ ուստի եկեսցէ ինձ օգնութիւն։ Եւ անընդհատ յաձախակի յաղօթս կալով նորա, զազանք վայրենիք հանդարտէին նման՝ ըստ գրեցելոյն, Թէ՝ գազանք վայրենիքն իջանեն խաղաղականք քեզ լինիցին։ Այլ սուրբն Անթիմոս հոգւոյն տեսանողական հօտին Քրիստոսի՝ ոչ եթէ առաք զանգիտել էր անդադար, այլ ըղձմամբ մեծաւ ցանկայր պարզևի հոգւոյ Հայց Հոգւոյն սրբոյ, առ՝ ի յօժարակամութիւն և գործակցութիւն հանդերձելոյ առաջնոյ մրցանացն և տարտարանացն։ Զի յաղթեալ հակառակամարտին զօրութեան՝ պատրեսցէ զանեղեւոյթ գունդն Բելիարայ, և անարատ մնասցէ՝ ի վիայական մրցման հանդիսին, և ըստանձնէ զկնի իւր, հետևեսցէ խաչակցաբար խաչելոյն։ Այլ օր ըստ օրէ զօրանալով հալածանացն որ յայնժամ չարաշունչ ժամանակին, այնուհետև մատնեին զմիմեանս ըռնաւորքն վասն երկիւղի չարաչար սպառնալեացն, հարք զորդիս և որդիք զհայրս խրճեանց, դրացիք զդրացիս և բարեկամք զսիրելիս իւրեանց. զի կատարեցաւ բանն տէրունական որ ասաց, եթէ՝ Մատնեսցէ եղբայր զեղբայր՝ ի մահ, և հայր զորդի, և յարիցեն որդիք՝ ի վերայ հարց և սպանանիցեն զնոսա, և եղիջիք ատելեաք յամենեցունց վասն անուան իմոյ։

Այդ՝ ի չարաչար արբանեկաց բանսարկուէն մի ոմն յայնցանէ որ նմին նման չձանաչէր զԱստուած երկնի և երկրի, հակառակորդն ճշմարտութեան, մատուցեալ յունկն ամպարշտին Մաքսիմիանոսի՝ առ ինա. Թագաւոր, յաւիտեան կաց. զքրիստոնեայն զայն զոր խոստացար սպանանել, ահաւասիկ փախուցեալ է՝ ի քաղաքէս յայսմանէ, մանաւանդ քահանայ գոլով՝ սորա ընդուցանէ զբազումս, ուսուցանելով նոցա զառասպել մոլորութեանս։ Այդ այժմ լուր ինձ, ով Թագաւոր, և առաքեա զինուորս, զի երթիցեն գտցեն զինա և առցեն կապուցեն առաջի քո յաւուրս։ Եւ ունկնդիր եղեալ արքայն Մաքսիմիանոս բանից առնն այնորիկ

դաւաձնաւոր ամբարշտին, առաքեաց այս քան՝ ի զինուորաց իւրոց, և պատուէր տայր նոցա ասելով. Գնացէք դուք՝ ի գեօղն այն, և խնդրեցէք զայրն քրիստոնեայ որ Անթիմոս կոչի, և գտեալ ածէք առաջի անմահական պետութեանս իմոյ:

Եւ նոքա վաղվաղակի ստիպով հրաժարեալք՝ ի թագաւորէն՝ փութացին կատարել զհրամայեալսն. և հասեալք՝ ի տեղին, հարցանէին զբնակիչս լերինն թէ ուր էր բնակեալ այրն քրիստոնեայ՝ որ անուանեալ կոչի Անթիմոս: Ա՛յլ նոքա որք հարցեալք լինէին՝ ի զինուորացն՝ ոչ ինչ կամեցան տալ պատասխանի, զի խորշէին՝ ի սրբոյն այնորիկ. քանզի լուսաւորեալք էին լուսովն՝ ի ձեռն վարդապետութեան նորա: Չի էր լի և կատարուն ընտրօք Հոգւոյն, անթերի ունելով յինքեան զաստուածդատիւր պատուիրանացն զվարդապետութեան իմաստութիւնն. առնել և ուսուցանել, հանդերձ բանին իմաստութեանն: Եւ ձև հասակին և նկարագիրն պատկերի դիմաց նորա լի էր ընտրօք, տեսութիւն աչաց քաղցրահայեաց, քաղաքավարութիւն անբիծ և անարատ: Չի հանդերձ Հոգւոյն ուղղութեամբ և մարմնոյն անդատաճքն վայելչապէս էր շարադրեալ, և գեղեցկապէս զշարժուն ունելով զատեղծողին՝ զքաջաբնակութիւն արտափայլեալ յուցանէր զսորայս:

Ա՛յսուհետև զպարկեշտ քաղաքավարութիւն և ըզ յոգնահանձար վարդապետութիւնն տեսանելով քնա՛ կիչք այնմ վայրացն՝ մատանել զսուրբն ոչ յանձն առնուին որպէս զՅուդասն: Իսկ զինուորքն քանս ինչ ոչ առեալ՝ ի գեղջկէն՝ զի պատմեացէն յորոց առաքեցան: Իբրև փոքր ինչ հեռացան՝ ի շինէ անտի՝ գտին նրբագոյն շաւիղ ինչ Հանապարհի, և հետ ոտից արանց որ ի քաղցանէր՝ ի տեղին յայն՝ ուր սուրբն Անթիմոս զառաքեալն ինքեան կատուցեալ էր: Եւ շուրջանակի այսր անդր հայելով՝ տեսանելով զբնակութիւն սրբոյն՝ ի մէջ անտառախիտ ծառոց, և խնդալից եղեալք հետ ծեալք յերկնային իւրեանց հաստատ փութանակի հասանէին ընդ զառիվայր լերինն՝ զի որսայցեն զսուրբն:

Իսկ այրն Աստուծոյ տեսանէր զհեծելազօրսն զի

գայլն առ նա, ասէ. Սոքա կառօք և սոքա երիվարօք, այլ ես զանուն Տեառն իմոյ Աստուծոյ կարդացից։ Եւ զայս առացեալ սկսաւ երանելին աղօթել, և յաղօթելն ասէր այսպէս. Յիսուս, լոյսդ յաւուրջ քան զամենայն յաւիտեանս, որ զլոյսդ որ՝ի քեզ է՝ ընտրեցեր առնայն մարդկան, և յայտնապէս աշակերտաց քոց ասացեր, թէ Ոչ խոստովանեցայ զիս առաջի մարդկան, խոստովանեցայց և ես զնմանէ առաջի Հօրն իմոյ որ յերկինս է։ Սո քեզ կարդամ, լցո զխոստումն քո, զմնալ ինձ աղաւթարկուդ առաքեալով և զառաջնորդուդ այնոցիկ՝ որ՝ի փորձութեան են։ Խոստովանեա զիս լուսով ամենից մասն գիտութեամբ քով, Տէր. եկ հանդերձ լինել յառաջիկայ մկրտարան հանդիսական մարտին, որպէս և առ երեք մանկամբքն՝ի Բաբելոն. այսպէս և առ իմում նահատակութեամբ։ Տուր հանդարձակութիւն յուսացեալոցն՝ի քեզ, զի յաղթեսցեն՝ի ձեռն իմոյ մաղթանաց բանտարկութիւն թշնամւոյն արդարութեան։ Վասն շուրջ եղելոց մարմնոյս տկարութեան զօրացո զիս Հոգւով սրբով։ Ընտրեա ինձ քաջալերութիւն զօրութեան, առ՝ի վանուցին ընդդիմամարտին մեքենայից. և փառաւորեա զանուն քո, Տէր, զի ծանիցեն ամենայն թագաւորք երկրի եթէ դու ես տէր և թագաւոր ամենայն տիեզերաց։ Եւ վերառաքեալ զամէնն և զոհանալով[1] զՏեառնէ, սկսաւ յուսալ առ նա, ասէ. Սրբոց կառօք և սրբոց երիվարօք, այլ ես զանուն Տեառն Աստուծոյ կարդացից։ Եւ զայս առացեալ սկսաւ երանելին աղօթել, և յաղօթելն ասէր այսպէս. Յիսուս, լոյսդ յաւուրջ քան զամենայն յաւիտեանս, որ զլոյսդ որ՝ի քեզ է՝ ընտրեցեր առնայն մարդկան, և յայտնապէս աշակերտաց քոց ասացեր, թէ Ոչ խոստովանեցայց առաջի մարդկան, խոստովանեցայց և ես զնմանէ առաջի Հօրն իմոյ որ յերկինս է։ Սո քեզ կարդամ, լցո զխոստումն քո, զմնալ ինձ աղաւթարկուդ առաքել

Յայնժամ ուրախ էղեն արքն այնորիկ և լցան բերկրանօք. և մտին՝ի տաղաւարն և հանգեան. և եղ՝ետ ցա կերակուր և կերան՝ի նոցին հայից կերակրոյ: Նակ գիշեն միոյ պահու անցանելոյ, հարցանէին զսուրբն ասելով, Թէ՝ Տակաւին յասպաղէ այրն զպաշն այսրէն: Նակ լինքնին սուրբն էր որ խօսէրն ընդ նոսա և նոքա ոչ գիտէին: Պատասխանի՝ եաւ սուրբն և ասէ ցնոսա. Չիարդ, և վասն ի՞ր էք աշխատեալ զալ այսրէն վասն առն այնորիկ Անթիմոսի: Պատասխանի եաւն նոքա և ասեն ցսուրբն. Ինքնակալ Թագաւորն Մաքսիմիանոս առաքեաց զմեզ, զի տարեալ կացուսցուք զնա յաստեան զատաստանի առաջի քեմին յորում նստեալ լինի: Յայնժամ սրբոյ վկային Անթիմոսի արարեալ լինքեան զինիքն Քրիստոսի, խոստովան եղև և ասէ ցնոսա. Ես եմ ծառայն Քրիստոսի Անթիմոսն՝ զոր լանդիք: Ա՛լ նոքա ոչ կամէին հաւատալ նմա: Եւ նա սէպ սէպ ասէր ցնոսա դարձեալ, Թէ՝ Ես եմ. և այժմ եկիք զինի ձեր՝ ուր և կամիցիք յանուն Տեառն զօրութեանց. և մի ինչ լինիցիք ընդ երկուսացեալք:

Նակ արքն այնորիկ լսեալ՝ի սրբոյն զայսոսիկ՝ Թախծեալք տրտմէին, և իբրու նեաւթ լցոյտեալք լինէին. և ասեն ցնա. Ա՛լ դու, հաճարեացուք եԹէ ոչ նկեմք տեսեալ զքեզ և գնացուք աստացուք Թագաւորին՝ Թէ ոչ գի ոք յայնցանէ գտաք. և դու ապրեացիս՝ի չարաչար սպառնալեաց Ինքնակալին, և չարախօսքն զքէն կորնչեն, և բարեպաշտապէս դու հանապազ աղօթս առեալ մեզ ծնաներես: Եւ երանելոյն վասն յիշելոյն փառաւորեաց զՏէր Աստուած իւր. քանզի ծանեաւ հոգւով զհանդերձեալ փրկութիւն նոցա: Եւ սկսաւ ասել ցնոսա բան հանդուրժեան սրբոյ առաքելոյն այսպէս. Եղբարք իմ, մի շրջիք տատրեամբ, զի պրեալ է՝ Մի տակք միմեանց, այլ եղիցի ձեր այո՝ այո, և ոչն ոչ. և առաւելն քան զայս՝ի չարէն է. այլ եԹէ հաւատովք լանդրէք յինէն զի յիշեցից զձեզ՝ հանդերձ կարգօք: Հոգին սուրբ զհնարհս միածնին պարգեւել ձեզ կամի. որպէս զի և դուք զերծեալք՝ի խաւարային իշխանութեանց բանտարկութիւն, և՝ի բաց ձգ զպարեալ՝ի ժանեաց չարագործս վիշապին, լինիցիք հանդերձ մեօք ձիմարիտ հոգևոյն ոչխարք բանաւորք.

ժառանգորդ լինելոյ ձեր յանապականացու թագաւորին զինուորութեանէ. քանզիցք երկնայնոց հոգեղէնաց հրեշտակացն գաւակցութեան։

Եւ իբրև լուան նոքա զայսպիսի զբանս երանելոյն այնմիկ, յարտասուս հառեալ անկանէին առ ոտս սրբոյն, աղաչելով զնա զի խոյս տացէ և զօրեալ զանխլացի ուրեք, և մի գնասցէ զինի նոցա։ Յայնժամ պատասխանի ետ և ասէ ցնոսա սուրբն Անթիմոս. Որդեակք իմ, մի տրտմութիւն երևեսցի ձեզ առաջիկայ հանդերձեալ ընթացից իմ՝ ի Տէր. այլ եկից և ես զինի ձեր, զի ոչ զանպիտեմ՝ ի մնհուանէ հանդուրժելոյ վասն Քրիստոսին լմոյ, որ վասն իմ չարչարանաց և մահու խաչի համբերեաց. և զաւտարութեան զձեզ՝ ի մարմնի, գնելով արեամբն իւրով սրբով զձեզ յանիծից յաւաչնոց նախատեղծիցն։ Զի այս ապականացու կենդանութիւնս աւժանդակեայ է, և այն որ կայ և միայ՝ անվախճան և յաւիտենական, զոր պարգևէ Յիսուս Քրիստոս՝ ի նա։ Վասն որոյ ունելով զնա պաշտպան փրկութեան յուսոյ, զամ յօժարամիտ կամօք հանդերձ ձեօք առ թագաւորն, սակայն Աստուած տացէ զընտրհս իւր և ըզխաղաղութիւն՝ ի սիրտս ձեր, առ՝ ի ընդունել զլոյս գիտութեան միածնին։ Եւ նոյն լինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս որ հանձարաւորեաց զձեզ՝ ի խորհուրդն փրկութեան կենացն յաւիտենից, հանձարեսցէ և ի մաստունս արասցէ՝ ի հոգի և՝ ի մարմին, ընդունարան և բնակարան լինել Հոգւոյն սրբոյ, ի ձեռն հաւատոյ յուսոյ և յարութեան՝ ի կեանսն յաւիտենից։ Եւ խոնարհեցուցեալ ծունր՝ կարդաց առ Տէր Աստուած զի տացէ նմա զՀոգւոյն օգնականութիւն՝ ի թիկունս հասանել՝ ի ձակատամարտին՝ յոր հանդերձեալ էր մտանել. և կատարեալ զաղօթսն եւ հանդերձ նոքօք յուզի անկեալ գնալով առ թագաւորն։ Եւ՝ ի գալն ընդ նոսա՝ սուրբն Անթիմոս խրատէր զնոսա և ասէր. Լուարուք ինձ մանկունք իմ, և հաւատացէք յԱստուածն իմ և՝ ի Տէր. և ծաներուք զի նա է յաւիտենից թագաւոր, յորոյ ձեռանէ ստեղծեալ եմք և շարժիմք և կեանք և կերակրիմք. յորմէ և զգիտութիւն ընտրհցայ ընկալեալ եմք՝ ի ձեռն միածնի որդւոյ նորա Տեա-

ուն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ ելլեալ յերկինից՝ ի հայրական ծոցոյ՝ շնորհեաց մեզ ապաշխարութիւն՝ ի թողութիւն մեղաց. տուեալ մեզ զմկրտութիւն փրկական՝ վկայութիւն և կնիք յինքն հաւատոց, զի ժառանգ գահիցք նորա լիցուք: Արդ այժմիկ, եղբարք իմ, լուարուք ինձ և հաւատացէք՝ ի նա, զի այնպէս անխարդախ և անբիծ լինիջիք յաւուրն յարութեան. որում պարտէ մեզ առնել յինքնէնէ յանդիմանութիւն զալ միայն ծնի որդւոյն Աստուծոյ. զի պահանջեացէ յիւրաքանչիւր յումեքէ զոր ինչ գործեալ է յառաջագոյն, եթէ բարի և եթէ չար:

Եւ յորժամ լուան նոքա վասն հանդերձեալ դատաստանացն՝ ի սրբոյն, լի եղեն երկիւղիւ մեծաւ և սարսափմամբ. և որպէս՝ ի խաւարային գբոյ տառապանաց ելեալք, կամ իբրև՝ ի գոռոզէ ումեքէ՝ ի բանտարկուէն՝ ի բաց զերծեալք և ազատեալք նմա, այնպէս փարիսին զսրբոյնն Անթիմոսի. արտասուալից պաղատանօք անկանէին առ ոտս նորա ասելով. Արդ այժմ՝ ի ձեռն աստուածախոս վարդապետութեան քո ծանեաք զարարիչն երկնի և երկրի, և հաւատացաք յայն՝ յոր դու քարոզեցեր մեզ. զի մինչև ցայսօր ժամանակի ոչ ևս երբէք այսոքիկ վարդապետութիւնս լուաք, բայց կենաց. այլ՝ ի խաւարի անգիտութեան մնալոցեալ էաք: Արդ այժմիկ հաւատացաք վարդապետութեանդ քո. աղաչեա վասն մեր զարարիչն Աստուած, զի և մեք ծանիցուք զՀանապարհն Ճշմարտութեան զոր ցուցեր մեզ: Եւ այժմիկ իմացեալ ծանեաք զի ոչ վասն քո առաքեալ եմք, զի զքեզ առաջի բռնաւորին տարցուք, այլ զի դու զմեզ կացուցեալ առաջի երկնաւոր և անմահ թագաւորին: Վասն որոյ աղաչեմք զքեզ ընկալ զմեզ զոգիւտացեալսդ, և տուր մեզ՝ ի ձեռն վարդապետութեան քո Հանապէղ զիմանալ զՃշմարտութիւն. զի Ճշմարտապէս՝ ի քեզ տեսանեմք հանդուցեալ զշնորհս Հոգւոյն սրբոյ: Բայց երեսսեա առ Ֆէր, զի զմեզ արժանի արասցէ լինել տաճար բնակութեան աստուածութեան իւրոյ. և ժառանգաւորս վերին Սիոնի, և հաղորդս լինել յայսմ աշխարհիս չարչարանաց խաչին նորա և յարութեան: Եւ ամբարձեալ զաչս իւր յերկինս տեսին Անթիմոս՝

տարածեալ զսուրբ ձեռս իւր գոհանալով զՏեառնէ, սկսաւ ասել այսպէս. Տէր Աստուած, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ի ձեռն մարգարէից քոց խոստացար մեզ զպատուտ միածնի քո. զոր և առաքեցեր կամօք քո ի փրկութիւն աշխարհի, որ եկն և առ մարմին յանարատ կուսէն Մարիամու Աստուածածնէն, ի ձեռն որոյ գոյացան ամենայն տարրեղէն արարածք: Որ և ի յանցանելն մեր ընդ պատուիրանաւ քո՝ ոչ տարամերժեցեր զծառայս քո, այլ առաքեցեր ի ձեռն նորին զիտութեան քոյոց աստուածածին որդիդ պատուիրանաց: Որ և զերծեմն խաւարեալսն վերատին կոչեաց, և զմոլորեալսն դարձոյց, և զգիտեցեալսն փրկեաց, և զխորտակեալսն առողջացոյց. զայսոսիկ փրկական նշանք աբանչելեաց ցուցեալ ի մարդանալն իւրում միածին որդին քո սիրելի: Զքեզ ես գոհանամ զերկնաւոր Թագաւորէդ, որ և այժմ զմոլեալ և զտարապրեալ ստեղծուածս անարատ ձեռաց քոց զայսոսիկ՝ դարձուցեր ի գիտութիւն Հշմարտութեան, փրկելով յունայնութենէ մոլար պաշտամանցն հեթանոսաց, և արժանի արարեր երկրպագութեան մատուցանել քեզ արարչէդ երկնի և երկրի: Վասն որոյ և այժմիկ, Տէր, առաքեա ի սոսա զՀնարկս Հոգւոյդ սրբոյ. զի ի ձեռն լուացման վերստութեան սրբութեանն՝ արժանի լինիցին պարգեւաց Հոգւոյն, լինել տաճար օթևանի սրբոյ Երրորդութեանդ: Հաստատուն և անխախտ և անբիծ պահեա զսոսա ի Հաւատս՝ յոր և կոչեցեր, զի աչալրջութեամբ արժանի լինիցին Հանդիսել միածնի քո, յորժամ գայ վարձք քո տալ զկենդանիս և զմեռեալս:

Եւ իբրև կատարեաց զաղօթսն և վերատաքեաց զամէնն, յայնժամ ասէ ցնոսա. Կամիք ընդունել զՀնարհս աստուածային պարգեւացն՝ եթէ Հաւատով խնդրեք յաղաւթս որոյ աստուածէքն: Եւ նոքա գոչեալ անհանգիստ առաջի նորա և աղաչէին տալ նոցա զպարգեւս Հոգւոյն սրբոյ. զի ի ձեռն լուացման վերստութեան սրբութեանն՝ արժանի լինիցին պարգեւաց Հոգւոյն, լինել տաճար օթևանի սրբոյ Երրորդութեանդ: Հաստատուն և անխախտ և անբիծ պահեա զսոսա ի Հաւատս՝ յոր և կոչեցեր, զի աչալրջութեամբ արժանի լինիցին Հանդիսել միածնի քո, յորժամ գայ վարձք քո տալ զկենդանիս և զմեռեալս:

Եւ իբրև կատարեաց զաղօթսն և վերատաքեաց զամէնն, յայնժամ ասէ ցնոսա. Կամիք ընդունել զՀնարհս աստուածային պարգեւացն՝ եթէ Հաւատով խնդրեք յաղաւթս որոյ աստուածէքն: Եւ նոքա գոչեալ անհանգիստ առաջի նորա և աղաչէին տալ նոցա զպարգեւս Հոգւոյն սրբոյ. զի ի ձեռն լուացման վերստութեան սրբութեանն՝ արժանի լինիցին պարգեւաց Հոգւոյն, լինել տաճար օթևանի սրբոյ Երրորդութեանդ: Հաստատուն և անխախտ և անբիծ պահեա զսոսա ի Հաւատս՝ յոր և կոչեցեր, զի աչալրջութեամբ արժանի լինիցին Հանդիսել միածնի քո, յորժամ գայ վարձք քո տալ զկենդանիս և զմեռեալս:

Եւ իբրև կատարեաց զաղօթսն և վերատաքեաց զամէնն, յայնժամ ասէ ցնոսա. Կամիք ընդունել զՀնարհս աստուածային պարգեւացն՝ եթէ Հաւատով խնդրեք յաղաւթս որոյ աստուածէքն: Եւ նոքա գոչեալ անհանգիստ առաջի նորա և աղաչէին տալ նոցա զպարգեւս Հոգւոյն սրբոյ. զի ի ձեռն լուացման վերստութեան սրբութեանն՝ արժանի լինիցին պարգեւաց Հոգւոյն, լինել տաճար օթևանի սրբոյ Երրորդութեանդ: Հաստատուն և անխախտ և անբիծ պահեա զսոսա ի Հաւատս՝ յոր և կոչեցեր, զի աչալրջութեամբ արժանի լինիցին Հանդիսել միածնի քո, յորժամ գայ վարձք քո տալ զկենդանիս և զմեռեալս:

Եւ իբրև կատարեաց զաղօթսն և վերատաքեաց զամէնն, յայնժամ ասէ ցնոսա. Կամիք ընդունել զՀնարհս աստուածային պարգեւացն՝ եթէ Հաւատով խնդրեք յաղաւթս որոյ աստուածէքն: Եւ նոքա գոչեալ անհանգիստ առաջի նորա և աղաչէին տալ նոցա զպարգեւս Հոգւոյն սրբոյ. զի ի ձեռն լուացման վերստութեան սրբութեանն՝ արժանի լինիցին պարգեւաց Հոգւոյն, լինել տաճար օթևանի սրբոյ Երրորդութեանդ: Հաստատուն և անխախտ և անբիծ պահեա զսոսա ի Հաւատս՝ յոր և կոչեցեր, զի աչալրջութեամբ արժանի լինիցին Հանդիսել միածնի քո, յորժամ գայ վարձք քո տալ զկենդանիս և զմեռեալս:

Եւ իբրև կատարեաց զաղօթսն և վերատաքեաց զամէնն, յայնժամ ասէ ցնոսա. Կամիք ընդունել զՀնարհս աստուածային պարգեւացն՝ եթէ Հաւատով խնդրեք յաղաւթս որոյ աստուածէքն: Եւ նոքա գոչեալ անհանգիստ առաջի նորա և աղաչէին տալ նոցա զպարգեւս Հոգւոյն սրբոյ. զի ի ձեռն լուացման վերստութեան սրբութեանն՝ արժանի լինիցին պարգեւաց Հոգւոյն, լինել տաճար օթևանի սրբոյ Երրորդութեանդ: Հաստատուն և անխախտ և անբիծ պահեա զսոսա ի Հաւատս՝ յոր և կոչեցեր, զի աչալրջութեամբ արժանի լինիցին Հանդիսել միածնի քո, յորժամ գայ վարձք քո տալ զկենդանիս և զմեռեալս:

Եւ եղեալ ձեռն՝ի վերայ նոցա, տեառնապրեաց ըզնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, որ տուեալ է հաւատացելոց՝ի Միածնէն՝ի սրբութիւն և՝ի փրկութիւն անձանց։ Եւ կատարեալ զամենայն խորհուրդ վկրտութեանն տնօրինական խորհրդոյն և օրհնեաց զնոսա, և հանդերձ նոքօք վտառաբանութիւն վերատաւթեալ Սատուծոյ Հօր և միածնի որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, և կենդանարար աննեռազօր Հոգւոյն սրբոյ, քաջալերէր զնոսա և ասէր. Երթ ցսուք որդիք իմ և եղբարք, զոր՝ի Քրիստոս Յիսուս աւետարանեան ծնայ, զի և դուք արժանի լինիցիք վկայ կանհաւատակութեան, և ես պարծանս լինիմ հաւատացեալ՝ի Քրիստոս Յիսուս, ասելով համարձակութեամբ, թէ՝ Ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Սատուած։ Եւ հաւատացեալ եղբարքն հանդերձ նոսիաւ գնացին զՀանապարհայն բերկրալից ուրախութեամբ պատրաստեալ զինքեանս քաջ արիութեամբ, և զի և ինքեանք նմանապէս երանելոյն՝ի հանդէս նահատակութեան մոցեն, և վասն Քրիստոսի զաւետեան նայն չարաչար նեղութիւնս յանձն առցեն. որում և հասին իսկ բարւոք և գովելի ցանկութեան՝ որ յաղագս Սատուծոյ էր և աստուածայնոց երկնից բարութեանցն։ Եւ՝ի մտանելն նոցա ընդ դուռն քաղաքին՝ լուան չարախօսքն զգալուստ սրբոյն Անթիմոսի, և գնացեալք ընդ այդն ընդ առաւօտն մինչդեռ նստէր յատենական բեմին ամբարիշտն Մաքսիմիանոս, ծանուցին նմա թէ եկն այրն այն՝ որում՝ի խնդիր էր քո։

Յայնժամ հրամայեաց թագաւորն բերել զսուրբն առաջի բեմին իւրոյ յատեան դատաստանի. այլ նա զիւրաքանչիւր յինքենէ հաստատեր՝ի հաւատս Քրիստոսի, յանձն առնելով զնոսա Տեառն և բանիւ ընտրեցեալ յոլ հաւատացին։ Եւ արարեալ զինեքեան Քրիստոսի՝ի դէմս իւր սուրբն Սատուծոյ, այնպէս եկեալ համարձակապէս մերձ՝ի բեմն Մաքսիմիանոսի անօրինի, առ ինքեան ունելով զձեռս իւր և խոնարհ զբերեան, և՝ի վեր յերկինս զյոյս ատացեալ՝ բուռն հարկանէ զխոստովանութենէ օրհնելով զՍատուած և առլմնա ասելով այսպէս. Ցնծութիւն իմ, փրկեա զիս

յայնցանէ՝ որք պաշարեցին զնա՛ ի միասին։ Եւ շուրջ կալով բազմակոյտ սաքեղեն՛ ի հանդիսին յորում հարցասիրաբար սուրբն Անթիմոս։ Եւ եղև՛ ի մեռանել ամանց՛ ի բազմութենէ ընթացրելով զինամեանս, յայն ժամ հրամայեաց Մաքսիմիանոս բերել զամենայն գործարանս տանջանացն։ Այլ բերեալ լսելին յաւուր ջադոյն անուք հրացեալք երկաթիք, և զինն սուսերք երկայրի սայրատուրք ծայրիւք. և տապակք եռանդեալ նաւտոյտք բոլբոջմամբ՝ լցեալ ձիթով. բեւեռք սուսերք երկայնագոյնք, ջալոտիք արջառաջլաց, և մահակք փշալից, հօշիկք պղնձիք հրացեալք աստիճանագոյնք, սաղաւարտք հրատեսակք և այլ պէս պէս զանազան գործի տանջանաց։ Զորս լսելով եաես զայս ամենայն գործարանս մեքենայիցն սուրբն Անթիմոս, ծաղր առեալ արհամարհէր ասելով. Այլեօք պակասեալ լինի՛ ի քէն տանջարանացդ զոր եղբայրն քո Անտիոքոս հնարեցաւ ընդդէմ Մակաբայեցւոց, որով և ինքն յաղթեալ եղև. այլ այն որ առնօքն ներգործեաց՝ զի մի՛ զհայրենի առանդն ուրասցի, և առ իմոյն ևս առաւել ներգործեսցէ, զի այնպէս և ես յաղթեալ քում չարութեանդ՝ անխարդախ և անբիծ հաւատովք զքահանայութիւնս իմ պահեցից Աստուծոյն իմոյ։

Յայնժամ յասմամբ և բարկութեամբ լցեալ անպատուիշան Մաքսիմիանոս՝ ասէ սուրբն. Դու ես Անթիմոս այն չարամոլութեան կցորդակից և վարդապետ Գալիլեացւոց օրինացն, և հայհոյիչ անմահից աստուածոյն, որ մեռոհապատիր առասպելաբանիւք ուսուցանես զմարդիկ՛ ի քոց կալ և ապստամբել յաստուածոյն բարեպարութենէն։ Այլ կանխաւ լուր ինձ, զի ես մարդ եմ յոյժ դժնդակ և լցեալ յասմամբ, և ա-
հաւադիկ տես զգործիսդ տանջանարանացդ զոր պատրաստեալ եմ վասն քո, և երկիր լինիցին և մաղուցեալ զհնեա բարեբար և անմահ աստուածոյն։ Եւ սուրբն Անթիմոս բացեալ զբերան իւր՝ արարեալ զինիք Քրիստոս, ասէ. Թագաւոր Մաքսիմիանէ, ես իսկ կամիմ և ոչ քեզ պատասխան տալ, այլ քանզի աստուածայինն առաքեալն ուսուցանէ մեզ պատրաստ գոլ ամենայնի որ հարցանէ, վասն այնորիկ և ես ասացի քեզ պատաս-

խանել, ունելով զխոստովանութիւն Գրիգորոսի որ ասէ. Մի հոգայք զինչ խօսիցիք կամ զինչ ասիցէք. զի տացի ձեզ բերան և իմաստութիւն որում ոչ կարիցեն տալ պատասխանի ամենայն հակառակորդքն ձեր. քանզի ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիք այլ Հոգի Հօր ձերոյ խօսիցի՝ ի ձեզ. վասն որոյ լուր ինձ, ո՛վ Թադեաւոս, զի սակս տանջանացդ որով սպառնաս ինձ, ոչ երկեայց՝ ի քէն, քանզի ունիմ Աստուած յերկինս որ աջակար զամենայն բանիս, որ և առացն մարգարէին, թէ Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն յերեսաց իմոց. զորս խուսս և կոյրս կոչեմ և պղծութիւն աւերածոյ անուանեմ, և ոչ երբէք զնոսա աստուածս խոստովանեցայց։

Մաքսիմիլիանոս ասէ. Գիտեմ զի այժմ ոչ կամիս հաւանել և զոհել աստուածոցն. այլ յորժամ տեսանես զմարմինդ մաշեալ և ոչ ոչ կատարեալ զամենայն անդամս մարմնոյդ՝ յայնժամ հաւանեացիս իմոց հրամանացս։ Սուրբն ասէ. Մի խաբիր, ո՛վ Թագաւոր, եթէ զոհեմ մտամի և խաբեբայ աստուածոցն քոց՝ որ դրոշեալ կռածոյք հաստատեալ են ի ձեռաց դիւապատիր և անպարիշտ մարդոց։ Ցայս իբրև լուաւ անօրէնն Մաքսիմիանոս՝ հրամայեաց քարամբ խորտակել զկուռս նորա, և վէմս առնուլ ի վերայ նոցա։

Յայնժամ սուրբն Անթիմոս բացեալ զբերան իւր սկսաւ անարգել զանօրէնն Մաքսիմիանոս և ասէ. Հարկանելոյ է զքեզ Աստուած, ո՛վ գազան չարագոյն, արբանեակ սատանայի և նման եղբօրն քումմէ Հերոմի՛ որ զինարին գործն ընձեռեցեր։ Եթէ ոչ գիտես զի ի ձեռն քարակոշիկ լինելոյս՝ եւս լինձ հաւանարձակութիւն նմանող լինելով նախաւկային Ստեփանոսի, որ զբազմութիւն քարանցն որպէս զծաղիկս վարդի ժողովէր, զի և ես ի ձեռն սոցունց զարկուածոց քարանցս՝ ձոխացեալ լցայց անուշահոտութեամբ, ի բաց լքանելով զժահահոտութիւն դիւաց։ Դարձեալ ասէ ցնա Մաքսիմիանոս. Հաւատա ինձ այսուհետև, և զոհեա աստուածոցն, ապա թէ ոչ՝ առաւել ցաւմամբ չարչարեսցես զիս ի վերայ քո, և զայրացմամբ վարեցայց ի վերայ քո ստահակացն քան զառաջինն։ Պատաս-

Լանկի եւ սուրբ եպիսկոպոսն Անթիմոս և ասէ ցբռնաւորն. Արա վաղվաղակի զոր ինչ և կամիցիս և մի յապաղեր, այլ հպատակ լեր դու հօրն քումմ սատանայի. քանզի և նա՝ ի սկզբանէ մարդասպան էր. անեբևոյթ պատրանօք խաւարային, որ և՝ ի քէն մահն ստուգապէս ոչ է հեռի, այլ մերձ ես՝ ի վախճան։

Եւ բարկացեալ Թագաւորն Մաքսիմիանոս հրամայեաց՝ ի յօդս ոտից նորա հրացեալ երկաթս ագուցանել։ Իսկ երանելին Անթիմոս զձեռս և զաչս յերկինս ամբարձեալ՝ սկսաւ աղօթել այսպէս. Միածին Որդի Աստուծոյ Յիսուս Քրիստոս, լոյծ նախայաւիտեան, փառք և տպաւինութիւն որոց զկոյսն եղեալ ես՝ ի քեզ, խաղաղական նաւահանգիստ նաւակոծելոց որք ծփեալ են՝ ի ծովու մեղաց՝ պատրանօք յաւիտենական, որ սրբոց քոց առաքելոցն՝ ի ձեռն համբերութեան պարգևեցեր զընտրեալ Հոգւոյն սրբոյ. առ քեզ կարդամք որ յամենայնի հասեալ ես՝ ի թիկունս՝ քոյով անհասանելի և անպատմելի զօրութեամբդ, և այժմ ևս առատօր կատ անմիջելի մերձաւոր, և զամենայն իսկ ընտրս ամենաբաւական ողորմութեամբ քով։ Տուր ինձ համբերութիւն, զի յաղթեցից բանսարկու բռնաւորին, զի դու ես Տէր Աստուած միայն, որ ծանուցեր զաստուածութիւնդ քո ամենայն տիեզերաց, և դու յանգոյութենէ՝ ի գոյութիւն ածեալ յօրինեցեր, և տաս յաղթութիւն երկիւղածից քոց նուաստիկ քումմէ, ըստ խոստման քոյ ասելով. Ահա եւտու ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս և զամենայն զօրութիւն թշնամւոյն։ Եւ զայս ասելով սրբոյն վկային ամենևին առ ոչինչ համարեալ զսանձանան բռնաւորին Մաքսիմիանոսի։

Յայնժամ դարձեալ հրամայեր անպարկշտն խոտաւել անօթ բրտի և տարածանել՝ ի ներքոյ կողից նորա, և՝ ի վերուստ մահակօք վայրենաբար հարկանել. և զայսպիսի տանջանս չարչարանաց կրեալ նորա սկսաւ աղօթել այսպէս. Քրիստոս, զոհանամ զքէն՝ զի ածեր զզեցուցեր ինձ զօրութիւն՝ ի պատերազմի, զի ընդդէմ նմին կարենայցես զոտս ամենայն յարուցեցոյն՝ ի վերայ իմ, և դիցես զնոսա՝ ի ներքոյ իմ, և զթշնամին իմ տայես ինձ առ՝ ի ներքոյ ոտից իմոց,

և զաեւելման արմատախլեալ խորասոյզ կորուսցես։ Պատասխանի առեալ Թագաւորն ասէ ցնա. Ո՛վ պիղծ դա և երկից Թշուառական, զիտէր առեր զառանց ջանացն և ոչ խրատեցար։ Եւ առլըն ասէ. Ամենայն պիղծդ և մարդատեաց Թշնամի երկնից իրաւանցն, ոչ դադարես՝ ի Թիւրելոց զաւղիլ Ձանապարհն Աստուծոյ. արդ դա խակ լուծեալ պարտեացիս առ յինէն մարտակցաւն իմով Տերամբն Յիսուսիւ Քրիստոսիւ։ Ահա ես օր ըստ օրէ զօրացեալ լինիմ ընդհիւ նորա որ յիս. վասն որոյ և ոչ զգամ տանջանացս։ Եւ առեալ բիշան Մաքսիմիանոս լցեալ բարկութեամբ և սրտմըտութեամբ, հրամայեաց հրացուցանել զիօշիկան սղբնձիս և արկանել յոտս նորա։ Եւ ծառայն Աստուծոյ Անթիմոս նահատակեսոն՝ համբարձեալ զաչս իւր յերկինս՝ եռես զիտաւն Աստուծոյ զի հոգանէ լինել նմա, և ձայն՝ ի վերուստ լսել լինել բազմութեանն զի ասէր. Զօրացիր և քաջ լեր ծառայ իմ Անթիմոս, զի ես ընդ քեզ եմ մինչև յաղթեացես բանսարկուս բռնաւորին. Եւ երկից երանելին զօրանայր՝ ի ձայնէն որ եղեւն առ նա՝ ի վերուստ. և ուրախութեամբ ասէր. Գոհ ես համբերութիւն իմ Տէր, Տէր յոյս իմ՝ ի մանկութենէ իմմէ, և քեւ օրհնութիւն իմ յամենայն ժամ։ Խակ իբրև եռես բռնաւորն՝ խրախուսեալ և համարձակեալ Տեառնէ՝ հնանայր, ասէրն՝ ի սրտի իւրում և ասէր. Արդ այդ չարագործ էր, զի յայնքան և յայնպիսի զանազանեալ տանջանաց ոչ առ ըզդայութիւն, այլ առակաւին զուարթացեալ է։

Եւ երանելի նահատակն Քրիստոսի ասէ ցնա. Անհաւատ տմարդի և եղկելի քան զամենայն կենդանի, տեսանես առն յանդիմանն զզօրացուցիչն իմ զԱստուած, զկարողն յամենայնի, զի կորուսանէ զքեզ և զաստուածդ քո՝ ի միում աւուր, և վասն այնորիկ ծիծաղեցայ։ Եւ Մաքսիմիանոս լցեալ ցասմամբ մեծաւ, ՚ի մոլորութիւն եկեալ՝ պատուեաց զԹագաւորական պատմուճան իւր, և կրկռեալ զատամունս իւր հրամայեաց զսուրբն մերձեցուցանել յանդուն. և պատուխանեալ սուրբն Անթիմոս ասէ. Ո՛վ Թագաւոր, տրամիս և զատամունդ կրկռես, զի լցի քանն մարգարէին որ ասէ, Թէ՝ Զատամունս իւր կրկռեցէ և հա-

լեալ. և ցանկութիւն մեզաւորաց կորնչէ. այլ պատուիրել զպատմուձան թագաւորութեանդ քո. վասն զի դու զսուրբ նահատակս նորա ընդ ձմլանօք և ընդ դառն տանջանօք արկեր:

Յայնժամ հանին զսուրբն յանիւն. և հրամայն տալ բռնաւորն զինուորացն զամբարս ջահից ունել՝ ի ձեռս իւրեանց, և՝ ի հոլովել անուագն շարամերձեալ՝ ի մարմինն նորա՝ զի անձկացեալ՝ ի դժնդակ տանջանացն և՝ ի տապոյ ջահն հրատեսին՝ վաղվաղակի աւանդեսցէ զհոգին: Եւ զինուորքն փութանակի կատարէին զհրամայեալսն յամպարշտէն: Իսկ սուրբ վկայն Քրիստոսի ցօղով սուրբ Հոգւոյն զոլացեալ ասէր. Գոհանամ ըզքէն Աստուած ճշմարտութեան և հայր ողորմութեան, որ զհրեշտակ քո առաքեցեր առ երիս մանկունսն՝ ի Բաբելոն՝ ի միջոց հրոյն՝ և փրկեցեր զնոսա, և զանօրէնն Գաղղէացին հրոյ աւանդեցեր՝ վասն անհաւատութեան իւրեանց. այսպէս ցոյց և այժմ զինշան պատնէշ լեաց քոյ՝ ի մէջ անօրէնն կռապաշտից, և դարձո զսուրբ ծառայ՝ ի պաշտօնեայս նորա. զի ծանիցեն և հաւատասցեն զի դու ես պաշտպան իմ Տէր՝ որ փրկես զծառայսն՝ ի քեզ. Զայսոսիկ ասելով նորա դարձան ծոցք ջահից առ պաշտօնեայս անօրինին և այրէին չարաչար կիզմամբ, և դաժարեաց յանկարծակի աւնիւն, և զինուորքն զգետնի զարկան. և տեսեալ Թագաւորին զդատարուժն անուշն, համբարձ զգեղարդն իւր՝ ի վերայ նոցա զի սպանցէ զնոսա, ասելով այսպէս. Ո՛վ չարք և վատաշուէքդ՝ ի պաշտօնեայսն իմ և արհամարհք՝ ի զինուորական կարգին, ընդէ՞ր տուն դատնեցէք պատուիրանաց իմոց և արհամարհեցէք զինքնակալ զօրութիւնն իմ: Եւ նորա յարուցեալ՝ ի ջաց ընկերացին զջահն՝ ի ձեռաց իւրեանց, և առին ցԹագաւորն. Ո՛վ արքայ քաջ և բարեբար, տեսաք մեք արս երիս՝ ի հանդերձս լուսաւորս ասելով մեզ. Ձի կայ ձեր և վկայէ Աստուծոյ. Թոյլ տուք ծառայիդ Քրիստոսի Աննէ իմոյն. զի դա արդեօք յաղթող լեցի՝ ի վերայ բռնաւորիդ. քանզի՝ ի քոյ ձգեալ Թողու դա զառաքինեայ կեանս և փոխադրել եղեալ կենացն յաւիտենից: Ձի յորժամ անօրէնն պաշտօնեայքդ պատասխան առնէիք ծառայիդ Աստուծոյ զտանջանարանն

առ՝ի վանել զարդարն պէտս տանջանաց, անդուստ պատկ և բրաբիոնք առաքինութեան վկայիդ Աստուծոյ պատրաստեալ եին։ Վասն որոյ, ով Թագաւոր, ոչ հաճմարձակիմք առնել զհրամայեալն՝ ի քումմէ լինքնակալութենէդ, զի քոց հրաւիրանաց տոչորեալ հարկանէ զերեսս մեր, և լալոյ մարմնոյ մերոյ հատեալք լինիմք, և ուղիղք գլխոց մերոց խոցոտեալք, և հոգիք մեր արտաքս ելանեն՝ ի մարմնոյս, և ոչ համբերեմք տանջանացս զոր կրեմք յանելուածէն։ Իսկ այրս այս կրկ և ոչինչ, զի դու տեսանես զնա՝ ի վերայ անուցն ձգեալ, այլ մեք տեսանեմք հանդերձ երեք արամբք լուսազգեստիւք յաղթապզեաց եղեալ, ոչ ևս ի՛նչ կրեալ՝ ի խոշտանգանացս տանջանաց։ Այլ սակայն և վասն քոյ հրամանն պատասխանւոյ ընկալաւ զի պատուհասեսցիս զու։

Եւ ծանուցեալ արքայի եթէ չէմարիտ են առաջեալքն՝ ի վինուորացն՝ հրամայեաց զսուրբն ի՛ջուցանել՝ ի զելարանաց անուցն։ Յայնժամ արքոյ եպիսկոպոսին Անթիմոսի ամբարձեալ զաչս իւր յերկինս՝ եառս ըզվարան Աստուծոյ. և տարածեալ զսուրբ ձեռս իւր աղօթս մատուցանելով ամենատեառն մերոյ. Տէր երկնի և երկրի, որ՝ ի ձեռն քազում գթութեան քոյ առաքեցեր զմիածին Որդիդ քո լուսատու և փրկիչ աշխարհի, զի այնպէս՝ ի ձեռն նորա ծանեաք զքո անՀաս աստուածութիւնդ. վասն որոյ զառեալք յուսոյ մարդասիրութեանդ՝ ընդունեայ զաղաչանս ծառայիդ քոյ, և տուր ինձ զհատուցումն զոր խնդրեմ ի քէն։ Եւ ասէ ցսուրբն Աստուած՝ ասէ՝ ի վանել զարդարն պէտս տանջանաց, անդուստ պատկ և բրաբիոնք առաքինութեան վկայիդ Աստուծոյ պատրաստեալ եին։ Վասն որոյ, ով Թագաւոր, ոչ հաճմարձակիմք առնել զհրամայեալն՝ ի քումմէ լինքնակալութենէդ, զի քոց հրաւիրանաց տոչորեալ հարկանէ զերեսս մեր, և լալոյ մարմնոյ մերոյ հատեալք լինիմք, և ուղիղք գլխոց մերոց խոցոտեալք, և հոգիք մեր արտաքս ելանեն՝ ի մարմնոյս, և ոչ համբերեմք տանջանացս զոր կրեմք յանելուածէն։ Իսկ այրս այս կրկ և ոչինչ, զի դու տեսանես զնա՝ ի վերայ անուցն ձգեալ, այլ մեք տեսանեմք հանդերձ երեք արամբք լուսազգեստիւք յաղթապզեաց եղեալ, ոչ ևս ի՛նչ կրեալ՝ ի խոշտանգանացս տանջանաց։ Այլ սակայն և վասն քոյ հրամանն պատասխանւոյ ընկալաւ զի պատուհասեսցիս զու։

Եւ ծանուցեալ արքայի եթէ չէմարիտ են առաջեալքն՝ ի վինուորացն՝ հրամայեաց զսուրբն ի՛ջուցանել՝ ի զելարանաց անուցն։ Յայնժամ արքոյ եպիսկոպոսին Անթիմոսի ամբարձեալ զաչս իւր յերկինս՝ եառս ըզվարան Աստուծոյ. և տարածեալ զսուրբ ձեռս իւր աղօթս մատուցանելով ամենատեառն մերոյ. Տէր երկնի և երկրի, որ՝ ի ձեռն քազում գթութեան քոյ առաքեցեր զմիածին Որդիդ քո լուսատու և փրկիչ աշխարհի, զի այնպէս՝ ի ձեռն նորա ծանեաք զքո անՀաս աստուածութիւնդ. վասն որոյ զառեալք յուսոյ մարդասիրութեանդ՝ ընդունեայ զաղաչանս ծառայիդ քոյ, և տուր ինձ զհատուցումն զոր խնդրեմ ի քէն։

Եւ ծանուցեալ արքայի եթէ չէմարիտ են առաջեալքն՝ ի վինուորացն՝ հրամայեաց զսուրբն ի՛ջուցանել՝ ի զելարանաց անուցն։ Յայնժամ արքոյ եպիսկոպոսին Անթիմոսի ամբարձեալ զաչս իւր յերկինս՝ եառս ըզվարան Աստուծոյ. և տարածեալ զսուրբ ձեռս իւր աղօթս մատուցանելով ամենատեառն մերոյ. Տէր երկնի և երկրի, որ՝ ի ձեռն քազում գթութեան քոյ առաքեցեր զմիածին Որդիդ քո լուսատու և փրկիչ աշխարհի, զի այնպէս՝ ի ձեռն նորա ծանեաք զքո անՀաս աստուածութիւնդ. վասն որոյ զառեալք յուսոյ մարդասիրութեանդ՝ ընդունեայ զաղաչանս ծառայիդ քոյ, և տուր ինձ զհատուցումն զոր խնդրեմ ի քէն։

Եւ Մաքսիմիանոս ցասուցեալ մեծաւ սրտմտութեամբ ասէ ցսուրբ վկայն Քրիստոսի. Մինչև յե՞րբ ոչ դադարես՝ ի շաղակրատելոյ առասպելաբանութեանդ, կարծելով շահաստութեամբ Հոգւապրել՝ ի ձեռաց իմոց. արդ Հաւանեա և զոՀեա աստուածոցն, ապա թէ ոչ սրոյ մատնեցից զքեզ։ Եւ սուրբն Աստու-

ծոյ յաղագս որոյ լուեալ՝ խնդալից եղեալ ասէ. Թուէ քեզ՝ի ձեռն սրոյ սպառնալեաց զարհուրեցուցանել զիս, այլ ես առաւել վաղվաղակի ցանկամ ելանել յապականացու մարմնոյ աստի և մտանել առ Ա.Տ. տուած՝ առ որ անձկացեալն եմ, և մանն ժառանգու. թեան գտանել յաւերժական արդարոյ. վասն այ. նորիկ համբերեմ՝ զի նա որ զօրացուցանէ զիս, զի հանդերձ երկու բնութեամբն երթեալ առ նա պարծեցայց համարձակութեամբ ասելով, թէ՝ Ահաւասիկ ես և մանկունք իմ զոր ետ ինձ Ա.տուած. զի էին և նոքա՝ի հօտէն իմմէ, զոր կարծէիր թէ սպանեալ իցես. զոր երկնային Ա.տուած հովիւն քաջ նուաստութեան իմոյ հաւատաց. զի այսպէս ասացից և ես համարձակութեամբ, թէ՝ Ջոյս եաւար ինձ՝ ոչ կորուսից՝ի նոցանէ և ոչ զոք:

Նակ ասօրէնն Մաքսիմիանոս խնացեալ թէ խնդալից եղեալ սուրբն Ա.նթիմոս՝ վասն՝ի ձեռն սրոյ պատուհասին զոր հանդերձեալն էր կրել, ասէ ցնա բռնաւորն. Գիտեմ զի ուրախ եղեր վասն հանդերձելոյ վերծանել քեզ՝ի ձեռաց իմոց ըստ փոխելութեան քումմ. այլ ոչ տաց քեզ վաղվաղակի վճիռ մահու, այլ չարաչոյն և անողորմ տանջանօք և հարուածօք մաշեցից զմարմինդ, որպէս և արժանի իսկ ես, և յայնժամ առանդեմ զքեզ պատուհասի՝ի ձեռն սրոյ: Պատասխանի ետ սուրբ եպիսկոպոսն և ասէ ցնա. Երթ զանգիտելով՝ի մահուանէ խոստանաս զայդպիսիսդ. արա վաղվաղակի զոր ինչ կամիս, անօրէն: Բանզի ոչափ ես համբերութիւն առանամ՝ի տանջանս, այնպէս յա. ճախապէս Ա.տուած փառաւորեալ լինի. և ինձ տա. ցէ համբերութիւն՝ վասն յուսոյ իմոյ որ առ նայն է. այլ դու ոչ ես ձողսարեալ՝ի դատաստանաց Ա.տուծոյ՝ այրմամբ զեհենայն: Եւ ասէ ցնա Մաքսիմիանոս. Ա.րդ արդեօք ոչ կարեցեմ ձգել այսուհետև զքեզ առ պատշաճն՝ իշխանութիւն ունելով՝ի վերայ քո: Եւ սուրբն Ա.նթիմոս ասաց. Ո՛չ ունիս իշխանութիւն՝ի վերայ իմ և ոչ մի ինչ՝ եթէ ոչ Ա.տուած ներեալ էր, զի ցուցցէ քեզ թէ որպիսի նահատակս ունի որ յաղ. թեացեն քեզ, և բանտարկութիւն որ զգեցեալն է զքեզ. զի ծառայակից և արբանեակ ես դու նորա կամացն

օտարացեալդ ՚ի Տեառնէ և Թշնամի արդարութեան. առ քոյին անօրինութեան գործովդ գանձեցեր քեզ զանիկ հուր գեհենին՝ որ կայ և պահի ամենայն ամբարշտաց և մեղաւորաց՝ քև հանդերձ, անանց և անվախճան տանջանացն։

Յայնժամ հրամայեաց անօրէնն գարձեալ տանջել զնա և միանգամայն դնել ՚ի բանտ, և զտաս նորա պընդել ստուար երկաթիւք, և արկանել անուր ՚ի պարանոց նոց նորա և զգուշութեամբ պահել։ Եւ գնալով Բրիհատոսի զինուորին ՚ի բանտն՝ մեծաւ ուրախութեամբ և ցնծութեամբ, և աղօթէր յարփելանի բանտին այսպէս ասելով. Յիսուս Քրիստոս նախայաւիտեան ծընեալ Հօր, որ զամենայն յոչէից ՚ի գոյութիւն ածեր, և հայրենի կամօք յերկինից իջեալ և առեր մարմին ՚ի սրբոյ կուսէն Մարիամայ, և ՚ի ձեռն նորին մարմնոյն զքեզման աստուածային ներգործութեամբն գուցեր արուեստս և նշանս աքանչելեաց քոց. և զբեալդ ամենայն ՚ի տառս մարգարէիցն լցեալ կատարեցեր, խաչեալ կամաւորաբար և խաչակցեալ զիմ զմեղս, յարուցեալ երրորդ աւուր զօրութեամբ և իշխանութեամբ, և մեզ յոյս յարութեան պարգևեցեր վասն բազում բարեգթութեան քո, ոչ անտես առնելով զապգա որդոց մարդկան զմեղօք մահացեալքս։ Եւ այժմ, Տէր բարերար, ՚ի հասեալ ժամուս յառաջեա նախ քան զմտանելն իմ ՚ի բանտ, և տուր ինձ քան վարդապետութեան առ լուսաւորել զաստանօր զկալանաւորս զմբռնեալ ծառայքս քո, զի խաւարն ՚ի քէն ոչ խաւարեցի, և զիշերն որպէս տիւ լուսաւոր եղիցի՝ հնազանդեալ քոյոյ հրամանին։

Եւ ընդունեալ էին զերանելին անօրէն ապաստաւորք բռնաւորին և կապեալ երկաթեղէն կապանօք։ Յայնժամ տեսանէին զնա լուծեալ ՚ի կապարանէն և առաջնորդեալ ՚ի լուսազգեաստից ոմանց, զորոց և զբէմն տեսանելով զինուորացն՝ յերկիր անկանէին և ոչ կարէին հայել ՚ի նոսա։ Ա՛լ սուրբն Աստուծոյ Անթիմոս յարուցանէր զնոսա ասելով. Արիք, կատարեցէք զհրամայեալն ձեզ ՚ի բռնաւորէն։ Եւ նորա յարուցեալ զՀետ նորա երթային հետաստանէ դիտելով զնա, և զարհուրեալք յերկիւղէ սպառնալեաց բռնա-

ւորին. և մեռեալ սուրբն Անթիմոս ՚ի քանան գոհու-
թիւն մատուցանէր, և յաղօթեալն իւրում՝ այսպէս ա-
սէր. Տէր Աստուած արարիչ և հաստիչ ամենայն եղա-
նութեանց, հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.
գոհանամ զքէն զի արժանի արարեր զանարժանու-
թիւնս իմ ՚ի ձեռաց բանաւորին զվէիս մահու ընդ-
ունել ըստ նմանութեան ամենօրհնեալ երանեալ կա-
տարելոյն և Յովհաննու մկրտչին, զի ես հանդերձ նո-
վաւ ՚ի ձեռն ջուրհայց քոց հաւատովքն և ա-
ջակցութեամբք զուարթերես կացից ընդ սուրբս և ընդ
սիրելիս անուան քո՝ յաւուր գալստեանն Միածնի քո
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ ամենեցուն որ
ընդ նմա ՚ի քանտին արգելեալք էին վարդապետէր
սուրբն և ուսուցանէր զկարգ բարեպաշտութեանն, և
հաստատէր ՚ի քրիստոսական հաւատոյն, ասելով, թէ
՚ի ձեռն բազում նեղութեանց պարտ է մեզ մտանել
յարքայութիւնն Աստուծոյ։ Եւ նորա առ ոտս նորա
անկանէին, արտասուապոչ պաղատանօք աղաչէին՝ աս-
ելով. Ծառայ Աստուծոյ բարձրելոյն, դու ՚ի դիպողու-
թեան քում հանդիսպեցար որում ցանկացեալդ էիր ՚ի
վաղուց հետէ, և զբարւոք զընթացսն կատարեցեր.
այլ մեք տակաւին դեռ ևս յաշխատութեան ձգտունս
կամք. վասն որոյ աղաչեա վասն մեր զՏէր՝ զի տացէ
մեզ զպարգևս Հոգւոյն սրբոյ, զի և մեք արժանաց-
ցուք զկնի բարւոյն և քաջ հովուիդ հետևել, ՚ի հան-
դիսումն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Եւ էր նա ՚ի քանտին սաղմոսելով և գոհանալով
զանապատում պարգևացն Քրիստոսի Աստուծոյ, և քա-
ջալերելով զհաւատացեալսն ՚ի Քրիստոս, որք էին ընդ
նմա արգելեալք ՚ի քանտին։

Լուաւ Մաքսիմիանոս անօրէնն՝ թէ և անդ զկարգս
և զկրօնս քրիստոսական հաւատոյն ուսուցանէր սուր-
բն Անթիմոս, և առաքեաց կոչեաց զնոսա։ Եւ երկին
զինուորքն ՚ի քանտն տանել զսուրբն յաւուր գատա-
ւորին. և սուրբն Անթիմոս խոնարհեցուցեալ ծունր
հանդերձ այնոքիւք որ ՚ի քանտին կալանաւորքն էին,
աղօթս առնէր ՚ի սրտի իւրում. և առացեալ սուրբն
զամենեսեան՝ եդ զձեռն ՚ի վերայ և յանձն արարեալ զին-
ա Հոգւոյն, և այնպէս արարեալ զինուքն

Ֆրիատան՝ ելեալ՝ ի բանտէն ցնծութեամբ և ուրախութեամբ եկն եկաց առաջի Մաքսիմիանոսի։

Այն ցնա սիրդ բռնաւորն. եւ արդ ևս ոչ դադարեցեալ՝ ի մոլորութենէդ քումմէ, և ոչ խրատեցար՝ ի բանտին լինելով զայնքան աւուրս. արդ հասանեա ինձ և զհեա աստուածոցն, և արարից զքեզ բարձրագոյն քահանայապետ։

Այն ցնա սուրբն Անթիմոս. Քահանայապետ եմ ես Աստուծոյ բարձրելոյն՝ քահանայապետութեն յաւիտենից, և նմա զհեմ զոհ օրհնութեան անարիւն և առանց ձենձերաց. այլ դիւաց որ մոլորեցուցանեն զքեզ՝ ի ձեռն անշունչ քարանց՝ ոչ զհեմ։ դու քար գոլով՝ քարանց երկիր պագանես, և զոքա՝ ի դատաստան ոչ եկեսցեն զի անզգայք են. այլ դու անօրէնն դատապարտել ինքնին՝ ի դեհեանն երթիցես, որ պատրաստ է հօրն քումմէ սատանայի և հրեշտակաց նորա. զի բանաւոր գոլով Թողեր զարարիչն քո և երկրագուն Թագաւորութեանդ քո, զոր վասն անօրէնութեանդ քո՝ ի բաց բառնայ՝ ի քէն Աստուած, և յորդոնան մատնէ զմարմինդ քո՝ որ առաքինութեամբ ոչ կամեցար վարիլ։

Եւ լուեալ զայս ամենայն անիծեալն Մաքսիմիանոս՝ ի սրբոյ եպիսկոպոսէն Անթիմոսէ, ասէ ցնա. Երդեալ՝ ի փրկութիւն աստուածոցն, զի ոչ զերծցիս յայսմ աւուր՝ ի մահուանէ. քանզի կարծես պաճուճեալ և մատի բանիւքդ պատրել զմեզ և ծիծաղել զմեօք։ Եւ պատրաստեալ նորա հատուցանել զպատասխանին ընդդէմ նորա, յայնժամ սկսաւ աղօթել սուրբն Անթիմոս, ասելով. Աստուած հարցն և Տէր ողորմութեանց, որ անձառելի բարերարութեամբդ քո մատակարարես զամենայն, որ սրբոյ Հոգւոյդ քո ընտրեալ՝ պարզևես հաւատացելոց՝ ի քեզ, ի ձեռն որոյ և ինձ պարզևեցեր հաւատքդ քո, զքեզ աղաչեմ զամենեցուն զպատճառդ. խակ և զարարչդ, և զիս արժան առնել զքեզ ճանաչել. զի ես զքեզ ճանաչեցի, և զիս ար

սոցա քոյին ամենակարող զօրութեամբդ, զի մի գողայ ցեալ օձառեցէ վարատեալ՝ ի սուրբ հօտէ քումմէ։ Տակաւին զծառայս քո զխորընծայեալքս քեզ յանձն առնեմ, որ կարողդ ես պարգևել՝ ի ընտրս քո, որպէս և երկուց բիւրուցն պարգևեցեր զառ՝ ի քեզ խոստովանութիւնն. զի այնպէս անմոռաց զանուն քո, Տէր, և զՄխածնի քո յանձինս իւրեանց պահեսցեն Հոգւովդ քով սրբով։ Տէր Յիսուս Քրիստոս Աստուած մեր, զոհանամք զքո մարդասիրութենէդ, որ եկիր՝ ի խնդիր մեզ կորուսեալոցս, և փրկեցեր զմեզ՝ ի դիւապաշտ մոլորութենէ, և եառուր յաղթութիւն ընդդէմ անեծքի թշնամոյն. և արդ մեք զինչ կարասցուք հատուցանել քումմ աստուածութեանդ, բայց զանձինս մեր ընծայեմք՝ ի հօտ անուշից։

Եւ կատարեալ նորա զաղօթիւն։ Իսկ Թագաւորն զրկռեալ՝ ի չարէն և մեծաւ ցաւմամբ սրտմտեալ՝ ի վերայ դահճապետին և դահճացն, հրամայեաց տանել զսուրբն՝ ի տեղի կատափելոցն, և տաւերաւ հատանել զպարանոց նորա. և վճիռ տայ առ նա գրով օրինակ զայս. Զանթիմոս վարդապետ քրիստոնէից և մերեցուկչ Բիւթանացւոց նահանգիս, մանաւանդ Նիկոմիդացւոց մայրաքաղաքիս, վասն ընտրելոց նորա զնոսին պաշտօն Գաղղիացւոցն և հաճոյանալ Թագաւորել զկնի և յանկանալոց մնոցու, սրով հրամայէ ինքնակալութիւնս մեր բառնալ՝ ի կենացս։ Իսկ զնուագրացն և դահճապետին ընկալեալ զայսպիսի վճիռ՝ փութացուցանէին զսուրբն տանել՝ ի տեղի սպանմանն։ Եւ իբրև եհաս երանելին՝ ի տեղին՝ աղաչէր զդահճապետն զինուորօքն հանդերձ՝ զի Թողացուցեն նմա սակաւիկ մի կալ յաղօթս և Թոյլ եառնն նմա։ Յայնժամ սաղարթեաց սուրբն զձեռս իւր յերկինս և սկսաւ այսպէս աղօթել.

Տէր Աստուած, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, չեմ բաւական զոհանալոյ զառատ մարդասիրութենէդ քումմէ, որ կոչեցեր զանարժանութիւնս իմ՝ ի պատիւ և՝ ի կարգ եպիսկոպոսութեան, և սրբեցեր զիս տաճար Հոգւոյդ սրբոյ, անարատ և անբիծ պահելով զկուսութիւն սրբութեանս իմոյ. և եառուր ինձ զառաքելական զբաղաքս զայս և շուրջ զսոքօք

զբնակեալսն ի սմա, և ես ի միջի նոցունց ուղիղ հաւատեցի զբան կենսաբեր սուրբ աւետարանի քումդ Աստ ոլք հաւատացին յանուն քո սուրբ՝ պահեա զնոսա ի պատրանաց չարին, և խոստնեա ի հրեշտակաց երամն ի դաս վերին բանակացն, առնուլ զպսակն լուսոյ ընդ ամենայն սուրբս քո. և զհոգի իմ ընկալ ի հոտ անուշից պատարագ ընդունելի առաջի փառաց աստուածութեան քո՝ յարկանս արդարոց յերկինս զբեղ ոց: Տէր Աստուած հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայր գթութեանց և Աստուած ամենայն մխիթարութեանց, պահեա անպարտ զքո հաւատացեալս, և յամօթ արա զչարն գործակցօք իւրովք հանդերձ. և զիս ընկալ Տէր իմ:

Եւ կատարեալ զաղօթսն և ասացեալ զամէնն, յարեաժամ ասէ ցդահիճն. Արդ ընդէր հեղպայք, փութացիք կատարեցէք զհրամայեալն ձեզ ի բռնաւորէն: Եւ վերացուցեալ մի ոմն ի դահճացն զսուսերն ևհատ զպարանոց սրբոյն, և աւանդեաց զհոգին ի ձեռս Աստուծոյ. զի հոգիք արդարոց ի ձեռին Աստուծոյ են:

Գործեցաւ այս ի հիւպատոսէն Մաքսիմիանոսէ ի Նիկոմիդա մայրաքաղաքին Բիւթանացւոց, յամենեքեան սեպտեմբերի որ օր երրորդ էր ամսոյն Թագաւորելոյ ի մեզ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայել փառք իշխանութիւն և պատիւ, ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոյն Անտիոքի, ասւորաբար բժշկի։

Սուրբն Անտիոքոս և մեծ վկայն Քրիստոսի՝ էր բժիշկ բարեպաշտ հաւատով որ՝ ի Քրիստոս, ՚ի քաղաքն Սեբաստիա. և շրջէր յամենայն գաւառսն և ձրի բժշկէր զամենայն հիւանդսն. ոչ դեղովք և արմատօք միայն, այլ անուամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ զբազումս բժշկէր, զՀրեայս և զհեթանոսս. և փոխանակ վարձուցն զոր պարտ էր ՚ի նոցանէ ընդունել՝ յոտից բժշկէրն, տայր նոցա զպարզևս առաւածային լուսոյ սուրբ աւազանին հաւատոյ՝ որ ՚ի Քրիստոս. լուսաւորելով զամենեսեան դարձուցանէր ՚ի ճառի կուռցն մոլորութենէ։

Եւ էլ համբաւ բարեգործութեան սրբոյն ընդ երկիր ամենայն, մինչև ՚ի լսել թագաւորացն։ Յայնժամ կալաւ զնա անօրէնն դատաւորն Սեբաստոս, և բազում և ազգի ազգի տանջանօք չարչարէր զերանելին. բրովք դալարօք և քերանօք և սայրատուր եղէնք դամբք, հրկիզութեամբ այրեցին և խորովեցին զմարմին սրբոյն առհասարակ. և ՚ի կաթսայէցն որ յեռանդան էր՝ արկին ՚ի վերայ վիրացն նորա. և ոտիպէին զնա ՚ի բաց կալ ՚ի Քրիստոսէ։ Եւ նա ՚ի բազում վշտացն ոչ կարէր բանալ զբերան իւր, այլ միայն ՚ի սրտին գոհանայր և օրհնէր զՍուտուած։ Իբրև տեսին թէ ոչինչ գոլ զտանջանս, արկին զնա գազանաց ինձուց վայրենեաց. և գազանքն պատկառեալ ՚ի հրաշալի դիմացն երանելւոյն՝ ոչ մերձեցան ՚ի սուրբն, յանդիմանելով

զմոլորութիւն դատաւորին. մինչև զարհուրեալ դատաւորն ընդհեաց նմա ներումն առնուս ինչ:

Իսկ տուրքն զօրացեալ՝ ի տուրբ Հոգւոյն՝ եմուտ՝ ի տաճար կռոցն՝ ի գիշերի, և զամենայն բագինս կործանեալ խորտակեաց: Եւ զայն իմացեալ պաշտօնէից քրմաց տաճարի կռոցն՝ կալան զերանելին և ածին յատեան դատաւորին. և ոչ արկ զնա միւսանգամ ընդհարձակ տանջանաւք. զի գիտէր զհամբերութիւն նորա և զմխիթարութիւն Հաւատոյն որ՝ ի Քրիստոս. այլ նուհեաև հրամանս եառ զլխատել զերանելին: Եւ առեալ զնա դահձացն տարան՝ ի տեղի սպանմանն. և տուրքն աղաչեաց զդահիճն՝ ներել նմա մինչև կացցէ յաղօթս առ Տէր Աստուած իւր. և համբարձեալ սրբոյն զձեռս իւր յերկինս լի արտասուօք, և սկսաւ աղօթել այսպէս. Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ և Յակովբայ, Աստուած ամենայն մխիթարութեան, խոնարհեցո զունկն քո և լուր աղաչանաց ծառայիս քո: Տուր, Տէր, ինձ անվհեհեր կատարել զընթացս իմ: տուր, Տէր, ինձ զվարձս վաստակոց, զոր տուեր ինչ վաստակեցի յայգի Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի, զոր գնեաց արեամբն իւրով: Տուր, Տէր, ինձ զսակս զոր հաստեցեր յեսեին մշակացն՝ առատ քո մարդասիրութեամբդ: Լուր, Տէր, աղօթից իմոց ընդդատաստանաց ամենեցուն որք աղաչեացեն զքեզ. եթէ որ վտանգի՝ ի ծովու և՝ ի գետս և յամենայն տեղիս, օգնեա և փրկեա յամենայն վտանգից և նեղութեանց: Տուր Տէր և օրոց բարեխառնութիւն և անդոց պատաբերութիւն. փրկեալ՝ ի խորշակէ և յեղեմնածին սառամանեաց: Ընտրհեա Տէր առողջութիւն շայեկանութեան մարդկան և անասնոց և թռչնոց, զի քո են ամենայն. և քո են փառք, յաւիտեան ամէն:

Եւ նոյնժամայն ելին ձայն յերկինից առ նա և ասէ. Ամենայն խնդրուածք քո եղիցին քեզ, և դու եկեալ ըստ յուրախութիւն Տեառն քո. բացեալ են դրունք

երկնից, և քեզ պատրաստեալ է պսակ փառաց, զոր պատրաստեցեր քոյով նահատակութեամբդ։ Եւ ըզբարբառն զայն ոչ ոք լուաւ, բայց միայն Կիւրակոս դահճապետն, և հաւատաց ՚ի Քրիստոս, և նզովեաց զկուռսն։ Եւ ՚ի նմին տեղւոջ հատան գլուխք երանելեացն, Ննտիոքոս քժշկի և Կիւրակոսի դահճապետի. և բարձին զսուրբ մարմինս նոցա ժողովք քրիստոնէից։ Եւ ՚ի դադարել հալածանացն՝ շինեցին վայելուչ վիմայարան սրբոցն ՚ի Սեբաստիա մեծ մայրաքաղաքին, և կոչեցին տուրբ Ննտիոքաձէք, որ է մինչև ցայսօր։ Եւ է յիշատակ սրբոցն ՚ի յօգուտսոսի քան և հինգ. ՚ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, յոր է փառս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Աստուածի
ձգնաւորի,

Որք զբարին խորհին և հաստատուն ունին զհաւատսն առ Աստուած, յամենատուրն Քրիստոսէ պատրաստութեան պակին. քանզի ընտրեալք Աստուծոյ յայս արդարութիւն կոչին, զի զպատերազմ բարւոք պատերազմեալ հաւքերութեամբ հասցեն խոստմանն՝ զոր խոստացաւ անստուգ Աստուած սիրելեաց իւրոց և հաւատացելոց ՚ի նա յամենայն անձնէ: Յորոց մի է և երանելի վկայն և առաքինի նահատակն Քրիստոսի Աստղենիս. զբարւոք ձգնութիւնն ձգնեալ ՚ի մեծն Հռոմի, և փութացեալ յառհասանել չեայ վերին կոչմանն՝ ընդ սուրբ վկայսն Քրիստոսի համարեցաւ: Վկայեաց երանելին առաջի սիւնկղիտոսին և Տերենտի հազարապետի, պատասխանի տուեալ համարձակութեամբ. որոյ յիշատակարանքն եղեն զայս օրինակ:

Տերենտիոս հազարապետ հրամայեաց ածել զնա առաջի սիւնկղիտոսին և ասէ. Աստղենիս, ընդէր ընդդիմանաս անյաղթ օրինաց և հրամանի թագաւորաց, և ոչ կամիս զոհել աստուածոցն: Աստղենիս ասաց. Ոչ զի քրիստոնեայ եմ, երկնչիմ յԱստուծոյ՝ որ արար զերկինս և զերկիր, և ոչ զոհեմ մնոտի կուռց: Հազարապետն ասաց. Ա՛յլ պարտիս զղջանալ յայդպիսի մտաց՝ վասն հրամանաց թագաւորաց, և երդ-

նու՛լ ի բախտ ինքնակալին Կոմոդոսի: Ապողոնիոս ասաց. Լուր իմաստութեամբ պատասխանութիւն այսմիկ. Որ զղջանայ յարդար և ի բարի գործոյ, չշնորհութեամբ՝ այնպիսին անաստուած է և անիրաւ. իսկ որ զղջանայ յանօրէն գործոյ և ի չար խորհրդոյ՝ և ոչ ևս դառնայ ի նոսա, այնպիսին աստուածասէր է, և յուսոյն ակն ունի. և ես այժմ յայս միտս հաստատեալ եմ, պահել զպատգիկ և զպայծառ պատուիրանն Աստուծոյ, զոր ուսայ ի Տեառնէ իմմէ Քրիստոսէ. որ գիտէ ըզխորհուրդս մարդկան, և տեսանէ որ ինչ ի ծածուկ և յայտնի գործի: Բարւոք է ամենևին չերդնուլ. այլ ամենայնի խաղաղանալ և շնորհել. քանզի մեծ երդումն է շնորհութիւն. և այնր աղագաւ երդնուլ ի Քրիստոս տպէղծ է. այլ վասն տուեալութեան՝ [1] անհաւատութիւն, և վասն անհաւատութեան՝ երդումն. կամիմ երդնուլ շնորհութեամբ ի շնորհիսն Աստուած, եթէ և զթագաւորն սիրեմք, և վասն զօրութեան նորա աղօթս առնեմք:

Հազարապետն ասաց. Արդ մատիր զոհեա, Ապողոնի և այլոց աստուածոց և պատկերն թագաւորին: Ապողոնիոս ասաց. Վասն զղջման և երդման եւս քեզ պատասխանի. այլ վասն զոհից՝ ես և ամենայն քրիստոնեայք զոհ անարիւն մատուցանեմք Աստուծոյ, Տեառն երկնի և երկրի և ծովու և ամենայն ընչից. վասն հոգևորաց և բանաւորաց պատկերաց որք կարգեցան ի խնամոցն Աստուծոյ թագաւորել ի վերայ երկրի. վասն որոյ ըստ հրամանի աստուածգիրն պատուիրանին աղօթս առնեմք առ բնակեանն յերկինս, որ միայնն է Աստուած, զի արդարութեամբ թագաւորեսցեն յաշխարհիս յայսմիկ. հաւատի գիտացեալ եթէ ոչ յայլմէ ումեքէ այլ ի միայնոյ թագաւորէն՝ որ զամենայն ի ձեռին ունի Աստուած. և նա եկաց թագաւոր:

Հազարապետն ասաց. Մի թէ փիլիսոփայէ կոչեցար այսր. Թոյլ տուեալ քեզ օր մի, զի զմտաւածեալ զօգուտն՝ խրատ տացես քեզ վասն կենաց քոց: Եւ հրամայեաց տանել զնա ի բանտ:

1. Այլ օր. այլ վասն անհաւատութեան պատճին:

Եւ յետ երից աւուրց հրամայեաց ածել առաջի, և ասէ. Ջ՞ինչ լսրատ եաու քեզ։ Ապողինիոս ասաց. Կալ ինալ աստուածապաշտ՝ որպէս և յառաջն ասացի։ Հաջարապետն ասաց. Վասն հրամանի սիւնկղիտոսին լսրատ տամ քեզ զղջանալ և զոհել աստուածոց՝ որոց ամենեքեան երկիր պագանեն և զոհեն. քանզի յոյժ օգուտ է քեզ կեալ ընդ մեզ քան չարաչար մեռանել. կարծեմ թէ չես անտեղեակ հրամանի սիւնկղիտոսին։ Ապողինիոս ասաց. Իմ զհրաման ամենակալին Աստուծոյ գիտացեալ՝ կամ ինամ աստուածապաշտ. և ոչ պագանեմ երկիր կռոց ձեռագործոց. որք յոսկւոյ և յարծաթոյ և ի փայտից եղեն, և ոչ տեսանեն և ոչ լսեն. վասն զի ձեռագործք են մարդկան, և զքաջհմարիտն Աստուծոյ զբարեպաշտութիւն ոչ գիտեն։ Ալ ես ուսայ պաշտել զերկինսաւորն Աստուած, և նմա միայնոյ երկիր պագանել. որ յամենայն մարդիկ փչեաց զհոգի կենդանի և հանապազ բաշխէ զկեանս ամենեցուն. և ոչ ևս խոնարհեցուցեալ զանձն իմ ի խորխորատ ընկէցից. քանզի ամօթ մեծ է անարգաց երկիր պագանել. և ծառայական գործ է պաշտել զնոտիսն. և մեղանչեն մարդիկ պաշտելով զայնպիսիսն. կին մարդ էին գոտղք նոցա, և ևս անմտագոյն՝ պաշտօնեայք նոցա և երկրպագուք նոցա։ Եգիպտացիքն ոսկեայ երկիր պագանեն, մոլորեալք. Ամենացիքն մինչև ցայս օր զեզին կառաւին պղնձի արարեալ պաշտեն, բայց Ամենացւոց կոչելով զնա. զոր և կանգնեցին յերևելի տեղւոջ մօտ ի պատկերն Աբրահամայ և Հերակլի. զի յաղօթս կացցեն առ նոսա։ Եւ արդ զինչ առաւել էիցէ սա քան զկաւ չարաչար և զխեցի այրեցեալ. աչս ունին և ոչ տեսանեն, ականջս ունին և ոչ լսեն, ձեռս ունին և ոչ ձգեն, ոտս ունին և ոչ գնան. քանզի լուկ ձևն զգայութիւն ոչ ընդունի. կարծեմ թէ և Սոկրատէս ծաղր առնելով զԱմենացիսն՝ երդուաւ ի սոսոյ ծառն և ի շուն և ի փայտ ջոր։ Նախ ինքեանց մեղանչեն մարդիկ պաշտելով զնոսա. երկրորդ անգամ՝ անպարշտեն յԱստուած, զի ոչ ճանաչեն զՀնչաստութիւն։ Եգիպտացիքն դարձեալ զսոխ և սխտոր աստուածս անուանեցին, և զպտուղս որով կերակրիմք, որք յորովայն մտանեն և յաղբխս ելանեն՝ զայնս պաշ-

տեցին. այլ և ձկան երկիր պապին և աղաւնոյ և շան և քարի և գայլոյ. և խրատանչիւր ոք ստեղծուածոյ մատց իւրոց՝ երկիր պապին: Երբորդ անգամ՝ մեղանչեն մարդիկ յորժամ երկիր պագանեն մարդկան և հրեշտակաց և դիւաց՝ աստուածս անուանելով:

Հազարապետն ասաց. Շատ փիլիսոփայեցեր և սիրացուցեր զմեզ. այլ զայն ոչ գիտացեր, Ապողինիէ, եթէ հրամանն սիւնակիստոսին ամենևին քրիստոնեայ մի ուրեք երևել[1]: Ապողինիոս ասաց. Այլ չէ հնար մարդկեղէն հրամանն սիւնակիստոսին՝ յաղթել հրամանին Աստուծոյ. քանզի որչափ մարդիկ զբարեգործն ատեան՝ ի նանիր և սպանանեն, նոյնպէս բազմապատիկ մարդիկ հեռանան յԱստուծոյ. այլ զայս գիտա, զի և՝ ի վերայ Թագաւորաց և անանկաց, և իշխանաց և ծառայից և աղատաց, և փիլիսոփայից և տգիտաց՝ մահ սահմանեաց Աստուած, և զատաստան յետ մահուն՝ ի վերայ ամենեցուն: Այլ որոշութիւն է մահուն. վասն այնորիկ Քրիստոսի աշակերտքն հանապազ մեռանին, տանջեալ զցանկութիւնս, և ձգնին ըստ աստուածեղէն գրոց. քանզի չիք ինչ ամենևին առ մեզ մահն անառակ ցանկութեանց, և ոչ տեսիլք աղտեղիք, և ոչ ակն յայրատաւ, և ոչ ունկն չարալուր. զի մի վերատեսցին տգիք մեր: Այլ վասն զի այսպիսի գեղեցիկ կեանս կեամք, և բարի յօժարութեամբ վարիմք, ոչ ինչ դժնդակ հանդիպիմք զմեռանել վասն ձշմարտին Աստուծոյ. քանզի որ եմք՝ վասն Աստուծոյ եմք, և համբերեմք տանջանաց վասն նորա, զի մի չարաչար մեռցուք զյաւիտենական մահն. այլ և ոչ ընդ յաւիտենութիւն ընչից մերոց զբարիցիմք ինչ, գիտացեալ՝ եթէ կենդանի եմք, և եթէ մեռանիմք՝ ՏԵառն եմք: Կարէ ջերմն և դալուկն, և այլ ինչ ախտ՝ սպանանել զմարդն, հապա մարեցայց եթէ՝ ի միջէ ումեքէ յայնցանէ մեռանիմ:

Հազարապետն ասաց[2]. Պնդեցար՝ ի մեռանելդ: Ապողինիոս ասաց. Կամիմ կեալ՝ ի Քրիստոս, այլ և՝ ի մահուանէ չերկնչիմ վասն սիրոյ որ առ կեանն. քանզի չիք ինչ պատուական քան զկեանն յաւիտենա-

1. Մի օր. անուանել:
2. Մի օր. ասէ:

կանս, որ է անմահութեան մայր հոգւոյ՝ որ եկեաց առ զգեղեցիկ կեանան։ Հազարապետն ասաց. Զիմաց յայ զինչ ասացեր։ Սպողանիոս ասաց. Եւ զի՞նչ արարբից քեզ. քանզի տեսող սրտի է Բանն Աստուծոյ, որպէս տեսանող աչաց լոյս։

Փիլիսոփայ ոմն որ կայր մօտ անդ՝ ասաց. Սպողանիէ, զքեզ Թշնամանեա, քանզի յոյժ մոլորեալ ես, Թէպէտ և կարծես խորհուրդս խօսել։ Սպողանիոս ասաց. Եա ազգս առնել ասայ և ոչ Թշնամանել. այլ քո կեղծաւորութիւնդ՝ զկուրութիւն սրտիդ քո խոստովանի. քանզի անմտաց՝ ձշմարտութիւնն Թշնամանք Թուին։ Իշխանն ասաց. Այս ինձ յայտնապէս զոր ասացեր։ Սպողանիոս ասաց. Բանն Աստուծոյ Փրկիչ հոգւոց և մարմնոց, մարդ եղեալ՝ի Հրէաստանի, կատարեալ զամենայն արդարութիւնս, և լցեալ աստուածեղէն իմաստութեամբ պայծառապէս, ուսուցանէր պարկեշտ կրօնաւորութիւն որ պատշաճ էր որդւոց մարդկան. և լուծուցանել զկիզբն մեղաց։ Զանգի ասայց զարիութիւն խաղաղացուցանել, զպանկութիւն չարփաւորել, զախորժականն մեղմացուցանել, զարտմութիւն մերժել, հաղորդ լինել առ ողորմութիւն. զսէր աձեցուցանել, զնաւթութիւն ընկենուլ. ի վիժ առնլոց հեռանալ, քննախնդիր մի լինել, զմահ արհամարհել, ոչ անկրաւութեամբ այլ համբերելով անօրինացն. Աստուծոյ օրինացն հաւանել, զթագաւորս պատուել, զԱստուած պաշտել, զհոգի անմահ՝ի Աստուծոյ հաւատալ, դատաստանի յետ մահու ակն ունել, պարգեւաց սպասել յետ յարութեանն տալ Աստուծոյ բարեպաշտութեամբ կեցելոցն։ Զայս ամենայն ուսուցանելով քանիւք և գործովք, հանդերձ մեծաւ հաստատութեամբ. և փառաւորեալ յամենեցունց վասն երախտեացն զոր առնէր, սպանաւ յետոյ, որպէս և յառաջ քան զնա խնամատունքն և արդարքն. քանզի արդարք անկրաւաց դժպհիք երևին, որպէս և աստուածեղէն գիրն ասէ. Կապեցուք զարդարն՝ զի դժպհի եղև մեզ։ Այլ և յելենացւոց իմաստնոց ոմն ասաց, Թէ՝ Աղդարն խոշտանգեացի, Թքեացի, և յետոյ խաչեացի. որպէս Աթենացիք անկրաւ եղաւն զՎՀիւ մահու. զպատրեցին՝ հաւանեալ ամ-

կին. նոյնպէս և Փրկչին մերոյ, յետոյ եւտուն զվՀու մահու անօրէնքն, նախանձեալ անօրէնքն ընդ նմա որպէս և ընդ մարդարէսն, որք յառաջ քան զնա, որ վասն նորա առցին յառաջապոյն, եթէ՝ Եկեսցէ և բարի առցէ ամենեցուն, և հաւանեցուսցէ զամենայն մարդիկ առաքինութեամբ. և պաշտել զԱստուած հայր ամենեցուն և զարարիչ. որում և մեր հաւատացեալ երկիր պապանեմք. վասն զի ուստաք ի նմանէ պարկեշտ պատուիրանս՝ զոր ոչ գիտէաք. և ոչ ևս մոլորիմք այսուհետև. այլ բարւոք կեանս կեցեալ՝ հանդերձեալ յուսոյն սպասեմք:

Իշխանն ասաց. Ես կարծէի եթէ ի գիշերին փոխեցար յայդ մռաց: Ագաղոնիոս ասաց. Եւ ես ակն ունէի եթէ փոխեսցին խորհուրդք քո ի գիշերին և բացցին աչք հոգւոյդ պատասխանեօք իմովք, և սիրտդ քո պատրաստեսցէ. և զԱստուածն արարիչ ամենայնի պաշտեսցես, և նմա հանապազ ի ձեռն ողորմութեան աղօթս մատուսցես. քանզի զոհ անարիւն և տուրք ի Աստուծոյ՝ ողորմութիւն առ մարդիկ եղեալ ի ձեռն մարդկան:

Իշխանն ասաց. Կամիմ արձակել զքեզ, այլ ոչ կարեմ՝ վասն հրամանի սենեկապետին. սակայն մարդասիրութեամբ տամ քեզ զվՀուն. և հրամայեաց տեսեր հատանել զդուռնին: Ագաղոնիոս ասաց. Գոհանամ զԱստուծոյ իմոյ վասն վՀուիդ քո: Եւ տարեալ զնա դահճացն վաղվաղակի զկատեցին. մինչդեռ փառաւորէր զՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ. որում փառք յաւիտեանս. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոյն Արքիպպայ եւ Փիլիմոնի։

Սուրբ վկայքն Քրիստոսի էին՝ ի քաղաքէն Կողոսացւոց, աշակերտք լեալ սրբոյն Պօղոսի առաքելոյն, յաւուրս ամբարիշտ արքային Ներոնեայ։ Եւ եղեւ՝ ի գնալն Յովհաննու առաքելոյ և աւետարանչի յԵփեսացւոց քաղաքն, հալածեաց անաւր զգևսն և խորտակեաց զբաղինան Արտեմիդեայ, և աւերեալ քանդեաց զտաճար կռոցն. և զհոգապաշտ մարդիկն որ ապրանդեալ էին՝ ի կռոցն մոլորութիւն՝ ոչ ունէին տեղի զղեականն մատուցանել զզոհս, և երթային այնուհետեւ՝ ի Կողոսացւոց քաղաքն զաղաւեղի ոճոն կատարել, զի զդեռ էս կայր տաճարն և բազինն Արտեմիդեայ։ Եւ մինչդեռ կատարէին զզոհն պղծութեան, սուրբն Աքիպպաս և Փիլիմոն և այլ բազմութիւն քրիստոնէից կային յեկեղեցին յաղօթան Աստուծոյ, զսխտան կատարել։ Եւ յանկարծակի ժողովն որ եկեալ էին զհել կռոցն՝ քինու նախանձու վառեալ՝ դիմեցին յեկեղեցին, և մտեալ կալան զսուրբն Աքիպպաս. և առեալ տարան զնա յատեանն Ասդրոկղէտեայ դատաւորին, և պնդագոյն ամբաստանէին զնմանէ։ Իսկ նա լցեալ Հոգւով սրբով՝ յառաջ քան զհարցափորձ դատաւորին սկսաւ յանդիմանել զանպարշտութիւն նոցա և զմեռոտ կռոցն տկարութիւն։ Դատաւորն ասէ. Ոչ ինչ օգտիս յառաջաբան լինելով, զի եթէ ոչ զոհեցեր ատուածոցն՝ կեալ ոչ կարես։ Եւ բռնադատէր և տիպէր զԱքիպպաս զոհել կռոցն. և նա ևս առաւել անարգէր զկուռապաշտութիւն նոցա։

Յայնժամ հրաման ետ կապել զնա երկաթի կապանօք շղթայիւք, և քարշել մինչև ի դուռն մեհենին որ կոչիւր Մինոս. և անդ չարչարեցին զնա յոյժ ազգի ազգի տանջանօք, և նեղէին զոհել կռոցն. և սուրբն ոչ դադարէր ի կշտամբելոյ զդաւսուրն և զաստուածս նորա:

Եւ նա ևս բարկացեալ, հրաման ետ և հանին զնա արտաքոյ Կաղոսացւոց քաղաքին մօղնաւ մի հեռի ի դէօղն իւր, որ կոչիւր Սկբիպիանա. և անդ փորեցին դուք մի խոր, մինչև ի կիսաչափ առն մարդոյ, և արկին զնա ի դուքն և քարիւ պնդեցին մինչև ցգօտին, ձեռս յետս կապելով: Եւ հրաման ետուն մանկանց ի դպրոցէ զի զրչօք երկաթեօք ծակեցեն զգլուխն զլեցոյն մինչև յուղիղն հասանել. և քարկոծ արարին զնա ի նմին տեղւոջ, մինչև աւանդեաց զոգին: Եւ անտի գնացեալ կալան զՓիլիմոն և տանէին զնա: Իսկ կին ոմն բարեպաշտ Սոփի անուն, արամբք երկիւղածութիւք բարձեալ զմարմին սրբոցն՝ եդ ի գերեզմանի ի պատուական և ի տուրբ տեղւոջ:

Այսպէս կատարեցան տուրբ վկայքն և աշակերտքն Քրիստոսի, ի նոյեմբերի ԻԲ, ի վաստա Քրիստոսի Աստուծոյ, յաւիտեանս. ամէն:

Վարդապետութիւն Սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ։

Ի քաղաքն միում որում անուն էր Օզոսեա [1], հրամայէր իշխանն ընծառնել զքրիստոնեայն և ածել, զի զոհեսցէն սնոտի դիւացն. և եղեալ սպասաւորքն յափշտակեցին կինն մի պառնիկ՝ի հրապարակէն, և ածին առ իշխանն՝ միոյզեռ զոհէր աստուածոյն. և տեսեալ զնա իշխանին՝ զառաջինն ողբակոծն բանիւք կամէր հաւանեցուցանել զի զոհեսցէ։ Իսկ կինն ոչ հաւանէր հրամանին, այլ հանարձակութեամբ ասէր. Ես քրիստոնեայ եմ։ Եւ զաստուածսն տեսեալ թէ արհամարհեաց զհրամանս թագաւորին, ասէ ցնա. Ձինչ անուն է քո։ Եւնա ասէ. Քրիստոնեայ եմ, և անուն իմ Սիրաս [2]։ Դատաւորն ասէ. Որո՞յ բախտի ես։ Սիրաս ասաց. Ձար բախտի եմ վասն սիրոյ գործոց իմոց, այլ սակայն ազատ եմ։ Դատաւորն ասէ. Որպիսի՞ են վարք քո։ Սիրաս ասաց. Ի սատանայական գործոյ՝ յառաջ պառնիկ [3]. իսկ այժմ՝ի ձեռն Քրիստոսի Ջնորհացն՝ որ ծագեալ են յիս՝ զգաստացեալ եմ։ Դատաւորն ասէ. Արդ՝ վասն զի զգաստացար, մատիր զոհեա բարեպար աստուածոցն, ըստ հրամանի թագաւորացն։ Սիրաս ասաց. Զկ ինչ աղտեղագոյն քան զաստուածքդ ձեր. քանզի յորժամ զամօթալիսն գործէի, հայեցեալ՝ի պղծութիւնն որ կրկին՝ի նոսա, եթէ որպէս կամաք

1. Ա՛ի օր. Օզոսա։
2. Ա՛ի օր. Սիրա։
3. Ա.յլ օր. Ի սպասաւորութեան խաբէութեանն յառաջ պառնիկեան. այլ այժմ՝ի յետ ընծրհացն Աստուծոյ որ գործեցին ինձ զգաստութիւն և պարկեշտութիւն։

կից [1] են աղաւեղի գործոց, հեռացայ ի նոցանէ, և ընթացայ առ պարկեշտ վարդապետն իմ Գրիգորս, որ էլէ զարմանս մեղացն. քանզի լուայ ի նմանէ, թէ՝ Որ տեսանէ զկին մարդ առ ի ցանկանալոյ ընդ նմա՝ անդէն շնացաւ ի սրտի իւրում:

Դատաւորն ասէ. Մատիր զոհեա աստուածոցն, զի մի՛ վասն հայհոյութեանդ քո չարաչար տանջեցից զքեզ. և այնպէս զգեղ մանկութեան քո ապականեալ հանից ի քաղցր կեանսս: Սփրաս ասաց. Հաւատամ ի Գրիգորս, որ վասն բազում մարդասիրութեան իւրոյ հայեցաւ յիս, եթէ տացէ մարմնոյս իմոյ ժուժկալութիւն տանջանաց քոց, զի քարի գործովք մարճոյս լցից [2] զմեթերան. քանզի սիրտ գործովք գառնացուցի զԱստուած, և տրտմեցուցի զերկնաւոր հրեշտակս. արդ՝ հրամայեա տանջել զմարմինս իմ վասն Գրիգորսի, զի հաշտեցուցից զԱստուած և ուրախ արարից զդէմս հրեշտակաց: Դանզի լուայ ի Տեառնէ՝ որ ասէր. Ամէն առեմ ձեզ, զի ուրախութիւն լինի առաջի Աստուծոյ և հրեշտակաց նորա վասն միոյ մեղաւորի՝ որ ապաշխարեցէ: Եւ լուեալ զայս դատաւորն՝ ասաց. Ապտակօք կոծեցէք զերեսս դորա առանիկ, և ասացէք. Մի ընդդիմանար հրամանաց Գատաւորին: Եւ հարին զնա յոյժ. և լայր ամենայն ամբոխն, և հանդերձ արտասուօք ասէին. Ընդէր դառնացուցեր զմեզ, և արտաքս քան զօրէն և զվայելչութիւն քաղաքիս մերոյ՝ ապտակես [3]: Եւ դատաւորն զարմացեալ ասաց. Ընդէր հակառակ կայք հրամանաց Գատաւորիս: Եւ ամբոխն աղաղակեալ ասաց. Աղաչեմք զքեզ, մի ապականեր զգեղ դորա:

Դատաւորն ասաց. Տեսանե՞ս, Սփրաս, զկարդ կան վասն քո քաղաքս ամենայն, անչափ սիրեն զքեզ: Սփրաս ասաց. Ի բազում պատնկութեան իմում՝ արբանեակք սատանայի ոչք էին իմ գործակիցք՝ ուրախ լինէին, և հրեշտակք տրտմէին ընդ պիղծ գործս իմ: այժմ նորա կան և հրեշտակք յերկինս ցնծան, վասն

1. Մի օր. ընդոծայինք:
2. Մի օր. լցայց:
3. Մի օր. արփափս փան զբրնս գործէս, վնայելուչութիւն փաղաքիս մերոյ ապականէս:

հաւատոյս ինձ որ յԱստուած՝ և բարի գործոցս Աւրէ՛ զոր ինչ կամիս առնել, արա վաղվաղակի, զի ես քրիստոնեայ եմ: զի գրեալ է. Աստուածք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն: Դատաւորն ասաց. Ա՛յ անամօթ, մատիր զոհեա աստուածոյն, ապա եթէ ոչ՝ երդուեալ յաղթութիւն և՛ ի բահտ թագաւորին և ամենայն աստուածոյն, առ սակաւ սակաւ հրով վառեմ զքեզ՝ և ցոյցս ամենայն քրիստոնէից: Անդրա ասաց. Երդնեցուցանեմ զքեզ՝ և Թագաւորն քո, զի հրամայեսցես այրել զմարմինս իմ: վասն զի շաղախեցի զս զսա պատկութեամբք, և աղտեղեցի մեղօք. որպէս երկաթ՝ և՛ ի բազմաժամանակեայ հնացեալ և ժանգոտեալ, նորոգի՛ և՛ ձեռն հրոյ և փայլէ, նոյնպէս և զիս հրամայեսա հրով այրել. զի անբիծ և անարատ պատարագ մատիցէ մարմինս իմ Քրիստոսի: Դատաւորն ասաց. Ահա սպեղեալ չարաչար մեռանիլ, և կամեցար զի հրով զեղ քո խանգարեսցի: Անդրա ասաց. Ա՛յո սպեղեալ, և՛ ի Քրիստոս հաւատացի, միայն թէ ողջակիզեալ զեղեցկութիւնս իմ Քրիստոսի: Եւ զաղ մացեալ դատաւորն ընդ սպեղութիւն խոստովանութեանն, եթէ զիա՞րդ արհամարհեաց զԹագաւորն և զհրամանս նորա, եա վաղվաղակի հրամանն՝ կապել զսա և զձեռս նորա և քարշել արտաքոյ քաղաքին մինչև՛ ի գետեզերն. և անդ այրել զնա կենդանւոյն առ սակաւ սակաւ դալար փայտիւ. և դահձացն զայն հրամանն առեալ վաղվաղակի կատարեցին: Եւ այնպէս վկայեաց տէրդ աղախինն Քրիստոսի Հշմարիտ խոստովանութեամբ, որ՛ ի Հայր և յՈրդի և՛ ի սուրբ Հոգին. որում փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն:

1. Ալ օր. անպրէ:

Վկայաբանութիւն Բարեխոս եպիսկոպոսի և երից վանիկցւոցն։

Եկեալ՝ ի քաղաքն անտիոքացւոց Նոմերիանոս Թագաւորն՝ և անդ զոհս պղծոց դիւացն մատուցանէր. կամեցաւ՝ ի տուն Աստուծոյ մտանել։ Իսկ երից երանելեացն Բաբեղաս՝ եպիսկոպոս եկեղեցւոյն Աստուծոյ որ յԱնտիոք, գեղեցիկ և հանճարեղ հովիւ հօտին Քրիստոսի, և գիտէր մեծաւ խնամատարութեամբ հովիւսն որ ընդ ձեռամբ նորա էին. իբրև լսաւ եթէ կամի մտանել Նոմերիանոս՝ ի տաճար Աստուծոյ, ձայն ամբարձեալ՝ ի մէջ ժողովրդեանն մեծաւ բարբառով ասէր. Հաստատուն եղերուք, որդեակք, աստ՝ ի ներքս կացէք ծնացէք. վասն զի գայլ ապականիչ կամի մտանել՝ ի տուն Աստուծոյ, եթէ ոչ Աստուած ժամանեսցէ մեզ՝ կորնչելոց եմք ամենեքեան։ Եւ նոցա լսեալ զայն՝ կայնն ծնացին՝ ի ներքս. իսկ սուրբն առաջի դրանն նստեալ ծնայր անօրինին։ Եւ եկեալ Նոմերիանոս ձեռնամուխ լինէր մտանել յեկեղեցին. իսկ սուրբ Բաբեղաս յառաջ մտաւեալ արգել զինս. Ո՛չ մտանես այսր՝ պիղծ և շաղախեալ ձեռօք։ Իսկ Նոմերիանոս բռնադատէր մտանել. և զայր մտեալ ընդ հանդարձակութիւն առնն, միանգամ ակնածեալ և՝ ի համբաւէն՝ որ վասն առնն լսեաց Թեան, առժամայն լուռ եկաց, և հրամայեաց պահել զինս ամենայն զգուշութեամբ, և ինքն զայրագին դառնայր յարքունիսն։

Եւ ՚ի վաղիւ անդր նատեալ յատեան, հրամայեաց աճել գնա առաջի ամենեցուն, և ասէ ցնա. Ա՛յ թշուառական այր, զինչ զմտաւ աճեալ, և զինչ առաջի այսչափ եղեալ խչխեցեր արտելուլ զիս. և ոչ գիտես եթէ Թագաւոր խօսի ընդ քեզ: Գիտեն աստուածքն, զի ոչ փախչիս ՚ի ձեռաց իմոց. և տեսցուք թէ օգնէ քեզ աստուածն քո: Բաբելաս ասաց. Ես այր տառապեալ եմ, այլ Աստուած կամեցաւ առնել զիս հոլիս ժողովըրդեան իւրոյ. վասն որոյ տեսեալ իմ եթէ գայլ ապականէ հիչ մռանէ ՚ի հօտն Բրխատոսի, փութացայ ոչ առնել անտես, զի մի կորուսից ՚ի հօտէն, և համար տայ Աստուծոյ: Նաւերխանոս ասաց. Եւ արդ՝ գայլ համարեցար զիս և ոչ Թագաւոր: Բաբելաս ասաց. Ընտ նեբրեղոն Աստուծոյ ես դու Թագաւոր և ըստ մերոց մեղացն, զի գոնեայ այնպէս խրատեալ դարձցուք առնա. այլ ես զքեզ Չհմարիտ Թագաւոր ոչ ասեմ. վասն զի ոչ գիտես զայն որ ետ քեզ զպատիւդ զայդ. զի Թէ գիտէիր՝ նմա միայն երկիր պագանէիր, և զնա միայն պաշտէիր և ոչ զարտարածս նորա: Արդ՝ այսպիսի գործովք բարկացուցանես զարարիչն քո՝ որ աճ ՚ի չգոյութենէ ՚ի գոյ, և ետ քեզ պատիւ զի փառաւորեացես զնա: Ասեմ քեզ իրս զոր ամենեքեան գիտեն. եթէ ոք ՚ի քոց պաշտօնէից փախուցեալ ՚ի քէն երթայր առ այլազգի Թագաւոր, ոչ ցանուիր արդեօք. այդպէս աճ զմբաւ և վասն Աստուծոյ. արարիչն երկնի և երկրի նախանձեալ ՚ի վերայ այսպիսի իրաց: Գանգի և խորհիլ յորժամ դառնայցոյց զԱստուած, ասաց ցնոսա մարգարէին. Դուք նախանձեցուցէք զիս չաստուածովք, և ես նախանձեցուցից զձեզ ազգաւ, և ազգաւ անմբաւ զայրացուցից զձեզ: Արդ՝ և դու բարկացուցեր զԱստուած, և նա վաղվաղակի շուրթ ՚ի քէն զԹագաւորութիւնդ քո, և տայ այլում՝ որում ոչ կամիս: Զի գիտացես եթէ բարւոք է զԱստուած խոստովանել և ոչ զարտարածս նորա աստուածացուցանել և երկիր պագանելնոցա. զի դրեալ է. Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես, և զնա միայն պաշտեացես:

Նաւերխանոս ասաց. Աղէտս Թշնամանեալդ. և արդ ոչ Թուի քեզ եթէ արարածքս այս մեծին Աստուծոյ են, և կամ Թէ ոչ տեսանես զաղգմունս նոցա, և

*զյաւաջադիմութիւնն՝ զոր առնեն. այլ ես կամիմ դի-
տել թէ զո՞ր ազգ ասէ զնոսն անմիտ. վասն որոյ եթէ
ասասցես՝ ախտաժեալ լուայց քեզ: Բաբելաս ասաց.
Աստուած զմարդն անմեղ հաստատեաց. իսկ ասաս-
նայ անկեալ յերկնից՝ ի վերուստ, և փոխեալ՝ ի փա-
ռացն՝ զոր ստացեալ ունէր յԱստուծոյ, և նախան-
ձեալ ընդ ազգի մարդկան՝ յաւիշտակեաց զնախնիսն
մեր՝ ի խորհրդոց իւրոց չարեաց, և այնպէս եղաք ան-
միտք: Իսկ Ա՛նածին որդին Աստուծոյ Չհմարիտն Աս-
տուած՝ երկայնամիտ եղեալ՝ ի վերայ այնչափ կուա-
պաշտութեանց, և տեսեալ՝ կորստեան զատեղ-
ծուածն իւր՝ երևեցաւ մեզ, և ողորմեալ կորչեացն՝ ի
մոլորութենէն. և այսուհետև ոչ ևս եմք անմիտ, վա-
սըն զի գիտեմք զԱստուած, մանաւանդ զի գիտացաք
՝ի նմանէ. քանզի չէք որ յառաջագէտ՝ բայց միայն
Աստուած: Ա՛յլ այդ ամենայն զոր ասէքդ՝ առաս-
պելք են և իմաստք բանաստեղծաց. անուամբ միայն
անուանին աստուածք և ոչ գոյութեամբ. քանզի թէ
չէր արուեստ առ մարդկան՝ աստուածս ոչ ունէիք:
Ա՛րդ եթէ կամիս լսել ինձ և փախուցեալ՝ ի մոլորու-
թենէդ՝ լինիս իմաստուն, և ընդունի զքեզ Աստուած.
ապա եթէ ոչ կամիս՝ կաս և ծնաս՝ ի դմին անմտու-
թեան: Համբերեսցես ասաց. Ձեր գիտքն առասպելք
են, այլ մերն իրք և խորհուրդք, և զՀմարտութեան
օրինակ յինքեանս ունիմ. զի աստուածեղէնն զօրութիւն
իմն է՝ ի նոսա: Վասն որոյ հրամայեմ քեզ զոհել նոցա.
և զայդ գիտեա, եթէ ոչ լսեցես՝ անպատիժս ոչ լինիս
ցիս. քանզի ոչ լաւ ես դու քան զայնոսիկ՝ որ յառաջ
քան զքեզ յայդ եկին, և պատուս մեծ ի նոցանէ
եղեն:*

*Բաբելաս ասաց. Ոչ պարտեցանն՝ իբրև զմարդիկ
պարտեցան. այլ զիս ոչ կարես խաբել, և ոչ եթէ
զաղքայութենէն երկնից ինձ խոստանաս, յորմէ օտա-
րացուցանել զիս կամիս, որում դու ոչ ես արժանի՝
վասն զի ոչ կամիս, այլ զառանձինս ունիս ժառանգել.
քանզի պահանջէ՝ ի քէն Աստուած զհոգիս մարդկան,
զոր դու կորուսեր: Համբերեսցես ասաց. Ձինչ է Աս-
տուած. զդոյն անուանդ իսկ ասա ինձ, զինչ մեկնի:
Բաբելաս ասաց. ՁԱստուծոյ մեծութենն ոչ գիտես,*

թէ և թևօք թռանիցիս. զԱստուծոյ անուանն մի խըն-
դրեր, զի ոչ գտանես. քանզի ամենայն անուն անուա-
նեալ՝ ’ի լաւէ իմաստէ անուանի. զի ումն կոչիցէ և ումն
լուիցէ. այլ ամենայն՝ որ կոչիցէ զԱստուած՝ Աստուած,
ոչ գիտեն Աստուծոյ, այլ զփառան Աստուծոյ ասէ.
արդ՝ մի ինչ խնդրեր որ Աստուծոյ չէ: Աստուած Հա-
նապարհ իմաստութեան է, առանց հասանելոյ է. Աս-
տուած՝ որ զամենայն ինչ արար վասն մարդկան: Ո-
մերիանոս ասաց. Ցինչ է մարդ: Բաբելաս ասաց.
Ընդունիչ կենաց, ըմբռնչինիչ եղելոց: Նոմերիանոս
ասաց. Աստուածոլքն, զի ’ի կարգի եւտուր զպատաս-
խանիսդ և կարի իմաստութեամբ, որպէս համբաւէր
զքէն. այլ մի միայն պակաս է ’ի քէն, գիտութիւն աս-
տուածոյն, քանզի կարիւիր բարի այր լինել:

Բաբելաս ասաց. Ընդդամ և անպարիշտ և ամ-
բարհաւաճ բռնաւոր, պատիւդ որ ’ի քէն է՝ այդ Թըշ-
նամանք են ինձ, և գոլութիւնդ քո անարգանք ինձ
են: Քանզի ես լի եմ ամենայն բարութեամբ, վասն
զի գիտեմ զԱստուածն իմ, և բարւոյն երկիր ոչ պա-
գանեմ: Նոմերիանոս ասաց. Այլ անուր արկանեմ
’ի պարանոց քո՝ զի ոչ համբերեմ քեզ, և կապանս
յոտսդ իբրև զբար ծառայի և Թշնամանողի զտէր իւր:
Բաբելաս ասաց. Ես զԱստուած ունիմ ինձ խրատու և
Թագաւոր, տէրս և եղբարս վերին զԱստու-
ծոյ. արդ՝ հաւատա զու յԱստուած և համբուրեմ
զոտս քո. քանզի պատիւ է ինձ այդ զոր զուդ համա-
րիս Թշնամանս առնել: Այլ և զայս չարչարեալ՝ չէ
եւս եմ պիտանի ծառայ Աստուծոյ, այլ անպիտան.
քանզի երանելիք են՝ որ վասն Աստուծոյ չարչարին:
Նոմերիանոս ասաց ցՎիւխտորինոս զուքս. Կամիմ զբ-
Բաբելաս զվարդապետն անպատանց խրատել քեւ, և
անուր ’ի պարանոց նորա հրամայեմ արկանել, նոյն-
պէս և կապանս ’ի յոտն, ’ի Թշնամանս նորա. քանզի
ոչ եթէ սակաւ ինչ լուացաւ մեզ: Վիւխտորինոս
զուքն ասաց. Գոյակ քաջութեամբդ երդուեալ, ’ի
վաղուց հետէ կամեցայ հաստատանել յերկիւղ զո
վասն առնդ այդպիսի ամբարշտի. զի անօրէնն և նոր
օրէնս ինձ ուսուցանէ, և բազում աշխատութիւն հա-
ւատացեալ մեզ առնդանելով հրամանաց մերոց: Ո-

մերիանոս ասաց. Դու ա՛ւ ժամն գՀրամայեալսդ ՁեզՂ արա անհապանիդ Բաբելասայ, և ես յետ այսորիկ առ սակաւ սակաւ զապդդ զայդսիկ ընդՁեմ։

Իակ դուքան ալիկ զանուրն ՚ի պարանոց նորա և յոտանն, և Հրամայեաց արտաքս հանել, զի լեցի տեսիլ ամենեցուն։ Բաբելաս ասաց. Գոհանամ զՎստուծոյ ծոց իմոյ, որ յայս պատիւ Հասոյց զիս խոստովանութեամբս՝ որ ՚ի նա. այլ քեզ և թագաւորին քում ընտՀ ոչ ունիմ։ Եւ յետ այսորիկ Նաաբիանոս ասաց. Կոչեցէք զԲաբելաս վարդապետդ տղայոց, որ անզգամութեամբ վարին յամենայն ժամ։ Եւ եկեալ Բաբելաս՝ ասաց. Վարդապետ եմ տղայոց՝ որ յիս իրս տղայանման մտօք, և յիս իրս իմաստութեամբ պատահեն այսոցիկ՝ որ թիւրել կամին զՀնութիւնն. այլ անզգամացդ Ձեզ և նմանեացդ Ձեզ՝ չեմ վարդապետ։ Նաաբիանոս ասաց. Աստուածոլքն՝ զի վայելէ քեզ անուրդ և կատարդ որ յոտդ կ։ Բաբելաս ասաց. Դու անզգամութեամբ շարժեալ խաղ առնես, այլ իմ երդուեալ Որդւոյն Աստուծոյ, այնչափ վայել կ ինձ՝ ոչափ և ոչ քեզ թագդ որ ՚ի գլուխդ կայ։ Նաաբիանոս ասաց. Ա՛յ թշուառական, զոհեա և քուժեաց ՚ի տանջանացդ՝ որ պահին քեզ. և մի պարծիր մանկտւով՝ զոր ուսուցանես։ Բաբելաս ասաց. Զի վարդապետ եմ տղայոց՝ և ահա ասացի քեզ. այլ կամիս տեսանել թէ զինչ կ մտանդ տղայոց և վարդապետութիւն աստուածգիտին, ունիմ ընդ ինև տղայս երիս ըստ Աստուծոյ մնալ, Հրամայեա ածել զնոսա և տեսանես զքաջութիւն նոցա, եթէ Աստուած ընդ նոսա կ. Թերևս լսիլ փորձիս ոչ հաւատացեր, այլ իբրև ընդ աղՁատեալ և ընդ շառաւիղս Հայիս ընդ իս։

Եւ Նաաբիանոս Հրամայեաց ածել զտղայսն՝ զորոց ասաց Բաբելաս։ Եւ իբրև մտին, ետես ցնոսա եթէ ունէին մայր։ Եւ նոքա ասեն. Ա՛յո. այլ առաւել քան զմայրն մեր ունիմք զտէրն Բաբելաս զնուագիչն մեր։ Հրամայեաց և զմայրն նոցա ածել. և իբրև եմուտ, ետես զնա, եթէ՝ Ո՞նչ անուն կ քո։ Եւնա ասէ. Թէոդոսէ։ Նաաբիանոս ասաց. Որպիք քո էն դոքա։ Եւնա ասէ. Ա՛յո, ես ծնայ զդոսա և ընծայեցուցի ՚ի ձեռն Տոլմեն իմոյ Բաբելայ, և նա ուսոյց նոցա աստուածգ-

պաշտաւթիւն։ Նամերիանոս ասաց. Ապտակեցէք զեբեա զորա սաստկագոյն առաջի մանկանց իւրոց, և ասացէք զմա մի յանդուգն բարբառիլ։ Իսկ տղայքն տեսեալ զմայրն իւրեանց՝ի տանջանս, միաբան աղաղակեցին և ասեն. Բռնաւոր, մի հարկաներ զմայրս մեր՝ի զուր, քանզի ազատ է, և բարւոք ասաց՝ զոր ասացեր, զի դա ծնաւ զմեզ, այլ մոլոր տէրն մեր բաբելաս. Թէ և դարձեալ ցասչիս, տէր մեր է, քանզի աստուածպաշտութիւն ուսուցանէ։ Եւ ցասուցեալ Նամերիանոս՝ հրամայեաց զտղայսն առնել ըստ անձին. և առաջնումն հրամայեաց փոխոյլն երկոտասան, երկրորդին լինն և երրորդին եօթն։ Իսկ մանկունքն իբրև ընդ մի բերան ասացին. Օրհնեալ է Աստուած, զի վասն նորա չարչարիմք։

Նամերիանոս ասաց ցմայրն նոցա. Առաջին որդիդ քո քանի՞ ամաց է։ Եւ նա ասէ. Երկոտասան։ Եւ երկրորդն քանո՞յ։ Եւ նա ասէ. Լինն։ Եւ երրորդն քանո՞յ։ Եւ նա ասէ. Եօթն։ Եւ յետ այսորիկ աղաղակեաց. Մի է Աստուած քրիստոնէից. զի ըստ քանիծնութեան որդւոց իմոց այնպէս տանջեցան վասն նորա, որ կատարէ զխոստումն և պահէ։

Նամերիանոս հրամայեաց արտաքս հանել զմայրն նոցա, և՝ի նեղլըս տանել զՔաբելաս, և ասէ ցնա. Վարդասեա անզգամաց և ուսուցիչ տղայոց, փորձեցի անդրդուր պարծելով՝ի ձեռն մանկտուցն. սուտ գտար, քանզի եկեալ զառաջեաւ մանկտէն խոստացան զոհել աստուածոյն։ Բաբելաս ասաց. Զար՝ ասեցեր՝ի քում գլուխդ, քանզի որդի ես հօրն քո սատանայի, որ հանապազ ատէ, և ոչ կարէք յաղթել ումեք, ոչ դու և ոչ հայրն քո սատանայ, եթէ ոչ ատէք։

Նամերիանոս ասաց. Ակռեպաւ, զի քամահեմ ըզքեզ և Թշնամանս, և տանջանօք սակաւ սակաւ վատնեմ զքեզ՝ եթէ ոչ հաւանեսցիս և զոհեսցես. յետ այնր և զգլուխդ ես հրամայեմ հատանել։ Բաբելաս ասաց ծիծաղելով. Արդ և ծաղս արժանի է։

Նամերիանոս ասաց. Սզհատիս. յորմէմ եմք ծաղս արժանի։ Բաբելաս ասաց. Եթէ լուիցեն այլ աստուածքն քո եթէ զՍակռեպիս միայն անուանեցեր՝ ցասչել ունիմ քեզ, և մանաւանդ թէ տալ առողջու-

Թիւն։ Ա՛րդարև ես ամաչեմ ՚ի վերայ անզգամու-
թեանդ ձերոյ՝ զի ոչ կարէք իմանալ, այլ երկիր պա-
պանէք՝ որում ոչ մանկունք երկիր պագին կամ հա-
ւանեցան։ Նոյեմրիանոս ասաց. Եթէ լուեալ Քրիստո-
սին քո բարկացի՝ զի Աստուած միայն անուանես,
զի՞նչ առնես։ Բաբելաս ասաց. Ահա չես արժանի լսե-
լոյ զգիտութիւն քրիստոնէից. բայց սակայն վասն ամ-
բոխիս որ շուրջս կան՝ ասեմ, զի մի՛ քո անօրէնու-
թեամբդ և դոքա զրկիցին ՚ի գիտութենէ։ Յորժամ
քրիստոնեայք զՈրդի անուանեն, խոստովանին և զՀայր,
և յորժամ զՀայր անուանեն՝ խոստովանին և զՈրդի.
քանզի ոչ են որոշեալ, ոչ Հայր՝ յՈրդւոյ, և ոչ Որդի
՚ի Հօրէ. և չէ հաւասարութիւն Աստուծոյ ընդ դևս,
որում երկիր պագանես. և դրեալ է. Զ՚ինչ հաղոր-
դութիւն է լուսոյ ընդ խաւարի։

Իսկ մանկունքն էին կախեալ ընդ Բաբելայ զայն-
չափ ժամ։ Նոյեմրիանոս ասաց, տանել զԲաբելաս
մինչդեռ էր զգեցեալ զկապանսն և զանուրն ՚ի պա-
րանոցին. և վասն զի էին ծանր և առաւար՝ ՚ի յերկար
կոխեն նորա վիրաւորէին զնա։ Իսկ որ շուրջն կային
գնացաւ և էին ծանօթք նորա, չարչարակից լինելոյ
նմա ասէին ցնա. Խոստովանեա զՔրիստոս և քուժիլ ՚ի
տանջանաց։ Բաբելաս ասաց. Ոչ այնչափ ազամ ՚ի վե-
րայ անզգամիդ որ յաթոռ նստի, որչափ ՚ի վերայ ձեր՝
որ զմայդ հաւանիք, որ և կորոյս զկեանս ձեր. այլ
դմա չհաւանիմ, և ձեզ հաւանիմ արդեօք. քա՛ւ լիցի.
տանջանք ձեր կեանք են, քանզի նա թեթևացուցանէ
ինձ՝ վասն որոյ չարչարիմ, և ոչ զգամ ամենևին։
Հրամայեաց այնուհետև տանջել զնա թաղաւորն։ Իսկ
մանկունքն ազաղակէին մինչդեռ ՚ի կախաղանին էր
երանելին Բաբելաս, և ասեն. Բռնաւոր և ամբարիշտ,
հնի՛մ այդպէս զտերդ մեր և զբարերար հուլիս՝ առանց
ինաւս երկիր տանջես. վասն զի զամենեցուն տէրն
պաշտէ. այլ զայդ առնելոյ պատուէ արժանի է մա-
նաւանդ և ոչ տանջանաց։ Ոտքին վերկութեանդ եր-
դուել, զի ոչ փախչիցես ՚ի ձեռացն Աստուծոյ. այլ
հրոյ զեհենոյն մատնելոց ես։ Եւ ցասուցեալ Նոյե-
միանոս հրամայեաց զնոսա տանջել։ Իսկ մանկունքն
երբև միամիտ բերանոտ լսացին. Ո՛չ ամաչես, ամպարիշտ,

’ի մանկանց յաղթահարել առաջի այդչափ բազմութեանդ, վասն զի դու առաւել տանջիս քան զմեզ. երդուեալ յայն որ ընդ հուպս կարող է հաստուցանել քեզ, զի ոչ զգաւճք տանջանաց քոց: Եւ թագաւոն հրամայեաց ելուցանել զԲաբելաս, և թաքուցանել ’ի տան, զի առանձինն հարցցէ զմանկունսն: Եւ սկսաւ ասել ցնոսա. Որդեակք, հաւանեցարուք ինձ, և բազում պատիւս շնորհեմ ձեզ, զոր այլոք ոչ կարէ շնորհել ձեզ: Իսկ նոքա էրկեւ միով ձայնիւ ասացին. Խորամանդ և նենդաւոր, մի խորհիր մեզ մահ, քանզի ամենայն շնորհք քո լի են պատուով գեհենին. զի յորմէ հետէ եւս մեզ վարդապետն մեր զտէրտունական կենիքն՝ կատարեալք եղաք, և ընկեցաք ’ի մէնջ զկուռս հուրդս չարութեան, և հաստատուն կերակրոյն հաղորդեալք, պատրաստ եմք ’ի մեռանել վասն անուանն Քրիստոսի. դու կարծէիր, թէ յորժամ մեկուսացուցանես ’ի մէնջ զվարդապետն մեր՝ յաղթես մեզ: Յոր դիմ Աստուծոյ երդուեալ՝ որ կարող է հովանին մերոյ օգնել՝ ուր և է, և զմեզ բուժել ’ի պիղծ ձեռաց քոց. և զժամանակս զայս փոխել ընդ հուպս, թէ ոչ ուրացցուք և ոչ յամօթ արարցուք զՀովիւն մեր, որ աղօթս առնէ վասն հօտին իւրոյ: Իսկ երանելին Բաբելաս լսէր զայն ’ի տանն ուր արգելեալն էր: Նոմերիանոս ասաց. Այծյն զառաջեաւ Բաբելաս. և իբրև եկին ասէ ցնա. Մանկունքս այս որդիք են քո: Բաբելաս ասաց. Ըստ Աստուծոյ արդարև որդիք իմ են. այլ ես վասն Աստուծոյն իմոյ յորմէ ծնայ՝ զկին ոչ գիտեմ: Նոմերիանոս ասաց. Եւ զիարդ նման են քեզ ամենևին: Բաբելաս ասաց. Աղօթիւք խնդրեմ զի ամենևին նման նեացին ինձ, բայց միայն ’ի մեղացն իմոց: Նոմերիանոս ասաց. Ասացի քեզ, զերծանել ’ի տանջանացդ՝ որպէս հնազանդեաս ես չարչարիլ՝ և ոչ հաւանեցար ինձ, և աղաչեմ զքեզ հաճեա զմիտս քո վասն առաջին տանջանացն. միայն յայսմ հետէ շառեա զտանջանդ, հաւանեցո զմանկունսդ, զի մի այդպէս տղայք եղեն ’ի քաղցր կենացս: Իսկ Բաբելաս զայրացեալ ասաց. Ո՛վ անմիտ քան զամենայն մարդ և ամբարիշտ բռնաւոր. ’ի մէջ պարտասեցեր՝ Թողեալ զՀոգ պատերազմաց, և Թէ որպէս արժան է պատահել այլազգեաց. հաւա-

տամ Աստուծոյ հօր Քրիստոսի, թէ որպէս հեռացար ՚ի մէնջ, և ՚ի Թշնամեաց քոց յաղթահարեսցիս։ Այլ զխոստմունս քո տուր որդւոց քոց, և զպարգևս քո կալ քեզէն. քանզի և ոչ այնչափ կարես շնորհել մեզ, որչափ փութաս զրկել զմեզ։

Եւ բարկացեալ Թագաւորն եհան նմա վէրս մահու և երից մանկանցն։ Իսկ երանելոյն Բաբելայ առեալ զվէրսն հանդերձ երեք մանկամբքն, երկիրեցոյց ընծայեան՝ և ասէ. Երկիրեցուցանեմ զձեզ Աստուծովն մերով՝ որ զամենայն ինչ տեսանէ, անուրս հանդերձ կապանօքս որ յոտս, դիք զիս ՚ի վկայութիւն բռնաւորին, որ յաւիտեանս տանջել ունի յանվախճան հուրն։ Եւ մինչդեռ ելանէր ընդ դուռնն, սաղմոսէր այսպէս. Փրկեցեր զմեզ ՚ի Թշնամեաց մերոց, և զառելիս մեր յամօթ արարեր. ընդ նմա սաղմոսէին և մանկունքն։ Իսկ երանելին Բաբելաս աղաչէր զԳաւհինն, որում հանդերձեալ էին զվէրսն զի նախ զմանկունսն սպանցէն, և ապա զնա։ Եւ կացուցեալ զնոսա յաջմէ և յահեկէ նմին, ասաց. Ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած։ Եւ իբրև եհես զնոսա վախճանեալ, ասէ. Օրհնեալ Աստուած քրիստոնէից, որ արարեր ըստ բազում ողորմութեան քում. զի արդարև ՚ի բերանոյ մանկանց տղայոց ստնդիեցաց հաստատեցեր զօրհնութիւն քո։ Այնպէս նորա ևս զվէրսն, Թագեցաւ հանդերձ երեք մանկամբքն և շղթայիւքն։

Աստուած որ տայ յուսացելոց իւրոց զօրութիւն, և փառաւորէ զփառաւորիչս իւր, նմա փառք և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Մեհրդի Բաբկայ և ոչխարուհւոյ նորա։

Աքսիմիանոս Թագաւոր մեռաւ՝ և քաղաքն Նի-
կոմիդեայ՝ զոհեաց Սպողոնի. և իբրև կատարեաց զ-
գործ պղծութեանն՝ եկ արտաքս՝ և տաճարէ կռոցն։
Եւ յեկանելն նորա մատեան առ նա Սրտեմիոս և փի-
լիանոս քուրմքն Սպողոնի, և ասեն. Տէր ինքնակալ
Թագաւոր. դու քաղում յօժարութեամբ փութաս՝ և
զոհս աստուածոյն, և զբազումս զայլս ընդ քեզ կա-
նաս ձգե՛ս պաշտօնեայս. յաղագս որոյ՝ և խաղաղու-
թեան բնակիչ աշխարհս մեր, միշտ և հանապազ ըզ-
յաղթութիւն պարգևելով նոցա Թագաւորութեանդ
քումդ։ Եւ այժմ են ոմանք՝ և քաղաքիս, որք քրիստո-
նեայք կոչին, և ամբարշտութեամբն իւրեանց ոչ կըզ-
նազանդին օրինաց Թագաւորութեանդ ձերում. այլ
հայհոյեն զաստուածսն, և երկիր պապանեն խաչելոյ
ուրումն զոր աստուած անուանեն. և ասեն, եթէ յեր-
կինս ունի զբնակութիւն իւր, և իշխէ ամենեցուն՝ որ
յերկրի լոցեն. և այսպէս խաբեն զբազումս, և ոչ
զոհեն աստուածոց մերոց, և ոչ պատուեն զոհս մեր։
Բայց և հպարտանան հակառակ Թագաւորութեանդ
քումդ, և փոխանսումն ազօթեն լինել իշխանութեանդ
ձերում։ Սրդ՝ ե աստ ծեր ոմն ժամուկ Քաբէլաս ա-
նուն նորա, որ հպարտութեամբն իւրով միշտ չարախօ-
սէ զաստուածոց մերոց. և զրոյ ձեռաց իւրոց զբա-
զում մանկունս աշակերտէ յուսումն չարաչար վարդա-
պետութեանն իւրոյ։ Եւ պատրէ զնոսա՝ մի գնել

միտս կրօնից աստուածծոյն, այլ միայն սակս կալ օրէնաց խաչելոյն, և յանուն նորա երդնուլ, և ոչ՝ ի զօրութիւնս դիցն։ Եւ փոխանակ Հելլենացի ուսմանցն, որով մանկանցն վարդապետութիւնն յարդի, առաջի՛կ լինի ուսուցանել զմանկունսն, զորս երդս սուրբս և սաղմոս անուանեն քրիստոնեայքն՝ մոլորութեամբն իւրեանց. և յայտնի ուսումն առնեն անզգամ կանայք կրթեն զմանկունս իւրեանց՝ ի ձեռն առնն այսորիկ. և այնչափ զօրացաւ մոլեգնութիւն ծերոյն այնմիկ, մինչ զի և ոչ արուս մանկունք միայն ընթանան յուսումն նորա, այլ և աղջկունքն ևս անզգամ կանխեն՝ ի վարդապետանոցն նորա։ Եւ արդ՝ դու տէր ինքնակալ, մի՛ տար թոյլ զօրանալ մոլորութեանն այնմիկ. ապա թէ ոչ յանարգանս աստուածծոյն և յարհամարհութիւն թագաւորութեանդ ձեր լինիցի նա։

Զայս իբրև լուաւ թագաւորն՝ ի զրմաց անտի, յՍուրեմանտոյ և՝ ի Փիլհանտոյ, լի եղև սրտմտութեամբ, և առաքեաց վաղվաղակի զինուորս ըմբռնել զԲաբելաս՝ հանդերձ մանկամբքն, և զամենեսեան զնոսա արգելուլ անդէն՝ ի վարդապետանոցն, և զգուշութեամբ պահել, և զԲաբելաս միայն ածել առաջի նորա։ Եւ իբրև կատարեցին զինուորքն զհրամայեալն, և ածաւ երանելի ծերն առաջի թագաւորին ձեռս յետս կապեալ։ Իսկ թագաւորն իբրև սրտմտեալ նմա տէր առաջի դրաց տաձարին Սպողնի, ՚ի տեղւոջն՝ ուր լուաւ զառաքասացեալ զբանս՝ ի քրմաց անտի։ Եւ տեսեալ զսուրբն՝ խոժոռ դիմօք նայեցեալ ընդ նա՝ առ այսպէս. Դո՛ւ ես Բաբելան՝ որ արհամարհես զպօրութիւն աստուածծոյն, և ոչ զոհես նմա. և ոչ այս միայն, այլ և զմանկունս ամենայն անզգամ յափշտակես՝ ի յանզգայ կանանց, և բարբանջանս իմն ուսուցանես նոցա, զոր և աստուածծայինն երգ անուանես. և ոչ յօրինաց մերոց պատկառես, և ոչ՝ ի սպառնալեաց զանց դիտես, այլ նախ՝ ի հրապարակս և զօրանջես զբանս քո՝ ի լսելիս ամենայնի՝ որ զբարբառ տանջանս ածէ՝ ի վերայ ընդունողացն զնոսա։ Կամ թէ ոչ ինչ նոցա լուեալ քո, թէ ոչխարիկս՝ որ քոյին յիմարութեանդ տենչալք եղեն՝ զանդաչտս դատաստանս կրեցին՝ ի դատաւորացն մերոց։ Ոմանք հրոյ և ոմանք սրոյ մատնեցան, և կէսք

’ի ծովն ընկեցան, և այլք գազանաց կերակուր եղեն, որ և ոչ գերեզմանաց արժանի եղեն զժուարաբախտ դիակունք նոցա: Եւ արդ՝ զինչ ասես առ այս, ով չարաբաստիկ ծեր. փոխեսցին ’ի յիմար կրօնիցդ քոյ, և պաշտեսցես զանմահ աստուածն, և երկիր պագանիցես նոցա, և յաղագս որոյ մեղար նոցա՝ ’ի հանդարտ ներողութենէս մերմէ, հաշտեսուսցես զնոսա ’ի ձեռն զոհից, և լինիցիս բարեգործ ամենից քոց, և ’ի հանգստեան և’ի վարկութեան քնաւեսցես: Եւ ոչ այս միայն, այլև ’ի դիմաստական գանձուցն որ պարզևին քեզ յաստուածութենէս մերմէ, բազաւորութենէս քում հարստութիւնս ընկալցիս. որպէս զի ով ասիցես եթէ ծեր եմ, և ոչ կարեմ ընձեռել անձին իմոյ զպէտս կենցաղոյս, և վասն այնորիկ յօժարիմ ’ի մահ. արդ զինչ ասես առ այս: Եւ պատասխանի երանելին Բաբեղաս և ասէ. Ես, ով թագաւոր, ’ի մանկութենէ իմմէ պաշտեմ զՔրիստոս Աստուած, և նովին կրօնիւք հասի մինչև ’ի խորին ծերութիւնս այս, յորում սեւանամ զիս նովին լարեպաշտութեամբ վառեալ. և արդ անցաւոր կենցաղոյս ցանկացեալ ուրացայ զՔրիստոս իմ և զԱստուածն, զայն՝ որ ստեղծ զիս յոտովայնէ՝ ողորմութեամբն իւրով, և քանդաց և փայտից ’ի ձեռաց մարդկան եղելոց և մեռեալ աննշնչաց երկիր պագից: Ամաքսիմիանոս ասէ. Ո՛չ ևս ներեցից քում ջօղանջանացդ՝ թշնամանելով զանմահ դիան, այլ հրամայեմ փշրել զոսկերս քո քանթք. զի գոնէ այսպէս իմասանասցի խեղաթար ծերութիւնդ քո, եթէ այսպէս պարտ է խօսել աստուածոյ թագաւորաց:

Եւ ետ հրաման նոյն ժամայն հարկանել զծնօտս նորա, մինչև ջաղջախեալ մանրեցաւ ոսկերք այտից, և հոսէր լիջանէր արիւնն ընդ ծնօտսն և ընդ բեղսանն նորա: Իսկ երանելի ծերն աղաղակեաց ձայնիւ մեծաւ և ասէ. Գոհանամ զքեզն Քրիստոս Աստուած իմ, զի այսպէս բարեհաճեալ յիս զօրացուցեր զծառայս քո ’ինախկին մըցմանս յայտոսիկ, արիաբար մարտնչել ինձ ’ի հաւատոյ պատերազմիս՝ ընդդէմ անօրէնն Թագաւորիս. զի ահաւասիկ ամենազօրութեամբ քո՝ երբեմն զձիթենեն կանաչագեղ նորաբերս դալարացեալ զինի

հատանելոյն, և կամ իբրև զծաղկիկս մատաղատունկս դրախտի, այնպէս համարիմ զզարկուածս քարանցս առ՚ի նորոգումն փառաց հնացեալ և ծերացեալ անդամոց մարմնոյս իմոյ. վասն զի հաւատամ նորոգ ընդունել զսա՚ի փառաւոր գալստեանդ քո:

Իակ Մաքսիմիանոս իբրև եառես զնա զի այսպէս և՚ի տանջանսն գոհանալով կարդայր զՔրիստոս, ասէ. Ո՛վ պիղծ և յանդուգն ծեր. և դու՞ ևս տակաւին զնաս չեաղն կարդաս մարտակից քեզ, և ոչ իմանաս զջաղջախումն ոսկերաց երեսաց քոց, և ոչ տեսանես զյոտնձանահոս կարկաջումն արեան քո՚ի բերանոյ քումմէ. վասն որոյ և այլ բռնապոյն տանջանս ածից՚ի վերայ քո, զի գէթ այնու ծանեցեաս եթէ այն որ՚ի քէն Մաստուած ասի Քրիստոս, ոչ կարէ օգնել այնոցիկ՝ որ՚ի թաղաւորից դատապարտեալք լինիցին,

Եւ զայս ասացեալ՝ հրամայեաց և զշրջանակս նորա և զթիկունս ևս առաւել հարկանել նովիւն քարամբքն: Իակ երանելին Բաբելաս զայս ամենայն տանջանս ընդունելով ոչ ինչ ցասէր, այլ հեզ և անխռով ձայնիւ այսպէս սաղմոսէր. Տէր է իմ օգնական և ես ոչ երկեայց, զինչ արասցէ ինձ մարդ. Տէր է իմ օգնական, և ես տեսից զթշնամիս իմ: Բարի է յուսալ՚ի Տէր՝ քան յուսալ՚ի մարդիկ. բարի է յուսալ՚ի Տէր՝ քան յուսալ յիշխանս: Մաքսիմիանոս ասէ. Ի փրկութիւն աստուածոցն երդուեալ, ոչ սուտ խօսեցան զքէն Ս.Ր. տեմիոս և Փիլեհանոս, եթէ առասպելս իմն՚ի բերան առեալ, երգս սուրբս և սաղմոս անուանեալ կարդայ հնացեալն այն, որով զուսումիկն և զանզգայն կարող է պատրել. արդ՝ առասիկ և՚ի լսելիս մեր այսպիսի խորամանկութիւնս յառաջ բերեալ բարբանջէ, և զմեզ ևս պատրել կամելով նովիւն երգով, հեշտացուցանէ զականջս մեր: Եւ սրբոյն հայեցեալ՚ի նա ասէ. Բարւոք ասէ աստուածային գիրն, եթէ յիմարն զչիմարութիւն խօսի, և սիրտ նորա զնանիրս իմանայի. և ի՞ր վասն ոչ դու իմանաս, ով Մաքսիմիանոս, եթէ մեծ և հզօր է Աստուածն քրիստոնէից, և յոչինչ համարեալ են ամենայն աստուածք հեթանոսաց, որոց դու ապաստան լինիս՚ի կործանութիւն թագաւորութեանդ քումմ. վասն զի ամենայն կուռք

հեթանոսաց, ասէ, դէպ էն, այլ Տէր մեր զերկինս արար:

Յայնժամ Մաքսիմիանոս Թագաւորն բարկացեալ, եւ գնաց ՚ի ձեռս Պրիսկեղայ դատաւորին, և հրամայեաց դնել անուր ծանր ՚ի պարանոց նորա, և զտանն նորա պնդել ՚ի փայտ. և իբրև կատարեաց դատաւորն զասացեալսն, և տարան զերանելին Բաբելաս ՚ի բանդ, եւ հրաման Թագաւորն աճել զամենայն մանկունսն զաշակերտեալսն ՚ի նմանէ առաջի իւր: Եւ վաղվաղակի կատարեցին սպասաւորքն զհրամայեալսն. և իբրև պպառնացաւ զամենեսեան ջոլորեալ կացուցին առաջի Թագաւորին, որք էին Թուալ ուԹասուն և չորս, ընդ արու և ընդ էգ. որոց անուանք են այսոքիկ. Թէոնիլոս, Պետրոս, Փիլիպպոս, Սերապիոն, Սեւերիոս, Զոլիանոս, Աղեքսանդրոս, ԱգաԹոն, Մոլիտոս, Սաղիմանէոս, Տիրանէոս, Կիւրիոս, Սոփի, Եւսեբիոս, Թէոդոտէ, Փափտուհի, Աւրեմիոս, Մաքսիմոս, Մաքսիանոս, Զոլիանոս, Տրիմոն, Պիկիլիանոս, Կինագիոս, Բիտոն, Դոնատոս, Բիքտորիոս, Դուկիտիոս, ԴորոԹէոս, Եւտիքիոս, Փիլիպպոս, Ջենոփոս, Եւգրաքիոս, Աղաոնիոս, Բրիտտորիոս, Կիրիոս, Աղաոնիոս, ԳենեԹլիոս, Թէոդուլէ, Աքոլաստիդոս, Թէոնիլուհի, Պատրիկուհի, Թեոխոս, Թէոդորա, Փլորենտիոս, Գլիգերիոս, Գելասիոս, Պատրիկիոս, Սեւերիանոս, Բասիլիանոս, Ուլպիանէնդիոս, Թէոդորոս, Եւտիքոս, Եփեբիոս, Եւագրիոս, Սեւերիանոս, Վէռոնիոս, Մարկիանոս, Փոտիոս, Փիլիկիտոս, Դոմնիսուհի, Սիրմելիոս, Դոմիտիոս, Նէոնիտոս, Իպատիոս, Աղաակիոս, Ջաւոիկոս, Տրիփեոն, Փիլիմոն, Դոմիա, Պանքարիոս, Մարկոս, Աղբելիոս, Իրինոս, Հուպելիոս, Աղաանիոս, ԵղեւԹերիոս, Աքիտոս, Աղոլիոս, Դաւնատոս, Աղաիգոնն, Իպատիոն, Փերմոն:

Աղդ սոքա ամենեքեան իբրև ածան առաջի Թագաւորին, զոլով զինի նոցա և մարցն իբրեանց և արտասուօք քաջալերելին զնոսա, զի հաստատուն կացցեն ՚ի հաւատս վարդապետին իբրեանց. և իբրև եհաս զնոսա Մաքսիմիանոս, ժպտեցաւ ընդդէմ նոցա, և խոտանկուԹեամբ իւրով քաղցր ձայնիւ սկսաւ ա-

սել ցնոսա այսպէս. Որդեակք իմ, լուարուք ինձ, որպէս զի կեցջիք և ՚ի բարութեան վայելեսջիք. վասն զի Թէպէտ և վարդապետան ձեր որ ուսուցանէրն ըզձեզ՝ անապատան և հազիւ ծանեաւ զՀիմարտութիւն առաւծոյն, սակայն յետոյ երկիր եպագ նոցա, որպէս և ամենայն մարդիկ. այլ վասն զի խմացեալ իմ իբրու զի հարկանէր զձեզ և տանջէր յանդգնաբար, հանապազ պահանջելով ՚ի ձէնջ զհամարս նանիր ուսմանց պրոցն քրիստոնէից, և յատկապս այնմիկ բարկացեալ իմ ՚ի վերայ նորա, արկի զնա ՚ի բանդ, զի մի այլ ևս հանդերձեսցի հարկանել զձեզ: Այդ մըտեալ ՚ի տաճար աստուածոյն՝ երկիր պագէք նոցա, և անցեալ գնասջիք խաղաղութեամբ առ մարս ձեր. վասն զի տեսանէք Թէ ոչ պրպէս ողորմագինս կանխանէն կոծկոծելով զկնի ձեր: Եւ առ այս ամենայն ողբալան բանս Թագաւորին՝ ոչ եառն պատասխանի առըջ մանկունքն. բայց միայն իւրաքանչիւր ոք ՚ի նոցանէ սկսաւ ասել, Թէ՝ Ես քրիստոնեայ եմ:

Յայնժամ բարկացեալ Թագաւորն հրամայեաց ՚ի բաց տանել զնոսա յերեսաց իւրոց: Եւ ապա ընտրեալ ՚ի նոցանէ տասն մանուկ, որ Թուէր Թէ քան զայլսն հասեստատգոյնք էին, առ ՚ի կարօղ լինելոյ նոցա առ հարցմունս նորա տալ պատասխանի, զորս և ածեալ կացուցին առաջի նորա: Պատասխանի ետ Մաքսիմոս նա և ասէ ցնոսա. Գիտէք, որդեակք, եԹէ վասն ոչ էր իրաց ընտրեցի զձեզ յամենայն ընկերաց ձերոց՝ իբրև զմանկունս իմաստուն, և կացուցի առաջի իմ: արդ մի նմանէք ամբիրատուԹեան վարդապետին ձերոյ, այլ մատուցեալ երկիր պագէք աստուածոյն, և բարեաւ պարգեւս ընկալջիք լինիցին, զանձս ոսկւոյ և արծաԹոյ, և ուրախուԹեամբ մեծաւ արձակեսջիք լինիցին ՚ի տունս ձեր. ապա Թէ ոչ հնազանդիք լինիմ, հրամայեմ հատանել զգլուխս ձեր, և արկանել շանց պղխակուն ձեր: Պատասխանի ետ մի ումն ՚ի նոցանէ որում անուն էր Ամոս, և ասէ. Մեք քրիստոնեայ եմք, և գիւաց պղծոց երկիր ոչ պագանեմք. զոր ինչ կամիս արա վաղվաղակի, զի առասիկ պատրաստ եմք ըստ օրինակի վարդապետին մերոյ: Մաքսիմիանոս ասէ. Առէք զդա և հարէք զԹիկուն և զկոտլ դորա,

որպէս զի ուսցի այրապէս և ոչ տղայաբար խօսել առաջի Թագաւորի: Եւ իբրև տանջեցաւ նա այսպէս, յառաջ մատուցին զմիւսն՝ որում անուն էր Դաւնադոս: Մաքսիմիանոս ասէ. Տեսէր զաշակերտակիցն քո, եթէ ոչպէս ոչ հաւանեաւ ինձ յանհնարին տանջանս մատնեցաւ. արդ դու մի նմանիր նորա անմտութեանն, այլ հնազանդեա ինձ և պաշտեա զաստուածսն, և անցեալ գնասջիր առ ծնողսն քո խաղաղութեամբ. վասն զի գիտես եթէ ոչպէս այժմ տըրտմեալ լինիմ նոքա վասն յամեղադ քո: Եւ պատասխանի Դաւնադոս և ասէ. Ես քրիստոնեայ եմ, ոչպէս և Ամոնիոս աշակերտակիցն իմ, և ոչ խաբեցայց՝ ի փաղաքշանացդ քոց, և ոչ երկեայց՝ ի սպառնալեացդ քոց, և ոչ ուրացայց զԱստուած իմ և զՏէրն: Յայնժամ լի եղև բարկութեամբ Մաքսիմիանոս, և զոյն երեսաց նորա շրջեցաւ, և ասէ. Առէք և զդա և բատառաջնոյն օրինակի կրկնապատիկ տանջեցէք, վասն զի սա ևս ընդունեալ է՝ ի պատրանս ծերոյն այնորիկ: Եւ իբրև տանջեցին զսուրբ մանուկն սպասաւորք Թագաւորին անողորմ, և հոսէր իջանէր արիւն նորա յերկիր, և նա ոչինչ տայր պատասխանի առ բռնաւորն, այլ միայն աղաղակէր և ասէր. Ես քրիստոնեայ եմ: Եւ հրամայեաց Թագաւորն ընկենուլ զնա յատակս տանն: Եւ եթ աճել և զայլ ևս ընկերս նորա, և ասէ ցնոսա. Ո՛րպէս կամիք, հաւանի՛լ ինձ, և պարգևօք և ուրախութեամբ մեծաւ երթայք՝ ի տուն ձեր, եթէ անհաւան գտանել և զայդպիսի տանջանս կրել որպէս տեսանէք զընկերս ձեր: Իսկ մանկունքն իբրև լսան զբանս նորա՝ ՚ի բայ ընկենեալ զձորձս իւրեանց, միաբան աղաղակեցին և ասեն. Աւասիկ պատրաստ եմք առ տանջանս քո, որպէս տուրբ եղբարքս մեր, որք անկեալ կան՝ ի յատակս տանս առաջի մերոյ, Ամոնիոս և Դաւնադոս. և ոչ երբեք դադարեմք՝ ի կոչելոյ զանձինս մեր քրիստոնեայս, և խոստովանելոյ զԱստուածն մեր, որպէս ուսոյց մեզ երանելի վարդապետն մեր:

Յայնժամ յարեաւ վաղվաղակի Մաքսիմիանոս, և գնաց բարկութեամբ մեծաւ՝ ի պալատ իւր, և եթ հրաման Պրիսկիլլիանոսի դատաւորի արկանել միանդամայն զամենայն մանկունսն՝ ի բանտ, և աւուրս ինչ

անաւաղ պահել. զի Թերևս, ասէ, ՚ի սովոյ ևքողեսալ ուրացին զկրատ վարդապետին իւրեանց. ապա Թէ ոչ՝ հանդերձ վարդապետաւ իւրեանց ընկալցին սրով զվէիս մահու: Իսկ դատաւորին ընկալեալ զայսպիսի հրաման՝ եաւ ածել առաջի իւր զերանելին Բաբեղաս հանդերձ ուղեռան և ջոյս մանկամբքն և ասէ ցնոսա. Ձինչ կամիս ոմ Բաբեղաս. զդաստացար ՚ի փոխելոյ Թեևնէ յիմարութեանդ առ ՚ի զոհել աստուածոցն և կեալ, եԹէ արդ ևս ՚ի նմին յամառութեան կայցես, և չարաչար կորնչես դու հանդերձ աշակերտօքդ քո, որպէս և ինքնակալն հրամայեաց: Եւ պատասխանի երանելին և ասէ. Պարտ էր իմանալ քեզ, ոմ դաստուր, զհաստատութիւն հաւատոցն մեր յառաջին մտցարանէ անտի, եԹէ զիարդ զոր ոչ չարաչար ջանչաւմն ոսկերաց ծնօտիցս իմոց ուծացոյց զիս ՚ի յայնժամ ուծացոյց զիս ՚ի յայսմ ժամուս, արդ այլով իւիք տանջանօք հաւանեցուսցես զիս ուրանալ ՚ի նմանէ. արդ արա վաղվաղակի որպէս հրամայեցար չինքնակալէն քումմէ. վասն զի ես պատրաստ իմ յամենայն տանջանս մտանել վասն բաց ըեպաշտութեան՝ զոր ընկալայ ՚ի մանկուԹենէ իմմէ, և պահեցի մինչև ՚ի խորին ծերուԹիւնս յայս՝ յորում տեսանես զիս եղեալ: Իսկ դատաւորն իբրև լուաւ զայս ասէ. Ես ակն ունէի Թերևս ողորմեսցիս դու ինքնին Թշուառականն ասեաց քոց, և այդոցիկ այդքանեաց մանկանցդ՝ որ վասն քո հանդերձեալ են կոչընչել. դու արդ ևս տակաւին ՚ի նմին յամառութեան կաս, արդ ես աւասիկ կակղեցից զյանդգնուԹիւնդ քո: Եւ եաւ հրաման պարզել ձգել զնա ՚ի ջրից կողմանց և արկաւաջոք հարկանել զԹիկունան և զնեբուխանա նորա: Իսկ սուրբն ոչինչ գրեր զտանջանս, այլ միայն համբարձեալ զաչս մտաց իւրոց յերկինս՝ սկսաւ ասել այսպէս. Փառք քեզ զուգահաւասար սուրբ երրորդուԹիւն, Հայր և Որդի և Հոգի սուրբ. փառք քեզ՝ Հայր սուրբ, որ զօրացուցեր զակարուԹիւն իմ՝ զօրուԹեամբ քովրկի Հոգւոյդ սրբոյ, և նորոգեցեր զապականուԹիւն ծերուԹեանս իմոյ՝ չարչարանօք Քրիստոսի քո. և արդ ես զինչ տաց տրիտուր քեզ ըստ ամենայնի՝ զոր չնորհեցեր ինձ, այլ միայն զոհաց-

ժանեալն և զանխմանալն զօրութիւն քո, այժմ և յաւիտեան յաւիտենից: Եւ սրբոց մանկանցն առաջեալ զամէնն, եւս հրաման Պղինակիանոս դատաւորն զանձնեցուն զպլուխան հատանել, որպէս և հրամայեցաւ՝ ի Թագաւորէն: Եւ դահճացն առեալ զայծեալն հրամանաւ՝ նախ հատին զպլուխ սրբոյն Բաբելասայ և ապա զայլոց մանկանցն մի ըստ միոջէ, միանգամայն զուարթուն և ջերմեռն. որոց ամենեցուն զքրիստոնեայ անուն ի վերայ իւրեանց դատանեալ՝ կատարեցան ի Քրիստոս. զոր առեալ զմարմինս նոցա արանց երկիւղածաց՝ հանեալ արտաքոյ քաղաքին, և արարեալ երիս դիրս ի նշանաւոր տեղւոջն՝ որ կոչի Եզանդիոք, եդին անդ զնշխարս նոցա, ուր մեծ կատարեալ զօր յիշատակի նոցա յամենայնի սեպտեմբերի, որ օր չորս էր ամսոյն:

Սրդ որք այսպէս կատարեցան ի Քրիստոս, ի հնապատոյն Դեոկղետիանոսի և Մաքսիմիանոսի, երկոցունց հեթանոսական Թագաւորաց: Իսկ ըստ մեզ Թագաւորելոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի միածնի որդւոյն Աստուծոյ. ընդ որում Հօր, միանգամայն և Հոգւոյն սրբոյ, վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոյն Բազպրատոյ Տառոնեից եպիսկոպոսի։

Սուրբն Բազպրատ աշակերտ էր սրբոց առաքելոցն [1], և ձեռնադրեցաւ ի սրբոյն Պետրոսէ՝ եպիսկոպոս, և առաքեաց յարևմուտս ի Սիկիլէ կղզին ի քաղաքն Տառոնեն։ Եւ մեռալ ի նա, վարդապետութեամբն իւրով դարձոյց զնաւատեան Ուղիանիտոս [2] և զղեկավարն զՍգրիպոս և զայլ նաւատեան՝ յաստուածպիտութիւն։ Եւ յորժամ նաւեցին ի կղզին՝ գտին զամենայն քաղաքն և զդաւառան ի կռապաշտութեան. և յորոց հանեալ հեծեծանօք երանելին Բազպրատ՝ համբարձ զձեռն իւր և զաչս յերկինս, և աղաչեաց զՍտուածծ վասն մոլորեալ ժողովրդեանն այնմիկ. և ասէ ցՈւղիանիտոս և ցՍգրիպոս. Եկայք, որդեակք, աներկիւղ քարոզեցուք զանուն Ստուածոյ ի մէջ մոլորեալ ժողովրդեանս, որպէս առի հրաման յաքելոյն Պետրոսէ։ Եւ սկսաւ Բազպրատ քարոզել և ուսուցանել և առնել սքանչելիս առաքելոյն Ստուածոյ։ Եւ լուեալ քաղաքապետին Վանիտոսի [3] զարմանացաւ և հաւատաց ՅՍտուած՝ զաղտ ի ժողովրդենէն. և յորժամ գնաց ի քաղաքն Տառոնեն՝ երթեալ ի դիշերի ի մերձեան կուռքն՝ յորում էր բազինն Փալկոնի և դից քաղաքին այնմիկ. և հայհոյեալ ի բազինն՝ ասէր. Ո՛վ Փալկոն, անզգայ խուլ և համր և

1. Մի օր. սրբոյ առաքելոյն Պետրոսի։
2. Ա.յլ օր. Ուղիանիտոս։
3. Ա.յլ օր. Ունիտոս։

կոյր, ով ես դու և կամ վինչ գործես աստ. և քանի՞ ամք են յորում բնակեալ ես աստ և մոլորեցուցանես խաբէութեամբ զստեղծուածս Աստուծոյ խմոյ, և տաս զոհս մատուցանել քեզ, պիղծ և գարշելի դիւա-պատկեր: Եւ ասէ վևն որ 'ի բազինն բնակեալն էր. Երկերիւր և վաթսուն ամ է որ բնակեալ եմ աստ, և ընդունիմ զոհս և նուէրս 'ի Տուռմեռնի քաղաքէս. յաճմեռնայն ամի երեք տղայ անարատ և եօթանասուն և երեք զուարակս փափուկս և գեղեցիկս, և խոյս և նոխաս և գառինս բազումս: Եւ երանելին Բագարատ մեծաւ բարբառով ասէ. Երդմնեցուցանեմ զձեզ պիղծ դևք, յանուն խաչելոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. ժողովեցարուք ամենեքեան աստ և գնասջիք և զհամր բազինդ Փալկոնի վերացուցէք 'ի մեհենէս և ընկեցէք 'ի ծովն, երեսուն ասպարիզաւ հեռի 'ի ցամաքէն. և դուք ընդ նմին ընկղմեցարուք յանդունդս խորոց: Եւ առժամայն հնչումն եղև իբրև աստիկ հողմոյ, և լցաւ մեհեանն անգեղօք և ապտաւօք, և կալան աղաղակել զբազինն Փալկոնի և ընկեցին 'ի ծովն. և ել գոչումն մեծ 'ի ծովէն, և եղև ձայն յերկնից. Ձօրացիր Բագարատ, ես ընդ քեզ եմ, և ոչ թողից զքեզ մինչև գասեցից զքեզ ընդ առաքեալն և ընդ մարտիրոսս. և ելեալք 'ի մեհենէն գնացին յօթևասնա իւրեանց: Եւ ընդ առաւօտն գնացին քուրմքն զոհել 'ի մեհեանն, գտին զդուռնն բաց. և մտեալ 'ի ներքս՝ ըզբազինն Փալկոնի ոչ գտին. և ելեալք 'ի մէջ հրապարակին մեծաւ հառաչմամբ կոծէին. Վայ մեզ, զի քաղաս կործանի, քանզի մեծ աստուածն մեր Փալկոն՝ անյայտ եղև. և դիմեցին բազում ժողովք 'ի մեհեանն և զպիղծ բազինն ոչ գտին. գնացին յընթացս 'ի տուն Վռնիփոտոսի քաղաքապետին, և աղաղակէին արտաքոյ դրանն. Ո՛վ պատուական իշխան, և շինող և սիրելի մեծի աստուածոյն, եկ և տես զկորուստ քաղաքիս: Եւ նորա խռովարհեալ 'ի պատուհանէն ասէ. Ո՛վ խմաստուն ազք և քահանայք մեծին աստուծոյն Փալկոնի, զի՞նչ եղև ձեզ որ այդպէս աղաղակէք: Եւ նոքա ասեն. Մեծ անցք անցին ընդ մեզ. քանզի բաղձալին Փալկոն կորեաւ, և պայծառ և վայելուչ բազինն իւր անյայտ եղև. և սեղանն և աւազանն և

ոսկեկազմ աթոռն՝ ունայն մնաց և խորանն ոչնչացաւ։
Այն Վռնխիտոս. Ո՛վ հարկաւոր տանուտեարք և պա-
տուական քահանայք, լուարուք ինձ և քննեցէք, մինչ
ամբարտաւանացաւ աստուածն մեր և եղոյզ զմեզ և
գնաց յայլ քաղաք. մինչ երթէք զսովորական զոհն
լիակատար ոչ մատուցէք և անընդունելի արար զպաշ-
տօնն մեր, և վասն այնորիկ առեաց զմեզ և փախեաւ
՚ի միջնէ. արդ գնացէք ՚ի յարկս ձեր և ես պարապիմ
քննեցից և զտից զպատճառն։ Եւ նոքա ասեն. Մեք
զսովորական աւանդն կատարեմք և ոչինչ պակասու-
թիւն առնեմք ՚ի զոհսն իւր, եթէ վասն էր խռովե-
ցաւ՝ ոչ գիտեմք. արդ աղաչեմք զքեզ, ոմն փառաւոր
պայծառ քաղաքապետ, զի այնդուրեամբ քննեացես.
և եթէ խռովեցաւ ՚ի միջնէ և գնաց յայլ քաղաք, մեք
երթիցուք առ նա և երկիր պագցուք նմա, և նա հաշ-
տեացի ընդ մեզ և առցէ զպատճառն, և մեք յաւե-
լուցումք ՚ի զոհսն և ՚ի պաշտամունսն։ Այն Վռնխիտո-
տոս. Այսցի ձեզ, եթէ երթիջիք ՚ի տունս ձեր, և թէ
հզօր է աստուածն Փաւկոն՝ յայտնեսցէ մեզ զձշմա-
րիտն։ Եւ նոքա աղաղակէին. Ո՛վ պատուական և շի-
նող դաստուր, որպէս օտար և անծանօթ աստուա-
ծոց մերոց խօսեցար. ոչ ձանաչես զերիտասարդ և
զգեղեցիկ աստուածն մեր զՓաւկոն՝ որդի Փաւկոնի-
պայ. ոչ յամենայն ժամ ՚ի գինարբուսն և ՚ի խնդման
աւուրս՝ զոր ինքնին գովէիր և պատմէիր զգովելի
գործսն նորա. և այժմ ասես, եթէ հզօր է աս-
տուածն Փաւկոն՝[1] յայտնեսցէ զինքն մեզ։ Դարձեալ
պատասխանի ետ Վռնխիտոս և ասէ. Այսցի ձեզ, ամ-
բոխ խնդասիրքդ, եթէ համբերեցէք, և ես քննեցից
զկորուստն Փաւկոնի. կարծեմ եթէ գարշեցաւ ՚ի
ձէնջ, քանզի հպարտ աստուած էր։ Եւ իբրև լուան
զայն, դադարեցին և գնացին ՚ի գործս իւրեանց. և
Վռնխիտոս գաղտ կոչեաց զՈւղկանիտոս և ասաց նը-
մա զխռովութիւն ժողովրդեանն, և եթէ որպէս կո-
րեաւ աստուածն իւրեանց. և եթէ զինչ արարից ես
ոչ գիտեմ։ Եւ սկսաւ Ուղկանիտոս պատմել զձշմա-
րիտն և ասէ. Լուր մտադիւրութեամբ, քաղաքապետ

1. Այլ օր. էին հզօր աստուածք է Փաւկոն։

և գառաւոր, գիտացիր զի երեքանձնեան աէրու-
թիւնն յամօթ արար զգարշելի պաշտամունս մեր, և
ոչ ևս մատուցուք զոհս այս պիղծ դիւաց, այլ միայն
Աստուծոյ կենդանւոյ, որ մնայ յաւիտեան. և այլ ոչ
ևս յառաջադիմի՝ի կռոցն պաշտելութիւն [1], և ոչ ե-
րազք և դիւթութիւնք գուշակեն մոլորեալ մարդկան,
քանզի երկնաւոր Աստուած առաքեաց զորդին իւր
յերկիր, և մարմնացեալ ծնաւ՝ի սրբոյ Կուսէն Մա-
րիամայ, զի սրբեսցէ զմեզ յամենայն անօրէնութե-
նէ: Եւ յայսմ հետէ Փաւղոս որդի Փաւղոնիդայ ոչ
զոք կարէ խաբել:

Եւ ընդ առաւօտն ժողովեցան ամենայն քուրմքն՝ի
միասին, և սկսան լալ զՓաւղոս, և լայնն ողբալով.
Ո՞ւր էիր վայելուչ գեղդ քո, ոյլ բաղձալիդ Փաւղոս.
ո՛րպէս յանկարծակի անյայտ եղեր՝ի քո փափաքո-
ղացս. երանի՛ եթէ ոչ էաք լեալ քահանայք քո: Ամե-
նայն աստուածք խնդութեամբ ընդունին զոհս՝ի քըր-
մաց իւրեանց, դու միայն անընդունող եղեր և աստեղծ
զմեզ. և քաղաքապետն մեր Վռնիփոտոս մատացաւ զան-
չաւի սէրն քո, և քեզ խնդիր ոչ արար: Ո՞վ կռոպա-
տեաց զքեզ՝ի մէնջ. ոյլ նախանձեցաւ ընդ անչափ
սէրն մեր, ոյլ Աիւսիոն և Դիա փոքր աստուածք. և
Փաւղոնիդա [2] աստուածուհի՝ դուստր Իրինոսի և Ա-
ստեմայ քոյր աստուածուհւոյն. արդ ընդէ՞ր ոչ ողո-
րմիք մեզ, և ողբայք ընդ մեզ զգեղեցիկ և զպայծառ
աստուածն զՓաւղոս. ընդէ՞ր լուեք և ոչ խնդրեք զկո-
րուստեանն:

Եւ յորժամ եղև գիշեր, զգեցաւ Վռնիփոտոս զար-
քունական պատմուճանն իւր և զքղամիան իւր, և
գնաց՝ի դուռն Բագարատայ, զի գեռևս չէր տեսեալ
զնա: Նոյնպէս և նա զգեցաւ զեպիսկոպոսութեան փի-
լոնն և զեմիփորոնն և նստաւ՝ի Թիւնեաց-ոն, առեալ
՝ի գլուխ իւր զաւետարանն և զխաչն և զտերունական
պատկերն, զոր ետուն Պետրոս առաքեալն: Եւ մըտ-
տեալ Վռնիփոտոս ետես զերանելին Բագարատ իբրև
զմոց, և շուրջ զանձամբն իբրև զհուր. անկաւ՝ի վե-

1. Ա,յլ օր. ի՛ոց պաշտամանս:
2. Ա,յլ օր. Փաւիանիդոյ:

ոչ եբեսաց իւրոց և երկիր եպաղ ահիւ մեծաւ, և ասէ. Մեծ է Աստուածն քրիստոնէից՝ զոր քարոզէ Բագարատ. Հաւատամ զի նա միայն է Աստուած երկնից և երկրի: Եւ ասէ. Ո՞րպէս մերձեցայց՝ի քեզ. քանզի տեսանեմ զքեզ իբրև զլոյս վառեալ և շուրջ զքեզ հուր, երկնչիմ զուցէ այրիմ ես:

Եւ զիտաց Բագարատ եթէ ետես զընտրեալն Հոգւոյն սրբոյ որ են՝ի քահանայից տուրք խորհրդեանն ըզ-գեաստս, քանզի տուրք են. և յարուցեալ եհան զեմի-փորոնն և զվիխլոնն և զտուրբարն, և նետաւ. և այլ ոչ ե-տես Վռնխիտոտս զհուրն. և ոչնչացեաց զինա՝ի համ-բոյր սրբութեան և նստոյց մերձ առ իւր, և օրհնեաց զինա յոյժ. և Հաշեցին՝ի միասին զոր տարաւ Վռնխիտո-տոս՝ի տանէ իւրմէ զամենայն բարութիւնս: Եւ յոր-ժամ ուրախացան և յարեան, բացան ձեղունք տանն և լոյս պայծառ ծագեաց՝ի վերայ նոցա, և յահ մեծ անկան՝ի վերայ երեսաց իւրեանց յերկիր. և կալեալ զձեռանէ նոցա Բագարատ՝ կանգնեաց զնոսա, և նըս-տոյց մերձ առ ինքն. և սկսաւ պատմել նոցա մի ըստ միոջէ՝ի հէն և՝ի նոր կտակարանաց Յովհաննէ՝ի Քրիստոսի մարդեղութիւնն, և՝ի համբարձումն և՝ի գալուստ Հոգւոյն սրբոյ յառաքեալն. և՝ի պատմու-թենէն լուսաւորչեան ամենեքեան որ անդ հանդի-պեցան աստուածային վարդապետութեամբն. և ողջ-ունեալ զամենեսեան յուզարկեաց՝ի յարկս իւ-րեանց: Եւ յաւուրն յայնմիկ յերրորդ ժամու գիշե-ցին գրեաց երանելին Բագարատ՝ի քարտիսի ձեռամբ իւրով այսպէս. Ես Լիւսիոսն կուռց բազին. Ես Բագա-րատ ծառայ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, գրեմ առ քեզ սիրեալ և զաղէր և դարչ Տուռմենոյ քաղաքիս փոքր աստուածդ. յոյժ ամ ընդունիս զգիրս իմ և ըն-թեռնուս՝ վաղվաղակի զոր հրամայեմ քեզ կատարեա. և երթիջիր դու՝ի կոտաեան տեղին՝ի գեհենն հրոյն և յարտաքին խաւարն, յորում է քո աւազակին աստուածն Փալիոն, և՝ի միասին կոծեցարուք զձեր կուռսան, զի մի այլ ևս տկրկիցէք քաղաքիս այսորիկ: Եւ տուեալ զթուղթն յԱնդրնաս՝ յղարկեաց՝ի մեհեան կուռցն: Եւ նորա երթեալ ոտիկս թէ յաղօթել և՝ի լնուլել, եդ զքարտէսն՝ի բազինն, և գաղտ փախեաւ

և դարձաւ առ Բագարատ։ Եւ յետ երկու պահոյ եղև ձայն յաներևութից և ասէ. Ո՛վ Բագարատ ծառայ Աստուծոյ կենդանւոյ, զհրամայեալս ինձ՝ ի քումմէ սրբութենէդ կատարեացուք. և իջցուք՝ ի սանդարամետս անդնդոց. արդ լինդա և ուրախ լեր, և հաստատեալ քո է։ Եւ յորժամ լուաւ զձայնն Բագարատ՝ անկաւ՝ ի վերայ երեսաց իւրոց և գոհանայր զԱստուծոյ. և առժամայն յարուցեալ ելին՝ ի հրապարակ քաղաքին, և աստղանշանք յերկինից առաջնորդեաց նոցա մինչև՝ ի տունն Վռնիփոտոսի. և նորա ելեալ ընդ առաջ եւ մոյծ գնոսա՝ ի տուն իւր լուսեղեամբ, և ոչ ոք ամենևին էին գիտաց, զի գեռ ևս գիշեր էր. և արար անդ ա՜ւուրս քառասուն։ Եւ՝ ի միում աւուր ժողովեցան քուրմքն՝ և՝ ի գուռն Վռնիփոտոսի և ասեն. Ո՛վ գաստա՜ւոր և շինող քաղաքապետ, մերձեալ է տօն Վիսախնայ աստուծոյն մերոյ. հրամայեա և արարցուք մեծաւ պայծառութեամբ, զի մի և սա խռովեցի մեզ և փախչիցի և կորնչեսցի որպէս Փալիոն, և լինիցիմք ծաղր ամենայն քաղաքացեաց և մերձակայից։ Կարծեմք, ոմ իշխան, եթէ յորմէհետէ եմուտ Ուղիանէ տա՜ս ի Տուռմենիս քաղաքս յայս, յոյժ աւերեին զմեզ աստուածքն մեր, և զզօհսն մեր ոչ ընդունին. բազում անգամ դիւթութեամբք հարցանեմք վասն մեծ և մանր աստուածոյն Փալիոնի, և պատասխանի ոչ տան մեզ. և մեզ ինչ օգուտ ոչ է, ՚ի զուր անուանիմք քուրմք աստուածոյն։ Ասէ Վռնիփոտոս. Ո՛վ իմաստունք, քահանայք աստուածոց մերոց, երթայք պատրաստեցէք զամենայն զենլիս զոհիցն, և յաւուր տօնին եկից և ես ՚ի զոհն։ Եւ երթեալ պատմեաց բազարատայ զասացեալսն ՚ի քրմացն. և նորա զձեռանն յերկինս համբարձեալ աղաչեաց զԱստուած վասն մեռցեալ կուռացն՝ զի կործանեսցին։ Եւ՝ ի գիշերին յայնմ միկ մինչդեռ քուրմքն ՚ի տունս իւրեանց նիրհէին, կործանեցան բազինքն և խորտակեցան ՚ի բազում մասունս. և յորժամ եհաս ակնջ տօնին՝ պատրաստեցին զամենայն զենլիս աւերլո քան զՓալիոնին, տղայս

1. Ա՛յլ օր. փոխ՛։

անարատս և զուարակս և խոյս և նոխազս և գառինս, և զարդարեալ քրմացն՝ գնայցին ՚ի մեհեանն Ապողոնի և գտին զբազին կոփածանեալ և խորտակեալ ՚ի բազում մասունս. և սկսան բախել զերեսս իւրեանց, և առնն մեծաւ հառաչմամբ. Վայ մեզ, ով Ապողոն, զար պատերազմ շարժեցաւ ՚ի վերայ քո, չեղև մեզ բանական կորուստն Փալիոնի, այլ և դու մեծ չարի դիպար. վայ մեզ, որ եթէ լուիցեն զայս յայլ քաղաքս՝ խոտեն և անարգս հանեն՝ զմեզ որպէս զաստուածոց կորոյսք. Ո՛վ հզօր և պայծառ աստուած մեր Ապողոն, ընդէր կործանեցար և փշրեցար, և ոչ եղև քո ունայն միայց: Եւ եղեալանտի արտաբեկեալք գնացին յայլ մեհեան Դիոյ կուռցն. գտին և զայն կործանեալ և բեկտեալ. և սկսան մեծաբարբառ ողբալ և հառաչել, մինչև ՚ի ձայնէն ժողովեցան ամբոխ բազում. և առեն քուրմքն. Կացէք ամենեքեան և ողբացեք ընդ մեզ, քանզի քաղցր և իմաստուն աստուածքն մեր կորեան և ընկեցան ՚ի սպառ. պատառեցուք զոճիս մեր և հող և մոխիր արկցուք ՚ի ծոց և ՚ի գլուխս մեր, և զերեսս և զձեակատս մեր բաղխեցուք, և սուգ կալցուք ընդ կործանումն աստուածոց մերոց: Եւ սկզբան ամենայն ժողովուրդքն լալ և ողբալ ընդ կործանումն կուռցն. և դիմեցին ամենեքեան հառաչմամբ և մեծաւ բարկութեամբ ՚ի տուն Վռնխիտոսի. և աղաղակէին արտաքոյ դրանն. Ո՛վ անարժան իշխան, ՚ի չար ժամու եղեր դու քաղաքապետ. տեսանէս դու զաստուածս կործանեալ և անփոյթ առնես, և ոչ յուզես և քննես վասն մեծ անցիցս որ ընդ մեզ անցին. ով անհաւատ և անպէտ դատաւոր և քաղաքաւեր, կ՚ըզ և գնա տես զքո սիրելն և զբարեկամ աստուածն՝ եթէ որպէս յաղբևս ՚ի կոխանս թաւալին, յայլ տեղի գլուխն, յայլ տեղի ձեռքն և յայլ տեղի ոտքն. և ոչ նոքա մեծացուցին զքեզ և փառաւորեցին և լցին զդանձատունս քո ոսկւով և արծաթով և դիպակամբ և ամենայն բարութեամբ: Իսկ Վռնխիտոս ՚ի բարձր պատուհանէն ասէ. Ո՛վ իմաստուն և հարկաւոր քաղաքացիք, ընդէ՞ր ողբայք և լայք. ոչ գիտէք զի ես ոչ ունիմ զաստուածս ձեր ի մեհեանի իմում, զի ես ոչ հաւանեցայ ի պաշտել զնոսա, զի ոչ ինչ են, այլ ես ունիմ զաստուածս ՚ի տան

քայքը, զի՞նչ կամիք զի արարից. մի՛ երբէք ընտրհք առ տուածային պարզևացն եամուտ՝ի քաղաքս մեր և կոչ ծանեաց զաստուածն։ Եւ նոքա առեն. Չի՞նչ էցէ ընտրհք աստուածային ընտրհայն [1], ոչ գիտեմք զի՞նչ իսօսիս. եթէ սիրելի ես աստուածոյն մերոյ՝ առա մեզ զՀշմարիտն։ Եւ նա առէ. Ընտրհք և զօրութիւնք՝ի բարձանց։ Եւ նոքա բարկացան յոյժ և առեն. Ո՛վ անարժան և անպէտ քաղաքաւեր, և Թշնամի աստուածոյն մերոյ, կորուստ և մահն քո հասեալ է. արդէս տուա մեզ պատասխանի։ Նմ Վռնիտոսս. Ընդէր բարկանայք և ամբոխիք և դառնանայք՝ի վերայ իմ մոլու Թեամբ։ Եւ նոքա առեն. Ոչ եթէ փոքր վնաս եղև, այլ աստուածոց կորուստ. և արժան է այլ սաստկու Թեամբ բարկանալ և լալ և կոծել։ Նմ Վռնիտոսս. Ընտրեցէք արս հանձարեղս և իմաստունս, և՝ի հա սարակ գիշերի՝ի մեհեանն դիւթուԹիւնս և աղան դինս մատուցանեն, և վիճակս արկցեն և հաւաստեաւ գիտացեն, եթէ ընդէր կործանեցան աստուածքն. միԹէ այլ Նստուած հզօրագոյն մատուեաւ ընդ նոսա, և վասն զի ոչ կարացին կալ ընդդէմ՝ կործանեցան։

Եւ ամենայն ժողովուրդն հաձեցան ընդ խրատն Վռ նիտոսի. երԹեալ ընտրեցին արս հմուտս դիւթու Թեան. և նոքա գնացին՝ի մեհեանս Լիւսիոնայ, զի նոցա բազինն էր կործանեալ. և սկսան դիւթել և առնել աղանդս՝ի հաստարակ գիշերի, և վիճակս արկանէին առաւօտ Լիւսիոնայ։ Եւ Վռնիտոսս երԹեալ պատմեաց Բազարատայ զամենայն. և նորա տարածեալ զձեռս յերկինս աղաչեաց զՆստուած՝ զի արասցէ աքանչելիս՝ի մոլորեալ ժողովուրդն։ Եւ բա զում կանայք ժողովեցան, և շուրջ պատեալ զմեհեանն և ծախս արկանելով երդէին պարելով զդիւ Թական երգս, և դիւԹք՝ի ներքս՝ի մեհեանն առ նէին զաղանդսինս. աղաչէին զբազինն զի խօսեցցէ ընդ նոսա։ Եւ եղև ձայն՝ի կռոցն Լիւսիոնայ և ասէր. Ո՛վ արք Տաւմեոյ քաղաքիս, լուարուք յինէն զՄնը մարիան. Մեք յայսմ հետէ ոչինչ եմք կարող առնել ինչ կամ գործել. մինչև յայժմ զամենայն զոհն ընդու

1. Այլ օր. պարգեաց։

նէսաք և զինդիրս կատարէսաք. այժմ զօրութիւն ոչ պոյ՛ի մեզ, քանզի յոյժ տկարացաք և ոչնչացաք. զի հը-
զօրապոյն աստուածն աստ եղեւեցաւ, և յահէ նորա
փալխոն կորեաւ և յանդունդս ընկղմեցաւ, նոյնպէս և
Ապողոն և Դիա կործանեցան. և պիտացիք ամենե-
քեան որ երեքանձեայ աստուածութիւնն առաքեաց
զչնորհս ողորմութեան՛ի քաղաքս ձեր: Այսն աղան-
դաւոր դիւթքն. Եւ ի՞ հզօրապոյն աստուած քան զը-
ձեզ. աստ և յայտնեա մեզ զՀիշմարիտն, թէ ոիւ է մեծ
աստուած՝ քան զձեզ և քան զՓալխոն: Այն բազինն.
Որ արար զերկինս և զերկիր, և որ ստեղծ՛ի սկզբանէ
զմարդն՝ այժմ զԹացաւ՛ի ստեղծուածս իւր և առա-
քեաց զՀրեղէն սուրն և կոտոյս զՓալխոն, և զայլ աս-
տուածն խորտակեաց. և այրն զոր ած Ուղկանխոոս՛ի
քաղաքս՝ նորա աշակերտ է: Եւ նոքա ասեն. Յոյժամ
կորեաւ Փալխոն և եկաք առ քեզ և հարցաք՝ ընդէր ոչ
առացեր մեզ զայդ: Այն բազինն. Եթէ կամիք որ դար-
ձեալ զօրութիւն գայ՛ի մեզ և լինիմք որպէս յառաջն՝
մատուցէք ինձ զոհ զսիրելին իմ զՎռնխոոոս: Եւ նո-
քա յոյժ ուրախ եղեն, և գնացին փութով ատոմք՛ի
տունն Վռնխոոոսի, աւետիս տային նմա և ասէին.
Երանի է քեզ, զի որպէս մեծացուցին զքեզ աստուած-
քըն և փառաւորեցին, դարձեալ կամին որ զքեզ զոհ
մատուցանելիք, և լինիցիս և դու աստուած փոխանակ
կործանեալ աստուածոց, և կանդնեացուք զքո բազինդ
և պաշտեացուք զքեզ: Եւ իբրև լուաւ Վռնխոոոս զը-
բօթալից աւետեացն՝ զի զենուլ կամիցին գնա և զոհս
մատուցանել կոտցն, գնաց փութանակի առ երանելին
Բազարատ, և լալով անկաւ յոտս նորա: Եւ նա ասէ.
Ընդէր լաս, որդեակ. միթէ բան չարութեամն լուար
և տրտմեցաւ սիրտ քո: Այն Վռնխոոոս. Երանի թէ
չար բան և ոչ դառն մահ: Այն երանելին. Մի երկնչիր
որդեակ. երթիջիր՛ի զենուսին, և ես եկից զկնի քո, և
աստուածային ընտրօքն համարձակութեամբ յանդի-
մանիցիս և յաղթեցիս անուամբն Այսուծոյ:

Իսկ սիրտ քուրմքն դողեցին փոքր մեծ և հնչեցան,
և ժողովեցան ամենայն ժողովուրդք քաղաքին զարդա-
րեալ ոսոխք արմատնեօք վասն ոճրին, և գնացին
միահամուռ կալան զՎռնխոոոս. և վասն զի ոչ կըր-

*գայր, այլ մանաւանդ ողբայր և հառաչէր, մերկացու-
ցին զնա և ձեռս յետ կապեցին և տարան ի մեհեանն.
և կացուցին զլսիբաց և բոկ առաջի բազնին Վիսախա-
նայ։ Եւ Վռնիփոտոս աճէր զաչսն իւր աստ և անդ զի
տեսցէ զԲագարատ. և յորժամ ոչ եառնս՝ ողբալով ա-
աէր. Վայ ինձ, եթէ յոր չար և դառն մահ մահանեցայ.
վայ ինձ որ ի խորս անդընդոց ընկղմեցայ։ Ո՞ւր ես հայր
Բագարատ, եկեսջիր փութով, որպէս առացեր ինձ
եթէ գամ զկնի և տրկեմ զքեզ. զիս առաքեցեր և
դու ոչ եկիր։ Ամդ օգնեա ինձ Տէր Յիսուս Քրիստոս,
զի ի քեզ հաւատացի և տրկեա զիս։ Խակ երանելին
Բագարատ տուեալ յՈւղկանիտոս զնաչն և յԱդբի-
նոս զտերունական պատկերն, և ինքն զգեցաւ զփիլոն
և զեմիփորոնն, և առեալ ի ձեռս իւր զաւետարանն
սուրբ՝ գնաց ի տեղին։ Եւ տեսին ի մէջ ամբոխին
զՎռնիփոտոս առաջի Վիսախոնայ կռոցն, մերկ, գլխի-
բաց և բոկ, և ձեռս յետս կապեալ։ Եւ տարածեաց
Բագարատ զձեռս իւր յերկինս և աղաչեաց զԱստուած,
և վառեցաւ ինքն իբրև զբոց. և տեսին զնա ժողովուրդքն
իբր զհուր լուցեալ, և յահէն անկան յերկիր ի վե-
րայ երեսաց իւրեանց. և նորա արարեալ ի վերայ
նոցա գնչան տէրունական խաչին՝ կանգնեաց զնո-
սա, և ասէ ցբագինն. Երդմնեցուցանեմ զքեզ, այս
պիղծ, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. փա-
խիր ի տեղւոջէդ յայդմանէ և երթիջիր ուր փալիոն
է, ի խորս ծովուն, և առժամայն եղև Հայթուռն
մեծ ի մեհեանն, և վերացաւ բազինն յօդս և անկաւ
ի ծովն. և յոյժ երկեան ժողովուրդքն և անկան յոր-
սայս. և արարեալ ի վերայ նոցա գնչան խաչին և ասէ.
Մի երկնչիք, քանզի պիղծն Վիսախոնա դիւօքն իւրովք ի
ապառ կորեաւ։ Եւ կանգնեցան ժողովուրդքն և տեսին
զահաւոր սքանչելին զոր արար Աստուած ի ձեռն ծա-
ռային իւրոյ Բագարատայ։ Աղաղակեցին մեծաւ բար-
բառով որպէս ի միոջէ բերանոյ և ասեն. Օրհնեալ
է Աստուածն Բագարատայ, հաւատամք ի նա՝ զի նա
միայն է Աստուած։ Եւ երթեալ լուծին զՎռնիփոտոս,
և շուրջ պատեցան զերանելեաւն, և պշուցեալ հա-
յէին ընդ երեսս նորա։ Եւ նորա ելեալ ի բարձր տե-
ղի՝ արար աղօթս ի վերայ ամենայն ժողովրդեանն. և*

ընթացան քուրմք ՚ի մեհեանն, և զբեկորս կառցն ժողովեցին և ընկեցին ՚ի ծովն և զսեղանն կործանեցին: Եւ հրամայեաց երանելին և փողս գոչեցուցին, և ժողովեցան ամբաւ ժողովուրդք. և երթեալ նոքօք ՚ի փոքր մատուռն զոր շինեալ էր Վռնիփոտոսի՝ կատարեաց զխորհուրդ սուրբ պատարագին, և հրամայեաց նոցա զեօթն օր սրբել, և երախայեցոյց զնոսա և ուսոյց զբանն կենաց:

Եւ բերին իւրաքանչիւր ոք ՚ի տանէ իւրմէ սպիտակ հանդերձանոցս և մաքուրս, որպէս պատուիրեաց նոցա սուրբն, և մտին[1]. և տարաւ զնոսա ՚ի մերձակայ գետն և մկրտեաց զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, քան և զոլք հազար հոգիք. և զգեցոյց նոցա նոր և սպիտակ զգեստ վառեալ մոմեղինօք. և հաղորդեցոյց զնոսա ՚ի սուրբ և ՚ի պատուական մարմինն և արիւնն Որդւոյն Աստուծոյ. և ամենեքին որք լուսաւորեցանն՝ տեսին զշնորհս Հոգւոյն սրբոյ ՚ի նմանութեան սպիտակ աղաւնւոյ՝ իջեալ ՚ի մկրտութիւն ջուրց, և դարձեալ թռեաւ յերկինս. և եղև ուրախութիւն մեծ ՚ի քաղաքին յայնմիկ: Եւ զաւուրս ութ[2] ուսուցանէր զնոսա զլուսաւորեալս և յուզարկէր յարկան իւրեանց. և առնէր սքանչելի նշանս առաջի ժողովրդեանն և բժշկէր աղօթիւք զկոյրս և զխուլս և զհամերս և ըզկաղս և զանդամալոյծս և զդօսացեալս և զայլսհարս և զջերմնոտս և զամենայն հիւանդս:

Եւ եւ համբաւն նորա ընդ ամենայն քաղաքս և գաւառս կղզւոյն, և երթային առ նա. և նա վարդապետութեամբ ուսուցանէր զնոսա յաստուածգիտութիւն, և մկրտէր զնոսա. և դարձոյց զամենայն կղզին ՚ի Քրիստոս: Եւ յամենայն օր մկրտէր և ուսուցանէր զնոսա. նոյնպէս և զկանայս և զաղջկունս մկրտէր առանձինն յայլ տեղիս գետոյն, և մկրտեաց անձինս անթիւս հազարաց. և մկրտեալ ՚ի քաղաքին Տուռմեցոյ քառասուն հազար, և յայլ քաղաքաց և գաւառաց հինգ հարիւր հազար:

Եւ ՚ի միում աւուր մինչդեռ ուսուցանէր զժողո-

1. Ա,յլ օր. մոմեղինս և ջահս և խոտրոխս:
2. Ա,յլ օր. զոմն ամ:

վուրդն, երևեցաւ սատանայ որպէս եթէ էվէսլպացի՝ բա-
զում սևադէմ դիւօք, եկայ քարընկէց մի Տ՛եռապոյն
և սակ մեծաւ ձայնիւ. Ո՛վ Բագարատ, ընդէ՞ր եկիր,
կամ ո՞վ ած զքե՛զ՝ի քաղաքս իմ, և զրկեցեր զիս ի-
մոյս, և յափշտակեցեր յինէն զբարեկամս իմ և ըն-
ծայեցեր Աստուծոյ քումմ. զարկս իմ աւերեցեր և
զպաշտելի կուռս իմ՝ի ծով ընկեցեր. վայ ինձ, սիրե-
լիք իմ և սպասաւորք, զի յորմէ Հեաւ եկիր դա ատ՝
զիս զերի արար, և զսիրելին իմ զՎռնիփատոս՝ զոր վա-
ռաւորեցի և մեծացուցի՝ ինձ Թշնամի արար:

Եւ յորժամ լուաւ երանելին Բագարատ՝ սակ ցժո-
ղովուրդն. Գիտացէք, որդեակք իմ, եթէ վասն զի
եկիք՝ի կոչումն Քրիստոսի, կրձտէ սատանայ զատա-
մուննա իւր վասն մեր, և որպէս առիւծ դարանէ գոչէ
՝ի վերայ մեր, և որպէս վիշապ բանայ զբերան՝ յահա-
ցուցանել զմեզ. բայց զի զինուորեցաք՝ի զօրութիւն
Քրիստոսի՝ արհաւար կացցուք ընդդէմ Թշնամւոյն:
Եւ հրամայեաց ժողովրդեանն զառնալ յարևմուտս
ընդդէմ սատանային, և ասէ. Թքեք յերեսս նորա: Եւ
յորժամ Թքին՝ ասէ. Հրաժարեցէք՝ի սատանայէ և-
լոյս անգամ: Եւ յորժամ հրաժարեցին՝ երևեցան
հրեղէն սրեալ նետք, և հալածեցին զսատանայ դի-
ւօքն և անյայտ արարին: Եւ հրամայեաց ժողովրդեանն
զառնալ յարևելս և ասել. Խոստովանիմք զՔրիստոս
Աշխարհիս Աստուած, երկոյս անգամ. և հանդուրժեցին
զաւետարանն և զտերունական պատուէրն և գնացին. և
լցեալք Հոգւովն սրբով՝ գնացին խնդութեամբ մե-
ծաւ լուսաւորեալք՝ի լուսաւորչէն Բագարատայ յար-
կս իւրեանց: Եւ տուրքն Բագարատ ձեռնադրեաց
զՍգրիննոս քահանայ և զՈւղկանիտոս սարկաւագ. և
ասէ ցՍգրիննոս. Ձեռ իմոյ կատարման՝ առաքեա
զՍգրիննոս՝ի Հռոմ՝ առ տուրբ առաքեալն Պետրոս,
և ձեռնադրեսցէ զնա եպիսկոպոս փոխանակ իմ յա-
ծառ իմ՝ի քաղաքիս յայսմիկ. և դարձաւ Սգրին-
նոս և ասէ. Ողջեակ, որպէս առեալ զիս և ուսար ի-
նէն՝ նոյնպէս և դու հասցես զՔրիստոսի նոր հօտս:

Վասն կառուցման արբոյն Բագարատայ.

Էր՝ի քաղաքին այր մի մեծատուն՝ որոյ անուն էր Աբրահամ, և սատանայ կապեաց զնա. և նա միայն պաշտէր զաղտուածեամբ զկուռս, որ և արար պատկեր փոքրիկուն, և՝ի թաքստի պահէր յինքեան. և՝ի միտս իւր յաճեռնայն ժամ մոլէր, և սպառնայր քահանայապետին Քրիստոսի սրբոյն Բագարատայ։ Եւ՝ի միում աւուր եկեալ առանձինն զերանելին՝ զի կայր յաղօթս, և հանեալ զսուսերն սպան զամենապատիւ սուրբն Բագարատ, յուլիս ամսոյ ԻՐԵ-քառասան, և փախեաւ՝ի տուն իւր, զի մի ոք գիտասցէ։ Բայց Աստուած նոյնժամայն յայտնեաց Վռնխիոսոսի էշխանի. և կալեալ զանօրէնն Աբրահամ՝ կապեաց ձեռս յետս, և այնչափ զանեաց արկաւաջօք զլանջն և զթիկունսն՝ մինչև կեղեքեցաւ ամենայն մարմինն. և հրով զգուխն և զմորուսն այրեաց և սևեաց զերեսն. և առեալ լինքնին զսուրն և եզեն զնա սրունքն, և եհատ զգլուխ նորա և ընկէց՝ի ծով, և զմարմինն հրամայեաց ընկենուլ շանց և ագռաւուց։ Եւ արարեալ տապան արծաթի՝ մեծաւ պատուով և անուշահոտ խնկովք և մանրուր կտաւովք պատեաց զպատուական մարմինն, և եդ յարծաթի տապանին. և չինեաց՝ի վերայ գեղեցիկ մատուռն յանուն սրբոյն Բագարատայ։ Եւ զքահանայն Աբրահամ ըստ հրամանի սրբոյն առաքեաց՝ի Հռոմ՝ առ Պետրոս առաքեալ. և երթեալ պատմեաց զամենայն մի ըստ միոջէ, և ձեռնադրեաց զնա եպիսկոպոս. և նորա դարձեալ՝ի Տուռմենի՝ նստաւ յաթոռն փոխանակ սրբոյն Բագարատայ։ Իսկ Վռնխիոսոս մինչև ցմահն իւր ծառայէր և սպասաւորէր եկեղեցւոյն և տապանին. և սուրբն բարեխոս առ Քրիստոս ոչ միայն Սիկիլեցւոյ կղզւոյն, այլ և ամենեցուն որք կատարեն զնիշատակ սրբոյն, փառաւորեալ զամենասուրբ երրորդութիւնն, զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Բասսայ և որդւոց իւրոց Թէոդիսի և Ագապի և Պիտոհի։

Մաքսիմիանոս Թագաւոր եկեալ՝ի քաղաք մի եւ բնակել՝ զոր կոչեն Բիւթով, որ է յարևմուտս, և կայ՝ի մէջ Գալլեայ [1] և Հռոմեայ. և կոչեցեալ զքուրմն ա նուանելոց աստուածոցն՝ առնէր ուրախութիւն մեծ. և՝ի խնճոյսն ասէ ցոսին՝ որ էր առաջնորդ պիղծ պաշտամանն նոցա, առանց որոյ զոհ ոչ մատչէին աստուածոցն, և անուն էր նորա Մարկեղինոս։ Ասէ ցնա Թագաւորն. Հայր մեծ աստուածոցն, ըստ կամաց քոց լինի զոհքն աստուածոցն ընդ ամենայն աշխարհ, և մեծապէս կատարեացին։ Մարկեղինոս ասաց. Հրամայեսցէ քաջութիւնդ քո զրուէ օրէնս դնել, զի ամենայն մարդ զոհեսցէ աստուածոցն, առաւել ևս Ագրիպպայ և Ապողոնի՝ որք զքաջութիւնդ քո պահեն՝ի խաղաղութեան։ Եւ արարեալ զայն Թագաւորին որպէս և ասացն, եւ զրուէ օրէնս՝ի Բիւթոնին՝ մատուռ մերժութեանն, քանզի էր քաղաքն երևելի. և անտի առաքեաց հրաման ընդ ամենայն տեղիս. և էր այնու հետև տրտմութիւն յոյժ քրիստոնէիցն, քանզի բազումք անկանէին՝ի չքմարիտ հաւատոցն և՝ի յուսոյն Քրիստոսի։

Եկին եհաս հրաման և յԵդեսացւոց քաղաքն, որ է առաջին Մակեդոնիա, առ բդեշխն Ելլադայ և առ՝ի . . .[2] Մակեդոնիայ որ էր յԵդեսայ. և նոքա ընկա-

1. Ա. յԼ օր. Գալլէայ։
2. Պակասէ յօրինակին։

լեալ զՀրամանն՝ զրուկ առաքեցին ընդ ամենայն քաղաքան, հրամայեցին մեծաւ պնդութեամբ կատարել զպօհս կուռցն. իսկ զանհաւանան չարաչար տանջանօք սպանանել: Բազումք ի քրիստոնէիցն այնուհետեւ ոչ բերելով զահ սպառնալեացն և այլք գառնային յամօ պարշտութիւն, որոց խաւարեալ էին միտք իւրեանց առ ատոյգ լոյն. իսկ Ձիմարտեալքն առ աստուածային սէրն ի Քրիստոս՝ խրախուսեալք հաստատեալք խոստովանել զՁիմարիտ Աստուածն:

Էր ոմն ի քաղաքին Կիւն բարեպաշտօն և երկիւղած Աստուծոյ և երևելի ի մեծ ազգէ, որում անուն էր Բասսա. ունէր և երիս որդիս, անուն առաջնոյն Թէոդինէ՝ որ ասի Աստուածապաշտ, և երկրորդին Սգապիա՝ որ է Սիրուն, և երրորդին Պիսախ՝ որ լսի Հաստատուն: իսկ Հայրն նոցա էր քրմապետ, և ծանօթ քաղաքին և սիրելի իշխանացն և մեծ ի քաղաքին, և անուն նորա Վաղերիոս, որ բազում մարտուցեալ ընդ կնոջն՝ ոչ կարաց դարձուցանել զնա ի պաշտօն կուռցն: Եւ յաւուր միում յերևելոջ որ էր տօն հեթանոսաց, հրամայեցին իշխանքն զոհս մատուցանել կուռցն. իսկ Վաղերիոս այրն Բասսայ յառաջ կացեալ՝ նախ ինքն մատուցանէր զոհս կուռցն, և ապա այլք բազումք զկնի նորա: Իսկ երանելին Բասսա, առեալ զմանկտունս իւր մեկուսի՝ յոյժ առնէր զյուսացեալն ի Քրիստոս հաւատոցն, պաշտել զսուրբ զԵրրորդութիւնն՝ որում կեցին և խոստովանեցին և կատարեցին. և այլ աստուածք հեթանոսաց ոչինչ են, և մարդիկ խաբեալք ի դիւաց պաշտեն զնոսա, և ոչ իմացան զՁիմարիտն Աստուած և զպարգևատուն նոցա յերկինից և յերկինս, որ կան և մնան հաստատեալ ի գալստեանն Քրիստոսի. և Հայրն ձեր Վաղերիոս խաւարեալ առ լոյս և առ Ձիմարտութիւնն՝ անհանձար ժառանգութիւնն նոցա ի խորս կորստեան ընթռնեալ՝ ոչ հաւանեցաւ գալ առ լոյսն Ձիմարիտ Քրիստոս: Արդ մի հաւանիք մոլորեցուցչին, և գուք արկեալ որպէս առ Հայրն՝ հաւանեալ նմա ժառանգ լինել գժոխոցն. զի որ սիրէ զՀայր կամ զմայր առաւել քան զՔրիստոս՝ չէն նմա արժանի, մանաւանդ Աստուծոյ ուրացողք: Որդեակք իմ, յիշեցէք զՀոգևոր մնուդ իմ, որ զձեզ աւետա-

բանաւն ծնայ, թէպէտ և ես ըստ մարմնոյ ծնօղ և մեռցօղ և աճեալ յայդչափ հասակ, իմ ինչ ոչ հաւմարիմ զձեզ՝ այլ արարողին ձերոյ և ամենայն արարածոյ:

Եւ այժմ աղաչեմ զձեզ, որդեակք իմ, ընթացարուք՝ ի յոյս կենացն յաւիտենականաց. չեն ինչ բերնաւորացն սպառնալիքն. ամենայն երկրաւորքս որ երեւիմն՝ անցաւորք են և ժամանակաւորք, այլ ձեր և իմ ցանկութիւն լիցի խնդրել զկամն նորա և զպատուիրանսն պահպանութիւն, և այսպէս մեռանել՝ ի կամն նորա:

Եւ երբեմն կատարեցին զպտոն կուռցն և զպղծութեան պաշտաւնութեան, և տեսեալ Վաղերիոս զկինն որդւոցն՝ ոչ հպել՝ ի զոհսն, բարկացեալ ածէր զորդիսն իւր յատեանն և աղաչէր զնշխանսն զի զորդիս նորա .... ե-ցուցանեն[1] ՚ի պաշտօն ...[2] կուռցն. զի որպէս հնար լիցէ ողջաւոք կամ սպառնալեօք և կամ տանջանօք հաւանեցուցանել զնոսա ՚ի պաշտօն դիցն մոռաւեայ: Եւ բռնաւորացն հարցաքննեալ թէ ընդէր ոչ կամեցան լսել և զոհել, իսկ երէց որդինն նորա առ ջբռնաւն. Այս յայտնի լիցի ձեզ, զի միով օրինակաւ և նոալիւն կրօնիւք զօրէնսն Քրիստոսի պահեմք և զսաստուածութեան նորա առնեմք և զմարգեղն խրատն և ոչ զհայրենին՝ որ ոչ գիտէ զԱստուած, որոյ խաւարեալ միտքն ՚ի դիւաց պղծոց. և խնամութիւնն Աստուծոյ առաջնորդեալ մեզ հրամանաց իւրոց, զի արդարութեալք ՚ի հաւատոցն՝ որդիք լուսոյ եղիցուք, և երանեալ եաց տուրբ հարցն ժառանգակիցք յաղթայութեանն երկնից, ողք ձշմարիտ հաւատով զմեզ ծնան ՚ի յոյս յաւիտենից կենացն: Ունիմք և զնոյն խրատս զպարկեշտ և զքրիստոսասէր մօրն մերոյ, և խոստովանիմք և փառաւորեմք զամենակալն Աստուած: Արդ դուք փութացարուք ՚ի ձեռն տանջանացն ընտիրս երևեցուցանել զմեզ. քանզի պատրաստ եմք մատուցանել զմարմինս մեր ՚ի մահ վասն Քրիստոսի, զի յաւուրն դատաստանի խորհուրդ հոգւոց մերոց ՚ի լուսաւոր յոյս

1. Ակնդն բառիս եղծեալ. Թուի հաւանեցուցանէն կամ խոնարհեցուցանէն:
2. Անկեալ է բառ մի յօրինակին:

եկեսցէ: Եւ լուեալ իշխանացն հրամայեցին զնա կա-
լեալ և քերել, և զայլ եղբարսն հանդերձ մարդն կալ
մօտ անդ և հայել: Եւ ցնա ասէր բղեաշխին. Ջ[ի]նչ ա-
նուն է քեզ: Եւ նա ասէ. Մայրդ իմ՝ գեղեցիկ անուն
եդեալ՝ Թէոդնիս կոչեաց, զորոյ անուան իմոք զՀե-
ելիա՝ զիտութիւն նոր առ Աստուած՝ ի ձեռն Հրէ-
նութեան այսր ջանալ հաստատել, և հաւատալ հա-
ղորդ լինել մահին սրբոց: Բղեաշխն ասաց. Ընդ[ի]ր հա-
ւանական բանիւք խաբեալք իբրև զմանկունս կամիք
հանել զձեզ՝ ի կենացս: Եւ հրամայեաց քերել զնա.
և մինչդեռ քերէին՝ քարոզն աղաղակէր. Զո՛հեա մեծի
աստուածոյն Աբրահամայ և Աստղկի և կաց: Իսկ
սուրբ նահատակն ասէ ցիշխանան. Տկար են մեք-
նայքդ ձեր, ուլ պղծ արբանեկօքդ աստանայի. յե-
նել մահ նահատակացն Քրիստոսի երդուեալ՝ եթէ
ոչ երկեաւցէ՝ ի տանջանացդ ձերոց վասն Աստուծոյ Հըշ-
մարտութեանն. այլ՝ ի ձեռն մեծամեծ խոշտանգա-
նաց՝ յաղթեցից չարահնար խմաստից ձերոց: Եւ հա-
սին քերանքն մինչև յոսկերս սրբոյն, մինչև մերկա-
նալ իսկ ոսկերացն: Եւ տեսեալ երանելոյն Բասսոյ՝
ասաց. Նահատակեաց, որդեակ, ընդդէմ աստանայի,
զգեցեալ զգէնն Քրիստոս, զսպականացու մարմնոյդ
քո տուր բռնաւորացդ, զի՝ ի գաստեանն Քրիստոսի
միասանգամ ընկալցիս զդա: Նոյնպէս և եղբարքն ա-
սէին. Պինդ կաց, տէր, միաբանս ընկալեալ և զմեզ.
քանզի պատրաստեմք և մեք ընդ Հանապարհն Տեառն
գնալ զկնի քո, և ընդ շաւիղս քո գնալ. վասն զի՝ ի
հօր տեղ դու ես այսուհետև մեզ: Իսկ երանելոյ
նահատակին Քրիստոսի զաչս՝ ի բարձունս համբար-
ձեալ ասաց. Աստուած, տուր ինձ զկատարեալ համ
բերութիւն և զընթացս իմ կատարեա, զի եղիցի
ժառանգաւոր սուրբ խոստմանցն՝ զոր խոստացար սի-
րելեաց քոց: Եւ զայս ասացեալ և փառաւորեալ զՀայր և զՈրդի և զՀոգին սուրբ, ասացեալ զամէնն, և այնպէս աւանդեաց զՀոգին:

Եւ բղեշխին կոչեցեալ զերկրորդ եղբայրն՝ ասաց. Ջ[ի]նչ անուն է քեզ: Եւ նա ասաց. Մեծիմ աղախին Հշմարտին Աստուծոյ մայրս իմ՝ Սգապիս կոչեաց զիս, զորոյ զանուն վիճակեալ՝ փութայ՝ ի սիրոյն Աստու-

ծոյ լսոյ ջանկանալ, այլ սիրելի նմա երևեալ: Իակ բըզեաշխին հեզաբար վարելով առ մանկունսն՝ ասաց. Ընդ զեզդ քո՝ ով մանուկ, զարմացեալ՝ ի գուն յորդորեն զմեզ աստուածքն, քանզի դԹան՝ ի քեզ վասն ուղիղ վարուց հօր քո. արդ մի զմոլորութիւն եղբօրն քո մոլորիր, այլ հաւանեա և զոհեա աստուածոցն, զի սիրելի մեր լիցիս: Իակ տուրքն ծիծաղեցաւ և ասէ. Ո՛վ ամբարիշտ և անաստուած, խրատուդ ձերոյ այսչափ կարէ[1] պիղծ և ամենայն ջարտհնար[2] մեքենայիցդ հայրն ձեր աստանայ հրապոյրս մատուցանել, զի՝ ի ձեռն ոգոք բանիդ խաբեացէ զծառայս Աստուծոյ. եւ զեւեալ՝ ի պատուական մահ սրբոյ եղբօրն իմոյ՝ որ հաւատով կատարեաց զընթացսն իւր, և՝ ի կարդաւոր վարս մեր սրբոյ, եԹէ զմարմինս իմ սրոյ և հրոյ և գազանաց մատնիցէք, ոչ ուրացայց զբարեպաշտ շաւիղս եղբօր իմոյ, այլ ընդ հետս խոստովանութեան նորա գնացից. և օտար համարեցայց զաստուեր կենացս այսոցիկ, զի անմահ զպայութիւն հոգւոյս իմոյ՝ առ Աստուած կատարել երևեցայ: Եւ ասացեալ նորա զայս՝ հրամայեցին պիղծ իշխանքն կախել զնա, և՝ ի գլխոյն մինչև՝ ի լանջսն մորթել: Իակ սրբոյն այնպիսի գառն տանջանաց համբերեալ՝ յաղօթս կայր և ասէր. Աստուած ամենակալ, որ կամօք քովք կեցուցեր զազգ քրիստոնէից, ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զանուանդ մարմնոյս իմոյ անուսկանս արա, որ կոչեցեր զիս՝ ի կարգ բարեպաշտութեանս. զի քաջութեամբ համբերեալ մրցմանս՝ զանուսկան պսակն ընկալայց՝ ի թագաւորէն Քրիստոսէ, վասն որոյ արհամարհեալ զմուտի աշխարհս՝ մերկացեալ զմոլոր մարմնոյս իմոյ: Եւ զայս ասացեալ նորա՝ անօրէնն գահիճքն կոտզէին զմոլոր իբրև զվայրենի գազան՝ մինչև ցկուր ծրս նորա. և այնպէս քաջութեամբ յանգ հանեալ նորա զընթացսն իւր, մինչդեռ յաղօթս՝ կայր աւանդեաց զոգին:

Եւ նորա վախճանեալ, հրամայեաց բզեաշխն արձակել զերծոտդ մանուկն, և ասէ ցնա. Ցմէնչ անուն է

1. Ա. յԼ օր. կարէ:
2. Ա. յԼ օր. ամենայնի:

քեզ, և հա ասաց. Զարդ զգաստութեան տուր մայրն իմ՝ հաւատովքն Քրիստոսի պահել զիս, և հաւատարմացուցեալ զխորհուրդս հոգւոյ իմոյ, և Քրիստոսի յանձն արարեալ, Պիտիս անուանեաց զիս. ուստի անուանակցութիւնս երևեցուցանէ զբարեպաշտ խորհուրդ մօրն մերոյ: Իսկ անօրէնն իշխանքն ողբալոք կամէին խաբել զքրիստոսազգեաց մանուկն: Եւ ասէ ցնա բզեաշէն. Ցիմաստուն խանձարուրս մնար մանուկ դու, արքեր կաթն ազնուական. և աստուածքըն վասն գԹոյ հօրն քո խնայեն 'ի քեզ. արդ մի լինիր անհաւատ, այլ եԹէ և պատիր բանիւք մարթ քոյ խաբեցար իբրև զմանուկ, այժմ հաւանեաց մեզ և լեր սիրելի մեծի աստուծոյն Ս.րամազդայ, և կատարեա զՀրամանն Թագաւորին, և լեր մեր բարեկամ: զի եԹէ զոհեացես մեծին Ս.րամազդայ՝ բաւժեացիս 'ի տանջանաց. քանզի գիտեմք և մեք եԹէ իբրև զմանուկ հաւանեցար:

Իսկ քրիստոսազգեաց մանուկն հեզաբար պատասխանի տուեալ ասէր. Բարիոք կացուցանէք զիս 'ի վերայ Հանապարհին Ճշմարտութեան, Թէպէտ և չիմանայք, զի հաւանեցայց գԹոց երկնաւոր Հօրն Յիսուսի Քրիստոսի, և ընԹացեալ զասպարէզն յաղԹեցիկ բանհնար զինուցդ ձերոց. քանզի Ճշմարիտն Աստուածն աւընԹեր կայ իմ ունելով զարդարութեան պսակն: Ա.րդ մի կարծէք եԹէ իբրև զմանուկ հաւանեցայց ողբանացդ ձերոց և երկեայց յաւելիակայ տանջանացդ. քանզի Թէպէտ և մանուկ երևիմ ձեզ, այլ խորհրդովք կատարեալ կամ առաջի, խրատեալ Քրիստոսի իմաստութեամբն՝ փութամ ընդ առաջկատարեալ սուրբ եղբարան իմ գրիլ 'ի վիճակ սրբոց:

Իսկ չարահնար իշխանքն, հրամայեցին կապել զնա ձեռս յետս, և կապարէխուք մատել զԼերան. և կորզել զկապանան 'ի պարանոցն զի բեկեալ յետս կոյս յարմըկամնան, և լուծեալ յօդոցն և 'ի խաղալեացն՝ վաղվաղակի հանցէ զոգին: Իսկ սուրբ նահատակն Քրիստոսի յայնպիսի չարչարանս զանկն 'ի յերկինս համբարձեալ՝ ասէր մեծաձայն. Քրիստոս Փրկիչ, լսեալ իմ Ճշմարիտ, Հաւատացեալ արդարութեան, որ մօտ ես առ երկիւղածս քոյ, և զոք պահեն զպատուիրանս քո,

*զԹաճ և ողորմած, զու Տէր և յիս առաքեա զօգնա-
կանութիւն քո. այո, Տէր իմ Յիսուս Քրիստոս, փըր-
կեա զիս յապականութենէ հակառակորդին, և Թուեա
զիս ընդ Ձչմարիտ առաքինի նահատական, որ վասն
սրբոյ անուանդ քո մատնեցին զանձինս ՚ի մահ:*

*Եւ լսեալ իշխանացն և չհամբերեալ այնպիսի հա-
մարձակութեան՝ հրամայեցին զնա զլիատել. և տուբն
ասաց. Թողացուցէք ինձ վայր մի, զի խորհեցայց: Եւ
առեալ Թողութիւն՝ ասէր. Թագաւոր ամենայն յա-
ւիտենից ամենակալ, որ ՚ի ձեռն Քրիստոսի քո զամե-
նայն իմաստութեամբ արարեր, որ ինչ յերկինս և որ
ինչ յերկրի, որ զամենայն ինչ կառավարեալ յօրինեցեր,
որ զգուշդս դիւացն ՚ի տարտարոսն ընկղմեցեր, և զորս
վասն անուան քո Ձգնեցան՝ ընդ երկնաւոր քաղաքա-
կիան զրեցեր, և ընդ սուրբս քո ոծնես ՚ի յաւիտենա-
կան ցնծութենն. զու, Տէր, ընկալ և զիմ ոգիս, և
զրեա ընդ երկնաւոր քաղաքացիան ՚ի վերինն Երուսա-
զէմ՝ այսու խոստովանութեամբ. և զսուրբ մարմին մեր
Համարեա ՚ի զաս սրբոց, որ երիս որդիս ծնաւ պա-
տուիրանօք քովք, և ծառայեաց քեզ սուրբ սրտիւ:
Եւ իբրև կատարեաց զաղօթսն՝ ասէ ցդահիճն. Ե՛կ
կատարեա զՀրամայեալն քեզ: Եւ այնպէս կատարե-
ցաւ առաքինի նահատակն Քրիստոսի:*

*Եւ յետ այսր Հրամայեցին իշխանքն զքրիստոսա-
զեաց մարմն մանկանցն տանել ՚ի բանդ. և զգուշու-
թեամբ Հրամայէին պահել, և ոմանց մտանել առ նա
՚ի սերեբեաց խըցդ, զի Հաւանեցուսցեն զնա զոհել
աստուածոցն: Իսկ սուրբն ՚ի բանդին անպակաս յա-
զօթս կայր և փառաւորէր զՔրիստոս. և խնդրէր ան-
խափան կատարել զընթացս խոստովանութեամբն
Քրիստոսի: Եւ զայնս ոչք մտանէին և եւանէին առ
նա՝ զի Հաւանեցուսցեն զնա, մեծաւ թէնամանօք ար-
ձակէր: Եւ յետ աւուրց բազմաց կամեցաւ չուել իշ-
խանն ՚ի Մակեդոնիա. և խորհեալ այսպէս զոհել դի-
ւաց, Հրամայեաց ածել և զսուրբն Քրիստոս՝ զի զոհեա-
ցէ: Եւ իբրև եկն առաջի՝ ասէ ցնա իշխանն. Ձ՞ինչ ա-
նուն կ՚քեզ: Եւ նա ասէ. Քրիստոնեայ եմ, և ՚ի մարդ-
կանէ Բառս կոչիմ: Իշխանն ասէ. Գիտացեր զառն-
Ջանս մանկանցն քոց՝ որ ՚ի սովն քո մնան և ՚ի գիրկս*

քո զարդացան, զի վասն անհաւանութեան իւրեանց
պատն և անհնարին տանջանօք մեռանն, և քո տեսեալ
զջար մահն նոցա ժուժկալեցեր. արդ և դու եթէ ոչ
հաւանեացիս՝ ևս մեծագոյն և չարաչար տանջանօք
վատնեացիս: Եւ սուրբն Բասսա ասաց. Այնօրէն և չար-
խնայ հոգւով և աղաչուր բարուք. կարծես եթէ
Թողուցուս զընթացս մանկանցն իմոց, և զայնպիսի
նահատակութիւն զոր նահատակեցան՝ իմ մուսեալ
զարմանալի մանկունքն, որ այժմ ընդ Քրիստոսի յեր-
կինս ցնծան, և մոտի խրատուդ քո հաւանիցիմ, զի
ոչ մեռայց. լուեա՛ ի մելոտութենէդ, ժո՛ր բռնաւոր.
քանզի առապարէդն Քրիստոսի պատրաստ է, և կայ
մեզ ինձ նահատակել ընդդէմ հօրն քո սատանայի,
և ընթանալ առ Թագաւորն երկնաւոր. առեալ զառ-
հասուչեայ վերին կոչմանն. արդ տանջեա որպէս և
կամիս, քանզի ես ոչ հաւանիմ զոհել անշունչ դիւաց:
Եւ զայրացեալ իշխանին հրամայեաց կապել զնա ձեռս
յետս, և նախ կապարիւք ջարդել զամենայն անդամս
նորա. և յետ ջարդելոյն ապա գլխատել զնա: Բասսա
ասաց. Գոհանամ զքէն Քրիստոս, որ միայնոյ ունիս
զանմահութիւն, զի արժանի արարեր զիս կոչմանս
այսմ: և աղաչեմ զքեզ, Տէր, ընկալ զիոստովանու-
թիւնս իմ, և խառնեա զիս ի թիւս սրբոց քոց, զի
փառաւորեալ ես անուն Հօր և Որդւոյ և Հոգւոյդ
սրբոյ: Եւ այնպէս խոնարհեցուցեալ զպարանոցն զըլ-
խատեցաւ սուրբ և առաքինի վկայն՝ ի Քրիստոս Յի-
սուս ի Տէր մեր. որում փառք և զօրութիւն ի յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոց Վկայիցն Բասսոսի, Եշսեբի, Եշոիքի և Բասլի՝ չորից զինուորացն։

Յետ վկայութեան սրբոյ եպիսկոպոսին Թէոպոմ պեայ և Թէոնէայ կախարդէն, այս չորք զինուորքս Բասսոս, Եւսեբիոս, Եւոիքոս և Բասիլիոս, եկին ՚ի վանն առաջի Թագաւորին, լուծեալք զգօտիս ՚ի միջոյ իւրեանց, եդին առ ոտս նորա, աղաղակէին մեծաձայն և ասէին. Քրիստոնեայ եմք։ Հանգի և նոքա առաջաւորք և պատուականք ՚ի դրան արքունի, և մեծագոյն պատիւ ունէին քան զամենայն զինուորականսն իւրեանց։ Իսկ իբրև եառնս Թագաւորն՝ բարկացաւ յոյժ, և ասէ ցնոսա Թէ՝ Սդրտարև քրիստոնեայք էք՝ որպէս ասացէքդ։ Յայնժամ ասեն ցնա. Քրիստոնեայք եմք։ Պատասխանի ետ Թագաւորն և ասէ ցնոսա. Ջինչ հաճեաց զձեզ զայդ ասել ինձ։ Յայնժամ պատասխանի ետուն իբրև ՚ի միոջէ բերանոյ և ասեն. Եաւ է մեզ զոր յանցեաք ՚ի մանկութենէ մերմէ մինչև ցայսօր. կամիմք այսուհետև ապաշխարել վասն առաջին յանցանաց մերոց, և խոստովանիմք ՚ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, ՚ի Թագաւորն որ կայ և միայ յաւիտեան. որ քաւիչ լինի մեզ վասն բազում ոչնմութեան իւրոյ։ Եւ յայսմ առաւել ևս խռովեցաւ Թագաւորն բարկութեամբ մեծաւ։ Եւ դարձեալ խորհեցաւ անցուցանել զբարկութիւնն ՚ի նոցանէ, քանզի սիրէր զնոսա յոյժ, և սկսաւ ասել ցնոսա գաղտ. Ջինչ է քրիստոնեայք, զի բերանովք և շրթամբք խոստովանիք՝ Թէ քրիստոնեայք եմք, և սիրտք ձեր ՚ի

ստացուածս ձեր զանգեալ են. արդ՝ եթէ Աչմարիտ քրիստոնեայք էք դուք, տուք ինձ զարարս ձեր զամենայն զոր ինչ և ունիք, զի շնորհեցից զայն ընկերացդ ձերոց։ Զայս ասէր զի փորձէր զմիտս նոցա, եթէ պահեսցեն և ոչ տացեն նմա զինչս իւրեանց։ Փութացեալ երանելին Բասսոս՝ եկն և եբեր ոսկի լտերս քսան, և եդ առ ոտս նորա, և ասէ. Զամենայն ստացուածս իմ տամ քեզ։ Նման նմա Եւսեբիոս երանելի տեսեալ զյօժարութիւնն Բասսոսի՝ ինքն ընդ ինքեան եկն և եբեր ոսկի լտերս քառասուն։ Եւտիքոս այր ցանկալի եկն և եբեր ոսկի լտերս վաթսուն, և ասէ. Ա՛յս ոչ ինչ է վասն Աստուծոյ. զայս ասաց առաջի թագաւորին։ Իսկ երանելի ծառայն Քրիստոսի Բասիլիոս՝ հոգւով եռացեալ բազում զօրութեամբ, եկն և եբեր ոսկի լտերս եօթանասուն՝ և ասէ. Զայս ամենայն արհամարհեցաք վասն Աստուծոյ սիրոյն, զոսկի և զարծաթ և ըզհանդերձս պատուականս անարգ համարեցաք. և ա՛ս են ցթագաւորն. Ա՛յս ամենայն յոչինչ է և յոչինչ համարեալ է. եթէ զամենայն ինչ շահեսցուք՝ զինչ օգուտ է մեզ, որպէս և գրեալ է. եթէ զամենայն աշխարհս շահեսցուք և զանձինս մեր կորուսցուք՝ զինչ շահ է. և դարձեալ ասէ, եթէ՝ Ջինչ տացես փոխանակ ընդ անձին քում. և Լաւ է անկանել՛ի ձեռս Աստուծոյ և մի՛ ի ձեռս մարդկան. զի ոչ կարեմք մեք մնռանալ զվաստակս և զնեղութիւնս հոգւոյ մերոյ զերանելոյ վարդապետին զսուրբ եպիսկոպոսին Թէոպոմպեայ. քանզի զքսան և զերիս աւուրս եղե՛ի տան մերում, ոչ կերեալ և ոչ արբեալ, և ոչնքթեցաւ անձն նորա, այլ համարձակութեամբ և բազում զօրութեամբ առնէր պատարագս. քանզի տեսաք՛ի գիշերի անդ լոյս մեծ՝ որ լուսաւորեաց զնա և զամենայն տունն, և շարժեալ զտունն՛ի հիմանէ. ոչ կարեմք մեք մոռանալ զչմարիտ հովիւն մեր որով զտաք զանապարհս չքշմարտութեան։ Ա՛յլ վասն որոյ ասես դու եթէ զոհեցիք աստուածոցն, որ ոչ տեսանեն և ոչ լսեն, և ոչ խօսին, և ոչ կարեն բան ինչ առնել կամ չար. քանզի զի երիս աւիւս եղեն՛ի տան իմում, և ոչ տեսաք նշանս ամենևին և ոչ զօրութիւն. կայրն՛ի մէջ մոխրոյ լի. և յորժամ տեսանէաք զփոշի՝ յերեսաց նոցա մաքրէաք.

և ոչ կինքեանս բաւական էին բառնալ. քանզի ոչ կա-
րէին գնալ, բարձեալ կրէին զնոսա մեհենաբարձք. և
այսպէս խաբէին զբազումս ՚ի մարդկանէ, և քարու-
կէին Թէ այս են աստուածք: Գիտացէր զայս, ով Թա-
գաւոր, տքա կինքեանք կորուսեալ են, և զբազումս կո-
րուսանեն. այլ դու ծանիր զԱստուած Հիմարիտ որ
կայ և ճշայ յաւիտեան. այլ վասն մեր իշխանուԹիւն
ունիս զինչ և կամիս արա. պատրաստ եմք շահել զո-
գուսն մեր վասն Աստուծոյն մերոյ:

Եւ լուեալ զայս Թագաւորն հրամայեաց արկանել
զնոսա ՚ի բանդ. և եղեն անդ աւուրս եօԹն, և գայլն
անդ փեսայք նուրեանց և զոլք և աղաչէին զնոսա քա-
ջալերէին և ասէին. Եղբարք, փուԹացարուք և համ-
բերեցէք աստիճան փոյձանացդ, քանզի Փրկիչն մեր
ասաց. Խնդրեցէք և տացի ձեզ. քանզի ոչ գոյ այլ հզօր
քան զՏէր, որ օգնական է մեր: Ցիշեցէք և զայս եղ-
բարք, զի զբարուԹիւն աշխարհիս այսորիկ վարեցա-
լուք ընդունայն և զանցաւորս, պարտիմք այժմ նկըր-
աել մինչև հատցուք անստակտանուԹեան կենացն յա-
ւիտենից: Քանզի հանդիստ աշխարհիս այսորիկ առ
ժամանակ մի է, իսկ յուսացեալդ աշխարհն կեանքն՝
յաւիտենից են: Եւ այսպիսի բանիւք քաջալերէին
զնոսա ազգականքն իւրեանց:

Եւ յումեքումէ աւուրն, հրամայեաց Թագաւորն
տանել զնոսա յատարանն իւր, և կոչեաց զնոսա, և
ասէաւ յոտս նոցա Թագաւորն և ասէ ցնոսա. Լուա-
լուք ինձ, որդեակք իմ. դուք ինքնին գիտէք զիս
և զԹագաւորուԹիւնս իմ. ոչ իսպառ բարկացայ ձեզ,
խնայեցէք և դուք ՚ի ձեզ, զի մի չարաչար մեռանիցիք.
քանզի մահ ամենայն մարդոյ առ դուռս հասեալ կայ,
ոմն պատառալ և ոմն անարգուԹեամբ վախճանի. դուք
մի հայիք ընդ մահ եպիսկոպոսին Թէոպոմպեայ. քան-
զի կախարդ էր և ինքն իւրովի խնդրեաց զանարգու-
Թեան մահն: Եւ լուեալ զայս բանս ոչ խոովեցան
առաքեալքն և ոչ խաբեցան ՚ի բանս նորա, այլ միաբան
աղաղակէին, Թէ՝ Քրիստոնեայք եմք, և ոչ դու կարես
խաբել զմեզ, քանզի հասեալ է ընտիրքն Աստուծոյ
՚ի վերայ մեր: Զայս լուեալ նոյն Թագաւորն, և ոչ կա-
րաց ՚ի հաւանուԹիւն ածել զնոսա, դարձեալ հրա-

մայեաց ածել զնոսա զառաջեաւ իւրում. և իբրև ա-
ծին զԲասսոս, ասէ ցնա Թագաւորն. Ընդէ՞ր ոչ զոհես
առաւածոյն իմոյ: Պատասխանի եւ առլքն Բասսոս
և ասէ. Ոչ զոհեմ՝ Բարկացաւ Թագաւորն և հրա-
մայեաց ձեռս յեոս կապել զնա և զոտս նորա, և ապար
զնա ցոյց բարեկամաց իւրոց, և զձեռս նորա հրամա-
յեաց կտրել կացնով. և այնպէս անդամ անդամ կո-
տորելն զնա մինչև արձակեաց զոգին երանելի նա-
հատակն Քրիստոսի Բասսոս, և կատարեաց զվկայու-
Թիւնն իւր բարի խոստովանուԹեամբ ՚ի Քրիստոս
Յիսուս ՚ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս:

Յետ այսորիկ յառաջ մատուցին վաղվաղակի և զՆե-
սեբիոս: Ասէ Թագաւորն. Եւսեբիէ, խնայեա զոմ ՚ի
քեզ և զոհեա առաւածոյն, զի մի չարաչար մեռանի-
ցիս: Պատասխանի եւ երանելի Եւսեբիոս և ասէ մե-
ծաձայն. Մի լեր ինձ Թողուլ զՏէր իմ, որ սիրեաց
զիս, և զսիրելի բարեկաման իմ՝ որ յառաջ կատարե-
ցաւ, որ խորհրդակիցն եղև իմ բարեացն: Ասէ Թա-
գաւորն. Ոչ ոք կայ բարեկամ քո, և ոչ ոք կարէ ապրե-
ցուցանել զքեզ ՚ի ձեռաց իմոյ: Պատասխանի եւ ե-
րանելին և ասէ ցնա. Պատանձեաց, և մի և ես երկըր-
պեսցես զբանս քոյ: Բարկացեալ դատաւորն և հրա-
մայեաց կախել զնա գլխիվայր զերկոցունց ոտից և կա-
պել զխաբանչիւր զոտս նորա ՚ի սիւնան. և այնպէս
պահեալ չարչարանօք կատարեաց զվկայուԹիւնն իւր
խաղաղուԹեամբ:

Եւ յետ նորա կատարելոյ ՚ի Տէր, հրամայեաց ածել
զերկրորդն. և կայեալ առաջի նորա Եւտիքոս, ասէ ցնա
Թագաւորն. Գիտե՞ս, զի որ լսեն ինձ և առնեն զկամս
իմ՝ չնորհեմ նոցա պարգեւս. և որք հակառակ կան
բանից իմոց՝ չարչարանօք հանեմ ՚ի կենացս յայս. արդ՝
ընտրեա դու քեզ զպարգեւն կամ զմահ: Պատասխա-
նի ետ Եւտիքոս և ասէ. Պարգեք քո ընդ քեզ լեցի ՚ի
կրօսատ. մարդկան պատիւ առ ժամանակ մի է, և Աս-
տուծոյ զօրուԹիւնն և պատիւ անվախճան է. զի յոյս
երևելի չէ յոյս, զի քո պատիւդ և յոյսդ կորուսան է մեզ:
Ձայս ասացեալ երանելոյն յառենին, և հրամայեաց
արկանել ընդ ծանրլիս նորա բեռս, և այնպէս յե-
նս բարժանել զմարմինս նորա. և կատարեաց զվկա-
յուԹիւնն իւր խաղաղուԹեամբ:

Այս Հրամայեաց աճել զծորդսն զառաջեաւ, որ-
դում անուն էր Բասիլիոս, որ պատուական էր և ա-
ռաջաւոր էր ի պալատ նորա. և ասէ ցնա Թագա-
ւորն. Աղաչեմ զքեզ, անսա բանից իմոց զոր ինչ ասեմ
քեզ, և յաւելլի պատիւ քո. և վտառաւորեցից զքեզ
քան զամենեսեան՝ որ են ի պալատի իմում, և մի ոք
խաբեսցէ զքեզ մտատի բանիւք. յիշեա դու զի բարի
խորհուրդ խորհիմ քեզ, և արարից զքեզ իշխան ի
վերայ ամենայն զօրաց իմոց, զի ամենայն որ լսիցէ ե-
րանի տացէ քեզ, և ի քէն կատարեսցի ամենայն ար-
քունական հրաման. զի ոչ զոք ունիմ ի պալատի ի-
մում առաւել քան զքեզ. զի քան զամենայն ոք առա-
ւել սիրեմ զքեզ: Լուր զոր ինչ ասացի քեզ, և հաշտ
ընդ քեզ Աստուծոյ մեծ աստուածն, և փրկէ զքեզ ի
կորստենէդ յայդմանէ:

Նակ երանելին և մեծատոհմին Բասիլիոս ասէ. Ո՛վ
դու անզգայ և անմիտ, զինչ խօսիս. ոչ դու և ոչ Աստ-
ղոնդ քո կարէ հեցուցանել զինքն և ոչ զքեզ, որ յա-
ւելեալ ես ի նա. զի ինքն այրելոց է, և ամենայն որ
հաւատայ ի նա ընդ նա այրեսցի: Զայս լուեալ Թա-
գաւորն բարկացաւ յոյժ, և հրամայեաց բերել սուր և
պատառեաց զոլոլային նորա, և ասէ ցնա. Վասն զի
առեցեր սիրոյ իմոյ՝ պատառեցից զքեզ իբրև զամբա-
րիշտ մի: Պատասխանի ետ երանելին և ասէ, յաւել
քան զաւանդել հոգւոյն. Ամօթ հեցուցեր զիս, զի
ոչ օտարացայ ի պատուական մահուանէն, որ յաւել
մեռան սուրբ եղբարքն իմ: Եւ զայս ասացեալ վայե-
լուչն այն և բարեզարդն՝ ննջեաց խաղաղութեամբ,
կատարեալ և սուրբ վկայութեամբն Քրիստոս. և ի միում
Թաղեցան վինուտքն: Ամսոյն կատարեցան բարի
խոստովանութեամբ ի Քրիստոս, որ օր ութ էր արդ
անոյ, և պսակեցան ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր,
որում փառք յաւիտեանս. ամէն:

Վկայաբանութիւն երանելի եպիսկոպոսին Բարդիշոյ։

Յաւն Եսայեայ ասէր զայն արար հալածումն սաստիկ, զաւնպատոյն քան զամենայն թագաւորս, և անթիւք եղեն վկայք Քրիստոսի։ Եւ՝ ի ժամանակին յայնմիկ Բարդիշ[1] եպիսկոպոս ըմբռնեալ ածաւ առաջի թագաւորին Եսայեայ, զոր պէս զի առաւել տանջանս ընկալցի, զոր պէս զուսուցիչ հաւատացելոց քրիստոնէից, և յորդորէր վկայից Քրիստոսի, արհամարհելով զտանջանս և զմահ վասն Քրիստոսի։

Ասէ ածեալ ցԲարդիշոյ. Ձինչ ի զոր լսեմ թէ ուսուցանես ընդդէմ օրինացս մերոց, և քամահես զաստուածս մեր՝ զարեգական և զՀուր, և հակառակ հրամանաց մերոց քարոզես աստուած, և ոչ զարհուրիս յահէ իմմէ թագաւորութեանս։ Ասէ սուրբ եպիսկոպոսն. Ես զտարեբս աստուած ոչ գիտեմ, որ յամենեցունց արարչէն արարան. զի նա ասաց և եղեն ամենայն արարածք, և Աստուած բանին հրամայեաց և հաստատեցան արեգական և լուսին և աստեղք, Հուր և Ջուր և որ ինչ յերկինս և յերկրի ամենայն զօրութիւնք[2], և Հոգւոյն կենդանագրեցան՝ ի փառս և՝ ի գովեստ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, մի աստուածութիւն և զօրութիւն, անվախճան թագաւորութիւն. որք խոստովանեցին ամենայն սուրբք յամենայն ազգս,

1. Ա. Յ. Բարդէս։
2. Ա. Յ. զօրութեամբ հոգւոյն կենդանագրեցան։

և ես զնոյն խոստովանիմ և ուսուցանեմ զաւետեան ոք. և որ ինձ լսէ՝ կեցցէ յուսով և դատաբեացէ՛ի մտո՛ ուէ պաշտամանց և յաւետեան ամպարշտութեանց։ Եւ բարկացեալ ալքայ՛ի վերայ համարձակութեան երա՛ նելոյն, հրամայեաց գան սաստիկ հարկանել փշալից բզօք սպասաւորացն, և ասէին. Ուրացիր զաստուածն քո, և լեր պաշտօնատար աստուածոց ալքայից արքային։ Եւ սուրբն՛ի խոստովանէն սրտին կարդայր աստուած և գոհանայր, որ այնպիսի գառն տանջանաց մատնեցաւ վասն անուան Տեառն ամենակալի։ Եւ պատասխանի առ տանջողսն առնէր և ասէր. Եա ուրանամ զնոտի աստուածս ձեր, այլ ոչ զՔրիստոս Աստուած՝ որ արար զերկրաշարժութիւն և զփոփաւաւորս, ո՛ րոց ոչ գոյ թիւ. որ և զիս կարող է զօրացուցանել՛ի չարաչար տանջանս, և ժառանգել զալքայութիւնն որում ցանկացեալն եմ զի փոխեցայց յերկրէս յերկինս։ Եւ իբրև այնպէս յերկար տանջեցին զսուրբն՝ ալքբ բազումք ըստ հրամանաց ալքայի, և ոչ ինչ լսան հաւանական բանս որոց յուսային, այլ ևս առաւել հա՛ մարձակէր՛ի խոստովանութիւնն որ՛ի Քրիստոս և անարգէր զպաշտօնն նոցա, և ամենեքեան զարմացեալ և հիացեալ կային [1], զի առ ոչ ինչ համարէր բզբաճեճ գանիցն։ Ասէ ալքայ. Ելեցէք խոշտանգու՛ նիւք զհարածդ [2], զի այնպէս [3] առաւել կակծեսցի. և արարին այնպէս գահինքն։

Իսկ սուրբն տակաւր և սէր համբերութեամբ բազ՛ մաւ՛ի չարաչար տարժանումն՝ [4] և ասէր. Ո՛վ ամենաչար թագաւոր, ոչ գիտես եթէ ոչ է զօրութիւն մարդոյ զայսպիսի գառն հարուածս և զչարչարանս ընդունել՝ եթէ ոչ յԱստուծոյ զօրանայ [5]. բայց զայս գիտասջիր, զի ոչ ինչ ըսելոց եմ կորստական քոց հրամանացդ, թէպէտ և բնութիւդ տանջեացես։

Ալքայ ասէ. Վտահես՛ի զօրութիւն Աստուծոյ քոյ

1. Ա. յԼ օր. էին։
2. Ա. յԼ օր. չնարհաւանդս։
3. Ա. յԼ օր. այնպիսին։
4. Ա. յԼ օր. պանջանս։
5. Ա. յԼ օր. ոչ գիտես էնէ ոչ զօրութիւնն Աստուծոյ քոյ հարկանէ զայսպիսի գառն հարուածս և չչարչարանս՝ էնէ ոչ յԱստուծոյ զօրացեալ։

և՝ ի համբերութիւն քոյ՝ յաղթել ինձ. և ես ոչ վըտահանամ յաստուածն և յաղքայութիւնս իմ, որ առնեցուն տէր եմ [1]: Եւ ետ ալքայ բերել հիւսանց մանուլս, և դնել զտաս նորա՝ի մանուլս և խորտակել: Եւ ետ բերել խոնկս և հուր, զի արկցէ՝ի հուրն և ծխեսցէ, և եղիցի որպէս պաշտօնատար հրոյ, այնպէս խորտանկեաւ զարդարն: Իակ նա զգայր չարութեանն և զդաւաճանութիւնն չանդաչէր, և առեալ զխունկն ցրուեաց յերկիր՝ և ասէ. Քաւ լիցի ինձ պաշտօն մատուցանել արարածոց և խունկ ծխել հրոյ, բայց միայն Աստուծոյն իմոյ զբանական պաշտօնն մատուցի և մատուցից. զի նմա վայել փառք իշխանութիւն և պատիւ այժմ և յաւիտեանս. ամէն:

Եւ բարկացեալ ալքայ՝ հրամայեաց զմատունս ձեռաց նորա կամ կամ լուծանել, փոխանակ ցրուելոյ զխունկն: Իակ առըք եպիսկոպոսն բանայր զբերանն՝ի գոհութիւն և՝ի փառաբանութիւն Աստուծոյ, և յուսոյն մխիթարէր. զի Թէպետ և մատունքն կամ կամէին [2] և ցաւն վտանգէր, այլ առ Աստուած սէրն անխզելի և անյաղթ մնայր. և նահատակէր առ խորհուրդն և՝ի պատասխանին և՝ի համբերութիւնն:

Եւ զահիձքն վատակէին և նա ոչ վհատէր. և հիացեալ և զարմացեալ կային ընդ համբերութիւն սըրբոյն՝ ալքայ և ամենայն առեանն:

Եւ ալք երեք երիտասարդք խրախուսեալք՝ի Քրիստոս, մեծաւ համարձակութեամբ՝ի յաղթունական առենին առաջի ալքային և ամենայն մեծամեծացն, աղաղակեցին միաբան և ասեն. Մեծ [3] է Աստուածն քրիստոնէից և այլ ոք չկայ, որ տայ զօրութիւն յուսացեալոց իւրոց, և յամօթ առնէ զկապարտ և զամբարիշտ Թագաւորս, որք պաշտեն զարարածս և ոչ զարարիչն, որ է օրհնեալ յաւիտեանս. և մեք խոստովանիմք զՀայր ամենակալ, և զՈրդին համազօր, և զՀոգին հաստատուն, որպէս երանելի եպիսկոպոսն քարոզեաց, աստուածութիւն մի փառաք՝ի փառս միաւորեալ՝ անվախճան Թագաւորութեամբ: Եւ մեք խոստովանեալ

1. Ա.յլ օր. փէրէմ:
2. Ա.յլ օր. ֆամոպէին:
3. Ա.յլ օր. ՛ր է Աստուածն:

այամ, հաւատով և ձշմարտութեամբ փառաւորեմք միշտ, միայն ընկալցի զմեզ՝ որպէս բարեբար Աստուած։

Եւ սրտմտեալ ալքայ հրամայեաց արտաքս հանել զնոսա և տանել՝ ի բանդ։ Եւ առաքեաց՝ ի ձեռն մըեսիմ ծառայից նրոց՝ խոստանալ նոցա պարգևս և պատիւս և իշխանութիւնս, և բազում ողբանօք դարձուցանել զնոսա անդէն՝ ի մոլորութիւնն իւրեանց. որոյ ոչ հաւանեալք՝ անդէն՝ ի բանդին գաղտ կատարեցին զերիտասարդան սրով, բարիք դաւանութեամբ՝ ի Քրիստոս։

Եւ դարձեալ ողբէր զսուրբ եպիսկոպոսն առանձնական բանիւք՝ և ասէր. Հաւանեա ինձ և պաշտեա զաստուածն՝ զոր ես պաշտեմ, և փառաւորեմ զքեզ՝ ի դրան ալքունի՝ որպէս քաջասիրտ այր, և արարից զքեզ դատաւոր դատաւորաց և իրաւարար ալքունի։ Նակ սուրբ եպիսկոպոսն ասէ. Մի նենգութեամբ որսար զիս՝ ի կորուստ, զի վասն յուսոյն յաւիտենից մատնեցի զմարմինս իմ տանջանաց, որով կատեցեր զիս հատուածովք և խորտակելով զանդամս իմ՝ ի հիւանդս մանել, և կոչոտեալ զմատունս իմ, զի հաճեցեալ ամենայնի՝ անապականս առացայց զապականեալ մարմինս՝ ի յարութեանն յալքայութեանն արդարոց, զոր պատրաստեալ է ամենակալն Աստուած ամենայն սրբոց՝ որ զայսպիսի հաճեցութիւն՝ ի մեղաւորաց հակառակութենէ առաւել կրեցին. որպէս և Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ եւս զանձն՝ ի մահ՝ ի փրկանս ամենայնեան, որք կամեցան զալ՝ ի կոչումն հոգևոր ուրախութեանն՝ վկայութեամբ Աստուծոյն աստուածոց [1]։ Եւ այժմ փութամ զերծանել՝ ի մարմնոյս, և մնանել առ Քրիստոս առ որ անձկացեալն եմ։ Բայց քեզ և որ միանգամ իբրև զքեզդ են [2], պատրաստեալ է անշէջ հուրն, և այնպէս դառն տանջանքն յաւիտենից, որ վհատ է և զմարմին տանջէ առհասարակ [3]. և ոչ ոք է որ փրկէ զմեզաւորս և զամբարիշտս՝ ի բարկութենէն որ գալոցն է։ Բայց դու թէ կամիս, ալքայ, դառնալ և պաշտել զԱստուած, ընդունի զքեզ՝ ի ձեռն խոստո-

1. Ա.յլ օր. ապստաձեայնոց։
2. Ա.յլ օր. էբև զեզեզ էջեն։
3. Ա.յլ օր. խրտսանէ առհասարակ։

վանութեան և ապաշխարութեան, զի բարեբար և անվնասակար է առ մեղուցեալս, զի ոչ ըստ մեղս մեր առնէ և ոչ ըստ անօրինութեան հատուցանէ՝ որք ձչմարտութեան հետևին։

Ձայս լուեալ արքայն, ևս առաւել՝ ի ցասման եղեալ ասէ. Ո՛վ ամենաչար խարդախող, զինչ ոգեաթս քաջ մտհեալ, զիս կամիս ընկենուլ՝ ի թագաւորութենէս՝ ի տարակուսութիւն ծառայութեան. քայց այլ ոչ կարես ինչ քեզ, ոգեաթական բանք իմ ածին զքեզ յայդպիսի հանդգնակութիւն։

Երանելի Եպիփանոսն ասէ. Ես զօրաւարսն խոսեցայ որպէս առեալ հրաման՝ ի Տեառնէ, զոր տուրքն Աստուած քարոզեաց յաշխարհի, որ ունէին ականջս լսելոց լուեցէ զբանս կենաց։ Բայց դու՝ օտարացեալ յԱստուծոյ և թշնամի ամենայն արդարութեան, ոչ ես արժանի հանապէտ զինամաութիւն և զհոգեւոր խրատս, և՝ ի միտ առնուլ զբանս հանճարոյ և ուղղել յաստուածգիտութիւն և յարդարութիւն չձմարիտ, և հեռանալ՝ ի բազմաստուածութեանն մոլորութենէ և՝ ի պատրանաց չար դիւաց՝ որք ընկղմեն զքեզ՝ ի խոր չարեաց անօրինութեան, որպէս գեհենի [1] և ժառանգորդ նոցին տանջանաց յաւիտենից։

Ձայս իբրև լուաւ՝ բարկութեամբ լի եղև Թագաւորն և հրամայեաց զլեզուն ընդ ծոծրակին հանել զի մի կարասցէ խօսել. և ամենայնի սպասաւորքն արարին զհրամայեալն՝ ի Թագաւորէն։ Իսկ տուրքն առ բարձ զաչս իւր յերկինս և փառաւոր առնէր՝ ի սրտի իւրում զԱստուած, և բարբառ իւր ոչ լինէր լսելի։ Եւ ձայն եղև՝ ի վերուստ՝ որ ասէր. Քանչելութեաց, զի հասեալ է ժամ կատարման քոյոց նահատակութեանդ, և կատարեցան խնդրուածք սրտի քո։ Եւ անդէն կազդուրեցաւ լեզու նորա՝ ի տեղի իւր, և խօսէր ուղիղ, և օրհնէր զԱստուած առաջի առելեաց իւրոց և ասէր.

Գոհանամ զքէն Տէր երկնի և երկրի, որ արժանի արարեր զիս զանարժանս [2] քոյդ ամենասուրբ ընտրհայդ

1. Ախլ օր. որ՝ ի գեհենի։
2. Ախլ օր. պանարգս։

և յարգեցեր զտառապելութիւնս իմ չարչարանօք որ-
պէս զարծաթ՝ ի բոլս հրոյ զտեալ և պարզեալ՝ ի կա-
տարեալ և յակամայ սխալանացդ. և արդ զինչ տայ տէր
տուր Տեառն ընդ ամենայնի զոր շնորհեցեր ինձ, այլ
զանձն իմ՝ ի մահ տայ վասն անուանդ քո սրբոյ՝ ի
վկայութիւն առաջի թագաւորի [1] ամպարշտի և չար
իշխանաց և ամենայն ատելեաց քոց, զի ծանիցեն ա-
մենեքեան թէ դու միայն ես Աստուած՝ որ
՝ի սիրոյ քո ոչ երբեք մեկնեցայ խոպան: Եւ արդ փու-
թամ, Տէր, ելանել՝ ի մեղասէր աշխարհէս, և յան-
դիման լինել փառաւոր երեսաց քոց, առ որ անձկա-
ցեալդ եմ: զի և այդր քեզ հաւուցից զանձառելի
օրհնութիւնս ընդ ամենայն սուրբս, որոց փառաւո-
րեալ են մահք իւրեանց առաջի ահաւոր քո տէրու-
թեանդ. զի դու ես Աստուած փառաւորեալ և օրհ-
նեալ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Եւ ա-
ստղեալ զամէնն, երեքհարիւր և եօթանասուն և ե-
րեք արանց հաւատացին յԱստուած՝ և ասեն. Մեծ
է Աստուածն քրիստոնէից և այլ ոք չկայ. զի ոչ ոք ունի
այսպիսի քաղցր լոյս որպէս քրիստոնեայք, որ զմահ
և զտանջանս արհամարհեն, և՝ ի թագաւորաց ոչ զար-
հուրին, այլ աներկիւղ հանդարձակութեամբ քարոզեն
զԱստուած. և մեք այսմ հաւատով լուսաւորեալք՝ ի
սրբոյ եպիսկոպոսէս, խոստովանիմք զՀայր բարերար՝
որ զԹագաւոր՝ ի մեզ, և զՈրդին բարեխնամող՝ որ կո-
չեաց զմեզ՝ ի կոչումն սուրբ, և զՀոգին սուրբ՝ որ
վերստին զնութիւնս մեր նորոգէ՝ ի յոյս կենացդ յա-
ւիտենից: Որ է մի աստուածութիւն Հօր և Որդւոյ և
Հոգւոյն սրբոյ, փառաւորեալ և երկրպագեալ և օրհ-
նեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ զայս լուեալ ալքային և՝ ի ցասումն շարժեալ՝ ի
չարէն, հրամայեաց սրով բառնալ զնոսա՝ ի կենաց. և
այնպէս կատարեցան բարի խոստովանութեամբ վկայ-
տեալք յիւրեանց արիւնն, ժառանգորդք եղեն ար-
քայութեանն երկնից՝ աղօթիւք և բարեխօսութեամբ
սրբոյ եպիսկոպոսին. որոց անուանք գրեալ են՝ ի գիրս
կենաց յերկինս:

1. Ամմ օր. առն ընտրելի:

Յետ ամենեցուն և զտուրբ եպիսկոպոսն Հրաժայեաց գՀնաւեալ։ Եւ այսպէս կատարեցաւ տուրբ եպիսկոպոսն Բարդիչոյ, երեք Հարիւր եօթանասուն և երեք արամբք ՚ի տան և եօթն սահմի անոյ ՚ի փառս և ՚ի գովեստիւն ամենասուրբ Երրորդութեանն, առաջի Եապհոյ ալքայից ալքայի և ամենայն Պարսից [1] արքունական առենին, զարմանալին և սքանչելին Հրեշտակաց և մարդկան։

Ա՛յսպէս առ Քրիստոս ամբարձաւ, և օրինակ բացեաց և քաջ նահատակութեան եղող յաշխարհի անուն. մանաւանդ զանաստուեր և զանապական և գիշանջնեաւոր կեանն ժառանգեաց, որ և բարեխօս եակ ե վասն մեր։

Եւ մինչդեռ էր ՚ի կենցաղումն, յորդորէր ՚ի սէր աստուածութեանն զբազումն, և յուղիղ Հաւատս ամենասուրբ Երրորդութեանն և ՚ի վարս արդարութեան ըստ պատուիրանաց և վարդապետութեան ուղղափառ տուրբ Հայոց. զի յամենայնի Հնազանդ էր այրն և զգաստասէր, ոչ յումեքէ դրդուեալ և խոտորեալ ՚ի Հաւատոց և յարդարութենէ. այլ ամբիծ Հաւատով և անարատ վարուք կրօնաւորեալ յայսմ աշխարհիս, վախճան կենաց առնէր ՚ի Քրիստոս Յիսուս։ Որում և մեք մանաւանդ վարուց արբոյն՝ փառաւորեացուք զանխոխսելի սէրութենէնն, զՀայրն և զՈրդի և զՀոգին սուրբ, այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից. ամէն։

1. Ա՛յլ օր. Ե ամենայն պարսից։

Վկայաբանութիւն սրբոյ առաքելոյն Բարդողոմէոսի։

Գլխաւորք սրբոց առաքելոցն՝ երկոտասան աշակերտքն, վճռակեցան յազգս ազգս՝ յինջանելն ի նոսա Հոգւոյն սրբոյ ի վերնատունն, երկնապարծել տարբերութեամբ լեզուացն հրեղինաց ի ձայն հողմոյ. և ընկալան ձեռնադրութիւն երկնոյ թեան, առեալ իշխանութիւն զմեղս թողուլ և ունել, և առնել նշանս և արուեստս. և ջնջել լուծումն ախտից, և բարձումն ցաւոց, և հալածումն սատանայի, և քակտումն ի մեղաց և ազատութիւն ի ծառայութենէ սատանայական, յազատութիւն փառաց որդւոյն Աստուծոյ, և գնալ ի պատուիրանս նորա, և արժանի լինել խոստացեալ պարգեւացն, և որ անդ են բարութիւնքն։ Եւ ըստ առաջնորդելոյ Հոգւոյն սրբոյ՝ սիրեցան գնալ յին յազգս ընդհանուր լեզուաց քարոզել զբանն կենաց, և լուսաւորել զնոսա ծննդեամբ սուրբ աւազանին, և վերակացութեամբ Հոգւոյն սրբոյ արարչական զօրութեամբ։

Գնաց և երանելի առաքեալն Բարդողոմէոս, որ էր ի յերկոտասանեանցն. երթեալ մտանէ յիւր վիճակ առաքելական ընտրութեանն. և ի սկզբան քարոզութեան իւրոյ՝ եղև մտանել նմա ի քաղաքն Նդեմ կոչեցեալ՝ մերձ ի սահմանս Հնդկաց, ընդ Թովմայի առաքելոյ. և անցեալ ընդ շինամէջ քաղաքին՝ նստաւ առ աղբիւր մի, յորում ազդմունք դիւթականք հնմանեալ կատարէին. յայտնութիւնք դիւաց ի բաջա-

զանա պատիր խաբէութեան մոլար պաշտաման, ձայ-
նեալ յաղբերն իբրև աստուծոյ ումեմն. յորում տե-
ղւոջ բազում նուէրք և զոհք մատչէին յանուն աղ-
բերն: Ուստի առասպելաբանելով իբրև այն թէ ինքն
իշխանութեամբ ունիցի զբղխուծն, և ընդ մտուցող-
կան զօրութեամբ բուսոց և տնկոց և սերմանց, և
ազգի ազգի ծառոց և զանազան ծաղկանց, համովք
և հոտովք, և անուանէին զանուն աղբերն դուստր նե-
ղոսի: Եւ իբրև օր մի լինէր յորում բազմութիւն քա-
ղաքին հասանէր ՚ի զոհել, և ընծայել ծախս ոսկւոյ և
արծաթոյ և ականց պատուականաց, և հանդերձս
մեծագինս և պատուականս, և դիւացն բարբառ ար-
ձակեալ ընդ ակն աղբերն և պղպջակաձև զջուրն ՚ի
վեր մղելով յեռանդն հրոյ բարկութեան հողմոյ սաս-
տիկ հնչմամբ ահ արկանելով լսողացն և տեսողացն,
՚ի փայլիւն հրոյ և ՚ի հնչիւն հողմոյ. և ՚ի լինել ար-
հաւրաց՝ զաղաղակ բարձեալ մեծաձայն և ուժգին
գոչմամբ կարդային զանուն աղբերն, իբրև զաստուած՝
որ կարիցէ օգնել և պարգեւս ընդունել ՚ի նմանէ: Իսկ
սուրբ առաքեալն կայր հիացեալ և զարմացեալ ընդ
միտս իւր, մեծաւ տրտմութեամբ ընկճեալ վասն մո-
լորութեան նոցա և աղետիլ գործոյն, զուր աշխա-
տութեանցն և անուղղայ գնացիցն, և անօգուտ ծա-
խիցն և տարտապարտ աղաղակին. զի ժղորեալ հող-
նեալ էին աղք և կանայքն իբրև զձիս և զզազրատե-
սիլ զեռունս ՚ի տղմուտ վայրս կայտռեալ խլրտէին ՚ի
պատիւ աղբերն, ՚ի պատրանս դիւաց կեղծաւորու-
թեան: Յայնժամ երանելի առաքեալն դիմեաց ՚ի
մէջ նոցա ՚ի վերայ աղբերն. և հանեալ զաղաբողոնն՝
զոր ակեալ ունէր զինքեամբ, պարզեալ ձգեաց ընդ-
դէմ ջրոյն, և կարդաց յանուն Տեառն Յիսուսի Քրիս-
տոսի, և ասէր ՚ի ձայն մեծ. Ջուրս այս ցամաքեալով
ցամաքեսցի, և մի ամենևին կացցէ ունել ոյժ խոտո-
րութեան: Եւ առժամայն ցամաքեցաւ վտակն յորդա-
հոս ջրոյն և եղև իբրև զվէմ ապառաժ. և ձայն որոտ-
ման հրոյն, և փայլիւն կերպարանեալ հողմոյն ՚ի ձև
լուսոյ, կոթեաւ և դաղարեաց: Եւ դիւքն զաղաղակ հա-
րեալ, ձիչ բարձին մեծաձայն ողբալք հառաչէին և
ասէին. Ո՛վ Յիսուս Նազովրեցի, միտչէ յերկրէ շուտ

տաշնապն հասուցանես ՚ի վերայ մեր, և ոչ տաս կալ ՚ի ծով յանդունդս ջրոց, և ՚ի տեղւոջ բնակութեան մերոյ. յամենայն յերկրէ հալածականս արարեր զմեզ խաչիւ քով, և այժմ ՚ի ձեռս աշակերտաց քոց ընդեղեալ հալածես, և չարչարես և վտանգես յառաջ քան զժամանակն՝ որ գալոց է ՚ի վերայ մեր։ Յայնժամ տուր առաքեալն տառեալ ՚ի նոսա՝ ասէ. Ո՛վ պիղծք, դըժնեայք և մարդատեացք, թշնամիք արդարութեան, և վարդապետք մոլորութեան, ահա տառեմ ՚ի ձեզ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, մի կարի՛ցէք ՚ի տեղւոջս յայսմիկ։ Եւ խակ և խակ կորեան և տապտեցան, և ընկեցան և բարձան ՚ի միջոյ, իբրև զմոմ զի ոչ կարացէ կալ առաջի հրոյ՝ այնպէս վատնեալ պակասեցան։ Եւ տեսեալ բազմակոյտ ամբոխին դարձան առ առաքեալն մեծաւ ահու ըմբռնեալ, անկան առաջի սրբոյ առաքելոյն վասն մեծաց սքանչելի՛ գործոցն՝ որ գործեցան յաղբերն. և ևէսքն ընթացեալ շուրջ զկողմանեքն և զտեղեաւն՝ հռչակէին զերկայն զայնոցիկ, զմեծ և զզարմանալի զգործն, և նշանացն հրաշափառազունից որ կատարեցան ՚ի ձեռն առաքելոյն. և զային աներևոյթ ՚ի տեսիլ սքանչելեացն. քանզի բազում ժամանակս ձայնեալ էին յաղբերն, և զի այն ինչ յակառն քթթել ցամաքեալ սպառեցաւ յորդահոսք ջրոյն։

Եւ սկսան նեղիլ ՚ի ծարաւոյ բազմութիւնք քաղաքին. և առեալ վերակս ՚ի ձեռն կամէին արկանել ՚ի վերայ առաքելոյն, և հարեալ քարամբքն զմիմեանս սատակէին. և յանդուգն և ՚ի խուռն քարանց ձգելոց սատակեցան ոգիք երեսուն։ Եւ մերձեցեալ սուրբ առաքեալն ՚ի մեռեալսն եղ՝ ձեռն և աղօթս արարեալ ՚ի վերայ նոցա՝ դարձան ոգիք նոցա ՚ի նոսա, և կանդնեցան կացին կենդանիք. և փութացեալ իւրաքանչիւր որ ՚ի նոցանէ բերկրին զհիւանդս և զնեղեալս յայտոց, և ՚ի պէսպէս ախտից և ՚ի ցաւոց, և զանդամալոյծս և զկոյրս և զկաղս և զմիակողմանիս և զխուլս և զհամերս և զլուծեսս և զամենեսեան որ նեղեալ էին ՚ի պէսպէս ցաւս, և բժշկեաց զամենեսեան։ Յայնժամ սկսաւ քարոզել նոցա զաւետարանն Սաւթէոսի կարգաւ. և լուեալ խնդութեամբ ընդ-

ունէին զքարոզութիւն սուրբ աւետարանին։ Եւ ե֊
լեալ սուրբ առաքեալն յերզ քաղաքին՝ ի տեղի մի
դաշտական յատուածոտ վայրս, եդ ծունր, եւայց
յաղօթս և զոհանայր զընտրհացն Քրիստոսի, որ ե֊
բաց զիւրս նոցա իմանալ և լսել, և ընդունել զբանն
կենաց, և հաւատալ ի Տէր Յիսուս Քրիստոս, որ է
Աչմարիտ Աստուած և կեանք յաւիտենական։ Եւ ա֊
րարեալ անդ զինչան խաչին, և կարդաց ի ձայն մեծ.
և ահա շարժումն և Թնդիւն ահեղ որոտման, և խախ֊
տեալ տեղին պատուեցաւ, և բղխեալ աղբիւր ջրոյ
յորդաբուղխ քաղցրահամ վտակաց, և շուրջ բակ
առեալ հանդարտ և հեզ շարժմամբ, և սկսան ու֊
րախ լինել։ Եւ ի ջուրցեալ զնոսա ի ջուրն՝ մկրտեաց, և
լուսաւորեաց լուսով Հոգւոյն սրբոյ. և կատարեալ
զիտրհրդական պատարագն՝ հաղորդեցոյց զնոսա կեն֊
դանարար մարմնոյ և արեան որդւոյն Աստուծոյ ի Թո֊
ղութիւն մեղաց, որ է կեանք և կեցուցիչ, և հաւա֊
տացուցիչ սուրբ Երրորդութեանն։ Եւ կացոյց անդ
երիցունս ի սպանելոյն որ կենդանացան ի ձեռն սուրբ
առաքելոյն, և հաստատեաց զնոսա ի հաւատս Աչմար֊
տութեան։

Եւ գնաց ի կողմանս Մարաց և Ելիմացւոց, և ան֊
ընդունակ եղեալ ի նոցանէ՝ ոչ կարաց անդ կատա֊
րել զօրութիւնս, բայց սակաւուց ի նոցանէն՝ որոց
քարոզեաց զաւետարանն մատթէոսեան. և հաւա֊
տացին բանին, և Թողին զամենայն ինչս աշխարհիս,
և գնացին զհետ նորա յամենայն տեղիս ուր և եր֊
թայր։ Եւ անտի դարձեալ եմուտ ի Բուստր քաղաք
Խոլին Աստուց. և եղև ի մտանել նորա ի քաղաքն՝
բարձեալ բեռլին պատանի մի մեռեալ, որդի հաղա֊
րապետին Բուստրացւոց, որում անուն Ճանաչիւր Ան֊
դրանիկոս, և էր ամաց երկոտասանից. և բազում լա֊
լականք զհետ նորա փողովք և քնարիւք, և դաք
դաք պարուց, որ կոծեալ մրմնջէին և յորդահոս ար֊
տասու հեղուլին ի վերայ պատանւոյն։ Նոյնժամայն
ընթացեալ առաքեալն ընդ մէջ հրապարակին ձգեաց
զձեռն իւր՝ մերձեցաւ ի դագաղն ուր կայր պատա֊
նին մեռեալ՝ և ասէ. Պատանի դու, քեզ ասեմ, արի
կաց յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ ա֊

ժամայն կանգնեցաւ մեռեալն. և որ բարձեալ տանէին՝ զտեղի առին։ Եւ հայեցեալ բազմութեանն ընդ ե֊րեսս սուրբ առաքելոյն, և տեսին զի հուր ցոլացաւ՝ի բերանոյ սուրբ առաքելոյն, և մոանէր՝ի բերան պա֊տանուոյն, և կենդանացաւ. և աղաղակեցին միաբան և ասեն. Աստուած ոմն երևեցաւ՝ի մէջ մերում. և բուռն հարեալ երիտասարդացն զսրբոյ առաքելոյն, բարձին՝ի վերայ բազկաց իւրեանց. և այլքն զոհս և պատարագս փութացուցանէին։ Իսկ սուրբ առաքեալն վազեաց՝ի ձեռաց նոցա, և փախեաւ յամբոխէ անտի, աղաղակեաց և ասէ. Ես ծառայ Տեառն ամենա֊կալի եմ և որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, և Հո֊գւոյն սրբոյ՝ յորոյ անուն կենդանացաւ պատանիդ այդ մեռեալ. և առաքեցայ ես առ ձեզ քարոզել զաւե֊տարանն արքայութեան, զի ընկալեալ ձեր զբանն կե֊նաց՝ կեցջիք և դարձջիք յընդունայն պաշտամանէդ ձերմէ, զոր պաշտէքդ առ տգիտութեան ձերոյ և ան֊հաւատութեան. և ծանիջիք զիւրայն Արարիչն Ա֊ստուած զՏէր ձեր մեր Յիսուս Քրիստոս, որ արար զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ՝ի նոսա։ Եւ դրեաց նոցա զմատթէոսեան աւետարանն, զոր առեալ էր օ֊ժանդակ՝ի քարոզութեանն։ Եւ մինչև յաւուրս երիս հազիւ լուեցոյց զժողովուրդն՝ի չզոհելոյ նմա։ Յայն֊ժամ առեալ զպատանին՝ մկրտեաց զնա՝ի լուսաւորու֊թիւն Հոգւոյն սրբոյ՝ի հուրն հոգևոր և՝ի մաքրու֊թիւն ջրոյն, հանդերձ հազարապետաւ հարբ ման֊կանն, և ամենայն ընտանեօք նորա և ազգականօք։ Եւ կոչեաց զանուն պատանւոյն Մատթէոս՝ ըստ անուան սրբոյ աւետարանչին, և եւս նմա ձեռնադրութիւն յան֊ուն Աստուածութեան առաքելական պրոշմանն։

Իսկ որ էին եկեալ՝ի քաղաքէն զհետ պատանւոյն, երբև տեսին զնա անդրանիկեալսն, և եթէ հազարապետն և ամենայն ազգն Հաւատացին՝ի Քրիստոս՝ բանիւք և նշանօք սուրբ առաքելոյն, եկին և նոքա կամակար յո֊ժարութեամբ, մկրտեցան՝ի Հոգին սուրբ և՝ի մահ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ի ջուրս աւազանին։ Եւ էին՝ի քաղաքին յայնմիկ եօթն բազմունք, և էին՝ի նոսա կուռք կռեալք և քանդակեալք՝ի նմանութիւն մարդոյ, ի ձև Արեսի և՝ի ձև Արտեմիսի, զոր հա֊

զարտաւեան ըստ հրամանի առաքելոյն խորտակեալ կործանեաց, և բաշխեաց տնանկաց և կարօտեալոց։ Եւ բազում զօրութիւնս կատարեաց սուրբ առաքեալն ՚ի վերայ հիւանդաց և ախտացելոց ՚ի պէսպէս ցաւս և ՚ի չարչարանս, և դեւս բազումս եհան, և արար հալածական ՚ի քաղաքէն յայնմի տեսողացն։ Եւ ուղեալ անդ սեղան՝ և եթող զմի ոմն անդ յաշակերտաց իւոց քահանայանալ նոցա, և զպատանին՝ ըստ ձեռնադրութեանն զոր ընկալաւ ՚ի լոյս Հոգւոյն սրբոյ։

Եւ եղև իբրև հաստատեաց զնոսա ՚ի հաւատս կրօնից սրբութեան, եւ գնաց յաշխարհն Գերմանիկէ ցոց ըստ վիճակի ընտրութեան Հոգւոյն սրբոյ. և եղև ՚ի մտանել նորա անդր՝ եւ հաճեաւ զնմանէ ընդ ամենայն երկիրն ընդ այն. և նշանք և արուեստք որ կատարէին ՚ի ձեռն սուրբ առաքելոյն, իբրև զՀաւատացեալս արեգական սիրեալ տարածանէին ընդ ամենայն երեսս երկրին. և փութային ամենեքեան գալ առ նա, և բարձեալ բերէին զհիւանդս ՚ի պէսպէս ցաւս, և զօրութիւն Ցեառն էր ՚ի բժշկել զնոսա։ Եւ բազումք ՚ի յանցս Հանապարհացն նստէին, և սպասեալ ակն ունէին նմա. որպէս զի յանցանել նորա՝ գացեն զառաջնութիւն հարուածեալքն յախտից հիւանդութեանց և ՚ի տանջանացն դիւականաց։ Եւ եղև իբրև լուաւ թագաւոր նոցա զլուր անչափ սքանչելեացն նորա, խանդացաւ յոյժ, և առաքեաց զծառայս իւր և հրամայեաց դնել զնա ՚ի բանդի մինչև յաւուրս հինգ։ Եւ յետ անցանելոյ հինգ աւուրցն նստաւ յատենի հանդերձ մեծաւորօք իւրովք, և զվնասուցիչ իշխանօք Գերմանիկեցւոց, և հրամայեաց ածել զնա։ Եւ իբրև չոգան ՚ի բանտն՝ զայնն բազմութիւն շուրջ փակեալ զտեղւոքն, և լոյս սաստիկ ծագեալ արտաքոյ բանտին՝ իբրև զլոյս արեգական ՚ի միջօրէի, և ահ կալաւ զկուռսն որ եկեալ էին զսուրբն տանջել յատենի ՚ի տեղի խոշտանգանաց։ Եւ գալոյն անդրէն փութանակի ահիւ, և պատմեցին թագաւորին և ոչք ընդ նմա՝ զմեծամեծ սքանչելիսն զոր տեսին։

Յայնժամ յարուցեալ թագաւորն ցասմամբ մեծաւ՝ և ոչք ընդ նմա նստէին մեծամեծքն, և հրա-

ման եւտուն զի հրկէզ արարեալ զբանդն՝ ընդ նմին այրեսցեն զսուրբն Աստուծոյ։ Իսկ նա աղօթս առնէր զամենայն աւուրսն ՚ի բանդին, զի պճնացեալ Աստուծոյ յարարածս իւր՝ և դարձցին ՚ի մոլորութենէ անտի, յոր անկեալ գնային ՚ի խաւարն անգիտութեան ՚ի խոր կորստեան՝ ՚ի պատրանս տանտյականն խաբեբայ մոլորութեան, զի պաշտէին զարարածս և զգործս ձեռաց իւրեանց։ Եւ մինչ նոքա զայս զմտաւ ածեալ խորհէին զսրբոյն, եղև յանկարծակի ահեղ որոտումն և ձայնումն յամպոց հրացան փայլատակմամբք, անկան յերկիր և յապուշ կրթեցան միտք նոցա. և եղեն իբրև զանխօս անասունս՝ որ ոչ գոյ ՚ի նոսա խնամտութիւն։ Իսկ սուրբ առաքեալն եղեալ արտաքս ՚ի բանդէն եդ ձեռն ՚ի վերայ միոյ միոյ ուրուք ՚ի նոցանէն, և կազդուրեցան կացին ՚ի վերայ ոտից իւրեանց, և միտք իւրեանց դարձաւ ՚ի նոսա. և խնդրեցին ՚ի սրբոյ առաքելոյն գտանել ողորմութիւն, և հայցել զգթութիւն ՚ի Տեառնէ Աստուծոյ, և ընդունել զբժշկութիւն ՚ի վերայ հարուածոցն՝ որ հասին նոցա։ Իսկ սուրբն Աստուծոյ ասէ. Որոց քաց են աչք մարմնոյն՝ զոյս աշխարհիս միայն տեսանեն, այլ ոչ զոյսն Հիմարիտ՝ որ լուսաւորէ զամենայն մարդ որ գալոց է յաշխարհս։ Արդ եթէ հաւանիք քանից իմոց և հաւատասջիք քարոզութեան աւետարանին փառաց միածնի որդւոյն Աստուծոյ՝ զոր ես ձեզ աւետարանեմ, ընդունելիք զբժշկութիւն հարուածոցդ՝ զոր հայցէք ՚ի Տեառնէ ՚ի ձեռն իմոյ բարեխօսութեան, և կեցցեն անձինք ձեր. և լինիջիք լուսոյն անստուերի ժառանգորդք և անանց կենացն յաւիտենից, զոր ոչ դիմն Աստուծոյ Յիսուս տացէ ձեզ, եթէ հաւատասջիք յանուն նորա անեղական խոստովանութեամբ։ Պատասխանի եւտուն և ասէն. Հաւատամք Աստուածդ քո, յոր դու հաւատացեալ պատմես մեզ. միայն կեցցեն անձինք մեր, և լուսաւորեսցես զմեզ։ Եւ առաքեաւն՝ որպէս յամենայն տեղիս, և անդ քարոզեաց զաւետարանն Մաւթէոսի, և զմարգարէութիւնն Եսայեայ տեսանողի, և զմեկնութիւն նոցա որ կայր յառաքն, և զհաս խորհուրդս որ էր ՚ի մարգարէութեանն և ՚ի սուրբ աւետարանին անդ։ Եւ անդէն

ստիպել սկսան զսուրբ առաքեալն՝ Թադէոսդքն և մեծամեծքն և նախարարքն, և ասեն. Փութա կատարել ի մեզ զքարոզութիւն աւետարանին աւետեաց՝ զորմէ առացեր մկրտութեամբ հասանել թողութեան մեղաց և երկնից արքայութեանն, զի եղիցի բժշկութիւն հարուածոցս հասելոց ի վերայ մեր: Արդ մի դանդաղիր զօգուտն՝ որ վասն մեզոյ փրկութեան՝ տալ մեզ, զոր ուսաք բերանով քով, և կրասու պատուհասիս՝ որ ժամանեաց մեզ. զի զիտացաք այժմ և ծանեաք եթէ Աստուած քո՝ նա է Աստուած, և չիք ոք բայց ի նմանէ, և մեք նմա ծառայեացուք և հնազանդեացուք. զի նա է Աստուած ճշմարիտ և կեանք յաւիտենական և փրկիչ աշխարհաց: Յայնժամ սուրբ առաքեալն ած զնոսա ի վտակն որ ի քովն էր ի փոքր ձորակի միոջ ի հարաւակողմ կուսէ, և ի քովեալ ի ջուրն մկրտեաց զնոսա. և նոցա բացան աչք և տեսին զՀոգին սուրբ զի շրջէր ի վերայ ջուրցն քաղցր օդով և պարզ լուսով. և լուսաւորեալ զնոսա՝ զգեցուցանէր նոցա զլոյս իբրև զհանդերձ. և խակ և խակ ուղղեաց սեղան, և կերակրեաց զնոսա յերկնաւոր հացէն և յարբեցոյց Որդւոյն Աստուծոյ. և աղօթս արարեալ՝ եդ ձեռն ի վերայ նոցա, զի կացցեն հաստատուն ի հաւատսն զոր ընկալան, և լուսաւորեցան ի լոյս Հոգւոյն սրբոյ: Եւ նոքա աղաչէին զսուրբ առաքեալն լինել առ նոսա, և հովանալ զնոսա զի անքակ լիցին ի նմանէ: Նա պատասխանեալ ասէ. Եւ այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարանել, որպէս ասաց Քրիստոս. Գնացէք յամենայն հեթանոս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Արդ ինքն Քրիստոս յոր հաւատացէք և լուսաւորեալ կնքեցայք Հոգւովն սրբով, նա եղիցի ընդ ձեզ. և մեք զի յանձն արարեալ մեզ զհեթանոս՝ մի սաունդանեացուք հրամանէն նորա: Եւ ունկնդիր եղեալ թողեաւն նմա:

Եւ գնացեալ անտի սրբոյն՝ եհաս յերկիրն Պարթեւաց և Մարաց և Ելիմացւոց և քարոզէր նոցա ըզբանն կենաց: Բազումք ի Պարթևացն դարձան ի Տէր զօրութեանց՝ նշանօք և արուեստիւք և պէսպէս բժշկութեամբ, զոր ընկալան ի սուրբ առաքելոյն, զաւազնութեան ախտից ազգութեամբ և գթու-

թեամբ Տեառն: Եւ լուսաւորեալ անդ զբազումս, գնաց ՚ի կողմանս Պարսից և Մոգուց, և սկսաւ քարոզել նոցա զաւետարանական վարդապետութեանն իւրոյ զմահաթիռսեան աւետարանն, և որ ինչ վասն մեզն հանդամանքն էին՝ եղ առաջի նոցա: Եւ հասեալ մինչև ՚ի տեղի պաշտամանն կրակարանի նոցա, զոր պաշտէին օրինօք մոգութեանն, և համբարձեալ զձեռս իւր յարևելս ընդդէմ արեգականն՝ զոր պաշտէին, և արգել գնա և զբօրութիւնն Հառագայթից նորա պահասեցոյց մինչև ցվերջ աւուրն: Եւ նշան յերկինից սիւն հրոյ եկաց ընդ մէջ կրակարանին, յանդիմանել զմոլորութիւն նոցա՝ արհաւրօք և սաստիկ հիացմամբ, փոխանակ զի սպաս տանէին Հելիոս, և Սեփհեայ, և Արեսի, և Պռենայ: Այլ թէպէտ և այն չափ մեծ աքանչելիք և նշանք զարմանալիք ցուցան ՚ի վերուստ, սակայն ոչ զանգիտեցոյց զնոսա զառնալ յերկրպագութենէ տարերցն, և յոր վրիպեալ էին մտաի աւասպելաբանութեամբ բարձրացոյն պարծանօք. բայց միայն ոգիք ուղի, զոր առեալ լուսաւորեաց, և հանեալ զնոսա ՚ի միջոյ կործանելոյն խուժադուժ ազգին:

Եւ անցեալ գնաց ՚ի Գողթն գաւառ Հայոց, և փութացաւ հասանել ՚ի վիճակ Թադէոսի, ըստ հրամանի Հոգւոյն սրբոյ. և քարոզեալ անդ զբանն կենաց, և նոքա ընկալեալ խնդութեամբ և մեծաւ յօժարութեամբ, հաւանեցան և հնազանդեցան և լուսաւորեցան վկրութեամբ աւազանին: Եթող անդ նոցա երիցունս ՚ի մոգուց անտի՝ որ աշակերտեցան սուրբ առաքելոյն. և բազում զօրութիւնս կատարէր Աստուած ՚ի ձեռն արանց այնոցիկ յամենայն տեղիս, ուր և հասանէին ոտք նոցա. և զբազումս դարձուցին ՚ի Տէր ՚ի մեռոտի պաշտամանէն, և ընդ նոսին աւազանեալ ՚ի վերայ նոցա:

Ի քանև ինն ետրոտդ ամի Սանատրկայ Թագաւորին Եմուտ սուրբ առաքեալն Բարդողոմէոս ըստ հրամանի Հոգւոյն սրբոյ ՚ի Հայք, որ ընտրեաց զնա յառաքելութիւն կոչմանն հեթանոսաց. և Թուխմայի ըստ վերակացութեան աւազնորդութենէն իւրոյ գրեալ առնա, զի ամի զանց արասցէ զնոքօք, քարոզել զաւետա-

րանն ալքայութեան, որպէս և յամենայն տեղիս, փո-
խանակ Թադէոսի առաքելոյն՝ որ էր յեօթանասնից
անտի:

Եւ եկեալ սուրբ առաքեալն ՚ի բլուրն Արտաշու,
հանդիպեցաւ այլ ոմն յերկոտասանից՝ Յուդա Յակո-
բեան. և կանգնեցին ՚ի տեղւոջն ուր պատահեցան
միմեանց՝ գնշան տէրունական խաչին, և հրաժարեցին
՚ի միմեանց մեծաւ ուրախութեամբ. և գնացեալ Յու-
դայի յիւր տեղիսն: Բայց Բարդողոմէոս գնացեալ
եմուտ ՚ի Հէր և ՚ի Ջարևանդ գաւառ Հայոց, և արար
նշանս և արուեստս ՚ի վերայ հիւանդաց. և դէս քա-
րոզեաց եհան, և լուսաւորեալ անդ զբազումս և մկր-
թարեալ բանիւ վարդապետութեամբ սուրբ առե-
տարանին, և եղեալ նոցա վկայութիւն՝ զի կացցեն
հաստատուն ՚ի հաւատսն զոր ընկալան, և հաւատա-
րիմ եղեն. և եղեալ միոյ միոյ ձեռն՝ յանձն արար
զնոսա ընտրեալն Աստուծոյ: Եւ ինքն գնացեալ եկն
յՈւրբիանոս քաղաք Հայոց. և գայլն առ նա ամե-
նայն նեղեալք որ ՚ի պէսպէս ցաւս և ՚ի տանջանս, և
բժշկեաց զամենեսեան, և լուսաւորեաց վկրտու-
թեամբ սուրբ աւազանին:

Լուաւ զնմանէ Ոսոհի քոյր Թագաւորին Սանատրու-
կայ, որ էր որդի քեռ Աբգարու, և եկն առ նա ՚ի ծա-
ծուկ, և լուեալ ՚ի նմանէ զբանն կենաց՝ հաւատաց ՚ի
Տէր մեր Յիսուս Քրիստոս ինքն և իւրքն ամենայն. և
զգեցեալ հանդերձ կուսութեան, ՚ի բաց մերկացեալ
զիւրաց աշխարհի և աշակերտեալ առաքելոյն՝ չքէր
զնա նորա: Եւ լուեալ Թագաւորին զնորա որ եղեն,
և զայրացեալ մեծաւ յաոմանբ իբրև զգազան կատա-
զեալ արարանէրսդու, յղեաց զհազարապետն Տէրենտոս,
և ոչք ընդ նմա. և իբրև եկն առ նա հազարապետն
ետ հրամանն Թագաւորին, և տեսեալ զսուրբն Աս-
տուծոյ՝ զԹագաւ ՚ի նա. և նա սկսաւ քարոզելնմա զա-
ւետարանն ալքայութեան. և Տէր եբաց զմիտս նորա
անսալ բանից նորա: Եւ ինքն անկեալ էր յախտ բո-
րոտութեան. և առեալ զնա սրբոյ առաքելոյն՝ ՚ի գի-
շերի մկրտեաց. և ահա ամն լուսաւոր հոսանի եղև ՚ի
վերայ տեղւոյն, և լոյս հրոյ շուրջ փակեալ զաւազանն
սրբատար: Եւ եղև ընդ ելանել նորա ՚ի ջրոյն՝ անկաւ

’ի ևանանէ մորէն խաւսցեաւլ իբրև զկնի ծաւոյ և իբրև զաւրև որթոյ, և լոյս զգեցաւ իբրև զհանդերձ. և տեսեալ զաքանչելին որ եղեն, բազումք հաւատացին ’ի Տէր։ Եւ եղև իբրև եհաս լուր աքանչելեացն այն առ Թագաւորն, առաւել զայրացեալ անհանդուրժ ժնելի բարկութեամբ, և փութացեալ յղեաց զայլ ոմն ’ի նախարարացն, զի փութով զնաւ արասցէ նոցա, և մի Թուլասցին ինալ տեւել անաւր նոցա։ Եւ առեալ զտուրբ առաքեանն հանդերձ կուսիւն և հազուրեպեւտին, և այլովք աշակերտեւլօքն ածին յատեանն։ Եւ տանջեալ զտուրբ առաքեանն քրքջօք իբրև ժամ մի աղք վեց, և համարէին զնա մեռեալ, և քարշեցին ընկէցին զնա արտաքոյ քաղաքին. բայց տուրբ առաքեանն կայր կենդանի զօրութեամբ և ուժով Տեառն իւրոյ յոր յուսացեալն էր։ Եւ իբրև ժամն երիս այսպէս անկեալ դնէր, և շուրջ զնովաւ յոյժ բազմութիւն ’ի քաղաքէն և յամենայն սահմանաց նորա. և յետ անցանելոյ երից ժամուցն, խլրտեաց ձեռամբն, և ձգեաւլ բուռն հարին զնմանէն, և յարեաւ նստաւ կանգուն, և հանդարձեաւլ զձեռս իւր յերկինս՝ ասէ. Տէր Աստուած հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ովի Թողուր ’ի ձեռանէ զվիճակս զայս խնդրուածոյք Թադէոսի և Թովմայի և Յուդայի, և իմ Բարդողոմէոսի, որ հոգւացաք վասն աշխարհիս այսորիկ. և ովի ոանհաւ լեցի ’ի Թշնամւոյն. այլ տուր սոցա ընծայս ողորմութեան, և զարձոյն յերկրպագութենէ կռոցն մտաւեաց, որ զուր և տարտարտ մոլորեաւլ են ’ի տգիտութենէ անհաւատութեան։ Եւ տուր սոցա հոգւի և առաջնորդ, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս. և զիս ընկալ Տէր իմ, և զհաւատացեալքս ’ի քեզ պահեա։ Զայս իբրև ասաց շարժեցաւ տեղին, և ահ համար լուսեղէն եկեաւլ եկաց ’ի վերայ սրբոյն. և նորա հայեցեաւլ ’ի վեր յերկինս՝ առանդեաց զհոգին, և բուրեաց հոտ անուշութեան. և տուր առաքեանն Թադէոս իբրև այն Թէ մնալիւաւոր տեսլեամբ զայր ընդ առաջ նորա. և գարձան ընդ նոյն ուսոտ եկն տուրն Աստուծոյ Թադէոս։ Եւ ահ կալաւ զամենեսեան, և հաւատացին յաւուր յայնմիկ ոգւով երկու

հալալըք, և ամենեքեան փառաւոր առնէին զԱստուած ի վերայ եղելոցն. և եկաց լոյն կամարաձև ի վերայ մարմնոյն աւուրս երկոտասան:

Իսկ զերանելին Ոգոհի և զհազարապետն սպան սրով, և զայլս բազումն ընդ նոսա: Եւ տեսեալ զմարմնին սրբոյ առաքելոյն՝ փոխեցին ի հանգիստ ի նմին տեղւոջ, նոյնպէս և զայլոց վկայիցն ի փառս ամենասրբոց Երրորդութեանն: Իսկ իբրև եղև արուեստին լուան խուռըն և բժշկեցան, տեսին կոյրք և լուսաւորեցան, և համրըքն խօսեցան, և ամենեքեան յիւրաքանչիւր ախտից բուժեցան. որք հաւատացին ի Տէր մեր Յիսուս Քրիստոս ի ձեռն սրբոյ առաքելոյն Բարդողիմէոսի: Եւ համբարձեալ զձեռս իւրեանց միաբան հաւատացեալոցն, ի մի բերան փառաւորէին զՏէր մեր Յիսուս Քրիստոս. ընդ որում Հօր և Հոգւոյն սրբոյ վայել է փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոյն Բարդուղիմէոսի

Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ Թագաւորել Հռոմայեցւոց Նոմերիանոսի ամպարշտի. և յերկրորդամի ամին թագաւորութեան նորա՝ հալածանս յարոյց ՚ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ, ՚ի մոխ եդեալ առնել զհաւատացեալսն ի Քրիստոս, և զկրօնս քրիստոնէից, և չարաչար չարչարանօք սպառել զհաւատացեալսն որ ՚ի Քրիստոս. և առաքեաց դատաւորս և իշխանս ընդ ամենայն իշխանութիւն տէրութեանն իւրոյ, զի դատապարտեսցեն զայնոսիկ որք ոչ պատուեն զդիւսն մոռատ, և երկրպագութիւն ոչ մատուցանեն արուեստից աստուածոցն: Եւ ՚ի ժամանակին յայնմիկ ամպրոպ խռովութեան և զառն սուգ. հասեալ հաւատացելոցն Քրիստոսի [1]: Ի սոյն իսկ ժամանակի եղև գալուստ առաքելն իշխանին Պոլիմիանոսի ՚ի կողմանս Սիլիկեցւոց [2] մայրաքաղաքին Աստուց ՚ի մեծն Անտիոք, առեալ զեպարքոսական իշխանութիւնս նահանգին այնորիկ, քննել և մահուամբ դատապարտել զորս գտցէ անդր հաւատացեալ ՚ի Տէր: Արդ բազմաց ՚ի միասին յափշտակեալ լինելով քրիստոնէից, և պատուհասս առանդելով առ ՚ի Հելլենացւոց անաստուած բռնատրացն այնոցիկ, որ ընդ եկեղեցւոյն Աստուծոյ մարտեալ էին, պատահեցաւ ըմբռնիլ ընդ այլ հաւանատան և երանելին Բարդղամ, և բանտարգել լինել ՚ի քաղաքին Անտիոքացւոցն ՚ի ձեռն այնմիկ՝ որոյ

1. Ա.յլ օր. ՚ի Քրիստոս՝ ասեն եր հինգ այնորիկ և հալածանաց:
2. Ա.յլ օր. Կիւղէկիացւոց:

յայնժամ ըմբռնեաւ էր[1] զդատողական իշխանու-
թիւնն. ՚ի նմին քաղաքի էարտաբարոյ և ապաւում
կարծրութեամբ գոլով նորա: Եւ հրապարակաւ նըս-
տեալ նորա ՚ի վերայ դատողական բեմին, ասէ ցառա-
ջևկայ զինուորսն. Այծէք մուծէք այսր զաղարտեալ
ծերն զայն: Եւ վաղվաղակի կացուցին զնա առաջի նո-
ցա: Ասէ ցնա իշխանն. Զի՞նչ անուն է քո: Եւ նա պա-
տասխանի ետ և ասէ. Եթէ վասն Քրմարիտ անուան
իմոյ հարցանես, ետատարեալ անուն իմ քրիստոնեայ
է՝ զոր և կոչիմ, և նախ՚ի ծնողաց իմոց կոչեցայ Բար-
ղամ: Իշխանն ասէ. Բարւոք կոչեցաւ անուն քո Բար-
ղամ. քանզի կարող է անուանդ այդ հաւատարիմ զմեզ
առնել, զի անուանդ և ծերութիւնդ և հասակդ՝ ՚ի քա-
ղաքս անզգամութիւն հասուցեալ զքեզ: Բարղամ ա-
ռաց. Ես զանուն և զքաղաքավարութիւն գեղեցկա-
գոյն ունիմ, քանզի խոստովանիմ Աստուած յԱստու-
ծոյ ծնեալ նախ քան զամենայն յաւիտեանս, և մարդ-
ացեալ ՚ի վերջին աւուրս: Դատաւորն ասէ. Ան-
գգամ, ոչ հարցի զքեզ յայդպիսի. այլ թուխս
ինձ զանուղղայս բարբառել թէպէտ և ծեր ես: Բար-
ղամ ասաց. Մի բարկանար ինձ, ո՛վ իշխան, քանզի
սիրելով զՔրիստոս, թէպէտ և ոչ աւուր հրամանն ՚ի
քէն, սակայն եաւս քեզ պատասխանի: Դատաւորն
ասէ. Ամենայն սաստկութեամբ կամիմ հարցանել
քեզ, զի ամբոխս որ շուրջ զմեօք կան՝ զձշմա-
րիտ հարցուածն կամին լսել, և զքոյդ սեռանել պա-
տասխանի: Ամբոխն ասեն. Ահաւասիկ եմք ամենե-
քեան իբրև զնախնոյն մերոյ լսել զբանս քո, զի մեր
կրօնքս բռնութեամբ ոչ է: Դատաւորն ասէ. Արդ
պարտ է քեզ լսել և պատասխանի, և ոչնախ
սրտմտութեամբ բարբառել. այլ հեզութիւն
լեցի քեզ, զի թէ արտաքոյ հարցուածն իմոյ տացես
պատասխանի, չարաչար զկենցաղդ քո զվախճան ըն-
կալցիս: Բարղամ ասաց. Ընձայեալ ցանկամ զի և
դու ճշմարտութեամբ հարցանես, և ես ամենայն սաս-
տկութեամբ տամ պատասխանի. զի կամիմ և զհա-
սեալ ամբոխս՝ մանաւանդ զքրիստոնէից՝ սեռդ ինձ

1. Ա. ՅԼՕՐ. ԸՆԿԵՐԵԼ ԷՐ:

լինել. զի գիտեմ որ նախ քան թէ հակառակ Հանապարհին քրիստոնէութեան պատմեալ[1] եղև, և կամիմ քեզ հարցանել ստուգութեամբ զմեծոյ կամաց իւրառնա, և գաւառ յայտնիկ լինել զՀայրն Քրիստոս[2]։ Ասդ առաջին Հնամարտութիւն է խոստովանել զՔրիստոս, և ապա մաքուր քաղաքավարութեամբ կենցաղավարիլ. Հանդարտութիւն, հեզութիւն, սէր, քաղցրութիւն, արդարութիւն, երկայնմտութիւն, բարեպաշտութիւն, և զոր ինչ առեալ[3] ընկերին ոչ առնել։ Գաւառն ասէ. Երդնում յաստուածն և՛ի բանան ինքնակալին, զի բարւոք ասացեր, թէ Հընդամարտութիւն և ուղիղ կենցաղ՝ յեղանակէ ազատութեան. այլ զայս ինչ ոչ հարցի ցքեզ։ Ասդ՝ ո՞րպիսի իրիք ձևանաս երկիր պագանել։ Բարզամ ասաց. Ես վերագոյն ասացի, Հօր երկիր պագանեմ և Որդոյ որ՛ի նմանէ ծնեալ, և սուրբ Հոգւոյն՝ նորուն էակից և միանձնաւոր փառակից։ Պռխիանոս գաւառն ասէ. Ո՞չ ասացի քեզ՝ եթէ ծերութիւն Հաւանիւք քո՛ի շաղխաղխութիւն է զառածեալ, և խեղկեալ պատրաստ գքեզ. ո՞չ Թուին քեզ առածք գոլ ինքնակալին։ Բարզամ ասաց. Երդնում՛ի Յիսուս Որդին Աստուծոյ, որ ամաչեմ զգլուխ ամբառնալ և Հայել՛ի քեզ՝ առելով զարարեալդ մարդկան՝ Աստուած գոլ, և զայդոսիկ աստուածս անուանելով. քանզի ես ոչ Հաւանիմ զարարած պաշտել և նոցա երկիր պագանել. այլ յամենայն ժամ խոստովանիմ զՈրդին Աստուծոյ, որ՛ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս է ծնեալ։ Պռխիանոս իշխանն ասէ. Այնպարտեալ ինքնակալքդն Հրամայեցին, որք ոչ երկիր պագանեն աստուածոյն՝ կենդանակէզ առնել։ Բարզամ ասէ. Պատրաստ եմ տալ զմարմինս իմ, զի արասցես զոր կամիս. քանզի ես՛ի ձեռն սակաւ ժանջանաց և բազմաց՝ Հաւանեցուցանեմ զքեզ, զի արարածոյ և ձեռակերտոյ երկիր ոչ պագանեմ։ Գաւառն ասէ. Կան և ինձ քեզ պատուհասք, սակայն յառաջիկայս եկեսցուք, վասն սմբռխիս որ շուրջ զմեօք են. ասա,

1. Ա յլ օր. պոռոեալէղե։ 2. Մի օր. և գաւառն լոռ 3. Ա յլ օր. ասէ։ լինէը յայտնի ըե և զհամօրէն Քրիստոսի։

ոչխէս Հայր որդի ընկալաւ, և ԸՐբ։ Բարղամ ասէ. Ոչ է հնար այնմ, որ յառաջ քան զյաւիտեանս էր՝ ընդ ժամանակաւ առարանկիլ. զի ասէ. Յառաջ քան զյաւիտեանս ծնայ զքեզ. և զնարդ յաղագս Սատուծոյ հարցանես, թէ ոչխէս և ԸՐբ։ Հեգեմոնն Պոլիսիանաս ասէ. Ես լուեալ առ՚ի քէն թէ աստուածն քո որդի ունի, վասն այնորիկ հարցի զքեզ, թէ արդեօք այս ոչխէս էյէ. զի աստուածոյն իմոյ երկիր պատրաստեմ, ոչխէս տեառըն իմ և Թագաւորըն հրամայեցին։ Բարղամ ասաց. Վերագոյն ասացի և այժմ զնոյն ասել քեզ ոչ հրաժարեմ, եթէ Որդւոյն Սատուծոյ երկիր պատրաստեմ, այնմ՝ որ անժամանակաբար ծնեալ է. այլ զատացուածս և զգործս ձեռաց մարդկան ոչ երբեք կալայ առ աստուած, և մի այլ լոյծ ունել, թէ և զանձինդ փորտախս իմ՚ի բաց հանցես, և կամ զմարմին իմ յօշոյշ կոտրեացես։ Դատաւորն ասէ. Ոչ կա՛ս ներեմ քեզ վասն շատխաղխուԹեանդ քո և յամառկոտ մտացդ, այլ չարաչար հարուածովք պատուհասեցից զանզգամուԹիւնդ քո, և զանդրդուածուԹիւնդ մաշեցից զկարծրուԹիւն կզակացդ քոց, զի հաւանեալ կատարեացես զկամս հրամանաց ինքնակալացդ մերոց Թագաւորացն։ Գանգի բանիւք ողբանաց կամեցեալ իմ դարձուցանել զմիտս քո յիմարուԹեան[1], և խոնարհել՚ի ծերուԹիւնդ քո՝ երկայնամտաբար հարցայ փորձեցի զքեզ, այլ դու կացեր ստէպ՚ի քոյին մացառամիտ անզգամուԹեանդ[2]։ Բարղամ ասաց. Մի բարկանար ինձ, ով դատաւոր, քանզի մարմնոյ իմոյ ունիս իշխանուԹիւն, իսկ հոգւոյ՝ Սատուած ունի, ապրիչն համայնից՝ յոր հաւատացեալն եմ։ և կամ հաստատուն՚ի խոստովանուԹիւն նորա միանձն՚ի վախճան. և ոչ երբեք զսհեցից քոց մտաւեաց, և ոչ երկերապաղեցից յոտից և կուրծից դիւաց, որք խաւարին տանջանաց մատնեն զհոգիս այնոցիկ՝ որք մոլորեալք հաւատան և երկիր պագանեն նոցա։ Ասէ դատաւորն. Կարծեցեր դու եթէ համաւօտաբար զրուեցից զքեզ՚ի կենացս, այլ ըստ փոքու փոքու առ սակաւ սակաւ

1. Ասլ օր. չիմասփոսիէան։
2. Ասլ օր. այլ դու սպէպ հա- մառիէանդ։

խոչտանգեցիկ զամենայն անդամս մարմնոյ քո՝ի ցոյց աւետեցուն. և տեսանեմ եթէ օգնէ քեզ որդին Աստուծոյ քո զոր դուասես: Բարլաամ ասաց. Օգնեաց և օգնեսցէ. և ոչ թողու զիս հեռանալ՝ի կամաց իւրոց և՝ի սիրոյ, և պաշտօն տանել աստուածոյ հաստատելոյ մարդկան ծնօտիապատիւր ձուլածոյ պատկերաց: Սակ դատաւորն. Անհաւասիկ՝ի կիր արկանեմ՝ի քեզ տանջանս չարաչարս, որոց ակն ոչ ունիս, բատ քոյդ անզգամութեան. զի՝ի ձեռն տանջանաց հպատակ լիցիս հրամանաց ինքնակալացն և զոհես աստուածոցն: Բարլաամ ասաց. Ո՛վ իշխան, եթէ ոչ բարկասցիս՝ ես զձշմարիտն ասեմ ստուգապէս. երկրպագուք աստուածոցն յիմարեալ են, զի արարածք նոցա անյայտ և հանգոյս վախճանին, և զիարդ աս.՝ի տգիտութեան բարեաւք լցեն յաւիտեան: Դատաւորն ասէ. Վարեա՛ զկնի զդուխս կաշուք անփեղթելով, զի գնեն որ՝ի դմա շրջի՝ հատանեալ անապցէ մեզ:

Բարլաամ ասաց. Այսպէս քեզ յաւուրդ, եթէ ես մի Աստուած պաշտեմ՝ որ արար զամենայն, և նմա երկիր պագանեմ. վասն որոյ ոչ երկնչիմ՝ի սպառնալեաց քոց, զի առաքի այսց քոց ունելով զերկիւղն Աստուծոյ՝ միայնոյ առանց սասանելոյ. և ոչ միայն ես, այլ և ամենեքեան՝ որք օրինացս և կրօնիցս հետևեալ լինին: Դուխտանոս իշխանն ասէ. Ջինուձ առցես՝ի ձեռաց քեզնէդ տանջանարանացդ: Բարլաամ ասաց. Ելիցեն յՄարդէն Աստուծոյ, զի ոչ զգացի՝ի քոց տանջանացդ, առ աչս իմ ունելով զԱստուած իմ. առաւել քան եթէ տանջանօք՝ վշտագնեալ եմ անզգամութեամբ ձերով, զի գիտեալս և գիտելս՝ի Հարտարութենէ մարդկան՝ աստուածս անուանէք. վասն որոյ ըղձամ ազատիլ՝ի հասեալ կենցաղոյս, և ոչ քեզ զայդպիսիդ առելով քո: Դատաւորն ասէ. Ջինչ սուտս Բարլաամ, հաւանեալ լեր ինձ և զոհեա. քանզի պատկառիմ՝ի պատուական ազգաց քոց, և՝ի վայելուչ դեղոյ պատկերիդ քո, և խնայելով՝ի քեզ, կամ շատանալ քեզ ոտիք ընկալար տանջանօքդ: Բարլաամ ասաց. Ես զտանջանացդ բնաւ ոչ առի զգայութիւն, վասն որոյ պատրաստ եմ տալ զմարմինս իմ՝ի տանջանս խստագոյնս, որչափ և ածես՝ի վերայ իմ: և

հաւանեցուցանեմ զքեզ ՚ի գործոց իմոց՝ թէ յԱստուած հաւատամ, և դիւաց ոչ զոհեմ. զի սէրն Քրիստոսի ոչ թողացուցանէ զիս մեկնիլ ՚ի նմանէ. և եթէ ոչ բարկանայիր՝ ասէի քեզ քանս հանապազօրեայ զմեղսդ բարեպաշտութենէ, նեղեա արդ երկայնմտաբար:

Իշխանն ասէ. Այսա զոր ունիս ասել. այլ ո՞ր ինամատոցն ոչ գիտասցէ, եթէ քանք ձեր առաստեղք են պատատանց, և առութեան լինիք հետեւեալք. սակայն ասա, միթէ զիս քրիստոնեայ կարասցե՞ս առնել: Սուրբն ասաց. Ընձեռ առ Աստուածն իմ, զի ոչ դու միայն կացես քրիստոնեայ, այլ և ամենեքեան՝ որ առեն զՀաստատուածս և զձեռակերտսն՝ Աստուած գոլ, զի զղջասցին և խոստովանեսցին զՈրդին Աստուծոյ Հշմարտապէս ծնեալ ՚ի Հօրէ: Ա՛յլ յաղագս իմոյ հաւատոյս՝ որ ասէ. Ո՞ մեկնեսցէ զմեզ ՚ի սիրոյն Քրիստոսի. նեղութիւնք, թէ անձկութիւնք, թէ հալածանք, թէ սով, թէ վիշտ, թէ սուր. վասն այսոցիկ ոչ կարէ մեկնել ՚ի սիրոյն Աստուծոյ, և զոհել դիւաց, և հաւատալ ՚ի գործս ձեռաց մարդկան և յարտածս: Իշխանն ասէ. Բազում անգամ նեղեցեր քեզ, կարծելով թէ օգտակարագոյն ինչ բարբառեալ խօսեցայս, այլ դուք անուսմնութեամբ զայդպիսիսդ զոլանջեալ շաղփաղփիք ՚ի լսելիս անխտատից և տգէտ մարդկան:

Յայնժամ հրամայեաց առաջիկայ վիճաւորացն բռնն հարկանել և կախել գլխիվայր և քերել վնա, մինչև քանցեալ մերկացաւ ամենայն մարմին նորա: Եւ ասէ ցնա իշխանն. Ցայդ մեզ եթէ օգնեսցէ քեզ աստուածն քո և հաւատքդ: Բարդամ ասաց. Օգնեաց և օգնեսցէ, ոչ միայն ինձ, այլ և ամենեցուն որ կան և ինան ՚ի խոստովանութեան յայսմիկ: Զանց զի զայս առաւել յայտ աշխարհի ընդունելութեան և պատուոյ արժանանան, և ՚ի հանդերձեալ յաւիտենական զարքայութիւնն երկնից ժառանգեսցեն: Իշխանն ասէ. Ի բանդ արկցեմ հրամայեմ. զի զօրութիւն աստուածոյ զքեզ ազատէ տանջեցից զդա: Բարդամ ասաց. Եւ այժմիկ նոյն Աստուած է, որ եղև ինձ օգնական. և յոյժ համեմատիս չարչարել, պատրաստ եմ [1], զի ոչ

1. Ա՛յլ օր. տեսցե՞ս չարչարել պարկեշտ:

Թողու զնա Աստուած մեկնել՝ ի սիրոյն Իւրոյ և յանլսաւոր բարեացն՝ որ կայ և ինայ յուսացեալսն՝ ի նա։

*Եւ յետ աւուրց սակաւուց նստեալ Իշխանն անօրէնն Պռիմիանոս՝ ի վերայ բարձրադոյն բեմին՝ ի մէջ քաղաքին, և ամենայն ամբոխ քաղաքին շուրջ զնովաւ, և հրամայեաց զինուորացն զերանելին Բարլաամ ածել զառաջեաւ։ Յայնժամ ըզգան զինուորքն՝ ի բանդն՝ ըստ հրամանի Իշխանին, և հանեալ զնա ածեալ կապանօք առաջի Իշխանին յատեան հրապարակին։ Յայնժամ ասէ ցնա Իշխանն. Հաւանեցուցէր զանձն քո՝ այսուհետև ազատիլ՝ ի մեռցեալ ևս տանջանացն։ Բարլաամ ասաց. Բազում անգամ լուար յինէն թէ ոչ եմ զառածեալ[1] յիմաստից և ոչ զոհեմ դիւաց, և ոչ ուրացայց զՔրիստոս իմ և արարածոց երկնից պատից, և այժմիկ զնոյնդ ասել քեզ՝ ոչ հրաժարեմ. արդ ասա վաղվաղակի զոր ինչ կամիս։ Իշխանն ասէ. Կախեցէք զդա և քերեցէք երկաթի եղընգամբք. զի դէմն չար որ ըմբռնեալ է զդա՝ ելցէ՝ ի դամնէ։ Բարլաամ ասաց. Ես դէ ոչ ունիմ, այլ և ոչ աներևին իմանալ զտանջանս քո։ Իշխանն ասէ. Զանձրացայ ես, և պաշտօնեայք իմ վաստակեալ՝ ի քաց եղեն, և ոչ հաւանիս. արդ տարածեայի դա յերկուց ոտից՝ ի մէջ երկուց ծառոյդ։ Եւ արարին վաղվաղակի որպէս հրամայեաց Իշխանն զինուորացն։ Բարլաամ ասաց. Ճշմարիտ ասեմ՝ ի Տէր իմ Յիսուս Քրիստոս, թէ քնաւ ոչինչ թուեցան տանջանք սեպհական հնարիկ քոց, Աստուծոյ թեթևացուցանելով ինձ զնոսա։ Իշխանն ասէ. Ջի՞նչ ասես, Բարլաամ, զոհե՞ս և ազատիս, եթէ ոչ։ Բարլաամ ասաց. Ոչ դիտես եթէ զի՞նչ է սէրն Քրիստոսի։ Իշխանն ասէ. Հաւանեա ինձ. քանզի՝ ի բազմաժամեայ կախմանէդ վրանք բերանոյ քո թողացեալ են, և յօդք մարմնոյդ քակեալ են, վասն որոյ խնայելով՝ ի քեզ ողորմիմ ալեաց քոց և ողբեմ զքեզ, զի զոհեացես և ազատեսցիս։ Բարլաամ ասաց. Ասացի քեզ՝ զի կամիս որ յերկինս քնակութիւն ունի, և յերկրի օդնական է հաւատացելոց իւրոց՝ ասեմ, ոչ խնայեմ զառանջանոտ. և ոչ զոհեմ

1. Ակն օր. զառանցեալ։

ապականացուաց մտոեաց աստուածոց: Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն ի նեղջոյ երկնից, գրեալ է:

Իշխանն ասէ. Պարզեցէք զձեռս դորա և ի նեղջոյ տարածեցէք հուր, և մատուցէք անդ քաղին մի, և կնդրուկս արկէք ի ձեռս դորա. և եթէ անշարժ ինասցէ ձեռն դորա՝ տեսցուք. ապա եթէ թափէ առ բաղինն զոր ինչ ի ձեռին է զոհեաց: Ալ արիապոյն զինուորն Քրիստոսի Բարղամ ի վեր ուղղեալ զձեռն նր և հեռացուցանելով ի բաղնէն, և զաչս ի յերկինս հանեալ՝ ասէր. Քեզ Հօր և Քրիստոսիդ քոյ տաց զմարմին իմ: Հայեաց հաշտ ակամբ յերկնից ի պատրաստ ընակութենէդ քումմէ ի ցրուեալ և ի վաստեալ ժողովուրդ քո, և զհեղումն արեան իմոյ ի մաքրութիւն սոցա համարեա: Եւ զկնդրուկն առ բաղնոյն ոչ արկ, այլ ի վառմանէ հրոյն ձեռք նորա հաւաքեալ լինէր. քանզի տաքրեալ խորովէր կայծանն զմարմին սրբոյ վկային, և լարքն ի միասին ի մեանս ժողովէր, և ծակէր ի մի կողմանէն ձեռն, և այսպէս հանդուրժելով սիրովն որ առ Աստուած՝ նահատակ Փրկչին՝ աւանդեաց զոգին. վկայեալ յամն Ն. Մերիանոսի Թագաւորի, ի մեծն Ընտրոք, յիշխանութեանն Պոմիանոսի Հեգեմոնի, յամենայնն գեհաեմ բերի [1], որ օր քան և ութ էր ամսոյն, և ի մեզ Թագաւորելոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որդւոյն Աստուծոյ. ընդ որում Հօր և Հոգւոյն սրբոյ վայել է պատիւ, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1. Մի օր. Նոյեմբերի ԻԹ, որպէս գնէն Յայտաւորք մեր և Աստուածայ:

Պատուհասիւն և խօսք Եղիսեայ, յաղագս վարուց և գործոց ոճրագործ Գիեզի եւ վրայհասուցելոյ նմա ցաւոյ հետեւողաց անարգանացն Յորդանանայ, արդեօք իսկապէս Աստուած էր Իսրայէլի:

Սկիզբն և բարեկամք, ոչ է անհատատալի Աստ բանիս միամիտ ոմանց [1], որք հայրենատուր վարուց հետեւին: Ա.յլ և իրաւունս համարիմ, զի արտաքոյ և չարչարակցութեամբ գերեվիզք մեր լինիցիք. այլ մանաւանդ գոհութեամբ ազօթս մատուցիք առ ա- մենեցուն մեր Աստուածն և Տէրն Քրիստոս [2], զի զոր խոստացայ՝ գեղեցկապէս սկիզբն առնել զանհատա- կան [3] վարս և զաքանչելագործութիւնն Յովսափեթին [4] մերոյ և վարդապետին Բարսղի գրել, զի մի անցեալ ժամանակաւ 'ի մոռացօնս խորոց մատնեսցի: Ա.յլ և գերելոցս երանելեացն և զաքանչելի արանցն՝ զոր և ա- սեմ խակ, զՎրիզորի՝ որ և աստուածաբանութեամբն գերազանցեալ Հոմանայր, և զՎրիզորի անաստացուա- ծի Նիւսացւոյն քաղաքին. և ոչ միայն զսոսա, այլ և զամենապումն [5] Եփրեմ, զոր շուրջ փարելով զիմաստ բըջ փայլեցուցաք [6]: Եաւ եղիցի ինձ ախորժելով, 'ի*

1. Եբրկ. օր. որդեաց:

2. Մի օր. ի՛ն և արքասուօք լուալոյ ինքնիշխանութեամբ գերեզմին լինիցի ոչ:

Եթե զոր մատուցանել կամ յեկ յաղագս գերեզմանի՝ մի զոհութեամբ աղաչանս մատուցուք առ ամենեցունն Տէրն ոչ Յիսուս Քրիստոս:

Ա.յլ օր. ի՛ն արքասուօք լուալոյ ինքնիշխանութեամբ գերեզմին ոչ է, և զոր մատուցանել կամիմ գոհութեամբ աղաչանս մատուցուք առ ամենեցունն Տէրն ոչ Յիսուս Քրիստոս:

3. Եբրկ. օր. պանդխտացեալն վարս:

4. Մի օր. հայրապետին ոչ:

5. Եբրկ. օր. պանծացեալն Եփրեմ:

6. Մի օր. պիծեամբ շուրջ փարելով զվարս փայլեցին:

Ա.յլ օր. պիծեամբ փարելով շուրջ վարս փայլեցուցաք:

ձեռն սեպհեան Հոգւոյն սրբոյ [1], գրել զյօրինուածս ժուժկալութեան սքանչելի արանցն, ընտրել զպատմութիւնս և զպահաստութիւնն կատարել. և որպէս մեռլիմ որդի զպարտսն հատուցանել [2], որպէս վերապոյնն ասացի, զհետ գոլով և ձիմարտութեամբ յօրինեցից [3]: Գիտէք նաև դիտէք զարեգակն ծածկեալ յամպոյ, և ժամանակաց անցելոց՝ զվայելուչ պատմութիւնս արկանել՝ ի մուտացս: Վասն որոյ զմեծ հայրապետս մեր, զգոյութեան աշխարհիս՝ զՆահապետս, որ երկնային զօրութեանցն էր խոտակից, որ փորձիւ եկեղեցւոյ վարդապետեան [4], որ զբնութիւնն իւր արհաւոյց, որ առ երկրորդական աղօթիւքն իւրով խորտակեաց զՅուլիանոս զկործանեալն, որ զաղանդաւոր հայհոյչացն ելից զբերանս, որ զարիանոսացն խզեաց զջրափառութիւն, որ քրիստոսական խնամատութեամբն զուարն հարեալ զուղղափառութենէ [5], որ հոլիւն հաստ օրէն եկեղեցեաց ժողովրդեանն Քրիստոսի, որ արքայութեան երկնից էր քահանայապետ, որ փակեալն էր քրիստոսական հօտին, որ առաւածային հատոյն ժիր վարդապետն, որ ի կենդանութեանն և զկնի մահուանն մեծապէս փայլեցուցանէր զաքանչելիսն [6], որ աղօթիւքն որպէս վերապոյնն ասացաք, զառաւածամարտն Յուլիանոս [7] սատակեաց, զայն՝ որ ամբարձ ի բարձունս զեղջիւր իւր [8] և խօսեցաւ վսեմս մեծոյ անիրաւութիւն [9], զայն՝ որ անարժանն էր

1. Մի օր. կամ եղև և ինչ, որպէս ի փետրենէ Հոգւոյն սրբոյ յանխորժութիւն գրել:

Ասյլ օր. կամ եղև ինչ յանխորժութիւն որպէս ի փետրենէ Հոգւոյն սրբոյ՝ գրել:

2. Մի օր. զհայրենի պարտսն հատուցանել:

Ասյլ օր. զհայրենի պարտսն վճարել:

3. Մի օր. ճշմարտիւ յօրինեցի:

Ասյլ օր. ճշմարտիւ յօրինեցաց:

4. Մի օր. վասն որոյ զմեծ հայրապետին ձերոյ զՓիլոնոն աշխարհի վիճարկեաց, որ երկնային պօրութեանցն փեսօզ եղեալ, զիրոյ վարդապետն էիեղէցւոյ:

Ասյլ օր. վասն որոյ զմեծ հայրապետս ձեր սիմեոնէոս, որ երկնային պինոսորսութեանցն հնարաւորութիւն վարդապետն էիեղէցեաց:

5. Մի օր. որ առ երրորդական աղաչիւքն զՅուլիանոս խորտակեաց. ի ծանեալ զաղանդն, որ զհայհոյչացն խոչանդն, որ զնեսթորեան սրբոսոցն զարթափառութիւնն. և քրիստոսական նմատիկն բառառն հարեալ յուղղափառութիւնն:

6. Մի օր. առաւել քառասնից ամաներ զպատանքսն զգեանուլ:

Ասյլ օր. քառասնից ամաներ զնգեանուլ:

7. Մի օր. զընդմիամարտն Յուլիանոս:

8. Մի օր. զայն որ համբարձ ի բարձունս զերկիր իւր:

9. Մի օր. անիրաւութեամբ:

թագաւորական պատուէն [1], և արհամարհացեալ չարաչարութեանն էր զօրավիգն, զայն՝ որ յաղագս կեանցն թեանն՝ [2] զքաղաքս յանձնարշաւութիւն կամէր զարձուցանել [3]։ Եւ եթէ զլուծել կամ ուրախս, ոչ է ժամանակ զայս պատմել [4]. այլ յառաջիկայն մեր վերատեսն երթևեցուք, և՛ ի ծննդենէ մինչև յվաղճան զվարս սրբոյն պատմեցուք։ Բարեբաղ միայն որ եղոյց զվարս Հանուխ վայելչականօք, և զբանս աստուածային իմաստութեամբ և զգործս պայծառացոյց. զամենայն Քրիստոսի տալով՝ զհոգի և զմարմին բանիւք և արդեամբք, և զհելլենական մոլորութիւնն որպէս զաւրզի ոտայն եղծանէր [5]։

Սա եօթնամեայ եղեալ տուեալ լինի յուսումն գրոց, և կացեալ անդ զհինգ ամ [6], և ոչ ընդդիմադարձեալ յուսմունն [7], ցանկալի հմուտ լինել փիլիսոփայական արհեստին. զմտաւ ածէր թողուլ զընակութիւնն իւր, զի էր՛ի Կեսարիայ Կապադովկացւոց։ Եւ աւ ժամայն յարուցեալ մայր նորա առեալ զնա գնաց [8] ՅԱԹԷՆա, պարկեշտութեամբ բազմաւ և ժուժկալութեամբ, իմաստութեամբ զարդարեալ։ Եւ երթեալ աւ իմաստութեան վարդապետին Հելլենացւոց [9] որում անուն էր Եւտոս [10], և տուեալ զնա յուսումն փիլիսոփայութեան։ Իսկ նորա դիւրութեամբ հասու եղեալ այնչափ, մինչ զարմանալ ընդ նմա վարդապետն և աշակերտացն [11]։ Քանզի էր նորա աշակերտասէր կին Գրիգորիոս Մեծն, որ ապա յետոյ եկաց Նազիանզու եկեղեցւոյն վերատեսուչ, և առաքելական աթոռոյն Սիոնի [12]։

1. Մի օր. Ըստ պատուիրանի։ Այլ օր. Ըստ պատուիրանին։
2. Մի օր. Յայսերունեան, ըստ ըստ։
3. Մի օր. Ետես երջանիկ։
4. Մի օր. Ոչ է ժամ պատմել։ Այլ օր. Յայլ ժամու պատմելոյն։
5. Մի օր. Զսուրբ սոփոյն ստոյգ հետոյ։
6. Մի օր. Եւ հաստատեալ յոստանն զհինգ ամ։ Այլ օր. Զեօթն ամ։
7. Երկ. օր. Եւ ոչ ընդդիմադրեալ յուսմանն։
8. Երկ. օր. Եկն յԱԹԷնս։
9. Մի օր. Եւ երթեալ առ Ետեհս վարդապետն Աթենացւոց եւ Հելլենացւոց։
10. Մի օր. Եւդիոս։
11. Մի օր. Աշակերտացոյն։
12. Մի օր. Առաքելական աթոռոյն նախատեղի։ Այլ օր. Առաքելական աթոռոյն նախամատեաւ։

Իբրև երկոտասան ամ [1] հանդարտէր յուսումին, Յուլիանոս՝ որ յառաջն փոքր ի քրիստոնեայ էր, և Ախիանոս՝ [2] խոտորեցան [3] յուղիղ հանապարհէն: Իակ սուրբն Բարսեղ առաւել աքանչանայր ընդ արան [4], և եղեալ՝ ի մոխ մի Հաշակել հայց կամ գինի, մինչև՝ ի վերին աեաչուքենէն իմացեալ զաստուածային իմաստու թեան զհանգամանս, վոյթ յանձին ունելով զամենայն իմաստուց զհնութեսանան ամ, և ընդ ամենայն հելլենացի իմաստուքն իւնս ընթացեալ, և՝ ի կատար աստեղագի տուքեանն հասեալ, զլուսապոյնն՝ ի նոյանէ ընտրեալ, և ոչ կարացեալ գտանել մի ինչ՝ ի նոցանէ հրաշագոր ծոյ ամենեցուն: Եւ եղե՛ւ՝ ի միում գիշերի տքնեալ նմա, ծագումն աստուածային եղեալ առնա, զի Թոզէ զաղանդատուրացն զգիտս: Եւ յարուցեալ առ ժամայն ի ՅՆգիտաստս. և եկեալ առ ումն մի յառաջնոգ գացն [5] որում անուն Հանատէր Պորփիւրոս. և նորա առեալնմա գիրս քահանայականս, յորում գրեալէր աստուածային պատգամացն հանգամանս: Իակ նորա այսմ իրի հանդիպեալ, գաղարեաց անդ ընթեռնուլ, և հաստատեալ զաստուածային պատգամն, ջուր և բանջար Հաշակելով և գի ամ գաղարելով անդ, և գՀիմարիտ հաւատոյն բանս իմանայր. միայր անդէն, քննէր և ստուգէր յաղագս բանին Հիմարտուքեան: Եւ գինի այսորիկ աղաչեաց գվանականն, զի արձակեացէ զինա ՅՆրուսաղէմ՝ առ՝ի յաղօթել, տեսանել զաքանչելիսն որ անդ եղեալ: Իակ նորա աղօթեալ արձակեաց գինա:

Դարձեալ վերատին եկն ուր գվարժուքին փիլիսոփայուքեանն էր ընկալեալ. սկսանէր ապա՝ ընթացրեալ զբազում փիլիսոփոս [6] և գՀելլենացիսն դարձուցանել առ Աստուած, ցուցանել նոցա գՀանապարհն ի կրկուքեան. խնդրէր գնուազոս վարդապետն Հելլենացոց գոցանէր յաստուածգիտուքիան:

1. Մի օր. էրիոպատանամէայ:
2. Անուանի հռետորն Լիբանիոս:
3. Մի օր. և չեզոյ խոտորէցաւ:
4. Մի օր. սուրբն Բասիլիոս ածել գմաս սուսն զարմանայր ընդ սրան:
5. Մի օր. էին առ նա ոմն յառաջնորդաց:
6. Մի օր. սուր յառաջն էր՝ ի սիրելիբանն, ապա ընդարձակ փիլիսոփայուքեան վարդապետն Հելլենացոց դարձեալ յաստուածգիտուքիան:

*իւր, վասն զի նա էր առաջնորդն բանին, փոխանակ աշխատութեան նորա բերելով նմա զամբիծ հաւատն, զի ինա դարձուսցէ յուղիղ հաւատս։ Եւ գտեալ զինա յապարակի ընդ այլ փիլիսոփայս, զի վիճէին վասն բանի ինչ իրաց, ոչ այլ ինչ փոյթ ունելով նոցա, բայց միայն լսել ինչ կամ առնել նորագոյնս, հասարակաց հարցափորձելով զիմաստան։ Մօտ կալով և ունկն դնելով Բասիլիոս [1], և սոգոմանէր զնոսա։ Եւ ոմն ի յորոց անդ կային՝ ասէ. Սոգոմանէ զքեզ ոմն ի, այլ իմաստասէր։ Եւ նա ասէ. կամ Սուտաճ է, կամ Բասիլիոս։ Իբրև ծանեաւ եթէ Բասիլիոս է, արձակեաց զարան որ ընդ նմայն էին։ Եւ գտեալ անդ Բասիլիոս զաւուրս երիս, ոչինչ Հաշակեալ հարցափորձելով զիմաստան։ Ելոյց եւուրս ցԲասիլիոս և ասէ. Ցինչ է սահման իմաստութեան, Բասիլիէ։ Եւ նա ասէ. Սկսեալն սահման իմաստութեան՝ ընդ Թերցումն մահու [2]։ Իսկ նորա զարմացեալ ասէ. Ցինչ ’ի վեր քան զաշխարհս քաղցրագոյն։ Եւ նա ասէ. Բանք՝ որ յաշխարհի. բայց գառն է յամենայնի աշխարհս որ գնան ընդ նա ախտիւք [3]. այլ է Հանապարհն ոչ որ ընտ մարմնոյ է, և այլ որ ընտ մարմնոյ բնութեանն, և միանգամ ոչք գնան ընդ նոսա, ոչ կարեն ընդունել լինել, վասն զի ոչ կարէ երկուց տերանց ծառայել։ Բայց միայն որ կարօղն է բռնել քաղցելոց զհաց

կործանին վասն նորա. անբարեգթութիւնք, անաշխատութիւնք, անառակութիւնք, զօշաքաղութիւնք, բանասարկութիւնք[1], լեզուապարտութիւնք անակնածե-լի, և որ այսմ չարութեան նման են: Իսկ զապաշխարութիւն կանգնել, անդրդուելի ծաղկեալ որոց վարին նոսաւա. իսկ որոց ընդդէմն կան՝ դիմադարձ լինին: Իսկ բնակչաց ակնածելի ժողովոյ[2] լուցանել զնոսա ժուժկալութեամբ, լսողութեամբ, պաստութեամբ, պարկեշտութեամբ, մարդասիրութեամբ, և բազում բարութեամբ. իսկ այսմ հմտութեան միտք են և տեսանելացս զգուշութիւնք[3]: Իսկ որ լսէ բանիս իմոյ՝ նախանձի ընդ պատճառն. քանզի այնմ և այսմ ես եղէ տեսօղ և տեղեակ, և պատմեմ քեզ, ոյլ ևս, եթէ առ մեզ ոչ է այլ ինչ օրինակ, բայց եթէ ըստուն հարկանել զՀնարտուութիւնն՝ որ առաջնորդէն մեզ 'ի վերկութիւն. յարևցեն սոքա 'ի կեանս յաւիտենական և կայցեն առաջի բեմին Քրիստոսի, որպէս առնն մեզ մեծաձայն՝ մարգարէքն Եսայիա, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ, Դաւիթ թագաւոր, և առաքինին Պաւղոս: Ըստ սոցա[4] և ինքն իսկ որ ապաշխարութեան էր պարզեւատու՝ ամենեցուն Տէրն, որ զկորուսեալսն ինդրեաց, և գտեալ մանուկն 'ի ծոցոյ հօրն և զբազում առացուածս իւր անառակութեամբք[5] վատնեալ, և ինքն սովամահ եղև, վերստին ընկալաւ և մտերմութեամբ զերկիս արկեալ համբուրեաց, և պատմուճան զարդարեաց և մատանեաւ բազմագնաւ[6] շքեղացոյց զինա, այնպէս որպէս թէ ոչ երբէք մեղուցեալ նորա 'ի Տէր, որ առաւել ունի զգթութիւն, և այսպէս հաստատութեամբ տայ զՀատուցումն[7]: Որպէս և առ մշակս՝ որ զմեռաւսան ժամն վաստակեցին,

1. Մի օր. բանասրխութեամբ:
2. Մի օր. իսկ բնակչաց ածել 'ի ծոցով, լցուցանէ զնոսա:
3. Մի օր. իսկ այսմ փեսանելի հմտութեանց մտիք են զգուշութիւն:
4. Մի օր. առաքինին Պաւղոս. ընդ նոսին և ինքն որ առաջնորդութեանն է պարգեւատու և ամենեցունց Տէր:
5. Մի օր. որ զբազում ապականեալ ծընս առաքինութեանն վայելեաց և ինքն սովամահ եղեալ:
Ա.յլ օր. որ զբազում ապականեալ անառակութեամբ ծախեալ:
6. Մի օր. բազմագնեաւ ևս բազմագնով:
7. Մի օր. հատուցմամբ պայ զհատուցումն:
Ա.յլ օր. առաւելանի զգիւտութիւն:

տուեալ նոցա զվարձանս որպէս զառաջնոցն։ Այսպէս և զմեզ ընդունի՝ եթէ վերատեան ի ջուր և ի հոգւոյ ծնանիմք, և պարզևէ մեզ՝ զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ ել, վասն զի զայն պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։ — Զայս ամենայն լուեալ Եւտրոս, եկեալ ի միտս իւր՝ ասէ. Ո՛վ բանս սիրելիք, երկնային զօրութեանցն տեսօղ, վասն զո հաւատամ ի մի Աստուած՝ Հայր ամենակալ, յարարօղն երկինի և երկրի, և որ ինչ ի նմանէն է, ակն ունիմ յարութեան մեռելոց և կենացն անվախճանից յաւիտեան։ Ես, ասէ, զիմ հաւատս ցուցից քեզ, և զամենայն որ ինչ իմ է՝ տաց ի ձեռն քո, և զինացուածս ժամանակաց իմոց եղէց ընդ քեզ. և եթէ հաճոյ է Աստուծոյ՝ ընկալցի զիս ի տուրբ ջրոյս և յաստուածային Հոգւոյն վերատին ծննդեանն[1]։ Եւ բանիւքս ասէ. Օրհնեալ Տէր Աստուած մեր, յայտ հեաւ մինչև յաւիտեանս, ով Եւտրէ, որ ծագեաց զլոյս ճշմարտութեան[2] ի կամս քո, և փոխեաց ի քաղմաստուած մոլորութենէն՝ ի գիտութիւն իւրոյ ճշմարտութեանն։ Արդ խորհուրդ ի սաեմ քեզ, եթէ որպէս զիրկութիւնն մեր գտաք, և ի կենցաղոյս ազատեցաք։ Տուր՝ որպէս ասացեր՝ զինչս քո, և վաճառեցուք զայն և տացուք աղքատաց, և զամենայն որ ինչ է մեր՝ այնպէս արասցուք, և այնպէս երթիցուք ի տուրբ քաղաքն Երուսաղէմ, որպէս զի և տեսօղք լիցուք այնմ սքանչելեաց՝ որ անդր գործեցան, և առաջի կացցուք Աստուծոյ համարձակութեամբ։

Եւ այնպէս կարգեցին զամենայն ինչս իւրեանց բարեպաշտութեամբ, և տուրբ մկրտութեանն փութային։ Այս յարուցեալ դէմ յանդիման Երուսաղէմի անկն կալեալ. և իբրև մտին Յինսիոք քաղաք, ի ննջեցեալսն ի պանդոկ մի[3]։ Իսկ որդի պանդոկապետին՝ որում

1. Մի օր. և էին հաճոյ ինչ Աստուծոյ՝ ընկալցի ի տուրբ ջրոյ և յաստուածային հոգւոյն վերատին ծննդեանն։

2. Մի օր. զլոյս աստուածգիտութեան, և ինչպէս ի քաղմաստուածութենէն մոլորութենէն ի գիտութիւն իւրոյ ճշմարտութեան։

3. Մի օր. և այնուհետև ինչ էին ունելով Երուսաղէմ. և իբրև հասին ի Սինիսոք քաղաք։

Ա. օր. այս յարուցեալ դէմ յանդիման Երուսաղէմի անկն կալեալ. և իբրև հասին ի Սինիսոք քաղաք, ինչին ի պանդոկ մի։

անուն էր Փիլիքսիանոս[1], որ Թարգմանի Օտարասէր, նստէր առ դրանն բազում տրամաբեաւք. և էր նա աշակերտ Կիւրեղեայ վիլլոսոփայի, առեալ՝ ի նմանէ տունս քերականս, որպէս զի մեկնեսցէ զնոսա՝ ի հոգեւորս տրամախոհս. և՝ ի բազում ծուխս և՝ ի հոգս էր վարաձեալ վասն չկարելոյ մեկնել զնոսա: Եւ տեսեալ զնա Բասիլիոս՝ ասէ ցնա. Ընդէր այդպէս վարանեալ կաս, պատանի դու: Ասէ ցնա պատանին. Ցինչ օգուտ իցէ ինձ[2] ասացից քեզ: Եւ առաց նմա զպատճառս իրացն: Իսկ Բասիլիոս մեծ կացեալ ընդ ձեռնոյր զառնան, և առեալ զերկր զմեկնութիւն նոցա յերկիս դէմս: Իսկ պատանին[3] ընկալեալ խնդութեամբ զնա, առեալ եկն առ Կիւրեղիոս: Եւ ընթերցեալ զնոցա ծուխն մեկնութեանցն խնդալից եղեալ ասէ. Աստուածուհւոյն նախախնամութեամբ, ոչ ոք կարէ յայժմու վիլլոսոփայից մեկնել զնոցա ծուխն դոցա. ով է որ զայսպիսի իրս յօրինեաց: Պատանին ասէ. Օտար ումն եկն երեկ՝ ի պանդոկն իմ[4], և պատուականութեամբ ի մատաստիրեաց ինձ զնոցա ծուխն դոցա: Եւ նոյնժամայն Կիւրեղիոս ոչինչ յապաղելով[5] եկն՝ ի պանդոկին. և տեսեալ զԲասիլիոս հանդերձ Եւուղեաւ, և ծանուցեալ զնոսա զարմանայր ընդ իրեն. վասն որոյ ոչ ուներալ ակն տեսանել զնոսա, աղաչէր զի արժանասցեն ընդունել զնոսա՝ ի տուն իւր: Եւ հաւանեալ նոցա եկին զկնի նորա. և եղեալ առաջի նոցա սեղան, և Հաշակեցին հաց և բանջար միայն, և ուրախութեամբ լցան. բուռն հարեալ զկարգաւորութենէն իւրեանց՝ զոհանալով զԱստուծոյ: Իսկ Կիւրեղիոս սկսանի՝ ի նոսին ինչ անկանել՝ ի բանս հոգեւորս[6], և նոքա առաջի եղեալ բանս յաղագս հաւատոյն որ՝ ի Քրիստոս: Ունկն դնէր Կիւրեղիոս ասացելոցն, և ասէ. Ե՞րբ է ժամանակ այդմ իրաց: Բարեղ ասէ. Յորժամ կամք հաստատին՝ ոչինչ կարէ խափանել: Եւ նա ասէ. Իմձ օգուտ հաւուցեր զմեզ,

1. Մի օր. Փելիքսիանոս:
Ա.յլ օր. Փիլիքսիանոս:
2. Մի օր. Եւ ինձ օգուտ ընդ ասացիդ թէ:
3. Ելիկ. օր. պատանեայն:
4. Մի օր. ՚ի պանդոկին քմոմ:
5. Մի օր. ոչինչ ինչ յապաղելով:
Ա.յլ օր. ոչինչ ինչ ապաղելով:
6. Մի օր. սկսանէր խոստանալ աղքատանալ ընդ նոսա բանս հոգեւորականս:

ուվ Բասիլիւ, խօսեա և ընդ աշակերտեալ մանկունս
իմ։ Իսկ բարեշուք այրն Աստուծոյ տեսեալ ժողով[1]
զմանկունսն, ուսուցանէր նոցա՝ անձանց մաքրութիւն
և անախտութիւն մարմնոց, գնացք հեզութեան,
ձայն չափաւոր և խօսք բաւական, կերակուր անխըր-
ուով, առաջի ծերոց լռութիւն, առաջի իմաստնոց ուն-
կընդրութիւն, առ վերակացուս հնազանդութիւն,
առ ընկերակիցս սէր, առ կրսերակսն անկեղծաւո-
րութիւն, սակաւ խօսել և յոլով իմանալ. մի յաչա-
խել՝ի քանս, մի յանդգնել՝ի խօսս ծաղու[2], ամօթ-
խածութեամբ զարդարիլ, ընդ անպարկեշտ կանայս
ամենևին մի խօսել, ի վայր ունելով զակն և՝ի վեր
զիւտն, փախչել՝ի հակառակութենէ. մի իշխանա-
բար ուսուցանել. մի ընդունել հեշտաբար յամենե-
ցունց պատիւ. և որ կարողն է՝ի ձեռնջ ընկերին փոխ
առել, մի դարձեալ պահանջեսցէ զիւրն, այլ Աստու-
ծոյ վարձուցն ակն ունել[3], և զյաւիտենական կենացն
հաւատացեալ ընդունել՝ի Քրիստոսէ։ Զայս ամենայն
սաց Բասիլիոս ցաշակերտսն Նիւսանեայ, և նոքն
հրաժարեալ գնացք զհանապարհն իւր հանդերձ ե-
ւուքեաւ։

Իբրև եհաս Կերտասղէմ՝ զամենայն հաւատս ուղ-
ղափառս փափաքանօք քննեալ, և՝ի վերայ այսր ա-
մենայնի Աստուծոյ երկրպագութիւն մատուցեալ,
եկեն՝ի տես եպիսկոպոսի քաղաքին, որում անուն
էր Մաքսիմիոս։ Եւ անկեալ առաջի նորա աղաչէին
արժանի լինել վերատին ծննդեանն՝ի Քրիստոս
Աստուած։ Եւ տեսեալ զնոսա սրբոյ եպիսկոպոսին, առա-
քել նա լցոյց զնոսա հաւատով, յանձն առեալ կատա-
րել զխոստումն նոցա։ Եւ առեալ զնոսա եպիսկոպո-
սին և զայրս ոմանս հաւատացեալս, եկեն՝ի Քրիստոս
Աստուած։ Իսկ Բասիլիոս մերձ կալով յամբոխն՝ անկեալ
յերկիր արտասուէր հառաչմամբ մեծաւ, և հայցէր
յԱստուծոյ նշան լինել տեառնեալ վասն հաւատոյն. և

1. Երկ. օր. ժողովեալ զմանկտեանն։
2. Մի օր. գնացք չափաւոր, ձայն հեզ, բան բաւական, ներքինօր և ըմպելի անխռով... առաջի իմաստնոց լսողու-
թիւն... առ իրեարս անկեղծու-
թիւն... զաչս իմանալ... մի յան-
դգնել՝ի ծաղր։
3. Երկ. օր. յԱստուծոյ վարձուցն ակն առնել։

դողութեամբ յարուցեալ մերկանայր զհանդերձն, ընդ նմին և զվէնն մարդն. և աղօթելովն առ ժամայն եմուտ ՚ի ջուրն։ Եւ առեալ քահանային մկրտեաց զնա [1]. և նոյն ժամայն սկսն հրեղէն եկաց ՚ի վերոյ նորա, և ելեալ աղաւնի մի ՚ի լուսոյն՝ կ՚ի ցորդանան և խառնեաց զջուրսն [2], և վերացաւ յերկինս։ Իսկ որ անդր կային, տեսեալ՝ փառաւոր առնէին զԱստուած։ Եւ նըստև մկրտեցաւ Բասիլիոս եւ՚ի ջրոյ անտի, զարմանայր եպիսկոպոսն Մաքսիմինոս ընդ սէրն Բարսղի որ առ Աստուած, և աղօթեալ նորա զգեցոյց նմա զՊրկիտոսի վարշամակն [3]։ Մկրտեաց և զԵւտրոս. և օծեալ զնոսա սուրբ միւռոնաւն՝ տայր նոցա և ՚ի կեն դանատար հաղորդութենէն [4]։ Հայցեաց ապա և Բասիլիոս ՚ի քահանայապետէն Աստուծոյ՝ աղօթիւք առնուլ կերակուր, ոչէր և արար խոկ։ Իսկ Բասիլիոս առաջ. Ցնոսա Պրկիտոս Աստուած մեր, ոչէր հատացի աւետարանական բանիւ քո, եւ յոտամ ՚ի բարերարութենիւնդ քո, եթէ ուտելով և ըմպելով յաղթեցեր հակառակողին [5] իմոյ սատանայի, զօրծակցութեամբ Հոգւոյդ սրբոյ։ Իսկ քահանայապետն Աստուծոյ շուրջ առեալ զհաւատացեալսն ետուն՝ զարձաւ անդրէն ՚ի տուրբ քաղաքն Երուսաղէմ։

Իսկ սուրբն Բասիլիոս շրջեալ հանդերձ եւուղեաւ ընդ սուրբ տեղիսն [6], և գինի սակի միոյ կամ եղև հատարակաց նոցա զամ յԱնտիոք։ Եկեալ առ նոսա եպիսկոպոսին որ անդ էր, ընծայեանոյր Բասիլիոս և մերիներ զառաւակացն քանս [7] առաջի եպիսկոպոսին, մինչև զարմանալ նմա։ Այս գինի բազում ինչ առուց [8], զէմ եղեալ հանդերձ եւուղեաւ երթալ յաշխարհն Կապադովկացւոց, ուրու կամեցան [9] մտանել ընդ դուռն կեսարացւոց քաղաքին՝ յայտնեցաւ ՚ի տեսլեան գիշերոյն եպիսկոպոսի քաղաքին, որում

1. Մի օր. գնոսա... նոցա։
2. Մի օր. ալոյնալ աղաւնի մի... խառնակեաց գջուրսն։
3. Երկ. օր. գՊրկիտոսի յարուցանէր գվարշամակն։
4. Մի օր. ՚ի կենդանարար հացէն։
5. Մի օր. հակառակորդին։
6. Մի օր. հանդերձ եւուղեաւ ՚ի պնօրինական և յառաքելական քաղաքին... սի մոջ։
7. Մի օր. գառաւակաց գիրն։
8. Մի օր. գինի բազում ինչ բանիւ։
9. Երկ. օր. կամեցան։

անուն էր Եւսեբիոս, եթէ Բասիլիոս հանդերձեալ է ունել զինի քո զաթոռ եպիսկոպոսութեանդ։ Իբրև զարթեաւ՝ կոչեաց զառաջնորդս քաղաքին և զոմանս ի բարեպաշտ սպասաւորացն եկեղեցւոյն, և պատմեալ նոցա զտեսիլն՝ առաքեաց զնոսա ընդ առաւելից դուռն քաղաքին [1]։ Եւ ծանեան զնոսա՝ որք երթեալ հանդիպեցան առ դրանն, և աղաչեալ տարան առ եպիսկոպոսն [2]։ Իբրև մտին, տեսեալ զնոսա սրբասէր քահանայապետին, նկատեր ընծայութիւն տեսլեանն, և զՎարուժոյ զոհացեալ՝ հարցանէր թէ ուստի գան, կամ յո՞ երթան, և զինչ ուսումն ունին։ Եւ իբրև ուսան զամենայն, հրամայեաց սպասաւորացն հանդուցանել զնոսա. եւ առեալ տարան զնոսա ի նշանաւոր տեղի, զամենայն կարիս նոցա պատրաստեցին։

Ի նմին ժամու առաքեաց բարեսէր [3] այրն Վարուժոյ, և կոչեաց զընտիրս եկեղեցւոյն և զքաղաքին, պատմէր նոցա զոր ինչ Վարուժոյ եղեալ նմա։ Եւ նոցա միաբանեալ ասեն ցնա. Ճշմարտապէս և սա արժանի է վարուց քոց, յաղագս այնորիկ և Վարուժոյ յայտնեաց քեզ, զի զինի քո կալցէ զաթոռ արքեպիսկոպոսութեանդ պայծառապէս. յայսմ հնեաց մի ինչ զանգիտիցես, այլ արասցես զինչ հաճոյ Թուի քեզ։ Իսկ նորա կոչեցեալ զԲասիլիոս հանդերձ եւսեբեաւ՝ խօսէր ընդ նոսա ի գրոց, և սքանչացեալ ի վերայ իմաստութեան նոցա, ունէր զնոսա առ իւր իբրև զսեաման յաջոյ կողմանէ, մինչև փոխեալ լինէր յաշխարհէս սուրբ եպիսկոպոսն։

Այսպա ժողովեալ սուրբ եպիսկոպոսաց՝ գործակցութեամբ Հոգւոյն, ձեռնադրեցին զԲասիլիոս յաթոռ եպիսկոպոսութեանն, ունելով զեկեղեցին ըստ կամացն Վարուժոյ։ Եւ զինչ աւուրց ինչ խնդրեաց Վարուժոյ՝ որպէս զի տացէ նմա շնորհս և իմաստութիւն և հանձար, առ ի կարդաւորել զանխուք, և մատուցանել անարիւն պատարագ Վարուժոյ, և առնել ի

1. Մի օր. ընդ արեւելից կողմն քաղաքին։

2. Մի օր. և երկնալ հանդիպել նոցա առ դուռն քաղաքին, և ծանեան զնոսա և առնել պարծանս առ եպիսկոպոսն։

3. Մի օր. սրբասէրն այրն Վարուժոյ։ Ա. յԼ օր. առաքեալն Վարուժոյ։

նմա ՚ի Հոգւոյն սրբոյ [1]։ Եւ զկնի վեց աւուր՝ եկն Հո-
գին սուրբ ՚ի նմա, և յեռանեռորդ աւուրն սկսաւ
պատարագ մատուցանել Աստուծոյ։ Եւ զկնի սակաւ
ինչ աւուրց հաւատով և աղօթիւք բազմօք՝ կամէր
ակնդէն առնել և գրել իւրովք ձեռօքն զպատարագին
խորհուրդն։ Եւ յայնմ գիշերի եկեալ Տէր ՚ի տես-
լեանն հանդերձ սուրբ առաքեալքն, և զառաջաւո-
րութեան գՀացն և զբաժակն պատրաստեաց ՚ի խո-
րանին [2], յորոյ գՆախիլոս և ասէ ցնա. Ընդ սրբ-
գոյ քոյ լցի բերան քո գոհութեամբ, որպէս
զի քո կարգաւորութեամբդ մատուցեն ինձ անարիւն
պատարագ։ Նորին ոչ հանդուրժէր [3] առեանել զաքան-
չելին, յորում գոհութեամբ եկն յեկեղեցին, և
ակամբն գրել ՚ի քարտիսի այսպէս. Վից գբերան իմ
գոհութեամբ, որպէս զի օրհնեցից զքոյ Տէր քո, Տէր
Աստուած մեր, որ առացար գմեզ և ածեր ՚ի կենդա-
նութիւնս յայս. և զայլ աղօթիւքն [4] սրբոյ պատա-
րագին։ Եւ զկնի կատարման աղօթից, վերայոյզա-
նէր գՀացն համբարձմամբ, ասելով. Սրբութիւն սըր-
բոց։ Եւ ժողովուրդն ասէին. Մի՛այն սուրբ, միայն Տէր,
միայն Յիսուս Քրիստոս ՚ի փառս Աստուծոյ Հօր, ա-
մէն։ Բաժանէր զՀացն յերիս մասունս, զմին հա-
ղորդեցաւ ահու մեծաւ, իսկ զմիւսն պահեաց, զի թա-
ղեցի ընդ նմա, և զերրորդն՝ եդ յոսկեղէն աղամանի
և կախեաց ՚ի սուրբ խորանին։ Նոյնպէս հանդերձ
և այլ սպասուցն և իշխանօք՝ կալով ՚ի դուրս եկե-
ղեցւոյն, տեսանէին իմանալի լոյս [5] ՚ի խորանին, և
արս փառաւորս սպիտակազգեստս [6], որ ձայնիւ մե-
ծաւ փառաւորէին զԱստուած [7], և զՔրիստոս՝ զի
կայր ՚ի մէջ նոցա. և հետեալ ընդ տեսիլն անկան ՚ի
վերայ երեսաց իւրեանց, և արտասուագոչ հառաչմամբ
փառաւորէին [8] զԱստուած։ Եւ յերկրէ եղ Բաժակն

1. Մի՛ օր. Եւ պատարագեալ ՚ի նմա Հոգւոյն սրբոյ։
2. Մի՛ օր. ՚ի սուրբ խորհուրդն։
3. Մի՛ օր. ոչ հանդուրժէր տեսանել զաքանչելին պանդխտութիւնն։
Ա,ՅԼ օր. ոչ հանդուրժէր տեսանել զպանդխտութիւնն։
4. Մի՛ օր. պայծառ լոյս։
5. Մի՛ օր. անխմանալի լոյս։
6. Մի՛ օր. պիսպոխալիպտոս։
7. Մի՛ օր. փառաւոր առանձին... և Բառնիլիոս ՚ի մէջ նոցա։
8. Մի՛ օր. արտասուագոչ հառաչմամբ օրհնէին զԱստուած։

արտաքս՝ անկեալ՝ ի վերայ երեսաց իւրեանց՝ երկիր պադին նմա։ Հարցեալ զպատճառս երկրպադու-
Թեանն[1], եւ նոքա ասեն ցնա զիտառատր զքանչե-
լիսն՝ զոր առեին ի խորանին։ Յայնժամ Բասիլիոս
հաւքարձեալ զձեռս իւր զոհանայր զՍտուածոյ, պատ-
մէր և նոցա զքարմանալի առեինն զոր եառեա։

Եւ կոչեցեալ առ ինքն ոսկերգործ[2] հրամայեաց առ-
նել նմա աղաւնի յոսկւոյ սրբոյ. և յայնմ[3] եղեալ
զմանանն՝ կախեաց ի վերայ սրբոյ սեղանոյն, ըստ նմա-
նութեան այնմ աղաւնւոյն որ երևեցաւ նմա ի Յոր-
դանան ի մկրտութեանն Տեառն։ Չկինի այսմ եղելոյ,
պատուէր տայր զի ժողովեսցին ամենեքեան յեկեղե-
ցին. և ժողովեցան անթիւ բազմութիւն ժողովրդոց,
ընդ որս էր և առաքինին մեծն Եփրեմ, զոր ապա յե-
տոյ պատմեմք ձեզ եթէ որպէս աստուածային յայտ-
նութեամբն ականատես եղև սուրբ հօրն Բարսղի։

Էրեայ ոմն միաբանեալ ընդ ժողովս քրիստոնէից,
եկեալ յեկեղեցին դիտէր զկարգ պատարագին և
զհաղորդութիւն սուրբ խորհրդոյն. և զկնի կատար-
մանն սուրբ պատարագին՝ առեանէր Էրեայն զի մա-
նուկ յօշէր ձեռամբ իւրմով Բասիլիոս. և՝ի հաղորդել
ամենեցուն՝ եկն և Էրեայն զի հաղորդեսցի, և տուաւ
նմա Քրմապետս միս, և բաժակն՝ արիւն։ Յակ նորա
՝ի տեսեալն նմա մանուկ ինչ պահեալ՝ գնաց՝ի տուն
իւր, և ցուցեալ զայն զուգակցին իւր առ՝ի հաստա-
տել զասացեալսն զոր եթէ եառեա աջօք իւրովք, և հա-
ւատացեալ եթէ որպէս Քրմապետն և փառաւորեցոյն
նոցէ քրիստոնէից խորհուրդն[4]։ Եւ այգուն եղելոյ,
եկն առ Բասիլիոս, աղաչէր զնա զի տացէ նմա զկը-
նիքն Քրիստոսի։ Յակ նորա լուեալ զայս՝ տայր փառս
Աստուծոյ, որ կամի զի ամենայն մարդ կեցցէ և՝ի գի-
տութիւն Ճշմարտութեան եկեսցէ. և առեալ մկըր-
տեաց զնա հանդերձ ամենայն տանէն իւրով հաւա-
տացեալ՝ի Տէր։

1. Մի օր. Էհարց Բասիլիոս պապա-
ձառս էրէյպագուելեանն։
2. Երկ. օր. ոսկերիչ։
3. Մի օր. ՝ի նմա։
4. Մի օր. Քրիստոսի խորհուրդն.
և այգուն եղելոյ։
Ա,յլ օր. այգուան լինելոյ։

Ջկնի այսորիկ եւեալ երբեմն արտաքս Բասիլեոս՝ մատեաւ առ նա կին մի, աղաչէր զնա զի օգնեսցէ նմա, զի իշխանն նեղէր զնա վասն պարտուց հարկին։ Իսկ նա գրեալ՚ի թղթի այսպէս. Կին մի աղքատ եկեալ առ իս՝ ասելով թէ բռնադատի ՚ի քէն, արդ վասն մեր որչափ կարող ես օգնեա դմա։ Եւ տուեալ զթուղթ թէն ցկինն. իսկ նորա առեալ տարաւ առ իշխանն։ Իբրև ընթերցաւ, դարձեալ գրեաց և նա այսպէս. Վասն քո, ժվ հայր սուրբ, կամեցայ թողուլ կնոջդ, այլ ոչ կարացեր՝ թողլի քեզ, ապա եթէ կարող էիր և ոչ խորհեցար[1], ածցէ զքեզ Աստուած յայլ պաշտաճ ժամու, զի յորժամ խորհիցիս՝ յայնժամ ոչ կարասցես։ Եւ առ ժամայն եղեն նմա երկն. վասն զի Թագաւորական կապանօք արգելին զնա, զի հատուսցէ զոր ինչ եթէ անիրաւեալն էր[2]։ Յայնժամ աղաչէր եղկելին զԲասիլեոս, որպէս զի աղօթիւք իւրովք խնայեսցուսցէ Թագաւորին ներել նմա, որպէս և եղեն խակ. քանզի եւ հրաման ՚ի Թագաւորէն ազատանալ նմա[3]։ Եւ եղեալ առ նա մարդասիրութեան ոչ անպիտանայր[4], այլ երթեալ առ Բասիլեոս՝ զոհանայր զնմանէ. և կոչեալ զկինն դիւրացոյց նմա[5] զամենայն զոր եթէ պարտ էր յարքունիսն։

Վասն Աստուած քահանայի։

Եւ այլ միւս ևս պատմեմ զմեծարգոյ հայրապետին Բարսղի։ Կամեցաւ սուրբ հայրապետն ՚ի միում աւուրց երանել արտաքոյ քաղաքին, ոչ ուներ զոք առաջի նորա, ասէ ցմեզ. Որդեակք իմ, եկայք զկնի

1. Մի օր. և լինէցուր։
2. Մի օր. և յայնժամ էրէր նմա ֆոփը նլան առաքամայն, վասն զի ընագաւորական ցասումն էին ՚ի վէրայ և ընդ կապանօք արգելին զնա, մինչև հատուսցէ զոր ինչ անիրաւեալն էր։
3. Մի օր. ազատեալնա։
4. Մի օր. և էրէրց առ նմա մարդասիրութեան ոչ անպատրաստ։
5. Մի օր. կոչեցոյց նմա զամենայն, զոր պարտ էր յարքունիսն։

իմ, որպէս զի տեսջիք զփառսն Աստուծոյ, հանդէրձ լինել. և եղեալ՝ի քաղաքէն մերմէ գնացաք։ Ազգ առաքեալ Հոգւոյն սրբոյ Անտիոս քահանայի, և ասէ ցկին նմա, որ անուամբ կէին՝ նակ գործակիք քոյր. ես երթամ գործել զերկիր, ուր տիկին իմ և քոյր, և դու արի և զարդարեա զտուն քո. և յինեւրորդ ժամու այո խոսնկա և մոմեղէնս, և եկ՝ի հանդիսումն սրբոյն Բարսղի արքեպիսկոպոսի, զի գալոց է՝ի յարկս մեր մեղաւորացս։ Նակ նորա՝ի գոլման եղեալ ընդ փառաւորագոյն բանսն, արար որպէս և հրամայեաց նմա։ Էր ինքն կոյս, պարկեշտութեամբ վարեալ ըզկեանս նորա, զքառասուն ամ կացեալ ընդ առնն նորա՝ նմանապէս անակցութեամբ, և պահեալ զկուսութիւնս՝ ամուլ զինքն առեալ մարդկանն՝ թէ նոցէ։ Եւ հանդիպեալ մեզ՝ի Հանապատին՝ որպէս և վայել էր, և զպատշաճ երկրպագութիւնն տուեալ, նախ օրհնէր՝ի հօրէն մերմէ. ապա ասէ ցնա սուրբն. Ցիւրդ կէաս տիկին Թէոկնէ, որ Թարգմանի Աստուածածանուհի։ Նակ նորա հիացեալ ընդ կոչումն անուանն իւրոյ՝ ասէ. Բարիւք կաս, սուրբդ Աստուծոյ։ Ասէ սուրբ հայրն մեր. Ո՞ւր է տէրն Յիսուսս՝ քահանայն Աստուծոյ եղբայրն քո։ Ասէ ցնա կէինն. Այր իմ է տէր, և երթեալ է յերկրագործութիւն։ Ասէ ցնա սուրբն. Եկեալ է՝ի տուն, մի ինչ շփոթիր։ Հիանայր կէինն ընդ բանսն յաղագս կոչման անուան նորա. և ոչ միայն ընդ այն, այլ ասաց ցնա, եթէ կէին նորա ես, այլ անուամբ միայն, նակ գործակիք քոյր ես. և՝ի հիացման եղեալ կալաւ զնա զոտքսն, և անկեալ՝ի վերայ երեսաց իւրոց գոչէր ասելով. Սուրբդ Աստուծոյ, աղօթեա վասն իմ մեղաւորիս, զի մեծ և աբանչելի իրս առեանեմ՝ի քեզ։ Եւ արարեալ աղօթս՝ անցեալ մեր ամենեցուն առաջի գնացր։ Իբրև եկաք մերձ՝ի տունն, եւ երէցն՝ի հանդիսումն սրբոյն. և անկեալ առաս նորա, եւս զառաւաճայնն ողջոյնն։ Ասէ երէցն սուրբն. Ասաւի է ինձ այս զի եկեսցէ սուրբդ Աստուծոյ առ իս։ Նակ սուրբն Աստուծոյ ասէ ցնա. Բարի գան զքեզ աշակերտ Քրիստոսի. գնա, որպէս զի մատուսցես զսուրբ պատարագն Աստուծոյ։ Գանգի երէցն զօրհանապատագ պահսկէր կառարէր, բայց՝ի շա-

բանէ և՝ ի կիւրակէ, և այլ ոչինչ Հաշակէր բայց միայն հաց և ջուր։

Եւ յերև չոգաք յեկեղեցին, հրաման տայր տուրք արքեպիսկոպոսն քահանային, զի մատուսցէ պատարագ։ Եւ նա ասէ. Սուրբդ Աստուծոյ, որպէս ուսուցանես, նուազն՝ ի լաւէն օրհնեացէ։ Այդ ցնա երջանիկ հայրն մեր. Ջկնի ամենայն առաքինի վարուց քոց կալջիր և զստղութիւն։ Եւ ունկնդիր եղեալ երկրաւն՝ մատուցանէր զսուրբ պատարագն. և՝ ի ժամ վերացուցանելոյ զկենդանարար մարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ, տեսանէր սուրբն Բասիլիոս Հանդերձ այլ և սմանիք յարժանաւորաց՝ զամենասուրբ Հոգին՝ ի նմանութիւն լուսոյ շրջապատեալ զխորանսն և զքահանայսն, և զկնի հաղորդելոյն մերոյ՝ դարձուցիչ մատուցեալ Տեառն Աստուծոյ, եկաք՝ ի տուն քահանային, և Հաշակեալ մեր կերակուր, ասէ ցնա արքեպիսկոպոսն. Պատմեա ինձ, ուստի է գանձդ քո այդ, և զինչ են վարք քո։ Այդ ցնա երէցն. Մարդ եմ մեղաւոր Հնազանդեալ դիմոտական Հարկի. ունիմ լուծս երկուս եզանց, զկին ես վարեմ և զիւսան վարձկան ունին. և զոր ինչ տայ մեզ Աստուած՝ առնեմք երկուս մասունս, զմիմն առնեմք՝ ի պէտս օտարսխրութեան, և զիւսան՝ ի պէտս Հարկահանաց. և ծառայակից այս որ ընդ իս է՝ կին իմ է, ապատաւորէ ինձ և օտարաց։ Այդ ցնա սուրբն. Կոչեա զգա քոյր քո, որպէս և էդ իսկ, և պատմեա ինձ զվարս քո։ Այդ ցնա երէցն. Ո՛չ եմ ստացեալ բարի յերկրի, օտար եմ յաստենայն բարի վարուց։ Յայնժամ ասէ ցնա սուրբն. Յարուցեալ գնասցուք՝ ի միասին. և առեալ զձեռանէ երիցուն, եբեր զմեզ՝ ի խուց մի. և ասէ. Բաց մեզ զդուրս տանդ։ Պատասխանի ետ երէցն և ասէ. Մի՛ տեր սուրբդ Աստուծոյ, մի մտանէք այդր։ Այդ ցնա սուրբն. Եւ ես վասն այսորիկ եկի։ Եւ ոչ կամեցաւ երիցուն՝ ազնքն բացան, և մտեալ՝ ի ներքս տեսաք անդ այր մի գոդի, ոչ ունելով ամենևին ոտք տեղի. և ոչ ոք գիտէր եթէ անկեալ դնի անդ, բայց միայն քահանայն և զուգակիցն իւր։ Այդ սուրբն ցերկրէն. Վասն ի՛ր կամեցար Թաքուցանել զգանձս զայս։ Այդ ցնա երէցն. Բարկասիրտ է, տէր իմ, և Թշնամա-

նող և փառաւոր է, վասն այսորիկ արդելն զաս ի մի անկցի՝ ի բանս էնչ: Ասէ ցնա տուրբ Հայրն մեր. Բանբիւք աշխատեցար՝ ի դմա, բայց հրամայեա ինձ զգիշերս զայս սպասաւորել դմա, զի ես վասն քո վարձս ընկալայց: Եւ մուծեալ զտուրբն՝ ի ներքս առ ուրուն՝ որ այնպէս ապականեալն էր, որ և ձայն անգամ ոչ ունէր, զի պատմեսցէ զփորձուածքունս ախտին, և փառ ևեալ զգուբան գնացաք:

Իսկ բժիշկն վերատուեալ զամենայն զգիշերն աղօթեալ՝ ի վերայ նորա առ Աստուած՝ որ զամենայն զցաւս և զհիւանդութիւնս բժշկէ, որպէս զի տացէ առողջութիւն նմա: Իսկ քահանայն հոգւով զբժշկութիւն ախտին իմացեալ, առ մեզ կալով ասէ. Փառք քեզ Աստուած, որ առնես զկամս երկիւղածաց քոց և զխնդրուածս նոցա կատարես: Եւ ասէ ցմեզ. Ահաւասիկ բժիշկն հիւանդաց բժշկեաց զայրն: Եւ նոյն ժամայն ձայնեալ սրբոյն ասէ. Բացէք մեզ ըզդուրսդ: Եւ ընթացեալ մեր բացաք զդուրս տանն. և նորա հանեալ զփառաւորութիւն՝ ողջանդամ առնելին, ջունել վերս՝ ի մարմնի իւրում, խօսելով մեծապէս և փառաւորելով զԱստուած: Եւ եղեալ այսմ մեծի սքանչելեացս, զարձաք՝ ի քաղաքն ցնծութեամբ օրհնելով զԱստուած յաւիտեան:

վասն երիցուի աւտրոյ և ձգնաւորի:

Եղբարք իմ սիրելիք, և այլ ևս սքանչելիս պատմեմ ձեզ զերանելի հօրն մերոյ Բարսղի, զոր արար առ երիցս անապատաւոր, որ է այսպէս: Երիցս ոմն լեալ յանապատի լսէր զհրաշագործութիւնս և զսքանչելիս զոր առնէր Աստուած՝ ի ձեռն սրբոյն Բարսղի, և ցանկայր տեսանել զնա. և համբարձեալ զձեռս իւր յերկինս՝ աղաչէր զԱստուած, զի յայտնեսցէ նմա թէ յո՞ր չափս առաքինութեան եկն Բասիլիոս. և եղեալ առ նա ազդեցութիւն՝ ի Հոգւոյն սրբոյ, տեսանէր՝ ի տեսլեան գիշերոյ սիւն մի հրեղէն, որոյ գլուխն հասանէր մինչև յերկինս, և ձայն՝ ի վերուստ որ ասէր. Երթեմ, երթեմ, որպէս տեսանես զսիւնս հրեղէն՝ այնպէս և մեծն Բասիլիոս: Եւ նորա յարուցեալ առ

ժամայն առ ընդ նմա զԹարպմանն, վասն զի ոչ կարէր
խօսել՝ի բարբառ Հելլենացի. և հասեալ՝ի քաղաքն
Կեսարացւոց՝՝ի ժօն սրբոյ յայտնութեանն, և եկեալ
՝ի կաթուղիկէ եկեղեցին, զեղաղ կալեալ որպէս զի
տեսցէ զտուրքն Բասիլիոս։ Եւ զայր տուրքն սպիտա-
կազգեստ զարդարեալ, և սպասաւորս զի գայինն ա-
ռաջի և զհինն նորա, ամենեքեան՝ի զգեստս սպիտա-
կութեան զարդարեալ և պաճուճեալ՝ գայինն յեկե-
ղեցին։ Եւ տեսեալ զնոսա առաքինին Եփրեմ՝ ասէ
ցայրն որ եկեալէր զհինն նորա. Ի զուր վաստակեցաք,
եղբայր, ոչ է սա զոր ետես։ Եւ գնացեալ դարձ-
եալ՝ի տեղւոջ ուրեք յանկեան մի եկեղեցւոյն,
հիացեալ ընդ միտս իւր ասէր, եթէ մեք որ քառ-
նամք զծանրութիւն և զտօթ աւուրս, ոչ ինչ օգտե-
ցաք, և սա յայսպիսի փառս և՝ի պատիւ սիրն հրե-
շէշն է, պատչամաւ։

Ցայս նորա զմտաւ ածեալ, առաքէ առ նա տուրքն
գնահատարկուաւքն իւր և ասէ. Երթ՝ի դուռն արև-
մըտից, և յանկեան եկեղեցւոյն գտցես կրօնաւոր մի,
որ ունի կնգուղ՝ի գլուխ, և այլ ոմն ընդ նմա, քարձ
փոքրիկ այրուկ մի. և զայլ ևս նշանս տայր նմա և ա-
սէր. Երթ ևասա ցնա, հրամայեցէք և մեք՝ի խո-
րանս, կոչէ զքեզ արքեպիսկոպոսն։ Իսկ նախասար-
կաւագն հերձոյր զամբոխն, և երթեալ՝ի տեղին ուր
զարձեալ էր տուրքն Եփրեմ, ասէ ցնա. Օրհնեա
Տէր, հրամայեցէք,՝ի խորանն կոչէ զքեզ արքեպիս-
կոպոսն։ Եւ ուսեալ՝ի ձեռն Թարպմանի՝ զոր ասաց
նմա, պատասխանի ետ և ասէ. Խաբեցար, եղբայր,
մեք օտարականք եմք և անծանօթք՝ի նմանէ։ Եւ
երթեալ նախասարկաւագն պատմեաց հայրապետին
զոր ինչ ասաց նմա Եփրեմ։ Իսկ մեծն Բասիլիոս ըն-
թեռնուլ զթուհանութեական զգիրսն առ ժողովուրդն,
սեռանէր երանելին Եփրեմ, զի հրեղէն լեզու խօսէր
՝ի բերան նորա։ Այն զարձեալ ցնախասարկաւագն
ետ. Գնա և ասա ցնա. Տէր Եփրեմ, հրամայեցէք մը-
տէք՝ի խորանն, կոչէ զքեզ արքեպիսկոպոսն։ Եւ եր-
թեալ նախասարկաւագն, անկաւ առ ոտս նորա, ասէ
ցնա, զպէս հրամայեաց նմա տուրքն Բասիլ։ Եւ նո-
ցա հնազանդել ընդ այս, փառաւորէր զԱստուած. և-

դեալ ծունր և ասէ. Ճշմարտութեամբ տուր Հոգին խօսի քեզանով նորա: Եւ ապաչեաց զսարկաւագն վն պատասխանի արասցէ նմա, եթէ զկնի արձակելոյ պատարագին 'ի սպասաւորն ողջոյն տացե նմա: Եւ զկնի արձակմանն եկեալ Բասիլիոս 'ի տուն սպասուն, կոչեաց զտուրքն Եփրեմ, և տուեալ նմա զքրիստոսական ողջոյնն՝ ասէ ցնա. Բարի եկիր, Հայր որդւոց ա նապատի. բարի եկիր որ բազմացուցեր զաշակերտան Քրիստոսի 'ի նմա, և զդեւս հալածեցեր Քրիստոսիւ. զի՞ եղև աշխատ սրբութինդ քո, Հայր, և եկիր տեսանել զմարդ մեղաւոր. տայէ քեզ Տէր զվարձս վաստակոց քոց: Պատասխանի ետ տուրքն Եփրեմ և ասաց զոր ինչ կայր 'ի սրտի իւրում, թարգմանելով այնր կրօնաւորի որ ընդ նմայն էր: Եւ Հաղորդեալ 'ի տուրք ձեռաց նորա, և այնպէս սիրով Հաշակեցին: Ասէ ե տանելին Եփրեմ: Հայր տուրք, ի՞ ինչ խնդրեմ, և զայս աղաչեմ զի տացես ինձ: Եւ նա ասէ. Հրամայեցէք զոր ինչ կամ է ձեր. վասն զի բազում ինչ պարտիմ քեզ վասն աշխատութեան քո՝ զոր աշխատեցար վասն իմ: Ասէ երանելին Եփրեմ: Գիտեմ, Հայր տուրք, եթէ զոր ինչ խնդրես դու յԱստուծոյ՝ տայ քեզ Աստուած. արդ՝ կամ է իմ զի հայցեսցես յԱստուծոյ, զի խօսեցայց ես հոտոմարկէն: Եւ նա ասէ. Աղաւել քան զկարն է խնդրէդ, բայց որովհետև հաւատով հայցեցեր, եկ աղօթեացուք առ Տէր, զի կարող է Աստուած առնել զկամն քո. գրեալ իսկ է. Ձկան երկիւղածաց իւրոց առնէ Տէր, աղօթից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա: Եւ արարեալ նոցա աղօթս ցմեծ ժամն, և յարուցեալ ասէ տուրքն Բասիլիոս. Տէր Եփրեմ, ընդէ՞ր ոչ առնուս ձեռնադրութիւն քահանայութեան, զի պատշաճ է քեզ: Ասէ ցնա 'ի ձեռն թարգմանին. Վասն զի մեղաւոր եմ: Ասէ ցնա տուրքն. Ջմեզ քո կամիմ ուսնել, բայց դնացուք ծունր: Եւ մինչդեռ կայր 'ի գետին անկեալ, եդ տուրք Հայրապետան գձեռս իւր 'ի վերայ նորա, և ասաց զաղօթս սարկաւագութեանն: Եւ ասէ. Հրամայեցէք կանգնեցարուք: Եւ իբրև կանգնեցաւ, զօրացաւ լեզու նորա և խօսէր 'ի բարբառն Հռոմի. Ընկալ և կեցի, Ջիւր. ողորմեա, ելխուռն. պահեա, փիլաքս իմաս, զմեզ, Աստուած, քո շնոր-

հիւղ։ Եւ կատարեցաւ գիրն՝ որ ասէ. Վազեցէք կաղն իբրև զեղջերուս, և պարզ լեզուք ծանրախօսից։ Եւ յայնմ հետէ խօսէր զբարբառն Հռոմոց, փառաւորեալ զԱստուած՝ որ լսէ երկիւղածաց իւրոց. և հոգալով ուրախ եղեն ընդ միմեանս զերիս աւուրս։ Եւ ձեռնադրեաց զԹարսիմանիչ նորա սարկաւագ, և զտուրքն Եփրեմ քահանայ. և արձակեաց զնոսա խաղաղութեամբ, փառաւորելով և օրհնելով զԱստուած յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վասն այրի կնոջն որ քառնցաւ։

Ահա այր մի ծերացեալ և ծերասուն յոյժ, ՚ի քաղաքէն Ներսիսեայ, ունելով ինչս բազումս, և միայն զեալ այրի ՚ի մատաղ հասակի. և պատրանօք սատանայի և չարարուեստ մարդկան՝ տուեալ զանձինն յանհաւատութիւն, ուտելով և ըմպելով, և զանցեալ ժամանակս իւր զամենայն յուսահատութեան ծախեալ ոչ ինչ վարս ստացեալ ըստ կամացն Աստուծոյ։ Եւ յետ բազում ժամանակաց ՚ի միում աւուր եղեալ առնա զղջումն ՚ի Հոգւոյն սրբոյ, և զմտաւածեալ զբազմութիւն մեղացն իւրոց՝ հառաչեր ասելով. Վայ ինձ թշուառականիս, վայ ինձ մեղաւորիս և եղկելւոյս. զինչ պատասխանի տայց յաղագս անթիւ մեղաց իմոց զոր գործեցի. զտաճար Հոգւոյ իմոյ ապականեցի, պղծեցի զմարմինս իմ։ Վայ ինձ, զինչ գործեցից. այլ թէ ասացից, որպէս զպատնիկն եմ, կամ որպէս զմանաւուրն, և մեղայ. բայց զկնի միւրուելոյ յանցեայ։ Եւ արդ զինչ արարից. զի ահաւասիկ ինձ անընելւոյն տանջանքն հրոյն յաւիտենից։ Եւ արդ ուրպէս առնիմ ատելով ձշմարտապէս, զի թէ զղջացայց ընդունի զիս Աստուած։

Եւ զայս նորա զմտաւ ածեալ, այն որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն և ՚ի գիտութիւն ձշմարտութեան եկեսցեն, բերեալ ՚ի յիշատակ նորա զոր ինչ գործեալ էր ՚ի մանկութենէ, և նաեալ գրէր ՚ի թղթի զամենայն։ Եւ ՚ի կատար թղթին գրէր զմեծ մեղն զոր գործեալ էր. և ինքեան կատարեալ ըզ

թուղթն. և եկեալ մնայր ինքն դէտաւին կալեալ պատշաճ ժամու: Եւ յորժամ տուրքն բաւիլիս գայր յեկեղեցին ի սովորական աղօթից, ընծայեալ ընկեն նոյր զթուղթն առ ոտս նորա, և անկեալ ի վերայ երեսաց իւրոյ՝ գոչէր ասելով. Ողորմեա ինձ, տուրբդ Աստուծոյ, ողորմեա ինձ Հարտարապետ քժիշկ՝ վերատոլեցոյս յախտից բանսարկուին, որ առաւել քան զամենայն մարդ վիրաւորեալ եմ մեղօք: Իսկ երանելին ծառայն Քրիստոսի զոն կալեալ՝ հարկանէր զպատճառս իրացն Հիմարտապէս: Եւ նա ասէ. Մհասասիկ զամենայն զմեզս իմ գրեցի ի թղթի այդր, և ինքեալ եմ զդա. իսկ դու ծառայ Աստուծոյ զինիքդ մի լուծաներ, այլ աղօթիւք քովք Ընդէա զդոսա. վասն զի որ ետ ինձ զմիտս զայս՝ Հաւատամ եթէ կալողութիւն է կարողութիւն գործոյս այսորիկ: Քանզի իւրաքանչիւր ամենեցուն մեր յանցանք թուեալ են առջի քո, Տէր, և ոչ ինչ է ծածուկ ի քէն. իսկ ողորմութիւն քո անթիւ և անբաւ են՝ որք Հաւատոյդ պատնան և խնդրեն ի քէն: Եւ զայս ասացեալ եմոտ յեկեղեցին. և ձգեաց զթուղթն ի խորանն, և ինայր զգիշերն ամենայն աղօթելով. և ի վաղիւն Հանդերձ բազմութեամբն աղաչէր զԱստուած: Եւ զկնի արձակման տուրբ պատարագին՝ կոչեաց զկինն, և տուեալ ցնա զթուղթն՝ ասէ. Կուճալ է քո երբէք, ով կին, եթէ ոչ ոք կարէ թողուլ զմեզս՝ բայց միայն Աստուած: Եւ նա ասէ. Ա՛յո, Հայր տուրբ, վասն այսորիկ դէմս արտրի առ քո արբուժիւնդ. ունելով զքեզ բարեխոս առ բազմագութ և մարդասէրն Աստուած: Եւ զայս ասացեալ արձակեաց զթուղթն, և գոսա ամենայնն անգիր. և ինայ միայն ինձ միայն

գէր՝ որ ոչ ընկեցաւ, և հարեալ ձեռօքն զերեսս իւր անկաւ առ ոտս սրբոյն Բարսղի, գոչեր առեալ. Ողորմեա ինձ Տէր Աստուծոյ բարձրելոյ, և որպէս վասն ամենայն մեղացն իմոց հանդէս արարեր, նոյնպէս և վասն այսր մեծի աղաչեա՝ զի ընկեցցի: Նակ ասէ Բասիղիոս արտասուեաց ախտակցութեամբ, և ասէ. Այլ կայ դու, զի ես մարդ եմ մեղաւոր և պէտս ունիմ թողութեան. զոր կամեցաւ Աստուած ընկեցց զմեզս քո, կարող է և զայս բառնալ՝ի քէն՝ որ բառնայ զմեզս աշխարհի. եթէ զգուշացիս այսուհետև զմի մեղանցես, ոչ միայն թողութիւն գտցես՝ այլ և փառաց արժանացիս: Այլ երթ յանապատն և գտանես անդ այր մի սուրբ և անուանի յամենեցունց և անուն նորա Եփրեմ. տար անդ զթուղթդ, և նա աղաչեսցէ զԱստուած և ընկեցցէ զդա:

Նակ կայնն առ ոչինչ համարեալ զերկայնութիւնն ճանապարհին, եկն՝ի նշանակեալ նմա տեղին առ հայրապետն Եփրեմ, և բախեալ զդրան՝ գոչեր առեալ. Ողորմեաց ինձ՝ սուրբդ Աստուծոյ: Նակ նորա իմացեալ հոգւովն եթէ վանն էր իրաց եկն, ասէ ցնա. Երթ՝ի քաց կինէն, կայն դու, զի ես այր մի եմ մեղաւոր, և պէտս ունիմ օգնականութեան: Եւ նորա ձգեալ զթուղթն՝ի նա՝ ասէ. Աստուած քեզ ողորմեսցի զիս առ քեզ, որպէս զի աղօթեսցես առ Աստուած, և ընկեցցես զմեղսն որ՝ի թղթի այդը գրեալ է. վասն զի զայսն սուրբն Բասիղիոս ընկեցաց աղօթիւքն իւրովք, նակ դու վասն միոյդ մի յապաղեր աղաչել զԱստուած, զի առ քեզ առաքեցայ: Եւ սուրբն ասէ. Մի քոյը, մի. զի որպէս վասն բազմացն կարող էր աղաչել զԱստուած, կարող էր և վասն միոյդ առնել առաւել քան զիս: Գնա այսուհետև և մի դադարիր, զի հասանիցես նմա նախ քան զերանելն նորա՝ի մարմնոյն, զի մերձեալ է վախճան երանելոյն երթալ առ Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Զայս լուեալ կինոջն՝ի նմանէ բազում հառաչանօք դարձաւ անդրկն՝ի Կեսարիա: Եւ երկու մնանէր՝ի քաղաքն՝ հանդիսակ դադարացն, զի հանէին զսուրբն Բասիլ՝ի թաղումն: Եւ կինոջն տեսեալ՝ սկսաւ աղաղակել դառն վարեալ ընդ սրբոյն, և ասէր. Վայ

ինձ, տուրըդ Աստուծոյ. վասն այնորիկ առաքեցեր զիս յանապատն, զի դու առանց աշխատութեան վախճաչ նեացիս, և ահա ես ոչինչ օգտեցայ, ՚ի նանիր վաստակեցի զերկայնութիւն ձանապարհին: Տեսեք Աստուած և արասցէ իրաւունս ընդ իս և ընդ քեզ. զի կարող էիր ազատել զԱստուած և ջնջել զմեղս իմ, և յայլ արձակեցեր զիս: Եւ զայս ասացեալ՝ ձգեաց զթուղթն ՚ի վերայ մահճացն, և զամենայն եղեալսն պատմեաց առաջի ժողովրդեանն: Նակ սարկաւագացն կամելով տեսանել թէ որպիսի էցեն յանցանքն, առեալ զթուղթն կարդալ և արձակեալ, գտին ամենևին անպէտ, զի և ոչ նշանախեց մի էր մնացեալ ՚ի նմա: Եւ կոչեալ զկինն՝ ետուն ցնա զթուղթն, ցուցանելով ամենևին անպէտ. և ասեն. Չի՞ կոծիս և աշխարես, անպետանալով առ քեզ զեղեալսն Աստուծոյ՝ զանբաւ մարդասիրութիւնն: Եւ բազմութեան ժողովրդեանն տեսեալ զպատանէլիսն, փառաւորէին զԱստուած, որ ունի իշխանութիւն ՚ի վերայ երկրի թողուլ զմեղս, և տայ զնոյն ընտրեալ ծառայից իւրոց, զի ՚ի կենդանութեան և զկնի մահու բժշկեն զամենայն ցաւս և զհիւանդութիւնս. և որք հաւատով հայցեն՝ թողու նոցա զմեղս իւրեանց վասն բարեպաշտութեան իւրոյ: Որում և մեք հասցուք պատմութեան Բրիատոսի Աստուծոյ մերոյ՝ որում փառք յաւիտեանս, ամէն:

Վասն Յովսեփայ հրէի և բժշկի:

Ա.յս Յովսէփ, ուղ եղբարք, յոյժ հմուտ էր բժշկական արուեստի. վարձ էր կատարելապէս առ որոշումն երակաց, և այլոց տեսութեանց հիւանդացոյց, մինչև անվրէպ իմանալ նախ քան զաւուրս երիս կամ չհինգ՝ զոր վախճանելոցն էր, մինչև նախանձել ընդ նմա և այլոց բժշկաց: Նակ աստուածապէստ հայրն մեր Բասիլիոս, Հոգւովն սրբով իմանայր յառաջ որ ինչ լինելոցն էր, և յամենայնի սիրէր զնա, և հանապազ կոչեալ խօսէր ընդ նմա, ուսուցանելով նմա զձանապարհս արքայութեան երկնից, գնալ նմա ՚ի ձանապարհս չշմարտութեան, և ՚ի բաց կալ ՚ի սիրոջ աղանդոյն, և ՚ի ձեռն մկրտութեան զգենուլ

զՔրիստոս: Եւ նա ոչ հաւանէր, ասելով, թէ յոր հա-
ւատ ծնեալ եմ՝ զայն պաշտեմ: Եւ տուրքն ասէր.
Հաւատա ինձ, ով Յովսէփ, զոր ասեմ քեզ. զի ոչ ես
և ոչ դու՝ եթէ ոչ ծնայի ի ջրոյ և ի Հոգւոյ՝ ոչ կարէ
մտանել յարքայութիւնն երկնից: Ո՞չ ապաքէն և
հարքն ձեր մկրտեցան յամն և ի ծովն, և ըմպէին
ի հոգևոր վիմէն որ երթայր զհետ նոցա, և վէմն էր
Քրիստոս. որ ի վերջին աւուրս ի կուսէն մար-
միացաւ, և վասն մերոյ փրկութեան մարմնացեալ և
չարչարեալ ի նախահարցն քոց մարմնով, թաղեալ և
յերկիր աւուր յարուցեալ, նստեալ ընդ աջմէ Հօր, և
գալոց է բազում փառօք հանդերձ տուրք հրեշտակօք
իւրովք դատել զկենդանիս և զմեռեալս և հատուցա-
նել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց: Այլ անհնար
է ամենայն մարդոյ զկեանն յաւիտենից առեալ՝
եթէ ոչ ջրով և Հոգւով, և հաղորդել յանարատ
մարմնոյ և յարեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:
Եւ յայսպիսի բանս յաձախեալ անփորձ մշակն Քրիս-
տոսի, ոչ կամէր լսել նմա հրեայն, որպէս զի ընկալցի
զչնորհս տուրքն Հոգւոյն:

Այլ հանդերձեալ էր տուրքն փոխել յաշխարհէս:
Կոչեաց զնա իբրև պատճառանօք բժշկական արուեստ-
սին որպէս զի տեսցէ զնա: Եւ ասէ ցնա. Ո՞րպէս տե-
սանես զիս: Եւ նա յերակացն իմացաւ զնա եթէ մա-
հու է, ասէ ցպատասխանի՝ որ շուրջն կային, զի պատ-
րաստեցեն զպատանս Թաղման նորա: Ասէ. Սա յան-
կարծակի մեռանի առ ժամայս: Ասէ ցնա մեծն Բա-
սիլիոս. Ոչինչ գիտես զինչ ասես: Ասէ ցնա հրեայն
Յովսէփ. Հաւատա տէր, զի արեգակն ընդ արևմուտս
է այսօր: Ասէ ցնա տուրքն. Այդ եթէ ոչ մեռանիմ
այսօր՝ զինչ: Ասէ ցնա հրեայն. Ոչ է հնար այսմ լի-
նել, քանզի Թէ լոյսն հոգիդ քո ի քեզ այսօր. այլ
հրամանաւ տուր վասն եկեղեցւոյ քո և վասն այլ հրաց,
զի ոչ հասցէ քեզ երեկոյ այսօր: Ասէ ցնա տուրքն.
Նախ եթէ ապրիմ մինչև ցայգուցն ի վեցերորդ ժամն
զինչ առնես: Եւ նա ասէ. Ձի մեռայց ես: Ասէ ցնա
տուրքն. Այո, մեռանիցիս մեղացն և կենդանասցիս
Քրիստոսին համ: Ասէ ցնա հրեայն. Գիտեմ զինչ ա-
սես. արարից զկամս քո, հայր տուրք, եթէ զոր ա-

սեպ լինի, երդմամբ՝ զի առնց զկնիք տուբք միրտու-
թեան չետոյց, եթէ տպրեսցի ծառայդ Աստուծոյ:
Իսկ տուբըն բանիլնս հայցեալ յԱստուծոյ որպէս զի
տացէ նմա կեանս՝ զի զնա շահեսցի և կեցցէ: Եւ լուաւ
նմա Աստուած, և առաքեալ կոչէ զՏրեայն: Իսկ նա
առանց յերկուանալոյ եկն կարծելով ամենևին թէ
վախճանեալ է. և տեսեալ զնա կենդանի՝ ՚ի զարմաց-
մանն եղեալ անկաւ առ ոտս նորա և ասէ. Ճշմարտիւ
ասեմ, եթէ ոչ դոյ մեծ Աստուած որպէս քրիստո-
նէից, և չկաք այլ Աստուած բայց ՚ի նմանէ. Հրաժա-
րեմ այժմ ՚ի քրիստոսատեաց աղանդոյն Հրէից, և
ընդ անամ հաւատով զՏէր ճշմարտութեանն. Հրա-
մայեա այսուհետև տալ ինձ զկնիք տուբ միրտու-
թեանն և ամենայն տան իմոյ: Ասէ ցնա տուբըն. Ես
ձեռօք իմովք միրտեմ զքեզ հանդերձ տանբ քո: Եւ
եկեալ յանկարծակի բժշկին բուռն հարեալ զձեռա-
նէ նորա, որպէս զի տեսցէ զգօրութիւն երակացն, և
ասէ. Ինկար ՚ի զօրութենէ բումիմէ, հայր տուբ, և
բնութիւն քո ՚ի սպառնուսդեալ է: Ասէ ցնա տուբըն.
Ունիմ զհրաշագործծոյն բնութեանն՝ որ զօրացու-
նէ: Եւ յարուցեալ եկն յեկեղեցին, եւ առաջի ժո-
ղովրդեանն միրտեաց զնա ամենայն տանբն իւրով,
եւ կոչեաց զանուն նորա Յովհաննէս. եւ տուեալ նմա
զկենդանարար խորհուրդն, առեալ տարաւ զնա ՚ի
սենեակն իւր. և տուեալ նմա կերակուր, ուսուցանէր
նմա յաղագս յաւիտենական կենացն. միաւորեաց
զնա ՚ի հաւատն իւր հանդերձ կնաւն և որդւովք իւ-
րովք: Եւ զայլ ևս աւուրս գայր ՚ի տուբ եկեղեցին,
և տայր աղքատաց զինչս իւր, զոր ստացեալ էր ՚ի
բժշկական արուեստէն, և զամենայն ստացուածս իւր
բարեպաշտութեամբ կարգէր:

Իսկ տուբըն բանիլնս կայր յինեներորդ ժամուն ՚ի
տուբ եկեղեցւոջն ՚ի պատարագի ՚ի խորանին հան-
դերձ և այլ սպասաւորօքն և կատարէր զտուբ խոր-
հուրդն: Դարձեալ Ձաշակեաց ընդ նոսա հացիւ, և
որձակեաց զամենայն հաւատացեալ ժողովուրդն,
համբուրելով զնոսա ՚ի համբոյր սրբութեան, յանձն
արարեալ զընտիր և զնոր զօրականն Քրիստոսի և
զամենեսեան՝ Աստուծոյ Հօր և միածնի Որդւոյ նորա

և Հոգւոյն սրբոյ։ Եւ հրամայեաց զի Թաղեսցեն ընդ նմա զերկրորդ մանն զառեալն ի Տեառնէ ի հաղորդութիւն նմա. և բազմեալ ի վերայ մահճայ իւրոյ, և ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զՏէր Աստուած, վանն որոշման Հոգւոյն ի մարմնոյն, եւ վանն հաւատալոյ բժշկիչն. և նոյն ժամայն աւանդեաց զոգին ի փառս Աստուծոյ։ Եւ տեսեալ հրէիցն որ հաւատացեալ, եթէ որպէս ասաց այրն Աստուծոյ՝ այնպէս եղև, և անկեալ ի վերայ լանջից նորա ողբալով ասէր. ճըշմարտապէս ծառայ Աստուծոյ, Բասիլիկ, եթէ ոչ էր լեալ կամք քո՝ և ոչ արդ էիր վախճանեալ։

Եւ այսպէս եղելոյ՝ ժողովեցան ամենայն բազմութիւնն, բերկրին զպատուական տուրբ մարմինն յեկեղեցին, հանդերձ խղճով և խնկօք։ Լուեալ էր և մեծին Գրիգորի աստուածաբանին Նազիանզու եպիսկոպոսին, եկն փութանակի և նա. և տեսեալ զտուրբ մարմին նորա, անկեալ ի վերայ նորա եղաց դառնապէս։ Այսպա հրաման ետ ժողովրդեանն, զի սաղմոսիւք և օրհնութեամբք զպատշաճ պատիւ փառաւոր յիշատակի մեծ հայրապետին կատարեացեն, հանդերձ պլտով և եկեղով՝ երկոտասան եպիսկոպոսօքն։ Եւ բազմութիւն քաղաքին եդին զտուրբն ի տապանի՝ ուր էին նշխարք տուրբ հայրապետին Վանդէի, ի տուրբ վկայարանն սրբոյն Սիւքիանոսի։

Հանգեաւ որ հրեշտակական վարուք ի յերկրի քաղաքավարեաց երանելի հայրապետն տուրբն Բասիլիոս, յամենայնն յունուարի՝ որ օր մի էր ամսոյն, յաւուր հինգշաբաթւոջ, ի թագաւորութեանն Վաղեսի և Վաղենտիանոսի. յիշատակ բարի թողեալ յեկեղեցւոջ ի փառս Քրիստոսի։

Գործակցութեամբ տուրբ Հոգւոյն զրեցի զտուրբ հայրապետին վարսն, ի փառս և ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վիպասանութիւն Սրբոյն Գրիգորի յուսումն Պետութեան եպիսկոպոսի։

Ի ժամանակս Վիկղետիանոսի Թագաւորի լմ. բլռնեալ եղև սուրբ եպիսկոպոսն Գենարիոս ՚ի ձեռն Տիմոթեայ այոցին բռնաւորին. և հրամայեաց առաջի նը ածել զսուրբ քահանայապետն. և յորժամ եկին առաջի նորա, ասէ ցնա դատաւորն. Ցեսանեմ զվայելչ ջուխթն հասակի քո և կարծեմ Թէ յազատ ազգէ ես. վասն որոյ խորհրդակից լինիմ քեզ և աղաչեմ, ապրեցո զանձն քո և յաւիշտակեա զքեզ ՚ի բազում տանջանաց. քանզի ոչ եթէ դու ինքնին բռնժեացիս ՚ի տանջանաց՝ ոչ կարէցէ փրկել զքեզ աստուածն քո։ Իսկ աստուածիմատան Գենարիոս ասէ ցնա. Կարկեա ոմ բռնաւոր, և ոմ չարժեր զբեզուդ չարաչար ընդդէմ արարչին, Թշնամանեալ զամենազօր Աստուածն զայն՝ որ ամենայն ուրեք հրաշագործէ զիւր զօրութիւնն. կարծեմ Թէ զերկայնամտութիւն նորա տկարութիւն վարկանիս, և որչափ վայելես յերկայնմտութեան՝ այնչափ յաւելուս յամբարհաւաճութիւնդ։ Իսկ բրա- նաւորն. Մինթէ այնչափ զօրութիւն առեալ ունիս՝ որչափ մեք տանջանարան քումանմտութեանդ պատ- րաստեմք։ Բայց կարծեմ Թէ ՚ի կախարդութիւնդ ես

վատահացեալ։ Ասէ երանելի եպիսկոպոսն. Զօրութիւն իմ Աստուած է, այն որ յերկինս է, որ զվհուկսն և զաղանդաւորսն և զկախարդսն և զհռաստաւինչսն որ երբեմն զքեզ էին՝ առաքէ՛ի հուրն անշէջ գեհենին։ Յայնժամ լռեաւորն հրամայեաց հնոց լորձել և անդ արկանել զերանելին, և ասէր. Ես առէն զքեզ այրեցից, և տեսից թէ փրկէ զքեզ Աստուածն քո։ Իսկ սուրբն նշանաւ սուրբ խաչին կընքեաց զաւազան անդաման իւր ուրախութեամբ մեծաւ, և փառաւորելով զԱստուած՝ եմուտ՛ի մէջ հնոցին բորբոքեալ հրոյն. և սկսաւ առել այսպէս. Ո՛վ Տէր իմ և Աստուած, որ զչեմարտատիս քննես զծածուկս ամենայն մարդկան. դու գիտես զփափագ անձին իմոյ, որ սէրն սիրով փափագեալ ցանկայ հոգի իմ գալ առ քեզ. բայց աղաչեմ զքեզ, յայտնեա զամենատեսութիւն քո, փոխեալով զբնութիւն կիզման հոգւոյ՝ ի ցօղ քաղցրութեան քո, որպէս երբեմն սքանչելագործեցեր առ երեք մանկամբքն, զի ծանիցեն զքեզ միայն չնմարելիդ Աստուած, որպէս յամենայն ժամ։ Եւ իբրև կատարեաց զայս ամենայն առ Աստուած, ձայնք հրեշտակաց լսել լինէին առ նա, և աղօթակից լինէին նմա։ Իսկ որ շուրջն կային զարհուրեալք յահագին հնչմանցն՝ փութանակի երթեալ պատմեցին զամենայն՝ եպարքոսին։ Յայնժամ հրամայէր բանալ զհնոցն և աստուգապէս տեսանել, եթէ ըստ արտաքոյ լսելոց ձայնին և՛ ի ներքս նմին պէսպէս էր։ Եւ իբրև բացին՝ տեսին զսուրբն ամենևին ոչ վնասեալ՛ի հրոյն։ Իսկ բոցն յանկարծակի յայսկոյս յայնկոյս հեղեալ, և զբազումս՛ի կռապաշտացն որք մերձ կային՝ հրդեհեալ կիզեալ։ Եւ սուրբն զսարթեր երեսաւք իբրև յաղթող նահատակ՛ի մըցարանէ ելեալ եկաց առաջի բռնաւորին։ Յայնժամ անօրէնն բռնաւորին իբրև ոչինչ տեսեալ զքանչելիսն՝ մատն եղեալ իւրոյ վրիւռթեանն, ՛ի միջօրեայ աստուածայինն Հաւատալութիւն կատուցեալ զաչս մտացն, փոխանակ պատկաց՝ հրամայէր զերանելին արկանել՛ի բանտ. և՛ի վաղիւ անդր հրամայեաց ածել զառաջեաւ։ Եւ իբրև եկն, ասէ ցնա. Մինչև յե՞րբ անհնազանդեալ՝ ոչ զոհես աստուածոցն. եթէ՛ի հրոյ և յայլ տանջա-

նայ՝ի ձեռն կախարդութեան զերծաւր, մինչ՝ի սոյ կարելեօք ապրել։

Ասէ երանելին. Ոչ եթէ վասն իմ ինչ ցուցանէ զաքանչելիսն, զոր դու դիւական խաբէութեամբ խե-լագարեալ՝ կախարդութիւն համարիս, այլ զի թերևս զընկղմեալ ոգիդ քո՝ խորին խաւարուտ կռապաշտու-թեամբ, լուսաւորեսցէ աստուածային Հառագայ-թիւք աքանչելագործութեամբն։ Յայնժամ հրամա-յեաց չարիացդ բռնաւորն զՔրիստ բոլոր զաւետեան մար-մնոյն արտաքս քարշել։ Իսկ երանելին թէպէտ և այս պէս տանջեալ եղև, սակայն յօժարութեամբ ընդու-նէր զբարժանութիւն յօդուածոյ մարմնոյն, և սիրովն որ առ Աստուած և աղօթիւք՝ զդառնութիւն տան-ջանացն քաղցրացուցանէր։ Դարձեալ հրամայեաց տանել՝ի բանդ զտուրբն. և մինչդեռ՝ի բանդին էր, երկու ոմանք՝ ի սպասաւորաց եկեղեցւոյն եկին առ նա. և նրբև՝ի բանտն կամէին մտանել՝ պահապանքն արգելին զնոսա, և երթեալ պատմեցին դատաւորին. և հրամայեաց հանդերձ քահանայապետիւն ածել առաջի իւր։ Եւ նրբև ածին, ասէ դատաւորն ցեպհա-կոպոսն. Ո՞յք են սոքա, կամ զինչ են անուանք սոցա, և կամ զինչ գործ ունին։

Իսկ տուրբն նրբև առաց զանուանս նոցա և զգործս սպասաւորութեան եկեղեցւոյն, դարձեալ եհաւաց թէ գործս քրիստոնէայք են նրբև զբեզ։ Իսկ երանելին խաղաղաբար պատասխանեալ ասէր. Եթէ դու ինք-նին հարցանես ցդոսա՝ այսպէս իմանաս։ Յայնժամ դատաւորն ասէ ցտուրբն, որում անուանեն միումն Փեառս, և երկրորդին Փեսերիոդոս, և ասէ. Քրիս-տոնեայք էք. և նոքա բարձր ձայնիւ և զուարթ երե-սօք պատասխանի էտուն առաջի ամենեցուն և ասեն. Այո, քրիստոնեայք, և պատրաստ եմք յաղագս Քրիս-տոսի ընդունել զմահ՝ որպէս տուրբ հաւատեաս մեր։ Յայնժամ դատաւորն հրամայեաց կապել զերանելին եպիսկոպոսն հանդերձ նոքօք, և տանել՝ի Պատա-լոն քաղաք, և միաւորել ընդ այլ վկայն, որ յատա-ջագոյն կապեալք էին ընդ սրբոյ եպիսկոպոսին, Պրոկ-լոս, Տիւքիկոս, Աքուդէոս. սոքա էին սարկաւա-գունք գեղեցիկք սրբոյն Գենարիոսի, որք ուղղափառ

խոստովանութեամբ կացեալք յայսմ աշխարհիս, և
՚ի վախճանին ոչ անջատեցան ՚ի միմեանց, այլ ՚ի միա-
սին արժանի եղեն փառաւորել ՚ի ձայն խոստովանա-
կան վկայութեանն։ Արդ յորժամ եկին ՚ի միասին,
սկսաւ երանելին փառաւորել զՍուրբ այսպէս ա-
սելով. Օրհնեալ ես Աստուած՝ որ առնէ զսքանչելիս
միայն, որ ՚ի տանջանս թշնամեաց վայելեցաք ՚ի սէր
միմեանց. քանզի ոչ եթող զՀօտապետն առանց հօ-
տին։ Եւ էին ՚ի մեծի ուրախութեան։ Իսկ ՚ի վաղիւն
անօրէնն իշխանն եկեալ յաստիարակ հանդիսից՝ ու-
զէազանսն արձակէին, և անդր հրամայէր զերանելին
մատուցանել։ Իբրև ածաւ քաջ հուլիւն հանդերձ նուի-
րեալ ոչխարօքն՝ սկսան դահիճքն զայրացուցանել
զէազանսն հանդերձ հարուածովք՝ առ ՚ի յարձակիլ
ցասմամբ ՚ի վերայ սրբոցն. և իբրև յարձակեցան՝ հրա-
մայն առեալ Աստուածոյ՝ ոչինչ մեղան սրբոցն, մատա-
նալով զբարս իւրեանց՝ հոլովէին առ ոտս սրբոցն, և
փարէին զնոքօք։ Իսկ ամպարիշտ դատաւորն կուրա-
ցեալ ՚ի Հառապայթից աստուածայինն լուսոյն, ոչ ծա-
նեաւ զսքանչելիսն։ Սկ. Մինչ ՚ի սրոյ կարկինէ աս-
տուածն ձեր փրկել զձեզ։ Եւ յորժամ ընկալան զվը-
ճիռն՝ խնդութեամբ փառաւոր առնէին զՍուրբ. և
առ ժամայն յարուցեալ սուրբ եպիսկոպոսն, տարա-
ծեաց զձեռս իւր՝ կայր յաղօթս այսպէս ասելով.

Դու Տէր սրտագէտ, արարիչ շուքմարանաց մերոց,
որ քննես զսիրտս որդւոց մարդկան. գիտես զի ոչ
վկայիմդիր եմ չարչարանաց իմոց, որ կամաւ մատ-
նեմ զանձն իմ վասն անուանդ քո, որ վասն իմ մե-
ռար և յարեար, Աստուած իմ. աղաչեմ յայտնել զաս-
տուածային զօրութիւն քո հպարտացեալ իշխանիս,
որ ՚ի վեր քան զմարդկային սահման ամբարհաւա-
չեալ հայհոյէ զամենակարող բազուկ քո. ոչ ՚ի բաց
բառնալ աղաչեմ՝ որ եկիր ՚ի փրկել և ոչ ՚ի կորու-
սանել, այլ ծանիցեն զի դու միայն ես Աստուած։ Եւ
իբրև կատարեաց զաղօթսն՝ յանկարծակի հարան աչք
եպարքոսին կուրութեամբ, և տանջեալ լինէր ան-
երևոյթ տանջանօք. և սկսաւ զղջումն հարկանել
Թշուառականն, եղուկ զինքն ասելով. և փութով ե-
կեալ անկանէր առ ոտս սրբոյն, խնդրելով զթողու-

Թիւն մեղայն զոր առ նա արար՝ չարչարանօք. խոստանայր հաւատալ յՈստուած Հիմարիտ։ Իսկ երանելին Թէպէտ և գիտէր հոգւով զանձնձանչ խաւսող ոչխայ նորա, սակայն նմանող եղեալ Տեառն իւրոյ, որ զմոլեգնեալսն՝ի վերայ իւր յետս յետս զարկուցանել Հարկանէր կուրութեամբ, այսպէս սուրբն Գերհաւատաղօթս արարեալ լուսաւորեաց զաչս նորա։ Եւ բազմութիւն քաղաքին իբրև տեսին զայն ամենայն սքանչելին, հաւատացին յաւուր յայնմիկ յՈստուած ոգիք իբրև հինգ հազարք. և սկսաւ ամենայն բազմութիւնն փառաւորել զՈստուած, և զաղաղակ բարձին, գոչէին այսպէս ասելով. Ո՛վ դատաւոր, յայսմ հեռաց մի ինչ մոլիս անպատմութեամբ, զի ոչ եթէ՝ի մարդկանէ, այլ ՅՈստուծոյ են սքանչելիքդ։ Իսկ արբեանն մոլեգնեան դիւական մոլորութեամբ՝ խաղակաց բանիւք հաւանեցուցեալ զբազմութիւնն ըստ կամաց նոցա առնել։ Եւ կոչեալ զդահիճսն հրամայեն տալ յանապատ տեղի տանել, և անդ սպանանել առանց ուրուք գիտելոյ։ Իբրև լուան երանելիքն զհրամանան՝ խնդութեամբ լցեալ երթային զհանապարհն սաղմոսելով։

Ծեր ոմն մերկ հանդիպեցաւ երանելեացն, առաջի անկեալ քահանայապետին՝ի զգեստուց նորա. պատասխանի ետ Ծերոյն սուրբն, Թէ յորժամ փոխիմ առ Տէրն իմ՝ զկրկնոցս իմ տաց քեզ։ Եւ սուրբքն հասեալ՝ի տեղի կատարմանն՝ խոնարհեցուցին զպարանոցս իւրեանց, և հատան գլուխք նոցա. բարի խոստովանութեամբ կատարեցին զընթացս իւրեանց, և պսակեցան՝ի Քրիստոսէ։ Յայնժամ երեւեալ Ծերոյն՝ սուրբն Գենարիոս, տայր նմա զոր խոստացաւն. զոր առեալ ունէր՝ ոչ միայն՝ի պատուական աղբատութեանն, այլ և զանձ մեծ վկայական արեամբ նեղկեալ։ Եւ՝ի նմին աւուր դատաւորն չարաչար սատակեցաւ, և քրիստոնէիցն արարեալ երկիւղ տագանս, եդին՝ի մինն զերանելին Գենարիոս, և տանեն՝ի քաղաքն որ կոչի Երապօլիս, և շինեցին վկայարան և եդին զնշխարս սրբոյն, յորում բազում բժշկութիւնք լինէին նմանէ. և զերիսն՝ի միւս տապանի, զՊրոկղիոս և զՏիւբիկոս և զՍ.քուդիոս։ Իսկ՝ի յետ

ըստ ուսման տալանին՝ վերկուս սուրբսն, զՓեստոն և զԱխիդոսն։

Ա՛յսպէս կատարեցաւ արի և քաջ նահատակին, սուրբ և երանելի Հայրապետն Գենարիոս, հանդերձ այսոքիւք ընկերօքս, ՚ի փառս անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ընդ որում Հօր և Հոգւոյն սրբոյ՝ վայել է փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Գեորգայ Զօրավարին։

Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի Թագաւորելոյն ոչ սկիզբն առեալ է և ոչ վախճան ժամանակաց ունի. իսկ փառաւորեալ ծնողեանն՝ի մարդանալոյն՝ի Մարիամայ Աստուածածնէն կուսէն, որ յայտնեալ երևեցաւ ամենայն տիեզերայ՝՝ի ձեռն սուրբ առաքելոցն Չիմարիտ քարոզութեանն, որք արժանաւոր գտան վիճակի սրբոցն և ընտրհաց Չիմարիտ հաւատոյն[1]։ Իսկ բազումք զՉիմարտուԹիւն հաւատոյն անհաւատալի համարին, որք մոլորութեանն ծառայք են. զոր ըմբռնեալ է մնափառութիւն աշխարհիս այսորիկ, և շաղփաղփանս համարին զտնաեսութիւն[2] Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ է արդարև Հրէից գայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն. այլ Աստուած կամեցաւ ծառայից իւրոց ամենեցուն միաւորիլ՝ի փրկութիւն Չիմարիտ աստուածպաշտութեան։

Որ եղև՝ի ժամանակին յայնմիկ աստիկ կռապաշտութիւն Դիոկղետիանոսի Հռոմայեցւոց աշխարհ-

1. Երկ. օր. ընդհաց սորբ Հո- գոյն... զՉմարտութիւնն անհաւատս համարին։

2. Երկ. օր. գանգեսութեան խոր-

հին[1], ժանդ ոմն և զազանաբարոյ լեալ ընդդէմ քրիստոնէական հաւատոյն, և յաղթեալ յոյժ՝ի մելորութենէ նէ մնոտի կռոցն խաբէութեան, ունելով սիրելի զոմն մոխորհուրդ յանաստուածութեանն, որոյ անուն էր Մանգնենատիոս, երկրորդ թագաւորութեան նորա. և մոլեգներ՝ի վերայ քրիստոնէից զայրագնեալ կռոցն ամբարշտութեամբ: Եւ ոտն խորհուրդ ժպրհութեան արարեալ ընդ միմեանս, բառնալ առնելիս զքրիստոնէից պաշտօնն. և բռնադատէին զամենեսեան պաշտել զկռոցն պատկերս: Քանզի էր՝ի ծնընդենէ իւրմէ առպականեալ՝ի կռոցն մոլորութիւնս, և մանաւանդ՝ի պատկերն Ա.պողոնի. և նստեալ՝ի միասին խորհել ընդ միմեանս՝ զրել հրովարտակ յերեսաց թագաւորին այսպէս.

Դիոկղետիանոս թագաւոր[2] ընդ ամենայն իշխանութիւնս և աշխարհս մեր, իշխանաց և զօրավարաց և ամենայն որ ընդ ձեռամբ մերով իցէք, ընդ ամենայն աշխարհս Հռովմայեցւոց, դատաւորաց և ամենայն պետաց իշխանութեանց խնդալ.

Վասն զի համբաւ ընթացաւ յաստուածեղէն լսելիս մեր, և անչափ խռովեցուցին զմեզ, զի հերձուածք ամպարշտութեան քրիստոնէից զօրանայ, զի զոր ծնաւ Մարիամ կին ոմն Հրեայ՝ զնա անուանեն Յիսուս, իբրև աստուծոյ երկիր պագանեն. իսկ զԱ.պողոն զմեծն առաւած, և զԵրմին, և զԴիոնեսիոս, և զԵրակլէս, և զԱիա, յորոց ձեռն աշխարհի մերոյ խաղաղութիւն պարգեւի, Թշնամանեն և հայհոյեն: Իսկ զանուանեալն Քրիստոս, իբրև զաստուած պատուեն, զոր Հրեայքն որպէս զմահապարտ և զմոգ՝ խաչեցին: Վասն այսորիկ հրամայեմք, զամենայն քրիստոնեայս՝ ուր և գտցին՝ զարս և զկանայս ըստ ամենայն քաղաքաց և գաւառաց՝ի խոշտանգանս դառն[3] արկանել, զի զհեացեն աստուածոյն մերոյ, և ուրասցին զմոլորու-

1. Երկ. օր. ՝ի ժամանակին յայնմ ՝ի Ռոգեսորոսենան Դիոկղետիանոսի Հռովմայեցւոց աշխարհին, որ ՝ի հելենասական կռապաշտութեան մոլեալ էր առաւել քան զառաւել, ժանդ և գազանաբարոյ լեալ:

2. Երկ. օր. Դիոկղետիանոս ոչ պատուեալ յաւիպենական և ոչ ի քաջ նախորդ, ընդ ամենայն աշխարհս Հռովմայեցւոց զբաւելոյ, գաւառաց, պետից:

3. Երկ. օր. դառին:

*թիւնն զայն։ Իսկ որ հաւանին, արժանի առնել թո-
ղութեան. ապա եթէ ոչ՝ դժնդակ մահու սրոյ և հրոյ
մատնել զնոսա, զի գիտացեն եթէ անխոտխոտելի են
հրամանք մեր. և եթէ ոք մերոյ աստուածեղէն հրա-
մանացս հեղգասցի՝ զվէմս նոցին ընկալցի։*

*Եւ իբրև այսպիսի դիր և հրաման եդան ընդ ամե-
նայն տեղիս, մեծ հալածումն յարուցին ՚ի վերայ հօ-
տին Քրիստոսի, որպէս զի բազումք ՚ի նշանաւոր մարդ-
կանէ ՚ի սասանիկ տանջանացն թուլացեալք։ Եւ առա-
ւել ևս մոլեգնեալ Դիոկղետիանոսի, կոչեալ առ ինքն
զամենայն աղքատն հրապարակին հանդերձ զօրօքն՝
դարձեալ խորհուրդ արարեալ, զի զամենայն ազգս
քրիստոնէից ստատակեսցէ։ Եւ որք առաջի կային թա-
գաւորին՝ հանդերձ երկիւղիւ, իրաւամբք[1] գործել
խորհէին։ Իսկ Դիոկղետիանոս հրապարակախօս ե-
ղեալ ասէր. Ինձ այսպէս թուի, սիրելիք իմ, եթէ
չիք այլ ինչ պատուական, որպէս թէ զառ աստուած-
սէն մեր զպաշտօնն կատարել. վասն զի ՚ի ձեռն նո-
ցա մեզ թագաւորութիւն, և ամենայն մարդկան փըր-
կութիւն պարգեւի. վասն որոյ յիրաւի համարիմ այ-
սուհետև աստուածոցն մերոց հանապազորդ զզօհն
մատուցանել։ Իսկ եթէ գտցին քրիստոնեայք թշնա-
մանօք աստուածոցն մերոց, ամենայն հնարիւք ՚ի
տանջանս արկանել. մինչև նոցա դժնդակ կրօնքն լուծ-
ցին, և յիշատակ նոցա ՚ի ձեռն մահու կորնչեսցէ։ Եւ
առ այն միաբան պատասխանի ետուն թագաւորին
և ասեն. Մեք յօժարութեամբ ընդունիմք զմեծ թա-
գաւորութեան ձերոյ զաստուածականման հրամանսդ և
զնոսա, և կամիմք պատել զանմահ աստուածն
մեր, որպէս և զձեր զօրութիւնդ. արդ այսուհետև
եթէ գտցի ոք՝ որ լոկ ՚ի միտս իւր անուանեսցէ զՔրիս-
տոս, ամենևին ՚ի մահ մատնեսցին։ Արդ զայս ամ-
պարշտութեան և զանխրատութեան խորհուրդս խոր-
հեցաւ բռնաւորն ՚ի հրապարակին։ Հրաման թագա-
ւորին առաջի եդեալ՝ այք գտանէին քրիստոնեայք՝
բազում թշնամիք գուշակէին թագաւորին, զի տան-
ջեսցեն խոշտանգանօք։*

1. Այլ օր. էջտասնդ։

Յայնժամ ծագեաց որպէս ի խաւարային գիշերի աստղ լուսաւոր և մեծապայծառ՝ որ Քրիստոսի պատուական մարգարիտն էր Գեորգիոս անուն Քրիստոսի զօրական, փարատել զմէգ և զմառախուղ բազմատուածութեանն, և զմոլորութիւն կռոցն մոռեաց, երկնային խորհրդովն կատարեալ, և փրկական քարոզութեամբն, զամենայն արժանաւորս ի ձեռն Հգնութեան էած։ Վկայեցին նմա պղծոյ, և զմոլորութիւն իշխանացն և զօրավարացն. և ոչ զառաջի եղեալսն զտանջանացն ամենևին ինչ փոյթ արարեալ. այլ հայեցեալ յամենեսեան՝ որք ահաւորքն կարծէին, աստուածասէր սրտիւ ասէր յինքեան. Գեորգիոս, ընդէր կաս դատարկս. ահա Տէր կարդայ ի հարսանիս նորա մտանել, առաքաւան բացեալ է, ընթրիքն պատրաստեալ են, ընդէր յամես. մուտ յառաջ քան զփակել դրանն, քանզի մերձ առ մեզ է Քրիստոս. որ վասն մեր խաչի համբերեցաւ, աղաղակէ և ասէ. Մի երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմինն, և զոգին ոչ կարեն սպանանել։ Ցիշեա Գեորգիոս, զաւետարանական վարդապետութիւնն և զերանական զանաւտ աւետիսն՝ զոր ասաց. Եթէ որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան՝ խոստովանեցայց և ես զնա առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է։ Մի հայիր[1], Գեորգիոս, զառաջնակեաց զանցաւորս աշխարհս, որ է ստուեր երկնային կենաց. և մի զընդունայն փառս աշխարհիս առ երկնային յուսոյն. զի ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ են. սակաւիկ մի համբերեա, և ընդ հրեշտական յաւիտենական կեանն դասիս։ Ցայս առ ինքեան խօսեցաւ. փոքր ի շատէ առեալ զձայն նորա, և այսպիսի բարի խրատու հաստատեալ զմտաւորսն, ոչ միայն երկեաւ ի բռնաւորացն սպառնալեաց, այլ և զչքնաղութեան բանս գործովք քարոզէր, և զառաջնակաց տանջանաւորացն բազմութեամբ ծաղր արարեալ, մեծապէս վարդապետութիւն հանդերձ Հգնութեամբ՝ տուրբ եկեղեցեաց Աստուծոյ Թողոր յիշատակս գեղեցիկս։

Եւ էր տուրբ վկայն Քրիստոսի յազգէն Գամրաց,

1. Երկ. օր. Ջ համարէր։

'ի տոհմէ ազատ և մեծատուն յոյժ, և աստուածեղէն իմաստութեամբ զարդարեալ, և բազում անգամ զտեղ տունական իշխանութիւնն[1] վարեալ երևելի պատուով, 'ի գնդէ որում անուն էր Ագրիկոլա[2]: Եւ այնուհետև վասն բազում քաջութեան իւրոյ զկոմսութեանն պատիւ տուեալ նմա 'ի Թագաւորէ: Իբրև տեսեալ նորա զանչափ մոլորութիւնն՝ որ ընդդէմ Քրիստոսի գործէին, յայնցանէ՝ որ կուռցն պաշտօնեայքն էին, վաղվաղակի զինչս և զստացուածս իւր բաշխեաց և ետ աղքատաց և տնանկաց, և որպէս Հզնաւոր մերկացաւ զամենայն: Յօժարութեամբ 'ի մէջ Թագաւորական առնելին և արքունի հրապարակին, և ամենայն զօրավարաց՝ որք նստէին յառեղին, և այլ իշխանաց՝ որք կային առաջի Թագաւորին, աղաղակեաց մեծաձայն և ասէ. Ես քրիստոնեայ եմ, Թագաւոր. վասն որոյ խոստացաւ[3] Հշմարիտ և երկնաւորն Աստուած. և Թագաւորն ասէ Ցնա Քրիստոս. և կամ'ի մէջ ձերում զարմացեալ ընդ այդչափ մոլորութիւնդ ձեր՝ որ վասն կուռցն ունիք. և ոչ Հանդիպէք զմիայն կենդանին Աստուած, և զարարիչն ամենայն արարածոց, որ և զԹագաւորութիւնդ խակ ետ ձեզ: Արդ, ով Թագաւոր, և ամենայն ականաւորք, մի մոլորիք 'ի պատրանաց դիւացդ. քանզի աստուածք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն: Խակ քրիստոնեայքս միայն Աստուծոյ Հօր երկիր պագանեմ, և միայնոյ Տեառն Ցհսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ, որով ամենայն եղև, և միոյ Հոգի սուրբ Աստուծոյ, Երրորդութիւն կատարեալ 'ի միում աստուածութեան և Թագաւորութեան, որոյ աստ կեանք բարեպաշտութեամբ, և յետ վաղճանելոյն անվն ունիմք կենացն յաւիտենից: Բայց ձեր պաշտամունքդ աստղութեամբ արժանի են այսպանելոյ, քանզի բարբանջմունք դիւացդ են, և չիք ինչ 'ի դա Հշմարտութիւն, զի գործք սատանայի են, որք ընկղմեն զերկրպագուս իւրեանց 'ի սատակումն և 'ի կորուստ:

1. Երկ. օր. պարիքառնոխան էր խանութին պատրաստել:
2. Երկ. օր. Ագրիկոլա:
3. Երկ. օր. Ես քրիստոնեայ եմ, ըսգաւոր, և խրախուսէցի 'ի ճշմարիտ և յերկնաւոր:

Յայնժամ հայեցաւ ՚ի նա Մանգնենտիոսն՝ որ էր երկրորդ Թագաւորին և սիրեալն, և ասէ ցսուրբն. Ջինչ անուն է քո, և կամ ո՞ւստ ես դու, որ այսչափ յանդգնութիւն ունիս: Սուրբն Գեորգիոս պատասխանի ետ և ասէ. Նախ և առաջին անուն իմ քրիստոնեայ է. բայց ՚ի մարդկանէ Գեորգիոս կոչիմ: Հայեցեալ ՚ի նա Թագաւորին Դիոկղետիանոսի՝ անդրնդային վիշապն, ասէ ցնա. Գեորգիոս, ուսեալ է մեր վասն քո՝ եթէ յիմաստութեան և ՚ի քաջութեան ընտիր ես հանապազ, և պատուի արժանի լեալ ես յարքունական իննամոց մերոց: Վասն որոյ մատուցեալ զոհեա աստուածոց, զի մի՛ չարաչար կորիցես, այլ մանաւանդ վայելեացես ՚ի սէր մեր պատուով, և առաւել ևս մեծութեամբ ՚ի ձեռն մերոյ իննամածութեան[1], և առ մեզ հաճարձակութիւն ունելով. այլ այդ ընդունայն հաճարձակութիւնդ քո չէ ինչ քեզ յօգուտ:

Սուրբն Գեորգիոս ասէ. Երանի՛, Թագաւոր, թէ լսէիր դու ինձ, և չհանաչէիր զմիսայն Աստուած, զի և երկնից արքայութեանն արժանաւոր լինէիր. բայց արդ իշխանութիւնդ քո առժամանակեայ է, և խոստմունքդ քո և ողբանքդ անզօրք են շարժել զիս ՚ի բարեպաշտութենէն Աստուծոյ իմոյ. պատիր քո քեզ լիցի, և խոստմունքդ քո՝ որ քեզ հաւանիլն. բայց ես զՔրիստոս ունիմ զերկնաւոր Թագաւորն՝ որ տայ ինձ զփառս և զյաղթութիւն հակառակորդին և պաշտօնէից նորա: Եւ սրտմտեալ Թագաւորն հրամայեաց կախել զնա զփայտ, և գեղարդեամբ հարկանել զնա[2], և ընկենուլ զնա ՚ի գեհեն: Եւ իբրև զայն արարին, ցայտեաց արիւն զմարմնոյ նորա, բայց գեղարդն իբրև զանապ ծալեցաւ յետս: Յայնժամ ասէ սուրբն Գեորգիոս. Գոհանամ զքէն Քրիստոս, զի զսուր պաշտօնէից սատանայի յետս դարձուցեր միտչև ՚ի սպառ, և զարտմտութիւն բռնաւորիս որ ՚ի վերայ իմ՝ քակեցեր:

Եւ լցեալ բարկութեամբ Դիոկղետիանոս, հրամայեաց իջուցանել ՚ի փայտէն և տանել ՚ի բանտ, զո-

1. Երկ. օր. ՚ի զոյ իննամոյ աստուածոյ: 2. Երկ. օր. զորովայն նորա:

տես նորա չարաչար պնդել՝ի կռճեղ, և դնել քար մի մեծ՝ի վերայ կրծոց նորա, որպէս զի չորից արանց աշխատութեամբ բառնալ զքարն. և իբրև եդին զքարն՝ի վերայ կրծից նորա, ՚ի ձայն մեծ աղաղակեաց առաքն Գեորգիոս, և ասէ. Գոհանամ զքէն Աստուած բարձրեալ, զի արժանաւորեցայ բեռինս ծանուցս ունել՝ի վերայ սրտի իմոյ, որ հաստատէ՚ի քեզ զանխոտխորտել խոստովանութիւնս:

Եւ՚ի վաղիւ անդր արկանէ սատանայ՚ի սիրտ Դիոկղետիանոսի և որ ընդ նմա աթոռակիցքն, և հրամայեցին առնել անիւ մեծ բովանդակ ամենայն հնարուք կապել. և արարին զինուցն[1] իբրև զհիւանդան մանուկ յամենայն կողմանց սրով կապեալ, և հրամայեաց անօրէնն բռնաւորն ածել յանիւն. և իբրև ածին զնա քարշելով՚ի տեղին, հայեցեալ նորա՚ի դժնդակ մեքենայն յայն, այնպէս կապեալ յարուեստից սատանայի, հայեցեալ յայն՝ ասէ. Տէր Յիսուս Քրիստոս, գոհանամ զքէն որ կոչեցեր զիս՚ի վիճակս յայս. արդ դու որ՚ի մէջ երկուց աւազակացն խաչեցար և զմահ Ճաշակեցեր, զի փրկեացես՚ի մահուանէ զմարդն, տուր ինձ անվեհեր զխոստովանութիւն՚ի ժամուս յայսմիկ, և պահեա զոգիս իմ՚ի հնարից բանսարկուին: Եւ զայս ասացեալ ընկեցաւ յանիւն, և չարաչար ըմբռնեալ կոտորեցաւ մարմին նորա:

Եւ տեսեալ Թագաւորն հանդերձ Մանգնենտիոսիւն, համբարձ զձայն իւր և ասէր. Գիտացէք ամենեքեան զի ոչ գոյ այլ աստուած բայց Աստղոն, և Պողիդոն, և Երակլէս, և Գիա, և մեծն Արտեմիս[2]. արդ ուր է աստուածն Գեորգեայ, ընդէր ոչ եկն և փրկեաց զնա՚ի ձեռաց իմոց: Եւ հրամայեաց այնպէս Թողուլ զնա՚ի տանջանսդան անուէն, և ինքն չորաւ զի Ճաշակեացէ: Իսկ՚ի տապեղորդ ժամու եղև հընչիւն մեծ և ձայն յերկնից՝ որ ասէր. Քաջալերեաց Գեորգիոս, և լեր աներկիւղ. քանզի բազումք հաւատացան եւ ես քեւ յիս: Իսկ արք պահակին զնա զհինգքն՝

1. Երկ. օր. զանիւն:
2. Երկ. օր. Աստղոն և Երմէս և Արտեմիս և Գիա և Ջեյն Արտեմիս:

երկիւղիւ զարհուրեալ ի ձայնէ հնչմանն՝ փախեաւ։ Եւ հրեշտակ Տեառն ի քէաւ ի քաց երկայ զնա ի տանջանսն յայն, և ողջանդամ հաստատեաց զմարմին նորա։ Ողջունեաց զնա և ասէ. Ուրախ լեր Գեորգ պիտա, և հաւատա ի զօրացուցչէն քո, և զընթացս քո կատարեա. քանզի աւասիկ մեք անսասք տալ քեզ զպսակն զկատարեալ խոստովանութեանն։ Եւ յարեաւ սուրբն Գեորգիոս ուրախութեամբ և գոհանալով զՏեառնէ, և շրջեր սաղմոսելով. Բարձր առնեմ զքեզ Աստուած իմ և թագաւոր իմ, և օրհնեմ զանուն քո յաւիտեան. և՝ Ուղիղ արա զգնացս իմ, Տէր, և մի տիրեսցեն ինձ ամենայն անօրէնութիւնք։

Եւ եկեալ ի տեղի ինչ ուր կայր պատկերն Ապողոնի, և եդեալ անդ զթագաւորն և զՄանգնեմոսիոն, և զամենայն բարեկամն թագաւորին, զոհս և երկրպագութիւնս մատուցանելով կռոցն։ Եւ մերձ եղեալ Գեորգիոս աղաղակեաց առ նոսա. Ծանիր զիս թագաւոր, և առ յինէն զաւետարանեալն Աստուած[1], որ փրկեաց զիս ի ձեռաց քոց, և ի մահաբեր տանջանացն, զոր պատրաստեցեր ինձ ի կորուստ, կալ ծելով կորուսանել. քանզի մոլորեալ ես կռոցդ զոհ մատուցանելով։

Իսկ թագաւորն հայեցեալ ի նա՝ ասէ. Ո՞վ ես դու։ Եւ ասէ սուրբն. Ես եմ Գեորգիոս, որ հրամանաւ քո պրկեցայ յանիւն. զոր և Թողեր զիս յանիւն՝ կարծեցուվ մեռեալ. և այժմ եկի ցուցանել քեզ՝ թէ կարող է Աստուածն իմ փրկել զիս ի մահուանէ, զոր դու կարծեցեր իբրև Թշնամանել։ Յայնժամ թագաւորն հրամայեաց ունել զնա և մերձ կացուցանել. հայեցեալ ի նա՝ ասէ. Թուի եթէ ստուեր քոնա մահին է, և խաբէ զմեզ։ Իսկ Մանգնեմոսիոն. Նման նորա է։ Սուրբն Գեորգիոս ասէ. Ես եմ Գեորգիոս ծառայն Քրիստոսի. մի մոլորիք ի կուռսդ, այլ գիտասջիք եթէ կարող է Քրիստոս և ի մեռելոց յառուցանել ոք յաւանի ի նա, և ի ձեռաց ձերոց փրկել։

Եւ առեալն զնա և լուան ի նմանէ զայս Անատոլիս և

1. Երկ. օր. և ինն պա՛ չինին պատերազմէն։

Պռոտոդիան [1] ատրաճելատք՝ որ կոչին զօրավարք, հաւատացին Աստուած ամենայն ընտանեօք իւրեանց, աղաղակէին և ասէին. Մեծ է Աստուած քրիստոնէից, և նա միայն է Աստուած, և չիք այլ ոք որ պոյ Աստուած. քայց նա միայն է Աստուած օրհնեալ յաւիտեան։ Եւ իբրև լսաւ զայս Թագաւորն՝ հրամայեաց զամենեսեան զինուս արտաքոյ քաղաքին տանել յանապատ տեղիս և կոտորել զնոսա։ Եւ իբրև եղեն Թային նոքա ՚ի տեղի կատարմանն, միաբան աղաղակէին ասելով. Տէր Յիսուս Քրիստոս, ընկալ զոգիս մեր խաղաղութեամբ, և կարգեա՚ի քո անփոփոխելի յանդգն ալքայութիւնդ, հաճարելով մեզ զփոքր մի խոստովանութեան մերոյ զառ ՚ի քեզ Հաւատոյ՝ յարդարութիւն և ՚ի Թողութիւն մեղացն մերոց։ Եւ այնպէս կատարեցաւ վկայութիւն նոցա ՚ի Քրիստոս Յիսուս։

Յայնժամ լուեալ և Թագաւորն Աղէքսանդրեայ վասն սրբոյն Գէորգեայ՝ հաւատաց ինքն ՚ի Տէր. և եկեալ առ Թագաւորն հանդիսակութեամբ աղաղակեաց և ասէ. Ես քրիստոնեայ եմ, սրբոյն Աստուծոյ Գէորգեայ աղախին։ Եւ զայս ասելով Թագաւորն, պատասխանի ետ նմա Մանգնենտիոս և ասէ. Այս մեզ Թագաւորիկ, ընդէր զՔրիստոս գոլեցեր և զաստուածն արհամարհեցեր։ Իսկ նա ասէ. Մեծագունին փափաքեալ՝ զպատան արհամարհեցի։ Եւ զայս ասելով գնաց՝ ունելով զԱստուծոյ երկիւղն ՚ի մտի, և զհաւատոն անշարժ։ Իսկ Թագաւորն սրտմտեալ՝ հրամայեաց արկանել զսուրբն Գէորգիոս ՚ի գուբ կրոց. զոր ՚ի նոյն ժամ լինելով և Թաղեալ ՚ի կրի անդ զերկու տուա և զերկու գիշերս. հրամանն առեալ և պահապանացն զի պահեացեն, զի մի ոք ՚ի խորհրդեան լինելոյն հանել զնա անտի։ Եւ յետ երից աւուրց ասէ Թագաւորն. Երթ լցեն զօրականք և հանցեն զսակերս բռնաւահէն, և զգուշութեամբ պահեացեն, որպէս զի մի ոք գիտասցէ զնանդ։ Իբրև գնացին զօրականքն ՚ի գուբ կրոյն, եկեն և այլք բազումք ՚ի տեսանել. և իբրև ՚ի բաց առեն զկնիրն, գտան սուրբ վկայն ոչ ինչ ունելով ամենևին արտաք ՚ի մարմնի իւ-

1. Երկ. օր. Անտիքոս և Պրոխորիան։

լուամ. քանզի հրեշտակ Տեառն էր ընդ նմա, լինելով նմա օգնական՝ ի հրամանէ Քրիստոսի: Իբրև տեսին զնա ամենեքեան՝ աղաղակէին ասելով. Մեծ է Աստուածն քրիստոնէից: Եւ լուեալ զայս Թագաւորին Սղէքսանդրեայ՝ եկեալ և նա՝ ի տեղին աղաղակելով. Մեծ է Աստուած որ՝ ի քրիստոնեայս, և ոչ գոյ այլ բայց՝ ի նմանէ: Հաւատացին և զօրականքն՝ որք առաքեցան՝ ի Թագաւորէն հանել զնա՝ ի գբոյ կրոյն:

Եւ իբրև լուաւ զայս Թագաւորն, հրամայեաց զօրացն երթալ և առնել զառըքն և ածել առաջի իւր: Իբրև ածին զառըքն, նստեալ Թագաւորն յատեանի հանդերձ մեծամեծօք իւրովք, և ասէ ցնա. Այս մեզ ո՞վ կենդանացոյց զքեզ: Ասէ ցնա առըք վկայն. Եթէ լսէք դարձեալ՝ ոչ հաւատայք. բայց գիտա Թագաւոր զի Յիսուս Քրիստոս որդին Աստուծոյ պահէ զիս յամենայն տանջանաց քոց, և զամենեսեան՝ որ կարդան առ նա՝ փրկէ յօրոգայթից սատանայի: Յայնժամ Թագաւորն հրամայեաց առնել հօշիկս երկաթիս, որ ունէր բևեռս սուրս, ուղղորդս, և շողացուցանել և առնուլ ունելեօք և ազուցանել սրբոյն և ընթացուցանել զնա: Իսկ սուրբն վկայն ոչ կարելով գնալ կրնձ Թացան, ասէ ցինքեան. Ընթացիր գեորգիէ, ՚ի Թողեալ քեզ վիճակն. և հանդերձ արտասուօք աղօթէր. Տէր Աստուած իմ, փրկիչ ներելոց, ապաւէն հալածելոց, հաստեցուցիչ՝ որք վան անուանդ քո են չարչարեալ. ամէն Թողուր զիս, այլ ընտրեա ինձ հաստեցուցիչ մինչև՚ի սպառ: Եւ՚ի կատարելնոյն զաղօթիցն, եկն առ նա ձայն յերկնից որ ասէ. Քաջալերեա գեորգիոս, զի ես ընդ քեզ եմ՚ի փրկել զքեզ. և նոյն ժամայն բժշկեցաւ մարմին նորա: Եւ հրամայեաց Թագաւորն տանել՚ի բանդն. և վաղիւն ասէ ցնա Թագաւորն. Մինչև ցե՞րբ սրտամտեաս կախարդուես Թեամբդ՝ տանջանացդ ժուժկալես, և մանաւանդ խոկ մոգութեամբ՚ի դիւաց օգնականութենէ. հաւանեաց ինձ այսուհետև, զոհեա աստուածոցն:

Իսկ սուրբն ասէ ցԹագաւորն, և որք ընդ նմանէն էին. Ես ընդունելոյ զօգնականութիւնն Աստուծոյ իմոյ, զամենայն տանջանս ձեր ընդունելոյ, կայի աւաղակի ձեր ոչնչացեալ՝ վկայելոյ զօրութեան միայն Աս-

տուծոյ. և պատրաստ եմ դարձեալ առ ամենայն տանջանս ձեր, վասն առ՝ի Քրիստոս Հաւատոյն: Իակ դուք որպիսի՞ յոյս ունիք, որք անշնչոյն պիղծ կուռցն որք ոչ ինչ են՝ յընդունայն պաշտեք, և կորստեանն նոցա հաղորդք լեալք. ամաչեցէք այսուհետև աստուածս անուանել զդոսա, որք գինովութեամբք և արբեցութեամբ և պատերազմօք և սպանութեամբ, առ սակաւ մի կացեալ են յաշխարհիս յայսմիկ, և յաւիտեան տանջին յանշէջ հուրն, որ կայ միայ ամենեցուն որք պաշտեն զնոսա:

Եւ լուեալ զայս Թագաւորին և ամենայն ազգուն նախանձն, հրաման եւտուն արձառաչօք յանխնայ զմարմին նորա հարկանել: Եւ իբրև հարին զնա՝ի բազում ժամս, ասէ ցնա Թագաւորն. Մինչև յերբ Թշուառական, ոչ հաւանիս և զոհես մեծ աստուածոցն, զի պատուի մեծի արժանի եղիցիս և կեցցես: Իակ սուրբն ասէ. Ես կենդանւոյն Աստուծոյ հանապազօր պատարագ օրհնութեան մատուցանեմ, որ փրկէ զիս՝ի ձեռաց ձերոց, և արժանի արասցէ փառաց և պատուի երկնաւորի: Ցրանի եթէ զուք ինձ հաւատայիք, և միայոյ Աչմարտին Աստուծոյ երկիր պագանէիք:

Ցայնժամ հրաման եւտ Թագաւորն արկանել զնա՝ի բանտ, և ինքն գնաց յարքունիսն: Եւ իբրև էր սուրբն՝ի բանտին՝ ամենայն հաւատացեալքն գային առ նա՝ի դիշերի, տալով ինչ բանտապետին մտանէին և ուսանէին՝ի նմանէ զառ՝ի Քրիստոս հաւատոն. և որք հի անդուԹիւնս ունէին՝ի պէսպէս ցաւս ըմբռնեալք, և կոյրս բերէին առ նա, և նա աղօԹիւք բժշկէր զնոսա: Գլուխերի ումեմն աշխարհականի տեսեալ զբազժըշկուԹիւնս զոր առնէր, եկն անկաւ առաջի նորա, աղաղակեաց և ասէ. Հաւատամ Աստուածն քո, զի նա է Աստուածն, և այլ չկայ զոր դայց՝ի նմանէ: Եւ նոյն ժամայն կալեալ զնա դահձացն և զօրականացն՝ ածին առ Թագաւորն, վասն իրացն որ եղև: Իակ Թագաւորն խռովեալ և զանուն անգամ ոչ կամեցաւ հարցանել, այլ հրամայեաց զնա անգամ անգամ կոտորել: Իակ նա կատարելով՝ի խոստովանուԹիւնն Քրիստոսի, աղաղակեաց ասելով. Աստուած Աչմարիտ,

որ արարեր զամենայն, մի՛ զիս անտես առներ[1] զանօթ անպիտան, վասն զի հաւատացի քեզ՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, և երկնչիմ զի առանց սուրբ միջոցաւթեան եմ: կամեցայ միրտել, այլ ոչ ժամանեցի, կամելով քո, Տէր, փրկեցայց. վասն որոյ աղաչեմ զքեզ Տէր Յիսուս, զարիւն կատարման իմոյ համարեա ինձ ի միրտութիւն, զի Աստուած սրտապէտ ես, և քննիչ խորհրդոց և յօժարութեան մտաց: Եւ եկն նմա ձայն յերկնից ասելով. Եկ Գևւկերի՝ ուրախութեամբ առ իս, քանզի կատարեալ ես յիս. և այսպէս կատարեցաւ սուրբն:

Եւ չոգան դարձեալ ասացին Վիոկղետիանոսի, թէ բազումք երթալով ի քանդն ուսանին ի Գեորգեայ, և զամենեսեան առ ինքն ձգէ բժշկելով զբազմութիւն յոյժ հիւանդաց. յայնժամ հրամայեաց ածել առ իւր զսուրբն Գեորգիոս: Իսկ Մանգնենտիոս ասէ ցԹագաւորն. Սզգ քրիստոնէից դժուարամահ են և վիշտ, այլ մանաւանդ աղաչեա ողջամտօք զայրդ, զի թերևս խորհրդեամբ քո զոհէ աստուածոցն, քերկրացուսցես զինա պատուով: Իսկ սուրբն Գեորգիոս դալով յարքունիսն՝ սաղմոսելով ասէր. Աստուած յօգնել ինձ նայեաց, և Տէր, յընկերել ինձ փութա:

Յայնժամ սկսաւ աղաչել զինա Թագաւորն և ասել. Տերամբ արեգականբ և ամենայն աստուածովք. եթէ լսես ինձ, Գեորգիոս, և մատուցեալ զոհես աստուածոցն մերոց, ընտրեմ քեզ ինչս բազումս, և երկրորդ ինձ կոչեսջիր ի Թագաւորութեանս իմում, քանզի խնայեմ ի քեզ և գԹամ ի քեզ, կամելով զկեանս քո մանաւանդ՝ քան եթէ մեռանել չարաչար՝ ոչ հաւանելով ինձ: Իսկ սուրբ վկայն ասէ. Բարիոք առացեր այժմ, ընդէր ոչ առացեր ինձ յառաջագոյն այդպիսի բան. այսչափ չարչարանաց արդ ոչ խնդրեցից զԹշնամանս իմ: Իսկ Թագաւորն. Ընտրեա ինձ հօր քո պյանցանս զայս, և զոհեա աստուածոցն, և ընդ ինև պատուեացիս յարքունիս: Իսկ սուրբն Գեորգիոս ասէ. Որովհետև վասն իմ զղջացար, Թագաւոր, արդ ես հաճեցից զվիրս քո. ուր են աստուածքն քո, եր-

1. Յօր. պակասի՝ առնէր:

թիւրք առնոսա: Եւ ուրախ եղև Թագաւորն յոյժ, և հրամայեաց ամենայն պետացն և զօրացն՝ հանդերձ ամենայն հրապարակաւն գալ՚ի տաճար կռոցն, և քարոզ կարդացեալ այսպէս. Ահա խորհրդակից գահակալացս Գեորգիոս՝ մեծին Ապողնի հաւանեցաւ զոհել: Իսկ հեթանոսքն ամենեքեան ձախր առեալ աղաղակելով. Ապողն յաղթեաց. Թագաւոր Դիոկղետիանոս, յաւիտեանս Թագաւորեա. մեծ են աստուածք Թագաւորի:

Մտեալ նոցա՚ի տաճար կռոցն և՚ի լուսթիւն լինելոյ ամենեցուն առ հասարակ, եկաց սուրբն Գեորգիոս, և հայեցեալ՚ի պատկերն Ապողնի, ասէ. Դու՛ւ ես աստուած, և զքե՛զ պարտ է պաշտել մարդկան: Իսկ որ կայր ոգին պիղծ՚ի պատկերն, զոչեաց ասելով. Ոչ եմ ես աստուած և ոչ որ ընդ իս է, այլ մի է Աստուած Ձխմարիտ որ արար զամենայն, և որդի նորա Յիսուս Քրիստոս և սուրբ Հոգին. իսկ մեք հրեշտակք նորա, ապստամբք եղեալ[1] ՚ի նմանէն՝ դևք անուանիմք: Ասէ սուրբն Գեորգիոս. Եւ իբրև ոչ էք աստուածք ընդի՛ր մոլորեցուցանէք զմարդիկ. զիա՛րդ և այժմ հանդերձակիք կալ այսր, իմ ծառայի Աստուծոյ գալ աստ, յորոյ վերայ անուանեալ է անուն Քրիստոսի Աստուծոյ Ձխմարտի որդւոյ Աստուծոյ: Եւ նոյնժամայն եղև խռովութիւն մեծ և գոչիւն դիւացն ողբալոյ. և ամենայն կուռք տաճարին անկեալ փշրեցան, զինչպէս Քրիստոսի առնելով նորա ձեռամբ իւրով հանդերձ բանիւ. և տեսեալ քրմացն հեթանոսաց զեղեալսն, ընթացեալ՚ի վերայ[2] սրբոյն Գեորգեայ, և կալեալ զնա աղաղակէին ասելով. Բարձ զկախարդս զայս, զի մոլեգնութեամբ զամենեսեան մոլորեցոյց և զաստուածն կործանեաց:

Եւ սրտմտեալ Թագաւորն՝ դիւացն օգնականութեամբ և քրմացն առաջնորդելով, ասէ ցսուրբն. Զարագրութիւն և ամենայն կախարդութեամբ և մոլորութեամբ լի, ո՛չ յանձն կալար քեզ զոհել Ապողնի: Սուրբ վկայն ասէ. Ինամիտ և անամօթ, ես զքեզ պատարագ կատարեցի առ Քրիստոս Ձխմարիտ Աս-

1. Յօր. ապստամբեալ եղեալ: 2. Յօր. վասն:

տուածն իմ, վասն այնորիկ ամենայն աստուածքն ձեր ապականեցան. գոնեայ այժմ գիտեա, Թագաւոր, զի ոչ իւրեանց և ոչ այլ ումեք կարեն օգնել ինչ. քանզի կուռքն անմտունչք և դևք՝ մոլորեցուցիչք զանմիտ մարդիկ, իսկ այժմ՝ի Քրիստոսի ծառայէ կործանեցան: Յայնժամ Թագուհին Աղէքսանդրի լուաւ զբանս, ընթացաւ առ Թագաւորն և առաջի նորա աղաղակէր ասելով. Աստուած սրբոյն Գեորգեայ՝ անյաղթ զօրականի քո, քաւեա զիս զմեղաւորս, և մի յիշեր զանպատմութեան իմոյ զգործս, Տէր Աստուած. այլ յիշեա զփառասիրութիւնս, և տուր ինձ մահն և բաժին ընդ քրիստոնեայս և ընդ ծառայի քում Գեորգեայ: Հաւատացին և այլ բազումք՝ի Տէր:

Յայնժամ բարկացեալ Թագաւորն եհատ վճիռ՝ի վերայ սրբոյն Գեորգեայ և Աղէքսանդրի, ասելով ցաւրբ վհայն. Ահա, ամենաչար Գեորգեա, և զԹագուհին մոլորեցուցեր և արկեր ընդ մահուամբ. արդ երթ և դու ընդ նմին զարժանի առ՝ի յաստուածն հայհոյութեան դատաստան ընկալ: Եւ եառն այսպիսի վճիռ. Գեորգեայ խորհրդակցի Դալիլեացւոց, վասն ոչ երկրպագելով Ապողոնի, այլ և զԹագուհին և զայս ընդ ինքեան մոլորեցոյց զաստուածն հայհոյեալ, նստաւ՝ի տեղւոջ միում, և արձակեաց զոգին խաղաղութեամբ:

Իսկ զաւրքն Գեորգիոս տարան՝ի տեղի կատարմանն, և ասէ ցզօրականան. Ընտացէք ինձ սակաւիկ մի, եղբարք, որպէս զի կացից յաղօթս. և նոքա ըստ կամացն արարին. և նոյն ժամայն առեալ զինուորն՝ հանին արտաքոյ քաղաքին. երթալով յատեանն՝ի կատարմանն յօժարութեամբ՝ Աղէքսանդրեայ, աւրն վհայեցան հանդերձ, և աղօթ եալով ընդ միտս իւր առ Տէր՝ի շարժել զերթանցն միայն, և աչօքն ընդ երկինս հայեալով, ետես

Հիմարիա ակնկալութիւն քրիստոնէից, և յանուա
խաւսուածն ծառայից քոց, անանց պանձ որ յառաջ
քան զինդրելն մեր ընտրեաս մեզ զպարտիւս քո ձրիա՝
ոյք խնդրեմն զքեզ. լուր հնձ, Տէր, և տուր զվկայու-
թեան խոստովանութիւն միանձն ի սպառ համբերել.
նայն այժմ ընկալ զոգի իմ, և փրկեա զիս յօդային և
ի պիղծ հոգւոյն. և հանպո զիս ընդ հաձոյս քո և
ընդ սուրբս, և թողութիւն ընծայեա հեթանոսացս՝ զոր
գործեցինա ընդ իս. և զծառայս քո՝ որ կարդան զա-
նուն քո՝ լուսաւորեա գնոսա ի գիտութիւն Հիմար-
տութեան. զի զամենեսեան կամիս զի կեցցեն. ա-
ռաքեա զօգնականութիւն այնոցիկ՝ ոյք կարդան զա-
նուն քո. տուր նոցա զերկիւղ քո և ցանկութիւն,
զառ ի սուրբս զսէրն, զի զհիշատակս նոցա կատարե-
լով՝ նմանեսցեն հաւատոց նոցա. որպէս զի արժանի
լիցին ընդ նոսա երկնաւոր կենացն և արքայութեանն
յաւիտենից. զի քո է արքայութիւն և փառք Հօր և
Հոգւոյն սրբոյ յաւիտեանս. ամէն:

Եւ յետ աղօթիցն խոնարհեցուցեալ ծունր, ձգեաց
զպարանոցն՝ ասէ. Կատարեցէք զհրամանս թագաւո-
րին: Եւ հարեալ սրով ի զօրականսն՝ կատարեցաւ ի
Տէր՝ սուրբ վկայն քրիստոսի Գեորգեա, յամենայնի
մեհեկի նոփ, յաւուր ուրբաթու, յեօթնեերորդ ժա-
մու, ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ես Պասիկրատէս ծառայ սրբոյն Գեորգեայ, զհետ
գնացեալ իմոյ տեառնն՝ ամենայն ստուգութեամբ
կարգեցի զհիշատակարանս:

Սքանչելիք որ եղեն ի ձեռն սրբոյն և մեծ վկային Քրիստոսի Գևորգեայ, զոր արարեալ է պատուական Գևորգեայ գերեցկոյն յազգէն Գրաց և ի ձեռն սրբոյն փրկելոյն։

Ոըք պարզևացն Աստուծոյ արժանի լինել փափաքէք, զվիշատակ և զտօն սրբոյն անյեղլուծանալի հաստատել և բազում գթով տօնել մի ձանձրանայուք։ Զայս ստուգապէս գիտելով՝ զի սուրբքն որ ի մէնջ գումին բանիւ, այդ արատչեն ի վերայ մեր, և Տովանի և վերատեսուչ . . . . . .

*Զայս իբրև լսէին բարեկամքն և ազգայինքն ողբակից լինէին, և դարձեալ բանս միւթ արուակատս խօսէին ընդ նոսա։ Վիտակ լինէր և մանուկն ի գերութեան անդ յերեկոյին յայնմիկ, յորում վաղիւն տօն էր սրբոյն։ Գանգն էր ի խոհարանոցին խարոյկ արկեալ յաղագս սպասաւորութեան թերմոնի. զի տակաւ էր ազգատեան այն ջերմ ըմպել զգինին։ Կայր մանուկն թախծեալ արտասուելով, և տխրեալ խորհէր ի մտի իւրում թէ ի տանն իմում յաւուր յայսմիկ հանդերձեալ են կատարել զվիշատակ սրբոյն ծնողքն իմ, և ոըք մերձ են անդր բարեկամքն՝ այժմ ի սեղանի բազմեալ լինին. ես ողորմելի և գերի նշդեհս յանցեալ տօնին ընդ նոսա էի տօնելով և ուրախանալով ընդ այնոսիկ՝ որ յաոանձնահատկեան տաճար սրբոյն ժողովէին, պաշտօնակից և եղանակակից լինէի. և այժմ յերկրի այլազգեացս ի գերութեան և ի ծառայութեան պանդխտիմ։ Ես միայն, տուրբդ Աստուծոյ, գոյայ անարժան յայնցանէ ոըք մտանէին ի պատուական տաճար քո։ Արդ այսօր կատարեն ծնողքն իմ զվիշատակ քո սուրբ, և զիս ոչ տեսանեն. յոյժ սրտաւր է և մայրն իմ, տեսանելով զազգականս և զբարեկամս մեր, զի ժողովին ի տօն քո և զիս ոչ տեսանեն. և ոչ լսեն զձայն սաղմոսելոյ իմոյ։ Ցխմորդ ոչ տոչորի սիրտ նորա, և պատառէ զպատմուճան իւր, ցաւագին հարուածս ածելով ի վերայ անձին իւրոյ. ո՞ բարձցէ զհառաչանս հօր իմոյ, և կամ ո՞ կարիցէ կալ

ընդդէմ ողբալոյն Նորա, և ի փարատեցեալ զարտասուս տառապեալ մօր իմոյ։ Նաև ես այժմ զքո օրհնու֊ թիւնս և կամ զքո սաղմոս երգեցից ՚ի տօնի քում, քայց միայն արտասուս անօգուտս, և հառաչանս ու֊ նայնս ՚ի վշտացեալ սրտէ վերամաւուցից։ Ողջ լեր մայր իմ, ողջ լերուք ամենայն ազգականք և սիրելիք և ծանօթք իմ, և յիշեցէք զիս ՚ի գերութեան։ Եթէ իբրև զկենդանի յիշէք, աղօթս արարէք վասն իմ։ և եթէ իբրև զմեռեալ, ողբացէք ՚ի վերայ իմ։ Ողջ լեր և դու քահանայ պատուական, սպասաւոր սուրբ տա֊ Հարէդ, որ դաստիարակեալ ուսուցեր ինձ զաստուա֊ ծաշունչ գիրսս. և արդ յիշեա զիս ՚ի պատուական աղօթս քո։ Ողջ լերուք և դուք հասակակիցք իմ, և սաղմոսակիցք և եղանակակիցք, այժմ ՚ի տօնի սուրբ վկայիս՝ մի մոռանայք զօտարս յօտարութեան և ըզ֊ գերիս ՚ի գերութեան։

Զայս ասելով լռութեամբ արտասուս հեղոյր գե֊ տաբար յաչաց իւրոց, զի ոչ համարձակէր հառաչա֊ նօք ողբալ յահէ այլազգեացն։ Ա֊յլ այժմ միտ դիր զարմանալոյ սքանչելեացս, տարածեցէք զխրատս, և բայէք ընդարձակապոյն զլսելիս ձեր։ Մինչդեռ զայս խորհէր մանուկն Գէորգ, Հեպէին զնա ծառայա֊ կիցքն զի փութացուսցէ զանօթ ջերմին, և բարձցէ ՚ի կայծականցն. և նորա սրբեալ զարտասուս յերե֊ սաց իւրոց և առեալ զանօթն ՚ի խարուկէ անտի՝ յոլ֊ ժամ եռայր ուժգին յորձանօք, ոլ զարմանալոյ սքան֊ չելեացս, հնամամ յոյժ, և հեր գլխոյ իմոյ խուզանէ զօրէն սրսացեալ[1] փշոյ, և ոչ գիտեմ գինչ առացից. սակայն պարտ էր զի կատարեսցի բան Տեառն որ ա֊ սաց ցառաքեալսն. Որ հաւատոյ չինի՝ զգործսն զոր ես գործեմ և նա գործեսցէ։ Մինչդեռ երթայր մանու֊ կըն և անօթն ՚ի ձեռին իւրում, յանկարծակի յա֊ փըշտակեցաւ ՚ի բարձունս, և յահան թօթափել բե֊ րեալ գնա սուրբն կացոյց ՚ի մէջ տանն՝ յորում կոչե֊ ցեալըն բազմեալ էին, ունելով ՚ի ձեռին իւրում զա֊ նօթն ջերմին, և այնպէս յորձանս առնոյր տակաւին իբրև թէ առաքեալ է ՚ի կայծականց հրոյն։ Զոր

1. Ա յատկ յօրինակին։

իբրև տեսին ծնողքն նորա, և այնոքիկ որ բազմեալ էին, հիացան յոյժ և մեծաձայն բարբառ արձակեցին. և յառաւել ուրախութենէն և յանակնածելի նպաստութենէն ծնողք նորա անկան անմռունչ ի վերայ երկրի, և այլեքն գիրկս արկեալ համբուրէին զնա. և սկսան հարցանել վասն գալստեան նորա։ Եւ մանուկն ծանուցեալ զտուն իւր և զծնողսն, և զայնոսիկ որ բազմեալ էին, տարակուսեալ եղև և ի հիացմանն մեծի. ապա եկեալ ի միտս իւր՝ պատմէր վասն անձին իւրոյ՝ այսպէս ասելով. Ձայս միայն գիտեմ, զի ի ժամս յայսմիկ ի գերութեան և ի ծառայութեան էի յերկրին Բաբղատաց, և անօթս այս զոր տեսանէք ի ձեռին իմում՝ ի խոհարարանոցէ կայծականցն առի զսա և կամեցայ ելանել առ տէրն իմ։ և յերևանելն իմ ընդ սանդուխս տաձարին՝ տեսի անդ այր մի ի վերայ երիվարի ի ձև զինուորի, որ առաւել քան զարեգական պայծառացեալ շառաւեղք նորա. և յանկարծակի յարիշատակեաց զիս, և ես եղէ իբրև ի հիացմանն մեծի, և ոչ գիտացի այլ ինչ՝ բայց միայն լուայ ձայն ինչ իբրև ի ծփանաց ջուրց որ հարկանէ զգաստաշատարս երիվարի, և յականն թօթափել աստ գտայ՝ ուր տեսանէք զիս. քանզի էի ի մէջ Հառագայթից լուսոյ, և ոչ գիտէի թէ ուր եմ ես, մինչև հարցէք զիս։

Ձայս իբրև լուան՝ վաղվաղակի արտաքս ելեալ ի տանէն խնդրէին գտանել զփրկիչ և զկեցուցիչ մանկանն. և քանզի անհնար էր տեսանել զարտագահաս նահատակն, անդրէն դարձան ի տունս իւրեանց, և հիացեալ էին ընդ զարմանալի պատահելոյն. մանաւանդ զի զեռ ևս եւայր անօթն ի ձեռին մանկանն։ Զարթեան ծնողք մանկանն, և գիրկս արկեալ համբուրէին զնա, և հանդերձ արտասուօք ասէին. Արդարև սա է որդեակն մեր, Ճշմարիտ արդեօք իցէ՞ եթէ յանուրջս. զի եթէ Ճշմարիտ՝ տեսաք զլոյս աչաց մերոց և զմխիթարիչն սրտից մերոց։ Գոհանայաք զփարաւոնէ Աստուծոյ և զմեծ վիպայէ նորա. և որք լայնք ընդ մեզ յաղագս կորստեան որդւոյս մերոյ, այժմ ուրախացեալք ընդ յայտնել լուսոյ մերոյ։ Զինչ ոչ ասէին և կամ զինչ ոչ գործէին արժանի գոհութեան եղեալ ի վերայ նորատաբանչ գործոյն։ Եւ եղև բանս

այս ընդ ամենայն երկիրն և փառաւորէին զԱստուած և զոհութիւն մատուցանէին սրբոյն, և հրամայեցին զի յեռացեալ ջրոյն յայնմանէ սրբեցեն ամենեքեան բազմեալքն. քանզի ոչ երբեք դադարէր յեռալոյ։

Այլ լսաւրուք և այլ սքանչելիքս ՚ի վերայ սքանչելեացդ. անօթն այն զոր ունէր մանուկն ՚ի ձեռին իւրում, ոչ էր մեծ, այլ փոքր յոյժ, և որք ժողովեալ էին ՚ի յիշատակ սրբոյն՝ էին բազմութիւն յոյժ, և ամենեցուն բաւական եղև որք հանդիսեցան անդ, և ոչ երբէք փոխեցաւ ՚ի ցրտութիւն յայնքան երկարութեանն ժամուն. այլ այնպէս յորձանս առնոյր որպէս թէ ՚ի բոլորումանէ հրոյ ստիպեալ լինէր. և որպէս ՚ի ժամանակս եղևայր՝ կնոջ այրուցն օտարասիրի կաթսայ ձիթոյն ոչ նուազեաց և սափոր ալերն ոչ պակասեաց, այսպէս և անօթս այս ոչ նուազեաց յայնքան առատապէս բաշխմանէն, այլ լաւ օրինակի շերմէ որ ՚ի մէջ ջրոցն լինէին, և արտաքոյ բնութեանն բորբոքեցի հուրն և ջուրն ոչ շիջուցանէ, այլ առաւել եւս բորբոքէ, այսպէս և աստուածային հրոյս զօրութիւն ՚ի ձեռն սրբոյ վկային ազդման՝ զանօթն ջերմին բորբոքէր ուժգին։ Ո՛վ նոր և զարմանալի հրաշագործ։ Ո՞վ որք լսեալ զքաջանչելիս զայս և ոչ փառաւորեցէք զայն՝ որ փառաւորեալ է ՚ի տէրէն իւր։

Իսկ ծնողացն առեալ զմանուկն ընծայացան յաստեղհակաց տաճար սրբոյն. և խնդութեան արտասուօք թանային զաւակ եկեղեցւոյն, և այսպիսի մատուցանէին գոհութիւն. Գոհանամք քեզ, տէր Աստուածդ, և քոյին բարեխօսութենէդ և զօգնականութենէ, զի ոչ անտես արարեր զպաղատանս մեր։ Այլ զերաշխաւորութիւն քո կատարեցեր, և զորդիս մեր ամէնքեան պահեալ հասուցեր առ մեզ. արդ պարգեւեա քաւութիւն ծառայից քոց՝ յաղագս նախատանաց և չար բանիցն զոր խօսեցաք վասն քո. քանզի ցաւ պատեաց զմեզ, և արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-

տոսի, ՚ի Հաւատարմութիւն տեսողաց և ՚ի վկայութիւն սքանչելեացն՝ որ եղև առ մանուկն։ Լուան ամենայն բնակիչք կողմանցն այնոցիկ զզարմանալի զքանչելիսն, և եկեալ տեսանէին զանօթն ՚ի տաճարի սրբոյն, առաւել զոհութիւն մատուցանէին Աստուծոյ, որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ, և ասէին. Սքանչելի ես Աստուած ՚ի սուրբս քո՝ որպէս Դաւիթ երգէ, և սքանչելի արար Տէր զսուրբս իւր ՚ի վերայ երկրի։ Վայ մեծի սքանչելեացս, վայ հաւատոյ ծնողացն, վայ խնամոցն և բարեգործութ տեառնէն։ Զինչ սքանչելի քան զայսոսիկ Սմբակումայ մարգարէին, որ յաւիշտակեցաւ ՚ի միջակայն երկրէն և մատոյց զձաշն ՚ի Բաբելոն՝ Դանիէլի մարգարէին ՚ի մէջ առիւծուցն, և վաղվաղակի անդրէն դարձաւ ՚ի տեղի իւր։ Խակ պատկառոտ ձգնապզեաց վկայս Գեորգիոս ՚ի ծառայութենէ զմանուկս յաւիշտակեաց ազատեալ ՚ի բարբարոսական գազանաբարութենէն, յաւէտ Թօմասիէ կացուցեալ ՚ի տան իւրում, որպէս սուրբ վկայքն Քրիստոսի Գուրիաս, Սամոնիտաս և Աբիբաս՝ զաղջկին կենդանւոյն եղեալ ՚ի գերեզմանի՝ յաւիշտակեալ և կացուցեալ յակաս Թօմասիէն ՚ի տաճարն իւրեանց, և եռուն մօր իւրեանց ամբողջանդամ։ Այսպէս երանգահաս օգնականն Գեորգ՝ խոնարհեալ յաղաչանս ծնողաց մանկանն՝ ամբողջ պահեալ ՚ի պատերազմէն և ազատեալ ՚ի հեթանոսական ծառայութենէն հատոյց առ ծնողն իւր։

Ա. յԼ դո, ով ամենազարդ և փափագելի վկայ, հաստատուն և իր և անուն, յԱստուծոյ մշակեալ ՚ի կենսաբեր տունկ. քաջազուարթ և պտղաբեր այպի՝ որ կերակրես զհոգիս և զմարմինս այնոցիկ՝ որք հաւատով կարդան զանուն քո. ով պարծանք մարտիրոսաց և պայծառութիւն ձգնապզեաց արանց, որ ամենայն վտանգեալց պատրաստական ապաւէն գտանիս, և հոգիս մեր ՚ի քեզ յուսացեալ ՚ի վտանգաւորեալ պահպանես, որք անչափ ողորմութեանդ հաւատով խնդրեն զքո միջնորդութիւնդ. ժամանեա և մեզ յօգնականութիւն, որք փափագանօք կարդամք զերանգահաս անուն քո, և կատարեմք բարձանօք զչիշատակ քո. ազատեա զմեզ յերևելի և յաներևոյթ թշնամեաց դատաձանութենէ։ Ձքեզ կարդայ և փա-

առաքէ ամենայն բերան, զքեզ օրհնէ ամենայն լեզու, և ցանկալի և աստուածազարդ անուն քո հռչակեալ է ընդ ամենայն տիեզերս. զքեզ սովորութիւն է կոչել յօգնականութիւն ամենայն հաւատացելոց, և փրկող և ապաւէն և անպատկառելի միջնորդ ստացեալ են։ Դու ինքն գերապայծառ և պատկառելի վկայ, մեծդ նահատակաց, որպէս ստացեալ ես համարձակութիւն առ նահատակադիրն և պատկառելի, և արարիչն մեր, կոչեա յօգնականութիւն մեզ զինակից հաւատակիցս քո զմարտիրոսս, զբռնաւորէից ապաւէնս և զառաջնորդս. զնախասիրացն զանուխակալն զՍտեփանոս, զԹէոդորոս՝ զոր՝ ի կարդալն յօգնականութիւն հաղորդ քեզ կոչեն զնա հանապազ, զՄերկուսեան վկայ, զԴեմետրիոս Թեսաղոնիկեցին, զՊռոկաւիոս վկայ, զՆեստաթէոս և զմանկունս նորա, զՆաստասիոս և զընկերս նորա, զերիք վկայքն՝ որ ըստ օրինակի քո ապրեցուցին զդուստր այրուին՝ ի գերեզմանի եղեալ կենդանւոյն, զՍիմպլիկիոս, զԳեգաիոս և զընկերս նորա, զՈւռբոս, զՖարաքոս և զՆդրոնիկոս, և զամենայն սուրբս և զարի նահատակս. յաղագս հաստատութեան ինքնակալ թագաւորացդ, խաղաղութիւն պարգևել աշխարհի, և յաղթութիւն ընդդէմ թշնամեաց. բարեխօսութեամբ ամենասրբուհւոյն և միշտ կուսին Մարիամու. զի փառաւորեսցի զամենասուրբն Աստուած, հանդերձ Հարբ և Հոգւովն սրբով, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Արագործեայս գործ աքանչելեացս՝ ի ժամանակս Փոկասու Տիւրանոսի կայսերն Յունաց։ Եւ Թարգմանեաց՝ ի Հռոմոյ՝ ի Հայս սուրբ քահանայապետն Հայոց մեծաց Գրիգորիոս Վկայասէր. զոր և պատուիրեաց արտագրել Գրիգորիոս սրբոյ վկային և աղօթիւք ամենայն սրբոց. և ինքն եղիցի օրհնեալ յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Գէորգիոսի եւ Յաղթուհւոյ։

Ի ժամանակս Դիոկղետիանոսի Թագաւորին այր մի Գաւրիաս անուն՝ ի գեղջէ որ կոչի Սարկիդիա, երկիւղած Աստուծոյ և ամենայն առաքինութեամբ զարդարեալ, ունելով զոմն համաշունչ իւրոյ բարեպաշտութեանն ի նոյն գեղջէ, որում անուն Սամնաս կոչէին, ամենայնիւ վարժք և հմուտք պատուիրանացն Աստուծոյ. որք ոչ դադարէին հանապազ սերմանել զբանն կենաց և զպուշացուցանել զհաւատացեալսն որ ի Քրիստոս՝ ի մոլորութենէ կուռցն, և մի զարհուրել և երկնչել յերկիւղէ մահու և սպառնալեաց բռնաւորացն։

Ջայս լուեալ բռնաւորին՝ առաքեաց զաս զինուորս բռնել զառըն վկայն։ Եւ ածեալ լինէին հանդերձ այլ ևս բազմութեամբ քրիստոնէից։ Եւ հրամայեաց արկանել ի բանտ և պահել զպուշութեամբ, մինչև պարապիլ քննեացէ զնոսա։ Եւ յետ աւուրցն այնոցիկ եւ հրաման ի Թագաւորէն զի արձակեացեն զամենեսեան յիւրաքանչիւր տեղիս և ի գիւղս. բայ զառըն Գաւրիաս և զՍամնաս ոչ արձակեցին, այլ արգելին զնոսա միայն ի բանդին։ Եւ նոքա ուրախ եղեն յոյժ, զի յաղագս բազմաց լուան զնոսա յաւուրսն յայնոսիկ վկայեցին ի Քրիստոս։

Յայնժամ դատաւորն նառեալ յՅովհաննուց քա-
ղաքին, հրամայեաց աճել զսուրբն զառաջեաւ և ա-
սէ. Զայս գիտացեալ զի պարտ է ձեզ լսել քաջա-
բանին հրամանաց ինքնակալին, և զոհել աստուա-
ծոյն, և լինել ւարզօք և կրօնիւք Հելլենացւոց երբև
գմեզ. և ՚ի բաց կալ ՚ի մտոյն պաշտամանց և փրկել
յառաջիկայ տանջանացն զոր կրեցան եմն: Սուրբքն
ասացին. Որ քեզ ունայնութիւն թուի խաւարեցոյդ
մտօք՝ լսոյն Ճշմարտութեան, զի ոչ կարես հայել և
նկատել, մեզ այն կեանք են յաւիտենական և տուող
կենդանութեան, և ՚ի տանջանացդ յոր սպառնաս՝
մեք ոչ երկնչիմք, և լսել քեզ երբեք ոչ կամիմք:

Դատաւորն ասէ. Ումեմն նրօք պիտէք զհրաման
ինքնակալին, որ հրամայէ ձեզ քրիստոնէիցդ՝ կամ
զոհել կամ մեռանել. արդ յառաջ քան զտանջանսն
փութացարուք կատարել զհրամայեալն ձեզ: Սուրբքն
ասացին. Մեք զսպասկանացու Թագաւորին զհրամանս
ոչ կատարեմք, մանաւանդ որ զտարերս աստուածս
հանարի. այլ զանմահ Թագաւորին փութամք պահել
զպատուիրանն, որ ասէ. Թէ՝ Որ ուրացի զիս առաջի
մարդկան, ուրացայց և ես զնա առաջի հօրն իմոյ որ
յերկինս է: Իշխանն ասէ. Եւ արդ ոչ կամիք առնել
զկամս Թագաւորաց մերոց: Սուրբքն ասացին. Ո՛չ:
Իշխանն ասէ. Վասն յամառութեան ձերոյ բազում
տանջանարանս պատրաստեմ ձեզ: Սուրբքն ասացին.
Թէպէտ և ՚ի տանջանս մեռանիմք՝ զառժամանակեայ
մահս, այլ անստուերին հասանիմք լուսոյ, յաւիտե-
նական և անվախձան կենացն, զոր խոստացաւ Ա-
ստուած սիրելեաց իւրոց:

Յայնժամ բարկացեալ դատաւորն հրամայեաց ար-
կանել զնոսա ՚ի բանտ: Եւ յետ աւուրց դարձեալ ա-
ծեալ զնոսա զառաջեաւ և ասէ. Բազում ներողու-
թիւն իմ և երկայնամտութիւն ոչ ածին զձեզ ՚ի
հաւան, արդ այսուհետև յաձախեմ ՚ի վերայ ձեր
նեղութիւնս և մատնեմ ՚ի չարչարանս և ՚ի տանջանս,
զոր պէս արժանի էք, ՚ի քանզուածս քերանաց կռոցից ձե-
րոց և ՚ի կիզումն մարմնոց հրոյ, և կապիլ ՚ի ձեռաց,
և այլ զանազան տեսիլ տանջանաց կուտեմք ՚ի վերայ
ձեր: Սուրբքն ասացին. Գործեալ է. Մի երկնչիք յայնցա-

նէ որ ապանանեն զմարմին և զհոգին ոչ կարեն ապա-
նանել. արդ ոչ եմք հաւանելոց ձեր խաւարասէր կրօ-
նիցդ, և մատնել անշէջ հրոյն տանջանացն. այլ պարտ
է մեզ չարչարել, որպէս Տէրն մեր վասն մեր չարչա-
րեցաւ. զի փառաց նորա լինիցիմք հաղորդք: Ասէ դա-
տաւորն. Մի՛ շաղակրատիք, այլ զոհեցէք և երթիջիք
ի՛ւրաքանչիւր տունս ձեր: Սուրբքն ասացին. Մեք
ունիմք տուն՝ տաճար առանց ձեռագործի յերկինս,
զոր դու ոչ տեսանես: Նակ դատաւորն իբրև եառ
զանշարժ հաւատս նոցա, ասէ ցդահիճն. Կախեցէք
զդոսա զմիոյ ձեռանէ, և յոտս նոցա կախեցէք քարինս
ստուարս և մեծամեծս: Եւ այնպէս կային ՚ի կախա-
զանին յերրորդ ժամէ աւուրն մինչև յութերորդ ժա-
մըն. և ոչ էլ՚ի բերանոց նոցա բան աղաչանաց, այլ
այնպէս կային ժուժկալութեամբ որպէս թէ օտար
մարմինք կրեցին զցաւս տանջանացն: Ասէ դատաւորն
ցմի ոմն. Մատիր առ թշուառականդ այդոսիկ՝ և
հարց, եթէ արդեօք հաւանեցա՞յք առնել զկամս իմք
նախալին թէ ոչ: Նակ ամենագով սուրբքն վկայքն բանիւ
ոչ կարացին տալ պատասխանի, այլ ձեռամբ նշանացի
ցուցանէին ոչ հաւանել: Եւ ապա հրամայեաց իմաս-
տանել և դնել՚ի խաւարչային բանտին, և զոտս նոցա
պնդել՚ի կոճեղս: Եւ յետ երից աւուրց դարձեալ
հարցեալ զնոսա վասն զոհելոց աստուածոցն, և ոչ հա-
նեալ. և ապա յօդոստոս ամսոյ մինչ ցնոյեմբեր ա-
միս Թողեալ զնոսա այնպէս: Եւ ապա հրամայեաց
զառաջեաւ ածել և ասէ. Հաւանեցա՞յք յայսմ հետէ
Թագաւորացդ մերոց: Սուրբքն ասացին. Որպէս ան-
փոխելի են միտք մեր, նոյնպէս անփոփոխելի և ան-
շարժ՝ հաւատք խոստովանութեան մերոյ որ առ
Քրիստոս:

Եւ ապա հրամայեաց կախել զնոսա զաջոյ ոտիցն, և
զձախոյ ոտիցն կախել կապար ծանր. և Թողեալ զնո-
սա յայնպիսի դժնդակ տանջանս զաւուրս հինգ, և
ապա հրամայեաց հարցանել եթէ կամիցի՞ն զոհել:
Եւ վկայիցն ոչ ինչ տուեալ պատասխանի, բայց միայն
՚ի կախաղանին սկսան աղօթել այսպէս. Հայր Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի, Աստուած Հզմարտութեան
և Տէր ողորմութեան. զօրացո զմեզ որպէս զօրացու-

ցեր վերիս մանկուանն՝ ի հնոցին Բաբելոնի։ Տուր մեզ, Տէր, զօրութիւն ընդդիմակաց լինել չարիս՝ որ եկեալ հասեալ պաշարեսցէ զմեզ. զի մի՛ չնչցի հրապ բարեպաշտութեան մերոյ. և մի՛ յաղթահարեսցէ զմեզ ազգն ազգն տեսիլ տանջանացս՝ որ զօրացեալ կուտեալ է՝ ի վերայ մեր. Հայեաց, Տէր ամենակալ, և տիրեա զմեզ, և արա արժանի մեռանել վասն անուանդ քումդ սրբոյ։

Եւ ապա հրամայեաց բռնաւորն լիջուցանել զնոսա՝ ի կախաղանին. և ոչ զօրէին գնալ, զի էին նման մեռելոց. և հրամայեաց՝ ի վերայ ուսոց բառնալ և տանել՝ ի բանդ։ Եւ՝ ի հնոքատասան ամսոյն յարուցեալ ընդ առաւօտն եւ՝ ի հրապարակն և նստաւ՝ ի վերայ բեմի. և հրամայեաց զսուրբսն զառաջեաւ ածել. և ապա տեսուքն վերամբարձեալ զսուրբսն՝ ի վերայ ուսոց՝ ասէր ցին զառաջեաւ։ Դարձեալ առ դառնութիւն. Լուարուք ինձ և զոհեցէք աստուածոցն, և մի՛ զրկիք՝ ի քաղցր լուսոյ արեգականս և զյարատևութեան մահ մեռանիլք։ Արձակեցարուք՝ ի կապանացդ և գնասջիք՝ ի տունս ձեր. նա և՝ ի վերայ այդր ամենայնի ընդունիցիք պարգեւս յարքունուստ, և այդ լցի եթէ առնիցէք զհրամայեալս մեր եալն ձեզ. ապա եթէ ընդդիմանայք հրամանաց թագաւորին, այլ ոչ տեսանիցէք զլոյս արեգականս՝ զամենեցունց թագաւորի։ Սուրբքն ասացին. Ջնաջխատեղծ Աստուած յոյժ արար Աստուած՝ և զամենայն ծնունդս նորա, զարեգական տեղծեալ եւ՝ ի ծառայութիւն նոցա, որ յարևելից մինչև՝ ի մուտս արևու ընթացեալ ծառայակից մեր է. և արդ՝ պարտ կոչէք զնա թագաւոր. բայց և զինչ պէտք են քննութիւն, զի պատրաստ եմք՝ ի մեռանել վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Իշխանն ասէ. Դեռ ևս եթէ կամիք՝ շահիք զկեան թագաւորին, և բազում փառաց արժանաւորիք։ Սուրբքն ասացին. Յառաջ քան զառանջել մարմնոց մերոց ոչ լուաք քեզ, իսկ յոյժ ժամանակ է մշակութեան մերոյ առնուլ զվարձս հաստուցմանց անդէ ընտութեանցն՝ արդ մոլորեցուցանէ՞լ կամիս զմեզ, զի աստուածս ասասցես։ Բռնաւորն ասէ. Մերձեալ է ժամանակ յայսմ հետէ զկնի սրով ընդունել

ձեզ։ Եւ լուեալ զայս սուրբքն գոհացան զԱստուծոյ։ Իսկ դատաւորն իբրև եառ զհաստատուն միտս նոցա և զյօժարութիւնն նոցա ՚ի մահ, զարմացեալ և զձեռս ՚ի վերայ աչացն եդեալ՝ բազում ժամս լուեալ կայր։ Եւ ապա ասէ. Երդուեալ ՚ի փառս անմահիդ աստուածոյն, զի ոչ էր իմ կամ չարչարել ձեզ ՚ի ձեռաց իմոց, բայց զկնի ձեր դուք ոչ կամեցայք. ես զհրամանս թագաւորին առ ոտն հարկանել ոչ կարեմ։ Եւ հրամայեաց դահճացն ՚ի գիշերի հանել զնոսա ՚ի քաղաքէն ՚ի տեղի մի և անդ գլխատել։ Եւ յորժամ տան՝ երթային սուրբքն ցնծութեամբ. և իբրև հասին ՚ի տեղին՝ դարձան յարևելս, եդին ծունկս և տարածեալ զձեռս իւրեանց արտասուօք ասեն. Տէր Աստուած ամենակալ, Յիսուս Քրիստոս, Աստուած Հիմարիտա, որ վասն մեր զմահ հաշակեցեր, ընկալ զհոգիս մեր ՚ի հոտ անուշից աստուածութեանդ քո, և զոսկերս մեր պահեա՝ քո ամրածածուկ այսմիկ. և եթէ նեղեալ ոք լցէ ՚ի վշտաց վտանգից նեղութեանց, կամ յայսոց չարաց, և մեօք աղաչեսցեն զքեզ, լուր յերկնից ՚ի սրբութենէ քումմէ, և զերծո հիւրասիրեալս վտանգից։ Եւ կատարեալ զաղօթսն՝ խոնարհեցուցին զգլուխս իւրեանց. և դահիճն՝ ձգեալ զսուրն՝ եհատ զպարանոց սրբոցն։ Այսպէս կատարեցան սուրբքն յամենայն նոյեմբերի, որ օր ինևևտան էր։ Եւ ՚ի վաղիւն եկեալ հաւատացելոցն հանդերձ դստերբն Սամոնեայ, անոյշ իւղովք և խնկօք պատեալ զմարմինն սրբոյ վկային Քրիստոսի՝ եդին ՚ի տապանի, ՚ի փառս և ՚ի պատիւ անուան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Պատմութիւն վասն Սրբոյն Գրիգորի Առաջնոյ Հայրապետի։

Աստուածահաճոյ և մեծ վարդապետն Գրիգորիոս էր յերկրէն Երկրորդ Կապադովկացւոց՝ի քաղաքէն Անձիանձու, որդի Գրիգորի եպիսկոպոսի Անձիանձու. և է պատմութիւն նորա այսպէս։ Եւ վասն զի մայրն նորա արու զաւակ ոչ ունէր, ՚ի տուէ և ՚ի կիշերի լինդրէր արտասուօք յԱստուծոյ տալ նմա արու զաւակ. և յանուրջս տեսանէր զպատկեր որդւոյն զոր հանդերձեալ էր ծնանել։ Եւ յորժամ եղև մանուկն՝ նուիրեաց զնա մայրն իւր Աստուծոյ. և ածեաց մանուկն, և եղև ուսումնասէր յոյժ. և գնաց ՚ի Կեսարիա յուսումն. և անտի գնաց ՚ի Պաղեստին, ապա յԱղեքսանդրիա. և անտի գնաց յիմաստութեանց մայրն յԱթէնս։ Եւ եղև գնալ Բասիլիոսի յԱթէնս, և քնաւեցան ՚ի միասին, հացակից միմեանց. և ուսան զամենայն հանձար իմաստութեան արտաքին գրոց. ուսան զաստուածաշունչ գիրս պատուիրանաց, և եղեն ժուժկալք ՚ի ձգնութիւնս, որ և զարմանաւեսք եղեն և սքանչելիք ՚ի բնակչաց երկրին։ Եւ Բասիլիոս գնաց ՚ի տուն իւր, և մնաց Գրիգորիոս յԱթէնս. և բռնադատեցին զնա լինել ամենուսական քաղքին այնմիկ, զոր յանձն ոչ էառ։

Եւ յորժամ եղև երեսնամեայ գնաց ՚ի գաւառն

լուր և մկրտեցաւ, և ուխտ եդ անձին իւրում՝ որ ա-
մենևին ոչ երդնուցու. և անձին միայն կեալ, և զայգ
և զեզերեկ ընթեռնուլ զԱստուածաշունչ գիրս. և
զԲրիսառս յայտնապէս եռես՝ի տեսլեանն. և ապա
ձեռնադրի՝ի հօրէն իւրմէ քահանայ. և գնաց առ
Բասիլիոս և իմաստասիրեցին ընդ միմեանս զձառս։ Եւ
եղև վախճանել Կեսարիոյ եղբօր իւրոյ, և գրեաց
հայրն իւր զի երթիցէ առ նա. քանզի յոյժ ծերա-
ցեալ էր հայրն և իննաւն ամաց լեալ. և դարձաւ գիրն
գորիս առ հայրն իւր, և եղև հոգացող եկեղեցւոյն։

Իսկ Բասիլիոս նստաւ յաթոռ եպիսկոպոսութեան
Կեսարու. և ձեռնադրէ զԳրիգորիոս Աստուածա-
բանն եպիսկոպոս Սասիմայ[1]. և նա վասն ժխորման տե-
ղւոյն և ժողովրդեանն անխաղաղ վիճմանն՝ չկամեցաւ
յաւ բնակել յՍասիմա։ Գնաց՝ի տուն իւր. ապա բըռ-
նադատեցին զնա հայրն իւր և Բասիլիոս, և նստուցին
յաթոռ եպիսկոպոսութեան Անձիանձու։ Եւ յոր-
ժամ թագաւորեաց ուրացողն Յուլիանոս, հրամա-
յեաց զի քրիստոնէից որդիք ոչ ուսանիցին զՀանճարս
և զփիլիսոփայութիւն արտաքին գրոց. յայնժամ
գրեաց Աստուածաբանն Գրիգորիոս ձառս յանդիմա-
նութեան առ Յուլիանոս. և անպէտ բարբանջուն,
զարտաքին ուսմունս, և առասպելս և խոտանս, զոր
չիցեն պէտք քրիստոնէից՝ ուսանել։ Եւ գրեաց այլ
գիրս քերականս՝ պէսպէս իմաստիւք զանազանեալս,
որ և յոյժ իսկ օգտակար է առ բարեպաշտութեան.
վասն զի աստուածաբանութիւն է առ ստոյգ դաւա-
նութիւն եռակի անձնաւորութեան, առ միոյ բնու-
թեան, և գոլութիւն առաքինութեան. և հոգւոյ և
մարմնոյ սրբութեան, և իրաւտ հոգւոց և մտաց աղօ-
թից առ Աստուած. և փախչել յամենայն պակշո-
տութեանց և շաղխաղխութեանց զօրանջելոյ առաս-
պելացս բազմաստուածութեան խաբէութեանցն. զայս
պիսի իմաստութեամբ վարդապետութիւնս հաստա-
տէր առ՝ի յուսումն քրիստոնէից մանկանցն։ Եւ տե-
սեալ Յուլիանոսի զոր արար Գրիգորիոս, ընթերցաւ
զպատճէնս Գրիգորի և յամօթ եղև. և թոյլ եւ

1. Ուղիղն Սասէմայ։

պարձեալ քրիստոնէից ուսանել զարուեստին ստուգութեան հանձարս. քանզի յոյժ վեհագոյն էին Գրիգորի հանձարապետութիւնքն քան զՊղատոնին և զՀոմերոսին և զՎրիատոսելին: Եւ յետ մահուան հօրն իւրոյ Գրիգորի և մօրն Նունէի և եղբօրն Արիստակէսի և քեռն իւրոյ Գորդոնիոյ, պատուեաց զնոսա ներքոյական Հարիւք. և ապա գնաց ՚ի Սեբևէիա ՚ի կուսանաց վանս սրբոյն Թեկղեայ վկային, և անդ դադարեաց, կացեալ լուռթեամբ աւուրս բազումս:

Եւ յորժամ դարձաւ յԱնձիտանձան՝ ոչ կամեցաւ կեալ կամ հոգալ զեպիսկոպոսարանն, այլ հոգայր զաղքատան, գործակից եղեալ մեծին Բասիլիոսի եպիսկոպոսին. և շինեաց տաճարս ՚ի հանդիստ աղքատաց, և գրեաց վանս աղքատասիրութեան Հարս: Եւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ եղև բազմանալ քրիստոնէութեան արիանոսին. և հրամանաւ սրբոյն Բասիլիոսի գնաց ՚ի Կոստանդնուպոլիս, և խնդրեաց ՚ի մատուռն Աստուածածնի, և քանզի ընդդէմ հոգեմարտ հերձուածոյն և այլ հերետիկոսացն, որ էր նոցա միախոհ և օգնական՝ Եվդոս[1] Թագաւորն, որ նստաւ յետ Ցուլիանոսի: Եւ Գրիգոր աստուածաբանեալ վարդապետութեամբն իւրով՝ ուսուցանէր ժողովրդեանն զուղղափառ հաւատսն, արմատախիլ առնէր զհերձուածոցն զոլացն զնոր բարբանջմունսն. իսկ Աստղինար անխնամ առին, այլ նոր և դառն հերձուած տնկեաց, եթէ էառ Քրիստոս իմանալն հոգի ՚ի կուսէն. և այլ հայհոյութեան բանիւք զբազումս պատրեաց և յաղոց ՚ի վերայ սրբոյն Գրիգորի Աստուածաբանի, և քարկոծ առնէին զնա: Հանդիպեցաւ Պետրոս հայրապետն որ յետ սրբոյն Աթանասի նստաւ յաթոռ Աղեքսանդրու. ժողովեցան առ նա ամենայն ուղղափառքն և արարին ընտրողութիւն հաճութեամբն Աստուծոյ. և նստուցին զԱստուածաբանն Գրիգոր յաթոռն Կոստանդնուպոլսի՝ հրամանաւ մեծին Թէոդոսի թագաւորին. և վայելեցաւ ուղղափառութեամբ ամն երկոտասան: Եւ ոմն ի խնամատարէր աղէքսանդրացի որում անուն էր Մաքսիմոս, ձգնաւորի կերպ

1. Ան է Յովիանոս:

լեալ կեղծաւորութեամբ՝ մատեաւ առ Աստուածա-
բանն Գրիգորիոս, և եղև նմա ընկերակից՝ ի միում ա-
նեկի և սեղանի. և ցանկացաւ Կոստանդնուպօլսի ա-
թոռոյն. եպիտ իւր օգնական երէց մի յեկեղեցւոյն,
և դարձուցին՝ ի խորհուրդ և՝ ի կամ իւրեանց զՊետ-
րոս զԱղեքսանդրու հայրապետն, որ նստոյց յայնժամ
զԳրիգորիոս յաթոռն, խոստանալով նմա գանձս բա-
զումս. և նա առաքեաց մետրապօլիտս և եպիսկոպո-
սունս, զի իջուսցեն զԳրիգորիոս յաթոռոյն և ձեռ-
նադրեսցեն զՄաքսիմոս: Եւ երթեալ փութային
կատարել զգործն. և եղև խռովութիւն և աղմուկ
մեծ՝ ի քաղաքին ընդ միմեանս, սրելովք և թշնամիք.
և հանին զՄաքսիմոս յեկեղեցւոյն, և Ադեքսանդրա-
կիքն տարան զՄաքսիմոս՝ ի տուն փողահարի միոյ՝ և
ձեռնադրեցին զնա անդ. և գնացին՝ ի Թեսաղոնիկէ
առ Թագաւորն Թէոդոս, և աղաչեցին զնա զի տացէ
զաթոռն Կոստանդնուպօլսի Մաքսիմոսի. և նորա լը-
ւեալ բարկութեամբ եհան զնոսա յերեսաց իւրոց, և
դարձան տրտում և ամօթալից յԱղեքսանդրիա. և
խորհեցաւ սուրբն Գրիգորիոս թողուլ զաթոռն և
գնալ՝ ի տուն իւր. և ժողովուրդքն արգելուին և ոչ
տային թոյլ գնալ: Եւ դարձեալ Թագաւորն՝ ի Թե-
սաղոնիկէ՝ և եկեալ ազատեաց զեկեղեցիսն՝ ի հեր-
ձուածողացն, և առեալ զԳրիգորիոս գնաց յեկեղե-
ցին: Եւ ամս անցեալ՝ ի նեղութեան արեգականն, և եղև
տիւն իբրև զգիշեր. և սկսան խնդալ և խայտալ հեր-
ձուածողքն եթէ ոչ հաճեցաւ Աստուած արտաքսել
զմեզ յեկեղեցեացն. և յորժամ մտին՝ ի խորանն Թա-
գաւորն և Աստուածաբանն, ցրուեցաւ ամպն, և ծա-
գեաց լոյս պայծառ, և եղեն ամօթալից հերձուա-
ծողքն: Եւ նստուցին զԳրիգորիոս յաթոռն՝ Մեկնուս
Անտիոքու պատրիարքն, և հարիւր և չիսուն եպիս-
կոպոսունքն որք ժողովեցան յերկրորդ սինհոդոս.
յետոյ եկին և Եգիպտոսի եպիսկոպոսունքն և Ադեք-
սանդրու պատրիարքն՝ գԺուանուարեաքը, եթէ ա-
ռանց մեր կամաց նստուցիք զԳրիգորիոս յաթոռ: Եւ
եղև խռովութիւն՝ ի մէջ հարիւր և չիսուն[1] սիւն-

1. Այսպէս յօրինակին. պակասի եպիսկոպոսաց:

հոգասին. ոչ եթէ ատէին զԳրիգորիոս կամ անարժան համարէին, այլ մեղադրէին եթէ ընդէր ոչ անցեալք գաղատեան մերոյ: Այն ցնոսա Գրիգորիոս. Եթէ վասն իմ է այդ խռովութիւնդ, ես չեմ լաւ քան զՅովհան, ընկեցէք զիս ՚ի ծով և դադարեսցէ մրրիկդ ՚ի ձէնջ: Եւ հրաժարեաց ՚ի Թագաւորէն, և գրեաց նեղբօղեան Հառս ՚ի Հարիւր յիսուն եպիսկոպոսունս ՚ի ժողովին, և ողջունեալ զնոսա եւ գնաց ՚ի Կապադովկիա երկիր իւր, և դադարեաց ՚ի գիւղ մի որ կոչէր Արուանզոն: Եւ ժողովն ձեռնադրեցին յաթոռն Կոստանդնուպօլսի զՆեքտարիոս զտարոնացին:

Եւ յորժամ աւուրքն բասիլիոս հանդերձեալ էր քան զի մահուամբ ննջել, գնաց Գրիգոր Աստուածաբանն ՚ի կեսարիա առնա. և գրեաց ՚ի Թաղումն նորա նեղբօղեան Հառս. և դարձաւ ՚ի գաւառ իւր Արուանզոն:

Ահա երանելի Աստուածաբան վարդապետս Գրիգորիոս զերկուտասան ամ զոր եկաց ՚ի Բուզանդիա, մաքրեաց զքաղաքն յամենայն հերձուածոցաց, և ՚ի մելրութենէ Արիոսի և Ապողինարի և Նաւատիոսի: Եւ նստոյց յաթոռ եպիսկոպոսութեան Անձիանձու զՆեւլալիոս, այր կատարեալ առաքինութեամբ, որ և սպասաւորէր սրբոյն արժանապէս, վասն զի յոյժ տկարացեալ էր մարմնով. յետ այսորիկ ապա և ինքն երթեալ ընդդէմ կայր արիանոսացն, և այլոց հերձուածոցացն. և անտի դարձեալ լուեր պատերով յամենայնէ խաղաղական կենցաղս՝ ամ մի, միայն աղօթից հոգ տանելով: Եւ ապա գրեաց այլ ևս թուղթս, յորոց բազում նիւթք տուաւ ինձ առ ՚ի շինուած առաջի արկեալ խմաստից:

Արդ այսպէս բարձրագոյն և երկնից արժանաւոր խմաստութեամբ և ուղիղ դաւանութեամբ եկաց Եւանելին յաշխարհիս այսմիկ. զբազում լուսաւորեաց վարդապետութեամբ Հոգւոյն սրբոյ որ աւանդեցաւ նմա: Եւ յետ այսորիկ փոխադրեալ եղև յաստեացս ՚ի հանդերձեալս, յանցաւորէս ՚ի մշանջենաւորն, ՚ի տուեալէս ՚ի Ճշմարիտն. և փառաւորեալ պսակեցաւ ընդ ամենայն սուրբս: Արդ կատարեաց մեծն այն և արժանի յիշատակի Գրիգորիոս զկեանս իւր, որ օր քան և հինգ էր յոտնաւարն առ ՚ի վաղս Քրիս-

տոսի։ Եւ ես ըստ կարի իմում շարադրեցի զվարս նո-
ր. Թէպէտ և ոչ զբովանդակն, այլ այնչափ զիա-
փաքուսն իմ լցուցից, որչափ վայել է բարեմիտ ո-
ղոց՝ զգԹասիրի հօր զնախադասեան ըստ չափոյ
հասակին փոխանորդաբար հատուցանել։ Որպէս զի և
մեք արժանի լինուք՝ ի ձեռն սորա յարագուարճ բեր-
րանօք փառաւորել զանակիզըն Հայր, և զառ՝ ի նմա-
նէ զանակզբնաբար ծնեալն Որդի, և զանակզբնակից
զկիսումն՝ ի նոցունց էութենէ զՀամադոյակից սուրբ
Հոգին. անձինք երիս կատարեալ անտրոշաբար, և
բնութիւն մի անշփոթաբար զուգակցեալ. որում
վայել է փառք իշխանութեան և պատիւ, այժմ և
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ա.յլ պատմութիւն վարուց Սրբոյն Գրիգորի Աստուածազանուն

Ա.յսօր հրաւիրեաց զմեզ, ու՛ր եղբարք, մեծն Գրիգոր զորիս աստուածազանութեամբն Հոգւոյն՝ ի հաւատ խրատուն իւր Հզնասուր բարեպաշտութեան իմաստից հանդէս. և սեղանաւորեաց առաջի մեր զանուն և զանուշահամ գիւրոյ առաքինութեանն ցըն խորհիս, առ՝ ի փափկացուցանել զմեզ այնու կերակրով, որ վերացեալ բարձրացեալ քան զամենայն առաքինութիւնս. և զուք ու՛ր արանչանայք ընդ այսքան հանդարձակութիւնս մեր, մինչ զի խոզախեալ մերձենալ մեզ՝ ի բարձրապոյնն քան զմեզ: Վասն զի այնքան փափկիմ նորա առաքինութեանցն՝ մինչ զի մոռացումն եղև իմում տկարութեանս. այլ և վստահացեալ՝ ի Հզմարիտ յոյն Քրիստոս, որպէս զի օժանդակեսցէ իմոյ տկարութեանն՝ ի նորա յոյն մեծապէս իմաստից գիտութեանց, զի պատմել կարացից վասն անմատոյց առաքինութեանց նորա: Նաև վասն այնու՝ ուրիկ մինչև ցայսօր պատշաճ վարկայ լռութեան տալով մեզ զայս պատմելով կամեցեալ մերձ, վասն զի և ոչ զի ոք տեսի կարդ և հեռաւումն արարեալ յայս՝ պատմել զնորայն առաքինութեան վարս, առ՝ ի յուղղութեան զինն զինն եկեղեցւոյս. որպէս և նա ինքն պատմեաց վասն Բասիլեոսի և այլոց եպիսկոպոսաց և վկայից՝ որք կա-

տարեցան՝ի Բրիտտա։ Եւ արդ վասն զի ոչ գտաւ, որ-
պէս վերագոյնն ասացաք, յայտնիկ ձեռնամուխ լեալ,
պարտ է մեզ որպէս սկսեալ սրդի փոխանակ հոգևո-
լին[1]... զպարտոյ պարտան հատուցանել նմա. մնաս-
ւանդ զի չէ իսկ արժան զայնքան առաքինութիւն
այնպիսւոյ առն՝ անբանութեան տալ... հրաւարա-
կել, զի Թերևս արժան լինի բազմաց բ... նորա
եւանելոյ։

Բնդ այսուհետև զյապաղանացն հատուցուք նըբև
՚ի նորահունձ առաջին արմտեաց պտղով բանից մերոց
պահպանութիւք զՎարուաժաբանն. Թէպէտ և ոչ ըստ
արժանեաց նորա, սակայն ՚ի մերմէ յօժարութենէ և
՚ի փութոյ ոչ պակասեցուցանելոյ։ Գիտեմ զի յամե-
նայնի մեծախորհուրդ է այրն, և նեղիչ մեզ զակարու-
թեանն մերում. քանզի և հայր գթած զտարտախօսել
զաւակի նորոյ, որ յանարուեստ մտաց և յանկատար
լեզուէ արտաքս գայ՝ զուարճութիւնս վարկանի. այս-
պէս և երանելիս այս, Թուի Թէ ընտանեգոյն վար-
կանի զասացեալսն՚ի մէնջ, ուրախանայ ՚ի մեզ։ Զի
եԹէ մինչ կենդանի էր՝ այսպէս գերկուս արկեալ հո-
գևոր սիրով գրէր ՚ի մեզ, գիարդ ոչ արդեօք յորժամ
առ մաքուր լոյսն և բարձրագոյն կեանսն փոխադրեալ
եղև։ Բայց և ՚ի ձէնջ խնդրեմ, ով ժողովուրդք սուրբք,
և մի պահանջէք զհատաստիս իմաստիցն առ նորա
ուղղութիւնս։ Նախ, զի նուազեալ գտանիմ զօ-
րութեամբ իմաստից առ նորայն. և ապա, զի ոչ որ
վասն նորա եԹող ինչ մեզ գրոյ, այլ նըբև հասկ
սերմանեաց ժողովեցից ՚ի պարարտութենէ անդոց
բանից նորա, որ ինչ միանգամ յաղագս նորա են։ Եւ
նմանեցայց իմաստուն Հարտարապետի, որ զմանր քա-
րինսն առ մեծամեծօք ՚ի մի ժողովեալ գնէ առ պատ-
րաստութիւն որմոյ, և այնու յարմարեալ կապմն
տուն կատարեալ Թագաւորի։ Եւ արդ սկիզբն արուես-
ցուք ուստի սկսանելն վայելչապէս արժան է։

Էր սա ըստ Հայրենեաց յԵրկրորդ՚ի գաւառէ Կապ
պադովկացւոց, ծնեալ՚ի քաղաքին Ա՛նձիանձու. վասն
որոյ երևեալն էրև քաղաքն այն յաղագս բազմազար-

1. Յօր. առաք ինչ խանգարեալ էին։

դուխեան նորա. զի ոչ եթէ այնքան ատուանի էզև՛ի տիեզերակալութենէն Աղէքսանդրոս՝ աշխարհն Մակեդոնացւոց, և կամ Պարսիկս՛ի ձեռն Կիւրոսի թագաւորի, որքան փառաւք ծաղկեալ զարդարեցաւ քաղաքն Անձիանաձու՛ի ձեռն Գրիգորի. բայց թուի ինձ ոչ այլ ինչ պատճառ դոլ այսմ, այլ զի ընկալաւ զդայեակութենէն մանկեանն յատաքինութենէ նորա: Զուարթութիւն հոգւոյ և պատկառեցուք, ընդունելով զպատմութիւն բարի հօրն, զի ոչ միայն մարմնոյ այլ և հոգւոյ լինիցիք դայեակք: Որոյ և հայր նորա իբրև զԱբրահամ հնազանդեալ կամացն Աստուծոյ, թողեալ զաշխարհ իւր և զգաւառ, զպահպանութիւն մեծութիւնս և զբազմաստուածութեանն մոլորութիւնն՝ փոխադրեալ եղև յաստուածպաշտութիւն, և հարազատ աշակերտ երևեցաւ ընդհանն Աստուծոյ: Որ սուրբ ոչխար յաղագաչոյն խաւնեալ՛ի հօտն Քրիստոսի, ապա և հովիւ հանճարեղ հաստատեցաւ ընդհօք Հոգւոյն սրբոյ յեկեղեցի Անձիանաձու: Իսկ մայր նորա սուրբ և՛ի սուրբ նահատեաց, հանդերձ այլովք առաքինութեամբ պատրաբերեաց բարեպաշտութեամբ զբարի շառաւեղն՛ի բարի արմատոց. քանզի[1] տեսչայր մանկան աչուի, և յաղագս այնորիկ մաղթանս մատուցանէր այնքանեաց մեծաց բարեաց տուողին Աստուծոյ, այլ և հանդիսիւէր բաղձանացն:

Ո՛վ մեծի հաւատոյն, ո՛վ ջերմութեան սիրոյն. նախ քան զլցանելն՝ խոստանայր տուողին առաջի մատուցանել որպէս Աննա զՍամուէլ: Եւ զինչ ապա արդեօք. այլ այն որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ՝ լուաւ աղօթից նորա, և՛ի ձեռն տեսլեան գիշերոյ եցոյց նմա զհանդերձեալ մանուկն, այլ և զառաքինութիւնս, և զառաքինութենէ՝ որում նուիրեցեալ հանդիպէս:

Զայս ամենայն եցոյց նմա Բարձրեալն նախ քան զծնանելն. իսկ ապա ծնեալ և բարւոք մանկեամբ աճեցեալ, բարեպաշտութեան ժառանգորդ լինելոյ բարի ծնողացն, զօրանայր քան զհասակակիցս իւր ըստ բարեպաշտութեան կարգի քրիստոնէից, ոչինչ խա-

1. Յոր. փան:

փան լինելոյ նմա անկատար հասակն ՚ի կատարեալ ուսմանց և բարուց, ըստ օրինակի մանկանց զբաղինուլ: Այլ զայս ամենայն արհամարհէր նըզուն անօգուտս, փութայր ըստ լաւագունից. և փոյթ և յօժարու- Թիւն նմա այս էր, ստանալ զառաքինութիւնս և զգուշանալ ՚ի չարեաց. քանզի նըզ անուշ միգանայ՝ յոլժամ մերձ դնի առ ՚ի հոտս գարշելեաց:

Իակ յոլժամ աճեցեալ եղև պատանեակն, մինչ զի կարող գոլ այնուհետև մտանել ՚ի դպրոցս արուեստից նմանատիցն, երթեալ ապա ՚ի Կեսարիա, և անդ քա- ջալերս գտեալ ՚ի յուսումնակցացն, և ժողովեալ մանկունս ոչ սակաւս՝ նաեւեաց ՚ի Պաղեստինէ. քանզի յոյժ բաղձայր հռետորական նմանից. և անտի Աե- գիպտոս. և եկեալ Աղեքսանդրիա և յայլ քաղաք- սըն, ՚ի մի հաւաքելոյ յանձն իւր զբազում արուես- տից նմանութիւնն՝ ըստ սովորութեան նմանուԹեանն նրուսու: Յայնժամ ապա յետ զբազումս յօգուտակա- րաց նմանից Եգիպտացւոցն ժողովելոյ, խորհեցաւ գնալ ԱԹէնս. քանզի զայս իակ պատուէր հրամանն ունէր ՚ի մօրէն իւրմէ. և մտեալ ՚ի նա եգիպտացի, նաեէր ՚ի ՊարԹէնիոն ծովեւն, ոչ ՚ի ժամանակս նաե- արկութեան: Յայնժամ յանկարծակի հողմն սաս- տիկ յարուցեալ խառնէր զծովն, և խաւար Թանձրա- մած էր ՚ի վերայ ծածկեաց զծովն, ըստ նմանուԹեան Եգիպտացւոց խաւարին յաւուրն Մովսէսի: Վտանգ- ոչ սակաւք զամենեքումբք որ ՚ի նաւին էին՝ անկա- նէր. բայց նա ոչ այնչափ զմարմնոյ որչափ զհոգւոյ վտանգս վարկանէր. վասն զի ամենեքին զմարմնոյ մա- հըն կոծէին, իակ նա զհոգւոյն. քանզի չև ևս էր ա- ռեալ զմկրտուԹիւն ջրոյն կենաց և փրկուԹեան, և ժամանեաց նմա ջուր մահու և կորստեան: Եւ զինչ ապա արդեօք առնէր մեծն այն, որ նախ քան զվե- րսին ծնունդն զարդարեալ էր առաքինուԹեամբ: Յարուցեալ ՚ի բաց զերծուցանէր Քինքենէ զզգեստն իւր, և ձայն աղաղակի ոլորմ ուժգին գոչմամբ յեր- կինս բարձրացուցանէր. և այնչափ գառնացեալ ոգ- ւով արտասուս հեղոյր, մինչև հիացուցանէր զամեն- սին՝ որ ՚ի նաւին էին, որպէս զի վասն անձանցն լու- եալք՝ զնորայն հարցաքննէին զողբան: Իակ նա զամե-

նայն մատաղութիւնն յինքեան ամփոփեալ՝ զնա կար-
գայր յօգնականութիւն, որ միայն կարողն է սքան-
չելիս գործել։[1] ... ընդ ոմանս շօշափ... գրեաց... և
ոմանս... փոխեաց զձայն... սղրեաց. և իւրոյ ժողո-
գեաւ իւրով քննութիւն... ոմն պահեաց։ Որ զկարմիր ծո-
վընն իւրում ժողովրդեան եբաց, և զնոյն առ՝ի կո-
րուստ խաւին և ընդ-իմանարտին պատրաստեաց. որ
յանապատին զվէմն աղբերացոյց և զգառնութիւն
ջուրցն քաղցրացոյց. որ տարածմամբ ձեռաց յօրինակ
խաչի զՅմաղէկ մահացոյց, և նովին խորհրդով առանց
պատերազմող ձեռաց և մեքենային՝ զբարձր պարիս-
պըն Երիքովի յատակեաց։ Որ զվէմ մարդարէին՝ ի
ջերմ որովայնի կիսին առանց հալման ամբողջ պա-
հեաց, զնոյն նմա իբրև զնաւակ կազմեաց լի ոգով, և
քարոզ հեթանոսաց առաքեաց։

Զայսոսիկ և որ սոցին նման գրեալ են յաստուա-
ծայնն գիրս, ի մի բերկր՝ի մաղթելն իւրում առաջի
Աստուծոյ. այլ և զաշխինս դներ ոչ յապաղել զմկըր-
տութիւնն՝ զինի ազատելոյն՝ի կորստենէն. և նա ինքն
բոլորովին պտուղ ապրեցուցանողին խոստանայր։ Եւ
զինչ ապա յայնժամ. խնդարհեցաւ՝ի պաղատանս
նորա՝ այն որ ողորմածն է և արագ ժամանող՝ի խո-
րոց սրտէ խնդրողացն զնա. և առժամայն զկռուո-
թիւն ծովուն փարատեր, և զթանձրամած խաւարն
՝ի յանօտ և՝ի յատակ օդս փոխեր։ Նակ բարեպաշտ
ծնօղքն նորա զայս ամենայն անցս վտանգից յանուր-
ջըս իմացեալ զգուշանային մանկանն, և յարաժամ
աղօթիւք և յորդահոս արտասուօք աղաչէին զՎ-
տուած օգնել այնմ վտանգելոյ անձինն. և վաղվա-
ղակի տեսանէին տեսլեամբ գիշերոյ զորդեակն ի-
րեանց յետ պաղատանացն, զի յաղթեր զօրութեամբն
Քրիստոսի՝ դիւացն զաւրութեանն, որ յարուցին՝ի
վերայ նորա զկործանումն, զոր յետոյ ինքն նակ պատ-
ուեաց ծնողացն։ Նակ որ՝ի նաւին էին, մի ոմն երիտա-
սարդ որ նակատէր էր նորա, տեսանէր՝ի գիշերի
՝ի սկզբանն խռովութեանն ծովուն՝ զերանելի մայր
նորա, զի գայր՝ի վերայ ծովուն, և քուռն հարեալ

1. Յօր. այսպէս պակասաւոր էր։

գնաւէն Հանէր ՚ի ցամաքն։ Որ իբրև պատմեցաւ առ սիրն՝ վաղվաղակի Հանդարտեաց ծովն։ Եւ որք ՚ի նաւին էին ընծայեցին զանձինս առաջի Գրիգորի, խոստովանէին Հաւատով զՍուրբ Նորա օգնական լինել անձանց իւրեանց։ Ջինչ նուաղագոյն այս պատմէ՚լիք քան զմեծին Եզեկիայի. զի որպէս նա աղօթիւքն իւրով Հուր յերկնից իջուցանէր ՚ի պատարագն՝ զոր ընդդէմ մելորեայն ՚ի կուռան Միհռովնացն՝ մատուցանէր Սրտուծոյ, մինչև սբանչանալ ժողովրդեանն և զչմարիտն Սրտուած խոստովանել. այսպէս և Գրիգորիս ՚ի ձեռն պաղատանաց իւրոց, զսաստիկ խռովութիւն ծովուն և զթանձրամած խաւարն ՚ի յանուր օդ և ՚ի միջօրեայ փոխեաց։ Մինչ զի և որք ՚ի նաւին էին՝ զչմարիտն Սրտուած ծանուցեալ՝ փրկիչ և օգնական զնա միայն զոլ խոստովանէին։

Իսկ ապա վասն զի յոյժ տագնապէր զնա ուսմունքն և խոտոտեղջ անուն Աղեքսացւոց, և վասն այնորիկ քաջալերեաւ զուսումնակիցս իւր անդ Հաստատել։ Նաև այլ ինչ անսպասեան խնդութեամբ, զոր պարտ է ասել, ընդդէմ անդ. վասն զի մեծն Բասիլիոս եկեալ ՚ի Բիւզանդիայ յետ սակաւ ինչ ժամանակի եկն յԱղեքս. և տեսեալ զիմաստնս ուրախացան, յայտնեցաւ Հանգամանքն լինելոյ և զի ուսումն ունէր։ Յայնժամ ապա Հանգիսեալք միաբանք լինէին և լծակից յառաքինութիւնս. վասն զի և զի յոյս կոչ մանն ունէին, և միով լուսով պայծառացեալք էին Հրէշ մարիտ Հաւատովն։ Իսկ առ խոտոտին խնդիրս Թէ որպէս՝ յայտնի առնէին գատանէին՝ յայտնի առնեցուն որք լծակիցք են խոտոտութեան՝ երևի։ Վասն զի ոչ միայն ՚ի միաբանց Հարցաքննութենէ ծածկելոյ խոտոտին գիտ յայտնի, այլ և ամբաստել Հաստատին։ Սրդ տեսա որպէս խոտոտն երկրագործ ք՚ի միաբանն՝ սին Հանգամանակեալք զեզն արօրաձիգ՝ պատուէին զքաղցր ակօսն պարարտ անդի մտաց իւրեանց, սերմանել ՚ի նմա զՀմտութիւն խոտոտութեանն։ Իսկ առ Հակառակութիւնս՝ զոր սիրէ մանկութիւնն՝ յոյժ Համբերողք էին։ Եթէ ՚ի գուռն ուրուք յայլոց քրիստոնէութիւնս Հակառակութիւն Հանդիպէր, սակայն և

յայն գժուարաշարժ լինելին. խակ ՚ի բարիսն դիւրաշարժք առ ամենեսեան ծագէին. և այսպիսի անուանի յամենեսեան երևեալք, մինչ գրեթէ և ՚ի Հռոմայեցւոց աշխարհն համբառ նոցա հասեալ՝ մեծաւ խոտն զնոսա անուանէին: Զի Թէպէտ և յայնքան բազմութեանց պատուեալ լինէին, և ՚ի մէջ այնքան դիւրատարած մարդկան միջի կային, սակայն զՀոգւոյն առաքինութիւնն հաստատուն և անշարժ պահէին, և ոչ միոյ իրիք ՚ի վայր քարշեալք ՚ի հակառակութեն, պատէ զի առնոսա կատարեալ մարդասիրականն ձայն. Այսու այսպիսիկ ոչ երկիցս մեք ՚ի խոտել երկրի, ՚ի փոխեալ լերանց ՚ի սիրտս ծովու: Եաև ոչինչ նուաղ ժուժկալութեամբն գտանէին քան զմեծն Հեղիսա և զերանելին Յովհաննէս Մկրտիչն՝ մեծն ՚ի ծնունդս կանանց, վասն զի ծագիւ միով մատին միայն մերձե- նային ՚ի կենցաղս: Խակ զիմաստութիւնս մարմնոյ՝ որ առ հանդերձս է կամ առ կերակուրս, զայս ամենևին և ոչ միոյ իրիք արժանաւորք հանդարէին: Եւ զինչ արդեօք ասացից, հանդերձ այլոյք առաքինութեամբքեան և զոգևորականութեանցն, որ մինչև ՚ի վախճան անտրտում զինքեանս Աստուծոյ ընծայեցին. հանդերձ այսու և անընդհատութիւն նոցա յոյժ զարմանալի էր. զի Թէպէտ և վասն հասքացոյ առաքինութեան մուտս անէին նոցա ինչ բազումս, սակայն նորա իբրև յապահովութենէ և յանշտապութենէ ՚ի բաց փախչէին. զի ոչ, ասէին, ՚ի վարձ առաք զիմաստութիւնս, եթէ ՚ի վաճառաշահութիւնս զայ ՚ի կիր արկանիցեմք: Խակ զանտարութիւն և զամբարհաւաճութիւնս՝ զայսոսիկ բնաւին խակ հեռակոյս արտաբեալ ՚ի բաց հալածէին իբրև զապականիչս իմաստութեան և զվախճանիչս բարձրագունից իմաստութեան խոր- հըրդոցն:

Խակ վասն հանձարոյ նոցա զինչ պարտ է ասել, որ- քան միաբան միախորհուրդ եղեալ ոչ գտաբերէին ՚ի տուէ և ՚ի գիշերի առ ՚ի խոր բրել և գտանել զգանձս իմաստութեան, որպէս ասէ երանելին Յով: Վասն զի յայսոսիկ փոյթ յանձին բեռնեալ առ ՚ի զարդ անձանց և ՚ի փարթամութիւն այսոցիկ որ նմանատիպս կամիցին առանալ: Եաև զիմաստն արտաքնոցն, ոչ եթէ յա-

խուան՝ի մի հաւաքել զբաղս և զբանիս, որ մանաւանդ
յանմատուցելիսն տանի, ժողովելին զօգտակարսն՝ի հա-
ցանէ ամենայնի, որ ինչ ոչ ընդդէմ բերիւր աստուա-
ծեղէն խոստովանեան, և զաւետարանին՝ որ ինչ միանգամ ըստ հնութեան աւանդութեան
ցըն էր՝ ըմբռնեալ՝ի բաց կտրէին. վասն զի զամենայն
արուեստսն որ միաձայն ե խրատուց գրոց սրբոց և
քաղցրութենն ոգւոց՝ միաբանութեամբ ուսան։ Նախ
զայնսն որ առ հեշտութենն բերէ, որ գառնութենն
ոգւոց՝ ի բաց լքին, այսինքն զթիւս խորհրդոց և
զերկրպագութեանն հաւատարութիւն, և զաստեղաց
գրութիւնս և զշարժմանսն առ ծննդաբանութիւնս։
Ապրիլ նոր ինն զՄովսէս և զՅեսու որդի աշխարհի
զարդարեալք երևեցան աստուածային Հոգւոյն, մա-
նաւանդ թէ առաւել քան զնոսա։ Վասն զի ոչ եթէ
զերկի տարեալք անդ ըստ հնոյ պատմութեանն, այլ
մանաւանդ ըստ գրոց զերեալ զամենայն զնոցա միտս
՝ի հնազանդութենն Քրիստոսի. վասն զի զայս նախ
առաջին զերեզիկ պտուղս իւրեանց խոստովանեան
վարկանէին։ Եւ զինչ ևս այնուհետև. որպէս բանիցն
կարգ է ասել, յայլմէ յայլ վազելով, և ոչ այս տակաւ
առ գոլութենս նոցա նայ էին բանս մեր. այլ պարտ է ա-
ւանդել զնոսա խոստովանեանց գոլութեանց Սոդո-
մեան, որ միշտ առ գրունս Վաւելի նատեալ զերբերին.
և մեք յայլսն փութացուք՝ի պատմութենն։

Ա.րդ Բասիլիոս ընկալեալ զբարիսք գանձս խոս-
տութեան, ըստ նմանութեան խոստուն վաճառա-
կանն վաճառաշահ եղեալ անդէն գարձաւ. իսկ Գրի-
գորիոս յաղագս այլ ուսումնակցացն՝ որք էին Մա-
թեոսեցոց անտի՝ յապաղէր զգնալն. վասն զի և ոչ
իսկ տային թոյլ ելլոյն նորա, այլ կալ անդէն և խրա-
տել զնոսա յաստուածայինսն, այլ և յոյժ աղաչէին
զնա ընդունել զաթոռ խոստութեանն Ա.թենացւոց։
Իսկ նա սուզ ինչ կացեալ անդէն վասն հարկի աղա-
չանացն և վասն երախտաւոր բարեկամութեանն. և
յետ այնորիկ՝ի ձեռն աղաչանացն հնազանդեցոյց ըզ-
նոսա՝ գնալ առ ծնօղսն իւր։ Եւ էր այնուհետև ա-
մաց երբեմն երեմնից յոյժ ամ էին առ ծնօղսն իւր։ Եւ
իսկ և իսկ երբեմն էին՝ նախ ընկալեալ զաստուածայինն

վկրտութիւնն լուսաւորութեամբ սուրբ Հոգւոյն, և էզ սահմանն անձին իւրոյ ոչինչ խորհել՝ի կենցաղոյս էր՝ որով՝ի վայր քարշի ամենայնն. նաև յառաջագոյն իսկ՝ի սոյն կրթեալ էր նախ քան զլուսաւորութիւնն՝ Ցետ այսորիկ որոշեաց զինքն՝ի քաղաքայնոց իրաց, յանապատն փութայր. զի թէպէտ և ցանկայր ընդ զիարօտութիւն ծնօղացն, և ընդ իրարս բնութեան նոցա, սակայն զմտաւ ածելով զբազմութիւն՝ որ առ հոգս տանցն լինին, ոչ հաւանէր. և առաւ այնուհետեւ կրօնաւորեալ ոչինչ ունելով յաշխարհէս, և թերադրէր զանձն իւր միայն աղօթից և ընթերցմանց սուրբ գրոց պարապելով: Եւ յայսմիկ յարաժամ հանելով սիրեալ զնարհս սրտի իւրոյ, բազում անգամ տեսանէր զՔրիստոս, և խօսէր ընդ նմա տեսլեամբ զիշերոյ, և երանելի լինէր ըստ ձայնին. Երանելիք են այնոքիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն: Ա.յսպիսի էր ուծն Գրիգորիոս. Թողեալ զքաղաքաց գոհս, զնմանատոյ հըպարտութիւն, զիշխանաց խաւարութիւն, զդատաստարանեալց հակառակութիւնս, զդրոց զդաւաճանութիւնս, զհրապարակս սուտս, զմեծատանց ագահութիւնս, զվաճառատեղեաց զերծումն, զխարթամաց զոռոզութիւնս, զկարօտեալց տառապանս, զերկեղելոց արբեցութիւնս, և զայլ ևս կարծեցեալ փառս մարդկան, որ պատրատեալ պարապանդէն զմարդիկ յերկնային տեսլենէ Աստուածոյ, և պղտորեալ մխացուցանեն զիմաս, և ոչ ատեն Թոյլ ընդունել զմեզս սրբոյ լուսոյն: Ցայս աստիճան ոչ՝ի սկզբանէ կրօնաւորութեանն, այլ և՝ի մանկութենէ իսկ՝ի բաց լքեալ Գրիգորիոս:

Իսկ յարաժամ հայր նորա հանել ուրեմն բռնադատեալ զնա՝ի քահանայութեն ձեռնադրէր, տես ապա զինչ գործէր. յայնժամ ապա Թողեալ զեկեղեցին, փախստական լինէր՝ի Պոնտոս առ ուծն Բասիլիոս առաքեալ ոմանց իբր. վասն զի և ոչ վայելէր իսկ երկուց լուսաւորացս այսոցիկ բարեկամեալ՝ի միմեանց լինել մարմնով, ոչ Հոգւով և իմաստութեամբ ոչ էին բաժանեալք: Յայնժամ ապա զոր առ միմեանս գաշնադրեալք էին՝ի վար արկանէին զառաքինութեան վարս, և միով Հոգւով և միով գաւառութեամբ յան-

ձինա իւրեանց կրէին զիատամբերութեան զվարս կրօ-
նաւորական հանդիսիւք. իբրու զի առնուա կատարէր
տէրունական բանն. եթէ՝ Ուր երկուք կամ երեք ժո-
ղովեալ են յանուն իմ՝ անդ եմ ես ի մէջ նոցա: Եւ
զինչ ևս ասացից վասն երանելի արանցս այսոցիկ, որք
նմանս Մովսէսի բարձրացեալք առաքինութեամբք՝
ամպածածուկ եղեն անցուել Հոգւոյն սրբոյ յամենայն
աշխարհական խառնուրդեանցս. և անդ բնակեալ վար-
դապետութիւն Հոգւոյն սրբոյ, և առ ի նմանէ օրի-
նադրեալք լինէին:

Յայնմ ժամանակի վախճաներ Կեսարու եղբայրն
Գրիգորի՝ որ ունէր զդիմաստական իշխանութիւն ի
Թագաւորացն, այսինքն ի վերայ շահեմարանաց գան-
ձուցն: Նակ հայր նորա ծերացեալ ակնօք, այլ և ող-
բալք սրտիւն իւրոյ Կեսարոսի յոյժ Թախծեալ՝ ոչնե-
րէր միայնութեանն. նաև ընդկից վախճանելոյն ոչ ոք
կայր ժառանգորդ. վասն զի արհամարհեալ զծերու-
թիւն նորա ամենեքեան իբրև զշունք ի վերայ սրտից
դիմեալ Ջանային յարիշատակել: Յայնժամ ասա գրեալ
Թուղթս պաղատանաց՝ որպէս զի եկեսցէ առնա: Նակ
նա մեծ ինաս համարեալ անհնազանդ լինել հօրն,
մանաւանդ այնպիսւոյ քահանայապետի և ծերունւոյ,
Թէպէտ և ոչ ի կամաց, սակայն վասն պատուիրանի
հնազանդութեանն՝ եկն առ նա: Եւ իբրև ուղեաց
զամենայնն՝ որ յաղագս ընդդիմացողաց ընչից եղբօրն,
զմտաւ ածեալ զնաղպատական կենցաղս Պոնտոսի՝ կա-
մէր դառնալ անդրէն: Այս Թախանձեալ յոյժ ի
ծերունի հօրէն, քանզի էր այնուհետեւ իբրև առաք
լինանիցէ, միաց անդէն. զի Թէպէտ և դժուարին էր,
սակայն յուսալ ակն ունէր մեծամեծաց վարձուց պա-
տուիրանացն, որ հրամայեն պատուել զծարեպաշտ
ծնօղսն:

Յայնմ ժամանակի յաղգմանէ ջարին բռնացեալ
լինէր հերձուածն Արիոսի ի վերայ ուղղափառացն՝ ի
ձեռն փոքր Կոստանդիանոսի Թագաւորի, և զբազումս
ի սրբոց քահանայապետութեան Թագաւորական հրամա-
նաւ պատուհասմանեցին յեկեղեցւոյ ի ձեռն զրպարտ
տուԹեան իրիք պատճառանաց, և մեծ նեղութիւն
էր այնուհետեւ ուղղափառ քահանայից և ժողովրդոց:

վասն զի ոչ ունէին տուն աղօթից և ոչ իրաւունս յանձ-
օրինաց դատաւորաց. և զրկ եթէ ամենայն տիեզերս
հաղորդեալ եղև ի պիղծ հերձուածն ի ձեռն զրոց
Թագաւորին, վասն զի ամենայն ուրեք տուաւ համ-
արձակութիւն ամպարիշտ հովուացն արտաքսել
զուղղափառ. հովիւան հօտին Քրիստոսի. որք առեալ
զայսպիսի համարձակութիւն, իբրև գայլք սպակա-
նիչս վարեաւեալ ցրուէին զՀօտն Քրիստոսի: Այդ
այսոցիկ այսպէս եղելոց՝ ամենք յերկիւղէ սպառնա-
լեացն զարհուրեալք, անկանէին ի բարձրութենէն
ուղղափառութեանն, և այլք ընչիւք պատրեալք լի-
նէին. և կէսք փաղաքշանօք մարմնական սիրոյ, և
կէսք ինքնակամ. իսկ որք ոչ էին հաստատեալ ի հըզ-
մարտութիւն՝ ձեռնապրոյ հաղորդէին հայհոյու-
թեանն:

Այդ զինչ և առացից վասն այլոց, որ և ծերունի
հայրն երանելոյն անկանէր ի կարծն սատանայի.
թէպէտ և ոչ միանգև խոտաւ Թոյլ տայր Հլմարտու-
թեանն կալ բարեպաշտին ի կործանմանն: Իսկ կրօ-
նաւորք գաւառին այնորիկ ոչ ներեալ նմա՝ ի քաց
հատանէին զինքեանս ի հաղորդութենէ նորա, նման
նապէս և ժողովուրդն ի քաց կացին ի նմանէ: Զինչ
ապա առնէր յայնժամ երջանիկն Այտուծոյ մեծն
Գրիգորիոս. նախ առեալ զամանս ի Հզնաւորացն,
տրբօք Հանդերձ պաղատանս մատուցանէր առեն-
տեառն, խնդրելով զողորմութիւն քարեացն, և ապա կար-
գէր զանձն իւր ի լռութիւնն, զի զխոհականութիւն երե-
ւեցուցանէր առ ծերունի հայրն: Յետ այսորիկ խրա-
տէր զինա և խնդրէր զթողութիւն անկմանն ի ձեռն
խոստովանութեան Հլմարտութեանն, և նզովելով
զպիղծ հերձուածն զի և ամպրոպ խռովութեան դար-
ձցի, ասէ, և խաղաղութիւն և միաւորութիւն յեկե-
ղեցին Այտուծոյ հաստատեցի. որպէս և եղև իսկ:
Վասն զի առ ժամայն կանգնէր անկեալ հովիւն, և
ժողովեալ միաւորէր ի գաւիթս ուղղափառ եկեղե-
ցւոյ զբարեպաշտ հօտն: Այսպէս լուսաւոր վարդապե-
տութեամբն իւրով իմաստուհին Գրիգորիոս արուագե-
ծըչիկեր զհիւանդագեալսն, և հանդարտեալ խաղա-
ղացուցանէր զխռովեալսն, և հուպ առ միմեանս միա-

*ոմէր զբացակացեալն։ Եւ զայն ոչ եթէ յայնմ քա-
ղաքի միայն առնէր, այլ գրեթէ զամենայն իսկ քնա-
կիչն գառաւէն զօձառեալն ՚ի միմեանց գՀռոմիս և զՔ-
հօաս՝ բանիւք խաղաղականօք աճեալ միաւորէր ՚ի մի
կամօղիկէ առաքելական եկեղեցի։*

*Իսկ վասն զի չարիք մերոց քրիստոնէից բազմա-
նայր առ ՚ի յարհամարհութիւն և ՚ի լուծումն ա-
ուածային պատուիրանացն, վասն այնորիկ և նա ին-
քըն երկայնամիտն Աստուած, թոյլ տայր յառնել ՚ի
վերայ մեր զպիղծն Յուլիանոս Պաւաւատոս, որ Թարգ-
մանի յանցաւոր. վասն զի անարգեաց գՀաւատսն՝
զոր ընկալեալ էր ՚ի սրբոց նախնեացն, յերանելւոյն
Կոստանդիանոսէ մեծէ, և հակառակ գինքն Քրիս-
տոսի առնէր. և ամենայն հնարիւք չարացար որոշել
զքրիստոնեայսն ՚ի Հնչմարիտ Հաւատոյն. և զայսոսիկ
Թէպէտ և ոչ յայտնի հալածանօք, սակայն ՚ի ծա-
ծուկ հնարէր խորամանկ խորհրդովք. և օրինադրէր
ամենայն ուրեք մի ընդունել զքրիստոնէսն ՚ի դըպ-
րոց հեթանոսական ուսմանցն։ Իսկ նեղոտութիւնն Ա-
ստուծոյ Թոյլ առեալ նմա զամն երկուս և զամիս
վեց, Թերևս զղջացի յառնարէշտ մտացն. իբրև և-
թե ամենատես զանզղջանալին, արագապէս Թե-
քեաց զբարկութեան սուրն, ըստ արժանի ամբարշտու-
Թեան նորա։ Եւ զբարբարոսական և զգազանական
կեանս նորա ՚ի բաց խոզէր ՚ի նմանէ, ՚ի սահմանս բար-
բարոսացն. զոր և երանելին Գրիգորիոս արձանագը-
ցանելով զչարութիւն ամբարշտին. բայց այսոքիկ յե-
տոյ. այլ մեք զնովին ածեալ զբանս անդրէն դարձ-
ցուք։*

*Արդ իբրև եռաց խմաստունն Գրիգորիոս, զի հան-
դերձ այլովք չարեօքն զոր սահմանեաց ՚ի վերայ քրիս-
տոնէից ամբարիշտն Յուլիանոս, այսինքն զընչեցն յա-
փշատակել, ՚ի վնասուցական պատուոյն ունայն առնել,
և զայս ևս օրինադրեաց չարութեամբն խոտել, զի մի
ուսցին մանկունք քրիստոնէից զիմաստութիւնս Հե-
լլենացոց, սեւ Թէ գինչ առնէր. գրեաց Հասս ա-
ուածաբանական ՚ի յայտնիմաստութիւն Յու-
լիանոսէ, և զՀելլենացոց իմաստութիւնս՝ ոչինչ ՚ի
պէտս երևելոյն քրիստոնէից ուսմանց։ Վասն զի ա-*

մեռանին առ առաւօտեան եւ առ տուր պատմութիւնք բազմաստուածոսութեանն մոլորութիւնք. և զօգտակարն ամենեցուն հաստատաբար առաջի եդ ողջախոհին, որ ի արդարև արժանի գովութեան, իմաստնոյն աքանչելի պատմութիւնքն։ Գանգի երևեցոյց զրոյ բանս քերականս պէտս իմաստութիւք զանազանեալս, որ և յոյժ իսկ օգտակար ի առ բարեպաշտութիւն. վասն զի առաւածաբանութիւն ի առ աստուածութեան եւ անձնաւորութեան և միոյ բնութեան, և գովութիւն առաքինութեան, և հոգւոյ և մահու աղօթից առ Աստուած, և փախչել յամենայն պակշտութեանց և շաղխաղխութեանց զանջելոց առասպելաց բազմաստուածոսութեանց խաբէութեանց։ Զայսպիսի իմաստութեամբ վարդապետութիւնս հաստատէր առ 'ի յուսումն քրիստոնէից մանկանց, և 'ի բաց կալ յառասպելաբանութենէն ըստ նախանձու ամբարշտին՝ զոր յաչառանաք հրամայէր։ Զոր և ինքն իսկ անօրէնն զգայր զհակառակն իւրոց օրինադրութեան հանդիպեալ։ Գանգի վեհապոյն առաքեալն զՎրկտոյն իմաստն, հանդերձ բարեպաշտութեան վարդապետութեամբն, քան զիւրայոյն արտաքինոց հանդերձ առասպելաբանութեանն։

Եւ ոչ միայն թէ այսու իմաստասիրական ուսմամբս, զոր առ բարեպաշտութեան գոլոյն կարդեաց իմաստունն Վրկտոյն կարդեաց իմաստունն Վրկտոյ՝ յանդիմանէր զնա, այլ և նախ քան զնոսա զանաստուածութիւնն, միանգեա երկոքինն մանկունք գոլով էին յԱԹէնս, և բարեկամացեալ յաղագս ուսմանակցութեան, զլինելոցն անօրէնութիւն՝ առաջնոյն ծայնի իմաստութեամբն յառաջադոյն զգուշացուցանէր նմա։ Նա առիլ իսկ մանկանն յայտնի ցուցանէր զանպարշտութիւն նորա. զի էր առիլ կերպարանաց նորա լի խաւարութեամբ, և ծալրալից առասպաց. դէմքն գազանակերպ, և մարմին այլանդակ և անհեթեթ. խոտք լի անմտութեամբ, մոլոք և արհեստք դիւրաշարժ յամենայն չարիս. իսկ կրթութիւն առ բարեպաշտութիւնն և ժուժկալութիւն, և ամենայն գոլք առաքինութեան յոյժ արհամարհեալ էին 'ի նմանէ։ Զայս ամենայն առասպելով Վրկտոյն՝ յառաջադոյն զգուշացուցանէր զնա, և զգաստութիւն 'ի բարե-

պաշտուԹեւնէն՝ յայտնէր նմա։ Իսկ նա ոչինչ օգտեալ յայտնանէ. վասն զի անձամբ անձին խաւարեցուցեալ էր զաչս մտացն։ Եւ այսպէս կարծեալ ԹագաւորուԹիւն նորա՝ որ ամբարտաւանուԹեամբն խրոխտացեր՝ ի վերայ քրիստոնէից, չարաչար յանդիմանեցաւ. և չարն չարաւ ի բաց լարձաւ, ոչ այլ ինչ շահեալ յատեցեալ՝ բայց միայն զնիւԹ յաւիտենական տանջանացն, բազում առաւելուԹեամբ զանձեաց անձին իւրում։

Յայնմ ժամանակի էր ի Կեսարիա Կապադովկա՝ ցոց եպիսկոպոս սուրբն Եւսեբիոս։ Իսկ մեծն Բասիլիոս ընկալեալ զաշտիճան քահանայուԹեանն, և վասն պատճառանաց իրիք նախանձու ԹշնամուԹեամբ՝ զոր ընդդէմ բերէր նմա՝ ի բաց հեռանայր ի նմանէ ի Պոնտոս։ Յայնժամ բազմուԹիւնք հերձուածողաց ի միասին գումարեալք և երԹեալք ի Կեսարիա, մաքառեալք ընդ մայրաքաղաքացի եպիսկոպոսին Եւսեբի. իսկ նա ԹէպԹա և պարկեշտ գոլով վարուք, առկայն ոչ ունելով զիրԹուԹիւն աստուածաբանական իմաստից՝ ընդդէմ կալ հերետիկոսաց երկնչէր։ Յայնժամ առաքէր ԹուղԹս պաղատանաց առ մեծն Բասիլիոս լուսաւորիչն, խոստովանելով անբանաբար առնել զԹշնամուԹիւն, և աղաչէր արագ հասանել և պատերազմակից լինել մայրաքաղաքին Կեսարիա։ Իսկ երանելին դիւրահաւան գոլով առ բարեպաշտուԹիւնն՝ վաղվաղակի հնազանդեալ գնաց անդ, մանաւանդ վասն մարտի ուղղափառ դաւանուԹեանն. և իբրև զբաջ զինուոր Քրիստոսի մտեալ ի յաւուրս հերձուածողաց՝ զամենայնն վեր ի վայր կործանէր, և զառուԹիւն նոցա իբրև զանարիս փախուցանէր աւնէր առաջի ՀնարտուԹեանն։ Քանզի այսպէս ամենայն ուրեք մարգարէուԹիւնն Աստուծոյ յամենայն դաս ներգործէ զգօրուԹիւն իւր պարծանուԹեամբ ծառայից իւրոց. որպէս և յայսմ ժամանակի զոսա զերկուս լուսաւորս յաղագ, զմեծն Բասիլիոս առեմ և զՆրիգորիոս, որք սիրով հոգւոյն միացեալք, հրեհետ այրեցին ի յանդէ եկեղեցւոյն Քրիստոսի զբռնաւոր փուշ հերձուածոյն՝ որ բուսաւ ի վարդապետուԹենէ առաքելոյ։

Յետ սակաւ ինչ ժամանակի վախճան Հաւանէր արքայ նախատացեալ մայրաքաղաքին Եւսեբիոյ։ Նոյ Երանելին Գրիգորիոս՝ զրկէ ըստ իւրոմեան իմաստութեան Թուղթս Հաւանականաց՝ ի մայրաքաղաքն Կեսարիա, որպէս զի ձեռնադրեսցեն փոխանակ նորա յաթոռ եպիսկոպոսութեան զմեծն Բասիլիոս. և զայս ոչ եթէ ըստ մարմնական ինչ սիրելութեան առնէր, այլ ծանեաւ Հոգւովն արքայ ուղղափառութեան եկեղեցւոյ Քրիստոսի՝ որ նուաւ հատարկէր։ Սրտ իբրև ձեռնադրեցաւ յաթոռն Կեսարու՝ սուրբն Բասիլիոս, մեծ ուրախութիւն լինէր ուղղափառացն կողմանց. քայց ապա յայլ կողմանէ աշխատութիւն Հաւանէր առնն Աստուծոյ, քանզի յիշխանասիրութենէ ումանց յեղկուս մասունս բաժանեալ լինէր եկին Կապադովկացւոց, որ յառաջ քան զայն էր ի վիճակ ընդ իշխանութեամբ մայրաքաղաքին Կեսարու։ Բանզի այսպէս նախանձ և իշխանութիւն՝ ի տպանութիւն կրծանէ, և ի հաւատոյ և վերակացուցանէ. և զայսոսիկ ի Կայենէ, և յոր Յովհաննէս աւետարանչէն ամբաստան լինի՝ ուսանիմք։ Յայնժամ մեծն Բասիլիոս թէպէտ և այսպէս տեսանէր զեկեղեցին բարժանեալ՝ ոչինչ զրկէր, այլ անդէն վաղվաղակի զեկեալ հիւանդութիւնն բժշկէր, և վանս առաւել խնամակալութեան եկեղեցեացն՝ և զեպիսկոպոսացն ի գաւառին բարգմացուցանէր։

Սրտ իբրև կամեցաւ Սահեմայրոյ եկեղեցւոյ ձեռնադրել եպիսկոպոս, զմտաւ ածեալ ոչ զայլ ոք լինել պիտանի այր եկեղեցեաց, բայց եթէ մեծն Գրիգորիոս խորհրդակցութեամբ ծերունւոյն այնորիկ աբանէլեցւոյ Տօրն Գրիգորի խորհրդածէր։ Սրտ իբրև բռնադատեալ լինէր այրն Աստուծոյ առ ի հրաժարել. և նա նախ զառաջաւորացեալ լուսթիւնն և զլինչ կամել ունել յաշխարհէս առաջի եդեալ պատճառէր. և ապա զտեղին ևս Սահեմայ անյարմար և բազում խոտութեամբ լն, ի հարկայ թագաւորացն միջի կալոյ, և զձիրնթացութեան ի վերայ նոր ունելոյ, և այսոսիկ պատճառք յոյժ խոտին առ նեղութեան խորհրդոյն։ Նոյ ապա նորին ոչ հաւանէր, վասն զի կամէր առանց հոգոյ և զառաջնոյց կալ ի կեցուա-

ղումն, ազաչէին զնա զի յանձն առցէ զվերակացու-
թիւն Աղձիանձու եկեղեցւոյն, փոխանակ ծերունւոյ
հօր իւրոյ. և զայս ոչ ազաչանօք միայն, այլ և անէծս
ևս խառնեալ եթէ ոչ հնազանդեսցի: Իսկ նորա յանձն
առեալ զմատակարարութիւնն խորհրդոյն, քանզի
մինչև խոպան ընդդէմ կալ հրամանաց հօրն՝ ոչ սակաւ
վտանգ հանդիպէր. և ասէր այսպէս. Ո՛վ հայր պա-
տուական, ասէ, և այս մի ծանծկեալ լոյծ՛ ի քոյին
խնդրուածենդ, զի թէպէտ և բռնադատեալ լինիմ,
սակայն զնախախնամութիւն և զտաւտութիւն
ընտրեցայն՝ որ՛ի ձեռն քո հաւատացաւ ինձ Աստուծոյ,
ոչ է պարտ անտես առնել, այլ հարկ է յեկեղեցի
Աստուծոյ մատակարարել: Յայնժամ և հայր նորա
ժամանեալ ասէր ցնա. Վե՛ր ինձ, ով որդեակ իմ, մինչ
զեռ կենդանի եմ՝ գաւազան ծերութեան, զի և պարզ
զևեալն քեզ մեծամեծ ընտրհ Աստուծոյ՝ հայրա-
կան օրհնութեամբ հաստատեցի՛ ի վերայ քո. իսկ
յորժամ վախճանեալ լինիմ, որպէս կամիս զհաճոյն
Աստուծոյ՝ այնպէս արասջիր: Այլ յետ ձեռնադրու-
թեան սրբոյն Գրիգորի եպիսկոպոս Աղձիանձու՝ ծե-
րունի հայր նորա կացեալ ժամանակս ինչ, և հասեալ
մինչև յամն հարիւրերորդս, և մայր նորա Նունէ նոյն-
պէս սակաւ ինչ քան զայս ժամանակս, բարիոք քա-
զաքավարութեամբ փոխադրեալ եղեն յաւուժամա-
նակէսայս՛ ի միանձնաւորն և յանծերանալի կեանսն:
Իսկ սրբուհի քոյր նորա Գոհպանիա և կեսարիա եղ-
բայր նորա, սոքա նախ քան զծնօղն վախճանեցան.
և նորա պատուել զնոսա թաղմամբ և գերեզմանա-
կան բանիւք բարեվայելչացուցեալ. և պատարագօք
և աղօթիւք՛ ի Քրիստոս աւանդեալ, որ արդա-
րև լսա առաքելական կանոնիւն, արժանի առնուա-
ծային պատուհրանացն զքահանայութիւնն ընկա-
լեալ, նախ բարիոք վերակացու լեալ բարեպաշտ ծնօ-
ղաց և տան իւրում, և ապա եկեղեցւոյ Աստուծոյ վե-
րատեսուչ հաստատեցաւ:

Այլ կացեալ մեծն Գրիգորիս յեկեղեցին սակաւ ինչ ժամանակս յետ վախճանի ծնօղացն, և զմտաւ ածեալ զառաքելին զուխտն անզբաղութեան, թողեալ անդէն զեկեղեցին գնայր՛ ի Սեբևկիա, և ժամանեալ

անոք բնակէը ՚ի տաճարի սրբուհւոյն Թեկղի աշակերտին Պաւղոսի առաքելոյն։ Ցայսոսիկ արարեալ նորա՝ զմտաւ ածէը Թերևս այլ ոք ձեռնադրեսցի փոխանակ նորա յեկեղեցին Սիձիանձու։ Իակ յորժամ ՚ի տեսչութենէն Թեկղեայ Սատուծոյ վերադարձեալ եղև յեկեղեցին և եպիտ զՀօտ իբր առանց Հովուի, բազում մաղթանս եկեալ մատուցանէին առաջի նորա Հանդերձ արտասուօք, որպէս զի անդէն Հաստատեսցի յաթոռ իւր։ Իակ Թէպէտ և ոչ կամէը վանն զառանձնական կեանս սիրելոյ, սակայն բռնադատեալ լինէը ՚ի բազմութենէն, որք մեծաւ Թախանձանօք պաղատէին։

Ցայնմ ժամանակի տեսեալ մեծն Բասիլիոս զինուորական Թիւն եղբարցն, և զպակասել սիրոյն ՚ի բազմութենէն անօրէնութեանն, զի զախտացեալսն իբրև զսիրտ մի համարեալ մարդասիրութեամբ անտես առնէին, ո՞ւրեմ բազում մարդասիրութեան և ախտակցութեան պէտք էին։ Եւ խորհուրդս բարեպաշտութեան զմեզ տաւ ածեալ, որ առնեցուն և վայելուչ, մանաւանդ բարւոք առաջնորդաց եկեղեցւոյ. և կոչեցեալ առ ինքն զերանելին Գրիգորիոս՝ գործակցութեամբ նորին շինէ տունս մեծամեծս ՚ի տեղիս տեղիս պատշաճաւորս առ ՚ի հանգիստ աղքատաց և ախտաժետաց. և կարգէն արս հաւատարիմս և խնամատուն տպատաւորս առնոյն, և զամենայն տկարս և զհաշմանդամս անդրժոզելոյ, և մատակարարել նոցա ՚ի ձեռն արանց վերակացուացն զհասս տարեւոր մուծց եկեղեցւոյն, որպէս յայտնի խոկ ցուցանէ Ճառ բանիցն Գրիգորի, որ յայնմ ժամանակի խնամատարութեաց յաղագս աղքատասիրութեան, և յորդորումն և փոյթ մարդասիրութեան մանկանց եկեղեցւոյ, մանաւանդ ուսմնասիրաց և աշխատասիրաց ընձեռոցելոց, որ հոգւոյ մխիթարեալ նայիցին ՚ի ծածկեալ գանձս խնամատուց և բանասիրաց։

Արդ պատմեցից զբօսութիւն և զքաջասքելիսն զոր գործեաց նոքօք Աստուած ՚ի Բիւզանդիա, և յայլ բազում քաղաքան ՚ի միջ հերձուածոցն, որպէս երբ եւեն ՚ի ձեռն մեծին Մակեդոնի և Արիոսինի յերկոսին տես և յամենայն գիտացեալսն զքաջասքելիսն գործեաց։ Այսու գի Աստուած Արիոսի և Մակեդոնի և Նեստորիոսի,

որ ՚ի ժամանակս փոքր Կոստանդիանոսի արմատացաւ ՚ի յԵկեղեցիս Աստուծոյ, և առաւել քանայեալ լինել ՚ի վերայ ուղղափառաց կողմանց, ՚ի ժամանակս Վալեսի կայսեր: Իսկ ապա ՚ի Թագաւորել մեծին Թէոդոսի բարեպաշտի զարթոյց նախախնամ ողորմութիւն Աստուծոյ զհոգի եղբանեցւոյն Գրիգորի Աստուածաբանի, առ ՚ի յայց եկանել կորուսելոյն յատականոցաց անտի. և որպէս յայնժամ տեսեալ Աստուծոյ զչարչարանս աբրահամեան զաւակին ՚ի Եգիպտոս, առաքեաց նոցա փրկիչ զՄովսէս՝ ասելով. Ե՛կ, առաքեցից զքեզ ՚ի Եգիպտոս. քանզի լուայ, ասէ, զհառաչանս նոցա և ՚ի քէն ՚ի փրկել զնոսա. այսպէս կանխեաց յաւուրսն յայսոսիկ, և առաքեաց զԳրիգորիոս զայրն Աստուծոյ ՚ի Բիւզանդիա ՚ի բաց լքանել զհաւատ հռոմէական զանձն զանիծ հայհոյութիւնն ՚ի չշնորհիա հաւատոյն որդւոյն Աբրահամու: Վասն զի որպէս վերագոյնն ասացաք, ՚ի բռնանալ անիծ հերձուածոյն ՚ի Թագաւորանոցն քաղաքին, առաքէ բոլոր բարեպաշտ Թագաւորն Թէոդոս առ մեծ քահանայապետն Աստուծոյ Բասիլիոս և Գրիգորիոս՝ զի պատերազմել ընդ պատերազմողն եկեղեցւոյ սրբոյ: Իսկ տուրքն Բասիլիոս առ ժամանակ մի յապաղեալ զգայն իւր, փութացուցանէր զնմասունն Գրիգորիոս՝ բաւական զոլ գնա առ ՚ի վանուցն հերձուածողաց մարտիցն: Իսկ նորա եկեալ ՚ի Կոստանդինուպոլիս, եգիտ յոյժ Թափուր ձեալ զեկեղեցիս ուղղափառաց յամենայն ուղղադաւան հօտսն աստուծոյ. միայն փայլէր իբրև զաստղս ինչ հուպ եալ ՚ի վերայ լերինն: Բայց միայն առաձարն Աստուածոյ՝ որ այժմ կոչի տուրբ Յարութիւն, և նա Թերևս արհամարհեալ էր, վասն զի փոքր էր զաւակինն: Սրտ ինքանեալ անդ սրբոյն Գրիգորի պատերազմեաւ՝ պարտաքարեաց աստուածային վարդապետութեամբն ՚ի գունդս հերձուածողացն, որպէս և Դաւիթ զայլազգիսն, և վանեալ զնոսա զհետս քակտելով զամուրս նոցա: Եւ զեկեղեցիսն զամենայն ընդունեալսն ՚ի նոցանէ, որ քակեալք էին ՚ի կողմանէ Հերձուածեան, իբրև զի անդ խոկ կատարէր ասացեալն ՚ի գիրս սուրբս. ասէ. Տունն Դաւթի և բնակարանն և մեծանայր, և տուն Սաւուղի

հուսալէր։ Անդ էր սեսանել բազմազան ինն քարե-
կարգութիւն՝ ի գալստեան սրբոյն, վասն զի ժամանա
պատրաստ լինէր ուսկանաւ բարեպաշտութեանն և
զայս[1] ախորժեալով։

Այդ՝ ի վերայ այսոցիկ ուղղութեանց սրբոյն, ո-
մանք յարիանոսացն լցեալք բարկութեամբ, և այլք
նախանձու չարութեամբ ընդունեալ՝ գործակցու-
թեամբն սատանայի, պատերազմէին ընդ նմա, այլ և
հերքեալք լինէին ի չշմարտութենէն։ Ոմն ոտքա քաջ
քաջ՝ ի փախուստ դարձեալ, երևեցաւ այլ ոմն հայ-
հոյիչ՝ Ասպղնապետս անուն, ազգաւ Ասորի։ Սա այլ
ինն առանձնական չարաչարութիւնս ուսուցանէր ա-
պականամիտ վարուք. վասն զի կիսակատար առէր
զերկական մարդեղութիւնն Տեառն, և ոչ փառաւո-
րէր զխորհուրդ մտաբերութեանն՝ ի բոլանդակ փրկա-
գործութեանն. այլ առէր մարմին առնուլ Բանին՝ ա-
ռանց մտաւոր և բանաւոր Հոգւոյ. փոխանակ այնո-
րիկ զբանն Աստուած՝ ի տուկ մարմին բոլանդակեալ։
Եւ ինքն էր բանաւոր հելլենական ուսմամբն. և այն-
պէս զբազումս աւազակէր՝ ի պարզամտացն՝ ի վինա
կորուստեան։ Իսկ քաջ հոլլիւն երանելին Գրիգորիոս
երբեմն եռեսս զսուրբ ոչխար Հօտին Քրիստոսի յանխոր-
հուրդ փողոսեալ յատականիչ գայլուէն, արիաբար պա-
տերազմէր և ընդ այն եւս օձտոչ գազանին։ Յայնժամ
միաբանեալ լինէին Ասպղնապետքն ընդ Արիանոսքն
և ընդ Հոլեմարտոսն երբեմն գչարափառ արս Հակառա-
կեալ ընդդէմ Գրիգորի։ Վասն զի տեսանէին զինքեանս
պարտեալս՝ ի չշմարիտ բանէ նորա վարդապետու-
թեանն. և գտեալ դիպող ժամանակս իրեանց չա-
րութեանն՝ յարեան՝ ի վերայ առնն Աստուծոյ քարամբ
և բոլոք, որպէս երբեմն Հրեայքն՝ ի վերայ Ստեփանոսի։
Սակայն օգնականութեամբն Աստուծոյ Հոլանաւո-
րեալ՝ ի վերայ նորա՝ անպարծ առնէր զպայրացումին. և
որպէս յայնժամ անտեսութեամբ դատապարտեաց
զՀրեայն՝ Աստուած Բանն, յորժամ յարուսան լե-
լինն հանեալ զահաւիժ հանդերձեալ էնն առնել զինա,
այսպէս և առ երանելեաւս պատճէլապարծէր։ Իսկ

1. Թերևս՝ զայս։

Գլխոցիսս ոչինչ զայրացեալ ընդդէմ դրդուեցեալսն
՝ի չարէն, այլ և նմանեալ իւրումն Տեառն հեզին և
խոնարհին՝ ոչինչ պատասխանէր, միայն հանդարտու-
թեամբ սաղմոսէր ասելով. Թէպէտ և դնացի ես՝ ի
մէջ ստուերաց մահու՝ ոչ երկեայց՝ ի չարեաց. զի դու,
Տէր, ընդ իս ես: Որ Թէպէտ և ոչ չարչարեալ լինէր,
սակայն վկայ առանց տանջանաց և պսակաւոր առանց
չարչարանաց միայն ՝ի յօժարութենէն երևէր. վասն
զի որպէս երանելի վկայքն ընդ հրապարիշտան, այն-
պէս և նա ընդ ուրացողան Քրիստոսութեանն պատե-
րազմէր, նմանող եղեալ սրբոց հարցն, երանելւոյն ա-
ւետ Պետրոսի Աղեքսանդրու հայրապետին և Աթա-
նասի:

Այդ այսոցիկ այսպէս եղելոյ՝ բռնադատեալ լինէր
՝ի բարեպաշտ ինքնակալէն և յուղղափառ կոչմանցն՝
հաստատել յաթոռ հայրապետութեանն Կոստանդիա-
նուպոլսի: Եւ այս յաւէտ յիրաւի. վասն զի ուր վար-
ուակք և քրիստոնէութեան՝ անդ և վարձ ժա-
ռանգութեան առաքելական աթոռոյն: Իսկ չարն
յօժամ եռեալ պատրեալ զինքն և զՔրիստոսութիւնն
թաղատրեալ, աւա՛ւ ապա զինչ արդեօք գործէր. յա-
րուցանէր զոմն Մաքսիմինոս անուն հակառակ Գրի-
գորի, որ էր ազգաւ եգիպտացի այլ և բարբարոս
բարուք, և արդեամբք և կերպարանօք, նաև գործովք
ևս առաւել. վասն զի զրոյակոմոլութիւն և զազա-
հութիւն անպատակաս կրէր չինաբեան իբրև զշուն.
նոյնպէս ամարդութեամբ և անողորմութեամբ յոյժ ա-
ռաւելեալ էր իբրև զնաբաջ, հմուտ և տեղեակ էր
նմանութեան Հելլենացւոց: Սա եկեալ զառաջինն
առ սուրբ Հայրապետն մեր Գրիգորիոս՝ աշակերտե-
ցաւ ՝ի նմանել, և վերամին ծննդեամբն լուսաւորեցաւ
՝ի նմանել. և այնչափ կեղծաւորութեամբն մերձաւոր
եղև սրբոյն՝ մինչև սպասաւոր և հանաձեղան ևս առ-
նել զինս: Ձեռս այսորիկ և սպասաւոր սեղանոյն և սար-
կաւագ, ապա և քահանայ ձեռնադրեցաւ, և այսպէս
վաստակեցաւ ՝ի դաս ժառանգաւորաց եկեղեցւոյն:
Ս.յԼ Թէպէտ և այսպէս բազում պատուոյ արժանա-
ւորեցաւ ՝ի սրբոյ Հայրապետէն, սակայն նմանեալ
Յուդայի, միշտ զչարութենէն ժողովէր ՝ի սիրտ իւր,

պատահանել զվարդապետն իւր, և առանձինն
փառասիրութեամբ մոլեալ՝ կամէր յափշտակել զա-
թոռ Հայրապետութեանն Թադէոսական քաղաքին
և ապա գտեալ դիպող ժամանակ իւրոյ չար գաւա-
չանութեանն, որ զի բարեպաշտ Թադէոսն Թէոդո-
էրթեալ յարևմուտս կոյս տալ պատերազմ ընդ բար-
բարոսն. իսկ Մաքսիմինոս գտեալ զոմն անուանեալ
քահանայ՝ ի Նիւսիա քաղաքէն հաւանեաց իւր, որ էր
ատացեալ ինքեան գործ զիտոյց վարձառականին կռա-
տանդինուպօլսի. ոսկս առեալ ոսկի բազում մատու-
ցանէին առաջի սինկղիտոսացն, որպէս զի տացեն նմա
զաթոռ Հայրապետութեան. և առեալ անտի իշխա-
նութիւն, առաքեն այլ ևս բազում գանձս ոսկւոյ և
արծաթոյ Յովհաննդրիա առ Պետրոս եպիսկոպոս,
որ ունէր զաթոռ սուրբ աւետարանչին Մարկոսի
զինի երանելւոյն Աթանասի: Որ և նոյն ինքն իմա-
ստուն Գրիգորիոս՝ ի նմանէ հաստատեցաւ յաթոռ
Կոստանդինուպօլսի: Այլ իբրև ընկալաւ զոսկին՝ ոչ-
ինչ հարցաքննեաց զվարս առնն, այլ վաղվաղակի ա-
ռաքեաց զոմն եպիսկոպոս ձեռնադրել զնա:

Իսկ յորժամ եկին առաքեալքն և մտին յեկե-
ցին՝ ի ժամատուրսն, ոչինչ զգացուցանեալ հայրա-
պետն և այլոց ժառանգաւորացն, նաև ոչ բարեխո-
հոյ կողմանց ժողովրդեանն, այլ իսկ և իսկ ձեռնա-
դրութեան սկիզբն արարեալ հոգւս առնէին: Իսկ յոր-
ժամ լուաւ և յականջս կղերիկոսացն և ժողովր-
դեանն՝ բարեբարեցան նախանձու չարութեան, և հա-
ւաեալ՝ ի վերայ խափանէին զանկարգութեան առաջ-
արկութիւնս նոցա. զոր հաղիւ ուրեմն մաշատուրծ
լեալք փրծանէին՝ ի խաւսիլ անքօսին: Իսկ ա-
պա նոքա քանզի ապահովութեամբ և փառասիրու-
թեամբ արբեալք էին՝ ոչ՝ ի բաց կացին՝ ի նանրոյ խոր-
հրդոցն, այլ գործակից առեալ ինքեանց զոմն եպիս-
կոպոս յեկեղեցւոյն, և երթեալք ձեռնադրեցին զԱթա-
նաս՝ ի տան ռամկի ուրումն: Զայս լուեալ բազմու-
թիւն քաղաքին բարբարեալ սրտմտութեամբ յարձա-
կէին՝ ի՛վերայ նոցա, եթէ ոչ սրբոյն Գրիգորի արձա-
կեալ լինէր զպայրատումն նոցա: Որ թէպէտ և այս-
պէս կարձեալ լինէին յանդուգն յարձակմանէն, սա-

կայն բազում պարտաւանս հեղուին ի վերայ Մաքսիմոսի. այլ և յոյժ մեղադիր լինէին սրբոյն Գրիգորի, որ այնչափ զնա առ պատուականս ունելով՝ յայտական յանդգնութեան համարձակեաց։ Իսկ երանելին հեզութեամբ և հանդարտութեամբ ցածուցանէր զամբասանսն. Մի բարկանայք, ամ որդեակք, զի ո՛չ գիտէ ըզ միտս մարդոյ, բայց եթէ այն որ ստեղծն զնա, որ և ի միտ առնու զամենայն զհանդերձեալսն իբրև զեղեալս, վասն զի մարդ հայի յերեսս քան աստուածային գրոց. այլ և աշակերտեալ մեր Հիմնական վարդապետին Միածնի որդւոյն Աստուծոյ, և զամենեսեան կոչէ ընդունել զբաղցր լուծ նորա և ըզթեթև բեռն. որ և ասացն իսկ, եթէ՝ Որ գայ առ իս ոչ հանիցս արտաքս։ Նաև այս մեծ էր Մաքսիմոսի վկրտել ինձ զնա առ ի պաշտել զՆերսիսեանն փոխանակ Աստղանի. զի ոչինչ պակաս եգիտ ի հինըզբանէն որ առնա, որպէս և Տէր մեր Յիսուս Քրիստոս երևեցոյց առ մաանիէն, և ուսոյց մեզ. վասն զի և այսպէս պարտ է մեզ կատարել զոր առաքն, Թէպէտ և նա յետոյ եցոյց զծածկեալ հեղձատրութիւն իւր։ Եւ այսպէս խաղաղացուցանէր զժողովուրդն։

Իսկ Մաքսիմոս ի նոյն միտս յամառութեան կացեալ անզղջանալի, առեալ զձեռնադրողն ինքեան զեպիսկոպոսան Եգիպտացւոց՝ ընդ առաջ ընթացեալ բարեպաշտ ինքնակալին Թէոդոսի ի Թեսաղոնիկէն, խնդրել զաթոռ Հայրապետութեան Կոստանդնուպոլսի. քանզի եկեղեցականաւքն ոչ կարաց, հնարէր Թագաւորական իշխանութեամբն յափշտակել զաթոռն։ Իսկ բարեպաշտն Թէոդոս բարկութեամբ հրամանն ետ հանել զնա յերեսաց իւրոց, այլ և մեծամեծ սպառնալեօք ի Թագաւորական քաղաքէն հալածել։ Իսկ նա Թէպէտ և այսպէս տեսեալ զինքն ամօթալից եղեալ յամենայնի, սակայն փառամոլութեամբն անզգայացեալ՝ տակաւին ևս լըքէր. և երթեալ Աղեքսանդրիա և տուեալ ոսկի բազում եպարքոսի քաղաքին՝ որպէս զի անդ յափշտակեսցէ զաթոռն Պետրոսի. զոր իբրև լուեալ բազմութիւն քաղաքին Աղեքսանդրու՝ մեծ բարկութեամբ դղրդեալ լինէին։ Զոր եթէ ոչ նոյն ինքն եպարքոս քաղաքին

խաղաղացուցեալ էր զաղմուկն, քաղեմ սպանու-
Թիւնք գործեալ լինէին։ Յայնժամ ապա Հալածէր
զնա Աղէքսանդրէ, զոր և յետոյ իսկ ընկալաւ զՀա-
ւատումն չարաչար Հարուածովք ըստ արժանի յան-
ղգնութեան իւրում։

Ա.րդ այսոցիկ այսպէս եղեալ՝ մեծն Դրիգորիոս իբրև
խնդաց զասպականիչ Հերձուածն, և Հաստատեաց զար-
մատս առաքինութեան՝ ի Կոստանդինուպոլիս, կա-
մեցաւ անդրէն դառնալ՝ ի քաղաք իւր, մանաւանդ
Թէ յանդրադարձական կեանս իւր. և ժողովէր զամե-
նայն բազմութիւնն, խրատէր զնոսա պահել զՀնչման-
րիտ աւանդութիւնն, զոր ընկալան՝ ի նմանէ, և զա-
ռաքինութիւնն՝ զոր արդեամբք նախանձեցոյց և ու-
սոյց նոցա։ Զոր իբրև լուան՝ ի նմանէ զՀրաժարական
բանն՝ բազմութիւնն ժողովրդեանն Հանդերձ ժա-
ռանգաւորօքն, ամենեքեան զմի արտասուս կաթեցու-
ցանէին. և զաղաղակ բարձեալ առ Հաստատակ ծերք
և տղայք, արք և կանայք, իշխանք և ռամիկք, իմա-
տունք և տգէտք, միաձայն ողբս՝ ի բերան առեալ
լային զտրտմութիւնն իւրեանց՝ ի քաջ Հովուէն։ Յայն-
ժամ մի ոմն՝ ի ժողովրդենէն իմաստութեան բանս
բարբառեցաւ առ նա, այսպէս ասէր մեծաւ ձայնիւ.
Ո՛վ Հայր սուրբ, դնաս՝ ի մէնջ, կարծեմ Թէ և դա-
ւանութիւն սրբոյ Եկեղեցւոյ դնաս՝ զոր բազում քրի-
տոնէք Հաստատեցեր՝ ի քոց բառնայ՝ ի Հօտէ քումմէ
մէ. վասն զի արդ Հօտ առանց Հովուի գոլով՝ կարիցէ
զդէմ ունել բազում դայլոցն ոլոր նորաձայնութեամբ
իբրև պատառոտել ժանիւք վարատեն՝ ի սուրբ ուղղա-
փառ դաւթէ եկեղեցւոյ։ Զայս լուեալ սրբոյն՝ Հաւա-
ներ կալ անդէն յեկեղեցւոյն՝ մինչև ցՀաւաքումն
ժողովոյն, որ Հրամայեցաւ լինել՝ ի բարեպաշտէն
Թէոդոսէ, որպէս զի փոխանակ նորա զայլ ոք ձեռ-
նադրեսցեն վերատեսուչ Հոգւոց նոցա։ Եւ այսպէս
Հաւանեալ ժողովոյն զնացին յիւրաքանչիւր յարկս։

Իսկ երանելոյն այնուհետև ընդարձակապոյն վար-
դապետութեամբն զամենեսեան լուսաւորէր, և իբրև
իմաստուն երկրագործ զամենայն ճշմարտական ար-
տաքս Հանէր յանդոյ եկեղեցւոյ Քրիստոսի. որպէս
զի սերմն Հշմարիտ առաքելական վարդապետու-

Թեանն յամենայն վերապարտաց արտաքոյ եղեալ պղատոնէս ասէ։ Վասն զի պարտ է մեզ, ասէ, զոր առաքեալքն բազում երկամբք սերմանեցին աշխատեալ, որպէս զի զնոյն յաստուածային շնորհացն ժողովեսցուք. վասն զի հասարակաց է վայելումն. զի ոչք սերմանեցին, ասէ, և ոչք հնձեսցեն՝ առ հասարակ ցնծասցեն։ Նաև ոչ թէ բանիւք միայն ուսուցանել, այլ և առաւել արդեամբք զինքն ամենեցուն յայտնի ցուցանէր, ըստ առաքելական խրատուն՝ որ առ Տիմոթէոս. Օրինակ լինիջիր, ասէ, հաւատացեալց՝ բանիւք, գնացիւք, հաւատով, սիրով, մինչև գամ ես. վասն զի յայտնի առաւել ձգին աշակերտք զինի վարդապետաց, քան թէ որ բանիւք միայն Հարտարեալ։ Վասն այսորիկ և երանելին Գրիգորիոս յամենայն աշխատութիւնս որ առ ժուժկալութիւնն էր՝ նախ ինքն համբերէր, և այլոց ուսուցանէր։ Խոկ զողջախոհութիւն և զնեզութիւն և զքաղցրութիւն՝ առաւել ևս կրէր յինքեան։ Նաև զխոնարհութեան ըզբանն ոչ առ ամենեսեան հաւատարապէս հաւատարացուցանէր, այլ նմանեալ իմաստուն բժշկաց՝ ըստ իւրաքանչիւր ցաւոց զդեղն բարժանէր։ Վասն զի առ անկատարսն՝ ոչ զկատարեալ խորհուրդն վստահանայր. և՛ի կատարելոցն ոչ թաքուցանէր, իբրև յաչխեալ զօգուտ նոցա. նոյնպէս և առ յանդիմանութիւնս, զոմանս՝ առանձինն, որոց ոչ յանցանքն յայտնի էր. խոկ զյայտնիսն՝ հրապարակաւ, որպէս զի և այլքն երկիցեն. զոմանս սակաւուք, որպէս և Տէր խոկ հրամայեաց, և երանելի առաքեալք նորին. ոմանց զսպառնալիս տանջանացն առաջի դնէր և զայլոն յորդորէր անձառ խոստմանցն. ոչ ընդ միապաղաղութիւք մեղիւր առ դժուարութիւնն, և ոչ առ նախատանս հակառակողացն թուլանայր՛ի լաւագունիցն։ Նաև բանք նորա յոյժ քաղցրագոյնք էին և խոնարհապոյնք իբրև զմեղր, որպէս զի զամենեսեան ախորժեալ ձգէր առ ինքն՝ յոյժ վասն առաքինութեանն խօսէր. խոկ՛ի յաւանդութենէն՝ յոյժ բարձրագոյնք էին բանք նորա, յոյժ վասն սրբոյ երկիւղածութեանն աստուածաբանութենէն իմաստասիրէր, զնոյն օրինակ բերելով ոմոյ և զանուն ընկալաւ,

վեճն առեմ, և զարժանի զարմացման զոլովին Որոմանն, զառաւածաբան զաւետարանչին Յովհաննէս. ունէր և զհոգին խնամառութեան և գիտութեանն. պակաս և յայտնի խակ ցուցանեն աշխատասիրացն՝ Հառք վարդապետութեան նորա։ Նաև՝ի մարգարէութենէ ոչինչ նուազեալ գտանիր, պակաս և ասէ խակ ինքն՝ի միւսմ Հառկ անդ խօսի՝ որ՝ի գալուստ եպիսկոպոսացն. յորժամ[1] լինի զՅովհէփ Յեգիպտոս առեալ թեամբ յետ փոքր ինչ վաթսուն ելեալ։ Այծ և՝ի մէջ զմարգարէն, ասէ. Այդ Յեգիպտոսէ փոխեցեր, Հաներ զՀեթանոս և զնոսա անկեցեր. և որ զինի առացեալն է՝ի մարգարէին։ Եւ ապա յառաջ մատուցեալ ասէ. Ո՞յք, ասէ, լերինք այնպիսիկ, և զայս ոմանս ըզմայրան զայնոսիկ խնամայր. այնպիսի երբեմն Հաւատս այս. և այսպէս այժմ բազի առացուածք և ընդարձակեալ։ Եւ եթէ ոչ ևս կատարեալսպէս՝ այլ սակայն յայնոսիկ առ սակաւ սակաւ Հանապարհոլորեցաւ յաւելուածս, մարգարէանամ ինչ և Հանապարհորդեացէ։ Զայս ինձ Հոգին սուրբ կանխաւ ասէ, եթէ ինձ մարգարէական ես և տեսանող առաջիկայից, և միանգամայն կանխաւ ժամանեցելոլքն վատահանամ։

Եւ արդ ոչ Հեռագոյն լինէր, այլ անդէն խակ՝ի մօտոյ մարգարէութենն երանելոյն կատարէր՝ի ժամանակս բաբելապաշտին Թէոդոսի, իբրև զՀառագայթս արեգականն այնպէս ծագեալ Հաւատքն ուղղափառ վարդապետութենն ընդ ամենայն տիեզերս. եկեղեցիք Քրիստոսի աՀեցեալ բազմացան իբրև զաստեղս երկնից։ Եւ զինչ պարտ է ասել, թէ ուրշափ ծովախմբութեամբ Հառիւք զարդարեաց զեկեղեցիս ուղղափառաց, և կամ ուրպէս խմաստք նորա բարձրագոյն է քան զբազմայ։ Խակ վասն Հեզութեան և քաղցրութեան նորա՝ թէ ուրշափ էր, արդիւնքն վկայէ, զոր՝ի ժամանակին յայնիկ ցուցանէր. զոր ամենեցուն բաւական է ստանալ, եւս առաւել վարդապետաց, որպէս և նոյն ինքն Հաստատեաց վարդապետն մեր Յիսուս Քրիստոս ասելով եցոյց և ուսոյց։ Զի՝ի ժամանակս ուղղափառաց

1. Հաւատաւածք յորժամ... Եփրհանամ եղծեալ էր յօրինակին։

զոր առին իշխանութիւն ՚ի վերայ հերձուածողացն, միշտ ինքեանքեր երանելին զգայրացումն նոցա առ ՚ի հատուցանել չար փոխանակ չարին նոցա։ Եւ առեր այսպէս. Մինձ ոչ զայս պահանջէ ՚ի մէնջ Քրիստոս, որդեակք. միթէ ոչ այսպէս ուսուցանէ զմեզ աւետարանն, դարձուցանել զմեղուցեալն յապաշխարութիւն, և զմոլորեալն ՚ի գիտութիւն ճշմարտութեան. որպէս զի այժմ ծանուցեալ զմեզ իւրեանց, անկցին առաջի Տեառն խոստովանութեամբ. և խառնեացին ՚ի հաւատս սուրբս, նախ քան զգալ աւուրն վրէժխնդրութեան ամենայն մեզաւորաց որք ոչ ապաշխարեցին. և վասն այնորիկ բազում խնամատարութեամբ երկայնամիտ լերուք ՚ի վերայ նոցա, ոմ դուք արք կատարեալք. զի և ոչ միայն պարտ է նեղել նոցա, այլ և սիրել և բարի առնել և զՄտուածոյ աղաչել, քանզի և զայսոսիկ պատուիրեաց մեզ Քրիստոս։ Իսկ եթէ ՚ի վերայ այսր ամենայնի ոչ զղջասցին, այլում աւուր դատաստանի և դատաւորի գնոսա Թողացուսցուք. վասն զի ինքն ասաց. Իմ են վրէժխնդրութիւնք, ես հատուցից, ասէ Տէր։ Եւ այսպիսի բանիւք հեզութեամբ և հանդարտութեամբ ուսուցանէր նմանս ժողովրդեանն։

Իսկ բարեպաշտ Թագաւորն Թէոդոս՝ իբրև վանեաց զբարբարոսն որ յարևմուտս, և դարձաւ յաղթութեամբ մեծաւ, բազում աւար և գերի ընդ իւր բերելով ըստ արժանի նոցա անպարշտութեանն. և ընկալաւ զսուրբ քահանայապետն Ամուծոյ մեծաւ պատուով։ Եւ ըստ արժանի նորա վաստակոցն՝ ընդարձակագոյն քան զառաջինն և շնորհակալութեանն մատուցանէր նմա, և ՚ի կատարման իւրոյ գործոցն այսպէս ասէր. Ո՛վ հայր սուրբ, կարծեմ եթէ յաւուրս իշխանութեանն Ամուծոյ վատահանալ ՚ի քո աշխատասէրդ իմոյ թիւնդ՝ զեկեղեցի իւր, թոյլ եւ ժամանակ ի պատերազմողացն յառնել ՚ի վերայ քո, որպէս զի յաղթող գործութեամբն իւրով՝ զկարծեալ գործութիւն թշնամոյն պարտեսցէ քեւ, և զեկեղեցի իւր մեծամեծ յաղթութեամբք պահեսցէ։ Բայց վասն զի քո է վաստակն և քերդանն, քո եղիցի և պահն. և ես ահաւասիկ տաց զուարճալս

զայս և զաթոռ Հայրապետութեանս, մնանաւանդ և նոյն ինքն Աստուած քեզ յանձն արար զսա։ Իսկ ետանելին լի եղև ընդհօք Հոգւոյն սրբոյ, ետ ողջոյն Թագաւորին և աղօթիւք հաստատեաց զամենապարզև Թագաւորութիւնն նորա, և ել՝ ի նմանէ։

Արդ մինչև ցայսվայր արիանոսքն ունէին զաոուն Աստուծոյ, և վասն այնորիկ երբև լուան՝ ի Թագաւորէն՝ պատերազմէին ընդ սրբոյն։ Քանզի յայտնի ոչ էշխէին՝ ի յահէ Թագաւորին, սակայն՝ ի ծածուկ մարտնչէին։ և երբեմն զի առ նա իսկ եկեալ պաղատանս մատուցանէին, որպէս զի խնդրեսցէ՝ ի Թագաւորէն դարձուցանել անդրէն՝ ի նոսա զտաճարն սուրբ. և այսպէս զաղտնի և յայտնի սպառազինէին ընդդէմ նորա։ Եւ յաւուր միում խորհուրդ արարին դաւով սպանանել զնա՝ ի դիշերի սրով. և քանզի զայս ոչ կարացին գործել վասն բազմութեանն որ կայր շուրջ զնովաւ, սակայն երկոքին կողմանքն՝ ի միաբանս յարձակեցան սուսերամերկք երբև՝ ի պատերազմունս բարբարոսաց. նաև՝ ի փողոցամէջս քաղաքին ուր և հանդիպէին՝ կապէին ընդ միմեանս. բազում հաւասանք լինէր այնուհետև կանանց և տղայոց՝ ի բազմութենէ երկոցունց կողմանցն։ Եւ եղև յաւուր միում մինչդեռ մատնէր Թագաւորն յեկեղեցին՝ հանդերձ հայրապետաւն՝ ի ժամ առաւօտուն, և եղև մատուցեալ զարեգական՝ շուրջ առեալ զարեգական ոչ սուրբ Աստուածոյ. երբև տեսին զայս արիանոսքն խնդալից եղեալ՝ կարծեալ որպէս թէ վրէժխնդիր եղև նոցա Աստուած փոխանակ՝ ի բաց հանելոյ զնոսա՝ ի տաճարէն Աստուծոյ. և յայնմանէ բազումք՝ ի պարզամտաց կողմանց ուղղափառացն՝ երկմտութեան կարծիս բերելով՝ ի միտս իւրեանց դայթակղէին։

Իսկ երբև մտին՝ ի տաճարն սուրբ՝ հայրապետն և Թագաւորն հանդերձ բազմութեամբ ժողովրդեանն, և միաբան համբարձին զձեռս իւրեանց մեծաւմեծք և ամենեքեան, արք և կանայք, ծերք և տղայք, լի արտասուօք պաղատանս ամենատեառն մատուցանէին։ Եւ յանկարծակի մինչդեռ էր կատարեալ նոցա զօրհնութիւնն՝ ի բաց գնացեալ ամպոյն և մառախղոյն, ծա-

գեաց լոյս արեգականն առաւել քան զսովորական պայծառութիւնն, և տաճարն Աստուծոյ հրաշալի լուսով լուսաւորեցաւ, և միտք մարդկանն առաւել ևս հաստատեցան՝ի սէր սրբոյ հայրապետին: Եւ սկսան միաձայն միով կամօք աղաչել զԹագաւորն, որպէս զի տիրապէս հաստատեսցէ յաթոռ հայրապետութեանն: Իսկ երանելին քանզի ոչ ախորժէր զայսպիսի գովեստեան բանս ընդունել, դժուարէր ընդ վայրաձայն նուիրիւն ժողովրդեանն. յայնժամ՝ի ձեռն առն Աշմարտախոսի լուել հրամայէր ժողովրդեանն. քանզի ինքն իսկ ոչ կամէր խօսել ընդ ժողովրդեանն, առ՝ի յոյժ նուազելոյ ձայնին՝ի յառաւելութենէ ժուժկալեանն. Ո՛վ որդեակք իմ, լուեցէք յայդպիսի ձայնէ. քանզի Թէպէտ և ոչ կամիմք մեք՝ սակայն հարկ՝ի վերայ կայ զմատակարարութիւն շնորհացդ Հոգւոյն սրբոյ որ հաւատացաւ մեզ՝ՙի գործ արկանել. զայս առացեալ լուեայ ժողովուրդն: Իսկ Թագաւորն յոյժ զարմանայր ընդ առաւել խոնարհութիւն առնն ի մասանոյ: Եւ այսպէս ժողովուրդն ուրախութեամբ մեծաւ գնայր հիւրաքանչիւր յարկս. և պատերազմին դադարեալ, և հողմակոծեալ նաւն եկեղեցւոյ՝ի նաւահանգիստն եհաս, և սուրն մերկացեալ՝ՙի պատեանս ժողովեցաւ: Եւ այս ամենայն եղև և կատարեցաւ՝ՙի ձեռն աստուածասէր Թագաւորին և սրբոյ հայրապետին:

Իսկ երանելին Գրիգորիոս Թէպէտ և ոչ կամէր, վասն զի յոյժ հաճեալ էր ընդ անզբաղութեան միանձնութեանն, սակայն բռնադատեալ՝ՙի Թագաւորէն և՝ՙի բազմութենէ ժողովրդոցն հաստատեցաւ յաթոռ հայրապետութեանն: Իսկ Թագաւորն երբեմն արդարոյ և սրբոյ հօր և հայրապետի և քահանայապետի Աստուծոյ՝ զարժանի պատիւն բարձրանեաց նմա. զի Թէպէտ և արտաքնոց իմաստից չէր տեղեակ բայց երեսաշան Թէոդոս, սակայն հեզութեամբն և հանդարտութեամբն և ուղիղ դատաստութեամբն և խոհականէր մտօք առ եկեղեցին՝ յոյժ առաւելեալ էր քան զամենայն Թագաւորսն. նա և ազօթիւք մատամբք՝ և առ առաւել, քանզի յայն առաւել պարապէր քան՝ՙի Թագաւորական հոգսն: Իսկ երանելին Գրի-

զորիս Թէպէտ և զԹագաւորն այսպէս բարեպաշտութեամբ տեսանէր զարդարեալ, սակայն ոչք առաջի կային Թագաւորութեանն նորա՝ զնոսա տեսանել՝ լավ՝ի կաշառս և յարծաԹախրութիւն և՝ի զարդանա, որ մանաւանդ նմա արհամարհեալ և ատելի էր, և վասն այնորիկ ոչ յաձախ պարապէր մտանել անդր, այլ և աղօԹից և տքնութեանց և վարդապետութեանց և հնազանդ այցելու և բժիշկ կարի ուռեալ վտիԹ էր, և վասն այնորիկ յապաղէր զմտանելն իւր առ Թագաւորն. և երբեմն զի յագարակս հեռանայր լուսԹեան տալոյ զինքն, զի յոյժ փափաքելի էր նմա անապատս: Այլ այսպէս յամենայնի աշխատասէր էր երանելին. իսկ՝ի յապարանն Թագաւորի և իշխանի մտանել՝ յապաղկոտ էր: Նաև վայելչապէս՝ի մոխ ունէր զառաքինասիրն բանն. և տուն քարեկամիքս, ասէ, մի յաձախեր բազմակոխ լինել, զուցէ առիԹ տայցէ ինձ: Եւ այսպէս քաջ հովիւ երևեցաւ նմա նեալ Տեառն իւրում: յամենայն երկրաւորաց՝ի քաղցեալ լինելով, զի յայնքան առատուԹենէ մտիցն եղելեցոյն, ՝ի զանազան զարդուցն և յապրի ապրի պատուական անօԹոցն և յանբաւ զանձուցն՝ ոչ տաց անձին իւրում և ոչ միոջէ՝ի դանդ մի, այլ զամենայն աղքատաց և որբոց և այրեաց հրամայէր մատակարարել. նաև զծախս ապարակացն վիճակի եկեղեցոյն ոչ չքդիս պահանջէր՝ի մատակարարացն. և ոչ զիւրս քաւակցն հատուցանել խնդրէր, զի զայս այսպէս առնել, ասէ, վաՃառականացն է՝ քան Թէ արանց եկեղեցականաց և իշխանաց, այլ ոչ եԹէ եպիսկոպոսաց. այլ մեզ, ասէ, պարտ է նախ քան զամենայն զանձանց զիւրոց մտաց մաքրել, և ապա յամենայնէ պարապել, միայն զամենեսեան խրատել և ուսուցանել զաւաքինութիւն ոգւոց: Յայնմ ժամանակի հասանէր հիւանդանալ նմա մեռ՝ի մահ, և անկեալ դնէր երանելին՝ի վերայ վանդակապատ մահճացն՝ի տեսանել զնա իջուցեալ զոտս իւր՝ի վանդակապատէ անտի՝ նաև՝ի վերայ յատակի տանն և հարցանէր զպատճառն: Իսկ նոքա ընդհանդիր էին՝ի

նմանել, աղօթս առնել՝ի վերայ թագաւորին և ինքեանց, այլ և՝ի վերայ ամենայն ուղղափառաց եկեղեցեաց. և նորա աղօթս արարեալ՝ի վերայ նոցա, ուրախացեալ գնացին՝ի տուրբ Հայրապետէն: Իսկ մանուկ մի ինոց անտ, և բուռն հարեալ զտից սրբոյն լայր և կոծէր, և եղուկ զինքն ասելով, և պատէր առ նա թողուլ նմա զայնցանս իբր. իսկ նա հարցանէր զպատճառս պատասխանացն. և նա ոչինչ տայր պատասխանի, բայց միայն զլխակոխեալ ողբայր և խնդրէր զքաւութիւն: Իսկ մի ոմն յայնցանէ՝ որ մօտ կային՝ ասէ ցնա. Ով հայր սուրբ, պատանիդ այդ սպանողն քո է, որ հանդերձեալ էր՝ի սպրելոյ ունոյց դաւաճանութեամբ իւիք զսուր իւր միսել՝ի քեզ, այլ պահպանողական աչ Քրիստոսի որ մերձ էր առ քեզ՝ ոչինչ եւս խոտհրդոյ նոյա յանդ եւլանել. իսկ սա պատէս Թէ յիւրմէ կողմանէ կատարեաց ըզյանդգնութիւնն, և վասն այնորիկ ողբս՝ի բերան առեալ լայ և կոծի:

Յայնժամ երանելին յարտասուս եղեալ խանդաղատէր՝ի վերայ նորա ասելով. Մի երկնչիր որդեակ, հաշտեացի ընդ քեզ Քրիստոս, բարերարն և մարդասէրն և անոխակալն, միայն խոստովանեա զմեղս քո և նզովեա զսիղծ հերձուածն, և մատիր առաջի Աստուծոյ ուղղափառ դաւանութեանն: Եւ այսպէս մխիթարեր զինա վարդապետական ընորհօք, և հաստատեալ՝ի Հշմարիտ հաւատս և խաղաղութեամբ արձակէր: Իսկ քաղաքն ամենայն իբրև լուան և տեսին զայսպիսի անոխակալութիւն և զբարեգթութիւն սրբոյն՝ առաւել ևս հաստատեցան և բևեռեցան՝ի սէր նորա:

Յայնմ ժամանակի գային ժողովէին՝ի Կոստանդնուպոլիս հարիւր և հինսուն եպիսկոպոս, յամենայն կողմանց՝ որ ե ընդ իշխանութեամբ Հռոմայեցւոց, բայց միայն Յունաց կայսրութեան. և այս եղև հրամանաւ ինքնակալին, որպէս զի՝ի ձեռն ժողովոյն հաստատեսցեն զՎրիգորիոս յաթոռ հայրապետութեանն. և զոր՝ի ժամանակին բուսաւ հերձուածն Մակեդոնիի՝ արտաքս խլեսցեն յեկեղեցւոյն Քրիստոսի: Եւ քանզի զհերձուածն ընդդիմամարտին Մակեդոնիի և զՆեստորի և զԱրիանոսի, և զապստամբս այլ՝ երանելին

Վլիդոլիոս իբրև զքաջ հովիւ նախ քան զգալ ժողովոյն հալածէր ի հօտէն Քրիստոսի. իսկ ի գալ ժողովոյն՝ պատերազմակից նոցա լինելով և զմնացեալ ևս նշխարս հերձուածոյն ի քայ վարեցին, նզովելով զանգգանդս նոցա։ Յայնժամ ապա տուրբ ժողովն հաստատեցին զՎլիդոլիոս յաթոռ հայրապետութեանն՝ որպէս և էր յառաջագոյն, ըստ կամաց Թադէոսի և ժողովրդոյն. և զայս արարին առաջնորդութեամբ սրբոյն Մելիտոսի եպիսկոպոսին Անտիոքայ, որ էր այր տուրբ և կատարեալ առաքինութեամբ. որ և ի ժամանակս Վաղեսի կայսեր քաղցր չարչարանս կրեալ յարիանոսացն, և բազում ժամանակս արտաստմանեալ ի մեռուղս վանս ուղղափառութեանն. արդ տուրս խորհրդակցութեամբ հաստատեցին զԼիդոլիոս յաթոռ հայրապետութեան Թադէոսի և զաւրութեան։ Նոքա թէպէտ և զաւրաւորք էին և զաւրացեալք ի վանս իւրեանց, սակայն վանն փոխաքանաց և վանն իւրոյ առաստաղարգև շնորհացն զոր ընկալեալ էր ի Հոգւոյն սրբոյ՝ զգան վարդապետութեանն աւ ի կարող գալ կերակրել զայնքան բազմութիւնն՝ յանձն առնուլ զվերատեսչութիւնն։ Եւ զարձեալ հաստիճէր գործ ի գալ ոք ի հակառակողաց ընկալցի զաթոռ հայրապետութեան քաղաքին, և իշխանութեամբ զբազումս կեաս գարձուցանէ ի չշմարտութենէն։ Վասն այսր ամենայնի լուծանէր զփոխաքսումն իւր որ աւ անզբաղ կեանս միանձնաւորութեանն. և հաւանէր ժողովոյն և երանելւոյն Մելիտոսի, հաստատէր յաթոռ հայրապետութեան։ Յայնժամ ապա վախճան հասանէր սրբոյն Մելիտոսի անդէն ի կոստանդինուպոլիս, և տուգ աւ բազմութիւն քաղաքին ի վերայ նորա։ Իսկ տուրբն Վլիդոլիոս ի մէջ ժողովոյն բարւոք զարդարեալ վայելչացոյց զօր կատարման նորա, զերեզմանական բանիւք վարդապետութեամբ։

Յետ սակաւ ինչ ժամանակին հասին և որք յԱդիաբենոյ էին կոչեցեալք եպիսկոպոսքն ի կոստանդնուպոլիս, միաբանեալ անդ էին նախատաց հարիւր և չիսն եպիսկոպոսքն։ Եւ ի մարդկեղէնն խորհուրդս անկեալ հակառակին ընդ ժողովոյն, որպէս թէ աւանց նոցա կամաց հաստատեցին զՎլիդոլիոս յաթոռ

Հայրապետութեան. ոչ եթէ առ ատելութեան ինչ նորա զայս առնէին, այլ վասն ժխտելոյ զնոսա ի նոցա կամացն ձեռնադրել ի ժողովոյն համախոհ լեալ նոցա՝ սկսան լծակից լինել. և ինքն զոմանս

զոր կենդանական ջրով Հոգւոյն սրբոյ ծնեալ յոր-
վայնէ քումմէ՝ հաւատովք մտացեր և աձեցուցեր։
Տուր զառաւելութիւն ընդհաց քոյ սիրոցաց քո-
ւոր զմնալեալ կեանս քո՝ ժողովրդեան քո. և այդր
Թերևս զաւակաւ՝ յորոց վերայ բազում ժամանակս
զհնութ կենաց քոյ մաշեցեր. որպէս զի ոչ՝ ի կեն-
դանութեան քում լուսաւորեցար՝ ի յորդառատ վար-
դապետութեանցդ քոյ, և՝ ի կատարմանն՝ ընկալցուք
զընդհս վարդապետութեանն՝ ի նշխարաց քոյ։

Զայս լուեալ երանելոյն յարտասուս եղեալ, և իբ-
րև զհայր զթած խանդաղատեր զնոքօք, և դար-
ձեալ սիրովն զնոսա, և հաւանեցուցանէր դադարե-
ցուցանել յողբոցն։ Եւ համբարձեալ զաչս սրտից նո-
ցոց առ Աստուած՝ աղօթս մատուցանէր, որպէս զի
անօրինեսցէ նմա զօգտակարսն ...։

1. Այդպէս յօրինակին։

Պատմութիւն վարուց Սրբոյն Գրիգորի Արեւելից Լուսաւորչին Հայոց

Աքանչելագործն Գրիգորիս էր՝ ի քաղաքէն Նէոկեսարու՝ ի ժամանակս Աւրելիանոսի կայսերի, հեթանոս ծնողաց որդի, այլ Աստուած յոտնկայնէ ընտրեաց և որոշեաց զնա: Վասն որոյ՝ ի զարգացմանէ հասակին տղայութեամբ՝ անուսոտի ընտանեցաւ, և Քրիստոսի ընծայեցաւ. հրաժարեալ յամենեցունց, ՚ի բաց կացեալ՚ի հասակակցացն, ՚ի տեսարանացն, ՚ի պաշտեալ պատմուճանաց, ՚ի փափկութենէ, ՚ի գինարբուաց. լինէր նմա առաջին ստացուած առաքինութիւն, և նախ քան զայն երկիւղն Աստուծոյ. և նոցին լծակից իմաստութիւն և ուսումնասիրութեան փոյթ. և ապա դաստիարակ զժուժկալութիւնն ունէր. իակ անհպարտութիւն և ընչից արհամարհանք՝ ընդառաջեայ էր նորա: Որպէս Աբրահամ թողեալ զերկիր ծննդեան իւրոյ զհետ գայր կոչմանն, նոյնպէս և մեծն Գրիգորիս թողեալ զմոլորական հարց իւրոց աղանդն, խնդրեաց զարդար և զճշմարիտ հաւատն. և եկեալ՚ի խորհրդական ծնունդն, որպէս ոչինչ աղտ ունելով առ մեզաց լուծումն, այլ զնոյն ինքն զՔրիստոս զգեցեալ վկրտութեամբն:

Իակ յարգուն հասեալ զնաց յԱղեքսանդրիա յուսումն իմաստասիրութեան, առաւտապէս մօտ եղև կառարեալ փիլիսոփայական արուեստիւ. և հմուտ

յոյժ հին և նոր կառավարանացն. և ունէր միտս անհամեմատս այլոց մանկանց, զի էին ամենայն ուսեալք հաւաքեալք ի Հելլենացւոց յուսումնս հիմաստասիրական և բժշկական. և նախանձեցան ընդ Գլխպոլի անարատ վարսն, և սրբամիտ գոլով յոյժ խորհեցան արատ ինչ յարել յանարատն Գլխպոլիոս: Վարձեցին մի պառնիկ և ածին յանդիման նմա, որ եկեալ ասէր. Թէ տուր ինձ զոր խոստացար՝ զվարձ պառնիկութեան. և ամենեքեան բարկանային ինոջն: Իսկ սուրբն Գլխպոլիոս ոչ շարժեցաւ, և ոչ ասաց ինչ ընդդէմ պառնիկին կամ դաւաճանողացն, ոչ վկայս կոչեաց, և ոչ երդմամբ զերծն ի բաց մերժեաց. այլ առաւ մի որ հոմանի էր պառնիկին, և նենգութեան առաջնորդ, ասէ. Ա՛ռ զարծաթդ և հասո պառնիկին, զի մի խափան եկեալ թախանձեսցէ զիս: Եւ մինչդեռ դայր կինն և առնէր զարծաթն ի ձեռին զգըպարտութեան գինն, լինէր յԱստուծոյ արդարոյն վկայութիւն և զպատարաչացն յանդիմանութիւն. զի խակոյն ըմբռնեալ ի դիւէն գալարէր, և առնալով անկանէր առաջի ա՛հաւոր բազմութեան քաղաքին, հերացն ցցուելով, և ձեռօքն ցտեղով, աչացն շրջելով, և ի բերանոյն փրփուր բերելով. և կամէր խեղդել զինա գնա, եւ եկեալ սրբոյն Գլխպոլի կարդաց զանուն Աստուծոյ ի վերայ նորա, և անդէն բժշկէր ի դիւէն, ընդ որ հիացան ամենեքեան. այս առաջին մանկութեան այնորիկ պանչելիք:

Եւ ընդ արտաքին իմաստութեանցն անցեալ ընդ ուսումն՝ աշակերտէր Որոխինեսի մեծի վարդապետի, հանդերձ Պերմեղիանոսիւ աշակերտակցաւ ի նոյն դաւառէ. և առ մեծին Որոխինէ ուսան սուրբն Գլխպոլիոս և Պերմեղիանոս, որ եղև յետոյ եպիսկոպոս Կեսարու Կապադովկացւոց, զամենայն ուսմունս: Զի էր լի և կատարեալ ամենայն գիտութեամբ զարմանալին Որոխինէս, բազում գիրս շարադրեաց. և իբրև զգանձս ոսկւոյ և արծաթոյ ժողովեալ զամենայն կատար ընտրս՝ Գլխպոլի՝ դառնայր յաշխարհն իւր. առ որ ժողովեալ ամենայն ազգն՝ հրապուրէին զնա՝ի վարս աշխարհին արկանել, զոր և ոչ լսել յանձն էառ, այլ և հրաժարեալ էտ զինքն Աստուծոյ,

Ընդ այն ժամանակս Փիղիմոս էր եպիսկոպոս Ա-
մասիոյ մետրապոլիտ. որոյ յաստուածոստաո առեալ
հրաման՝ ձեռնադրել զԳրիգոր՝ի քահանայութիւն:
Նորա լսեալ փախեաւ Ճանապարհ երից աւուրց՝ի հե-
ռաւոր տեղիս. և Փիղիմոս լինդրէր զնա: Եւ տեսա-
նէր մեծն Գրիգորիս՝ի տեսլեանն, զի Փիղիմոս ըստ
օրինի քահանայապետի ձեռնադրէր զնա՝ի քահա-
նայութիւն, եդեալ զձեռն՝ի վերայ գլխոյ նորա. և
ձայն եղև առ նա. Կայջիր Գրիգորիս՝ի տեղւոջդ,
զի ձեռնադրեցից զքեզ Փիղիմոս. որ վաղվաղակի
անդր հասանէր՝ ուր Գրիգորիոսն էր, և ձեռնադրէր
զնա ըստ տեսլեանն Աստուծոյ՝՝ի քաղաքին, ուր
հանդիպեցաւ, որ էին կուսապաշտք: Բայց միայն եօթն
և տասն ոգիք՝ որ էին քրիստոնեայք. ընդ այնպիսի
լծով մեռեալ հայցէր յԱստուծոյ ուսանել զուղիղ հա-
ւատոյ զխոստովանութիւնն:

Յայնժամ հակելով նորա և հոգալով, տեսանէր՝ի
տեսլեանն ծեր ումն քահանայ վայելուչ ընտրհալից ե-
րեսօք հրեշտակական ձևով. հրաշայեալ ընդ տեսիլն
և հիացեալ Գրիգորիոս՝ կամէր ուսանել թէ ով էիցէ
և կամ վանն էր երևեցաւ: Նակ նա հեզ ձայնիւ ա-
սէր. Յաստուածային հրամանէն երևեցայ քեզ, ուսու-
ցանել զՀնմարիտ հաւատն: Եւ նա լինդութեամբ և եր-
կիւղիւ լցեալ: Այսպա սքանչելի ծերն մատամբ ցուցա-
նէր նմա այլ տեսիլ սոսկալի. կին ումն ահաւոր չոյժ,
շուրջ փակեալ պայծառ լուսով. և զն էր խորին գի-
շեր՝ ոչ կարէր բերել զաստուածութիւն լուսոյն: Յայն-
ժամ նա՝ի ձայն անուանդ խոստակցութեանդ կոչելով
իւրաքանչիւր ուրուք զինքեանս ծանեաւ զնոսա: Կինն
գեղեցիկ՝ Մայր Տեառն, և ծերն՝ Յովհաննէս աւետա-
րանիչն. քանզի լուաւ զն ասէր Մայր Տեառն ընդ
Յովհաննէս. Ասա զմա զՀնմարիտ հաւատոյ խոր-
հուրդն: Եւ նորա ասացեալ և սորա՝ի միտ առեալ,
քարոզեաց յիւրում եկեղեցւոջն, որք իբրև յԱստու-
ծոյ ունէին միտքն ցայժմ, և մնան անփորձ՝ի հերձուա-
ծոյ՝ի փառս Աստուծոյ:

Եւ խորհրդածութեանն բան այսոքիկ: Մի Աս-
տուած Հայր Բանին կենդանւոյ, իմաստութեան, անձ
նաւորի և զօրութեան. և կերպարան էութեան կա-

*առեալ, կատարելոյ ճնող, Հայր Որդւոյ միածնի, մի Տէր միայն առ միայնոյ, Աստուած յԱստուծոյ, կենդանի և պատկեր աստուածութեանն. Բանն Աստուած նեղգործական ամենայնի. եղելոցս ամենայնի բովանդակիչ, և զօրութիւն անհասանելի, ամենայն տարածականաց արարիչ: Որդի Հշմարիտ Հշմարտին Հօր. անտեսանելի յանտեսանելոյն, և անապականին անապական, և անմահ անմահին, և միանձնաւոր միանձնաւորին: Մի Հոգի սուրբ առ՚ի յԱստուծոյ, զԷութիւնն ունելով՚ի ձեռն Որդւոյ, երևեալ և յայտնեալ մարդկան: Պատկեր Որդւոյ, կատարեալ՚ի կատարելոյ, կեանք և կենաց պատճառ. արդարութիւն և արդարութեան պարգևիչ, որով յայտնի Աստուած Հայր. որ՚ի վերայ ամենեցուն և յամենեսին, և Աստուծոյ Որդին՝ ՚ի ձեռն որոյ ամենայնք: Երրորդութիւն կատարեալ փառօք և միանձնաւորութեամբ. անբաժանելիք և անօտարանալիք, ոչ ապաստացական ինչ, և ոչ ծառայ յԵրրորդութեանն, և ոչ՚ի ներքս ածականաց. որպէս թէ յառաջադոյն ոչ գոլով և յետոյ՚ի ներքս մտեալ, ոչ նուազ Որդի՚ի Հօրէ, և ոչ յՈրդւոյ Հոգի. անայլայլելի և անփոփոխելի, նոյն ինքն Երրորդութիւն միշտ:

Աչքս յաղագս այսորիկ արժան է հաւատալ. զի եկեղեցւոյն՝ յորում բանն քարոզի. յորոց նոյն ինքն տէրութիւն երանելոյն այնորիկ ձեռնի՝ մինչև ցայսօր պահի՚ի փառս Աստուծոյ, որպէս առաքեալն ասաւածապիծս:

Յարուցեալ ապա անտի՚ի քաղաքն գիմէր. խորհէր եկեղեցի լինել, քանզի ամենայն աշխարհն և քաղաքն և շուրջ գնալոյս գաւառն բազնօք և մեհենօք և արձանօք գիւացն Հռոմայեցւոց. զի ամենեքեան փոխ՚ի կռամոլութեան՝ ծանակեան առնէին, և զառաջս կուռցըն և զմեհեանս պաշտէին. այնպէս զօրացեալ գիւացն: Ա.յլ զորօրինակ զօրաւոր թագաւորն հզօրի հալածէ զԹշնամին, նոյնպէս և մեծն այն գիւացն գունդն հալածէր: Ա.րդ գոլով՚ի քաղաքն Հռոմ՝ յերեկոյն հասանէր, և անձրև սաստիկ եղեալ՚ի մեհեան մի մտանէր հանդերձ ընդ իւր եղեալքն. և մեհեանն այն նշանաւոր էր և բազում գիւք՚ի նմա

բնակեալ, և զխաչն աշակերտեն մեհենապարտ քուրմն. զխաչականք և հալածականք՝ինամա լինէին։ Եւ մտեալ՝ի մեհեանն մեծն Գրիգորիոս հանդերձ խրատովքն, առաքեաց զխաչն կոչելով զանունն Քրիստոսի, և նշանաւ խաչիւն զարհուրեցոյց զդևսն և՝ի բաց հալածեաց։ Եւ հանեալ զիւրեանց զդևսն՝ի գլուխ յաղօթից արթնութեամբ, և ելեալ առաւօտին գնայր զձանապարհն իւր։

Եւ եկին քուրմն վաղիւն ըստ սովորութեանն մատուցանել զոհս դիւացն ասելով. Երեւեցարուք ինձ աստուածք և խօսեցարուք։ Իսկ դևքն արտաքոյ մեհենին ձայնեալ ասէին. Անհնար է մեզ՝ի մեհեանդ յայդ մտանել, վասն՝ի դմա օթևելոյ Գրիգորի Սքանչելագործի. զի նա զմեզ հալածեաց։ Իսկ քուրմն զարհուրեալ հնարս հնարէր ըստ ախտից դիւացն, այլ ոչ լուան դևքն ըստ դիւթութեանն։ Յայնժամ բարկութեամբ լցեալ գայր հասանէր մեծին Գրիգորիոսի, և սպառնայր մատնել զնա իշխանացն, և թագաւորին դուշակել թէ քրիստոնեայ է և աստուածոցն թշնամի, և յանդգնեցաւ յաստուածային մեհենէն մատնել, և՝ի բաց հալածել զաստուածն, և խափանեաց զպօրութիւնն նոցա։ Իսկ Գրիգորիոս զանառակութիւնն քրմին յածուցանէր. Վասն եմ՝ի ձշմարիտ Աստուածն, որ ունի հալածել զդևս ուստի և կամի, և քնաւ կեցուցանել ուր և կամի, որ և քեզ եղիցի։ Զայս լուեալ քրմին կայր հիացեալ։ Յայնժամ գրէ՝ի քարտիսի հրամանական գիր առ դևսն. և էր գիրն այսպէս. Ի Գրիգորէ առ Սատանայ. Մուտ՝ի բագինդ, ըստ հրամանի իմոյ քոյին ընկերոջդ։ Եւ առեալ քրմին զգիրն երթայր կարդայր՝ի վերայ բագնին, և նոյն ժամայն մտին դևքն՝ի մեհեանն՝ որպէս զառաջինն։ Եւ տեսեալ և գիտացեալ մեհենակալին հաւատարիմ լինել գիրն և զբանն Գրիգորի, ՝ի զարմացման մեծի եղև ընդ աքանչելին և ընդ իշխանութիւն նորա՝ի վերայ դիւացն։ Դարձեալ սկսեցաւ գնդի Գրիգորի, աղաչէր ուսանել, թէ ոիւ է աստուածն այն որ զայսպիսի իշխանութիւն եւս քեզ։ Եւ ասացեալ սակաւուք մեծին Գրիգորի զբարեպաշտութեան խորհուրդն, և խնդրեր քուրմն՝ի նմանէ այլ աքանչելիս տեսանել զի եկեսցէ՝ի ձշմարիտ հաւատն։

Քան մի կայր լեռնայեաւ հանդէպ նոցա, որ ոչ էր հնար ումեք շարժել, այլ միայն Աստուծոյ զօրութեամն, զի առէր քուրմն գՎրիպորիոս զի հրամայեացես փոխել յայլ տեղի, իակ նա ոչինչ յատկացեր. այլ հրամայեաց պրպիս անձնաւորի քարին՝ փոխել յայլ տեղիս որ նըշն եցոյց, և նոյնժամայն փոխեցաւ ըստ բանին Վրիպորի: Զոր տեսեալ քրմին հաւատաց յԱստուած Հիմարիտ. Թողեալ զաուն, զարգ, զկին, զմանկունս, զքրմութիւն, զինչս, զստացուածս, դնաց զկնի մեծին Վրիպորի: Եւ առեալ տանէր զնա ի քաղաքն, վերահռչակելով զայրն և զաքանչելին պատմելով. Հեղոս ամենայն քաղաքն ի տեսանել զաքանչելին. և տեսանէին զքուրմն և զԱքանչելագործն ի միասին. Ո՛վ էին ասեն Վրիպորիոս, մարդ դոլով, այլ աստուածոցն իշխէ՝ որպէս ծառայից, և զոպատուերն ունի զկնի նըւ: Այլ նա ոչ ընդ այնմ նայէր, այլ միայն յուզին ուշ առնէր: Ժողովէր ապա քաղաքն առ նա լսել զբանն Աստուծոյ, ի տան միում վանս կալեալ, յոյժ աղաչէլով առնն. և տակաւ ինչ խօսեցաւ, զի արկն ի մեսա էր. հրամայէր այգոյն ժողովել զբանն Աստուծոյ: Եւ ի վաղիւն ժողովեցաւ քաղաքն ամենայն, արք և կանայք, ծերք և մանկունք, երիտասարդք և կուսանք, և վտանգեալք ի պէսպէս ախտից և դիւաց. զի եւ հասքաւ նորա ընդ ամենայն երկիրն: Իակ նա ի մէջ հրապարակին արձանացեալ զօրութեամբ տուրբ Հոգւոյն, բժշկէր զամենայն ախտաժետս, և քարոզէր զաւետարանութիւնն երկնից. և նոցա խնդրութեամբ ընկալեալ՝ զարձան ի մտառեաց կուռցն. և այսպէս յօրիներ զամենեսեան փառաբանակից Աստուծոյ, և երկրպագուս տուրբ Երրորդութեանն: Ելիներ յետ այնորիկ տասն աղօթից, և սեղան ուղղեալ՝ կատարէր զկենսատուէրն խորհուրդն, և ամենեքեան ընկալեալ և մասն[1] նոքա տային ամենայն երկիրն: Այս տաճար միանգամ յայժմ յուցեալ լինի. աստուածայինն հնարհիւ ինն կատարէր զգործն որ յԱստուծոյ. իակ վկայեն մեծի գործ[1]: Գանգի՛ ի շարժման ումեմն աստիւապուհի քաղաքին, առ մերովք ժամանակօք եղեալ, և արքունական ապարանիցն և այլ քաղաքին շինուածոցն տա-

1. Այսպէս յօրինակին:

պաղեալ, միայն ինաց տաճարն այն անստանալի և անխախտելի, որպէս զի յայտնի երևի զօրութեանն Աստուծոյ և նորին աղօթիցն գործ։ Եւ մկրտեաց զքուրմին և ձեռնադրեաց զնա սարկաւագ։

Աստուածային գիրք զարմանան ընդ դատաստանն Սաղոմանի՝ զոր արար երկուց կանանցն. եկ դու զարմացիր ընդ դատաստան մեծին Գրիգորի։ Երկուց ոմանց եղբարց երիտասարդաց զհայրենի ժառանգութիւնն բաժանելոյ վասն ծուլակի միոյ հակառակէին. իւրաքանչիւր ոք սիրէր. լինէր դատաստանին տէր Աքանչելագործն։ Երթեալ՝ ի տեղին ազաչէ՝ ի խաղաղութիւն. և ոչ լինէր լսել աղաչանք նորա։ Ի բարկութենէ շահիցն կիզուին, և՝ ի պատերազմ բորբոքէին։ Մնայր յեզը ծուլոն այրն Աստուծոյ, և հակէր զպիշերն, և զՄովսէսի աքանչելագործութենէն՝ ի ջուրն ցուցանէր. ոչ հարմանէր. գաւազանի յերկուս բաժանեաց զծովն, այլ ամենևին ցամաքեցոյց. զի էր առաւօտուն ծովն չոր անթաց, և ոչ՝ ի փորուածն ունէր մանն խոնաւութեան. զի խոլք էին ծուլոն։ Ի խաղաղութիւն զպատերազմին փոխեաց, և ծանոյց զեղբայրութիւնն նախասէծար. և քան զերկոցունց մահ պցանաքել ծուլոն լաւագոյն համարեցաւ։ Եւ այժմ երևի աստուածային աքանչելիքն. զոր երբեմն ծուլէր՝ փոխեցաւ յանտառս և յարտաւարս դաշտաց, որ առաւել քան զՄովսէսին և զՅաղոմոնին են աքանչելիք։

Գնեա ոմն հոսի՝ ի գաւառի Հայոց լերանց, ընդ ձորս հոսելով յորձանօք ահաւոր հոսմամբ, գայլ անուանի՝ ի բնակչաց աշխարհին. ընդ որ անցանէր՝ մերձակայիցն բազում առնէր վտանգս, առնոյր և ապարակս. և անդ առ արտաւարսն և մարգսն՝ վտանգն ոչ սակաւ էր։ Որ միաբանեալ եկին առ տուրքն Գրիգորիոս, և աղաչէին զնա զի լուծցէ զչնաս գետոյն, որպէս և կամեցի. կամ հրամայեսցէ թողուլ զսահմանն և գնալ յայլ տեղի։ Յարուցեալ ապա նորօք հանդերձ գնաց յեզը գետոյն. քանզի ոչ արկեալդ զնա առ մարդկան օգտի աշխատութեան գնացս. ոչ ձիով կամ էշով գնաց երբէք, այլ հետևակ՝ ի գաւազանն յեցեալ՝ զամենայն Հանապարհ վճարէր։ Եւ երթայր յեզը գետոյն, և իմացեալ թէ անհնար է մարդկան իմաստու-

թեան կամ ուժոյ ելս առնել, բայց եթէ Աստուծոյ զօրութեանն, որպէս առ մարգարէն. թէ՝ Սահման եդեր՝ որ ոչ անցանէ. զայս առացեալ և զգաւազանն՝ ի խոնարհ ցցեաց յերզը գետոյն, ուր յարձակումն հզ անասոյն առնէին գիշերոյ, աղօթս առնելով առ Տէր: Եւ անդէն վազվազակի արմատացեալ լինէր գաւազանն. և դալարութիւն ցուցանէր՝ որպէս զգաւազանն Ա.Հարոնի, և ածէյեալ ծառ եղև, և՝ ի հասանացն սահմանն հաստատեցաւ. զի յորժամ յանձրևաց և յուղխոց բազմանան ջուրք, և յորդեալ աճառոր հընչեսցէ մամբ հոսի, ընդ արմատ ծառոյն ոչ իշխէ անցանել. և անուն ծառոյն է վինչև ցայժմ Գաւազան Գրիգորի, և հաչակէր համբաւն ընդ ամենայն երկիրն:

Լինէին աղաչանք առ նա՝ ի քաղաքէն Կամսոյ՝ գալ առ նոսա, ձեռնադրել նոցա եպիսկոպոս. և նա ոչնմին կէր եղև աղաչանաց նոցա, գնաց գնի: Եւ եղեալ առ նոսա՝ Աստուծոյ տայր զընտրութիւնն. իսկ նոքա որ մեծագոյնքն էին բանիւ և ազգաւ և Հռոմոս թեամբ՝ առաջի առնէին: Սնայր մեծն Գրիգորիոս յաստուածոսաս լինելնոյն յայտնութիւն, որպէս առ Սամուէլ յԱստուծոյ. ոչ զեղ խնդրելոյն, այլ հոգի պայծառ, արհամարհեալ ըստ սեռականելոյն Աստուծոյ: Իսկ ոմն որ կարծէր զինքն ընտրեալ՝ այն առաջինն ընդդատանէր զայրն Աստուծոյ, յառաջ մատուցեալ և եպերանօք առ յայրն Աստուծոյ. Զի եթէ քոնաւ յառաջադոյն ընտրեալքս ոչ եմք արժանի եւ լեալքս, և զանարգանս կամիս կոչել՝ ի քահանայութիւն, ապա կոչեսցի Աղեքսանդրոս դարբին՝ ի քահանայութիւն. եթէ հաճոյ է քեզ, զուգաձայն եմք ամենայն քաղաքս՝ Աղեքսանդրի: Իսկ արբոյն ոչ արհամարհեալ զԱղեքսանդրոս յիշատակել. Ո՞վ է, ասէ, այս Աղեքսանդրոս՝ զոր ասէք: Իսկ ոմանք ոչ մեր ձեզ կայնն կատականօք ածին՝ ի մէջ զԱղեքսանդրոս, որ էր կարճահասակ, տգեղ կերպարանօք, ձեռացն և երեսացն և այլ մարմնոյն աղտեղեալ՝ ի կայծակահանց հրոյն. և էր ծխծաղելի և զճուճ: Իսկ մեծն Գրիգոր լիոս ծանուցեալ Հոգւովն սրբով՝ թէ որպիսի ոք էր այրն, ոչ առ վտանգի կենցաղոյս երեալ յայն արուեստ, այլ վասն առաքինութեան և օգտի տնտեսից:

Յայնժամ նա զանխլանալ ջանայր և՛ ի վերջ քար-
չէր զինքն, որպէս զառաքինութիւնն ծածկէր անարդ-
կերպանօք, այսպէս անարժան վարկանէր զինքն։
Այլ հրամայէր յառաջ աճել զայրն, և յայտնէր
զնորա ծածուկ վարսն. ակնարկէր սպասաւորացն, որք
տարեալ լուացին զԱղեքսանդրոս, և մեծին Հանդեր-
ձիւք վերարկեալ ըստ հրամանին։ Հայեցեալ առեն-
ցուն՝ որք ընտրեալքն կարծէին՝ զարմանք կալան զա-
մենեսեան վասն ընտրութեան առնն։

Այն ցնոսա. Չի զարմացեալ էք ընդ գործս Այտու-
ծոյ, զի մարդ հայի յերեսս, իսկ Այտուած՛ ի սիրտս։
Զայս ասացեալ մատուցանէ՛ ի քահանայութիւն
զայրն, կատարեալ ընտրհիւ խորհրդածութեանն, որ
յառաջագոյն ծածկեալ էր՛ ի Գրիտոս՝ ի ձեռն մե-
ծին Գլիդոսի յայտնեցաւ. զի առելեամբ նուագ, և
նոյն երևեցաւ՛ ի վերայ նորա ընտրհք Հոգւոյն սրբոյ.
և յոլովից տեսեալ՝ օրհնէին զԱյտուած, և ահիւ մե-
ծաւ ըմբռնեցան։ Եւ հրամայէ նոցա Հնազանդ լինել
նմա որպէս քահանայի Այտուծոյ. և տուաւ նմա ընտ-
րհս գիտութեան, և ուսուցանէր զբանն առաւել քան
զուսեալքն, և զարմանային ամենեքեան։ Եւ յետոյ
յանօրինաց կռապաշտից մարտիրոսացաւ, և հրով կա-
տարեցաւ վասն անուանն Գրիտոսի։

Երկուք ոմանք Հրեայք կամեցան խաղ առնել և
խաբել զԱբանչելագործն. միմն՛ ի նոցանէ եղև սուտ
մեռեալ յանկարծամահ լինելով. և անկեալ դներ՛ ի
կողմանէ Հանապարհին որպէս մեռեալ. իսկ ընկերն
կոծէր՛ ի վերայ մեռելոյն ողբերգական ձայնիւ. և ընդ-
այն անցանելով առ նոքօք Աբանչելագործն՝ վերագո-
չէր առ նա ասելով. Յանկարծակի մահ պատահեաց
Թշուառականիս, և մերկ ահա կայ առ՛ ի Թաղումն.
պարկեաց առ՛ ի քէն անարգագոյն հանդերձիկ, ար-
կանել՛ ի վերայ դորա պատանս։ Իսկ սուրբն Այտու-
ծոյ ոչ անտես առնէր զհայցուածս Հրէիցն. առեալ
զարկանելովն իւր տարածեաց՛ ի վերայ մեռելոյն, և
նորին զՀանապարհ իւր գնաց. և Հրեայն իմացեալից ան-
կանէր՛ ի վերայ մեռելոյն, զխաղս և զծաղս բանս
բարբառէր վասն շահու հանդերձին։ Իսկ նա ոչ ինչ
բարբառեցաւ, զի ընդ արկմանն հանդերձին եւ հոգին։

Հրապարակ ուրեմն էր ՚ի քաղաքին սքանչացեալ ընդ ուսումն տղայոց ումեքն, որ առ ընկերսն աղաղակէր, ոչ յանձնել զայսչափ վարդապետութիւն ասել, այլ ումն մերձ կալուլնամս հանել զբանն. զի դա պայր ՚ի մանուկն, և ոչ կաւիղ եւանել ՚ի նմանէ։ Եւ եկն եհաս Գրիգորիս ՚ի տեղին. և մանուկն յորում էր դէն, առ առ Հրապարակն. Խօսեցարուք ընդ մեծին, մի՛ մաքրել զիս ՚ի դիւէն։ Եւ առեալ սրբոյն զկտաւն՝ որ ՚ի վերայ ուսոյն էր՝ ընկէց ՚ի վերայ բերանոյ մանկանն. և յոյժ տարտնապեցաւ ՚ի դիւէն պատառելով զհանդերձեան և փրփրալով։ Այսպա մատուցեալ սուրբն դնէ զձեռն ՚ի վերայ, և առնէ զինշան խաչին և ՚ի բայց հալածէր զդէն ՚ի մանկանէն, որոյ զգաստացեալ փառաւորէր զԱստուած։

Ընդունեալ զնա երջանիկ դաստատորացն և հրամայեցին ջերուցանել բաղանիս առատիկ ջերմութեամբ, զի զսուրբն կորուսցեն. և մերկացուցեալ խորհեցան ընկենուլ ՚ի ներքս, և կացեալ մերձ առ լուսանալին՝ առնէր զինշան խաչին, և յաստուածային զօրութենէն տեսիլնոր և չքնաղ երևեալ. քանզի փոխարկեալ զբոմ բեթաձև շինուածն առ հնմանն խոնարհեալ, ոչ դղրդմամբ այլ փոխմամբ. ընդ որ հիացեալ առնքին զսուրբն ՚ի կատարած։

Դարձեալ հանէր դա մի յառնէ միջէ. խակ նա աղաղակեալ առէր ուժգին. Մի՛ հաներ զիս ՚ի բնակութենէ իմմէ, ապա եթէ ոչ բազում աշխատութիւնս հասուցանեմ քեզ. խակ նորա ասասեալ եհան զնա յառնէն։ Խակ դէն երթեալ մտանէր ՚ի դուսոր Թագաւորին Հռոմոյ, և աղաղակէր բերանով մանկանն. Թէ՝ Ոչ եւանեմ ասի, բայց եթէ եկեալ Գրիգորին Նէոկեսարու հանցէ զիս։ Խակ կայսերն լուեալ վաղվաղակի առաքէ ՚ի լնդէր նմա. և գտեալ լինէր ՚ի կենսատուց քաղաքին, և կայսերական հրամանաւ փութանակի անցուցանէին ընդ ծով և ընդ ցամաք ՚ի Հռոմ. որոյ ՚ի հասանելն՝ առտիկ շարժեաց դէն ընդդուսոր Թագաւորին՝ զարկուցեալ զգետնի։ Խակ մեծին Գրիգորի մտեալ ՚ի տուն յորում էր աղջկին, աղաչեալ զինշան խաչին՝ առասէր այսոյն պղծոյ և հանէր ՚ի կնոջէն, և հրամայէր անդ մնալ առ զբանն։

Իակ կայսերն տեսեալ զմեծ սքանչելիսն՝ պատուէր զայրն մեծասիէս, և խորհեցաւ ինչս բազում ընդհե նամա. իակ նա առեալ և ոչինչ՝ լծդրկեր ՚ի նամանէ սիւն մի մարմարիոն լաւոնացի, որ էր երկայն և ատուար յոյժ: Իակ կայսերն զարմացեալ թէ չինչ պէտս խըն դրեաց զայն, որ անհնար է հասուցանել յաշխարհն նը ը.նորա պատասխանեալ, թէ միայն տուր զինդրե լին, և մի ինչ ածել զմտաս: Ի նմին ժամու հրամայեաց այսոյիկ պղծոյ բառնալ զինուն և հասուցանել յաշ խարհն Կապադովկացւոց. և նորա առեալ գնաց և կայ անդ մինչև ցայսօր: Եւ հրաժարեալ ՚ի կայսերէն ծովագնաց լինէր. գայ մտանէ ՚ի մեծ կղզին Սիկի լեայ. և անդ էր լեառն մի բարձր՝ որոյ գագաթն բոլ բոլի կայծակամբք հրոյ ՚ի տուէ և ՚ի գիշերի, և ըստ ժամու ժամու հասումն հրոյ հոսէ ՚ի ծայրէց լերինն, կիզելով զամենեսեան որոյ և հանդիպէր, առաւել ՚ի ձմեռնային ժամանակի. մինչ զի անհնար էր մարդոյ անցանել ընդ այն տեղին: Էր մերձ ՚ի նմա եկեղեցի մի յոր մտեալ մեծն ՚ի ժամ պատարագին զպաշտօնն կատարել: Իակոյն կտրեալ լինէր հուրն հանդէպ վը կայարանին յորում էր տուրքն, և ձայն սաստիկ հընչ ման լսել լինէր: Իբրև տեսին ամք տեղւոյն զհոսումն հրոյն ՚ի լեռնէն, բոլոք բարձեալ առ մեծն Գրիգո րիոս, և նորա առեալ ՚ի սպասու սեղանոյն՝ ընծա նայր և հրոյն ընդդէմ ձգէր, ասելով. Դադարեա և մի անցցես ընդ այդ. և եղև ըստ բանից նորա մինչև ցայսօր:

Յետ այսքան սքանչելեացս միոյ կամ երկու ամաց էն վասն նորա ասացեալ. զայս ևեթ պատմեցից. քանզի զի ամենայն ուրեք տարածեալ աստուածային քարո զութեանն՝ ՚ի քաղաքին և շուրջ զբնակիչսն՝ առ բա նակաշատ հաւատն փոխադրեալ, և փոխեալ բազ նացն և մեհենացն առ ՚ի կուռսն պղծութեան և ՚ի զազրալի զոհից, և չինեալ որ ՚ի վերայ բազմացն ա րիւնհեղութիւնք, և կենդանազոհութեանն դիւացն, յամենայն տեղիս եկեղեցիս և աղօթատունս վերա հանդիսեալ, և քրիստոնէից խորհուրդն ազդեալ յոյժ: Լուեալ թագաւորն բարկացաւ. զրկ առ իշխան աշխարհին խոտանել զեկեղեցիսն. և ոչք Քրիստոսի

երկրպագեցին՝ ըմբռնեցին հարկաւ ՚ի հայրենական պաշտօն: Իբրև պատմեցաւ իշխանացն ջար և անառաւաւած հրամանն ՚ի հրապարակս տարածեալ, կամ ուրանալ զհաւատն և կամ չարչարանս ազգի ազգի և տանջանս մահու կրել, աստուստ լինէին անապատք և ունայնք ՚ի բնակչաց քաղաքք և գաւառք:

Յայնժամ խնացեալ մեծին Գրիգորի զմարդկային տկարութիւնն՝ որպէս ոչ բաւել բազմաց մինչև ՚ի մահ տևել, խորհրդակից լինի եկեղեցւոյն փոքր ինչ տեղի տալ հալածչացն՝ փախառեալք, ըստ պատուիրանին Տեառն: Եւ բռնաւորացն փոյթ էր եթէ գիւա որպէս զօրաւոր քաջ ըմբռնել կարասցեն: Իսկ նա երթեալ բնակէր յանապատին իւրոյմէնն՝ որ յաջակողմն պաշտամանն սպասաւորէին նմա: Իսկ ուժեղն տեսեալ յանդարշտացն՝ զուշակէր զտեղին՝ հալածչացն, որք ամբոխ արարեալ՝ երթեալ շրջափակէին ըզտեղին և պահէին, զի մի հնար լիցի նոցա փախչել: Իսկ Գրիգորիոս տարածեալ զձեռս իւր կայր յաղօթս հանդերձ սարկաւագաւն՝ որ յառաջ քրմապետն էր. և անդէն անկաւ ՚ի վերայ նոցա անտեսութիւն, և որք յառաջ տեսին զնոսա այլ ոչ ևս տեսին զնոսա, և յուզէին զամենայն վայրսն. ոմանց ՚ի տեղին խափանել և այլոց առ նոքօք անցանելոյն: Եւ իբրև ոչ գտանէին՝ սքանչացեալք ՚ի փախուստ դարձան, գնացին զհանապարհս իւրեանց: Եւ որ գուշակեաց հալածչացն՝ եկեալ անկանէր առաջի տիրոջն խնդրելոյ Թագուհւոյն յանցանացն, և հաւատոյ Աստուած և Քրիստոս. և որ յառաջ հալածիչն էր՝ ապ ՚ի փախուցեալն լինէր և օրհնէր զԱստուած: Եւ զի ընդ երկարեցան հալածանքն և լի էին կապարանք և տանջանարանք, և նա յանապատին աղօթէր վասն նոցա, որպէս Մովսէսն ընդդէմ Ամաղեկայ վասն Իսրայէլի:

Էր երբեմն ըստ սովորութեանն յաղօթս Աստուծոյ լեալ Հոգւովն սրբով, մինչ զի յայտնի լինէր ձակայինն՝ ձայն ինչ լինէր առ նա Աստուծոյ, այլ ոչ լինէր նոցա հասանել ՚ի տեսիլն և ՚ի ձայնն, և գտանէր յաղօթեն եկն առ ժողովուրդն, զի էին մեծ. և ՚ի վեր օրհնէր զԱստուած պայծառ ձայնիւ,

զյաղթականն երջանկալ. Օրհնեալ է Տէր, որ ոչ եւս
պմեզ՝ի յորս առաւանց նոցա: Վասն որոյ պբանչացեալ
ոչք ընդ նմա էին՝ ուսանել արժանի լինել աղաչէին:
Ասէ առ նոսա. Տեսանէի՝ի ժամ աղօթիցն յաւետնին
երիտասարդ մի բարի Տրուանդիոն անուն, մարտու-
ցեալ ընդ բանասարկուին եւ ընդ դառն հալածիչին,
յաւազ ածաւ առ իշխանն՝ի դահճայն՝ի քաղաքին.
եւ յետ բազում ազգի ազգի տանջանաց՝ վկայեաց եւ
վերապրեցաւ զպատկն անապական, եւ լուայ ձայն եթէ
դադարեցոյ են հալածմունքն: Ձայս լուեալ սարկա-
ւագն եւ որ ընդ նմանն՝ հիացեալ ոչ անհաւատ եղեն,
որ այնչափ հեռագոյն գոլով՝ի քաղաքէն, այնպէս
ստոյգ գիտաց: Աղաչեր զնա սարկաւագն այրսիքն հան-
դերձ, զի հրամայեսցէ երթալ՝ի քաղաքն եւ տեսա-
նել: Ելեալ առ ասէ. Գուցէ ըմբռնեսցիս, որպէսզի: Եւ նա
ասէ. Յուսամ ՅԱստուծ եւ յաղօթս քո՝ որ փրկէ զիս:
Եկին՝ի քաղաքն եւ լուան յամենեցունց զվկայութիւնն
արթոյն եւ զանուն նորա, որպէս ասաց այրն Աստուծոյ.
եւ դարձան անդրէն աշխատեալք: Ընդառանն՝ի վերայ
հասանէր. եւ էին բազանիք՝ի քաղաքին, կամեցան
անդ ապանել զգիշերն՝ յորում էին գիւք: Եւ ոմն
մերձ կալով առ բազանիսն՝ աղաչէին բանալ նոցա: Եւ
նա ասէ ցնոսա. Ոչ է հնար ումեք՝ի գիշերի մտանել
՝ի բազանիսդ. զի յետ մտանելոյ արեգականդ՝ զեւ
ունի զբազանիսդ եւ զջուրսդ որ՝ի դմա, եւ բազմաց
անպիտութեամբ մեռեալ՝ սպանան՝ի նմին: Այլ նա ոչ
հաւանեալ մտանել՝ի ներքս հանդերձ իւրայովքն՝ի
հանդիստ, եւ լսէին բազում ձայնիւնս եւ արհաւիրս
եւ ողբս եւ ընչիւնս, եւ հրով եւ ծխով լցեալ լինել, եւ
դազանաց եւ սողոց կերպ՝ի կերպս լինելով, եւ շուրջ
շուրջ զմարմնովք նոցա հոսեցուցանէին: Իսկ նա զկը-
նիքն Քրիստոսի արարեալ յինքեան, եւ արհամարհէր
զնոսա. եւ ընդ առաջին դուռնն անցանէր՝ի ներքս-
դիմն մտանէր. եւ անդ ահաւոր եւ դժնդակ ձա-
ւերիցն դազանաց դիւացն, շարժելով եւ տատանելով
զտունն, մինչ զի զատակն պատառել սեւանէին, եւ
՝ի ներքուստ՝ի վեր կայծակունս յարձակեալ՝ի ջուրն
եւ՝ի նոսա: Իսկ նա աղօթիւք եւ Քրիստոսի ինքնին
զահեղ երեւոյթն հալածէր. եւ հանդուցեալ զգի-

*ջէին, և առաւօտուն ջրովն լուացեալ՝ խորհեցան ելա-
նել և գնալ։ Եւ դևն գարձեալ արգելուլ կամեցեալ
զդուռն ընդդէմ փակէր. իսկ նա զինովք Քրիստոսի
արարեալ բանայր զդուռնն։ Այնճն դևքն. Եթէ ոչ էր
վանն Գրիգորի, որ զքեզ Աստուծոյ յանձնեաց՝ կեն-
դանի՛ ի բաղանեաց ոչ ելանէիր։ Այն տարփաւապն.
Գրիգորիու՝ որ եհան աղօթիւք՛ ի բանդէն զհայրն
ձեր սատանայ՝ որում են սպասաւորէի, և գարձեալ
եմոյծ Թղթոյնէ, նորին աղօթիւքն հալածեսցէ զձեզ՛ ի
տեղւոջէս յայսմանէ. և ել հանդերձ այս ընդ ամե-
նայն աշխարհն։ Եւ եկեալ սարկաւագն պատմեաց
զբոլոն Գրիգորի։*

*Եւ ինքն սիրէր միշտ յանապատս լինել յաղօթս, և
՛ի ձեռն քահանայից հոլևուէր ժողովուրդն ըստ քա-
ղաքաց քաղաքաց՝ որ հաւատացաւ նմա։ Եւ իբրև գա-
գարեցոյց զհալածանն աղօթիւք, իջանէր անդէն՛ ի
քաղաքն և ուսուցանէր զամենեսեան. և հրամայէր
ոմն կատարել զամենայն արգոյն որ վկայեցին, և ու-
րախանալ հոգեւորապէս, և ցնծալ՛ ի յիշատակ սըր-
բոցն։ Գանգի յաւուրսն ամի նորա քահանայու-
թեանն, զորմէ զանց արարաք՝ որպէս զայլ աբանդե-
լեօք, վերատին պատմեմք։ Ոմն էին ամենաժողով ա-
նէին գիւղ ուռենի ամենայն քաղաքն, և գաւառա-
կանքն միաժողով լեալ զդևն որ ոտնէին, Ածող վերայ
կարդային[1], միաբերբառ միով ձայնիւ աղաղակէին.
Ո՛վ Ձեւս, տուր մեզ տեղի և ընդարձակեա։ Զայն
ուսեալ մեծին Գրիգորի՝ յղէ առ նոսա. Տայի ձեզ
տեղի՝ որ չէ այլ երկիք լեալ։ Եւ նոյն ժամայն անկաւ
՛ի վերայ նոցա աՀ սաստիկ, որպէս հուր այրէր զնոսա
և զտունս նոցա, և գարձաւ ոտն նոցա՛ ի տուգ. և եր-
թեալ ապաւինեցան՛ ի ծառայն Աստուծոյ, և նա
գնաց զկնի նոցա, և եմուտ յիւրաքանչիւր տունս, և
աղօթիւք մերժեաց զսատակիչ ախտն և բժշկեաց
զնոսա. և խրատեալք՛ ի հարուածոցն՝ գարձան՛ ի
Քրիստոս և մկրտեցան։ Եւ իմացան եթէ դևն չարա-
պէս կատարեաց զաղօթսն, զի ախտիւն և մահաւամբ
մարդկանն ընդարձակել կամէր զքաղաքն. յորմէ*

1. Այսպէս յօրինակին։

վրկեցան աղօթիւք սրբոյն Գրիգորի, և մարմնական ախտիւն՝ հոգւով առողջացան։

Եւ այսու օրինակաւ քաղաքավարեալ յեկեղեցւոյն Աստուծոյ՝ զոր նուաւս դարձոյց Քրիստոս Աստուած. և վասն զի յառաջ գիտացեալ պիտուն իւր՝ փութայր փոխադրել զամենեսեան՝ ի վրկական հաւանն՝ ի կուսին պղծութենէ. և յուզեալ եթէ լցէ որ մնացեալ արտաքոյ հաւատոցն, եգիտ ոչ աւելի քան զեօթն և տասն անձինս. տրտմեալ լինէր յայսոսիկ, անկանէր առաջի Աստուծոյ, խնդրէր զդարձ նոցա, զի որ յետ նորա փոխանորդեսցէ զեկեղեցին՝ մի լցի նորա կուապաշտ տեսանել՝ ի հօտի նորա. սակայն և այժմիկ լուաւ նմա Տէր և անկաւ՝ ի սիրտ նոցա զէղջ, և ունկնդիր եղեն վարդապետութեան նորա, և դարձան յուղիղ հաւատն։

Ա.յս է առնն Աստուծոյ կենցաղն և առ Աստուած փոխումն. և քանզի՝ ի կեանս աշխարհիս ոչ ստացաւ տուն և տեղի ուրեք, և ոչ յետ մահուանն ստանայր իւր տեղի առ՝ ի թաղումն սեփհական. մինչ զի պատմութիւն լինել Ա.քանչելոյն, եթէ Գրիգորիոս՝ ի կենդանութեանն ոչ անուանեաց իւր տեղի և ոչ յետ մահուան. այլ որպէս պանդխտութեան զկեանս անցոյց, նոյնպէս յօտարաց թաղմամբ՝ եղև պանդուխտ, ՚ի ստացուածոց և ՚ի տանէ հրաժարեաց՚ի կեանս իւր. նոյնպէս և ՚ի թաղմանն ՚ի զարդու և ՚ի տեղւոյ։

Զարմացի իւրաքանչիւր ոք ՚ի հանդիպելոց բանիցս, այլ մի ոք անհաւատացի սքանչելեացն և վարուցն. զի յոյժ հեռի է ՚ի ստութենէ և լի ճշմարտութեամբ, և ստեպ ՚ի բազմացն։ Ն. և այլ ինչ նորա նշանագոյնք, որ մինչև ցայժմ երևին և պատմին. զոր հնարեալ յանհաւատից լսելիս առնել՝ թողաք ՚ի բանիցն. զի մի ստատհանարելով զգրեալսն գայթակղեսցին։ Ձի յոլով եղեալ ցոյց զարմանալիս ՚ի վերայ զարմանալեաց, գերազանցեալ առաքինութեամբ նահատակեցաւ։ Եւ բազում Հուս վերադասեաց յաղագս ուղղափառ հաւատոց և վարուց։ Այսպէս հանդիսացաւ ՚ի կենցաղումն, և հրաժարեալ ընդ սուրբս հանգեաւ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Գեւոնդեայ։

Առ ի ժամանակին յայնմիկ յորում էր ջերմեռանդ, և աստուածամարտն Մաքսիմիանոս թագաւոր քաղաքին Թեսաղոնիկեացւոց, բազում և ոչխարիս կրտսանօք լինէին բարեպաշտութեան սպասաւորքն. վասն զի յոյժ կործանեալ էր նա ի խորս հեւապաշտութեան. միշտ ի խոյզ և ի խնդիր լինելով այնոցիկ՝ որ քրիստոնեայ աստուածպաշտութեան կրօնից էին, ի բանդ և ի տանջանս մատնելով։ Իսկ քրիստոնեայքն որ էին ի քաղաքին՝ ունէք հաւանեալք խնամատոյն Պաւղոսի, առեալ ուսեալ բարեպաշտութեան ժամանակին, թագաւորեցանէին զինքեանս առ ժամանակ մի. և այնք զքաջութիւն խոստանեալ՝ յայտնապէս խոստովանէին զհաւատն ի մէջ բազմաժողով քաղաքին։ Յայնցանէ մի ումն որում անուն էր Վեմեսիոս, այր քաջ և առաքինի, ոչինչ զանգիտեաց յերկիւղէ մահու՝ որ անկեալ էր ի գնութիւնն. և անտես արարեալ զահագին զսպառնալիսն թագաւորին՝ յայտնապէս խոստովանէր զանձն քրիստոնեայ գոլ. և զիրիշխանին անուանն զոր յանձին իւրում բարձեալ ունէր՝ բազում հանդգնակատութեամբ ի ժամու և ի տարաժամու ըստ առաքելական խրատուն ամենեցուն մերձենալոցն ի նա առանձին։ Եւ յոյժ խնամատուն գոլով երանելոյս այսր աստուածեղէն գրոց, զճաճկեալ կենդանարար խորհուրդն որ ի նոսա՝ առաջի ամենեցուն Թարգմանէր։ Վարդապե-

տէր և զայսոսիկ, եթէ զմարդն առաջին՝ մոլորե՛լ
չկամարտութենէն անհնազանդութիւնն արար, ուսոի
և մահկանացու եղաք, և կռապաշտութիւն եմուտ
յաշխարհս. յաղագս այսորիկ և ամենիմաստ բանն Աս-
տուած՝ յԱստուծոյ Հօրէ անձառաբար ծնեալն, եկն
յաշխարհս մարմին զգեցեալ, և զինքն լոյս աշխարհի
ծագեաց, կանդնեաց զանկեանն և յարոյց զգլուխն
և եզիտ զկորուսեալն, և սրբեաց յամենայն աղտոյ
մեղաց. և ոչ միայն զայս բարեգործեաց, այլ և ուսոյց
ամենայն ընդունողաց զբանն նորա, զարդարութիւն
սրբութեան, զհեզութիւն և զհանդարտութիւն, զե-
սեր և զխաղաղութիւն, արհամարհել զառաժամա-
նակեայս. և յուսով հանդերձելոցն ընդունել զառ-
հասուցեալ՝ ի միանձնատուր և յանժամանակեայ
կեանսն: Եւ այսպիսի բանիւք մխիթարել երանելին
զամենեսեան որ մերձենային առ նա, և բազումք
այնուհետև գային առ նա վանն հասանելոյ համբաւոյ
նորա ընդ բազում տեղիս:

Յայնժամ ապա որ կարգեալք էին՝ ի Թագաւորէն՝
ըմբէին խնդրել զքրիստոնեայսն: Կալեալ զերանելին
Վեմեսարիոս աճեալ կացուցին առաջի աստուածա-
մարտին Մաքսիմիանոսի, իբրև մեծ որս ինչ ըմբռը-
նեալ: Իսկ Թագաւորին դէպ եղև յայնմ ժամու ելա
նել նստել՝ ի տեղի ասպարիսի քաղաքին յաղագս մե-
նամարտիցն, որք հանդերձեալ էին մենամարտել՝ ի
տես ամենայն ռամկին, որ և տեղին իսկ տախտակա-
մած կազմեալ էր, և քարակոփ շինեալ առ՝ ի կընդ-
ունել զայնոսիկ՝ որք անդ եկեալ նստէին: Եւ էր անդ
այր մի Վեռա անուն նորա յաղթանդամ և սկայազօր.
որ յոյժ զարհուրեալ դողացուցանէր զամենեսեան՝ ի
մենամարտելն իւրում, այլ և բարս անխնամն և սաս-
տող ատացեալ ունէր յինքեան, և յոյժ սիրեցեալ էր
նա յաչս Մաքսիմիանոսի, և ընդ առաջին պատերազ-
մողն հանդիպեալ, վասն զի ոչ գտանէր յաշխարհն
յայն նման նմա: Այդ մերձ լինէր Թագաւորն յար-
պարիսն. կացուցին դահիճքն առաջի նորա զՎեմեսա-
րիոս: Իսկ նա իբրև հարցեալ եղև Թէ քրիստոնեայ
է, հրամայեաց տանել զնա մօտ առ կամար քաղա-
նեացն, ուր լուցեալ էրակ ջեռնուին, քանզի և քաղա-

ենքն մօտ յատեանն էր. հրամայեաց ածել զՅեսս առաջի իւր, քարոզ կարդայր ՚ի հրապարակին, եթէ ուր կամիցի մեհեամարտիլ ընդ նմա՝ քաջութեամբ պարտական է ասանալով: Յայնժամ յարուցեալ ՚ի մէջ ատենին մանուկ մի՝ որոյ անուն էր Նեատոլիտ, քրիստոնեայ, որ և յառաջապոյն երթեալ առ երանելին Դեմետրիոս, զի աղօթս արասցէ ՚ի վերայ նորա. և նորա օրհնեալ զնա մարգարէացաւ թէ անուամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յաղթեացես Վէսի, և վասն նորա մարտիրոսանաս: Սա ՚ի բաց եղեալ զհանդերձս իւր, և զսպեալ զինքն միով պատմուճանով՝ վազեաց ՚ի տաւարին անդր հանդիսին՝ յանդիման Մաքսիմիանոսի, ձայն եհաս առ Վէս մեհեամարտիլ ընդ նմա: Իսկ Թագաւորն տեսեալ զտղայութիւն հասակի նորա, զարմացաւ. կոչեաց առ ինքն զՆեատոլիտ, թելադիր լինել նմա, այսպէս ասելով. Գիտեմ, որդեակ, թէ վասն առաւել ստանալոյ կամ վասն աղքատութեանց քոց այդպէս ցանկաս վերիվիլ ՚ի կենացս, ՚ի ձեռն զօրաւոր և յաղթանդամ առնն Վէսի. արդ ես զքեզ ՚ի վայելչութիւն մանկութեան քո՝ որ զարդարեալ ես ամենայն գեղեցկութեամբ. տամ քեզ ինչս բազումս, ՚ի բաց կաց միայն ՚ի ցանկութենէդ առ ՚ի մարտիլն. չէլոյ ընդ սկայատոր և ընդ յաղթող այրն այն, և երթիր նմանդ և ուրախ լեր ընդ գեղեցկութիւն քո:

Յայնժամ մանուկն Նեատոլիտ ոչինչ պատրեալ լինել ՚ի խոստմանց Թագաւորին, և ոչինչ առեալ ՚ի նմանէ նորա, և ոչ զարհուրեալ ՚ի գոլութենէն Վէսի. այլ միայն վստահացեալ ՚ի մարգարէութիւն Դեմետրիոսի, և ոյժ առեալ ՚ի զօրութենէն Քրիստոսի, պատասխանեաց առ Թագաւորն և առաց այսպէս. Ես, ով Թագաւոր, ոչ ընչից և կամ անցաւոր կենացս եկեալ եմ այսր, այլ քանզի ընտիր կացուցանեմ զիս քան զՎէս, և լուացոյն կենացն հասանիցեմ: Իսկ իբրև լուաւ զայս Թագաւորն և որ շուրջ զնովաւ մեծամեծք ամենայն՝ լի եղեն սրտմտութեամբ, հպարտութիւն զասացեալն ՚ի Նեատոլիտէ վարկանէին. և զրգռէին զՎէս մեհեամարտել ընդ նմա, և կարեվէր խոցել սրպէս զի առ ժամայն մեռցի: Յայնժամ՝ մանուկն Նեատո-

ինա զօրացեալ հոգւով, թափ տուեալ զդեամնեաց ըզ
Վեսա և առ ժամայն սատակեցաւ։ Իսկ Թագաւորն զայն
տեսեալ՝ բարկացաւ յոյժ, մանաւանդ յորժամ առա-
դեաց Թէ քրիստոնեայ ևս էր Նեստորիոս։ Եւ փոխա-
նակ խոստանալոյն զոր յառաջագոյն՝ ի ձեռն քարոզչացն
պարգեւել խոստացայր մեծամարտեցելոյն ընդ Վեսայ,
հրամայեաց նմին զքրիստոնեայ գլխատել զմանուկն։
Այլ այսոցիկ այսպէս եղելոց տրտմեցաւ յոյժ Թա-
գաւորն ընդ եղեալսն, քանզի և երկոցունց մահն ցա-
ւէր նմա. և յարուցեալ յաթոռոյն՝ տխուր դիմօք
կամեցաւ գնալ յարքունիսն։ Յայնժամ էարախոսք ո-
մանք բանսարկու եղեն առնա, իբրև Թէ Նեմեսիոս
եղև պատճառք այսր ամենայնի։ Իսկ նա զայրագնեալ
իբրև զգազան ինչ վայրենի՝ անդէն յառենին անդ
հրամայեաց գեղարդեամբ հարկանել. և այսպէս կա-
տարեցաւ սուրբն բարի խոստովանութեամբ ի Քրիս-
տոս, որ օր քան և վեց էր հոկտեմբերի ամսոյ։ Իսկ
զսուրբ մարմին նորա հրամայեաց աստուածամարտն
Աբրահամոս արտաքս ընկենուլ առ ի կերակուր
գազանաց և թռչնոց։ Յայնժամ եղբարքն ամենք եր-
կիւղածք և վկայասէրք եկեալ ի գիշերի գողացան
զնա, և տարեալ Թաղեցին ի տան ուրեմն ի քաղա-
քին ինալ ժամանակի ինչ, յորժամ այլ արտասկ Տէր
և յայտնեսցէ զնշխարս սրբոյն։

Իսկ յետ սուղ ինչ ժամանակի սկսան նշանք մե-
ծամեծք լինել և զօրութիւնք առ այնոսիկ որք կար-
դային զսուրբ վկայն յօգնականութիւն. և այսպէս
հռչակաւոր լինէր բժշկութիւնքն՝ որ կատարին ա-
նուամբ սրբոյն։ Յայնժամ Վեռոնիոս ոմն այր ա-
տուածասէր, որ էր ի Խուրիկեացւոց աշխարհին, ե-
կաւ առ քաղաքն Թեսաղոնիկեացւոց, և ա-
ռեալ զտունն զայն յորում էր նշխարքն սրբոյն որ էր
նեղ և անձուկ, և ի բաց քակեալ զայն սրբեաց և
ընդարձակեաց զտեղին, և շինեաց տաճար մեծա-
պայծառ կազմածով յանուն սրբոյն, յորում մեծա-
մեծ բժշկութիւնք կատարէին անդ, ի փառս և ի
գովութիւն աներեսատուրդ Երրորդութեանն և հաւա-
գոյ էութեանն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն,
պատիւ և փառք և յաւիտեան յաւիտենից. ամէն։

Պատմութիւն սրտնչելոց որ կոչի Ի ձեռն Սրբոյն Գեւորգիոսի, եւ ի սրտիս կոչի խնդիր Երկնից եւ երկրի ընդ բազում ժամանակս յաշխարհս Յունաց եւ Պարսից և Մարդիկոսի բազաւորաց Յունաց:

Եկեսցուք, ժողովրեալք եթէ կամիցիք զսաղմոք զանց արարեալ՝ պատմեսցուք զքաջանչելին որ եղև ի ձեռն սուրբ նահատակացն վկային Դեմետրիոսի, որպէս զի ի սակաւուցն զիմաս ձեր ուղղեալ՝ զսաղմոս խնդայցէք, զոր գործէ ի ձեռն սրբոց իւրոց զանձառելին ա մենազօր զօրութիւնն Քրիստոսի: Եւ արդ վասն զի ի բազաքացիութեան ժամանակի յորում կատարէին սուրբքն, հաստատեալ կային վկայասէր քրիստոնեայքն որ առեալ ամիսոփէին զմարմինս նոցա ի ծածուկ տեղւոջ, զի մի մերձեսցին ի նոսա պիղծ և գարշելի ձեռք և զոհք հեթանոսաց. և յաղագս այսպիսի պատճառանաց՝ է ուրեք զի յայտնի երևին գերեզմանք նոցա, և է զի չէ յայտնի, թէպէտ և գերեզկապէս եւրևին կազմեալ յաստուածասիրաց ումանց տաճարք վկայութեան նոցա: Այսպէս և ի քաղաքին Թեսաղոնիկեցւոց քաղաքին Թեսաղոնիկեցւոց թաղեալ էին սուրբքն և վկայարանք նոցա յայտնի երևէին, ընդ որս և մեծն ակնառուն սքանչելեօք երանելին Դեմետրիոս. սակայն ոչ ուրուք ի նոցունց սրբոցն գերեզմանք և տեղիք սուրբ նշխարացն յայտնի երևէին, բայց միայն սուրբ կուսին Մամբինոսի: Նոյնպէս ի ժամանակս բարեպաշտ թագաւորին Մաւրիկոսի, բարեպաշտ և աստուածասէր կամօք խնդիր արարեալ բազմաց սրբոց որ ի Թեսաղոնիկեցւոց քաղաքին կատարեալ էին, և առաւել երանելոյն Դեմետրիոսի, վասն առաւել հասց քաջ սքանչելեաց նորա, զրեաց Թուղթ յերանելին Եսեբիոս, որ յայնմ ժամանակի ունէր զաթոռ եպիսկոպոսութեան քաղաքին Թեսաղոնիկեցւոց, որպէս զի առաքեսցէ նմա մասն ինչ ի նշխարաց սրբոյն Դեմետրիոսի:

Յայնժամ գրեաց Եսեբիոս պատասխանի Թագա-

*ուրին այսպէս. Գնաեմք և մեք, ով Թագաւոր, ընդ
վասն Աշմարիտ հաւատոյ և խնդիր քո, զոր ունես առ
աստուածն վկայեն Քրիստոսէ. բայց ուր և պատմեցից քում
բարեպաշտութեանդ զհաւատս Թեսաղոնիկեցւոց, և
զերեալ սքանչելիս, և յաղագս այդպիսի խնդրոյ.
վասն զի ոչ այսպիսի հաւատս ունի քաղաքս այս, ե-
թէ զգալի իրօք կամի պաշտել զԱստուած և պատուել
զաստուածն նորա. այլ զինուին հակառակին իմանալի աչօք
հաստատեալ են ՚ի սէրն Աստուծոյ և սրբոց նորա.
ընկալեալ զհաւատս ՚ի Տեառն սրբոց վկայութեանցն,
եթէ հոգի է Աստուած, և երկրպագութեամբ նորա պարտ
է հոգւով և ճշմարտութեամբ երկիր պագանել: Եւ
վասն այնորիկ ծածկեալ է ՚ի քաղաքիս յայսմիկ մարմ-
ինք սրբոցն՝ ամենևին անյայտ ՚ի մարդկանէ, զոր և
աստուածատէր հայր ձեր Յուստինոս, որ ձերոյին
բարեպաշտութեամբ նախանձուդ էր լցեալ, զոյնպէս
փորձեալ եգիտ. վասն զի նա վկայասէր կամօք զրեաց
Թուղթ՝ որ յառաջ քան զմեզ այսր քաղաքի եպիս-
կոպոս էր, որպէս և քո բարեպաշտութիւնդ ՚ի մեզ,
մանն ինչ հայցեալ ՚ի նշխարաց փառաւորեալ վկային
Դեմետրիոսի, զոր և կամեցաւ ընդ զաստուածահա-
ճոյ տարփուն սիրոյ Թագաւորին. և մեռեալ ՚ի վկայ-
ման սրբոյն՝ բերեցին զատակ եկեղեցւոյն ուր կարծէին
Թէ անդ եղեալ է նշխարքն սրբոյ վկային: Եւ զայս-
պիսի գործ երկիւղածից քահանային հրամայէր ե-
պիսկոպոսն, զորոյ հաստատուն գիտէր զարժանաւո-
րութիւն նորա: Իսկ իբրև խոր ինչ առնէին զգրածն,
շուրջ կալով այլոցն սաղմոսիւք և օրհնութեամբ և
մոմեղինօք լուցեալովք և անուշահոտ խնկօք կամէին
այլ ևս բերել, յայնժամ յանկարծակի հուր եղեալ ՚ի
ներքուստ եղից զամենայն խորհուրդս գրածին, և շուրջ պա-
տեալ զնոքօք՝ ոչ այրէր զնոսա: Նուաճ ձայն որ առէր.
Այդ գործակիցք յայսմ հեառ յառաջել փորձելոյ
զջերմեռանդութիւնն Քրիստոսի՝ որ միացեալ է յոսկերս սըր-
բոցն: Իսկ նոցա ահիւ և դողութեամբ լցեալ միանգ-
ամայն, առեալ ՚ի հողոյ գրածին՝ առաքեցին առ Թա-
գաւորն, զրոյ ծանուցին նմա զեղեալ պատահմանն:
Այդ այսոքիկ, ով Թագաւոր, առ բարեպաշտօն Յուս-
տինոսիւ հարցն քոյոյ եղև. և մեք նոյն օրինակ ա-*

*ռաքեցաք քում առատածծութեանդ՝ ի նոյն օրհ-
նութեան հողոյ, զոր եդեալ՝ ի պահպանի յայսմ
եկեղեցւոջս, ՚ի պէտս բժշկութեան ախտաժետաց.
զոր և դու ընկալեալ ուրախութեամբ ածաս, առեալ
լցցես առանց երկմտութեան, իբրև նոյն ինքն զբո-
ւանդակ վկայն ունելով առ քեզ, որպէս վայել է
քում հաւատոյդ. այլ և՝ ի փորձոյ անտի ծանիցես
զաքանչելին, և ոչ անհնազանդ վարկցիս զմեզ ձեր
առատածասէրն թագաւորութեանդ։ Զրկիտասի փառք
յաւիտեանս. ամէն։*

*Ճառագս Մարխաւոսի Եպարչոսի, երբ ուրախ բժշկեցաւ սքան-
չելոքն՝ ի յախտէ անդրամպուժոտութեան՝ ի ձեռն սքանչելի վր-
կային Դեմետրիոսի։*

*Պատմեցից և այլ սքանչելիս՝ որ եղև՝ ի ձեռն տեառն
վկային Դեմետրիոսի։ Ա՛յր ոմն յազատ ազգէ ազնուա-
կան և մեծատուն կոչ, որում անուն էր Մարխա-
նոս, ընդ առաջինան կարգեալ, և սենեկապետ՝ ի պա-
լատան Թագաւորութեանն. սա հրամանն առեալ՝ ի
Թագաւորէն, վարեալ զեպարքոսութիւն իշխանու-
թեան Խուրիկեցւոց. և այն ինչ հասեալ յաստուա-
ծապահ քաղաքն Թեսաղոնիկեցւոց, բարեպաշտ և
արդար կամօք ուղէր զերասանակ իշխանութեանն,
և ոչ փոքր ինչ գոհութիւնս մատուցանէին առեղոյն
ժողովուրդքն առ Թագաւորն։ Յայնժամ նախանձե-
ցաւ ընդ նա բանսարկուն, որ սովոր է միշտ նախան-
ձել ընդ բարիս մարդկան. և՝ ի վայր արկեալ զնա յ-
րատանցն՝ զոր ստացեալ ունէր յինքեան զառաջինն,
սերմանեաց՝ ի նա զորոմն չարութեանն իւրոյ, զորո-
վայնամոլութիւն և զկեղտաւորութիւն, զարմատ ա-
ղեղն չարեաց զարծաթասիրութիւն և զագահու-
թիւն. և յայսմանէ նախանձմունքական տեսչութիւնն
փոխանակ ծուլանալոյ նորա՝ ի պատուիրանացն Աս-
տուծոյ, անկեալ եղև յախտ հիւանդութեան անհնա-
րինս անդամալուծութեան, որպէս չէր հնար յումեքէ
առողջութիւն գտանել, որք ըստ մարդկային արհես-
տից են հմուտք բժշկութեան։ Այլ միայնոյն յայտ*

ախտի անկեալ գներ այրն այն զամս բազում, տա-
րակուսեալ՝ ի մարդկային բժշկութեանցս, ուր ու-
րեմն զմտաւ ածէր յաւուր միում զպանչելապուծ վը-
կայն Գրիտատոսի զսուրբն Դեմետրիոս: Եւ մինչդեռ
յայսմ մտաց խորհրդի էր՝ նիրհեր, և յանկարծակի
երևեր նմա սուրբ վկայն՝ ի կերտարան բարեկամի,
հարցանէր եթէ զինարդ այնչափ ժամանակս անկեալ
դնի յախտ անդր: Իսկ նա պատասխանի տուեալ ա-
սէր հեծեծելով այսպէս. Տէր իմ, ոչ կարեմ պատմել
զտանջանս՝ զոր կրեն անդամք մարմնոյ իմոյ. վասն զի
եթէ՝ ի ջերմն մերձենամ, տառն թուի մարմնոյս, և
յորժամ՝ ի տառն՝ այնպէս կարծեմ եթէ ջերմ է. իսկ
թիկունքս և արմկունքս և ձեռքս՝ միայն կախեալ կան
առանց զօրութեան. և յորժամ շարժել կամիցեմ՝ ոչ
զպակս կամիմ տարուբերիմ, կամ զպակս պէտք են ինձ
զան զհետ իմոյ կամացս: Եւ զնոյն առ ընթացս կրեմ,
՝ի բարձից և՝ի ծնկացս և՝ի զրունիցս, վասն զի կար-
ծին միայն եթէ անդամք իմ կոչեն և՝ի զօրութեան ա-
մենևին ընդարմացեալք: Եւ դու զինչ արդեօք ունիս
առել ինձ, ով սիրելի բարեկամ, որ այդքան դժ-
թեամբ հարցանես զիս, և կամ զինչ թերապրութիւն
մատուցանես վշտապնեալ անձին իմոյ:

Պատասխանի ետ նմա սուրբն Դեմետրիոս և ասէ.
Լուր ինձ, եղբայր, և առացից քեզ զարժանն, որպէս
կարասցես թողութեան հասանել և բժշկութեան
մարմնոյդ. նախ խրատ տամ, պարտ է քեզ բարեմիտ
լինել և առանց տրտնջման, և զոհացողութեամբ ըզ-
ցաւս մարմնոյդ ընդունել, և մի ընկղմել զանձդ ան-
յուսութեամբ՝ ի խորս տրտմութեան հոգւոց, և ապա
՝ի միտ առնուլ եթէ ամենայն ինչ նախախնամութեամբ
ներգործի՝ ի մարդիկ յամենեցունց հրաշագործողին
Աստուծոյ ըստ իւրում օգուտս. զի թէպէտ և ըստ ար-
ժանեաց ինչ կիցս կրեացէ, սակայն և զայն մարդասէր
տուիչն Աստուծոյ՝ ի մեզայ թողութիւն հասա-
րեացէ. քանզի ասա տալով վէրս մեզայն, ՝ի հանդերձ
ձեալ դատաստանին մարդասիրութիւն գտցէ՝ ըստ
մարգարէին Նաւումայ, եթէ ոչ կրկին վրէժս խընդ-
րեացէ Աստուած. միայն թէ զոհութեամբ զցաւս ան-
ձին յօգուտ շահիցի, այլ ոչ տրտմութեամբ և տըր-

ընդմանէ կրկին տանջանս ինքեան առասցէ։ Այսպէս է. Թէ արդար էին որ զկնի ցաւոցն ընդունէին և զոհանայցէ բազում զգուշութեամբ առ՚ի պահել զարդարութիւնն, առ ընկալցէ և՚ի հանդերձեալսն մեծ ծապայծառ իբրև զոսկի՝ ՚ի հուր մաքրեալ՝ փառօք պսակեսցի, որպէս զերանելին Յոբ։ Իսկ վտանգեալ եպարքոսն՝ սկսաւ հարցանել ցնա անդէնն՚ի նմին տեսլեան և ասէ. Ո՞վ ես դու տէր, և ո՛ր էր տեղի քնացութեան քո՝ որ զայդքան գեղեցիկ վիճակս ինձ մատուցանես ինձ։ Նմա ցնա սուրբն. Իմ տեղի քնացութեան Թագաւորական քաղաքն է, անդր եկեալ գայցես զիս և ուսցիս զանուն իմ։ Եւ Մարիանոս զարթուցեալ պատմեաց զտեսիլն մերձաւորաց իւրոց։ Եւ դարձեալ սկսաւ ոդալ զԹշուառութիւնն իւր. վասն զի՞ տաւ՚ի սրբոյն, Թէ իմ քաղաք Թագաւորական քաղաքն է, կարծեաց Թէ զԿոստանդինուպոլիս ասաց, և ասէր. Վայ ինձ Թշուառականիս, որչափ իմքն գութեամբ սիրեաց զիս՚ի տեսլս և կամ որչափ տրամութեամբ, և տարակոյս լցոյց զիս. վասն զի ես աստ անդամալոյծ անկեալ դնիմ՚ի Թեսաղոնիկեցւոց քաղաքիս, զքեզ ո՛րպէս կարիցեմ գտանել՚ի Կոստանդինուպոլիս, ով տէր իմ և մերձաւոր բարեկամ։

Յայնժամ մի ոմն յայդոցանէ որ մերձ առ նա կային, ապրեալ նման ընտրհացն Աստուծոյ, ասէ ցտարակուսեալսն Մարիանոս. Մի վհատիր, տէր իմ եպարքոս, ես առեալ տարայց զքեզ առ բարեկամ քո, և ընդէր ոչ իմանաս Թէ նա ինքն է գոլել վիայն Քրիստոսի Աստուածոյ, որ ոչ Թէ յերկրաւոր Թագաւորական քաղաք բնակէ, այլ՚ի վերինն Երուսաղէմ, որ քաղաք անմահ Թագաւորին է. զոր և այժմ՚ի մերում քաղաքիս գտանէ, վասն զի աստ կատարեցաւ. այլ և յերկինս նաւար քաղաք և յատաջին կալոյ անմահ Թագաւորքն ոչ նաւասցէ։ Զի ոչք խաչակից եղեն տեառն իւրեանց՝ և փառացն հաղորդ գտանիցեն, անխուԹ հոգւով վախճեալ են, և՚ի նախանձաւորութենէ հօտից իւրեանց ոչ՚ի բաց կան, իբրև զի կենդանի է Քրիստոս ասա յոսկերս նոցա։ Այդ ևկ, տարայց զքեզ՚ի տաճար սրբոյն, և անդ վայելեսցես՚ի ընտրս վիային, և գըտացես զաւուղջութիւն անդամոց քոց։ Այդ զայս ասա-

ցեալ ջնորհալից մանուկն, բարձին զնա մահճօք և տարան եղին յատակս եկեղեցւոյն, որ պեղեցկապէս շինեալ էր յանուն սրբոյն։ Իսկ նորա նկատեալ ե֊տես՝ի տաճար անդր զպատկեր երանելւոյն. և յառեալ՝ի նա զաչս իւր միայն, քանզի ոչ կարէր և զգլուխն ամենևին՝ի վեր ամբառնալ, կաց յաղօթս այսպէս. Ո՛վ տէր և ամենատէր Քրիստոսի, դու մատուցեր զանձինս բազմաց անուշահոտ պատարագ Աստուծոյ, և՝ի վե֊րոյ ամենեցուն զքեզ ինքնին բոլորատուղ ընծայե֊ցեր նմա։ Դու եղեր զանձն քո փոխանակ այնորիկ որ վասն ամենեցուն եդ զանձն իւր։ Դու վասն բազում աշակերտելոց խոցեցար, փոխանակ այնորիկ որ վասն ամենայն աշխարհի փրկութեան եւ կամաւորաբար զկող իւր գեղարդեանն։ Դու զբազումս ածեր՝ի կեն֊դանութեան քոյմ՝ի պարկեշտութիւն, և առաւել յորժամ զՔրիստոսիս կենդանութիւնդ ընկալար՝ի Քրիս֊տոսէ։ Եւ մեք Թէոդոտէ ոչ զբանչելեօք նկատեմք զե֊րեսան քո, և զի խօսիմ ևս, և աշակերտես զգաստաս քո զայս՝ի ձեռն աքանչելեաց քոց, և հոգևոր ցօղով բժշկութեանդ քո զբազումս արդիւնաբերես յաս֊տուածային շուքսն։ Աղաչեմ զքեզ, կենդանի վկայ Քրիստոսի, հեղ յիս՝ի տառապեալս զշնորհս բժշկութեան քո. պնդեա զլուծեալ անդամս իմ։ Ա֊հաւասիկ անդամալոյծս մերձ յաւազանս քո անկեալ դնիմ, սպասելով քեզ փրաւարութեամբ հրեշտակիդ առ՝ի շարժել զողորմութիւն, իմովքն կենդանալ ջոյդ բժշկութեան՝ի վերայ իմ։ Այս և դու ցիս՝ որպէս և տէրն քո Յիսուս Քրիստոս ցբազմամեայ անդամա֊լոյծն, թէ՝ Ա֊րի, ած զմահիճս քո և գնա. որ թէպէտ և երեսուն և ութ ամ ոչ ունիմ, սակայն երեսունևվին երեսուն և ութից առաւելութեամբ մեղօք անկեալ դնիմ։ Ա֊րդ և դու որ նման եղեր հեզութեան վար֊դապետին քո, նմանակից լեր և զԹումթեան նորա. և քանզ զիտեմ եթէ կարող ես օգնել ինձ, վասն զի դու ընկալար զիշխանութիւնդ զայդ՝ի Քրիստոսէ, վասն չքնաղիդ հաւատոյ քոյ։ Այդպես իբրև զԱյտուած. Ա֊րի, ած զմահիճս քո. ասա և դու իբրև զԻտարտաս ծառայ նորա. նոյնպէս հաւատոյ բազմամեայ լու֊

ծեալն. եւ փոյթ ընդ փոյթ չեպեցաւ ծանուցանել ազգին Հրէից զգօրութիւն աստուածծութեան նորա. հաւատամ և ես և քարոզեմ յամենայն աշխարհի զգօրութիւն այնորիկ՝ որ արժանաւորապէս պահեացին զքեզ. յառնեմ և ես ոչ միայն զմահիճս բարձեալ այլ պատարագս և նուէրս բարձեալ քեզրից՝ ի վկայութիւն սրբութեան քում. և այսպէս՝ ի ձեռն քո, ամէն մարդասէր վկայ, փառաւորեցի յիս ամենատուրդ ողորմութիւնն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ զայս ասացեալ Մարիանոս՝ նիրհէր յաշխարհութենէն. և ահա երևեալ նմա փառաւորեալ վկայն Քրիստոսի Դեմետրիոս ըստ առաջինն օրինակի առնելեանն, և ասէ ցնա. Բարիոք լուար ինձ և եկիր այսր, տէր եպարքոս, և ես վաղվաղակի Աստուծոյ կատարեցից զոր խոստացայ առնել քեզ. բայց և զայս տեառն իմոյ պատուիրան առանդեցից քեզ. ահաւադիկ ողջ ջացար, ոչ դարձեալ մեղանչեր, զի ոչ չար ևս լինիցի քեզ. քանզի տակաւին է լուծելոց անձանց, յորժամ արտանական ինչ առցեն՝ խոստովանին՝ ի քաց կալ՝ ի մեղաց, և՝ ի հեշտականն՝ Թուլանան՝ ի բարեաց. ըստ այնմ, թէ՝ Յորժամ տկանայիցեր զնոսա դառնայիցն խնդրեին և առաւօտ առնէին առ Աստուած։ Եւ դարձեալ. Եկեր Յակոբ և յագեցաւ, անկուշեաց զսիրելին, դիրացաւ աստուրացաւ լայնացաւ, եթող զՏէր Աստուած զարարիչ իւր և յետս եկաց յԱստուծոյ փրկչէն իւրմէ։ Այլ եթէ աստուգապէս հաստատեցիս՝ ի Հնազանդութեանն՝ ողորմութիւն Քրիստոսի բժշկէ զքեզ բարեխօսութեամբ իմով։ Պատասխանի եւ Մարիանոս և ասէ. Հաւատամ տէր, եթէ ոչ անցից զպատուիրանաւ քով, միայն եթէ ողորմեացի քեւ, և ընկալայց զբժշկութիւն անդամոց իմոց։

Եւ սորա վկայն ձգեալ զձեռն իւր շօշափեաց զամենայն լուծեալ անդամն նորա և ասէ. Քրիստոս Աստուած Հնազանդիւ բժիշկն հոգւոց և մարմնոց բժշկեաց զքեզ և զախտացեալ անդամն քո, այն որ յարուցանէ զանկեալսն և կանգնէ զպառկեալսն, Եւ զարհուրեցեալ Մարիանոս՝ ի տեսլենէ անտի, կաց կանգուն առողջացեալ ամենայն անդամօք իմօք իբրև զառաջինն՝

Ինչ էր ախտացեալ, և սկսաւ փառաւորել զԱստուած, և գոհանալ զտուրբ վկայէն՝ յորոյ ձեռն եւ պիտ զբժշկութիւնն. և ասէր արտասուօք այսպէս. Ո՛վ, ուրբան խնդութիւն էր քաղցր բարբառ քո՛ի հոպիս իմ, վկայ Քրիստոսի. Ինչ գրեթէ դեռ ևս հնչէ՛ի ականս իմ, և ցնծացեալ պարարէ զամենայն ոսկերս իմ:

Այլ այսոցիկ այսպէս եղելոց աքանչելեացն՝ սկիզբն առնէր այնուհետև այրն Աստուծոյ՝ կրթեալ զինքն յաւուրս հրահանգս առաքինութեան, և ժուժկալութեամբ առաւել քան թէ մարմնականօք զիշխանութիւնն իւր զարդարէր: Իսկ նախանձոտ բանսարկուն իբրև եաթս զայրն այնպէս պայծառացեալ առաքինութեամբ, սկսաւ այնուհետև զիւրեան մեքենայել ընդդէմ նորա զչարութեանն սերմանան, որպէս զի՛ի վայր անկեալ յառաքինութեանցն: Եւ իբրև յամենայն պարտեալ լինէր չարութիւնն, օձն ոչ կարացեալ ազդել՛ի նա զամենազան մեքենայն իւր, և կամէր սերմանել զչար սերմանիսն իւր. վասն զի յոյժ ամրացեալ զգուշութեամբ էր հաւատոյն, և ամրացեալ ունէր յինքեան զսերմն բարեպաշտութեան:

Եւ տես զինչ գործէր այնուհետև չարանախանձն, որ խորամանգութեամբն ոչ կարաց յաղթել՝ զջղեցաւ՛ի միւս կողմն. և խնդրեաց չարչարել զնա որպէս զեանեալսն Յոբ, որ և խոզից անպատմ ոչ ունի իշխանութիւն առանց Աստուծոյ թողացուցանելոյն: Իսկ վասն զի կամեցաւ Աստուած առաւել պայծառացուցանել զնա, և յաճախ առնել զչարախօսն նորա, թոյլ եա չարչարել զմարմինն նորա և հոգւոյն ոչ իշխել: Եւ հարաւ մարմին նորա չարաչար վէրօք, մինչ գրեթէ ամենայն անդամք նորա քակտեալ լինէին՛ի միմեանց, որ պէս զի այլոց մատուցանել զվէրակուրն՛ի բերան նորա, վասն զի պատուական էր այրն յաչս ամենեցուն: Բազում անգամ բժիշկք՛ի քաղաքին և՛ի գաւառէն էկին անդր, բայց ոչինչ կարացին օգնել նմա. և իբրև յամենայնէ յուսահատ լինէին որ իւրքն էին, առկայն նա ևս առաւել զոհութեամբ առնէր զչարչարանսն:

Յայնժամ մի ումն՛ի ծառայից նորա շարժեալ՛ի բանսարկուէն որպէս և յառաջագոյն կինն Յոբայ»

մասուցեալ յումնէն առնս այսպիսիկ, սկսաւ մեղմով
Թելադիը լինելնամս այսպէս. Պարտ է քեզ, ասէ, ալ
ասէր իմ, ունկնդիր լինել մեզ և շահեալ զմեզ զամե-
նեսեան և ընդունել զառողջութիւն մարմնոյ քո: Այլ
է սատ այր մի՝ որ գիտէ հնարս բժշկութեան, գրեալ
՚ի մատաղատի եբրայեցի բարբառով անուանս հրեշ-
տակաց, այլ և արեգակունս, և այլ բազմախոտան ա-
նուանս որ ոչ է ումեք յայտնի: Եւ մատաղատին յո-
րում այս ամենայն՝ ՚ի գրատանս վերարկուն ձևացու-
ցեալ է, գիր ունելով յինքեան նեղբոյ և արտաքոյ. և
ասէ, Թէ որ զգենուս զայս՝ բուժեալ լինի յամենայն
ախտից. արդ առ դու զինս, և զգեցիր և ազատեա
զբռատութեան և զմեզ ՚ի տրտմութենէ վերացիդ՝ որ հասին
՚ի վերայ քո, որ իբրև ՚ի խորս դժոխոց այնպէս Թա-
ղեալ կամք վասն քո: Պատասխանի ետ հանճեղոյն
այրն և ասէ. Ո՛վ մելիդնեալ Թելադիոյ՝ որ այդքան
յանդգնեալ ապստամբել ուսուցանես զմեզ Յ՚աստու-
ծոյ, և առ դիւթս և կախարդս և դեւս հաստուածես
զմարմինս առողջացուցանել, փութաս և զհոգիս սպա-
նանել: Ոչ այդպէս, այլ լաւ է ինձ մեռանել այսպէս՝
քան Թէ հեռանալ Յ՚աստուծոյ Հշմարտէ: Եւ այսպէս
՚ի բաց վարեաց զնա յիւրմէ իբրև զմի ոք յայտնոյ
անպատուոյ խօսեցեալ: Եւ ապա սակաւ մի զեռեղեալ
՚ի բազում վաստակոց մարմնոյն նիրհէր: Եւ ահա է-
րեւեցաւ նմա տուրք վիայն Բրիտտոսի Նեմեսիոս քա-
օրինակի առաջնոյն տեսլեանն, հարցանէր զնա վերա-
կացաբար, Թէ ուրպէս էցէ նա: Իսկ նա յոյժ հեծեծե-
լով ասէ ցնա. Ո՛րպէս ուրպէս տեսանես, տէր: Եւ
տուրք վիայն խանդաղատեալով զնովաւ ասէր. Մի եր-
կընչէր, սիրելի, բժշկեացէ զքեզ Տէր Յիսուս Բրիս-
տոս Յ՚աստուածն իմ: Եւ զարթուցեալ Մարիամոս ՚ի
քնոյ անտի յարեաւ և եկաց ՚ի վերայ ոտից նորա. և
ահիւ և խնդութեամբ լցեալ ՚ի բաց եդեալ զհան-
դերձան հիւանդութեանն, և առեալ նոր զգեցաւ, և
ածեալ գօտի ընդ մէջ և հոշիկս յոտս՝ յարուցեալ
գնաց ՚ի վիայարան տրտմոյն. և եկեալ ՚ի տեղին ու
կային ծածկեալ նշխարք նորա, ընկէց զինքն ՚ի վերայ
արծաթապատ կաղամբին՝ որ տապանաձև յօրինեալ
կայր, առաջի նկատակիր պատկերի վիային. և սկսաւ

*արտասուօք գոհանալ ըստ օրինակի առաջինն մաղթա-
նացն։ Եւ՝ ի կատարման ազօթիցն հայցել ընդունս յԱս-
տուծոյ՝ բարեխօսութեամբ սրբոյն, որպէս զի անա-
սուն պահեցի առաքինութեան նորա յամենայն մե-
քենայից բանսարկուին. և գնացեալ՝ ի տուն իւր եւ
զամենայն ինչս իւր՝ ի ձեռս աղքատաց։ Իսկ գհան-
դերձս մեծապինս և այլ ևս բազում գանձս ոսկւոյ և
արծաթոյ առեալ տարաւ զայն՝ ի սպաս պաշտաման
տաճարի սրբոյն, և այսպէս սատանայ յամօթ եղև, և
փառաւոր լինէր Աստուած յայրն յայն՝ ի ձեռն երա-
նելոյն Դեմետրիանոսի։ Վասն զի նմա վայել է փառք,
իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեան
յաւիտենից. ամէն։*

Պատմութիւն թէ որպէս փրկեցաւ քաղաքն Թեսաղոնիկեցւոց՝ ի պաշարմանէ բարբարոսացն և՝ ի վտանգէ ոսոխն, ՚ի ձեռն սրանչելագործի վկային Դեմետրիոսի։

Պատմեցից և այլ սքանչելիս՝ զոր արար Աստուած՝ ի ձեռն Հիւնդազեաց վկային Դեմետրիոսի, յոյժ հրա-
շափառապէս քան զառաջինն, զոր չէ իսկ պարտ ծած-
կել, զի մի զլացողք լիցուք նախանձառոյ փրկագործ
ծառայութեանցն Աստուծոյ, որ յամենայն գարս ներգործէ
յաղգս մարդկան՝ ի ձեռն սրբոց իւրոց, և այս ոչ մի-
այն առ մարմինս յարդարին նպատք, այլ և առ հոգիս.
վասն զի ուսոյ է մեզ մեղաց թողութիւն գտանել՝
պահ և համարձակութեամբ ունելումք կալ առաջի
անհաւատ բեմին Քրիստոսի, եթէ ոչ նային տուրք աղօ-
թիւքն զոր առ միայն կարեմք շահել։ Եւ եղև՝ ի ժա-
մանակս Մաւրիկեայ Յունաց կայսեր, իշխանն Աս-
բացւոց յինքն դումարեաց զամենայն ազգս բարբա-
րոսաց տալ պատերազմ ընդ Թագաւորին Յունաց.
և նախ զառաջինն դիմեաց յաշխարհն Թրակացւոց
և Մուրիկացւոց յաւարն առնուլ զնոսա, և եկեալ ե-
տես յաստուածապահ քաղաքն Թեսաղոնիկեցւոց,
ոչ էր քան զամենեսեան բարգաւաճեալ բազմայար-
մար փարթամութեամբ։ Քանզի զայս խոստեր բար-
բարոսն՝ ի միտս իւր եդ եթէ զնա առից, և զբառնն ածից*

այնուհետեւ զԹագաւորն Յունաց: Այլ իբրեւ եկին եւ հաս յանապատատեղին՝ ի վերայ քաղաքին անհուն բազմութեամբ, զոր ոչ կարէր ընդ Թուով արկանել զոր ոմանք երկրորդ Սինեքեղիմ կարծային զնա, այն որ եկեալն էր՝ ի վերայ տանն Հրէաստանի, վասն զի զչեռս ցամաքեցուցանէին և զաղբիւրս և զլոյս աներեւոյթս ունէին. և այս լինէր յաւուր կիւրակէի՝ ի ժամ առաւօտու, յամենայն սեպտեմբեր, որ օր քան և երկու էր առաջի: Իսկ իբրեւ գաղտ՝ ի գիշերի պատեալ պաշարեցին զքաղաքն, և տղեալ մեղմագնաց քայլիւք մերձեցան՝ ի պարիսպն՝ իւրաքանչիւր սանդուխս ըստ անձին բարձեալ կինքն. և քանզի ոչ գոյին պահապանք, և սկսան՝ ի վեր ելանել մինչեւ չէր այգոյն քաջ մերկացեալ: Եւ իբրեւ ելին բազումք և քաջամարտիկք՝ ի ներքուստ, տասերամերկք եղեալ կամէին՝ ի քաղաքն յարձակել յայնժամ յանկարծակի տուրբ վըկայն Դեմետրիոս եւ ընդ առաջ նոցա՝ ի կերպարանս զինուորի, հար զմի ումն՝ ի ներքուստ գեղարդեամբ և Թափանց արարեալ ընկէց յայնկոյս պարսպին. և զայն տեսեալ այլոցն զարհուրեալք՝ ի տեսլենէ նորա առ հասարակ՝ ի վայր հոսեալք արտաքս անկանէին. այս նախ առաջին հրաշագործեցաւ՝ ի ձեռն տուրբ մարտիրոսին: Իսկ առ վաղիւն իբրև գիտացին բարբարոսքն՝ Թէ ոչ գոյ զօրք՝ ի քաղաքին, յարեւելից կողմ պարսպին մինչև յարեւմտից դռանն՝ որ ինչ բազմաքանդ էր, ՝ի ծուխ մինչև ՝ի ծուխ առաստաւիկ արարեալ լինին զարտաքին խանդակն պարսպին, մինչ գրեթէ անհուն բազմութիւնն՝ ի միմեանց վերայ կուտեալք՝ ի ներքս հոսէին, որպէս զի անյոյսք լինէին ամենեքեան որ՝ ի ներքս՝ ի քաղաքին, և՝ ի լալեդեալ ամենեքեան իբրև զվտակս ջուրց այնպէս զմի արտօսր հեղուին: Իսկ առաջի վկայն Քրիստոսի ընդդէմ զինեալ բարբարոսացն, և ոչ Թողացուցանէր նոցա՝ ի ներքս մտանել. և զայսպիսի նախախնամողական տեսլեամբ երեւումն միայն արժանաւորք ոմանք՝ ի հաւատացելոցն տեսանէին: Եւ յայսպիսի պաշարման եւ կաց քաղաքն սկսեալ՝ ի քան և երկուցն սեպտեմբեր ի ութ մնոյ մինչև՝ ի յոթն ամս. և քանզի յանապատատեղի բարբարոսացն, և ոչ Թողացուցանէր նոցա՝ ի ներքս մտանել. և զայսպիսի նախախնամողական տեսլեամբ երեւումն միայն արժանաւորք ոմանք՝ ի հաւատացելոցն տեսանէին: Եւ յայսպիսի պաշարման եւ կաց քաղաքն սկսեալ՝ ի քան և երկուցն սեպտեմբեր ի ութ մնոյ մինչև՝ ի յոթն ամս. և քանզի յանապատատեղի բարբարոսացն, և ոչ Թողացուցանէր նոցա՝ ի ներքս մտանել. և զայսպիսի նախախնամողական տեսլեամբ երեւումն միայն արժանաւորք ոմանք՝ ի հաւատացելոցն տեսանէին: Եւ յայսպիսի պաշարման եւ կաց քաղաքն սկսեալ՝ ի քան և երկուցն սեպտեմբեր ի ութ մնոյ մինչև՝ ի յոթն ամս. և քանզի յանապատատեղի

սեալ պաշարեցին զքաղաքն ամենայն ՚ի ժամանակս Թզղ այդեացն, և ցանեալ ցրուեցան զօրքն քարքառոտաց յամենայն գաւառն, և սպառեցին զամենայն ցորեան և զգինի և զամենայն միրգս. և ՚ի պաշարման լինելոյ զայնչափ ժամանակաւ՝ բազումք մեռան ՚ի սովայ որ ՚ի նեղութս էին: Այլ մինչդեռ յայսպիսի վտանգի էին՝ կամեցաւ Աստուած ցուցանել ամենեցուն թէ միայն բարերարութեամբն իւրով որ ՚ի բարեխոսութեանէ սրբոյ վկային՝ եդեսի քաղաքն այն զերկուքեան, ապա եթէ ոչ հարկ էր կորնչել ամենայն իրօք: Վասն զի այր ոմն էր ՚ի քաղաքին՝ ՚ի պատուական ազգէ յոյժ երկիւղած ՚ի Տեառնէ, և զարդարեալ ամենայն գործս բարեաց. սա տեսանէր յաւուր միում յոյժաման ննջել ՚ի տանն իւրում առեալ ինն աքանչելի: Իբրու զի սաւք երկու լուսապզեստք եկին մտին ՚ի վկայարան սրբոյն, որպէս թէ պատգամաւորք Աստուծոյ էին նա. և ասեն ցնա այսպէս. Տէր Յիսուս Քրիստոս առաքեաց զմեզ, որպէս զի Թողցես զքաղաքս զայս և եկեսցես առ նա. վասն զի մատնելոց է զսա ՚ի ձեռս բարբարոսացն: Իսկ նա հարուստ ժամ մի տխուր զէմք ՚ի վայր նայեցեալ՝ ոչ տայր պատասխանի նոցա: Այսա յետ այսորիկ ասէ ցնոսա. Ոչ այդպէս, տեարք իմ և ծառայակիցք, ոչ երթամ աստի, և ոչ Թողում զՏայրենի բնակութիւնս իմ: Վասն զի աստ կատարեցայ և աստ Հովուեցից զՀօտ իմ: այլ այսպէս առաքիք ցկերկինն իմ և Աստուածն, Թէ՝ Ո՛վ տէր, զինարդ կոչանես զայսքան ժողովուրդ՝ զոր գնեցեր պատուականաւ արեամբդ քով. այո՛ Տէր, մի առներ ըստ մեզայ մարդկանս այսորիկ, այլ ըստ բազում ողորմութեանդ քում, վասն զի ցաւումն քո ոչ եթէ զկորուստ խընդրէ՝ այլ զդարձ և զապաշխարութիւն. այլ Թէպէտ և խրատես, Տէր, քաղցրութեամբ և մի բարկութեամբ: Եւ զայս առեալ մարդասէր վկայն, ողջունեալք ՚ի նմանէ արքն պատգամաւորք դարձան անդրէն ուստի եկեալն էին:

Իսկ այրն երկիւղած զարթուցեալ ՚ի քնոյ անտի եւ վազվազակի ՚ի պարիսպն, շրջէր քաջալերէր զմարդիկն. Մի երկնչիք, ասէ, եղբարք, վասն զի տուրբ վկայն Քրիստոսի Դեմետրիոս ընդ մեզ է. և նա խոնարհ

հեծուցանէ զբազմազումն Աստուած յողորմութիւն՝ չկորուսանել զքաղաքս զայս վասն անօրէնութեանց մերոց, միայն խոստովանել և ապաշխարել զանցեալս մեր, և քաղցրութեամբ Աստուծոյ վաղվաղակի ժամանեսցէ առ մեզ։ Որ եղև իսկ և կատարեցաւ և յանպ. ելին աղօթք սրբոյն։ Վասն զի բազարտոսք չըեաւ գնացին յաշխարհն Իւրեանց, և քաղաքն և գաւառն ամենայն գարձեալ յառաջին ամենայն գործս անօրէնութեան պայծառանային։

Ա.րդ այսոցիկ այսպէս եղելոց, առացից և զիւս ևս այլ ողորմութիւնն Քրիստոսի, որ եղև՝ի տեսչութենէ սրբոյն, քանզի յառաջագոյն առեալ զամենայն գեօղըս և զագարակս գաւառին աւերեալ էր բազբատացն, և համբաւ քաղաքին պաշարմանն[1] տարածեցաւ ընդ ամենայն աշխարհն. և վասն այնորիկ ոչ գային անդ նաւք վաճառականք հայի և այլոց կերակրոց յաշխարհացն՝ բայ առաջին սովորութեանցն։ Յայնժամ ապա սկսաւ քաղաքն և գաւառն նեղիլ՝ի սովէ. և ահա նաւք բազումք եկեալ յաշխարհէն Իտալիոյ, նաւէին՝ի Բիւզանդիոն՝ բարձեալ ունելով ինձ յինքեան ցորեան բազում։ Յայնժամ երևեալ նոցա տուրբն Դեմետրիոս՝ի տահմանս Քիոնի կղզւոյ, և առ ցնաւապետ նաւացն այնոցիկ, որում անուն էր Սոեփանոս, և ցընկերս նորա. Յո՞ նաւէք գուք եղբարք։ Եւ նոքա ասեն. Ի Բիւզանդիոն։ Ասէ ցնոսա. Ո՛չ այսպէս, այլ եկայք զկնի իմ՝ի Թեսաղոնիկէ, և անդ բազում շահս ընդունիցիք։ Ասէ նաւապետն. Լուեալ է մեր եթէ աւերեալ է քաղաքն այն՝ի բարբարոսացն, զկնի երկուց ամսոց անդր։

Պատասխանի եւս տեսիլն և ասէ. Ես եմ Դեմետրիոս վկայն Քրիստոսի որ անդ կատարեցայ, և անդ քաղաքացիս եմ. մի երկնչիք, եկայք զկնի իմ, վասն զի Աստուծոյ առաքեցայ ես առ ձեզ։ Եւ ուղեալ վկային զառաջացն ընդ շահիլս հոգմոյն, աջոզակ եղեալ վաղվաղակի հասին՝ի Թեսաղոնիկէն։ Յայնմանէ և այլ բազում նաւք եկին անդր, և ամենայն քաղքն և ամենայն գաւառն լցեալք հայու վաճառու

1. Յոր. պաշարոնն։

առնէին զԱստուած՝ որ այսպէս հրաշագործեաց առ նոսա՝ ի ձեռն վկային իւրոյ Դեմետրիոսի։

Այլ զայս յիշատակարանս յարմարեցաք, եղբայրք, ընդ վկայութեան սրբոյն, զի ամենայն հաւատացեալք ընթեռնեալ զսա մտադիւրութեամբ կատարեսցեն պիտոյիսն սրբոյն։ Վասն զի նոքօք կարեմք ողորմութիւն գտանել յԱստուծոյ, յայսմ աշխարհի և ի հանդերձեալումն. նաև մեզայ թողութիւն և ի պատուհասից զերծումն և ամենայն ուսեալք էակ մեզ, եթէ ոչ նոցին սուրբ աղօթիւքն. զի ամենայն իրօք ըզհեզութիւն և զմարդասիրութիւնն Աստուծոյ յինքեան կրեցին, մինչ աստ էին, և յորժամ անտի գնացին։ Այլ և աստ խաչակցեալք ընդ Քրիստոսի, և անտի թագաւորեալք ընդ նմա բազում հանդարձատութեամբ՝ զամենայն ինչ զոր և հայցեն վասն մեր ընդունին ի նմանէ։ Վասն որոյ և մեք բազում փութով զքրիստասիրս նոցա կատարեացուք, զի և փառաց նոցա արժանի լիցուք, և ընդ նոսին յարտաքուստ բերկրանօք փառաւորեցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Դիոմիդեայ քժշկապետի։

Ի ժամանակս Թագաւորութեանն Վիոկղետիա-
նոսի և Մաքսիմիանոսի, էր հալածումն մեծ եկե-
ցոյն Աստուծոյ, քանզի պատուէր հրամանի տարա-
ծեալ եղև՝ ի նոյանէ ընդ ամենայն աշխարհս Հռոմայե-
ցւոց իշխանութեանն, երկիր պագանել անշունչ պատ-
կերաց կռոցն, ոսկւոյ և արծաթոյ և պղնձոյ քանդա-
կեալք և կերպարանեալք էին. բազում անդր այնու-
հետև ընդ ժողովս հաւատացելոցն անցանէր ընդ ա-
մենայն տեղիս սէրութեան նոցա։ Վասն զի ամենայն
ուրեք ուր և ըմբռնէին զքրիստոնեայսն կարգեալք՝ ի
Թագաւորացն դատաւորքն՝ հարկեցուցանէին՝ ի զոհս
գարշելի դիւացն, և նոցին ձուլածոյ պատկերացն.
զբազումս չարչարէին մեծամեծ տանջանօք, և զոմանս
սպանանէին, և զկնոց գինչս յափշտակէին. և այն-
պէս գառն նեղութիւն կայր յաւուրսն յայնոսիկ՝ ի
վերայ բարեպաշտիցն։ Յայնմ ժամանակի երևեցաւ
այր մի՝ ի Տարսոն Կիլիկեցւոց քրիստոնեայ կրօնիւք,
յազգէ ազնուական, մեծատուն յոյժ, բարեպաշտօն
և երկիւղած Աստուծոյ զարդարեալ ամենայն առա-
քինութեամբ, որոյ անուն էր Դիոմիդէս։ Սա պա-
տուական երևէր յաչս ամենեցուն. քանզի էր մա-
նուկ տիոք, գեղեցիկ կերպարանօք, մինչ գրեթէ զա-
մենայն տեսողն զարմացուցանէր գեղեցկազարդու-

Թիւն պատկերի նորա. առեակ և հմուտ էր բժշկական արհեստին՝ ի մանկութենէ իւրմէ, առաւել քան զամենայն Հելլենացի իմաստասիրացն մանկունն, որպէս զի զբոլոր արուեստս բժշկութեան զոր նոքայն պատմէին՝ լի կատարեալ գիտէր, զՎսկղեպեեան և զՀիպոկրատեան և զՂիմոկրատեան և զմեծին Գալինոսի։ Սա ջրջէր ամենայն ուրեք, և զամենեսեան առ հասարակ ձրի բժշկէր. բայց ոչ այնչափ մարդկային արուեստիւն կատարէր նա զբժշկութիւնս՝ որչափ մեծամեծ հաւատովքն իւրովք, կարդալով՝ ի վերայ իւրաքանչիւր ումեք զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. քանզի առաքեալս աշակերտեալ էր Քրիստոսի Հիմարիտ բժշկին, և այսպէս ոչ միայն զմարմնոյն բժշկէր, այլ և զհոգիսն, ուսուցանելով զամենեսեան հաստատուն և անշարժ կալ՝ ի հաւատս Հիմնարկին Աստուծոյ, և առ ոչինչ համարել զիւրս անմահունչս և ոչ զանգիտել յառաջանալեաց մահուանէ, և արհամարհել զիւրս անցաւորս և յաւիտենականին միայն սպասել և յայտնապէս խոստովանել զՔրիստոս առաջի ամենեցուն։ Եւ այսպիսի քաջալերութեամբ և վարդապետական մխիթարութեամբ զբոլոր աշխարհն Ակլիկեացւոց էլից երանելի այրս այս Դիոմիդէս։ Եւ ապա՝ ի մտի եդ գնալ հանդերձ յաշխարհն Բիւթանացւոց, զի և անդ կալցէ նաւուրց եղբարցն սպաս տարցի՝ ի ձեռն բժշկութեան և քաջալերական բանից. և եկեալ՝ ի մայրաքաղաքն Նիկիա կամեցաւ բնակել անդ, քանզի ցանկալի թուեցաւ յաչս նորա զիր քաղաքին իբրև զՀոյակապն Տարսոն, յորում և սնեալն էր. և բնակեալ անդ՝ ի վար արկանէր զարուեստ իւր, շրջելով՝ ի հրապարակս քաղաքին, և աներկիւղ համարձակութեամբ զՔրիստոս քարոզէր, և բժշկէր զամենեսեան։ Եւ զայս ոչ միայն՝ ի քաղաքին առնէր, այլ և յամենայն գաւառն Բիւթանացւոց. նաև որք՝ ի բանդի արգելեալք էին քրիստոնեայքն՝ ինչս բազում առեալ բանտապահացն, և համարձակութիւն առեալ յամենայն ժամ մտանէր առ նոսա և բժշկէր զհարուածս վիրացն նոցա. և ամենայն ուրեք շրջէր և ժողովէր ինչս բազումս և այնու դարմանէր զիւրսն, և զքաջասիրտսն

յօժարեցուցանէր, և ազաչէր ազօթս առնել՝ ի վերայ ինքեան և՝ ի վերայ ամենայն աշխարհի, որպէս զի անցցէ խռովութիւն կռապաշտութեանն, և քարեպաշտութեան հաւատոյ հաստատել քարոզէսցի ընդ ամենայն աշխարհս։ Նոյնպէս զօրացուցանել և ամրացուցանել զնա ի հաւատս Յիսուսի Քրիստոսի, որ յաւերժական պատմի, ասէ. Ամենայն որ ուրացցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է։ Եւ դարձեալ զմոլորեալսն կանգնել, եթէ՝ Մի՛ երկիցէք յայնցանէ որ սպանանեն զմարմինն և զոգին ոչ կարեն սպանանել։ Եւ դարձեալ զառաքելական բանն առաջի բերել, թէ՝ Զեզ արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց ժամանակացն որ յայտնելոց են՝ ի մեզ։ Եւ այլ ևս բազումս այսպիսիս քաջալերական բանս՝ ի սուրբ գրոց առաջի բերելը նոցա՝ ի միխիթարութիւն։

Նոյնպէս երբեմն տեսիլն գնա ասելով՝ ի հեթանոսականացն, որ այսպէս զամենեսեան սրտապնդէր, երբեմն՝ ի Նիկոմիդացւոց քաղաքն պատմելին Մաքսիմիանոսի Թագաւորին և ասէն. Ա՛յր ոմն քրիստոնեայ, անուն Վիտիպէս՝ յարուեստ բժիշկ, բնակէ՝ ի Նիկիացւոց քաղաքին, և պատճառանօք բժշկութեան շրջի ընդ ամենայն աշխարհս Բիւթանացւոց, և կախարդական հաւանութեամբ զբազումս յաստուածոցն՝ ի բաց դարձուցանէ, ասելով, թէ չեն աստուածք այլ կուռք անմտութեք. և զայլ ոմն խաչեալ Աստուած ասէ, և զամենեսեան նոսա աշակերտէ. և թէ ոչ երթայ ժամանեսցես և ըմբռնեսցես զնա, տէր իմ արքայ, զաշխարհս զայս ապստամբեցուցեալ յինքնակալութենէդ ձերմէ, հակառակ ընդդիմ քո յարուցեալ։ Երբեմն լուաւ զայս Թագաւորն, լի եղև սրտմտութեամբ, և երբեմն հրով այնպէս բռնաբռնեցաւ հրով նախանձու։

քանզի և յառաջագոյն այսպիսի համբաւ վասն սրբոյն հասեալ էր ՚ի լսելիս նորա. յայնժամ առաքեաց զա-հինձ հանդերձ բազում զօրօք, որպէս զի վաղվաղակի կապեսցեն զնա երկաթի կապանօք և ածցեն առաջի նորա: Եւ եկեալ զահձայն ՚ի քաղաքն Նիկիա, և ընդառնալ զերանելին՝ մինչդեռ ուսուցանէր ՚ի մէջ հրապարակին, և վաղվաղակի կապեցին զնա ձեռս յետս, որպէս և հրաման առին ՚ի թագաւորէն. և եդեալ ՚ի վերայ գրաստու, ՚ի չու անկեալ Հանապարհ արարին ՚ի Նիկոմիդիա քաղաք: Նակ տուրբ այրն Աստուծոյ Թէոդոտ և յոյժ ցանկութիւն ունէր վասն Քրիստոսի տանջանս ընդունել, սակայն հոգայր վասն այնոցիկ որոց բարւոք ծնօղինէր, զուցէ ոք ՚ի վատասրտացն անհամբեր գոլով՝ ուրացցի զՔրիստոս, և գայթակղեալ անկցի ՚ի վնաս կռապաշտութեան, և-թակուր լեալ յար հոգւոյ վիշապին:

Աստ միտդեռ նա այսպէս տխրէր և հոգայր վասն սրբոցն որ ՚ի տանջանսն էին վասն Քրիստոսի, և դա-հինձն ստիպէին արագ ժամանել յատեան թագաւո-րին: Նակ նբրև հասին ՚ի տեղի մինչ որչէր հեռի ՚ի քա-ղաքէն, աղաչեալ սրբոյն զդահինձն՝ որպէս զի նիջա-ցեալ զնա ՚ի գրաստէն տակաւիկ մի նեղեսցեն նմա յաղօթս կալ. և խոնարհեալ նոցա յաղաչանս նորա, Թոյլ եւտուն նմա, որպէս և կամեցաւ. և նորա մեկ-նեալ ՚ի նոցանէ նբրև քարընկէց մի, եղ ծունր կաց յաղօթս այսպէս. Տէր իմ Յիսուս Քրիստոս, որդի բարձրելոյ Հօր, Աստուած հրեշտակաց և ամենայն անուան անուանելոյ, օրհնեմ զքեզ որ արժանի արա-րեր զիս խոստովանողական վկայութիւն ընդունել վասն քո: Աղաչեմ զքեզ, Թագաւոր իմ և Աստուած, ընկալ զպաղատանս իմ, և կատարեա ՚ի բարի զինդերը-ւածս իմ, զոր հայցեմ ՚ի քէն ՚ի կատարածի կե-նացս եղեալ. մի Թողուր զիս ՚ի ձեռանէ քումմէ, զի մի Թակարդապատ եղեալ ՚ի մենքենայից թանաարկ-ուին անկայց ՚ի պատրանս խաբէութեան նորա: Մի տար Թոյլ խոցոտել զիս հրացեալ նետից իշխանի աշ-խարհս այսորիկ. մի ծածկեացեն զիս յորձահոս մըրըկեալ ալիք կենցաղոյս. օգնեա ինձ երկնաւոր նա-տապետ, Տէր իմ Յիսուս, զի մի անդնդոսայզ եղեալ

ընկղմեցայց ՚ի խորս յաւիտենից այսորիկ: Փրկեա զիս յօրոմայնէ վիշապին, և կորզեա զիս ՚ի ժանեաց արիւնահաճ գազանին, որ շուրջ գայ, գոչէ և կամի կլանել զիս. վասն զի դու ստեղծեր զիս յօրոմայնէ մօր իմոյ, և զնկարակերտութիւնն պատկերի իմոյ դու յօրինեցեր, և ես քեզ խոստացայ պահել զսա անարատ գեղեցկութեամբ ստեղծողիդ իմոյ և տեառն: Այլ պահեա զսա անշարժ ամենայն անդամօք ՚ի վերայ վիմի հաւատոյ, յորմ՚ի սկզբանէ անտի հիմնեցեալ հաստատեցայ, յորոյ վերայ և զարհունդ քո զանապատեան հեղեր. և որպէս կամք քո նախանձամոլականք կամիցի զօդուան իմ, այնպէս կատարեա զընթացս իմ: Եւ ոչ եթէ յաւժամանակեայ մահուանէս յայսմանէ զանգիտեմ ինչ, այլ քեզ ամենագիտողիդ յանձն առնեմ զպահպանութիւնն հոգւոյ իմոյ, որպէս զի անապատեան ընկալցայց զսա միաբանեալ ընդ անեղծ մարմնոյ ՚ի միասին վերանալոյ գալստեանդ քո. և յարուցուարձ բեմիկրաւորք ընդ ամենայն սուրբս քո փառաւորեցիկ զքեզ Հայր և Որդի, յաւիտեան յաւիտենից. ամէն: Եւ իբրև կատարեաց երանելին զաղօթս զայս, և աստ զամէնն, անդէն կնքեալ զինքն նշանաւսուրբ խաչին՝ աւանդեաց զհոգին նոր ՚ի Քրիստոս:

Իսկ զինուորացն կացեալ անդէն ՚ի տեղւոջն ուր ինքեանք էին գիտեն զնա ՚ի գրաստէն՝ հարուստ մի ժամ ճնացին գալըստեան նորա: Եւ իբրև յաւեաց և ոչ եկն առ նոսա՝ կարծեցին զնա փախուցեալ, և եկեալ ՚ի տեղին՝ զբանն զոր ասէն զնա վախճանեալ. և զառաջինն Հաւատեցան թէ ննջէ, մատեան զարթուցանել զնա. և իբրև գիտացին զնա վախճանեալ, զարմացան ընդ աքանչելին, և խորհուրդ առեալ թէ զինչ արասցեն, քանզի երկնչէին ՚ի ցասմանէ Թագաւորին, և ասա Հատեալ զկտուր սրբոյն տարան առ Թագաւորն, և պատմեցին նմա զոր ինչ եղև:

Իսկ իբրև եառես զայն Թագաւորն՝ տրտմեցաւ յոյժ վասն այնչափ վայելչութեան նկարագրի պատկերին, որ ոչ ժամանեաց առ նա կենդանութեան: Եւ նոյն ժամայն հրամայեն եառ նոցին իսկ զինուորացն՝ որպէս զի առեալ տարցեն անդրէն ուր մարմինն է, և ՚ի միասին յարեալ զգեստին ընդ մարմնոյն՝ դիցեն ՚ի հերմի և

անդրէն ճաճկեացեն, եւ նոցա առեալ զպատմութիւնս՝ դարձան անդրէն ըստ հրամանի Թագաւորին, և բեռնեալ յարեցին ի մարմինն. և իբրև արարին զայն՝ ընդ քաջ Աստուծոյ եղեն ի վերայ նոցա, և բացան աչք սրտից նոցա, և տեսին զՀիշատիտա լոյս Քրիստոս, և անդէն ի բաց եդեալ զկնութական պատիւն՝ աշակերտ տեցան Հիշատիտա հաւատոյն և եղեն սպասաւորք սուրբ հնչխարացն. և ոչինչ զանգիտեալք ի յահապին պատնաչեաց Թագաւորին, անվեհեր զՔրիստոս քարոզէին, և զբազումս ի կնութականց իւրեանց յորդորէին մնանել ընդ ամենայնի լծով նորա, որպէս և նորքայն: Եւ արդ վասն զկնութացն ոմք հաւատացին՝ այսչափ. այլ մեք անդրէն դարձցուք:

Եւ քանզի իբրև հասին զկնութոմքն զպատմութիւնս ի մեռեալ մարմնոյն ի Հանապարհի տեղւոջն որ ոչ էր հեռի ի քաղաքէն Նիկիացւոց, յանձն արարին զմարմինն իշխանի քաղաքին զպատմութիւն, որ և սքանչելիք եղեն յայնմ ժամու. քանզի ապրաւ մի Թուղեալ եկաց հանդէպ սուրբ մարմնոյն և ոչ Թողացուցանէր զայլս ի Թաղչնոյն մերձենալ առ նա. և այսպէս կացեալ մերձ առ նա զերիս աւուրս: Իսկ ապա յետ երից աւուրցն այնոցիկ կին մի մեծատուն ի գաւառէն Մեթաստացւոց, որոյ անուն էր Պատրոնիա, որ ի բազում ժամանակաց հեռի տանջեալ լինէր ախտիւ ոտվայնի իւրոյ, և ծախեալ ինչս բազումս ի բժիշկս և չէր ինչ օգտեալ. սա մատուցեալ առ իշխան քաղաքին՝ խնդրեաց զմարմին սուրբ վկային Դիոմիդեայ, տանել նմա ինչ բազումս. և առեալ զնա օծ անոյշ իւղովք, և սուրբ կտաւով պատեալ եդ ի պատշաճ տեղւոջ, որ և անդէն իսկ և իսկ վաղվաղակի բժշկեցաւ ցաւ ցաւ արգանդի նորա: Նաև այլ ևս բազում բժշկութիւնք եղեն ի ձեռն սուրբ վկային:

Արդ այսպէս կատարեցաւ սուրբ վկայն Դիոմիդէս ի Հանապարհի մերձ ի մայրաքաղաքն Բիւթանացւոց Նիկիա, յառաջ քան զերիս կաղանդացն օգոստոս ամսոյ, ի Թագաւորութեանն Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի. իսկ մեզ Թագաւորելոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի միածնի որդւոյն Աստուծոյ: Իսկ

ապա յետ սակաւ ինչ ժամանակի ծագեաց աւուրն լուսոյ քրիստոսապսակեալ կայսրն Կոստանդիանոս, և՝ ի բաց եբարձ զամենայն զաւակս ամբարիշտ թագաւորացն, և կոչեցանեաց զամենայն կուռս դիւացն պաշտաման նոցա, և բարեպաշտութիւնն ծագեալ ծաւալեցաւ ընդ ամենայն տիեզերս, և հալածեաց զխաւար կռապաշտութեանն. և թագաւորական հրամանաւ բազմացան եկեղեցիք ընդ ամենայն տիեզերս, և շինեցան վկայարանք սրբոցն մեծապատիւ վայելչութեամբ: Յայնժամ հրաման ետ թագաւորին զի շինեսցեն երիս եկեղեցիս յանուն սուրբ և մեծափառ վկային Դիոմիդեայ. մի՝ ի մայրաքաղաքն Նիկիա, և մի՝ ի հռչակաւորն Նիկոմիդիա, և միւս ևս՝ ի նորակերտ ձեռակերտն իւր՝ ի մեծն Կոստանդինուպոլիս՝ ի նորին Հռոմի. մանաւանդ յերիս եկեղեցիս զինչխարս սրբոյն. և հրաման ետ ամ յամէ զօր յինչատակի նորա տօնախմբել յաւուրջ քան զերիս կաղանդացն օգոստոս ամսոյ. յորում բժշկութիւնք բազում լինին մինչև ցայսօր ժամանակի՝ ի ձեռն սրբոյ վկային: Որով միշտ և հանապազ փառաւորի ամենասուրբ Երրորդութիւնն, Հայր և Որդի և սուրբ Հոգին, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոյն Եփեմայ եպիսկոպոսի։

Յորժամ բանք բանիւք և աստուածպաշտութեամբք կրթեալք և լաւագունից ցանկացեալք՝ ընդ այնմ և զերկիւղն Աստուծոյ առնուցու, յայնժամ միանգամայն զամենայն ինչ որ յաշխարհիս ի արհամարհեալ՝ ի խոստացելոց բարեացն վայելչութիւնն փութայ. զի զայն ինչ զոր լուան և հաւատովք հաստատեալ իբրև առընթերակից ցանկացաւ նմին՝ վաղվաղակի ականատես եղեալ և ընկալեալ փառաւորեցէ զՏէր։ Որ եղև առ երանելեաւ Եփեմիոսիւ եպիսկոպոսիւ Սերմեաց քաղաքի, որ վասն զուգական հեզութեան իւրոյ և աստուածեղէն երկիւղածութեանն, մինչ դեռ ևս մանկապոյն էր, արժանի եղև աթոռոյ եպիսկոպոսութեան։ Եւ ի հասանել հալածանացն որ առ Դիոկղետիանոսիւ թագաւորաւ, ոչ որպէս այլ ոմանք իբրև պատիւ ինչ զկրօն համարեալ և հաշեալ մաշեալ երկրաւոր իրօք տրտմութեամբ, աղաւաղեցոյց ինչ զառաջինիկայ ուրախութիւնն, այլ անյապաղ և անվհատ յօժարութեամբ վարեալ, յառաջնիկայն նկրտեալ և զվերջինն մուտանալով, փութայր ի նպատակս վերինն կոչմանն. քանզի ոչ լուծին զհաստատութիւն խորհրդոյ նորա՝ խիստ նշխանին մեքենայք։ Ոչ թշնամանք ազգի ազգի, որ զչարչարանս նշանակէին. ոչ յորձանք գետոց, ոչ վազք քարանձաւաց, ոչ սպառ-

նալիք զանազան տանջանաց. այլ և ոչք քան աւետեան ինչ ցաւեցուցանելն սուղ է, արանց նեղասրտութիւն, մանկանց արտասուք, կնոջ կականալի բարբառք և երեսք տխուրք, ծանօթից սուգ՝ ի վերայ որդւոց մատաղ հասակի, ընտանեաց հեծութիւն և բարեկամաց աղախարշուճն՝ ի վերայ այնպիսի հասակի, որ յորդորէ՝ ի լալուճն և յողբուճն: Այլ որպէս և ասացաքն՝ լաւագունացն ցանկութեամբ ըմբռնեալ և վերկիւղ դատաստանացն առաջի աչացն եդեալ, զարհուրեալ յոյժ՝ ի ձայնէ Տեառն՝ զոր ասէր. Եթէ ոք ուրանայ զիս առաջի մարդկան՝ ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է, զամենայն ինչ արհամարհեր և ուրախութեամբ փութայր յոյնմ:

Ածեալ այնուհետեւ առաջի Պորփեսոն դատաւորին՝ որ յայնժամ զիշխանութիւնն ունէր Պաղեստացւոց, և հարցեալ եթէ կամիցիս զոհել, պատասխանի ետ եւ ասէ. Այլ և ոչ կեալ կամիմ ընդ ձեզ: Յայնժամ արկին զնա՝ ի բանդ: Եւ արարեալ անդ աւուրս բազումս՝ ի տանջանս և՝ ի կապանս, և՝ ի մէջ գիշերի նստեալ դատաւորն յառնէ, դարձեալ ածաւ առաջի երանելի վկային Երենիոս և բազում տանջանաց համբերեալ, և հարցեալ եթէ ընդէր ոչ զոհես, պատասխանի ետ տուրքն. Վասն զի Աստուած ունիմ՝ որ՝ ի մատաղ հասակէն ուսայ պաշտել, և ոչ կարեմ երկրպագել անստուածոցն ձերոց: Պորփես դատաւոր ասէ. Ետհեա զմահ, շատացեալ և թշնամանօք որոց համբերեսպ: Երենիոս ասէ. Ետհիմ յեա սակաւ մոյ զմահ, յորժամ մահուդ որ՝ ի քէն, աւից զյաւիտենական կեանն՝ որ յԱստուծոյ: Պորփես ասէ. Ունիս կին կամ որդիս: Տուրքն ասէ. Ոչ: Պորփես ասէ. Ունիս ծնողս: Ենդա ասէ. Ոչ: Այլ զայս ասէր երանելին Երենիոս, զմտաւ ածեալ զպատուիրանս Տեառն որ ասէ. Որ սիրէ զհայր կամ զմայր, կամ զեղբարս կամ զորդիս առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի: Ընդ որ հայեցեալ յերկինս այնուհետեւ խորհրդով կրօնաւորեալ, և զամենայն մարդկեղէնս երես թողեալ, ոչ զոք աւելի քան զՏէր գիտել և ունել խոստովանէր: Դարձեալ ասէ ցնա դատաւորն. Վի-

տեմ ես եթէ ոդիւք կան քո, գոնեայ վասն նոցա գոհեա։ Պատասխանի ետ տուրբն և ասէ. Ոդիւք իմ զԱստուած ունին իւրեանց օգնական՝ որպէս և ես, որ կարող է կեցուցանել զնոսա, այլ դու զհրամայեալն քեզ արա։ Պղտոքոս ասէ. Խրատ տամ քեզ, պատանի դու, գոհեա, զի մի ազգի ազգի տանջանօք սպանիցէ զքեզ։ Երեմիոս ասաց. ես ոչ գոհեմ, զոր ինչ կամիս արա, և դիտացես եթէ զօրութեամբն Քրիստոսի քաջութեամբ համբերեմ ամենայնի։

Պղտոքոս դատաւոր զվէնիս մահու եդ՝ ի վերայ և ասէ. Վասն զի ոչ կամիս հաւանել թագաւորական հրամանաց, այնր աղաչաւ ըստ հրամանի ինքնակալացդ՝ ի գետ ընկեսջիր։ Երեմիոս ասէ. ես ազգի ազգի տանջանաց զոր սպառնայիր՝ ակն ունէի, և այլ ևս ինչ մեծ լինել ինձ, և եթէ կամիցիս զիս սրով սպանանել. վասն որոյ աղաչեմ զքեզ և զայն հրամայեա, զի գիտասցեն՝ եթէ քրիստոնեայք զմահ արհամարհեն՝ վասն հաւատոյն որ յԱստուած սովորեցաք։ Եւ բարկացեալ դատաւորն վասն հանդգնակութեան սրբոյն Երեմիայի, հրամայեաց սրով սպանանել զնա։ Իսկ տուրբն իբրև երկրորդ յաղթութեան նահատակ եղև, ասէ. Ընդ քեզ կամ ունիմ զԱստուծոյ, որ բազում համբերութեամբ մահու զպայծառապոյն պսակն ընդհեայ ինձ։ Եւ իբրև եկն ի համուրջն որ կոչի Ամեմիա, մերկացեալ զհանդերձն, և ձգեալ զձեռն յերկինս՝ յաղօթս եկաց այսպէս. Տէր, բացցին երկինք և ընկալցին զոգի ծառայի քո, որ վասն ժողովրդեան քո, և կաթողիկէ եկեղեցւոյ և ամենայն լրութեան՝ որ՝ի քեզ հաւատացեալ, Տէր իմ Յիսուս Քրիստոս, զայս չարչարին։ Եւ հաւեալ զգլուխ նորա սուսերաւ՝ ընկեցաւ՝ի գետ։ Ախ գործեցաւ՝ որ օր վեց էր ահեկանի առնոյ. ՝ի թագաւորել Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հօր և Հոգւոյն սրբոյ՝ փառք, պատիւ և զօրութիւն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

«Վկայարանագիրքն Սրբոյն Եղիայի Կուսի»

Սուրբս այս Եղիանիոս, զորոյ սկիզբն արարուք պատմել զմարտիրոսական նահատակութիւնն սորա, տոհմիկ էր սա առաքելական ըստ մարմնոյ, որ և հոգւով ևս ըստ նմին օրինակի առաքելականն ընտրօք վայելչացեալ նայր գեղեցկութեամբն։ Քանզի դուստր էր սա սրբոյն Փիլիպպոսի, որ էր աշակերտ և սպասաւոր բանին Աստուծոյ, զոր և երանելի աւետարանիչն Ղուկաս պատմէ, և կուսութիւն և մարգարէութիւն պատմէ յաստուածաշունչ տառն գործոց առաքելոց։ Եկաք, ասէ, ի Կեսարիա, և մտաք ի տուն Փիլիպպոսի աւետարանչի, որ էր յեօթանց անտի, և ագաք առ նմա. և էին նորա դստերք չորք կոյսք մարգարէք։

Այլ ձկնի հօրն մարտիրոսական կատարմանն, երանելս այս Եղիանիոս որ իբրև զպատկ փառաց էր այլոց քեզցն, առեալ զմի հիւրոց քեզցն, որում անուն էր Եւտիքիա, ի տեսութիւն աստուածային աւետարանչին Յովհաննու գնացեալ Եփեսոս, ըստ առաքել փափաքանացն զոր ունէր առ սուրբն։ Եւ քանզի նախ քան զգնալն Եղիանիի վերափոխեաւ էր սրբոյ աւետարանչին առ իւր սիրելին Քրիստոս՝ տրտմեցաւ, վասն զի ոչ եառնս մարմնով, որպէս ցանկացեալ էր հոգեւոյ[1]. բայց ապա այլ ուսեալ աստուածային շնորհ-

1. Մի օր. փչփեցան... ոչ փեսին... էին... նոցա։

քըն պարտևեցին նմա վկայարուԹիւն և սիրեհանս տրամուԹեանն։ Քանզի այր ոմն անուն Պետրոնիոս[1], ընկալեալ զՀեռնադրուԹիւն յերանելի առաքելոյն Պաւղոսէ, հռովմէր յեկեղեցւոջն Եփեսացւոց, այր լի իմաստուԹեամբ և առաքինի գործովք. որ ոչ Թէ բանիւք միայն ուսուցանէր, այլ և առաքինի վարուքն և առաւել զանձն վարդապետուԹեան պայծառացոյց երևեցուցանէր։ Սա զպատուական և զվսեմաւոն կուսանան առ իւր ընկալեալ՝ ի միասին զբնակեցոյց պատմչին։ Եւ էր Երմոնիոս ի յարուեստս բժշկուԹեան լսատ մարմնոյ հմուտ և Հարտար. զայդ բժշկուԹիւն հիւանդացն ի ընտհանի Աստուծոյ մատնանել ըղձեին ի ձեռն կոչմանն Քրիստոսի, քանԹէ յարուեստ բժշկուԹեան. քանզի զբանական ախտան՝ որ մարմնական արուեստի անհնարին երևէ, զայն աստուածային ընտհօքն և աղօԹիւք կուսին՝ բժշկուԹիւն արտ պարգևէր. նա և էր նուաղ հոգւոյ բժշկուԹիւնն քան զմարմնոյն՝ զոր կատարէր. քանզի զկուռոյն մոլորուԹիւնն ի բաց տանէր և զբարեպաշտուԹեան հաւատոն որ ի Քրիստոս՝ մերձ կացուցանէր։

Յայնմ ժամանակի Տրայիանոս Թագաւորն Հռովմայեցւոց զինեալ ընդդէմ Պարսից ի պատերազմ, և եկեալ յԱնխիա՝ շարժէր խռովուԹեամբ մեծաւ զաշխարհն ամենայն. քանզի մոլեալ կռապաշտուԹեամբ հալածական առնէր զսպզս բարեպաշտացն։ Յայնժամ լուեալ զհամբաւ սրբոյ կուսին, քանզի ընդ ամենայն Ասիա տարածեալ էր վարդապետուԹիւն նորա, և վաղվաղակի հրաման եւտ տան երիտասարդի, զի փութով առ նա ածցեն զհռչակաւորն Երմոնիա[2], Եակ ոլք Հանապէին զնա և պատուէին վասն բարուք կարգի քրիստոնէուԹեանն՝ ազգ առնէին նմա զպուշանալ ինքեան վասն չար խնդրողացն։ Եւ զինեալք քըն իբրև շրջեցան փոքր մի ընդ Ասիա և ոչ գտին, անյոյսք եղեալ անպտուղ հաւմարեցան զՀանապարհն իւրեանց։ Ապա երԹեալ՝ ի գեօղ մի՝ որ էր մերձ՝ ի քաղաքն Եփեսոս, ուր էին երանելիքն Երմոնիոս և

1. Մի օր. Պետրոս անուն։ 2. Մի օր. Երմոնիոս։

եւ տիկնայ, եւ ինքեան առ տուրքն պետրոնիոս եւ քննէին զբանս աստուածաշունչ գրոց։ Եւ տեսեալ զինուորացըն զԵրմոնիա՝ ոչ ծանեան զնա, քանզի ոչ ունէր զտեսիլ զգեստուն՝ ըստ հռչակաւոր անուանն, այլ ցաւ ծուխեամբ զարդարեալ էր զձուձ զգեստիւ, ըստ պատշաճի քրիստոնէական կարգի. հարցանէին ցնա և ասէին Թէ ուր կայ առ պատմող աւետարանին Քրիստոսի, որոյ անուն է Երմոնիոս, որ և զախտս հիւանդաց Հարտարապէս բժշկէ։ Իսկ նա յառաջագոյն ոչ յայտնեաց զինքն. այլ պատուախրատեալ խօսէր ընդ նոսա. Եկայք ասէ, տակաւին մի Հանգերուք, և եղեալ առաջի ձեր սեղան՝ կերայք. և ապա ցուցից ձեզ զոր խնդրէք։ Եւ յորժամ զօտարախրատեանն էլից զպատուիրանն՝ խոտիկս ագնիւս կազմեալ նոցա, այնուհետեւ յայտնէր զինքն յայտնապէս, խոստովանէր[1] Թէ ես եմ՝ զոր խնդրէքն։ Իսկ նոքա՝ի տրամուԹեան եղեալ ոչ գիտէին զինչ գործեցեն, վասն զի պատկառէին՝ի սկզբոյ նորա, և դարձեալ երկնչէին՝ի գԺնդակ[2] կամաց հրամանէ Թագաւորին։ Եւ կոյսն քանզի չեռեալ էր՝ի սէրն Քրիստոսի, և ցանկայր մեռանել վասն անուան նորա, աղաչէր զզինուորսն զի կատարեսցեն զՀրամայեալսն, և տարցեն զինա առ Թագաւորն։ Եւ ինքնակամ յօժարուԹեամբ հեառեալ զկնի զինուորացն եկն առ Թագաւորն։

Իսկ Տրայիանոս երբեմն եռեաց զինա՝ նախ խորամանկուԹեամբ խօսէր ընդ նմա բանս մարդասիրականս, առաջի դնելով ինչս բազումս և պատիւս և փառս մեծամեծս խոստանայր, միայն եԹէ հաւանեսցի կամաց Թագաւորին և՝ի բաց կացցէ՝ի Քրիստոսէ, Իսկ զեղկիկ հայեան Քրիստոսի զամենայն խոստումնս Թագաւորին ոչինչ գրկէր[3], այլ միայն բարձր ձայնիւ՝ի լուր ամենայն ամբոխին գոչէր ասելով, եԹէ՝ Քրիստոնեայ եմ և զՔրիստոս պաշտեմ, և վասն նորա ցանկամ մեռանել. վասն այնորիկ երագ և առաւել հաճարիմ զամենայն փառս և զպատիւս քո՝ զոր ինձ խոստացար։

1. Մի օր. խոստովանելով։
2. Մի օր. ՚ի գԺիտամէ կամաց հրամանէ Թագաւորին։
3. Մի օրինակ յաւելու. և ոչ պատասխանաւոյ անգամ արձանէ վերինէր։

տանաս։ Յայնժամ քառնաւորն իբրև լուաւ զայս, զայրանայր իբրև պղազան, հրամայեաց չարաչար հարկանել զնա։ Իսկ երանելի կոյսն ոչինչ պատասխանեալ՝ի չարչարանսն, բայց միայն լռութեամբ օրհնէր զՔրիստոս որ վասն անուան նորա արժանի եղև չարչարանաց։ Եւ մինչդեռ՝ի տանջանսն էր ետես ըզՔրիստոս որպէս և երանելին Թեկղ արժանաւորեցաւ՝ի կերպարանս Պաւղոսի տեսանել, մինչդեռ արկանէին զնա՝ի հուրն։ Այսպէս և սա տեսեալ՝ի կերպարանս քահանայապետին Պետրոսի[1], զի քաջալերէր զնա, և զոր ինչ լինելոցն էր՝ այսինքն զազատել նորա՝ի տանջանացն և զյաղթութիւնն Տրայհանոսի, որ ընդդէմ Պարսից զօրեցեալ էր՝ յառաջապոյն պատմէր։ Եւ Տրայհանոս յորժամ ետես զերանելին կոյսն զի ոչ պատրեցաւ՝ի խոստմանցն և արհամարհեաց զտանջանսն, սքանչացաւ ընդ անդրդուելի միտս նորա. և հրամայէր Թագաւորն այնուհետև ոչ ևս հալածել զքրիստոնեայսն, բայց եթէ յայտնապէս որ ընդդէմ կացցէ տէրութեանս մերում։ Այսպա սկսաւ աղաչել զտուրքն Երմոնիոս, զի յօժարեսցի երթալ զնոյն նորա՝ի Պարսս. մայր առնել զնա խոստանայր, եթէ հաւանեցուսցէ զաղջկան՝ որոց ընդդէմ զնոսեան էր, Իսկ տուրքն վկայն Քրիստոսի պատասխանեալ առ նա ասէ. Զէ՞ ինչ օգուտ քեզ, ով Թագաւոր, Հանապարհաւկցութեանս իմ, եթէ ոչ ընդունիցիս զբարեպաշտութեան բանս իմ, որ յաղագս Հանապարհին հաւատացեալ է. բայց զայս ասեմ քեզ, եթէ Հրեշտակն Աստուած արարիչն ամենայն արարածոց՝ զոր ես պաշտեմ, յաղագս անոխակալ մարդասիրութեանն իւրոյ նա պատերազմի ընդ Թշնամիս քո և խորտակէ և ջնջէ զնոսա առաջի երեսաց քոց։ Արդ և դու մի՛ յոյժ ապերախտ երեւեսցիս առ նա հատուցանելով չար փոխանակ կեցուցանողին զքեզ։ Իսկ Թագաւորն Տրայհանոս առեալ զամենայն բանս զայսոսիկ որ ասացան՝ի սրբոյ կուսէն՝ իբրև զարդար մարգարէի ծրարեալ պահէր՝ի սրտի իւրում, Թէպէտ և զբարեպաշտութեան հաստատն էր ընդունելոց։ Յայնժամ հրամայեաց հան-

1. Ա՛ի օր. առաջ փախանայն Պետրոնիոյ։

դերձս մեծապէնս պարսպելոյ համար փոխանակ յաղթութեանն, զոր մարդասիրեացաւ նմա երանելի կոյսն, և ոչ առ յանձն. այլ Բաւական է ինձ, ասէ, զոր ունիմ հանդերձ մեծապատնէնն. քանզի զԲրիտտոս զգեցեալ եմ, վասն այնորիկ չկարօտանամ ապականացու հանդերձից: Եւ Թագաւորն ըստ մարդասիրութեանն սիրեցեալ՝ի պատերազմ, յաղթեաց Պարսից և Մարաց և Գղաց, և ոտնակոխ դարձեալ[1] և յաղթութեամբ մեծաւ յաշխարհն իւր, մարդասիրական զոյն զինքն առ քրիստոնէայն երևեցուցանէր:

Իսկ՝ի դադարել հալածանացն՝ երանելի վկայն Քրիստոսի շրջէր ընդ Ասիա, և առաքելական չնորհօք զամենեսեան կոչէր՝ի բարեպաշտութեան հաւատոն որ՝ի Քրիստոս, և ևս յաւելոյր՝ի Թիւս հաւատացեալոցն հանապազօր:

Ապ այսոցիկ այսպէս եղելոց, առնու զԹագաւորութիւնն Հռովմայեցւոց ժանդն Ադրիանոս այսպիսի պատճառաւ. քանզի կինն Տրայիանոսի յաւաչագոյն չնութեանն տրփանօք խառնակեալ էր ընդ նմա, և՝ի գնալն նորա՝ի Պարս, հաւանեցուցանէր զնա թողուլ փոխանորդ իւր զդաւաճանողն Ադրիանոս, զոր և արար իսկ: Եւ յորժամ Տրայիանոս մեռանէր, առեալ Ադրիանոսի զԹագաւորութեան իշխանութիւն, յաղոյց հալածանս՝ի վերայ եկեղեցւոյն Քրիստոսի. քանզի և եւս հրամանն առնոյր ուրեք[2]՝ի վերայ քրիստոնէից՝ զոհել կամ մեռանել: Եւ եկեալ Անտիոս և լսեալ վանն սրբոյն Երմոնի, առաքեաց զինուորս և եւս հրամանն, զի Թէ ոչ հնազանդեսցի՝ աճել զնա առաջի իւր: Իսկ զինուորացն բազում հոգաբարձութեամբ խնդիրն արարեալ ոչ գտին. ապա ժամանեցին՝ի գեօղ մի՝ որ մերձ էր՝ի քաղաքն Անտիոս իբրև տասն աստիարիս, և տեսանեն զերանելին զի մտանէր անդ քարոզել զանձն կենաց: Եւ քանզի ոչ ծանեան զնա, ոզջոյն տուեալ նմա հարցանէին Թէ ոյր անդ աղջիկ երամնիոս անուն, հաւատոյք քրիստոնեայ, որ և պէտ պէս հիւանդութեանց բժշկութիւնս առնէ: Իսկ նա բան առաջնոյ օրինակին տարեալ զնոսա առ իւր, և

1. Մի օր. դարձեալ:

2. Մի օր. ընդ ամենայն ուրեք:

լուացեալ զոտս նոցա եւ առաջի նոցա սեղան և ուրախ արար զնոսա զանազան խորտիկօք։ Ասէ ՚ի գալ առաւօտին ծանուցանէր զինքն եթէ նա էր զոր լսեցին. և զինուորացն լուեալ զայս տրտմեցան յոյժ, և ոչ կա[1] մէին կատարել զհրամանս Թագաւորին, վասն զի պատկառէին ՚ի յօտարերկրեայն զոր եցոյց նոցա։ Ասէ երանելին բռնադատեր զնոսա գնալ ընդ նոսա, երկուցեալ մի գուցէ չար ինչ անցանիցէ ընդ նոսա. մանաւանդ եթէ ցանկայր ասէ զի յաղագս Քրիստոսի սրբեցէ զբաժակ մարտիրոսական արեանն։

Եւ իբրև հասանեցոյց զնոսա՝ առեալ տարան զնա, և կացուցեալ առաջի Թագաւորին։ Եւ իբրև եառ զնա Թագաւորն. ասէ ցնա. Այս նախ, ազջիկ գու, զանուն քո և զբախտ և զթիւ ամաց քոց և զազգս քո, և եթէ որով զօրութեամբ հպարտացեալ ես, և զառաւածքն նզովելով աղարտես[2], և զիմ բարեպաշտութիւնս թէնս թշնամանես և անարգես, և զորս մտանեն և ելանեն ՚ի քաղաքէս՝ հիւրընկալես և հնազանդեցուցանես, զի յանյաղթելի աստուածոյն ՚ի բաց կացցեն, և ՚ի խաչելոյն պաշտօն զամենեսեան յորդորես։ Ասէ երանելի վկայն Քրիստոսի առ այն[3] եթ պատասխանի և ասէ. Եթէ զանուն իմ լսեցեր, ով Թագաւոր, ընդմիտս կոչիմ, և քրիստոնէական կրօնիւք անեալ. բժշկեմ զախտս և զհիւանդութիւնս ընդհօքն Քրիստոսի. և թիւ ամաց իմոց կատարեալ է։ Զօրութեամբ Քրիստոսի որ է Աստուած ճշմարիտ, որ առաքեալ զերկինս և զերկիր, և որ ՚ի նոսա արարածք են, զօրացեալ եմ, և ոչ եթէ զաստուածոն նզովեմ, այլ զիւրաց տկարութիւնն յանդիմանեմ. քանզի չէն աստուածք, այլ ձեռագործ մարդկան և դևք. և զմարդիկ զոր ՚ի նոցա մոլորութենէն խաբեալ են՝ ազատեմ, և ճշմարտին Աստուծոյ մերձ կացուցանեմ. ազգք իմ և հայրենիք և փառք և մեծութիւն Քրիստոս է, որում ՚ի մանկութենէ իմմէ նմա ընծայեցայ։

Իսկ բռնաւորն իբրև լուաւ զայս ամենայն յերանելւոյն, ասէ, և եղև բարկութեամբ, և հրամայեաց զառաւա-

1. Մի օր. ի՞մէջեան։ 2. Մի օր. զաստուածոյն նախատէ։ 3. Այլ օր. առնա։

ծաբան բէրան նորա Հարկանել, վասն զի խոցեցաւ ընդ Համառօտ պատասխանեա նորա. և նա առ ոչինչ Համարեաւ զապտակումն ծնօտիցն և զԼախլախումն բէրանոյն, այլ ևս առաւել պատրաստացոյն էր՝ի փառաբանութիւն Աստուծոյ: Եւ յորժամ եառես Թագաւոր զայն եՀէ առ ոչինչ պրեաց զառանլանան, խորամանկութեամբ իւրով՝ի միւս կողմն շրջեալ՝ ինչս բացումն և Հանդերձս մեծագինս առաջի եդեալ. և Հանդերձ այսու ևս տիկին առնել զինա Հռովմայեցւոց տէրութեան խոստանայր, միայն եԹէ երկիր պագանիցէ աստուածոյն, Իսկ սրբոյն այսմ արարեալ զամենայն առաջի եդեալն նմա՝ի Թագաւորէն, և զայս պատասխանի առնէր. Յայտնի լեալ քեզ, ով Թագաւոր, Թէ և ոչ քոյոր իսկ ամենայն Թագաւորութիւնքս տիեզերացս, այլ և ոչ ազգի ազգի տանջանք կարեն մեկնել զիս՝ի սիրոյն Քրիստոսի. այլ եԹէ կամիս Հաճել զմեզ տալ իմ՝ ընկալ զիս խորհրդակից քեզ, որ ոչ միայն զայս Թագաւորութիւնս Հաստատուն առնեմ քեզ, այլ և զերկնաւոր մեծութիւնն աւանդեմ քեզ. միայն ծանիր զՔրիստոս Աստուած, որ եառ քեզ զԹագաւորութիւնդ, և՝ի բաց լեր՝ի մատուկ կուոյդ:

Յայնժամ բռնաւորն լսելով զիտաց Թէ ոչինչ ազդեն՝ի նա խորամանկութիւնք նորա՝ եառ Հրաման լուծանել զկօշիկս նորա, և առտիկ Հարկանել զներբանս ոտից նորա. և այնչափ Հարին մինչև առաք այնեանց անատն բղխեին: Եւ ապա եառ Հրաման առաջան պղնձի առնել և ընդ զայն Հալեալ կապարով, և նաեԹ և ծծումբ արկանել՝ի ներքս, զի առաւել ևս բորբոքեսցի, և Հրամայեաց դահճացն արկանել՝ի նա[1] զերաներելն վիայն Քրիստոսի: Եւ սուրբ կոյս կնքեալ զինքն նշանաւ սուրբ խաչիւն, ուրախութեամբ մեծաւ օրհնեալով զԱստուած՝ եմուտ յաւազանն բորբոքեալ Հրոյն, Որ և աքանչելիք ինն եղեն. քանզի ոչ իբրև՝ի Հուր, այլ որպէս յաւազաստան այնպէս պարկեր և օրհներ զԱստուած: Իսկ բռնաւորն իբրև եառես եԹէ ոչ այրեաց Հուրն զերանեալին, և առաւել Հրամայէր բորբոքել, կարծեր զովացուածն ինչ ունել աւազանին, Ցայն

1. Մի օր. անդր տիեզերս:

ժամ առեալ սրբոյն զկուսութիւն հոգւոյ նորա, և զխնդակցութիւն մտացն առ աքանչելիս ամենազօրն Աստուծոյ, գոչէր առ նա ասելով. Ո՛վ հպարտ և ամբարձհաւաճ Թագաւոր, որ այնքան դիւական մոլորութեամբդ սրբեալ ես, և ոչ զգաս զզօրութիւն ամենազօրին Աստուծոյ, վասն զի զհուրս զայս զոր առեալ ես՝ յօղ առնէ ինձ: Իսկ Թագաւորն ոչ հաւատայր տեսութեանն, կամեցաւ և ձեռօքն իսկ խմանալ զձըշմարտութեան. և եկեալ մերձ յաւազանն, և զայրոյ ձեռնն կամէր՝ ի ներքս առնուլ. և մինչչև կարի քաջ մօտեալ էր, առ ժամայն լուծաւ ձեռն նորա՝ ի հրոյ անոյն, և սկսաւ աղաչել զերանելին, զի արտաքս եղեալ թժշկեսցէ զինս. և խոստանայր հաւատալ յԱստուած նորա: Իսկ սուրբն Թէկլէ և զխոհէր զանդաւանալն միտս նորա, սակայն հայեցեալ՝ ի մարդասիրութիւնն Քրիստոսի, կատարէր զինդիրս նորա:

Իսկ նա՝ ի նոյն ամ արշաւութիւն կացեալ, յեա սաւ կաւ աւուրց հրամայեաց ածել զերանելին, և տիպէր զոհել կռոցն: Սակ երանելին այսպն առնելով զբազմ աստուածութիւն նորա. Քանի՞ աստուածս ունիս, և ըմ հրամայես զոհել: Իսկ նա կարծէր եթէ աստ պապէս վասն զոհելոյ առաւելութեան աստուածոցն հարցանէ, և սկսաւ թուել զանուանս ամենայն դիւ ահնակ կռոցն. Արամազդ, ասէ, և կռոնոս, Ա թինաս և Արէս և Մինա և Ապողոն, Պիսիդոն և Արեմիս և Աֆրոդիտէս [1]. և այլ ևս շամշաբանեալ բազում անուանս հիւսէր դիւացն: Իսկ աստուածայինն իմաստութեամբ լցեալն ասէ. Ո՛վ, ոչքան ամբոխիք էլոյ զսիրտս ձեր աստանայ, թողեալ զԱստուած Ճըշմարիտ, զմինն և զմիայն հզօրն՝ բազմութեան դիւաց երկիր պագանէք: Արդ ասա, եթէ որո՞յ իմդրուածոց հաճեր յաղագս երկրպագութեան բազմաստուածոցդ քոյ. այլ պիտեմ եթէ ոչ ունիս ասել, վասն զի անշունչք են: Արդ ես մի Աստուած պաշտեմ երկիւղ անձնաւորութեամբ բաժանեալ, և միով բնութեամբ և աստուածութեամբ և զօրութեամբ միաւորեալ.

1. Մի օր. Ակամապէտ, ասէ, ե նայ ե Ապողէն, Պիսիդոն ե Արհոռնիոն, Ամենայ ե Արէոն ե Մինոն ե Աֆրոդիտէ:

և զոր ինչ խնդրեմ վաղվաղակի կատարել. որպէս և դու ինքնին քաջ իմացար՝ ի փորձոյ անտի[1] զզօրութիւն աստուածային Տեառն։ Յայնժամ ևս առաւել բորբոքեալ սրտմտութեամբ Թագաւորն՝ հրամայեաց տապակ հրայուցանել և անդ արկանել զերանելին։ Իսկ սուրբն երկիւղ եառեալ զտապակն՝ ի հրոյն կերպարանս ընդ ելս, զայս՝ ի յերկինս ամբարձեալ՝ կարդայր յօգնականութիւն զամենակարող զօրութիւնն՝ զի ցուցցէ զաքանչելիս իւր սրպէս և յառաջինն նուագին։ Եւ կրկին քեալ զամենայն զզգայարանն՝ տարածեաց զինքն՝ ի վերայ հրացեալ տապակին. և վաղվաղակի տապակն զսպեցաւ, և ցոց հրոյն որ՝ ի ներքոյ նորա էր՝ այսր անդր ցոլացեալ, զբազում յամբարշտացն որ շուրջն կային՝ կիզեալ ապականէր. և բռնաւորն զարհուրեալ՝ ի սքանչելեացն՝ սակաւ մի զինքն՝ ի հպարտութենէն և հրամայեաց հանել զսուրբն՝ ի տապակէն։ Բայց զի ոչ կամեցաւ ընդունել յինքն զլոյս աստուածպիտութեանն, յետ սակաւ ժամանակաց հրամանաւ ածել զերանելին առաջի իւր յատարանին, ուր հաստատեալ կային բազմութիւնք դիւահան պատկերացն, և ասէ ցսուրբն. Ահա աստուածք մարդասէրք զոր են պաշտեմ, թէ ուրուք բարեմտութիւնս ցուցանեն առքեզ, որոց դու ապերախտ գտանիս և ոչ զոհես նոցա։ Ասէ երանելին. Ցխարդ զոհեցից անշունչ պատկերացդ, որք ոչինչ ասն պատասխանի, որք յաղօթս կան առաջի գոցա։ Եւ կացեալ առ ընթեր պատկերացն երանելի վկայն՝ կարդայր առ Աստուած այսպէս ասելով. Տէր Աստուած զօրութեանց, որ յամենայն գարս ցուցանես զքանչելիս քո, դու՝ ի Քաղանէ զամբարտաւանութիւն մարդկանն խափանեցեր բարձանմամբ լեզուացն, և զբարձրութեան խոյհուրդս նոցա՝ որ յաշտարակին՝ քակտեցեր[2]։ Դու զամբարտաւանն զփարաւոն, որ ոչ ծանեաւ զզօրութիւն սքանչելեացդ քոց՝ ընկղմեցեր, և զժողովուրդն քո ազատեցեր՝ ի նմանէ։ Դու՝ ի ձեռն Յեսուայ ընտրելոյն քո՝ զպարիսպն Երիքովայ իբրև զջուր հեղեր՝ ի ձայն յոտնեցեանն փողոյն, և զժողովուրդն քո առանց զինեալան պատե-

1. Ալ օր. ՝ի ժողոյ անտ։ 2. Ալ օր. տգեցեր։

բազմի[1] ՚ի ննեղքս ածել։ Դուռնոյն Տէր, և այժմ ցոյց զքո թութիւն աստուածութեանդ քո՝ կոչմանամբ կուռցս այսոցիկ, զի ծանիցեն ամենեքեան եթէ դու միայն ես Աստուած և չիք այլոք։ Եւ մինչդեռ ալօթքն ՚ի շրթունս էին, յանկարծակի անկեալ կուռքն առ հասարակ կործանեցան և եղեն իբրև զփոշի. և առաքն վկայն զոհացեալ զԱստուծոյ, որ այնպէս սքանչելագործէ առ ծառայս իւր. և զարձան առ բռնաւորն և ասէ. Տուր ձեռն աստուածդդ քոյ և կանգնեա զդուռս, քանզի ահաւասիկ անձայն եղեն, և հեղեալ մանրեցան առաջի քո։

Իսկ Թագաւորն մնացեալ ոգւով ՚ի լուսոյ աստուածեղէն սքանչելեացն ոչ առ ՚ի միտ զմեծամեծան Աստուծոյ. եւ վճիռ ՚ի վերայ նորա արուալ սպանանել. Թերևս արդեօք, ասէ, և ՚ի սրոյ կարիցէ[2] կախարդութեամբ ապրել։ Եւ եւս զնա ՚ի ձեռս երկուց զինուորաց, զի հանցեն արտաքոյ քաղաքին, և անդ հատցեն զգլուխ նորա։ Իսկ մին զինուորն՝ որում անուն էր Թէոդաւլոս՝ վերայուցեալ զսուրն կամէր հարկանել զերանելին, և վազվազակի չորացաւ ձեռն նորա. և միւս զինուորն՝ որում անուն էր Թեառիմոս, ծաղր արարեալ զընկերն՝ յանկարծակի հանարեցաւ զվերնապէնն նորա, աձապարեաց վազվազակի, և հանեալ զսուրն յարձակեցաւ[2] ՚ի վերայ կուսին, և նոյնժամայն ցանկացաւ և նորա ձեռն հաւասար ընկերին։ Եւ անկեալ երկոցունց զինուորացն ՚ի վերայ երեսաց իւրեանց՝ աղաչէին զսուրբ վկայն և խնդրէին զԹողոմեան ՚ի նմանէ, և զբժշկութիւն անդամոց իւրեանց։ Եւ խոստովանէին հաւատալ Աստուած Քրիստոս, զի նա միայն է Քրիստոս արարիչ երկնի և երկրի։

Իսկ սուրբն իբրև ստուգեաց զՔրիստոսութիւն հաւատոց նոցա ՚ի նոսին բերանոց, միանգամայն և Հոգւովն սրբով ծանեաւ զիմաստ սրտից նոցա թէ Քրիստոնեայ են, յաղօթս եկաց առ Աստուած, և կնքեալ նշանաւ սուրբ խաչիւն, առաքեալ կենդանատացան յանմարեալ ձեռք նոցա։ Այլ զայս այսպէս սքանչելապործեալ Աստուծոյ[3], զի և նախ քան զհանդերձեալ

1. Մի օր. զննեան պոչերուքն։
2. Մի օր. յարձակեաւ ՚ի վերայ։
3. Մի օր. սքանչելագործեաց Աստուած։

փառաւն աստէն փառաւորեսցէ զսուրբս իւր, և անմարտանչելի սատանային մեքենայիցն ցուցցէ. զի նա որ ՚ի ձեռն պատրանաց իւրոց մահկանացու արար զմարդն և մեղաց գործօնեայ, ցուցանել կամեցաւ թէ ոյք արհամարհեն զնա, աստէն իսկ անմահանան և հաւասար հրեշտակաց լինիմն. և դարձեալ զի յայտնի առնիցէ հպարտացեալ Թագաւորին՝ որ զաքանչելիսն Աստուծոյ կախարդութեամբն վարկանէր, այնինքն՝ զապրել կուսին ՚ի հալեալ կապարոյն և ՚ի հրացեալ տապակէն. և ասէր եթէ զսուր ոչ կարէ բնաւ՝[1], կամեցաւ ցուցանել թէ և սուր ոչ կարէ գործել զնովքն՝ յորժամ հրամանն առնու յարտաքսէն. միանգամայն զի և զքաղցից վրկութեամն շահեցի սքանչելեօքն՝ զոր ցուցանէ առ սուրբս իւր: Եւ քանզի երանելի կոյսն Թէկլէ և սքանչելեացն Աստուծոյ շահեմարան եղև, և քաղցից հաւատոց պատճառք, ասկայն միշտ ըղձայր երթալ առ փեսայն երկնաւոր, յաղօթս եկայ առ Աստուած, այսպէս ասելով. Ո՛վ Տէր իմ Տէր, դու զվտառելոյս անձին իմոյ, որ միշտ փափագեմ առանել զքեզ՝ զձշմարիտ քաղցեալդ իմ և ամենայն սրտիւ քոց. արդ առաքեա զհրեշտակս քո և ընկալ զոգի իմ խաղաղութեամբ: Եւ զայս նորա ասացեալ՝ երևեալ հրեշտակ Աստուծոյ ՚ի կերպարանս լուսոյ, ասանդեաց զհոգին ՚ի ձեռս Աստուծոյ, ըստ գրեցելումն, թէ՝ Հոգիք արդարոց ՚ի ձեռին Աստուծոյ են: Իսկ զոր երկիւղածք որ բնակեալէին Ընփեսոս առեալ զվկայական մարմին կուսին Երմիոնեայ, և ըստ արժանի սրբութեան նորա տապանակ արարեալ և տարեալ ՚ի նեղոս ՚ի քաղաքն, եդին յարժանաւոր տեղւոջ. առ նովին եդին և զերկու վիճակաւորսն, որք հաւատացին ՚ի կատարման սրբոյն, քանզի և նոքա կատարեցան պատկառելիք ՚ի Քրիստոս ՚ի ձեռն ձշմարիտ հաւատոցն. և ժողովեալ ամենայն քրիստոնեայքն որք էին Ընփեսոս՝ զօր յիշատակի նորա տօնեն, որ օր վեց էր սեպտեմբերի[2] ամսոյ. ՚ի փառս և ՚ի գովութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1. Մի օր. և ասէր էին ինչ ու ինչ ուրէք բծախնդ... ու գործէ ինչ:

2. Մի օր. որ օր պատ և ի էր հոկտեմբերի ամսոյ:

Վկայաբանութիւն Եզիվեւայ կուսին, և Հօրն նորա Փիլիպպոսի և Մօրն նորա, և Եղբարցն որք ընդ նմա։

Ի թագաւորութեան մեծ քաղաքին Հռոմայեցւոց ինքնակալ Կոմիդեայ՝ առաքեաց յեօթնեերտուդէ իւրում հիւպատոսութեանն զմեծն և զվայելուչն Փիլիպոս ի քաղաքն Աղեքսանդրացւոց ընդել զհնազանդութեամբ իշխանութեամբն Եգիպտացւոց աշխարհին, զի առնոյր ի մի զօրութիւն հնազանդեսցեն հրամանաց նորա։ Այր Փիլիպպոս հանդերձ կնաւ իւրով Կղոդեաւ և երկու որդովքն Ալիտոնեաւ և Մերգեաւ և եգինէիւ դստերբք իւրով եկեալ ի Հռոմէ ի Աղեքսանդրիա՝ զամենայն եգիպտացւոց բնակութիւնն ըստ Հռոմայեցւոց բարուցն կարգէր։ Ինքն դուստրն իւր եգինէիա եղեալ վեշտասանամեայ, և այնպէս ընտիր իմաստութեամբ պայծառանայր, յոյնականաց Հռոմէական դպրութեամբ բանիւք լինէր, մինչև փիլիսոփայից աբանէլն երևէր։ Ինքն յաւուր միում հարցանէր զնա հայրն իւր, թէ կամիցի ամուսնանալ ընդ Ալեքսիոսի հիւպատոսի։ Պատասխանի ետ եգինէիա և ասէ ցհայրն իւր. Որ պատուոյն և սրբութեանն մեծ նաւանդ ընտրելի է քան զբնութեանն զայր։ Ինքն նորա պէսպէս խոստմամբք և հնարիւք ջանացին խոտրանել զսուրբ անձնն։

Ինքն դէպ եղև անցանել և անկանել ի ձեռս նորա պատմութիւն սուրբ. առաքելոյն Պօղոսի և երանեալ կուսին Թեկլէի, և ընթեռնուլ ի գաղտնիս օր ըստ օ-

լէ՝ արտասուէր, մանաւանդ զի ընդ հեթանոսական ծնողօք էր։ Իսկ յորժամ ընթեռնոյր օր ըստ օրէ ըզպատմութիւն սրբոյն Թեկղէ, անկանել՝ի միտ նմա նել նորին գործոց, ընտրեալ նա՝ի հոգւոյն՝ի խորհուրդս պարապէր վարդապետութեան քրիստոնէից. և խնդրեաց ընտրհս՝ի ծնողաց իւրոց, զի հրամայեսցեն նմա՝ի քաղաքէն երթալ յապարակ ուրեմն. և դէպ եղև նմա լինել՝ի դեսպակի ընդ երթալն, զմբուտաւ ածելով՝ի նեղբէին խորհուրդս իւր զվարս երանելոյն Թեկղէ, ասէ ցնեղբէնեխ իւր ցՊրոտէոս և ցՀիւակինթոս. Մի եղիցի ձեզ անպէտ ոչնչափ ինչ վասն անուանեալ չաստուածոյն քերթողքն ստեղծաբանեն, և ոչնչափ վասն արդարև Աստուծոյն իմաստասէրքն ստեն. միթէ և՝ի նոսա արդարև այնպէս չիշէ մարտութիւն գտանէ՞ք՝ որպէս և յայս աստուածայինն գիրս ցուցանի վասն Աստուծոյ. բայց կարի յոյժ տապաղել և ստեղծական մտաց հաւատալ՝ի քարինս կռպեալ, և կամ՝ի ձեռագործ փայտից խնդրել զօգնականութիւն։ Իսկ միտքդ՝ի յայսմ մտի էնն, զի կռանան խորհել և քննել վասն չիմարտին Աստուծոյ, և վասն այսպիսի պաշտամանց. և ընտրեցին յանձինս իւրեանց, թէ ոչ ինչ լաւագոյն է քան զայս զօրութիւնս։

Եւ միտքդ զայս և զարին նմանս հակառակելով խորհէին, լուան յոմանց քրիստոնէից, որք պաշտէին աստեղս. Ամենայն չաստուած հեթանոսաց դևք են, այլ Տէր երկինս արար։ Եւ լուեալ նոցին՝ հրամայեաց դատապարտացուցանել զդեսպակին, և ընդ երկար զարհուրեալ՝ի սիրտս իւր, և ասէ. Կարի՝ի դէպ վերկայութեան գրոց սրբոց պատահեցաք ըստ պարապելոյ չհանապարհին, և վասն անպիտան և մոլորական պաշտամանց կռպտեան մտոտի ծանեաք. իսկ ազէ գործեացուք որ ըստ խորհրդոյս դիպեցաւ, զի այսու օրինակաւ երկիւղածութեան՝ անչափ մեծութեան խորհրդոյն հասանել կարացուք, տեսցուք. իսկ եթէ միով կէրպ յայս յանհասուստ բանս չըմբռնակիսք, և վասն չիմարտին Աստուծոյ այլով բանիւք խնդրեսցուք, և վասն միաբանութեան հաւատոց, և զկարգն որով կարացուք երանելի վախճանեան այսմ հանդէս

պիլ, և զգազանութիւն բանսարկուին մերժեացուք, և զՀաւատն Քրիստոսի ընկալցուք։

Յայնժամ Եւգինիա ասէ ցՊրոտէս և ցՀիւակինթոս զայս բանս. Տիկին՝ ձեզ մարդկեղէնն պատիւս արար, իսկ քոյր՝ իմաստութիւնս արար. արդ եղբարք, միով անձամբ և ամենայն միաբանութեամբ զմարդկեղէնն պատուի փառս ՚ի բաց թողեալ՝ ՀՀմարտին Աստուծոյ ՚ի ծառայութիւն փութացարուք, զի ամենևին ընդդիմացողին հակառակութեամբ ինչ քակտեացուք։ Բայց աղէ դուք յինէն զծամոյս հիւսս ՚ի բաց առէք, և դուք վաղվաղ պատրաստեցարուք. Թերևս յայսմ գիշերի մեզ ելք Հանապարհացն եղիցին, որպէս զի առ Աստուծոյ մարդիկն՝ մեզ Հանապարհ յաջողեսցի. և դուք իսկ երկոքեանդ ի ընդ աջմէ և ի ընդ ահեկէ գնալով՝ զիս ՚ի ծածուկ դեսպակէս ՚ի վայր ինջուցէք, և Թող դեսպակս ունայն երթիցէ. բայց մեք երեքեան առնա ձեօք առ Աստուծոյ մարդիկն փութացուք[1]։ Եւ Հաճոյ Թուեցաւ նոցա խորհուրդն. և ՚ի վաղիւն եղև ամենայն որպէս կարգեաց։

Իսկ ՚ի Հաւատալ նոցա՝ առ Քրիստոս ընտրհս։ Բայց յորժամ եղև ինջանել նմա ՚ի դեսպակէն՝ դէպ եղև տուրբ եպիսկոպոսին Հեղինոսի ուղեկից լինել ՚ի Հանապարհին Հանդերձ բազմութեամբք, որք սաղմոսէին միաբան ասելով ընդ մի ձայն. Ձանապարհք արդարոց ուղիղ է, Ձանապարհք սրբոց պատրաստեալ է։ Յայնժամ Եւգինիա ասաց ցՊրոտէս և ցՀիւակինթոս. Տեսանէք զսաղմոսելոցս զօրութիւն. և զմբուռաւ ածէք գուցէ ՚ի մեր կոյս նշանակիցէ, զոր լսաք ՚ի քրիստոնէիցն, որք սաղմոսէին Աստուծոյն իւրեանց. զի յորժամ վասն Հշմարտին Աստուծոյ ՚ի միտս մեր խորհեցաք, լսաք ՚ի մարդկանէն Աստուծոյ պաշտեալ՝ Ամենայն աստուածք հեթանոսաց դևք են, բայց Տէր զերկինս արար։ Ահաւասիկ ընդ որշէն մեր ՚ի կռոցն երկրպագութենէ՝ հազարք պատահեցին միաբան ասելով, թէ՝ Ուղիղ է Հանապարհ արդարոց, և պատրաստեալ է Հանապարհ սրբոց։ Իսկ եկայք և մեք խառնեացուք ՚ի բազմութիւնն օրհնեացս, և դառ

1. Աւյսպէս յօրինակին։

սուտ համարեալ եղելոյսք, և մտօսք իբրև հաղորդա
կից ՚ի նոցա ձշմարտութիւնն, թէպէտ և ընդ երեկս
երբեմն է։

Եւ այսպէս սուտ գինքեանս լծակցեալ ընդ պաշտօ-
նեայսն, հարցանէին թէ ուր էր ծերունիս, որ միայն
՚ի մէջ ժողովրդեանս չքոյ նատէր։ Յայնժամ լուան
յուսեցին, թէ սա է Հեղինոս եպիսկոպոսն, որ ՚ի տը
ղայութեան ընդ քրիստոնէից վանորայս շրջեալ, որ
զդրացի գազանս ապականեալ կոտոյս։ Եւ զինչ ասեմ
կամ զինչ պատմեմ զդրոսս բազում ժամանակաց զան
ցեալ առաքինութիւնս. բայց յառաջ քան զդոյզն
ժամանակս կախարդ ոմն էին Իրաս անուն, ջանայր
շրջել զժողովուրդս ՚ի գրոց սրբոց. հանդիպեցաւ
ընդ սրբոյ եպիսկոպոսին Հեղինոսի հակառակել իւ
րով ստեղծաբանութեամբ, զոր և տեսեալ զԹերու
Թիւն մոաց նորա սրբոյ եպիսկոպոսին, և բանիւք
էկարացեալ քակել՝ առաջի ամենայն բազմութեանն
ասաց. Ձինչ պիտոյ է ընդ սրդւոյդ կոտսեան և ընդ
անհաւատիդ՝ մեզ բանիւք մրցել. որ ՚ի մէնջ առաջի
եղելոյս ոչ հաւանի՝ ոչ միայն զգլուխս չկանդնէ,
այլ և որ կանդնեալք են՝ ընդունայն վարդապետու
Թեամբն իւրով կործանէ և բռնադատէ։ Բայց նախ
քեցուցանել փորձեցայց, եԹէ է Աստուած՝ որ ուղ
ղութեամբ յօրինէ զամենայն. որ և ՚ի ձեռն մեր տը
րտսւ ծառայից իւրոց՝ զանձառ իւրոյ զօրութեանն
զազգսն յուցանէ։ Եւ ասէ. Լուցի այսուհետև ՚ի
մէջ քաղաքիս հուր բորբոքեալ, և առաջի երեսաց
ձերոց մոցուք երկոքեանս առանց դողման, և որ ոչ
այրի՝ ձշմարիտ գոլ պաշտօն նորա հաստատեալ լիցի։
Եւ հաձոյ Թուեցաւ կամքս այս ամենայն բազմու
Թեանն, քանզի յոլով մասն բազմութեանն հաւա
տացեալ էին ՚ի կողմն դիւԹին։ Ուստ նոյնժամայն լու
ցեալ բորբոքեցաւ հուրն, և հրամայեաց սուրբ եպիս
կոպոսն Հեղինոս երկոցունց մտանել ՚ի ներքս առանց
երկիւղի։ Բայց Իրաս կախարդն ասաց. Ոչ այդպէս,
այլ նախաքանչելսւր ոք ՚ի մէնջ որիշ մոցուք. բայց դու
նախ և յառաջ մատիցես, որ հրամայեցեր զայս լինել
Ուստ նոյնժամայն սուրբն Հեղինոս ամբարձ զձեռս իւր
յերկինս և ասէ. Դու գիտես, Տէր

Ցիտաս Քրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ, որ ջրտորդ ՚ի հնոցն երևեցար երից մանկանցն, զի ոչ մի ինչ ինձ մարդկեղէն փառաց ցանկացեալ եղև, այլ միայն փրկութիւն ժողովրդեանն քո, որում գովութեան զիս արժանաւորեցեր, զոր մատնիչն ՚ի ձեռն արբանեկիցն իւրոյ յարդար Հանապարհէն քարավէժ առնել փութայ. վասն որոյ փրկութեանն յօժարութեամբ կամ մօք յայս հուրս մտանեմ, հաստատելով թէ զքեզ անդ գտանիցեմ գոլով ՚ի վերայ իմ. զի ոչ մի ինչ ՚ի հրոյն յիշելով յիս սերձեսցի: Եւ զայս ասացեալ ինքեան զինքն նշանաւ խաչին, և եմուտ ՚ի ներքս, և եկաց ՚ի մէջ բոցոյն բազում ժամս, ոչ ինչ ամենևին վնասեալ ՚ի հրոյն: Յայնժամ տեսեալ բազմութեանն չքնաղ զարմանալին և զկրս, Թէոփէտ և ընդդիմանայր նոցա՝ առեալ ընկեցին ՚ի հուրն, և սկսաւ այրել: Փութացեալ երանելին Հեղինոս, Թէ և յիրաւի այնպիսի հաւատովք տանջէր, այլ սակայն կենդանի յարիշտակեաց զնա տուրքն Հեղինոս. իսկ նախատեալ զնա ամենեցուն, և Թողեալ ՚ի տեղւոջն: Եւ դա զոր տեսանէքդ հանապազ փառաւորէ զԱստուած:

Յայնժամ Եւգինիա հանդերձ ներքինեօքն իւրովք Պրոտինեաւ և Հիւակինթոսիւ ՚ի գուձս ինջանէր, առեալ զաւրքն Հեղինոս, որպէս զի և զնոսա առաւել ՚ի հաւատոյն հաստատեսցէ. և առաջէին զնա, զի ՚ի ձեռն նորա ծանօթութիւն ՚ի Տէր եղիցի: Իսկ նա ասէ ցնոսա. Պարտական սովորութեամբ յօրհնութիւն առաւօտին, որպէս զի զուարթացեալ ձեր երևումն ընտրեսցի ձեզ: Բայց առաջեաց զնա Եւգինիա, զի աղօթս արասցէ ՚ի վերայ նոցա. զի մեք երեքեան Հռովմայեցիք եմք բնութեամբք, և Թողեալ զպաշտօն կուռցն զՀեա երթեալ ոտից քոց՝ հասաք յայս տեղի: Եւ մինչ նորա պատմէին զայն՝ ծերունին լուռ կայր. զի զամենայն զոր պատմէլոց էին նմա, նորա զամենայն ՚ի տեսլեան տեսանէր: Իսկ լեալ նորա պարտապետ Հաւն նոքա ՚ի տեղին, և գտին զայր մի երիվարած, որ լեալ էր ընդ նմա, որում անուն էր Եւտրոպիոս: Այնցայտնի. Հասեալ կան առ ընդեր եղբարքն երեք երիտասարդք՝ զպաշտօն կուռցն ուրացեալք. և փրկչին Քրիստոսի ծառայել և զինքեանս Հանապազ՝ աղաչեն ՚ի

հաւատացեալոց ժողովս. որոց այս է ցանկութիւն, վի արժանի եղիցին ի ձեռն սրբութեան քո ուղղիլ և անարատ հաւատոց ընդունակք լինել: Յայնժամ տուր բըն Հեղինա ասաց. Գոհանամք զքեզ Տէր Յիսուս Քրիստոս, որ յայս հասանել վես արժանի արարեր. տեսանել զայս՝ որ այժմ ի ձեռն ընտրհաց յաւաջադոյն ցուցեր ինձ կամօք քոյովք սրբովք: Խակ մնեալ նոցա առ նա մատուցին աղօթս, և կատարեալ նորա զաղօթս, կալաւ զձեռանէն Եւգինեայ հանդերձ այլովքն, և ասէ. Չի է վի մանաւանդ ցուցանելոյ զանձինս ձեր՝ զոտանալեալ ծառայս Աստուծոյ կամեցայք տեսանել. քայց սակայն զինչ տեսանելով յիս եկիք առ իս, ծանուցէք ինձ, քանզի լսել կամիմ ի ձէնջ. զի կարացից պատուհաս ինչ ստանալ ձեր առաջի եղեալ մոաց: Պատասխանի ետուն նմա քարեխտհն Եւգինիա և ասէ. Իբրև ոչ ի քարի և ի փայտի հնար է քնալ կեղ զօրութեան Աստուծոյ. և խնդրեալ մեր և մեզ առանձինն, եթէ որ է Չքմարիտ պաշտօն, յորում հանպէս է երկրպագելին և երկնայինն Աստուած. հնչումն լսաք յայսմ տեղւոջ, զի միաբանութեամբ օրհնելով ասէիք. Սմենայն չաստուածք հեթանոսաց դևք են, այլ Տէր զերկինս արար. ուստի բարեխտհսուրդ ձայնիս այսուիկ հրաւիրեալք Թողաք զպաշտօն կուոցն, և փութապէս այսր հասաք հանդերձ ժողովրդովս. զհետ գաղք քում աստուածպաշտութեանդ հատանելով Աստուած, և ընդ սոյա լինել սրբ միաբան քում աստուածատէր հաւատոցդ և Չքմարիտ հրամանացդ: Բայց ոմն է եղբայրութիւն երեցունցս, միոս ի մէնջ Պրոտէոս անուն, իսկ միւսն Հիւակինթոս. քայց ես Եւգինիոս կոչիմ: Սակ երանելին Հեղինաս. Բարւոք կոչեցար Եւգինիոս, զի քաջապէս գործեալ ընդ կատարեալ Չգունա՝ անցուցեր զքեզ առ Տէր. քայց զայս գիտեա դու, զի նախ ինձ Աստուած յայտնեաց զքէն Եւգինիոս, եթէ ուստի ես և ոյր դուստր ես և ոյք դպրա որք ընդ քեզ են եկեալ, Տէր եցոյց ինձ, զի քե առ ի յԱստուած որպա քաջալերեցան: Եւ հրամայեաց նոցա տալբն Հեղինաս զի երթս ամիս ընդ երեկեցիս և ընդ վանորայս շրջել, զարս ուղիղ հաւատովք արժանացոյց տալբ միրտութեան. և յետ այնո

ըիկ տարեալ զնոսա ՚ի վանսն, յանձնեաց գլխաւորին, բայց գիրսն ոչ ումեք ծանոյց։

Իսկ արդ կրկնեացուք անդրէն ՚ի նոյն ժամանակ, յորում Պրոտէոս և Հիւակինթոս առեալ զԵգինիա՝ պղեսպակն ՚ի Հանապարհէն արձակեցին ունայն առ մայրն նորա։ Իսկ ընտանիք նորա կարծեցին եթէ և ինքն Եգինիա, յանդուգնեաւք աներեսին ընդ առաջ նորա ելին. և յորժամ ոչ գտին զնա ՚ի պեսպակին, առնեքեան միաբան կոծեալ լային. և եղև խառնաթիւն և ամբոխ ընդ ամենայն քաղաքն, և էր ողբք անհնար լինիք և կոծումն սաստիկ, և ամենեքեան եղեալ էին ՚ի յոյժ տրտմութեան. ծնօղքն զդուստրն ողբային, և եղբարքն զքոյրն, ծառայքն զտիկինն, և իւրաքանչիւր ոք ՚ի քաղաքացեացն վասն սոյ ծնողացն և վասն ընտանեացն նորա տառապանաց և տրտմութեան։ Եւ յանչափ պատահարս ընկղմեալ էին, և շրջէին ընդ ամենայն իշխանութիւնն խնդրելով զԵգինիա, և հարցանէին զվհուկս և խնդրէին զտրտմայնակոչս, և զոհս կռոցն մատուցանէին, և ամենեքեան ասէին զԵգինիա եթէ յանմահից աստուածոցն էիցէ վերացեալ։ Իսկ հայրն հաւատացեալ այսմ՝ դարձաւ ՚ի սրտին, կարծելով թէ յարդարև յաստուածոցն ՚ի թիւս համարեալ է. և կանգնեաց նմա անդրէ ՚ի մաքուր ոսկւոյ։ Բայց մայրն նորա կղոդիա և եղբարքն նորա Ալիտոն և Սարդիս ոչ ամենևին կարէին դադարել ՚ի տրտմութենէ, այլ էին նոքա սաստիկ սգով։

*Իսկ Եգինիա առնաձև միաբանութեամբ հոգւոյ ընդ Պրոտէի և ընդ Հիւակինթոսի էր ՚ի յառաջացեալ վանսն։ Եւ այնչափ աստուածային ուսմամբն յառաջանայր ՚ի Քրիստոս, մինչև յերկեմեան ժամուն զամենայն գիրս ՚ի միտ առնուր։ Իսկ յերրորդ ամին մինչդեռ յայնպիսի վարս և ՚ի գնացս էին՝ վախճանեալ վանսոյ երէցն փոխեցաւ առ Տէրն իւր։ Յետ սոյ կատարման՝ ամենեցուն եղբարցն Քրիստոսի Եգինիա երանելի ՚ի գլխաւորութիւն կարգեցին։ Իսկ Եգինիա հրաժարէր, վասն զի արգելեալ էր ՚ի խղճէ մտացն, եթէ էգ՝ Աստուծոյ մարդկան գլխաւորել ոչ պարտի. բայց սակայն երկնչէր գասուկ ընդդիմանալ և աղաւթս եղեալ՝ ոչ}

հրաւիրեն։ Յայնժամ ամենեքեան միաբանութեան կամօք յարեան ի վերայ նորա. և նա զայս բանս ասացեալ առ նոսա քանիցս անգամ։ Ի ժողովս քրիստոնէից ասացէք, եթէ Քրիստոս ընդէր հաձութեանն պլինելոցս ինքեամբք սահմանեաց. վասն որոյ եթէ հրամայէք՝ յառաջ բերել լեգէն աւետարանքն. և բայեալ ընթերցուք, և որ ինչ հրամայեալ լիցին ի պլուխն՝ այնմ լուիցուք։ Իսկ նորա բերին զառաքաւետարանն, և առեալ երանելոյն Եւգինիայ երկրպագեաց, և լուեալ ամենեցուն մատուցին աղօթս. եբայց և եգիտ զառեղէնն, որ գրեալ է, թէ՝ Այսպէս Յիսուս աշակերտացն իւրոց. Գիտէք թէ իշխանք հեթանոսաց տիրեն, և մեծամեծքն վտանգեցուցանեն զնոսա. քայց ոչ այնպէս եղիցի և ի ձերում միջի, այլ որ կամի ի ձէնջ լինել առաջին՝ եղիցի ձեր վերջին և ամենեցուն ծառայ։ Իսկ յետ կարդալոյն՝ Եւգինիա ասաց, եթէ ըստ այսմ օրինակի վարէք զիիսս ձեր, զի այսպէս եղէց, կացցուք ի հրամանին Աստուծոյ. պարտ է ծառային եթէ ծառայակցաց իւրոց, զի ըստ կամացն Աստուծոյ կացուցանել ընդունելի լիցի ի նմանէ։ Եւ ամենեցուն հաւանակից լեալ եղբարցն՝ յանձն առ զամուն զվարուքեանն, զի մի տրտմեցուսցէ զնոսա. զի ամենեցուն ազաչեալ զնա բառնալ զհոգս վանացն, հաւանեցաւ այնմ։

Բայց զամենայն խոնարհութիւն ցուցանէր յանձին. և զոր սպասաւորութիւնն պարտ էր կրտսերացն մատուցանել առ նա, այս ի նմանէ լինէր առաւելագոյն կատարեալ. ջուր բերել ի ջրհորոյն, փայտ հատանել, մաքրութիւն յատակին առնել, և ամենայն պիտոյից եղբարցն սպասաւորութիւն հարկանել։ Բայց արար և ինքեան սենեակ մի փոքր առ դրան վանացն, զի և այտու մի ինչ թուեցն առաւելանալ քան զայլ ընկերսն. և ի գիշերապաշտօնեան յոտիս զայրն՝ զնա յատաջ եկեալ գտանէին. և ոչ որ էր յեղբարցն յանդգնեսցեան՝ որ վերապոյն գտանէր քան զնա ի խոնարհութիւն. յամենայն իսկ ժամու պարապէր եղբարցն, և խրատէր ստէպ ստէպ ի ինչ ասել ուժգնագոյն երկմտամբք. այլ յաճախն բանիւ խօսել. և ասէր, եթէ որչափ պարտ

տիմք յուցանել վերկիւզածուԹիւն ծառայքս Աստուծոյ, ի հրամանաց նորա ասացուք. բայց միտ դիցուք այսուհետև Թէ և այնչափ փոյԹ և մտաց յօժարուԹիւն ունիցիմք ի սիրտս. քանզի ոչ իւիք պարտի ի մէնջ Աստուած արհամարհել. վասն զի այսպիսի օրէնսդիրք՝ ուրանայ զիւր Տէրն, որ ուսուցանէ առնել զոր ոչ նայի հրամայեաց: Իսկ զայս ամենայն ուսանելով ի նմանէ, հաստատէին ի հաւատս, և ոչ ի տուէ և ոչ ի գիշերի աստուածայինն գրոցս ոչ պարապէին: Բայց այսչափ Աստուծոյ պատուական էր, մինչև զգեստս հալածէր, և առողջուԹիւն հիւանդաց Աստուծոյ ընծրհէր ի ձեռն նորա:

Էր կին ոմն ի մենկղնտոսացն հարուստ և հռչակելի, որում անուն էր Մելանի, ջրեքօրեայ ապրումովք բազում ժամանակս մաշեալ, եկն առ նա. յորոյ լանջաց վերայ Եւգինիա զՔրիստոսի նշանն արարեալ՝ զամենայն ախտաժետուԹիւն հիւանդուԹեան նորա մերժեաց, և ողջացուցեալ կանգնեաց զնա. և յետ այնորիկ երանելին Եւգինիա ի վանան փուԹացաւ: Դարձեալ Մելանի ատէպ ատէպ կոչէր զԵւգինիա. իսկ Եւգինիա երկիւղածուԹեան մօք երԹայր առնա. չգիտեալ Մելանիա, Թէ կին էյէ սա, և ոչ ուղիղ մօք ցանկայր տեսանել զԵւգինիա. և ոչ վասն այնորիկ եԹէ նորա բարեխօսուԹեամբ ողջացաւ, այլ կարծէր այլ մարդ գոլ զնա, և անարժան բանիւք առաքէր առ նա զայս ասելով. Ընդէր զանձնդ ընդունայն աշխատուԹեամբ հարկանես և մաշես, և զծաղիկ երևոյԹականդ կորուսանես. մինԹ Աստուած զարուստս սիրէ. արդեօք ամենայն մարդոյ այսպէս հրամայէ, զի առանց խնդուԹեան և առանց սիրոյ անդադար ամենայն ժամանակս կենդանի իւրեանց անցուցանիցեն. ոչ այդպէս, այլ եկ դու և վայելեացուք ի պարտէս Աստուծոյ, զի մինչդեռ անչնորհք լեալ՝ անարժան համարեացուք զանձինս պարտիզացն Աստուծոյ: Ասաի և վասն քո երանեացդ՝ հաւատոյ ինձ հնազանդել քեզ, զի առ իս լինելով՝ այդպիսի աշխատուԹեանդ վախճան արասցես, և պայծառ և բարի ժամանակս վայելեացուք, և եղիցիս տէր ամենայն ստացուածոյ իմոյ. այլ և անձին իմոյ եղիցիս տէր, զի զարդարեալ

եմ պատուով, և ազգաւ երևելի, և ի իմ մեծութենէն ստատիկ, և ոչ կարծեմ եթէ անիրաւիցեմ առաջի Աստուծոյ. եթէ կամիս իմ այր լինել, և՝ ի քաց մերժեալ զազգատութենէդ՝ վայելես՝ ի քարի ժամանակս:

Զայս և զսոցին նմանիս առացեալ Մելանիայի, տուբ էին Եպինիա յարեաւ՝ ի մահաբեր և՝ ի կոտառական քանիցն, կամելով զանձն նորա ազատել՝ ի խեղդմանէ մահու, նշանեցուցանելով զնա թէ կարի գծուծ է աշխարհի տանկութենն. քանզի զոր կարծէ ոչ ունել՝ ի ձեռն ժամանակեայ տանկութեանն՝ ի հանապազորդ տանկութենէն և՝ ի յանդուգ փափկութենէն զանձն իւր զրկէ. և չէ պարտ ամենևին յանձն առնուլ զմարմնաւոր տանկութիւնս, զի քանաւորէն՝ ի ձեռն այսորիկ փառաքշէ, առ՝ ի խաթարել և՝ ի կորուսանել զոգիս մարդկան: Իսկ յայս առացելոյս Եպինիայի՝ Մելանիա խնդրէր զանկանջն առնել՝ ի չընդունել զառացեալն, քանզի ըմբռնեալ էր խորհրդովք դառն անամօթութեան, որպէս և գրեալ է. Յանձն չարարուեսա խնամուութիւն ոչ մնանէ:

Իսկ Եպինիա չանացեալ ամենայն օրինակօք զի՝ ի կոտառական մահուանէն զնա զերծուսցէ, մեկնեցաւ՝ ինանել, և Մելանիայի հիւանդութիւն մարմնոյ պատճառել, և աղաչէր զերանելին Եպինիա՝ հիւանդ դառնս զալ նմա: Իսկ մտեալ սրբոյն և նստեալ՝ ի ներքս՝ ի սենեկին առ նմա, զաղտնի գրկախառնուեալ Թեոմէ անամօթաբար Մելանիա յանդգնէր մերձենալ առ նմա, և անարժան բանիւք յամբարշտութիւնն հրապուրէր զնա: Յայնժամ երանելին Եպինիա խոտոր խմացեալ զնենգութիւն չար գիւին և զչարութիւն բանսարկուին որ՝ ի նմա, կարկառեալ զաջ ձեռն՝ ի Քրիստոս իւր արար զնշան խաչին, և մեծաւ բարբառով և սաստիկ արտասուօք և հառաչմամբ ևս սկսաւ ասել. Պատշաճութեամբ անուանեցար դու Մելանիա. քանզի սուտ դինջութեան և դայլ չարութեան բոլիկ՝ ի քէն, զի սիրեն մերկացս դուստր էս դու, և առաքնորդ կոտառեան, և սիրելի սատանայի, բորբոքումն ցանկութեան և քոյր անիրաւին և անխախտան մահուն, դուստր մշանջենաւոր զեհենայն,

աղբիւր մեծապէս անուանեցին ցանկութեամբ, թէ հնաւ ի Աստուծոյ, և ընդունակ բանասարկուին. ՚ի բաց մերժեցին ձեռս զմոլորութիւնդ ՚ի ծառայից Քրիստոսի։

Իսկ իբրև զայս լուաւ նա՝ բոլորեցաւ սրտմտութեամբ և չկարաց տանել ամօթոյն իւրոյ, երկուցեալ թէ գուցէ ՚ի բազում ակառնջս հասանելով լսոյս այսմիկ՝ նախատս եղիցի առաջի բազմաց, երթայ յԱղեքսանդրիա, և ՚ի մէջ հրապարակի առաջի եպարքոսին Փիլիպպոսի ամբաստանութեամբ անկանի ասելով, եթէ՝ Վիպեցայ ումեմն երիտասարդի անհաւատի՝ որ առէր զինքն քրիստոնեայ. զոր իմ կոչեցեալ վասն առողջութեան, քանզի համբաւէր եթէ հիւանդացայ օգնել կարէ. իսկ հրամայել մերձենալ նորա առ իս՝ զժնեայ և անամօթ բանիւք սկսաւ խօսել ընդ իս, և ՚ի թշնամանս հրապուրէր զիս. և զինչ պարտ է բազում ինչ ասել. քանզի զլուխ արար, և իբրև ՚ի գերի մի յանդգնեցաւ ձեռնարկել յիս. զի թէ չէր զիտեալ ՚ի սեռենէն մի ոմն յաղախնեացդ իմոց, յաղագս որոյ և ոչ ակնկալ եղէ ՚ի բռնադատութենէ նորա, թէ ինձ կատարէր յիս զչար ցանկութիւնն իւր։ Իսկ զայս լուեալ եպարքոսին և յոյժ բարկացեալ, առաքեաց բազմութիւն զօրականաց. և հրամայեաց զինս և զանձինսեան որ ընդ նմա էին՝ կապել երկաթով, և ՚ի տակաւ առուրս սահմանեալ ածել ՚ի հրապարակն առաջի եթէատրինին. զի լուեալ ՚ի նոցանէ հրամայեցէ զպատմութիւնն ընկենուլ զնոսա։ Իսկ յոյժ ահ եհաս ժամանակին՝ զերանելին Եզինթա և զամենեսեան որ էին ընդ նմա՝ երկաթակապս ածել ՚ի հրապարակն առաջի ամենեցուն։ Եւ բազմութեանն չդիտացեալ զպարտութիւնն՝ աղաղակէին ՚ի վերայ նոցա, մանաւանդ որք էին ՚ի Մելանիայ կողմանն. զի պէսպէս կամք էին բազմութեանն, ոմանք աղաղակէին հրով ծախել զնոսա, և ոմանք զպատանեաց ընկենուլ զնոսա։ Իսկ յոյժաւ եհաս ժամանակին՝ զերանելին Եզինթա և զամենեսեան որ էին ընդ նմա՝ երկաթակապս ածել ՚ի հրապարակն առաջի ամենեցուն։ Եւ բազմութեանն չդիտացեալ զպարտութիւնն՝ աղաղակէին ՚ի վերայ նոցա, մանաւանդ որք էին ՚ի Մելանիայ կողմանն. զի պէսպէս կամք էին բազմութեանն, ոմանք աղաղակէին հրով ծախել զնոսա, և ոմանք զպատանեաց ընկենուլ զնոսա, և այլք աղաղակէին ազգի ազգի տանջանօք հարկանել զնոսա։

Յայնժամ եպարքոսն լուեալ զբազմութիւնն, կացոյց զԵզինթա առաջի ամենեցուն, և հարցեալ զնա տեսլով, թէ՝ Որպիսի հանդարձակութեամբ այնչափ յանդգնութիւն հասոյց զքեզ, մինչև զաղգային սին կրօնսդ Մելանիայ արհամարհել. զի ապաքէն կամք էին բազմութեանն, ոմանք աղաղակէին հրով ծախել զնոսա, և ոմանք զպատանեաց ընկենուլ, և այլք աղաղակէին ազգի ազգի տանջանօք հարկանել զնոսա։

Յայնժամ եպարքոսն լուեալ զբազմութիւնն, կացոյց զԵզինթա առաջի ամենեցուն, և հարցեալ զնա տեսլով, թէ՝ Որպիսի հանդարձակութեամբ այնչափ յանդգնութիւն հասոյց զքեզ, մինչև զաղգային սին կրօնսդ

ՙեաԼալ՝ մոեր աւ նա ըստ նմանուԹեան քրիստանէի, որպէս Թէ բժշկուԹեան արուեստին Հմուտ էս, և զազաստածին կինն ՚ի Թշնամանս և յանարգուԹիւն կոչէիր. մինԹէ այսպիսի ինչ Հրամայէ ձեզ գործել Քրիստոսն ձեր. և կամ այդ է պաշտաման ձերոյ խոստովանուԹիւն, զի զապականուԹեան գործս գործեցէք։

Յայնժամ Նեգինիա պատասխանի էտ եպարքոսին և ասէ. ՍղօԹիւք ինդրեմ զքոպարուԹիւնս այս որ եկեալ է ՚ի վերայ մեր. կամիմ ես յանձինս խղճիւ յաղԹել, և ստեղծագործեալ Հաճեցուս այս Հանդերձեալ գաստատանին պահել, քանզի ոչ մարԹի երկնչել զՀշմարիտ սրբուԹեանն՝ որ ինչ ՚ի չարաչուեստուԹենէ ՚ի վերայ նորա. և ոչ գարձեալ պարկեշտուԹիւնն, սրբուԹիւնն գնայեալ Թաքչիլ կարէ, քանզի ոչ միայն ՚ի գոլուԹիւն մարդկան վայելեցոյէ վայելմամբ լուսոյն իւրոյ՝ այլ և ՚ի պատիւ պարգեւատուին իւրոյ Աստուծոյ։ Քանզի խնամատոյ պարկեշտուԹիւն պահի յատակապէս, որք ստացեալ ունին զնա անՀնարուԹեամբ, և որպէս ՚ի սէր Աստուծոյ քաջապէս վարի անձն քրիստոնէի։ Զի զկնիզ մատոյ իմոյ այժմ յայտնեալ ՚ի մէջ բերելոյ. քանզի ես ևզ եմ բնուԹեամբ, և չկարացեալ ցանկալւոյն իմոյ Աստուծոյ ըստ կամի պիտանացուացս և գեղեցկաշքուիլս, այսպիսի պատՀառանօք որով եզ յառն առնել ձևացայ. յարժան և կիրառ զգեղս այլակերպեալ ըստ նահանձու և ըստ նմանուԹեան վարդապետին իմոյ Թեկղէ, յատակամտացուացս և յառժամանակէից փախուցեալ, երկնային բարեացն Հասանել կամեցայ. առ ՚ի գոլուԹիւն եղև այսպիսիս, և ՚ի ցանկուԹիւն ընդառաջական առաքինուԹեանց ակարուԹիւն զառն առնել ձևացայ։ Վասն այնորիկ և ես առաջնորդին պաշտաման ցանկուԹեամբ զկնճեալ[1] զառն կերպասանս պատեցի։

1. Յոր. ՚ի ձեռս։

և դարձեալ փութ ասէս ծածկէր պատուաստուն հանդերձին. և յաւել ևս խօսել, և ասէ ցեպաղքեան. Դու իսկ հայր իմ մարմնաւոր ես, և եղբարք իմ երկու Ադիտան և Սերգիոս. իսկ ես եմ դուստրն քո Եւգինիա, որ վասն Քրիստոսի ցանկութեանն զերկրաւորս արհամարհեցի հանդերձ երկու պատանեկօքս իմովք, որ են ահաւասիկ Պրոտէոս և Հիւակինթոս, իմ նեղքինիք, որք ընդ իս ՚ի Քրիստոսի դասս կարգեցան: Բայց Քրիստոս այնչափ բաւականութեամբ մերձեցուցանէ զքեզ, մինչև իմ վարդապետելոյս քեզ՝ առաջի ամենեցուն յաղթող ցանկութեանց եղիցիս ՚ի Քրիստոս, պատի և ես իսկ հաւատամ, եթէ մինչ ՚ի վախճան անվթար պահեցայց:

Ձեռ այսպիսի ձանձրէր հայրն զդուստր, և եղբարքն զքոյր իւրեանց: Եւ ընթացեալ առաջի ամենեցուն պատին գնոլաւ, և արտասուել փարիլն զվիմեամբք: Եւ նոյն ժամայն ընթացեալ ումն պատմեաց մօրն նորա Ակղոեայ: Եւ նորա լուեալ փութապէս հասուցանէ ընթացիւք և ամենայն մտադիւրութեամբ հասանէր ՚ի Թէատրոնն, և հանեալ արագ արագ ոսկեթել հանդերձ՝ ակամայ ազուցանէինն նմա, առ ՚ի ծանուցանել ամենեցուն եթէ սա է Եւգինիա. և վերամբարձեալ բառնային զնա, և ամենայն բազմութեանն աղաղակէր ասելով. Մի է Քրիստոս, մի է Տէր, մի է Աչմարիտ Աստուածն քրիստոնէից: Բայց եպիսկոպոսքն և երիցունքն հանդերձ բազում ժողովրդովք քրիստոնէից կային առ Թէատրոնին, և պահ ունէին թէ յոյժ սպանանիցեն, առցեն զնըշխարս սրբոցն և ամիոփեալ թաղեսցեն զնոսա: Իսկ մնանէին և նոքա ՚ի Թէատրոնն փառաւորելով զԱստուած, և միաբարբառ աղաղակէին ասելով. Ա՛ջ քո, Տէր, փառաւորեալ է զօրութեամբ քովք, ա՛ջ քո, Տէր, փշրեաց զթշնամիս քո: Իսկ բառնային զնա վերամբարձ ՚ի տեսանել զնա ամենեցուն, զի անչափ պարկեշտութեանն նորա անպէտ լինէին. և ամենեցուն հայելով յանկարծակի հուր ելն յերկնից և մաշեաց զՄեղանիա, և զամենայն տունն նորա: Եւ իբրև զայն ևս տեսին՝ խնդութեան յոյժ եղև բազմութեանն հանդերձ երկնելոցն. և զսքանչելի փակեալ եկեղեցին

քանային. եւ ամենեցուն հաւատացեալ՝ եղեն քրիստոնեայք: Մկրտեցաւ և եպարքոսն Փիլիպպոս, և զդեիք նմա Սպիտան և Սերգիոս. մկրտեցաւ և մայրն նոցա հանդերձ աղախնովք իւրովք, և անթիւ բազմութիւն հեթանոսաց դարձաւ ի քրիստոնէութիւն: Եւ ամենայն Սղեքսանդրիա լինէր նմին եւ ևս եղեզեցի. և վասն զի երկոցունք ամենայն առաքինութիւնս եհետեւեցան և յօրինէին, վասն զի գնացեալ էր առ Տէր՝ որ յառաջագոյն աստուածային օրինացն էր առաքեալ: Իսկ եղեալ նորա եպիսկոպոս, մեծապէս պատուէր նա զեկեղեցի, որպէս զի արժանի եղեալ էր պատուոյն, այլ և զարքունեան նա յօրինէր. զի ունէր զեպարքոսական իշխանութիւնն, քանզի փոխանակ չէր եկեալ: Իսկ միանգամայն զամենայն իսկ Եգիպտացիքն առեալ զպատճառս ի նմանէ զերծեալք ի կռոցն մոլորութենէ՝ դարձան ի Քրիստոս, և յամենայն քաղաքս բազում եկեղեցիք, և ծաղկէր քրիստոնէութիւնն օր ըստ օրէ աճեցեալ:

Եւ այսոցիկ այսպէս յօրինեալ ընդհօքն Սպտուծոյ, իսկ նախանձոտ բարւոյն բանսարկուն և չարին վարդապետ և գործակից՝ յարուցանէր զամենա՛ի հեթանոսացն ոմն էին գլխաւորք քաղաքին, և սոյ անկանել նոցա առաջի Թագաւորացն ոմն էին յայնժամ, և զամենայն ինչ առ նախանձ սուրբ եկեղեցւոյ և առաքեալ Սպիտան եպիսկոպոսին Փիլիպպոսի առացեալ: Առաքն վոխանակ Փիլիպպոսի եպարքոս, որում առնէր Պերինոս, որ ունէր հրաման՛ի Թագաւորացն Թէ այդպէս լցէ առանել զՓիլիպպոս: Իսկ եկեալ Պերինեայ և չհարացեալ զայս առնել, վասն զի սիրելի էր Փիլիպպոս ամենայն քաղաքին քաղաքին, առաքէ զոմանս առ նա՛ի նմանութիւն կերպարանեալ քրիստոնէից, որ մատուցեալ յեկեղեցւոյն, և գտեալ զնա զի կայր՛ի պաշտաման Սպտուծոյ. և մերձենալով առ նա երթն Թէ զի օգնութիւն առցեն՛ի նմանէ, առանանեն զնա երթն զՁեռաբերնա՛ի մէջ առնելն և սեղանոյն: Բայց եղև նա յեպիսկոպոսութեանն առ ին և ամիս երիս. և վկայութեան խոստովանութեամբ գնաց առ Տէր:

Իսկ Եւգինեայ առեալ զմարմին Հօր իւրոյ մարտի-

լսեի, եա յօտարանացին, որ էր եղեալ ի Կղզեայ մօրէ նորա, մօտ ի կոչեցեալ տեղի ի Տիրանաս, որ էր տուն աղօթից եղբարց նորա ի փառաբանութիւն Տեառն Քրիստոսի, զոր Թագաւորական պատուով չինեցին ի յառաջասացեալ տեղւոջն։ Իսկ այսպիսի եղեալ՝ ամենեքեան միաբան որք էին մերձ առ երանելին Եւգինիա, և մայր նորա և եղբարքն լծակցեալ խորհրդին ի Հռոմ, և առաջնորդէին նոցա ջերմ֊եռանդն Ստուծոյ։ Այլ որպ Սպիտոս և Սերգիոս ի սմենկցուսացն խնդութեամբ ընկալեալք եղեն. մինչև միմն ի նոցանէ հիւպատոս էղե ի Կարթագինա, իսկ միւսն Բիտարիուս Սիրիկեցւոցն կարգեցաւ։ Բայց Կղզիա և Եւգինիա լսա ատուածային խորհրդոցն վարիչն, և յորդորէին օր լսա օրէ ի վարս առաքինութեանն, և բազում անձինս մատուցանէին Ստուծոյ, և արժանացեալք էին առնոյն սիրոյ Կղեմտոսի և կուսից, և ի նախանձուն քրիստոնէութեան յառաջացեալք։ Իսկ Բասիլիս ոմն կոյս, որ էր Գալիոսի Թագաւորի ազգակից, մօտ առաւելեալ և խնամութեամբ Տուչակեալ, եկն նա գաղտ առ Եւգինիա, և լուեալ ի նմանէ զբանն Ճշմարտութեան, այնպէս հաւատաց, որպէս թէ ոչ ումեք Կնար էր քան կել զնա ի հաւատոցն։ Բայց վասն զի չկարէր առէպ առէպ առնել զերանելին Եւգինիա՝ Բասիլիա, զի Պրոտես և զՀիւակինթոս զնեբլինիս նորա իբրև ի Ընտէն պարզևեալ նմա յԵւգինէ՝ ընկալաւ, ընդ որս զցայգ և զցերեկ առաջնորդէին օրհնութեանցն և խնդրուածոց և աղօթից պարտացն և ի նոյս յօրանայր։ Յամենայնի եպիսկոպոս ոմն այր սուրբ և առաքեալ Ճայն խրատուք յոյժ կատարեալ՝ եկն առ Բասիլիա, և լուսաւորեաց զնա սուրբ մկրտութեամբ և զամենեսեան որ ընդ նմա էին, և առէպ առէպ խրատէր յաս֊

նոս եպիսկոպոս քաղաւմ վշտաց համբերեցաց վասն հաւատոց, ուստի և Մաքսիմոս ումն անուն հրապարտս Թագաւորական Թղթովք հրաման առեալ սպան զինա։ Իսկ եպիսկոպոսին Նեստորի զայս լուեալ կայր առանձին ի ծածուկ վարուք. քանզի բազում ի ևեծամեծաց Հռովմայեցւոց քրիստոնեայս ցուցանէր ի ծածուկ։ Բայց ի միում աւուր եկեալ Բասիլիա առ Եւգինիա, և յոյժ խնդութեամբ ընկալաւ զնա, և ասէ ցնա. Ա՛յսօր յայտնեաց Տէր ինձ զի զվարդապետիկ պատկերով ծաղկի քո ալիւն հեղցի, այսինքն է՝ զի Հզնեալ վասն Քրիստոսի խոստովանութեանն, զպսակն և զնշանն յաղթութեան ընկալցիս։ Իսկ երանելին Բասիլիա զայս լուեալ և զձեռս յերկինս համբարձեալ ևեծապէս խնդութեամբ գոհացաւ զԱստուծոյն։ Եւ իբրև կացին յաղօթս և կատարեցին զամէնն և նստան, ասէ Բասիլիա ցԵւգինիա. Ի բաքանչիւր մեր որպէս տեսանեմք յայտնեաց փրկիչն մեր զպատկին փառաց, քանզի որպէս քեզ վասն իմ, նոյնպէս և վասն քո ելից յերկրէ՝ Քրիստոս յայտնեաց ինձ. քանզի տեսի զի նշան յաղթութեան կրկնակի առեր յերկնից. մի վասն կուսութեանն Հզնութեամբ յաղթեցեր դու իսկ Աղեքսանդրիա. իսկ միւսն վասն հեղման արեանդ, զոր ըմբռնեցոյ ես։ Իսկ երանելոյն Եւգինեա յոյժ խնդալից եղեալ, և կոչեցեալ զաղեկն ևեծագոյն կուսանան, որք ի ձեռնադրա անապականն արքութեամբ պարկեշտութեան ցանկացան, ընդ ինքեան հրաւիրէր յաղթել և կատարելոյ զաղօթսն, այսպիսի բանիւք բարբառեալ ասէ ցնոսա. Ա՛հաւասիկ ժամանակ կեցոց, յորում հասեալ պսուսէն կեցի յերևիլ խորհրդոցն, վասն զի էք գուցաղեաց իմոց, և ոչխարք յինէն. զիս նախ յուզարկեցէք, և գուք պատրաստ եղերուք արիմնութեամբ. քանզի կուսութեան գլխաւոր ցոյցք այս են, նմանել Հրեշտակաց և մերձենալ առ Աստուած. քանզի այս առաքինութիւն հանդերձեալ կենացն սիրելի է, և պարկեշտութեան մայր, արքութեան վարդապետ, անհոգութեան տիկին և խնդութեան առաջնորդ, առաքինութեան նախանձ և հաւատոց պահ, յորոյ օգնութիւն և պատուոյ պահպանութիւն, անձին փառք

և հանգիստ յաւիտենական, հրաւիրակ բարեաց և առաջնորդ երկնից արքայութեան։ Ոչ ես այսուհետև մեզ աշխատութեան պատճառն, որպէս թէ՝ ի կուսութեան և՝ ի սրբութեան լոյն մեզ ճիւալ. քանզի են աշխարհական փոխաքշանք, և խնդութիւնք առժամանակեայք. վասն որոյ որ անդ՝ ըմբռնի սրբութիւն և արժանաւոր. քանզի սկզբանն զուարթացուցանեն ըզմարդն, իսկ՝ ի վախճանին հասեալ արկանեն ընդ տանջանօք. յայսմ ժամանակի զանհոգութիւնն արկանեն՝ ի մտս, վի հանապազորդ տանջանաց պարտաւոր արասցեն։ Վասն որոյ պատուական իմ կուսանք, որք քաջապէս կուսութեամբ ընդ իս ընթացայք, հասատանն ճնապչիք՝ ի սէրն Աստուծոյ յորս կայք, և առեալ ամենայն ճշմարտութիւն զինս. քանզի այս է ժամանակ ոչ քալոյ, զայն ժամանակն՝ յորում ընծեռնեալ էիք՝ ի մուրհակութիւն, զի լցեալ եղիջիք անապական խնդութեամբն յաւիտենականէն Աստուծոյ։ Բայց ես յանձնեցից զձեզ սուրբ Հոգւոյն, և հաւատամ եթէ յարքայութեանն իւրում կատարեալս և անարատս ցուցցէ զձեզ. այլ յաւիտենից օրինակ զիս կալջիք առաջի աջոյ ձերոյ, ունելով՝ ի մտի զվարդապետութիւն իմ առաւակելոյս և զնամիսն փարեջիք զամենայն աւուրս։

Ա. Յորիւք և այսպիսի խրատուք հրաւիրեաց զնոսա, համբուրեալ զա ընծեսեան արտասուօք. և յետ համբուրելոյն՝ ասէ ցնոսա. Ո՛ղջ լերուք քոյքք իմ, քանզի Բասիլիա, ես գինիս հեռանամ՝ ի ձէնջ մարմնով։ Իսկ՝ ի նմին ժամու մի ոմն յաղախնեացն Բասիլիայ երթեալ առ Պոմպէոս, որում խօսեալ էր զնա, ասէ ցնա. Գիտացիր, զի Բասիլիա իմ տիկինն որ քեզ խոսեցեալ էր, հրապուրեցաւ յընդհնեայ, և առնելին ուրացեալ է ամուսնանալ ընդ քեզ։ Զայս երբեմն լուաւ Պոմպէոս, բոլորեցաւ բարկութեամբ, և երթեալ առնա կամէր մտանել՝ ի սենեակն յորում էր Բասիլիա Հանդերձ Պրոտէս և Հիւակինթոսիւ պարապեալ աղօթից և օրհնութեանց։ Զայնժամ ընկալեցին զՊրոտէս և զՀիւակինթոս և տախտին զոհել, ապա եթէ ընդդիմանայցեն ինչ՝ սրով մատնեացին։ Իսկ նորա ամենևին ոչ հաւանեցան, և պէտս տանջանս մատուցին նոցա. և բազում տանջանաց հանդերձեալ

զվախճան ելոյ ընկալան պատուհասին. և ոգա՛ի խոստովանութեանն արդարեաւք վախճանեալք:

Ընդունեցին ապա և զՆեղինոս և տանջէին առաջի Անդիանեայ եպարքոսի քաղաքին, և հրամայեաց նմա երթալ զսէր Աստուածոյ: Իսկ երանելին հասեալ՛ի տեղին և մտեալ՛ի տաճարն, եկեալ դէմ յանդիման պատկերին և տարածեալ զձեռս յերկինս, և եկայ յաղօթս բազում ժամս. և իբրև կատարեաց զաղօթսն՝ նոյն ժամայն պատկերն Աստուծոյ անկեալ ի՛շխեցաւ, և այնպէս եղև մանր մանր ինչ զի և փոշի նորա ոչ երևէր: Իսկ նոքա չհամացեալ զօրութիւնն Աստուծոյ, այլ կատղեալք արուեստիւ զամենիսին հանդարտին լինել, հրամայեցին վէմ մի մեծ կապել զնանդ՛ի պարանոցին և ընկենուլ՛ի Տիբերիոս գետ: Իսկ յորժամ տանեալ ընկենուին զնա, նոյն ժամայն լուծան կապանքն և վէմն անկեալ՛ի նաւակն առաջս: Եւ առաքն եդին զնա գայր՛ի վերայ ջուրցն. և քրիստոնէիցն առնեցուն առեալ զաթանչելիսն մեծաւ խնդութեամբ լցան, օրհնէին և ասէին. Այս է Աստուած որ ընդ եդինն, այս է՝ առ՛ի չկորուսանելոյ զնա, որ էր ընդ Պետրոսի՛ի ծովեզն՝ առ՛ի չընկղմելոյ զնա: Եւ մինչդեռ բերէր զնա ջուրն վերամբարձ եհաս յեզրն, և ելեալ կայր՛ի վերայ ցամաքին: Ընդունեալ զնա դարձեալ եդին՛ի տանուտէր և հրամայեցին ջեռուցանել զբաղանիսն արքունի, որոյ անուն էր Տիբերիանոս. և այնպէս բորբոքեցին մինչև փայլատակումնք արձակէր բոլոր Թեսաղոնիկեայ, և հրամայեցին ընկենուլ զնա անդր զի բոցոյն մաշեսցի: Եւ մտեալ՛ի ներքս նոյն ժամայն հաւքն Թաւամեղսա, մինչև զարքունական բաղանիսն այնու հեռև ջեռուցանել ոչ կարէին՛ի հրամանաց ելեալ՛ի նմա տառնամանեացն: Իսկ յորժամ և այսմ հնարիցն յաղթեաց ընդհէն, որ գործակից էր առաքելոյն իւրոյ Եւգինեայ, հրամայեցին գարձեալ՛ի բանտ մտանել. և ընկեցին զնա՛ի տուն խաւարին առանց հացի և ջրոյ, և լուսաւորեցաւ ամենայն տունն և եղև երանելին՛ի բանտին աւուրս քսան. և ծագէր անդ լոյս զամենայն աւուրսն: Իսկ երևեցաւ հրեշտակ Աստուծոյ, և զօրացուցանէր զնա, ասէր. Քաջ Ջաքերեա, ազախին Քրիստոսի Եւգինեա, քանզի Տէր

Ցխաւս Քրիստոս, որում ամենայն մօք ծառայեցեր, առաքեաց զիս առ քեզ ասելով. քաջալերեաց և զօրացիր, քանզի յայսմ աւուր առնում զքեզ յերկիրն, լցեալ զոզջացութեան ընծայիւս։ Ի նմին իսկ աւուր յորում էր ծնանիլն Քրիստոսի՝ առաքեցին սպանօղ մի, և երթեալ սպան զնա ի բանտին։ Յայնժամ լըսեալ քրիստոնէիցն, ժողովեցան առն զմարմինն Եւգինեայ և ամփոփեալ զնա փութապէս եդին ի նշանաւոր տեղւոջ, ուր հետ ի քաղաքին հանդիպ Ձանապարհին որ կոչէր Ցաւինա։ Իսկ մայր նորա Կղոդիա նստէր ի վերայ գերեզմանին և լայր. և յայտնեալ նմա երանելոյն Եւգինեայ, ասէ ցնա. Ինդա ուրախութեամբ մայր իմ, զի տարաւ զիս Տէրն Քրիստոս յուրախութիւն և ի հանդիստ սրբոց իւրոց. և զՀայրն իմ կարդեաց ի դասս առաքելոցն Հայրապետացն. բայց զքեզ ընկալցի խաղաղութեամբ ի կենդանիսն՝ որ գալոցն է։ Եւ դու պատուիրեա որդւոց քոց եղբարցն իմոց, զի պահեսցեն զկնիքն Քրիստոսի, որով արժանի եղիցին ընդունակք և ժառանգ լինել լուսոյ նոցա։ Եւ եղև յորժամ դարձաւ Կղոդիա ի տուն իւր, ուսուցանէր զորդիս իւր, որպէս և պատուիրեաց երանելին Եւգինիա. և յաւուր կիւրակէին ի ժամ հաւաքելոյ զիարհուրդն, մինչդեռ կայր յեկեղեցւոջն և աղօթս մատուցանէր՝ ետ զոգի իւր ի ձեռս Քրիստոսի՝ Տէր ամենայն հոգւոց։ Եւ այսպէս վախճանեալ սուրբ, առին զնա որդիք իւր Ստեփան և Սերգիս, և եդին առ քեռն իւրեանց։ Եւ նոքա իսկ յաւուրս նախանձու Տեառն ամենայն առաքինութեամբ, մինչև զբազումս ի հեթանոսաց զերծուցանելոյ յանարժան զոհից, և դարձուցանէին ի հաւատսն Քրիստոսի, զորս սրբեալ սուրբ մկրտութեամբն, արժանի եղեն և ինքեանք նախանձաւորս լինել վարուց ծնողացն իւրեանց և քեռն երանելոյ, և խառնեցան ի դասս սրբոց։ Ընդ որս և մեք արժանի լցուք վայելել յաղթայութեանն երկնից. օրհնեալ Աստուած Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի նմա ամենայն շուն և պատիւ և զիւաւս, և ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և անդրշխարհեայիցդ, և ամենայն լեզու խոստովանի լցի անձամ, որ է ի վերայ ամենայնի. և նմա վայել է փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոց մարտիրոսացն և վառաստուեայ վկայից Եզեքիելոսի, Հաղեքիելոսի, Դանիելոսի, Ակիռդասայ, Մակարիոսի։

Յաւուրս ժամանակացն այնոցիկ Թագաւորքն Վիոկղետիանոս և Մաքսիմիանոս էին՝ ի մեծ քաղաքին Հռովմայեցւոց, և խորհեցան խորհուրդ չարութեան հանդերձ քրմովքն անուանեալ աստուածոցն և սկսան կղևտոսացն և մեծամեծաց քաղաքին՝ քարոզս առաքել ընդ ամենայն իշխանութիւնս Հռովմայեցւոց պաշտացն, ողջակիզել և զոհս մատուցանել աստուածոցն, և ամենեցուն ձաշակել՝ ի զոհից։ Համոյ Թուեցաւ ամենեցուն խորհուրդս այս, և ուրախ եղեն մեծաւ ցնծութեամբ և ասեն. Եւ մեք ամենեքեան հաւանեալ եմք հրամանաց ինքնակալացդ զոհել բարեպաշտ աստուածոց մերոց յատակամութեամբ, և որք ոչ հնազանդեացին՝ մահու մեռցին։ Եւ՝ ի նմին ժամու էլ հրաման՝ ի Թագաւորացն, ամենայն կղևտոսաց քաղաքին ժողովել՝ ի Կապիտոլիոն Հռովմայեցւոցն, զբեալ նամակ որ ունէր օրինակ զայս.

Թագաւորք միշտ յաղթողք, ինքնակալ սեբաստոսք Վիոկղետիանոս և Մաքսիմիանոս, մեծամեծօք և փոքունք միով միաբանութեամբ, զառաստապարգև բարիս զոր ընտրեցին աստուածքն ծանեաք, մանաւանդ զյաղթութիւնն որ ընձեռեցաւ մեզ, և զակարութիւն հակառակորդացն և զնկուն լինել՝ ի նոցանից զօրութենէ. այլ և զառաս պաղաբերութիւն երկրի և ըզբարեխառնութիւն օդոյս՝ որ ընտրեցաւ մեզ և զա-

մեռանին բարութիւնս։ Վասն որոյ հրամայեմք ձեզ լսել ամենայն գաւառաց և քաղաքաց որ ընդ մերով իշխանութեամբ էք, ոչ վերջանալ՝ի զոհից աստուածոցն, այլ ընծայատուր լինել՝ի բագինս նոցա. եթէ ազատ ոք լիցի և եթէ ծառայ, և եթէ զինուոր կամ ռամիկ, գնուխրական զոհս ողջակիզացն մի հեղգասցին մատուցանել։ Ապա եթէ ոք հակառակ կայցէ հրամանաց մերոց, այնպիսիքն մատնեալ լինիցին՝ի ձեռս գաւառացն և արգելեալք յաղջամղջին տեղիս, գառն և չարաչար տանջանօք. և յետ բազում հարուածոց՝ սրով զլխով մահու ընկալցին։ Իսկ որք հնազանդ լինիցին հրամանաց մերոց, և գաստուածոցն բարեբարուխեն զոհսացին, և յողջակիզեալ զոհից Քրիստոսեայցն, փառաց և պատուոյ արժանի լինիցին։

Իբրև լսան զայսպիսի հրաման ուրացութեան այնոցիկ աշխարհն Հռոմայեցւոց, ահու և դողութեամբ խռովեցան, և զարհուրեցան զոլմանէ մեծաւ. և իբրև մեզ խաւարին և խուճապ տագնապի տարածեալ՝ի վերայ հաւատացելոցն։ Քանզի համբաւ եհաս՝ի լսելիս Թագաւորացն՝ի գաւառսն արեւելից քաղաքացն, զրեալ ամբաստանութեան նամակ, եթէ Կապադովկիա և ամենայն կողմանք Հայոց Մեծաց հակառակ կացին հրամանաց ձերոց. զիարհրդական ծոնա աստուածոցն ոչ կատարելով, և ոչ՝ի նուէրական զոհից նոցա Հաշակեալ։ Իբրև լսան զայս Թագաւորքն՝ վաղվաղակի փոխեցին զիշխանս գաւառացն այնոցիկ, մեծաւ ցասմամբ զայրացեալ նոցա, վաշխուէրս և անպիտանս զնոսա Համարելով։ Եւ առաքեցին փոխանակ նոցա արս երկուս Հելլենացիս ազգաւ և կրօնիւք, անուն միումն Խրսխաս, և երկրորդին Սգրիկոզայոս, վայրենամիտս և գազանաբարս, և խորագէտս և հանճարեղս։

Եւ իբրև եկին Հասին նոքա յերկիրն արեւելից, ՚ի հրամանէ արիւնարբու գազանացն այնոցիկ՝ ամենայն քրիստոնեայք ընկղմեալ լինէին յանաստուած գահ. Հաց նոցա, և արիւնաբուղխ տանջանօք. այլ և այնոցիկ որ զՔրիստոսեայսն մատնէին, ինչ պարգևէին գուշակելացն, Նա և հեթանոսացն տեսեալ զայն, եթէ ոք մատնեն զքրիս-

տանեայն՝ ինչ առնուն, այնուհետև յուզախնդիր լինէին գտանել զոք ի հաւատացեալսն, որպէս զի մատ նեացեն ի ձեռս շաղղակեր դատաւոցն այնոցիկ։

Եւ երբեմն անցին փոքր ինչ աւուրք ի վերայ, լսեան ոմանք ի հեթանոսաց ի Տրապեզունտացւոց քաղաքին զի մատանէին զփախուցեալ քրիստոնեայն դատաւորին՝ ի շահ ընծոյին հայելով. եկին այնուհետև ի քաղաքն Սատաղացւոց, ուր նստէր դուքն Լիւսիաս. և պատմեցին վասն երանելոյն Պաղեբիանոսի և Կանտիտոսի և Ակիւզասայ և Եւգինիոսի, որ էր ի քաղաքէն Տրապեզունտացւոց։ Ա՛յլ և բազումք ի քրիստոնէից վասն արծամարհութեան ախտին նմանեալք Յուդայ, գնացեալք ի քաղաքն Սատաղացւոց՝ հանդիպեցին կամեռատարիսին, որ էր զօրապետ դատելոյ զինուորացն. ծանուցանէին նմա ասելով, թէ՝ Ա՛նդիկ կալան վարդապետքն երկրին Տրապեզունտացւոց և մեր ձառդ գաւառին Խոխկոնոյ, և յամենայն տեղիս թաքուցեալք. որք ուսուցանեն Յաղաւորաց զՀաւատս քրիստոնէից և ասեն. Թէ ոչ են դոքա Յաղաւորք, որք քանայեալ ունին զերկիր, այլ՝ այլ ոմն է Յիսուս Քրիստոս երկնաւորն Աստուած. և նոյն զինք խոչեալ ասեն ի Հրէից, և հեռացուցին յողջակիզաց և ի զոհից աստուածոյն։ Եւ ոչ միտս միայն այլ և զամենայն ապս գիշերուն և առիկս ատհմանացն այնոցիկ խաբեալք՝ ի կրօնս իւրեանց դարձուցին։ Եւ այլ ոմն երևեցաւ ի քաղաքին մերում, որ զրկէ Յիսուս խակ է աղանդինոցա, որ ոչ զադարէ ուսուցանել և քայլերել զամենայն քաղաքացիսն և գիւղականան, խրատել և ասելով. Մի երկիր պագանել աստուածոյն, այլ Յիսուսի Քրիստոսի, զոր երկնաւոր և յաւիտենական Յաղաւոր գնա կոչեն։ Եւ են Յաղաւորեալ ոտքա յանտառախիտ մայրիս կոպմանցն այնոցիկ։

Ա՛ռ գօրապետն գնաա. Եվ կարացեալք ցուցանել գնաա ինձ, բազում պարգեաց և պատուոյ արժանի արարից զձեզ ըստ հրամանի իշխանին մերում։ Յայնժամ երթեալ գօրապետն և ի ծածուկ յայտնեալ իշխանին Լիւսիայ՝ զասացեալսն յարանցն այնոցիկ։ Եւ հրամայեաց գուքն առ ինքն կոչել զքրիստոնեայսն զայնոսիկ՝ որք մատնեցին զերանելի վկայսն Քրիստոսի։

Եւ իբրև եկին նոքա, յարուցեալ զբանին և զառաջեալ գնաց մեկուսի յամբոխէն, և հարցանէր գնոսա Թէ յորմէ առեալ իցեն սուրբքն, և կամ յորմից քաղաքաց իցեն նոքա։ Այեն գնա. Ի սահմանս քաղաքին Տրապեզոնացւոց ընթանեմք գնոսա. արդ հրամայեա որոյզաց հանդերձ շամբք գալ ընդ մեզ. և՛ ի զօրահանդէսն եղիցեն զինի մեր, և շրջանակաւ պատեսցեն զանտառն յորում բնակեալ են, և ընթանեսցուք գնոսա։ Եւ հաճոյ թուեցաւ բանքս այս իշխանին Վրաստայ, և եառնոցա մին մին երիս զահեկանս, և առաքեաց գնոսա, պատուէր առեալ, զի մի ոք գիտասցէ և փախիցեն յերկիրն բարբարոսաց։

Կոչեալ իշխանին զՎռամեներարիոսն որ էր զօրագլուխ, և հրամայեաց զօրականացն առաջի առնել՝ պատրաստել զօրսդրան և զգինուորսն և զմատնիչսն ընդ նոսա, և հրամայեաց փութով հասանել յերկիրն Տրապեզոնացւոց, հեռաւոր լինել և շրջել զի Թերևս գտցեն գնոսա, և զգուշանալ զի մի խռովութիւն լինիցի յաշխարհին։ Եւ յորժամ մերձ եղեն՝ ի տեղիս զոր ցուցին նոցա մատնիչքն՝ պատեցին շուրջանակի զանտառան և զաղաղակ բարձին. եւ հնչէր եղկելին, արձագանգք վիմացն և լերանցն՝ զինի ձայնիցն ահաւոր գոչմամբ բարբառ արձակէին։ Եւ զազանքն հատանելով շրջէին, իբրև որս կարծէին և խնդրէին զմարդիկն. և որոյզքն վաղվաղակի գտանելով գնային՝ ուրախ լինէին յոյժ։

Եւ տեսանէին զերանելին Կամսարոս, և կալան գնա, և հարցանէին գնա, Թէ՝ Ո՞վ կամ ուստի իցես դու, և զինչ գործ է քո՝ ի մէջ անտառիս այսմիկ։ Պատասխանի ետ սուրբն և ասէ ցնոսա. Ես քրիստոնեայ եմ։ Այեն մատնիչքն. Դու ես վարդապետն քրիստոնէից։ Դարձեալ ասէ ցնոսա երանելին. Ես քրիստոնեայ եմ։ Այեն ցնա. Որոյ քաղաքի քաղաքացի ես դու և կամ զինչ անուն քո։ Պատասխանի ետ նոցա և ասէ. Ի Մակեդոնիացւոց աշխարհէն եմ ես, ի Թեսաղոնիկեցոց քաղաքէն։ Եւ ասեն մատնիչքն. Կարեցէք զդա երկաթի կապանօք և տարեք առ իշխանն, և անդ հարցցի դա, և գիտասցեն Թէ ով կամ ուստի էիցէ. և ովքեան մի ամբոխեսցէ ընդ մեզ մեռանել, զի մի գայցեն քրիստո-

նեայք և յաւիտեանական զգուա. զի որպէս տեսա-
նեմք՝ դա է զոր խնդրեաքն։ Եւ կապեցին զնա և ե-
տուն ի մի ումն ի զօրականացն, և յառաջ եկին գնա-
լով ընդ Ջանապարհն կոչեցեալ Տիսկանա։

Եւ յերկայն ելեալ ի մէջ լծանձրախիտ անտա-
ռայն խուզէին գտանել զմիւս ընկեր սրբոյն. և տեսին
այր մի վարելով լուծս եզանց, և ըմբռնեալ Հարցա-
նէին զնա, Թէ Ո՞ւր իցէն փախուցեալ քրիստոնեայքն,
կամ Թէ դու իսկ իցես։ Պատասխանի ետու և ասէ. Ես
այր մեղաւոր եմ, և զորմէ Հարցանէք՝ ոչ գիտեմ։
Եւ ասեն մտանիջք սրբոյն ցզօրականան. Կալէք զդա
և տարէք առ իշխանն, և նա տանջանօք Հարցանէ զդա,
և խոստովան լինի նմա։ Եւ ասեն տղաւոլատաքն ցնա.
Ջտեղէն միայն ցոյց և արձակեմք զքեզ։ Այն ցնոսա.
Եւ զիա՞րդ մարդ իցէ ինձ զայր արդարև անտրտում տա-
րապարտուց մտանել ի կորուստ և յոտոգայթ մահու։
Իսկ նոքա փութագործէին զայրն առնել, զի մի զար-
հուրեալ փախիցէ, և Համբաւեցի բազմաց լսելիս։
Դարձեալ առնէին և ասէին. Ցոյց մեզ զտեղին ի
հեռատեսանէ միայն։ Եւ Համանեցաւ նոցա այրն. և
տարան զնա ի տեղին զոր եցոյց նոցա։ Յայնժամ Թա-
կարդատառեալ շուրջ զտեղեաւն Հանդերձ զօրակա-
նօքն, իբրև զոյս ինչ երկոց Հնչ բարձեալ ձայնիւ և
աղաղակաւ՝ ըմբռնեցին զսուրբն։ Իսկ նա կամէր փախ-
չել ի նոցանէ. կալան զնա և Հարկին. Ո՞վ ես դու և
կամ ուստի իցես։ Պատասխանի ետու և ասէ ցնոսա. Ես
քրիստոնեայ եմ. բաւական էր ինձ յաւուրքս առեալ
անուն՝ որ վայելուչ էր ասել ձեզ։ Յայնժամ ծա-
նեան մտանիջքն և տղաւոլատաքն՝ Թէ այս է զոր խնդ-
րէաքն. և կապեցին զսուրբն և եւտուն ի ձեռս զի-
նուորաց, կամեցան արձակել զայրն՝ որ եցոյց նոցա։
Ասէ այրն ցնոսա. Թէ այսպէս Հաճոյ Թուէ ձեզ Ա-
ստուծոյ մերոյ՝ մատնել առաջնորդաց մերոց ի ձեռս
ձեր, և ոչ ես Հեռանամ ի նոցանէ, զի Ջհամարիտ
քրիստոնեայ եմ։ Եւ ասէ Վաղերիանոս սուրբ վե-
կային ցՀաւատացեալսն. Ելէ ընդ մեզ պղծեակ, և
մի մեկնիր ի մէնջ, քանզի այսպիսի ուղեկից ոչ ե-
րբէք գտցես, և ոչ Հրաւիրող իբրև զՋեզ մեր Ա-
ստուած Քրիստոս։ Լուան զայս զօրականքն և Թող քրիս-

ոմնեայ է և կապեցին զայրն և գնացին զՅանապարհն իւրեանց։

Եւ յետ երից աւուրց ածին զսուրբն ՚ի քաղաքն Տրապեզոնտիա, և հարցին զօրականքն զքաղաքացիսն վասն կապելոցն՝ Թէ ուր արկցուք ՚ի բանդ։ Եւ սահմանեցին ՚ի հասարակաց բանդին պահել զնոսա մինչև ՚ի դալ զօրեղին Լուսիայ։ Եւ ասէ ՚ի քաղաքին շըրջէին զինուորքն, զի Թերևս գայցեն զմիւս ևս ընկեր սրբոյն զերծուղն։ Եւ էր սուրբն յանքոյթ տեղւոջ ՚ի Թաքստեան. և ծանուցին զայս իշխանին, եԹէ զերկուս ՚ի վարդապետաց նոցա կալաք, իսկ զերծուղն ոչ գտաք։ Եւ մատնիչքն ոչ գտին զսուրբն զնեգինեա, և գնացին յիւրաքանչիւր տեղիս և ոչ կամեցան ցուցանել զօրականացն։ Իբրև լուաւ զայս իշխանն Լուսիա, ՚ի վաղիւն ժողովեաց զզօրսն և զգայս իւրոց զօրականացն և յառաջեաց զՅանապարհն։ Եւ յետ հինգ աւուր եկն ՚ի քաղաքն Տրապեզոնտացւոց, և ծանուցեալ ՚ի զօրականացն զգտանել սրբոյն։

Իսկ ամենագոյ սուրբքն ՚ի բանդի անդ զցայգ և զցերեկ յաղօթս կային առ Տէր մեր Յիսուս Քրիստոս, և ասէին. Մի մատներ զազանաց զանձինս յուսացեալս ՚ի քեզ, և մի մոռանար զաղքատուԹիւնս, Տէր Աստուած մեր. այլ փրկեա զմեզ ՚ի ձեռաց աւեղեաց մերոց, և ամրացո զմեզ ամենայաղԹ աջով քո և կատարեա զընԹացս վկայուԹեանց մերոց ըստ անուան քոյ։ Եւ իբրև առաւօտ եղև՝ եկն դուքն Լուսիա և հարցանէր զզօրսն, Թէ՝ Յորմէ՞ւ տեղւոջ է ժողովարանն, զի անդադար նստեալ հարցիս զդատաստարտեալսն։ Պատասխանի ետուն քաղաքացիքն և ասեն. Դուռնն որ կոչի Վատեսին՝ մերձ է ՚ի ծովն, այն է տեղի դատաստանի. և ժողովեցան բազմուԹիւն քաղաքին տեսանել զՀանդէս վկայիցն Քրիստոսի։

Յառաջեաց իշխանն Լուսիա և նստաւ յատեան. և հրամայեաց կոմեներարիոսին բերել զամենեսեան որ ՚ի բանդին էին և հարցանել։ Եւ գնաց զօրավարին ՚ի բանդն և առ զսուրբն կապանօք երեք զառաջեաւ։ Իսկ սուրբ վկայքն ազօԹէին միաբան առ Աստուած և ասէին. Տէր Յիսուս Քրիստոս ամենակալ Աստուած

և գԹաած, զու ասացեր բերանով սուրբ մարգարէին ԴաւԹի, Թէ՝ Բայց զբերան քո և լեզու զպա. և՛ի կեն. սաքեր աւետարանին դարձեալ ասացեր, Թէ՝ Մի յա. ռաջապոյն հոգայցէք Թէ զինչ խօսիցիք, զի Հոգին Հօր ձերոյ խօսեսցի՛ ի ձեզ զինչ պարտ լիցի խօսել։ Եւ ապէ Տէր մեր և Աստուած, խոստացեալ ժամին ժամանեցաց և եհաս. առաքեա զՀրեշտակ քո և տուր մեզ բան՛ ի բանալ բերանոյ մերոյ, յորժամ մտցուք առաջի իշխանին յանդիմանել զանօրէնութիւն նորա, որ ամպարշտեաղն էր՛ ի քեզ. այլ՛ ի հարուածոց չարչարանաց նորա մեք ոչ երկիցուք, զի ունիմք զքեզ Հաստատ առաջի աչաց մերոյ։ Եւ յորս կատարեցին զաղօԹս սուրբքն, կալեալ զնոսա անօրէնն զահՃացաւ, պատառեցին զհանդերձս նոցա և ածին առաջի իշխանին։

Եւ յորս եառս գնացս Խոսիա, եհարց գնոսա և ասէ. Ասացէք ինձ զանուն ձեր եԹէ զինչ կոչիք. և ապա զպաշտաւնատունս ձեր և զողջակէզս զոհիցն և զերկրպագութիւնս որում երկրպագէք։ Պատասխանի եառնուն սուրբքն և ասեն. ՈՎ Ձշմարիտ և զարդար անուանս մեր կամիս հարցանել՝ քրիստոնեայք եմք. այլ զտախտ և զՁակատագիրս մեր ոչ գիտեմք. խոկ՛ ի հարց և՛ ի ծնողաց անուանեցաք Ազէքսիոս և Կամսիոս։ Ի՞նչ խոսիս առ. ասէ. Եւ միւս ևս ընդէրս ձեր որ առաց զինքն քրիստոնեայ՝ զինչ կոչի։ Պատասխանի ետ ինքն և ասէ. Ասկեզաս կոչիմ Պատքոս ասէ. Ո՞ւր է և երկրորդ վարդապետն ձեր, որ մանուանդ խնդրելին է։ Սուրբքն ասեն. Լուաք զնմանէ զի ասեն եԹէ՛ ի քաղաքն սատ է. եԹէ սիրիցէ զնա Աստուած՝ յայտնի առնէ և զնա առենիդ քո. քանզի և կայ խոկ՛ ի գրի. Տէր խըստասէ, տանջէ զամենայն որդի զոր ընդունի։ Ի՞նչ խոսիս առ. Ո՞ւր էք որ ուսուցանէք ոչ զոհել աստուածոցն և զհրամանս ինքնակալացն արհամարհել։ Սուրբքն ասեն. Ասկ, մեք ուսուցանեմք որ զայնմ աս. ուծ՝ զՀանապարհս Ձշմարտութեանն, որ տանի՛ ի կեանսն յաւիտենական, և անարիւն պաՀպանէ զմեզ մուցանել Տանուտէր և միամտական Երկրպագութեանն. այլ անուն Աստուծոյ կամ Թագաւորի մեք ոչ գիտեմք, բայց միայն զՅիսուս Քրիստոս զԹագաւորն յաւիտ-

նից, որ ունի իշխանութիւն ծառայ և կենաց։ Պետքն ասէ. Ես յանմիջ այս նա իշխանութիւն։ Պետրքն ասեն. Ի հոլիկ աննեսալէ, որ ապար զերկիւղս և զերկիւղ, և առեղծ զամենայն բանիւ իւրով։ Իշխանն ասէ. Զայն որ խաչեցին Հրեայքն, նա դատ զկենդանիս և զմեռեալս։ Պետրքն ասեն. Այո, նա դատ զանիւրեքս զօրութեամբ իւրով և առնէ յարութիւն մեռելոց, և անպարշտաց զանշէջ հուրն ընձեռէ և զորդին անվախճան։ Իշխանն ասէ. Ես յորժամ մեռանիմ՝ զարձեալ յառնեմք։ Պետրքն ասեն. Ձխոյդ դատ Աստուած զանիւրեքս արդարութեամբ, կամ արդարոցն փառս շնորհէ և մեղաւորացն զանվախճան տանջանս. բայց վասն ձեր անպարշտացդ գրեալ է, թէ՝ Ոչ յարիցեն անպարշտք՝ ի դատաստան և ոչ մեղաւորք՝ ի խորհուրդս արդարոց։ Ա՛լ այս յայտնի ձեզ լիցի, զի հոգիք այնոցիկ որ՝ ի ձէնջ առնջեցան, և զաչեսք անիրաւութեամբ և անպարշտութեամբ ձերովք խնդրեցան ի ձէնջ Աստուած անաչառութեամբ, և արկից զձեզ՝ ի խաւարն արտաքին, որ պատրաստեալ է հօրն ձերոյ սատանայի և հրեշտակաց նորա և ամենայն անպարշտաց և ոտնատակաց գնա։ Իսկ դուքն մնացէք՝ ի վերայ արդեանն նորին ամենայնի և զգեցարուք զգեստ զուարճութեան, զոր ետ ձեզ հայրն ձեր ի սկզբանէ աշխարհի՝ ի ձեռն Հրեշտակապետացն Միքայէլի և Գաբրիէլի՝ զոր ետ նոցա ի ձեռն Մովսիսի, զոր ետ նոցա ի ձեռն Յեսուայ, զոր ետ նոցա ի ձեռն Դաւթի, զոր ետ նոցա ի ձեռն Եսայեայ, զոր ետ նոցա ի ձեռն Երեմիայ, զոր ետ նոցա ի ձեռն Եզեկիելի, զոր ետ նոցա ի ձեռն Դանիէլի, զոր ետ նոցա ի ձեռն Ամբակումայ, զոր ետ նոցա ի ձեռն Յովնանայ, զոր ետ նոցա ի ձեռն Միքիայ, զոր ետ նոցա ի ձեռն Նաւմայ, զոր ետ նոցա ի ձեռն Սոփոնիայ, զոր ետ նոցա ի ձեռն Անգէոսի, զոր ետ նոցա ի ձեռն Զաքարիայ, զոր ետ նոցա ի ձեռն Մաղաքիայ, զոր ետ նոցա ի ձեռն Յովհաննու Մկրտչին, զոր ետ նոցա ի ձեռն Պետրոսի, զոր ետ նոցա ի ձեռն Պօղոսի, զոր ետ նոցա ի ձեռն Յակոբոսի, զոր ետ նոցա ի ձեռն Յովհաննու, զոր ետ նոցա ի ձեռն Թադէոսի, զոր ետ նոցա ի ձեռն Բարթողիմէոսի, զոր ետ նոցա ի ձեռն Թովմասի, զոր ետ նոցա ի ձեռն Մատթէոսի, զոր ետ նոցա ի ձեռն Յակոբոսի, զոր ետ նոցա ի ձեռն Սիմոնի, զոր ետ նոցա ի ձեռն Յուդայի, զոր ետ նոցա ի ձեռն Մատաթիայի, զոր ետ նոցա ի ձեռն Բարնաբայի, զոր ետ նոցա ի ձեռն Ղուկասի, զոր ետ նոցա ի ձեռն Մարկոսի, զոր ետ նոցա ի ձեռն Պետրոսի, զոր ետ նոցա ի ձեռն Պօղոսի, զոր ետ նոցա ի ձեռն Տիմոթէոսի, զոր ետ նոցա ի ձեռն Տիտոսի, զոր ետ նոցա ի ձեռն Փիլիմոնի, զոր ետ նոցա ի ձեռն Յակոբոսի, զոր ետ նոցա ի ձեռն Յովհաննու, զոր ետ նոցա ի ձեռն Յուդայի, զոր ետ նոցա ի ձեռն Յովհաննու, զոր ետ նոցա ի ձեռն Յովհաննու, զոր ետ նոցա ի ձեռն Յովհաննու

Տէր Աստուած մեր, որ մեծաւ զօրութեամբ քոյ լսաւեղծեր զերկինս և զերկիր և որ՝ի նոսա ապարածք են, որ յամենայնի կարողդ ես, առաքեա զհրեշտակ քո և շնջա զհուր քո զայս՝ որ նեղէս զմեզ. և ցրուեա զայդ հնոյս, որպէս փրկեցեր՝ի բաբելանական հրոյն զերիս մանկունսն և այրեցեր զՔաղդէացիսն. նայեա՝ի մեզ և անկէզ պահեա զմեզ, որպէս զի փառաւորեսցի անուն քո սուրբ յաւիտեանս: Եւ իբրև զայս աղօթեցին սուրբքն՝ վաղվաղակի անկան սպասաւորքն անօրէնն Իսահանին Խուսիոյ, և եղեն իբրև զմեռեալս, և ոչ կարէին յառնել. և տեսեալ Իշխանին՝ սրտմտեցաւ յոյժ, և ամենայն առեան ժողովելոցն յամօթ եղեն. և հրամայեաց ինջուցանել՝ի փայտէն և տանել՝ի բանդն. և յերկոսին իբրեանց աղօթէին սուրբքն և ասէին. Որ նախ՝ի բարձունս երկնից ընդ աջմէ Հօր, Աստուած Հնամարտութեան և Տէր պատերազմի, օգնեա մեզ. զի՝ի մերձենալ՝ի մեզ նեղութեան՝ յաջդ զեցի մեզ Հանդարտարհ վիայութեանդ քոյ: Եւ այսպէս հանին զդիշերն՝ի գլուխ յաղօթիցն Աստուծոյ:

Իսկ երանելի վիայն Եւգինիոս էր՝ի տեղւոջ միում արտաքոյ քաղաքին՝ի Թաքսաեան, ՝ի քարանձաւին որ կոչէր Փշաբեր. երևեցաւ նմա Տէր՝ի տեսլեան զիւրն երկի իբրև՝ի տունջեան, և ասէ ցնա. Եւգինիէ: Եւ նա ասէ. Ահաւասիկ եմ Տէր: Եւ ասէ ցնա Տէր. Տեսեր զյառաջեալսն քան զքեզ յարքայութիւնն երկնից, և ոչ լուար աւետարանական ձայնին՝ որ ասէ. Որ խոստովանեցայ զիս առաջի մարդկան՝ խոստովանեցայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է: Դարձեալ ասէ ցնա Տէր. Յայտնեա զանձն քո խնդրողացն զքեզ, և մի ընդդիմանայց լինիր հրամանիս, որպէս Յովնան եղև. քարոզեա զբանն կենաց և ուս, և մի երկիցես և մի պատկառեր, զի ընդ քեզ եմ: Եւ զայս առեալ Տեառն վերանայր յերկինս հանդերձ հրեշտակօքն: Եւ սուրբն Եւգինիոս ետես զայս ամենայն իբրև՝ի սքանչելեան. և յարուցեալ եկաց յաղօթս և գոհանայր զՏեառնէ, և փառաւոր առնէր զԱստուած՝ի սուկ և՝ի գիշերի:

Եւ զիսուսոյն անօրէն Իշխանին խնդրելին զնա յանտառին և ոչ գտանէին: Եւ եղև հնոյ ուսմունս ան-

ցանել ընդ այն տեղիան՝ որ կոչի Վարանիայ, մերձ
'ի յայրն որ Փշաբերն ասեն, առ 'ի քաղել խոխ։ Եւ
լուաւ նա զձայն սաղմոսերգութեան, զի աղօթէր
սուրբն Եւգինիոս. և ասէ կինն. Զայն ինձ բարեաւոյ
լուայ օտարոտիս յայրին Վարանիա և հնչուձն մար-
դոյ. և Թէ զինչ ինչ ոչ գիտեմ։ Իբրև լուան քաղա-
քացիքն ասեն ցնա. Դեւ ուրեմն հարաւ ի քեզ և մո-
լեգնեալ ես 'ի նոցանէ. զիարդ առեալեիր ձայն լուայ
և ոչ զոք տեսի։ Եւ կինն պնդէր և ասէր Ճշմարիտ լի-
նել զասացեալն։ Ոակ իբրև լուան ոք 'ի փոքացամիջն
անդ ժողովեալ էին մարդիկն և սպասաւորքն գաւա-
ւորին, գնացին միաբան յայրն գՀետ կնոջն, Վկան-
տիս կոչեցեալ. առին արս և սպասաւորեալս ընդ կո-
քեանս։ Ելին ընդ նոսա ոք և կանայք 'ի քաղաքէն,
և եցոյց նոցա կինն զայրն։ Եւ ձայն լսել լինէր յա-
կանջս բազմութեան 'ի սաղմոսէն երանելոյն Եւգե-
նիոսի. և զարհուրեալ զանգիտեցին մնանել 'ինեքօք,
զի կարծէին այս չար լինել անդրկէն։ Ոակ ոք կին զի-
նեալք՝ Համարձակեցան մնանել յայր անդր։ Եւ սե-
սեալ զսուրբն զի տարածեալ էր զձեռս իւր ընդ եր-
կինս և կայր յաղօթս մեծաձայն բարբառով և գո-
հանայր և փառաւորէր զՔրիստոս, և պատեցին ըզ-
սուրբն. իսկ նա ոչ լռեաց յաղօթիցն. և ասաց այս-
պէս. Ընդ եղէն զինև շունք բազումք և ժողովք չա-
րաց պաշարեցին զիս։ Հարցանէին զինա և ասէին. Ընդ
ի՞ր ես աստ միայն բնակեալ, կամ զինչ խնդրես դու
այսր, մինչ դու իցես զոր խնդրէ երկիրն մեր, որ
կոչես վարդապետ և ուսուցիչ քրիստոնէից։ Եւ պա-
տասխանի և ասէ. Ես քրիստոնեայ եմ։ Ոակ այլք 'ի
զինուորացն 'ի գաւառէ Վրեշիոյ բռնեցին հարցանէին
գարձեալ և ասէին. Յայսմ քաղաքի իցես դու Թէ
յայլմէ։ Ոակ երանելին ոչ ինչ տայր պատասխանի,
բայց միայն ասէր, եթէ քրիստոնեայ եմ։

Յայնժամ զինուորացն ըմբռնեալ զինա քարշէին
մինչև 'ի քաղաքն, կամեցեալ կացուցանել զինա առա-
ջի դքսին։ Ոակ երանելի վկայն Քրիստոսի 'ի քարշան-
սին աղաղակէր և ասէր. Ինձանարհս վկայութեանց
քոց զուարճացայց որպէս յաումեան 'ի մեծութեան։
Ես գարձեալ. Ջի որպէս քաղցր են 'ի բերան իմ բանք

քո, և որ զկնի. և՝ Ոչ երկեայցի՛ ի չարէ, զի դու Տէր ընդ իս ես: Լուան մանուկքն եւթէ ըմբռնեցաւ սուրբն եւ պիտի, և կամեցան ծանուցանել իշխանին: Եւ զինուորացն բերեալ առաջի դքսին զեղանեալին, վըկայեալ թէ զա է Ձիմարիտ վարդապետան քրիստոնէից, զոր գտաք թաքուցեալ՛ի քարանձաւին: Եւ իբրև եառեալ իշխանն զնա և զբազմութիւնն որ շուրջ կային զնովաւ, և զի էր օրն ատրաժանեալ, հրամայեաց մանուղացն պարզեւս տալ, և զաՀբեղէնն արձակեաց, զի՛ ի վաղիւն Հրապարակաւ գասեցցէ զսուրբն: Եւ տարեալ զերանելին արկին՛ի բանդ և զգիշերն ամենայն վարանէր՛ի սուրբ իւրում, թէ որպէս օրինակաւ գասեցցէ զսուրբ վկայն: Իսկ նա զգիշերն ամենայն Հանէր՛ի գլուխ յաղթութեան Աստուծոյ. առանձինն մեկուսի լեալ յայլոց քրիստոնէից, յաղթեէն այսպէս ասէր. Տէր Աստուած Հայր ամենակալ, Աստուած Հարցն մերոց Ս. Թահանու, Սահակայ և Յակովբայ, որ առաքեցեր զՄխիթն որդին քո զՏէր մեր Յիսուս Քրիստոս յաշխարհս, որպ ծանեալք զաստուածութիւնդ քո, որ եկն և մարմնացաւ յանարատ կուսէն Մարիամայ. որ՛ի յերկրի երևեցաւ և ընդ մարդկան չրջեցաւ, որ վկայեաց առաջի Պոնտացւոյ Պղատոսի զբարիսք գաւանութիւնն, և խաչի և մահու համբերեաց, և յարեաւ երեքօրեայ, և փրկեաց զմեզ՛ի ծառայութենէ գրաւորական օրինացն. եղև գլուխ վըկայից և առաջին պսակ նահատակաց, և համբերութեան առաջի, և սրբոց հրեշտակացն հրամանատար. և զսուրբ գասաքեալդ լցոյց գխոստութեամբ և պատուիրեաց Յերուսաղեմ մի մեկնել, այլ սպասել աւետեացն Հոր ի բարձանց: Եւ այժմ Տէր մեր Յիսուս Քրիստոս, տուր ինձ զօրութիւն՛ի սրբութենէդ քումմէ և շնորհեա ինձ քան ի բանալ բերանոյ իմոյ՛ի յանդիմանութիւն անպարշտացս. և զքաջութեամբ Համբերութիւն տանջանացս՝ զոր ածեն՛ի վերայ մեր:

Յետ այսորիկ եկին զսուրբն Խեսիա և տուին յաւետեն՛ի բարձրութենէդ տեղեկն, և նախ հրամայեաց Կամեսարիոսին՝ որ էր զօրագլուխ գինուորացն, հերձել աս սուրբն, զի Յերկա հատանելովքն զոհել սատանայիցն:

Նակ յորժամ ծանեաւ սուրբն Եւգինիոս եթէ խընդրէ զդուքան կոչել զինա, փութացաւ կալ առաջի նորա. և խնացեալ միւս իշխանին՝ որ էր կոմեներարիոսն, եթէ ոչինչ օգտեն ողոքանաց բանքն, ասէ ցգլխատուրսն. Առէք տարէք և փութով կացուցէք առաջի բդեշխին, թերևս առասցէ նմա, թէ ով կամ ուստի լեալ, կամ զինչ գործէր դա յայրի անդ։ Նակ սուրբն Եւգինիոս կնքեալ զինքն նշանաւ սուրբ խաչին՝ ասէ. Ես քրիստոնեայ եմ և յորդորեալ եմ'ի վարդապետութենէն վրկչին մերոյ Աստուծոյ, և ոչ եմ արժանի եթէ կոչեցայց ուսուցիչ, զի ուսուցիչ մեր Քրիստոս է. դարձեալ որ գան զկնի իմ'ի քրիստոնէից, ուսուցանեմ զՀանապարհն Ճշմարտութեան, հաւատալ և երկիր պագանել միոյ աստուածութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, արարչին երևելեաց և աներևութից, և անարգել և արհամարհել զձեռագործս մարդկան՝ որ ոչինչ են, որպէս մարգարէն Դաւիթ ասէ. Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են, և նման նոցա եղիցին որք արարին զնոսա. և որպէս առաքեալն և աստուածընկալն Պաւղոս ասէ, թէ՝ Պաշտեցին զարարածս և ոչ զարարիչն։

Ասէ ցնա դուքան. Եւ դուք քրիստոնեայքդ երկից աստուածոց երկիր պագանէք և ոչ արարչին։ Պատասխանի ետ եւգինէն և ասէ ցնա. Մեք, ով անթիւ պատ, ոչ երկիր պագանեմք երից բարժանելոց, այլ երրորդութեան միանականի և անբարժանելոյ, միոյ բնութեան Հօր ամենակալոյ և Որդւոյ Միածնի և Հոգւոյն սրբոյ Աչմարտի։ Եւ դուք մեռեալսի պատկերաց և բանաւորութիւն երկրպագէք։ Ձի Քրիստոս որ էն Աչմարիտ Աստուած՝ ան իշխանութիւն'ի Հօրէ դատել զկենդանիս և զմեռեալս. այլ ամենարինչք ոչ յանկնեն'ի դատաստանի, այլ առաքին'ի խաւարն արտաքին, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա։

Դարձեալ սկսաւ իշխանն Լիսիա ողոքական բանիւք խօսել ընդ նմա, և կարծէր այնու խաբել և հեռացուցանել'ի բարձրութենէ հաւատոցն։ Եւ ասէ ցնա. Ի քաղաքէս յայսմանէ՛ լեր, թէ յայլմէ գաւառէ։ Ասէ ցնա սուրբն. Ի քաղաքէս յայսմանէ եմ

Իշխանն ասէ. Ջինչ անուն է քո: Սէտ ցնա տուրքն. եւ յառաջ ասացի քեզ և դարձեալ ասեմ, թէ քրիստոնեայ եմ ես, և ոչ երկիւղ պատանեմ դիւացս սրըղծոց. զինչ առնելոց ես արա վայելապակի: Սէտ Իշխանն. եւ առաւնց անուանն ես: Տուրքն ասէ. Ադանոց անուանն ոչ եմ, այլ յօրինացն Քրիստոսի կոչեցայ ես եւգինոս: Իշխանն ասէ. եւ այդպիսի հանճարեղն և փառաւորելոյ աւն պարտ է յառաջել և զոհել աստուածոցն՝ նախ քան զիմուձ առնուլ ամենայնի: — Տուրքն ասէ. Աստուածս օտարս ես ոչ ճանաչեմ, և ոչ ծնողքն իմ ուսուցին ինձ զայդպիսի հնարատարն, այլ հաւատալ՝ի մի աստուածութիւնն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: — Իշխանն ասէ. Ի բաց թող զյամառութիւնդ և զոհեա աստուածոցն: Իսկ եւգինէսն ժպտեալ ընդ միտս իւր՝ ասէ. Եւ ուր իցեն աստուածքն ձեր զի տեսից:

Իսկ իշխանն Վտեսեա կարծէր զոհել նոցա, փութաթոլ հրամայեաց սպասաւորացն և քաղաքացեացն տանել զտուրքն ուր էին աստուածք նոցա՝ի մէջ քաղաքին, ի Նեմեսիոն կոչեցեալ տեղւոջ: Եւ ասէ իշխանն եւգինէսին Եւգինէ, Եւգինէ, եթէ լսես ինձ և հաւանիս և զոհես աստուածոցն, հրամանաւ ինքնակալացն՝ի պատիւ գառաւորական զքեզ յառաջեցուցից վանն հնազանդութեան գործոց քոց. և այլ ևս բազում օրինակս առաջի դնելով խօսէր ընդ նմա: Եւ յարուցեալ իշխանն վաղվաղակի, եւ՝ի Նեմեսիոնն, ուր կանգնեալ էին աստուածք նոցա: Գնացին ընդ նմա և ամենայն բազմութիւնք քաղաքին առեալ ընդ իւրեանս և զտուրբ վիայն Քրիստոսի, ոչ ակամայ բռնութեամբ, այլ իւրովք կամօք երթայր զկնի նոցա: Եւ իբրև մերձ եղև եւգինէսն՝ի պատկեր աստուածոցն, յաղօթս եկաց այսպէս և ասաց. Քրիստոս փրկիչ աշխարհի, որ տարածեցեր զանարատ բազուկս քո՝ի վերայ կենսաբեր խաչին, և հեղեր զանապական արիւնդ՝ի փրկութիւն մեզ, և արարեր խաղաղութիւն յերկինս և յերկրի. որ յառնուս մարգարէիցն Դանիէլի զՔեզ կոչեցեալ էր՝ի Բաբելոնի, և հերձեր զվիշապն, և զպաշտօնեայս չարին յամօթ արարեր. որ եօթնաւոր ժանիւռակս ազբայիւն Նաբուզոդոնոսորայ

հրամայեցեր ընդ գազանս վայրենի և ընդ անասունս խոտաձարակ լինել և ծանուցեր զզօրութիւն առաւծուհեանդ քո արարիչ և ստեղծիչ գոլով։ Եւ արդ Տէր իմ և Աստուած, ցրուեա և կորո զսոսա, զի ծանիցեն զքեզ միայն Աստուած Հնմարիտ։

Եւ ՚ի կատարել աղօթիցն ՚ի նմին ժամու երեքեան պատկերքն առաւուածոյն կործանեցան և անկան և էղեն մանր իբրև փոշի. և Հոգին Տեառն որ բուռնեալ ՚էր ՚ի նոսա, զոչեաց մեծաձայն և ել ՚ի նոցանէ, և ասէ. Եւզինիէ, ընդէր Հալածես զիս ՚ի սէր մի բնակութենէս, զի ոչ եմք մեք աստուածք, այլ գործ Թ ձեռանցդ. և տեսանելով զգեղեցկութիւն պատկերացս այսոցիկ՝ ցանկացեալ բնակիցք ՚ի տուա։ Եւ արդ աղաչեմք զքեզ տուրըդ Աստուծոյ, մի Հեռացուցաներ զիս արտաքոյ ՚ի տեղւոջէ սուրբ։ Ետ տուրբ վկայն Քրիստոսի Հրամայեաց նոցա Հաւատալ և գնալ յանբնակ լեառնն Կողկաւու։ Եւ ամենայն խառնիխաշանձ ժողովքն և քաղաքացիքն տեսին զկործանումն պատկերաց աստուածոցն։ Եւ սուրբն խօսեր ընդ մեծութեան Հոգւոյն. և Հաւատացին բազումք ՚ի ժողովրդոցն ՚ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, և գոչէին մեծաձայն և ասէին. Մեծ է Աստուածն քրիստոնէից, և մի է Աստուած սրբոյն Եւզինեայ. վասն զի զԱխա և զԱպողէն և զԱրեմիա տեսաք կործանեալ և մանրեալ իբրև զփոշի։ Եւ ասէ երանելին ցամենեսեան. Ծանեայք արդեօք զպատկերացն ձերոց զզօրութիւն՝ որոց երկիւղ պատանէիք, եթէ կարացին իւրեանց օգնել, և զինքըզ ձեզ օգնեացեն, կամ վանել զյարձակումն բազմութեացն՝ որք պատերազմաւ մարտնչէին ընդ ձեզ։ Արդ ՚ի բաց կացէք ՚ի նոցանէ և եկայք զկնի Աստուծոյն իմոյ, զի արասցէ ձեզ Թողութիւն։ Կամէր և այլ ինչ վարդապետել և խօսել սուրբն ընդ նոսա։ Եւ Հակ իշխանն Կուսխաս բարկացեալ՝ ոչ եթ սրբոյն կեր կարել զբան վարդապետութեան, և ասէ ցնա. Սրբդարութեամբ ասացեր վասն քո չարախօսքն, զի այդպիսի բանիւք դարձուցեր զմեզ[2] ինքնակալացոյն յաս-

1. Յօր. բնել։

2. Յօր՝ զպատրանս. Թերևս՝ զմեզ զրախտեան։

տուածոյն երկրպագութիւն ենէ, և ասէն զՅիսուս Քրիս տոս լինել Աստուած որ խաչեցաւ ի Հրէից։ Սուրբն ասաց. Ո՞չ ամաչես աստուածս կոչել զայնոսիկ որք կործանեալք եղեն մանր իբրև զփոշի։ Ի չխանն ասէ. Մինչ քո յօդս են հանապազ. արդ զինչ չկոչես դու զլուխ կախարդաց. զի ես ոչինչ տեսանեմ, և դու իբրև զտեսող խօսիս, և ոչ յայլոց ոք ինչ ետես կամ լուաւ։ Եւ սրտմտեալ Ի չխանն հրամայեաց իջուցանել յատենէն։

Յայնժամ յառաջեաց դուքն և ետես յատենին. և հրամայեաց զինուորացն մերկացուցանել զսուրբն և ածել նմա առիգաձ կտաւի. և զահինջն վաղվաղակի արարին զհրամայեալն, և կացուցին առաջի դատաւորին։ Ի չխանն ասէ. Հաւանեաց և զոհեա աստուածոցն յառաջ քան զչարչարանս քո։ Երանելին ասէ. Բազում անգամ լսաւ յինէն, զի ասացի քեզ Թէ քրիստոնեայ եմ և ոչ զոհեմ դիւաց պղծոց։ Դուքն ասէ. Ի քաց Թողեալ զյամառութիւնդ, Թէպէտ և ոչ երկիր պագանիցես անկեալ աստուածոցն, մատիր և զոհեա Աւկղէպէայ և այլոց աստուածոցն. ապա Թէ ոչ՝ զոպխատ անջատես ի մարմնոյդ։ Սուրբն ասէ. Եւ իւիք կարէ մեկնել զմեզ ի սիրոյն Քրիստոսի, նեղութիւն, Թէ անձկութիւն, Թէ սով, Թէ մերկութիւն, Թէ հալածանք կամ երկիւղ տանջանաց և կամ հանդերձեալքն, և կամ այլ ինչ արարած։ Ա.յլ նախ արձակեա բժիշկս զի ողջացուսցեն զմանրեալ աստուածն քո որ փշրեցան։

Եւ բարկացեալ Ի չխանն այնուհետև հրամայեաց դահձացն պնդել զսուս և զձեռնոտրա և տարածանել ի վերայ գետնոյ, և սուր մահակօք տանջել զնա, փոխանակ արհամարհելոյ զաստուածն։ Յայնժամ ասէ ցերանելին՝ դատաւորն. Մի հայհոյեր զաստուածսն, և յետ բազում հարուածոցն ասէ ցհարկանողսն. Մատուցէք զդա մերձ ի փայտն, և կապեցէք ընդձեռս և զոտս դորա ի վերայ փայտին, և քերեցէք ընդմարմին դորա մինչև զղջացի և եկեսցէ ի միտս իւր, և հնազանդեսցի արդար օրինաց մերոց և զոհեսցէ աստուածոցն։ Եւ կատարեցին զհրամայեալն ի դատաւորէն ի վերայ սրբոյն, և արիւն նորա իբրև զջուր

Հոսէր՝ի մարմնոյ վկային։ — Իշխանն ասէ. Ես վաղվաղակի գկատարդութիւն քո լուծանեմ և հանեմ ընդ դլուխ քո, և գայցէ Քրիստոնն քո և փրկեսցէ զքեզ՝ի ձեռաց իմոց։ — Իսկ երանելին Եւգինիոս ասէ. Քրիստոս փրկիչն իմ փրկեսցէ զիս՝ի ձեռաց քոց, անօրէնն ամբարիշտ, քանզի ամենևին ոչ իմացայ զտանջանս քո զոր ածեր՝ի վերայ իմ. քանզի փրկիչն իմ կակղացոյց զմենքենայս չարչարանաց քոց։

Եւ դատաւորն ևս առաւել սկսեալ՝ի չարութիւն վանն բանից սրբոյն և վանն արհամարհելոյ զտանջանսն, խարհեցաւ այնուհետև ստատկացուցանել զդոլծ ի տանջանացն՝ի վերայ սրբոյն. հրամայեաց գահ. Հանել մատուցանել զամբարս՝ի կոզս նորա և աղջուր արկանել՝ի վերայ անդամոցն։ Եւ երանելին հանբերեր քաջութեամբ՝ի տանջանսն և ոչ տրտմէր, այլ յոգւոց ելանելով կայր յաղօթս առ Աստուած և ասէր. Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ՝ի բազում վշտաց և՝ի նեղութեանց փրկեցեր զսուրբ զառաքեալսն քո և արարեր քարոզ տիեզերաց. որ աւերեցեր զդժոխս և լուծեր զմահ, և զտարամերժեալս՝ի կամաց քոց վերածեր յաղքայութիւն քո, և զմեզառսոս ազատեցեր՝ի մեղաց, չկրծոյս բոլբոքումն և բարձ յաշխարհէ զկոհս պղծութեան աստուածոց սոցա, և ողորմեա այսոցիկ ոչք երկիր պագանեն քեզ հոգւով և ճշմարտութեամբ։

Իսկ իբրև եառ դատաւորն եթէ ոչինչ օգտեցաւ յամենայն տանջանացն՝ զոր ած՝ի վերայ սրբոյն, յետ այնորիկ հրամայեաց գահճացն հանել վառել արտաքոյ քաղաքին հեռի ասպարիսիւ միով. և միահամուռ ածել զամենեսեան զկնի՝ի տեղի հրոյ բոլբոքելոյ, որոց անուանքն էին. Մակարիոս, Վաղերիանոս և Ալիւզաս, ընդ նոսին և զԵւգինիոս։ Ճայնժամ էին գահճապետն և ասէ ցդատաւորն. Ընդ հրամայեալն՝ի ձերմէ քաջութենէդ կատարեցաք, և առաւել ևս բոլբոքի հնոցն. արդ զոր ինչ և հրամայես վասն դատապարտելոցն արասցուք։ Եւ իբրև լուաւ զայս իշխանն՝ եկ վաղվաղակի բազմութեամբ քաղաքին տեսանել զհնոցն և զկատարած վկայիցն Աստուծոյ։ Եւ տեսեալ իշխանին Խուխիայ՝ զարմացաւ

ընդ առաքեալսն քարոզելոյ հնոյնն. յայնժամ հրաման եղեալ ի հնոցն: Իսկ երանելին Եւ պինախոս քաջալերեր զընկերս իւր և առեր. Մի երկընչիք ի վկայութեան հրոյ աստի, զի որչափ քարձրանայ՝ սոյնպէս և կորնչի. տեսութիւնն միայն ունի զերկիւղն. վասն զի ունիմք մեք ի ձեռն ապականացու հրոյս այսմիկ ժառանգել զանապական զանձն որ պատրաստէալ է որոց իւրոց, և զկեանսն յաւիտենականս: Եւ առաքեալ ասէ. Տեր Աստուած, որ առաքեցեր զՄխածին Որդիդ քո ի Բաբելոնէն, և զհուր հնոցին վկայից մանկանցն, առաքեա և ի հնոցս յայս զյօղ քաղցրութեան քո, և փրկեա զմեզ ի հրոյս յայսմանէ, զի անվէղ պահեացուք ի քո յոյ աստի, և մի մերձեացի ի մեզ:

Եւ մինչդեռ աղօթէին սուրբքն՝ առաքեալ գուբսն առ սուրբսն աղաչելով զնոսա, զի մի արկցեն զանձն ի նմա իւրեանց ի հնոցն: Պատասխանեի եւսեն սուրբքն և ասեն. Մեք պատրաստ եմք առ ամենայն նեղութիւնս տանջանաց՝ զոր ածելոց ես ի վերայ մեր վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ վասն մեր չարչարեցաւ և յարեաւ և փրկեաց զմեզ, և ոչ երկիւղ ինչ եղև մեզ ի քէն: Իբրև լուաւ զայս բրնաւորն, մխնեալ իբրև զարիւնարբու գազան՝ հրամայեաց արկանել զնոսա ի բորբոքեալ հնոցն: Եւ արքունի զինուքեանն նշանաւ խաչին՝ ընկեցան ի միասին ի հուրն: Յառաջեաց քան զամենեսեան և եմուտ ի նեղութս երկոցս երանելին Եւգինիոս և այլքն զկնի նորա: Եւ տեսին զի հրեշտակք Աստուծոյ մտին ընդ նոսա և երթային հանդերձ հրեշտակօքն ի վերոյ կայծականցն և փառաւորէին զԱստուած և ասէին. Աստուած ամենակալ, որ առաքեցեր զՔեանդ քո ի փրկութիւն մեզ, որ եղեալ զերկուսեան մահու, և զկատարեալ կորզեաց քաջութեամբ, լուր մեզ մեղուցեալսս և կատարեա զընծայութիւն մեր ի բարի ի փառս քո, և շնորհեա զհաղորդութիւն քո աշխարհի, և յայտնեա զմեզ հաւատացելոցն ի քեզ:

Եւ յետ երկուց աւուրց շինեաւ հուրն և յայտնեցաւն սուրբքն. և հրեշտակքն վերացան յերկինս և ոչինչ

երևելին նշմարանք՝ ի սրբոյն մարմնոյ՝ ի հրոյն. և մազ մի ոչ պակասեաց հուրն՝ ի հանդերձից նոցա։ Դարձեալ առաքեաց իշխանն՝ ի զինուորացն տեսանել զերանելի վկայն, թէ մերձեցաւ՝ ի նոսա հուրն, և եթէ անկէզ պահեցան. և որք առաքեցանն ոչ դարձան և ոչ պատասխանի բերին. քանզի նոքա տեսին՝ երկիր պատին նոցա և հաւատացին՝ ի Տէր։ Յայնժամ եկին դահիճքն և ծանուցին Կիւսիոյ, թէ սուրբքն կենդանի են և փառաւորեն զԱստուածն իւրեանց. և ամենևին ոչ մերձեցաւ՝ ի նոսա հուրն. և առաքեալքն՝ ի քէն զինուորքն՝ երկիր պատին նոցա և հաւատացին՝ ի Քրիստոս։

Զայս նոքա լուաւ դառաւորն, նոքա զՀուր բորբոքեցաւ և կրճտեաց՝ ի վերայ նոցա զառամունս իւր. վասն զի տեսս զինքն յաղթահարեալ և զբազումս հաւատացեալս յԱստուած. հրամայեաց սրով բառնալ զգլուխս նոցա, զրեալ վճիռ որ ունէր օրինակ զայս. ԶՎաղերիանոս և զԿատեխոս և զՎիկտորս և զՄակարիոս, որք անհաւանք եղեն հրամանաց ինքնակալացն և ոչ մատուցին զոհս բարեպաշտ աստուածոց մերոց, այլ խոստովանեցան զանձինս քրիստոնեայս, ի Յիսուս ոմն հաւատացեալ, զոր խաչեցին Հրեայքն յԵրուսաղէմ։ որք և զինուորս Թագաւորացն հրապուրանօք կախարդութեան հեռացուցին յերկրապագութենէ աստուածոցն, զոր աղաչեցաք բազում անգամ և ոչ լուան և ոչ հնազանդեցան արդար օրինաց մերոց. յետ բազում տանջանացն զվճիռ մահու ընկալցին, և կենդանի լցին մարմինք նոցա Թուչնոց երկնից և գազանաց երկրի։

Եւ անտեղեակ զինուորացն քարշեալ զսուրբ վկայն արտաքոյ հնոցին, զի կատարեսցեն զհրամանս բռնաւորին. իսկ ամենայն արժանաւորութեանց արժանաւոր վկայքն Քրիստոսի աղաչեցին զզինուորսն վայր մի անեալ զի յաղօթս կայցեն։ Եւ Թողացուցեալ նոցա, և սրբոցն ամբարձեալ զձեռս իւրեանց և կացեալ ընդ արևելս, սկսան աղօթել այսպէս. Տէր Աստուած մեր Յիսուս Քրիստոս, զոր իսկ ասացեր ամենասուրբ բերանով քով, եթէ՝ Երկու ձագ գանգի միում վաճառին, և ոմն ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց Հօր

ձեզայ որ յերկինս է։ Դու, Տէր, եառուր զօրութիւն զոր
բոյ մարգարէից քոց և վկայից՝ հաստեցուր վշտաց և
նեղութեանց։ Դու, Տէր, որ զՎաբրահամ ապրեցուցեր
և զպատարագ նորա ընկալար. դու ես որ եառուր զը-
նորս Յովսեփու առաջի Փարաւոնի ազքային եգիպ-
տացւոց։ Դու ես որ զմարգարէն Մովսէս ընտրեցեր
յառաջնորդութիւն ժողովրդեան քոմ Իսրայէլի, և՛ի
ձեռն նորա հերձեր զծովն կարմիր և անցուցեր զժո-
ղովուրդն յանապատն Սինայ, և եառուր հաստեցեր
խաւարապատից ժողովրդեանն։ Դու՛ի ձեռն Յեսուայ
զՅորդանան բաւժանեցեր, և զերիքովական պարիս-
պն աղաւնդեայ իբրև զջուր հեղեր. որ քոյին հրա-
մանաւք ստնակապեաց զարեգակն և զլուսին։ Դու ես
որ զօրացուցեր զդատաւորսն Իսրայէլի՛ի վերայ այլազ
գեացն, և փրկեցեր զժողովուրդն քո՛ի ձեռաց ամ-
պարշտացն Քանանացւոցն։ Դու եառուր յաղթել Դաւ-
թի՝ այլազգւոյն Գողիադու հսկայիւն, և փրկեցեր՛ի
ձեռացն Սաւուղի անօրինի։ Որ պահեցեր զԱնիել՛ի
գբոյ առիւծուցն, և զՇուշան ապրեցուցեր և ազատեցեր
՛ի դատն ծերոցն. և եառուր յաղթութիւն Թեկղի՝ առ
ատն կոխել զՀրոյն և զպաղանաց զօրութիւն. և պա-
հեցեր անարատ զտուրբ զառաքեալն[1] յամենայն նեղ
ջաց իւրեանց. և զմեր զանարժանիցս զծառայիցս ըն-
կալ զաղերս պաղատանացս, և կատարեա զընթաց
մեր ընտրհաք քո։

Եւ իբրև լուեալն յաղօթիցն և տեառնապրեցին
զինքեանս նշանաւ խաչին, և խոնարհեցուցին զպա-
րանոցս իւրեանց, հատին զգլուխ երանելեացն. և կա-
տարեցան տուրքն՛ի փառս Աստուծոյ։ Եւ ընկեցին
զմարմինս նոցա ոտիկս հրամայեցաւ նոցա՛ի գաւառա-
կէն. և նստան պահապանքն պահել զտուրբսն. զի գի-
տացեն զինուորքն վկայիցն և մատնեացեն զնոսա գա-
տաւորին։ Իսկ հաւատացեալքն խնդացեալ զխորհուրդս
նոցա՝ ճեպին գիշերուայն լինելոյ. և իբրև նսեմացաւ և
՛ի քուն եղեն պահապանքն, եկին և ամփոփեցին զնըշ-
խարս սրբոց վկայիցն ազդեցութեամբն Աստուծոյ.
զգլուխս նոցա ոչ գտին մերձ՛ի մարմինս նոցա, բայց

1. Յոր. պաուղեայն։

զնշխարսն բարձեալ տարան յիւրաքանչիւր տեղիս իւրեանց։ Եւ յորժամ առաւօտ եղև մտեալ՝ի Թանձրատիտ մայրին Թաքեան, զի մի ոք տեսցէ և մատնեսցէ զատաւորին։

Իսկ մի ոմն՝ի սպասաւորաց սրբոյն ննջեաց, և ետես զսուրբն Վաղերիանոս՝ի տեսլեանն զի ասէր ցնա. Բարիոք արարէք զի ամփոփեցէք զմարմինս մեր. յարուցեալ դու առ ընդ քեզ մի յընկերաց քոց, և գնացէք՝ի տունջեան ժամուս. և յորժամ երեկոյ լինի՝ի մեր ձեռնալ՝ի մէջ գիշերին, յորժամ խոր՝ի քուն լինին պահապանքն, առէք զգլուխս մեր և բերէք դիք մերձ՝ի նշխարս ոսկերաց մերոց. և զի փայլակնացայտ լոյս երևեսցի ձեզ՝ի նոցանէ, և այնպէս գտանիցէք զնոսա։

Եւ յարուցեալ՝ի քնոյ անտի պատմեաց ընկերաց իւրոց զտեսիլն, և առեալ յընկերաց իւրոց և գնաց. և տեսեալ զի լոյն փայլէր շուրջ զնոքօք, որպէս առաց սուրբն Վաղերիանոս։ Եւ առեալ բերին զնոսա և յոյժ ուրախ եղեն յաղագս գիւտի սուրբ նշխարացն։ Եւ յետ անցանելոյ երից գիշերաց՝ պատրաստեցաւ հանել զսատարան նոցա՝ի տեղւոջն կոչեցեալում Միջագետս Հարաւայ։ Եւ եղեւ պատերազմ՝ի մէջ նոցա, թէ ոյք որոց լիցեն մարմինք վկայիցն, զի գիտասցեն զնոսա յաղնուանէ. զի՝ի քանցելոց բազում հարուածոց մարմնոցն՝ի տանջանացն՝ ոչ կարէին ճանաչել զնոցին մարմինսն. և մնային յայսմանէ թեան սրբոցն։

Եւ մի ոմն՝ի զինուորացն որոյ հրաման առեալ պահել զսուրբսն, լցեալ Հոգւով և ասէ ցնոսա. Կացցուք յաղօթս առ Աստուած, և նա յայտնեսցէ մեզ զկամս Տեառն մեր. Թողցուք զնուրբսն սրբոցն զգրաստսն զնշխարսն զայսոսիկ, և ուր և աջողեսցէ Աստուած և առաջնորդեսցէ, և յոր կողմ և երթիցեն նոքա՝ յայնժամ[1] իմացեալ ծանիցուք զնեղ տեղի սրբոցն։ Եւ կացեալ միաբան յաղօթս, և թողեալ զգրաստսն, և առեալ միւն՝ի նոցանէ զնշխարս սրբոյն Կանտիտոսի՝ գնաց՝ի տեղին անուանեալ Սաղհինա. և միւսն որ բարձեալ էր զՎաղերիանոսին, վասն զի նոյնն էր որ զկանտիտոսին կրէր, տարաւ՝ի

1. Ց՟որ. Թէրի էր յոյնք։

աեղին ուսոի ինքն էր. և այսպիսի օրինակաւ էղև յայտնութիւն սրբոյն։ Այեալք իւրաքանչիւրք գնացին կայս իւր և երթեալք ծնդութեամբ և ուրախութեամբ բազում՝ ի քաղաք իւր, և զգուխս երանելեացն՝ էդին ընդ այլ նշխարս նոցա ի տապանի. զանձ անպակաս և անապական ժողովեալ ի բարեխոսութիւն փրկութեան հաւատացելոց ի յոյս կենդանի յաւիտենից ի Քրիստոս Յիսուս. և միաբանութեամբ օրհնեին զաստուձն այսպիսի հանդերձութեանմարդկան։

Եւ յետ անցանելոյ ժամանակացն այնոցիկ և գալոց հալածանացն, շինեցին վայելուչ վիմայարան ըստ իւրաքանչիւր արուեստից սրբոցն, ի փառս աոեղծութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Նախ երանելի և առաքեալն վկայն Եւգինէոս, զեռ և առաւելն կենդանի էր և արգելեալ կայր ի նա-ւարշտս բանդի, հիզուսեալ բեւեռօք ի փայտի անդ, ուր կանգնեալ էին ի մէջ տանն. և անյագ ձայնիւ և տաղմոսերգութեամբ գոհանալով օրհնէր զՅաստուած ի վերայ անպատուին պարգևաց նորա, ապաշաւէր և բարձր բարբառով աղօթէր, և ասէր այսպէս. Աստուած ամենակալ, Հայր սիրելի Որդւոյ քո Միածնի, Աստուած զօրութեանդ և հրեշտակաց և ամենայն արարածոց անսասանելոյ, որ հաստատեցեր զամենայն բանիւ զօրութեամբ քո, որ առաքեցեր զծովածին և զեակից բանդ քո ի փրկել զարարածս. որ եկիր կամաւ քո և մարմնացար յանարատ կուսէն Մարիամայ, և կրեցեր զամենայն կիրս մարմնոյ՝ բայց ի մեղաց, և խաչի և մահու հանդերձեցար, և թաղեցար ի նոր գերեզմանի, և էջ ի դժոխս, և վերաբերեցար զամենեսեան ի մեղաց և յապականութենէ և յերկրորդ աւուր յարեար ի մեռելոց և համբարձար առ քեզ, և նստար ընդ աջմէ մեծութեան քումմ՝ ուր էրն զառաջինն. և խոստացար դարձեալ գալ միւսանգամ դատել զկենդանիսն և զմեռեալսն, և հատուցանել ըստ գործոց իւրաքանչիւրոց։ Դու Տէր, զօրութեամբ քո մեծաւ լուար յիւրաքանչիւր գարս և ի ժամանակս ձայնի արգարոյն և փրկեցեր և պահեցեր յամենայն վշտաց և նեղութեանց. որ զկնի հաւատոյ զառաքեալն

քո Պետրոս՝ հաներ ի բանդէն ի ձեռն հրեշտակին, որ կապեալ կայր ի մէջ զինուորացն կրկին շղթաիւք, և ազատեցեր ի ձեռաց Հերովդէի և յակընկալութենէ Հրէից, և հաւատացեալ նմա զիսակաւոն ազքայութեանն. և զՊետրոս զանօթին ընտրութեան և զՇիւզայ ի տանջանաց բանդին ազատեցեր. և այժմ առաքեա զհրեշտակ քո և հան զիս ի նեղութենէ բանդիս յայսմանէ՝ ողորմութեամբ քո, և արձակեա զոտս իմ ի գայթակղութենէ, և զերծո ի ձեռաց անօրինիս և ամբարշտիս Հուսիայ, զի դու Տէր կարող ես յամենայնի. և քեզ հանգուցք օրհնութիւն և փառս ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ, յաւիտեանս. ամէն։

Եւ այսպէս կացեալ յաղօթս երանելոյ վկային Քրիստոսի. և ահա հրեշտակ Տեառն լինէալ յերկինից՝ երևեցաւ նմա, և լոյս մեծ ծագեաց ի բանդին. և ցնծացեալ ուրախութեամբ սրբոյ վկային Քրիստոսի։ Եւ մինչդեռ նա յայսմ մտաց խորհրդի էր՝ առաքեաց անթիւ բանակաւոն Հուսիաս զօհիձն ի բանդն, և հանեալ զերանելին հատին առաքեալ զկնի նորա, մինչդեռ փառաւորէր զՀայր և զՄորդի և զսուրբ Հոգին յաւիտեանս. ամէն։

Կատարեցաւ երանելին Եւգինիոս վկայութեամբ ի Տրապեզոնացւոց քաղաքին, յամենայն յուսուա՛ր՝ ի քան և ութն, ի հիւպատոսէ Վոկղեսիանոսի և Մաքսիմիանոսի. և եղան նշխարք ոսկերաց նորա ի վկայարանին, որ էր մերձ ի դղեկ պարսպին ի քարձրաւանդակ և վայելուչ բլրին, և դեղեցկացուն վկայարանին. ամ յամէ կատարել պաշտաւնակ նորա անխափան ուծանելութեամբ, ի Քրիստոս Յիսուս. ո՛ւստի վայել փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Եղիոքրատայ և Պոմպէի և Ղուկիի և Մակրաբայ։

Ի ժամանակին յայնմիկ Թագաւորելով Տրայիանոսի՝ բարեսեռեայն սատանայ արկ ՚ի սիրտ նորա խորհուրդ չարութեան, յարուցանել հալածանս ՚ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ. և նեղէին ամենայն սրբոք զհաւատացեալսն ՚ի Քրիստոս, և ստիպէին զոհել անշունչ դիւացն. և նահատակ լեառնի ամբարիշտ Թագաւորն, հրաման տալով յամենայն քաղաքս և ՚ի գեօղս զոհել աստուածոցն. մանաւանդ զայնոսիկ որ ՚ի Քրիստոս կէին բարեպաշտութեամբ։ Չհեծելաւ զօրսն առաքելով ընդ աշխարհսն ամենայն ՚ի ձեռն նամակաց, զի տանջանաց մատնեսցին քրիստոնեայքն, ուր և գտցին։ Առաքեալ ոմն յիշխանացն Ռոմեայ անուն, առ գԹագաւորն. Հրաման բարեպաշտութեան ձերոյ հզօր և պատուական է, քայց զամենայն յերևելի պատուաւորաց պալատանն առաքեա ՚ի գաւառսն՝ առ քաջամարտիկ և արիագոյն զօրսն։ Այն Թագաւորն յիշխանն Ռոմեայ. Երդուեալ ՚ի փրկութիւն աստուածոցն, զի բարիոք են խորհուրդք քո։ Եւ հրամայեաց գնալ հնգից արանց ՚ի ամենայն պալատանն, առաքելով նորա ինչ բազում, գրեալ և հրովարտակս ընդ նոսա որ ունէր օրինակ զայս. Տրայիանոս միշտ յաղթող Թագաւոր, կայսր Հռովմայեցւոց, պատուական գաւուց զօրագլխաց կամիմ, երկոտասան աղգաց՝ ուրախ լինել Հրամայէ

ակր քաջութիւնս ի ձեռն պատուիրանաց մերոց եւ լեալ կենաւր իշխանացդ պաղատանս մերոյ, զոր խոստեցաք ի միասին ծանուցանել ձեզ, վասն առաւածոյն բարերարութեան, ոյք զարհեան քաջութիւնս եւ զօրութիւնս շնորհեն ամենեցուն, եւ վասն այնորիկ պարտիմք հատուցանել զընծայս նոցա եւ զոհս, եւ սիրել զնոսա յամենայն մտաց եւ ի զօրութենէ. զի եւանելով ձեր ի պատերազմ վաղվաղակի յաղթող երեւեսջիք ի վերայ թշնամեաց ձերոց, ոյք են ի կողմանս արեւելից. ընկերեալ սպառազինութիւնս նոցա եւ զամենայն գործի զինու զինուորութեան՝ յարձակեսջիք ի վերայ նոցա:

Իսկ նոցա առ ժամայն արհամարհեալ զհրամանս Թագաւորին՝ յաղթեցին հակառակորդացն գառնալ ի պատերազմին: Եւ տեսեալ Թագաւորն զհրամանս իւր արհամարհեալ ի նոցանէն՝ բարկացաւ յոյժ. եւ հրամայեաց եւանել նոցա ի հայրենի գաւառէն իւրեանց, եւ երթալ ի կողմանս Հայոց ի քաղաքն Մեծլաեղն, համարեցաւ այնու անարգել զնոսա. եւ նոքա զարհուրեալք ի սպառնալեաց բռնաւորին Տրդատայ՝ եկին ի նախատացեալ գաւառն, զի մի բարկացեալ կոտորեցէ զնոսա. եւ էր Թիւ զօրաց նորա մեծաւան հազար արանց պատերազմողաց սուսերամերկաց:

Յայնժամ տեսեալ իշխանին Ռոմեղոսի որ ունէր զպատիւ պրոպոսիդոսութեան, ասէ ցԹագաւորն. Ո՛վ Թագաւոր, այնպէս կարծեցեր դու Թէ իմոյսոյ Թեան ինչ գործ գործեցեր զայդ առնելով: Այէ ցնա Թագաւորն. Ուրեմն և դու խաբեցար յաղանդոյ մոլորութեան նոցա: Այէ ցնա Ռոմեղոս. Ձիմար և անպիտան և արբեալ չարին մոլորութեամբն, դու զքո սրնոտի ջանագ՝ զոր ունիս առ կուռս անմտունչս՝ պատմեա ինձ և մի բամբասեր զիմ կատարելութիւն հաւատոյս: Եւ բարկացեալ Թագաւորն հրամայեաց մահիւք հարկանել զնա. և ասէ ցնա. Տեսցուք այսուհետեւ օգնէ քեզ Քրիստոս քո զոր ասես: Այէ սուրբն. Անդնդային վիշապ և կեղծաւոր, ոչ իմացար Թէ չարչարանքդ քո զոր կարծես զարհուրեցուցանել զիս՝ Հոդուպրեն զիս և փրկեն ի կռոցն պղծութենէ, և ըզգեցուցանեն ինձ զանապական զգեստն զոր պարգեւէ

Ջրիսաս սկսեալ խօսել։ Եւ ըստ այնմ ասէ Հրամայեաց տրամ ջանալ զգուշ նորա։ Եւ կա տարեալ տեսցեն Յոանեայ բարի խոստովանու թեամբ, յամենայնի հոկտեմբերի ԻԹ, յաւուր շա բաթու, ի թուին Այսուծոյ։

Եւ յետ այնորիկ մեռաւ Տրայեանոս. և յետ ժա մանակաց անցելոց՝ յարեաւ այլ Թագաւոր Վհակիէ տիանոս անուն՝ որ ոչ Հանաչէր զՅոսեաճ, մանաւանդ և որ ի Ջրիսաս Հաւատոյին՝ դարձուցանել Ջանայր։ Եւ նստեալ ի բարձր բեմի, և առաքեաց Հրովարտակ ընդ ամենայն գաւառս յիշխանս և ի դատաւորս, և ի զօրագլուխս, դարձուցանել զամենեսեան ի Հաւատոյն՝ ի կռոցն խաբէութիւն։ Եւ ընկալեալ զայսպիսի Հրամանս իշխան քաղաքին Մելիտենոյ, որում անուն էր Պռոեարիոս, զի և նա Հեղինեայի էր ազգական, և Հրամայեաց քարոզել կարդալ ընդ ամենայն Հրապարակս և ընդ գաւառսն. Եթէ ոք ոչ կամիցին Հաւանել Հրամանաց ինքնակալին և զոհել աստուածոցն՝ անողորմ տանջանօք և մահ զրաւեալին ի կենաց։ Եւ ամենեցուն քրիստոնէից լսեալ զայսպիսի սպառնալիս բռնաւորին՝ վաղվաղակի խուճապեալք յերկիւղ տապնային՝ Թագուցանէին զանձինս իւրեանց, զի մի՛ ի բռուն անկցին անաստուած գաւառին. զի ոմն և գտանէին նեղլինն, և մեծամեծ տանջանս ի վերայ ածեալ տոկային զոհել աստուածոցն և երկիր պագանել անշունչ պատկերաց։

Եկեալ ասէ ոմանք չարախօսութիւն առ իշխանն մատուցանէին վասն Մարինեայ, որ եղբօրեան կոչեցեալ, որ էր ի գաւառ Պռոխեկիւռացին, որ պատուէրեալ ի կռամսութեան իշխանութիւնն և ասէին. Եթէ ոչ Հաւանի երթեք Թագաւորական Հրամանացն, և գաւառացն զոհս ոչ մատուցանէ, այլ զկատէեան խոտանի Այսուած, և ի նա Հաւատացեալ է։ Եւ զայս լսեալ գաւառին, Հրամայեաց արանց Հնոյ զօրականացն քակտանաց խնդրել զնա ուր և գտանիցի, և բերել Յաեան գաւառատանին։ Եւ եկեալ նոցա ի գեօղն յորում բնակեալ էր նա, և Հարցանէին վասն նորա. և ասէին ոմքն ցնոսա. Ստանիկ զոր դուքն խնդրէք շրջի ի դաշտն անդ՝ որ կոչի Կռուպատիս. և գնացին առ

նա: Իսկ նորա յառաջագոյն խնացեալ զգալուստ նո-
ցա՝ գնաց՝ի լեառն և նստէր անդ տեսանելով զնոսա.
և տեսեալ զի փութանակի խնդրէին գնա՝ եկեալ՝ի
տուն իւր փոխեաց զհանդերձս իւր և զգեցաւ հան-
դերձ ազքատի, և եկեալ՝ի տեղի ի հանդիպէր նո-
ցա. և ասէն ցնա զխնդուրքն. Վախկ՛ն արդեօք թէ
ուր իցէ բնակեալ կոմսն Ատրնոս որ կոչի Եւդոքսիա:
Եւ ասէ ցնոսա. Ես վասն որոյ լուի խնդրէք գնա, և կամ
զինչ բանք իցեն ձեր ընդ նա,ասացէք ինձ և ես ցու-
ցից ձեզ գնա: Եւ ասէն ցնա. Իշխանն խնդրէ գնա:
Եւ ասէ ցնոսա. Վասն որոյ խնդրէ գնա: Եւ ասէն
ցնա. Վասն զի ոչ հաւանի հրամանաց ինքնակալին և
աստուածոյն ոչ զոհէ: Եւ ասէ ցնոսա. Եկայք՛ի տուն
իմ և հանդերձեսջիք փոքր մի և ես ցուցից գնա ձեզ: Եւ
տարաւ գնոսա՛ի տուն իւր. և ասէ ցաման իւր. Պատ-
րաստեա ճաշ եկելոցս առ մեզ. և նորա սեզան եդեալ
առաջի նոցա և ճաշակեցին: Եւ ասէն ցնա. Ասէ ցոյց
մեզ զկոմսն Եւդոքսիա: Եւ նա ասէ ցնոսա. Զոր խընդ-
րէքն ես եմ: Եւ ասէն ցնա արքն. Ընդէր զայդ արա-
բեր. ահաւասիկ գնամք առ իշխանն և ասեմք ոչ գը-
տաք գնա. և դու զանխափանելի և Թաքո զանձն քո, զի
մի ընկեցանիցես և անկցես՛ի ձեռս իշխանին. և ասէ.
Ո՛չ արարից զայդ, այլ եկից զկնի ձեր, բայց փոքր մի
Համբերեցէք ինձ:

Եւ կոչեցեալ զամուսինն իւր ասէ ցնա վասն տանն
իւրոյ. և ասէ ցնա. Ո՛վ կին, փոխելոց եմ ես՛ի ծով-
ու և յանցաւոր կենաց սասի՛ի միանձնաւոր և յա-
ւիտենական կեանսն, և այլ ոչ ևս տեսանելոց ես զկս
՛ի մարմնի սոսա: Եւ զոր ասեմ քեզ՝ լուր ինձ, և կե-
ցանել՛ի մարմնոյ սասի՝ մի ոքեւս առեալ արտասուես
ցես՛ի վերայ իմ, այլ զգեցիր զգեստ զհարսանեացն
ցոյ, և վառեա լապտերս և ջահս և առեալ անօթ
մաքուր ժողովեա զարիւն իմ, և առեալ զգլուխ իմ և
զՄախարիսա զորդւոյ իմոյ և ուրախ լեր. և զայս արա
րուկես Տարսն Քրիստոսի: Եւ սասցեալ նորա զայս՝ ա-
ռեալ գնա զինուորսացն, նստեալ՛ի վերայ երիվարին
իւրոյ և զգեցեալ զգեստ ազնիւ և պայծառս, և սա-
բան գնա առաջի գառասրսին:

Եւ ասէ բռնասրն. Ուրախ լեր փառասրեալ կոմս

Եւդոքսիա։ Եւ ասէ Եւդոքսիա. Ուրախ լեր և դու, ով բռնաւոր։ Եւ ասէ դատաւորն. Խնացար, ով կոյս, եթէ վասն ոյոյ գործոյ խնդրէիւք զքեզ։ Նմա երանեցին. Պատմեա ինձ, ով դատաւոր, վասն ոյոյ խնդրէիրն զիս։ Իշխանն ասէ. Վասն այնորիկ կուէցաք զքեզ, զի հաւանեացիս հրամանաց ինքնակալին, և զոհեացես աստուածոցն։ Իսկ սուրբ վկայն ծիծաղեալ՝ի վերայ անմտութեան դատաւորին և ասէ. Եւ ես վասն այնորիկ զգեցեալ եմ հանդերձս պատուականս և պայծառս և նստեալ՝ի վերայ սպիտակ երիվարիս, և եկեալ կամ առաջի քո բեմիդ։ Նմա դատաւորն. Երդուեալ յաստուածոն ամենայն, եթէ լսէ թագաւորն վասն հնազանդութեան քո կայսերական հրամանացըն և զոհելոյ աստուածոցն, յերկրորդական աթոռ թագաւորութեանն իւրոյ նստուցանէ զքեզ։ Նմա երանելին. Ես յուսացեալ եմ յաւիտենական կենացն արժանի լինել. և երկիր պագանել Քրիստոս աստուածութեան նորա։ Եւ բռնաւորն ուրախ լինէր, կարծելով թէ վասն աստուածոցն ասէիցէ զայն։ Նմա ցնա դատաւորն. Փառաւորեալդ և քաջ կոմսդ, ի վաղիւ եկեսջիր ի տաճար աստուածոցն և ընդ մեզ երկիր պագցես նոցա։ Նմա կոմսն. Այո. և քանի՞ աստուածոյ հրամայեացես զոհել։ Իշխանն ասէ. Դիոյ և Նպողոնի և մեծին Ապեմեայ։ Կոմսն ասէ. Երից հրամայեցեր հաւատալ, այնպէս և ես հաւատամ՝ի Հայրն և յՈրդի և՝ի սուրբ Հոգին, յերրորդութիւնն անբաժանելի։ Իշխանն ասէ. Ո՞րպէս, արհամարհեալ զհրամանն ինքնակալին։

Եւ բազումք այնուհետև՝ի զինուորականացն իւրոց ժողովեալ էին առ նա և կացեալ առաջի սրբոյն։ Նմա բռնաւորն. Այժմ որ ոչ կամի՝ի ձէնջ հաւանել հրամանաց ինքնակալին, լուծցէ զգօտի իւր զինուորութեան և դիցէ առաջի իմ։ Նոքա երանելին Մարկիոս, որ Եւդոքսիոսն կոչեցաւ՝ նախ քան զամենայն լուծանէր զգօտին իւր և ձգէր առաջի բռնաւորին. և էին նոքա ամք հարիւր և չորք, և ասեն ցբռնաւորն. Մեք դատաւորեալ եմք յերկնային զինուորութիւնս հրեշտակաց։ Յայնժամ տեսեալ իշխանին զհամարձակութիւն և զվաղմուգիւն նոցա՝ սարսեաց՝ի նոցանէ և

պրեաց ՚ի ձեռն նամակաց առ Թագաւորն. եթէ զառաքմունքիւնս զայս կատարանեմք, ասէ, այլ ոչ կարէ կալ հակառակ հրամանաց ձերոց և անարգել զառաւածմանս։ Եւ լուեալ Թագաւորին, հրամայեաց զայնոսիկ որք յառաջագոյն լուծին զգօտիս իւրեանց՝ արագ կատարել, և զայլսն անպատուհաս արձակել. և ընկալեալ զհրամանն Թագաւորին՝ արձակեաց զնոսա։

Իսկ զերանելին Եւդոքիոս հրամայեաց մատուցանել ՚ի բեմն իւր. և ասէ ցնա դատաւորն. Մարիանէ կոմն, յայտնեաց ՚ի քաց արա ՚ի քէն զխորհուրդս յիմարութեան, զի մի պէսպէս չարչարանօք նեղեցից զքեզ։ Պատասխանի ետ երանելին և ասէ. Որպիսի չարչարանօք զիս հաւանեցուցանել կամիս։ Դատաւորն ասէ. Հրոյ և ձիթոյ, բանդից և սրոյ։ Սուրբն ասէ. Այս ինձ, ով բռնաւոր, ոչ է բարւոյ, փախչիցէ յանանց հրոյն՝ զոր ծով և գետք ոչ կարեն շիջուցանել, եթէ յայժմու հրոյ՝ զոր սակաւ ջուր շիջուցանէ. եթէ զձիւնն որ անանց հրոյն եռայ, թէ յայդմանէ՝ որ դիպի մի փայտիւ հալի և անցանի. զսպառնալիսն քոյեղէն և հոգեղէն զուարթնոցն, եթէ զսպառնալիսն սակաւանայրս և սակաւ ատեան. զանմահն՝ որ ոչ ունի ջերմութիւն և զկրճտումն ատամանցն, թէ զքո սպառնալիսդ. զբանդս զայս՝ թէ զոյն որ յաւիտենից ոչ անցանէ։ Արդ լմնայիր զայդոսիկ զոր ասացեր քեզ, և հաւատա թէ առաւածոց քոց ես ոչ զոհեմ, և ոչ անշունչ կռոց երկիր պագանեմ, այլ զոր կոչես դու Ապողինար՝ կորուստ և ապականութիւն խաբէութեան, և Արեւիս՝ մայր կորստեան. և երեքեան դուք խաբիչք, Թագաւորն Դիոկղետիանոս և դու բռնաւոր և հայրն ձեր սատանայ։

Եւս բարկացեալ դատաւորն՝ ասէ. Չպատուական առաւածդ Քրիստոսն եղեր, և արդ մեք երեքեան ոչ եմք։ Եւդոքիոս ասէ. Այսպէս քեզ թէ դու և Թագաւորն և հայրն ձեր սատանայ. այլ ահա և ծանիր, ով անդնդային վիշապ, որ քեզ և Թագաւորին պատրաստեալ է հուրն յաւիտենական, խաւարն արտաքին և հրեշտակք սանձողականք։ Դատաւորն ասէ. Չես Թոյլ անարգեցեր, այլ կեղծաւոր, զԹագաւորն և զառաւածդ ընդէր յանդգնեցար հայհոյել։

Սուրբն ասէ. Լինիք դուք նման աստուածոյն Ձերոց, որք անշունչք և անբանք են։ Եւ բարկացեալ բռնաւորն և եղծեալ դոյն երեսաց նորա, հրամայեաց ՚ի ջրից կողմանց լարիւք պարզել զնա և արջառաձեւք տանջել զնա. և երանելին հայեցեալ յերկինս՝ ասէ. Ընտրեա, Տէր, որք ՚ի քեզ են յուսացեալ՝ զխաղաղութիւն յերկինս և յերկրի։ Ընտրեա, Տէր, ամենայն որք խնդրեն ՚ի քէն լինել զիս յօգնականութիւն ՚ի նեղութեան, կամ ՚ի պատերազմի, կամ ՚ի ծովու, կամ՝ ՚ի մրրկեալ ելինս, կամ՝ ՚ի հոգւոյ մոլորութեան չարչարեալք, կամ՝ ՚ի ձանապարհի, կամ՝ ՚ի բանդի, և այրեաց և աղքատաց, և ՚ի ծերութենէ վտանգեալոց և ծանրացեալոց բեռամբ մեղաց, և որք գայցեն ՚ի տեղի վկայութեան իմոյ, ուր հեղաւ արիւն իմ վասն անուանդ քո սրբոյ, և ՚ի յիշատակի իմում ողբալով և արտասուելով խնդրեսցեն զողորմութիւն իւրեանց, ընտրեա նոցա, Տէր, վաղվաղակի ողորմութիւն և օգնութիւն և կատարեալ առողջութիւն, և փրկեա զնոսա յամենայն նեղութեանց նոցա։ Ցնչեա Տէր և զծնողն իմ և զամենայն հաւատացեալս, զի մի եղիցի առ նոսա մահ տարաժամ, մնարդոյ և անանոյ, և ամենեցուն որք յիշեն զանուն իմ, ընտրեա նոցա, Տէր, խաղաղութիւն յերկինս և յերկրի. և պտղաբերեա զայգիս և զանդաստանս նոցա, և որք խնդրեն բարեխաւսութեամբ իմով և կարդան զիս յօգնականութիւն, դու ողորմեացիս նոցա և կատարեսցես զհայցուածս նոցա ՚ի բարի։ Ընտրեա, Տէր, և զուգակից իմոյ մանն բարի ժառանգութեան ընդ իս ՚ի հանդերձեալ յաւիտենիս, զի մի բարժանեսցուք ՚ի միմեանց։

Եւ իբրև կատարեաց զաղօթսն՝ հրամայեաց դաւառն տանել զնա ՚ի բանդ, եւ յետ աւուրց տանց բերել զառաջեաւ ձերանելին։ Եւ իբրև բերին՝ հայեցաւ ՚ի նա բռնաւորն և ասէ ցնա. Եւդոքսիէ կամ, այժմ գոնէ հաւանեցար երկիր պագանել և զոհել աստուածոցն, և եթէ ՚ի նմին յամառութեան իցես։ Եւդոքսիոս ասաց. Ես հաւատացեալ եմ ՚ի Հայր և ՚ի Որդի և ՚ի Հոգին սուրբ, յանբարժանելի սուրբ երրորդութիւնն. և ես կուրացեալ յառաջին չարին

*խաբէութեանէ, յանօրէնն կուապաշտութեանէն, և հի-
ւանդութեամբ մարմնոյ: Իսկ
յորժամ արժանի եղէ վերատին լուացման աւազանին
ծննդեանն և սուրբ միրոնի թաղման՝ բացան աչք իմ և
խնաստացայ ողջախոհ խորհրդոք սրտի իմոյ: Բայց զայս
գիտասջիր, ով անիրաւ բռնաւոր, թէ ոչ հաւա-
նիմ քեզ և ոսկիապատ անշունչ պատկերի աստուածոց
քոց ես ոչ զոհեմ, որք են գործք ձեռաց մարդոյ, զի
նման լինին նոքա՝ որք արարին զնոսա և ամենայն յու-
սացեալքն՝ ի նոսա:*

*Եւ բարկացեալ դատաւորն հրամայեաց կապարեայ
մրճով հարկանել զկուրծս նորա, և ասէ ցնա. Հաւա-
նեաց հրամանաց ինքնակալին, և երկիր պագ աստուա-
ծոցն, և ապրեսցիս՝ ի տանջանացդ: Իսկ սուրբն զայս
՝ի յերկինս համբարձեալ, և խնդրէր՝ ի Տեառնէ զա-
ռաջին մըցումն տանջանացն, և ուրախութեամբ կա-
տարել: Յայնժամ տեսեալ դատաւորին զչերմեռան-
դըն հաւատս վկային և զյօժարութիւնն, վէիս հաս-
տատէր՝ ի վերայ սրբոյն այսպիսի օրինակաւ. Զմա-
րինոս զանուանեաւն Եւդոքիոս՝ զգերապատուեաւն
կոմսութեան իշխանութեամբ, և ոչ հաւանեալ հրա-
մանաց ինքնակալին, և անպատուեալ զարերարու-
թիւն աստուածոցն մերոց, յետ բազում չարչարա-
նացն սրով ընկալցի զվէիս մահու: Եւ ընկալեալ սրբո-
յն վկային զայսպիսի վէիս մահու, և հասեալ՝ ի տե-
ղի վկայութեանն, հայեցեալ տեսանէր զբազմութիւն
զօրականացն՝ ի դասուց զինուորութեան իւրոյ, զի լա-
լով և ողբալով երթային զհետ նորա. լայնն և ամե-
նայն ժողովուրդքն ընդ նոսա: Եւ ասէ ցդահիճն.
Թողացուցէք ինձ փոքր մի ժամ յաղօթս կալ առ Տէր
մեր Յիսուս Քրիստոս: Եւ նայեցեալ յերկինս տարա-
ծեաց զձեռս իւր, և աղօթեաց այսպէս. Տէր Ա-
ստուած, որ արարեր զերկինս և զերկիր, զծով և զա-
մենայն որ ե՝ ի նոսա, լուր աղաչանաց իմոց և ունկն
դիր խնդրուածոց իմոց, և օգնեա ամենայն հաւա-
տացելոցս՝ ի քեզ, և ամենեցուն քրիստոնէից ընդհա-
նայցուածս նոցա, որք կոչեն զվս յօգնականութիւն.
և մի եկեսցէ՝ ի վերայ երկրիս այսորիկ սով կամ սրա-
ծութիւն կամ սատանութիւն, կամ նուաղութիւնդ*

պաղաքէրաց և խաշանց ծննդոց և աւետից հարկաւոր պիտոյից, կամ շարժուն գղտրել քաղաքաց և շինուածոց. այլ ոյք հաւատով գայցեն ՚ի տեղի կատարման իմոյ և արտասուօք խնդրեսցեն, դու Տէր, զխնդրուածս սրտից նոցա կատարեա վաղվաղակի: Ընդրհեա, Տէր, և զինուորակցաց իմոց և ընկերաց զխաղաղութիւն, զի մի յաղթեսցէ նոցա թշնամի, և մի տեսցեն նոքա զամբոխ պատերազմաց, և ոյք ՚ի մարտ պատերազմի լինիցին՝ մի յաղթահարեսցին ՚ի թշնամեաց իւրեանց, այլ խաղաղացո զկեանս նոցա, և խոր տակեա զամենայն թշնամիս ՚ի պատերազմի հեթանոսաց:

Եւ յետ այսորիկ առի ցանուածին իւր. Բեր այսօր հեռու զանգն անօթիդն զոր առայի քեզ, և ժողովեա զարիւն իմ, և առցես զգեստ իմ ուրախութեամբ, և մի լալով և մի տրտմութեամբ, և մի արկցես արտօսր ՚ի վերայ իմ վասն մեկնելոյ քո լինիմն. և արտասես տապան ինձ՝ որ կոչի Վահիմո, և դու ննջեա ընդ աջմէ իմմէ: Եւ դարձեալ ՚ի ժողովուրդն եաես զոմն ՚ի զինուորաց իւրոց Ջինաց անուն կոչեցեալ, ողբալով զինա յոյժ. և առ ցնա առըրն. Ջինոնիկ, մի ողբար վասն բաժանելոյ քոյ լինիմն, զի ոչ ի մոլոց գքեզ, այլ որպէս ընդ ինքեան զինուորն զիմն տանիցես և ընդ ինքեան ի նա: Եւ զայս առացեալ՝ եկեալ առ գահինճն առ ցնա. Ո՛րդեակը, այսուհետեւ կատարեցեք զհրամանս տէրանն ձեզ: Եւ եկեալ Ձայն ՚ի յերկինից առ նա առ-ել. Ո՛վ առ հայրն քո երկնաւոր, և կատարեցեր զինուածս քո կատարեցեր յերկրի, և զհաւատոն քո պահեցեր, եղիցին խնդրուածք քո կատարեալ վասն ամենեցուն զոր խնդրեցեր: Այլ եթէ հանդիպեսցի որ ՚ի պատերազմի կամ ՚ի նեզութեան, և ինքեան գքեզ յամենայն սրտի՝ խոստովանեսցին ընդ ինքեանս. և ոյք ծանրացեալ լցին մեղօք և դիմեսցեն ՚ի առաջի քոյ, ընդ ծանրութիւն մեղաց նոցա: Եւ զայս առացեալ և խոնարհեցուցեալ զգլուխն իւր առաջի գահինին, և ձգեալ զգեստն՝ եհատ զգլուխ նորա. և բերեալ զանօթն առնոյց նորա՝ ժողովեալ զարիւնն, առեալ և զգեստն գլուխ նորա խնդալով և

ուրախութեամբ առեալ զնշխարս սրբոյն ՚ի տեղին ուր հրամայեաց երանելին։

Կատարեցան ընդ այգ նահատակութեան Ձիմնաւոր ելն Քրիստոսի Եւզոքսեայ, յամենայնն հոկտեմբերի ԻԹ, յաւուր կիւրակէի։ Եւ եկեալ կնոջն իւրոյ Մանուանայի՝ անարգէր զաստուածն և զքրիստոնեան և զդաստուրն. և լսեալ բռնաւորին՝ ասէ ցնա. Վասն այնորիկ զայդ առնես, զի և զոս վկայեացիս, և պատուես ցկին ոակերք քո յանմիտ քրիստոնէից. երդուեալ յաստուածն ամենայն և ՚ի փառս նոցա՝ ոչ լքից զզխափաքուճն սրտի քո։ Եւ յետ աւուրց հնգից ՚ի վերայ անցելոց, երևեալ սուրբն ամուսնոյ իւրոյ, և ասէ. Ընկեր իմ և զուգակից, զՄակարիոս յղեա վաղվաղակի յառաջարան իմ, զի ունիմ ինչ ասել նմա։ Եւ յարուցեալ առաւօտուն կոչեաց զնա, և ասէ. Որդեակ իմ Մակարիէ, առ քո յառաջարան իւր կոչէ զքեզ. և նա ուրախութեամբ եկեալ յառաջարանն, և տեսեալ զնա ոմանց ՚ի դասուց զինուորացն՝ կոչեալ զնա տարան առաջի դաստուրին, ասեն. Եւ սա ընդ Եւզոքսի իշխանութեանն էր։ Եւ տեսեալ զնա բռնաւորն՝ ասէ ցնա. Յորմէ ազգէ էիցես։ Մակարիոս ասաց. Քրիստոնեայ եմ։ Իշխանն ասէ. Մի յիմարիր և մի փոխելանար. այլ հաւատա յաստուածն և ապրեցիս։ Սուրբն ասաց. Ես հաւատացեալ եմ և հաւատամ՚ի Թագաւորն մեծ և յԱստուածն և յՈրդին և ՚ի սուրբ Հոգին, և յուսացեալ ՚ի մի աստուածութեանն զի յաղթեցից Թշնամւոյն. և ակն ունիմ հասանել կոչողին իմոյ վաղվաղակի։ Եւ լսեալ զայս դաստուրին Պոնտէնդիանոսի, հրամայեաց սրով կատարել. և ընկալեալ սրբոյն Մակարիոսի զվախճան սրով արեամբ, յամենայնն հոկտեմբերի, ՚ի փառս և ՚ի զօրեղին Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Եւտոքեայ և կնոջ և որդոց նորին։

Յաւուրս երկրորդի Մարկիանոս կայսերն, եղև նորա զօրավար ոմն նշանաւոր յոյժ, կոտովն առ պատերազմունս, և փորձ առաւել ևս յոլս եղջերուաց և այծեմանց և մանրագունիկ չորքոտանեաց, և անուն նորա եւտաղիոս, և անուն կնոջ նորա Մարիանէ[1]։ Եւ էին նոցա երկու որդիք, առաջինն անդ վեցից և երկրորդն չորից. և այրն ցանկալի էր ամենեցուն, և էր բառացի յոյժ ամենայն պաճարանօք, հօտիւք և ծառայիւք վերամբարձեալ քան զԹիւն, ձիօք և ուղտուք. քանզի՝ ի սեղան նորա երեք հարիւր սկտեղք արծաթիք պայծառ՝ ի սպասաւորութիւնն նմա. և ինքն էր հեթանոս պաշտամանէ, ձեռնկալու ամենայն քաղցելոց և վիրաւորելոց. քանզի զմերկան հանդերձիւ զգեցուցանէր, զքաղցեալն կերակրէր, զդատապարտեալն յատեանս տանջողացն ինս բազում անգամ առնոյր յԸնտանութիւն իւր, և զծառայս քառասուն անց՝ ի վերայ անցելոյ՝ յազատութիւն առաքէր հանդերձ պարգեւօք, և ամենայն կարօտելոց տեսուչ էր և հոգատարութիւն առնէր։ Զսա աստուածային այցելութիւնն ոչ կամեցաւ ընդ լծոյ ծառայութեան արկանել՝ ի կեանս յայսմիկ, այլ պատահել ազատութեան ամենատուրք մկրտութեանն Քրիստոսի։

1. Ցօր. Մոփանէ կամ Մոսքիանէ։

Իսկ ՚ի միում աւուրց ելեալ Եւստաթէոս ՚ի լեառն դիտել զհովիտն, եթէ կենդանեաց ոք գայցէ: Իսկ նոյն ինքն Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝ որ ըզկերպարանս ծառայի էառ և մարդ զինքն եցոյց, զաստուածութիւնն ծածկեալ ՚ի մարմնի սրբոյ կուսին այսպէս և այժմ Տէր Յիսուս Քրիստոս, եղջերու զինքըն եցոյց Եւստաթէին, որոյ եղջիւրքն միմեանց էին, և ՚ի մէջ եղջերացն երևեալ օրինակ խաչին լուսով կազմեալ. և յերևելն Եւստաթէի՝ փախչէր յեզր հովտին, անցեալ ընդ անտառն և վազէր, ՚ի բարձրը սպառաժաց վայրի ՚ի վերայ ելեալ: Եւ տեսեալ Եւստաթէի զկենդանին առաւել զեղեցիկ և բազմազան յոյժ, մանաւանդ վասն տեսլեան եղջերացն, իբրև նահատակութիւն կամեցաւ ցուցանել պայծառազոյն սիմէոնէ, մտեալ հետևէր ընդ մէջ հատանել զվարսատար անտառն, որպէս թէ յառաջել ընթացին անյայտ լինել Եւստաթէոս երևեալ զվնասուցանն որոտոգացն և զօրականացն: Ա՛լ և Հոգին Աստուծոյ մարտութեան զՀետ երթալով՝ յայլոցն ՚ի բաց առաւ. որպէս առանձինն դիտել Եւստաթեայ զառաջնիկայն: Եւ յորժամ հեռացաւ ՚ի ծառայէին յանդիմանելն տեղւոյ, և ՚ի բազում ժամն Թաքչէր ցուցանելով զինքն կենդանին, ՚ի մերձանալ առնն՝ կամէր սրով հարկանել զնաւակուշտ եղջերուին. և յանկարծօրէն երևեալ հեռագոյն կենդանին յանընդհեալ վայրի: Յայնժամ ձայնէր առ Եւստաթէոս ասելով. Ով Եւստաթէ, զի հալածես զիս, զի վասն քո եկի և ՚ի քէն հալածիմ: քանզի և Սօղոս երբեմն որպէս և դու՝ հալածէր զիս, այլ ես հալածեալ՝ ՚ի ծոց իմ ընդունեցի զհալածիչն. և այսպէս և դու այժմ; ով Եւստաթէ:

Եւ Եւստաթէ յերկիւղէ եղեալ անկաւ յերկիր: Իսկ փոքր մի ժամու անցելոյ յինքն եկեալ՝ վերակացն դնեաց առեալ թէ ով է որ խօսէին: Եւ ահա յեղջերացէ եղջերուէն ձայն լսելի եղև նմա. և էր երբեմն զի առեալ Եւստաթէոս զեղջերն պատրիք լի, և ՚ի մէջ եղջերացն Քառապայթաձև լուսաձաձանչ խաչ մարգարտով. և ասէ Եւստաթէոս. Ցմէնջ է ձայնս զոր լսեմ, յայտնեա ինձ զքեզ որ խօսիս ընդ իս: Յայնժամ զուարճութիւն խաչին ՚ի դէմս մարդոյ առեալ՝

և նոյն ինքն դէմքն բարբառէին առ նմա. Ի միտս առ, Եւսաեթիէ, քանզի ես եմ՝ յորժամ զաշխարհս մաղձ դոյն ազապաս իմացեալ լինիլ ստեղծանել. յորժամ ջուրք՝ ի ջուրց մեկնիլ, և ցպղպջակ հաստատուն եանալ մածուցանել զնոսեալ. յորժամ ջուրն Ովկիանոսի վարատուր օդով զօրանայր, արեգակինատուն եամբ և լուսնատուն եամբ, այլնաբոլորք լուսատուրա-կան գիշերոյ. յորժամ ջուր պնդոտնայեալ սանձս ընդունիլ. յորժամ ամենայն ծուխն օդային կապ-ուեցեալ, և ամենայն ապիք չորքոտանեաց և սողից, ղուղակաց և ամենայն ջրային կառավարեալ ընդ անձանապարհն հետանգիլ. յորժամ Ադամ՝ ի չորից տարերց չինեալ առ հանդերձեալ գլուխ քարոզու-թեանն. յորժամ և կինն արտաքս եկեալ յառնէն յարուն կարդացեալ, յաղագս հանդերձեալ գալըս-տեան որդեգրութեան. վասն զի ես՝ ածումն Տարգ-մանի ըստ ընդարձակութեան լեզուին Գամրոց՝ ես եմ Աստուած, որ մարմնացեալ մարդ եղէ՝ Յորժամ նոյ զառագանն կազմէր ամենայն ազգաւն չար՝ ի հաշտութեան աշխարհի, որ ցուցանէր զհանդերձեալ փայտին վե-րացումն. յորժամ Աբրահամ զորդին մատոյց Աս-տուծոյ՝ և զառն փոխանակ տուաւ, որ էի ես. յոր-ժամ զեղեցկութիւն զինաց կենդանագրեալ՝ ան-հասատ ստացուած. յորժամ պարզև մարդկան զը-լայն զժոխոց առաջնորդ մահու. յորժամ տան հե-թանոսաց կռապաշտութիւն. յորժամ Հնմարտութիւն հաւատոյ ես եմ՝ խոստիս, ով Եւսաեթիէ՝ Լուր և երկրպագ բա-նին, վասն զի՝ ի վերայ մարդկան՝ ի բնութեանն իւ-րում առեալ և ազգաւն չար՝ ի ծփանս վարուց այ-սոցիկ, և՝ ի վերայ քո կարդեալ է և ոչ անցցէ՝ Այ-սոցիկ բարձրացար յիւր ստացուածոյ և մեծութեան, և պարտ է քեզ խոնարհել յառաւել մեծութենէդ, զպակս իմ է տեսեալ յիւրումն զկնի քո, և զարձեալ բարձրանալ քեզ հոգւով. և որ խոսիդ ընդ քեզ կա-տարել՝ Այ վասն զի քաղաքավարութեամբ կազմե-ցան վարք քո, ասա, թէ այժմ կամիս խոնարհել, թէ յետ այսոցիկ, քանզի պարտ է լինել ամենայն գրե-ցս՝ ի վերայ քո։

Եւ նա՛ի գողանն եղեալ ասէ. Սկսայեմ զբարեբար նախանձումն[1] քո, զի եթէ ոչ ինչ յայտանէ զինեւ անցցէ, թողացո միւնչեւ ի վաղիւ, որպէս զի պատուեցից աղախնոյ քումմ կնոջն իմում, և զոր ինչ առաջ գէ արասցուք. սկսայեմ զքեզ անսա ինձ առ և պատուեցից քեզ: Ասէ ցնա տեսիլն երկրորդ անգամ. Եթէ վաղիւ գաս այսր, նախ լուացիր ըստ օրինի քրիստոնէից՛ի քահանայէ, և յետ այնորիկ տեսցես զերեսս իմ՛ի տեղւոջս յայսմիկ:

Եւ իջեալ՛ի լեառնէն երեկոյի եղելոյ՝ սկսաւ պատուել զտեսիլն կնոջ իւրում: Եւ եղև իբրև կատարեաց պատմել զտեսիլն, աղաղակեաց կինն ձայնիւ մեծաւ և ասէ. Չնաչեաքն տեսեր, տէր իմ, զոր քրիստոնեայքն պաշտեն. և առաւել ևս աղաղակելով ասէր. Որդի Աստուծոյ, ողորմեաց ինձ և երկուց տղայոց իմոց: Եւ՛ի հայցանել առն իւրոյ՝ պատասխանի ետ ասելով. Յանցեալում գիշերիս տեսի զտեսիլդ զայդ ըստ որում պատմեցեր, նա և Քրիստոս. այլ կամօք իւրովք այսպիսի ձևով երեւեցաւ քեզ, զի առանց մկրտութեան նորա եմք: Եկ այսուհետև՛ի գիշերիս յայսմիկ գաղտաբար մկրտեցուք, և վաղիւն երթեալ ասացես ցնա. Տէր իմ, զի եթէ ոչ անցցէ գրեթալքն, այժմ լաւագոյն է մեզ նուաստանալ մինչ գոյ՛ի մեզ գօրութեանն, քան զի լաւագոյն է մեզ ելանել՛ի հրոյ և ակնունել ջրոյ, քան թէ մնանել՛ի ցօղ և ակնունել բոցոյ:

Եւ անցանելոց առաջնոյ պահու գիշերոյ, առին զերկուսին տղայսն և երթեալ առ քահանայն մկրտեցան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Իսկ եւստաթէա՛ի մկրտութեանն եւստաթէա կոչեցաւ. իսկ կինն նորա կոչեցաւ Աստուած — հաւատուհի. իսկ տղայքն՝ անդրանիկն կոչեցաւ Ագաթոս և կրտսերն կոչեցաւ Աստուած — հաւատացեալ: Սկ ցնոսա քահանայն. Աստուած էղիցի ընդ ձեզ, և ամենայնի ընդ ձեզ յաղթայութեանն. քանզի գիտայ եթէ ձեռն Տեառն է՛ի վերայ նոցա: Բայց յոժամ հանգիցէք՛ի դրախտին փափկութեան յիշեսջիք զհոգի Յոհաննու:

1. Յօր. նախնամարիխանդ:

Եւ իբրև այպ եղև, առեալ Եւսաթէոս Հեծեալս
եւ՝ի լեառնն. և իբրև մերձեցաւ՝ի տեղին, իբրև
պատշաւանօք արձակեաց առ՝ի յինքեանէ՝ի կողմանէ
ուր՝ի դէպ էր նմա տեսանել զտեսիլն։ Եւ տեսանէ
զօրինակն լատ որում և զառաջինն. և անկեալ՝ի վե-
րայ երեսաց իւրոց գոչէր ասելով. Ողջեմ զքեզ, զի
դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ, և այժմ
եկի որպէս մաղթեցի քեզ առաքելոյն Տեառնէ,
զի այժմ համբերեսցուք առաջիկայ տառապանացն՝
քան՝ի ժամանակի ծերութեան։ Եւ փոխեալ
Տեառն իւրոյ ընտանեգոյն[1] փառօքն, և ասէ առ երա-
նելին Եւսաթէոս. Երանի է ձեզ, զի զլուացումն ան-
ապականութեան իմոյ զգեցայք[2], և ընդդիմակացին
ձերոյ յաղթեցէք։ Եւ յաւուրս յայսոսիկ յերեսին՝
եղիցի ձեզ այդ ամենայն. զգոյշ լեր այսու հեառև, մի
գուցէ եւս՝ի սիրտս ձեր քան հայհոյութեան։ Քան-
զի յորժամ ածիցէք՝ յերկրորդումն եկից առ ձեզ և ա-
ռից զձեզ։ Եւզայս ասացեալ Տեառն վերացաւ յերկինս։

Իսկ նախ քան զինջանելն Եւսաթէի, մեռան նորա
եօթանասուն ձիք, և սենեկապանքն և զինակիրքն երե-
սուն զոյգք, ծառայք և աղախնեայք։ Իսկ վաղիւն օ-
րդոյ ուրեմն եկեղեցի զամենայն հօտս նորա ապառեաց.
իսկ՝ի միւսում աւուրն մինչ դեռ էին նոքա՝ի պարսպի
բուրաստանին զբօսանալ ինչ՝ կործանեցաւ բարձրա-
բերձ ապարանքն նա։ Եւ՝ի միասին դիմեցին անդ ա-
մենայն բազմութիւն յարիշտակողաց և յարիշտակեցեալն
զամենայն ստացուածսն Եւսաթէի, որպէս զի ոչ ևս
ինչ մնաց քոյց՝ի հանդերձիցն զոր զգեցեալ էին՝ի
ժամուն յոյնսիկ։ Այլ և Թագաւորն էր ուղևորեալ
՝ի Հռոմապարկն Պարսից, և ուրախացեալ մեծապէս
և որ ընդ նմայն էին, ասէին եթէ անհնարին է լինել
իբրև զբօրաւարն մեր Եւսաթէոս և իբրև զկին նո-
ա և զերկուս զորդիսն։ Իսկ կին նորա վարանակատ
խոհրդով վարանեալ՝ ասէ ցայր իւր. Լուր ինձ այսու-
հետև, տէր իմ, եկ առ զմեզ և զերկուս տղայքս մեր
և փախիցուք՝՛ի դիմաց աշխարհիս այսորիկ. քանզի
դահատինք եղեաք յառաջագոյն ծանօթից մերոց։ Եւ

1. Յոյ. ընտանեգոյն։ 2. Յոյ. պեղոտ։

'ի կիշերի եդեալ զերկոսին տղայն 'ի մախաղի՝ զընդացին դիմեալք յԵգիպտոս. և արարեալք երկուց աւուց Ճանապարհի մերձեցան 'ի ծով և փոթային նաւել։ Եւ գտեալ նաւավար յապգէն Ճանապհայ, և նաւարկեալ գնացին։

Եւ էր կինն Եւստաթէի զեղեցիկ դիմօք և բարի տեսլեամբ յոյժ։ Եւ խորամուտ եղեալ նոցա, հարաւ Ճանապհայն 'ի կնոջն Եւստաթէի, և խորհէր 'ի միտս իւր՝ Թէ յորժամ գնասցեն 'ի նաւէ աստի, փոխանակ վարձու ոչ տայց զկինս առն իւրում, այլ եթէ ընդ դիմացի լա՝ զսա խորտոյզ արարից։ Եւ յեղանել նոցա 'ի նաւէն, ոչ կամեցաւ 'ի բաց տալ նմա զկինն։ Եւ սկսեալ ընդդէմ առնել Եւստաթէի, ակնարկեաց Ճանապհայն մերձակայիցն իւրոց, 'ի խոն խորհուրդ ընկենուլ զնա։ Եւ գիտացեալ Եւստաթէի զդաւն յապգէն ճանապհայն՝ զոր ինքեան՝ յոչ կամաց 'ի բաց եթող զկինն իւր։ Եւ առեալ զերկուս տղայսն եդ գնաա 'ի մախաղի, և բարձեալ գնաց լալով և հեծեծելով առաքն. Վայ ձեզ տառապելոց, զի մայր ձեր ձեզ առ առն այլազգւոյ, և 'ի ժամանակի ցասման ուռէ գնա Ճանապհայն։

Եւ գնացեալ բազում Ճանապարհ եհաս 'ի գետ ուրեմն. և վասն սաստկութեան ջրոյն զարհուրեցաւ զերկոսին 'ի միասին անցուցանել. և բարձեալ զկրտաբերատոյն մանուկն 'ի վերոյ ուսոց իւրոց, զմիւսն առաւտ թողոյր. և փութայր դառնալ զի առցէ զընկերն։ Եւ իբրև դարձաւ նա և եհաս 'ի մէջ գետոյն, զաստուածն յաւիշատակեաց առիւծ և զմիւսն գայլ։ Եւ տեսեալ Եւստաթէի փետէր զհերս գլխոյ իւրոյ և խորհէր ընկենուլ կինքն 'ի գետն. իսկ նախախնամութեամբն եղելոյ՝ եւ արտաքս 'ի ջրոյն։ Յայնժամ առիւծն անցեալ ընդ գետն զդէմն ուղղեալ գնայր ունելով ոզջ զմանուկն 'ի բերանի իւրում. և տեսեալ հօտ վուաց ոմանց և Ճեպուծն արարեալ առիւծուն, և վասն կամացն Աստուծոյ 'ի բաց զերծուցին հովիւքն զմանուկն 'ի գազանէն։ Իսկ զմիւսն բարձեալ գայլուն, տեսին ոմանք արտաւարք 'ի դաշտի, և ընթացեալ հանդերձ Ճեպով և շանբք, Թափեցին 'ի գայլոյ անտի. և խրատանչիւր հովիւքն և երկրագործքն 'ի միջէ գեղջէ գիտեցան։

Իսկ երանելին Եւստաթէոս գնայր հեծեծելով, և աղէխաղչեալ՝ի հեծմանէն ասէր ասէպ նաւէր. և յոյժ վտանգեալ յարտասուացն՝ զօդս սեռանէր խաւարել, նկատելով միշտ առաջի իւր զդէմն կինոջն և զորդւոցն, և զմտաւ ածեալ զնոսա զոչէր ասելով. Վայ ինձ, երբեմն էի ծառ ծաղկեալ, և այժմ թարշամեալ, զի պատկ զկնոյ իմոյ՝ի ծով զերեցաւ և պատուն գազանակուր եղև, դրախտն նուսպեաց և տունկքն ցամաքեցաւ. վայ ինձ, զի հաստատուն անհաստատ եղէ. վայ ինձ, վայ ինձ զզօրաւորս առանց զօրականի. վայ ինձ, վայ ինձ, որ երբեմն թագաւորեալ և այժմ անարգեալ, որ երբեմն իշխան զօրու և այժմ օտարատեղի, որ երբեմն բնակարան՝ շրինք միացի, շրրոտիլ եղեալ՝ միայն գաւազ։ Բայց դու, Տէր իմ, մի վաղվաղակի զնս արմատախիլ առներ վասն հեծութեանս զոր ունիմ, և ապականեցայս. ամենամեղ ոչ կամ՝ սուրբ եկեցէ առ քեզ. քանզի յիշեալ զՅոբ ոչ այսպէս բայն՝ համբերեմ հեծութեանս, այլ Յոբ ոչ այսպէս հեծութեան տանելի եղև. վասն զի զպատուղ որովայնի իւրոյ գիտաց ուր թաղեաց. զի թէ զպատուղն կորոյս՝ սակայն զոսոս կինոջն սեռանելով միխիթարէր. խակ ես տառապեալս յամենուստ արմատախիլ եղէ, և փոքր ինչ կայծակն ի զամբարել ճնոյն, և հողմոյ մըրկի շրջեալ՝ ահա պակասել ակն ունիմ։ Բայց մի զչարացիս, Տէր զօրութեանց, շատ խօսելոյս նմոյ առ քեզ. վասն զի յաւուր վարանիմ, և ակամայ գամ առել առ քեզ զանապատեհն. գիտակակից լեր ինձ, Տէր իմ, քանզի զոր ինչ ոչն ունէի՝ առի, խակ որ եմն՝ի քոյ գերծոյց, ընդունայն այսուհետև տրամեալ ես մնալիմ։ Տուր ինձ այսուհետև, Տէր, հանգիստ յամենայն ներելութեանցս, զի մի ակամայ անտեղի բանս առացից ընդդիմանալով քեզ, և արտաքոյ հօտի քո գտեալ՝գանապատ եղէց։

Եւ զայս առացեալ եհաս՝ի գետ մի կոչեցեալ Բաւիան, և աղաչեցեալ զբնակիչս աներոյն, պահէր զալը տուզ և զանելոցդ առ Ներսէսոսն վարձատրութեամբ։ Խակ որպէսզի նորա մտան՝ի գետ մի ոչ գիտեմ կիմն նորա եհաս յաշխարհն իւր. և այնպիսի ընտ

եղև ՚ի վերայ ինոջ նորա, որպէս զի ոչ ևս մերձենալ պղտոյն ՚ի նմա:

Եւ եղև յետ աւուրց ինչ յարեաւ այլ թագաւոր, և խնդրեալ լինէր զօրավարն Եւտաթիոս և ոչ գտաներէր: Եւ առաքեաց յամենայն քաղաքս և ՚ի գեօղս, ասացեալ նոցա եթէ որ ոք ածցէ ինձ զզօրավարն Եւտաթիոս, յաւելում նմա անուն ասն Հնդեատասան: Եւ երկոտք ոմանք՝ միոյն Ագաթոքս անուն, և երկրորդին Ագակիոս, որք երբեմն ընդ իշխանութեամբ նորա լեալ էին, հասին ՚ի գեօղ մի՝ յորում էր Եւտաթիոս: Եւ տեսեալ զնոսա Եւտաթէ՛ ՚ի բացուստ, և գնացեր պատ Հառանաւոք զբօսանալոյ մերձ առ նոսա. և ծանուցեալ գնոսա՝ յիշեաց զառաջին նեղութիւնն իւր, սկսաւ տրտմել, ազօթէր և ասէր. Տէր զօրութեանց, Աստուած Հարցն մերոց, գտանէ յաւուրն գիտութեան Հրամայեա ինձ տեսանել զչծակիցն իմ; և զիշատակել տղայն իմ որք վասն իմոյ Թշուառութեանս գաղտնակուր եղեն: Տուր ինձ, Տէր, յոլովմանէնդ քումմէ, որպէս զի այժմ մոռացայց, և ՚ի Հանդերձեալ աւուրն յարութեան տեսող լինել անդադանցն իմոց և էլեցոյն յերանոյ իմոց: Եւ լսեր ձայն յերկնից որ ասէր. Քաջալերեաց Եւտաթէոս, զի ՚ի մերձ ձակաց ժամանակս տեսցես զկին քո և զերկտասին որդիան քո. խակ ՚ի յարութեանն՝ բազմաց օգնական պատճառ գտաներէր քոյ և ամենայն ազգի քրիստոնէից:

Եւ նայեր նա դիտել զտեսիլն ՚ի վերայ վիմաց: Խակ տեսեալ զզօրականան իւր ՚ի բացուստ եկեալս, և ծանուցեալ զնոսա եկաց ՚ի Հանդերձէն, տեսանել նոցա: Եւ եկեալ նոքա ասեն ցնա. Ողջախոհ: Խակ նա ասէ. Խաղաղութիւն ընդ ձեզ: Եւ նոցա ասացեալ ցնա. Գիտե՞ս զոք Եւտաթէոս կոչեցեալ Հանդերձ կնա և երկուս որդեամբ, առ մեզ և ասացուք քեզ պարտեա: Խակ նա խուսեալ՝ ոչ զօրեր տալ նոցա պատասխանի. և յետ այնորիկ ասէ. Ո՞վ գիտացի այդպէս ոմ զոք առ, բայց զուք եկայք Հանդերձուք փոքր մի՛ ՚ի տանն յորում էս պանդխտանամ: քանզի և ես ինքն օտար եմ, զի Թերևս զտից տակաւ մի զինն և տայց ձեզ յընծայութիւն վասն ասոյդ: Եւ երթեալ ասէ ցտէր

տան իւրոյ. Ծանօթք իմ՝ են՝ ի Հանապարհի, բերցես
նոցա կակղապոյն կերակուրս, զի նշանաւոյք առ մեզ
մնին, և զամենայն հատուցից քեզ՝ ի ժամանակի վար-
ձատրութեան իմոյ: Եւ յոժարաբար իսկ ուրախու-
թիւն արարնոցա տանուտէրն: Եւ՝ ի բազմէն իւրեանց
խառնէր նոցա գինի, իսկ Եւստաթէոս եփեալ ջուր
մատուցանէր. և յելանելն իւրում լայր, և լուացեալ
զդէմն սպասաւորէր դարձեալ. և ունէր նշան՝ ի պա-
տերազմի վիրաւորեալ սակ՝ ի պարանոցին: Եւ մինչ-
դեռ սպասաւորէր, Անտիոքա՝ մինն՝ ի զօրականացն
տեսեալ զպարանոցն նորա, ՝ի վեր վազեաց լալով և
համբուրեաց զԵւստաթէոս. զմտաւ ածէր Անակիոս
թէ զինչ է այս. իմացեալ և տրա զինչանն, վազվա-
զակի գիրկս արկեալ համբուրէր նոյն օրինակաւ. զի
և ընտանիքն նոցին ձևով համբուրել և լալ ընդ նոսա,
որպէս զի ամենայն գեօղն անդր ընթացեալ ասէին,
թէ՝ Ջինչ է այս: Եւ փոքր ի յաճախել զինքեանս՝
հարցանէին վասն կնոջն և երկու որդւոցն: Իսկ նա
ասէ ցնոսա. Ո՛չ գիտեմ ես զԵւստաթէոս, և ոչ ես
ինքն եմ, զի աշխատ առնէք զիս: Եւ նորա ասեն ցնա.
Դու ես տէրն մեր. և դարձեալ պատմէին բնակչացն
յաղագս քաջութեան նորա: Իսկ նորա լալով ասէին.
Եթէ որպիսի այր վարձկան մեզ եղև. և եկեալ՝ ի
ծովեր իջանէին ազաչելով զնա: Իսկ զօրականքն զԱն-
տիոքան Թագաւորէին մատուցանէին, և՝ ի հարցանե-
նոցա վասն կնոջն և որդւոցն, ասէր Թէ մեռան:

Եւ նոցա առեալ զնա և զգեցուցեալ հանդերձս,
դիմեցին՝ ի Հանապարհս. իսկ որք՝ ի տեղիսն էին լա-
լով յուղարկեցին զնոսա, և ինքն ազաչելով արձա-
կեաց զնոսա: Եւ իբրև մերձեցան առ Թագաւորն, ե-
տես զնա Թագաւորն և ասէ, Եթէ՝ Որպիսի Հանա-
պարհ գնացեր, Եւստաթիէ, և զինչդ մեզ անյայտ
եղեր: Իսկ նա սկսաւ կարգաւ պատմել նոցա, և ամե-
նայն սինկղիտոսքն լալով ընթանային՝ ի լսել: Գանգի
պատմէր և յաղագս կնոջն Թէ որպէս՝ ի ծովէ ճնաց,
և կամ զինարդ որդիքն գազանակուռ եղեն, և որպէս
ամենայն նեղութեանցն Հանդերեցաւ: Եւ եղև ազա-
զակ մեծ. և մխիթարեալ՝ ի Թագաւորէն ածաւ զգ-
ուանարն ըստ առաջին զօրավարութեանն. և տեսեալ

թէ ոչ էին զօրք ժողովեալ՝ հրամայեաց նորընտիր լինել։ Եւ երկուք ոմանք էկին ՚ի գեօղ մի ուր էին սրճնեալ ոտիք Եւստաթէի, և եղեն առ նմա։ Եւ էին զանազան դիմօք իբրև զՀառապայթս արեգական, խօսողք և ամբիծք ամենևին։ Իսկ գեղջկինքն առան զեցին զնոսա իբրև զօտարս եղեալս, և առեալք երեսուն տաղանդ ՚ի գինան։ Եւ յորժամ առին զնոսա՝ առաջի կացուցին Եւստաթէի, և ՚ի հազարաց եգիտ Եւստաթէոս հաձոյս ինքեան ամենայն իրօք, զոր ինքեան զինակիր կացոյց, և ՚ի վերայ սեղանոյ իւրոյ և սենեկի, և սիրեաց զնոսա յոյժ. վասն զի սովորութիւն որդեծնութեանն պահանջէր զՀայրենի անճառկին։ Եւ ժողովեալ զամենայն զօրականան հրաժարեալ ըստ սովորականին ՚ի Թագաւորէն՝ գնայր ՚ի պատերազմ։

Եւ անցեալ ընդ Խղխնացիան կօտորէր, և անցեալ ընդ[1] Դանոբ, եկին ՚ի ներքսագոյն բարբարոսաց. որպէս զի նախանձութիւն Քրիստոսի ածէր զնա ՚ի տեղին յորում բնակեալ էր կին նորա. իսկ զօրավարն բնակեալ էր ՚ի խորանի հնոջ իւրոյ։ Իսկ ՚ի միում աւուր երկու եղբարքն չքնեալ ՚ի պարտիզին ՚ի մէջօրէ որ էր մերձ ՚ի խորանն, և նստեալք ընդ ծառովն պատմէին զտղայութենէն. իսկ մայրն նոցա նստէր ՚ի պատուհանին յիշատակ ունելով անցեալսն հեծեծելով, և զաղտաբար ունկնդրութիւն առնէր առացեալսն։ Բանզի առէր երէց եղբայրն ցկրտասերն, եթէ՝ Ոչ այլ ինչ զտղայութենէն յիշատակ ունիմ, բայց միայն զայս, զի զՀայր իմ գիտեմ եթէ զօրական էր, և մայրն իմ գեղեցիկ յոյժ եղեալ, և միւս եղբայրն իմ փոքրիկ խարտեաշ հերոք. իսկ հայրն մեր եդեալ զմեզ ՚ի մանկատղի, մօրն զինի գալով՝ եւ ՚ի նաւ մեօք հանդերձ և մայրն։ Իսկ յետանեալն մեր՝ մայրն ոչ եւ ընդ մեզ. ոչ գիտեմ թէ իբր ՚ի ծովեն մնաց. իսկ հայրն բարձեալ զմեզ հեծեծելով գնայր։ Եւ հասեալ ՚ի գետ ուրեմն անցոյց զմիւս տղայն, աստուստ զիս Թողոյր, և հանդերձեալ նորա գառնալ, յաւիշատակեաց զիս առաջ, յորմէ Թաւիեցին զիս հովիւք ոչխարաց, և

1. Յոր. Ընդ առաջ։

ասայ՝ի գեօղն յորում և դու գիտես. բայց յաղագս հօրն, և միւսոյ մանկանն ոչ գիտեմ եթէ ջինչ եղեն: Եւ վաղվաղակի՝ի վերայ վազեաց եղբայրն նորա լալով և ասէ. Ջօրութեամբն Քրիստոսի, եղբայր քո եմ, քանզի և որ զինն մուծանէն, առէնն Թէ՝ի գայլս զերծաք զքեզ. և գիրկս արկեալ համբուրէր զնա: Եւ լսեալ մօրն նորա խռովեցաւ՝ի սրտի իւրում յոյժ. զի գիտայ զորդիսն իւր գոլ, և տեսեալ զերիտասարդսն Թէ որպէս միմեանց գիրկս արկանեալ լային, քաղձայեալ սրտիւ ոչ ևս կարէր արգելուլ զինքն՝ի լալոյ մինչև ցերեկոյ:

Իսկ՝ի վաղիւ անդր ժուժկալեալ, առաջի գայր եւ առաձէի առելով. Աղաչեմ զքեզ, տէր իմ, զի ես Հռոմայեցի եմ: զերծո զիս՝ի գառանն իմ Հանելով՝ի տեղ ւոջէս: Եւ զայս առացեալ նկարէր զինչան առնն, և ասէ ցնա. Աղաչեմ զքեզ, տէր, մի գարշիր յաղախնոյ քումմէ, այլ պատմեա ինձ վասն՝ի սկզբանէ վարուց քոց. մի գուցէ դու ես՝ որ կորուսեր զիս. պատմեա ինձ զգօրութիւն Տեառն Քրիստոսին քո: Եւ լսեալ նորա յաշխարհին բաղբաղոսաց զՔրիստոս անուանել՝ զմտաւ ածէր առնել Թէ իբրև զմի ոք՝ի Հռոմայեցւոց ուսեալ է զՔրիստոս: Եւ փոքր ինչ փոյթ առեալ պատմել. և մինչ նա բան մի՝ի պատահելոյն առէր, կինն յառաջակայեր պատասխանի առնէր՝ի դիտաւածոյն. և՝ի սկսանել առն առնՙ Թէ զիարդ նաւավարն յաշխատակեաց գկինն իւր, նա նորա զպատմութիւնս արդեցն առնելով յաղագս յաշխատակութեան գազմացն պատասխանի առնէր: Եւ լսեալ եւառաձէի՝ առ. Երդմնեցուցանեմ զքեզ՝ի Քրիստոս, ոսոյի զպատահումն իմ գիտացեր: Եւ նա ընդացեալ և անկեալ առ ոտս նորա ասէ. Եա եմ առաքեալ կինն քո, եմ Յովսուած — հաւատամ՝ի, մի բարկանար՝ի վերայ իմ, տէր. քանզի որ երեւեցար քեզ՝ի լեառն տեսլեամբ եղջերուի, նորա ջնարհիւ անաւրէնեալն եմ ես յայլազգւոյն որ յաշխատակեացն գիս: Եւ նա լալով ասէ. Ո՛չ նեղասիրեմ և՛ ինձ վասն այնորիկ. օրհնեալ է Յովսուած որ առնեայն ուրեք մերձ է առ իս: Իսկ կինն ասէ. Գիտացէր վասն որդւոյն Թէ ոչ: Եւ նա ասէ. Այոյն Թէ

զաղանակուր եղեն մանկունքն, և այժմ ասես Թէ զիտացէր վասն որդւոցն քոյոց: Իսկ նա ասէ. Սոքա երկոքեան զինակիւքս քո զեղեցիկք՝ մեր որդիքն են, այլ և ոչ ինքեանք իսկ զիտէին մինչև ցայժմ եղբարքը միմեանց լինել. քանզի լուայ երէկ՛ի պարտիզին միմեանց պատմելով: Եւ կոչեցեալ զնոսա հարցանէր Թէ ւիբր մնայք. իսկ նոքա կարդաւ յիշատակ առեալք, խնացուցանէին նոցա զպատահումնն: Եւ ձեռն՛ի ձեռն երկայնանէին նոցա զպատահումնն, և անկեալ զարտասուցաւ միմեանց լային մինչև ցժամն երկուս, մինչև ամենայն զօրացն ժողովեալ և լալ ընդ նոսին յաղագս զիւտի ծանօթութեանն:

Եւ ոմն մեծ կատարեալ՛ի վաղիւ անդր առ Աստուած աղաղակէին, կոտորելով զայլազգիսն ամենեւեան: Եւ զարձեալ մեծաւ յաղթութեամբ հասին՛ի Հռոմն: Եւ յառաջ քան զնորա զառնալն՝ մեռաւ սիրելի Թագաւորն իւր, և եղև այլ Թագաւոր անուն Տրայիանոս՝ որ ոչ գիտէր զՔրիստոս, այլ և ոչ զԵստուածն. և գիտացեալ Թէ զՔրիստոս անուանէ, հրամայեաց ածել զնեստորէս, և զկին նորա և զերկուս որդիսն՝ մոռանել՛ի հանդէսն. և այնպէս առնծամարտիկ հրամայեաց նոցա լինել: Եւ եկեալ առնծուն երկիր պագանէր նոցա, և առէր մարդկօրէն ձայնիւ. Աղաչեմ զձեզ որ արժանիք էք արքայութեանն Աստուծոյ, մի ինչ զայրանայք, զի ակամայ հասի առ ձեզ. և զայս ասացեալ եւ յոտսարկէին: Եւ ժողովէր ամենայն բազմութիւնն հաւատացեալոցն՛ի Քրիստոս: Իսկ Թագաւորին զայրացեալ հրամայեաց ցուլ պղնձի առնել, և բազում հրով ջեռուցանել, մինչև լինել նմա իբրև զփայլակն, և այսպէս արկեալ՛ի նա զնոսա վճարել՛ի կենացս: Եւ իբրև մերձեցան յամենադժնեայ մենքենային, խոնարհեցուցին ծունր, աղօթէին ասելով. Տէր զօրութեանց, աստուածանելոյ Աստուած, իսկ մեզ երևեալ որպէս և կամեցար, լուր պաղատանաց մերոց, և աղօթք մեր տարածեցին, զի միաբանեալք արժանի լիցուք մասին Քրիստոսի քո հաստանել, որպէս ամբիծ մանկունքն հրով վախճանեցան: Տուր, Տէր, յիշողացդ զամուսնս մեր՝ առաքելական յերկինս և յերկրի, ընդ ծով և ընդ գետս ա-

*ռանց վնասու և վտանգի անցանել. որոց զաւակք վախ-
ճանին՝ վաղվաղակի յօգնութիւն հաս: Ջմեզս ծա-
նուսն Թեթեւացո, որք ի Հանապարհի յիշեն զմեզ՝
ամենայնիւ բարեգործեա, զհնուազս յիշողացն զմեզ՝
քժշկեա վաղվաղակի և յաւուրջութիւն ած. զեռա-
ցումն զայս ի ցօղ դարձո. զոգիս մեր խաղաղու-
թեամբ ընկալ, և զմարմինս մեր մի բարժաներ, այլ ի
միասին Հանգո: Այն ցնոսա Տէր ի ձեռն հրեշտակի.
ճշմարտապէս այդ լոյր ձեզ, և աւելի ևս քան զայդ-
սիկ, քանզի ուր քղանցք Հանդերձից ձերոց լցեն՝
անդ եղիցի և զօրութիւն իմ: Եւ արդեւթեալ գնոսա ի
ցուբն, եղև եռացումն իբրև զձիւն, և աւանդեցին զո-
գիս իւրեանց խաղաղութեամբ: Նոյ անօթ տանջա-
նարանին եղև նոցա աղօթատուն:*

*Այդ յիշատակ բարեյաղթ վկայից կատարի յա-
ռաջ քան զութ կաղանդացն Հոկտեմբերի, որ է քա-
ղց ամիս. և են բարեխօս Հաւատացելոցս ի Քրիստոս
Ցիսուս ի Տէր մեր. որում փառք և զօրութիւն այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Վկայաբանութիւն Սրբոց Վկայից, Եւստաւտիոսի, Եզեկիէլի, Աբրահամի, Մարդարիտի և Ոսկեան։

Ի թագաւորել անպարշտին և անօրինին Դեո-
կղետիանոսի՝ ամենայն Հռոմայեցւոց իշխանութիւն
լեալ լինէր ամենայն հեթանոսական պաշտամունքն,
բազմաստեաղ կռոցն մոլորութեամբ, և ամենայն
մարդ բարեպաշտութիւն զանպարշտութիւնն հաս-
րեալ, իբրև շունք կատաղեալք անպայտակս՝ ի չար
կրօնսն յորդորէին։ Մանաւանդ զի պրաւորական հրա-
մանք ինքնակալացն օրըստօրէ առաքեալ լինէին առ
այնոսիկ՝ որ ըստ գաւառաց գաւառաց իշխանք և կու-
սակալք էին կարգեալք. և հրամայէին նոցա զգուշա-
կան տեսչութեամբ առ ոճս և անմամուռս աստուա-
ծոյն զոհս և նուէրս մատուցանել երևելի պատուով.
և թագաւորական ձրից և ընծայատուր պարգևաց,
պատուի և ծանօթութեան արժանի լինել, և՝ի մե-
ծութիւն բարեաց հատուցանել զվերոյգրեալսն յայն-
պիսի պատուասիրութիւն ուղղութեան։ Իսկ զայնոսիկ
որ յայլ ինչ կրօնս խոտորէին խոտորել, և հեղգապէս
գտանել յայնպիսի պաշտամանց, օտարացուցանել՛ի
տանց և՛ի տացուածոց, և հանդերձ բազում պատու-
հասիք վճիռս մահու ընդունէին։ Վասն այսպիսի հա-
լածանաց և ամպրոպ խռովութեան և սաստ պատուհա-
սից տարածեալ լինէր ընդ ամենայն երկիր։

Ի սոյն իսկ ժամանակի հասեալ էին հասանէր՛ի
ետեւս անօրէնն իշխանին, յերկու թէ ամենայն աշխար-

ՀԸն Հայաստանեաց և կապակցուիկիա ընդ իմանալոյ եղեն Թագաւորական Հրամանին, և միաբանութեամբ յապստամբութիւն իւն Թևակոխեն, և զկնի գնալով քրիստոսական Հաւատոյն անիծուխս[1] ունելով զիւրս իւրեանց 'ի Յիսուս ումն, զոր և Աստուած քարոզեն: Զայսոսիկ լուեալ կայսրն Դեոկղետիանոս՝ խռովեցաւ 'ի սրտի իւրում, և սրամտեալ ցասմամբ մեծաւ վարաներ Հեծութեամբ առնել. և նոյն ժամայն Հրամայէր զամենայն մեծամեծս իւր առ ինքն կոչել Հանդերձ իւրաքանչիւրոքն Հելլենացւոց. և զերիս աւուրս յաւուրսն ինչ յերեկոյ Հանդերձ իւրաքանչիւրոքն Հելլենացւոցն 'ի խորհուրդ մտեալ Հաստատեցին 'ի միտս իւրեանց փոխադրել զկուռնիակալեան զայնոսիկ՝ որք կարգեալք էին 'ի վերայ երկաքանչիւրոց ազգացն այնոցիկ, վաշխուէրս և անարիս զնոսա կարդալով: Եւ փոխանակ նոցա առաքեաց երկուս ոմն եկեալ էին 'ի Հելլենացւոցն գաւառէն, յոյժ իմաստունք և վարժք և կիրթք ամենայն Հռեստրական և փիլիսոփայական Հանճարով, և խոհեմք խորագիտութեամբ քան զամենայն սինկղիտոսացն. որ մին 'ի նոցանէ Աիւսիաս Ճանաչիւր, որ ամենայն Ջեմենտացւոց[2] գաւառին ունէր 'ի դքսութիւն զիշխանութիւնն. երկրորդն որ կոչէր Աքրիկոզայոս, որոյ զամենայն աշխարհացն զդատաւորական իշխանութիւնն ընձեռեալ էր, և զիմաստութիւն ամենայն գնդիցն որ 'ի մէջերկրայսն և 'ի մերձակայ գաւառսն բնակեալ էին:

Աւրդ Հաւանեալ սոցա 'ի գաւառն յայնոսիկ, վաղվաղակի ամենայն Հասակ մարդկան անխնայաբար ի սուր սուսերի մաշեալ լինէր. և ոչ ըստ պատշաճաւորի պատճառի ածել 'ի վերայ վկայիցն Աստուծոյ զօրհասական մահն խորհէին, այլ փոքրիկ գաւառութեամբ որպէս Հանդիպէր կամ 'ի թշնամեաց կամ 'ի չարաչար ոմանց կամ 'ի չարանախանձ արանց: Աչխոյժ մըրիկ և տագնապ չարեաց յանկարծից այնոցիկ և յանաստուածից արանց 'ի վերայ ամենայն բնակչաց աշխարհին այնորիկ տարածանէր. և բազմութիւն

1. Ամ օր. բնաւից հաստատուն առ-ֆ-ֆ-ե-լ-է:

2. Ամ օր. Ջեմպտացւոց:

քրիստոնէից վերատին քննեալ լինէր, և ըմբռնեալ անթիւ զօրացն մատնեալ լինէր արիւնարբու գազանացն այնոցիկ՝ ի կորուստ։ Ա. Յուհեաւ Վիսախաս դուքսն զբնակութիւն իւր՝ ի Սատաղացւոց քաղաքին առնելով, և զօրս գտանէր՝ ի գաւառին յայնիկ տուեալ այս կամ կանայս, յետ բազում հարցափորձութեանց և գաւն տանջանաց՝ արձակէր զգուշական կապանօք առ Սիբիկոզայոս գաւառապետ՝ ի մայրաքաղաքն Սերաստացւոց, զկախմէն սրոյ ընկալեալ՝ ի նմանէ. և ոչ տայր Թոյլ բնակել ի հայրենական գաւառն իւրեանց, զի մի հանդիպեացին գարմանի ուրեմն յընտանեաց կամ յազգականաց. նա զի ոչ ևս մարմինք նոցա օրինաւոր Թաղման հասանելով պատշաճաբար դիցին՝ ի գերեզմանի։ Ա.յսպէս և անօրէնն Սիբիկոզայոս արձակէր զմնացեալսն ի Սերաստիոյ՝ ի Սատաղացւոց քաղաքն առ դուքսն Վիսախաս, զպատուհաս մահու կրել՝ ի նմանէ։

Ա.յսոցիկ այսպէս եղելոց, Եւստաթիոս սին իշխան գոլով յամին յայնմիկ, ՚ի գաւուց բզեշխին Վիսախասայ, այր աստուածապաշտ և երկիւղած Աստուծոյ, և անպարսաւելի քաղաքավարութեամբ կացեալ զաւուրս ժամանակաց իւրոց. սորա տեսեալ զգաւառնայն մերիկ անօրէն իշխանին, տխրէր օր ըստ օրէ՝ ի վերայ եղելոցն, զի տեսանէր հանապազ նորօրինակ հին սաստ պատուհասից՝ ի վերայ քրիստոնէից. և արտասուաց պաղատանօք և պահօք պնդութեան անդադար աղօթս մատուցանէր՝ ի տուէ և՝ ի գիշերի առ փրկիչն մեր Քրիստոս, զի Թերևս հաշտեացի ընդ ծառայից իւրոց, և հայեացի՝ ի ժողովուրդ իւր, զոր գբնեաց արեամբն իւրով, և փրկեացէ՝ ի ձեռաց անօրինացն, և՝ ի վերսին երևեալ չարեացն զերծուսցէ։ Ա.յլ ցանկայր և ինքն ըղձալի տեղեամբ գհաւատոյ սրբոցն դնել զջան նահատակութեան, և արժանանալ ընդ նոսին մեծի վիայութեան։ Ա.յլ զգաւառիս նուիրեալ խորհրդականութեան անօրէնն իշխանին տեսանելով՝ փոքր ինչ զանգիտէր յառաջիկայ մրցմանէն. սակայն այսպիսի վիճակաւ զիտրձ առնէր նախատգոյն իւրոյ գիտողութեանն. առ ինքն կոչէր զմի ոմն՝ ի հաւատարիմ ծառայից իւրոց, և զիշխանական պօսին

Ա.յլ ցանկայր և ինքն ըղձալի տեղեամբ գհաւատոյ սրբոցն դնել զջան նահատակութեան, և արժանանալ ընդ նոսին մեծի վիայութեան։ Ա.յլ զգաւառիս նուիրեալ խորհրդականութեան անօրէնն իշխանին տեսանելով՝ փոքր ինչ զանգիտէր յառաջիկայ մրցմանէն. սակայն այսպիսի վիճակաւ զիտրձ առնէր նախատգոյն իւրոյ գիտողութեանն. առ ինքն կոչէր զմի ոմն՝ ի հաւատարիմ ծառայից իւրոց, և զիշխանական պօսին

տայր ցնա, զի տալցե յեկեղեցին քաղաքին Ա-
բաբակացւոց, ուստի ինքն եկեալ էր. և պատու-
էր տուեալ զայս ինչ առնել նմա. զանխլաբար մը-
տանել յեկեղեցին, ծածուկ յամենեցուն, դիցես
զպօտի իմ՝ի վերայ սեղանոյ Աստուծոյ, և դու զանձն
քո Թագուսցես յեկեղեցւոջն. և եթէ տեսանիցես
զԱբգեհատիոս զաւ՝ի բազմոյ վկայեալն և զպատկա-
ռեալն քահանայն Աստուծոյ բարձրելոյ, զի յոյժամ
մտանիցէ՝ի տուրըն եկեղեցին Աստուծոյ զսովորական
աղօթիւն մատուցանել, եթէ առցէ զպօտի իմ՝ի
սեղանոյ անտի՝ Թողցես առ նմա զանխլաբար, և
վերատին առ իս դարձցիս. ապա եթէ այլ ոք առցէ
՝ի ժառանգաւորացն, ոչ Թողացուցանել նոցա։ Զայս
ինչ խորհեալ նորա՝ի միտս իւր, զի եթէ երանելի
երէցն Աբգեհատիոս առցէ՝ի տուրըն ձեռս իւր զպօ-
տին, տնօրէնութիւն ինն էցէ աստուածային ազ-
դեալ նմա զգանկալի զվիայութիւնն, և յառաջար-
կեալ նմա՝ի նոյն հանդէս մրգանացն. ապա եթէ
ոչ և այլապէս օրինակաւ հանդիպեսցի, լռել և
դադարել զանխլաբար, և ոչ համարձակիլ յան-
դգնաբար՝ի մատս Քրիստոսեան մտանել յայժմու
ժամանակի[1]։

Աստ յետ աւուրց ինչ անցանելոյ գառնայր ծառայ
երանելոյն Գեստասիոսի կատարելով զհրամայեալն
՝ի նմանէ, պատմէ մի ըստ միոջէ և ասէ ցնա. Ի ժա-
մուն յայնմիկ յոյժամ մտի ես յեկեղեցին Աբգա-
բակացւոց քաղաքին, և եդի զվիշտանական պօտին քո
՝ի վերայ սեղանոյն, և Թաքուցեալ իմ յեկեղեցւոջն,
՝ի նմին ժամու եկն եմուտ սրբազան Աբգեհատիոս քա-
հանայն կատարելով զսովորական աղօթիւն. և նա որ-
պէս առաքեալ յուժեքն ինքնին մտեալ՝ի խորան ան-
դէր՝ յինքն առնոյր զպօտին քո։ Ցայսոսիկ լուեալ՝ի
ծառայէն իւրմէ երանելին Գեստասիոս, լի եղև անչ-
ափ խնդութեամբ. նոյնժամայն առեալ ընդ ինքեան
յատարանից անտի իշխանին զամենայն բարեկամս իւր
՝ի ժամու ճաշոյն՝ եկն՝ի տուն իւր ուրախութեամբ
մեծաւ, զուարթ և բերկրալի զդէմսն ցուցանելով,

1. Ա.յլ օր. յայնմ ժամուիկ։

որպէս զի ոչ երբէք երևեալ նմա այնպիսի զուարճալի երեսաք. և՝ ի զարմացման լինելով ամենայն ծանօթից նորա ընդ անսովորական կերպարանին, խորհէին՝ ի միտս իւրեանց հարցանելով զնա, զի ստուգութեամբ իմացին զպատճառս իրին այնորիկ: Յայնժամ մի ոմն՝ ի բազմելոցն ընդ նմա, որ էր հասակակից նորա, և սիրելի բարեկամ և ընտաքակից, որում անուն էր Եզեկիասա, համարձակեալ հարցանէր զնա ասելով. Ո՛վ բարիոք վարդապետ մեր և պատուական եւստաթիոս, միթէ վասն հրամանի իշխանին մերոյ, որ հանդերձեալ է՝ ի վաղիւն հանդիսական յառաջագայութիւն առնել, և զամենայն տանջանարանացն պատրաստել գործարան ընդդէմ քրիստոնէից, վասն այդորիկ ուրախութեամբ ակն ունելով շահիլ ինչ՝ ի նոցանէ: Ա՛լ վասն այնորիկ ասաց զայս՝ զի յամին յայնմիկ իշխան էր նա՝ ի վերայ ամենայն զօրացն: Յայնժամ սուրբն Եւստաթիոս պատասխանի ետ և ասէ. Բարիոք ասացեր զայդ, սիրելի եղբայր. քանզի ակն ունիմ շահիլ ինչ յայնպիսի անապական և անկորուսելի գանձուցն. զի Թէ յառաջեցայց տերամբ իմով՝ ի բարիսն յայնոսիկ, մեծամեծ իմն վաղիւն շահեցայց:

Այդ ընդ այդպանալ առաւօտուն՝ ի ծագել արեգականն Քառագայթից՝ ի միտս առուրն հրամայէր դուքսն Լիսիաս՝ ի մէջ քաղաքին բեմն բարձրագոյնս պատրաստել, և ամենայն հանդիսից և բազմութեան քաղաքացեացն միահամուռ անդր ժողովել: Յայնժամ եկեալ իշխանն Լիսիաս՝ ի թէատրոնն, նստէր՝ ի վերայ բարձրագոյն բեմին, և հրամայէր զայնոսիկ որ՝ ի բանդին արկեալ քրիստոնեայքն էին՝ ածել՝ ի հարցափորձութիւն տանջանաց: Իսկ սուրբն Եւստաթիոս վերնատունն՝ ի բանտն, և աղաչէր զսուրբ վկայն՝ վասն ինքեան աղօթս առնել, զի ասէր և ինքն յառուր յայնմիկ անձկալի սիրովքն կցորդակից լինել նոցին չարչարանացն: Յայնժամ ամենեցուն տապածեալ զսուրբ ձեռս իւրեանց առ Աստուած՝ մեծաւ պաղատանօք՝ ի վերայ նորա աղօթս մատուցանէին: Իբրև կատարեցին զաղօթս վաղվաղակի, և ասացին զամէն, գնացին զկնի երանելոյն Եւստաթիոսի ըմբ

բռնեալ ՚ի վիճաւորացն. և մեռեալ կայէն[1] առաջի իշ-
խանին յաւուրն գառամանին:

Յայնժամ հրամայէր Աւսխաս ոմն լսել մոլջ մեր-
ձ կացուցանել զտուրքն առաջի բեմին իւրոյ: Ի նմին
ժամու յառաջ մատուցեալ Եւտաւտիոս զօրական
անյաղթ Թագաւորին Քրիստոսի, և ասէ մեծաւ համ-
արձակութեամբ ցիշխանն Աւսխաս. Գրաւորական
հրաման ինքնակալին դարձեալ ընթերցի ՚ի յանցե-
լեալ աւուրս ՚ի գառամանի առն, այն որ հրամայեալ
է զամենայն քրիստոնեայսն որք են ՚ի բնաւոր աշխարհ[2]
որ ընդ քոյոյ իշխանութեամբ են, զի ուր հանդիպե-
ցին և գտցին՝ ըմբռնեալք լիցին ՚ի քէն ՚ի հարցափոր-
ձութենէն առանց մատնեալ: Ոչ Աւբասեանոս ե-
րեւելի բաղդիւ և քաղաքավարութեամբ ընտրեալ, և
արհական հանդիսիւ ՚ի մարտ պատերազմաց քաջ ա-
րիութեամբ զարդարեալ և անուանի եղեալ քան ըզ-
ընաւս. որ և առիւծ աւուրբք յառաջ անմահական
զանիւնահատակեցաւ առաջի քոյոյդ[3] բեմիդպէս քաջ
զինուոր գոլ Թագաւորին Քրիստոսի. և զքոյդ վերդ-
վեալ կշտամբեաց զանաստուածութիւնդ, իմաստու-
թեան բանիւք[4] և համբերութեան գործովք զքոյդ
՚ի յետս նահանջեաց զկարծեցեալ խոհեմութիւնդ,
Քանզի յօրէն յայնմանէ մինչև ցայժմ ՚ի հանդիսա-
կան բանտին գոլով նորա, հրամայեցեր այսօր զարի և
զմեծ նահատակն հանդերձ սրբովք ժողովրդովքս ա-
ծել ՚ի քննութիւն: Ոչ աւասիկ կան ամենեքեան
հանդերձ ինձ առաջի քոյոյդ դատարանի, զի և ես զի-
նուորեալ եմ իմում անմահ և անվախճան Թագաւո-
րին Քրիստոսի, չարչարակից լինելոյ տոգա իմով կա-
մայորդոյ յօժարութեամբ, զքոյդ բազմահնար մեքե-
նայութիւնդ ջինջ ցուցանելով, զոր հայրն քո սատանայ արուա-
տացոյց ՚ի սրտի քում: և յամօթ առնեմ զքառասար-
կուին քոնութիւնն:

Զայսոսիկ լուեալ անօրէնն դուքս Աւսխաս, զար-
հուրեալ ընդ համարձակութիւն առնն, շառագու-

1. Ա՛ի օր. ֆոյին:
2. Ա՛ի օր. որ հրամայէաւ էր զա-
ջինայն աշխարհին Քրիստոնէայսն որք էն
՚ի բնաւոր աշխարհին:
3. Ա՛ի օր. ֆոյդ:
4. Ա՛ի օր. իմաստասիրութեամբ բանի-

նեալ երեսաք և մահացու ակամբ հայելով, և ի բաւ-
կացող հոգւոյն վերաբերելով, որոտաց ձայնիւ մեծաւ
և թիւնալի յաստմամբ ասելով այսպէս. Պայծառ և
հուչակելի եղև ինձ այսօր դատաստանս, իբրու զի հայ-
բենի հեղինական իմաստութեամբ լցեալ չարաբարոյ
հռետորիս այսմիկ և դահճի, շարժեաց զարժանա-
սաստ և զարդարագոյատ իրաւունսն և զհրամանս թա-
գաւորացն ոչ միայն ի վերայ իւր, այլ և յամենայն
ապստամբելոցն ի բարերարութենէ աստուածոյն, և
առնդանոցացն զպատուիրանս ինքնակալացն։ Յայն-
ժամ առնդարձոյն Աւետիս հրամանն ետ զինուորացն
վերկացուցանել զնեստաւտիոս; և ասէ. Մրդ նախ
կոտորեցէք առաջի իմ յիշխանական պատուհաս-
նացդ որ շուրջ է զդուռնս, ի քաղաքէդէն և յոսկե-
հուռ հանդերձից և ի պատուական զօտւոյն, և այս-
պիսի օրինակաւ յայտնի լինիցի ամենեցուն օտարա-
ցեալ ի պատուոյ գինուորութեան[1]. և ապա մերձ կա-
ցուցեալ զդա մերկ մարմնով, և լարիւք պարկեալ
զոտս և զձեռս դորա պրկեցէք, և տարածեալ քառա-
հուսի շարժմամբ հուպ լեցէք յերկիր ըստ յանդգնոյն
հրապարակախօսութեան դորա։ Եւ դահիճքն վաղ-
վաղակի կատարէին զհրամայեալսն։

Դուքան ասէ. Ո՛վ Նեստաւտիոս, եթէ ոչ զղջացեալ
դարձցես ի չարակրօն յամառութենացդ, մի՛ ակնկալ
ցիս ապրիլ ի ձեռաց իմոց յաղագս կոտորեան խոր-
հըրդոյդ զոր ակադրդ։ Նեստաւտիոս ասաց.
Ո՛վ Աւետիք, զղջանալ այնոցիկ պարտ է՝ որ ի բա-
րեացն ի չարութիւնն[2] ընթանան, այլ ոչ որ զվատ-
թարութիւնն արհամարհելով՝ զկնի ճշմարտու-
թեանն հետևին. որպէս և ես ի սկզբանէ զհետ եր-
թեալ եմ արդար օրինացն ճշմարտին Աստուծոյ իմոյ։
Դուքան ասէ. Նախ պատմեա ինձ յառաջ քան զառն-
ջանս իսկ՝ զբախտ և զանուն և զհայրենիս քո, և ըզ-
պատուն յորում ծնեալ ես, և զնորոգումն կրծնիցդ՝
որ զանխափանեալ էր ի քեզ, զամենայն ծանոյ մեզ ըս-
տուգութեամբ։ Նեստաւտիոս ասաց. ՅՈւրբա-
տակացոյ քաղաքին եմ ես ազգաւ և տոհմիւ, և անուն

1. Մի օր. Խլխանոսկէան։ 2. Մի օր. ի չարն։

*լիմ Եւտուատիոս կոչի. ծառայ եմ ես արարչին իմոյ արարողին զերկինս և զերկիր և խոստովանող Որդւոյնորա Յիսուսի Քրիստոսի և ամենասուրբ Հոգւոյն, ի տղայական տիոց և ի մայրական խանձարրոյ զպաշտօնս զայս ուսեալ եմ և երկրպագեալ Նակ դուքան հարցանէր զամենայն գոնդս զինուորացն տեղեկանալ վասն նորա, թէ՝ Քանի և ամ է կացեալ նորա յիշխանութեանն, և պարզ ևս ընկալեալ ի թագաւորացն: Յայնժամ որ ի սկզբանէ տեղեակք էին քաղաքավարութեան նորա, ասեն ցդուքան. Քան և եօթն ամ լցեալ լինի ի մերձենալ տարւոյս այսորիկ, որ ի գործ զինուորութեան մտեալ է դորա. զի յաւաջ քան զայն մանուկ տիօք գոլով նորա զեբկեւփտոսին[1] պետն ընդէր: Դուքան ասէ. Ա՛լ այժմիկ տեղանեալով, Եւտուատիէ, զհասեալ ի վերայ քո վիշտս տանջանաց՝ որ ի սխալմանէ մոլար և ամբարհաւաճ մոաց քոց ըմբռնեալ գտար, այլ մեք ողջախոհութեան կամ ի միտ արկաք վասն քո, եթէ դու թօթափեացես զքեզ յատաւտամ և ի վայրենի բարուցդ, և ի զգաստութիւն եկեալ զբարեյաղթ աստուածոցն զմարդասիրատէս զօրութիւնն կարդասցես, և հրամանի ինքնակալացդ մերոց հպատակ գտցիս: Սուրբն Եւտուատիոս ասաց. Զարաբարու դիւաց և խուլդրօք ընդ՝ ես ոչ զոհեմ, որ ի մարդկանէ կազմեալ և արարեալ են. զի բերան գոն և ոչ խօսին, ականջք են և ոչ լսեն, աչք են և ոչ տեսանեն, ձեռս ունին և ոչ շօշափեն, ոտս ունին և ոչ գնան, և ոչ գոյ բարբառ ի կոկորդս նոցա. վասն որոյ մարգարէն ասէ. Նմանեսցին նոցա եղիցին ամենեքեան որք արարին զնոսա, և որք յուսացեալ են ի նոսա, զի աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն ի նեղութենէ երկնից: Դուքան ասէ. Տեղի տալով իմով նեղոտութեամբ քումդ շաղաւրատ Հռոմաբանութեանդ, զանըմբռնելիս մտաց և զանձանձս բարբառեցար ի պատարանիս իմում, զանմահ և զբարեբար աստուածդ մեր հայհոյեալ, և մահկանացուս զնոսա կարդալով ի ցաւագին մեզ շարժելով. վասն որոյ պարտ է զվրէժս պահանջել ի քէն

1. Exceptor, նօթար կամ համարիուս:

ըստ յամառութեան քումմ ըստ օրինաց Հռովմայեցւոց՝ առաւածամնութեան վրէժխնդրել լինել։ Բայց աղէ առ դու ինձ, մարդ որ մտաց իշխան գոյ և իմաստուն խորհրդոյ, պատրաստ է զայնպիսին որ՝ ի պատուական գործ ի զառապարտ իրաց ձաղեցար, Աստուած անմահ կոչել, այն որ ոչ կարաց զանձն իւր փրկել, այլ իբրև գչարագործ՝ ի վերայ փայտի կախեալ եղև, զոր դու անհանձար մտօք զինա արարիչ ամենայն եղելոց անուանես։ Պատասխանի եւ առըն Եւտաւատոս ասէ. Ո՛վ Ալեսիա, եթէ չէր ոգով քո հոգանութեայ զանգուածով ախտից խաւարել, և միտքդ թմբրեալ բանսարկուին խորհրդովք, զուցանէի թերևս արդեօք քեզ զկատչեալն՝ առ և փրկիչ ամենայն արարածոց, և յառաջ քան գյաւիտեանս Որդի միանջնեաւորին Հօր, Հառաջայեալ և կերպարան առակզեանն անսպառեան ծնողին իւրոյ. որ ՚ի քէն անձամբ խոնարհութեամբ ՚ի ծոցոյ նորա, և մարմին զգեցաւ մարդկապէս յանարատ և միշտ կուսէն Մարիամայ, և զամենայն կիրս կարեաց մերոց կրեաց, բայց ՚ի մեզայ. և չարչարանօքն իւրովք և աստուածահրաշ թաղմամբն, և սքանչելի յարութեամբն կանգնեաց զանկեալ և զկործանեալ ազգս Ադրդիանն ՚ի չար բանսարկուին խաբէութենէ. զոր եթէ ՚ի սկզբան և ՚ի յերազատարէր պաճուճանացդ և ՚ի սքանչառի պաշտամանացդ հրաժարէիր, և ՚ի միտ առնուիր զմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, և զինուորէիր ի մեմ Թագաւորին Քրիստոսի, իբրև զիս ժառանգորդ լինէիր անապական և անվախճան կենացն յաւիտենից[1], զոր ակն ոչ եահաս և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

Յայնժամ խնդոյն ևս առաւել ՚ի ցաւուին սրտմտութեան բարկութեան բորբոքեր անօրէնն Ալեսիա. ա տայօղ և ՚ի յերազատարէր պաճուճանացդ և ՚ի սքանչառի պաշտամանացդ հրաժարէիր, և ՚ի միտ առնուիր զմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, և զինուորէիր ի մեմ Թագաւորին Քրիստոսի, իբրև զիս ժառանգորդ լինէիր անապական և անվախճան կենացն յաւիտենից[1], զոր ակն ոչ եահաս և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

Յայնժամ խնդոյն ևս առաւել ՚ի ցաւուին սրտմտութեան բարկութեան բորբոքեր անօրէնն Ալեսիա. ա տայօղ և ՚ի յերազատարէր պաճուճանացդ և ՚ի սքանչառի պաշտամանացդ հրաժարէիր, և ՚ի միտ առնուիր զմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, և զինուորէիր ի մեմ Թագաւորին Քրիստոսի, իբրև զիս ժառանգորդ լինէիր անապական և անվախճան կենացն յաւիտենից[1], զոր ակն ոչ եահաս և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

Յայնժամ խնդոյն ևս առաւել ՚ի ցաւուին սրտմտութեան բարկութեան բորբոքեր անօրէնն Ալեսիա. ա տայօղ և ՚ի յերազատարէր պաճուճանացդ և ՚ի սքանչառի պաշտամանացդ հրաժարէիր, և ՚ի միտ առնուիր զմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, և զինուորէիր ի մեմ Թագաւորին Քրիստոսի, իբրև զիս ժառանգորդ լինէիր անապական և անվախճան կենացն յաւիտենից[1], զոր ակն ոչ եահաս և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

Յայնժամ խնդոյն ևս առաւել ՚ի ցաւուին սրտմտութեան բարկութեան բորբոքեր անօրէնն Ալեսիա. ա տայօղ և ՚ի յերազատարէր պաճուճանացդ և ՚ի սքանչառի պաշտամանացդ հրաժարէիր, և ՚ի միտ առնուիր զմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, և զինուորէիր ի մեմ Թագաւորին Քրիստոսի, իբրև զիս ժառանգորդ լինէիր անապական և անվախճան կենացն յաւիտենից[1], զոր ակն ոչ եահաս և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

Յայնժամ խնդոյն ևս առաւել ՚ի ցաւուին սրտմտութեան բարկութեան բորբոքեր անօրէնն Ալեսիա. ա տայօղ և ՚ի յերազատարէր պաճուճանացդ և ՚ի սքանչառի պաշտամանացդ հրաժարէիր, և ՚ի միտ առնուիր զմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, և զինուորէիր ի մեմ Թագաւորին Քրիստոսի, իբրև զիս ժառանգորդ լինէիր անապական և անվախճան կենացն յաւիտենից[1], զոր ակն ոչ եահաս և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

Յայնժամ խնդոյն ևս առաւել ՚ի ցաւուին սրտմտութեան բարկութեան բորբոքեր անօրէնն Ալեսիա. ա տայօղ և ՚ի յերազատարէր պաճուճանացդ և ՚ի սքանչառի պաշտամանացդ հրաժարէիր, և ՚ի միտ առնուիր զմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, և զինուորէիր ի մեմ Թագաւորին Քրիստոսի, իբրև զիս ժառանգորդ լինէիր անապական և անվախճան կենացն յաւիտենից[1], զոր ակն ոչ եահաս և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

Յայնժամ խնդոյն ևս առաւել ՚ի ցաւուին սրտմտութեան բարկութեան բորբոքեր անօրէնն Ալեսիա. ա տայօղ և ՚ի յերազատարէր պաճուճանացդ և ՚ի սքանչառի պաշտամանացդ հրաժարէիր, և ՚ի միտ առնուիր զմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, և զինուորէիր ի մեմ Թագաւորին Քրիստոսի, իբրև զիս ժառանգորդ լինէիր անապական և անվախճան կենացն յաւիտենից[1], զոր ակն ոչ եահաս և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

Յայնժամ խնդոյն ևս առաւել ՚ի ցաւուին սրտմտութեան բարկութեան բորբոքեր անօրէնն Ալեսիա. ա տայօղ և ՚ի յերազատարէր պաճուճանացդ և ՚ի սքանչառի պաշտամանացդ հրաժարէիր, և ՚ի միտ առնուիր զմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, և զինուորէիր ի մեմ Թագաւորին Քրիստոսի, իբրև զիս ժառանգորդ լինէիր անապական և անվախճան կենացն յաւիտենից[1], զոր ակն ոչ եահաս և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

Յայնժամ խնդոյն ևս առաւել ՚ի ցաւուին սրտմտութեան բարկութեան բորբոքեր անօրէնն Ալեսիա. ա տայօղ և ՚ի յերազատարէր պաճուճանացդ և ՚ի սքանչառի պաշտամանացդ հրաժարէիր, և ՚ի միտ առնուիր զմեծամեծ սքանչելիսն Աստուծոյ, և զինուորէիր ի մեմ Թագաւորին Քրիստոսի, իբրև զիս ժառանգորդ լինէիր անապական և անվախճան կենացն յաւիտենից[1], զոր ակն ոչ եահաս և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

1. Մի օր. պատճ յաւիտենից։

ասացէք դմա՝ հնազանդ լինել հրամանաց Քրիստոսի, և ոչ հայհոյել զաւրութիւն և զփառս աստուածոց մերոց։ Եւ սպասաւորքն վաղվաղակի կատարէին զհրամայեալսն ՚ի բռնաւորէն. ՚ի բազում ժամս տաբծանէին ՚ի ներքոյ որովայնի նորա զհրատ բոցոյն և այրէին խորովէին զամենայն մարմինս վկային Քրիստոսի, ՚ի ներքուստ անպատմն. և դժնդակ տանջանօք զԹիւխուննա նորա հարկանէին տանջէին չարչարէին փշալից գաւազանօք, մինչև պատառ պատառ մարմինք նորա յերկիր անկանէին, և ոչ այլևայլէին գոյն երեսաց նորա. այլ էր տեսանել և կարծել ամենեցուն իբրև Թէ օտար մարմ նով կրկին զպատուհասն։

Յայնժամ զարհուրեալ բռնաւորին ընդ համարձակութիւն սրբոյ վկային, միանգամայն և զարմացեալ ընդ ճնալ ոգւոյն նորա ՚ի նմա, հազիւ ուրեմն հրամայէր դահձացն Թողացուցանել ՚ի տանջանացն, և ծնծաղելով առ ցաւալի վկայն. Այս ինձ, ով երեսաւոտիկ, որպիսի է խոհեմութիւն քո. ախտաժէտ և այլ ևս յոլովագոյն տանջանս մատուցանել քեզ[1]. զի հրաժարեալ ուրախացիս, զոր և փառս անձին քում համարիս։ Երեսաւոտիկս ասաց. Յոյժ ըղձամ և փափաքիմ այժմ ցանկալի փառացն՝ յորս հատուցանել զիս խոստացար, զի գրեալ է. Ոչ են արժանի չարչարանք ժամանակիս առ հանդերձելոց փառացն որ յայտնելոցն է ՚ի մեզ։ Այն գուբան ցասկացեալ զօրականացն իբր. Յաւելոյն է ՚ի վեր։ Եւ սպասաւորքն չարին յոյժ վհատացուցանէին սրբոյն զպատուհաս չարչարանացն։ Իսկ նահատակն Քրիստոսի տակաւին ևս ևս ՚ի վեր ածաւ ուժով կայր և ժուժկալէր, և ոչ հեծ լինչ և

1. Մի օր. աջել ՚ի վերայ ս։ 2. Մի օր. փառաց... չարչ։

կամ քարքառ լսելն լինէր, այլ միայն ՚ի սրտի իւրում գոհանայր գՏեառնէ, և կրէր զտանջանս նեղութեանն։ Իշխանն ասէ. Ջարմացեալ կայի քաջ ևս Թէ ոչ պրպէտ իբրև զկատալիկ համարի զամենայն եկեալն ՚ի վերոյ իւր՝ զինուորդ Նազովրեցւոյն, և զմերօքս քանհէ զտանջանատանն։ Այլ այժմիկ ասացէ առաջի ատենական պատարանիս, եԹէ գոնեա յայսմ հետէ ոչ ջախոհացեալ եղիր, և կամ զանձն իւր հաւանեցոյց մեծաց աստուածոյն երկրպագութիւն մատուցանել և հպատակ լինել հրամանաց ինքնակալացն եԹէ ոչ։ Սուրբն Եւստաթիոս ասէ. Սակս աստուածոց ձերոց երկիւղին զոր ունիս, վասն որոյ զպատուհաս զայս ածեր ՚ի վերայ իմ՝ տգիտացեալ, ով դատաւոր, չիմանալ մօտք, և ոչ գիտեցես Թէ անձառ և անպատում բարութեանցն որ պահի ՚ի Տեառնէ յուսացելոց իւրոյ, այժմ արժանի գիս արարեր, և հոլովեցեր ինձ ձանձրալարհ փրկութեան ելանել ՚ի մարմնոյս ամբծութեամբ, և մտանել առ որ անձկացեալն եմ, և վայելել ՚ի միանջենաւորն և յանանց բարութիւնն ընդ համարտաս անուան իւրոյ։ Սուրբ զոր ինչ առնելոց ես արա վաղվաղակի, գի զաստուածն քո գտցէլն և պիղծս համարիմ, և զամենայն զմեծութիւնս աշխարհի և գփառս իբրև զաղբ անպիտան համարիմ. ապաքաղացու և խոտան երևին ինձ այդոքիկ, գի գՔրիստոս շահեցայց և զուարթերես կացից առաջի նորա ՚ի հանդերձեալ յաւիտենին։

Դուքան ասէ. Ո՛վ աղաչուր դու, և չարի բախտի հանդիպեալդ և Թմբրեալդ արբեցութեամբ չարին ՚ի նանիր խորհրդոցդ, ընդէր ամենևին խոպան կորուանանես գպատիւդ և զմեծութիւն գինուորութեանդ. և պատնութեամբ գրկեալ ՚ի քաղցր լուսոյ աշխարհիս, կամաւ իջանես ՚ի դժոխս. և կամ զինչ խցես փոխարկէն հաստուցանդդ զոր ասես, և կամ ով կայ պարգևատուն այնմ ամենայնի, ազէ ասա ինձ մեզմով զանունն։ Պատասխանի ետ երանելին Եւստաթիոս և ասէ. Յոյս հանդերձելոյն զոր ունիմք՝ անձառ է և անյայտ, ոչ բերանով Խառն, և ոչ ոք կարէ բերել յաչս բարեաց օրինակ յերևելեաց աստի և յապականացու արարածոց, զոր խոստացաւ Աստուած կամարա-

լաց իւրոց սիրելեաց. այնպէս և անհաւատիցն որ իբրև զքեզզ լցեն և ուրացողացն զՀիմարտութիւնն՝ միանջենաւոր և անշէջ հուր գեհենին գանձեալ պահի, կրճտուածն ատամանց և լալ աչաց, որդունն անքուն և աղջամղջին խաւարն արտաքին, զոր պատրաստեալ է սատանայի և կատարողաց գհաճոյս կամաց նորա. այլ մեք այնմ յուսոյ ակն կալեալք սպասեմք, և յայսպիսեաց սպառնալեաց խուսափել ոչ զարհուրիմք, զանազան և զառն տանջանաց որ՝ի ձէնջ գայ՝ի վերայ մեր. զի փրկեալք յոտից քոց քանատրիութիւն զուարթ երես կացցուք առաջի բեմին Քրիստոսի:

Ջայս իբրև լուաւ դուքն Հիւսիսա՝ի ցասումն բազում կուիեան շարժեալ ասէ ցերանելին. Եթէ հնար գոր Աստուծոյն քո որպէս դու ասես, և կարէր վաղվաղակի անմահութեանն իւրոյ կցորդ առնել զքեզ, փրկէր յառաջագոյն տանջանացն զոր պատրաստեալ եմ քեզ: Վասն որոյ լուր ինձ, և զանազանակ կամս քո մերժեա՝ի քէն և Ի կ յուղղութիւն, և զերծիր յառաջակայ տանջանացն, և պարգեւս և պատիւս մեծս ընկալցիս յինքնակալաց մերոց, և մեր սիրելի լիցիս: Ակաւ խոսել երանելին և ասէ. Ո՛վ խաւարասէր և չարին գործակից, և հեռացեալ՝ի կենացն յաւիտենից. արդ հայեաց և տես զիս, զոր դու մեռեալ և կորուսեալ կարծէիր, ոչինչ անհնար եղև Աստուծոյն իմոյ կրկին նորոգել զիս և կեցուցանել, ողջացուցանել զամենայն վէրս և զցաւս մարմնոյ իմոյ: Եւ ամենայն բազմութիւն քաղաքին պշուցեալ հայէին. իսկոյն յանկարծակի իբրև զկենդանի մեռեալ ինչ ծառոյ՝ի բաց անկանէին՝ի մարմնոյ անտի. և սուրբն ողջանդամ երևէր ամենայն բազմութեանն, որպէս զի ոչ սակ ինչ կամ վէրք երևէին՝ի սուրբ մարմնին նորա. և տեսեալ զքաջանչելի եղեալսն՝ի վերայ սրբոյն, ամենայն ժողովեալ մարդիկն որ՝ի Թէսաւրոնն էին, և յոչնախատումբ ոսկիկ քաղաքին, և փառաւոր առնէին զԱստուած՝ի վերայ սքանչելեացն զոր եցոյց առ սուրբ վկայն իւր:

Իսկ մի ոմն՝ի զօրականացն որում անուն էր Նեփտնէոս, որ էր՝ի նմին քաղաքէ Յուրբանիոյ ուստի էրանելին Նեստաւոս, և իշխանական պատուով՝ի

նորուն դասուցն գոլով, իբրև եռես զարթոյն Եւստաւա-
տիոսի զանշարժ զհամբերութիւնն որ վասն Քրիստո-
սի, աղաղակեաց ՚ի ձայն մեծ և ասէ. Լուսիաս, Լու-
սիաս, և ես քրիստոնեայ եմ, ծառայ Աստուծոյ բար-
ձրելոյ, արարողին զերկինս և զերկիր, և զկրօնսն քո
նզովեմ, և զաստուածս քո արհամարհեմ, և ընդ ամ-
պարիշտ թագաւորացն և ընդ կամս քո հակառակիմ,
իբրև զառէրս իմ Եւստաւատիոս: Նակ անօրէնն իշխանն
իբրև լուաւ զայս՝ յամօթ եղև վասն նախատանացն իւ-
րոց առաջի բազմամբոխ հրապարակին, և խոնարհե-
ցուցեալ զգլուխ իւր ընդ երկիր պշուցեալ հայէր:
Ցայնժամ հրամայեաց զերանելի վինտուրն Քրիստոսի
զնեգինիոս յառաջ մատուցանել. և քարոզն աղաղա-
կէր ՚ի մէջ հրապարակին և ասէր այսպէս. Վասն չա-
րաբախտս այսորիկ և նորագոյն երևելոյս ընդերկար
հարցափորձութեանց և քննութեանց պէտք են, զի
այժմիկ ոչ ժամանեմք, այլ ՚ի հանդիսական իրողու-
թիւնս զօրացն փութաւք ըստ մերոց սովորութեանց,
և զիախարդատարս զայսոսիկ՝ զնեգինիոս հանդերձ
նեգինիոսիւ համախտհիւ նորով ՚ի բանդ հրամայեմ
արկանել. և ատուր երկաթի ՚ի պարանոցս և յոտս
նոցա հրամայեմ դնել, և զգուշութեամբ պահել հան-
դերձ այլովք մահապարտօքն, զի ՚ի պարապուդ և ՚ի
պատշաճ ժամու ըստ օրինին դատեցայց զնոսա: Եւ
զայս ասացեալ յարեաւ յաւենական աթոռոյն:

Նակ զինուորքն քարշէին զերանելիքն կապանօք ըստ
հրամանի իշխանին, և եդին ՚ի նեղքնում ՚ի խաւարչըղ-
տին տեղւոջ բանդին: Նակ երանելիքն մեծաւ ցնծու-
թեամբ և ուրախութեամբ օրհնէին զՍտուածն և
սաղմոսէին միաբան ձայնիւ և ասէին. Սիա զի քարի
և զի վայելուչ զի քնաւկին եղբարքն ՚ի միասին: Եւ հա-
նէին զամենայն գիշերն ՚ի գլուխ յաղօթս Աստուծոյ.
և ուսանէին ՚ի սրբոյն Եւստաւատիոսէ զհանդէս նա-
հատակութեան մարտին և զհամբերութիւն ժուժ-
կալութեան, և զխոխարէնն անձառ բարեացն զոր
պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց:

Նակ ընդ այգն ընդ առաւօտն ՚ի ծագել արեգա-
կանն յարուցեալ դուքն՝ ՚ի Նիկոպոլսացւոց քաղաքն
փութայր գնալ, և երթայր իւրովքն ՚ի բանդն՝ յո-

բուժ սուրբ վկայքն էին, և միայն զերանելին Եւ-
ստաքիոս հրամայեաց արտաքս հանել. և յորժամ
եկեն ծխծաղեալ և խնդալից դիմօք, ասէ ցսուրբ վկայն.
Ողջ լեր սիրելի Եւստաքիէ։ Պատասխանի ետ սուրբն
և ասէ ցնա. Այսուամենայնիւ զոր պաշտեմ՝ ի
մանկութենէ իմմէ, նա ողջասնեացէ զքեզ արժանա-
պէս, ուլ Լիւսիա։ Դուքն ասէ. Յաղագս Այսուծոյն
քո ինձ ոչինչ փոյթ է, այլ դու առ յառաջիկայ ժամն
հասեալ զտուեալ քեզ հոդևոր ախտդ արկցես յոտս
քո, զի այդու դիւրընթացիկ լինիցիս զկնի մեր յու-
ղեկցութիւնս Հանապարհին։ Եւ հոդևոր ախտքն այն
էին տատասկեալք երկայն և տուարտաւոր բևեռօք,
իբրու թէ թափանցիկ լինէին ընդ ներքոյն ոտից նո-
ցա։ Այդ զինուորացն բերեալ ագուցին զհոդևոր ախ-
տն յոտն երանելւոյն՝ զերկաթեղէնսն ի միասին խր-
տացիւք սեեռեալ պնդեցին. և ինքեաց մատանեաւ
իւրով էշխանն, զի մի ոք դիպացեալ ի վերայ նորա
հանցէ զայն ի բաց ի գործարարացն սրբոյն։ Եւ ապա-
տուիրեաց դահձացն հարկանելով և քարշելով ածել
զնա ի Հանապարհայն՝ հանդերձ այլ ևս ընկերօքն. և
ինքն չուեալ հանդերձ բազմութեամբ զօրացն դայր
հասանէր յետ երկուց աւուրց և բանակէր մերձ աւ-
դեկին որ է հուպ ի քաղաքն Այտուրակացւոց։ Եւ
ի հասանել սրբոյն անդր՝ ամենայն բնակիչք քաղա-
քին այնորիկ ելանէին առնուլ զերանելւոյն. բայց ոչ
ոք յազգականաց կամ ի բարեկամաց սիրելեաց նորա
իշխէր մերձենալ առ նա վասն երկիւղի իշխանին, զի
մի և նոքա ըմբռնեսցին։

Ապրդարեւս ումն առակ գոլով լեռնալ աւուրջք և
քաղաքավարեալ արդարութեամբ՝ յաւուրս յայնո-
սիկ շինէր յարկս բնակութեան ինքեան[1]. և ի տա-
նեաց անտի մինչդեռ ծածկէր զձեղունս տանն՝ հայե-
ցեալ դիտէր, և տեսանէր զսուրբ վկայն Այտուծոյ,
զի կապանօք անցուցանէին ընդ պողոտայն որ էր մերձ
ի գեօղն յայն։ Եւտես ի մէջ սրբոցն զերանելին Եւ-
ստաքիոս կապեալ ձեռս յետս, և ծանեաւ վաղվա-
ղակի. և փութացեալ էջ անտի՝ և ասէ ցկինն իւր

1. Ա՛ի օր. բնակութեան իւրոյ։

զուսյաստրութեամբ՝ ի բարբառ հայերին. Ո՛վ կին, սեանաւնա զսէրն մեր Եւստաւատիոս անուանեալն Կիւրիւկոս[1], զիշխանն ամենայն շրջաբնակութեանս մերոյ, զի՝ ի բաց լքեալ արհամարհեաց զգերապատիս զայնքան և զայնպիսի մեծութիւն և զփառս աշխարհիս, և զամենայն երևելի փարթամութիւն ընչից և ազգի և առացուածոյ[2], և զքաջամարտիկ զինուորութիւնն զոր ոչ ոք ունէր նման նմա՝ ի մէջերկրայքս ամենայն. և ընդ այլ կալանաւորան երթայ՝ ի տեղի հանդիպեսի՝ ի յատարկել կատարման և վկայական նահատակութեան. զի զկնի ցանկալի կենցաղավարութեանն իւրոյ զյաւիտենական թագաւորութեանցն ժառանգեսցէ զառհատաչէայ բարութիւնն: Իսկ գեղեցիկ և պարկեշտ կին նորա առ ցնա. Ջինչ խափան լինիցի և քեզ երթալ և ուղեկից լինել ընդ նմա և հետևիլ ընդ երկնաւոր Քանաապարհն, և հաղորդ լինել յաւիտենական նշանաց նորա, այնմ՝ որ զյաւիտենական զանապակաշնութեանն վերաբուսուցանէ զերաբխոնն. և պաշտպան վրկութեան լինիցիս ինձ և երկուս մանկանցս և բնակէն ազգատոհմին քո: Իսկ ցանկալի այրն այն և բարեշնան՝ վառեալ հրով Հոգւոյն և ըղձալի տեսչութեամբ[3] ցանկայր խառնել՝ ի գունդս սրբոց վկայիցն Աստուծոյ. և առ ժամայն գիրկս արկեալ զպարանոցէ մանկանց իւրոց համբուրեաց զնոսա, և ասէ. Խաղաղութիւն ընդ ձեզ, սիրելի որդեակք իմ: և տարաձեաց զձեռս իւր երկաց յաղօթս առ Տէր, և ասէ առաստաղոչ պաղատանօք. Տէր Աստուած, Հայր ամենակալ երևելեաց և աներևութից, որ՝ ի ձեռն սիրելի Որդւոյ քո Յիսուսի Քրիստոսի և ամենատուրբ Հոգւոյդ նորոգեցեր զամենայն որ ինչ յերկինս և՝ ի վերայ երկրի, և ծանուցեր զաստուածութիւնդ քո ամենայն որդւոց մարդկան, և բացեր մեզ Քանապարհ փրկութեան՝ ի կեանս յաւիտենից, ուր անապական[4] բարութեանցն պարգևքն պահին յուսացելոց՝ ի քեզ. վասն որոյ աղաչեմ զամենագութ ողորմութիւն քո,

1. Մի օր. Կիւրիւղոս:
2. Մի օր. Եւ ապիկ ապիկ սքաղոսա-ծոյ:
3. Մի օր. ընդունի փերլոսիկամբ:
4. Մի օր. անապականացն:

հեղ յիս զչնորհս բարեբարութեան քո, և առաջնորդեա ինձ անբիւրևան սրտիւ, և կատարեալ սիրով ընթանալ՝ի հանդէս մարտիրոսութեան, զի եղիցի պատարագ ընդունելի առաւածութեանդ քո, և հեռացո՝ի միջոջ զընդդիմամարտ չարին բռնութիւնն. որ հայրդ ես արդոց և տէր ամենայն յուսացելոց՝ պահեա զմանկունս իմ խաղաղութեամբ, և ամբիծ՝ի հաւատս Քրիստոսի ամենազօր աջով քո, և զկենացս կից առնուին իմ որ եղև հանդիսատիր ինձ այսմ երանաւոր[1] կոչմանս յոր հրաւիրեցայ՝ի Տեառնէ. և առաքեա զհրեշտակ խաղաղութեան քո զի առաջնորդեսցէ ինձ՝ի բարութիւն, և թողութիւն ընտրեալ իմոց յանցանացն, զոր՝ի չարէն պատրանաց մերձեալ է առ իս. զի քեզ ամենայն ինչ կարելի է, և օրհնեալ է անուն քո յաւիտեանս: Եւ զայս առացեալ երիցայր զկնի սրբոցն զերանաւէտ Անտապարկն:

Եւ հանդիպեալ ուրեմն մեծատան, որ էր այր ելեւէլ, և էր երկիւղած՝ի Տեառնէ, ՚ի նմին գեղջ ունելով զընակութիւն իւր, որում անուն էր Մուսատարիոս, և ասէ ցնա երանելին Մարտարիոս. Ա՛հաւասիկ գնամ ես առ սիրելին քո և ազգակիցն Եւստաթոս, զի ընդ նմա զջան նահատակութեան յանձն առեալ վկայեցից վասն Քրիստոսի անուանն, կամելով Աստուծոյն մերոյ: Արդ յայսմհետէ քեզ յանձն եղիցի տուն իմ հանդերձ մանկամբք և ընտանեօք. և ես խնդրեցից՝ի Տեառնէ վարձահատոյց լինել քեզ՝ի հանդերձեալ յաւիտենին որ գալոցն է: Պատասխանի ետ այրն և ասէ ցնա. Երթ՝ի խաղաղութիւն, զանձկալի և զգեղեցիկ չանապարհդ, և զընթացս քո կատարեցեա ըստ հաճոյից Տեառն Աստուծոյ մերոյ. և վասն սրոյ պատուիրեցեալդ ինձ՝ եղիցի քեզ որպէս և կամիս: Եւ երանելին Մարտարիոս՝ ողջոյն տուեալ նմա, հասանէր սրբոց վկայիցն Աստուծոյ առ դղեկաւն. աղաղակեաց՝ի ձայն մեծ և ասէ. Տէր իմ Եւստաւատիէ, որպէս անձկացեալ ոչխար հօտէ որ ընթանայ առ հուվիւն, այնպէս և ես ընթացեալ հասից առ քեզ մեծաւ փափաքմամբ, կամելով չանապարհակից լինել

1. Մի օր. երանաւէպ:

քեզ։ Այլ ընկալ զիս ՚ի Թիւ սրբոց ժողովոյդ որ ընդ քեզդ են հանդիսացեալք ՚ի վիճակեան հանդէս նահատակութեանցդ, զի Թէպէտ և անարժան եմ, սակայն վիճակ Քրիստոսի լինելոց եմ։ Եւ իբրև առաց զայս ՚ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Քրիստոնեայ եմ իբրև զպատուական տէրս իմ Եւստաթիոս, լուարուք զայս ամենայն պաշտօնեայք առաստային։ Յայնժամ ըմբռնեալ զինուորացն՝ կապեցին ընդ այլ ևս կալանաւորաց սրբոցն, և արկին ՚ի հանդիսական բանդ զքեզ կին այնպիսիկ։

Եւ վաղվաղակի լսել եղև այս յումնէն դատաւորին Ախեայ. և իբրև լուաւ զայս նշխանն, իբրև զառիւծ մրմռեալ նստաւ յաւետեին, առաջի կալով նորա զինուորացն բազում կարգի բազ առնելոյ. և բերեալ լինէին երանելին առաջի նորա կապեալ կրկին կապանօք ձեռս յետս, և անուր ՚ի պարանոյն, և մերկացեալ ցեալք յամենայն հանդերձից իւրեանց. և սուրբն Աւքսենտիոս կայր ՚ի մէջ սրբոցն զուարթեալ և պայծառ դիմօք և ուրախ սրտիւ։ Ասէ ցնա դատքան. Աւքսենտիէ, այժմ ծանոյ մեզ եթէ ազատեցե՞ր զանձն քո յաշխատութեանց, և արժանի եղեր մեծի փրկութեան. ՚ի բաց կացե՞ր արդեօք ՚ի մեռոյն պատրանաց խաբէութենէն կորուսեալոյն այնպիսիկ, և մերձեցար առ քարերարութեան աստուածոյն, եթէ տակաւին կեաս ՚ի նմին յամառութեան։ Պատասխանի ետ սուրբն Աւքսենտիոս և ասէ ցնա. Ո՛վ Ախեայ, երդուեալ իմ քեզ ՚ի վերայ տեսչութեան իրաւանցդ Աստուծոյ Հրէից մարտին, զի անխոտորելի են կամք սրտի իմոյ ՚ի հաստատութեան Քրիստոսի. և Աստուած գիտեմ զնա, ծնանեցանէին Հօր, և զամենակալ Հոգի նորա բղխութեամբ միշտ ընդ ինամս. անձառ անքննին յամենայնի, մի աստուածութեան, յոր հաւատացեալ եմ և պաշտեմ ՚ի մանկութենէ իմմէ. և եթէ բերա ածիցես ՚ի վերայ իմ տանջանս, և զանս պատուհասից առաւել քան զառաջինն, և ընդ ամենայն տեսիլ տանջանացն անցուցանես զիս, ոչ կարիցես զիմս իմ խոնարհեցուցանել յերկնից բարձրութենէն. արդ զոր ինչ խորհեալ եա՝ արա վաղվաղակի։

Յայնժամ դատքան վՀխե մահու հատանել զայսպէս

’ի վերայ նորա. ԶԱբեսաղոմ՝ որ յետ քառասուն տանջանաց ոչ եւին յուղղութիւն, եւ ոչ հպատակ եղեւ ինքնակալին, ’ի ձեռն սրոյ հրամայեմք գլխատել յանապատ տեղւոջ. զի յօրինաւոր թաղմանէ զրկեալ լինի չարաբաստ մարմին նորա: Եւ զայսպիսի դատաստիս ընկալեալ երանելոյն, փութանակի հասանէր ’ի տեղի կատարմանն, և խոնարհեցուցեալ ծունր կայր յանզգիս. Աստուած յաւիտենական, տէր և արարիչ աւետեան արարածոց, Աստուած անձառ լոյս, Հայր միայնոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և փառաւիղ Հոգւոյն՝ որ ’ի քէն ելանէ, և ընդ նախահնամ ողորմութեամբ զծագս տիեզերայս. բաց զդուռն ողորմութեան քո առ անարժանութիւնս՝ որ կամ առաջի քո ’ի ժամուս յայսմիկ, յորում զաւետեան կենցաղականն պատարագմունս զինի իմ Թողում, և ծարաւի ոգւով ընդ Թանամ ’ի կէտ կոչման քում հրամանացդ, ըստ առաւածաւապատում անաւատ հրամանի քո՝ որ յաւետարանական քարոզութեանն, Թէ՝ Որ ոչ առնու զխաչ իւր և գայ զինի իմ՝ չէ ինձ արժանի: Եւ արդ Տէր իմ և Աստուած իմ, զընթացս իմ կատարեցի ամբծութեամբ, և արդ առ քեզ գամ: արա զիս արժանի հանդերձեալ յաւիտենին, աչալրջութեամբ և զուարթերես կալ առաջի քո բեմիդ: Եւ պահեա անպատ զդաս սրբոց վկայիցն որ ընդ իս կցորդ եղեն չարչարանաւք վանն քո, և արժանաւորեա հասանել մանին վիճակիս այսմիկ. և ընդհեա խաղաղութիւն եկեղեցւոյ քում սրբոյ. և քեզ փառք յաւիտեանս: Եւ ասացեալ զամէնն, կատարեցաւ ’ի տեղւոջն:

Իսկ անօրէնն Ալեխսա խնդրեր յառաջ մատուցանել զառաքեն Մարդարիոս, զի դառեսցի և զինա առաջի բազմամբոխ հրապարակին: Եւ զինուորացն լուծեալ զինա ’ի շղթայիցն որ ’ի պարանոցին, և փութանակի բռնաբար ձգէին զինա ’ի թէատրոնն: Իսկ երանելոյն ասէ. Տէր իմ Եւտաւսէ, աղաչեմ զքեզ վասն իմ աղօթս առնել, և ուսո ինձ Թէ զինչ տայ պատասխանի յաւետեն անդ ապականիչ և չար դազանին այնորիկ: Պատասխանի ետ սուրբն Եւտաւսիոս և ասէ ցնա. Եղբայր իմ Մարդարիէ, քնաւ ամենևին զոր ինչ հարցանէ զքեզ, այլ ինչ մի տացես նմա պատաս-

Յանի, բայց միայն առա Թէ քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ, և ոչ փոխեցից ՚ի բանիցս յայսցանէ։ Եւ անօրէնն դահճացն ածեալ կացուցին զերանելին առաջի իշխանին։ Սկսաւ խօսել դմա, և ասէ ցնա. Ա՛յ երիցս Թշուառական և ատեցող բարեաց, և ծառայեալդ ՚ի բարերարութենէ աստուածոյն, առա վաղվաղակի զանուն քո և զբախտ, և զդահապետութենէն ազգատոհմին քո, Թէ որպիսի պաշտօն ունիս։ Պատասխանի ետ սուրբն Մարգարիոս, և ասէ ցիշխանն. Զայդմ ամենայնէ զոր հարցանես՝ ինձ ոչինչ է փոյթ. քանզի ես քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ։ Եւ յառաջ մատուցեալ ասէն ցնա. Եղիր և Թարմատար քան զամենայն մարդիկ, տուր պատասխանի ըստ օրինակի հարցմանս առեալն ՚ի մէնջ։ Պատասխանի ետ երանելին և ասէ. Այսպէս և դարձեալ ասեմ, քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ։

Յայնժամ տեսեալ չհաստատութիւն հաւատոյն նորա և զանխոխսելի միտս նորա, զայրագին ցասմամբ հայեցեալ առ դահիճն ասէ. Ծակեսցի պճղունք ոտից դորա, և չուան ՚ի նեղքոյ անցեալ կախեսցի ՚ի ձողոյ, և շամփուրս հրայեալս մերձեսցի ՚ի Թիկնամէջս դորա, և կիզեսցին ամենևին անդամք բոլորովին մարմնոյ դորա, Թերևս եկեսցէ ՚ի զգայութիւն, և զարժանն տացէ պատասխանի ըստ հարցուածոյ մեծ։ Եւ վաղվաղակի զամենայն հրամայեալսն կատարէին սպասաւորքն անօրէն իշխանին։ Եւ երանելին ոչ ինչ տայր պատասխանի ՚ի տանջանսն, այլ միայն աղաղակէր և ասէր, Թէ՝ Քրիստոսեայ եմ և Քրիստոսի ծառայ։ Ապա ՚ի բազում ժամս կալով նորա ՚ի կախաղանի անդ, և կարմրագոյն շամփրօք փոխոխմամբ զոր ծարանացն զմարմինն սրբոյ վկային հրկիզուին։ Եւ նա ՚ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Տէր Յիսուս Քրիստոս յանձն առնեմ զհոգի իմ։ ընկալ զսա խաղաղութեամբ, և արժանի արա զիս հասանել մասին ժառանգութեան սրբոցդ ՚ի լոյս. զի քեզ փառս վերադարձուսցեմ այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։ Եւ զայս առաքեալ աւանդեաց զհոգին, և ինքնակալ երանելին ՚ի կախաղանէն, քարշեին արտաքս զի կերակուր լինի շանց։

Եւ մինչդեռ ինքն ամպարիշտն Աւետիս հրճուեալ էր և ցնծայր ընդ չարչարանս վկայիցն, ասէ ցվինուորսն. Գարշելալ լիցի յաստեանս մերկ մարմնով և որ ’ի Սատաղացիան էր, եւզինիոն այն՝ որ ընդ եւստաւս տիսին ’ի հարցափորձուելեան կայր։ Եւ նոյն ժամայն փութանակի ածին կացուցին մերկ կողապուտ ’ի հանդերձից առաջի դքսին. և հայեցեալ ’ի նա դառնութեամբ և զայրագին յաստանդ ասէ. Այս ինձ, ովա՜ մեծատէզ և չարագործ այր դու, զիա՞րդ իշխեցեր այդչափ յանդգնութեամբ մերձենալ ’ի հանդերձակուրթիւն անդր, որպէս զի առ ոչինչ համարեցար զանյաղթ և զանպարտելի հրամանն իւքնակալին. և ’ի վերայ ամենայն յանդգնութեանդ ժպրհեցար անարգանս դնել մեծամեծաց աստուածոյն՝ զոր պաշտեն և պատուեն իւքնին թագաւորքն մեր։ Պատասխանի եւ ասէրն եւզինիոս և ասէ ցիշխանն Աւետիս. Աստուածն իմ զոր պաշտեմ ’ի մանկութենէ իմմէ՝ յոր և յուսացեալն եմ, նա զօրացոյց զիս և շնորհեաց ինձ հանդերձակուրթիւն, զի մի՛ թքանիցեմ ’ի կուռս քո, և արհամարհեմ զաստուերս և զապականիչ կրօնս քո։

Այլ այնուհետև ’ի ցասումն և ’ի բարկութիւն բոլոր բոլեալ անպարիշտն Աւետիս՝ ասէ ցդահիճսն. Նախ ’ի բաց հատցի անարգող և հայհոյիչ լեզու դորա, և օտարացեալ լիցի յերկոցունց ձեռացն, և բոլոք դաստ բոլ բարձաբեկ լիցի, և ջախջախեացին սրունք ասից դորա և փշալից գաւազանաւ հարցի թիկունք դորա։ Եւ այսոցիկ այսպէս լինելոյ ’ի չար դահճացն, ասէր և մարմին կայրն ընդ միմեանս մաճեալս, և առ սաստիկ վշտին ոչ կարէր բանալ զբերան իւր, բայց միայն աղաղակէր և ասէր. Տէր Յիսուս ընկալ զոգի իմ և օգնեա ինձ։ Եւ նոյնժամայն աւանդեաց զոգին։

Իսկ իշխանն անօրէնութեան իւրում կատարեաց զայս ամենայն, ինքանէր ամենայն բանակաւն ’ի դաշտ անդր, ’ի հանդէսի անցուցանել և հանար առնել զօրացն արքունի. և լինէր փոյթ ընտրութեան այնմիկ՝ իւրաքանչիւր ցուցանելով զկորովութիւն արիական ներքհրամութեան առ ’ի զինուցն մարտակցութիւն։ Յայն ժամ երևեալ ոմն ’ի մէջ բազմութեան զօրացն զեղիկ և հռչակելի առնելեամբ զարդարեալ, որում

անուն էր Ովբեատէս. այր քաջ և վայելուչ պանծալի հասակաւ, լցեալ ամենայն խոհեմական իմաստութեամբ և հանճարով, զօրաւոր բանիւք և արդեամբք, և կիրճ առ՚ի մարտիցն յառաջատումեն։ Սորա կացեալ՚ի կարգի առաջի իշխանին Խուսիայ. ընդ որ հայեցեալ սեամանէր զչքնաղ և ըզպարկեշտագեղ հասակի նորա զկերպարանն. և հաճոյ թուեցեալ յաչս նորա՝ յառաջ կոչէր զնա մօտ առ ինքեան, հրամայ տալ ձգել զգեղարդն զոր ունէր՚ի ձեռն ընդդէմ նախատակին. և նորա հապշտապ փութով արիապէս յառաջ մատուցեալ երկվարսն և թափ առեալ բազկացն զխոպեցուցանէր զգեղարդն նահոտակի առաջի կացեալ նախատակին։ Եւ նոյն ժամայն ընդ քաջայնոց արշաւանաց երկվարին յանդուգն շարժմանէ թափ առեալ բազկացն, արտաքս՚ի հանդերձից երևեցաւ լաչ մի ոսկի որ կայր թաքուցեալ՚ի գրասանակ պատմուճանի նորա։ Եւ իբրև յայտնի եղև ամենեցուն, նոյն ինքն Խուսիա վաղվաղակի առ ինքն կոչէր զնա. և իբրև եկն եկաց առաջի նորա, առեալ՚ի ձեռն իւր զաստուածընկալ նշանն հարցանէր, թէ՝ Ջինչ արդեօք կայ այս. մինչ և զա՚ի նահանգէ Գալիլեացւոյն հանդիպեցոյս, յազգէ կախարդասար աղանդաւորացն։ Իսկ Ովբեատէս բացեալ զչնորհալից բերան իւր, ասէ մեծաձայն՚ի լուր ամենայն զօրացն. Ծառայ եմ ես խաչելոյն Յիսուսի Քրիստոսի, արարողին զերկինս և զերկիր, և որ՚ի նոսա արարածք կայեն. և զինչանդ զայդ կրեմ՚ի պահպանութենէն անձին իմոյ առ՚ի զրդուելն հակառակ կամարտ զօրութեանց[1] թշնամւոյն յարուցելոյն՚ի վերոյ յայմ՝ի Յայնժամ հրամայէր զօրքն դաշնացն բերել անուր երկաթեղէնն և արկանել՚ի դեղեցիկ պարանոց զինուորին Քրիստոսի, և ասէր. Ուղեկից լեր և դա՚ի նահանգէ Գալիլեացւոյն հանդիպեցոյս, մինչ մեծ մահապարտին ևս առաւել տիսուր. որ յայտ արարեալ յորում հարցափորձութեամբ զաստուածընկալ զինուն։

Եւ՚ի հասանել զբանն՚ի քաղաքն Անիոպոլացւոց մեծապայծառ հանդիսիւ, բազումք՚ի զօրականացն

1. Մի օր. ջմտ։

յայնմ գնդէ՝ որ ՚ի քաղաքին էին, մատեան առ իշխանն Ախեայս մեծաւ համարձակութեամբ, աղաչակեցին միով բերանով և ասեն. Ո՛վ Ախեայս, և մեք քրիստոնեայք եմք, և վիճակիս երկնաւոր թագաւորին Յիսուսի Քրիստոսի, և ՚ի նա եմք ապաւինեալ, և զնա միայն պաշտեմք, և խոստովանիմք զանուն նորա յաւիտեան. և արհամարհեմք զամենայն մեռոյ և զդիւաբնակ ընդունայնութեան պաշտամունս առաւածոց քոց. արդ զոր ինչ հանդերձեալ ես առնել արա վաղվաղակի. զի Աչմարտին Աստուծոյ նուիրեցաք զանձինս մեր, և ոչինչ կարէ մեկնել զմեզ ՚ի սիրոյ Աստուծոյն մերոյ, որ յանպտուքենէ ՚ի լինելութիւն ած զերեւելի և զաներեւոյթ արարածս. ոչ հուր, և ոչ սուր, և ոչ ժանիք գազանաց և ոչ տեսակք ամենայն տանջանաց, ոչ կարեն մեկնել զմեզ ՚ի սիրոյ անուն Յիսուսի Քրիստոսի։ Զայս և առաւել քան զայն միաբան բազմութիւն զօրականացն՝ որք ՚ի քաղաքն անդր կային՝ աղաղակէին առաջի իշխանին. և նոյն ժամայն իբրև լուաւ զայսպիսի բարբառ ՚ի բազմամեծ հոծ մարդկանէ քաղաքին, զարհուրեցաւ դողդոջն և գայն երեսաց նորա շրջեցաւ, և իբրև մխիթարեամբ շանթողաղաս նուաղեցան տեսանող աչք նորա. քանզի էր երկեաւ ՚ի բազմութենէ քաղաքացեացն, զի մի յանդուգն յարձակմանէն չար ինչ հանդիպեսցի նմա. և խնացեալ ծանեաւ թէ որպէս խաշինս երկնաւոր հովիւն կամաւ ՚ի մահ մատնեցին զանձինս իւրեանց։

Յայնժամ իշխանն իբրև ետես զանխոխեալն միտս նորա ՚ի հաւատսն որ ՚ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, հրամայեաց լուծանել զկօշտն նորա, և բմբռնել զաւետեանն և կապանօք արկանել ՚ի բանտ։ Եւ ինքն զմտաւ ածէր, թէ որպէս կորուսցէ զնոսա չարաչար և զառն տանջանօք. և միանգամայն ասէ, ոչ լինիցի շըփոթումն ինչ ՚ի քաղաքացեացս կամ յարգելանոցս մանաւանդ Յեսուաստիսէ։ Դարձեալ ասէ. Գուցէ տանջանս հասուցանելով նմա, նոյնպէս հրաշ արանչելեաց երեւեսցին, որպէս և յառաջնում նուաճեին. և ոչ միայն որ քրիստոնեայքն են հաստատեսցին ՚ի հաւատսն, այլ և զՀելլենացիս ապստամբեցուցանէ ՚ի յերկրպագութենէ աստուածոյն մերոյ, և այսպիսի

ինն խորհուրդ չարութեան հաստատել՝ի սրտի իւրում, որպէս զի զառաքեսցէ Եւստաթիոս և զերանելին Ովբեստէս արձակեսցէ՝ի քաղաքն Սեբաստացւոց առ Ագրիկոլայոս դատաւորս, գրեալ առնա հանդիսական նամակ, որ ունէր օրինակ զայս.

Տեառն իմոյ գերահռչակելոյ և վեհամեծ դատաւորի Ագրիկոլայոսի՝ի Վիտախայ գքեզ օգնականութեամբ դիցն բազմապէս ողջոյն.

*Ջանբազդատելի և զանհամեմատ և զպանծալի բնաւ իմաստից զծայրագոյն ողջախոհութեանդ զկատարելութիւնն յարաբարդեալ՝ի տրամախոհական միտս քո վեհապոյն խոհեմութեամբ, անդր ևս քան զընդհանրականացս մակընթացութիւնս, զիւցազնական արգասեաց զանթառամելի առոգութիւնս՝ի քեզ շառաւեղեալ, և յառաջեալ՝ի գիտութիւն յոգնահանճար իմաստից իրողութիւն, որպէս զի քան զընտրս որ ընդ արեգականդ բերին՝ գեր՝ի վերոյ գլուտարս. վասն որոյ և յաւելեալ որ՝ի նոսա և ոչ միում ումեք զկրան նախախնամութեան տիեզերացդ հաստատեցեալն տնօրինել, առատաձայնագոյն և հեզահայեաց կամաց քոց զհատարակաց մակադրեցեալն զգիտութիւն[1] անցուցանել. զի քունք մանաւանդ հատանեցուցանեն զանքուն աստեղսն, քան եթէ զայս քո ննջեցուցէին. քանզի առ տատամնագոյնն առանց ձանձրանալոյ զինեալդ անտեսութեանդն տարածանէ զառաջս՝ի քեզ շառաւեղեալ, և յառաջեալ՝ի գիտութիւն յոգնահանճար իմաստից իրողութիւն, որպէս զի քան զընտրս որ ընդ արեգականդ բերին՝ գեր՝ի վերոյ գլուտար. վասն որոյ և յաւելեալ որ՝ի նոսա և ոչ միում ումեք զկրան նախախնամութեան տիեզերացդ հաստատեցեալն տնօրինել, աստուածայնագոյն և հեզահայեաց կամաց քոց զհատարակաց մակադրեցեալն զգիտութիւն՝

ունիմ զքեզնա քացայայտել [1]. Համառօտապէս դուզ
նաքեայ բանիւք ներդրել ծանուցանեմ քեզ
վեմապէս հանձարել իմաստութեանդ սակս առնդ
այդորիկ անուանեցեալդ Եւտուտոս։ Քանզի յեա
բազում քննութեանց, և չարչարս կրելոյ տանջանաց՝
զոր զդա խորհրդակից Վալիլեացւոց աղանդոյն, և
զաւանող առաստելական կրօնիդ խաչելոյն Քրիստ ու-
մեծին զոր Յիսուս անուանեն, որ՝ ի նոցունց իսկ հե-
բայեան [2] ազգէն ելիմ զչարագործս սոցա մահ մեռաւ։
Սակայն ասեմ զայդր զայդ և ոչ անտեղագոյն իմաստասի-
րական վարժեարայ [3] արհեստիդ, և առաքինա-
մարտականութիւնն յոյժ ի կրթեալ, և ծայրագոյն [4] զի-
նուորութեան զահաւորութեան ժամանեալ. և ամե-
նայն արհամարհ երևեալ յաչս զորա վասն չարաչեր
պարտելի հրամանացն հեռևելոյ. Ողջ լեր։

Սրդ առեալ այնուհետև զինուորացն զթուղթն և
զտուրքն հանդերձ կապանօք՝ ի Հանապարհ անկանէ-
լին. և նոքա անյապաղակատն ձայնիւ հանապազորդեալ լե-
նէին յաղօթսն Աստուծոյ զՀանապարհին։ Ապա հար-
ցանէր երանելին Եւտուտոս զտուրքն Ովրեաստէս, և
ասէր. Եղբայր Ովրեաստէ, պատմեա ինձ թէ ո՞ր օրի-
նակաւ կատարեցաւ տուրքն Սէքսենտոս, և կամ յո-
րում տեղւոջ։ Պատասխանի ետ տուրքն Ովրեաստէս, և
ասէ. Յետ հատանելոյ զքսին զԼեռնիս մահու՝ ի վերայ
սրբոյն, աղաչեաց երանելին զդահիճսն Թոդիայոսիա-

1. Մի օր. արկայայքել։
2. Մի օր. Հեբրայեցւոյն։
3. Մի օր. վարժարանաց։
4. Մի օր. ի ծայրագոյն։

նել զնա, զի եկեալ տեսցէ զքոյդ առաքինութիւնն և
ողջունեսցէ զքեզ, այլ ոչ ոք ներեաց լսել նմա, քան-
զի ժամ էր ձաշոյ։ Եւ փութային որովայնի ծառայքն
կատարել զհրամայեալն նոցա յինչխանէ անտի. և
վաղվաղակի ածին զնա մերձ ՚ի ձորակ անդր, զոր մեք
Կեռնատն անուանեմք, և ՚ի Հանապարհին սկսաւ սաղ
մոսել և ասել. Ելանեալ են ամբիծք ՚ի Հանապարհի,
և ոչք գնան յօրէնս Տեառն։ Եւ ՚ի կատարել սաղմո-
սին եՀաս ՚ի տեղին յայն, և անկեալ յերկիր ՚ի վե-
րայ երեսաց իւրոց՝ արտասուապոչ պաղատանօք աղօ-
թըս մատուցանէր ՚ի սրտի իւրում։ Այսպա յոտն կա-
ցեալ և զամէնն ասացեալ, և շուրջ հայեցեալ՝ ետես
զիս զի կայի մերձ առնա. կոչեաց զիս և պատուիրեաց
ինձ խորհրդաբար և ասէ. Եղբայր Ովրեաստէ, ողջու-
նեա զերկուս երանեալ տէրն իմ Եւստաւոխս, և ա-
սա ցնա զի աղօթս արասցէ վասն իմ, և փութանակի
հասանիցէ. զի ես անձկացեալ սպասեմ նորա գալըս-
տեանն։ Եւ ասացեալ նորա զայս՝ վաղվաղակի հատին
զգերս նորա ՚ի նմին տեղւոջ։ Եւ ոչ ոք այնուհետև ՚ի
հաւատացելոց իշխէր մերձենալ ՚ի նշխարս նորա վասն
անհի սպառնալեաց իշխանին։

Բայց երկիւղիւք[1] վեց յՕվրաւրակացւոց քաղաքէն
եկեալ ՚ի գիշերի գողացան զսուրբ մարմին վկային, և
զգերս նորա ոչ գտին, և սկսան լալ դառնապէս.
յայնժամ ազդաւ մի ՚ի վերայ ծառոյ նստեալ զձէն
բարձեալ ուժգնակի, և գնացեալ երկիւղքն անդր
գտին սուրբ գերս նորա ՚ի մէջ լծորդութեան ձղոյ
ծառոյն. և անձառ խնդութեամբ լցեալ, ամփոփէին
առ այլ նշխարս երանելոյն։ Զայս լուեալ երանելոյն
Եւստաւոխոսի վտակք արտասուաց իջանէին յաչաց
նորա. կարդաց առ Տէր Աստուած ուժգին պաղատա-
նօք և անեղկեալ յուսով. զի ըստ նմին օրինակի կա-
տարեսցին և նոցին ընթացք նահատակութեան. և
ասէ ցսուրբն Ովրեաստէս. Փութացուք գնացուք, եղ-
բայր իմ, որպէս զի և մեք արժանացուք հասանել
մասին ժառանգութեան նորա ՚ի լոյս միջանձնեալսն։
Ամէն յետ հինգ աւուր ածեալ եղէն սուրբ վկայ-

1. Յոր. երկիւղ։

քըն ՚ի մայրաքաղաքն Սեբաստացւոց, և մատուցին զՀրեշտակապետսն Լուսիոյ դքսին առաջի Սգրիկողայոսի հոգեմռնի, և հրամայեաց ընդՀատուլ։ Եւ յետ այնորիկ երբեմն լուաւ զբանս Հրեշտակապետին, Հրաման եւ զինուորացն առնել ՚ի բանդ, և այնպէս ՚ի կոչէղս զատս նոցա և զգուշութեամբ պահել. և ՚ի վաղուեան առաւըն ՚ի ծագել արեգականն Հրամայեաց զԹէկատըն յօրինել ՚ի մէջ քաղաքին, և նատեալ ՚ի վերայ բեմին, անթիւ բազմութեան շուրջ կալով զնոսա։ Յայնժամ Հրամայէր ածել զառաջին տղայն Հրապարակին. և քարոզն աղաղակէր ՚ի լուր ամենեցուն Հրամանս առնուլ զատաւորին և ասէր. Գրաւորական նամակքն որ առաքեցան ՚ի Պարհայոց դքսէն Լուսիայոյ, ընթերցեալ դարձեալ ՚ի լուր ամենայն առնէին. և յայտնի լինի ՚ի նոսանէ մակագրեալ ամբաստանութիւնքն՝ որ ինչ վասն Եւստաւախոսի էին. Եւ յայժամ ընթերցան զնոսա ՚ի մէջ առնէին, շարժեաց զգլուխ իւր առաջին Սգրիկողայոս, ազանչանայր ընդ խնամատարութիւնն Եւստաւախոսի, և ընդ պնդութիւն Հաւատացեալն և արիական մարտի նորա։

Յայնժամ ասէ տատրըն. Ո՛վ Եւստաւախէ, մի թուլասցին քեզ աստանօր գատաստանք տանջանացն առ յինէն՝ զոր օրինակ տեսեր անտանօր և կրեցեր ՚ի ձեռն մեծի դքսին Լուսիայ. այլ ևս գժնդակ և չար անցս անցուցից ընդ քեզ, և ՚ի մահ ևս մատնեցից զանձն քո. արդ լուր լինէ, և յառաջ քան զտանջանսն խոնարհեալ երկիր պագ մեծի աստուածոց մերոց, և հպատակեր Հրամանաց նոցա, զի պարզեւս և պատիւս ընկալցիս ՚ի նոցանէ։ Պատասխանի եւ տըրըն Եւստաւախոս և ասէ ցդատաւորն. Ո՛վ Լուսիոյ մատուռնդ և խոհեմագոյնդ յիշխանս, իշխեն օրէնք Թագաւորաց, եթէ ոչ իշխեն։ Սգրիկողայոս ասաց. Ա՛յո իշխեն. քանզի և պահեալ խակ լինին ՚ի նոցանէ։ Տըրըն Եւստաւախոս ասաց. Նախ քան զամենայն պարտ է գիտել Թէ ի՞ սո քեզ, և որոց ընդ քեզ են, եթէ միայն ՚ի դարուԹիւնքն են գրեալ։ Սգրիկողայոս ասաց. Սակս որոյ իրի այդպիսի բարբառես, ո՛վ անմարթ գլուխ. ոչ ոք հակառակ կայ օրինացն գործել գործս և անիրաւ ժպրծեալ յանդգնուԹեամբ հա-

մարձակեաց։ Ելից եւ ասէ Եւստաւոս առաց. Ով դատաւոր, քանզի պարտական լինի յօրինս Սեբաստիոսի կայսեր այսպէս. Բռնութիւն, ասէ, ’ի բաց լեալ յամենայն իրէ, և ’ի գործոց և ’ի բանից. բայց հաւանութիւն յամենայնի քաղաքավարեալ լինի. քանզի պարտ է այնմ որ իշխանութեամբ լինելոյն վճռանայեալն նմա գործել, կամ հաւանեցուցանել կամ հաւանել։ Եւ դարձեալ պարտական է յեւտաւոսէ մինչ նուագիս այսմիկ առնց, և ասէ այսպէս. Սիրելի իմանելն, ասէ, հրամայեմք զերկիւղն ընդ հեզութիւն խառնել ’ի գատելն իւրում, որպէս զի մի ումանց վասն երկիւղին առ թ շնաութիւն առնել, և ոչ վասն հեզութեանն՝ հեզգութիւն առ ումանս ’ի կիր արկանել։ Ցայսոսիկ զոր առացի խակ, ով դատաւոր, պրեա՛լ է այսպէս եթէ ոչ։ Ագրիկոլայոս առաց. Այո։ Սուրբն Եւստաւոս ասէ. Արդ աղաչեմ զքեզ՝ զի և այս առհմանեալ օրէնք կարգաւորութեան և առ իս պահեալ լինի։ Ագրիկոլայոս առաց. Առ քեզ և առ առաւելեանն հաստատուն և անշարժ և մեծաւ երկիւղիւ պահել հարկաւոր եղիցի։ Սուրբն Եւստաւոս ասէ. Ապաքէն աղաչեմ զքեզ, ով իմաստուն ’ի դատաւորդ, հեզութիւն խառնեա յերկիւղ քո ըստ օրինացն, որպէս հմտագոյն գոլով քո քան զբազումս ’ի մարդկանէ, հաւանել յառաջագոյն կամ հաւանեցուցանել ըստ օրինաց դատելոյ, ապա եթէ այդպէս ոչ կայ՝ առանց բանից և քննութեանց և տարաձգութեան պատուհասեա, ասեն, արա զոր ինչ և կամիս վաղվաղակի։ Նոր Ագրիկոլայոս. Ձոր ինչ և ախորժես առ հանդարձակութեամբ, և ըստ արդար դատաստանի հաւանեա քաղաքավարել։ Սուրբն Եւստաւոս ասէ. Ո՞ւմ հրամայես ինձ, ով դատաւոր, երկիւղ պահանել, առաւածոյ եթէ Աստուծոյ, Ագրիկոլայոս առաց. Աստուծոյ և աստուածոյ։ Սուրբն Եւստաւոս ասէ. Մեծապետնէից և փոքունց։ Ագրիկոլայոս առաց. Այո, Ագրամպտայ յառաջագոյն, և Ագոդնի, և ապա Պխիդոնէի։ Սուրբն Եւստաւոս ասէ։ Որոց մարդարէից և քարոզեաց հաւանելոյ, և կամ յորոց իմաստնոց գտեալ էք զնոսա երկրպագելիս գոլ։ Ագրիկոլայոս առաց. Պղատոնի, Ագրիստոտելի, Հեմեսի և

*Չեմերտի և այլոց իմաստնոց միաբան ընդ նոսա գլ-
ըեալ, որոց եթէ հմտացեալ էիր, պաշտէիր և զկինշա-
տակս նոցա, ոչ եւստաւատիէ։*

*Սուրբն ասէ. Ոչ եմ անտեղեակ միտս ումեք 'ի
նոցանէ, այլ ամենեցուն հմտացեալ եմ'ի մանկու-
թենէ իմմէ. ուսեալ եմ և զերկրաչափականն ամենայն,
հմուտ եմ աստեղաբաշխութեան արհեստից, և ոչ
հեռի յերկրաչափական գծից, և վարժումն թուա-
կանութեան օրէն իսկ է մեր. առաքինասէր հօր հան-
դիպեալ եմ՝ մանկացու գոլով նորա արհեստագիտ
մատանց և գիտութեանց. և եթէ կամեսցին՝ սկզբ-
նաւ 'ի Պղատոնէ։ Սգրիկողայոս ասէ. Գիտեմք զՊը-
ղատոն առ Տիմէ մատենին տրամաբանութեան, 'ի
Պիւռիայ լինել ազգաւ առ աստուածոյն մատուցա-
նելով. Թուեցի այս քեզ իմաստուն գոլ եթէ ոչ։
Սուրբն Եւստաթիոս ասէ. Յոյժ բամբասէ Պղատոն
զաստուածն քո Ապրահամ, զի յերկրորդում մատե-
նին այսպէս գրէ. Բանզի Աստուած բարի է, թերևս
ամենայն բարեաց պատճառ, և բազմաց անպատճա-
ռելի, այսինքն չարեաց. իսկ զբարեաց զայլ և ոչ զմի
ոք պատճառ գոլ ասելք քան եթէ զԱստուած։ Ա-
զեօք ոչ է պարտ ընդունել ոչ զՀեմերտս և ոչ զայլ քեր-
թողն, որք ասեն թէ Ցեւս բարեաց և չարեաց պատ-
ճառ գոլ հանդիսին, զերկմանց և զհամբուրոյ[1] շփոթու-
թիւնս 'ինանանէ եղեալս զոր 'ի վերոյ Ա.քայեցւոցն գոլ
ծեալ լինելը Պանտորոսն։ Ո՞չ սա է Ցեւսն, որպէս ասէ
քերթողն, ընդ Ա.թենայ շաղաշարեալ բնակութեամբ.
այլ ոչ գոլեացուք և զմաքառումն աստուածոցն և ըզ-
պատասխան, զոր նոյն քերթողն ասէ լինել 'ի Ցեւսն
Թիմիդոսի և Ա.րամազդայ, զոր միւս աստուածս կար-
ծեա։ Եւ Եսքեղոս ասէ. Եթէ Աստուած իսկ պատ-
ճառ բանաւոր մարդկան, յոյժ առ չարագուշանել ըզ-
հոգեղէնն կամիցի. և Պղատոն՝ և ոչ զմի ոք կամի քա-
ջաբարութեան բնակչաց, ոչ համբակի, և ոչ ծե-
ծոյ՝ ասել լինչ կամ լսել վասն նորա, զի և ոչ է օրէն
Աստուծոյ՝ հօր անարգող լինել ոչ պարտ և Ցեւս՝ զոր
այժմս առ 'ի ձէնջ պաշտեցեալ լինի, զիւր հայրն ըզ-

1. Մի օր. զհամբոսէն։

կռանոս յերկինից յերկիր ինջուցեալ, և խորտակեաց զնա և 'ի կարտապ փոխարկեալ. զի այնպիսի մեռոյ ապիրատ խաբանօք ապականեսցէ զկինն: Վասն որոյ յիրաւի Պղատոն մախացեալ ընդ նմա թշնամանէ զաստուածն քո Ջեւս, որպէս զի եթէ ողբովք և կաղանական մոլորութեամբ ընծռնել Ջեւս զաստուածն քո: Ո՛վ դատաւոր, ողբա զմահն զՍկեդրոնիայ. ոչ ինչ այդ այդպէս. և կամ եթէ ոչ են գրեալ յատաղեական մատեանս ձեր այդոքիւ: Սպա եթէ ինքն Պղատոն շարադրող իմաստութեանն ձեր հրաժարեաց զայդ լսատ այնմ, որ զերկինն և զերկրի հանդամանս պարհատութեանն քննեաց, և 'ի ծայրս գոլորակցութեան արհեստից հասեալ եղև, առնայն հիզութեան առիթ զսա գոլ, ասէ, և գրատևանս յամենեցունց առ սա ձգեալ վատաբարոյն խեղնեշութեամբ 'ի մէջ կացուցանէ, զտուին բղջախոհական անիրաւութեան, անդնդային չարահոտ տիրեալ դառնութեանն, անյագ վաւաշոտութեան յապականութիւն ջրհեղեղեալ, զոր և հրամայեն ոչ միում ումեք 'ի մարդկանէ որ առաքինութեան փոյթ ունիցի՝ նմանող լինել ախտից նորա, այլ մանաւանդ մեռելութիւն բացայայտել ախտից, և նմանել Սքոտուծոյ ըստ կարողութեան մարդկան. և զիարդ կամ օրպէս զոր նոքա ընծռնեալ եղեն գործովք և անհանձար մտօք, տորանկեալ լինիք և դուք յայնոսիկ, և զմեզ հարկէք այսօր ստայօղ ոչխին և ապականագործ մանկամոլիցն և դիւանուէր անշունչ պատկերացն երկիր պաղանել: Սգրիկոլայոս ասաց. Յաղագս մեծի մարդասիրութեանն իմոյ նեբեմ քում յանդգնագոյն շաղակրատս բարբառելոյդ. արդ ասա և դու, ո՞ ոք է այն զոր դու անուանեալ Սքոտուած պաշտես, և զինչ է յեղանակ նորա, և օրպէս մարդ գոլ երևեցաւ 'ի կնոջէ, և 'ի դատաստան մահու եկեալ, և խաչեալ 'ի հրէական ազգէն աստուած ձեզ կարծեցաւ: Սուրբն Եւստաթիոս ասէ. Եթէ հրամայես և անձանձրութեամբ լսես, Կարծցուք քննութեամբ զառաջինսդ, և յայնժամ ըստ կարգի առացից զոր ինչ խնդրեսդ, եթէ ներեսցէ ժամանակն:

Սգրիկոլայոս ասէ. Միանգամ ներողութիւն ընդ-

կալեալ յինէն ի ժամու և ի տարաժամու, առ զոր
ինչ ախտիժեսդ: Սուրբն Եւտաւատիոս ասէ. Այն-
պէս որ զբաղխան խորհիցի, պարտ և պատշաճ է Այ-
տուած արդար վարկանիլ, անհատանելն, անքննելի,
անսահման, անայլայլելի, անպատմելի, ամենայն է-
ական զօրութեան գվերապոյն առացեալ զատուա-
ծային առաւելութիւնն իւր եթէ ոչ: Այրիկոզայոս
ասաց. Այդպէս կարծեմ ուղիղ զոլ, որպէս դուզ ա-
սես: Սուրբն Եւտաւատիոս ասէ. Յաւելցուք ի վե-
րայ ամենայնի զնա անապական զոլ եթէ ոչ: Այրի-
կոզայոս ասաց. Առանց ամենայն պատճառանաց:
Սուրբն Եւտաւատիոս ասէ. Այս գիտիլ այլոց ամենց
աստուածս զոլ ասացուք, և այնպիսի անապականու-
թեան գնատանելոցդ ասացուք հաստատեալ, թէպէտ
և փոքր ինչ բարեբախտութեան հասեալ լիցեն, ոչ
կարծես համարել գնոսա աստուածս. զի անպակաս է
Այստուած, որպէս յատաջագոյն ասացաք, զոր և ամե-
նայն մարդկան հաւատալ և երկիր պագանել արժան
է: Այրիկոզայոս ասէ. Աստուածութեամբ այդ այդպէս
լիցէ: Սուրբն Եւտաւատիոս ասէ. Ձիսիլ բազում աս-
տուածքն քո՝ այսորիկ անմահ և անապրատ աստուա-
ծութեանն հնելոցդ են բոլորովին, որպէս և դուք ասէք, և
հաւատարազօր են միմեանց, որք մեկնեալ են ըստ գո-
յակցութեանցն: Եւ եթէ այդպէս է՝ որք ի մի աս-
տուածութիւն են աւարտեալք և զօրութեամբ և
գործովք հաւասարամանեալ, ոչ ասացին աստուածք
մեծագոյնք և նուազք. այլ Այտուած անբաղդատելի
զօրութեամբ միացեալ, և զմիակամ գաստուածու-
թիւնն ունելով ոչ կարծիցին ումն յերկինս բնակելով,
և ումն ի ծով, ումն ի սանդարամետս. զի որք զայնպի-
սին ժարհին բարբառել, վերնպեալ գտանին ի կեծաց
յուսոյն, և օտարացեալք յանբաղդատելի խոհութե-
նէն յայնմանէ՝ որ կայ և ծնայ յաւիտեան. զոր և վար-
գապետն քո մեծ հրաշալին Պղատոնիկոս՝ տրամադրէ
յիւրում տրամաբանական մատենին, և ասէ այսպէս.
եթէ Վերակատար գոլիս, արարչական զօրութիւնն
և զբնաւս տաճէ մակաւասար բնութիւնն, և վերոյ
կալով ամենայնիս խնամէ, և զամենայն տեսանէ, և
ինքն յոմեքէ ոչ տեսանի, այլ անցեալ կայ տարա-

անդեաւ յիւրում առանձին բարձրութիւնն։ Իսկ Հերմէս՝ մեծ շարժող գնաց և տածող և անեղ կամեցաւ ասել. Եւրիպիդէս[1], անտեղի. և Հռոփոս, բարեբար և անկարօտ. և Սփիտտաեէլէս ըստ պղատոնական նմին հեռեւիւր բանից։ Սակ եթէ իմաստունքն ձեր յանեղութիւն զօրութիւն մեծին Աստուծոյ ակնարկեն գնացին և ասացին գնա արարիչ ամենայնի զոլ, գինքդ իմաստութիւնս անիմաստապոյն եղեալ, զոր իմաստունքն ձեր պախարակեն, և դրտվանս դիպողպոն[2]'ի վերայ հաստուցանեն, համարձակիք գնոսա աստուածս ասել, և արարիչ երկնի և երկրի իշխեք կարդալ, և զԱրամազդ՝ հայր աստուածոց ասէք լինել, զայն որ սպանութիւն և զապականութիւն և զդիւահար այլակերպութիւն և զախտս ամենայն գինքեան չարեաց գինն իւր թողեալ յիշատակ, ելոյ կէզ գոլով'ի Կրետէս կղզւոջ անկեալ կայ, զապականութեան ժառանգել կատարած և տարազարդ ծնեալ'ի վայելչութենէ։ Եւ Պլոխդոն զոր ասէք արարիչ ջրոյ և գոյացուցիչ ծովու, և զդիւսաբնակն զԱպողոնն՝ կոչէք հաւատար և հանգուցակից արեգական և ոչ ամաչէք. այլ և զՆոմեսիոս[3] զոր մայր արքեցութեան անուանէք գնա, և երկրպագէք նմա՝ նիւթ պատմութեան. և զՀերմէսսոս՝ պարգևիչ հոյս ասէք լինել, և հաւանիք առասպելական և մեռոք պատմութեանց. թողում ասել զամենայն քաջազանս չարագործս խելացնորեալ[4] մոլորման դիւոյս զանազան չարեաց, զոր և ոչ է պարտ ընդ միտ ածել ուժգ'ի մոլորեցանել համ ձառել առաջի պարզամիտ լսողաց։ Սակ, ով դատաւոր, եթէ հաւանեացիս լսել որ ինչ յաղագս Հիմարտին Աստուծոյ իմոյ պատմութիւն է՝ կենսաբեր անօրինութեանն, կարծեմ եթէ խակոյն վըճիռն լինիցիս նմա, և առժամայն խորտակեսցես գութանակի զդիւսածոյլ պատկեր աստուածոց քոց, և զերծեալ'ի խաւարային ժանեաց վիշապին, անկցիս յուսկան կենսաբեր աւետարանին երկնից արքային[5]։

1. Ցօր. Իւրիպիդէս։
2. Մի օր. Դիոդղեան։
3. Ցօր. Կոնէսիա։
4. Մի օր. Խելացնեալ։
5. Ցօր. արքայութեանն արքային։

Արդ զայս ամենայն առացեալ երանելոյն Եւտաւա-
տիոսի առաջի դատաւորին և ամենայն հրապարակին.
և առ այսոսիկ ոչ կարացեալ ամենևին պատասխանի
առնել սրբոյն՝ Ագրիկոլայոս դատաւորն, ՚ի բազում ժա-
մըս լռեալ կայր, հազիւ ուրեմն առ այնոսիկ
պատասխանի, և ասէր. Ով Եւտաւատիւ, զամենայն
շաղփաղփանս յօդուածոց յիմարութեան անյարմար
բանիցդ, զոր ուսեալ ես ՚ի մանկութենէդ, և ոչ կա-
րացեալ երբէք իմանալ զօգտակար շահիցդ յիմաստ-
նոց խրատուց, այլ զոչ պատշաճն և զվնասակարն
քեզ իմացեալ, զոր երկմտիլ իշխեցեր առաջի իմ,
կամեցեալ առ փոքր ի բարձել զմեզ առ կրօնս քո.
և զայդ ոչ իմացեալ ծանեալ թէ ամենայն բանք քե-
րանոյ քո զոր խօսեցար՝ առասպել համարեալ են ա-
ռաջի աչաց իմոց: Արդ յայսմ հետէ ոչ ևս նեղիչ քեզ
առեանս մեր, և հրաման ինքնակալին խօսել ինչ յա-
ղագս Աստուծոյն քո զոր խոստացար ձառել. զի ոչ
եմք բաւական զմեծաց և զաստուածայնագոյն թա-
գաւորաց մերոց զառաքինութիւնս բամբասել, այլ
յամենայնի հպատակ լինել նոցա. վասն որոյ թողեալ
քո զամենայն վկայասանութիւն պատմութեանց քոյ,
և՛ի բաց կացեալ յընդդիմաբանութեանցդ՝ անկեալ
երկիր պագ և զոհեա աստուածոց ինքնակալին. ապա
եթէ ոչ՝ զփոյձ առցես զևս սաստկագոյն տանջանաց
զոր և ոչ երբէք առեալ իցես:

Սուրբն Եւտաւատիոս ասէ. Ձհնարդ վայրապար և
մոտի աշխատութիւն հատուցանես մեզ բանիւք, և
ոչ յառաջագոյն ՚ի գործ արկանես զոր ասես: Յայն-
ժամ անօրէնն Ագրիկոլայոս հրամայեաց բերել մա-
հիճն երկաթիա, և տարածեալ ՚ի ներքոյ հուր բա-
զում, և իբրև տաքութիւնն լինէին մահիճքն, և ձա-
ռագայթք փայլատականց հատանէին ՚ի նմանէ, հրա-
մայեաց զսուրբն Ովետատէս յառաջ մատուցանել և
յոտսայս առնել ՚ի վերայ հրացեալ մահճացն: Այն դա-
տաւորն ցսուրբն Եւտաւատիոս. Ով Եւտաւատիւ, ըզ-
պատուհասն որ կայ ճոպ քեզ յայսմ տեսանել, յա-
ռաջագոյն զմտաւ ածել քեզ զփոյձ տանջանացդ:
Յայնժամ տարան զսուրբն Ովետատէս մերձ ՚ի հրա-
ցեալ մահիճն՝ անօրէնն սպասաւորքն Ագրիկոլայոսի:

Իբրև եառ սուրբն զպատրաստեալ տանջանարանն՝ զարհուրեցաւ և զանգիտեաց յոյժ. և սկսան այլա֊ դունել դէմք երեսաց սրբոյն այնորիկ. և հայեցեալ՚ի սուրբն Եւստաւատիոս՝ ասէ ցնա. Աղօթս արա վասն իմ, տէր Եւստաւատիոս, զի տագնապն յիս միտք իմ։ Պա֊ տասխանի եառ սուրբն Եւստաւատիոս, և ասէ ցնա. Մի՛ երկնչիր և մի՛ վհատիր, և մի՛ զանգիտեր եղբայր իմ Ովրեաստ. զի առաքեալն Քրիստոսի ասէ զերկիւղն, այլ զպայծառութիւն և ոչ մի ինչ լինիցի քեզ, եթէ հաւա֊ տալ գնասցես առ ընծայացս նահատակութեանն. զի ընդ մեզ է օգնութիւն Տեառն Աստուծոյ մերոյ, փըր֊ կելով զմեզ յառաջանահեայ նեղութենէն։ Այլ մի՛ երկնչիր, այլ յիշեա զնահատակութիւն Աբդիշոյի և այլ սրբոցն, և մի՛ երևեցցիս վհրջին և վատթա֊ րագոյն. զի երևելիքս ժամանակեայք են, իսկ հան֊ դերձեալքն յաւիտենականք, որ պատրաստեալ կայ և ինայ գանձ անապականն՚ի Տեառնէ յուսացելոց իւրոց։

Այլ մինչդեռ զայսոսիկ ասէր սուրբն Եւստաւատիոս ընդ սրբոյն Ովրեաստի, անթիւ բազմութիւն շուրջ զնա֊ քօք, այլ և այլք քաղաքին Սեբաստիոյ հանդերձ կա֊ նանօք և որդւովք ժողովեալ էին՚ի տեսիլ սրբոցն, և դիմէին կուտէին մի զմիով որ ոչ գոյր թիւ. և սպա֊ սաւորքն սահմանայի առաւել քան զառաւել բորբո֊ քէին զհրաման՚ի նահատակութիւն Յայնժամ երանելի վկայն Քրիստոսի երթեալ մօտ առ հրացեալ մահիճն, և սկսաւ աղօթել այսպէս. Աստուած յաւիտե֊ նական, հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ա֊ պաւէն և յոյս ամենեցուն՝ որ կարդան առ քեզ՚ինե֊ րութեան, զթա յանդիմանութիւնս իմ և հաստա֊ տուն պահեա՚ի հաւատս Աշմարտութեան որ առ քեզ, Տէր Աստուած իմ. տուր համբերութիւն տկարացեալ մարմնոյ իմոյ, զի ոչ արհամարհես զայսոսիկ որ յա֊ ռաջեալ էն՚ի քեզ. զօրացո զմիտս իմ, զի անուն քո փառաւորեցայ յաւիտեանս։ Եւ առաջեալ զամէնն հանդերձ երանելի վկայիւն Եւստաւատիոսիւ, ինքեաց գինքն և վազվազակի առանց զանգիտելոյ եկեալ ե֊ կաց առաջի հրացեալ մահճացն, պարզեցաւ բոլոր մարմնով՚ի վերայ հրահոսան մեքենայիցն, ՚ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Տէր Յիսուս, ՚ի ձեռս քո

աւանդեմ զոգի իմ։ Եւ նոյնժամայն աւանդեաց զոգին։

Ձեռ այսր ամենայնի հրամայեաց գաւառին տալ զաւրքն եւ առաւօտու կապանօք՝ ի քանդ, և անդ առանձինն լինելով նորա՝ կոչեաց առ ինքն զծառայն որ էր ընդ նմա և ասէ. Երթ, որդեակ իմ, և փութա նախ քեզ առնել քարտէս այսրէն, զի գրեցից զկոտակ ելից հրաժարման իմոյ, քանզի հանդերձեալ եմ և ես վաղիւ կալ առաջի Աստուծոյ։ Իբրև կատարեաց զհրամայեալն, գրեաց երանելին զամենայն հանդէս նեղութեանցն՝ որ հասին՝ ի վերայ նորա. և պատուիրեաց, զի զառաքեալսն ոսկերս նշխարաց նոցա տարցեն՝ ի հայրենի քնարուն թիւնն իւրեանց Յովրաբակացւոց քաղաքն և դնել յայցելուս[1] առեալ որ կոչի Բոստա, հանդերձ և այլովքն՝ որ ընդ նմա կատարեցան, Ոլբեատէսիւ, Մարդարիոսիւ, Աբգենատիոսիւ, Եւգինիոսիւ. քանզի տուրբ վկայքս այսոքիկ երկնեցուցին զտուրբն Եւստաթիոս, զի յետ վախճանի նոցա՝ մերձ առնիցէ զիցն մատմինք նոցա։ Եւ զհայրենի առացուածս նորա որ Յովրաբակացիան էր, հրամայէր տալ՝ ի սպաս պիտոյից սրբոյ վկայարանին իւրեանց. և զայլ ամենայն պաճարեցէն անդեայս և զինչս յերկուս բաժանել, լցմինն բաշխել աղքատաց, և զմիւսն շնորհել քերցն իւրոց, և զծառայն և զաղախնեայսն ազատել հանդերձ Թոշակօք։ Եւ զայս այսպէս կատակ գրեալ՝ պահեաւ զօրն զայն[2] ՝ի բանտին։

Իսկ եպիսկոպոս քաղաքին Սեբաստիու յայնմ ժամանակի՝ ի Թաքատէ էր վանս ջարտշուկ և գառն տանջանացն։ Եկն՝ ի ծածուկ՝ ի գիշերի՝ ի բանտ անդր, տուեալ ինչս պահապանացն, աղաչեաց զի ազդարարեսցէ սրբոյն Եւստաթիոսի. քանզի լուեալ էր եղեռանելն եպիսկոպոսին վասն իմաստութեան նորա, և համբերատարն ժուժկալութեան նորա և անտանելի չարչարանաց նորա, և թէ ոչպէս յամօթ արար զիշխանն անօրէնութեան հանդերձ աստուածոցն իւրովք։ Եւ մտեալ՝ ի բանտն՝ ետես զսուրբ վկայն պրկեալ՝ ի կոճեղս, և անկեալ՝ ի վերայ պարանոցի նո-

1. Մի օր. յոսելոմ։ 2 Մի օր. զայն օր։

*լա եւայց դառնապէս, եւ սկսաւ համբուրել զշղթայն
որ յոտն եւ ’ի ձեռս նորա։ Եւ ասէ ցնա տուրբ եպիս-
կոպոսն. Երանելի ես դու, որդեակ իմ Եւստաւատիէ,
զի ընկալար այդպէս համբերութիւն ’ի ժուժկալութեան
’ի մարդասիրէն Աստուծոյ, եւ ախոյեան անպարտելի
գտար ընդդիմամարտ զօրութեան թշնամւոյն, եւ քար-
ձրացուցեր զարդիւնս արդարութեան քո. միայն եթէ
հասանիցես անխափանապէս ’ի նպատակ վերին յաղթա-
նակին ’ի փոխուիս Հօրն երկնաւորի, հաղորդ լինել քեզ
Մխածնի չարչարանաց նորա։ Արդ աղաչեմ զքեզ, որ-
դեակ իմ, յիշեա զիս առաջի աթոռոյ Մխածնին ’ի
հանդիսանալն քում փառաւք նմա, եւ մի մոռանար զան-
արժանութիւնս իմ։ այլ հայցեա մանն ողորմութեան
գտանել ինձ, եւ փարատել զմէգ եւ զխաւար հալածա-
նաց՝ որ զմեօք շուրջ տարածեալ է. ծագել զլոյս աս-
տուածգիտութեան ’ի սիրտս յարուցելոց ’ի վերայ
մեր, ընդհեղուլ զփառաղուխն աչխարհի, զի բար-
ձրասցի եղջիւր եկեղեցւոյ սրբոյ։ Սուրբն Եւստա-
թիոս պատասխանեաց եւ ասէ ցեպիսկոպոսն. Տէր իմ
եւ հայր հոգեւոր եւ վերատեսուչ հօտին Քրիստոսի, մի՛
այդպէս խոտհեսցի սրբութիւնդ քո. զի եւ ես ’ի քէն
ունիմ պէտս օգնականութեան յուղարկաւոր լինել
ինձ աղօթիւք, որպէս զի արժանաւոր գտայց հասա-
նել մասին ժառանգութեան սրբոցն ’ի լոյս։ Եւ ասաց
ցեալ զայս նստաւ ’ի մէջ բանդին։ Ցայնժամ սուրբն
Եւստաթիոս ասաց ցեպիսկոպոսն. Քանզի հանդեր-
ձեալ եմ վաղիւն յերրորդ ժամու ելանել ’ի մարմնոյ
սոսկ եւ մնանել առ Աստուած՝ առ որ անձկացեալն
եմ, քանզի ծանեայ զառաջնորդիչն ինձ Հանապարհն ’ի
ձեռն հրեշտակին որ երեւեցաւ ինձ. արդ առեալ ըմկըզ
տակս իմ ընթերցիր։ Եւ յորժամ ընթերցաւ, աղաչեաց
երանելին զեպիսկոպոսն տարածել զթուղթն հան-
դերձ գաւխաք կղերիկոսացն որ ընդ նմա էին, որպէս
զի հաստատեսցէ եւ անշարժ եղիցի. եւ երդմնեցոյց զե-
պիսկոպոսն, որպէս զի ինքն աշխատեալ տարցէ զինըշ-
խարս նորա եւ զսրբոյն Ոլվեստրի ’ի գաւառն Իւրեանց,
եւ դիցէ որպէս հրամայեաւն էր հանդերձ այլ եւս ըն-
կերօքն ’ի նմին տեղւոջ, զոր յիշատակեալ է ’ի կատակն
Իւրաւմ։ եւ զվարձս բարեաց ընկալցին ’ի Տեառնէ։*

արարչէն՝ի հանդերձեալ յաւիտենից ընդ ամենայն սուրբս։ Եւ եպիսկոպոսն խոստանայր անյապաղ կատարել զամենայն պատուիրեալսն՝ի նմանէ. և այլ ևս աղաչէր զնա երանելի վկայն, զի զսուրբ հաղորդութիւնն յետին Թոշակին առցէ՝ի նմանէ. քանզի ասէր, եթէ յորմէ հետէ ըմբռնեցայ՝ի կապանս՝ ոչ եմ հաղորդեալ՝ի կենարար մարմնոյ և յարենէ Որդւոյն Աստուծոյ։

Ապա այնուհետև յերկիւղածէ և՝ի պատշաճաւոր պաշտօնէից բերեալ լինէր խորհուրդն սրբութեան, և արիւն զենման կատարեալ, և մատուցեալ սուրբն Եւստաթիոս առ երանելի եպիսկոպոսն՝ ընդունէր՝ի նմանէ զերկնային մանանայն. և յանկարծակի որպէս փայլատակումն ահեղ ծագեաց՝ի բանդի անդ, և անտառեր լուսով լցեալ լինէր տունն և հոտ անուշութեան բուրեաց, և երգք հրեշտակաց՝ի նմա. և ահա ձայն լսել լինէր յանձառ լուսոյն այնուիկ որ ասէր. Ով Եւստաթիէ, քաջ զինուոր իմ, բարւոք աշխատեցար, այսուհետև ընկալ զպսակն զոր պատրաստեալ է քեզ Յինէն։ Եւ իբրև լսէին զերանելի և զերկնաւոր բարբառն, ամենեքեան անկեալք՝ի վերայ երեսաց իւրեանց, և անձառ խնդութեամբ լցեալ երկիր պագանէին Աստուծոյ, փառք՝ի բարձունս առաքելով փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ զօրացուցանել կամեցաւ զերանելի վկայն իւր։

Ապա զգիշերն ամենայն հանապազորդեալ յաղօթս էր Աստուծոյ և՝ի վարդապետութիւն սրբոյ վկային Հանդերձ եպիսկոպոսին. և իբրև այգն զարուսանն մերկանայր, անկանէր առաջի սուրբ վկային եպիսկոպոսն, ողջունէր զսուրբ և զաստուածակիր մարմինն նորա, և՝ի գուռս անկեալ առաջի Աստուծոյ հանդերձ նովաւ՝ խնդրէր այցելութիւն առնել փրկեալ ժողովրդեան իւրոյ, և դադարեցուցանել զխռովութիւն հալածանաց եկեղեցւոյ սրբոյ։ Իսկ սուրբ վկայն քաջալերել զձեռանէ եպիսկոպոսին և եդեալ՝ի վերայ աչաց իւրոց համբուրէր և ասէր. Աղօթս արա վասն իմ կենդանի վկայ Քրիստոսի, և մի մոռանար զգրեանն՝ի կտակին իմում։ Եւ յետ այսորիկ յարուցեալ եպիսկոպոսին, տեառնապրեալ զնա նշանաւ

խաչիւն և ասէ. Խաղաղութիւն Տեառն Աստուծոյ է՝ ինչ ընդ ձեզ: Եւ նոյնժամայն եկ արտաքս:

Իսկ Սգրիկողայոս դատաւորն ընդ առաւօտն նստէր՝ ի վերայ բեմին և հրամայէր ածել զառաջեաւ ըզսուրբն Եւստաթիոս. և իբրև եկին՝ առեալ զնա մեկուսի յամբոխէ անտի և ասէ ցնա. Եւստաթիէ, երդուեալ իմ՝ ի փրկութիւն աստուածոյն, և վկայ է ինձ վերատեսչութիւնք նոցա, զի յոյժ տրտմեալ եմ վասն քո, զի ոչ առեր յանձն հաւանել հրամանաց ինքնակալին: Արդ վասն հանդիսական առեւնիս, կեր. պարանոք միայն՝ ի տեսիլ ռամկիս խոնարհեալ երկիր պագ աստուածոյն, և՝ ի սրտի քում զհաւատան քո հաստատուն պահեա առ աստուածն քո, և նմա երկրպագեա. զի Թէ աստուած է նա, զծածուկ սրտիդ քո տեսանէ, և լեր երանելի յաշխարհիս քոյս, և մի այդպէս զգեղեցկութիւն հասակի քո կորուսանել չարաչար, որ այդքան իմաստութիւն ունելով՝ գնաս իբրև զմի ոք՝ ի կորուստ մահապարտաց: Եւ եթէ էր ինչ հնար Թեթևեցուցանել զառեան դատաստանիս՝ ի վերայ քո, և ոչ զայդ ևս խնդրէի՝ ի քէն: Բայց՝ ի վերայ քո խանդաղատաի սիրտ իմ, և չնչին երկիւղութիւնք իմ, և յոյժ խնայեմ և գթամ՝ ի քեզ, զի զամենայն գիշեր ցաւագին տրտմեցայ, որպէս զի և քուն մատնեալ հատու յաչաց իմոց: Սուրբն Եւստաթիոս ասէ. Ով դատաւոր, մի տրտմիր և մի տագնապիր վասն իմ, և մի՝ ի նանիր խորհրդով վրդովեա զմիտս քո զի ոչ երբէք խոտհեալ եմ ունկն դնել կորստական խրատուս քո, այլ յամենայնի հաստատուն և անշարժ ունիմ զհաւատս իմ որ՝ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, և տանջանարանք քո յուրախութիւն համարեալ եմ ինձ. և եթէ ոչ հաւատաս՝ դարձեալ մուսանդամ սկիզբն արարեալ չարչարանաց որպէս և կամիս:

Յայնժամ Սգրիկողայոս ատելացեալ՝ ի վերայ վկային՝ բազում ժամս ծածկէր զերեսս իւր, որպէս զի ամենայն ամբոխն որ շուրջ կային՝ ծանուցեալ՝ ի վերայ արտարոյն զխանդաղատաւտանս նորա, զկատարեալ բարեձեալ ողորմութիւնն Հանդերձ քաղաքացեօքն, և

մոլմնքէին ՚ի վերայ այնպիսւոյ առն իմաստնոյ։ Յայնժամ սուրբ վկայն ՎՀծաբարբառ աղաղակաւ սկսաւ խօսել առաջի առենին և ասէ. Ով Աղբիկողայէ, վՀյապաղես և ոչ կատարես վաղվաղակի զՀրամանն Թագաւորացդ քոյ և զՀաճոյս Հօրն քումմատուցանել. քանզի ածէ ՚ի վերայ իմ զփորձութիւնս զայս, զի այդպիսի մեքենայիւք պատրանաց խափանեսցէ զիս յառաջկայ երանութեանցն. այլ ես ծառայ եմ Աստուծոյ բարձրելոյ՝ արարողի զերկնից և զերկրի արարածս, և Հակառակիմ ընդ անաստուած Հրամանն Թագաւորացդ, և Հակառակիմ ձերոյ, և արՀամարՀեմ և Հրաժարեմ ՚ի չարաչար պաշտամանց աստուածոց ձերոց։

Աղդ այնուՀետև տեսեալ դառաւորին Աղբիկոզայոսի զանխոխելն և զՀաստատուն միտն անյաղթ վկային Քրիստոսի, դառակնիք մնՀու Հատանէր ՚ի վերայ նորա այսպիսի օրինակաւ. Զնեառատախտս զայր իմաստուն և զերկեթել ՚ի զինուորական գնդէն, իշխանական փառաք պատուեալ յինքնակալացն, և անարգել զպաշտօն անմահից աստուածոց մերոց, և արՀամարՀեալ զՀրաման և զկրօնս Թագաւորացն, և ընտրեալ զմահ վասն մտաի յուսոյ խոստեցեալն Քրիստոսի Հրեի ումեմն[1] որ ՚ի նազարեթ Գալիլեացւոյն էր. վասն որոյ արդարատատ օրինքս Հռոմայեցւոց Հրամայեցին ՚ի ձեռն Հրոյ կենդանակիզ առնել զչարաբաստ և զանբարեսէր մարմին նորա։

Եւ իբրև ընթերցան զայս առաջի բազմութեանն, առժամայն Հնոյն պատրաստեալ լինէր, և առնային առեանն և ալք քաղաքին ընթանային զկնի սրբոյն տեսանել զՀանդէս նահատակութեան նորա։ Իսկ երանելին մերկանայր զՀանդերձն յիւրմէ զոր սփածեալն էր, և առիպածան մերձ կացեալ առ Հնոցան, սկսաւ աղօթել և ասել այսպէս. Ողջ Աստուածդ կենդանւոյ, օրՀնեալ յամենայնի, Հօր ահաւորի անքնին ծնունդ, որ ոչ սկզբանայ առ ՚ի քէն և ոչինչ. գոՀանամ զքէն զի զանարժանութիւնս իմ արժանի Համարեցար անապական բարութեանդ քոյ. մեծացուցանելով մեծացուսանեմ զքեզ, Տէր ամենակալ, և

1. Մի օր. ասէին։

մեծացիր Տէր Քրիստոս՝ ի մարմնի իմում և յոգւոջս, զի հայեցար՝ ի խոնարհութիւնս իմ, և ոչ մատնեցեր զիս՝ ի ձեռս նեղչաց իմոց, և կեցուցեր զիս ողորմութեամբ քով և փրկեցեր՝ ի վշտաց զանձն իմ, և ծածկեցեր զիս ընդ հովանեաւ թևոց քոց. եկեսցէ՝ ի վերայ իմ գթութիւն քո, Տէր, զի աղքատացայ յոյժ, զի խառնեցաւ անձն իմ յեղանել ոգւոյ՝ ի մարմնոյ առնի. մի երբէք խորհուրդք չարք հակառակորդին տիրեսցեն՝ ի վերայ իմ, և արգելցեն զիս՝ ի խաւարն արտաքին, վասն յանցանաց իմոց՝ ի կեանս յաւիտեան։ Ողորմեա ինձ, Տէր, և մի մատներ զանձն իմ դժոխոյ[1], և մի տացես ինձ տեսանել զխարդախանող երես բանսարկուին, այլ ընկալցին զիս հրեշտակք քո զուարթացեալք և լուսատեսեալք։ Տուր, Տէր, փառս անուանդ քո սրբոյ և զօրութեամբդ քո կեցո զիս, և կացո զիս ընդ աջմէ աստուածային քո բեմիդ՝ ի դատեն զիս. մի մերձեսցի յիս ձեռն իշխանի աշխարհիս այսորիկ ձգել զիս՝ ի խորս անդնդոց, քանզի մարմնաւոր չարշարանքս որ հասին՝ ի վերայ իմ՝ ուրախութիւն և ցնծութիւն եղև ծառայիս քո։ Ողորմեա ինձ, Տէր Աստուած, շաղախեալ մեղօք անձին իմոյ՝ ի կեանս յաւիտեան, և մաքուր ընկալցիս. զի կեաղն ինձ քեւ է, և մեռանելն վասն անուանդ քո փառաւորելոյ՝ անապական զանձուց և անկողոպտելի մեծութիւն աստուածոց։ Աստուած Հնմարտութեան և հայր ողորմութեան, և հոգի բարութեան և զօրութեան և իմաստութեան, գոհանամ զքէն՝ խաղաղութեան նաւահանգիստ, որ ծփեալ եմ յանդնդախտոյտ յորձանս ծովու մեղաց կենցաղոյս պատրանօք յաւիտենից, առ քեզ կարդամ և խնդրեմ՝ ի քէն, տուր համբերութիւն՝ ի նեղութեանս, զի յաղթեցից բանսարկուին, զի զու ես Աստուած Հնմարիտ, որ զբանն կենաց տածեցեր յաշխարհի, և հալածեցեր զմրրիկ անօրէնութեան, և զարդարութիւն քո ծագեցեր առ իս, որ միշտ ապրեցուցանես զյուսացեալսն՝ ի քեզ. տուր ինձ արժանապէս նահատակելոյ առաջի քո՝ արժանանալ յաւիտենական կենացն, և ոչ հաւատալ կատարեն

1. Մի օր. ի դժ-ոխս։

զկիշատակս մեր, և յիշեսցին զմեզ ՚ի ներքուածեան, կարդալով առ քեզ, Տէր Աստուած մեր, ՚ի բարեխօսութիւն անձանց իւրեանց, զոր որպէս բարերար Աստուած և մարդասէր լսեցես և փրկեսցես զնոսա յամենայն ներքուածեանց և ՚ի վտանգից նոցա հոգւոյ և մարմնոյ, և մի թողուր ՚ի ձեռանէ քումմէ զեկեղեցի քո սուրբ: Ընկալ և զոգի իմ խաղաղութեամբ ընդ ամենայն սուրբս քո, և քեզ փառք յաւիտեանս:

Եւ յորժամ ասաց զամէնն, ձայն եղեւ յերկինից ասելով. Եղիցին խնդրուածք քո: Եւ նոյնժամայն կրկնեցին զինքն նշանաւ սուրբ խաչիւն և եմուտ ՚ի մէջ հնոցին, և հուրն բոլբոքեալ առաջաստաձև շուրջ պատէր զմարմինսն երանելի վկային. և բոցն բարձրացեալ ՚ի բարձունս երանէր, և այնպէս կենդանասաստկեալ ՚ի մէջ հրոյն վկային Քրիստոսի հանդերձ օրհնութեամբ, աւանդեաց զհոգին. և տեսին՝ զոր արժանիս արար Տէր՝ զհոգի սրբոյն իւրոյ զՆաւատպայթ փայլատականց լուսոյ փայլեալ երանէր ՚ի բարձունս:

Իսկ յետ կատարման վկային՝ առօրէնն Աքրիկոզայոս յարուցեալ գնաց յատարանս իւր, և խրախութիւն մեծ արարեալ՝ ընթրիս տայր բարեկամաց իւրոց, քաջութիւն մեծ համարելով զգործն զոր գործեաց, և ամենայն ամբոխ քաղաքին սիրեալն յիւրաքանչիւր տեղիս. և ոչ ոք իշխէր մերձենալ և ձեռն արկանել ՚ի նշխարսն սրբոյն յաղագս սպառնալեացն դատաւորին:

Իսկ եպիսկոպոս քաղաքին որում անուն էր Պետրոս, առեալ ընդ իւր այս երկիւղածս ՚ի ժառանգաւորաց եկեղեցւոյն, եկեալ ՚ի գիշերի ամփոփեաց զնշխարս սրբոց վկային զՎերեսանին և զՆեստաւսին, և եդեալ ՚ի փայտեղէն արկղատիպ տապանին պահէր ժամանակս ինչ. և ապա ինքնին բարձեալ տաներ ՚ի հայրենի գաւառն իւրեանց ՅԱրաբակացւոց քաղաքին, և փոխեաց ՚ի հանգիստ՝ ՚ի տեղւոջն՝ զոր սրբոյ վկային նշանակեալ էր ՚ի կտակի անդ իւրում: Իսկ յետ դադարման հալածանացն շինեաց վկայարան ՚ի վերայ հանգստարանին սրբոյն Հնդեցւոյն, անցեալք վկային Քրիստոսի, Աքսենտիոսի, Մարտա

լիսի, Եւգինիոսի, Ովբեսի և մեծին Եւստաթիոսի:

Մեծապայծառ խնդութեամբ և փառաւորեալ հանդիսիս առ յամէ կատարի օր յիշատակի նոցա յերեքտասաներորդի յամենայն դեկտեմբերի: Ի թագաւորութեանն Դիոկղետիանոսի, և՛ ի մեզ թագաւորելոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընկալեալ զանեղծութեան և զանապականութեան պսակն. որում վայել է փառք իշխանութիւն և պատիւ, ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ յաւիտենից յաւիտեան. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոյ Եփրեմայ Կուսին, և բանառուն և. ինինոց վկայից Քրիստոսի։

Ի քաղաքին Քաղկեդոնիացւոց եկեալ Պրիսկա Անթիւպատոն՝ ի ժամանակս անկարելիշտ Թագաւորին Վաղկէտիանոսի, զի զոյս միանգամ գոցէ[1] անդ՝ ի քրիստոնէից՝ չարաչար տանջանօք բարձցէ՝ ի միջոյ. և էին յայնմ քաղաքի ժողովեալ յոյժ բազմութիւն քրիստոնէից։ Ա.յլ և իշխանն Պրիսկոս ունէր զամն բարեկամ յանախարշտաց քաղաքացւոցն, որում անուն էր Ա.պելլիանոս ժանդաբարոյ և ապարտասան յոյժ, որ հանապազ դեգերեալ լինէր առ մնոտի դիմանուանեալ աստուածոցն, մանաւանդ փարէր առ պատկերն Ա.րեայ, և էր արուեստիւ սոխեատէս։ Սա չարախօս եղև առ իշխանն Պրիսկոս վասն քրիստոնէից և ասէ. Յուշ լեցի քոյդ յաջորդութեան, ով Անթիւպատէ[2], զի ամենեցուն մեզ պարտ է լստ հրամանաց ինքնակալացն աւանդութեանցն զոհ մատուցանել աստուածոցն, մանաւանդ մեծի աստուածոյն Ա.րեայ։ Եւ հաճոյ թուեցաւ բանս այս Անթիւպատոսին[3], առ՝ի կործանումն Թուլացելոցն՝ ի բարձրութենէ հաստատուն հաւատոցն. ուստի և տախտակ գրեալ հրա-

1. Ա՛ի օր. ըմբռնէցէ։
2. Ա՛ի օր. և ասէ. ՈվՀոլիմատոփանագոյն Անթիւպատոսէ, գիտասիրեան լիցի՛ քոյոյդ յաջորդութեան, չի...

3. Ա՛ի օր. և յայնհետէ ընտեցաւ բառնս այս Անթիւպատոսին...առ՝ի կործանումն ընտելոցիւք մարդկեան խորհրդոցն։

մայէր գնել ՚ի նշանաւոր տեղւոջ ՚ի քաղաքամիջի անդ. և էր պատճէն յառաջագրելոցն այսպիսի օրինակաւ. Ամբ սկրբելիք, բնակիչք քաղաքիդ Բաղկեդոնի նացւոցն, գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն, որպէս զԱրաման ինքնակալ[1] Թագաւորաց մերոց պահելով, բողոքեմք ձեզ ամենեցուն զայս ինչ, որպէս զի մաքրեսիլ զանձինս ձեր աւուրս ուխտ զոհս մատուցանել մեծի աստուածոյն Ամեսի[2]. ապա եթէ գոցի որ անհաւան մերոց օրինաց և առ այլ ինչ կրօնս փոխիցի, չարաչար պատուհասել զայնպիսին կորուսցուք[3]: Եւ է նշանակ հրաւիրակի կոչմանն այսպիսի օրինակաւ. զի յորում ժամու փողն հնչէ, աւետեքեան միանգամայն հաւմագումար ՚ի տաճար աստուածոյն Ամեսի ժողովեսջիք յօժարութեամբ զոհ մատուցանել, և հաշտեցուցանել զանձինս զոհս աստուածոյն: Իսկ անօրէնն Ամելիանոս հանապազ հոգ ՚ի մտի եդեալ, գիտել և քննել ժամու և յաւուր, զի այնպէս գտանիցէ զոմանս անհաւանեալ աւանդութեան[4] Թագաւորացն. և որպէս շուն զօղանջելով յարձակէր ՚ի վերայ նոցա:

Ամբ ՚ի հասանել կիտին եդեալ, գոչէր փողն ողբինչ[5] ողբերգական, ՚ի միասին կոչելով զայնոսիկ առ հասարակ որ մտադ յուսոյն զհետ երթեալ էին[6]: Եւ էին այնոքիկ որ հաւատացեալք էին ՚ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, ՚ի փոքր ինչ տնիկ փակեալք[7] և թաքուցեալք, հանապազորդեալ յաղօթս և ՚ի ժուժկալութիւն: Էր ընդ նոսա արքունի վկայն Եփիմիա միշտ ցանկորդեալ յաղօթից, դուստր գոլով նա առն ումեմն ՚ի պատուաւորաց սինկղիտոսացն, և մօր Թէոդոսիանէ[8], կնոջ բարեպաշտի՝ որ բազում ողորմութիւն առնէր ՚ի ժողովրդեանն, առն ունելով վարձուց երկնաւոր[9] հատուցմանցն: Իսկ Ամելիանոս չարչին գոր-

1. Մխ օր. Քարէքտիսացոյն... որպէս զի զհրամանս ինքնակալացդ մերոց Թագաւորաց...:
2. Մխ օր. զոհս մատուցանել առնմահ ապստամբին Ամբեսի:
3. Մխ օր. լարաչար փանջանօք պատուհասել զնա հրամանաւ:
4. Մխ օր. աւանդից:
5. Մխ օր. գոչէր ձայն էրգին ողբերգական:
6. Մխ օր. էրթային:
7. Մխ օր. ՚ի ձորձին ինչ փոխին պատնեալ:
8. Մխ օր. Գիոպոսիանէ:
9. Մխ օր. էրգնոյին:

ծանեայն ասէ ցՍնեքիւպատոն. Սնեքիւպատէ, են արք
ոմանք՝ ի տան ուրեմն Թաքուցեալք, որք ոչ արտա-
դրութեան[1] Թագաւորացն և ոչ հրամանի քումդ կա-
ցին անտալ. և եթէ ներողութիւն լցեր այսմ երից՝ ի
քէն՝ բազումք՝ ի քոց կան՝ ի զսհելոյ աստուածոյն[2],
և յարեսցին առ նոսա, և ընծայք[3] և պաշտամունք
մեր արհամարհանօք անարգեսցին։ Ձայս լուեալ Սնե-
քիւպատոսին յանաստուած բերանոյ նորա, հրամա-
յեաց ածել զնոսա զառաջեաւ. և երբև ածին զնոսա
առաջի իշխանին, էր՝ ի մէջ սրբոցն այնոցիկ սուրբն
Եփիմիա, ուրախալից դիմօք և պարկեշտ[4] զարդար-
մամբ առաւել քան զամենեսեան որ էին ընդ սրբոյն[5]։
Ցայնժամ Սնեքիւպատոն ասէ ցնոսա. Ցայժ զարմա-
ցեալ եմ ընդ իւրաքանչիւր ոք՝ ի ձէնջ, տեսանելով
զյօժարութիւն ընթացից հանդիսիդ, և զդէղեցկու-
թիւն հասակի մարմնոց ձերոց, վասն որոյ խրատ տամ
հպատակ լինել հրամանաց իւրեանակալին և վայելել՝ ի
զոհս աստուածոցն. և ես ծանուցից զայս Թագաւո-
րին, և զգաստաւորական իշխանութիւնն ընձեռեցէք։

Ձայսոսիկ լուեալ սրբոց վկայիցն, և փոխեալ
զարմանութեան դէմս[6] իւրեանց, լի եղեն աստուա-
ծային ուրախութեամբն, և զսուրբն Եփիմիա՝ ի մի-
ջի[7] բերելով՝ երբև զսպարս հրեշտակաց հանդիսակու-
թեամբ պատասխանի ետուն միաբան և ասեն. Մեք,
մի Սնեքիւպատէ, զինուորեալ եմք մերում Թագաւո-
րին Քրիստոսի, և փութամբ՝ ի հաւատս զոր աւան-
դեաց մեզ մինչև ցվախճան հաստատուն մնալ, զի հան-
դիպեացուք անուսա խոստմանցն որ ասէ. Ծառայ բարի
և հաւատարիմ, որ՝ ի սակաւուդ հաւատարիմ եղեր՝
՝ի վերայ բազմաց կացուցից զքեզ։ Եւ դու Սնեքիւպա-
տէ, ոչ ես անտեղեակ եթէ խրատաքանչիւր ոք յայն-
ցանէ որոց զինչիանութիւնն հաւատան՝ փութան զո-
հանալ զայնմանէ՝ որ պարգեւաց նոցա[8] զայն, զի առա-

1. Մի օր. արքաքրօնիկեանց ընտ-
գաւառին։
2. Մի օր. ՝ի զսհէց հեթ ասպուա-
ծոյն։
3. Մի օր. զսհք։
4. Մի օր. պայծառ։
5. Մի օր. որք էին հանդիպոյ նովաս։
6. Մի օր. պարկեշտութիւնս դէմոց
իւրեանց։
7. Մի օր. ՝ի հէչ իւրեանց։
8. Մի օր. հաւատացոյ նմա զայն։

եւ մեծագունի պատուոյ հանդիսեցին։ Այլ՝ եթէ այնպիսիքն ապականացուք գոլով, և ապականացու տերանց ծառայելով, խնդրեն[1] զառժամանակեայ և անցաւոր պատիւն, ոչչափ ևս առաւել մեք պարտիմք փութալ, զի զխոստացեալ զանապական և զյաւիտենական փառան ժառանգեացուք, որ կայ և մնայ յաւիտեանս յաւիտենից[2]։ Այլ զոր ինչ առնելոց եմ՝ արա վաղվաղակի, զի մեք պատրաստ եմք առ ամենայն տեսակ տանջանաց քոց։ Իսկ Պրիսկոս Անթիխուպատոն՝ի մուս կողմն դարձուցեալ զերեսս իւր՝ի նոցանէ, և հրամայեաց զահՀասն տանջել զնոսա չարաչար տանջանաւք[3]։

Իսկ նոքա՝ի տանջանսն զոհանային զԱստուծոյ և քաջալերէին զմիմեանս, հաստատեալ՝ի համբերութեան նահատակութեան։ և զերանելի կոյսն Եվփիմիա յոտդոմէին՝ի խոստացեալ բարեխոսն Քրիստոսի։ Եւ նա ուրախ լինելով երբեմն յամենից տրտունջս բեալ, և խնամատուն եամբ լեալ[4], զի ընդ անմահ փեսային մտցէ յառաքաստ լուսոյ անշէջ լապտերօքն ընդ խնամատուն[5] կուսանացն։ Այլ յետ լման աւուրցն լինն և տասանցն՝ մեծի նահատակութեան սրբոյ վկայիցն, էլեն՝ի բանտին անուսաղ[6], կերակրեալք՝ի ջնտրհաց Հոգւոյն սրբոյ. և՝ի քառերորդում աւուրն, Անթիխուպատոն Պրիսկոս խորհուրդ արարեալ ընդ առաքաշխին Ալեքսիանոսին[7], այնմ՝ որ զիւրան բանտնա նութեան անուանն էր ստացեալ, հրամայէր՝ի հարց և՝ի փորձ դառնասանին[8] զսուրբն կացուցանել։ Այլ նահեաւ ածեալ լինէին երանելի վկայքն Աստուծոյ, ձեռս յետս կապեալք և շղթայիւք պարտաւանդեալ պարանոցք նոցա[9]։ Յայնժամ ելեալ նստաւ առաքաշխատ իշխանն Պրիսկոս՝ի վերայ բարձր բեմին, և հրամայեաց զառաջեաւ ածել զսուրբն[10]. և երբեմն ածին զնշ-

1. Մի օր. առաքանացուս գոլով ընդրկեն պատճառանալեաց։
2. Մի օր. ՚ի կեանս յաւիտենից։
3. Մի օր. հարուածովք։
4. Մի օր. հրաւիրելով և հաստատով պարգեալ և խնամատունեամբ եղեալ։
5. Մի օր. ընդ հնգեակ խնամատուն։
6. Մի օր. ոչ նահատակութեամբ էին սուրբ վկայքն՝ի բանտին, և էինէին կերակրեալ։
7. Մի օր. Աղեքիանոսի։
8. Մի օր. դառնասրտին։
9. Մի օր. շղթայիւք պարտաւանդեալ պարանոցք նոցա։
10. Մի օր. առաջի հաստատանել սուրբ վկայն Քրիստոսի։

նոսա մերձ առ քեմբն, և էր՝ի մէջ նոցա սուրբն Եվի-
միա, որպէս գԶօհ լուսաւոր և էրևել գղամբար պայ-
ծառ փայլեալ Հառապայթիւք [1]. Հարցանէր զնոսա
Անթիոքացոն ասելով. Այսպէք լինաք, ով պատանիք,
որք գիտէք առիք յառաջակայ տանջանացն, թէ որ-
դեօք դարձայք [2]՝ի յամառութենէ ձերմէ, առ՝ի զոհս
մատուցանել մեծին աստուածոյն Արեսի [3], եթէ տա-
կաւին՝ի նոյն միտս պնդեալ կայք: Եւ նոքա պատաս-
խանի եառուն միաբան միաբարբառ ընդ ի բերան
հանդերձ նահատակապղեցոյնն Եվիմիա [4], և ասեն.
Ո՛վ Անթիոքացի, մինչև ցե՞րբ յամառեալ կաս [5]՝ի
մոլորութենէդ, և ոչ Հանապէս զզօրութիւն Աստու-
ծոյն մերոյ, որ արար զերկինս և զերկիր: Յայնժամ
Պրիսկոս ասէ ցպաշտօնեայս ամբաստուութեանն [6]. Հա-
րէք զդոսա միանգամ չարաչար տանջանօք, և ապացէք
հաւանել [7] հրամանաց Ինքնակալին և զոհել աստու-
ծոցն: Եւ սպասաւորքն վաղվաղակի առնէին զՀրամանն
բռնաւորին. և՝ի կռմէն նոցա զերեսս սրբոցն [8], յոյժ
պայծառանային դէմք նոցա, և արիանեակք չարին
տկարացեալք՝ի տանջելն իբրև մեռեալք լինէին: Ետ
Արքելիանոս խորհրդակիցն բանսարկուին, որ զսպա-
ռազինութիւն չարին զգեցեալ էր, ասէ ցԱնթիոքա-
ցոն. Պատուհասել զդոսա առաքեացուք առ Թա-
գաւորն: Եւ հաճոյ Թուեցաւ բան այս Անթիոքացո-
ւին և որոց ընդ նմա էին: Եւ հրամայեաց արկանել
զնոսա՝ի բանդ՝ի դէեակ բերդին, մինչև առաքեալք
գնասա առ Թագաւորն:

Էին ակք Թուով քառասուն և հինգ, որպէս զի [9] լինէ-
լով նոցա հանդերձ սուրբ կուսին Յուստ: Եւ ապա-
բեաւ գնոսա՝ի բանդն, եւին յընթացս հինգին [10] Անթի-
ոքացոյն իբրև աւազակ լինի և կամ գայլ յոխշաս-
կոլ. և՝ի բաց մեկնեաց զբերդն Եվիմիա յայլոց

1. Մի օր. պայծառափայլ:
2. Մի օր. դիտավորեալք:
3. Մի օր. զԶօհէ ձեզի աստուա-
ծոյն Արեսի:
4. Մի օր. Ե նոքա պատասխանի
էտուն իբրև ընդ մի բերան հանդերձ նահատակապ-
հանդերձ Եվիմիա:
5. Մի օր. ճաս:
6. Մի օր. ցպաշտօնեայս իւր:
7. Մի օր. ապացէք ընդ հաւանել-
ցարուած... ետուածոյն:
8. Մի օր. ՚ի խոժոռարբել երե-
սացն:
9. Մի օր. որպէս զի... խոսխան
եղիցի:
10. Մի օր. ընդարձակել:

*արբոյն, կարծեցեալ որպէս զինքն ինա գործարան չա-
լին։ Ակ քրիստոսասէրն այն վկայ զաչս յերկինս համ
բարձեալ ասէր. Օգնեա ինձ Քրիստոս, որպէս Աստու-
ծոյ միանձնեանցուրն Հօր էակից, որ արարեր զերկինս և
զերկիրս, և որ՚ի նոսա արարածք են. զի յոյս իմ գաս ես
Տէր իմ, մի՛ շինցի ջահ կուսութեան իմոյ, և մի՛ կորիցեն
հաւատք յուսոյ իմոյ՝ որ՚ի քեզ, զոր անարատ պահե-
ցի՛ ես մանկութենէդ իմմէ։ Եւ իշխանին[1] լուեալ զայ-
սոսիկ ասէ ցնա. Պատուեա զանձն քո, և զոր պատ-
շաճ է քեզ՝ ըստ սղզի զպատիւն մի՛ կորուսաներ[2]. զի
Թէպէտ և սատանեցար և խաբեցար իբրև զևին, յայ-
սմ հետէ զղջացեալ զոհեա աստուածոցն։ Ակ ա-
զախինն Քրիստոսի ասէ ցնա. Մեք ոչ բնութեամբ
մարմնոյ տկարութեամբ պատուել փութամք, այլ ա-
րևակաս Հզնութեամբ՛ի նահատակութեանս՝ զա-
նամք ընտրելք և քաջք երևեալ[3]. վասն որոյ իբրև զի-
մաստուն և զքաջ ախոյեան պատրաստ կամ առաջի
քո, զի յաղթեցից քեզ և հօր քում սատանայի, և
հանդիսեցայց անսուտ խոստմանց Հարցն մերոց։

Յայնժամ անօրէնն իշխանն՛ի ցասումն սրտմուտ-
եան բորբոքեալ, զի՛ի ձեռն ինոջ յաղթահարեալ
եղև, և հրամայեաց դահձացն գործարանս չարչարա-
նաց կազմել անուանձև, և զսուրբ վկայն՛ի մէջ անուա-
ցըն արկանել, զի՛ի հոլմելըն վաղվաղակի աւանդեացէ
զոգին։ Ակ երանելին հեղուսեալ լինէր՛ի վերայ ա-
նուացն, և զկնիքն Քրիստոսի արարեալ յինքեան[4] ա-
սէ. Ո՛վ, որպէս նաւեալ է Պրիսկոս թշնամին Քրիս-
տոսի և մշակն անօրէնութեան հնարատորել
զհրապոյրս[5] չարին՝ շարժեալ՛ի չարէն, և ընդդէմ
բարեպաշտացն, կարծելով կորուսանել զնոսա. և զար-
ձեալ յաւելեալ սուրբ վկայն ասէ ցնա. Թշնամի չա-
րագործ և նենգաւոր, հաւատա ինձ, զի ոչ մերձենայ
յանդաման մարմնոյ իմոյ գործարանք չարչարուեստու-
թեանդ քո, և ոչ զգայի ամենևին տանջանացս. զի
օգնական ունիմ զՔրիստոս, յոլով վաստակօք զնա-*

1. Մի օր. Պրիսկոսի։
2. Մի օր. ԵՒ զոր պատշաճէ՛ի քեզ ըստ սղզի զպատիւն։
3. Մի օր. այլ արիաբանեամբ՛ի նահատակութեանս։
4. Մի օր. յանձին իւրում։
5. Մի օր. հնարատորել զհնարս։

հատակութեան իմոյ զհամբերութիւն հաստատուն պահել։ Եւ նորա զայսոսիկ ասացեալ, պաշտօնեայքն քառնասուրիս շրջէին զանիւն. և աներեայն անդամք մարմնոյ սրբոյ վկային քանցեալ մերկանալին յոսկերացն ի սաստիկ և ի չարաչար տանջանացն։ Իսկ ի տանջանան սկսաւ աղօթել գոհանալով զՔրիստոս և ասել այսպէս. Տէր Յիսուս Քրիստոս, որ ապաւէնդ ես ամենեցուն որ կարդան առ քեզ. լսէդ ձչմարտութեան և տէրդ ողորմութեան, դու գիտա յիս, զի ոչ արհամարհես զայնոսիկ՝ որք ի նեղութեան իւրեանց աղաղակեն առ քեզ. հայեաց յաղախինս քո և ի քաց յարիշտակես զիս ի բարիսաեաց բանսարկուէն կորըստեան. և ի սպառնալեաց անմաքուր և ամպարիշտ Պրիսկոսի։ Եւ յասել նորա զայսոսիկ, վաղվաղակի է ջեալ յերկինից հրեշտակ՝ եբեկ զպօծարան անուսոյն [1], և զդահիճն ելոյծ ի զօրութենէ. որպէս զի յերկիւղ էկ ամի երկնաւոր զօրացն լինելոյ նոցա գոնատեալք և պարտասեալք դիմօք։ Եւ ելեալ երանելոյ վկային անարատ ի մեքենայիցն երևեալ առաջի բազմութեանն գուարթ և պայծառ, իբր թէ չիցէ կրեալ չարչարանս ինչ։ Եւ ասէ Սինթիւպատոսն. Երդուեալ իմ ի փրկութիւն աստուածոյն և ի բախտ ինքնակալին, եթէ ոչ գոհեացես մեծի աստուածոյն Արեսի, հրամայեցից զքեզ, զի ծանիցես թէ ոչ օգնեսցէ քեզ աստուածն քո՝ զոր պաշտեան։ Սուրբն ասէ. Հրամայեա ինձ, այնմ՝ որ առ ոտիւք ինչ կամիս կոխել զոր զքեզ և վաղվաղակի շինջանի. այլ ոչ եմ ես անարիւրազոյն այդպիսի, զի երկեայցէ ի սպառնալեաց քոց, այլ առ ոտն կոխեցից զգառոզութիւն քո, երդուեալ իմ ի Յանուն յոտնակոխութեան բարեպաշտ վկային Քրիստոսի, թէ մինչև ի վախճան հաստատուն պահեցից զընթացս հաւատոյ իմոյ, զի արժանաւոր գտայց անվախճան ուրախութեանցն [2], և ընդ նոսին վայելեցից յանպատում կեանսն ի Քրիստոս Յիսուս։

Յայնժամ զարհուրեալ Սինթիւպատոսն, և բորբոքեալ ի սրտմտութիւն [3], հրամայեաց վառել հնոց

1. Մի օր. հրեշտակ... անուսոյն։
2. Մի օր. երանութեանցն։
3. Մի օր. ի բրտմտութեանն։

հրոյ բազմապատիկ, մինչև յոյժ բարձրացեալ ցոլա-
նայր բոցն, և զսուրբն արկանել ՚ի հուրն. և սպասա-
ւորքն բռնաւորին կատարէին զհրամայեալն։ Եւ կա-
ցեալ երանելւոյն մերձ ՚ի հնոցն զսաւրթ երեսօք և
ամբողջ մարմնով, ասէ. Օրհնեալ ես Տէր Աստուած,
որ ՚ի բարձունս բնակեալդ ես և զխոնարհս տեսանես,
զոր փառաւորեն հրեշտակք և ամենայն զօրութիւնք
երկնից. առ քեզ կարդամ, օգնեա ինձ քով բարեբա-
նութեամբ, և ինքեա զօրութեամբ սուրբ Հոգւոյդ, և
ցոյց չարախտիսն[1] և քրիստոսատեցին Պրիսկոսի, ե-
թէ դու ես Աստուած որ առաքեցեր զՀրեշտակն առ
երիս մանկունսն ՚ի Բաբելոնի, և հնձեցեր զբոց հնո-
ցին. և այժմ հայեաց յիս ՚ի տառապեալս և առաքեա
զօգնութիւն քո և փրկեա զիս ՚ի բերանոյ առիւծու և
՚ի ձեռաց պատղին և ՚ի սպառնալեաց Անթիւպատոսին,
զի անուն քո սիրեալ և փառաւորեալ է յաւիտեան։
Եւ ասացեալ նորա զայսոսիկ, հրամայեաց Անթիւպա-
տոս պաշտօնէից նորա զոյսոսիկ ածել նմա ընդ միջն.
և իբրև արարին զասացեալսն, յայնժամ ըմբռնել հրա-
մայեաց և արկանել զնա ՚ի հնոց հրոյն։ Եւ ի սմն ՚ի
սպասաւորացն որում անուն էր Սոսթենէս, ունելով
սուսեր ընդ միջ, եկն եւկաց առաջի իշխանին և ասէ
ցնա. Հրամայեա ինձ, ով Անթիւպատ, սրով այսուիկ
հարկանել զանձն իմ։ քանզի անհնարին է ինձ միւս
զձեռս իմ ՚ի սուրբ վկայուհիդ յայդ, զի սեսանեմ
յանդիման առաջի աչաց իմոց զարս պայծառազգես-
տս[2] սպաս ունելով դմա։ Նոյնպէս և այլ ոմն ՚ի զի-
նուորաց, որոյ անուն էր Բեհտորիանոս[3], անծանօթ
գոլով գիտութեան Ջհմարտութեան, լուծեալ զգօտի
իւր՝ ասէ ցիշխանն. Աղաչեմ զքեզ, Անթիւպատ, ա-
զատեա զիս ՚ի հարկէս յայսմանէ, քանզի ծանր է
ինձ հպել ՚ի սուրբ վկայս. քանզի սեսանեմ աչօք ի-
մովք մերձ առ աւին հնոցին արս ոմանս որ կան և ցրեն
զհուր հնոցին սպառնալով, և անարատ պահեալ սուրբ
սուրբ վկայն Քրիստոսի։ Եւ Անթիւպատոս հրամա-
յեաց զնոսա պահել, և այլոց ոմանց պաշտօնէից գալ, և

1. Մի օր. չարախօսին։
2. Մի օր. զգեստ պայծառազգես-
տս։
3. Մի օր. Բեհտորիոս։

հանդերձ նոքօք բարբարոսի ումեքին որում ամուսն էր
Կայոս, ըմբռնել զտուրբ նահատակին [1] և արկանել ՚ի
հնոցն: Եւ իբրև ընկեցին ՚ի մէջ հրոյն՝ ընկալեալ լե-
նէին զնա աստուածուԹեանն պաշտօնեայք լուսա-
զգած [2] հրեշտակքն խաղաղուԹեան, ցրեալ զՀուր
հնոցին, և զմի ՚ի սպասաւորաց անօրէնն իշխանին
Պրիսկոսի զանուանեալն Կայոս սատակեաց Հուրն: Եւ
կայր ՚ի մէջ հնոցին երանելին իբրև յարքունական
ապարանս, պարկեշտն գեղեցկուԹեամբ առեալեալ
զԹագաւորն, և տարածեալ զձեռս իւր ասէ. Օրհ-
նեալ ես Տէր Աստուած հարցն մերոց, որ անյիշատակ
աստուածուԹեամբն քո ոչ անտես արարեր զաղախին
քո, որ զբան [3] ՃշմարտուԹեան տարածեցեր ընդ ա-
մենայն տիեզերս, և զհաւատս ՃշմարտուԹեան ընդ-
արձակեցեր, և հալածեցեր զմրրիկ անօրէնուԹեան,
որ և զարդարուԹիւն քո ծագեցեր առ ի՛ս, և Հոգ-
ւովդ քո սրբով որոշեցեր զանձն իմ ՚ի խաւարչէն, և
միշտ ապրեցուցանես զյուսացեալս ՚ի քեզ: Տուր ինձ
արժանապէս առաջի քո նահատակել և արժանի
լինել յաւիտենական կենացդ: Եւ զայս ասացեալ ՚ի
հնոցէ անտի՝ յանձն առնել Տեառն զպաշտօնեայս
բարեպաշտուԹեան: Դարձեալ հրամայեաց Պղծի-
պատոն դնել զնա ՚ի բանտի. Ոչ ցուցից, ասէ, զմա
զբօրուԹիւն աստուածոցն, ոչ հայհոյել այլ հնազանդ
լինել հրամանի ինքնակալին, և կամ խոպան սատա-
կեցից զդա: Եւ դնացեալ սուրբն ՚ի բանտն փառաւո-
րեալ զԱստուած:

Իսկ երանելի վկայքն որ ՚ի բանտին էին չարչարա-
վիցք նորա՝ խնդային ուրախուԹեամբ մեծաւ վասն
սրբոյ կուսին Եւփիմիայ նահատակուԹեանն և ասէն.
Տէր Յիսուս Քրիստոս, արա արժանի զաղախինն քո
պատարագ ընդունելի լինել քեզ ընդ հարցն մերոց [4],
որք փափագանօք խոստովանեցան զաստուածուԹիւնդ
քո: Եւ մինչդեռ նստէր յաւետն իշխանն Պրիսկոս,
հրամայեաց ածել զսուրբ վկայն զՍոսԹենէս և զՔեզ

1. Մի օր. վկայն:
2. Մի օր. լուսաւիգէաց:
3. Ճօրինակին խզձեալ էր ոչ.
և միւս օր. պբան:
4. Մի օր. խորոց:

տոր, և ասէ ցնոսա. Ջոհեցէք աստուածոցն։ Նոքա պատասխանի եառուն և ասեն. Մեք, ով Աննթիւպատէ, մոլորեալ էաք ի խաւարասէր թշնամւոյն, զոր դուք պաշտես, և կորուսեալք[1] ի վիհս անօրէնութեան ժժալոց՝ ի մեռոի կենցաղս ծառայեալք քեզ, հեռացեալք ի յուսոյն՝ որ առ Աստուած։ Այժմ հաւատամք ի Տէր՝ զի ի ձեռն Ձգնապզեայ կուսին վարդապետութեան կարողք լինիմք ջնջել զձեռագիրս մերոց յանցանացս, և փրկիլ ի յաւիտենական ի հրոյն։ Արդ արա վաղվաղակի զգործ հօրն քո սատանայի, զի ոչ հնազանդիմք մեք անօրէն Հռոմոց թագաւորին և ոչ զոհեմք անմաքուր և մոռի դևոյն։ Զայսոսիկ լուեալ Աննթիւպատոսն, հրամայեաց ի միասին ածել զնոսա, զի գազանակուռ լիցին։ Յայնժամ երկոքին նոքա որ անկան կերակուր գազանացն՝ յաղօթէն Ներսիսեան սատկին այսպէս. Տէր Աստուած, որ մեծդ ես և ահաւոր, որ քոյով անուամբդ զամենայն հաստատեցեր, որ զերկիր հիմնեցուցեր բանիւ հրամանաւ քո, որ զլոյս ծագեցեր և զխաւար ցրուեցեր, և զվիշապն սպաներ և լուծեր զերկուսեան մահու, ապրեցո զմեզ ի ցնորից յաւիտականոցն, և փրկեա ի հալածից մարդասպանին, և տուր մեզ խաղաղութեամբ անարատ հոգւով և մարմնով կարգալ զանուն քո սուրբ։ Եւ վաղվաղակի ձայն եղև յերկնից ասելով. Լուայ զաղաչանս ձեր, և արարից զամենայն խնդրուածս ձեր։ Եւ յանձն արարեալ սրբոցն զանձինս իւրեանց Տեառն, ասանդեցին զհոգիս իւրեանց։ Եւ տեսեալ Աննթիւպատոսին զվախճանեալսրբոցն՝ յարեաւ և գնաց յապարանս իւր։ Եւ բարձեալ զմարմինս սրբոցն տարք երկիւղածք՝ ի քրիստոնէից, և պատեալ սուրբ պատառակալօք և անուշ իւղով օծեալ արժանապէս եդին ի գերեզմանի։

Եւ վաղիւն ընդ այգանալ առաւօտուն, եկն Աննթիւպատոս, զի լուիցէ զասացեալսն ի սրբոց կուսէն Եփեմիայ. և տուրբն եկեալ ի բանդէն երկեր ձայնիւ երկամ, և ասէր. Ելպեմ քեզ, Տէր, օրհնութիւն նորա

1. Մի օր. ինրատեալք ի լաւոյն արդարութենէն և զանոսի ձամանակս ծառայեալ քեզ՝ ինրատած էին՝ ի Աստուած։ Այլ հաւատամք ի Տէր՝ զի ի յեռն ձգնաւորեցին ինսին վարդապետութեան։

յերկրիս յայսմիկ: Փառաւորեմ զքեզ զօրութեամբ իմով. սաղմոս ասացից քեզ ազգաւ իմով. զանուն քո օրհնեմ երգով, և սաղմոսելով[1] գովելով և փառաւորելով զքեզ: Այլ եկն Անթիւսպատոն, եւ ետես զայր մի վերայ բեմին և ասէ ցաւրբ վկայն Քրիստոսի. Մինչ չև ցե՞րբ անպատմելով կորուսանես զանձն քո. արդ յայսմհետէ հաճեա հաւանեցու զիւրս քո առ ի զոհել աստուածոյն, զի հաշտեացին ընդ քեզ: Այլ նա ասէ ցնա. Ես ոչ հաւանեցայց զիւրս քո առ ի զոհել դիւացն, զի հաշտեցին ընդ քեզ: Այլ նա ասէ. Ես ոչ հաւանեցայց զիւրս քո առ ի զոհել աստուածոյն, զի հաշտեացին ընդ քեզ: Այլ նա ասէ ցնա. Ես ոչ հաւանեցայց զիւրս քո առ ի զոհել դիւացն, զի հաշտեց

զև ՚ի ձեռն հրեշտակաց. էանց խաղաղութեամբ ընդ մեքենայս[1] տանջանացն, և զինուորքն անկեալ ՚ի մեքենայն սատակեցան: Եւ դարձեալ երանելին Եփրեմ ՚ի վիս բացեալ զբերան իւր ասէ. Տէր Աստուած, որ առաքեցեր զՄիածին որդիդ քո յերկինից, որ եկն և մարմնացաւ ՚ի սուրբ կուսէն Մարիամայ, և չարչարեաց նոքօք խաչի իւրոյ եղոյծ զերկանն մահու, և ընթացրեալ կոխեաց զզօրութիւն թշնամւոյն և բեւեռեաց ընդ խաչափայտին, և եբաց զդրունս երկնից[2]. որ մերձ կացեր զինուորացն այնպիսիկ, որ վասն անուան քո հնազանդեցան զարհուրս իւրեանց, և հեղքեցին զընդդիմամարտս պատերազմանն. որ հաստատեցեր նոքօք զհիմունս հաւատոց. որ միշտ օգնական եղեր ինձ յամենայն մրցմունս տանջանաց, փրկեա և այժմ զանձն իմ աղօթիւք սրբոցդ այնպիսիկ, որ ՚ի բանդին էին վասն անուան խոստմանցդ զոր ակն ոչ եառես և ունկն ոչ լուաւ. և պահեա զաղախին[3] քո, զի դու միայն ես անյիշատակ, որ փրկես և ապրեցուցանես զյուսացեալսն ՚ի քեզ: Եւ տեսեալ Անթիխոպատոսին թէ ոչինչ ինասեցաւ ՚ի մեքենայիցն հրամայեաց զառաջեաւ ածել զինս, և ասէ ցնա. Ամենայն իւրօք խնամատուն գոլով քո, և ապրեաւ ազնուական և առաքինի, զարմացեալ եմ յոյժ՝ եթէ վասն էր ՚ի բան եղեալ պատրեցար և կորուսեր զամենայն, և տակաւին կաս ՚ի նմին յամառութեան, ոչ առնելով զհաճոյս ինքնակալին: Սակայն և այժմ իւր զինամատուն և զպարկեշտագեղ կին՝ լուր ինձ, և հօր քում հաւանեա զաս ՚ի յինէն եղեալն առ քեզ անարգանս տանջանաց, և զոհեա աստուածոցն, զի մի լցցիս ՚ի նախատինս ազգին քո: Իսկ սուրբ վկայն քրիստոսասէր[4] մօտ պատրաստ գոլով առ ՚ի Սնթիխոպատոսն. Ո՛վ չարատև դրուժան այր, թշնամի արդարութեանն և վայրենի գազան որ կամի որսալ զիս. ո՛վ եղեռնահամ քանիցդ[5], որ քան զլեղի դառնագոյն ես, և քան զմոխրեղէն ստամկէդ. ոչ այնչափ անզգայ եմ, եթէ ես

1. Մի օր. Ե անց խաղաղութեամբ ընդ փեղի փանջանացն:
2. Մի օր. զդրունս երկինց զոր ֆխէաց նախահայրն:
3. Մի օր. վասն անուան քո ջնջի և ահաւոր ասպատակութեանդ պահեա զաղախինն:.
4. Մի օր. փրխպոսաֆան մպօփ:
5. Մի օր. որսալոյ ֆայովէղէսնահամ բանիցդ:

ղեալ զպանձն անտապական կենդանութեան, և երկիր պագանիցեմ բանասարկուին խաչելութեան։ Այդ մի խաբէր Անթխեպատէ, եթէ հաւանեցուացես[1] զիս քա նուք՝ զոհել անմաքուր դիւացն, և կամ աստուածս անուանել զնոսա, և կամ զվայրդ անամօթեալ միշտ կենդանութեն նման առնես զոչ երբէք կենդանացեալսն, և նոցա զոհս կատարել[2] մատուցանես։ Այդ մի լինի ինձ հաւանել անհամ և կորստական բանիւ[3] քոյ. վասն որոյ փութա և արա վաղվաղակի զոր ինչ կամիս, քանզի ես լինդրեմ չարչարանօքդ որ'ի քէն, մտանել յաւիտենական երկնային[4] ժառանգութիւնն, ուր է Հայրն աւետեցուն և մարտադիրն Աստուած որ պսակէ զամենայն սուրբս իւր, և Որդին միածին, և Հոգին սուրբ պարգեւաբաշխին ամենայն բարութեան[5]։ Եւ պատմեաւ դուքան[6] հրամայեաց ձաղկել զնա արջառաձօք։ Եւ նա'ի հարկանելն իւրում ասէր. Ոչ հոգին կամ տանջանքդ քո, անօրէն. լուծեալ ես և ոչ ունիս զէութիւն բնութեան, յաղթեալ և հեղքեալ է զո ռոզութիւնդ քո։

Յայնժամ Աթէլիանոս հանդերձ հիւպատոսիւն[7]՝ի ցասումն պատմութեան շարժեալ, հրամայեաց սղոցք սայրատուրք[8] և տապակս երկաթիս պատրաստել, և'ի ձեռն սղոցին ընդ երկուս բաժանել զանձն նորա, և'ի մանուկս հիւանդս դնելով զնա. և'ի ջեռուցեալ տապակն արկանել, զի ամենայն անդամք մարմնոյ նորա յաձիւն դարձցի։ Այդ իբրև պատրաստեցան այսպիսի գործարանք տանջանարանաց[9], անաստուածութեան սատաւորքն Պրիսկոսի ածին զվկայուհին և արկին զնա'ի մէջ մանոյ գործարանացն[10]. և վաղվաղակի բղխեցան սղոցքն, և եռանդն տապակացն շիջան, քանզի զի հրեշտակք Աստուծոյ մերձ կացին սրբոյ վկային։ Եւ

1. Մի օր. հաւանէցուացանէս։
2. Մի օր. խոպարբել։
3. Մի օր. պառն բանից փոյ։
4. Մի օր. յերկինսյին ժառանգու-

թիւնն։

5. Մի օր. պարգեւել բարութիւնն որ պսակէ զամենայն սուրբսն։
6. Մի օր. Անբիւպատոսն։
7. Մի օր. Անբիւպատոսին։
8. Մի օր. հրամայէր բերել... պոպոխ պարբասպէայք, և'ի յեռն սղոցսն ընդ երկուս հատանել զնա...։
9. Մի օր. պարբասպէցաս այսպիսի օրինակս գործարանք գանձանացն... պրբասհին։
10. Մի օր. 'ի մէջ սղոցացն... և պոպոխն չինէն։

անօրինին Աբեղիանոսի և Անթիւպատրոսին տեսեալ եթէ զինադադեալ է վիսին Քրիստոսի և յաղթէ համբերանաւքն, խորհուրդ արարին[1] զի՛ի միասին բազմութեամբն գազանացդ արձակեսցեն՛ի վերայ նորա։

Յայնժամ մուծին զազանսինն Քրիստոսի՛ի թէատրոնն. և տարածեալ զձեռս իւր աղօթս մատուցանէր, և ասէ. Յայտնի ես, Աստուած, ոյք կարդան առ քեզ, ընկալ զհոգի իմ՛ի հոս անուշից. որպէս ընկալար զհոգի Աբրահամու զընդունելի պատարագն, այսպէս և զիմ տառապելոյս ընկալ զպատարագս հոգւոյ և մարմնոյ, զկամաւոր և զբռնաւոր զոհս՝ զոր քեզ մատուցանեմ։ Եւ զայս ասացեալ՝ ինքեաց զինքն՛ի ինկէն Քրիստոսի, և կարդացեալ զանուն Տեառն։ Յայնժամ արձակեցին գազանս՛ի վերայ նորա։ Իսկ գազանացն վազս առեալ գայլն մերձ՛ի վիսին Քրիստոսի, և հանդարտութեամբ լիզուին զգարշապարս նորա. նոյնպէս և առիւծքն ըստ օրինակի այլոցն առնէին։ Իսկ գինուորքն իշխանին խոցոտէին սրովք զանձն առաջ վիսին։

Ա՛յլ զի պարտ էր[2] ամենայնիւ զկատարումն ընդունել սրբուհւոյ վիսին, զոր և ինքն ողբէր զգապանն՝ առանց զանգիտելոյ մերձենալ՛ի նա, զի վաղվաղակի բարձցեն զնա յաշխարհէ աստի չարէ, զի մոցէ առ Աստուած առ որ անձկայեալն էր։ Յայնժամ ընթացեալ մատակ առիւծ մի, և ձիրանամբն մագլցէր զկողս նորա[3], ոչինչ խոցոտելով զնա աստիկս. և նոյն ժամայն ձայն եղև յերկնից և ասէ. Ի վեր ընթացիր, Եփիմիա, զընթացսն կատարեցեր, զհաւատսն պահեցեր։ Իսկ ձայնիս այսմիկ լինելով՝ շարժումն մեծ եղև, որպէս զի յոյժ սասանեալ դղրդեցաւ[4] տեղին, և զոհացեալն աներևոյթ։ Եւ ասաց տուրբ վիսին. Հաստ, Տէր, պղծին[5] և անօրինին Անթիւպատրոսին ըստ սրտի իւրոյ չարի. և ընդ աղախնոյ քո լեր, Տէր իմ և Աստուած. և զայս ասացեալ աւանդեաց զոգին։ Եւ եկեալ մայր

1. Մի օր. զինապիետս վիսին յաղթէ համբերութեամբն խորհրդարանին զի...։
2. Մի օր. պարտ և պարշաճ էր զինարարին առնուլ սուրբ վիսին Քրիստոսի։
3. Մի օր. ձիրանամբքն ընտրելոցն մագլցէր զինիմաքսն սրբոյն։
4. Մի օր. սասանէցաւ։
5. Մի օր. պղծոյն։

նորա Թէոդոսիանէ, և հայր նորա Փիլադելփոսն[1], առնն զմարմինն նորա և եդին ի նորում գերեզմանին, ի տեղին՝ որ միով առաքելոյ հեռի էր ի Քաղկեդոնէ քաղաքէ։ Իսկ Անթիւպատոսն առաքեաց զտուրբ վկայն որ ի բանդին էին՝ առ Թագաւորն, պատուէր տուեալ կուրբիկոզ[2] արանցն զգուշութեամբ պահել զնոսա ի Ճանապարհի. և անդ կատարեցան տուրբ վկայքն Քրիստոսի՝ որք էին Թուով արք քառասուն և հինգ։ Իսկ չարախարշն և անօրէնն իշխանն Պրիսկոս, ընդ չարաչար ախտիւք անկեալ, մեծապէս տանջանօք սատակէր՝ի կենացս։ Եւ օր կատարման երանելոյ կուսին Եվփեմիայ՝ի սեպտեմբերի ամսոյն՝ի վեշտասան[3], ի հինգշաբթին Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի Հերկուլիանոսի[4]. և մեզ Թագաւորելոյ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում Հօր միանպատմին և Հոգւոյն սրբոյ, վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1. Մի օր. հայր նորին Թէոփրոն։ զնին զօրականք։
2. Թուրմա Crupellarii կոչէ տայց և Լատինացս, որ է սպառա-
3. Մի օր. ի ՀԷց։
4. Մի օր. կերուղիոսի. և ի ՀԷց։

Վկայաբանութիւն Սրբոց եօթն Մանկանցն։

Ա.մենեցուն տէրն և արարիչն որ գիտէ զվերջինսն և զառաջինսն, փոյթ զնոսա և զերկիւղառնա, և գիտէ զառաջնակայսն, որ հանդերձեալ էր յառնել հակառակ իւրոց հաւատացելոց, յայնցանէ՝ որք ոչ կամին ուղիղ հաւատով վարիլ, և գանձ անկողոպուտ Թողուլ վիճակի բնութեան, զոր յայտնել կամեցեալ, յորժամ այնպիսի երկի խնդիրք լինիցի առ այնոսիկ՝ որ ’ի սկզբանէ խնդրողք լինիցին այնպիսի խորհրդոց։ Գանգի սովորութիւն է մարդասիրին Աստուծոյ առ ամենեսին բարերարութիւն առնել, զհաւատացեալսն անշարժ պահել ’ի հաւատս և հաստատել զնոսա, և զանհաւատսն ածել յուղղութիւն նշանօք և զօրութեամբ՝ ըստ ժամանակի և ըստ պիտոյից. որպէս և ’ի ձեռն սուրբ մանկանցն եօթանց եղոյց զսքանչելիս, և հաստատեաց զայս յարութեան տեսք. որոց անուանքըն են այսոքիկ, Մաքսիմիլիանոս, Ամլիքոս, Մարտինոս, Դիոնեսիոս, Յոհաննէս, Հէքսակիոս, Տատիանոս[1]։

Սոքա եօթանեքին բնակեալ էին ’ի քաղաքին Եփեսոսի, և նախանձաւորք էին ’ի հաւատս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և զարդարեալ էին վարուք առաքինութեան, և խոստովանութեամբ կէին անբիծ հաւատով։ Եւ եղև ’ի թագաւորութեան Դեկոսի[2]

1. Մի օր. Ամբլիոս։ 2. Մի օր. Դեկիոս։

պալ նմա ի քաղաքն Եփեսացւոց, վասն զոհելոյ զոհս աստուածոց իւրոց հանդերձ ամենայն քաղաքացւօքն. և այնպէս կատարէին զնանիր և զաղաւեղն նուէրս պղծալից։ Իսկ ոմք հաւատացեալքն էին՝ թաքուցանէին զանձինս յերեսաց նորա։ Իսկ Թագաւորն Դեկիոս հրամայեաց սրեհաս լինել կուռցն. և կամեցեալ կատարել զաղաւեղն զոհս, հրաման տայր գլխատել քաղաքին ժողովել և որ շուրջ զքաղաքան, զի եկեալ կատարեսցեն ընդ նմա զզոհն։ Եւ ժողովեցան անթիւ բազմութիւնն մարդկան, ոմք հաղորդք էին կամաց Թագաւորին, և կատարէին զզոհն։ Եւ էր սուգ մեծ հաւատացելոցն վասն մոլեցեալ՝ի կուռս, և խոտորելոյ Աստուծոյ Հնմտրտէ, զի յաղոյժ հալածանս քրիստոնէից, և նեղէր զամենեսեան ոմք կարդային զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ ոմք Թագաւորն գեալ էին՝ի լերինս, ՝ի յայրս և յանտառս և՝ի փաղարս, խուզէին զինուորքն ըստ հրամանի Թագաւորին։ Իսկ որ վաստակաւորքն էին, անկանէին՝ի բարձրութիւն Հաւատոյ. իսկ հաստատեալքն՝ի հաւատս և՝ի յոյս կենդանի, վառեալ էին ընդդէմ սատանայի և անշարժ հաւատովք յամօթ առնէին զբռնաւորն, քանզի յիշէին զաւետարանական բանն որ ասէ. Մի երկնչիք յայնցանէ ոմք սպանանեն զմարմին և զոչինչ ոչ կարեն սպանանել, այլ երկեցուք յայնմանէ որ հեռ սպանանելոյն ունի իշխանութիւն արկանել՝ի գեհեն։ Եւ զանազան տանջանաւք հատուցանէին տուըքն, զոր ածէր՝ի վերայ նոցա սրբասիրէնն՝ի հնարից տանջանաց։ Եւ բազումք եղեն վկայք կամաւոր մահուամբ վասն անուանն Տեառն։ Եւ ոչ այսու շատանայր օտարացեալն Յիսուսէ, այլ և զմարմինս նոցա պահէր՝ կախեալ զգարակս. և՝ի ձոր ցցեալ առաջի գրան քաղքին պահել անթաղ։ Ո՛հ, ոլորան էր մոլորութիւնն Դեկիոսի ահաւոր, և ոլորան լի ցասմամբ վասն քրիստոնէից. սակայն յուսացեալքն Յիսուսէ ոչ զանգիտէին՝ի մեռանելոյ և յերկիւղէ բռնաւորին. և հրեշտակք յերկինս եղէին զգալաթակաս օրհնութիւնս՝ վասն սրբոցն, որք ուղիղ խոստովանութեամբ կատարեցան՝ի փառս Յիսուսի. և դէպ յամօթ եղեն՝ի վերայ չարաչարութեանն սրբոցն։

Իսկ մանկունքն եօթանեքին զտրպ անուանն յա-
ռաջագոյն առացաք, որք անշարժ էին ՚ի հաւատն
Քրիստոսի, տեսեալ զայն ամենայն, անդադար աղօ-
թից ստէպ կային, տքնութեամբ և արտասուօք խընդ-
րելով ՚ի Տեառնէ զհաստատութիւն հաւատոյ։ Եւ
էին տքա երևելիք Յովհաս և պատուական որդիք,
և Թաբուսանէին զինքեանս ՚ի Դեհոսէ ամպարշտէ.
և կային յաղօթս զցայգ և զցերեկ և աղաչէին զՅո-
ւսած արտասուօք, զի փրկեսցէ զնոսա ՚ի հնարից
սատանայի, և կալ հաստատուն ՚ի Տէր։ Տեսեալ զնոսա
ումանց չարաբարոյից, պատմեցին Թագաւորին և ա-
սեն. Որդիք երևելեաց քաղաքիս[1], Մաքսիմիլիանոս
որդի եպարքոսին, և ընկերք նորին որդիք պատուա-
կաց եօթն, միաբանեալ ՚ի հաւատն Քրիստոսի ոչ հլ-
նազանին հրամանին քոյոյ, և ոչ զոհեն աստուածոցն՝
որոց դու զոհես։ Իսկ նոքա ասեն Թագաւորն, մի ցաս-
մամբ հրամայեաց ածել զնոսա վաղվաղակի և ասէ ցնո-
սա. Ընդէ՞ր ոչ զոհէք աստուածոցն որոց ես զոհեմ, և
ամենայն հաւանեալք մեծի խնդ հրամանիս։ Եւ պա-
տասխանի Մաքսիմիլիանոս և ասէ ցԹագաւորն. Մեք
պաշտեմք զԱստուած երկնի և երկրի, որում լի են ա-
մենայն երկիր փառօք նորա, և նմա երկիր պատանեմք
և մատուցանեմք պատարագ. օրհնութեան խոստովա-
նութեամբ և անուշահոտութեամբ, զի կացցուք ա-
ոաջի նորա սրբութեամբ սրտիւ և կատարեալ հաւա-
տով և ուղիղ վարուք. դիւաց մեք ոչ զոհեմք, և ոչ
ապականեմք զսրբութիւն անձանց մերոց։

Իբրև լուաւ զայս Թագաւորն, հրամայեաց զգօտիս
նոցա կտրել, և զպատիւն մերկանալ։ Եւ առ ժամայն
մարգահարութեամբ ցուցանելով պակս մանկանց, և ա-
սէ. Ինայեա՛ ՚ի մանկութիւնդ ձեր առնել տալով ժա-
մանակ ինչ, զի Թողեալ զայդպիսի միտս հաւանեսջիք
ինձ. ապա եթէ ՚ի նոյնդ միասջիք՝ մահու մեռանիցիք։
Եւ հրամայեաց հանել զնոսա յերեսաց իւրոց մեծաւ
սպառնալեօք. և ինքն գնաց ՚ի քաղաքին։

Եւ տուրք մանկունքն գնացին խնդալով յերեսաց
Թագաւորին, զի վասն անուան Քրիստոսի արժանի

1. Ա՛ի օր. պատուականաց ... Մատենադարան։

եղեն անապրդանաց։ Եւ երթեալ կատարէին զպատճս արդարութեան առաւել քան զառաջինն, առեալ ոսկի և արծաթ ի ծնողաց իւրեանց բաշխէին կարօտեալոց։ Եւ խորհեցան ելանել ի քաղաքէն, և երթալ յայլն որ ի լերինն Ողքոս, և անդ կալ անզբաղապէս առանց երկիւղի, և աղօթից պարապել, մինչև այլ արասցէ Աստուած, և արժանաւորեսցէ զընթացս մեր կատարեալ բարւոյ խոստովանութեամբ, և ընկալցուք զպսակն զոր խոստացաւ սիրելեաց իւրոց։

Եւ այսպէս միաբանեալ մանկունքն եօթանեքին, առեալ ընդ ինքեան լումայս[1] վասն աղքատաց և վասն պիտոյից իւրեանց՝ և գնացին յայրն. և լինէին ամենայն արդարութեան հպատակ կալով և անպատճառ աղօթից, խնդրելով յամենեցունց Տեառնէն զիրկութիւն անձանց իւրեանց։ Եւ կացուցին ի սպասաւորութեան[2] զԱմլիքոս, զի էր այր խմաստուն և ժիր, և առնէր նոցա սպասաւորութիւն։ Եւ յորժամ գայր ի քաղաքն վասն պիտոյից իրիք, առնոյր ընդ իւր լումայս[3], և փոխէր զիերսպարանս իւր և գնայր իբրև զաղքատ և գնէր զպէտս իւրեանց, և ուսանէր թէ զինչ խորհին վասն քրիստոնէից, և զառնայր պատմէր զինչ լսէր, և սպասաւորէր նոցա։

Եւ յետ աւուրց ինչ զարձաւ Թագաւորն ի քաղաքն, և խնդիր արարեալ մանկանցն, և Ամլիքոս ի զալ Թագաւորին անդ պատահէր, եկեալ վասն պիտոյից իւրեանց։ Եւ լսեալ զայս եւ ի քաղաքէն մեծաւ երկիւղիւ, և եկեալ առ ընկերս իւր ունելով սաստիկ հաց և պատմեաց նոցա. և իբրև լսան՝ երկեան յոյժ. և անկեալք ի վերայ երեսաց իւրեանց յերկիր, աղաչէին զԱստուած արտասուօք և բազում հառաչանօք՝ զի զերծուսցէ զնոսա յաշխարհէ սատի չարէ և ի սպառնալեաց Թագաւորին և ի խարդախութենէ սատանայէ. և ըստ կամաց իւրոց բարեխրատ եղանել յաշխարհէ սատի չարէ և մնանել առ Աստուած՝ արժանաւոր վկայութեամբ, և ժառանգել զանպատում զկեանսն որ պահի յուսացեալց իւրոց յաւիտենից։ Եւ

1. Մի օր. արծաթ ընդ ինքեանս։ սատրոնին։
2. Մի օր. հաւգատարէին ի սպա- 3. Մի օր. լմանս։

*յետ աղօթից եդ զսակաւ հացիկն առաջի նոցա Սմ
լոքա, և աղաչէր զնոսա զի կերիցեն. և քաջալերեաւ
ամենեցուն կերան զՀացիկն՝ ի մեռս արեւուն և գոհա-
ցան զՏեառնէ։ Եւ քաջալերեցին զիմեանս և յորդո-
րեցին՝ ի սէրն Աստուծոյ և՝ ի համբերութիւնն Քրիս-
տոսի. և հոգայինն Թէ որպէս արժանացին վկայու-
Թեան պսակին. և նիրհեցին առ ժամայն ամենեքին
և՝ ի քուն մտին։ Իսկ մարդասէրն Աստուած այց ա-
րարնոցա մեռանել և զերծանել յերկիւղէ անօրինին,
և յետ ժամանակի վկայ յարուԹեան լինել հաւա-
տացեալց, և յանձն առնել զայնոսիկ որք ոչն հաւա-
տան յարուԹեան։ Եւ ոչ պիտացին զԵանել ոչուցն
՝ի մարմնոյն, այլ որպէս քուն լեալ ըստ սովորու-
Թեանն։ Իսկ՝ ի վաղիւն հրամայեաց Թագաւորն ա-
ծել զմանկունսն՝ զի երեւելիք էին, և սպառ-
նացեալ չար անյս անցուցանել ընդ նոսա, եԹէ ոչ
նոքա վաղվաղակի՝ ի միջ եկեսցեն։ Այնն ծնողք ման-
կանցն. Մեք ընդէր մեռանիմք վասն նոցա, որք հրա-
մանի քումդ հաւանեալք պաշտեմք զաստուածն, և
զոհեմք նոցա որպէս կամք քո հրամայեն. և նոքա
են Յողքոս լերինն յայրի անդ, և մեծաւ նեղու-
Թեամբ կեան քրիստոսական հաւատովն։ Զայս ա-
սային ծնողքն զի երկեան՝ ի Թագաւորէն. և նա
խրհէր Թէ զինչ արասցէ նոցա։ Եւ ակն ածէր միա-
նգամ ածել զնոսա յատեան, զի մի յանդիմա-
նեսցի՝ ի մանկանցն քանզի պիտէր զնոսա յատաջին
հարցմանցն։*

*Այսպա հրամայեաց զգուշս այրին ունել մեծամեծ
քարամբք յորում էին մանկունքն. և այս լինէր՝ ի
սեպհականէն Աստուծոյ, զի պահեսցին անշարժ նըշ-
խարք սրբոցն. միանգամայն և լինելոյին վկայք յարու-
Թեան մեռելոց, և նոքօք փառաւորեսցի Աստուած՝ ի
դէպ ժամանակի, և նկուն լեալ սատանայ և նորին հա-
մախոհքն։ Եւ այսպէս հրամայէր զգուշս այրին ունել
զի մեռցին անդէն, և լինելոյի նոցա բանդ և գերեզման
յատկանական. և հրամայէր ոչ ումեք մտանել յայ-
րին, և սեպհական կարծէր կենդանիս զնոսա։
Եւ այս լինէր՝ ի վերին խնամոյն զի՝ ի նմին կացցեն։*

նակ Թէոդա և Սբա[1] հաւատարիմք Քրիստոսին և քրիստանեայք՝ որք ի ծածուկ ունէին զքրիստանէութիւն, խորհեցան ընդ միմեանս և ասեն. Գրեսցուք զվկայութիւն սուտ և զժամանակս և դիպուք ի գլուխ պղնձի և ընկեսցուք ի յայրս, Թերևս այդ արասցէ Աստուած և յայտնեսցէ զնշխարս սրբոցս այսոցիկ։ Եւ որպէս խորհեցան նոյնպէս և արարին սրբոց այսոցիկ ի սեաչուիթենէն Սատուծոյ. և գրեցին զժամանակն և զվկայութիւն սրբոցն և զանուանս, և Թէ որպէս հրամանաւ Դեկոսի կալան զսուրբ այրիս, զի սատկին մեռցին։ Զայս ամենայն ոճով գրեցին և եդին ի գլուխ պղնձի և ընկեցին ի նեղքս ի յայրն. և ետ հրամանի Դեկոսի կալաւ այրն, և ոչ ոք գիտաց զմնոյ մանկանցն ի ժամանակին յայնմիկ. և այս եղև ի մարտակութիւնէն Քրիստոսի։ Եւ կէտ այսր ամենայն մեռաւ Դեկոս և ամենայն ազգն այն, և փոխեցան այլ Թագաւորք մինչև ցԹէոդոս մեծ։

Յորմ Թագաւորեաց մեծն Թէոդոս բարեպաշտ կէտ ամանն այնոցիկ, և ետ հաւատոցն Քրիստոսի հնազանդել և պաշտել զամենասուրբ Երրորդութիւն, յարեան ոմանք որք ասէին Թէ յարութիւն մեռելոց չէր, և կործանէին զհաւատս ոմանց, որպէս առաքեալն յառաջագոյն տեսեալ ասէր զայս. և դարձեալ ասէ. Ծանեաւ Տէր զայնոսիկ՝ որ իւրն էն։ Նախ բարեպաշտն Թէոդոս Հզնէր վասն այնորիկ և խնդրէր Աստուծոյ լուծումն լինել իրացն։ Եւ էր գլուխ աթանդոյն Թէոդորիտ ոմն եպիսկոպոս Կիպրացւոց[2], և այլ ընկերք նորա չարախոհութիւնք, ապականիչք և հերձուածոյ և ուղղափառ հաւատոյ, որք ասէին Թէ յարութիւն մեռելոց արդէն իսկ եղեալ է. և այլք Թէ մարմինք մարդկան և ապականեալք ի հողոյ և գրուեալք ընդ բազում տեղիս ոչ յառնեն, այլ հոգիքն միայն ընդունին զանմահութիւն և զանապական կեանսն։ Եւ մերձեալքն ոչ իմացան Թէ ոչ ծնանի մանուկ առանց մարմնոյ յորովայնի, և դարձեալ Թէ ոչ հանի մարմին կենդանի առանց հոգւոյ, և խաչիւցին

1. Մի օր. Աբաս։
2. Մի օր. Թէոդորոս եպիսկոպոս Կիպրոսի. Այլ օր. Թէոդորիտոս եպիսկոպոս Կիպրոսացոց գաղափին։

զականջս իւրեանց լսել Տեառն, որ ասէ, եթէ՝ Լսի-
ցեն մեռեալք ձայնի որդւոյն Աստուծոյ, և եկեսցեն
արտաքս. որոց բարիս գործեալ իցէ՝ յարուցիւն կե-
նաց, և որոց զչար արարեալ՝ ի յարուցիւն դատաս-
տանաց: Եւ Աւրաբեալ ասէ. Ինձիա, զու զոր սեր-
մանեաս ոչ կենդանանայ եթէ ոչ մեռանիցի, և Ա-
տուած տայ մարմին, որպէս և կամի, և իւրաքանչիւր
զիւր մարմինս: Եւ մարգարէն եզեկիէլ որպէս յերե-
սաց Տեառն ասէ. Բայից զպերեզմանս ձեր, և հանից
զձեզ ի գերեզմանաց ձերոց, ժողովուրդ իմ, և տաց
զոգի իմ ի ձեզ և լինիջիք կենդանի. և այլ ևս բա-
զում է որ պատմի ի գիրս սուրբս վասն յարուցեան
մեռելոց: Իսկ բարեպաշտն Թէոդոս արտասուօք խընդ-
րէր ի Տեառնէ, զգեցեալ քուրձ և նստէր ի վերայ
մոխրոյ, երևումն ինչ առեալ յարուցեան. զի հա-
ւատացելոցն յոյս հաստատեսցի, և ամպարշտաց ժո-
ղովն նկուն լինի: Այլ որ զկաս երկիւղածաց լուրց
առնէ և աղօթից նոցա լսէ, կամեցաւ ի ձեռն սուրբ
մանկանցն ցուցանել զյարուցիւն՝ յաւուրս Թէոդոսի
մեծի Թագաւորի, որ հայցեաց ի Տեառնէ և առ. զի
ամենայն որ խնդրէ առնու, և որ հայցէ գտանէ, որ-
պէս ասաց Տէրն յաւետարանին:

Ասպիսի ինչ եղև յայտնութիւն մանկանցն. այր
ոմն պատուական՝ որում անուն էր Ոգոդլի [1], որ ընդ իշ-
խանութեամբ նորա էր Ողբոս լեառնն, կամեցաւ գոմ
շինել հօտից իւրոց մերձ յայրն յորում էին սուրբ
մանկունքն. և ծառայք նորա գործաւորքն գործէին,
և գքարինան Թաւալեցուցանէին ի դրանէ անտի. և
բացեալ լինէր այրն՝ որ ի Դեկոսէ կալաւ: Յայնժամ
հրամանաւ Փրկչին կենդանացան մանկունքն որ յայրն,
և յարուցեալ նստան խնդալից և լուրջ երեսօք որպէս
յերկին և յեռանդն: Եւ տեսիլ մեռելութեան չե-
զուին ի նոսա. զի մարմինք նոցունք և հանդերձ, և ոչ մի
ինչ կերպարան փոխեալք: Եւ յարեան առաւօտուն,
և այսպէս կարծէին եթէ յերեկոյ ննջեցին, և հո-
գայն վասն հալածանացն Դեկոսի ամպարշտի և վասն
խնդրոյ նոցին մանկանցն: Դարձեալ հարցանեն վասն

1. Մի օր. Ոգոդլի:

Տարին իրաց ցՍմլիքոս, որ ինչ լսեալ էր ՚ի քաղաքն Եփեսոսի։ Սակ Սմլիքոս. Որպէս պատմեցի երեկոյ ՚ի խնդիր ե մեզ Թագաւորն Դեկոս, կամ զտնել կամ կամ մեռանել՝ եթէ ոչ հաւանեսցուք նմա։ Սակ Մաքսիմիանոս ցընկերս իւր. Եղբարք իմ, յիշեցէք վերկնաւոր և զտհաւոր առեանն, և մի զարհուրեսցուք յառաժամանակէից երկիւղէ, որ ոչ ունի իշխան զտհ ապառնալեաց. և մի ուրասցուք զկեանս մեր, զոր ունիմք հաւատովք որդւոյն Աստուծոյ, որ ետ զանձն վասն մեր, զի զմեզ փրկեսցէ յաշխարհէ առտի չարէ, ՚ի փառս ամենասուրբ երրորդութեանն լինել։ Եւ ասէ ցՍմլիքոս. Ա՛ռ դու ընդ քեզ լսայս, և երթ ՚ի քաղաքն ուսանել վասն Դեկոսի, թէ զինչ խորհի վասն մեր։

Եւ յարուցեալ Սմլիքոս գնաց, առեալ ընդ իւր լսայս, և փոխեալ զկերպարանս իւր, զի մի ճանաչեսցէ ոք զնա և մատնեսցէ Թագաւորին Դեկոսի. և նա ոչ գիտէր թէ նորա ոսկերքն ՚ի հող դարձեալ էն, և հոգին ՚ի խաղաղութեան։ Եւ երբեմն եմուտ ՚ի քաղաքն Եփեսոս, և առեալ զնշան տուրք խաչին ՚ի դուռն քաղաքին, և զարմացաւ ընդ միտս իւր։ Եւ շրջեցաւ ընդ քաղաքն ամենայն, և տեսանէր նոյնպէս զնշան տէրունական խաչին կանգնեալ ՚ի տեղիս տեղիս, և զմարդիկն զի երդնուին յանուն Տեառն Յիսուսի, և այլազգ էին Թուէր քաղաքն. և կայր հիացեալ և ապշեալ, և ասէր ընդ միտս իւր. Երկիւղ ոչ ուրեք եթէր նշան տէրունական խաչին և ոչ ոք իշխէր կարդալ զանուն Տեառն զօրութեանց, խակ այժմ հաճարձակ քարոզին անուն Տեառն. և եթէ արդարև Եփեսոս է քաղաքս այս, զի ոչ էին Թուէ նման, և եթէ երանգ էիցէ որ երևեսս ոչ գիտեմ։ և զինչ այս եղեալքս որ ապշեցուցանէ զիս. ոմն զիս խելամուտ արասցէ այսմ։ Եւ մատուցեալ առ մի ոմն՝ ասէ ցնա. Ո՞վ է քաղաքս այս։ Եւ նա ասէ. Եփեսոս է։ Եւ ասէ Սմլիքոս ՚ի միտս իւր. Ցինչ եղէ, Տէր Յիսուս, օգնեա ինձ։ Եւ ապշեալ մտաք և երկիղիւ գնայր ՚ի վաճառն գնել հաց, և գնալ ՚ի քաղաքին զի մի ըմբռնեսցի։ Եւ տուեալ զլսայն զոր ունէր՝ առնուլ հաց. և ասէ հացավաճառն. Զառաջին Թագաւորացդ զպատկեր և զգիր

ունի. և ցուցանէր ընկերացն իւրոց։ Եւ նոցա հայեցեալ յԱմֆիքոս՝ ասեն. Գանձ գտեալ է տրա, քանզի բազում ամս ունի լռանայս։ Եւ լուեալ Ամֆիքոս երկեաւ յոյժ, զի համարեցաւ՝ ի ձեռս Դեկոսի մատնել։ Եւ ասէ ցնոսա. Աղաչեմ զձեզ տուք ինձ զարժան հատցիկն և գնացից՝ ի տեղի իմ։ Եւ ասեն ցնա. Ոստի՞ ես դու, և զինչ են լռանայքս այս՝ որ զառաջին Թագաւորացն գպատկեր և զգիր ունին. ասա ստուգութեամբ զամենայն։ Եւ նա ոչ գիտէր զինչ պատասխանի տացէ այնմ որ նեղէին զնա։

Լուր եղև՝ ի քաղաքն եթէ ոմն լռեցաւ, որոյ գանձ գտեալ է, և ժողովեցան բազումք առ նա։ Եւ նա հայէր եթէ ոք՝ ի ծանօթից երևեսցի, և ոչ զոք առանէր, և կայր հիացեալ. և նորա նեղէին զնա և ասէին. Օտար է այրս այս և ոչ ոք ճանաչէ զսա. և ոմանք փախուած համարէին զնա, և ոմանք՝ կերպարանի ասէին զի փախիցէ։ Եհաս բանն առ բդեաշխին՝ որ էր յեկեղեցւոջն առ տուրբ եպիսկոպոսն Մարիս՝ ըստ պատահմանն. և հրամայեցին ածել զԱմֆիքոս առեանել վասն խնդրոյն այնորիկ։ Եւ իբրև ածին և տեսին զլռանայսն, ասեն ցնա. Ոստի՞ ես դու, և զինչ են լռանայքս այս՝ որ զառաջին Թագաւորացն գպատկեր և զգիր ունին. ասա ստուգութեամբ զամենայն։ Եւ նա ոչ գիտէր զինչ պատասխանի արասցէ։ Ասէ եպիսկոպոսն. Այս որդեակ զձշմարիտն, և զերծիր՝ ի փորձու Թէնէդ յոր ընկղմեցար։ Ասէ Ամֆիքոս. Աղաչեմ զքեզ, տէր, արա զիս խնայամուտ, և զամենայն զոր ինչ գիտեմ ասացից. Դեկոս Թագաւորն՝ ի քաղաքիս է, և կամ քաղաքս Եփեսոս է։ Ասէ եպիսկոպոսն. Զինչ Դեկոս Թագաւոր այժմ՝ի վերայ երկրի. այլ յառաջ քան զբազում ժամանակս պաշտէր զկուռս և հալածէր զքրիստոնեայսն. իսկ այժմ Թէոդոս է Թագաւոր հաւատացեալ՝ի Քրիստոս, և ամենատուրբ երջանկութեանն օրհնի և երկրպագի յամենեցունց. և քաղաքս Եփեսոս է։ Ասէ Ամֆիքոս. Երէկ Դեկոս Թագաւորն՝ի քաղաքիս էր և պատուհասէր զքրիստոնեայսն. և ես իբրև լուայ՝ երկեայ, և գնացի պատմեցի ընկերացն իմոց եթէ՝ի նոսէր է կորուսանել զմեզ.

զի եմք հալածեալք ի նմանէ վասն Քրիստոսի եօթն ամք, որպիսի պատուաւորաց քաղաքիս. և առեալ մեր տակի և ածեալ բազում՝ աղքատաց բաշխեցաք, և կայ տակաւ լսմայք ի պէտս մեր, և այս զոր տեսանէք. և եմք յՈղբոս լերինն յայրի անդ, եկայք և տեսէք: Եւ ասաց զանուանս իւրեանց և զծնողացն, և ոչ ոք ձանաչէր զնոսա: Եւ ես, ասէ, եկի գնել հաց և տանել, և ուսանել վասն Քրիստոսի. և այսմ փորձուեցանց՝ որ այսպէս հանդիպեցայ, ես այսմ ակն ոչ ունէի յոր ըմբռնեցայ. ես զտոյգն պատմեցի ձեզ: Արդ կամքն Աստուծոյ կատարեսցի, որ գիտէ զամենայն. ես այլ ինչ ոչ գիտեմ բնաւ:

Յայնժամ ասէ եպիսկոպոսն. Յայտնել ինձ կամի Աստուած այսօր մեծամեծ սքանչելիս՝ ի ձեռն երից տասարդիս այսոցիկ. եկայք երթիցուք յՈղբոս լեառն յայրն, և տեսցուք զմեծամեծս Աստուծոյ: Եւ առեալ ընդ իւրեանս զբազմութիւնն՝ գնացին եպիսկոպոսն և ժողեաշխեն և մեծամեծք քաղաքին և Սմլիքոս առաջի նոցա, և եմուտ յայրն և պատմեաց ընկերացն իւրոց որ ինչ անցին ընդ նա: Եւ մինչդեռ կամէր եպիսկոպոսն մտանել յայրն՝ հայեցաւ յայսկոյս յայնկոյս և եռես պզտրոցն պղնձէ, և հանեալ ի դուրս՝ եբաց առաջի ժողեշխեին և պատուաւորացն. և տեսանէն երկուս տախտակս կապարեայ, յորում գրեալ էր զանուանս մանկանցն եօթանեցունց. և եթէ հալածեալք վասն Քրիստոսի հաւատոյն ի Դեկոսէ թագաւորէ, ոչ հաւանեցան պաշտել զկուռս՝ սուրբ վկայքս Քրիստոսի, հրամանաւ Դեկոսի խցաւ դուռքն այրին, զի լինէին տոցա բանդ և գերեզման: Եւ ես Թէոդոս և Սբոս հաւատարիմք ալեքայի և քրիստոնեայք, գրեցաք զի յայտ լինիցին եթէ վկայք Քրիստոսի են սուրբ մանկունքս եօթանեքին, յորժամ այց արասցէ Տէր և յայտնեսցէ զնշխարս տոցա:

Եւ լուեալ զայս փառաւոր առնէին զԱստուած՝ ի վերայ անպատում սքանչելեացն զոր Տէր եցոյց: Եւ մտին ի նեղքս ի յայրն, և տեսին զսուրբ մանկունսն պայծառս և գեղեցիկս և վայելուչս որպէս զհրեշտակս Աստուծոյ. և անկեալ ի վերայ երեսաց իւրեանց երկիր պագանէին և ողջունէին զմիմեանս հոգևոր ողջու-

նիւ. և գոհացան զՍատուծոյ, որ արժանի եղեն առնել զաքանչելիս յարութեանն, և զահաւոր առեալն զոր Տէր եցոյց ՚ի ժամանակին։ Եւ խօսեցան ընդ միմեանս, և պատմեցին սուրբ մանկունքն՝ որ ինչ յաւուրս Դեկոսի հալածուին և իւրք գտծեցան։ Եւ եպիսկոպոսն պատմէր զկործանումն անաստուած թագաւորացն, և զաղաչսն և զքրիստոսասէր թագաւորութիւնն, և զքրիստոնէից կարգս և զհաստատութիւն հաւատոց։ Եւ նոքա օրհնէին զՍատուած, և նոյնժամայն զգայուցանէին թագաւորին Թէոդոսէ վասն սուրբ մանկանցն յարութեան, որ յայտնեցաւ ՚ի ժամանակս նորա։

Եւ իւրաքանչիւր զայս ասեն Թէոդոս, զհոգութիւն և օրհնութիւն աներեսաւորն մատուցանէր, որ զյարութեան յոյսն հաստատեաց ՚ի ձեռն սուրբ մանկանցն, և յանօթ արար զչարն, և ուրախ եղև և ցնծայր և օրհնէր զՍատուած։ Եւ վաղվաղակի անդ հասանէր, տեսանել զսուրբ մանկունսն ցանկայր. և մանկունքն էլին ընդ առաջ նորա ՚ի դուրս այրին և փայլէին երեսք նոցա որպէս լուսաւորք, և երկիր պագին առքայինս. և նա անկեալ ՚ի վերայ երեսաց իւրոց համբուրէր զոտս նոցա. և մանկունքն բռնան հարեալ յարուցին զնա, և մինն նոսիաւ հանդերձ յայրն։ Եւ եպիսկոպոսն և պատուաւորքն նստան առաջի ՚ի դեռնի, և սկսին առեալ համբուրել զմի մի ՚ի սրբոցն։ Եւ զուարճանային թագաւորն և օրհնէր զՍատուած և ասէր. Ո՛վ պատմեցեալ զգօրութիւնս Տեառն, որ արարչագործ միայն. ո՛վ խորհուրդ մարդասիրութեանն Սատուծոյ, որ յաւիտեան է ողորմութիւն նորա առ յաւետեալս իւր։ Եւ ասէր, եթէ զոր քարոզեցին սուրբքն զյարութիւն՝ այժմ յայտնապէս առաք ՚ի ձեռն սրբոցս։ Եկայք հանցուք առնեքեան զփառս ա-
մենատուրբ երկրպագութեանն, այժմ և հանապազ յաւիտեան։ Եհարց թագաւորն զմանկունսն, թէ՝ Ո՞րպէս էին ոչխարք ձերոց զգայութիւնք։ Սոքեա սուրբ մանկունքն, եթէ՝ Որպէս որք ննջեցին յանկողինս իւրեանց առաւել ՚ի զգայութեան. որ յաւուր բարւոյն է, որ յամենայն ՚ի հնարից հակառակորդին ազատեալ, զարմանալի իմն գեղեցկութեամբ երեսկրեալ, զոր ակն

ոչ եաես, և ունկն ոչ լուաւ, և՛ ի սիրտ մարդոյ ոչ ան-
կաւ, ուր պատրաստեցան Հոգւոց շուքմարդանք՝ արժա-
նաւորացն լինդութեամբ և ուրախութեամբ՝ ի փառս
Աստուծոյ, իսկ մեղաւորացն տրտմութեամբ և հե-
ծութեամբ ըստ իւրաքանչիւր գործոց բարեաց և չա-
րաց։ Բայց վկայարեալ բարւոյն և զպատուհասն մարմ
նով և ոգւով ընդունէին յարդար դատաւորութեանն
Աստուծոյ։

Եւ այլ ևս բազում խօսեցան ընդ Թագաւորին, և
օրհնեցին զնա յանուն Տեառն զօրութեանց, և ասեն.
Օրհնեալ լիցիս դու՛ ի Տեառնէ, սիրելի Աստուծոյ, զի
վասն քո եցոյց Աստուած զքանչելիս յարութեան
մեօք։ Եւ յոտն կացեալք ամենեքումբք հանդերձ կա-
ցին յաղօթս և օրհնեցին զԱստուած. և ասեն ցամե-
նեսեան. Ո՛ղջ լերուք, խաղաղութիւն ընդ ձեզ։ Եւ
եդին զգլուխս իւրեանց և դարձեալ ննջեցին, և ա-
նդրեցին զոգիս իւրեանց՛ ի փառս Աստուծոյ։ Եւ
տեսեալ զքանչելիս՛ ի վերայ աքանչելեաց, տային
օրհնութիւն Աստուծոյ և փառաւոր առնէին զԱս-
տուած՛ ի վերայ զարմանալեացն, Թագաւորն և ամե-
նայն ժողովուրդն։

Եւ հրամայեաց Թագաւորն տապանս ոսկիս կազմել
նոցա։ Եւ յայնմ դիշերի երևեալ տուրքն ասեն ցԹա-
գաւորն. Թո՛ղ զմեզ՛ ի տեղւոջս մեր՝ որպէս կայաքն,
մինչև՛ ի հաստատակաց յարութիւն, և դարձեալ յա-
րիցուք զանապականութիւն զգեցեալք, և անմահա-
ցեալք՝ ժառանգեացուք զանապատ բարիսն։ Եւ լուեալ
զայս՝ կազմեցին զայրն և դեղեցկացուցին, յախճա-
պակ արարեալ, Թողին այնպէս որպէս ննջեցիքն. տօն
մեծ կատարելով զօրն զայն, որպէս և վայել էր սրբոցն.
՛ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, յաւիտեանս
յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Թադէոսի։

Ի թագաւորութեանն Նումերիայ և ի դատաւորութեանն Թէոդորի, ի քաղաքին Եգիա, յառաջ քան զինն կաղանդացն՝ յամենեանն Հռոմ, որ օր ԻԳ-էր ամսոյն, նստաւ դատաւորն ի տաճարին Անդրիանոսի ի քաղաքն Եգիա, և ասէ. Կոչեցէք զամբարիշտն կրօնուք։ Ձօրականքն ասեն. Անհաւասիկ կայ, աղաչեմք զքեզ։ Թէոդորոս դատաւորն ասէ ցնոսա. Ո՞ւր կալայք զդա՝ որոյ սկիզբն է գալոյ մօրուացն և պայծառացեալ ի ծաղիկ երիտասարդութեան։ Դէնեափոս դահճապետ ասէ. Մինչդեռ երթայաք ի մայրաքաղաքացն Անարզաթոյ, և դեռ հեռագոյն էաք ասպարսնաք յինաք, և տեսաք զդա ընթանալով ընդ կողմն արևելից. և իբրև ետես զմեզ՝ թաքեաւ ի մէջ անտառին. և մեր խնացեալ եթէ քրիստոնեայ է, և պատեալ զաստուածն՝ դադարեցաք յանտառին քառասուն տիւ և քառասուն գիշեր, և գտաք զդա թաքուցեալ ի ձիթենեաւջն. իբրև կալաք եթէ կատեցուք զդա՝ սկսաւ մարմնջել ընդ մեզ. և մեր չարչարեալ զդա բօթք՝ զսակեցս դորա չարդեցաք, և երկաթ արկեալ ի ձեռս դորա և յոտս, և մատուցաք առ քեզ։

Թէոդորոս դատաւորն ասէ ցնա. Ցորմէ պաշտամանէ ես կամ յորմէ գահէ կամ յորմէ քաղաքէ, և զինչ անուն է քո։ Թադէոս ասէ. Եթէ կամիս ուսանել եթէ յորմէ պաշտօնէ եմ, քրիստոնեայ անուա-

նիմ. ապա թէ ուրեք մարդիկ անուանեն զայն խըն-
դրեա, Թաղդաս կոչիմ, և եմ ի Կիբանանէ, և հաս-
տատեալ իմ ի Գալիլեացին, և ընտանի եմ Երուսա-
ղեմացւոյն. մայր իմ Հռոմեկիանա և հայր եմ Բեկո-
սիանոս. և ես արուեստիս բժիշկ եմ և եղեալ սարկ-
աւագ Յովհաննու եպիսկոպոսի. և ի լինել հալածա-
նաց քրիստոնէից՝ ամենեքեան փախեան և զիս միայն
ընդունեցին և մատնեցին Տիբերիանոսի դատաւորին
Եգեացւոց. և անցոյց զիս ընդ ջրատար տանջանս, և
երկայս եհար զիս հրապարակաւ տանջանօք, կարծելով
թէ դարձուսցէ զկորհուրդս իմ ուրանալ Յիսուսոյ.
և կարդացեալ իմ զհայրն և զՄորդի և զՀոգին սուրբ,
և փրկեաց զիս յանօրէնն ձեռաց նորա. և այժմ հա-
սեալ մատուցայ առենիս քո՝ որով եհաս ինձ մեռա-
նել վասն անուան Յիսուսոյ իմոյ: Արդ զինչ կամիս,
քանզի մերձ է որ օգնէ ինձ Քրիստոս:

Դատաւորն ասէ. Ա՛յ վախչուղ, մի համարիր թէ
կարող ես յիմոյ ձեռաց փախչել: Թաղդաս ասէ.
Հաւատամ յամենակարողն Յիսուս, եթէ ոչ
յաւիթ առնէ զյուսացեալս իւր ի Քրիստոս. և որք
վասն անուան նորա զան ի վկայութիւնս յայս: Ասէ
դատաւորն. Գնելիկոնաւ ծակեցէք զաչդունս դորա և
անցուցէք տուընա, և քարշեցէք ընդ քաղաքս, զի
փախչող է՝ դուցէ փախչիցի ի թաղաւորաց:

Եւ սկսան առնել այսպէս. և Ջանացան և ոչ կա-
րացին: Եկն նուէրակապետն և ասէ. Զլաչեմք զքեզ,
տէր, յաւուրսդ մինչև ցայժմ Ջանացաք և ոչինչ կա-
րացաք առնել: Դատաւորն ասէ. Կրկին Ջանացարուք,
Թերևս կարիցեք ծակել: Եւ եկեալ Յաեղիոս հիւան՝
ասէ. Որպէս հրամայեցեր ծակեցաք զաչդունս նորա
և կապեցաք տուամբք: Թէոդորս դատաւորն ասէ.
Աճեք այսր զփախչողն. և ածին: Ասէ ցնա. Մատիր
և զոհեա աստուածոցն ըստ հրամանի Թաղաւորացն,
զի փրկեսցիս ի տանջանացդ: Թաղդաս ասէ. Քրիս-
տոնեայ եմ և կուռս երկիր ոչ պագանեմ, զի մի կորու-
սից զխոստացեալն ինձ Յիսուսոյ զևարձան: Դատա-
ւորն ասէ. Եկայք կախեցէք զնա գլխիվայր երկու զմի
յանդգամոյ: Ասէ արբանեակքն սատանայի փայտ լուկ
կախեցին. և աշակերտն Թաղդէ Տիմոթէոս ասէ. Տէս

զինչ արբանեակքն սատանայի գործեն։ Թաղդես ա-
սէ. Լուա լեր եղբայր, քանզի Քրիստոս է որ օգնէ մեզ,
և նոցա զընդունայնաջանութիւն տայ։ Դատաւորն ա-
սէ. Ո՛չ լուաւ, ա՛յ է, որ ոչ հրամայեցի ձեզ գայդ կա-
խել, և գուք փայտ լոկ կախեալ տանջէք, և ծաղր
առնէք զհրամանս արքունական։ Ստեփոս հիւան
ասէ. Կենդանի է Տէր Աստուած առն այնորիկ հա-
ւատացելոյ, ոչ առնեմ յանցուցանս և կամ ծաղրա-
կանս, այլ և ես խոստովանիմ զՔրիստոս Թագաւոր
երկինի և երկրի, յոր նայն է յուսալ և հաւատալ
ցեալ։

Իսկ Աղեքսանդրոս գահՃապետն ասէ. Արդարև
մեծ փառս տեսաք վասն երանելի առնս այսորիկ, և
ոչ կարեմք արհամարել՝ի գա ձեռս, վասն որոյ և մեք
հաւատացաք՝ի Քրիստոս և քրիստոնեայք եմք. զոյ
զիտութիւն Ճշմարտութեան առեալ՝ չարչարակից
արբոյն Թաղդեայ լինիցիմք։ Եւ դատաւորն տեսեալ
բարկացաւ՝ի վերայ նոցա յոյժ, մինչեւ լցաւ բար-
կութիւնս, կրճտեալ զատամունս իւր՝ի վերայ նոցա։ Իսկ
Աստերի և Աղեքսանդրի յաղօթս կացեալ՝ ասեն. Տէր
Աստուած քրիստոնէից, մի տար սատանայի յափըշ-
տակել զանձինս ծառայից քոց՝ որ խոստովան առնին
զքեզ։ Եւ զայս ասացեալ փախեան յերեսաց դա-
տաւորին։ Եւ հասեալ Միդոս ումն՝ի գրանէն և ասէն
ցնոսա. և եկեալ պատմեաց դատաւորին, և ասէ. Տէր
դատաւոր, հասի նոցա՝ի լերինն, և կալայ և ապանի
ցնոսա սրով, և ընկեցի ցնոսա՝ի լերինն, և տեսին ա-
մենայն բազմութիւնն։

Դատաւորն ասէ. Ցմինչ կամիս դու Թաղդես, զո-
հել աստուածոցն և ապրել, եթէ չարաչար մեռանիլ։
Թաղդես ասէ. Ոչ կարես հաւանեցուցանել զծառայս
Աստուծոյ զոհել մոտի դիւաց և պատկերաց նոցա.
և ոչ երկնչիմ՝ի տանջանաց քոց, քանզի մերձ է առ
իս Քրիստոս յոյսն իմ, և զերծուսցէ զիս՝ի տանջա-
նաց քոց։ Եւ բարկացեալ դատաւորն յարեաւ ինքնին
տանջել զերանելին, և յամաքեցան ձեռք նորա։ Ա-
ղաչեաց Թաղդեոսն և ասէ. Աղաչեմ զքեզ, ծառայ
Ճշմարտին Աստուծոյ, աղօթեա վասն իմ զի բժշկե-
ցին ձեռքս իմ։ Եւ իբրև աղօթեաց Թաղդես՝ ողջա-

ցան ձեռք նորա, և ամենեքեան զարմացեալ ասէին. Մեծ է Աստուածն քրիստոնէից։ Պատասխան ասէ. Կոչեցէք նաւավարն. և իբրև եկն, ասէ. Ընկեցէք զդա՛ ի ներս և տարէք՛ ի Սիպրոս քաղաք, և անդ մեռցի զա, և մի մեռցի՛ ի ձեռաց իմոց։ Թադղոս ասէ. Դու արարեր սկիզբն, և՛ ի քէն կատարիմ. և առեալ ընկեցին զնա՛ ի ներս։ Եւ մինչդեռ վարէին նորա, ասէ Թադղոս. կարող է Քրիստոս դարձուցանել զնաւս՛ ի տեղին՝ ուր հար զիս Թէոդորոս։ Եւ իբրև գնային, եղև հողմ ուժգին՛ ի մէջ ծովուն ընդդէմ, դարձոյց զնաւսն այնմ ներս հանդերձ յորում էր տէրն Թադղոս։ Եւ իբրև եկին մերձ ուր էր ատեանն, աղաղակեաց առ պատուերն Թադղոս և ասէ. Արդ՝ ուր են աստուածքն քո, կամ ուր են պարծանքն քո. և դիմադարձեալ Քրիստոս յաղթեաց և շլացոյց զիմաստոց աստանային հօրն քումն։

Պատուերն ասէ. Տեսէք, զիարդ կախարդեաց և զնաւսն Թադղոս։ Եւ հրամայեաց ածել կախարդս. և իբրև ածին, Թէոդորոս պատուերն ասէ. Ջինչ առնեմք սմա՝ զի յաղթեաց կախարդութեամբն իւրով։ Ուրբլիոս կախարդ ասէ. Սգպ քրիստոնէից չարագործ է և չարամահ. բայց դու արա զար ասեմն քեզ, և ապաքէն աստուածդ զնա. արասցես տախտակս և քեռա ուռա տուր իբրև կարամխով, և բևեռեացես զտախտակսն ընդ հերս նորա. և քարշեացի՛ ի մէջ քաղաքին յատարիսին, և այնպէս լուծանի կախարդութիւնն Թիւն նորա. և յետ այնորիկ արկցեն զազանաց՝ զի քարշեացեն զմարմին նորա։ Եւ պատուերն փութալով հրամայեաց առնել զհնարս բևեռաց տախտակսն. և իբրև արարին՝ ածին զտուրբն Թադղոս։ Եւ տարածեալ զձեռս իւր եկաց յաղօթս և ասէ. Տէր Աստուած, մօտ կաց ծառայի քումմ, և յաղթեա՛ զար հնարից սատանայի, զի փառաւորեսցի անուն քո յիս, և ծանիցեն զամբարշտութիւն չարութեան նոցա, եթէ ոչ կախարդութիւն է՝ այլ անպատմելի զօրութիւն աստուածութեանդ քո։ Եւ իբրև զայս ասաց, արկին զնա՛ ի տախտակսն և բևեռեցին. և կապեալ քարշեին զնա ընդ մէջ քաղաքին յատարիսին, Եւնատեալ պատուերն յատարիսին՝ ասէ. Կարդասցէ,

ժ եղէ[1] ՚ի չար պաշտամանէդ քրիստոնէից։ Զօրականքն ասեն. Սրդ կարծեմք եթէ մեռաւ։ Դատաւորն ասէ. Ետուր կապս եւ արարէք իբրև զկնոր և ծա-
կեցէք զկողս դորա, մի գուցէ խաբէիցէ։ Եւ երանելին Թադէոս տեառնագրեաց զինքն նշանաւ սուրբ խաչին Քրիստոսի, շարժեաց զինքն ՚ի վեր վազելով, խզեաց զամենայն կապանսն որով պնդեալ էին բևեռօքն, և եկաց ՚ի մէջ, զօրաւորագոյն ևս խօսելով և ասէ. Օրհնեալ է Աստուած, որ յարոյց զիս ՚ի մեռելոց, և յամօթ արար զկռոցն զպաշտօնեայսն։

Յայնժամ դատաւորն հրամայեաց արձակել ՚ի վերայ նորա գազանս. և մատակ առիւծ մի եկեալ ոչինչ ինչ եաց նմա։ Եւ դարձեալ արձակեաց ՚ի վերայ նորա ինձս, և երթեալ գազանքն անկանէին յոտս նորա և գորովէին զնովաւ։ Եւ սուրբն Թադէոս մեծաձայն ասէ. Երանի որ հաւատան ՚ի Քրիստոս. երանելիք են որ առանց երկմտութեան մատչիցին ՚ի խոստովանութիւն նորա. երանելիք են որ մատնեցին զանձինս իւրեանց ՚ի չարչարանս վասն Քրիստոսի, զի նոքա յաղթեն սատանայի։ Եւ զայս իբրև լուաւ դատաւորն՝ ասէ. Զնոր զվայրենի գազանս կախարդեաց՝ կարդալով զանունն Քրիստոսի։ Եւ հրամայեաց դատաւորն բերել զնա յորմ ասպարիսին, և առնոյն բազմութեան քաղաքին քարկոծել զնա։

Սլաղակեաց Թադէոս և ասէ. Սմենակալ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, դարձո յինէն զըսպաոնեալս մարդկային, զի ծանիցեն թէ դու ես Աստուած միայն, և բայց ՚ի քէն այլ ոչ ոք, և ես ծառայ քո։ Եւ զայս նորա ասացեալ աղօթելով՝ քարինքն յեաս դառնային, և զբազումս յամպարշտացն վիրաւորեցին. և սուրբն ոչ վիրաւորեցաւ, քանզի ծածկեալ էր ընդհօքն Քրիստոսի։ Եւ դատաւորն հրամայեաց ինքեանս ածել զնա. Ասէ ցնա. Ասասցես զոհեա աստուածոցն, քանզի ՚ի նոցանէն օգնիս, վասն որոյ և ես երկայնամիտ եղէալ առ քեզ. ապա թէ ոչ՝ երդուեալ յԱրկէպոս՝ այլ և ա ՚ի դառն տանջանս հրամայեմ մատնել զքեզ։ Թադէոս ասէ. Քրիստոս

1. Ա. յասէս յօրինակին։

տանեայ եմ և դիւաց ոչ կարեմ զոհել. որպէս կամիս արա, ոչ երկնչիմ՝ի տանջանաց քոց, զի Քրիստոս է որ օգնէ ինձ։

Եւ հրամայեաց դատաւորն բերել ձէթ և ձիւթ և ծծումբ և կապար, և խառնել՝ի միասին՝ի կուշտ երկաթի, և ջեռուցանել քաջ և արկանել զդլխով նորա, ասէ. Տեսանեմ թէ օգնէ դմա Քրիստոս՝ յոր յուսացեալն է։ Թադղոս ասէ. Հաւատամ՝ի Տէր իմ Յիսուս Քրիստոս՝ որ զօրացոյց զիս և օգնեաց ինձ. և նա է որ յաղթէ քեզ ինև. և դու անօրէն կուրացեալ ամբարշտութեամբ ոչ կարես տեսանել զՔրիստոսին իմոյ զօգնականութիւնն։ Երբև զայս ասաց, մատուցին զկղպեն մինչդեռ եռայր, և հեղին զդլխով նորա. և կապարն եղև երբև զջուր ցուրտ, և ոչ ջնասեաց նմա։ Դատաւորն ասէ. Կախարդութեամբ քո յաղթես ամենայնի. մի դուցէ և զմեզ հաւանեցուցանես լինել քրիստոնեայ կախարդութեամբ քո։ Եւ հրամայեաց կոչել զՈւրբիկոս կախարդ. նա այնպէս ջոկել մարտեաւ ընդ նմա. և երբև ամենայնի յաղթեաց՝ հրամայեաց դատաւորն կոչել զԹոմիլիան վնասակարս և զՔարտիկուր. և երբև եկին, ասէ դատաւորն. Ջինչ առնեմք քրիստոնէիս այսմիկ, զի պարծելոց է թէ յաղթեաց մեզ. և արդ արկէք զդա ուր չար գազանքն են։ Եւ ասեն ցնա. Անուրք են զի կան գազանքն և ոչ ինչ են Հաշակեալ։ Դատաւորն ասէ. Մի խնայիցէք՝ի դա, այլ արկէք զդա՝ի գազանն, զի առատակեացեն զդա գազանքն։

Եւ երբև արկին զնա՝ի դուբն՝ ընդ առեալ գազանքն անկանէին յոտս նորա և լիզուին զոտս նորա և նմա ինչ ոչ ջնասէին։ Եւ էին՝ի դուբն լուժք և քարիք և օձք եղջերաւունք։ Եւ կացեալ Թադղոս՝ի դուբն զերիս տուս և զերիս գիշեր ընդ գազանսն, և անդաւ դար փառաւորէր զՔրիստոս։ Եւ յետ երից աւուրց ասէ դատաւորն ցԹոմիլիան. Մանեցին կախարդքն ընդ Թոմիլին զայն։ Եւ նոքա ասեն. Ըստ հրամանի քումմ ընկեցաք զնա՝ի դուբն, և կացեալ ընդ գազանսն զերիս տուս և զերիս գիշեր, և ամենևին ոչ էն մերձեցեալ՝ի նա. այլ զտիս և զգիշեր պար առեալ օրհնէին և փառաւոր առնէին զանուն Տեառն Քրիստո-

ծոյ իւրոյ։ Եւ զարմացեալ դատաւորն հրամայեաց աճել զնա. և իբրև եմուտ առաջի նորա, սկսաւ դատաւորն ոգոքել զնա և ասէ. Ե՛կ այր բարւոյ, զոհեա աստուածոցն, և խոստովանեա զՅդրիանոս ամենակալ, և արձակեմ զքեզ։ Թաղդէոս ասէ. Եւ յառաջ ասացի քեզ և այժմ ասեմ, եթէ քրիստոնեայ եմ և ոչ ուրանամ զԱստուածն իմ, և ոչ մատչիմ՝ի քարեզէնն անզգայս և՝ի պատկերս դիւաց պղծոց. և վասն Աբգարայ նոսին մարդոյ ամբարշտի՝ զի բանադատեաս զնս, զի ոչ խոստովանիմ ես զնա, այլ դիտեմ եթէ անօրէնն և ամբարիշտ է և անուրբ և ժանտագործ։ Թէոդորոս դատաւորն ասէ, եթէ՝ Ոչ ելանես՝ի ձեռաց իմոց մինչև խնդրեցից զվրէժս աստուածոցն, զոր հայհոյեալ և անարգեալ և արհամարհեալ զդատաւորութիւնս մեր։ Եւ հրամայեաց ջեռուցանել հնոց, և առաւել ջեռուցին։ Եկն Պաւդիանոս ումն՝ի դրանէն և ասէ դատաւորն. Ահա եղև իբրև զձառագայթս՝ի սաստկութենէ այրմանն։ Եւ հրամայեաց դատաւորն արկանել զԹաղդէոս հանդերձ ընկերօքն՝ որք անուանէին քրիստոնեայքն, որոց անուանքն էին այսոքիկ. Նարկիսոս, Թէոտոս, և Աֆաստասիա, Փիլադոս, Մաքարիա, Թէոդոլէ, և Աֆաստասիա։ Եւ որպէս հր...[1]

. . . . . .

...ագրեալ զինքն խաչին Քրիստոսի և շարժեաց զինքն՝ի վեր վազելով, խլեաց զամենայն զկապանսն և զբևեռսն, և եկաց՝ի մէջ խոստովանելով և ասելով. Օրհնեալ է Աստուած որ յարոյցն զիս՝ի մեռելոց և յամօթ արար զկուռսն զպաշտօնեայսն։ Յայնժամ հրամայեաց դատաւորն արձակել՝ի վերայ նորա գազան. Եւ մատուցեալ մատակ առիւծ մի անկաւ առոտս նորա։ Դարձեալ արձակեցին զինձ, և անկաւ առաջի նորա. Եւ գազանքն ձայնիւ ձեւացուցանէին գովեստիւն սրբոյն։ Եւ տուրբ վկայն ասէ մեծաձայն. Երանի՛ որ հաւատան՝ի Քրիստոս. երանելիք են որ առանց երկմտութեան մատչին՝ի խոստովանութիւնն նորա, զի նոքա ժառանգեսցեն զպարգեւս։ Երանելիք են

1. Աստ թերի ինչ օրինակն, մանր պատմութեան նորին սրբոյ՝ բայց կայ և հետևեալ վերջին այլ շարադրութեամբ։

որ մատնեն զանձինս իւրեանց վասն Աստուծոյ, զի նոքա յաղթեն սատանայի: Զայս իբրև լուաւ պատա-
ւոլն, զարմացաւ և ասէ, թէ՝ Ջիարդ զվայրենի գազան-
սըն կախարդեաց յիշելով զանուն Յիսուսի: Հրա-
մայեաց պատաւոլն և ասէ. Բեւեռեցէք զդա յորմ
պարսպին. եւ հրամայեաց ամենայն բազմութեանն
քարիւծ առնել զնա: Եւ՛ի քարիւծելն՝ սուրբն աղա-
ղակէր և ասէր. Աստուած ամենակալ Հայր Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի, դարձիւ լինիցին զսպառնա-
լիս դիմադարձին, զի ծանիցեն թէ դու ես Աստուած
և ոչ այլ ոք բայց՝ի քէն. և ես անարժան ծառայս քո
խոստովան եղէց քեզ: Եւ զայս նորա աղօթելով
քարինքն յետս դառնային, և յամբարշտացն բազումք
սատակէին. և սուրբն ոչ վիրաւորէր, քանզի էր ծած-
կեալ շնորհօքն Քրիստոսի: Եւ պատաւոլն հրամա-
յեաց իմոյ զօգնականութիւն: Եւ մատուցին զկուռ-
քըն մինչդեռ եւայր, հեղին զվրայ նորա և եղև
իբրև զջուր ցուրտ, և ոչ յաղթէր նմա: Պատաւոլն
ասէ. Մեծ կախարդութեամբ քով յաղթես ամենե-
ցուն. և երկնչիմ մի գուցէ և զմեզ կախարդեալ հա-
նանեցուսցես: Եւ կոչեալ զՈւրբիկոս կախարդ, և
նովաւ պէսպէս փաթիլօք մարտեաւ ընդ նմա: Եւ
իբրև ամենայնի յաղթեաց, ասէ պատաւոլն. Կոչեցէք
ինձ զԹովլիչան, զԼուդիոս և զԲարտիկար, և եկին ա-
ռաջի: Պատաւոլն ասէ. Մեծ կախարդութեամբդ քո
կարծես ապրել. Եւ ասէ ցԼուդիոս. Առէք զդա և ար-

կէք՝ ի գուբ չար իժիցն՝ զի սատակեսցի։ Իբրև արկին զնա՝ ի գուբն, զոր տեսին գազանք լեզուին զտաս նոցա և նման ոչ ճնասէին։ Եւ էին՝ ի գբին իժք և քարբք և օձք եղջիւրաւորք։ Եւ կացեալ սուրբն՝ ի գբին զերիս տիւս և զերիս գիշերս, և փառաւորէր զՅաւուած։ Եւ կոչեալ զԹովլիչան Հարցանէր ցնոսա, եթէ մաշե՞ցին գազանքն զհախարդն զայն։ Եւ ասեն Թովլիչքն. Ո՛չ զուբ գազանացն զերիս տիւս և զերիս գիշեր, և ոչ ինչ ճնասեցին նմա, այլ անդադար օրհնէր զՅաւուածն իւր։

Եւ զարմացեալ դատաւորն, Հրամայեաց ածել զնա. և՝ ի մտանելնորա սկսաւ դատաւորն՝ ի պատրել զնա, և ասէ. Ե՛կ այսր այր բարի, զոհեա աստուածոցն, խոստովանեաւ զՅդրիանոս աներևակալ, և արձակեմ զքեզ։ Թադէոս ասէ. Եւ յառաջագոյն ասացի քեզ և այժմ դարձեալ ասեմ, ես քրիստոնեայ եմ և ոչ ուրանամ զՅաւուածն իմ, և ոչ մատչիմ՝ ի քարեղէնս անզգայս և դևս պիղծս. և վասն Յդրիանոսի մարդոյ ամբարշտի ոչ զի՛ բռնադատես զիս. զի ոչ խոստովանիմ զնա ես, այլ զոր դիտեմն ասեմ, եթէ անօրէն և ամբարիշտ և անաւրէն և ժանդ է։ Դատաւորն ասէ. Երդուեալ յաստուածն՝ ոչ պրծանիս՝ ի ձեռաց իմոց, հայհոյեսցես զաստուածն և անարգեսցես զինքնակալն և արհամարհեսցես զդատաւորութիւնս մեր։ Հրամայեաց ջեռուցանել հնոց. եկեն ոմն՝ ի դրանէն և ասէ ցդատաւորն. Ա՛յնպէս եղիցի հնոցն որպէս Ճաւուզայթ՝ ի սպասաւորեանն հրոյն։ Դատաւորն ասէ. Ա՛ռէք զդա, և ընկեցէք՝ ի հնոցն հանդերձ եօթն ևս ընկերօք դորա ամբարիշտ քրիստոնէիւք, որոց անուանք են այսոքիկ. Մակարիոս, Թեոտոս, Աւտէնոս, Փիլիդոս, Մակաբիա, Թէոդուղէ, և Աիասիա։ Եւ առեալ զահիճքն զԹադէոս և զընկերս նորա՝ որ բազում չարչարանս կրեալ էին վասն անուանն Տեառն, և ընկեցին՝ ի հնոցն. և զոլէին և փառաւորէին զՅաւուած, որ արժանի արար զնոսա կատարեալս հասանել երկնաւոր պսակին. և պատեալ զմիմեանսք այր ընդ առն և կին ընդ կնոջ, աղաղակէին և ասէին. Որ երից մանկանցն՝ ի հնոցին հուլանի եղեր, պահեա զմեզ անա-

բան ինալ՝ի հուրս յայս, և ընկալ զհոգիս մեր, որ սուրբք և Հշմարիտք ես. և դասեա ընդ սուրբս քո՝ի խորանատ լուսոյ, զի անդադար փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգիդ, այժմ և յաւիտեանս. ա մէն: Եւ ասացեալ զամէնեան՝ հասուցէն զհոգիան՝ի ձեռն Տեառն: Եւ յանկարծակի եղև որոտումն և փայլատակմունք և անձրևք սաստիկ և հինգից զհուրն: Եւ դասուարքն լքեալ յերկիւղէն, աղաղակեայ ասէին. Վայ ինձ մեղաւորիս զի զԱստուած դառնացուցի և զսուրբս նորա կոտորեցի: Եւ՝ի սակաւ աւուրս բարձաւ՝ի կենացս. և բազումք հաւատացին՝ի Տէր:

Եւ Տանեբոս ծառայ սրբոյն Թադեզայ, առի զմարմին սրբոցն, և եդի զնոսա՝ի գերեզմանի՝ի գլուխ առաքելին, մերձ՝ի տաճարն Աղբիանոսի: Որում Հաւնատազ փառաւորի Աստուած՝ի Հինութիւնս սրբոց վկայիցն, և ընտրէ զբժշկութիւն Հոգւոց և մարմնոց, կատարողաց զինշատակս սրբոցն, որք Հշմարտութեամբ փառաւորեն զերեքեանձնեան տէրութիւն և զմի աստուածութիւնն, այժմ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գործոց Պաւղոսի ՚ի Կղզին Կիպրոսի։

Իբրև եղեալ երթայր Պաւղոս Ասիանոս քաղաք յետ հալածանացն իւրոց, և յուղի անկեալ ընդ նմա Դեմաս և Հերմոգենէս պղնձագործք և դարբինք՝ որ էր էին խռովութեամբք, մեծաբանէին և խօսէին ընդ Պաւղոսի իբրև ընդ սիրելւոյ իւրեանց, և Պաւղոս հայցէր ՚ի ընտրս ողորմութեանն Քրիստոսի. և կեղծիք ինչ ոչ գնայր ընդ նոսա, այլ սիրէր զնոսա հաստատակայ[1]։ Եւ այնպէս սիրէր՝ որպէս զի զամենաւեսանն զվարդապետութիւնն և զթարգմանութիւն և զծնունդն և զյարութիւնն, որպէս սիրելոյ պատմէր նոցա, և հանդուցանէր զանձինս նոցա մեծութեամբն Քրիստոսի, և ցուցանէր բանիւք թէ ոչ պակաս յայտնեցաւ նմա։ Իսկ այր մի երանելի անուն Ննեսիփորա՝ լուաւ թէ Պաւղոս գայ Ասիանոս քաղաք, եւ ընդ առաջ նորա, ընտանեօք և Ձէնոնեաւ կնաւ[2] իւրով հանդերձ՝ եկին ընդ առաջ Պաւղոսի ընդունել զնա. քանզի պատմեալ էր նոցա Տիտոսի, և տեսեալ զնշանս զոր ինչ առնէր Պաւղոս, զի ոչ հանապազ էր նա զՊաւղոս մարմնով, բայց հոգւով միայն։ Զոր աւ եկաց նա ՚ի Հնաւանդհակից պողոտային որ երթայր ՚ի Լիւստրա

1. Մի օր. առ հաստատ... այնպէս զի և ընդ հրամանի վարդապետին Տէառն։

Միւս օր. հաստատ... զի ընդ հրամանին Տէառն։

2. Մի օր. Ձէնոնէ և կնաւ իւրով։ Իսկ Ձոյնն ասէ. Լէկտրէաւ էր նաև և որդւովքն Սիմֆոռ և Ձէնոնէ։

տրեա քաղաք, կայր և սպասէր նմա. և ընդ այնոսիկ որ երթ այինն և գային՝ հայէր ըստ նշանացն զոր տըւեալ էր նմա Տիտոս: Իբրև եառնս զՊաւղոս զի գայր, այր ջոկ հասակաւ [1], հեռապանգուր, գուգք թե- լապոյնք, կարճ գէլ, ծաւի, մեծակն, յօնակից, ունչք երկայնապոյնք, և լի էր ընարհօք Տեառն և ողոր- մութեամբ. երբեմն երևեր իբրև զմարդ, և երբեմն ՚ի տեսիլ հրեշտակի: Իբրև եառնս Պաւղոս զՈնեսի- փորոս, ուրախ եղև յոյժ: Այն ցնա Ոնեսիփորոս. Ող ջոյն ընդ քեզ, Պաւղոս, առաքեալ օրհնելոյն: Այն ցնա Պաւղոս. Ողջոյն ընդ քեզ և ընդ ամենայն ըն- տանեակս քո, Ոնեսիփորոս: Իսկ Դեմաս և Հերմոգե- նէս լի եղեն ցասմամբ, և բազում քինու երդիծա- նէին և ասէին ցՊաւղոս. Մեք ոչ կաք օրհնելոյն՝ զի այդպիսի ողջոյն ոչ երբեք եառուր մեզ: Ետ պատաս- խանի Պաւղոս և ասէ ցնոսա. Քանզի ոչ տեսանեմ ՚ի ձեզ պտուղ արդարութեան: Այն ցնոսա Ոնեսիփորոս, եթէ՝ Ինասցէք ինձ [2], եկայք ՚ի տուն իմ զուք ևս, և հանգերուք: Եւ իբրև եմուտ Պաւղոս ՚ի տուն Ոնեսի- փորայ՝ և եղև անդ ուրախութիւն մեծ, ծունր ե- դեալ կացին յաղօթս, և յարեան հատին զՀացն:

Ատեաւ Պաւղոս և սկսաւ խօսել զբանն Տեառն վասն Հնամարտութեան ոգւոց և յարութեան մեռելոց, և ասէ այսպէս. Երանի որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն. Երանի որ պահեն զանձինս իւ- րեանց սրբութեամբ զի նոքա կոչեսցին տաճար Աս- տուծոյ: Երանի որ ձնշեն զմարմինս և զանձինս իւ- րեանց, զի ընդ նոսա խօսի Աստուած: Երանի որք ար- համարհեսցեն զաշխարհս, զի նոքա հաճոյ լինիցին Աստուծոյ: Երանի այնոցիկ որ ունիցին կանայս այն- պէս՝ թէ որպէս չունիցին, զի նոքա ժառանգեսցեն զերկինս: Երանի որ ունիցին զերկիւղն Աստուծոյ ՚ի սիրտս իւրեանց, զի նոքա հրեշտակք կոչեսցին: Երա- նի որ զողան ՚ի բանիցն Աստուծոյ զոր լսեն, զի գնոսա

1. Մի օր. լաֆաւոր հասակաւ: Երկ. օր. հէր գանգուր, գուգք ին- քեան, կարճ գէլ: Իսկ Յայնն ուշի- ուշ հասակաւ, ճաղատ գլխով, կոր- պոտնգ, բարձագէլ կամ կորաքիթ, յօնակից, աչքաուռնգն: Վասն որոյ գուգք Թուխ ուղղելի գուռնք:

2. Մի օր. երթ էջ ինչ՝ եկայք: Միւս օր. երթ էջք ինչ՝ եկայք:

կոչեսցէ Տէր։ Երանի որք ընկալան զիմաստութիւն Ճիսուսի Քրիստոսի, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։ Երանի որք պահեսցեն զվկրտութիւնն, զի նոքա հանգիցեն առ Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն։ Երանի որ առնուցուն զօրինակն Քրիստոսի, զի նոքա եղիցին ՚ի լոյս մեծ։ Երանի որք վասն սիրոյն Քրիստոսի ելանիցեն ՚ի մարմնոյ՝ զի նոքա ժառանգեսցեն զկեանսն յաւիտենական, և կայցեն միանձնաւորք ընդ աջմէ Որդւոյն Աստուծոյ։ Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն առ ՚ի Հօրէ, և յաւուրն դատաստանի ընկալցին զարքայութիւնն։ Երանի հոգւով և մարմնով կուսանաց, զի նոքա հաճոյ լիցին Աստուծոյ, և ոչ կորիցեն վարձք նոցա սրբութեանն, զի քանից Հօր գործ գտցի ՚ի նոսա, և ժառանգել զկեանս յաւուր Որդւոյն Աստուծոյ, և հանգիստ յաւիտենից եղիցի նոցա։

Եւ մինչ Պաւղոս խօսէր զայս ամենայն զմեծամեծս Աստուծոյ առ տնկին ՚ի մէջ ժողովոյն Ընեսիփորայ, Թեկղ անուն կոյս մի գուստր Թեկղեայ՝[1] զոր խօսեալ էր առն որումեանէն էր Թեմերոս, եկեալ նստէր առ պատուհանի միոջ որ մերձ էր ՚ի տանիս նոցա, լսէր զբանն Պաւղոսի զոր խօսէրն վասն սրբութեան. և ահ մեծ եհար ՚ի սիրտ նորա. մանաւանդ զի տեսանէր բազում կանայս զի մտանէին առ Պաւղոս, լսել զպատգամս պատուիրանացն Աստուծոյ՝ զոր ուսուցանէր։ Եւ ինքն կայր նմա, զի գտեսիլ նորա ոչ տեսանէր, բայց միայն զբանն լսէր, և բնաւ առնևին ոչ մերձենար ՚ի պատուհանն անտի։ Յայնժամ առաքեաց մայրն առ Թեմերոս որում խօսէր զնա կին։ Իբրև լուաւ Թեմերոս եթէ կոչէ զնա զբանեղն իւր՝ եկն վաղվաղակի, և այնպէս համարեցաւ թէ տացէ նմա զԹեկղ առնուլ կնութեան։ Պատասխանի եւս Թեմերոս և ասէ ցքանչն իւր. Ո՞ւր է Թեկղ կին իմ[2], զի տեսից զնա։ Պատասխանի եւս Թեմերոսի զբանչն և ասէ. Գործ

1. Ի բնագրին անուանքն են՝ Թէոկլէա և Թամիւրոս։

2. Բնագրին՝ Ո՞ւր էմ էր Թէկլա։

մի ունիմ պատմել քեզ, Թեմերտա. Թեկղ՝ զոր խոսեալ էր քեզ, ահա այս երեք տուք են և երեք գիշեր որ ոչ մեկնի՝ի պատուհանէ միջէ, ոչ ուտէ և ոչ ըմպէ և ոչ յառնէ անտի. այլ զայս՝ի վերայ եդեալ պշուցեալ հայի ընդ այր մի օտար, և իբրև՝ի քաղցր և՝ի պատիր բանս և՝ի մեռտիս և յանհաման խոսելոյ հայի. և ես ընդ այս զարմացեալ եմ, եթէ գիտայ կոյս մի խնամուն այնպէս գՀետ երթայ չարաչար և պատիր բանից. ասեմ քեզ, Թեմերտա, զի գքաղաքս Ակռնացւոց ապականեաց այրն այն, և գԹեկղ՝ զոր խոսեալ էր քեզ՝ պատրէ. բազում և այլ կանայք և երիտասարդք մոխն առնու: Եւ ուստեքան պաշտել զմի Աստուած և կեալ սրբութեամբ[1]: Եւ Թեկղ պատի գնովաւ իբրև ասաղ զոստայնիւ[2], և ընկղմեցաւ խիճ՝ի ցանկութեան և՝ի չարաշրուկ գործս ապականութեան. և ոչ առնու զաչս՝ի վեր՝ի պատուհանէն, և ոչ երբեք մեկնի՝ի նմանէ, ոչ ուտէ և ոչ ըմպէ, և ընկղմեցաւ կոյան. արդ մատիր զու Թեմերտա և խոսեա ընդ նմա, զի քեզ խոսեալ է գնա՝ի կնութեան:

Եւ մատեաւ առնա Թեմերտա որում խոսեալ էր գնա՝ի կնութեան, և մի՝ զի սիրէր գԹեկղ, երկրորդ անգամ՝ զանպիտէր՝ի մեծաշուք ցանկութենէ նորա: Պատասխանի եւս և ասէ ցնա. Ախաքէն լինձ խոսեալ է գքեզ, գինչ է այդ գործդ զոր գործես զու, և գինչ է այդ չար ապականութիւնդ որ գքեզ ունի. զարձ առ խա և ամաչեա լինէն: Եւ մայրն ևս խոսէր. Ցի՛ՙ՝ի խոնարհ նայիս և ոչ կամիս տալ պատասխանի, այլ և նամանեալ ես մոլեգնոտւոյ[3]: Իբրև տեսին գնա ընտանիքն՝ սկսան լալ ամենեքեան, և Թեմերտա լայր Թէ մեկնի՝ի նամանէ կինն իւր, և մայրն Թէ մեկնի՝ի նմանէ դուստր նորա, և աղախնեայքն Թէ մեկնին՝ի տիկնոջէն իւրեանց. և բազում արտմութիւնք և վիշտք եղեն՝ի տան: Իսկ Թեկղն ոչինչ էր փոյթ ևման այնր ամենայնի, այլ խոնարհեցուցանէր զունկն իւր՝ի լսել զբանսն Պաւղոսի:

1. Մի օր. բնակել սրբութեամբ:
2. Երկ. օր. զոստինեաս. Իսկ բնագիրն՝ իբրև սոսկի ոսկան ձեռ-
փոհանի կամ ձերմամբ:
3. Երկ. օր. մոլեգնոտի:

Յայնժամ Թեմերտա լի եղև ցասմամբ. ընդ ացեալ ՚ի հրապարակն հայէը ընդ մարդիկն որ մոտանէին և ելանէին առ Պաւղոս. և յանկարծակի ետես արս երկուս որ կապէին ընդ միմեանս. յայնժամ ՚ի վերայ հասանէը[1] Թեմերտա, և ասէ ցնոսա. Չի դուք, զի ընդ ձեզ, կամ զինչ բանք բանից էք ես վասն որոյ դուքդ կապէք զիս, կամ ոչ ինչ այլդ որ ՚ի ներքս առ ձեզդ էք՝ որ պատրէ զանձինս երիտասարդաց և կուսանաց, և պատուէր տայ զի ըննասցեն մի լինիցին հարսանիք. կամ է ինձ տալ ձեզ արծաթ յոյժ, զի ասէք ինձ ոչ ինչ ուստեք էք այլն, զի գլխաւոր եմք քաղաքիս: Իսկ Պեմաս և Հերմոգենէս իբրև տեսին զնա՝ եկին առ նա և ասեն. Այրն այն զոր ասես դու՝ ոչ գիտեմք ոչ ինչ ուստեք էք նա. քայց զայս գիտեմք զի մեկնէ զերիտասարդս ՚ի կուսանաց և զկոյս յերիտասարդաց, և ասէ, եթէ ոչ կարէք դուք յառնել ՚ի մեռելոց՝ եթէ ոչ պահեսջիք զանձինս ձեր սրբութեամբ: Պատասխանի ետ Թեմերտա և ասէ ցնոսա. Եկայք ընկերք ՚ի տուն իմ ընդ իս, և հանդերուք առ իս: Եւ գնացին ընդ նմա յընթերին՝ բարւոք, և հաց մեծ գործեաց և խորտիկս յօրինեալ ետ նոցա ընթերին մեծ Թեմերտա. քանզի սիրէր զԹեկղ Թեմերտա և կամէր առնուլ ՚ի կնութեան յաւուր յորում ժամ տուեալ ժամասուս եղև նմա զոքանչն իւր: Եւ ասէ ցնոսա Թեմերտա մինչդեռ ՚ի բազմականին էին. Այսա՛ գէք ինձ, ընկերք իմ և սիրելիք, զինչ է ուսուցին զոր ուսուցանէ այրն այն՝ զի և ես գիտացից. քանզի ոչ եթէ սակաւք են որ ամբաստանեն զնմանէ, և ինձ յոյժ ցաւ է վասն հինոջ նորա, զի սիրեաց զայր տարտաշխարհիկ և օտարական, և ահա մեկնիմ[2] ՚ի նմանէ: Պատասխանի ետուն Պեմաս և Հերմոգենէս և ասեն ցնա. Դու Թեմերտա, երթ ցոյց զնմանէ գաւառին և ասացես այսպէս, եթէ՝ Այրն այն ուսուցին նոր և օտարոտի ուսուցանէ յանուն Քրիստոսի, և անդէն իբրև լսէ՝ կոչուցանէ զնա. և դու ասացես զկին քո, և մեք

1. Մի օր. յայնվայր հասանէր:
Միւս օր. յայնվայր հասանէր... նմանէ:
ջինջ բառի էջեն:

2. Մի օր. Ե ահա ոչ գիտի ՚ի

ուսուցանեմք քեզ զյարուԹիւն մեռելոց զոր նայն ուսուցանէ։ Իբրև զայս լուաւ Թեմեւոս, զի լի էր նախանձու և քինու, կանխէր ընդ առաւօտն և երԹայր ՚ի տուն Ընեախիտրայ՝ ինքն ծերովքն հանդերձ, քառասուն և այլ վինու վառեալ ջրջոք [1] ընդ նմա։ Պատասխանի եւս և ասէ ցՊաւղոս. կորուաեր զքաղաքս ինքնացուց, և զԹեկղ որ ինձ խօսեալ [2] էր՝ պատրեցեր ուսանելք քո, զի ովի լինի ինձ կնուԹեան. արդ եկ երԹիցուք առ դատաւորն։ Եւ քաղաքն ամենայն ասեն. Գարշեցէք զմոգ, զի եղծեալ ապականեաց զկանայս մեր օտարոտի ուսմամբք. յանձն առին ամենայն զօրքն։ Իբրև չոգաւ Պաւղոս ընդ այնոսիկ որ ունէինն զնա, և եկաց առաջի դատաւորին, ձայն եբարձ Թեմեւոս և ասէ ցդատաւորն. Այրս այս ոչ գիտեմք ով ուսեալ էցէ սա. և ոչ տայ Թոյլ կուսից լինել արանց իւրեանց, արդ աստուածէ առաջի քո վասն էր երիք ուսուցանէ զայս ուսումն։ Իսկ Դեմաս և Հերմոգենէս գարՀինք՝ որ խռովեԹեամբ լի էին, մատեան առնեն և ասեն. Այս ԹէԷ քրիստոնեայ է, և ահա անդէն կորուսանէ զդա։ Իբրև լուաւ դատաւորն զբանսն Թեմեւոսի և զամենայն մարդկանն որ ունէին զՊաւղոս, ասէ ցնա. Այս ինձ Պաւղոս, ո՞ ուսեալ էցես դու և վինչ ուսուցանես. քանզի չեն սակաւ չարախօսքն որ ամբաստանեն զքեզն։

Յայնժամ եբարձ Պաւղոս զձայն իւր և ասէ. Ես պատմեցից վինչ ուսուցանեմն, լուր դատաւոր. Ուսուցանեմ զմի Աստուած որ ոչ հաստուցանէ չար փոխանակ չարեաց մարդկան։ Աստուած՝ որում ոչինչ է պիտոյ, քայց միայն կեանք որդւոց մարդկան, առաքեաց զնա՝ զի ՚ի կորստենէ և ՚ի պղծուԹենէ սրբեցից զնոսա և յամենայն ցանկուԹեանց մահու, զի այլ ևս ևս մեղիցեն. վասն այնորիկ առաքեաց զնա Աստուած զի զոր եան քարոզեմ և աւետարանեմ, զի առնեա եղիցի յոյս ամենայն մարդկան. որում փոյԹ եղև փրկել զժողովուրդ իւր ՚ի մեղուԹենէ, զի այլ ևս մեղիցեն և

1. Մի օր. բազում և այլ մարդ- համբ բերաւորաց։

Մեւս օր. բազում այլ մարդիօք

2. Մի օր. ինձանացոյց... զոր ինչ խօսեցեալ... էի ան առ պատասխան։

մի գնասցեն զեղխութեամբ, այլ եղիցի ի նոսա ահ և երկիւղ ի ձեռն հաւատոցն Աստուծոյ, զի ծանիցեն զսէր և զերկիւղ Հմայրտութեանն[1]. արդ զոր Աստուած յայտնեաց ինձ՝ զայն ուսուցանեմ, զինչ պարտական եմ գոլա:

Իբրև լսէր զբանս զայս դատաւորն, հրամանն ետ զի նովին կապանօք ի բանտն իցէ, մինչեւ եղիցի տեղի լսել նմա բարւոք: Եւ Թեկղ ի նմին գիշերի աւուր զարթեալ պարանջանն իւր և տարաւ ետ դռնապանին տան իւրոյ. և եբաց նմա զդուռնն, և ելեալ գնաց առ բանտապետն որ պահէր զՊաւղոս, և ետես նմա հայելի ոսկի[2] զի մոյկ առ Պաւղոս. և աւր ի նմանէ զհայելին և եմոյծ զինա. չոգաւ նստաւ առ ոտն Պաւղոսի և լսէր զվեծամեծան Աստուծոյ: Եւ Պաւղոս ոչինչ տրտում ևս էր, այլ համարձակ և յայտնի զաւետեաւն որ էին առնա՝ ուրախ առնէր պատուիրանաւն Աստուծոյ. և Թեկղ մեծաւ ուրախութեամբ համբուրէր զոտս նորա և զկապանս ոտից և ձեռացն Պաւղոսի:

Եւ իբրև խնդրեցին ընտանիքն զԹեկղ և ոչ գտին՝ համարեցան թէ կորեաւ, մատեան խնդրելին զինա յանցս Հանապարհացն: Եւ ևին ընկեր մի դռնապանին, գուշակեաց զնմանէ և ասէ. Ես տեսի զԹեկղ զի ետ զսպարանջան իւր դռնապանին և ել: Եւ իբրև տանջեցին զդռնապանն, հարկաւ խոստովանեաց[3] և ասէ. Այո՛, ել և այսպէս ասաց, եթէ երթամ առ այրն օտարական որ կապեալն է ի բանտի: Եւ չոգան գտին զինա որպէս ասաց նոցա դռնապանն. և երթեալ գտին զնա նստեր առ ոտն Պաւղոսի, և տեսին այլ ևս բազում մարդիկ որ լսէին զվեծամեծս Քրիստոսի: Եւ ելեալ անտի Թեմերոս և բազում մարդիկ որ ընդ նմա չոգան լի ցասմամբ, և պատմեցին դատաւորին զոր ինչ եղեն:

Յայնժամ հրամայեաց դատաւորն ածել զՊաւղոս. և ընթացան պատանիքն լուծին զՊաւղոս և քարշէին, ածին զնա ի բանտէ անտի. և Թեկղ անկանէր ի գետինն և լայր դառնապէս ի տեղւոջն ուր նստաւէր Պաւ-

1. Մի օր. ճշմարտութեամբ:
2. Ցայնն՝ հայելի ոչխարի:
3. Երկ. օր. խոստովանեցաւ:

զոս կապեալ և ուսուցանէր զպատուիրանն Աստուծոյ։ Դարձեալ դատաւորն Հրամայեաց աճել զԹեկղ. և ընթացաւ Թեմերոս և բազում մարդիկ ընդ նմա կային զԹեկղ և քարշէին զնա։ Իբրև եւս դատաւորն՝ տրամեցաւ վասն նորա յոյժ. և Թեկղ մեծաւ ուրախութեամբ կայր առաջի նորա և ոչինչ էր տրտում։ Յայնժամ յանկարծակի աղաղակեցին ամենայն զօրքն և ասեն. Կորուաք զմոգդ զայդ։ Բայց դատաւորն ոչինչ ասաց ցՊաւղոս [1]. և ապա նստաւ դատաւորն յաթոռ և կոչեաց զԹեկղ. և ասէ ցնա դատաւորն. Ընդէր ոչ լինիս առն քոյ՝ ըստ օրինաց Իկոնացւոց։ Եւ Թեկղ անցեալ կայր այնպէս, և պշուցեալ Հայէր՛ի Պաւղոս, և քնաւ ամենևին պատասխանի ոչինչ տայր դատաւորին։ Ձ՛ինչ եբարձ մայր նորա մեծաւ աղաղակաւ և ասէ. Կորուաք զանմիտն՛ի մէջ թէատրոնիդ, զի ամենայն կանայք ընդ դա Հայհոյել մի՛ և ուացին զայդ ուսումն չար։ Իբրև լուաւ դատաւորն՝ տրտմեցաւ յոյժ վասն նորա. ապա Հրամայեաց տայր զանն Հարկանել զՊաւղոս, և Հանել արտաքոյ քան զքաղաքն. և տայր վՀու զի այրեացեն զԹեկղ Հրով՛ի մէջ թէատրոնին։ Յաւուրն երրորդ՛ի թէատրոնն և ամենայն զօրքն ընդ նմա, տեսանել զԹեկղ մինչ այրեացի՛ի Հուրն։ Եւ որպէս ոչխար մի մտաբեալ՛ի լերինս որ խնդրեսցէ զՀովիւն, այնպէս և Թեկղ խնդրէր զՊաւղոս։ Եւ մինչդեռ Հայէր՛ի մարդիկն ամենայն՝ եառեալ զՏէր Յիսուս զի նստէր դէմ յանդիման նորա՛ի նամատուիճն Պաւղոսի. պատասխանի եաւ Թեկղ և ասէ. Երկն Պաւղոս և նստաւ դէմ յանդիման իմ, որպէս զի ոչ կարեմ ժուժկալել[2] տեսանելոյ զնա որ երևեցաւն ինձ։ Եւ մինչդեռ զայս եղեալ պշուցեալ էր ընդ նա՝ յարեաւ Տէր անտի և եւ յերկինս։

Եւ բերին մանկտին և կանայքն փայտ և եղին՛ի թէատրոնին այրել զԹեկղ. և մուծանէին զնա մերկ՛ի թէատրոնն։ Իբրև զայն տեսանէր դատաւորն՝ զգ-

1. Մի օր. ընդ Պաւղոս։ ծէծ։
Միւս օր. ընդ Պաւղոսի։ Միւս օր. որպէս զի ոչ անէծ
2. Մի օր. որպէս զի խորհէի ծռա- ծոյծ։

ել առնոյր և զկաման բառնայր, և զարմանայր ընդ զօրութիւնն որ՝ի նմա։ Ժողովէին զինայան որ՝ի նմա և լուցանէին, և բուռն հարկանէին զնմանէ երիտասարդքն՝ զի ելցէ կացցէ՝ի վերայ հրոյն բոլբոքելոյ. և Թեկղ առ ժամայն ելանէր կայր՝ի վերայ հրոյն։ Իբրև ելանէր զինայն դիզանէր զոյց հրոյն բոլբոքելոյ, և մազ մի՝ի հերաց նորա ոչ կիզէր, զի գԹացաւ՝ի վերայ նո-
ցա հոգին Աստուծոյ, և ձայն գոչման յերկինէ ելանէր, և առնոյր ցօղագին լինէր՝[1] ի վերայ նորա, և կարկուտ և և անձրև աստիկ յերկիր հեղոյր. և բազումք՝ի մարդկանէն որ լսէին և հայէին՝ աստակէին. և հուրն շինչաւ և Թեկղ ապրեցաւ։ Եւ Պաւղոս՝ի պահս էր, ինքն և Ընեսիփորոս, և կին նորա և որդիք՝ի տան միոջ երիտասարդի, որոյ բացեալ դուռնն՝ հայի ընդ կողմ Հանապարհի ինն քաղաքի։ Իբրև լինէին առ-
ուբս բազում անդ՝ի պահս, առեն մանկտին զՊաւ-
ղոս. Բացեալ եմք. և ոչ գոյր նոցա Թերևս ինչ Թէ տացեն գնոյ, քանզի եԹող Ընեսիփորոս զտուն և զկեանս իւր, և ել ընդ Պաւղոսի ընտանեօք իւրովք հանդերձ։ Յայնժամ եհան Պաւղոս զպարեգօտն իւր և ետ ցպատանին և ասէ. ԵրԹ, որդեակ, և գնեա հայ որչափ և գտանի. գնաց պատանեաւն գնել հայ. և եռես անդ զԹեկղ դրացի իւր[2], զարմացաւ և ասէ. Թեկղ, յո՞ երԹաս։ Ասէ ցնա. Պաւղոսի գՀեռ եր-
Թամ, զի ապրեցայ՝ի հրոյ անտի։ Եւ պատանեաւն ասէ. Եկ տանիմ զքեզ առ նա, քանզի յոգւոց Հանէ, հե-
ծէ և լայ, և այս վեց օր է զի պահէ և խնդրէ յԱս-
տուծոյ վասն քո։ Եկն ընդ նմա Թեկղ՝ի տուն պա-
տանւոյն և եկաց առ Պաւղոսի, և եգիտ անդ՝ի ծունկս զնա զի կայր յաղօԹս, աղաչէր և ասէր. Հայր մեր որ յերկինսդ ես, խնդրեմ՝ի քէն մի մերձեցի հուրն՝ի Թեկղ, այլ շինջ գնա՝ի նմանէ, զի քո է։ Եւ Թեկղ կայր յետոյ նորա. եբաց զբերան իւր և ասէ. Հայր՝ որ արարեր զերկինս և զերկիրս, և դու ես հայր ոչխոց, գոհանամ զքէն վասն ոչխոց որոց արարեր ընդ իս ողորմու-
Թիւն, և կեցուցեր զնոսա՝ի սեպոյ զՊաւղոս։ Յարեաւ

1. Մի օր. ամպ ցօղագին հովանի էինէր։ 2. Մի օր. ՚ի տղոց ինքեանց։

Պաւղոս և եռես գնաս. պատասխանի եղ և ասէ. Ա-
ռուած սրտապէտ ամենայնի, Հայր Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի, գոհանամ զքէն զի վասն որոյ
խնդրեցեր՝ հասեր՝ի հրոյս, և եղուր ինձ տեսանել զնա,
և սոցա որ ընդ նմա են.՝ի քո ձեռս է փրկել միայն յամե-
նայն վշտաց որ փառաւորեն զանուն քո յաւիտեանս:

Եւ Պաւղոս ցնծալով և ուրախ էր հանդերձ ամենե-
քեամբք որ ընդ նմայն էին: Եւ երբեր նոցա պատանեա-
կըն հինգ նահատակ հաց և խաւարտք և այլ ևս աղ և
ջուր, և ուրախ լինէին՝ի գործս իւրեանց և զօրանա-
յին՝ի շնորհս ողորմութեանն Քրիստոսի: Եւ ասէ
Թեկղէ ցՊաւղոս. Փոքրեցից զհերս իմ և եկից զկնի քո
յն և դու երթիցես: Ասէ Պաւղոս. Պատերազմ սաս-
տիկ է, և դու զեղեցիկ ես, զուցէ և այլ փորձութիւն
գայցէ՝ի վերայ քո այլ ևս մեծ քան զառաջինն, և ոչ
կարես հաւթերել: Ասէ Թեկղէ ցՊաւղոս. Միայն ըզ
դրոշմն Քրիստոսի տուր ինձ, և փորձութիւն առ իս ոչ
մերձենայ: Ասէ Պաւղոս ցԹեկղէ. Երկայնամիտ լեր և
առցես զոր ինչ խնդրեսն: Եւ այնժամ Պաւղոս
զՈնեսիփորոս հանդերձ ընտանեօք իւրով, և գնացին
՝ի տունն իւրեանց. և Պաւղոս կալաւ զձեռանէ Թեկ-
ղի (և մարդիկն որ ընդ նմայն էին[1]), և ջոգան մինչ
Այնտիոք քաղաք: Եւ մինչդեռ մտանէին և երթային,
ահա՝ի գլխաւորաց Այնտիոք քաղաքի Աղեքսանդրոս
անուն, որոյ բազում ինչ գործս գործեալ էր Այն-
տիոք, իբրև եռես զԹեկղէ սիրեաց յոյժ[2], և փա-
ղաքշեր Պաւղոսի և պատրեր զնա տալ նմա արծաթ
և ոսկի յոյժ: Ասէ Պաւղոս. Ոչ գիտեմ զկնի զորմէ
ասես, և իմ չէ ինչ դա: Եւ քանզի բռնէր Աղեք-
սանդրոս, եհաս և բռնեն եհար զԹեկղէ, և գիրկս արկ
՝ի մէջ հրապարակին: Եւ նա ոչ հաւթերեր գործոյն,
այլ աղաղակ եդեալ զՊաւղոս խնդրեր մեծաւ գո-
ժիւ և ասէ. Մի՛ նեղեր[3] զառաքեալ Քրիստոսի, մի՛ տա-
ռապել զազգախինս Աստուծոյ. գուստր եմ ես գլխա-
ւորաց Իկոնիոն[4] քաղաքի, և վասն զի ոչ կամեցայ

1. Զնք՝ի բնագրին բանդ վա-
կազմեալ:
2. Ասա և զինի՝ յոյնն սէրէաց
վիայն ասէ:
3. Մի օր. հնդեր:
4. Մի օր. Իկենացոց փոլսէ:

լինել կին Թեմերտսի առն իմում [1], հանին զիս ի քա-
ղաքէն իմմէ. և անդէն բուռն հարկանէր զԱղեքսան-
դրէ և պատառէր զպատմուճան նորա, և զպսակն զոս-
կի զկայսերական[2] զոր ունէր ի գլուխն՝ հանէր ի
նմանէ և յերկիր ընկենոյր, և զնա մերկ կողոպուտ և
ամօթ ածողոյր։ Եւ քանզի սիրեաց զնա յոյականէ
Ադեքսանդրոս, և դարձեալ զի յամօթ եւս արար զնա
դործովքն զոր գործեաց ընդ նմա, վաղվաղակի իսկոյն
եցոյց դատաւորին, եթէ զայս ինչ և զայս գործեաց
ընդ իս Թեկղ, և ոչ է յուրաստ զոր ինչ գործեաց.
արդ դատեա զնա և հրամայեա զի սրկեն գազանաց.
և էնքն Ադեքսանդրոս էր որ տայր ի տեսիլ քաղաքին
զգազանսն։ Եւ իբրև լուան ամենայն քաղաքացիքն՝
զարմացան, և բոլոք բարձին առաջի առենին և ասեն.
Այնքա՜ւ է գատաստանդ որով գատիք զԹեկղ։ Եւ
Թեկղ եկն եկաց առաջի դատաւորին, երդմնեցոյց
զնա և ասէ, եթէ՝ Զայս ինչ ընուհ արա ընդ իս, զի
մինչ [3] սրկեն զիս գազանացն՝ պահեցայց սրբու-
Թեամբ։ Եւ դատաւորն իբրև զայս բան լսէր՝ ասէ
ցԹեկղ. Երթ պահեա ուր և կամիս։ Եւ էր անդ տի-
կին մի Թագաւորացն մեծաւոն, Տրիփոնիա անուն,
որոյ մեռեալ էր դուստր իւր, և այն զնա առ իւր ի
տուն իւր, և քաջալերէր զի տեսանէր զԹեկղ։

Իբրև[4] մտին գազանքն ի Թէատրոնն, եկին զԹեկղ
տանել ի տանէն Տրիփոնեայ, և տարան ի Թէատրոնն,
և մերկացուցին զնա, և հարին առիւծ կտաւ, և կա-
ցուցին մերկ։ Եւ արձակեցին նմա մատակ առիւծ. և
Տրիփոնիա տիկինն կայր առ դրանն Թէատրոնին, և ի
ձայն աղմուկին գուժէր [5]։ Եկն մատակ առիւծն և
սկսաւ լզուել զԹեկղ. և դատաւորն և ամենայն զօր-
քըն զարմանային ընդ զօրութիւնն զոր ետ նմա Աս-
տուած։ Գրեցին ի տախտակս և ցուցին ամենայն
մարդկանն որ նստէին անդ, եթէ՝ Կարդացէք զԹեկղ
մեհենակապուտ դիցն, զի ընկէց զպսակն կայսերա-

1. Ձիք ի բնագրին՝ առն իմոմ։
2. Բնագիրն միայն՝ պսակ ասէ։
3. Բնագիրն՝ մինչև, այսինքն մինչև ի ժամանակ սրկանելոյ գազանաց։
4. Ոչ սակաւ օտարութեայ նմանուածս ի յոյն բնագրէն։
5. Մի օր. յոյն աղիողորմ խոխոջեալ ողոց ողոց գոչէր։

կան ՚ի գլխոյն Աղեքսանդրի, որ կամէր առնել ընդ[1] նա պղծութիւն: Եւ մարդիկն ամենայն աղաղակէին հանդերձ ամենայն որդւովքն իւրեանց և ասէին. Բողոք առ Այտուած, վասն անօրէնութեան որ լինի ՚ի քաղաքիս: Եւ դարձեալ արձակեցին նմա այլ և այլ պատասխանս. և այնք ոչ մերձեցան ՚ի նա: Յայնժամ էլ նա ՚ի Թէատրոնէն[2] և գաղանքն. և չոգաւ վազվազակի Տրիփոնէ ասիկինն, առ գՕվեկղ, զի դուստր իւր որ մեռեալ էր՝ եկն ՚ի տեսլեանն դիշերոյ և պատմեաց մօրն, ասէ. Մայր իմ, զայս Օվեկղ հալածական տարաշխարհիկ կայ առ քեզ յիմում տեղւոջ, զի արասցէ վասն իմ աղօթս, զի արժանի եղէց անցանել ՚ի տեղի սրբոց և արդարոց: Եւ իբրև ընկալաւ Տրիփոնէ գՕվեկղ և հոգայր վասն նորա, մի՝ զի տրտմեալ էր Թէ տանիցն զնա վաղիւ և նա ընկենուն գաղանաց. և դարձեալ զի արկեալ էր զնովաւ զգուեղ դառերն իւրոյ մեռելոյ. և ասէ ասիկինն. Ահա այս երկիցս անգամ առնի Թախիծ և տրտմութիւն ՚ի տան իմում, արդ աղաչեա և խնդրեա վասն դառերն[3] իմում զի կեցցէ, զի այսպէս տեսի ՚ի տեսլեան իմում: Եւ նոյն ժամայն յարեաւ վաղվաղակի Օվեկղ ՚ի ձայն բարձր բարբառոյ Համբարձ զյայտնի ձայն իւր և ասէ. Աստուած որ յերկինս ես, Հայր բարձրելոյ, տուր Տրիփոնէ փոխանակ սիկնոջ ըստ կամաց իւրոց, զի կեցցէ դուստր նորա յաւիտեանս յաւիտենից: Եւթն ետուն զայս սիկինն՝ նստաւ Թախծեալ ՚ի տուր[4], լայր աղիողորմ և ասէր. Զայդպիսի գեղ քո գեղեցիկ ուստիցե՞ն միւս անգամ գաղանք:

Եւ մինչդեռ այդպէս զառաւօտան մերկացեալ էր, գայր հասանէր Աղեքսանդրոս տանել փուԹով զՕվեկղ, քանզի նա էր որ տայր գաղանս ի քաղաքէն ՚ի Թէատրոնն: Պատասխանի ետու և ասէ. Ահա դառաւտն նստեալ է և ամենայն զօրքն չեպէն, տուր[5] այսր վաղվաղակի զՕվեկղ, զի գաղանակուռ կորուսցուք: Եւ Տրիփոնէ չէեաց ՚ի ձայն գուժի լալոյ. և ՚ի ձայնէ ա-

1. Մի օր. ընդ նմա:
2. Մի օր. յայնժամ էլ ընդ ափրոնն:
3. Փաչխոնիլա կոչի գուռաւրն ՚ի բնագրին:
4. Մի օր. ընդ ծաղի ոգւով լայր:
5. Մի օր. ձեպով գուռ այսր:

զաղակին զոր գուժեաց՝ վախեաւ Աղեքսանդրոս և ասէր զարհուրիլ։ Պատասխանի եւս տիկինն և ասէր. Բողոք առ Աստուած [1]. ահա այս երկիցս անգամ առնի զիս ածից ապ՚ի տան իմում, և չկոր ոք որ օգնէ ինձ, զի ոչ գուսան իմ կենդանի է որ մեռաւն, և ոչ ոք յազգատոհմէ իմմէ՚ի թիկունս իմ [2], և ես կին այրի եմ. արդ երթ թեկղ, և Աստուած քո լինի քեզ օգնական։ Եւ գարձեալ առաքեաց գատաւորն այլ մարդիկ ածել զԹեկղ. և տիկինն ոչ ետ՚ի ձեռս զԹեկղ, այլ բուռն հարեալ զձեռանէն ունէր պինդ։ Գայր և ածէր պինդ ինքնին և ասէր. Ցդատաւորիկն իմ յուզարկեցի՚ի գերեզման, և զքեզ Թեկղ յուզարկեմ և տանիմ կերակուր գաղանաց։ Ցլալ հարկանէր Թեկղ՚ի լալուն մեծ և գառնութեան, հոգւոյ հանէր հեծծեծել առաջի Աստուծոյ և ասէր. Տէր Աստուած իմ ես, հաւատամ յոր ապաւինեցայդ, և փրկեցեր զիս՚ի հոյ անտի, տուր հատուցումն քարի Տրիփոնեայ որ առ գութ՚ի վերայ աղախնոյ քո և պահեաց զիս սրբութեամբ։

Եւ վաղվաղակի՚ի նմին ժամու եղև աղմուկ աղաղակի բազմաց, և պայթիւն և ձկիւն առ՚ի գաղանն գրգռելոյ։ Կէսքն զգաղանն հանէին, և բազում ալիք և կանայք աղաղակ եդեալ մեհենակապուտ տաճարակապուտ գից կոչէին զնա. և կէսքն ասէին, թէ՝ ձիչ՚ի քաղաքիս [3] վասն անօրինութեան զոր առնէք, կորոյս զամենեսեան գառաւորդ. գառն է տեսիլ զոր տեսանեմքդ, և անիրաւ գատաստանդ որով գատին զԹեկղ։ Եւ եկին պատանիքն առին վարեցին զԹեկղ՚ի ձեռաց Տրիփոնեայ տիկնոջ, և տարան՚ի Թէատրոնն արկանել զնա գաղանաց, և ածին կացուցին զնա՚ի մէջ Թէատրոնին։ Մերկանային զհանդերձն և ածէին նմա առիւծ կատաղի. և կայր անցեալ այնպէս մերկ և ասէր. Տէր Աստուած հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, դու ես օգնական հալածելոց, դու ես վերակացու աղքատաց, տես և հայեա յաղախին քո

1. Զկէ՚ի բնագրին ձայնարկու Թիւնա այս։
2. Մի օր. հայ՚ի ընկեր իմ։
3. Բնագիրն՝ Ապիանէոյի կամ Իրծանէոյի փողոց։

որ կայ մերկ խայտառակեալ առաջի այսչափ զօրաց ամենայնի. Տէր իմ և Այտուած իմ, յիշեա զաղաչին քո՛ի ժամուս յայսմիկ։ Յայնժամ ածին արձակեցին նմա ինձ մի որ կարի չար էր, և դարձեալ մատակ առիւծ մի ածին արձակեցին նմա։ Եւ թեկղ անցեալ կայր և տարածեալ ունէր զձեռս իւր՛ի նմանութիւն խաչափայտին. և մատակ առիւծն ընթացեալ յարձակեցաւ նմա. և իբրև եկն եհաս և կամէր հարկանել ընդ նմա՝ անկաւ առաջի և անդէն հերձաւ ընդ մէջ։ Դարձեալ ածին արջ մի որ կարի ուժգին էր, ընթացաւ յարձակեա՛ի վերայ թեկղէ. յարեաւ մատակ առիւծն որ նստէր առ ոտս նորա, կալաւ զարջն և անդէն պատառեաց. և դարձեալ միւս ևս առիւծ զոր ուսուցեալ էր յարձակե՛ի վերայ մարդկան, որ էր նորուն Աղեքսանդրի, և այն ևս առիւծ յարձակեցաւ՛ի վերայ թեկղէ. յարեաւ մատակ առիւծն՝ որ նստէր առ ոտս նորա, պատահեաց առիւծուն և առին զմիմեանս երկոքինն. և յետ սակաւ միոյ սպանին զմիմեանս երկոքեան։ Այս առաւել ևս սքանչացան[1] կանայքն որ նստէին և հայէին, և ասէին թէ մատակ առիւծն ևս որ օգնէր թեկղէի՝ մեռաւ։ Եւ դարձեալ արձակեցին նմա այլ ևս գազանս. իբրև եռես թեկղ թէ բազում գազանս ելին, տարածեաց զձեռս իւր և կաց յաղօթս։ Եւ իբրև կատարեաց զաղօթսն՝ դարձաւ յետս և եռես գուբ մի լի ջրով և ասէ. Ահա այսուհետև ժամանակ է մկրտելոյ. ամբարձ զձայն իւր և ասէ. Յանուն Յիսուսի Քրիստոսի, ահա այսօր գյետին օրն մկրտիմ։ Իբրև տեսին կանայքն որ նստէին՝ զլաց հարան և ասեն ցնա. Մի արկաներ զանձն քո՛ի ջուրդ, զի չար են գազանքդ որ են այդր. և գատաւորն իբրև եռես զնա՝ ելաց թէ զայնպիսի գեղ վայելուչ ուսուցեն գազանքն որ են՛ի ջուրն. և թեկղ դիմեաց վաղվաղակի և էջ՛ի ջուրն, և գազանքն իբրև տեսին զնա՝ որպէս զփայլակն[2] հրոյ սատակեցան և կային՛ի վերայ

1. Մի օր. գգեցան սոփ։
2. Ցոյնն՝ ի ֆայլոնացոյպ հրոյ զանընդունելի հարեալ սոփիէցան, և այլն։ Իսկ այլ օրինակ բնագրին վասն թեկղի ասէ. էջ որպէս ֆայլոն հրոյ՛ի ջուրն. և գազանքն որ՛ի ջրէն անդ էին՝ սոփիէցան։

ջոյն, և գայլն շուրջ գնալաւ և՝ ի վերայ նորա հովանի լուսափայլ ամպ[1], այնպէս զի ոչ երևելով երևէր Թեկլ Թէ մերկ էր։ Իբրև տեսին կանայքն որ նստէին՝ ի Թէատրոնին՝ Թէ այլ ևս գազանս արձակեն Թեկլէ որ չար են քան զառաջինն, սկսան ձչել և ասել. Բողոք առ Աստուած, զինչ տեսանեմք՝ ի քաղաքիս[2], Ապա եկին կանայք և սկսան արկանել խունկս՝ ի վերայ Թեկլէ, և սկսան խունկս խնկիկս, և սկսան խունկս ապուրսամ[3]. և այլ ևս խունկս անուշունս ցանէին՝ ի Թէատրոնին։ Եւ ածին արձակեցին նմա այլ գազանս. և եկին գազանքն և նստան շուրջ գնալաւ յեսոյ և առաջի՝ և ննջեցին, և որ՝ ի նոցանէն ոչ մերձաւ Թեկլէ։ Դարձեալ ընդ ացաւ Աղեքսանդրոս և ասէ ցդատաւորն. Են իմ երկու զուարակք ուժգինք չարք, ածցուք այսր և կապեացուք՝ ի միջի գազանակուրն, Թերևս զայրացին և սատակեացեն զնա։ Եւ ասէ դատաւորն ցԱղեքսանդրոս. Երթ արա որպէս հաճոյ Թուի քեզ։ Եւ առեալ եաթեաց եւ ածել զզուարակն. և ածին հանին ընդ Թեկլ՝ ի միջոյ գազանացն, և կալան արկին զնա՝ ի վերայ երեսացն իւրոց. բուռն հարին և կապեցին զոտսն՝ ի մէջ երկոցունց զուարակացն։ Եւ բերին շամփուրսն փուրս և եդին՝ ի կրակն, և ջեռուցին զշամփուրսն հրով, և եդին՝ ի վերայ սպրդերաց զուարակացն զի զայրացին[4], և առ զայրուցան կոտրեացեն զնա, և զայրանային զուարակքն առ ցաւս խարանացն. և էլ ցոց հրատին և այրեաց զկապան[5] որով կապեալն էր զոտն Թեկլէ։ Յարեաւ Թեկլ վազեաց եկաց յառաջոյ կողմն զուարակացն, իբրև այն Թէ աներևին ցաւ ինչ ոչ իցէ եղեալ նմա, և ոչ կապանօք կապեալ իցէ զնա։ Եւ Տրիփոնիա տիկինն կայր առ դուրս Թէատրոնին, ձչեաց յանկարծակի և կործանեցաւ անկաւ, զի կարծեաց եԹէ մեռաւ Թեկլ։ Իբրև տեսին ամենայն ծառայքն Թէ ձչեաց և անկաւ պակասեցաւ, սկըսան գոյժ առնուլ և պատառել զպատմուճանս իւ-

1. Մի օր. էղև հովանի ամպ փայլապանծ։
2. Զինք՝ ի բնագրին և այս ձայնարկու Թեան բան։
3. Մի օր. ապարսամոն։
4. Մի օր. այրէցին և առ պայթուին իրարու ելոպեան։
5. Մի օր. պիտանան։

բեանց և ասեն. Վայ, մեռաւ տիկինն, և դողայ ամենայն քաղաքն: Զահի հարաւ Աղեքսանդրոս, ընթացաւ եկն առ դատաւորն և ասէ. Գնա յիս և՛ի քաղաքդ, և արձակեա զպատանակուրդ, թող երթայ գընայ բնաւ՛ի քաց, զի մի ամենևին կորիցէ քաղաքս. գուցէ իբրև լսիցէ կայսր զայս գործ զոր գործեմք՝ և կորուսանիցէ զքաղաքս, զի Տրէխոնիա տիկինն յապգէ կայսեր՝ որ կայր առ դրան Թէատրոնին՝ և մեռաւ:

Ցայնժամ ասէ դատաւորն. Այծէք այսր զԹեկղ. և ընթացան պատանիքն աճել զԹեկղ՛ի միջոյ դազաճայն, և կացուցին առաջի դատաւորին. և ասէ ցԹեկղ. Ո՞վ ես դու, և զիարդ ես զի ոչ մերձենան առ քեզ գազանքն: Եւ ասէ. Աղաչին եմ Աստուծոյ. և որ առ իս է՝ նա է որդի Աստուծոյ կենդանւոյ յոր են յուսացեալն եմ, զի վասն նորա ոչ մերձենան առ իս գազանքն. զի նա է սահման կենաց, և ամենայն հալածելոց յանձանձիչ և անյուսից յոյս և կեանք: Բայց քեզ ասեմ, դատաւոր, և ամենեցուն որ կան առաջի քո, թէ որ հաւատայ Աստուած՝ զոր տեսանէք՝ մեծամեծս զոր արար առ աղաչին իւր՝ կեայ և առաւել, և որ ոչն հաւատայ՛ի նա՝ մեռցի զմահն յաւիտենից: Իբրև լուաւ դատաւորն զայս՛ի բերանոյ Թեկղէ, հրամայեաց բերել նմա հանդերձս. ասէ ցնա դատաւորն. Ի քաց առ զսուիցածդ, և սա առ զիր զհանդերձդ զոր եառս քեզ: Պատասխանի ետ Թեկղ և ասէ ցդատաւորն. Որ զկեցոյց ինձ զօրութիւն՛ի միջի գազանացն՝ նոյն զկեցուցանէ ինձ կեանս յաւուր դատաստանին: Եւ՛ի քաց մերկացաւ Թեկղ զսուիցածն, և առ զկեցոյց զհանդերձն: Եւ քարոզ կարդայր դատաւորն առաջի զօրացն ամենայնի և ասէր, եթէ՝ ՉԹեկղ՝ Աստուած արձակեաց և ետ ձեզ: Եւ կանայք որ նստէին՛ի Թէատրոնի անդ՝ ձայն բարձին մեծաբարբառ, սկսան աղաղակել և տալ փառս Աստուծոյ և ասեն. Մեծ է աստուածն Թեկղէ որ կեցոյց և փրկեաց զնա՛ի միջոյ գազանացն: Եւ՛ի ձայնէ բարբառոյ կանանցն որ աղաղակէին՝ դղրդեցաւ քաղաքն ամենայն. և խակ և խակ ընթացան եռուն աւետիս Տրէփոնեայ տիկնոջ. և ընթացաւ եկն եզիտ զնա և զիրկս արկեալ Հաղթութիւնն զնա և ասէր. Դուստր իմ Թեկղ,

այժմ հաւատամ եթէ կենդանի է դստերիկն իմ: արդ եկ՛ի տուն իմ, Թեկղ, և զամենայն ինչս իմ քեզ պրեցից:

Եւ չոգաւ ընդ նմա Թեկղ և եմուտ՛ի տուն նորա, և հանդեաւ անդ աւուրս ութ, և ուսոյց Տրիփոնեայ տիկնոջ զամենայն պատուիրանս Աստուծոյ. և հաւատայ տիկինն յԱստուած, և բազումք յաղախնայց նորա. և եղև անդ ուրախութիւն մեծ Թեկղէ: Եւ քանզի զի սիրէր զՊաւղոս, առաքեաց նա յամենայն տեղիս [1] նորա: Պատասխանի ետ Թեկղ և ասէ ցնա. Ընկալայ ես զկրտութիւն. զի որ պատուիրեացն քեզ քարոզել՝ նոյն հրամայեաց և ինձ վկրտել: Եւ անդէն յաւետեաւ Պաւղոս՝ ած զնա և զամենայն մարդիկն որ ընդ նմանն էին, և տարաւ՛ի տուն Հերմեսի [2]. նստաւ Պաւղոս և Թեկղ և այլ ևս մարդիկն որ ընդ նմանն էին: Եւ պատմեաց նմա Թեկղ զամենայն զոր արար ընդ նմա Աստուած. և յոյժ զարմանայր Պաւղոս ընդ զօրութիւնն՝ զոր տուեալ նմա [3]. և ամենեքեան որ կային անդ և լսէին եթէ զինչ արար ընդ նմա Աստուած՝ յոյժ հաստատէին և ձգնարտէին. և յաւելին ամենեքեան միանգամայն փառաւոր առնէին և օրհնէին զԱստուած՝ որ առնէ զաքանչելիս առ ամենայն որ հաւատան՛ի նա և պահեն զպատուիրանս նորա. ազօթս առնէին և խնդրէին Աստուծոյ՛ի վերայ Տրիփոնեայ տիկնոջ՝ որ արկ զգուշ իւր՛ի վերայ աղախնոյ նորա,

1. Մի օր. Մէռնէ. խակ՛ի ընտրելին՝ է Մէռնէ. փոխանակ Լիւիոյ:
2. Մի օր. Հարմեսէ:
3. Մի օր. որ պատ... յոյժ հաստատեին՝ է ճշմարտութեանն:

և պահեայ զնա սրբութեամբ։ Ասէ Թեկղ. երթամ ես Յիկոնիոն քաղաք։ Եւ ասէ Պաւղոս. երթ, ուսուսջիր անդ զպատուիրանս և զբանս Աստուծոյ։ Եւ իբրև լուաւ Տրխոնակ տիկին թէ երթայ Թեկղ Յիկոնիոն քաղաք, ած հանդերձս բազումս և ոսկի, և առաքեաց Թեկղի. և առ զհանդերձսն և յոսկւոյն, և առաքեաց Պաւղոսի՝ ի տալ պաշտամանն սրբեացն։ Եւ Թեկղ ջոգաւ եմուտ՝ ի տուն Ընեսիփորայ, և անկաւ՝ ի վերայ երեսաց իւրոց՝ ի տեղւոջն ուր նստէր Պաւղոս և ուսուցանէր զպատուիրանն Աստուծոյ, լայր և ասէր. Աստուած մեր, Աստուած տանս այսորիկ՝ յորում ծագեաց ինձ լոյս՝ ի Քրիստոսէ Յիսուսէ, որ օգնեաց ինձ՝ ի բանտին և փրկեաց՝ ի միջոյ գազանացն առաջի դատաւորին, և եա ինձ միտութիւն յաւիտեանս յաւիտենից, և երթայց յերանութիւնն՝ որ պահէ ինձ և այնոյիկ որ պահեն զպատուիրանն Քրիստոսի. զի նա է մի Աստուած բարձրեալ՝ որ նստի յաթոռ քերովբէից. զի նմա վառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Յետ այր ամենայն աբանէլեացս՝ զոր արար ընդ նմա Աստուած, եկիտ Յիկոնիոն քաղաքի զի մեռեալ էր Թեմերտա այր նր[1]։ Այն ցնա Թեկղ. Մայր իմ, թէ կարես հաւատալ, մի է Աստուած բարձրեալ Տէր իմ՝ որ յերկինս է. ապա եթէ զոսկի և զարծաթ և զինչս որ մարդին՝ սիրես, ահա տուեալ է քեզ յայմ հետէ. թէ հաւատայցես թէ մի է Աստուած յերկինս, և բայց՝ ի նմանէ այլ չկայ Աստուած, կարես կեալ և պահել զոր ինչ առեմ քեզ, զի ահա կամ ես առաջի քո՝ որ ապրեցայ՝ ի հրոյն և՝ ի գազանաց չարաց և յերեսաց դատաւորին. զի նոյն Աստուած իմ և Տէր օգնեաց ինձ, որ ես զօրութիւն հաճիերել։ Զայս առնեայն վկայութիւն եղ ընդ մօր իւրում, և ել ի՝ քնապրէն։ Իսկ յետ հատուածոյս պատի՝ ի յոյնն, այլ՝ ի յետնոյ ուսիքէ յօրինեալ, այլ ևս բան պատմութեան զԹեկղեայ գործոց՝ ի Սելևկիա, և կենդանեւոյն ամփոփումն՝ ի վիմի պատառելոյ։

1. Որպէս՝ ի սկզբանն և առաքնապրէն չկոչէ բնաւ զԹամիրոս՝ այլ Թեկղի։ Եւ յաւելու յետ այսորիկ. Իսկ զմայրն (էֆէք) ՀԷնդաճի. կամ՝ Կոչեաց զմայր իւր զԼոէնիա և ասէ։ Ասաւ և անգր օտարութեան՝ ի բնագրէն։ Իսկ յետ հատուածոյս պատի՝ ի յոյնն, այլ՝ ի յետնոյ ուսիքէ յօրինեալ, այլ ևս բան պատմութեան զԹեկղեայ գործոց՝ ի Սելևկիա, և կենդանեւոյն ամփոփումն՝ ի վիմի պատառելոյ։

կանխեն քաղաքէ, և չոգաւ ՚ի Սեբաստիա. և անդ բազում մարդիկ լուսաւորեաց բանիւն Աստուծոյ. և ննջեաց ՚ի քուն հանգստեան։

Կատարեցան գիրք Թեկղի երանելւոյ։ Փառք Աստուծոյ ամենակալի և Օծեղոյ նորա և Հոգւոյն սրբոյ, որ եւս զօրութիւն Թարգմանի և գրչի. զի նոյն Աստուած կատարեսցէ զողորմութիւն յերկոսին աշխարհս, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Թէոդորիտոսի Քահանայի։

Առաքինի և աստուածասէր յօժարութեան եւ բանեալն Թէոդորիտոսի վկայի՝ ոչ միայն ընդ յօժարութիւն և ընդ կարծրութիւն[1] հաւատոյ զարմանալ, այլ և ընդ հաստատուն և անշարժ հաւատն զոր ունէր առ Աստուած։ Նախ և միայն առ Յուլիանոսիւ արքայիւ, մանաւանդ թէ առ բռնաւորաւ և ոչ արքայիւ, Անտիոքացւոց քաղաքին վկայեաց, ոչ միայն զանձն օրինակ բարի ամենայն մարդկան երևեցոյց[2], հաւատարիմ վկայ Քրիստոսի երևեալ, այլ և զքաջելի և զարմանալի առ ամենեսեան երևեցաւ, անպարտելի և յաղթող ախտեան ընդդէմ սատանայի եղեալ, որ և զանեղծութեան պսակն առ, և երկնից մոց արժանաւոր եղև, և վերին քաղաքին քաղաքացի։ Սկիզբն և կատարած հալածանացն կացոյց զինքն. և յայլոցն ամենեցուն Քրիստոսի ծառայեցին՝ զպատուականն որում անկն ունէին՝ շնջոյց, վկայ անպարտելի և յաղթող վասն Թագաւորութեանն Քրիստոսի երևեալ։

Յառաջնումն ամի Թագաւորութեանն Յուլիանոսի, մինչդեռ նորընծայ էր ի Թագաւորութեանն և կատարածէր ի Կոստանդնի արքայէ[3], որ ակն ունէր Թէ նո-

1. Մի օր. ընդ կարծրութիւն հաւատոյն... այլընդ հաւատարմութիւնս...։
2. Մի օր. եցոյց... գիտել։
3. Մի օր. նորընծայ ի Թագաւորութեան էր՝ կատարածէր ի ընծայութենէ ճիճի արփայն Կոստանդիանոսի։

վին սրոմէ որով Հայր նորա մեռաւ՝ մեռցի, որ այնչափ և այնպիսի եպիսկոպոսաք ապրեցաւ երբեմն՝ ի մահ-ուանէ, Թագուցեալ ընդ սուրբ սեզանոմէն Աստուծոյ, և աստուածեղէն գրոց եղեալ գրագէտ և ընթերցիչ։ Իբրև ժամանակք լինչ անցին, և Հանգեաւ աստուա-ծասէրն Կոստանդիանոս, և առեալ Յուլիանոսի զԹա-գաւորութիւնն, ոչ միայն զՀաւատոն անարգեաց, զի ապստամբեաց՝ ի Հաւատոցն, այլ և՝ ի Թշնամանս և յանհնարին վտանգս[1] արկանէր զԱստուծոյ մեերիմ սըն, և պարգեւս և պատիւս կռապաշտից չնորհէր. և զարգուն այնպիսի իրօք պատրէր, մինչև զքեռնն իւր զանուանակիցն իւր զՅուլիանոս՝ ապստամբեցուցանէր՝ ի Հաւատոցն և՝ ի յուսոյն Աստուծոյ[2], և զկռոցն մե-ղսութիւն յանձին ունել։ Զգացուցանէր նմա քե-ռին իւր Յուլիանոս, Թէ բազում նուէրս և ապաս-ուէս և արծաԹոյ ունի եկեղեցի Աստիոքացւոց, պատչառս վնասակարս Հնարել, ոչ միայն զսպաս և զնուէր եկեղեցւոյն Աստուծոյ կողոպտել, որ ոչ այնմ գործակալութեանն[3] եղև Հաւատարիմ Յուլիանոս, այլ և զքահանայն ամենայն փախստական առնել. մինչ զի զսուրբ եկեղեցիսն Աստուծոյ փակեալ, այլ ա-մենեքեան վտան Հալածանացն և սպասուցն կողոպտե-ղոյ գրուեցան, ուր և ձեռնհաս ոք լինէր ապրել և ծառայել Աստուծոյ։

Իսկ սուրբ Թէոդորոս[4] եղեց Հաւատարհական եկեղեցւոյն Անտիոքացւոց, ոչ՝ ի քաղաքէն գնաց և ոչ խափանեաց երբէք զսպաշտօնս, Հանդերձ եղբարբք մնանել յեկեղեցին, և ժողովել ժողովուրդս՝ զպատ և զպատշաճ աղօթսն մատուցանել։ Ի վերայ իրացն Հասանէր քեռին Յուլիանոսի արքայի, և սորա ևս[5] իշխանութիւն առեալ էր, և ամենայն իրաց արքունի Հաւատարիմ էր։ Եւ Թէ այնպէս ոչ դատարկեր եղբարբք զՀանապազորդ աղօթսն մատուցանել Աստուծոյ՝ ի վերայ ամենայն իրաց, և զայն իմն առեալ Հպարտու-

1. Մի օր. վտաս։
2. Մի օր. ինչ պէտքն էին իմ իր որ անուանակիցն իր էր, Յուլիանոսի ապստամբեցուցանել՝ ի յուսոյն Աստուծոյ։
3. Մի օր. որ այնմ գործակալու-թեան։
4. Մի օր. իմ սուրբն և սուրբ սուրբն Թէոդորէտոս։
5. Մի օր. որոյ և սրբոյն։

Թիւն կայսերն Համարէր։ Հրաման եաո ունել, և զաւաջինն՝ հանապազորդ բանիւք և շղթայիւք յաղտեղի տեղիս տեղիս արգելեալ ահ արկանէր[1]. յետոյ և արտաքս իսկ հրամայեաց հանել և ցանկ Թշնամանել և նախատել յայնցանէ՝ որ նմին նման ոչ Հանապէին զԱստուած, և կամօք և մտօք նոյնպիսիք էին. բայց ումանք և զնդային[2] իսկ յայնպիսի այր աստուածասէր. ոչ միայն ՚ի մեծարանաց մեծաշուք երեսացն ակն ածէին, այլ և ՚ի վերայ հասեալ գիտութեանն՝ գիտէին զուղիղ կարգս և զպարկեշտ վարս առն պիտանոյ[3]։ Գանգի միշտ և հանապազ զաւետային ժամանակս յաղօթս ծախէր. բազումք և խղճէին իսկ ՚ի միտս զայնպիսի այր աստուածասէր Թշնամանել, և չէրհային երբէք անարգանս ինչ առնել։ Ցետ բազում աւուրց ՚ի վերայ հասեալ Յուլիանոս անպարտ և անշարժ մտաց վիպային, Թէ օր քան զօր զօրանայ և վառի հաւատովք, խորհուրդ արարին միաբանեալ ընդ իսկ ածեալ էր՝ ՚ի գիշերի սպանանել զնա։ Բայց դարձեալ զի այնպէս ինն լաւ համարեցաւ վանն այլոց ահ արկանելոյ[4] յայտնի հարուածովք զայնպիսի այր տապնապել։ Բայց սակայն և այն լսատ Աստուծոյ շնորհացն էր, զի մի այնպիսի այր հաւատացեալ անփորձ և անշնաւոր մահու վՀարեցէ զկեանս իւր[5], Ոչ զի Թէ չէր լեալ յայտնի ամենեցուն՝ առաջի Աստուծոյ զվարձս վաստակոցն կորուսանէր, այլ զի օրինակ[6] զանձն ՚ի միջի կացուցանէր հաստատուն լինել առհասն հաւատացելոց ՚ի Քրիստոս։ Իբրև ածին մուծին յատեան՝ ձեռս յետս կապեալ և ձող ինչ ընդ Թիւնան անցուցեալ[7], ասէ անօրէնն դատաւորն. Դուն ես Թէոդորիտոս, որ երբեմն առ Կատանդիանոսիւ[8] կայսեր կործանէիր զպատկերս աստուածոյն, և զմեհեան դիցն աւերէիր[9], և շինէիր եկեղեցիս և զգե-

1. Մի օր. արգելուլ արհաւիրս արկանէր։
2. Մի օր. բայց ոմանք զնդային յայնպիսի այր աստուածասէրս։
3. Մի օր. պիտանացոյ։
4. Մի օր. խորհուրդ արար ինքեանք յափեան ինչ եկեալ... այսպիսի ինչ... վանն այլոցն նահատակել։
5. Մի օր. Տահաւասիկ վախճանէցի ՚ի կենաց։
6. Մի օր. օրինակ և առաջի։
7. Մի օր. ձող ինչ յետոյ ընդ յետս և ընդ բիւնան անցուցեալ։
8. Մի օր. Կոստանդիանոս։
9. Մի օր. պատկերէր։

բեզմանս մեռեալց, զոր և մատրանոցս իմն անուա-
նէիր[1]։ Թէոդորիտոս ասաց. Ես քրիստոնեայ եմ և
աղօթս առնեմ[2], զի մինչև ի վախճան զնոյն ունիցիմ,
և հաւատարիմ վկայ Քրիստոսի գտանիցիմ։ Ես ոչ եր-
բէք եկեղեցի չինեցի և ոչ մատրունս, քանզի ի նախ
նեացն իսկ հաստատեալ և շինեալ կան։ Յուլիանոս
ասէ. Չպատկեր աստուածոյն կործանեցեր, և արդ
ևս ի չմեզս կաս և չտամս պատասխանի։ Թէոդորիտոս
ասաց. Ես աստուածս երբէք ոչ կործանեցի, քանզի
չէիմն զնոսդ մարթ էր կործանել. այլ զպատկերս
անշունչս և զաստնանոցս կործանեցի, զի զոգիս մարդ-
կան մերոցեալս ի հրապաշտութենէ՝ կարասցէ առնել
ցուցանել. քանզի զայն իսկ գիրքն սուրբք պատուիրե-
ցին։ Յուլիանոս ասէ. Ոմանք քեզնէն խոստովանե-
ցան՝ կրեա պատիժս պատուհասից, զի նշխարեցեր զայն-
պիսի գործ գործել։ Թէոդորիտոս ասաց. Ա՛ռ աս-
տուածապաշտոցն և աստուածասիրացն կոստանդնիս
արարի զայն և ոչ ցասեաւ, որ և նշխանութիւն իսկ
ունէր, և ոչ զայրացաւ մինչ ընդ այնպիսի գործ. քայց
ընդ քո զարմացեալ եմ՝ զի ասդ այժմ կրաց վնաս-
նոցդ ամբարձար։

Յուլիանոս ասէ. Տուք զկոտ դորա, զի նշխարաց կու-
րա կոչել զաստուածն։ Եւ յետ գան ըմպելոյն, ասէ
Թէոդորիտոս. Յանցանես, Յուլիանոս, զի զձշմարտի
միայնոյ Աստուծոյ և զամենակալն անուն կրաց գնես,
և աստուածս անուանես զայժմու կռեաքն[3] և արա-
բեացն։ Յուլիանոս ասէ. Տուք զերեսս վեր եկեղցդ,
զի նշխարաց հայհոյեմ[4]։ Թէոդորիտոս ասաց. Դար-
ձեալ տակաւին ուսուցանեմ քեզ, Յուլիանոս, զի պատ-
կերն զոր դու աստուածս անուանես՝ կրսեր են քան
զպատկերագործն, և ընդ նոսա երբեմն զնոսին ապա-
կանելոց են. ոչ բարի և ոչ չար կարեն առնել առնե-
լեացն, և դու հրամայես զնա դան հարկանել՝ որ զզ-
ձշմարիտն ցուցանեմ քեզ։ Յուլիանոս ասէ. Ա՛յժմ
դան և եթէ արբեր և ըմբռատացար, յետ ասկաւ միոյ

1. Մի օր. անուանէիր։
2. Մի օր. զսոյն անուանիցիմ։
3. Մի օր. նոքեաքս։
4. Մի օր. զի ի նշխարսն հայ-
հոյել զաստուածն։

այնպիսի տանջանս կրեսցես, որոց չկարասցես հանդարտել, եթէ ոչ զարժանն և զօրէնն կատարեսցես առաւածոյն. քանզի այնպէս հրամայեաւ քալ առանց ալքայն Յուլիանոս։ Թէոդորիտոս ասաց. Ես վաղ իսկ ասացի քեզ, և դարձեալ ասեմ թէ մի՛ մեղանչեր և մի՛ աստուածս կոչեր զձեռագործս մարդկան, այլ՝ի բաց ընկեա զժամանակեայ ամբարհաւաճ Ջուպիտեր, որով յանդգնեցար աստուածամարտ լինել, և ճանչիան Աստուած Հանապէտ ուսուցէ։ Յուլիանոս ասէ. Ձհշմարտութիւն բանից և զՀոռոմ խօսելոյ եթէ երթեալ ես գՀեռա[2]՝ի մանկութենէ և առաւել յօդելոյ, որով կարասցես պատրել զմարդիկ։ Թէոդորիտոս ասաց. Երբեմն և դու Հանապէտ զԱստուած և խոստովանէիր զՀշմարտութիւնն, և այժմ դարձար՝ի խաբէութիւն, յորժամ աշխարհական ամբարտաւանութեամբ հպարտացար, և զկուռս աստուածս Հաստատեալ կարծեր յանձին, և զՀշմարտութիւն խաբէութիւն անուանեես։

Յուլիանոս ասէ. Ա՛յ չարաբարբ և դրուժան. Թուի ինձ, թէ այժմ յԱթենացւոց քաղաքին եկեալ ես դու։ Թէոդորիտոս ասաց. Ես յԱթենացւոց քաղաքէն չեմ եկեալ, և ոչ յաշխարհական ինչ վարժս խրատու վայելեցի երբէք, այլ աստուածգիրն զոյց իմաստութեամբ առոգեալ՝ ըստ քում Հարցուածոյդ տամ պատասխանի, և աղօթս առնեմ քեզ միւսանգամ զալ՝ի լաւութիւն։ Յառեալ Յուլիանոս,

1. Մի օր. վերծոսոյե։

2. Մի օր. գհեթ գրքեալ է... աստուածս յարդարելով։

և հրամայեաց զնա կապել ընդ ձող ինչ և պրկել. և իբրև առին զահինքն հրամանն, չուանօքն ինն և անուօքն ինն պրկեցին զամենայն անդամս երանելոյ վկային, և այնչափ երկայնացան ջլքն, մինչև ութ կանգնեան առն երևեալ։ Եւ իբրև այնպէս եղև, ասէ Յուլիանոս. Գէթ արդ զգացեր ինչ տանջանացդ, Թէոդորիտոս, հատուած կախարդի մոյ մեռեալ՝ պագանեմ երկիր[1]։ Նակ սուրբն և առաւել սուրբ վկայն մեծաձայն բառնալ, լուր և զուարթ երեսօք առնէր պատասխանի. Առացաւր, ասէ, Յուլիանոս, զդեղեցիկ իրատն զոր ետու քեզ, թէ զփայտեղէնս և զքարեղէնս և զմեռելոտի ոսկերացդ զործուածդ պատկերս՝ առաւածս մի անուաներ, այլ Հանապէտ զԱստուած որ արար զերկինս և զերկիր, և զամենայն որ է 'ի նոսա, և զՅանն նորա զիաճէն Որդին Յիսուս Քրիստոս՝ փըրկիչ մարդկան, և զաշխարհապարծն ամենայն աշխարհի։ Յուլիանոս ասէ. Չայր մի որ խաչեցաւ և մեռաւ և Թաղեցաւ՝ արարիչ աշխարհի կոչես, այլ վսեր է. կեալդ դիմագրաւ։ Թէոդորիտոս ասաց. Չխաչեանն և զմեռեանն և զԹաղեանն որ Հանդերձ մարմնոյն յերկինս վերացաւ, ուսուցանեմ քեզ պաշտել զորդին անծնին Հօր՝ որ է Յանն Աստուած[2], և քարող և զուրկաւ եղև աստուածեղէն խորհրդոյն ըստ կամացն Հօր, որ արհամարհել պատուիրեաց զկուռս անմուննչս, զոր քո խակ առաջի պատառ պատառ կոտորեցից, և ոչ կարեն ինչ ինձ վնաս առնել. քանզի ունիմ ինձ օգնական զԱստուածն։ Յուլիանոս ասէ. Եթէ երկնչես ինչ յԱստուծոյ, Հնազանդ լեր հրամանաց Թագաւորաց. քանզի գրեալ է, Թէ՝ Սիրա Թագաւորաց 'ի ձեռին Աստուծոյ է։ Թէոդորիտոս ասաց. Եթէ ընկերացեալ կացես զոր ասացեր՝ պարտ է քեզ 'ի միտ առնուլ զոր ընկերացարն. ապա եթէ լուեալ կացես[3], և չկացես քաջ 'ի վերայ Հաստեալ՝ յինէն ուսիր։ Այլարև խակ Հիմարաւիւ սկսար Թագաւորի 'ի ձեռին Աստուծոյ է, ոչ կարաս պաշտել, այլ որ զԱստուած Հանապէտ, զի զայնպիսին որ

1. Մի օր. Թէոդորիտոս հպարտաբար խոստովանի ինքն իւր։

2. Մի օր. որ բանն է Աստուծոյ։

3. Մի օր. ապա եթէ լուեալ կացես։

առ այնչափ մարդիկ անապրոյն է, և յԱստուծոյ անձ հաւատ, բռնաւոր և ոչ թագաւոր պարտ է կոչել։ Թագաւորի սիրտ՝ ի ձեռն Աստուծոյ է, այլ բռնաւորի ամենևին ոչ։ Յուլիանոս ասէ. Ի վեր եկեալ դիմագրաւ, բռնաւոր իշխեցեր կոչել զարքայ։ Թէոդորիտոս պատասխանեաց. Որ այսպէս հրամանն տայ և այնպէս եղեալ պարտ է զոյց տալ, ոչ միայն բռնաւոր, այլ և ամպարիշտ քան զամենայն մարդիկ։ Ի եղև ցասմամբ Յուլիանոս և մեղադրութիւն՝ի մոլ բերել, հրամանն ետ քերել զնա այծեամն կճղակօք. և այնչափ քերեցին զնա, մինչև առաք արեանն յերկայնոյ կոպմանց կողցին յերկիր լինգանէին[1], և սակայն՝ի զուարթանալ երեսք նորա ոչ տխրեցան։ Եւ իբրև քերեցին զերիս[2] ժամն, և ամենևին ինչ ոչ եւանէր ընդ բերան նորա, և ոչ պոյն երեսաց նորա շրջեցաւ, ասէ Յուլիանոս. Գէթ արդ Հանապէս զաստուածդ, Թէոդորիտոս, որ յայդպիսի տանջանս մատնեցար։ Թէոդորիտոս ասաց. Զձեռագործս ոչ երբէք ընկալայ աստուածս և ոչ ունիմ, և մի այլ լոյծ ունել, բայց միայն զմի Աստուած ամենակալ Հանապէտ, և զՔրիստոս նորա զմիածին Որդին. դու զոր աստուածս համարիս՝ ընդ նոցա լոյծ քո բաժինն[3], և ինձ լոյծ ժառանգաւոր լինել խոստացեալ բարեացն, կատարել և հաւատարիմ գտանել այնմ որ երևեցաւն։ Յուլիանոս ասէ. Ա՛յսպէս երևիս պատչեն Թէ բնաւ չզգացեր զառնջանոտ։ Թէոդորիտոս ասաց. Խաղ ինչ համարէիր, և երբէք զմանուկ պատրել[4] և տանջանօք երկեցուցանել։ Դարձեալ ցասեաւ Յուլիանոս և հրամայեաց նովին կճղակօք քերել զնա այլ երկուս ժամս։ Եւ այլ ոչ ինչ եւանէր ընդ բերան նորա, բայց մեծաձայն բարբառով ասէր աղօթէր. Ցխոստս օգնեա ինձ։ Իսկ Յուլիանոս հիացեալ ընդ բազում համբերութիւն սրբոյ վկային, հրամայեաց պահչացն հանդարտել, ասէ. Ծուխ ինձ Թէ չարչարանս ինչ պարտիս, կամ այլ ումեք ոչ կարասցես հաստուցանել. այլ Թէ չարչարանս ինչ պարտիս, Թո-

1. Ա՛ի օր. ՚ի յերկիր հասէին։
2. Ա՛ի օր. զերիսեան կամ զերիս։
3. Ա՛ի օր. ընդ նոսա լիցի քո բաժին։
4. Ա՛ի օր. խաղ ինչ համարէիր, որ երբեք զմանուկ պատրել կամէիր։

պատճառն առնէ քեզ ինքնակալն, և եթէ այլ ումեք՝ զձեռնադիրն անդրէն հրամայեմ տալ, առանց ինչոսե ինչ տուգանաց՝ ի վերայ հասեալոց։ Ս.յր Թէոդորիտոս պատկս թէ ամենևին ակամս ինչ չկոչեալ կրեալ, ասէ. Ամծամթ ձեր ընդ ձեզ լիցի՝ ի կորուստ. ես ումեք պարտս ինչ ոչ պարտիմ, բայց միայն զԱստուած չնաևել. վասն որոյ աղօթս առնեմ զգուշութեամբ պահել և խոստացելոց բարեացն հասանել։ Յուլիանոս ասէ. Ա՛յ հէգ և թշուառական, ցածիր՝ ի բարկութենէ[1], և շահեա զանձդ, զի զերծանիցիս յայլոցն ևս տանջանաց։ Թէոդորիտոս ասաց. Ա՛յ հէգ և թշուառական, ապաշխարեա, շահեա[2] զՀոգիդ և զմարմինդ։ Դարձեալ ցասեաւ Յուլիանոս և հրամայեաց զնա քերել, և յետ քերելոյն՝ ասէ. Ընդէր այդչափ դիմադրաւեալ չկամիս հնազանդել ինքնակալին, և զայդ մի խաչեալ Աստուած համարիս։ Թէոդորիտոս ասաց. Խաչեան զոր դու մարդ համարիս, և մեք Աստուած, զքեզ ամպարիշտ և մարդախոշոշ բռնաւոր, յաւուր դատաստանի հրամայեսցէ արկանել՝ ի գեհեան հրոյն։ Յուլիանոս ասէ. Ահ այժմ ասդէն առնուցուս զխորձ հրոյ. և հրամայեաց երկուս կանթեղս լուցանել և մատուցանել առաի և անառի զկողնուքն[3]։ Եւ նոքա լուցին զանգին զկանթեղսն, երանելի վկայն ամբարձեալ զաչս նոր յերկինս, սկսաւ յաղօթս կալ և ասել. Տէր Աստուած ամենակալ, որ արարեր զերկինս և զերկիր և զամենայն որ է՝ ի նոսա, հայր կենարարին և ամենայն աշխարհաց, որ խոստացար պահել հաւատացելոց քոց, կատարեա և յիս զաղօթսս Թէեն քո, և ցոյց ամպարշտաց զքո իսաստուածեն և զօրութեն, զի ամենեքեան ծանիցեն թէ ոչ կայ ընդ յուսացեալս՝ ի քեզ և ընդ ամպարշտութեն անհաւատին։ Եւ կատարեաց զաղօթսն և առաքեաց զամէնն։ Եւ յանկարծակի զարկան զգետն կանթեղաւորքն. քանզի տեսանէին ջուրս հրեշտակս զի կային զերանելեաւն և խօսէին ընդ նմա։ Իբրև յաստուած մեծ եղև Յուլիանոս, եկին այլ գինուորքն և

1. Մի օր. ՝ի հպարտութենէդ։
2. Մի օր. և հաճեալ՝ շահեա։
3. Մի օր. լուցանել առաի և անառի զի վկոցքն։

յարուցին զդահիճսն, և հրամայեցին միւսանգամ մաշտուցանել զկանթեղսն։ Այնն կանթեղաւորքն. Ակն հրամայեսցէ քո քաջութիւնդ մաշտուցանել. քանզի մեք տեսանեմք չորս հրեշտակս որ կան և խօսին ընդ պատժաւորին և ոչ իշխեմք հոսպ երթալ, զի հաստատեալ պիտակքն զԱստուածն քրիստոնէից Աստուած մեծ և հզօր։ Դարձեալ'ի ցաւսին եղեալ Յուլիանոս, հրամայեաց վաղվաղակի զդահիճսն տանել ընկենուլ'ի ծով։

Եւ իբրև յափշտակեցին զնոսա և առին գնացին, տուրբն և առաւել տուրբ վկայն Ձայնատու լինէր նոցա. Կանխեցէք, ասէ, եղբարք, և ես ահա հասանելոց եմ ձեզ, և նշան յաղթութեան ընդդէմ հակառակորդին կանգնեալ և զպարգեւականն առեալ ժամանեցից վինի խրախոյս աւետեաց Աստուծոյ[1]։ Եւ իբրև առին գնացին զնոսաւորքն, ասէ Յուլիանոս. Ո՞է հակառակորդն քո։ Ասէ տուրբն. Հակառակորդն աստանայ է, որ քեւ այժմ զբարեաց արդիւնս գործէ. և զյաղթութիւնն և զպարգեւականն այ Յիսուս Քրիստոս փրկիչ մարդկան, և արարիչ աշխարհի՝ Որդին միածին, որում փառք յաւիտեանս. ամէն։

Եւ իբրև բազումք'ի ժողովրդոցն և ամբոխիցն զանձինն առաքեցին, ասէ շուրջ հայէր Յուլիանոս, Թէ՞ և այս զոք յայնցանէ որ զանձինն առաքեցին՝ կարծեցէք Քանաչել. և իբրև ցնորեցան միտքն և խաւար եկն զաչսն նորա՝ ասէ. Ա՛յ հնդ և Թշուառականդ Քէոտոսիոս, զոր ամենեքեան գիտեն, Թէ՝ յաւաչ քան զերկեր հարիւր կամ զաւակաւ լինչ կամ աւելի'ի կնոջէն ծնաւ, և զոմ աես եմէ զաշխարհս նա արար։ Քէոտոսիոս ասաց. Զոմ պիղծ և անասուրբ, և արժանի էակ չես զայնպիսի զերկրաւոր ուսանել։ Բայց զի մի համարեսցին ծառայքդ Աստուծոյ, որ շուրջ յամենայն կողմանց բակ առեալ կան՝ Թէ չկարեցեր քանդել լինչ առնել պատասխանի, միտ դիր որպէս յաւաչաքոյն ասացի քեզ, Թէ Աստուած որ արար զամենայն բանիւ իւրով, ողորմեցաւ ազգի մարդկան, զի

1. Այլ օր. ծամանեցին զնոսա ցամենայն...։

անտուրը և սիզճ գիւաց երկիր պապանէին[1], առա-
քեաց զՆահան իւր զմիածնին Ալզին, զի մարմին մարդ-
կեղէն զգենուցու, և չարչարակցաւն մերձենուսցէ
զմարդիկ առ Աստուած, քանզի զյայտնի զօրութիւն
նորա ոչ ոք՝ի մարդկանէ կարէր տեսանել. որպէս և
պրեալ է, թէ՝ Ոչ ոք մարդ կարէ տեսանել զերեսա
իմ և ապրել: Եւ արդ նոյն ինքն Բանն մարմնացեալ
զմարմինն յանարատ կուսէն, զգեցաւ և երևեցաւ
մարդկան, մարմնով երևէր և զօրութեամբ գործէր
զաւետեան մեծամեծս, որոյ արժանի եղեն ականա-
տես[2] լինել աշակերտքն, զարմացան և հաւատացին,
որք և մեզ աւանդեցին զհաւատն անպատում զօրու-
թեան նորա. զնա ծանիր և դու գոնեա անապան[3],
զի կարիցես ապրել:

Յուլիանոս ասէ. Բաջ ինն յաստ՝ի Հռոմայեցւոց
նուիրիւնդ, համառօտ լեզա լինէն. եթէ չառնուցուս
յանձն աստուածոյն պաշտօն մատուցանել ըստ կա-
մաց Թագաւորին՝ սրով հրամանն տայց սպանանել
զքեզ, քանզի տեսանեմ զքեզ դիմադրաւեալ, և չհա-
մարիս ինչ զանձնդանագ: Թէոդորիտոս ասաց. Դու չա-
նաս նամանել հօրն քում սատանայի, և ես աղօթս
առնեմ զի անարգել և անխափան կատարեցից զըն-
թացս իմ: Բայց յիշեսջիր դու, զի վասն այդր ամե-
նայնի յանդգնութեանդ՝ բարկութիւն մեծ գայցէ
քեզ յԱստուծոյ, և զոր արարեցդ և զոր առնիցեադ,
չլինիցի քեզ այնմ ընդհակառակ բռնաւորն: Եւ մինչդեռ
նա զայս լսէր, Յուլիանոս ասէ. Ջոր կամիս ասել
սաս. բայց տեսցուք թէ լինիցի զոր ասես: Դար-
ձեալ պատասխանի ետ Թէոդորիտոս և ասէ. Դու
չարաչար ախտիւ՝ի մահիճս ծնդիցիս, և անձամբ ան-
ձին լուցիս կերակուր, և որդնալից ծուրեալ[4] ելանիցես
յաշխարհէս, և բռնաւորն քո՝ի Հակառուն յորում
ակն ունիցի արութիւն ինչ ցուցանել՝ չվճարիցէ ինչ,
այլ յայլազգեաց մեռանիցի, և բնաւ չգիտիցէ[5] յոմ
մէ լուցիցի, և չգառնայցէ այսկէն՝ի Հռոմայեցւոց

1. Մի օր. պապան փանէին:
2. Մի օր. ականապէսի:
3. Մի օր. անապրան:
4. Մի օր. ծորբեալ:
5. Մի օր. և բնաւ գիտիցէ ոչ ըմէ յոմմէ լուցիցէ:

աշխարհս: Եւ զահի հարեալ Յուլիանոս, Թէ գուցէ այլ ինչ մեծամեծս և անպարտս խօսեացի, հրամայեաց տանել զնա, և սրով սպանանել: Եւ տուրքն և առաւել տուրքն երթայր ցնծալով, և զամենեսեան յանձն առնէր Աստուծոյ զմեծամեծս և զփոքունս, զպատուականս և զանարգս: Իսկ Յուլիանոս քանզի անագան գնաց յաստենին, զինայորդս աւուրն և զգիշերն առնոյր տրտմութեամբ հանէր յապարանս Թագաւորութեանն:

Իբրև առաւօտ եղև՝ յարեաւ վաղվաղակի եմուտ առ կայսրն՝ի պալատն. և իբրև երկիր եպաշ., հրամայեաց նմա նստել Թագաւորն, և նա եցոյց նմա զգիր աւուրքն. ապաստացն զոր առ՝ի տուրք եկեղեցւոյն Աստուծոյ, և ապա ասէ ցնա. Թէպէտ և անագան քեզի զգիրս կարասցն, այլ հաւաստեաւ գրեցի զամենայնին և յանգեցի[1], զի գիտասցեն ձեր գործք Թէ որչափ եւ կին անտի գանձս[2]. և զայն ևս գիտասջիր, զի զիսան գարկիչն Թէոտարիտոս, զոր խնդրէիր վասն ընչից եկեղեցւոյն, հազիւ արկի՚ի բուռն և սաստիկ տանջանօք տանջեցի և սրով սպանի: Յանկարծակի իբրև լուաւ կայսրն, աղաղակեաց մեծաձայն և ասէ[3]. Որ իմ կամք էին զայն արարեր. ես չանացի բազում պատճառանօք քակել զկրօնս[4] քրիստոնէից և չապանանել զոք միանգամայն սրով. դու չարիս գործեցեր, զի պատճառ եւ աւուր ժանդից Գաղիլեացւոցն՝ գրել զինէն բազում չարիս, որպէս և ընդ առաջին Թագաւորսն արարին. զի ազգէ ազգէ պատճառս յօդեցին վասն չարագործացն[5] որ կոտորեցին, զորս և վկայս ինն անուանեն, ուստի և դու պարտիս խնայել, և մի առաջի առնոյր Գաղիլեացւոց սպանանել զոք. և այլոց ամենեցուն ընդունայն առնել պատուիրէր: Եւ իբրև զայս առաց, հաւատաւ ընդ քեռին և եառ զի զամօթ հարաւ և գոյն երեսաց նորա եղծաւ, և ամենայն մարմինն իբրև մեռեալ եղև. կամեցաւ արձակել զնա. ասէ. Երթ լաւ

1. Մի օր. յանկնէդի:
2. Մի օր. գիպատոյնն յեր գէշ ընչ որսած էիքն անտի՚ն գանձս:
3. Մի օր. աղաղակ մեծ արար առ Յուլիանոս և ասէ:
4. Մի օր. ուգես կրօնս:
5. Մի օր. վասն լար գործոցն որ կոպարէցան... անուանէին... և այլոց ամենեցուն պատուէր տուր զնոյն առնել:

զկին զոհս մատուցուք, զի զաստուածպաշտութիւնն կատարեսցուք, զի կարասցես սրակել ինչ զքո և ապրել ի շարաւոյ ժանդկին։

Ասէ Յուլիանոս Թէպէտ և ի մեծի սրտմտութեան էր, սակայն յարեաւ ակամայ չոգաւ ընդ կայսերն. և իբրև գոծեցին զանապաժան գոծն, և մատուցին զոհս դիւացն, զկնի[1] լինն հաւ, որպէս ասեն ժանդագոծք Թէ ի Հնդկաց է, զլեարդն հանին, և կայծիւք խարշատեցին և մատուցին նմա ի լեարդին. և նա առ աչմօքն և ակամայ կամօք աւր Ձաշակեաց, և դնաց ի կայսերին։ Եւ իբրև չոգաւ ի վանս Հազարապետութեան իւրոյ, ոչ ուտել և ոչ ըմպել ինչ կամեցաւ, պղջայեալ ընդ չարին զոր գործեաց. և զցայգն խիթք ինչ յոտովայնին կացին, և չարաչար տանջէր զանձն, զի լեարդն՝ որ ի զոհից հուացն Ձաշակեաց, ինքեան նստաւ ի վերոյ լեարդի նորա, և մանր կոտորէր և ի տառապի[2] կացուցանէր։ Եւ իբրև այգ եղև, յիւր մէկ լեարդին ընդ բերանն ի վայր բերէր[3] և ծամէր, և զկէտն ի բաց Թքանէր, և զկէտն անդէն ի ներքս կլանէր. և բազում անգամ եղև այն ի բազում աւուրս։ Իբրև չկարէր հանդուրժել այնուհետև տանջանացն, զգացոյց կայսերն և աղաչէր զեկեղեցին քանալ, և նա անդրէն զգացոյց, Թէ՝ Փակեցեր, ասէ, և քաց։ Եւ դարձեալ զգացոյց. Վանն քո, արքայ, չարաչար տանջի՝ և կորնչիմ։ Եւ դարձեալ կայսրն անդրէն զգացոյց. Թերահաւատեցեր, ասէ, ի դէպն, և վանն այսորիկ չարչարիս այդպիսի տանջանօք։ Հէգն և Թշուառականն Յուլիանոս այլ ինչ կերակուր չէր Ձեռնհաս Ձաշակել, բայց միայն իւր լեարդն էր կերակուր, ըստ մարգարէութեան վկային և երանելոյն. և յայնր վերայ՝ որդնալից եա եղև, և ուտէին զմարմնոն նորա, և ապա ուրեմն էհան զդառնացեալ ոգին։ Իբրև լուաւ անօրէնն Թագաւորն. Երկմիտ, ասէ, եղև, աւ դէմն և ոչ հաւատաց, վասն այսորիկ կրեաց զայն։ Եւ իբրև Թաղեցին՝ գետինն ոչ ընկալաւ զնա. բազում անգամ ծածկէին, և գայլն դարձեալ ի վեր էկեալ

1. Մի օր. զսայ ֆին։
2. Մի օր. ի փափնապէ։
3. Մի օր. ի վէր ընդ բերան բերէր։

զտանէին, մինչև Թուջոց և զազանաց եղև կերակուր։

*Իսկ զոհնաւորն յետ սակաւ աւուրց ջոգաւ ՚ի Պարսատալ Չակատ. և իբրև կռուեցաւ և յաղթեաց և հանարկը Թէ այնուհետև արար և կատարեաց արուեստ Թուն ինչ, յանկարծակի երևեցան նմա զօրք հրեշտակաց. հրամայեաց վառել իւրոց զօրացն, և իբրև ընդ մարդկան ՚ի Չակատս դիմեաց երթալ, և չգիտէր հէգդն և Թշուառականն Թէ յերկինից զոհնաւորն եկեալ հասեալ է նմա. յանկարծակի ուրեմն նետ եկն յօդոցն, և հար զնա ներքոյ ստեանն. և սաստիկ արիւն վիժեաց ՚ի նմանէ, և ՚ի տապնատի կայր այնուհետև ՚ի ցաւոցն վտանգէ. և այնպէս Թուէր նմա Թէ Քրիստոս եկեալ կացցէ յանդիման նորա և պատուհասեցէ զնա. համարէր հէգդն և Թշուառականն Թէ առնամ մօտ կայցէ. և զայն չիմանայր Թէ կարող է յերկինս լինել և յերկիր ՚ի մօտոյ երևել. աւա յարենէն և յօդն ՚ի վեր ցանեաց, և աղաղակեաց և ասէ. Շատ է արդ, Քրիստոս, շատ է, յաղթեցեր. և ես՝ան զգաստ նայեալ ոչին։ Իբրև ամենայն մարգարէութիւնքն կատարեցան՝ զոր մարգարէացաւ սուրբ վիպոյն Թէոդորոս, մեք որ անդէն իսկ ՚ի պատան կայաք և իրագէտ իրացն էաք, որ ամենայն գործոյն ուշ ունէաք ածաւալին Աստուծոյ, հաստատութեամբ ՚ի վերայ հասեալ գրեցաք, և առաքեցաք առ ամենայն եղբայրս, որք Չքնարտութեամբ զհետ երթեալ էին արարչին մերոյ, զի զամենայն հաւատեաւ գիտիցէք. և զօր ծննդեան սրբոյ վիպոյն, որ է յառաջ քան զչորս կաղանդացն ապրիլն, այս ինքն արեգ առնոյ. զի ուրախութեամբ վառաւոր առնիցէք զԱստուած, և կատարիցէք զիշխատակ նորա. և ՚ի մեր վերայ որ գրեցաք՝ աղօթս առնիցէք։ Եւ օրհնութիւն և գովեստ Թուն առաքիցէք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Թէոդորոսի զինուորին Փրիատոսի։

Ընդ ժամանակս Թագաւորութեանն Մաքսիմիանոսի և Մաքսենտոսի՝ էր հալածումն մեծ քրիստոնէից, կամ դառնալ՚ի կուռցն երկրպագութիւն կամ տանջանաց և մահու մատնել. յորում ժամանակի ըմբռնեալ Թէոդորոս և ածեալ՝ հարկաւորէին զոհել և՚ի բաց կալ՚ի Քրիստոսէ։ Ետ նա լցեալ Հոգւովն սրբով, և կացեալ՚ի մէջ զօրացն՝ ասաց. Ես քրիստոնեայ եմ, և զոհել սղծոց ոչ հրամայեցայ։

Բրինկաս[1] դատաւոր սենեկապետն ասաց. Ո՛ւր դու զամենայն գինուորութիւնդ և գինեալ զոհեա առաւածոցն, և հաւանեա անյաղթ Թագաւորացն։ Թէոդորոս ասաց. Ես գինուորեալ եմ իմում Թագաւորին, և այլում գինուորել ոչ կամիմ։ Սենեկապետն ասաց. Ամենեքեան սոքա որ ընդ քեզ են Քրիստոսի՞ են գինուորեալ։ Թէոդորոս ասաց. Ներաքանչիւր որ զիտէ ումի գինուորի, բայց ես գինուորեալ եմ իմում տեառն և Թագաւորին երկնաւորի։ Պռոտոնոս[2] Դուքեհատիս մերձ կացեալ՝ ասաց. ՉիաՓղ աստուածըն քո որպէս ունի։ Թէոդորոս ասաց. Ա՛յո, ունի որպէս զբանն Ճշմարտութեան, որով զամենայնս արար։ Սենեկապետն ասաց. Եթէ ծանիցուք զնա, կարի՞ւք Թո-

1. Ալ օր. Բրինիոս։
Ալեա օր. Բրինիոս։

2. Ալ օր. Պռոտոպինոս։
Ալեա օր. Պռոտոպինիոս։

զու՛լ զմեր Թագաւորն և մերձենալ առ նա։ Թէոդո-
րա ասաց. Ոչ ինչ խափանէ զձեզ Թողուլ զիաւսար և
զառաժամնաակեաց Թագաւորս, և մերձենալ առ Ա՛ս-
տուած՝ Թագաւորն յաւիտենից, և զինուորել նմա
որպէս և եաւ։ Սենեկապետն ասաց. Թողացուցէք[1]
դմա տակաւ աւուրս, որպէս զի ինքնին խրատեալ
եկեսցէ յօդտակարն. և առեալ սրբոյն զիներուսին։
Եակ դառաւորին մոլեալ յաղագս այլոցն՝ ի խոշտան-
գանս տանջանաց և դանից, առ որս բարեբաւէր երա-
նելին՝ մի ուրանալ զԹագաւորն անմահ։

Եւ գտեալ դիպող ժամ ելոյց զառաջնոր աստուած-
ուհւոյն։ Եակ ուրուն տեսեալ[2] ամբաստան եղև զսբը-
բոյն Թէոդորոսէ. և հրամայեցին ածել յատեան գա-
տաւորին։ Եւ իբրև ածին, ասէ դատաւորն. Ա՛յ Թէո-
դորոս, ընդէ՞ր փոխանակ զոհելոյ և ինդրուկ
մատուցանելոյ աստուածուհւոյն՝ հրով այրեցեր։ Թէո-
դորա ասաց. Զոր արարի ոչ ուրանամ, զի Թերևս
խափանեսցի պաշտօն աստուածուհւոյն, յոր մոլեալ
էք ի դիւաց։ Յայնժամ հրամայեաց դան հարկանել
զերանելին և ասէ. Կակղապոյն բանքն զքեզ համոր-
ձակապոյնս արարին և յանդուգն, մինչ զի և ի տա-
ճար աստուածուհւոյն իշխեցեր մերձենալ. զժնդակ
տանջանօք այսուհետև վառնդեցից[3] զքեզ, և առից
զվրէժ աստուածուհւոյն, զի ակամայ հաւանեսցիս
պաշտօն մատուցանել աստուածուհւոյն և հնազան-
դեսցիս հրամանաց Թագաւորացն։ Պատասխանի եա
երանելին Թէոդորոս և ասէ. Ոչ գոյ ի բանս քո չըշ-
մարտութիւն[4], զի ոչ այնչափ առնուս և զօրացին
տանջանք քո, որպէս զի զոյս հանդերձելոցն հաս-
ցեն և զժուժկալութիւնս իմ՝ որ ի վերին զօրութենէն
եկեսցէ ինձ, Թէպէտ և բիւր ազգի ազգի[5] տանջանս
կազմեսցես։ Ասէ դատաւորն. Խոստովանեա զոհել
աստուածոյն և զերծիր ի տանջանացն։ Թէոդորա
ասաց. Ոչինչ են տանջանքս այսոքիկ[6], զի տուաւ ինձ

1. Մի օր. ընդացուացուք։
2. Մի օր. ի՞ն ոմն պէսպէս։
3. Մի օր. խրատիցից։
4. Մի օր. ուր է քո բանդ անսուտ
աս ճշմարտութիւնդ, զի ուրանալիք զ-
բասոյի պանջանք քո... յոյս... հաւոյնէս։
5. Մի օր. բիւրապիգի։
6. Մի օր. ուրինչ են ինչ քոյի
պանջանքս այսոքիկ։

զօրութիւն՝ ի Տեառնէ իմմէ որ կարօղն է յամենայնի։ Եւ զայս առացեալ հրամայեաց դատաւորն՝ ի բանտ արկանել, և կնքել զդուրս և անատաղ պահել զաւուրս քառասուն, մինչև անդէն մեռցի. իսկ երանելին կերակրեալ լինէր՝ ի չորհաց սուրբ Հոգւոյն։ Եւ՝ ի գիշերին յայնմիկ երևեցաւ նմա Տէր և ասէ. Քաջալերեաց, զի ես ընդ քեզ եմ յամենայնի, և պահեցի զկեանս քո անվնաս։ Իսկ երանելին երբեմն լուաւ զայս, սկսաւ ցնծալով օրհնել և սաղմոսել. Տէր, լոյս իմ և կեանք իմ, և ես յումմէ դողայցայց, և որ զկնի այսր ինէ. և ձայն բազմաց լսել լինէր ընդ երանելւոյն որ ասէին զսաղմոսն։ Եւ լուեալ զձայնն բանդապետին, և զարհուրեալ երթայր՝ ի գիշերին՝ պատմէր դատաւորին։ Եւ անդէն ելն դատաւորն հանդերձ գինւոյ և բազում գինեսուրութեան զօրօք, վասն զի համարեցաւ զօրս գալ և հանել զնա՝ ի բանդէն։ Եւ եկեալ գտին զդուրսն կնքեալ, և ձայն սաղմոսաց լսել լինէր բազմաց, և բացեալ զբանդն ոչ զոք գտին՝ բայց զերանելին նահատակն սնդեալ՝ ի կոձեղ, և ահ կալաւ զամենեսեան. և հրամայեաց ընդ առաւօտն տանել յատեանն։ Եւ սկսաւ ողբական բանիւք խօսել և ասել. Հաւատնեա ինձ և զոհեա աստուածոյն. երդուեալ աստուածոլքն զի գրեցից զքեզ տերանց տիեզերակալաց[1], վաղվաղակի քահանայապետ լինել, և պատիւ ընդունել և աթոռակից մեր եղիցիս և մեծարեսցիս յամենեցունց։ Իսկ երանելին Թէոդորոս արհամարհեալ զխոստումնն, ասէ. Պատիւք քո և պարգևք ընդ քեզ լիցին՝ ի կորուստ. ոչ խաբեսցես զծառայս Աստուծոյ. այլ և ոչ՝ ի տանջանաց քոց երկեայց, այլ Աստուծոյ իմոյ մատուցից փառս, և ոչ դիւաց. զոր ինչ կամիս արա վաղվաղակի։

Յայնժամ բարկացեալ բռնաւորն հրամայեաց կախել[2] զնա և քերել երկաթի քերչօք, զի մերկացեալ զամենայն մարմինն՝ ի բաց ընկեսցին[3] յերկիր։ Իսկ երանելին սաղմոսէր. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա՝ ի բերան իմ։ Եւ

1. Մի օր. խնդակալաց։
2. Մի օր. կոպել։
3. Մի օր. ջրկոցոցեալ։

զարմացեալ բռնաւորն՝ի վերայ ժուժկալութեան սրբ-
բոյն Թէ զինաւոր բաւէ և տևէ այսպիսի դառն տան-
ջանաց։ Իսկ երանելին կայր մեծաւ ուժով, և սկսաւ
առեալ ցբռնաւորն. Ո՞չ վաղ իսկ ասացի քեզ Թէ Քրիս-
տոս է իմ օգնական, որ տայ ինձ այժ և յաղթութիւն
յաղթել ամենայն հնարից քոց, որպէս առատանայի և
Թշնամի ամենայն արդարութեան, որ ոչ ծանեաւ զա-
րարիչն Աստուած։ Այժ բռնաւորն. Ջինչ ունիս և
կամ զինչ եղեր՝ի մեր. ընդ մեզ լինել և կալ, Թէ ընդ
Քրիստոսին քում և մեռանել։ Այժ սուրբն Թէոդորոս
Թերևս մեծաւ խնդութեամբ առ բռնաւորն. Ընդ
Քրիստոսին իմում էի և եմ և եղէց։ Իսկ իբրև եահս
բռնաւորն զինքն յաղթահարեալ՝ի նահատակէն՝
հրամայեաց հրով այրել զերանելին։ Եւ իբրև տապան
՝ի տեղի հրատին, և չար սպասաւորացն պատրաստեալ
զհուրն վաղվաղակի. իսկ երանելին հայեցաւ յեր-
կինս, և ինքեաց զինքն նշանաւ սրբոյ խաչին և սկսաւ
ասել այսպէս. Տէր Աստուած, հայր Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի, որոյ ծանեալ զչմարտութիւնն
որ առաքեցաւ՝ի քէն վասն փրկութեան ազգի մարդ-
կան. և մարմնացաւ և խաչեցաւ և Թաղեցաւ և յա-
րեաւ յաւուր երրորդի և համբարձաւ առ հայր յեր-
կինս, զի զմեզ ժողովեսցէ բանիւ քարոզութեան[1]՝ի
հաւատս ամենասրբոյ երրորդութեանն։ Եւ որք ար-
դարացան ընտրօք և մարդասիրութեամբ Տեառն
մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, նոքին և փառա-
ւոր եղեն. արդ այժմ ընկալ զիս՝ի Ձեռն հրոյս կա-
տարել զընթացս իմ, և արժանաւորեա զիս ընդ սիրե-
լիս և ընդ Ձչմարիտ վկայս ժառանգել զպատրաստեալ
՝ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարթայութիւն, և
ընդ նոսին փառս մատուցանել ամենասրբ երրոր-
դութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և
յաւիտեանս. ամէն։

Եւ հայեցեալ եահս՝ի բազմութեանն զՎղենիկոս զի
արտասուէր, որ էր զինուորակից նորա. աղաղակեաց
առ նա. Ձեռնէա զինի իմ առ Թագաւորն երկնաւոր,
զի որպէս առժամանակեայ կենօքս կեցար առ մի-

1. Մի օր. աւետարանական քարոզութեամբն։

ժեանս, կեցցուք և սիրալ Հոգւոյն, և զյաւիտեանական միաբան վայելեցուք ի փառս Աստուծոյ: Եւ զայս ասացեալ, առ. Քրիստոս յոյս և ապաւէն յուսացեալք ի քեզ, տուր ընտրհս ոգևրմութեան այնպիսի ոյք ըմբռնեցան ընդ իս՝ ընտիրք պահել ի ձշմարտութեան հաւատոս որ ծանուցաւ ի քէն, և կատարել զնթացս իմ բարի խոստովանութեամբ և արժանաւորել եղիկնից ալքայութեանն: Եւ անդէն սպասաւորք աստուածհուոյն իբրև վրէժխնդիրք՝ կապեցին զերանելին Թէոդորոս և ընկեցին ի հնոցն կապմեալ. զի հրամանն թագաւորին սաստկանայր և հնոցն բորբոքեր առաւել: Եւ էր սուրբն ի մէջ հնոցին լուսաւորառաւել քան զհրոյն լոյս. և լուեալ բարբառ որ ասէր. Տէր Յիսուս, ընկալ զոգի իմ՝ ի հօտ անուշից: Եւ տեսին ոյոց արժան էր տեսանել իբրև զլոյս ի հնոցէն ի վեր յերկինս բարձրացեալ զհոգի սրբոյն: Եւ եղև աւ ի վերայ ամենեցուն, և տային օրհնութիւն Աստուծոյ:

Բարեպաշտուհի ոմն բարեպաշտութեամբ լցեալ բարի անուն, խնդրեաց զմարմին երանելոյն Թէոդորոսի, և իւղով և խնկով անուշիւք կազմեալ եդ ի տապանի. և տարեալ ի գիւղն որ կոչի Եւխայիտա մերձ ի քաղաքն Անաստիա, և եդ ի հանդստեան մեծաւ պատուով և զգուշութեամբ: Եւ կատարեն զկենցաղական սրբոյն Թէոդորոսի ի փառս ամենասուրբ Երրորդութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Վկայաբանութիւն Սրբոյն Թէոդորոսի Տիրոնացւոյ

Քրիստոսասէրն և առատաբուղխ ողորմութեան ընտիք Հոգւոյն սրբոյ՝ զոր միշտ և հանապազ ըստ ի-ւրաքանչիւր ժամանակի առատաձեռնեալ տնօրինէ յեկեղեցիս իւր, զոր հաստատեաց ՚ի վերայ առաքե-լական վիմի հաւատոյ, և կանգնեաց անյողդողդ ՚ի յեօթանց սեանց, և ոչ երբեք նուազեցուցանէ կամ պակասեցուցանէ առ իւր ստեղծեալքս, մանաւանդ առ այնք որք ՚ի սկզբանէ հաձոյացան կամաց նորա և կատարիչք եղեն խորհրդոց նորին. և հաստատապէս առնէ նշանս և սքանչելիս յաւուրս և ՚ի գարս և ՚ի ժամանակս հանապազօր. որով և արար ՚ի սկզբանէ և առնելոց է մինչև ՚ի գալուստ իւրոյ տէրութեանն, որ պէս և երևեցոյց ՚ի գարուց գարս որք են գծագրեալք և ձևացեալք ՚ի տառս աստուածայինս։ Սրդ ՚ի գալ բանին Աստուծոյ և ՚ի ծագել առ մեզ արեգականն արդարութեան, որ և զինեն ՚ի մեզ Թագաւորելոց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յորժամ ՚ի մարմին թանձրացեալ անմարմինն Աստուած՝ ինքնայօժար կամօք առ ՚ի մեռս կենդանաւորիւր բնութիւն, ըստ մարգարէին, զառ և որով ՚ի մեզաց. և յետ չարչարա-նաց նորա նորին և աշխարհակեցոյց յարութեանն և նո-րահրաշ համբարձմանն կատարելոյ առ աստըս և սի-րելս անուանն իւրոյ, և առ վկայս իւրոյ մարմնաւոր-ութեանն, որք արիաբար յօժարութեամբ

*բարձին զիսաչս խաչելոյն և ընթացեալք զհետ կոչեցին ձայնի եղեն խաչակից Որդւոյն Աստուծոյ։ Բանի՛ զի՛ բացուստ զիտամբ տեսանելով զփառս Քանիին և զբարեբաստուԹիւն խաստացեալ անհատ պարգեւին, զանասելն զերեցկուԹիւնն, զանծերանալն կեանան, զանտրտում ուրախուԹիւնն, զանԹառամ պսակին և որ սոցին նման, զոր և ոչ ոք՛ի մտաւորաց զինել կարեսցէ և կամ բանիւ ընդ Թուով արիանել զհամար վիպերին. որք կամաւ և առաքինասջան նահատակուԹեամբ հասին աւետեացն Հոր, երանելի յոտոյն ակն ունելով՝ անձամբ զանձինս՛ի խաչ հանին կարեօք և ցանկուԹեամբ հանդերձ. կրելով յինքեանս ըստ Առաքելոյ՝ զբազմապան և զյոքնակի կիրս չարչարանաց, համբերելով նեղուԹեանց և վհատաց, քաղցոյ և ծարաւոյ, ցրտոյ և մերկուԹեան, զերարանաց և հապանաց, ստանալով զյաւիտենական կեանն, պսակել՛ի Հօրէն լուսոյ և ժառանգելով զանտրտում ուրախուԹիւնն։

Այդ՛ի սոյն իսկ ժամանակի, և ընդ նուաղել ջերջաբերուԹեան կենցաղոյս, ՛ի յետնել աւուրցս՛ի ժամանակս վերջինս, եղև նշանս և սքանչելիքս այս՛ի մէջ մերում. զոր եԹէ կամեցեալ նախախնամուԹեանն Աստուծոյ ծաղկաձև պսակել սուրբ զեկեղեցի և զբաւարձանել զմանկունս նոր Սիովնի, և բարձրացուցանել զերջին սուրբ եկեղեցւոյ. զոր տեսանելով վարատեցելոցն և յերկուացելոցն՛ի հօտէն Քրիստոսի՝ զարԹիցեն՛ի մահաճանգիստ քնոյն, զղջացին և՛ի գիտուԹիւն ճշմարտուԹեան եկեսցեն. աւետարանական գաւանմամբ հաստատեսցին՛ի հաւատս սուրբս և՛ի խաստովանուԹիւն սրբոյ ԵրրորդուԹեանն։ Եւ այս գործել՛ի բառնալ արդարոյ և ընդ վերանալ ընտրելոյ Աստուծոյ, և ընդ սերանալ և՛ի քաղմանալ ազգի ազգի չարեաց՛ի վերայ երկրի զոր սերմանեաց չար որոմանցն սերմանողն որդին կորստեան և մշակն անօրինուԹեան։

Ընդ ժամանակս բռնակալուԹեան մեծի արքային Տաճկաստանի Սուլտան Եահ Սուլտան Ռուգնատինին, որ բազում հանդիպ քաջուԹեան և յաղԹուԹեան պատերազմի ցուցեալ յաւուրս ժամանակայ իւրոյ, և

յաչս յոքունց մեծարեալ ահ արկանելով ամենայն թագաւորաց տիեզերաց։ Սա որդի գոլով մեծ և յաղթ թող ինքնակալ Խլիճ Ասլան Սուլտանին. ուստի գրաւեալ սորա ընդ իշխանութեամբ տէրութեանն իւրոյ զկողմանս հիւսիսոյ, սկսեալ՝ ի կեսարացւոց մայրաքաղաքէն մինչև՝ ի մեծն Բիւզանդիոն, որ այժմ կոչի Կոստանդինուպոլիս, ունելով ընդ իշխանութեամբ զՊոնտոս և զԱբբասիա և զամենայն Ջերմենատացւոց և զՏրապիզոնատացւոց զտէրութիւնն. և հասեալ մինչև՝ ի մեծ և՝ ի հռչակաւոր քաղաքն Թէոդուպոլիս՝ որ կոչի Կարնոյ քաղաք, նուաճեաց ընդ գաւազանաւ զնկեղեաց և զԴարանաղեաց, արկ ընդ ձեռամբ զԽաչն Ծուխաց, փութացաւ մինչև՝ ի լայնանիստ քաղաքն Մելիտենի, մերձ՝ի սահմանն Եդեսացւոց. հանդարձակեցայց ասել թէ և զամենայն աշխարհն, տիրեալ՝ ի վերայ ամենայն հայրենական աշխարհաց իւրոց։ Եւ արդ այսոցիկ այսպէս եղելոց, յաւուրս սորա յերկրորդումն ամի տէրութեան իւրոյ յայտնեցաւ մեծ և սքանչելի, պանծալի և հռչակաւոր վիպայն Գլխատոսի, երանեալ նահատակին տեառն Թէոդորոս։

Սա ծնեալ լինէր՝ ի գաւառի Գամրոց՝ յաշխարհն Կապադովկացւոց, ՚ի քաղաքին Կեսարացւոց, որ է առ Թուռ Հայրապետական և Թագաւորական, և ամենայն քաղաքաց Յունաց գահերիցապոյն, յոքունս ունելով յինքեան արեգակունս՝ զՀոյլս վիպային սրբոց, որ Յառնորդաբար լուսավսպծառացուցանեն զեկեղեցիս քրիստոնէից. զՄերկիւռեոս առեմ և զԳորդիոս, և զմեծն Բասիլիոս. առ որս մի՚ ի նոցանէ է տեսանել զյոքնեղանեան վիպայն Գլխատոսի զտեառնէն Թէոդորոս. որպ՚ի Գլխատոսէ Աստուծոյ մերոյ օրհնեալ նախասացեալ քաղաքն Կեսարիա՝ որ զայսպիսի Ջահունս և զարեգակունս մտուցանէր։ Բայց՚ի հանդիպս պատմութեան եկեալք քաջ և յաղթող վիպայիս, և զտրայս քաղաքաւարութիւն դրուատական բանիւք պանծալի երևեցուսցուք. այլ դուք մարթեցէք զլսելիս յունկնդրութիւն համբերատար ժուժկալութեան սրբոյ նահատակին։ Արդ սա որ այնքան երանութեան արժանաւորեալ, ՚ի տղայական տիոց և՚ի մայրական խանձարուց հրահանգեալ և կրթեալ օրինօք և մարգարէ-

*իւք և աւետարանական կամաւքն մնալ՝ ըստ ընդ-
հաց սրբոյ աւազանին, զարդանալով ըստ ամենայն հա-
սակի մինչև յարբունս էրիտասարդութեան հասեալ,
գնալով յօրէնս Տեառն և խոկալով՝ ի պատուիրանս
նորա՝ ի տուէ և՝ ի գիշերի. և ապա ըստ սարաւոյ հա-
սարակաց քնութեանս զուգաւորի պարկեշտ ամուս-
նութեամբ, ներգործելով արուեստս ինչ զոր առնէր՝
այնու հատուցանել վճարին զսակս կենաց իւրեանց,
ըստ մարգարէին, թէ՝ Ձվաստակս ձեռաց քոց կերու-
ցեա: Այսպա՝ ի միտս եղեալ երանելոյն՝ ի հնարս մտա-
նէր թէ զիարդ և կամ որով աղագաւ կարասցէ զաղ
քատութիւն մարմնոյն՝ ի դերև կացուցանել[1], ըստ սո-
վորութեան քնութեանս յառաջիկայն հակամիտէր:
Բայց է աղքատութիւն որ պարտնակեալ ունի յին-
քեան բազմապատիկ փարթամութիւն, և է փարթամու-
թիւն որ ունի յինքեան զնորին հակառակն, թուի թէ
մի գոլով սա յայնց աղքատացելոյն՝ զոր աստուա-
ծեանն բան յաշխարհակեցոյց քարոզութեանն երա-
նելոյն բանին արժանացոյց ասելով. Երանի աղքա-
տաց հոգւով:

Սա երթեալ առ մի ոմն՝ ի քաղաքացեացն ասելով.
Տուր ինձ փոխ դահեկանս ոսկւոյ և արծաթոյ, օգնա-
կան լինելով իմոյ թշուառութեանս. իսկ նա յօժա-
րութեամբ ետ նմա որչափ խնդրեաց ինչ՝ ի նմանէ.
և առեալ նորա գնաց և անդ վատնեաց, որպէս ինձ
թուի, թէ զանցաւորս վաճառեաց զարքայութեանն
սահմանալով զանդ երանութիւնն, զդրախտին վայե-
լութիւնն, զդրգանս դոզոյ հայրապետին Աբրահամու:
Ո՛վ հրաշից. ոսկին առ հողն խոնարհէր, և որ բար-
ձեալն էր զգանձն անմահական՝ առ այն որ ունէր
զդոյս ապականացու: Եւ իբրև մերձեցաւ ժամանակ
հատուցանելոյ զարիտուր փոխարինին՝ զոր նա ոչ ու-
նէր հատուցանել, և որ պարտոյ տէրն էր՝ նեղէր կե-
ղէր զարձուցանել անդրէն զպարտան. և նա ոչ կարէր:
Սպա առեալ տանէր առ դատաւոր քաղաքին, որ էր
կարգեալ արքունական հրամանաւ դատել և իրաւա-
րար՝ ի վերայ ամենայն գաւառացն: Եւ իբրև յուղէ

1. Յոր. ԺԲ.ԻԹ:

անկեալ գնացին՝ պատմեաց զկրօն առուգաւիս ներ-
հանին գաւառսն, և նա հրամայեաց ամենայն իրօք
հաստուցանել անդրէն զգաւառն։ Եւ իբրև եկին յեր-
սաց գաւառսն՝ կալեալ զնա չար ծառայակցին նե-
ղէր զնա խեղդելով. իսկ Թէոդորոս զերծեալ՝ի ձե-
ռաց նորա դարձեալ միւսանգամ անկանէր յապա-
տանս գաւառսն. և անդադար ուրանայր զքրիստո-
նէական հաւատն զոր ունէր, և ձոլսպրեալ զերծա-
նէր առ ժամայն յառնէն որ նեղէր զնա։ Ապա այնու-
հետև գնացեալ՝ի յարկս իւր և նոյնժամայն ուշաբե-
րեալ յինէաց զառերանական բանն որ ասէ, Թէ՝ Ով
ուրացի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա
առաջի Հօրն իմոյ և հրեշտակաց սրբոց։ Խորհուրդս
բարւոք զմտաւ ածելով՝ ստրջացեալ սիրապէս և՝ի
զղջումն եկեալ հաւատացապէս, անկանէր՝ի վերայ ե-
րեսաց իւրոց յերկիր, լայր դառնապէս և արտասուէր
ողորմաբար, ապաշաւելով զկորուստ անձին իւրոյ. և
եկեալ՝ի զարհուրումն՝ շքեղանայր զինք երեսաց նորա
որպէս երանեալ և քաջ վկայն Քրիստոսի սուրբն
Յակովբիկ, որ կատարեցաւ արեամբ՝ի փառս Ա-
ստուծոյ։

Յարուցեալ այնուհետև խոյս ետ՝ի սեզբոջէ անտի,
յուղի անկեալ գնաց՝ի քաղաքիկ մի փոքրիկ՝ որ էր
մերձ՝ի սահմանս Յունաց, որ ըստ հայկական անուա-
նաբար սիզոբայինն կոչի Շնորհաւոր, և ըստ նմանակ-
լեան խոհուածոյ լեզուին Խրիշահր. և անդադար
զսեղն առեալ գնահիէր, ի ծածուկ ունելով զհաւա-
տըն հայրենատուր և ամբիծ որ առ Քրիստոս. և անդ
կացեալ ապաշխարէր մեծաւ զղջմամբ։ Յայնժամ՝ի
սաղմոսէ չարչին և՝ի հակառակութենէ չար կամաց
բանսարկուին՝ որ հանապազ մատանչէ ընդ որդիս մարդ-
կան, յարուցանէր՝ի վերայ նորա փորձութիւնս։ Ա-
մի՝ի քաղաքէն կեսարու՝ի դասուց անօրինացն՝ գը-
նացեալ՝ի նախասացեալ քաղաքն յայն, և հանդիպե-
ցաւ պատահեալ մեծին այնորիկ և ցանկալի առն
Աստուծոյ, և՝ի տեսլենէն ծանեաւ զինա, և ըմբռնեալ
զամենելջանիկ վկայն Քրիստոսի խօսել սկսաւ և ասէ
ցնա. Ո՞չ դու այն ես որ ուրացար զՔրիստոսն քո և
՝ի բաց կացեր՝ի չհամարտութենէ անտի նորա, և եղեր

ուրացոյլ և պաշտօնատար մերոց օրինացն. և այժմ տեսանեմ զքեզ զի ունիս զառաջինն հաւատոն և ըզկարզան քրիստոնէից, և պատուես զնա յօժարու-Թեամբ, ուրանալով զմեր կրօնսն և քամահելով զնա ետուն յոր սկսաւն: Գանգի լուեալ էին զդարձ սըրտոյն և ոչ գիտէին Թէ ուր նոյն՝ զի կալցեն և սպանցեն զնա: Իսկ անպարտեալն վկայն Քրիստոսի աներ-կիւղ հաստատուԹեամբ խոստովան եղև զՀշմարտու-Թիւնն և ոչ ուրացաւ, ասելով յայտնապէս. Ա՛յո, ես եմ որ խաբէուԹեամբ չարին պարտեցայ և յանցաւոր գտայ առ Տէրն իմ Յիսուս Քրիստոս, որ է արարիչ երկնի և երկրի երևելեացդ և աներևուԹից, որ միայն ունի զանմահուԹիւն բնակեալ ՚ի լոյս անմատոյց. պիսպրդ ուրանայի զնա որով Հանդիսէի զնա յորովայնէ մօր իմոյ. զնա միայն պաշտեմ և նմա երկրպագեմ ՚ի մանկուԹենէ իմմէ. բայց այժմ զղջացեալ ծանեայ զՀշմարտուԹիւնն և դարձայ ունել զՀաւատն իմ որ առնա: Յայնժամ սրտմտուԹեամբ և բարկուԹեամբ յաստուցեալ այրն այն՝ ոչ կամեցաւ Թողուլ զնա, այլ անդէն ըմբռնեալ տանէր զնա եպերանօք առ զօրա-գլուխ քաղաքին, որ արքունական հրամանաւ ընկա-լեալ ունէր զվերակացուԹիւն քաղաքին, և պատ-ուաց նմա զամենայնն: Զայս իբրև լուաւ քաղաքա-պետն այն՝ բարկացեալ հրամայեաց ձաղածանակ առ-նել և ըմբէացուցանել զնա արհամարհանօք և անար-գանօք ընդ փողոց քաղաքին ՚ի տես ամենայն ռամկին: Իսկ սուրբ վկայն Քրիստոսի զայն ամե-նայն ինքեան փառս և պատիւ համարեալ՝ տանէր ժուժկալուԹեամբ: Յայնժամ բարկացեալ բռնա-ւորն հրամայեաց արկանել զսուրբն ՚ի բանդի ա-ւուրս ինչ:

Իսկ յետ աւուրցն անցանելոյ հանեալ տայր ՚ի ձեռս դահձացն տանջել զերանելին. և զինի չարչարանացն հրամայեաց կախանօք և զառն նեղուԹեամբ խո-ղացուցանել ՚ի քաղաքն Կեսարիա առ ծով ալեաց: Եւ յորժամ մուծին ՚ի քաղաքն՝ նոյնժամայն արկին ՚ի բանդ զերանելին: Իսկ ՚ի վաղուեան աւուրն ՚ի ծա-գել արեգականն՝ ընծայեալ պատմեցին ալեաց-նին զանցս սրբոյ վկային. իսկ նա իբրև լուաւ հրամայեաց

փոյթ ընդ փոյթ ածել զառաջեաւ. և՝ի մոռանել սըր-
բոյն Հայեցաւ՝ի նա ալքսին մեծաւ ցաւմամբ, և ասէ
ցնա. Ա՛յր դո՛ւ, յիրաւի ասեն զքէն եթէ տաճիկ եղեր,
և այժմ յետս դարձեալ՝ ունիս զկարգս և զաղանդս
քրիստոնէից, և պատուես զօրէնս Աստուածոյ,
պաշտես զաստուած զոմն զոր Յիսուս անուանեն, որ
յինքեան ազգէն չարչարեալ և խաչեալ՝ մեռանէր ըզ-
չարատարծաց մահն, և զմեզ պէն Թողեալ քամա-
հեա արհամարհանօք. արդ հրամայեմ քեզ առանց ա-
մենայն պատճառի ունել զմեզս սահմանեալ կրօնս, և
Թողուլ զնոսոն և զընդունայն կարգ քրիստոնէից:

Յայնժամ անպարտելի վկայն Քրիստոսի մեծաւ համ-
արձակութեամբ եբաց զշնորհալից բերանն՝ ասելով.
Ես, ով Թագաւոր, քրիստոնեայ եմ և ծառայ Քրիս-
տոսի, այլ և՝ի զաւակէ քրիստոնէից, և ոչ երբեք ա-
րեք լսայ եթէ եղեալ է յազգատոհմի իմում՝ի մա-
մունդ յայդմիկ յորում դուդ ասացեր, և ոչ ես եղէց
յաւետեան. այլ միոյն միայն Աստուծոյն իմոյ Յիսուսի
Քրիստոսի՝ որ մեռաւն վասն մեր և մահուամբն իւրով
կենդանացոյց զազգս մարդկան: Ա՛րդ՝ի սկզբանէ՝ի
նա եմք հաւատացեալ, և ազգաց յազգս գնա ունիմք
փրկիչ և կեցուցիչ. նմա պարտ է ծառայել և նմին
միայն գոհանել հպատակ. մի և մի լոյսն ուրանալ ինձ
զՏէրն իմ և զԱստուածն Հնմարիտ՝ որ է տէր կենաց
և մահու: Կրկնեաց դարձեալ ալքսին և ասէ ցսուր-
բըն. Մի այդպէս կայցես՝ի նմին յանդգնութեան և
ընդդիմանալ իմոց հրամանացս, ապա Թէ ոչ՝ քա-
րամբք քարկոծ հրամայեմ առնել զքեզ և բառնալ՝ի
քաղցր կենացս: Պատասխանի ետ սուրբն Աստուծոյ
և ասէ. Գիտեա այսուհետև, ով ալքայ, զի ես ոչ եմ
եղեալ՝ի մոի իմում երկնչել՝ի սպառնալեաց քոց, և
ոչ ունիմ խորհուրդ և առաջարկութիւն կամաց ուրա-
նալ զՔրիստոս իմ, և լինել պաշտօնեասար սուտա-
պատիր և խաբեբայ կրօնիցն ձերոց. այլ պատրաստ
եմ յօժարական[1] կամօք յանձն առնուլ զչարչարանս
և զնեղութիւնս վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի, որ վասն իմ յանձն առ զչարչարանս խաչի

1. Յօր. յաւժարական:

և մահու. արդ մի յապաղեր, այլ զոր ինչ առնելոց
ես արա վաղվաղակի։

Եւ մինուեալ ալքսային հրամայեաց բռամբք հարկանել զբերան սրբոյ վկային այնքան, մինչև Թաւիել առաքինոյն՝ ի ընդաց նորա. և ետ տանել զնա առ դատաւորն ասելով. Պննեա զդա որպէս և կամիս՝ Թէ յոմէ ազգէ է, և վարեսցիս ընդ դմա ըստ հաճոյից քոց։ Իսկ նոքա առեալ տարան զնա ըստ հրամանի ինքնակալին. և՝ ի մտանելն նորա առ դատաւորն՝ ծանեաւ զնա վաղվաղակի և ասէ. Ո՞չ դու էիր որ երբեմն եկիր առաջի իմ և ուրացար զՔրիստոսն քո և զհաւատսն հայրենի, և այնր աղագաւ ազատեցար յառնէն յայնմանէ՝ որում պարտէիր զանակ դահեկանացն. և ես ընկալայ զքեզ որպէս զորդի հարազատ և զեղբայր սիրելի, և պատուեալ մեծարեցի արձակելով զքեզ. արդ ուստի գաս, և զինչ է զոր լսեմն զքէն, չէմարիմ են եթէ տուտ, աստ վաղվաղակի, քանզի՝ ի քէն կամիմ ուսանել զվիարդն։ Իսկ սքանչելի այրն Աստուծոյ և մեծ վկայն Քրիստոսի բարձր ձայնիւ սկսաւ առաջի բազմամբոխ հրապարակին և յոքնատումբ ռամկին աղաղակեաց համարձակապէս լի արտասուօք՝ ի լուր ամենեցուն, և ասէ. Քրիստոնեայ եմ ըստ հնարիւ աւազանին և ծառայ խաչելոյն Աստուծոյ. և արդ ով լեցի ինձ ուրանալ զնա, այլ խոստովանիմ զնա Աստուած և տէր և թագաւոր, իշխան և փրկիչ, և յանձն առնում զամենայն հարուածս տանջանաց վասն ամենասուրբ անուան նորա. այլ և խնդութեամբ մեռանիմ՝ վի կացից առաջի նորա զուարթ երեսօք. զի Թէպէտ և յանցաւոր գտայ առ Տէրն իմ յառաջադոյն առաջի քոյոյդ առնէն, այլ յուսամ և ակն ունիմ գտանել և առնուլ՝ ի նմանէ զԹողութիւն յանցանաց՝ ի ձեռն հեղման արեան իմոյ. ահա լուար, ով դատաւոր, զամենայն յինէն ճշմարտութեամբ։

Եւ պատասխանի դատաւորն և ասէ ցնա. Որդեակ իմ, մի ընդդիմանար խրատու իմոյ, յիշեա զդաշինս ուխտին զոր հաստատեցեր առաջի իմոյ առնէն. ես վերատուն ընկալայց զքեզ և տայ քեզ դանձս ոսկւոյ և արծաթոյ՝ առ՝ ի բաւականութիւն պիտոյից կենաց անձին քումմ, և պատուեալ մեծարեցից յամենե-

ցունդ ՚ի մէնջ ՚ի մեծամեծաց և ՚ի փոքունց, և լինիս
երևելի ՚ի դրան արքունի. որովհետև ընծայեցեր զքեզ
միոյն Աստուծոյ, և կամօք քո ուրացար զանուն քրիս-
տոնէութեան՝ մերոյս անսասլուլ կրօնից. արդ որդեակ,
մի փոխելանար և փոխիր յայնմ բարւոյ խորհրդոյն,
մատնելով ՚ի կորուստ զհաստակ մանկութեան քո:
Ջայս և որ սոցին նման բանս պատրոզականս խօսէր
դատաւորն ՚ի լսելիս սրբոյ վկային, կարծելով հաւա-
նեցուցանել զնա. իսկ ամենապուլ սուրբն խոցեալ զա-
կանջս իւր՝ ամենևին ոչ ընդունէր զասացեալսն առ ՚ի
նմանէ, այլ միայն համարձակաձայն բարբառեալ ա-
ձէր. Ո՛հ դատաւոր, խոստանալով ինձ ոսկի և արծաթ
և մեծարանս և պատիւ ընդունել յարքունուստ, այ-
դուիկ կամելով հաւանեցուցանել զիս քոյին կորստա-
կան և ստոտապատիր բանիցդ, Թողուլ զիս հարկե-
ցուցանես զձանապարհն ուղիղ՝ որ տանի ՚ի կեանն
յաւիտենից, ուր գանձն անապական է և արքայու-
Թիւնն անվախճան, և լսել քոյին մոլար խրատու.
վասն որոյ և ես իսկ արտասուեմ զկորուստ անձանց
ձերոց, և զնաւար կուրութեան իմանալն աչաց ձե-
րոց. ուստի ճար և պահ ձեզ հուրն անշէջ և որդն
անքուն, որպէս ասաց Տէրն: Յայնժամ դարձեալ վը-
կայն ոյժ առեալ ՚ի Հոգւոյն սրբոյ՝ երկմտեալ կամե-
ցաւ հաստատել զբանն, և ասէ. Երդուեալ իմ յեր-
կինս և յերկիրն և յարտարէջ նոցին և ՚ի հաստիչ, զի
որպէս ոչ է նոցա հնար երանել ընդ կարգս սահմանի
իւրեանց, նմանապէս և ես ոչ ևս եմ փոխելոց յինոց
բարւոք խորհրդածութեանց. արդ զոր ինչ առնելոց
ես արա վաղվաղակի, զի ես պատրաստ եմ ՚ի մեռա-
նել որպէս ասացի: Եւ անդարձիշտ դատաւորն լեալ
ցասմամբ, ետ զնա ՚ի ձեռս չարագործ դահձացն հարկա-
նել և տանջել զնա յերկար: Իսկ սպասաւորք չարին
գանեալ քարամբք զկզակս նորա, մինչև ջաղջախեալ
խորտակեցան մօրուք երեսանց նորա, առ որս վարդա-
պետակ արիւնն կայլակացեալ հոսանօք ոռոգանէր
զերկիրն. և անկեալ կայր առաջի նոցա իբրև զմե-
ռեալ: Իսկ նոցա մերկացեալ ՚ի նմանէ զհանդերձիկն
զոր ունէր, և առիպածեալ սրբոյն՝ տանէին ՚ի բանտն
և պահէին զդուշութեամբ: Իսկ երանելի վկայն

Գրիգորոսի մատանեւոյ՝ ի բանդն՝ զաւետեաց գիշերն հանէր՝ ի գլուխ յաղօթից Աստուծոյ, բերկրալից սրբութիւն և անպատում ուրախութեամբ գոհանայր՝ ի վերոյ անպատում պարգեւացն Աստուծոյ, որ արժանի արար չարչարիլ վասն նորա. ցնծայր և օրհնէր զԱստուած. և այնպէս կայր բազում չարչարանօք՝ ի խաւարչին բանդին զօրէն վեհոյի յառապատի։ Եւ երբեմն այպ եղև, ածեալ լինէր զառաջեաւ տեսլեան հանդերձ կապանօք առաջի դատաւորին յասպարանս նորա. խնդ դատաւորն իբրև եառես զբարեյաղթ վկայն Գրիգորոսի՝ խօսել սկսաւ ցնա և ասէ. Ինաստնացար, որպեսզի իմ Թէոդորէ. այժմ գիտեմ զի փոխեալ ես՝ ի չար խորհրդոցն զոր ունէիր՝ ի յանցեալսն աւուրսն. ահա տեսանեմ, Թէ սրչափ դժուարին է նեղութիւնք մարմնոյ կամ երկիւղ մահու, վասն որոյ և ես խնդ ապաշաւեմ զերծանեան աւուրսն զոր սրտմտութեամբ և բարկութեամբ յանցեայ առ քեզ. և այժմ ամաչեմ՝ ի քէն, և աղաչեմ խնդրեմ Թողուլ հայրական ախտացս զոմանչանն՝ զոր առ քեզ ներգործեցի. յաղթեալ՝ ի ցասմանէ սրտիս ոչ կարացի համբերել քոյոց ախտից և տղայական բարուցդ և երիտասարդական հանդարձակութեանդ։ Արդ՝ ի քոց գիտես այժմ առ՝ ի քէն զոմանչիմ և զանօգուտ կամին՝ զոր ընկալար՝ ի ձեռն խրատու քրիստոնէից, քանզի գիտեմ ես ամենայն իրօք Թէ նորա հրապուրեցին զքեզ կամ հակառակ մերոց կրօնից. արդ լուր ինձ և դարձ վերատին և վայելեացես՝ ի բազում բարութիւնս՝ ի կեանս աշխարհիս այսորիկ. և ոչ միայն այս, այլ լոյս հաճոյացեալ յաչս ամենեցուն և սիրեցեալ՝ ի դուն արքունի. ահա առայի քեզ մեղմով զամենայն, քայց զօգուտ անձին քո դու քեզին ընտրեացես։

Իսկ երանելի վկայն Քրիստոսի ասէ ցդատաւորն. Նուաց զառացեալդ առ՝ ի քէն զանօգուտակարդ իմ և զանպիտանդ, որ առ ժամանակ մի է և ապա փուլ եղուլ լուծանի. մի արդեօք ոչ լուար դու ինձն առաջի քո և ամենայն առեներ երկիւղ յանցեալսն աւուրսն, պակաս երդուայ Աստուծով խնդել, ոչ փոխել՝ ի հաստատուն յուսոյն խնդ զոր ունիմ առ Քրիստոս՝ ի մանկութենէ խնդ. ապա եթէ մուսայեալ խոկ է քո,

*պարձեալ կրկնեմ և երեքկնեմ և զսոյն ածեմ՝ ի յիւ
շատակ անդադարեալ և յօժարական կամաւք, զի հաւա-
տըն իմ և յոյսն զոր ունիմ առ Տէրն իմ՝ անխախտելի
է և հաստատուն. զի դիւրին է շարժել կամ փոփո-
խել լերինս քարձրացեալս՝ որ կայ հանդէպ մեր, քան
Թէ յիմոց մտացս փոխոխել և կամ՝ ի բաց կալ՝ ի հա-
ւատոյս և՝ ի յուսոյն որ առ Քրիստոս. արդ դու որ-
պէս և կամիս արագապէս կատարեա զկամս հրամա-
նաց քոց՝ ի վերայ իմ: Եւ նոյնժամայն բարձր ձայնիւ
գոչեաց փառաւոր և սքանչելի վկայն Քրիստոսի՝ ի լուր
ամենեցուն և ասէ. Քրիստոս Որդի Աստուծոյ, որ՝ ի
հայրական ծոցոյ խոնարհեցար առ ազգս մարդկան և
առեր մարմին՝ ի սրբոյ Կուսէն, ծնար անճառապէս և
առանց արատոյ. և զկանխատեսութիւնն մարգարէիցն
կատարեալով եկիր՝ ի Յորդանան, գառնդ Աստուծոյ՝ որ
բառնաս զմեղս աշխարհի, և նոյնժամայն տեսեալ ցե-
լեալ զերկինս մեծի Կարապետին քո, և Հոգին Աս-
տուծոյ զի լիջանէր՝ ի վերայ փառակցիդ իւրոյ. որ զա-
մենայն յանձն առեր վասն մեր բայց՝ ի մեղաց, և խա-
չիւ և արեամբ ազատեցեր զմեզ՝ ի ծառայութենէ
մեղաց. խոստովանիմ զքեզ Աստուած կատարեալ, մի
յերրորդութենէդ, համագոյակից և փառակից, պա-
տուակից և իշխանակից Հօր և Հոգւոյդ սրբոյ. խոստո-
վանեա և զիս, Տէր, առաջի Հօր քոյ և հրեշտակաց
սրբոց, որպէս խոստացեր. մի յամարժանութենէն իմ
հայեցիս, այլ գթա յիս, և մի անտես առներ զծա-
ռայս քո. և կատարեա զընծայս իմ ըստ կամաց քոց
բարեսիրաց, զի դու միայն ես փառաց և պատուոյ ար-
ժանի. և քեզ փառք յաւիտեանս. ամէն:*

*Իսկ անօրէնն գատաւորն ևս առաւել լցեալ սրտ-
մտութեամբ և բարկութեամբ՝ յարձակեաց՝ ի վերայ
սրբոյն զպատասուորն անօրինութեան, և անտանելի
տանջանօք չարչարէին զամենելջանիկ նահատակն
Քրիստոսի, մինչև բազմաց իսկ ասել Թէ մեռաւ. և
քարշեալ ընդ փողոցամէջ քաղաքին՝ ունելով զհերսից
գլխոյ, և տարեալ ընկենուին զնա՝ ի բանդին. որ և անդ
լինէր զառուս երիս: Իսկ երանեալ վկայն կոչեցեալ
զայր ոմն քահանայ Հնմարտահոս և իրաւաբան բարե-
պաշտօն և երկիւղած Աստուծոյ, որում անուն էր*

Գէորգէոս, որ իբրև լուաւ՝ յօժարական կամօք եկն առ
նա. և ասէ ստուգեն. Ո՛հ տէր իմ Գէորգէոս, յարու-
ցեալ երթայցես ի վանսն հայրապետին մերոյ, առ ե-
պիսկոպոսապետն և տէրն իմ Աստանիոս, և պատմես-
ցես նմա զամենայն անցս աղետից և զկիրս չարչարա-
նաց անձին իմոյ. և աղաչեա զնա աղօթս առնել ի վե-
րայ իմ, թերևս արժանի եղէց առնուլ յանձն զմար-
տիրոսական նահատակութիւնն: Եւ ապա ողջունեալք
ի միմեանց՝ առաքեաց զքահանային, և ինքն անդէն
յարուցեալ կայր յաղօթս. իսկ նախասացեալ քահա-
նայն եկեալ փութանակի առ կաթուղիկոսն Հայոց՝
պատմեաց նմա զամենայն իրսն ստուգութեամբ: Իսկ
նա լսեալ ընծայ ինչ բուսոյ բարւոյն և լսեալ առաքինութեանցն
կամացն զոր ունէր առ ոլորս և այրիս և առ անպարկե-
լութիւն, և առաւել առ այնմանիկ որ վասն հաւատոց ա-
րեամբ չափ նահատակէին, որպէս և առ տուրբն Թէոդորոս,
միւս ևս տեսանել. զոր իբրև լուաւ զասացեալսն առ
նա ի քահանային վասն սրբոյն՝ յարուցեալ իսկոյն
եմուտ ի սենեակ իւր հանդերձ տուրբ եպիսկոպոսօք
և ուղղափառ վարդապետօք և ամենայն եկեղեցական
ուխտիւն, և անկեալ յերկիր ի վերայ երեսաց իւ-
րեանց՝ աղօթս մատուցանէին առաջի Աստուծոյ հան-
դերձ ջերմեռանդն արտասուօք զաչս ի յերկինս համ
բարձեալ յօդնականութիւն ընտրհատակադիրին կոչէ-
ին՝ ապրեցուցանել զծառայն իւր զտուրբն Թէոդորոս,
ասելով երգս ինչ ի սաղմոսին միաբանական ձայնիւ.
Աստուած յօդնել ինձ նայեաց, և Տէր յընկերել ինձ
փութա. և դարձեալ՝ Ջայնիւ իմով ես առ Տէր կար-
դացի. և ես՝ Տէր լուր աղօթից իմոց. և դարձեալ՝
Բազում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փըր-
կէ զնոսա Տէր: Եւ անդ կացեալ յաղօթս իբրու
ժամ երիս, դարձեալ անդրէն վերառաքեն զնախա-
սացեալ քահանայն Գէորգէոս առ քաջամարտիկ վե-
կայն ի բանդին, և բանս բազումս մխիթարականս
զկնի նորա. և նա յարուցեալ գնաց և պատմեաց զա-
մենայն յօրդորական զբանսն և զօրինակ համբերու-
թեան զոր ի սրբոյ հայրապետէն ասացեալսն. զոր
լուեալ սրբոյ վկային և առաւել հաստատեալ ի հա-
ւատս անշարժ յուսոյն որ ի Քրիստոս. և քահանային

երկրպագեալ սրբոյն՝ դարձաւ անդրէն առ քահանայապետն։ Իսկ կամ ուղիւմոսին հրամայեալ նոյն քահանայի առնուլ կերակուր ինչ՝ ի պէտս մարմնոյ երանելոյն՝ տանել՝ ի քանդն. մտեալ՝ ի ներքս առնա տալը նմա ուտել. զոր առեալ եկեր առաջի նորա. և ապա յարուցեալ երկոքին միաբան կացին յաղօթս և կընքեալ զինքեանս նշանաւ խաչիւն նատան. և աստուածասուոյց քահանային սկսաւ երկրորդել նմա զոր ինչ գրեալ է՝ ի գիրս աստուածայինս, զնահատակութիւնս բազմաչարչար վկային Աստուծոյ, զնեղութիւնս արդարոյն, զհամբերատար ժուժկալութիւնս սրբոյն, և զհանդէս նախամարտիկ արանցն ընտրելոյ՝ ի Քրիստոս, զկանոն, զձաղանն, զխաչն, զերէցն. նաև քարոզեր նմա՝ ի հին և՝ ի նոր կտակարանաց։ Իսկ սուրբն և ամենասուրբն ունկնդրութեամբ լսէր նմա և զուարթութեամբ ուրախանայր, ցանկայր և փափաքէր հասանել երանաւէտ կոչմանն և անթառամ պսակացն։ Իսկ քահանային համբուրեալ զսուրբն՝ յանձն արարեալ զնա ամրաձաձուկ աջոյն Աստուծոյ Հօր, և ինքն դարձեալ վերստին առ եպիսկոպոսապետն։ Իսկ կաթուղիկոսին զառուրսն զայսպիսի նախախնամեալ հոգաբարձութեամբ, առաքելոյ զքահանային միշտ առնա ունկն ոտիկս ցուցաք յառաջագոյն։

Եւ ապա զինն առուրցն վեցից յղեր գառաւորն՝ ի քանդն առ սուրբն՝ ի պատուաւորսայ իւրոց՝ ի մեծամեծ աւագանեացն[1], ի գիտակականացն և յընթերցողացն իւրեանց առասպելաբան ուսմանցն, խօսել ընդ նմա քանս ինչ պատրուակական, թերևս կարասցեն առնել՝ ի հաւան զընտիր նահատակն։ Եւ մտեալ ամպարշատացն առ նա՝ ի քանդին, տային զողջոյնս մահացու և նստէին առաջի նորա. խօսել սկսան և ասեն ցնա. Ընդէր կաս և մնաս՝ ի դմին յամառութեան և նատիս՝ ի խաւարչտին տեղւոջդ՝ մատնեալ զանձն քո՝ ի մահ, անտես առնելով զկեանս քո. վասն ամենայնի առնես զայդ և կամ վասն որոյ յուսոյ համբերես այդպիսի ակտանաց և անհանդուրժելի չարչարանաց. լուր մեզ և ընկեա՝ ի քէն զընդունայն խորհուրդս կամաց

1. Յօր. աւագանոյն։

քոյ, և յարուցեալ ուղեւկից լեր մեզ, զի գնասցուք առ գլխաւոր մերոյ օրինացն և ընկալցիս բազում ընծայս և պարգեւս ի նմանէ և ի միջի առնելոյն, և զերծեալ առլեսցիս ի տանջանացդ յորում կայիր: Եւ այսպիսի օրինակաւ բազում բան հրապուրանաց ասէին առ սուրբ վկայն խափանել կամելով զնա յաոյլ եղեալ Քանապարհէն. այլ նա քանզի աստուածային հրով սիրոյն բորբոքեալ էր՝ առնելոյն ոչ այլ ինչ առնէր պատասխանի առնա եկեալցն, բայց միայն զայս բան ասելով, թէ՝ Քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ՝ ըստ վերոյհին ծննդեան աւազանին, և ձշմարիտ խոստովանող աստուածթուխեանն Քրիստոսի: Եւ իբրև ոչ կարացին շարժել և խախտել զկարծրութիւնն հաստատուն հաւատոյ նորա և սիրոյն առ ի վանել զառատութիւն նորա, յարուցեալ այնուհետև առմօխալից գնացին ի տեղւոջէ անտի: Իսկ ի միւսում աւուրն խորհուրդ առեալ դատաւորն՝ առաքէր առ սուրբն զայլ ոմանս յընչաւէտ և ի գոյաւոր իշխանացն՝ բերելով ընդ ինքեանս ոսկի և արծաթ և հանդերձս ազնիւս և մեծագինս. և մտեալ դնէին զայն ամենայն առ ոտս սրբոյն, և ըստ օրինակի առաջնոցն բանիցն խօսէին առ նա: Յայնժամ ամենայն երանութեանց արժանաւոր վկայն Քրիստոսի՝ տեսանէր ի մանալի ակամբ հոգւոյն զարկուած և զխորձանս բանսարկուին, զոր ածէր ի վերայ ինքեան ի ձեռն չար սպասաւորացն անօրինին, արհամարհեալ զնոսա ցըրուէր և ի բաց մերժէր զպարգեւս ընծայից նոցա զոր բերեալն էին նմա, և Թքեալ քամահէր մղելով ի նոսա զի զկորստական ձիրն նոցա. և միայն զայս բան ազաղակէր, Թէ՝ Քրիստոնեայ եմ, քրիստոնեայ, ինչք ձեր և խոստումն պարգեւաց ձերոց ընդ ձեզ լիցի ի կորուստն ձեր յաւիտենից:

Եւ իբրև տեսին զանսասանելի զհաստատութիւն հաւատոյ նորին, գնացին և նոքա առաջի դիմօք զոլն յաւուրսն յաջորդսն եկեալցն: Այս գիտի առաջի և առանց անցանելոյ՝ վաստակեցան պարտեցան չար սպասաւորքն մարտնչելով ընդ սրբոյ վկային: Այլ և յետ այսչափ անտանելի չարչարանացն զոր անցուցին անօրինքն ընդ սուրբ մարտիկն երանելոյն,

հատնի՝ի վերայ նորա զվէմս մահու այսպիսի օրինակաւ. Զթէոդոտոս այր ժանտ և ապարատան՝ ապրեաւ և տոհմիւ և քաղաքավարութեամբ՝ի գաւառէս Գամբրեաց, և զկերտարանն և զձև ունելով զաղքատութեան, չքաւորութեան աղագաւ՝ի բաց կացեալ՝ի հայրենատուր հաւատոցն և այժմ անդրադարձեալ պաշտէ զՍատուած ոմն զիսաչեանն՝ զոր Յիսուսեան անուանեն, որ և ոչ միով իւրք կարացաք զմիտս նորա չարչարել կամ շարժել յետս՝ յառաջի եդեալ Հանապարհին, ոչ առնոյն մեծութեամբ աշխարհիս և ոչ բնաւ հաւօրէն տանջանարանօք զոր արկաք՝ի վերայ նորա. այսուհետեւ հրամայէ մեր դատաղական առեանս կախել զնա կապանօք ընդ փայտն մահապարտաց, և քարկոծ առնել առնոյն բազմութեամբ ըզչարաչաստ մարմին նորա։ Յայնժամ անօրէնն դահիճքն ըստ հրամանի դատաւորին եկեալք՝ի բանդն առաւսրբեն, սկսան ողբանօք բանիւք առել ցերանելին. Տէս ահաւասիկ հատաւ՝ի վերայ քո վճիռ մահու, արդ զոր ինչ կամիս և առնելոյ ես՝ առ մեզ վաղվաղակի։ Իսկ սուրբ վկայն Քրիստոսի առ ցնոսա. Ոչ զոր յառաջագոյն ասացի ընդ ձեզ և զնոյն գարձեալ վերատին առեմ, եթէ քանից ձերոց առնելոյն ես ոչ եմ լսելոց. քանզի՝ի սմին յայսմ գիշերի տեսանէի յաւուրըս զՏէրն իմ Քրիստոս ունելով՝ի ձեռին իւրում թաղ իմն Թագաւորական և պսակ արքունական. ձայն եղև առ իս ասելով. Թէոդոտէ, եկ, առ զբրաբիոնն կենաց՝ի ձեռաց պսակադրիս. արդ իմ տեսեալ զայն առնոյն՝ ըղձալի տենչմամբ փութամ գնալ առնա, զի ընկալայց զվարձս վաստակոց իմոց։ Ոչ աղաչեմ զձեզ, մի խափան առնէք ընթացից իմոց առ յանկալին առնէն իմոյ, և մի կայք ներհակ Հանապարհիս որ՝ի կեանս անապականս կարապետել։ Իսկ նոցա հառնեալ զնա յարգելարանէն, առեալ տանէին ձեռս յետս կապեալս՝ի տեղի կատարման առաքեխն նահատակութեան, և առնոյն բազմութիւն քաղաքին կեսարացւոց ընթացեալ երթային զկնի սրբոյն՝ի տեսարան. և մինչդեռ հանէին զնա ընդ դուռն քաղաքին՝ պատահեալ նմա՝ի Հանապարհի առնոյ երկրորդ արքայն և ասէ ցնա. Ո՛ր դու, ընդ՞ր մեռանիս՝ի

տարտապարտուց և ընդ վայր. այժմ առա քան ինչ հայր հոյսն Թեան, և անցեալ գնասցես պաշտելով զոր ինչ և կամեսցիս: Իսկ քաջամարտիկ և անպարտելի ինդ ուստն Քրիստոսի ամենևին ոչ ետ նմա պատասխանի, այլ՝ի ձայն բարձր աղաղակեաց ասելով. Քրիստոս որդի Աստուծոյ՝ որ բնակեալդ ես՝ի բարձունս, և անքան ակն քո գինեալ տեսանել զխորս որդւոց մարդկան. որ քննես զդատաստիս խորոց ամենեցուն, խնդրեմ՝ի քէն և աղաչեմ, անքնին և ինքնազօր յամենայնի, հայեաց՝ի նուաստութիւն մարմնոյ իմոյ և զանեղևոյթ զօրութիւն Հոգւոյդ սրբոյ առաքեա յօգնութիւն տա ռապեալ անձին իմոյ, և արժանաւորեա զանարժա նութիւնս իմ հասանել անսահման մեծութեանդ այսորիկ և գրել՝ի պարս վկայիցն որք հրաւիրեալ են յընթերցիս անմահ փեսայիդ. և հեղմամբ արեանդ ի մոլ ջնջեա զթողութիւն յանցանաց իմոց, և քեզ փառք յաւիտեանս. ամէն:

Արդ մինչդեռ սուրբ վկայն զայս առանձինն աղօթս մատուցանէր Աստուծոյ, յանկարծակի հարեալ դահ ձին զսուրբն՝ մղէր փութացուցանելով զնա՝ի տեղի նահատակութեանն. և սուրբն դարձեալ սկսաւ ա ղօթել այսպէս. Որդի Աստուծոյ և Տէր ամենակալ, փառաւորեալ և հզօր յամենայնի, անսահման և ան քննին մեծութիւն, զոր ոչ արարածոց տանին բնու թիւնք և ոչ հրեղինաց ոգիքն նկատեն զանակնար կելի կամ աստուածութեան քո, և չիք սահման զբ թութեան և ողորմութեան քո, քանզի ամենայնի դու ես Տէր՝ որ՝ի բարձրութիւնս և՝ի խորութիւնս. զի քոյով հրամանաւդ կատարէրին արարածք և ամէն արկութեամբ քոյով խնամարկին և առկայանան յիւ բեանց կայանս: Արդ ես անարժան ծառայս ոչ անյոյս եղեալ յիմմէ վրկութենէդ, և ոչ վհատեմ սիրտ իմ յամենագօրութ ողորմութեանց քոց, զի ամենայն կեն ցաղական իրաց փոխանակ՝ զքեզ սիրեցի, զքեզ ըն տրեցի,՝ի քեզ հաձեցայ և ամենայն փափագանօք և բաղձանօք՝ յօժարեցի հասանել անմահ բարեաց քոց: Արդ որովհետև կանգնեցեր զանկեալս և վերածեր՝ի կեանս անմահս, և կացուցեր զիս՝ի հանդէս վկայ կան առաքելոց, արդ մի՝ ի բաց առներ յինէն զօ

ղորմութիւն քո, և մի տար ապականիչ գայլոյն մատնել յանդաստանս քո, զի դու միայն ես փառաց և պատուոյ արժանի. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Ա՛րդ մինչդեռ աուրբն զայս աղօթս մատուցանէր Աստուծոյ՝ յախտուն յարձակմամբ յարեան՝ի վերայ նորա սպասաւորքն անօրինութեան, և ըմբռնեալ զնա տարան՝ի տեղի կատարմանն մերձ՝ի փայտն մահու՝ զոր կանգնեալ էին՝ի սպանումն գողոց և աւազակաց՝ի մէջ բազմակոյտ հրապարակին, յորս հաւաքեալ լինէին՝ի կողմանց կողմանց արուանց և կանանց հաւատացելոց և անհաւատից, իբրև զմանրատաղ փոշի ազախատն օդով բերեալ լինէին՝ի տեղեաց տեղեաց՝ի տեսիլ նահատակութեան սրբոյն։ Ուրախութեամբ ցնծայր և կաքաւէլով հրձուէր ցանկալին զտարլինոց՝ի հանդէսն յայն, մարտ եղեալ մաքառէր հոգւովն երիտասարդ մանուկն և փախաքելին լուսերամին։ Յայնժամ ուժգնակի քարշմամբ բերեալ լինէր՝ի սպասաւորացն մերձ՝ի փայտն նահատակին քրիստոսապզեաց, և այնքեալ զնա ընդ փայտին յոտից մինչև ցլանջն։ Իսկ անօրէնն դահիճն մերձ եղեալ առ սուրբն՝ ասէ. Այս քանս ինչ հայհոյութեան և ապերախտի՝ի մահուանէդ, և յետ այնորիկ երկնաւոր վճռոյն հաձոյից քոց։ Իսկ Քաւարարին Աշմարտութեան սուրբ վկայն Քրիստոսի լցեալ զբերան իւր խոստիվ եթուք յերեսս անօրինին, և նա անդրէն դարձեալ անամօթաբար զնոյն քանս խօսեցաւ և ասէ. Երդուեալ՝ի կեանս արքային՝ եթէ ոչ լուիցես խրատու իմոյ՝ փութով քառնամ զքեզ՝ի կենացս։ Ասէ ցնա սուրբն. Դառնացի քեզ աչք արքային քո եթէ ոչ արագապէս կատարեսցես զկամն Յարութեան քո առ նա։ Յայնժամ երկոցս անկծեալ և Թշուառական դահիճն հարեալ ուժգնակի տապարաւ զգլուխն սրբոյն, և նոյնժամայն շեշտակի Ճեղքեալ մինչև յոտն կէն նորա. և այլ ոմն հարեալ վիմաւ զբերան աչաց նորա՝ և սեամոլականն կախէր զերեսաք նորա։ Իսկ մեծ վկայն Քրիստոսի, սուրբն Թէոդորոս, ձայն բարձեալ առ նոսա ասէր. Ներեցէք ինձ սակաւիկ մի։ Եւ նոքա ունկնդիր եղեալ անսացին՝ կարծելով Թերևս զղջացաւ վասն սասանիկ հարուածոյն։ Սուրբն ասէ.

երդմնեցուցանեմ զձեզ ՚ի միանս արքային ձերոյ, զի Թոյլ տալով խնայեսջիք միայոյ աչաց իմոյ, որպէս զի տեսից զյօշումն և զչարաչար քանցումն մարմնոյ իմոյ, և այնու ցնծացեալ ուրախ եղէց ՚ի փրկու- Թեան իմոյ զոր տուաւ ինձ ՚ի Տեառնէ Աստուծոյ: Նակ ամպարիշտ դահձացն անարգեցին զերանելեւսն և ասեն. Մեք կարծէաք Թէ զղջանալով քո դարձցիս ՚ի քոյին յամառուԹեանցդ, վասն այնորիկ նեղեցաք քեզ: Եւ անդէն վերացուցեալ դահձին եհար վա- ղակաւորսն զձախատ երանելոյն և՚ի բաց եհան զերս կաւառակն ՚ի գլխոյ անտի. և տուրբ վիայն աղաղա- կեաց ՚ի ձայն մեծ և ասէ. Տէր իմ և Աստուած Յի- սուս Քրիստոս, ընկալ զիս որ վասն անուանդ քո մե- ռանիմ: Եւ նոյնժամայն հանդերձ կապանօքն շրջեցաւ փայտն ընդ արևելս կոյս, քանզի կանգնեալ կայր ընդ հարաւ. ընդ որ հիացեալ զարմանային ՚ի նա ամենե- քեան ՚ի վերայ սքանչելեացն եղելոց: Եւ յորժամ զար- ձաւ յարևելս ամենազով տուրբն՝ յաղօԹս եկաց այս- պէս. Գոհանամ զքէն, Տէր Յիսուս Քրիստոս, փրկիչ և տեղծիչ աշխարհի, որ յաղագս զատապարտու- Թեան բանական բնուԹեանս առաքեցար ՚ի հայրա- կան ծոցոյ ՚ի խնդիր մեզ մոլորելոցս, և զինքնազօր աստուածուԹիւնդ խոնարհեցուցեր ընդ մահու լծոյ, և զբազուկս քո զաշխարհակեցոյց տարածեցեր ՚ի վե- րայ կենդանարմատ փայտին, և ՚ի հարուածոյ սուրճն ոչ դարձուցեր զԹիկունս քո, և ոչ զկերպարանդ Հօր ՚ի Թքոյն և յապտակէն. արբեր և զքացախն խառնեալ ընդ լեղի և զկողահոս աղբիւր աստուածային արեանդ բացեր լուանալով զկերտն Ադամայ, և զմուրհակս պար- տեաց ամենայն մարդկան պատառեցեր ՚ի վերայ խա- չին, և աշխարհակեցոյց մահուամբդ քո փրկեցեր զմեզ ՚ի մեռելուԹենէ մեղաց: Եւ եԹէ անսահման և անքանակ աստուածուԹիւնդ կրեաց զայս ամենայն վասն մեր, ոչչափ ևս առաւել հոգեղինի և ընդ մե- ղօք բնակեալ բնուԹեանս՝ պարտիմք հեղուլ զարիւնս մեր վասն աստուածային արեանդ, և առաւել իսոյ- նուաստուԹեանս, զոր եԹէ բիւր և զանազան վիշտք և չարչարանք կրէր յիմում մարմնի, առաւել ևս պի- տոյէր վասն անբաւ բարերարուԹեանդ քո որ առ իս.

դարձեալ թէ ամենայն երկնաւոր խմբաւորութեանցն բարբառն էր ՚ի բերանի իմում՝ ՚ի վերայ արդեօք այնու ամենայնիւ կարէի պատմել զանձառ տնօրինութիւնդ քո, կամ օրհնութիւն և գոհութիւն ամենօրհեալ աստուածութեանդ քո վերատաքել, եթէ յորքան և յորախի անօրինութենէդ հաներ զիս, և յանբաւ և յանձառ երանութեան մերձեցուցեր. և արդ այսու՝ հետև քա...[1]:

1. *Այս էջէն մնայ օրինակն:*

Վկայաբանութիւն Սրբոյն Թէոդորոսի Տրապիզոնացւոյ։

Զանքնին և զզարմանալի երկնաձիր պարզևան մեծահրաշ սքանչելեացն Աստուծոյ որ դասս սրբոց վկայից, և զնեղոտածութիւն համբերատար հանդիսին և զանազան առաքինութեանցն պատմութիւնն՝ ոչ է հնար ասել համառօտ բանիւ կամ, նաև ոչ ըզբազմաբոլորջ պսակացն նոցունց զգերապայծառութիւն գիտել արդարապէս, և կամ տարացոյց՝ թէ որպէս բարիօրինակ տեսլեամբ հիւսեցին պսակս անթառամս, յոչնակորով մարտիրոսութեամբ ամրավաւակ վահանօք Հոգւոյն պարսպեալք զմարմինս իւրեանց, իբրև զսակի՛ ի բուն հրաւիրձեալ անցին ընդ ծածուկ ծով բազմալոդով չարութեան կենցաղոյս, յաղթողք երևեալ՛ ի վերայ ընդդիմամարտութեանն բանսարկուին. զորոց և զբնաւն իսկ արիութեանցն պիտոյական՝ ՛ի մարմնականացն զարժանապէսն ոչ ոք կարէ բացայայտել. վասն զի միայն աստուածային Հոգւոյն է կարողութիւն պատմել։ Այլ սակայն թէպէտ և անհասանելի է մարդկան՝ նոցա պատմութեամբ պարտնակել, սակայն ոչ է պարտ ամենևին լռել. ասացէ, ըստ բաշխելոյ աստուածային շնորհայ Հոգւոյն է կարողութիւն ծանուցանել աստուածասիրաց անձանց. զի՛ ի ձեռն յիշատակի արիական և հոգեղէն զօրականացն Քրիստոսի՝ զարթիցեն մանկունք եկեղեցւոյ և թևակոխեսցեն մտանել՛ ի յա-

ազգաստ երանաւէտ կոչմանն այնորիկ, սպառազէն նեաւք զինուորութեամբ Աստուծոյ. զի՝ ի ժամանակի հալածանաց կամ փորձութեանց յառնելոց՝ ի վերայ՝ կարասցեն մանաւանդ լինել այնոցիկ որք խաչակից գան Քրիստոսի: Ամէն այսուհետեւ զկիշատակ գերապայծառ վկային Քրիստոսի սկիզբն արասցուք պատմել զկրթոյն Թէոդորոսի, թէպէտ և ոչ եմք բաւական զամենայն քաջութիւն արութեանն պատմել, սակայն խոսն ի՝ ի բազմաց Հաւատոյն, թէ ով որ էր կամ ուստի կամ որպէս սկիզբն եղև և կատարած վկայութեան նորա, և զժամանակս հալածանաց նորա պատմեսցուք: Եւ զի ոչ էր սա Տիւրինոն Թէոդորոս, որոյ յիշատակն կատարի յառաջին շաբաթուն քառասնորդաց պահոցն, այլ սա քեռորդի գոլով նորա՝ պատուեալ եղև՝ ի Թագաւորացն ստրատելատեան իշխանութեամբ. զի նա վկայեաց առ Մաքսիմիանոսիւ Թագաւորաւ՝ ի Յունահս քաղաքի՝ և կատարեցաւ կացուց գաւառին, ոչ հեռի՝ ի միմեանց գոլով ժամանակաւ և ազգակցութեամբ:

Ամէն՝ ի ժամանակս անօրէնն և ամպարիշտ Թագաւորին Լիկիանէ, յորում ժամանակի տարածեալ լինէր՝ ի նմանէ հրաբորբոք մրրիկ գառնութեան հալածանաց՝ ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ, և ամենայն ուրեք գիւաձոյլ պատկերաց բազինք ընդ գոլոր տեղութեանն Հռովմայեցւոց կարկառեալ կային, և ընդ ամենայն տեղիս գէր ուրացութեանն տարածեալ լինէր, և հրամանք այսպիսիք ընդ ամենայն քաղաքս և ընդ գեօղս յոյժ սաստկութեամբ եղեալ լինէին, զի քարանց և փայտից ձեռագործաց մարդկան երկիր պագանիցեն, և ողջակէզս և զոհս մատուցանիցեն առնուանեալ աստուածոցն, և՝ ի սիրտ կերակրոյն Քրիստոսի՝ շակիցեն ամենեքեան, և հնազանդեալքն այնպիսի հրամանի պարգեւս և պատիւս ընկալցին՝ ի Թագաւորէն, իսկ որք ոչ ախորժեսցեն զայս գործել՝ հարկաւորութիւնք, գանք և տանջանք և պատուհասք սրոյ և հրոյ առաջի արկեալ լինէին. քանզի անհնարին մեզ խաւարի և խռովութեան պաշարեր զամենեսեան. քանզի զբազումն՝ ի հաւատացելոց ընկերս նեալ մատնէին զաւարացն, զի արկցեն յաղջա-

մըղձին տեղիան դառն և անողորմ տանջանաց. և յետ բազում հարուածոց՝ սրոյ պատուհասիւ զվէնիս մահու ընկալցին։

Յայնմ ժամանակի ծագեցաւ աստղն լուսապայծառ և զամբարն Քառապայթարձակ, որ լուսաւորեալ փա-րատեաց զմէգ խաւարի կռապաշտութեանն, յաղ-թող երևեալ յամենայնի, քանզ և նախամարտիկ զօրականն, անյաղթ Թադէոսն Քրիստոսի սուրբն Թէոդորոս։ Քանզի նըմին եւ հրամանս այս յանդգ-ուիշտ և յանօրէնն Թագաւորէն Լիկիանէ, զի զամենե-սեան ոմք էին հաւատացեալք՝ Քրիստոս ընծեռանեալ արկցեն՝ ի բանդ և՝ ի կապանս անհնարին նեղու-Թեանց և տանջանաց, յայնժամ երանելի և մեծա-նուն վկայն Քրիստոսի Թէոդորոս, ծնեալ լինելը՝ ի քրիստոնեայ և՝ ի բարեպաշտ ծնողաց, ի գեօղն Եւ-խայեայ, որ և ծնեալ լինելը և վարժեալ ամենայն բարեկարգութեամբ՝ ի Քրիստոս, զարդացեալ հա-սակաւ և խոնարհութեամբ, կրթեալ՝ ի հրահանգս աստուածպաշտութեան. և մինչ դեռ յաստիս երիտա-սարդութեանն՝ ծաղկեալ հասակաւ և գեղեցիկ տես-լեամբ և ամենիմաստ հանձարով՝ առլցեալ, որ և սի-րելի և ծանօթ ևս լինելը Թագաւորաց և իշխանաց՝ որ էին յայնմ ժամանակի. քանզի և՝ ի պատերազմունս բարբարոսաց անպարտելի և յաղթող երևեալ ամե-նազով սուրբն, վասն որոյ և զառաւելագոյն պատիւ ստանալոյ ընկալեալ՝ մեծաշուք պատուով և իշ-խանութեամբ պատուեալ լինելը։ Այլ՝ ի չարասէր արբանեկաց բանսարկուէն մատուցեալ յունկն Թա-գաւորին զգայուցանէին վասն սրբոյն Թէ քրիստո-նեայ է, ոչ միայն ինքն այլ և ամենայն աշխարհն և քաղաքն՝ որ ընդ ձեռամբ նորա էր հանդերձ զօրօքն հրապուրեալք՝ ի նմանէ՝ դարձան՝ ի կուռցն երկրպա-գութենէ, անհաւանք լեալք հրամանաց ձերոց, ըզ-խորհրդական ծոնս աստուածոյն ոչ կատարելով, և ոչ՝ ի նուիրական զոհից նոցա ձեռնակելով։ Յերկն լուաւ զայս Թագաւորն՝ յիմարեալ և ապշեալ՝ ի գաղտնի վարանեցաւ՝ ի խորհուրդս նուր, Թէ որպէս կարասցէ ըմբռնել՝ ի վարս մահու զայնպիսի երևելի այր. զրել և կոչել առ ինքն անպատշաճ վարկանէր, զի մի զխոր-

հուրդն նենգութեան իմացի, և զարհուրեալ ընդ-
դիմացի հրամանաց մերոց: Խորհէր ՚ի մոլ Թէ յա-
ղագս պատերազմական գործոյ պատճառս եղեալ ե-
Թայցէ զկողմանսն այնուիկ [1], և ՚ի նմին քաղաքի ըմ-
բռնեն զերանելին. և յայս խորհուրդ մտաց եղեալ
անօրինին, կամեցաւ առաքել զոմանս ՚ի պատուա-
րաց հանդերձ զօրօք՝ յԱլեքսիա քաղաք կապպադով-
կացւոց, յորում էր բնակութիւն երանելոյն: Գրեալ
առնա Թուղթ հանդերձ մեծարանօք և պատուով, զի՝
Թէ հաճոյ Թուեսցի կամաց քոց՝ դալ տեսանել զմեզ
և երկրպագութիւն մատուցանել աստուածոց մերոց
՚ի քաղաքն Նիկոմիդացւոց, եկեսցես բազում Հոխու-
Թեամբ և երևելի փառօք. ապա Թէ պատճառք ինչ
լինիցի և արգելցիս, արժան է մեզ դալ տեսանել զք-
կողմանտդ զայդոսիկ, և զքաղաքդ յորում բնակեալ
ես, զի յոյժ ցանկացեալ եմք տեսանել և վայելել ՚ի
սէր քո:

Եւ երբեմն Հասին առ նա զօրագլուխքն և մատուցին
զգիր հրամանաց հրովարտակին, առ ընթերցաւ և ու-
րախացեալ գոհանայր զԱստուծոյ, զի զոր ինչ յառա-
ջագոյն խորհէր ՚ի սրտի իւրում յայտնի լինել յա-
ղագս աստուածպաշտութեանն և վկայ լինել Քրիս-
տոսի, վաղվաղակի արգեամբք կատարէին կամք Հա-
Հոյիցն Աստուծոյ: Ապա յայնժամ մեծաշուք պա-
տուով ընկալեալ զարան, պարգևս ընդհերնոցա, և զիւ-
րոց գալստեան եկաւորութեան առ Թագաւորն պատ-
Հառեալ յաղագս պիտոյից աշխարհին, աղաչէր զնո-
սա և ինչս խոստանալով նոցա, զի երԹիցեն յորդո-
րեացեն զարքայն հանդերձ բազմութեամբ աստուա-
ծոքն իւրովք գալ ՚ի քաղաքն Նիկոմիդա. զի տեսա-
նելով զայն ամենայն բազմութիւն քաղաքիս և գա-
ւառիս, ուրախացեալ ցնծասցեն, և ոչն մեծ կատա-
րեացեն հանդերձ զոհիւք երկրպագութեամբ: Իսկ
արքն այնոքիկ եկեալ առ Թագաւորն, մատուցին զպա-
տասխանիս հրովարտակին. զոր արքայն առեալ ընԹեր-
ցաւ, և իբրև զմանուկ մի անմիտ խաբեալ և պատրեալ
կամեցաւ ջուել ՚ի կողմանս յայսոսիկ. Համարէր անօ-

1. Յօր. պնոփն:

լինիմ Թէ ամենայն խորհուրդք իւր յանդ ելեալ կատարեցաւ: Ախտհեաւս առեալ զլսազմութիւն հեծելազօրացն իւրոց գայ հասանէ՛ի քաղաքն Ադաւլիա. զոր լուեալ սրբոյն Թէոդորոսի զգալուստ թագաւորին, ել ընդ առաջ նորա մեծաշուք պատուով Քոխաւթեամբ: Եւ յայնմ գիշերի մինչդեռ ննջէր՛ի տան իւրում երանելին՝ տեսանէր՛ի տեսլեանն զի ձեղունք տանն վերացան և կայծակունք հրոյ փայլատակեալ իջանէին՛ի վերայ նորա. և ձայն լսելի եղեալ որ ասէր ցնա. Ջօրայիր և քաջալերեա Թէոդորէ, զի ես ընդ քեզ եմ: Եւ զարթուցեալ սրբոյն՝ պատմէր մերձակայիցն զտեսիլն, և ասէր Թէ՝ Հաճեցաւ Ա՛ստուածծ զի՛ի տեղւոջս յայսմիկ հեղգի արիւն իմ վասն անուանն Քրիստոսի: Եւ յարուցեալ եդ ծունր և կացեալ յաղօթս. և իբրև կատարեաց զաղօթան հանդերձ արտասուօք, և գոհանայր զՏեառնէ:

Յարուցեալ լուանայր զգեղեցկութիւն պայծառատեսիլ երեսաց իւրոց, և զգենոյր հանդերձս մեծամինս զգինս բեհեզեայս, և հրամայեաց կազմել զոսկիակազմ երիվարս իւր. և հեծեալ հանդերձ զօրօք իւրովք՝ գնաց ընդ առաջ Թագաւորին: Եւ տեսեալ զարքային՝ երկիր պագանէր նմա, ըստ օրինակի Թագաւորաց ողջոյն առնել նմա ասելով. Ողջոյն քեզ, հզօր և ինքնակալ Թագաւոր Յ՛Աստուծոյ առաքեալ: Նակ Թագաւորն իբրև լուաւ զայն և տեսես զմեծանձնութիւն սրբոյն, վաղվաղակի գիրկս արկեալ մեծաւ գթով և սիրով ընկալեալ համբուրէր զնա և ասէր. Ողջոյն ընդ քեզ արեգակնատեսիլ Թագաւորեալ, զի պարտ է և քեզ Թագաւորել ընդ իս: Եւ մտեալ՛ի միասին՛ի քաղաքն հանդերձ բազմութեամբն, որ էլին ընդ առաջ Թագաւորին, և իջեալեան արարեալ յարքունեաց կան ապարանս՝ կազմեալ ըստ օրինի պատշաճին, արկեալ գահոյս և աթոռս Թագաւորին: Ջոր տեսեալ Թագաւորին ուրախացաւ յոյժ, և գովեաց զքաղաքն և զքաղաքացիսն, և հրամայեաց Թէոդորոսի նստել. և ասէ ցնա. Ա՛հաւասիկ ըստ պրեգելոյն աղաչանացն առ՛ի քէն, ով Թէոդորէ, հիւրաբար մեծարանս առնելով եկի՛ի տեսանել զքեզ և զքաղաքս քո. քեզի ընդ իս զպատուականացդ և զիշխանութիւնդ

յաստուածոց մերոց, զի երկիր պապանիցէք և զոհս նոցա մատուցանիջիք: Պատասխանի ետ սուրբն Թէոդորոս և ասէ. Ո՛վ յաղթող և մեծ թագաւոր, բանիւք արտաքս զի կատարեցեր զինդիրս ծառայի քո. ուրախացուցանելով զմեզ գալստեամբդ քո, և առաւել պատուեցեր զմեզ բեմամբ աստուածոյն, զի առեանելով զնոսա Հաստատեացին ամենեքին 'ի հրամանս աստուածպաշտութեան: Արդ աղաչեմ զմեծութիւնդ քո, զի փոքր մի հանդիցես յաշխատութեանց ճանապարհիդ, և տացես յիս զխոստովանողն զաստուածն ամենայն՝ զի տարեալ 'ի տուն իմ օծից իւղօք անուշիւք, և ինդրուկ մատուցեալ խնկեցից նոցա, և երկիր պագեալ զոհս մատուցից 'ի տան իմում առանձնական. և ապա զկնի այսորիկ բերեալ 'ի հրապարակս առաջի ամենեցուն զոհեցից. զի հայելով և տեսանելով զայն՝ ամենեքեան յորդորեսցին 'ի նոյն նահանձ բարեպաշտութեան: Իբրև լուաւ զայս Թագաւորն՝ հաճոյ Թուեցաւ բանք սրբոյն յոյժ, և հաստատ ասացեալոցն 'ի նմանէ: Եւ հրամայէր բերել և տալ ցնա զամենայն կուռս զոսկեղէնս և զարծաթեղէնս. զոր առեալ սրբոյն տանէր 'ի յատարանս իւր առ 'ի հանդուցանել զնոսա: Եւ յարուցեալ 'ի գիշերին յայնմիկ, խորտակէր մանրէր զամենայն աստուածսն, և հանեալ քաշէր աղբատաց և կարօտելոց:

Նոկ յետ երից աւուրց անցելոց, հրամայէր արքայն առ ինքն կոչել զմեծն Թէոդորոս, և ասէ ցնա. Ո՛վ աղնուական և փառաւորեալդ 'ի Թագաւորացն՝ որ յառաջ քան զիս էիր, և առաւել մեծարեալ և պատուեալ եղեր յիմմէ մեծութենէս. արդ ցոյց զյօժարութեան սէր քո՝ որ առ աստուածն մեր և առ մեզ, և մատուցեալ առաջի ամենայն ժողովրդեանն զոհեա նոցա, զի տեսցէ ամենեքեան տեսանելով զքեզ՝ մեծաւ յօժարութեամբ կատարեացեն զհրամանս մեր: Եւ մինչդեռ կամէր սուրբն պատասխանի առնել Թագաւորին, ահա մի յառաջ եկաց յիշխանացն, որում անուն էր Մաքսենտեննէս, և ասէ. Ո՛վ արքայ քաջ, ոչ լինացեալ ծանեար զդաւառնութիւն ամպարիշտ տրտատեսատիդ, Թէ որպէս ստեալ խաբեաց զմեծութիւնդ քո յաղագս բարեյաղթ աստուածոյն. քանզի

յեռանդեան պիշերին ելանել իմ յատարանից և մոց, տեսի զաղքատ ոմն, զի գայր խնդալով և ունէր ՚ի ձեռին խլուամ զոսկիակուռ գլուխ մեծի աստուածոյ ուհւոյն մերոյ Աստեմիդեայ։

*Զայս իբրև լուաւ Թադաւորն՝ յոյժ ՚ի զարմացման եղեալ հիանայր, և ոչ հաւատայր ասացելոցն ՚ի նմանէ. ասէ ցառնըն, Թէ՝ Աստի՞ն են ասացեալքս այսքիկ։ Պատասխանի ետ առնըն և ասէ. Այո, Ճշմարիտ է և արդար են, ոչ ուրանամ, քանզի արդար արարի զոր արարէ. արդ՝ եթէ աստուածք քո ինքեանց օգնել ոչ կարացին, քեզ զիա՞րդ կարասցեն օգնել։ Յայնժամ Թադաւորին այլագունեալ երեսքն ՚ի բար կութենէն, և լցեալ ցասմամբ՝ ասէր. Վա՛յ ինձ, զի խաբեայ իբրև զմանուկ մի տղայ, և ծաղր եղէ յաջըս ամենեցուն. արդ զինչ արարից կամ զինչ գործեցից՝ ոչ գիտեմ. զի ես այր Թագաւոր և իշխան գոլով այնքան զօրաց և աշխարհաց՝ հանդերձ ամենայն զօրօք իմովք խաբեալ եկի յոտս անօրինիս այս, եղէ նախատինք գաւառիս և քաղաքիս, կորուսանելով զբազում երեսելի աստուածն ամենայն։ Եւ տեսեալ սուրբն Թէոդորոս զԹագաւորն լցեալ այնպիսի յիմարութեամբ՝ ծիծաղեցաւ ընդ միտս իւր և ասէ. Ո՛վ անմիտ դև, լցեալդ ամենայն անօրէնութեամբ, գայդ ոչ աճէլիր զմտաւ յառաջագոյն, եթէ ես քրիստոնեայ գոլով և ծառայ Քրիստոսի, զիա՞րդ խաբեցայց ՚ի պատրողական և ՚ի կորստական հրամանաց քոց։ Ա՛յլ զի ծանիցիս արդեօք խաբեալ իբրև զմանուկ միամիտ, վասն այնորիկ ցուցի քեզ զտկարութիւն աստուածոց քոց, զի յամօթ արարի զամպարշտութիւնն քո. մնասի և անցաւոր մեծութեամբ հպարտացեալ ես, և ոչ գիտես զի ոչ ունիս յոյս և ակնկալութիւն անանց մեծութեանն և միանձնաւոր կենացն, և ոչ Հանապազ զայն որ ես քեզ զառաջանահեայ մեծութիւնդ, այլ նանրացեալ ես խաբէութեամբ քանսարկուին և խաւարեալ ՚ի լուսոյ փառաց Միածնի որդւոյն Աստուծոյ, և ամբարհաւաճեալ յերկար յամին ազդեցութեամբ ոչ գիտես զինչ խօսիս։ Նախ ես զամենայն արարածոց զկատաս զայսոսիկ, որք օտարացուցանեն զԱստուծոյ՝ մնոտիս համարիմ, զի զյաւիտենական կեանս ժառանգեցիր, զոր ակն ոչ ե-

տես և ունկն ոչ լսաւ զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց: Իսկ ձեզ և աստուածոց ձերոց նիւ- թեալ պահի հուրն յաւիտենական, որ պատրաս- տեալ պահի սատանայի և զօրաց նորա:

Թագաւորն ասէ. Ա՛յ հպարտ և ամենաչար ամբար- տաւան Թէոդորէ, զիս Թէ անարգես համբերից, զի յաղագս անասելոյ իմոյ եկեսցես՝ի լաւութիւն. իսկ զաստուածն ընդէ՞ր անարգեցեր: Պատասխանի եա տւոյն և ասէ. Ա՛յդ իսկ է ցուցումն անմտու թեան քո, զի տեսանելով զոչնչութիւն դիւացոյ պատկե- րոյ քոյ, զարձեալ յանդգնեալ աստուածս անուա- նես զնոսա, որք են իբրև զձիս և զջորիս, զի ոչ գոյ՝ի նոսա իմաստութիւն, առաւել անմտագոյն դուք, և անուանեալ աստուածքն որ՝ի չարտուէ մտաց են ա- րարեալ, կոփեալ՝ի ձեռաց Հարտարոյ: Եւ լցեալ Թագաւորն բարկութեամբ ասէ. Յայտնեսո ոչ համ բերեցից քեզ, զի՝ի չարաչար տանջանս մատնեմ զքեզ: Եւ հրամայեաց դահձացն մերկացուցանել զտուրբն, և տարածել զձեռան քառակուսի պրկմամբ, և դալար արջառաւլօք անխնայ հարկանել զվիկունն և զկռնչ- սին և զոտուվայն նորա. և այնքան հարկանէին զերա- նելին, մինչև տանջիչքն անաստուած ոկարացեալ լի- նէին: Եւ մարմինք սրբոյն զգեալ՝ի չարաչար հարկա- նելոյն, և արիւն յոյժ հոսէր՝ի նմանէ. և ապա հրա- մայէր կապարեայ մըճօք հարկանել զպարանոց սրբոյն անխնայաբար: Եւ մինչդեռ հարկանէին՝ հրամայեաց զի զամենայն ծնօտեալ մարմին սրբոյ վկային, երկա- թի եղէնգամբք քերեսցեն, և ապա հուր մատուցեալ այրեսցեն զամենայն վէրս մարմնոյն: Ա՛րեգին և խո- րովեցին զամենայն մարմինն լատ հրամանի Թագաւո- րին: Իսկ սուրբ վկայն առաւել քան զառաւել համ- բերէր՝ի վիշտս անհնարին նեղութեանցն, և գոհա- նայր զԱստուծոյ զի ցանկութիւնք նորա կատարեցան. և իբրև առ ոչինչ համարեալ զայնպիսի անըմբռնելի տանջանսն՝ ասէ ցԹագաւորն. Ո՛վ տգիտաւար և ար- բանեակ սատանայի՛, և Թշնամի ամենայն արդարու- Թեան, ոչ տեսանես զի տանջիչք քո ոկարացեալ եղեն, և յանդգնութեամբ ամբարհաւաճութիւն քո ցածեալ եղև, և բռնութիւն քո յաղթեցաւ, և բանս-

արկուն հայրն քո սատանայ յամօթ եղիւ. և որքան վերինն մարդս իմ ապականի՝ ի տանջանաց քոց, այնքան նեղքին մարդս իմ նորոգի՝ ի կեանս յաւիտեանից։

Եւ Թագաւորն բարկացեալ յոյժ՝ հրամայէր զինուորացն զի տարցեն՝ ի բանդ զերանելին, մինչև խորհեսցի վասն նորա Թէ որով մահուամբ սպանցէ զնա. և իբրև արկին՝ ի բանդ, յետ աւուրց ինչ հրամայեաց բերել առաջի իւր, և բազում բանիւք հարցափորձեալ՝ ոչինչ կարաց հասանեցուցանել զերանելին։ Ապա հրամայեաց զի հանցեն զնա՝ ի խաչ, և նեռաձիգս լինելոյ ամենայն բազմութեան զօրացն։ Նախ վկայն Քրիստոսի մեծաւ ցնծութեամբ երթայր զկնի զինուորացն. և եկեալ՝ ի խաչն՝ կապեցին զձեռս և զոտս նորա, և հանեալ կապեցին զնա ընդ խաչափայտին. և բազմութիւն զօրացն նեռաձիգ եղեալ՝ ի նա՝ հարկանէին զերեսս և զաչս սրբոյն։ Իսկ նահատակն Քրիստոսի համբերելով զոհանայր զԱստուծոյ, և առ ոչինչ համարէր զամենայն վիշտս նեղութեանցն։ Ապա մատուցեալ յետ այսորիկ հասին զառնացն անդաման նորա, և բազմութիւնն որ շուրջ կացեալ էին՝ լային ամենեքեան։ Եւ Աբգարոս ծառայ և դպիր գոլով սրբոյն, որ հրաման առեալ էր մի ըստ միոջէ գրել զամենայն, իբրև տեսի զանչափ նեղութիւնն՝ ի բաց ընկեցի զքարտէզն՝ ի ձեռաց իմոց, երթեալ անկայ առ ոտս նորա լալով դառնապէս. և տեսեալ սրբոյն զարտասուանս իմ՝ ասէ ցիս նուաղ և տկար ձայնիւ. Ո՛վ Աբգարոս, մի տրտմիր և մի հեղգար՝ ի գործոյդ քումմէ, այլ զոր սկսար՝ կատարեա, և անսա տակաւիկ մի, զի տեսանելով քո զվախճան կատարածի իմոյ՝ գրեսցես։ Եւ զայս իբրև ասաց՝ համբարձ զաչս իւր յերկինս և ասէ. Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Աստուած իմ, որ անձառելի բարերարութեամբ քո մատակարարես զամենայն, որ և՝ ի ձեռն միածնի Որդւոյ քո և Հոգւոյդ՝ պարգևեցեր ինձ համբերութիւն, զի դու, Տէր, յաւուրս խոստացար ինձ և ասացեր, Թէ՝ Ոչ Թողից զքեզ, այլ յամենայն ժամ եղէց ընդ քեզ և փրկեցից զքեզ։ Եւ արդ ընդ Էր Թողեր զիս, Աստուած իմ, և հեռի արարեր զզըղ-

Թուխիան քո լինէին. քանզի վայրենաբարս պատանք պիշատեցին զմարմինս իմ վասն սիրոյ անուանդ քո. բնիկ աչաց իմոց արտաքս ելին լինէին, և մարմինք իմ հալեցան՝ ի հրոյ, և մատունք իմ փշրեցան, և եղեալ իմ այլազունեալ եղեն, արտաքոյ եղեն մարդկային բնութեանս, անձն իմ ատանեալ դողացաւ յերկիւղէ չարչարանաց խաչին: Եւ արդ, Տէր իմ և Աստուած իմ, վասն քո հանքերի այսմ առեներին, տարեալ սրոյ և հրոյ և բազում նեղութեանց. վասն որոյ աղաչեմ զքեզ ընկալ զհոգիս իմ վաղվաղակի, և հանդո ըստ հաճոյից քոց, զի դու կարող ես յամենայնի:

Եւ զայս իբրև ասաց՝ լուեաց. քանզի ներգևեալ էին առենայն անդամք մարմնոյ վկային, և յօշեալ արտաքեալ գոգ որովայնի նորա ի քերանացն և յոզորաց ճեծն առնելոյն: Իսկ անօրէնն և ամպարիշտն Լիկիա նէ կարծեցեալ թէ մեռաւ սուրբն, հրամայեաց պահապանս կացուցանել, զի զօրն և զպիղերն ոսկեղէն՝ ի վերայ խաչին ազգին մարմնոյն: Իսկ յառաջին պահու պիղերոյն՝ առաքեցաւ հրեշտակ Աստուծոյ, և ելուցեալ՝ ի խաչէն առողջացոյց առենևին զմարմինս նորա, և ասէ. Ուրախ լեր և զօրացիր, զի Տէր ընդ քեզ էր և է և եղիցի յաւիտեան. և արդ ընդէր, ասացեր, թէ հեռացար լինէն. վասն որոյ կատարեաց զընթացս Աքնուեան քո, և դու երթաս առ Յիսուս փրկիչն և ընկալցիս զանապական պսակն յաղթողութեան արդարոյ: Եւ զայս ասացեալ՝ վերացաւ յերկինս: Իսկ առն Թէոդորոս տեսեալ զմարմին իւր առենևին քաշկեալ՝ ի վերաց անտի՝ ամբարձ զձեռն իւր յերկինս, զհանայսն զՏեառնէ և ասէր. Բարձր առնեմ զքեզ, Աստուած իմ և Թագաւոր իմ, և օրհնեմ զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից: Եւ՝ ի բազում ժամն աղօթեալ՝ առաքեաց զանձինն:

Եւ ընդ այգն ընդ առաւօտն կոչեաց Թագաւորն երկուս ոմանս՝ ի պատուաւորացն և ասէ. Երթայք հանդերձ զօրականօք, իջուցէք՝ ի խաչէ անտի զչարաձեռ մարմին խաբողին այնորիկ և բերջնք առաջի իմ, զի հրամայեցից դնել՝ ի կապարեայ տապանի և ընկենուլ՝ ի խորս ծովու, զի մի յաւիշտակեալ քրիստոնէ-

ին առեալ պատուեսցեն ըստ սովորութեան իւրեանց։ Եւ իբրև գնացին զօրագլուխքն և մինչդեռ ՚ի բացեայ էին՝ տեսին զկապն ունայն ՚ի մարմնոյ սրբոյ վկային և հիացեալ զարմանային։ Եւ ասէ Անաթոքոս ցՊատրիկիոս. Արդեօք ձշմարիտ է զոր ասեն քրիստոնեայքն, եթէ Քրիստոս յետ երից աւուրց յարեաւ ՚ի մեռելոց, քանզի այժմ տեսանեմք ստոյգ եղեալ զբանն նոցա։ Իսկ Պատրիկիոս ընդունայնեալ առ խօսքն, տեսանելով զսուրբ վկայն Թէոդորոս նստեալ մերձ առ խաչին ամենևին առողջ մարմնով, և պատմէր բազմութեան ամբոխին զմեծամեծ սքանչելեացն Աստուծոյ որ եղեն առ նմա, ազատակեալ երկոցունցն մեծաւ ձայնիւ և ասեն. Մեծ է Աստուածն քրիստոնէից և չկայ այլ որ Աստուած բայց ՚ի նմանէ։ Եւ երթեալ անկանէին առ ոտս սրբոյն հանդերձ զինուորօքն որք ընդ նոսա՝ թաւալ ուղեսուն և երկու, և ասէին Թէ և մեք քրիստոնեայ եմք և Քրիստոսի ծառայք. աղաչեմք զքեզ, ընկալ զմեզ զտգիտացեալսն ՚ի ձանապարհէն ձշմարտութեան, և աղաչեա վասն մեր զարարիչն Աստուած, զի և զմեզ արժանի արասցէ ողորմութեան ընդհատ իւրոյ։ Ձայս լուեալ Թագաւորն, յոյժ բարկացեալ, հրամայեաց բզեզխին՝ որում անուն էր Կեսարիոս, զի առցէ ՚ի զօրականացն անձինս երեք հարիւր, որք երթեալ կոտրեսցեն զնոսա։ Եւ իբրև գնացին ըստ աջոզելոյն Աստուծոյ, տեսեալ զսքանչելիսն Աստուծոյ հաւատացին և նոքա ՚ի Քրիստոս. և եղև ժողով բազմութեան ամբոխին որք աղաղակէին մեծաձայն բարբառով և ասէին. Մեծ է Աստուածն քրիստոնէից, այն որ այսպիսի սքանչելիս արար, նա միայն է Աստուած. արդ եկայք քարկոծ արասցուք զանօրէնն Լիանէս, զի Թագաւոր մեր Աստուած է՝ զոր Թէոդորոս քարոզեաց։ Եւ ՚ի լինել այսպիսի խառնակութեանց՝ յոյժ ամբոխէին ընդ միմեանս, բազում արիւն հեղուլ Թիւն լինէր ՚ի մէջ խառնիճաղանճ ռամկին։ Իսկ մի ումն յանօրինացն՝ որում անուն էր Կանդրոս, հանեալ զսուսեր իւր՝ ընթացաւ ՚ի վերայ սրբոյն Թէոդորոսի զի սպանցէ զնա. և տեսեալ զայն բզեզխին՝ ձգեալ ձեռն իւր կորզեաց զսուրբն ՚ի նմանէ, և սպան զանօրէնն Կանդրոս։ Իսկ այլ ումն՝ որում անուն էր Մեր-

ապա՝ ելեալ ընդ մէջ ամբոխին յարձակեցաւ ՚ի վե-
րայ բռնեշխին և հարեալ սրով սպան զնա։ Իսկ երա-
նելին իբրև եառ զչարամուխեանն խռովութիւն, մը-
տեալ ՚ի մէջ նոցա և աղաչանօք խաղաղացուցանէր
զամբոխն. և առեալ բազմութեանն զսուրբն՝ դարձան
՚ի քաղաքն մեծաւ ուրախութեամբ. և մինչդեռ ան-
ցանէին և մերձ եղեն ՚ի դուրս բանդին, ուր էին ար-
գելեալ կալանաւորքն ամենայն, աղաղակեցին ամե-
նեքին ՚ի բանդին և ասեն. Ողորմեաց մեզ, ծառայ
Աստուծոյ բարձրելոյ։ Եւ ժողովուրդն իբրև լուան՝ ա-
սեն. Հրամայեա մեզ զի խոտակեսցուք վաղվաղակի
զդուրս բանդին, և ազատեսցուք զարդելեալսն որ ՚ի
նմա։ Իսկ սուրբն արգել զնոսա ՚ի խորհրդոցն. և ինքն
մերձ եղեալ առ դուրսն՝ աղօթեաց առ Աստուած, և
ինքեաց նշանաւ խաչին. և ինքնին բացեալ եղև, և
կապանք նոցա լուծան. և ելեալ արտաքս արգելեալքն
անկանէին առ ոտս նորա և գոհանային զԱստուծոյ
և զսրբոյն, և նա ասէ ցնոսա. Երթայք խաղաղու-
թեամբ յիւրաքանչիւր տեղիս։ Բազում և այլ սքան-
չելիս կատարէր Աստուած ՚ի ձեռն նորա, զի հիւանդք
և ախտաժէտք և այսահարքն բժշկէին աղօթիւք նորա։

Եւ տեսեալ անօրինին Լիկիանէ զի ամենայն ժողո-
վուրդն Հելենացւոց՝ ուրացեալ ՚ի բաց կացին յաս-
տուածոյն պաշտամանէն և հաւատացին ՚ի Քրիստոս,
բարկացաւ յոյժ և առաքեաց զօրականս ՚ի զինուո-
րացն, զի երթեցեն գաղտ յամբոխն և հատցեն զգլուխ
սրբոյն. որք եկեալ վաղվաղակի կատարէին
զհրամանս նորա, հատանելով սուսերաւ զգլուխ երա-
նելոյն։ Եւ այսպէս կատարեցաւ յաղթող և մեծ նա-
հատակն Քրիստոսի սուրբն Թէոդորոս, յամենեսեան
յօգոստոս որ օր ՚ի. էր, ՚ի փառս Աստուծոյ։

Իսկ յետ վկայութեան սրբոյն՝ ըստ հրամանի նորին,
որպէս յառաջագոյն պատուիրեալ էր Աբգարու ծա-
ռայի իւրոյ, առեալ զմարմին սրբոյն պատեցին սուրբ
կտաւօք և անուշահոտ խնկօք, և եդին ՚ի տապանի և
տարեալ հանգուցին ՚ի ժառանգութիւն նորա հայ-
րենի գեղջն Եւխայտեայ։ Եւ բազմութիւն ժողո-
վրդեան Աւռակէայ քաղաքին երթալով զկնի նշխարաց
սրբոյն, մոմեղինօք լուցեալք և խնկօք անուշահոտիւք

և երջօք հոգևորօք ըստ սովորութեան քրիստոնէից
և եդին յիւրում հանգստարանին։ Եւ բազում աքան-
չելիք կատարեաց Աստուած՝ ի ձեռն գերեզմանի նըշ-
խարաց սրբոյն, որ լինի մինչև ցայսօր, որ հաւատով
մերձենան՝ ի նա. զի յօր յիշատակի վկային լինի բազ-
մութիւն ժողովոց յամենայն ազգաց, որք մեծաւ պա-
տուով և ընծայիւք կատարեն զյիշատակ նորա, զի
Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ։ Քանզի
սուրբս այս առաւել քան զարեգակն պայծառացոյն՝
անհուապէս փայլմամբ փայլեցոյց զվարս առաքինու-
թեան իւրոյ ամբիծ և ուղիղ հաւատով, հերքեալ
զիշխանն անօրէն հանդերձ գործակցօք իւրովք. սա և
զխոստովանութիւն անշարժ յուսոյն հաստատուն պա-
հեաց, և զԱստուած կենդանի՝ ի կեանս իւրում փա-
ռաւոր արար։ Սա խաչակից և մահակից վկայ եղև
կամաւոր չարչարանացն և մահուանն Տեառն, որում
փոխանակեալ զմահ իւր՝ մատոյց անուշահոտ պատա-
րագ ըստ հաճոյից նորա։ Քանզի ձշմարիտ մահ սորա
հաշտութիւն եղև հրեշտակաց և մարդկան, բարձուա-
նիծից և ընտանութիւն առ Աստուած։ Սա և հեղ-
մամբ արեամբն իւրով՝ ի բաց ջնջեալ չինջց զկուռ-
պաշտութիւն մոլորութեանն, և եղև հիմն հաւատոյ,
ինչք եկեղեցւոյ, զուարն յերկինս մտողաց։ Սա և՝ ի
մէնջ պատուի յիշատակօք և տօնիւք պայծառակեր-
պութեամբ։ Ջպատմութիւն նահատակութեան նորա
գրելով և աւանդելով ազգաց որ գալոց են, զի լցուք
վկայք վկայեցելոյն, մինչև հասցուք ամենեքին առ
Հանդիսապետին Քրիստոս։ Սա վասն մեր բարեխօսէ
միշտ առ բարերգութեն Աստուած, զի և մեզ բացցէ
զուարն ողորմութեանն, վայելել ընդ նմա յանապատ
բարիսն։ Ամէն ողք հաւատով և երկիւղիւ և մեծաւ
յօժարութեամբ կատարեն զյիշատակ վկայիս Քրիս-
տոսի, զոր լինչ և հայցեն՝ ի Տեառնէ՝ եղիցի նոցա. և
մահուակից և վարձակից եղիցին գործոց ընդ ամենայն
սուրբս՝ ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, որում փառք
և զօրութիւն յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Թէոդոսիոսի Եպիսկոպոսի և Թէոդուլեայ կախարդին։

Յաղի ինն[ե]ամանեքորդի Վիոկղետիանոսի Թագաւորի, և յառաջին աղի հալածանացն, որոյ Վիոկղետիանոս եօթանասուն աստուածս ունէղէին, և կոչէր ի նոսա մեծ Աստուած զԱպողոնն յարուսան, և կգան՝ զԱստղիկ։ Եւ ետ հրաման ի Թագաւորութեանն իւրում առնել, թէ՝ Որքա են աստուածք որ արարին զերկինս և զերկիր, և որ ոտքա հնազանդի կացցէ և առցէ պարգեւս բազումս. իսկ որ ոչ հնազանդի Աստուծոյ՝ զոհել և երկիր պագանել, տանջեսցի չարաչար տանջանօք, զի զնմա հրամանս արհամարհեաց։

Յայնժամ Վիոկղետիանոս ետ զնոսա չորից զինուորաց, զոր ունէր յարքունիսն պատուականագոյն, որոց անուանքն են այս. Բասոս, Եւսեբիոս, Եւտիքոս, Բասիլիոս. և ետ զնոսա ի նոսա զի պահեսցեն։ Եւ նոցա առեալ մուծին զնոսա ի տունն Բասի ի պահ, և էին անդ զամիսս երիս։ Եւ յորժամ կամէր անաստուածն Վիոկղետիանոս նոցա զոհել կամ երկիր պագանել, հրամայէր քրմացն բերել զնոսա ի հրապարակ, և բերէին զնոսա քուրմքն սրբեալ ի նոցանէ զի ի վերայ անկեալ փոշին, ջնջէին և շոգացուցանէին, և այլ պէսպէս պաճուճանս առնէին նոցա, և քարոզ կարգային առեալ. Որքա են աստուածք որ կերցուցանեն զաշխարհս ամենայն։ Եւ ահ մեծ արկանէին ամենայն

*ապգաց։ Եւ յորժամ տեսանէր զնոսա Թագաւորն՝ ա-
րագ անկեալ երկիր պագանէր նոցա. և եդեալ զծի-
րանիս առ ոտս նոցա՝ զոհէր և ասէր. Սոքա են աս-
տուածք որ կեցուցանեն զմեզ։*

*Եւ այս այսպէս եղեալ, մատեաւ յանկարծակի ե-
պիկուրեան, որում անուն էր Թէոպոնէոս, որ յա-
ռաջ վկայեաց յայն հալածանս. և ասաց Դիոկղե-
տիանոսի Թագաւորի. Գիտեա Թագաւոր, զի ոչ են
սոքա աստուածք, այլ ոսկի և արծաթ և փայտ և քա-
րինք, գործք ձեռաց մարդկան. աչս ունին և ոչ տե-
սանեն, ականջս ունին և ոչ լսեն, ձեռս ունին և ոչ
շօշափեն, ոտս ունին և ոչ գնան. գործք ձեռաց մարդ-
կան, հիւսանց, ոսկերչաց և ձախարակահանաց. ոչ
չար ումեք կարեն առնել և ոչ բարի։ Այլ Աստուծոյ
կենդանւոյ և ճշմարտի՝ արարչի երկնի և երկրի և ծո-
վու և ամենայն որ ի նոսա, և ստեղծչի և արարչի ա-
մենայն աշխարհի, անեղևաւթի և անհասի, որ միայն
յաւիտեանս յաւիտենից, արարչին զերկինս և զեր-
կիր քանիւ իւրով, որ ընդհեաց մեզ շունչ կենդանու-
թեան, նմա պարտ է երկիր պագանել և ի նմանէ
երկնչել. Հանդերձ միածնաւ Որդւով նորա Տէրամբ
մերով Յիսուսիւ Քրիստոսիւ, որով արար զարարածս.
նա է ճշմարիտ Աստուած։ Քանզի վասն փրկութեան
մարդկան խնամեալ՝ առաքեաց զմիածին Որդին
իւր զՏէր մեր Յիսուս Քրիստոս, զի զերծուսցէ զազգս
մեր ի մոլորութենէ աշխարհիս. և նա եկեալ փըր-
կեաց զմեզ, զինքն մատնեաց վասն մեր. երկայնամիտ
և բազումողորմ։ Արդ պարտիմք զնա ճանաչել և զո-
հանալ գիտելով զերկայնմտութիւն նորա, քանզի
նա է Աստուած. այլ սոքա որ ի ձէնջ կոչին աստուածք՝
մոտիկք են, քանզի հալչին հրով և ապականին, և ե-
թէ տաս ինձ ի վերայ սոցա իշխանութիւն՝ տեսցես
զսուտս ոչինչս։*

*Եւ բարկացեալ Թագաւորն՝ ասէ ցնա. Որպիսի՞
պատուի ես, զի զայդպիսիսդ իշխես ասել։ Եւ պա-
տասխանեալ երանելին ասէ. Քրիստոնեայ եմ և եր-
կիւղած Աստուծոյ։ Ասէ ցնա Թագաւորն. Քրիստո-
նեայ ես Թէ և եպիսկոպոս։ Պատասխանեալ երանե-
լին. Քրիստոնեայ եմ և եպիսկոպոս. այլ այժմ լաւա-*

զոյն եպիսկոպոսութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ցանկամբ, յաւիտենականին և անապականին. քանզի այսր՝ աշխարհիս եպիսկոպոսութիւնս առ ժամանակ մի է, իսկ յորում յուսացեալքն՝ անանց է. և երանելի է մարդ որ զկեանս իւր ամբիծ վարեաց յաշխարհիս յայսմիկ, որ պարծանս եպիսկոպոսութեան ընկալցի՛ ի հանդերձելումն աշխարհին:

Ասէ ցնա Թադաւոսն. Ո՛չ՝ ի հակառակութիւն քոյ նոյ կոչեցար՛ ի քէն, այլ՛ ի հաւանութիւն գործոյ յանդիմանականից, զոհելասուածոյ, մանաւանդ մեծին Աթոռոյն, որ կարողն է փրկութիւն քեզ շնորհել. արդ այժմ գիտեա, թէ զայդ առնես՝ ինչ և պարզեա առնուս լինիցին. քանզի որպէս կարող եմ մեծաձայն պատուել զտոդս պատուիրանաց իմոց, նոյնպէս և տանջել զընդդիմակացան իմ: և այժմ խնայեա՛ ի քեզ, և շահեա զտանջանսդ՝ զոհելով, ապա թէ խստանաս ընդդէմ, հարկեա զիս վճիռ տալ՛ ի վերայ քո:

Եպիսկոպոսն ասաց. Գիտեա Թադէոս, զի զայս աստուածս ոչ պաշտեմ և ոչ զոհեմ, քանզի ոչ են աստուածք. և տանջանաց քոց և խոշտանգանաց և կտտանաց՝ և ոչ սակաւ մի հոգամ վասն սիրոյն Տեառն, քանզի պրեալ է, թէ մի երկնչէք՛ ի սպանողաց զմարմին և զոգին չկարողաց սպանանել: Այլ մարմնոյ իմոյ ունիս իշխանութիւն, որպէս կամիս արա ընդ սա. քանզի պատրաստ եմ ամենայն տանջանաց զոր ածես՛ ի վերայ իմ՝ համբերել, մինչև խափանեցիս զամենայն տանջանս քո յանձն առնուլ, որ հանապազօր ածես՛ ի վերայ իմ: և ոչ երկեայց վասն հատուցս այսոցիկ պատերազմելով, այլ Աստուծոյ զօրութեամբն յաղթեցից քեզ և տանջանաց քոյոց:

Յայնժամ բարկացեալ Աբիտղեւտիանոսն Թադաւոս

ըի, և մեծաւ ցաւմամբ հրամայեաց ՚ի հնոց հրոյ արկանել զնա։ Իսկ անօրէնն զօրականքն պատրաստեցին զհնոցն յայգուէ մինչև ցինն ժամն. և հնոցին բոլբոջեալ առաւել յոյժ. պատասխանեաց երանելի Եպիսկոպոսն՝ մինչև արկեալ էին ՚ի հնոցն, և առաց ցզօրականան. Ահա տեսանէք զզօրութիւնն Քրիստոսի մեր, զի վասն անուան նորա այս ընդ իս անցանէ։ Եւ զայս առացեալ ընկէց զինքն ՚ի հնոցն առաջի ամենայն զօրականացն և ամենայն բազմութեանն. և էր ՚ի մէջ հնոցին փառաւորեալ զՍուրբն։ Իսկ զօրականացն հաւատարկին զնա մեռեալ, գնացին։

Եւ մօտ ՚ի մէջ գիշերին կացեալ երանելին ՚ի մէջ հնոցին՝ աղօթեաց և ասէ. Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, վասն որոյ զտանջանս զայս յանձն առնում վասն անուան քո. զի ամենեքեան որ կամին վըկայել յետ իմ՝ զօրացին լինելով նշանօքն. այո Սուրբ ատուածդ իմ, և յոյց անօրինիս եթէ ոչինչ զօրէ։

Եւ զայս առացեալ երանելոյ եպիսկոպոսին ՚ի հնոցին. և ահա լոյս երևեալ առաջնորդէր նմա, ածելով զնա ուր թագաւորն ՚ի քուն էր։ Եւ կացեալ առաջի դրանն, և նորա լսացեալ, և այլ դրունքն միանգամայն բացան, և առաջնորդէր նմա լոյն՝ մինչև կացոյց զնա ՚ի սենեկի թագաւորին. զարթոյց զնա և ասէ. Թագաւոր, ձանաչէս զիս. ես եմ Թէոպոնթոս մարդն Աստուծոյ, ոչ մեռայ այլ կեաց։ Յայնժամ լուեալ թագաւորն՝ խռովեցաւ յոյժ։ Եւ իբրև այդ եղև՝ հրամայեաց թագաւորն յառաջ մատուցանել զզօրականսն, և ասէ ցնոսա. Վասն էր զդատապարտեալն կինդն զբրիստոնեայն՝ ոչ արկիք ՚ի հնոց հրոյն. կարծեմ թէ արհամարհեցէք զհրամանս իմ։ Պատասխանեցին զօրականքն և ասեն. Թագաւոր, յաւիտեան կաց. մարդն այն յերեկի հետէ բոլորախառըշ սատակեցաւ։

Յայնժամ մոլեալ թագաւորն եկն ՚ի հնոցն, և մերձեալ՝ լսէին զօրհնութիւնս նորա և զօրհնէին նորա զՍուրբն ՚ի մէջ հնոցին։ Եւ իբրև ետես երանելի եպիսկոպոսն զթագաւորն և զզօրականսն՝ ել ՚ի հնոցէն. և կացեալ առաջի թագաւորին՝ ասէ. Ահաւասիկ ես եմ մարդն Աստուծոյ. ոչ մեռայ, այլ կեաց զի զօրութիւն Աստուծոյ իմոյ յայտնեսցի ինձ։ Ար-

եալ և խուռվեալ Դիոկղետիանոսի Թագաւորին՝ ա-
սաց[1]. Տեսանէ՛ք զզօրութիւն կախարդութեան քրիս-
տոնէից. քանզի լսեմ եթէ զգործ կախարդութեան
անուամբն Յիսուսի առնեն, վասն որոյ և յաջողի նո-
ցա։ Եւ կամեցեալ գիտել զեղելոց զարմանալեացս զո-
րութիւնն, հրամայեաց ըմբռնել շուն և ընկեւուլ՝ի
հնոցն, և առժամայն այրեցաւ շունն, և այն զի երկ-
րորդ օր էր յետ թողլոցն զհնոցն։

Եւ տեսեալ Թագաւորին և զարմացեալ՝ ասէ ցնա.
Յայտ հեռէ գիտացեալ զքեզ կախարդ, անցուցից
ընդ քեզ իբրև ընդ անօրէնն։ Եւ տուեալ զնոսա չո-
րից զինուորացն, առ որս էին աստուածքն՝ի պահե-
ոի, հրամայեաց զնա ընկեւուլ՝ի տուն մի և ծեփել.
և ոչ հաց և ոչ ջուր տալ նմա, մինչև նա հրամայեսցէ
զառաջեաւ ածել զնա։ Յայնժամ երանելի եպիսկո-
պոսն արդելեալ զքսան և զերկուս աւուրս ոչինչ չա-
շակեալ. և՛ի քսան և երրորդի աւուրն յարուցեալ
եպիսկոպոսն՝ի գիշերի՝ աղօթեաց և ասէ. Լուր ինձ
Տէր, որ հանապազ լսես կարդացողաց առ քեզ՝ի նե-
ղութեան. ակնդ նկատող՝ որ խնամաս զսիրտս ամե-
ցուն որ խոնարհեն զքեզ ամենայն սրտիւք. աղերսիւր կե-
նաց՝ որ արբուցանես զամենայն ծարաւիս՝ որ խընդ-
րեն զքեզ. Հանապարհդ արդարութեան՝ որ լուսաւո-
րեցեր զաչսն, զոր ոմանք՝ի մարդկանէ ոչ ծա-
նեան։ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, վասն
որոյ ընդ իս այս անցք անցանեն. լուսաւորեա զիս,
Տէր, քաղցր զօրութեամբդ, որում ցանկամ բոլորով
սրտիւ խնդալ, աղաչեմ զի ամենայն որ որ լսիցէ զբանս
իմ՝ զօրացի՛ր՝ի պատերազմել վասն հաւատոյս այ-
սոցիկ։

Եւ զայս ասացեալ երանելոյն՝ի մէջ գիշերի հր-
ամայեաց տանն սասանեցան, և ամենայն տունն լուսաւո-
րեցաւ. քանզի Տեառն Յիսուսի Քրիստոսի նամանեալ
մանկան պեղեցկի լի շնորհօք՝ երևեցաւ նմա և ասէ.
Խաղաղութիւն ընդ քեզ, Թէոպոնթոս. մի երկնչիր՝
քանզի ընդ քեզ եմ և զօրացուցանեմ զքեզ մինչև
կատարեացես զմատակարարելոյն քեզ։ Եւ ամենե-

1. Յօր. Դիոկղետիանոսի ասաց նոցա։

քեան որ ՚ի տանն էին՝ խռովեցան յերկիւղէ մեծէ։ Եւ իբրև այգ եղև՝ յիշեցին զեղեալ մեծ զարմանալիսն, և ասեն. Ջինչ արդեօք լիցէ ազգս այս մեծ տրա։ Եւ ՚ի քան և յերկրորդում աւուրն կամեցաւ Թագաւորն գխոտել, եթէ կենդանի և ևս լիցէ քրիստոնեայն եթէ մեռաւ։

Յայնժամ բացեալ զդուրսն՝ գտին զնա իբրև զմարդ յուրախութեան ՚ի բազում գինեաց, զնորօքն որ զնովաւ վարէին. և կալեալ զնա ածին առ Թագաւորն։ Եւ իբրև եառ զնա Թագաւորն՝ զարմացեալ հիացաւ, և ըմբռնեալ նա զՀանդերձ իւր՝ պատառեաց և ասէ. Տեսանէք զզօրութիւն կախարդութեան քրիստոնէից։ Եւ երանելոյ եպիսկոպոսին պատասխանեալ ասէ ցնա. Մինչև ցե՞րբ խաւարեցուցանես զսիրտ քո և ոչ կամիս իմանալ զաքանչելիս Աստուծոյ իմոյ, վասն որոյ զայս չարչարիմ։ քանզի նա է որ տայ ինձ զօրութիւն, և ամենեցուն որ ուղիղ սիրտ ունին առ անուն Յիսուսի Քրիստոսի, յաղթել քեզ և տանջանացդ քոց և հօրն քո սատանայի։

Յայնժամ մոլեալ անօրէնն Դիոկղետիանոս՝ ասէ ցնա. Ո՞վ է Յիսուս. կամի՞ս չարաչար մեռանել. զի՞ տես զնի Յիսուս ոչ կարացէ փրկել զքեզ, թէ և զկախարդութիւնդ նոքա առնես. այլ եթէ զոհես ցես մեծի աստուծոյն Ապողինի՝ կարող է փրկել զքեզ։ Եւ երանելոյ եպիսկոպոսին պատասխանեալ ասէ. Ոչ զոհեմ։ քանզի անուանեալն ՚ի քէն Ապողինի անուն՝ կորուստ է. վասն այսորիկ ամենայն որ հաւատայ ՚ի նա՝ կորնչի յաւիտեան։ Եւ բարկացեալ Թագաւորն հրամայեաց փորել զաչն նորա, և զբնել յաջոյ ձեռին նորա. և յետ այնորիկ մրցել զնա ՚ի բանդ։ Եւ իբրև եմուտ ՚ի բանդն, դարձեալ ըստ սովորութեան ՚ի մէջ գիշերի աղօթէր և ասէր. Լուր ինձ, Տէր Յիսուս, վասն զԹութեան քո. երկայնամըտեա՛ զի՛ս, Տէր իմ, զի բազում անձինք հաւատացեն ՚ի քեզ վասն զօրութեանց քոց՝ որ լինին առ իս, քանզի ես եմ առաջին վկայ այժմու հալածանացս. և խոսեացի նշանքս այս ընդ ամենայն երկիր, զբազումս լուսաւորել զօրութեամբ քով։

Եւ զայս նորա աղօթս արարեալ՝ լոյս մեծ ծագեաց

’ի բանդէն, և եհար զփորեալ ակն նորա և անդէն ոչ-
ջացոյց իբրև զմիւսն ևս։ Եւ իբրև այպ եղև՝ հրամա-
յեաց Թագաւորն զառաջեաւ ածել զնա, և տեսեալ
զնա երկու աչօք առողջ, բարկացաւ յոյժ, և երդուեալ
ասաց. Իշխանութեամբս Հռովմայեցւոց և իմով փըր-
կութեամբս, որ է մեծ աստուած Սպողիէն, ոչ ևս լռեմ
քեզ, մինչև կոչեցից կախարդ ի լաւագոյն քան զքեզ,
զի լուծցէ զկախարդութիւնդ քո. և զայս ասացեալ
հրամայեաց մըցել զնա ’ի բանդ։ Եւ բարկացեալ նմա
հրամայեաց բերել ոսկի լերս հարիւր և քսան. և
հրամայեաց գրել ընդ ամենայն Թագաւորութիւնն
իւր և ընդ կուսակալս՝ երդմամբ հաստատել զայս.
Եթէ ոք եկեսցէ առ իս կախարդ, որ կարող է խա-
փանել զկախարդութիւն քրիստոնէիս այսուհիկ, տաց
նմա ոսկի լերս հարիւր և քսան, և այլ ևս բազում
պարգեւս ընկալցի յինէն։

Եւ լուեալ կախարդին ուրումն մեծի՝ որոյ անուն էր
Թէոնիաս, մատուցեալ առ Թագաւորն՝ և ասէ ցնա.
Թագաւոր, զու յաւիտեան կաց, ես խափանեմ զկա-
խարդութիւն քրիստոնէին. քանզի ոչ են անհնա-
րինք և ոչ մի ինչ։ Եւ ուրախ եղեալ Թագաւորն՝ գնաց
’ի բաղանիս, լուանալ հրամայեաց նմա և ընդ իւր
Ճաշակել։ Եւ ’ի Ճաշելն՝ ասէ ցնա. Զանձրացաք ազ-
գաւ քրիստոնէից, այլ առաւել արուամբս այսուհիկ զոր
այժմ ’ի բանդի ունիմ, հռչակաւոր եղև ’ի քաղաքիս
վասն զօրութեան կախարդութեան իւրոյ. արդ եթէ
խափանեացես այժմ զմեղքեննայս նորա՝ տուր և պար-
գեւս ընկալցիս յինէն։

Պատասխանի տուեալ Թէոնիայ կախարդին՝ ասաց.
Թագաւոր, մինչ իշխէ ինչ առնել առաջի իմ. այժմ
ահա լուծից առաջի քո զամենայն կախարդութիւնս
նորա։ Եւ ուրախ եղեալ Թագաւորն՝ ասէ ցնա. Կամիմ
այժմ նշան ինչ տեսանել ’ի քէն։ Ասէ Թէոնիաս.
Սծցէ զուարակ մի. և ածաւ։ Եւ յարուցեալ Թէ-
ոնիաս խօսեցաւ յականջս զուարակին, և վաղվաղակի
հերձաւ զուարակն ընդ մէջ։ Յայնժամ զարմացեալ
Թագաւորն՝ ասէ ցնա. Ո վերայ եղելոյ նշանով զի-
տեմ եթէ այդպարև կարող ես լուծանել զկախարդու-
թիւն քրիստոնէիս այսուհիկ։ Եւ պատասխանեալ Թէ-

ոչինաս ասաց. Մնա և տեսանես զքանչելագործն և ա. և հրամայեաց քերել կշեռս և կշռեաց զզուարակն, և պատ կշիռ երկոքեան կխոխք զուարակին։

Եւ զարմացեալ՝ի վերայ իրացն Թագաւորն՝ հրամայեաց զառաջեաւ ածել զերանելի եպիսկոպոսն. և եկեալ սրբոյն՝ կացոյց առաջի կախարդին և ասէ. Գի՞տես և հաստատեալ եմ, եթէ կախարդ ես և մոլար, վասն այսորիկ ածի զկախարդս զայս. կամ խափանեա զկախարդու թիւն նորա ապա թէ ոչ խափանէ զքոյդ կամ սատակեալ դու զդա, և կամ թէ ոչ՝ դա զքեզ սատակէ, զի գիտացից թէ ով է՛ի ձէնջ Քարտարապետն։ Եւ երանելի եպիսկոպոսն ասէ ցնա. Ամենայն մարդ Աստուծոյ ոչինչ գործէ կախարդանօք, և ոչ ումեք կաղի զչար. այլ և վասն թէ շնաւեաց աղօթէ անդադար, և ողք առեանն զնա. վասն այսորիկ և ես վասն նորա առՏէրն իմ աղօթս առնեմ, զի թողեալ զսուտ կրութիւն իւր՝ եկեսցէ՛ի ճշմարիտ խոստովանութիւնն. քանզի Տէրն մեր Յիսուս Քրիստոս ոչինչ խնդրէ, բայց միայն զփրկութիւն մարդկան, մանաւանդ որ բոլորով սրտիւ խնդրեն։ Ա՛ գիտէ արդեօք եթէ և յայսպիսի աւուրս և սմա ինչ բարի լինիցի, թողեալ զհանապարհն մոլորութեան իմացի զճանապարհն արդարութեան միայն։

Եւ պատասխանեալ Թէոնաս ասէ ցԹագաւորն. Երկու նշանք են զոր առնելոց եմ. եթէ՛ի սոսա յաղթէ թէ ինձ՝ հաւատալոց եմ յաստուածն դորա։ Ասէ երանելի եպիսկոպոսն ասաց. Տեսանեմ զի առ սակաւ ամ հասանէ՛ի քեզ ընդհէն Աստուծոյ, որդեակ. արդ արա զինչ ասես քո՝ որովք հաստիս յաղթել ինձ, զի ցուցից քեզ զառաւել մեծութիւն Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի, որով պարծիմ և հանդարձակիմ։ Յայնժամ Թէոնաս իւրով կախարդութեամբ պատրաստեաց կերակուրս և տուեալ նմա ասաց. Եթէ զդա կերեալ՝ կեցցես, զարմացեալ եմ վասն հաւատոյ քոյ։ Ասէ սուրբն Թէոպոնթոս ասէ հեթանոսին. Ա՛յս է քո զօրութիւն. այժմ ցուցանեմ զզօրութիւն փրկչին իմոյ Յիսուսի Քրիստոսի. և առեալ կերաւ առաջի նորա և ոչինչ անց ընդ նա. քանզի դեռն եղև՛ի բերան նորա իբրև զմեղր քաղցր։

Յայնժամ զարմացեալ Թէոփիլա ասէ. Նշան ի այլ կամիմ առնել, և եթէ ոչ ինչ լինի քեզ յորժամ ընդեա, Հաւատամ Աստուածն քո: Եւ առեալ քաժակ խառնեաց իւրով կախարդութեամբն ի միս և ա դնել, կոչեալ ի վերայ նորա զանուանս դիւաց ոմանց, որպէս և կարծէր՝ մեծաց, զի դէպն կարասցէ ինչ ասել նմա. և մատոյց Թէոպհիլա ոսի: Եւ երանելոյն տեսեալ ձիծաղեցաւ և ասէ ցնա. Ա՛յս է զօրութիւն քո մե՞ծ. ես ցուցից քեզ զզօրութիւն Աստուծոյ՝ որով պարծիմ և ոչ ինչ ասիմ, և կամիմ զամենայն մարդիկ քաջութեամբ նորա պարծել: Եւ առեալ զքաժակն՝ տեառնապրեաց զինա անուամբն Քրիստոսի և արբ. և ոչինչ ամենևին ինչ եցաւ:

Եւ եղեալ այս այսպէս, Թէոփիլա կախարդ անկաւ առ ոտս երանելոյն առաջի Թագաւորին, խոստովանել և ասել. Արդարութեամբ ոչ է այլ Աստուած, ոչ է այլ համարձակութիւն, ոչ են այլ պարծանք, բայց միայն Յիսուս Քրիստոս. արդ կամիմ ապաշխարել վասն մեղաց իմոց, և այնպէս հաւատալ Աստուծոյն քում: Իսկ երանելի եպիսկոպոսն պատասխանի ետ նմա և ասէ. Տես մարդ դու, միթէ քեզ բանիւ միայն խոստովանիցիս առանց մտաց. քանզի Աստուած ոչ փորձի. զի նա քննէ զամենայն զիտս և զխորհուրդս: Պատասխանի ետ Թէոփիլա և ասէ. Ո՛չ ունիմ զսիրտ իմ առ Տէր, և ոչ ամենևին յերբեք հաւատացեալ են միտք իմ: և գիտացես գործովք զիս միտս, և հասցես ի վերայ անխոտոր խորհրդոց իմոց:

Եւ եպիսկոպոսն ասէ ցնա. Եւ ոչ ի նախանձ է իմ, եղբայր. Ի՛կ և դու ի գիտութիւն ճշմարտութեան. քանզի Տէր մեր Յիսուս Քրիստոս ապաշխարութեան և փրկութեան մարդկան հոգայ: Վասն այսորիկ և յինքն ոչ խնայեաց, այլ զինքն մատնեաց վասն մեղաց մերոց և ապրեցոյց զմեզ ի մահուանէ յերկնաւոր աշխարհին. և մարդիկ ոչ այնպէս երբեք արարին վասն չարչարակցաց իւրեանց, որպէս և նա ետ ցոյց ի մեզ՝ որ Աստուածն էր՝ վեճութիւն իւր և զթութիւն: Եւ զայս լուեալ կախարդին Թէոփիլայ և լեալ հոգւով սրբով՝ յանկարծակի մատեաւ առ Թագաւորն և ասէ ցնա. Քրիստոնեայ եմ և ծառայ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ: Լուեալ Թագաւորին

զաւուրին խռովեցաւ և զոչեալ պատց. Ո՞րչափ ծաղկեաց կախարդութիւն քրիստոնէից, տեսանէք յո՛ր բո՛ւմ զկախարդութիւն իւրեանց կատարեն։ Եւ բաւ կացեալ Հրամայեաց զերկոսեանն տանել՝ի բանդ։

Իակ երանելի եպիսկոպոսն խրատեաց զԹէոդիշաս. և կեա խրատելոյն մկրտեաց զնա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Եւ՝ի վաղիւ անդր Հրամայեաց Թագաւորն յառաջ ածել զԹէոդոտոնեթոս և ասէ ցնա. Ուրախ լեր, ամենայն կախարդաց վարդապետ. ոչ փրկեաց զքեզ՝ի ձեռաց իմոց զօրութիւնն այն յոր յուսացարն։ Եւ կոչեցեալ առ ինքն՝ ասէ ցնա պաղտ. Խրատ տամ քեզ մանաւանդ ինձ լսել, որ կարող եմ կեցուցանել զքեզ։ Իակ տուըբ եպիսկոպոսն յուսացեալ և հաստատեալ՝ի զօրութիւնն Քրիստոսի, մեծաձայն գոչեաց և ասէ. Ո՛վ քան զամենայն մարդիկ անզգամ, մինչև ցե՞րբ կամիս արգելուլ զիս յաւիտենական եպիսկոպոսութենէն, որոյ կամիմն յաւիտեան կալ։

Եւ բարկացեալ Թագաւորն՝ Հրամայեաց Հարկանել ցկոյս Հեռապոյնս և պրկել զերանելին յորովայնն, և կապել զոտս և զձեռս ընդ ցկոյն, և երեսքն զի Հայեսցին ընդ Հառապարթս արեգական։ Եւ ասէ ցնա. Ընդունեմ ընդ քեզ իբրև ընդ անօրէնն, մինչև գիտացից զզօրութիւն կախարդութեան քո։ Եւ այնպէս Հրամայեաց կոտոր մի սալ մեծ բերել և դնել՝ի վերայ որովայնի նորա։ Եւ բերաւ բարձեալ յոտն մարդ և եդաւ՝ի վերայ նորա։ Իակ քաջն Թէոդոտոնեթոս պատասխանեաց նմա ասելով. Ո՛յ և զօրութիւն քո անամօթ բռնաւոր. ես ցուցից քեզ զզօրութիւն Աստուծոյ իմոյ։ Եւ զայս ասացեալ գոչեաց մեծաձայն ասելով այսպէս. Տէր Յիսուս Քրիստոս, և յայսմ զօրութիւն ծառայի քո յուսացեալս՝ի քեզ, և յայտնեա անօրինիս այսմ զզօրութիւն քո։

Եւ զայս ասացեալ նորա և զինքն շարժեալ, Թաւալեցաւ վէմն՝ի նմանէ հեռապոյն իբրև կանգնացաւ հնգետասան։ Տեսեալ զայն Թագաւորին՝ զարմացաւ և ասէ ցնա. Ա՛րդարև ոչ գոյ լաւագոյն քան զքեզ յամենայն կախարդս։ Իակ երանելոյն պատասխանեալ ասէ. Կախարդ ոչ եմ, այլ մարդ երկիւղած

Աստուծոյ. և ամենայն երկիւղածն՝ Աստուած լսէ յաւուր նեղութեան և վշտի։

Եւ յայնժամ անօրէնն հրամայեաց զնա գլխիվայր զինն կախել. և ասէ ցնա. Անցուցանեմ ընդ քեզ իբրև ընդ անօրէն վասն կախարդութեան քո. և ե՞թող զնա կախեալ յայգուէ մինչև յերիս ժամն։ Եւ կեա այնուհետև հրամայեաց հատանել զչուանն՝ որով կապեալ էր զձեռս և զոտս նորա, զի անկեալ՝ի գլուխն՝ խորտակեսցի։ Իսկ ամենայն գովութեան արժանինն՝ զօրութեամբ Տեառն Յիսուսի Քրիստոսի գլխիվայր ոչ անկաւ, այլ ուղիղ անկաւ յոտս իւր։ Եւ բարկացեալ վասն այնորիկ անաստուած թագաւորն՝ ասէ. Կամիս գիտել եթէ կարէ աստուածն քո փրկել զքեզ՝ի ձեռաց իմոյ. կարող էր մեծ աստուածն Ա՜պողոն կեցուցանել զքեզ և տալ փրկութիւն քեզ. այլ վասն անլաւութեանդ քո և անղեղջ սրտիդ՝ տըւեալ քեզ վճիռ։

Եւ Հրամայեաց զնա գլխատել։ Եւ գիտացեալ զայն երանելոյն Թէոպոմաի, կոչեաց մեծաձայն և ասէ. Կեցուցեր զիս այսօր. քանզի ամբիծ կատարեցի զեպիսկոպոսութիւնս իմ յաւուրս իմ, խոստովանելով զՏէրն իմ Յիսուս Քրիստոս։ Եւ զայս ասացեալ և օրհնեալ զԱստուած, գոհացաւ՝ի վերայ այսոցիկ. և խաղաղութեամբ կատարեաց զվկայութիւնն իւր տուրբն Թէոպոմաս։

Եւ կոչեցեալ՝ի նմին աւուր թագաւորն զԹէոքիստ նաս, որ երբեմն կախարդն էր, և ասէ ցնա. Ջո՛հեա մեծի և անյաղթի Ա՜պողոնին։ Եւ պատասխանեալ Թէոքիստ ասէ. Մի լսցի թողուլ զբարի խրատն երկից երանելոյ եպիսկոպոսին և հեռանալ՝ի զօրութենէ Քրիստոսին իմոյ։ Եւ բարկացեալ թագաւորն ասէ ցնա. Որպէս զի ոչ կարաց փրկել զնա Աստուածն նորա՝ի ձեռաց իմոց, գիտեա զի և ոչ զքեզ փրկեսցէ։ Եա կամի՞ս պարգևել քեզ ոսկի շատ և տուրս բազումս, այլ դու փոխելանաս և զանզգամացիր իրս առնես. արդ անցուցից ընդ քեզ ըստ անզգամութեանդ քումմ։ Եւ Թէոքիստ ասաց. Գոհանամ զԱստուծոյ իմոյ, որ կեցուցանէ զիս և շնորհէ ինձ ժառանգել ընդ տուրբս իւր։

*եւ Թագաւորն բարկացեալ յոյժ՝ հրամայեաց խոր-
տատ հատանել մեծ և ընկենուլ զնա ի ներքս և
Թաղել, զի այնպէս կոխեսցի ի ձիոցն ոտից։ Իսկ ա-
ռաքինի նահատակն համբերեալ այնպիսի տանջանաց՝
արձակեաց զոգին. վկայեալ զբարւոք վկայու Թիւնն
խաղաղու Թեամբ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս. որում
փառք և զօրու Թիւն հանդերձ Հօրն և ամենասուրբ
Հոգւովն, յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

Վկայաբանութիւն Սրբոյն Թէոփիլոսի և պատրուհիկէի կնոջ նորա, և որդոյ նորա Դաւանիայ։

Ասաւելիոս բդեաշխ Եւրոպի զգեցեալ զկնին սատանայի և մոլեալ ինքն՝ի պաշտօն կուռցն, հարկ առնէր և ամենեցուն զնոյն գործել. և յաւուր միում մինչդեռ ամենայն հեթանոսականքն ժողովեալ էին՝ի պաշտօն կուռցն՝ Ասաւելիոս քրմապետ ասէ ցբբդեաշխն. Հրամայեսցէ ձեր քաջութիւնդ, զմոլորեցուցչին և զօտարս աստուածոցն զքրիստոնեայս՝ ածել՝ի պաշտօնս զի զոհեսցեն, ապա թէ ոչ հաւանեսցին՝ զի զանհաւատից պատիժս կրեսցեն։ Եւ բբդեշխին հրամայեալ, չոգան զօրականք բազումք և մտեալ յեկեղեցին՝ յափշտակեցին երբև զպայլս՝ի հօտէն Քրիստոսի ոչխար մի պարարտ հաւատովք, հաստատուն խորհրդովք, արթուն մտօք, որում անուն էր Թէոփիլոս, և ածին առ իշխանն, յոր տուրբն զայր ցնծութեամբ երբև՝ի հաշ թագաւորական, և ասէր. Ցհանապարհս քո, Տէր, ծանոյ ինձ, և զշաւիղս քո ուս ինձ. առաջնորդեա՝ի ճշմարտութեան քում։ Երբև ածին, ասէ ցնա բդեաշխն. Ցմէնչ ազգ ես։ Թէո փիլոս ասէ. Ծառայ Աստուծոյ բարձրելոյ անպիտան, այլ ըստ մարմնական՝ ազատ։ Բդեաշխն ասաց. Տեսանեմ ցաճ վարս՝ի քեզ և պատուեմ զքեզ երեսաց քոց, զթամ՝ի տղայական հասակդ քո, վասն որոյ խրատս տամ քեզ զոհել զի սիրելի լինիս թագաւորին

և բազում ընչից տկրնցես: Թէոփիլոս ասէ. Ոչ ողբելի բանիւք քոյք հաւանեցուսցես զիս, և ոչ ձըփմամբ խաղըից քոց հաւանեցուսցես զիս. քանզի ունիմ մարգարէս և առաքեալս որ հրամայեն արդարութեամբ ծառայել Աստուծոյ կենդանւոյ, զաստուածս սուտս անուանս կոչեն համերս: Եւ բդեաշխն ասէ. Կախեսցի և քերթսցի: Ապինդեա քերթը սուրբն՝ մեծաձայն ասէր. Բրիստոս, որ խաչեցար ի վերայ փայտի, որ զմահ մահու խափանեցեր, և զկաւարեալս աւարեցեր, որ յանօրինաց Թուք յերեսս առեր, և քոյոյ սուրբ Թքովդ լոյս ընդհեցեր, քաց ինձ ընդունն արդարութեան, զի մտից ընդ այնոսիկ և խոստովան եղից սուրբ անուանդ քում, զի դու ես որ փրկես զյուսացեալսն ի քեզ:

Ապինդեա նա զայս ասէր, քարոզն աղաղակէր դահձացն՝ յոլովել ի քերանն. և ցայնժամ քերեցաւ մինչև մերկացան ամենայն ոսկերք նորա: Եւ արբոյն առ ոչինչ համարեալ զցաւն՝ ասէ. Ծանօթ ես ի Հրեաստանի Աստուած, ըստ բազում գԹուխեանդ քո լուր ինձ և ճշմարտութեամբ փրկութեան քո կեցո զիս: Եւ բդեաշխն ասէ. Ետ կախարդս տանջեցի և սպանի, այլ այդպէս ժուժկալ ոչ ես և ոչ այլ ոք յիշխանացն եռես. և ասէ ցսուրբն. Աստուածոլքն, ի ձեռն տանջանաց ես գեղեցկացուցանեմ զքեզ. արդ մատիր զոհեա, զի հաշտեցուսցես զքեզ ընդ նոսա: Թէոփիլոս ասաց. Որպ աստուածոց: Բդեաշխն ասէ. Ապոլոնի և մեծին Դիոնոսի: Թէոփիլոս ասաց. Եւ ո՞ր ի նոցանէ զոր դու աստուածս կարծես՝ կարէ չար առնել ումեք կամ բարի: Բդեաշխն ասէ. Ամենեքեան: Թէոփիլոս ասէ. Խաբես, ո բդեաշխ, զոքա կուռք են համերք և կոյրք, և ոչ կարեն ումեք բարի ինչ առնել, վասն որոյ պարտ է փախչել ի նոցանէ. քանզի կենդանին և միանձնեալսն Աստուած ասաց, նման նոցա լինել զյուսացեալսն ի նոսա: Բդեաշխն ասէ. Մի հայհոյեր, մատիր և զոհեա: Թէոփիլոս ասէ. ԶԱստուած ոչ հայհոյեմ, այլ զկուռս և զդեւս ապականիս, քանզի չարիսոնեայ եմ և ոչ զոհեմ զի մի մեռայց: Եւ բդեաշխն հրամայեաց հուր լուցանել և ընկենուլ զնա ի նեղսն. և իբրև ընդ

կեցին զառըքն, կացեալ՝ի մէջ հրոյն՝ առէր. Ընդալ Թագաւոր, անբաժին գանձ, առըք օրինադիրը, մարգասէրը փրկիչ, Տէր իմ Յիսուս Քրիստոս, որ զքօրութիւն Հոգւոյդ սրբոյ առաքեցեր երկոց մանկանցն՝ի հնոցին, ոյք զփառս քո խոստովանեցին առաջի մարդկան, զքաջալերութիւնդ քո ընդհեցեր նոցա, և զքո հնոցին ցրտացուցեր, Աստուած զԹուխթեանց, Աստուած մխիթարութեանց, Աստուած հարցն. նոյնպէս առաքեա՝ի ժամուս յայսմիկ զՀրեշտակ օգնականութեան և ցրուեա զքոցս զայս. Աստուած, կենդանի է անուն քո յաւիտեանս: Եւ զայս առացեալ նորա՝ ցրուեցաւ քոյն, և նա կայր՝ի մէջ հնոցին և փառաւորէր զԱստուած: Եւ բարկացեալ բռնաշէն, հրամայեաց տանել զնա՝ի բանդն և զգուշութեամբ պահել զախու և զգիշեր, որպէս զի սովով և ծարաւով մեռցի. և էր՝ի նեղըքնութեն բանդին փառաւորելով զԱստուած:

Իսկ կին նորա Պատրանիկ կայր առ դուրս բանդին և ունէր մանկիկ փոքրիկ՝ի գրկին, և աղաչէր զբանդապետեան՝ զի Թոյլ տացէ նմա մտանել առ տուբըն: Եւ բանդապետն զգացեալ բռնշէնին վասն կնոջն, Թէ ունի մանուկ փոքրիկ և կամի տեսանել զերանելին. և հրամայեաց բռնշէնն մտանել, զի Թերևս դարձցի տեսանել վասն զԹոյ ազեացն: Եւ կնոջն մտեալ՝ի ներքս և տեսեալ զնա՝ ընկենոյր զմանուկն առաջի նորա, և ասէ ցնա. Երկիր յԱստուծոյ, տէր իմ, և փառաւորեա զանձն իմ, կաց ճնաց՝ի խոստովանութեանդ յայդմիկ: Ցուշ լիցին քեզ արդարք, որք վասն Քրիստոսի կատեցան և անկապուտ գանձուցն արժանի եղեն: Ցիշեա զայն որ առացաւն, եԹէ՝ Որ Թողու զՀայր կամ զմայր կամ զկին վասն իմ՝ ժառանգորդ լինիցի երկնից անքայութեան. Հաստատուն կաց՝ի նահատակութեանդ, զի կոչեցայց ես այրատէր, և ծանօԹ եղէց քրիստոսատիրաց. արհամարհեա զժամանակս վասն յաւիտենական անուանդ առաջակայ. վազեա՝ի խորոյս՝ի բարձրն, ընտրեա զերկնաւորն, և սիրեալս առացիր քեզ զՔրիստոս. ոչ ես կոչեցայց այրի, քո զկնութիւնդ՝ի գուռնդն Քրիստոսի, և ոչ ոք անպտուղ ես քո գրեալ՝ի հաստատ Թագաւորէն երկնից: Եւ զայս առացեալ՝ առ զմանկիկն

կըն և մատեաւ հրաժարեալ, և բուռն հարեալ զծըն զացն նորա՝ ասէր. Ա՛ռ ժամանակ մի ես կեանք քո այս, տէր իմ, իսկ աներևոյթքն յաւիտենականք: Եւ երանելին ասաց. Օրհնեալ է Աստուած, որ փառաւոր եաց զքեզ, և զկորհուրդս քո խաղաղութեամբ պահ հեսցէ: Եւ այնպէս գնաց կինն 'ի տուն իւր փառաւորելով զԱստուած: Եւ բանդատեան փակեաց զդուրսն:

Եկին պատմեցին զամենայն բդեշխին, և նորա հարցեալ՝ եթէ կերակուր ինչ եբէր նմա. և խմացեալ եթէ ամենևին ոչ, պատուիրեաց մեծաւ զգուշութեամբ պահել զնա: Եւ յետ աւուրց հնգից հրամայեաց ածել զառաջեաւ. և մինչդեռ գայր տուրքն՝ ասէ. Ա՛ջ ես առաւն արար զօրութիւն, աջ ես բար. ձըր արար զիս. ոչ մեռայց՝ այլ կեցից. Տէր է իմ օգնական, և ես տեսից զթշնամիս իմ: Ջկնի նորա երթայր Պատրոնիկէ և ասէր. Զօրացիր, տէր իմ, 'ի վերայ սատանայի, կատարեա զընթացս քո մինչ դեռ պատրաստ է ասպարէզ. իբրև զայրասէր երևեցայց ես՝ քո զընթացսդ կատարելով. զի հասարակ զօրդեակս մեր զցանկալի յանձն արա քրիստոնէից, քանզի զի հանդերձեալ եմ և ես պատարագիլ Աստուծոյ, զինի գոլով քոյոյ հետոյդ. քանզի լաւ է ընդ քեզ ժառանգել զկեանսն, քան ծնալ 'ի թշնամութեան աշխարհիս: Եւ իբրև ածին առաջի զտուրքն, ասէ բըդեաշխն. Ջոհեա Դիոնոսի: Թէոփիլոս ասաց. Ոչ զոհեմ, քանզի քրիստոնեայ եմ: Ընդեաշխն ասէ. Ջես քրիստոնեայ, այլ կախարդ, վասն որոյ ես կորուսանեմ զքեզ իբրև զմին 'ի նոցանէ: Եւ հրամայեաց ածել զազանս 'ի ատաղն, և զերանելին մուծանել անդ: Իսկ կինն նորա աղաղակեաց յամբոխին և ասէ. Թէոփիլոս, նահատակ Քրիստոսի, յիշեա զԴանիէլ և զանք վայրենի խաղաղանան ընդ քեզ: Եւ ամբոխին լուեալ զձայնն՝ երանեցին զնա ամենեքեան. և արձակեցին նմա առիւծ մի մեծ. և առիւծուն երթեալ մունչելով, եկաց առ նմա: Իսկ տուրքն ասէ. Քրիստոս, որ քաւիչդ ես մեզաւորաց, որ լուծեր զիշխանակալութիւնն սատանայի, որ զգանձ աստուածութեանդ քո տրեցեր յայտնեցեր, յայտնեա և յիս տառապեալս զիտաս քո, զի հասից որում ցանկանամն: Եւ զայս ասա-

ցեալ նորա վազեաց առուծն և հար զնա. և այնպէս առանդեաց զոգին ՚ի Տէր։

Եւ երանելին Պատրոնիկէ առեալ զսուրբ մարմին նորա՝ եդ ՚ի տապանի, և ասէր ցնա. Յանուն Յիսուսի Քրիստոսի՝ ընկալ և զիս խաղաղութեամբ, քանզի փութամ տեսանել զՔրիստոս, որ պսակեացն զքեզ։ Եւ բզեզնին զայն լուեալ՝ հրամայեաց ածել և զնա։ Եւ իբրև ածին առաջի՝ ասէ ցնա. Ցմահաւութեան ոմն քո տեսեր և դիտայեր, եթէ անհաւանեալ հրամանին իմում՝ մեռաւ. արդ դու մի՛ իբրև զնին, այլ իբրև զայր մարդ ցոյց ինձ զքաջութիւնդ քո և զոհեա աստուածոյն, զի մի՛ չարաչար մեռցիս։ Եւ սուրբն ասէ. Թէ և մարմնով կին եմ, այլ խորհրդով կամաւոյն քո իբրև զայր. պատրաստ եմ յաղթել հնարիցդ քոյ՝ առաքինի վաստակովք որ վասն Աստուծոյ։ Եւ բզեզնին լուեալ զայն՝ հրամայեաց ընկենուլ զնա ՚ի տատն, և արձակել նմա մատակ առիւծ մի. և նորա մեռեալ ՚ի նեղքս՝ ունելով զմանկիկն ՚ի գիրկն, հայեցաւ յերկինս և ասաց. Օրհնեալ ես Տէր Աստուած, որ ընկալար զպատարագն Աբրահամու, և օրհնեցեր զվահակ, և զՅակովբ փառաւորեցեր, և զօրհնութիւն նոցա բազմացուցեր և զՄարիամ պսակեցեր. հայեաց յիս, Տէր, յանարժան աղախին քո և խաղաղութեամբ պահեա. վասն սրբոյ ծառայիդ քո Թէոփիլէ լեցի քեզ ընդունելի և հաճոյական պատարագ և մանկիկս այս։ Իսկ մատակ առիւծն եկեալ եկաց մօտ ՚ի նոսա. և մանուկն տեսեալ զգազանն՝ ժպտեցաւ և ասէ. Ամէն յերկինս, ամէն Հօր, ամէն Որդւոյ, ամէն Հոգւոյն սրբոյ. ամէն ալէլուիայ։ Եւ այսպէս վախճանեալ սուրբն և երանելին Պատրոնիկէ ՚ի գազանէն՝ հանդերձ մանկամբն, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. որում փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Խնդրոյ և Գումևայի և Երկուց քրիստոսեացն։

Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ եղև Թագաւորել անօրինին Մաքսիմիանոսի. և յերկրորդումն ամի ինքնակալութեան իւրոյ հալածանս յարուցանէր՝ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ, և կատաղի զայրացմամբ վառեալ՝ի պատերազմ ընդդէմ զօրաց Քարձրելոյն, և զամենայն հնարս մեքենայից չարաչեր բանալոյ՝ ունին իբրև զվարմ ոտտոջաց պարսիկէր՝ի վերայ այնոցիկ՝ որ քրիստոսական հաւատոյն էին պաշտօնատուքը և արհամարհողք մոտիւապատիր դիցն մոլորութեան։

Ամէ՝ի սոյն ժամանակի էին բազումք յուղղափառաց դասուցն արք երկիւղածք յԱստուծոյ և ճշմարտասէրք, հմուտ քերթողական և Հարտարբասան [1] արհեստից, և առաւել աստուածայնով դիտութեամբն և քրիստոսապատում վարդապետութեամբն փրկական աւետարանական առյգեալք, որք զամենայն հանդիպեալն և զանդաստօր գործեցեալն՝ի ժամանակին իւրեանց՝ի ձեռն գրոյ պատմագրէին անմոռաց յիշատակարան թողուլ զինն իւրեանց եկեղեցւոյն։

Ցորոյ մի էր յայնցանէ երանելին Կիւրղիոս [2] արքեպիսկոպոսն քահանայապետեան նահանգին Բիւթանացւոց, այն որ զարդարեալն էր քաղաքավարութեամբ. քանզի էր նա զեկեղեցիսն Աստուծոյ՝ զանկեալսն և

1. Մի ոմն. Ճարտասանական։ 2. Մի օր. Կիւրեղոս։

զկործանեալսն յանաստուած Հելլենացւոցն, կանգնէր զմատրունս մարտիրոսացն և հաստատէր զվիայնատանս Քրիստոսի, և քանիւ վարդապետութեամբ իւրով զօրացուցանէր զԹեոդորեալսն սուրբ հայրսն, և զամենայն Հանապարհս Քրիստոսի և զգործս արդարութեան սերմանէր՝ի յամենեցունց լսելիս։ Մինչև ձեռնարկեալ և նմա առ այնոսիկ՝ որ յարքունական ապարանսն էին բնակեալ, և զյոգունս՝ի նոցանէ հաւանեցուցանել՝ի պաշտամունս քրիստոսական արդար օրինացն. որք Թողեալ զՀոխութիւնն երևելի մեծութեանց աշխարհին, զինչս և զտաճարս բաշխէին տնանկաց և կարօտելոց, և բոլորովին Քրիստոսի նուիրեցին զանձինս իւրեանց։

Ջայսոսիկ լուեալ ամբարշտին և անօրինին Մաքսիմիանոսի, և նեղել ամենևին ոչ կարաց, քանզի կրկին պատերազմաւ պաշարեալ էր, Թագուցանէր առ ժամանակ մի զԹիւնս դառնութեան սրտի իւրում, մինչև Հանդէպ բարբարոսական մարտին Հասեալ՝ի վերայ նորա կատարեսցի։ Եւ՝ի զբաւ լինել մարտից պատերազմին, ասէ. Դարձեալ զգուշութեամբ քննեալ իմն զերեցից, և՝ի մէջ ածեալ Հանդիսիս պահանջեցից զվէրժս յայնցանէ, որք արհամարհողք են անմահից աստուածոցն, և այսպանողք տէրութեանն Հռոմայեցւոց և արդար օրինացն։ Ա.յսոսիկ շարժեալ զբոլ ամբոխն ներսագործք՝ի սէրս իւր ժողովէր զանօրինութիւն, և մեծաբարբառ Հպարտութեամբ և բարձր գոռոզութեամբ[1] ելանէր ընդդէմ բարբարոսացն։ Ա.յլ բարեպաշտութեան ջահն և զամբարն Քրիստոսի Հուր էին այն աստուածոյին, զոր եկն արկանել յերկիր բոլորից Տէրն, վերատին վառէր. և Քրիստոսի զինուորքն անպարտելի Հաւատովք՝ի Քահանայապետին պատրաստք լինէին՝ի Հանդիսանալն։

Ա.րդ մինչդեռ այսպիսի յոյզ քննութեան՝ի վերայ ամենեցուն Հասեալ կայր՝ յանկարծակի երևեցաւ արեգակնափայլ ծագմամբ աստղն բարեաւետիչ և վայելուչ յոյժ, գերապայծառ և մաքրաձիտ և ամենայն պարկեշտութեամբ զարդարեալ, կոյս մի չքնաղ և

1. Մի օր. Բառիս փոփոխութեամբ։

զարմանալի՝ որում անուն Դոմիաս կոչէին, ազգաւ և փառօք երևելի [1], մնեալ ՚ի գահոյս Թագաւորական աւագապատին. որ և յամպարշտին Մաքսիմիանոսէ կարգեալ էր ՚ի սպասաւորութիւն պաշտամանն մեռոի աստուածոյն՝ որ ՚ի ներքոյ Թագաւորական ապարանից էին կանգնեալ, և առաջին իսկ էր սա և գլուխ քահանայութեանցն կարգեալ, և ամենայն զոհից և ձօնմանց [2] աստուածոյն եղեալ իշխեցուցչ: Այլ զի ընդ երեսս բարի ծառն երկիր բարի, և ձիթենին պատղաբեր հաստատիլ ՚ի տանն Աստուծոյ, յորոյ միտս [3] շարժեալ զօրանայր Հոգւոյն իմաստութեամբ. և սակաւ սակաւ ՚ի լսողութիւն եկեալ աստուածային պատուիրանացն, ընդունէր զձաձանչ լուսոյ բարեպաշտութեանն. ըղձայր ծարաւի ոգւով հասանել սիրոյ անմահ փեսային: Որ և ՚ի ձեռն իւր ընկալեալ զգիրս սրբոյն Պաւղոսի, և հանապազ ընթեռնոյր աշխատաբար խոկալով ՚ի նմա ՚ի տուէ և ՚ի գիշերի, ընդ նմին և զպրակս Դարձոյ առաքելոյն. և ձանաչեալ եղեալ ամենայն հոգեպատում և աստուածահրաշ բանիցն և նշանագործութեանց որ ՚ի նմա, և զուարճացեալ ցնծայր և բերկրէր ընդ շահաբերն հոգւոյ իւրոյ, մանաւանդ զի այնպիսի գանձոյ հանդիպեալ եղև, յորոյ ունայն գոլոյն իւրոյ ՚ի բարեաց յանցեալ ժամանակաց՝ խորին գիշեր զանցեալ լինի կենցաղոյս ՚ի վերայ իւր համարելով, և ոչ այնուհետև իսկ յատակէր ՚ի բարեպաշտութեան հանդէս:

Կոչէր զոմն ծածուկ գաղտաբար ՚ի գիշերի առ ինքն՝ կոյս մի հեզ և համառ աստուածային օրինացն, զուարճ՝ խորհրդական սինկղիտոսի միոյ ՚ի պատուաւորաց քաղաքին, և ցանկայր առնչմամբ ստուգել զկրս Աստուածպաշտութեան. և նոքաւ յառաջեալ ՚ի գեղեցկապոյն խորհուրդն ՚ի մկրտութիւն փութայր: Եւ յարուցեալ ՚ի միջ գիշերի զանխաբար յամենե-

1. Մի օր. ազգաւ ֆառօք պատուական էր:
2. Մի օր. պահից և պէնմանց:
3. Մի օր. յորոյ միտս:

ցունց գային առ սուրբ քահանայապետն Ալէքսիս և հանդիսին նմա. և նորա ընկալեալ զնոսա ուրախութեամբ մեծաւ, և խրատեալ զնոսա աստուածային պատուիրանօք և վարդապետեալ[1] զհաւատն Ձիմարտութեան, տեառնապրէր զնոսա քրիստոսական նշանաւն, և խակոյն ընդ երախայն կարդէր. և կատարել զսովորականն հրամայէր մեռմ 'ի սարկաւագացն, որում անուն էր Սգապիոս: Իսկ երանելի կոյսն այն յետ այնորիկ յաղօթս և 'ի պահս պարապեալ մուտանայր զհեղինեական ցոփութեանցն կրթութիւնն. և ոչ ոք գիտէր զկոչումն ընծայութեան նորա[2] 'ի կեանս անմահ, բայց միայն աստուածընտրութեան նորա մերձաւորն նեղքինն մի, որում անուն նորա Ին դոս Ձանաչէր. ազգաւ և տոհմիւ բարբարոս, թէպէտ և բարքն ոչ ըստ բարբարոսի, այլ և ամենայն արդարութեան ընդունակ: Սա ոչ նմանապէս կուսին առ հասատան ընթացաւ, այլ 'ի մարտիրոսութիւն ըղձալի տենչմամբ փութայր թևակոխել: Այդ իբրև երկաբանչիւրքն եկեալ հասանէին 'ի տահմանադրեալ կէտ պայմանի մկրտութեանն, և արժանացեալք օծման վերստին արքայութեանն, և արդիզրութեան Հոգւոյն երկնաւորի, յարժանաւոր ձեռաց սրբոյ եպիսկոպոսապետին Ալէքսիոսի, զերկինսային ընկալեալ ըզպատուական մարգարիտն, և հասին հրաւիրմանց Հոգւոյն սրբոյ, ոչինչ աւելի գոլով քան զառաջն ամաց տենչալի կուսին. քանզի Հոգւով գիտութեան պարփակեալ ամուցոյց զինքն անարատ մաքրութեամբ երանելին այն, հեռացեալ յամենայն զգալի տարբերութեանն զբօսանաց. և 'ի բաց կացեալ 'ի մտոտի և 'ի պատիր խոտելութեանց ստորաքարշ յաւխտենից այսորիկ, իմանալի կենաց հայելն և աստուածային բանին միայն պարապելով, թէ որպէս եկեալ հասեալ գործն 'ի կատարումն հասանիցէ: Այդ երբեմն առեալ 'ի ձեռս իւր երանելին զաստուածայինն մատեանն գործոց առաքելոցն, և յընթերցուածն վերայ հասեալ վազվազակի բանին այնմիկ, յորում աշակերտեալքն

1. Մի օր. վարդապետութեամբ
քայր նոցա ընդ ամենայն:

2. Մի օր. ընտրութիւն նորա:

առաքելական քարոզութեանն վաճառելով զինչս և զստացուածս բերկրեն դնեին առ ոտս առաքելոցն զքըրսակ արծաթոյն առ՝ի բաշխել զայն կարօտելոցն. և զայս բարեաց յիշատակարան՝ի միտ առեալ ցանկալին կուսից, և ոչխարի ուներ արծաթեղէն և ոսկեղէն կահ սպասուց և հանդերձս պատուականս՝ ժողովեալ և իւրոց ծառայից բարձեալ, գնաց՝ի գիշերի առ եւթանելին Կիւրղոս, աղաչեր զնա մեծաւ պաղատանօք ընդունել զայնոսիկ, և ձեռօք իւրովք բաշխել աղքատաց. և զայն ոչ ոք իմացեալ՝ զարձեալ յիւր սովորական առաքաստն դառնայր:

Յայնժամ և սուրբն Կիւրղոս՝ ըստ հոգևոր երկանց վերատին ծննդեան հոգևոր աւազանին հայր նորա՝ եթանելով զերկրաւոր կենցաղս առ երկնաւոր հայրն հաստարակաց գնացեալ լինէր, որ և բազում և հրաշալի նշանք՝ի վաղձանի նորա երևեալ լինէին առնայն տեառնէ: Իսկ երանելի կոյսն կնքեալ պահէր՝ի սրտի իւրում զամենայն գաշինս արդարութեան Քրիստոսի քահանայապետին, առաքինութեան նոյնն նմանողել լեալ. նաև Աստուա ընդ նմին զանձն պահօք մաշեալ. առ երեկոյեան էր կերակուր նոցա հաց և ջուր միայն, և զամենայն գործմանս պիտոյիցն՝ զոր՝ի թագաւորական ապարանիցն մատակարարէր առ նոսա, յաղքատս ծախէին. այսպէս առնելով զօրհանապազ, քնաւ ոչ ումեք յայտնելով զկրս՝ ծածկելով յամենեցունց:

Բայց ոչ է պարտ և պատշաճ քաղաքի որ՝ի վերայ լերին՝ թագչել, և ոչ լուսատիպ ձրագի դնել ընդ զբաստաւ, կամ աստուածային գանձուցն անյայտաբար ծածկիլ ընդ հողով. անստուար ուրեմն չարագործ արանց մախայեալ ընդ բարի գործս նոցա, հետամուտ եղեալ երկն այնմիկ վերաբերեին զբանն Աստուածային ըստ միոջէ զամենայն՝ի յունկնմէ ծածկի մատակարարին, որ կարգեալ էր՝ի վերայ արքունական պալատանն և գերդաստանացն ինքնակալին: Զոր լուեալ տանջանս ոչ սակաւս ած՝ի վերայ նոցա և զանս բազում հասուցանէր, թէ կարգեալքն ձեզ՝ի թագաւորական ապարանիցն՝ որպէս վասնին կամ ինչ պէտս ծախին: Եւ նոքա ոչ յայտնէին զըրգռալն զիս-

տլս հոգևոր շահից, այլ մեծաւ համբերութեամբ կայիմ մնայիմ հաստատուն ՚ի ջանս նահատակութեանն, զի մի մարդասիրութեանն հատուիցեն որ առկատուելն էլ՝ խափանեսցի: Բայց մի ոմն ՚ի նեղբից նեաց անտի առ իշխանն մատուցեալ զմեծ և զգոլեալն գործս առաքինութեան նոցա իբրև զպարտաւանս ինչ պատմէր. Մաքուր են, ասէ, և ՚ի կերակրոց ՚ի բաց կացեալք և հրաժարեալք ՚ի հեշտութենէ, և տապանօք իմն ձնշեալ մաշեն զանձինս. և ամենայն ինչ որ յարքայէ առաստատութեալ պարկեք ՚ի դոսա հասանեն՝ հակառակորդաց աստուածոյն կերակուր լինին. և եթէ կամիցիս իմանալ չքնաղութեամբ, բայց զշուեմարանս նոցա և տես թէ զինչ ՚ի նոցանէ ունիցին: Եւ մտադիւր յօժարութեամբ լսեալ իշխանին յանօրէնն յառնէն յայնմանէ, և վաղվաղակի հրամայէր քանալ զսենեակ սպասուց նոցա, և ոչինչ գտեալ ՚ի նմա բայց զնշան տէրունական խաչին, և զմատեան սրբոյ առաքելոյն Պաւղոսի զչորեքտասան թղթոցն, ընդ նոսին և զգիրս Գործոց առաքելոցն, և բուրուառ և Ճրագ և փայտեղէն փոքր ինչ տապանակ՝ յորում զնշխար ոսկր հացին շուեմարանեալ պահէին, զառանց աւետարդաց կերակուրն, յորմէ հաղորդեալք լինէին, և երկուս ձորձս շարտամանեալս ՚ի խոտոց զոր մերկ ՚ի վերայ տրամ զ եանոյն եդեալ լինէին, և այն էին պատուական անկողինք Դանիէլի և Ննդասի, ամենաւականացն և Ճշմարտասէր երանելեացն: Ապա հարցանէր զնոսա իշխանն ցասմամբ և ասէր. Ո՞ւր է ոսկին մաքուր զարդուցն, և հանդերձքն ձեր պատուականութիւնք և անօթքն երևելիք: Իսկ երանելիքն ոչ ինչ փոյթ առնէին հարցման նորա, և ոչինչ տային ամենևին պատասխանի, այլ դէմակօրեալք ընդ երկիր նայէին լռելեայն, և ՚ի սիրտս իւրեանց զոհանալով զՏեառնէ աղօթս մատուցանէին, առն ունելով երկիւղ որ վարձուցն և անանց բարութեանցն: Իսկ ՚ի նմին ժամու արբանեակ չարին մատնէր զնոսա ՚ի չարչարանս, հարկանելով զմարմին նոցա ջլատիւք, և արիանէր ՚ի բանտ մի խաւարչտին, մինչև ծանուցէ զամենայն իրան ստուգութեամբ Թագաւորին: Եւ նոցա այնպէս կալով ՚ի կատարանին զաւուրս բազումս, և

միայն կենդանի հայն էր նոցա կերակուր և աստուածային ընտրն էր նոցա ըմպելի. և այնչափ աշխատեաք լինէին՝ իբր զի ոչ էր հնար հաղորդել նոցա հայի կամ ջրոյ, զի դառն և խաւար էր հրամանն անօրէնն իշխանին՝ ի վերայ բանդատպանացն. քանզի ասէր Թէ փոխանակ այնորիկ զի նոքա զորավարին քաղցու լցին, նոյնպէս որովայնքն մաշեսցին՝ ի սովոյ, և կիսեաք Հնշեսցին՝ ի տապոյ ծարաւոյ. և այնպիսի դառն և անողորմ տանջանք՝ ի վերայ վկայիցն Աստուծոյ հասուցանէին՝ մինչ զի՝ ի ցաւս հիւանդութեան անկանելով կուսին, և ոչ ուստեք մխիթարութիւն գտանել: Նոյն ժամայն իսկ անդանօր ողորմութիւն զթութեանցն Աստուծոյ հասանէր՝ ի վերայ նոցա, այն որ բանայ զձեռն իւր և լնու զամենեսեան կենդանութիւք:

Եւ մինչդեռ՝ ի հակման զիշերին զսովորական աղօթսն կատարէին, երևեցան նոցա երկնային դասատեսութեանցն զինուորութիւնքն. յորմէ և՝ ի փայլատակ մանց լուսոյն արեգակնակերպ Ճառագայթիցն՝ երեւէին հիմունք բանտին. և ողջագուրեալք՝ ի սրբոց զուարթնոցն զօրացեալք կային յաղօթս, և սեղան ի ամենայն բարութեամբ պատրաստեալ նոցա, և քաջալերս տուեալ երանելի կուսին՝ վերացան յերկինս: Իսկ նոցա հաղորդեալք յերկնային սեղանոյն՝ ոչինչ յիշէին զանցելոց ժամանակաց վիշտս չարչարանացն, զի փարատեալ մերժեցաւ՝ ի նոցանէ ամենայն ներհակք առաջնկայիցն. զի թէպէտ և՝ ի կապանս բանդին կէին[1] տրտմեալք, սակայն՝ ի հեշտալի կերակրոյն զուարճացեալք՝ հանապազօր երգէին զքաջութեան նուագն ասելով. Որպէս՝ ի Հարկոյ պարարտութենէ լցեալ անձն իմ, և շրթամբք ցնծութեամբ օրհնեսցէ զքեզ բերան իմ:

Արդ յետ այսորիկ յաւուր միում հասեալ լինէր անդ իշխանն զիտեալով Թէ պակասեալ լինէին՝ ի սովոյ, զի այնպէս հաւանեցուցանել մարթ ասել զնոսա այնու: Իսկ յորժամ տեսանէր զնոսա պայծառս և զուարթս և բերկրեալս և խնդալիս երեսօք՝ հնարայր մեծաւ

1. Մի օր. էր:

զարմացմամբ, և յերկիւղի եղեալ՝ ցնդմամբ միօք, յաստուածոյն կարծելով զեզեալ սքանչելին Հրաշինն [1]'ի վերայ նոցա: Եւ Հրամայեաց այնուհետեւ կալ մինալ նոցա ըստ կամաց իւրեանց յանդորրութեան, և զախտոյից նոցա զկարգս, զինչս և [2] զՀանդերձս եւ զամենայն պէտս զարմանաց՝ ոչ նուազ քան զյառաջագունեցն ընդհատ նոցա: Այլ կայր այն վանն անձին իւրոյ ոչ զիւիք ինչ փոյթ առնէր զայնցանէ և ոչ կարօտանայր, բայց վանն աղքատացն դառուց միայն Հոգայր թէ որպէս կերակրեսցէ զնոսա և լցուսցէ զկարօտութիւն նոցա. յաղագս որոյ և զգարդս անձին իւրոյ'ի բազում մասունս Հատանելով բաշխէր աղքատաց, նա և աւուրս ոչ սակաւս անաւասղ կացեալ՝ ըզկերակուր իւր ընձեռէր աղքատաց. զոր տեսեալ և այլոցն ևս՝ բազմութիւնք'ի դուրս նորա նստեալ դեպէին. յայնժամ'ի տարակուսանս ըմբռնեալ ոչինչ ունելով պէտս'ի լուծիւն բաւականին այնքան ժողովելոյն, ապա դարձեալ կրկին անգամ ձգեալ ըզձեռն իւր'ի տապատակ զարդուց իւրոց, և զդօսին իւր զայն՝ որ ակամբք պատուականօք և մարգարտով յոյժ պայծառացեալ էր ոսկւով և արծաթով ընդելուզեալ, ժողովէր'ի միասին ինքեանէր ընդ պատուհանն, և առաքէր առ Սպասիոս տարեւաւտ, և տղայ էր վաՀառել զայնոսիկ, և զգինս նոցա տալ կարօտեցելոց. և առ այնոսիկ թէ որչափ բազմութիւնք անանկաց կերակրօք լցոյց՝ ոչ գոյ ասել:

Սակայն քանզի ոչ էր պարտ այնպիսի մարդոյ և անաղտ [3] կուսութեան և ամենայն առաքինութեան զՀետ գնացեալ անձին՝ շարկապիլ ընդ պատրանս ցանկութեան մտաի կենցաղոյս'ի յարկս մեղաւորաց, կամ'ի գաւիթս ամբարշտաց թագաւորաց քնանկիլ, այլ'ի վերուստ'ի Հայրաշարժ այս ինչ տնօրինեցաւ'ի նմա երանելւոյն. զմտաւ ածէր զաստուածահօրն զմեծի մարգարէին Դաւթի զկարհղեական Հանդիսն, 'ի ժամանակի յորում փախուցեալ էր'ի Սաւուղայ, թէ որպէս այլայլեալ զդէմս իւր անզգայական արար

1. Մի օր. հրաշալեացն:
2. Մի օր. զինչս զինչ և էցէ:
3. Մի օր. անաղտ:

խելեաց նմանեալ՝ յատիպեր իս խաղայր, և այնպէս ՚ի
Ձիմարիտ անդգամից ՚ի բաց Ձողոպրեալ եղև և առ
պյաղթութենն մեծ։ Նոյնպէս և սա զկամաւորական
և զմարտիրոսական կիրս յանձին ատացեալ բերկը,
և զչքնաղ գեղեցկութենն պատկերին նորոյ անշքա-
յուցեալ յաչս տեսողացն. զի՚ի ձեռն այնր՝ Հնար լինի
զերծանել նորա յանդգամացն պակասութենէ, զի
ամբիծ և անարատ եղիցէ յատապաստ վերինն Հարսնա-
բանին. յանկարծակի եկանէր ՚ի կերպարանս անզգա-
կից ջրջրկեր զաչս իւր, Թօթափեր զարտևանատունս իւր,
Թողացուցանէր զտողունս ՚ի վերայ պարանոցին, փըր-
փրէր և անյայտ ձայնս արձակէր, երբեմն զկնկան
ընդդ բարձեալ և յանկարծակի բարկ ծիծաղելով և
կրձտեալով զատամունսն։ Ջայս տեսեալ այնոցիկ որ
յատպարանս Թագաւորին էին, զամանս փառաքշանք և
զամանս սիրացուին զարմացման պաշարէր, և զողունն
և զարհուրուն ընդունէր զամենեսեան։ Ջոր լուեալ
մեծի Հպատրատեսին՝ որ էր ՚ի վերայ ամենայն կայսե-
րական պալատանն, և առ աչս բերեալ զեղեալն՝
Թուէր յատապնել նմա։ Գանգի և յայնժամ յատէտ
ուժգնակի վկայուհին այն սատկագոյն երևեցուցա-
նէր զանձն՝ յորժամ լշխանն զտեսութենն աչացն առ
նա տարածանէր. ուստի և յերկիւղի եղեալ, բազում
պահապանս նմա կացուցանէր, զի մի ինչ վնասս չա-
րեաց կրեսցէ, կամ՚ի վախկոտ մղեալ քարաւէժ լինի.
և էր այնուհետև ոչ սակաւ Թաղծութենն պահապա-
նացն վասն նորա. անյայտ աղաղակէր և կոծէր զանձն
առաջի նոցունց։ Յայնժամ մատուցեալ նոյա առ ներ-
քինապետն, աղաչէին զնա յատէժասէս առ քրիստո-
նեացն արձակել զկոյսն, զի բազումք ասեն նման սին
զառածեալք ՚ի մոգ՝ զառողջութենն գտին։ Ջայս
ինչ նորա վասն անձանց Հայցէին, զի Թերևս ազա-
տեսցին ՚ի ծառայութենէ նորա. այլ Ստուած ըստ
կամաց նորա բերեալ՝ Հաստատեր զայն որ ինչ կուսին
խղձք ցանկութեան էին, զի զանխլացեալ լինէր բանն
ըստ առասպելին. Ջկոյ խնամարախն Թոյլ տալ՚ի
պաշարն, և զգեցուին առ ջուրս ածեալ բառամբ։

Ընդհատեր եղեալ այսոցիկ լշխանն մատուրու-
Թեամբ, քանզի և նա կամէր ազատանալ և արձակել

’ի ցնորից որ յաղագս նորա էր, յայնժամ վաղվաղակի կոչէ զեպիսկոպոսն առ ինքն զսուրբն Անթիմոս, որ էր յայնժամ ’ի Նիկոմիդացւոց եկեղեցին յեռ Աւուրզն յառաջասացեալ քահանայապետին. և եկեալ նորա վաղվաղակի հոգւով ծանեաւ զնորն՝ որ յաղագս կուսին, և թագուցեալ ’ի սրտի իւրում կայր լռելեայն։ Նոյնպէս և կուսին տեսեալ զքահանայապետն Աստուծոյ, ոչինչ անպատշաճ կամ մոլեկան ցուցանէր զանձն իւր, այլ յերեսաց սրբոյն խոնշեալ հեզ և խաղաղական տեսութեամբ զպաստայեալ երեսէր, որպէս զի զամենեսեան զարմանս ընծեռանել էր, հիացեալ թէ որչափ զօրութիւնս երևեցան յերեսս բարեպաշտին, որ զանզգաստացեալս ’ի զգաստութիւն փոխարկեաց։ Յայնժամ իշխանն մեծաւ աղերսանօք աղաչէր զեպիսկոպոսն առնուլ զկոյսն առ ինքն, ընդ նմա և զՆոնդոս, և ինչս բազումս ’ի պէտս զարմանից նոցա, թերևս հնար լինի, ասէ, բժշկութեան։ Նակ նորա խնդութեամբ առեալ առաքեաց ’ի վանս կուսանացն, և որչափ իրախացեալք լինէին, և սիրով Հոգւոյն առ լցեալ՝ զընծան ոչ գոյ ասել։

Ի սոյն ժամանակի յաղթութիւնքն Մաքսիմիանոսի ընդդէմ բարբարոսացն զկատարումն առնոյր և դառնայր ’ի մարտէ պատերազմացն ուրախութեամբ մեծաւ. և ոչ տնկէր ’ի սիրտ նորա Աստուածպարգև ձչմարտութեան օրինացն Աստուծոյ՝ խնդրել իմանալ և ճանաչել եթէ ’ի ձեռն նորա ուղղին այսոքիկ, զի նա դնոյն օգնականութեամբ մակադրէր զյաղթութիւն։ Վասն որոյ աստուածոյ իւրոց զոհս ձօնմանց կատարել, և զարդարել զմեհեանս նոցա, ձիրս պատուոյ բաշխէր քրմացն. և ’ի խորհրդանիկ խորհուրդս մտեալ էարին յորդորմամբ, պարտութեալ պատրանօք Ջանայր հնազանդեցուցանել զամենեսեան անաստուած պաշտամանցն այսոցիկ և չարսահր կրօնիցն։ Յայնժամ և ’ի սահմանս ասպարիսին տեսարանս խնջոյից յօրինէր. և պատուէր հրամանի ելանէր ’ի նմանէ, զալ հանել ամենեցուն ’ի հանդէս խաղոյն։ Սիրեհեալ ժողովէին անթիւ բազմութիւնք ’ի տեսարանն ձիրն Թագաւորականացն. և իբրև լցեալ եղև բազմութեամբ մարդկան թէատրոնն, և հասանէին անդա-

պազ փուԹով ՚ի ժամադրեալ կէտ կոչմանն։ Յայնժամ անօրէնն Մաքսիմիանոս ՚ի նանիր և չար խորհըրդով լեալ՝ հրամայէր քրմապետացն զամենայն տաւարն դիս առաւածոյն զոսկեղէնս և արծաԹեղէնս բերել ՚ի տեսարանն, և զարդարէր զինոսա պէսպէս և հրաշազան պայծառուԹեամբ, և նախադրէր զինոսա ՚ի վերայ Թագաւորական գահոյիցն. և հրամայէր առնեցուն երկրպագուԹիւն մատուցանել նոյա ընդ ինքեան, և զպաշտօնեայս առաւածոյն պսակէր ոսկով ձիԹենեաց և եաԹեմիական շոՀիւք, և ցուլս և զուարակս զենուլ. առնէր տօն առաւածոյն և առաւածուհեացն զօրն զայն, և զարիւն զոհիցն հրամայէր պաշտօնէից զոհիցն և մեհենացն՝ սրսկել ՚ի վերայ առեղծացն զօրականացն։ Իսկ պաշտօնեայք ձիւմարԹուԹեանն ոՀք առեւրկեան սրտիւ ունէին զՀաւատս քրիստոնէուԹեան՝ ոչ Հանդուրժէին չարին, ՚ի բաց երԹային ՚ի տեսարանէն, լաւ Համարեալ զմահ անձանց քան զշահագործել արեամբ անաստուած զոհիցն։

Յայնժամ ամպարիշտն Մաքսիմիանոս սկսաւ ՚ի մէջ հրապարակին առաջի բազմամբոխ ժողովոյն բարձր բարբառով խօսել բանս Նպարտս և ասել այսպէս. Ո՛վ արք քաջք և ծերակոյտ խմաստունք, և երևելիք ՚ի մէջ Յունաց և Հռովմայեցւոց նահանգիս, որք ստորանկեալ էք ընդ իմով հնչեակալ և անպարտելի ԹագաւորուԹեամբս. ընդէր զլոյն ստեղծանէք խաւար, և նախասպառու զտուԹիւնն դնէք, և զեր ՚ի վերոյ Համարիք քան զլուղձալի պաշտամունս մեր։ Եւ ՚ի միտս անկեալ ոմանց ոչ գոլ զտուա աստուածս կարծելով, որոց բոլոր աշխարՀի խնամարկուԹիւնք՝ կառավարին։ Ո՞չ տեսանէք զբազմուԹիւն բարուԹեանցն յամենայնի մեԹերեալս առ մեզ. ո՞չ տեսանէք զյաղԹուԹիւն[2] և զնշանս որ ՚ի նոցանէ առ մեզ մատակարարին. և Թէ ոՀպէս օրէնքն զեղեցկապոյնք և զպուշապոյնք պաՀին առ մեզ։ Ո՞չ իմանայք զաՀաւասի զօրուԹեան մերոյ օր ըստ օրէ. զի այնոցիկ որոց յաուաջադոյն տեսարքն ոչ էաք[3], այժմիկ իշխեմք նոցա. ո՞չ վտառք

1. Մի օր. խնամախալտութեամբ։
2. Մի օր. զյաղթութիւնս։
3. Մի օր. որ յաուաջագոյն տեսարքն ոչ էաք։

մեր բարձրացան. ոչ թագաւորութիւնս մեր անդորրեցաւ յամենայն վրդովմանց. ոչ զբաղաքս ոմանս ընդհարկաւ արարեալ և զայլս տակաւին առաջի եդեալ ըմբռնեալ և հնազանդեցուցեալ. ոչ ապաքէն ամենայն զօրաւորքը երկրի կորացուցին զպարանոցս իւրեանց ՚ի նեղքոյ պատահանաց մերոց, և ընծայաբեր եղեն մեզ. և ամենայն ըստ կամաց մտաց մերոց յարդարեցաւ եկաց հաստատութեամբ: Որ արդեօք նախախնամութեամբ այսպիսի կառավարին, եթէ ոչ ամենազօր և անմահ աստուածոյ մերոյ ակնկալութեամբ, յորոց հրամանէ հուր և ջուր, լոյս և խաւար, անդք և փայլատակմունք, կաձառք աստեղաց և ըստաւրայց շարժմունք՝ ըստ կամաց մերոց զբնութեանս կատարեն: Չանեղուսցեն զձեզ ժամանակացս բարեխառնութիւնք, անձրևաց բարեխառն չափաւորութիւնք, պտղոց առատութիւնք, ընդարձակութիւն ալեաց, ծովու ցածութիւն. զորս բնաւ ոչ ոք կարէ ձառել զբարեացն ձերս՝ որ պարզևին մեզ յանմահից աստուածոց մերոց, ՚ի լուծիւն բաւականին. ոլ յայսպիսեաց և յայսոցիկ բարեպաշտութեանց չնորհողաց պարտ է զհոգս և երկընպաղութիւնս ընծայիւք մատուցանել:

Եւ յայսպիսի մահաշունչ նորա դիւաբնակ բերանոյն հուր բոլբոքեալ պատրէր զիմաս ամենեցուն. և տակաւին ևս յայլ երս հայթայթանաց մտաբերէր, զոր ոչ նեղէր ՚ի վերուստ արդար դատաստան Ձեռնարկեալն Աստուծոյ, զի մի այլոց դիւրատիսխոխից և ծուլացեալ կոտաեան առիթ լինիցին: Այլ միչդեռ թիւնալից բանքն ՚ի բերան ամպարշտին կայր, յանկարծակի եղև թնդիւն որոտանաց, փայլատակունք հրոյ ՚ի մրրկեալ ամպոյ թօթափէին, և մահն ինչ քաղաքին և մահեան կուռոյն կիզեալ եղեն. և խաւար խորին միանգամայն երևէր, և կարկուտ սեղ հանդերձ հոզեմուխ այրէր. և ծովածաւալ հեղեղայն յարձակմունք զամենայն սահմանս արտաւարայն հանդերձ պտղովքըն՝ ծովուն աւանդեաց, զեռ և այս կամէր զամենեսեան ՚ի միջոյ ՚ի բաց բառնալ: Յորմէ յահեղ սպառ-

1. Յօր. ՚ի դիպապտառնէնն. Թերևս՝ ՚ի դիպապ մրնառնէնն:

նալեացն որ յԱստուածոյ՝ ընդ միմեանս խառնեալ բազմութեանն, ընթադրելով զմիմեանս՝ բազումք դիտացաւք յերկիւղ անկեալ մեռանէին. և ինքն առաջին թագաւորն փոքր միս[1] ևս ընդ նոցունց կոտորեալ լինէր, եթէ ոչ առ՚ի յԱստուածոյ պատուհասն այն նման նուազ համարեալ լինէր: Զայսպիսի անակնունելի գատաստան՚ի դիպուածս պատուհասիցն առեալ չարաբաստն այն և անօրէնն իշխան, ոչ ապ ինչ զերջ բերելով կամ զարհուրումն երկիւղիցն՝ տակաւին կայր և ծնայր՚ի նմին յամառութեան:

Ցետ այսորիկ նատէր յաթեան և հրամայէր ածել զորս յաստուածպաշտութեան գտեալք լինէին, և արգար արեամբ անարատիցն կամէր ցածուցանել զբրտմտութիւն սրտի իւրոյ. հարցանէր և վասն Դանիէլի և Ննդոսի և զայլոց ոմանց, զի ոչ երևէին յատենի: Եւ իբրև լուաւ՚ի նեբբինասէտէն, թէ Դանիա անկեալ է՚ի գգայութենէ, և այժմ առ այնոսիկ է որ զայնպիսիսն գիտեն բժշկել, և ընդ նմա է Ննդոս՚ի պահպանութիւն և՚ի սպասաւորութիւն պաշտամանն նորա: Իբրև լուաւ զբանս զայսոսիկ թագաւորն՝ բորբոքեալ ցասմամբ թախիծ սրտին բերելով, մեծաձայն աղաղակեալ ասէր. Ո՛վ անիրաւ դու և չարագոյդ՚ի մարդիկ, Դանիա այսահարեալ, ընդէր հեռացուցեր՚ի բարեպաշտութենէ աստուածոյն և զՆդոս պաշտօնեայ աստուածոհեացն, զոր դու անապատս՚ի պաշտամանէ[2] արարեր. երդուեալ՚ի զօրութիւն անմահին, զի ոչ անցցէ՚ի քէն յանդգնութեան իրաւունս: Եւ զայս ասացեալ՝ ոչ յապաղէր, այլ վաղվաղակի հրամայէր լուծանել զգօտի նորա ընդերկուզեան ակամբք և մարգարտով, առնուլ և զայլ ամենայն իշխանական պատիւն՝ զոր զգեցեալն էր, և մերկ խայտառակ շղթայեցուցանել ընդ ամենայն հրապարակս քաղաքին, և արկանել՚ի բանդ մինչև անդէն ատեակեացն՚ի կենաց: Եւ ապա հրամայէր զՆդոս ածել զառաջեաւ, և վերստին կարգել զնա՚ի պաշտօն աստուածոհեացն: Իսկ նա՚ի խորոց սրտին պահէր զառանդն բարեպաշտութեան, այլ և զբազումս՚ի մոլորելոցն՚ի մտաւ

1. Մի օր. ֆոյր ինչ ընդ նոցունց: 2. Մի օր. ՚ի պաշտմանէ:

պաշտաւնեա կուռցն՝ ածէր միւսանգամ՝ ի գիտութիւն
Ձգնարտուեանն։

Բայց ամպարիշտն Մաքսիմիանոս՝ ոչ հանդուրժէր
զերբասեան կրօնիցն ներուաճն լինչ ողորմութեան՝ ի լը-
սել Թողուլ, և յայտ ընդդէմ քրիստոսական հա-
ւատոյ մարտ եդեալ ցասմամբ չարին՝ զտաճար սըր-
բոցն այրէր, և զմեհեանս դիւաձոյլ պատկերացն չի-
նէր, և պատուէր հրամանի տայր իւրոց զօրականացն
զսպառնալ քրիստոնեայն ածել՝ ի մէջ. քարոզ կար
դայր ընդ ամենայն տեղիս իշխանութեան նորա. եթէ
ոք ասէ՝ ոչ պաշտեմ զՅաստուած ինքնակալացն, տա-
րապիր եղիցի՝ ի կենացս, և ինչք և ստացուածք այնպի-
սոյն յափրնիս եկեսցեն։ Արձակէր և դատաւորս ան-
ողորմս և վայրենամիտս կողմնակալս որ՝ ի բացեայ
էին, և սաստիկ սպառնալեօք օրէնս դնէր նոցա, զի
ուր և գտցի ոք Նազովրեցւոյն հաւանեալ և ապաստա-
բեալ յաստուածոյն՝ անողորմ և դառն տանջանօք
զրաւեսցին՝ ի կենացս։ Եւս առաւել, ասէ, զառաջ-
նորդս չար աղանդոյ նոցա եթէ գտանիցեն ուրեք՝ եր-
կաթեղէն կապանօք առ իս առաքեսջիք, զի ես զար-
ժան վրիժուց դիցն անարգանացն խնդրել մարթա-
ցից։ Եւ այսպիսի կատաղի զայրացմամբ և ահագին
տաղնապաւ սաստիւք զամենայն աւր հասարակ դողա
ցուցանէր։

Ձայնմ ժամանակի՝ ի խոյզ անկեալ քննայոյզ լի-
նէր վասն սրբոյ եպիսկոպոսին Անթիմոսի, և բազում
անգամ տուեալ զինուք պատեալ զեկեղեցին ոչ
գտանէին, քանզի խոյս տուեալ վախչէր յանապատ
տեղիս, վասն անտեղի գործոց անօրինացն. զորս ոչ
գտեալ՝ ի տարակոյս անկեալ[1] ամբարիշտն, և Թախ-
ծեալ վարանէր, և իբրև՝ ի տապոյ ջերման տօչորէր
կիզանող սրտմտութեամբ սրտին, եռանդմամբ ա-
րեան ջերմութեան. քանզի՝ ի մոխ եղեալ էր ընդ
անհնարին տանջանօք արկանել զսուրբն Անթիմոս
առաւել քան զամենեսեան. զի՝ ի ձեռն նորին տան-
ջանացն առաջնորդի ուսմանց աղանդոյն իւրեանց,
ասէ, զարհուրեալք ամենեքեան եկեսցեն՝ ի պաշտօն

1. Մի օր՝ ի փոխանակ անկեալ։

աստուածծոյն և զմեզ անսաչխատ արասցէն. մանաւանդ զի Թաքոյց զչքնաղագեղն Դանիա, հեռացուցեալ զնա յապարանից առագաստ իմմէ. կարծեմ Թէ հրապուրեաց և զնա, կցորդակից կրօնից իւրոց արար:

Իակ յորժամ այս յոյզ քննութեան դատարկէր, և ոչ կարացին գտանել զտուրըն Աստուծոյ, յայնժամ յոյզ և խորհուրդ մտաբերէր հնարագիտութեամբ բանաստեղծութիւն, և գիտացողութիւն զայրացմանն ցածնուլ ի բարկութենէն, և զվաղակաւոր ի պատեանս իւր ամփոփել խոստանայր, և զուարթ երեսս առնոյն հրապարակին ցուցանէր. պատուիրակ հանէր, բարիս խոստանալ քարոզէր, զբռնամտութիւն բարկութեանն ի քաղցրութիւն շրջեալ մեկնէր. Թերևս երևեսցին, ասէ, յայտնապէս աներկիւղ լեալ յիմմէ պատուհասից, ապա միահաղոյն ի վարմ իմ ժողովեալ բարձից յերկրէ գիւշատակս նոցա, զի քնաւ ոչ երևեսցի անուն նոցա ի մէջ ցեղից. և այսուիկ մեծաւրհատ դիւքն մեր ընդոհս բարեաց մեզ հատուցեն: Ս.յսպիսի խարդաւանող և կեղծաւոր խորհրդովք պատրէր զամենեսեան. և այնուհետև բազմութիւն քրիստոնէից ի համբաւ չարիմացին այնսոյիկ խաբեալք, աներկիւղ համարձակութեամբ ի մի վայր ժողովէին, և յայտնապէս կամայորդոր սրտիւք կատարէին զպաշտօն աղօթից:

Այդ յաւուր միում յերևելոյ միահամուռ ամենայն հաւատացելոց բազմութիւնն ոլք ի Նիկոմիդա և ոլք շուրջ ի շէնս գաւառին քնակեալ էին՝ միաբանեալ ամենեքեան գային ի կաթողիկէ եկեղեցին, զսովորական աղօթսն կատարել. զոր զգացեալ Թագաւորն՝ զօրօք իւրովք վառեալ հասանէր ի գրուն տաճարին Աստուծոյ, և աղտուս արկեալ և բեմքս բարձրագոյնս կազմեալ նստէր ի վերայ նորա, և բազմութիւն զօրացն սպատաղինեալք անշշունչ կային առաջի նորա: Յայնժամ խօսել սկսաւ Թագաւորն և առ ցժողովեալ բազմութիւնն. Ս.նպատեմի և բաւերեբաստագոյն ինքնակալութեան իմոյ ներսումն մարդասիրութեան՝ յամենայն իրս աստուածծոյն նմանեալ լինի. զի և առ բարեպատոս Թագաւորսն, որ զսուտ

հարկաւորութեան մերոյ դժուարըմբեռնելի համարին, և Հռոմայեցւոց տէրութեանս ոչ հնազանդին, ոչ վաղվաղակի զնոսիկ ՚ի վնուց իմոց շարժեմ, և ոչ նեղս ՚ի պատկանդարանաց ՚ի կիր արկանեմ, և ոչ ՚ի ձեռն սուսերաց բարձրացուցանեմ զբազուկս իմ ՚ի վերայ նոցա, և ոչ վատնեմ զնոսա փութանակի վահանապատ պատնիշօք. այլ հանձարեղ և իմաստուն բժշկաց նմանեալ զբարիան ողբական խոստմամբ կակղացուցանեմ, և սպեղանիս արկանեմ ՚ի վերայ վէրացն՝ զմարդասիրութիւնն. իսկ յորժամ տեսանեմ կարեւէր խոցեալ և ՚ի խորոչ թաքուցեալ զվէրն՝ խառնանօք խստագունիւք հատանեմք, ՚ի վերայ արկանեմք զկարծրատոյն զդեղն և զծանր ըմպելին. և ոչինչ նեղութիւն ողջմտութեան գոցեն այնպիսիսքն ՚ի մէջ մարդկան: Այն որոյ սեմ ձեզ և աղաչեմ, մի և ես եղիցի ձեզ փորձ առնուլ զիմոյ խառնութեանց և անսեռելի բարկութեանց, այլ մատուցեալ փութաջիք զոհել մեծամեծ աստուածոյն, զի և ՚ի մէնջ զհաշտութիւն գտջիք, և պարգեւեցից ձեզ բազում մեծութիւնս պարգեւաց, և պատիւս երևելի մեծութեանց, և թեթևացուցից ՚ի ձէնջ զամենայն սակս հարկաց, և հանապատիւս ինձ լիցիք: Զի եթէ բարբարոսաց և այլազգեզուաց ազգաց այնչափ մեծութիւն բարութեանց ՚ի մէնջ պարզևին, ոլչափ և առաւել ձեզ որ Հռոմայեցւոց օրինօքն էք սնեալ և վարժեալ, և հելլենական իմաստութեամբ և հանձարովք խրատեալք: Ա՛րդ մի պատերազմիք ընդ ձերում թագաւորութեանս, զի մի արտաքս անկանիցիք ՚ի տանց, ՚ի ստացուածոց և ՚ի ձոխաձիր քաղցրութենէս: Ի քաց կայէք այսուհետև յաղտեղի կրօնիցդ. ապա եթէ ոչ՝ զայս գիտացիք, զի իրաւունք գատաստանի իմոյ ոչ հեռի են ՚ի ձէնջ. տեսէք զտունս զայս յոր յուսացեալ էք, հրոյ աւանդեմ զսա, և զձեզ միանգամայն ընդ նմին կորուսանեմ:

Ա՛յսպէս ամբարիշտն Մաքսիմիանոս ահագին որոտմամբ և չարաչար սպառնալեօք և թիւնալի մահ բաշխէր յամենեցուն լսելս. և խելթ ու հայէր յամենայն գաւառ քրիստոնէից ժողովոյն: Յայնժամ շարժեալ ՚ի Հոգւոյն սրբոյ իմաստախոհն այն երիցս երանեալ քահանայն Գղեմիկոս համաշխարհական եկեղեցւոյն որ

’ի Նիկոմիդա, յառաջ մատուցեալ ձեռներէից լինէր յատենին, և բարձրագոյն բարբառով հանդուցա- պոյն առնէր զբանիցն պատասխանիս՝ ասելով. Գիտու- թիւն լիցի քեզ, ով արքայ, զի ոչ խոստմանց և պար- գեւաց քոց հաւանիմք և ոչ ’ի սպառնալեաց քոց երկնչիմք, զի ունիմք քաջալերիչ զնախաձայնութիւն պատուիրանի փրկչին մերոյ՝ որ ասէ. Մի երկնչիք ’ի սպա- նանելոց զմարմին, և յոչ կարողաց սպանանելոց զոգին. զի բարեխնամդ որով կամիս պատրել զիմաս մեր և հանել զմեզ յայն բարեխնամութենէն՝ զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրե- լեաց իւրոց, և որով սպառնաս հրկէզ առնել զմար- մինս մեր, յաններելի տանջանացն կամիս բռնել զմեզ, և անցուցանել անկիզելի ընդ յորդահոսանս հրեղէն գետոցն առ նաւահանգիստն մեր Քրիստոս. զի ոչ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձ- եալոց փառացն որ յայտնելոցն է. և զամենայն զիրաւս և զպատիւս ժամանակիս իբրև զտուեալս և զկոչմանս երազու համարիմք։ Զի՞ ’ի զուր և ’ի նանիր խուռվեալ ես, և կափուցեալ զաչս իմանալի հոգւոյդ. զիա՞րդ ոչ իմանաս զօգուտն քո, և կամ ընդէ՞ր ոչ ձանաչես զա- րարիչն ամենեցուն և զտուիչն քեզ զիշխանութիւնդ. զի յաղթութիւնդ քո որով ամբարհաւաճեալ պար- ծիս մնասի և աղբեղէն փառօքդ՝ որով դեր ’ի վերոյ կարծես լինել բազմաց զբեզ, յետ սակաւ աւուրց ’ի կանանց և ’ի մանկանց շարաբառնի ’ի քէն ’ի մերոյ խակ նահանգիս. զի նանրութեան նմանեալ են կեանք քո, և պայծառութիւն քո ունայնութեամբ լիջանէ ’ի դժոխս. և զարմանամք թէ զիա՞րդ այնքան տկարու- թեամբ լիջանէ ’ի դժոխս զանգաճեալքդ[1], մարտ ե- դեալ ընդդէմ անպարտելի զօրութեան այնմ՝ որ յոչէից գոյացոյց զամենայն յաւիտեանիքս, և կա- ռավարէ զբնաւս բանիւ զօրութեամբ իւրով. և ինքն կայ և ծնայ անշարժ հաստատութեամբ յիւրում անհա- մեմատ և անփոփոխ բնութեանն, և զոր ամպարիշտ մոգք ամբարտաւանեալ զապիրատութիւն ’ի բարձունս խօսեալ, զանզուգական անունն դիւաձոյլ պատիե-

1. Մի օր. գՖ-ՅԵ-Ց։

բացն կոչեա, աստուածն և աստուածուհին կարդալով զայնոսիկ՝ որ յանկարգ խառնակմանէ և՛ ի չարասերմանց անդադարամեռսականին են առեալ զկերպարանս նմանութեան, զոր և աղտեղի է զամենայնն յայտնել, մանաւանդ զի բազում իսկ այն են՝ որ՛ ի շանց և՛ ի գազանաց կերպարանս են քանդակեալք. զի այնչափ կուրացեալ աստանայ զմիտս քո, մինչ զի արարիչ երկնի և երկրի կոչես զայնոսիկ, որ՛ ի ձեռաց մարդկան կազմեալ են: Եւ եդեր լինչնամանս անմահ զօրութեանն Աստուծոյ միայնոյ և բոլորեցունց պատճառին. որ և բարձրացուցեր զեղջիւր քո, խօսել բանս անհանձարս զՄիածնէ նորա, և՛ ի կարգս մեռելոց իջուցանել զանմահութիւն նորա, որ է կերպարան և կնիք և ծագումն անսահման էութեան առաքչին Հօր, և փառակից և էակից ամենազօր և համագոյ Հոգւոյն, որ կամաւոր մահուամբն եղոյծ զկիրանութիւն մահու, և հրաշագործ և աքանչելի յարութեամբն կենդանարծեաց զմահացեալսն մեղաք, և գայ միանգամ դատել զկենդանիս և զմեռեալս, և հատուցանէ արդարոյն բարեաց հատուցումն ըստ արդար վաստակոց նոցա, և զանաւրէնն և զչարագործն որ իբրև զքեզ իցեն, մատնեացէ անանց և միանգենաւոր այրմանն անշէջ գեհենին որք ոչ ձանաչէք զնա, և ոչ ապաստել ակն ունիք մեծի աւուր գալստեանն նորա. զի յամենայն կերպս միայն առ արարիչն մեր, անյապաղ հատանեն ապառնալիք պատուհասիցն՝ ի վերայ քո, ուստի ակն ոչ ունիցիս, զոր և դու յայտ հետե ոչ ես ձառլուցեալ երկոց՝ ի ձեռաց Աստուծոյ կենդանւոյ:

Արդ զայս ամենայն և առաւել քան զոյն խօսեցաւ երանելին Գրէգորիկոս առաջի Թագաւորին, և՛ ի միջ յոգնաժողով հրապարակին. ուստի և ներելով ունկն դնէր Թագաւորն, և ոչ կամէր առ ժամայն սաստիկ չարչարել զնա, ակն ունէր ողջանոջ ածել զնա՛ ի հաւանութիւն, և նովաւ զբնաւ ժողովուրդն հաւատացեալոց: Քանզի ոչ ծագեաց յաստուածայինն բանից վարդապետութեանց երանելոյն՝ ի սիրտ ամենայնի լոյս աստուածգիտութեան, և ա՛հիւ մեծաւ պաշտեաւ եղև՛ ի վերին նախախնամութենէն. ոչ ձգեաց ձեռս առ նոսա, Թէպէտ և աներնեքեան զանձինս՛ ի

մահ եղեալ էին. այլ եւ գնաց լուեալն ՚ի տաճարէ անտի, և ամենայն ժողովուրդք հաւատացեալցն շնորհս բազում ունէին Գղեբիկոսի իմաստութեանն և առաւածախօս վարդապետութեանցն։

Այլ Մաքսիմիանոս ոչ ընդերկարեր զգաստութեան բարկութեան, այլ հրամայէր զինուորացն մտանել ՚ի տուրբ եկեղեցին Աստուծոյ, և ունել զերանելին Գղեբիկոս և արտաքս հանել. զոր բերեալ կացուցին առաջի թագաւորին, և ոչինչ հարցմանց արժանի արարեալ, հրամայէր տարածանել ՚ի դեռնի և դալար արջառաջլօք հարկանել յոյժ, մինչև վաստակեցան ձեռք դահձացն ՚ի հարկանելն։ Իսկ նա զամենայնն առ ոչինչ համարեր, այլ զոհանայր զՏեառնէ՝ վասն որոյ զչարչարանսն հանդերձել կրէր։ Եւ իբրև առաստկացուցին զանջանան, և սկսան արբանեակքն առտանայի երկաթի եղնգամբ քերել զկողս նորա, և ջահս վառել ՚ի վերայ մարմնոյն, որ և ՚ի սաստկագոյն քերանացն առնուին առոգաներ զերկիւրն. և նորա անշնչացեալ և պահեալ ՚ի ձայնէ, ոչ եւս կարէր շարժել զշրթունսն. և քարոզն ՚ի հարկանելն այսպէս ասէր. Խնայեա ՚ի լեզուդ քոյ, ով Գղեբիկէ, և մի լինիր ամբարհաւաճ և պանծաձաբան, և մի խառնակեր զհանդէսս, պատուհաս զՀռովմայեցւոց տէրութիւնս և մի շփոթեր զաստեան ինքնակալացն, և մի ընդդէմ հեղլենացւոց իմաստնոցն զայնոսիկ բարբառիր, որ ոչ վայել է։ Եւ այն պիսի բանիւք քարոզն զհրապարակն լնոյր. այլ ոչ տանջելովն հաւանեցոյց և ոչ ողբանօքն հնազանդեցոյց։ Իսկ երիցս երանելին ՚ի հրապարակին գոչէր մեծաձայն և ասէր. Տէր Յիսուս, միածին որդի, Հաւրդ պայթ և կերպարան բարձրելոյ քո Հօր, վաստահութիւն իմ և ուժգնութիւն, զօրացո զիս յամենայնի. զի ՚ի ձեռն բազմապատնակ չարչարանացս՝ բազմացի առ իս բերաբեան բարեաց հատուցմունքն ընդ ամենայն սուրբս քո։

Յայնժամ ՚ի վերայ բանիցս այսոցիկ արտմեալ թագաւորն, ցասուցեալ սպասաւորացն՝ զի առաւելացուսցեն զանջանս սրբոյն։ Եւ նորա լսեալ հրամանէն զմարմինն նորա՝ մինչև անշնչոց նմանեալ եղև, թափեալ մարմնոյն և

*’ի յօդոյն փքանալով, և միսք մարմնոյն վատնեալ քանի
յէին ’ի ջլացն և պատառ պատառ յերկիր անկանէին,
և ոսկերք միայն տակ երևէին, մինչև զարմանալ ամե-
նայն տեսանողին։ Իսկ երանելի նահատակն շարժե-
լով միայն գլխովն ասէր. Փառաց եմ միայնոյն Աս-
տուծոյ Թագաւորին յաւիտենից, զոր և Տէր որ ա-
րար զերկինս և զերկիր՝ զնա խոստովանիմ և ’ի նա
յուսացեալ սպասեմ անձառ պարգևաց նորա. կռոցն
ես ոչ զոհեմ, որ քան գշունան և վատթարագոյնք
են։ Իսկ ամպարշտին այնորիկ ոչ հանդուրժեալ համ-
արձակութեան սրբոյն՝ լուծանել զնա ’ի կապանացն
հրամայէր, և վճիռ կնքէր ’ի վերայ նորա զի արտա-
քոյ քաղաքին խաչեսցի, և մարմին նորա հրով մա-
շեսցի[1]։ Այլ առեալ զահձացն զնահատակն Քրիս-
տոսի՝ քարշէին ընդ փողոցամէջ քաղաքին արտաքոյ
դրանն ’ի տափարակ տեղւոջ, մերձ յեզր ծովուն ուր
և զփայտն իսկ կանգնեցին. և նորա հայեցեալ ընդ
արևելս՝ սկսաւ ’ի ծածուկ աղօթել, շրթանցն միայն
շարժելով. և լուր ’ի հարուստ ժամն աղօթէր՝ յայն-
ժամ առաքեաց զամէնն, և ասէ ցդահիճն. Եկայք
կատարեցէք վաղվաղակի զհրամայեալսն ձեզ ’ի բըռ-
նաւորէն։ Եւ ինքնին գիմեալ ’ի խաչն, տարածեալ
զձեռս իւր՝ բևեռեցաւ ’ի վերայ նորա. և ապա սպա-
սաւորքն սատանայի սաստկացուցանէին զհրատ բոր-
բոքեալ բոցոյն ’ի նեղլոյ նորա ժամն ինչ, և ողջակի-
զեալ զնա ’ի բարձրութեան խաչին, և նորա աղաղա-
կեալ ’ի ձայն մեծ՝ ասէ. Տէր Յիսուս, ընկալ զոգի իմ
’ի հոտ անուշից, և խառնեա զիս ’ի թիւ ոլոր սիրելեացն
քեզ և զօր երևելոյ[2] գալստեանդ քո։ Եւ խակոյն ա-
ւանդեաց զոգին։

Իսկ ինդոս ’ի տուն ինչ խաւարչտին արձակեալ՝
զանձինն ոլբայր և զկորուստն այնոցիկ որ զոհէին
կռոց։ Յայնժամ և լուրն այն հասանէր յականջս Թա-
գաւորին, և հրամայեաց ածել զնա. և խակոյն վաղվա-
ղակի ածեալ կացուցին առաջի Թագաւորին. և հրա-
մայեաց ձեռս յետս կապել զնա և անուր երկաթի
արկանել ’ի պարանոց նորա, և դնել զառս նորա ’ի

1. Մի օր. այրեսցի... փողոցին։ 2. Մի օր. երևելի։

կոչեալ, և արկանել ՚ի բանտ խաւարչային։ Եւ ինքն մեծաձայն ՚ի լանդիսն լինէր սրբոյ կուսին Դոմնայի, և պակշռական յիմարութեամբ մաշէր ՚ի միտս իւր վանն նորա, մոռացեալ զոր վանն նորա լուեալ էր, և ասէր. Ո՞ւր է Դոմնա Աւրաեմեայ և Աւթենայ մեծաւորսն քահանայապետին. և նոյնժամայն ՚ի պատուա-
էրաց պալատանն ծանուցանէին զեղեալն որ վանն Դոմնայի։ Եւ հրամայեաց Հատանել զկլուխ նեղիթեսին, սակս հեռացուցանելոյ զԴոմնա յարքունական ապարանիցն։ Եւ զինուորս բազումս ապառա-
զինեալս[1] առաքեաց ՚ի վերայ մենաստանեաց կուսանացն, զի զԴոմնա գտեալ ՚ի մէջ ածցեն. և զայն ի-
մացեալ երանելոյն՝ առնական զգեստիւք զարհուրեալ նոյա տուեալ գնաց ՚ի վանից անտի։ Եւ իբրև ոչ գտին զկոյսն՝ մնացեալ իբրև զպատանս արիւնարբուս, նա-
խանձընդդէմ[2] առնեցուն, խորհեցան և զայլս սրբուհիսն տանեալ կուսանացն չարաչար քարշել և յանարգանս տանել։ Սակ նոցա փախուցեալք յայրս և ՚ի ծերպս վիմաց, ընդ զարհուրանս վայրենիս առնելով զբնակուհիսն Թիւնա իւրեանց. քանզի բազումք այնոքիկ էին որք անկան ՚ի ձեռս զահձացն, զոր աներևոյթ զօրութիւն վերին խնամոյն, որպէս զհաւատոն նոյնպէս զմարքրուհիսն Թիւննն անարատ պահեաց։

Սրդ մի ոմն երևեալ ՚ի մէջ սրբոցն անհամեմատ զեղեցկութեամբ և բարի վարուք զարդարեալ, որում անուն Թէոփիլա կոչէր, զան տեսեալ գործունեայք չարին և պակշռութեամբ յիմարեալք, և ընդ միմեանս խուճապեալք գոռում զինուորացն՝ մոլեկան ցանկութեամբ յափշտակէին զնա ՚ի միջոյ քեզոյն, և բռնաբար վերամբարձեալ քարշանօք մուծանէին ՚ի յարկս անօրինելոյն։ Եւ ՚ի հուշակ համբաւոյ նորա կուսեցան ՚ի տեղին յայն վաւաշոտ տուփանօք էրխտասրդք քաղաքին։ Սրդ միանդեր կայր նա արքեալ յանարգութեան տեղւոջն յայնմիկ զաչս ՚ի յեր-
կինս համբարձեալ, մեծի նաւապետին ակնարկելով, հեղեալ զանձն իւր առաջի հզօրին զօրութեամբ, այնմ՝

1. Մի օր. ապառաժինեաց։

2. Մի օր. նախանձեալ ընդդէմ միմեանց։

որ եկն՝ի բառնալ զմեզս աշխարհի, և գոչէր ասելով. Տէր իմ և Աստուած իմ, Յիսուս փրկիչ իմ և կեցուցիչ, հայեաց՝ի պատրաստ քնակութենէդ քումմէ յանարժան ազախին քո, և մի տար յապականութիւն զքո ժառանգութիւնս, և անապատ և անարատ պահեա զառաքաստ կուսութեանս, զի քեզ խոստացայ պահել զկուսութիւնս իմ անարատ արդարութեամբ։ Եւ արդ երևեցո զերեսս քո, ամբիծ և անապական փեսայդ երկնաւոր, և փութա յօգնել ինձ, և մի մատներ զիմոստովանողս անուանդ քո, զի և առնուն քո փառաւորեացի՝ի մէջ բարբարոս և ամպարիշտ ազգացս. զի և ես արժանի եղէց անարատ մաքրութեամբ զընթացս իմ կատարել, և աչալրջութեամբ հանդիպել քումմ փառացդ, և հասանել մասին սրբոցն՝ի լոյս։

Զայսոսիկ հանդերձ արտասուօք պաղատանս մատուցանէր առ Աստուած երանելի կոյսն Թէոփիլա. և իբրև կատարեաց զաղօթսն, մի ոմն յամպարիշտ զօրացն սեղեխաբար վատթարեալ խորհրդով կամեցաւ մերձենալ՝ի նա. և յորժամ հուպ եղև՝ վաղվաղակի ընդունեաց զնա աչ և դողումն, լլկեալ՝ի չարէն, սկսաւ աստանել դողալ, և անկեալ յոտս Թէոփիլեայ անշնչանայր իբրև զմեռեալ. և իբրև ժամք բազումք անցին՝ի դուրս ոչ ելանէր, այլ ամն եմուտ՝ի ներքս և տեսանէր անձառ լոյս փայլատակեալ շուրջ զնովաւ, յորմէ՝ի նշողէին առաժանայն խաւար եղև՝ի լուսոյ աչացն և ոչ կարէր ելանել ընդ դուռնն։ Նակ ոմք արտաքոյ կային առ դրան ոչ գիտէին զեղեալսն, մտանէին և նորա խնամանալ զինչ եղև, և նովքին պատուհասեալ և նորա տանջեալք լինէին։ Յայնժամ ժողովքն՝ի միասին մտեալք տեսանէին ահագին նրա հրաշից, զի երանելի կոյսն նստէր լուսեղէն առանձինն և ընթեռնոյր զաստուածայինն գիրսն զոր միշտ կինքեան կրէր. և երիտասարդ մի կայր առաջի նորա լուսեղէն՝ յորոյ երեսացն փայլատակումնք լուսոյ արձակէին։ Զայս իբրև տեսին՝ յերկիւղ մեծ եղեալք հապիւ ուրեմն Ճողոպրեալք արտաքս ելանէին՝ի տանէն, ասելով. Մեծ է Աստուածն քրիստոնէից, և անյաղթ և անպարտելի է զօրութիւն նորա։ Եւ յայնմանէ քա-

զումք Հաւատոյին ՚ի Տէր և ուսան զաստուածպաշտութիւնս։

Եւ եղև յականջս Մաքսիմիանոսի՝ զի անշահախնդիր կոյն ՚ի զինուորսցն, և կախարդութիւնն զՍատանայ մեծասքանչ զօրութիւնն Հաւատոյ և ասէր, թէ՝ չարիմաց կախարդասար աղանդուք զայնոսիկ զօրծեն գործս զայլեացիքն առ ՚ի պատիր խաբէութիւն քաղմաց։ Յակ լուսատեսիլ երիտասարդն կալեալ զձեռնէ կուսին առաջնորդէր նմա անձառ լուսովն մինչև յեկեղեցին, և ասէր. Խաղաղութիւն ընդ քեզ. և ինքն յերկինս վերանայր։ Յակ երանելին այն երկիւղալից խնդութեամբ պաշարեալ լինէր, զաչս ՚ի յերկինս հառնչեալ գոչումն մատուցանէր Աստուծոյ մարդասիրին, որ փրկեաց զնա յամենայն մեքենայից սատանայի։ Յակ բազմութիւնք ժողովին եկեալ ՚ի մէջ գիշերին ՚ի կաթողիկէ եկեղեցին կատարելով զաւուրական աղօթսն, և տեսեալ զնա ՚ի ներքս՝ զարմանք կալաւ զամենեսեան. քանզի էր նա ազնուական ազգի ընտանւոյ և ծանօթ բազմաց։ Յակ նա պատմեաց զամենայն անցս չարչարանացն, եթէ ւրպէս զօրութեամբն Աստուծոյ յամենայնէ փրկեցաւ։ Այդ իբրև լուան զայս ամենայն բազմութիւն հաւատացելոյն՝ զձայնս իւրեանց առ Աստուած ամբարձին առ հասարակ, փառս ՚ի բարձունս առաքէին արարչագործ զօրութեանն Աստուծոյ, և աղերսս արտասուաց հեղուին ամենեքեան, մինչև պրեթէ թանալ զատակս սրբոյ տաճարին։ Յակ սրբուհին Թէոփիլա ընկենոյր զինքն առաջի սրբոյ սեղանոյն Աստուծոյ, և արտօսրահեղձ[1] հառաչմամբ աղօթս մատուցանէր Ամենակալին, զոհանալով յաղագս փրկութեան անձին իւրոյ։

Բայց Մաքսիմիանոսի[2] չարտուղս գոլով՝ նման նմին պատահ էր լինել, և իւրոյ չար արբանեկացն չար և ժխտական երևեալ, զբարեպաշտութիւն հաւատոյն հեռացուցեալ լինէր. և գտեալ չարին սպասաւորացն զՎտոմէոս, զայն որ փառաւքն յակ և քաղաքական գերապետն լուսաւորութեամբ պայծառացեալ

1. Մի օր. արտօսրայեղձ։

2. Մի օր. Մաքսիմիանոս... եւ ընէր։

էր, և նախարար և հրամանատար՝ ի վերայ ամենայն զօրաց պալատանն, և զԱրշակիս իշխան եբևել, և զԱիրիպետիս նորին ընկերակից և զյաւուրջ ասացեալն Ինգոս, և զայլ ևս բազում հաւատացեալս՝ ի տէր, որք էին՝ ի պատուական իշխանաց արքունական դրանն։ Որոց՝ ի ցաւումն բարկութեան եկեալ անօրէնն Մաքսիմիանոս՝ ասէ. Երդուեալ յանմահ և յամենակալ աստուածն, զի ոչ ևս ինձանից՝ ի ձեզ, այլ զամենայն տեսակ տանջանաց ածից՝ ի վերայ ձեր մինչ ամբարշտութեանդ, և տաց զմարմինս ձեր գազանաց երկրի և թռչնոց երկնից, զի և այլք երկուցեալք ոչ օտարասցին՝ ի պաշտամանէ աստուածոցն։ Եւ հրամայէր զօտի նոցա վաղվաղակի լուծանել, և մերկ առնել զնոսա յիշխանական հանդերձից. և նոքա քան միաբանեալք միով հոգւով և միով բերանով աղաղակէին առ նա. Քրիստոնեայք եմք և ծառայք ամենակալին Աստուծոյ, արարողին զերկինս և զերկիր, և ոչք՝ ի նոսա արարածք լինեն. և զամենայն պաշտամունս քո, ով թագաւոր, իբրև զաղբ անպիտան վարկանիմք և իբրև զերազք զարհուրելոցն։ Յայնժամ և առաւել՝ ի չարութենէն սրտմտութեան բորբոքեալ թագաւորն Մաքսիմիանոս, հրամայեաց առանօք զոտս և զձեռս նոցա պարտաւանդելով տարածանել ի գետնի, և վայրենի մահիւք ընդ յերկար տանջել զնոսա. և զահինքն շուրջ զնոքօք եղեալք՝ ի վաղուէ առաւօտէն մինչև յերեկոյն՝ յանխնայ հարկանէին զնոսա, ոչ ինչ ամենևին խնայելով հասարակաց բնութեանս։ Այլ մինչ զեռևս կենդանի կային նոքա՝ ի տանջանարանս չարչարանացն, հրաման տայր կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք արկանել՝ ի բանտ, և անյագաբար սուր նորա Չարակէր զամենեսեան։

Այլ քանզի պարտ էր մեծապատուն և խորհրդակից նի անօրինեցելոյ Բանին և ծնեցեալն՝ ի կուսէն ընծայաբերել զանձինս իւրեանց՝ որք՝ ի նա հաւատացեալքն էին. քանզի մերձեալ էր ծոն աստուածայայտնութեան փրկչին մերոյ և ընդ մեզ հրճեցելոյն[1] Աստուծոյ. յայնժամ սինկղիտոսն հանդերձ ամենայն

1. Մի օր. հրճեալն... դասուն։

իշխանական դասուք և գնդօք զինուորացն՝ մատուցեալ առ Մաքսիմիանոս՝ ասեն. Թագաւոր, աւետեան կեաց. քանզի ձշմարտիւ գիտեմք զի հանապազ հոգ՚ի մեր եղեալ ինքնակալութեանդ քո բառնալ՚ի մէնջ զաղանդ մեռաւ յուսոյն Գալիլեացւոց, զի հաստատութեամբ անշարժ մնասցէ օրէնք Հռովմայեցւոցն, և առանց վատթարութեան անքակ եղիցի պաշտօն մեծափառ անմահիցդ բարեբար աստուածոց մերոց: Այլ եկեալ հասեալ է դիպող ժամադրութիւն վրէժխնդրութեան մերոյ՝ի նոցանէ, որ մարթ է առնել նմին բառնալ՚ի միջոյ զանհանձար և զէտ կրօն նոցա. զի այսօր է գերահռչակ գլուխ տօնից նոցա, իբրու առասպելաբանեն զաստուածն իւրեանց ծնանիլ՚ի կուսէ, զոր և արարիչ ինքեանց կարդան զինա և հանդիսաւոր կցուրդս տօնից կատարեն. ահաւասիկ՚ի մեծ է մինչև ցիտքունս ժողովեալ են՚ի մեծ եկեղեցին: Եւ հաձոյ Թուեցաւ բանս այս Մաքսիմիանոսի, և հրամայեաց առաքինի դասուց զինուորացն սպատազինութեամբ պատել զտաճարն Աստուծոյ շուրջանակաւ, և փակեալ զդուրսն սրբոյ եկեղեցւոյն, զի մի՛ ոք արտաքս ելցէ՚ի բազմութենէն, և առաջի դրանց տաճարին հրամայեաց կանգնել զմեհեանս աստուածոց իւրոց. և քարոզն աղաղակեր և ասեր. Եթէ ոք կամեսցի զՔրիստոսէ՚ի տանջանաց և ապրիլ՚ի մահուանէ, ելեալ երկիր պաշտեցէ բարեբար աստուածոց ինքնակալին. ապա եթէ ոչ կամիք հաւանել՝ կամաց նորա՝ կենդանութեան հրոյ Քարակ եղիջիք առնեբեան առ հասարակ, և ոչ ոք զերծցի. զի այսպէս հրամայեաց քաջ արանց մեծն Մաքսիմիանոս: Եւ իբրև բարձրաձայն աղաղակաւ բանքս այսոքիկ պատմեցաւ՚ի քահանայէն, և նոյնժամայն գործն զկատարումն առնոյր: Ցայնժամ հրեշտակք Քրիստոսին մեռեալ յեկեղեցին՝ մեծապէս գոչէին առեալ. Ինքնակալն առաքեաց զմեզ առ ձեզ, ՚ի յայտնել երկոցունց ընտրել ձեզ, կամ ելանել զոհել աստուածոցն՝ որ պատրաստական կայ առ դուրս մեհեանն, կամ Թէ անհաւան լինել՝ զամենեսեան հրով կիզուլ. արդ զոր ախորժէք՝ ընտրեցէք:

1. Մի օր. հնապանդել:

ցէք վաղվաղակի, զի ոչ ներէ ձեզ ժամանակս այլ ինչ առ պատասխանի:

Յայնժամ երանելի սարկաւագապետն եկեղեցւոյն որում անուն էր Թէոփիլաս՝ զօրացեալ ի շնորհաց Հոգւոյն, և կացեալ համարձակութեամբ ի վերայ քեզմէն մերձ աստուածային սեղանոյն, բացեալ զբերան իւր ասաց. Ամբ եղբարք և հարք վերին երուսաղէմի, պիտէք ամենեքին զի հանապազօր երկեաք զերկս ենք ընդ մահկանացու, և պատչացեալ զարհուրեաք ընդ մեծահանդէս ինքնակամ յօժարութիւն նոցա որ ի մէջ հրոյն որպէս յատազաստի պարելով, զամենայն արարածս ընդ իւրեանս յօրհնութիւն հրաւիրեալ բոլոր ընդ Աստուծոյ, զոր ոչ միայն երանեաք բանիւք, այլ և հաղորդելնոցունց սուրբ պատկայն ցանկայաք: Ամբ քանզի եկեալ հասեալ է մեզ օր փրկութեան և ժամանակ ընդունելի, արդ վառեցարուք քաջարիապէս ամենեքին վասն անձուկ սիրոյն այնորիկ, որոյ արեամբն փրկեալ եղաք. փութացարուք, ով սիրելիք, մինչդեռ ժամանակս ի ձեռս է, իբրև զխունկս անոյշս մատուցանել զմեզ պատարագս անարատս գաւթին այնմիկ[1], որ էին բառնալ զմեղս աշխարհի: Եւ վասն զի եկն ետ հաս ժամանեաց մեզ օր աւետեաց՝ որում և ցանկացեալ էաք[2] ամենեքին, և դրունք երկնից բացեալ են մեզ այսօր, և անեղական զօրութիւն մեծին Աստուծոյ կալ ի մէջ ձերում, որպէս յերից մանկանցն, և պահել զամենեսին քաղցրութեամբ կամօք իւրեանց, և ընդ հնոցն վերացուցանել ի բնակութիւնս հրեղէնս վերին զուարճանոցն, առնելով ի մի հօտ և ի մի հովիւ: Ամբ հաստատուն կացէք, միաբան և միախորհուրդ երկուք ամենեքեան, և անշարժ մնայք ի վերայ վէմին հաստատանոյ՝ որոյ գլուխ անկեան հնքն է Քրիստոս. և մի դադարեցէք զձեզ մեռոյ պատրանք կենցաղոյս, և մի զարհուրիք ի չինչանալոյ հրոյս, և մի ոք ծանրանալ արտաքս ելցէ աստուածային գաւթացն, և մի լոյծ լուցկի և ձարակ յաւիտենական անշէջ գեհենոյն:

Բայցեւ և այլ շնորհալի աստուածախօս վարդա-

1. Մի օր. անարատ գառինն այնմիկ: 2. Մի օր. կէաք:

պետութեամբ ՚ի յորդառատ բանից՝ զօրացոյց զա-
մենայն հաւատացեալսն ՚ի Տէր։ Յայնժամ բազմու-
թիւնն հանդերձ նովաւ գոչէին մեծաձայն և ասէին.
Քրիստոնեայք եմք և ծառայք Աստուծոյ բարձրելոյ,
զաստուածս թափուրսդ ոչ պաշտեմք, և պատկերին
նորա զոր կանգնեաց՝ երկիր ոչ պագանեմք։ Եւ խոյն
հասեալ լինէր բանն առ Մաքսիմիանոս։ Եւ նոյնժա-
մայն հրամայէր սպասաւորացն զՀուրն վառել, աս-
ել. Մի՛ ոք Հողոպրեսցի և մի՛ ոք ողորմութեան հան-
դիպեսցի։

Յայնժամ քրիստոսասէրն նահատակացն զերախայն
՚ի մի վայր ժողովեալ զաստուածային խորհուրդս
միրտութեանն կատարելով ՚ի վերայ նոցա, և անա-
րատ սուրբ խորհրդովն հաղորդեցուցանէին զնոսա։
Նոքա ՚ի նմին ժամու սպասաւորք Թափուրին հասա-
նէին, և զՀուրն շրջապատ բոլորէին զսուրբ տաճա-
րատեղն Աստուծոյ. և ահագին ոգոմամբ ելանէր բար-
ձրանայր բոցն, և զամենայն արտաքինան և զնեղչինան
Հարակէր։ Իսկ բազմութիւնք ժողովրդոյն ոչք յեկեղե-
ցւոջն էին, մեծաձայն գոչմամբ երդէին զերգս երից
մանկանցն, և զբոլոր արարածս յօրհնաբանութիւն
գոչել ոչ դադարէին, այլ և ՚ի մէջ հրոյն ընդ նոսին
ձայնք հրեշտակաց լսելի լինէր, և շարժեալ գղջէր
երկիրն ամենայն յահագին գոչմանէ ձայնիցն, մինչև
ամենևին ողջակիզեալ ամենեցունց արանց և կանանց
իբրև քսան հազարաց, որոց անուանքն իւրաքանչիւ-
րոց գրեալ էն ՚ի գաղտնութիւն կենաց։ Ընդ որոց կա-
տարեցաւ ջանահատակութեանց ամենայն զօրք վեր-
նոցն հիացեալ զարմացան, մանաւանդ ընդ անքակ
միաբանութիւն միակամ և միակրօն վկայիցն Աս-
տուծոյ։

Այդ իբրև աւուրք եօթն անցին, և հուրն դեռ ևս
չարակէր զնիւթն, և ՚ի գաղարել բոցոյն՝ հաս անու-
շութեան բուրեր չքնաղ և հրաշալի տեսողացն և
յոյժ զարմացմամբ, և նշոյլք ոսկեձաձանչ խոյշ խոյշ
ինչ և շնորհալի զարդափայլեր իբրև զձառագայթս
նշողից արեգական ՚ի ծագել առաւօտուն, և հրաշա-
չանչ լուսով երևէին նշխարքն սրբոցն։ Այլ Մաքսի-
միանոս յաղթութիւն մեծ համարելով զգործ իրին

այնորիկ, ոտն մեծ և երևելի կատարէր յաւուրն յայն միկ աստուածոց իւրոց, և պատուէր հրամանի տայր ամենեցուն գալ հասանել՝ ի տեսարան խաղուցն ձիընթացից կառամարտիկացն, շինել հրամայէր և առ տեսարանին տաճար մի աստուածուհւոյն Վեմետրեայ, այնմ՝ որ մեծագոյն համարեալ էր նա յաստուածոսհիան. և անցեալ ինքն ամենայն հանդիսական զօրօքն՝ կատարէր զոհս աղջատանաց զոհիցն, և զմնացեալ բարեպաշտան յառաջեցուցանէր՝ ի համարձակութիւն աստուածային կրօնիցն։

Յայնժամ մի ոմն՝ ի վիճուորական գնդէն՝ որում անուն Ջենոն կոչէր, ոչ հանդուրժէր զազրատեսիլ դիւաձեւսն զոհիցն. ՝ի բարձրաւանդակ տեղւոջ միում կացեալ, գոչէր մեծաձայն և ասէր. Մոլորեալ ես, ով Թագաւոր, քարանց և փայտից անզգայից զոհել[1], և զտարեր նիւթ եղէնս աստուածս անուանելով, և ձեռագործ պատկերաց զոհս և երկրպագութիւն մատուցանելով, որ դիւաց պատկերք են և ատելոյ կերպարանք։ Սմբատ զիմանալի աչս հոգւոյդ և նկատեա, հայեաց և տես, ծանիր և իմացիր երևելեօքս զաներևոյթն և ստացական նիւթեղինօքս զանիւթականն[2], որ զբնաւս ամենայն՝ ի յանգոյութենէ ՝ի գոյութիւն ած։ Եւ դու Թողեր զհաստիչն ամենայնի, և զանիւթական արարիչն և զընտրս քաղեր կամաց նորա, մտաւեաց զոհս և պաշտօնս մատուցանես, որ և ամենայն աստուածք քո զմժղիկ մի զօրութիւն ոչ ունին, նաև անարգագոյնք են քան զնոսա։ Եւ զայսոսիկ իբրև լուաւ Մաքսիմիանոս, հրամայեաց քարամբք ջարդել զկզակս նորա, և զայրացմամբ գոչէր առ դահճին, զօրեզագոյն առնել առնա զտանջանս հարուածոցն, զի մի անարգեսցէ զաստուածսն։ Այլ յորժամ ջախջախեցան խեղաթաւսակք կզակք նորա և խորտակեցան կզակք, և մատքն բեռանոյն փշրեցան, և առաւմունքն չարաչար՝ ի բաց Թափեցան, դեռ ևս փոքր մի շունչ գոլով՝ ի նմա և հանդերձեալ էր մեռանել, հրամայէր քարշել արտաքոյ քաղաքին, և զհամարձակախօս գլուխ նորա արուել հա-

1. Մի օր. էիւր պագանելով։ 2. Մի օր. պանիւրէղէնն։

տանել։ Ա.յսպէս քաջամարտիկ վկայն Քրիստոսի Յիսուսի զվէմ մահու ընկալաւ, կատարեալ զմարտիրոսական ստադիոնն, առ Քրիստոս որ զլուսն և առնայն՝ վերաբերեալ լինէր։

Ա.յլ որ հանդերձեալն էր որ Դորոթէոս՝ի ներպարն յառաջագայիլ[1], որ ընդ աստուածայնոյն Ա.ստեփանի մեծին քահանայութեանն վառեալ էին, ոչ միայն և նոցա առանց չարչարանաց. զի տնօրինեալ լինէր յաղագս այսորիկ՝ի վերուստ յաստուածային ընտրհացն։ Բանզի թուղթ իսկ առաքեալ լինէր առ նոսա՝ի սրբազանէն այնորիկ, զի՝ի թաքստեան էր՝ի գեօղ ուրեք. և այն ինչ անօրէնն Թագաւորին յայտնի լինէր թուղթն, և նոյն ժամայն առաջի նորա կացուցին. զոր տեսեալ և ընթերցեալ, զի էր մահապրեալ՝ի նմա բանս իմաստութեան և քաջալերս վասն աստուածպաշտիր կենաց կոչմանն յուսոյ կենացն յաւիտենից, արիապէս հաստատուն կալ՝ի վկայական մրցմանն յաղթանակի վերին կոչմանն։

Յայնժամ ցասմամբ մեծաւ զեղեալ Մաքսիմիանոս, հրամայէր առաջի իւր կացուցանել զարթն, և ասէ ցնոսա. Ընդէր ապստամբեալ՝ի կամաց իմոց՝ յարեալք՝ի վերայ իմ, և առ այլ ոմն Թշնամի իմ խոստացեալք։ Հրամայէր և զԹուղթն ընթեռնուլ, և զբեղոսողան՝ի ներքս մուծանել. զոր տեսեալ սրբոց վկայիցն յոյժ ուրախ եղեն յոգիս իւրեանց։ Իսկ Մաքսիմիանոս խելթիւ հային՝ի նա, և ցասմամբ մեծաւ ասէր ցնա. Երկայս Թշուառական եղկելի, ոմ՝ զոր աւանդեաց զԹուղթս զայս, և ոմր ուրեք Թագուցեալ է նա և համ յորմէ տեղւոջ։ Իսկ արկն այն և բարեզուարթ այրն, ոչ վհատեալ՝ի դժնեայ հայեցուածոցն, և ոչ զանպիտեալ՝ի չարաչար սպառնալեաց նորա՝ ասէ. Ով՝ զոր էցէ տուօղ Թղթիդ՝ ասացից, այլ Թէ ոմր է՝ չասացից, զի ոչ կարեմ մատնիչ լինել հոգւոցն իմոց. այն որ բազում շահս օգտից հոգևորս ընդ ամենայն եկեղեցիս մատակարարի՝ի նմանէ. քանզի և նա իսկ յետ փոքր ինչ ժամանակի երևեցոյ յայտնապէս բազմաց, զի ոչ կարէ քաղաք Թագէլոր՝ի վերայ լերին կայցէ։

1. Մի օր. որ Դորոթոսին էր պարտ յառաջագայիլ... վառեալ էին։

Զայսոսիկ արիապէս առուածուոյց բերանովն պատ-
մէր առաջի Թագաւորին. իսկ անօրէնն Մաքսիմիանոս
ոչ հանդուրժեալ համարձակութեան բանիցն՝ զբե-
զու նորա հրամայէր՝ի բաց հատանել, և ապա քարկո-
ծել: Իսկ նահատակն այն տուրբ յետ հատանելոյ լե-
զուին և քարկոծմանցն՝ ապա և նետուք խոցոտեալն-
նէր, և ոչ ինչ փոյթ առնէր զտանջանացն, այլ կար-
դայր գոհանալով զՏեառնէ և ասէր. Տէր Յիսուս
օգնեա ինձ, և ընկալ զհոգի իմ՝ի հոտ անուշից. և
այնպէս աւանդեաց զոգին:

Ապա տակաւին և Մաքսիմիանոս ցասմամբ և սպառ-
նալեօք լցեալ էր՝ի վերայ դորոթէոսեանցն, տանջանա
դառնատեսիլս և անողորմ արկանէր՝ի վերայ նոցա.
և մինչդեռ ձեռք դահձացն վաստակեցան յոլորա-
ծեծն առնելոյ զնոսա, այնուհետև քերանօք երկաթի
եղնպամբք քանդեցին զմսրմինս նոցա. և ծորեալ
մաշէին զանձինս նոցա կարօտութեամբ հացի և ջուր.
քաղցամ անգամ և՝ի ծայրս մատանցն և եղնպացն
սայրատուր եղեգունս վարէին, և այնու խոցոտեալք
լինէին. և նոքա քաջութեամբ ամենայնի համբերէին
վասն երանաւէտ յուսոյն որ՝ի Քրիստոս. և զառնու-
թեամբ յանդիմանէին զանպարշտութիւն Թագաւո-
րին: Վասն որոյ և ինքն Թագաւորն լքաւ վաստակե-
ցաւ՝ի բռնամահ վկայիցն համբերութեանց. ապա
զատակինսն մահու հատանէր՝ի վերայ նոցա այսպէս.
ԶԴորոթէոսն զգլուխն սրով հատանել, և զՄարդո-
նիոս կենդանւոյն ասէ այրեցի, և զՄիզդոնիոս՝ի խոր
խորատ ընկենուլ, կարկառս քարանց կուտեցի՝ի վե-
րայ նորա. այլ զԴոդոնիոս և զինդոս և զԳեորս՝ երբ
կանաքար՝ի պարանոց նոցա կապեալ՝ի ծով ընկեց-
ցին: Եւ յետ այսչափ զանազան տանջանաց՝ կատարե-
ցան սուրբ վկայքն երանելի մահուամբ, և քարի խոս-
տովանութեամբ ամբարձեալք էլին առ Աստուած
յոյն իւրեանց, և խառնեցան՝ի բանակս երկնաւոր
զուարթնոցն, և պսակեցան յարտարչէն բոլորեցուանց:

Արդ զայս ամենայն իմացեալ մաքսն այն և ցան-
կալի կոյս Դոմնա՝ աւրախանայր, ցնծայր և բերկրէր
՝ի սրտի իւրում, մանաւանդ վասն Ինդոսի՝ որ էր ըն-
կերակից սուրբ քաղաքավարութեանն իւրոյ. և յոյժ

տեղեալն փափագմամբ հաւատարակից և հանդիսակից մաքուր մըցանաց նոցա՝ ի բրաբիոնին ցանկայր լինել. վասն որոյ և ոչ վըխտեաց՝ ի բարի ցանկութենէն որ առ Աստուած, թէ զկամն երկիւղածից իւրոց առնէ Տէր. և որ այնպէս մաքուր զհարսանեացն պահեաց զպատմուճան, և որ բազմայեզց և ջերմ արտասուօք իւրովք սպիտակացուցանէր զզարդ առագաստին. և ամենայն ձգնութեան տուեալ զանձն՝ ցանկալի երևեցուցանէր զինքն անմահ փեսային. զի վասն անտեղի գործոց ամպարշտացն յայրի միում թաղուցեալ էր, և իբրև՝ ի խաւարչտին սանդարամետական անցուցանէր՝ ի գերեզմանի զաւուրս անձկութեամբ, և տակաւ ջրով զուլացեալ և կերակրեալ լինէր յարմատոյ բանջարոցն զոր առ ակն քարանձաւին գտանէր։ Ցետ քա՛զ զուա՛մ աւուրց լինէ՝ իջանէր նա՝ ի լեռնէ անտի առնացի ձևով, զի այնպէս զգեցոյց զնա Աստուած հոգևոր մայր նորա, և՝ ի ձեռանէ պակշտեցոց զերկնից Հողոպրեալ ապրեցուցանէր։ Սա զերանելին Աստիս խնդրէր, այլ ծանեաւ զի զվկայական ընթացսն կատարեալ էր հանդերձ այլ սուրբ կուսանօքն հրկէզ՝ ի տաճարին Աստուծոյ երեալք։ Աստանայր հոգւով երանուհին այն, զի և ինքն ոչ երև ողջակիզեալ ընդ Աստիայ՝ հաղորդեալ և այլոց չարչարանացն. և կացեալ մերձ՝ ի կիզեալ տաճարն՝ յորդաուառ արտասուօք ընդ աձիւն սուրբ մարմնոց նոցա խառնէր, աղէկիզեալ տուչերն մինչև քակտեալ լինէին յօդք մարմնոց նորա կրծաբեան հառաչմամբ և թախծեալ ոգւով։

Եւ իսկոյն իջեալ յեզր ծովուն տեսանէր նաւ մի պատրաստական զի կազմէին զուռկանան. և տեսեալ նաւավարացն զերանելին առնացի կերպարանօք, ասեն ցնա. Եկ, ով երիտասարդ, օգնական լեր մերոց աշխատութեանցս, զի հաղորդ արասցուք զքեզ որոյ ձկանցն։ Եւ նորա մտեալ՝ ի նաւն՝ զձկնորսացն ձմլեցուցանէր զաչսն և զոգիս հեզական պարկեշտութեամբ և քաղցրաբարբառ աստուածախոս բանից. և իսկոյն արկին զուռկանան՝ ի ծովն, և թափեցան՝ ի նմա բազմութիւն յոյժ մեծամեծ ձկանց, զոր

1. Մի օր տեսի բազմաթիւ աստուծ

հագիւ և մեծ աշխատութեամբ յեզը ծուլուն արտաքս ձգէին. և հանելոյ՝ի գաց զբազմութիւն ձկանցն՝ առեալ նէին և մեռեալ մարմինք պատառ պատառ կոտորեալ՝ի մէջ ուռկանացն։ Եւ խռովեցան յայնմ տեսլենէն, ահիւ և տրտմութեամբ[1] ըմբռնեալք լինէին. և զմարմինն՝ի գաց թօթափեալք դնէին յերկրի, և զուռկանն առեալ փութային երթալ յայնկոյս ծուլուն արագախոս լինելով, և արագիկ լինել[2] աղաչէին զտուրքն, և նա ոչ հաւանեալ նոցա՝ի գաց գնայր։ Իսկ նաւավարքն հաց և ձուկն տային նմա փոխանակ վարձուց աշխատութեանն, և ինքեանք գնացին։ Եւ նա գինդոսին և գնոլին ընկերակցացն[3] գերզանակ մարտին և զվախճանին, որպէս յառաջագոյն իմն ասացաք, իմացեալ էր. և հասեալ՝ի տեղին յորում անկեալ կային մարմինք սրբոցն, և ստէպ ստէպ շրջէր, և ստուգութեամբ զիւրաքանչիւր ոք՝ի նոցանէ գինէր արդ. քանզի նկարագիրն մարմնոց նոցա հաւաստի ցուցանէին զկերպարանս նոցա։ Իսկ նորա գիրկս արկեալ ողջունէր անյագաբար համբուրելով գնոսա, և արտօսր ոչ սակաւ հեղոյր՝ի վերայ նոցա։ Եւ մինչդեռ դառնացեալ ոչուվ փարէր զմարմնովք երանելեացն, եւեթ նաւ մի գալով՝ի վերայ ծուլուն, և նաւավարացն իջուցեալ զառագաստն՝ թեւօք հանդարտաբար եկեալ լինէին առ ափն ծուլուն։ Սրդ յառաջ մատուցեալ սուրբ կոյսն գնաւապետն ողջունէր որպէս պարտ էր, և ցուցանէր զձկունսն զոր ունէր. և նաւապետն երդմնեցուցանէր գնա յանուն Յիսուսի ասելով, թէ՝ Գանոյ վաճառոյ է։ Յայնժամ ազնուական կոյսն ծանեաւ զբարեպաշտութիւն առնն, և կոչեալ գնա արտաքոյ՝ի նաւէն ցուցանել նմա զմարմին սրբոցն, կցորդ առնել գնա նոցունց գեղեցիկ պաշտամանցն. և պատմեաց նոցա մի ըստ միոջէ ստուգութեամբ զամենայն անցս չարչարանաց վկայիցն։ Սրդ երբև լուաւ զայս ամենայն նաւապետն, անկեալ առ ոտս նոցա համբուրէր զսուրբ աստուածակիր մարմինս վկայիցն, և հանէր վաղվաղակի՝ի նաւէ անտի կտաւս

1. Մի օր. ահագին փըփմունքեամբ ընդոստնեալք։
2. Մի օր. դրաւէիւ լինելով։
3. Մի օր. ընկերացն։

նորա և հանդերձս սպիտակս և իւղս անուշունս և խունկս ազնիւս, և լուանայր յաւուրն մեծում ջրով, մանաւանդ արտասուօք առաւելապոյն, օծեալ և ինկեալ զմարմին երանելեացն հանդերձ նաւասպետաւն, և ամենայն զգուշութեամբ պատատակալեալ, և բարձեալ տարան զնոսա մերձ առ պարիսպ քաղաքին հուպ առ ձորակին՝ ի դրունն որ հանէր՝ ի համատարածն, յորում տեղւոջ սուրբքն դորոթէոսեանքն[1] ընկալան զվէիս մահու, և անդ պատրաստեցին գերեզման, և թաղեցին զնոսա զգուշութեամբ. և Դոմնա՝ ի նմին տեղւոջ խոստանայր կեալ մինչև՝ ի կէտ կոչման իւրոյ, և ոչ մեկնիլ՝ ի սուրբ գերեզմանացն նահատակացն Քրիստոսի: Եւ այնուհետև անդ կեայր[2] համբերութեամբ բազմաւ, աղօթիւք և անուշահոտ խնկօք և անշէջ լապտերօք, միշտ և հանապազորդ զպատիս յիշատակի նոցա կատարելով, ձեռնատու լինելով նմա և նաւասպետն ընչիւք բաւականօք առ այնպիսի պէտս նոցա:

Այդ քանզի ոչ է պարտ և պատշաճ արեգակինայիւ և լուսաձաձանչ Քառապայթիցն ծածկիլ՝ ի յերկրի, և առաւել և ոչ աստուածային ցանկութիւնն նորա որ առ յաղթանակ վերին կոչմանն էր վկայական հանդիսից՝ առանց կատարման մնալ: Այնուամենայնի՝ ի յայտ եկեալ զրոյցք երկին հասին յականջս չարմացին Մաքսիմիանոսի. և նորա խմացեալ զանձկալի տրփանս նորա՝ որ առ մարմին սրբոցն ղեգերէր, ծափ ծափի հարեալ ծիծաղէր և ասէր. Ընդհեցիս նմա զբաղձալին իւր կատարած, և հաւասարակից արարիցս զնա նոցին չարչարանացն, արձակեալ զնա՝ ի մնոտի յոյսն իւրեանց զոր ունին: Զայս ասացեալ վաղվաղակի զգահիճս առաքեաց, որք եկեալ հասին՝ ի տեղին յորում կայր նա. և տեսին զի երանելին արտասուելոյ պաղատանօք յաղօթս կայր՝ ի սրտի իւրում, շրթանց շարժելով միայն. և մերկացուցին զսուսերս իւրեանց, կամէին ծայրաքաղ առնել զամենայն անդամս նորա. և երանելի կոյս ոչ ինչ փոյթ առնէր զսպատա-

1. Մի օր. դորոնորոսէանքն:

2. Մի օր. անդ կայր... մինչև հանդերձ:

նալիս դահճացն։ Եւ ոչ զանգիտեալ յերկիւղէ մահու, այլ հանդարտութեամբ և ցնծութեամբ կայր յաղօթս՝ի սրտի իւրում։ Եւ ասացեալ զամէնն՝ կընքեաց զինքն նշանաւ սուրբ խաչին, և խոնարհեցուցեալ զպարանոցն առաջի դահճացն, և այնպէս հաստեալ եղև սրով գլուխ գերապայծառ և մաքուր սուրբ կուսին Դոմնայի, յամենայն գեհկեհմբերի, որ օր քսան և չորս էր ամսոյն։

Իսկ յետ վկայութեանն Դոմնայի՝ ընթռնեալ լինէր և մեծն Ընթիմոս սուրբ քահանայապետն Բիւթանացւոց նահանգին, որ զբազում լուսաւոր վարդապետութեամբն իւրով լուսաւորեաց, և ընծայեաց բանաւոր պատարագ երկնաւոր և քաջ հովուին. զոր՝ի բազում աւուրս քննայոյզ լեալ անօրէնն Մաքսիմիանոս, և հազիւ ուրեմն անկեալ՝ի քուռն՝ կացոյց զնա առաջի ամենայն ատենական բեմբէին, և զամենայն տեսիլ տանջանարանաց ածել՝ի վերայ նորա։

Ապա արկն այն և քաջ հովիւն բանաւոր հօտին Քրիստոսի ընդ ամենայն հանդէս արիական համբերութեամբ անցեալ, և առեալ զփորձ զիւրաքանչիւր տանջանաց։ Իսկ ամպարիշտն այն իբրև ետես զանդամանդեալ հաստատուն հաւատս նորա, և զանխոխոխել խելի հաստատութիւն սիրոյ որ՝ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, վճիռ սրոյ հատանէր՝ի վերայ նորա. զոր զամենայն հարցափորձութիւն և զհանդէս տանջանաց նորա յիւրում մանրաքար[1] պատմութեանցն է ուսանել։ Ապա ոչ միայն քան հաղարօթս այսոքիւք, որ՝ի միասին՝ի միում վայրկեան ժամանակի եղեն ողջակէզք ընդունելի, պատարագ անուշահոտ բոլորիցն Աստուծոյ, այլ անթիւք և բիւրք՝ի սմա երևեալ վկայք, քաղաքս այս մեծ Նիկոմիդացւոց զարդարեալ լինէր իբրև զերկինս աստեղօք պայծառացեալ, և իբրև զաթեզական փայլեալ արփիափայլ Հառագայթիւք, երկիր եղեալ սա կենդանեաց և աստղէս երկնաւոր հանդիսիցն, և մանաւանդ սրբոյ առաքաւտին. հրաւիրեցան՝ի սմանէ՝ի բարձրութիւնս երկնից խորհաց, բացաւ՝ի վերայ սորա փակեալ դրունք երկնից,

1. Մի օր. մանրամասնաբար։

և առաքաստ վերինն Երուսաղեմի ընդարձակեաց զսըրահս իւր, ինքին փառքն Աստուծոյ՝ ի վերայ սորա, եղև սա երկինք յերկրի, վասն զի զերկնայինսն ընկալաւ. հիմունք սորա նեղկեաղ եղև արեամբ անարատիցն. սերմանիք անդաստանաց նորա խառնեցան ընդ աճիւն մարմնոց երանելեացն. մաքրեցաւ և օդն ընդունելով զշունչ սոցա, և գոլորշի արեանց սրբեաց զձենձերս ծխասած միգապատեալս զոհից կռոցն. պսակեցաւ և ծով ընդունելով զկաթուած արեանց վկայիցն, և երևեցաւ Տեառն Յիսուսի՝ հաղարապետ պահեստի աստուածային գանձուցն. հանապազ աչք Տեառն Աստուծոյ՝ ի վերայ սորա, և փառք Տեառն ոչ մեկնի երբեք՝ ի տեղւոջէս յայսմանէ։

Սրդ գինի ծագման երանաւէտ կենարարին մերոյ յաւի երկերիւրերորդի քսաներորդի ութերորդի[1], ՚ի Թագաւորութեանն Մաքսիմիանոսի և Դիոկղետիանոսի կատարեցան վկայքս այսոքիկ և մատուցին զանձինս իւրեանց կամաւոր ընծայ պատարագին Ծնեցելոյն՝ ի Կուսէն. և ընկալան զանթառամելի պսակն։ Որոց Ձգնաւորաց են անուանքս այսոքիկ. առաջինն Գղերիկոս երէց հանգչեալ հաստատուն կաթողիկէ եկեղեցւոյն Աստուծոյ, որ է՝ ի քաղաքին Նիկոմիդացւոց, և սրբազանն Ջենոն և Թէոփիլէս հանդերձ Մարդոնիոսիւ, և երանելին Դորոթէոս և Ինդոս և Պետրոս հանդերձ Միգդոնիոսիւ, և երեքին միշտ կուսանք աստուածայինք, Սգապիէ և Թէոփիլէս և Դոմնա, և գինի սոցա մեծն Անթիմոս եպիսկոպոս մայրաքաղաքին Նիկոմիդացւոց։ Որք ամենեքեան ընկալան զվերջին մահու վկայութեամբ յամպարիշտ Թագաւորէն Մաքսիմիանոսէ, և ժառանգեցոյ են զպսակն անապականն՝ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. որում փառք և պատիւ և իշխանութիւն ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1. Մի օր. յամին երիւերիւերորդի Թուականագրութեան սրբոյ՝ ի Քաղաւորութեանն։ Այլ առդպ. տոցս է 303 ամն Քրիստնէ։

Վկայութիւնք Սրբոյն Լաւրենտիոսի և բնիկներուց նորա

Յայսմ[1] աւուր կատարեցաւ վկայութեամբ ի Մոքսիմիանոսէ Թագաւորէ՝ յեզը Եփրատ գետոյ ի տեղին որ կոչի Լոքսաւիէ, առաջի վկային Քրիստոսի Յովհաննէս, որ էր յընկերաց սրբոյն Լաւրենտիոսի. որում և այլ ևս ընկերաց նորա՝ Լաւրենտիոսի և Ագրիպպայ և երկոտասան հազար վկայիցն և այլոցն՝ առաքն յիշատակ է. որոց ոմանց ի նոցանէ կատարումն եղև ի տան և երկուան մայիս ամսոյ, և ոմանց ի տան յօգոստոս, և ոմանց ի վինն սեպտեմբերի ամսոյ. և բազում ժողովոց յօրվիցն և գլխատուրացն Լաւրենտիոսի և Ագրիպպայ և այլոց հազարատուրացն կատարումն՝ եղև ի քսան և եօթն սեպտեմբերի. իսկ ոմանց առաքուց հարիւրատուրաց՝ առ ի յերկուքս սեպտեմբերի, բայց ի միասին յիշատակին անդ և առ. և է պատմութիւն վկայութեան նոցա համառօտեան այսպէս:

Յետ ծագմանն յաշխարհի Ոլոգւոյն Աստուծոյ, ի կայսերացն Հռոմայեցւոց քսան և երկուք եղեն հալածիչք եկեղեցւոյ միևնոյն ի Կոստանդիանոս մեծն, Սոցա յետ այն էր Դիոկղետիանոս ամպարիշտ, որ սկսաւ հալածել զհաւատացեալսն Աստուծոյ. և սա վասն այնմ իբրև կացց ի Միջագետս Աստուց եպարքոս զայր ոմն որ կոչէր Ագրիպպաս, յազգէ Թագաւորացն Սելևկիոսի և Անտիոքայ նախնոյ, և հրամայեաց նմա կոտորել զքրիս-

1. Ցառաջ քան զպատմութիւն իբրև նախադրութիւն կարգեալ Թիւն վկայաբանութեան սրբոցն էր այս բան:

*տանեայս. որ և սա շինեաց քաղաք մեծ՝ ի վերայ ե-
փրատ գետոյ, և սկսաւ լսատ հրամանի Թագաւորին
զնախանձ Թագաւորին Անտիոքայ և նախնեացն իւ-
րոց բերել լինքն հակառակ Աստուծոյ, և հալածէր
զքրիստոնեայսն. որք և փախստականք լեալք Թագ-
էին յայրս և՝ ի լերինս մինչև՝ ի սահմանս Հայոց՝ ի
Մելիտենի քաղաք մեծ։ Ուստի զորս կալաւ զբազմու-
Թիւն հազարաւորացն՝ ի նոցանէ՝ կապանօք արկեալ՝ ի
բանտս ազգի ազգի տանջանօք չարչարեաց յոյժ
դառնապէս կտտանօք, տիպելով զոհել կռոցն և ու-
րանալ զՔրիստոս։*

*Իսկ ամենասուրբ հազարքն մեծ զոհութեամբ և
համբերութեամբ՝ ի չարչարանսն զՔրիստոսէ աս-
տուածութիւնն վկայեցին, զորս ազգի ազգի մահու-
ամբ տպան անձինս ինքն հազար, յորոց վերայ կատա-
րեցան յետոյ այլ ևս շորք հազարքն, և աւելի ընդ նոսին
դատաւորին Անդրիպատոս. որ և յետ զինն հազար վը-
կայեան կոտորելոյ, դարձաւ՝ ի քաղաքն իւր և գրեաց
առ Դիոկղետիանոս՝ եթէ հալածեցի զնազովրացիսն,
և սպանի՝ ի նոցանէ ըստ հրամանի քո ինն հազար հո-
գիս որք ոչ զոհեցին կռոցն. արդ առաքեա և այլ ոք
մեծագոյն օգնել ինձ՝ ի քէն։*

*Յորում ընթերցաւ զԹուղթն Անդրիպատոս Դիոկղե-
տիանոս՝ ուրախ եղև, և հարցանէր ցմեծամեծս իւր
Թէ ոմն որ երթիցէ յայն կողմանս օգնել Անդրիպատոս
և հալածել՝ ի Հրէաստանէ զքրիստոնեայս։ Յայնժամ
ոմն ումն մեծ իշխան որ կոչէր Լաւրենտիոս, ասէ. Ահա
սակ, առաքեա զիս։ Եւ ուրախ եղև արքայն յոյժ
ընդ նա, և ետ նմա Թագաւորն զորս խնդրեաց՝ ի յօգ-
նականէն իւր՝ զորս հազար զինուորս, և գրեաց Թուղթ
առ Անդրիպատ և առ ամենայն իշխանս Ասորւոց՝
վասն նորա, և առաքեաց զնա։ Եւ այս Լաւրենտիոս
էր՝ ի ծածուկ քրիստոնեայ. ընտրեաց՝ ի զօրաց Թա-
գաւորին զորս հազար այր որ՝ ի ծածուկ հաւատա-
ցեալք էին՝ ի Քրիստոս, և առ ընդ նմա։ Նաև և այր
մի որ էր յոյժ կռապարիշտ, վասն հաւատարմացու-
ցանելոյ զԹագաւորն։ Եւ ել՝ ի Հանապարհ՝ ի սեպ-
տեմբեր ամսի, ոսկի մատանեաւ Թագաւորին, և մեծ
իշխանական պատուով և փառօք յարքայէն։*

Եւ իբրև հեռացան և չգիտէին եթէ եղբարք են ՚ի Քրիստոս զօրքն ամենայն, յայտնեաց նոցա Լաբենտիոս զինքն եթէ քրիստոնեայ է և զամենայն ընկերսն։ Իսկ նոքա ուրախացեալ ի ոհմայեան զԱստուծոյ. և ոչք կային ոմանք որ յառաջագոյն ուրացեալք էին յերկիւղէ, խոստովանեցան վերստին զՔրիստոս զըղջմամբ մեծաւ։ Եւ Լաբենտիոս վարդապետեաց նոցա և քաջալերեաց միաբան խոստովանել զՔրիստոս առաջի մարդկան, զի նա խոստովանեցի զմեզ առաջի Հօր. զի ոչ ինչ համարեալ են ինձ ամենայն փառք սպառի աշխարհիս։ Եւ այժմ երթիցուք ՚ի տէրունական գերեզմանն և յայլ սուրբ տեղիսն յերկրպագութիւն, զի ես վասն այնորիկ եկի ՚ի Հռոմ, և զոր յաջողէ Տէր՝ առնեմք։ Եւ կնքեալ զնոսա սուրբ խաչիւն՝ եկին ՚ի սահմանս Անտիոքայ։

Յայնժամ եկին ընդ առաջ նորա ամենայն մեծամեծքն և իշխան աշխարհին։ Եկն և Ագրիպպաս իշխան Միջագետաց յերկրպագութիւն, յորմէ բուրեր պարշելի հոտ Հենձերաց կուոյն, ՚ի վերայ որոյ եկաց յոյժ Լաբենտիոս յաղագս կուրութեան նորա։ Եւ ասէ Ագրիպպաս. Ընդէր լաս, տէր իմ, զի խնդալ պարտ է այս օր որ տեսաք զմեծութիւնդ քո։ Այն սուրբն. Սաղոմոնի է զի յոյժ տեսանեն զկրեաս սիրելիք՝ լան ՚ի խնդութենէն։ Եւ ասէրաց զինս Ագրիպպաս մնանել ՚ի Հռոմ, և զոհել և ոճն մեծ կատարել, և յորդորել և զայլ քաղաքն ևս ՚ի նոյն. և ոչ լսաւ Լաբենտիոս Ագրիպպայ մնանել ՚ի Հռոմ, և առնել զոհս կուոյն, այլ խաբեալ զինա՝ ասէ. Արդ կատարեցուք զհրաման հալածանացն և ապա զայդ։

Եւ եկեալ Լաբենտիոս ՚ի Փիւնիկէ և յերուսաղէմ, յորմէ խռովեցան և երկեան ամենայն հաւատացեալքն յոյժ յոյժ. և ժողովեալ յերուսաղէմ զամենայն հեթանոսս և զհրեայն, ընթերցաւ զթուղթն կայսերն, և խնդացին յոյժ հեթանոսքն. և արձակեալ զնոսա՝ ասէ. Գնացէք քննեցէք զոր պատնէք քրիստոնեայս, և եկեալ պատմեցէք ինձ զի արարիցէ զհրամանն կայսերն։ Եւ երեկոյին յղեալ կոչեաց զեպիսկոպոսն երուսաղէմի, որ էր աշակերտ աշակերտաց առաքելոյն. և նա կասկածանօք և երկիւղիւ խոստայր ՚ի

Լաւրենտիոսէ յոյժ. և ապա կնքեաց զինքն, և եկն առ նա՝ի գիշերին միով մանկամբ։ Եւ յարուցեալ անկաւ յոտս նորա Լաւրենտիոս, և ասէ. Բարի եկիր, հովիւ բանաւոր հօտին Քրիստոսի, մխիթարեաց և մխիթարեա զեղբարսդ, զի Քրիստոս առաքեաց զիս ապաստլսպարել հօտի իւրոյ և ձեզ։

Սէ եպիսկոպոսն. Օրհնեալ է Քրիստոս՝ որ ոչ թողու զոք զժոխոց յաղթահարել զեկեղեցի իւր, որպէս խոստացաւ։ Եւ առեալ զնա՝ յարուցեալ գնացին՝ի տունը Պողպոնիայն և՝ի տունը պետրեզմանն, և յայլ տունը տնօրինականն, և երկրպագեցին ամենայն զօրքն։ Եւ՝ի միւս գիշերին գնացին՝ի տունը Համբարձումն և՝ի Սեղոսեայն և՝ի տունը վերնատունն։ Եւ երեւեալ նմա Քրիստոս՝ասէ. Լաւրենտիոս, զօրք քո վկայեցոյց են ինձ՝ի կողմանս Հայոց, և դու կալոյց ես՝ի յատեան կայսերն, արդ փութա դու առ նս։ Իբրև ետես զայս՝ փութացաւ յոյժ, և վաղիւն եղեալ՝ի քաղաքէն որպէս թէ երթայ առ՝ի հալածել զքրիստոնեայսն։ Եւ զարմացեալ հեթանոսքն հարցանէին ընդ արսն, թէ ընդէ՞ր չարար ինչ քրիստոնէիցն որք աստ են՝ ըստ հրամանի կայսերն։ Եւ նոքա ասեն. Հրաման եկն յայլ քայէն և փութացոյց գնալ աստի. և զայս վասն երկնաւոր թագաւորին տեսլեանն ասէին։ Եւ եղեալ ենկն՝ի տունը Յորդանան։ Սկսա անցեալ ընդ Հանապարհ անապատն՝ գնացին՝ի վիայարան սրբոյն Սարգսի և Բագոսի. և եկեալ՝ի Լաքսաւիէ յեզը Եփրատ գետոյ, ուր կատարեալ էր վկայութեամբ՝ի Մաքսիմիանոսէ մի յընկերաց նոցա՝ որ կոչէր Յովհաննէս, եկին անտի յԵդեսիա և երկրպագեցին անձեռագործ պատկերին Քրիստոսի։

Եւ ապա անդ ասէ Լաւրենտիոս. Կատարեցաք զսաղմոսերգութիւն[1] մեր, ժամ է այսուհետեւ յայտնել զհաւատս մեր և նկրտիլ՝ի նահատակութիւն։ Եւ սկսան հայհոյել զկուռս, և քարոզել զՔրիստոս Աստուած միայն և զինքեանս գոլ քրիստոնեայս։ Լուեալ զայս Սգրիպպաս՝ գրէ առ նա. Զինչ է այդ զոր հա-

1. Թուի՝ վախճանաբանին։

կառակ հրամանին կայսեր առնէք. և փոխանակ հալածելոց զքրիստոնեայս՝ զհեթանոսութիւն ջանաս քառնալ: Իսկ Լաւբենտիոս ասէ. Մեզ չէ փոյթ վասն կայսեր, զի մեք Քրիստոսի ծառայեմք՝ ի կանուխ հետ, և վասն երկրպագելոյ սուրբ գերեզմանին նորա՝ զկայսրն քո խաբեցաք և եկաք յայս կողմանս:

Յայնժամ գրեաց Ագրիպպաս և ծանոյց կայսերն զամենայն: Իսկ Լաւբենտիոս զերիս ամիսս ձմերանոյն կացեալ՝ ի Միջագետս՝ մխիթարէր զհաւատացեալսն և քարոզէր զՔրիստոս, գուշակէր և զյառնելն քաղեպաշտին Կոստանդիանոսի և զպուշացուցանէր զնա առ ժամայն խոյս տալ և աղօթել՝ ի վերայ ինքեանց: Եւ յետ երեք ամսոց ձմերանն եկն թուղթ՝ ի կայսերէ առ Ագրիպպաս, և իշխան մի հազար արամբ՝ Պոմիոս անուն, զի զհաւատացեալսն կոտորեացեն, և զԼաւբենտիոս կապեալ տարցեն առնա: Եւ ժողովեալ Ագրիպպաս նախանձու բարկութեան երկոտասան հազար զինուորս, եկն՝ ի վերայ Լաւբենտիոսի՝ ի դաշտն Եղեսիոյ: Իսկ Լաւբենտիոս քաջալերեալ զՏէրս հազար գունդն հաւատացեալ, և սիրեցելոցն Աստուծոյ զինեալ զնոսա նախապատրաստութեամբ և ասէր. Ոմանք՝ ի ձէնջ առ կառավարելոյ էն, և ոմանք՝ ի կողմանս Հայոց, և ես կալոյ եմ յատենին կայսեր՝ ի Հռոմ: և՝ ի միասին՝ ի Քրիստոսէ թագիսք: Եւ նոքա ջերմեռանդութեամբ զառանելին յանձն առնուլ զմահն Քրիստոսի. և ուղեակք՝ ի մեռս Հասնել լերին՝ որ է կողմն հիւսիսոյ, հասին նոցա հեթանոսքն. և հինգ հարիւր այր՝ ի սուրբ գնդէն ելեալ՝ ի բարձր տեղի մի՝ որ կոչէր Նաւթայ, ողջոյն եառն միմեանց, և աղօթեալ աղաչակեցին. Քրիստոս է միայն Աստուած, և մեք քրիստոնեայք եմք, և զկուռս ոչ պաշտեմք:

Եւ շուրջ եկեալ հեթանոսքն կոտորեցին զսուրբ վկայսն. և առժամայն տեսին՝ ի հեռուստ այլ ևս հաւատացեալքն Աստուծոյ զնոսա, զի պահք լուսեղինք յերկինից իջանէին՝ ի վերայ սրբոցն, և խնդութեամբ սկսան նոքա բոլբոջել՝ ի սէրն Քրիստոսի: Իսկ Լաւբենտիոս առաւել յորդորէր զնոսա: Յայնժամ փոխեալ անտի սուրբքն, մտին՝ ի լեառն՝ որ կոչի Աշմու, և բանակեցան առ ստորոտ լերինն՝ ի հարաւակողմն.

և եկեալ գտանդն հեթանոսաց ի քէզ առ գեղաւն՝ որ կոչէր Մահտակ, նակ ՚ի գիշերին առեանէին հռոմայեցի զօրքն առըք՝ սիւն լուսոյ ՚ի վերայ տեղւոյն ուր վկայեցին հինգ հարիւրքն, եւ առաքեաց Լաւրեն՚ տիոս ՚ի նոցանէ զի երթեալ թաղեսցեն զսուրբքն, և գնացեալ հինգ հարիւր այր զինեալք Հառապայթիւ լուսոյն ՚ի տեղին՝ որ իբրև զցերեկ պայծառացեալ էր, և հաւաքեալ եդին զսուրբսն յայրի միում և փակեցին, և դարձեալ Հառապայթիւ լուսեղէն առանն եկին մերձ ՚ի բանակ Թէոդեմեայն, և յայտնեցին զանձինս աներկիւղ բարձր ձայնիւ միայն զՔրիստոս գոչելով Աստուած։

Լուեալ Ադրիպպա՝ առաքեաց երկու հազար զինուորս. զի եթէ ուրացոյին Հռոմայեցիքն զՔրիստոս՝ թողցեն զնոսա, ապա թէ ոչ՝ սպանցեն յանխնայ։ Եւ Հռոմայեցիքն ասեն. Չէ մեզ պարտ մեռանել մինչև երթիցուք առ զօրապետին մեր. վասն որոյ պատերազմեցուք ընդ նոսա զի տեսցեն զզօրութիւն Քրիստոսի. և Հակառակել կոտորեցին զերկու հազար զօրան Ադրիպպա, և մի ՚ի նոցանէ ոչ պակասեաց, այլ և ոչ վիրաւորեցաւ ինչ ոք ՚ի նոցանէ. և էր այս ՚ի մայիս ամսի։

Յայնժամ մերկի և մատաղուղ ծածկեաց զբանակս անօրինացն, և ամենայն հաւատացեալքն անշնաս մնացեալք եկին ՚ի բանակն սուրբ, և պատմեցին զընտրհն Ադրիպպա. և նոքա սկսցեալք փառաւորէին զՔրիստոս։ Եւ անդէն լսեցաւ ձայն յոլովս սուրբն Լաւրենտիոս և պատուիրեաց առնել. Ադիմ ահա տեսայք՝ զի Քրիստոսի է ամենայն յաղթութիւն, և քառական է այս. բայց այլ մի ևս պատերազմեցուք կամ սպանցուք զոք. և եղեալ մտին յՈւշաւոմս լեառն։

Իսկ Ադրիպպա սրտմտեալ յոյժ, և զկետ եհաս նոցա ՚ի լերինն որ կոչէր Պհար. և անդ իսկ հազարք և երեք հարիւրք ՚ի սրբոցն դադարեալ զտեղի առին, և ընկեցին զձիս իւրեանց. և եղեալք ՚ի բարձրագոյն տեղին Հարմաւոր ՚ի ստորոտ լերինն, և ողջոյն տուեալք միմեանց ազատակեցին. Քրիստոնեայք եմք, և զՔրիստոս դաւանիմք Աստուած, և ոչ զկուռս թաղամարդ պղծոյ. և տարածեալ զձեռս յերկինս կատա-

բեցան անդրէն ի հեթանոսացն։ Իսկ այլ ևս գունդն Հռոմայեցւոց ասեն ցԱլաբեհաիոս. Եթէ կամիս երթալ ի Հռոմ ըստ հրամանի Տեառն՝ ջանասք և հանեմք զքեզ ի գոյանէ զի երթիցես անվնաս։

Իսկ նա ոչ առ յանձն ասելով. Տեառն՝ կամք լիցին։ Եւ գնացեալ բնակեցան ի դաշտն Եղևաէ առ սուրբ Լեւոնն Սինայեցի, մօտ ի բերդն Սինայ. և գՀեթանոս Սգրիպպաս բանակեցաւ և նա ի դաշտին յայնմիկ. և ի մէջ դիշերին եառես Ալաբեհաիոս այր մի լուսաւոր որ քաջալերէր զնոսա և ասէր. Մի տրտմիք վասն բաժանեալ ընկերացն ձերոց որ կոտորեցան. զի ահա գՀալածիչդ ձեր զԱգրիպպաս նշանապրեալ եմ ի կեանս յաւիտենից, և տուաւ ձեզ ինքն իւր յայօքն և ոչք ընդ նմա են. և դու Հաւատա այսմիկ, և յարուցեալ նայեա ի կողմն դաշտիս և տես զոր ցուցից քեզ։

Եւ յարուցեալ սուրբն՝ հայեցաւ և եառես ի վերայ տեղւոյն ուր վիպաքն սպանեալ կային, աստղ մի մեծ լուսաւոր եկեալ եկաց ի վերայ բանակին, զի փայլէր և լուսաւորէր յոյժ զտեղին. և կոչեալ զընկերսն՝ տեսանէին զի ինքանէր յաստեղէն լուսաւոր սպակ ի վերայ վիպացին ըստ Թուոյ կատարելոց սրբոցն, և ապա նոյն աստղն լուսաւոր եկեալ եկաց ի վերայ բանակին Սգրիպպայ եպարքոսին որ կայր ի մէջ հեթանոս զօրացն. զոր տեսեալ Ալաբեհաիոս՝ ասէ. Ճշմարիտ է զի և Սգրիպպասի ևս պրեալ է ընդ մեզ վիպ լինել Քրիստոսի. և զարմացմամբ յոյժ զոհացեալ օրհնէին զՔրիստոս։

Եւ ի վաղիւն ասէ Դոմինաս ցՍգրիպպաս եպարքոսն. Երթ ցուք փութով ի վերայ Ալաբեհաիոսի ունել զինա և առնել ըստ հրամանին կայսեր։ Եւ ասէ Սգրիպպաս ցնա. Հանգիցուք այսօր իսկ, և վաղիւն Թողցուք երթալ զամենեսեան զօրացս ի դաշտիս, և մեք երթիք հազար արամբք երթ ցուք ի վերայ նոցա, զի դժուար է լեառն այն յոյժ. այլ և նոքա Թուի լինիմ զի յօժար են ի մահ և չկամին կռուիլ ընդ մեզ. քանզի չատ Թոյլ նոցա զայս օրինք Նազովրացւոյն, և ոչ գլխաւոր նոցա կամի առնել կռիւ։ Եւ երեկոյին խոստէր յանձն Ալաբեհաիոս՝ ասելով Թէ ընդէր զոլքն հեթանոս զօրքն չատուր

յայնմիկ գալ՝ ի վերայ նոցա, այլ և հոգւոյդ զմարմ-
նոց կատարեալ սրբոցն:

Եւ իբրև ննջեաց՝ երևեցաւ նմա այր մի լուսաւոր
և ասէ. Ահա Դամիա ամպարիշտն որ եկն՝ ի կայսերէ
առնել զքեզ, մնալոյ և աստէն՝ ի տեղի Սգրիպպաս՝
եպարքոս Աստուծոյ, զի տէր խաչահանեսցէ զհոգիս
հեթանոսաց. և՝ ի ձեռն այնոյ որ չկոչէ չարութեամբ՝
երթաս դու՝ ի Հռոմ: և վասն մարմնոյ ընկերացն
քոց մի հոգար, զի ահաւասիկ հողիւ մի որ ընտրեալ
ի Յաստուծոյ՝ եառ զլուսեղէն պսակն զոր առեալք
դուք՝ ի վերայ նոցա. և այլ ևս ընկերօք զոր առ ընդ
ինքեան տարաւ եդ յայրն զմարմին սրբոցն, մինչև այց
արասցէ նոցա Տէր. զի գալոց է ժամանակ որ խաչահանին
զհոգիս հեթանոսաց, և շինեսցին անդ՝ ի վերայ նոցա ե-
կեղեցիք և տաճար Աստուծոյ. և առաւօտուն գալոց
են՝ ի վերայ ձեր զօրքն հեթանոսաց, և յետ աւուր
մի՝ ինքն Սգրիպպաս գառնալոց է՝ ի ձեզ, և լինի ոչ-
խար Քրիստոսի:

Եւ առաց նմա և զայլ զամենայն զոր լինելոց էր
կարգաւ: Եւ զարթուցեալ Լաւրենտիոս պատմեաց
ընկերացն. և այգուն՝ ելեալ՝ ի Ճանապարհ ընդ կողմն
հիւսիսոյ՝ հասին՝ ի գետն մեծ, մօտ՝ ի գեօղ մի որ կո-
չեր Նեբրի. և անդ հասեալ նոցա հեթանոսքն՝ առին
զառաջս նոցա, և զառաջատուս հաւատացեալ գնդին
որ անցանէին ընդ գետն՝ կոտրեցին անձինս հինգ-
հարիւր, որք խոստովանեալ զՔրիստոս կատարեցան
՝ի կողմն գեղջին: Եւ Լաւրենտիոս առեալ զմնացեալսն
էանց ընդ գետն. և հասեալ՝ ի տեղի մի գագաթն
լերին որ կոչի Գոտակ Հռոմոյ, և անդ հասին նոցա
հեթանոս զօրն, և զի էր երեկոյ՝ օձ ագային երիս
գաւթն. և ահա լուսաւոր առեղք իբրև զբոց պայ-
ծառագոյնք երևէր նոցա, զի լինէին՝ ի վերայ մար-
միոց սուրբ վկայիցն, և՝ ի վերայ երից այլոցն որ՝ ի
գեղջին Նեբրի. զայս տեսին հռոմայեցի զօրն հաւա-
տացեալ, և այլք բազումք՝ ի գեղջէն և փառաւորեցին
զԱստուած:

Իսկ Սգրիպպաս եմուտ յանկողինն զի ննջեսցէ. և
խորհէր ինքն ընդ միտս և զարմանայր, Թէ ոչպէս
սուրբքն յօժարութեամբ առան զանձինս՝ ի սուր և՝ ի

մահ, զի յոյժ կիրթք են զինուորութեանն ի մանկութենէ, և բնաւ կռուիլ ոչ կամին կամ դառնալ ընդդէմ նոցա, այլ ցնծութեամբ զգուխս իւրեանց արկանեն մատուցանեն. ուր զի ի նոցանէ հինգ հարիւրն միայն յառաջապահն կոտորեցին զերկուս հազարսն՝ յոյժ համեցան. և ասէր ի միտս իւր. Մինչ ատուգասիէս է մինչ ի ծածուկ ի միջի զոր նոքա տեսանեն, և մեք ոչ գիտեմք և ոչ կարեմք տեսանել։ Եւ զայս մինչ խորհէր ի ինքեան՝ եւտես հրեղէն այր մի զի կամէր հրեղէնն նիզակաւ հարկանել զնա դառնապէս։ Եւտես և զԱւարենտիոս կանգնեալ մօտ ի հրեղէն այրն, և ինքն ապաւինէր ի Ղաւրենտիոս. և Ղաւրենտիոս ազաչէր զհրեղէն այրն խնայել ի նա. և նա ասէր Թող զի սպանից զդա, որպէս զընկերս իւր, զի թշնամի է Քրիստոսի և հաճախ ծառայից նորա. միթէ դու երաշխաւոր լինիս դմա՝ զի դարձցի ի չարեաց իւրոց և ապաւինեսցի ի զօրութիւն խաչին Քրիստոսի։ Եւ ասէ Ղաւրենտիոս. Եթէ գայ առ իս և ապաւինի ի Քրիստոս՝ երաշխաւոր լինիմ։ և ասէր աղաղակելով Սկրիպտաս. Սո՛ւտ, ասէր իմ, հրաժարիմ ի կռոց և դառնամ զՔրիստոս, ողորմեա ինձ, տէր իմ, աղաչեմ։ Եւ առժամայն ի բաց եհան զինուցանն ի նմանէ, և արկեալ անուր ի պարանոց նոց նորա և քարշեալ տարաւ ի խորխորատ ինչ լի անշէջ հրով և խաւարաւ և ժահահոտութեամբ, յորում տեսանէր զամենայն գլխատուս կռոցն զորս ձառնաչէր և գիտէր յառաջ Սկրիպտաս։ Եւ ասէր ցնա հրեշտակն. Անդ պարտ է զքեզ արկանել վասն անօրինութեան քո. և նայեցեալ Սկրիպտաս ետես զԼաւրենտիոս ի հեռաստանէ, և աղաղակեալ ասէ. Ով հայր բարեգութ, ողորմեա ինձ և փրկեա զիս։ Եւ նա եկեալ ընդ միջ կայր ընդ նա և ընդ քեզրոքէն, և աղաչանօք առնոյր ի նմանէ։ Եւ ասէր քեզրոքէն. Ահա տամ զդա ի քեզ մինչև տեսից Թէ զինչ գործեսցէ։ Եւ ձգեալ զձեռս իւր ասէր, տես զվկայն Քրիստոսի՝ զոր կոտորեցիք վասն Քրիստոսի. զի ահա հրեղէն Թագիս պայծառացեալ են։ Եւ հայեցեալ ետես Սկրիպտաս զտուրբ մարտիրոսն ոչք նախ կոտորեալքն էին. զի անձառելի փառօք Թագաւորեալ և փոխեալ կայրն ի դրախտն լուսոյ և յերկինս Թա-

պատրաստութիւնն։ Եւ առ ժամայն եհան Լաւրենտիոս զշղթայսն ի նմանէ, և հոգեաբարձ եղև Սգրիպպաս առաքեալ տանջանացն։

Եւ նոյն ժամայն զարթեաւ և եբաց զաչս իւր, և ոչ կարէր խօսել. և յարուցեալ՝ հայեցեալ ետես զպատանեակն լուսեղէնս որ ինքնէր յերկինից ի վերայ մարմնոյ վկային. և եկեալ ի միտս իւր՝ ասէ. Գիտեմ թէ ուստի զերծայ և զինչ յանձն առի։ Ձշմարիտ է զի ընդունիմ այլ յոյս քան զԼաւրենտիոս և զիսաչն Քրիստոսի։ Եւ ոչ կարէր յահէն ի վեր ելանել. այլ աղօթէր ի միտս իւր առեալ, եթէ՝ Քրիստոս, յոյս քրիստոնէից, ընկալ զիս, և թող զչարիսն զոր առ քեզ գործեցի։

Եւ յորժամ այդ եղև, և առաքեաց Դոմնաս իշխանն առ Սգրիպպաս և ասէ, թէ՝ Փութացիր զի երթիցուք ի վերայ ամպարշտացն այնոցիկ. և եկեալ սպասաւորքն Սգրիպպայ պատմեցին Դոմնայի, եթէ ոչ կարէ խօսել ի զարմացմանէ առեալեան գիշերոյս զոր տեսեալ է, և ոչ գիտեմք թէ զինչ եղև նմա զի որպէս մեռեալ կայ։ Եւ եկեալ Դոմնաս ևկն առ նա՝ և ետես զի կերպափոխեալ էր յոյժ և հազիւ կարէր խօսել. և հարցանէր թէ զինչ պատահեաց քեզ. և նա ասէր. Թոյլ տուր ինձ, և դու գիտես զգործս քո զինչ գործեացեր։ Եւ Դոմնաս առաքեաց զչքօրն ի վերայ տունդ գնալ և երթեալ կոտորեցին ի հաւատացեալսն վեց հարիւր այր։ Եւ եղև յանկարծակի մրրիկ և կայծակունք և մառախուղ ի վերայ հեթանոսացն, և բազումք կորեան յանօրինացն. զի կարկուտ քարէ զին անկեալ խառնուրդ՝ զբազումս շուրջ պատեաց և սպան և ցրուեցան, և այլքն մոլորեցան, բայց սրբոցն ոչ ինչ վնասեաց։ Եւ Լաւրենտիոս միայն մնացեալ հաւատան՝ էջ ի մարդ Ձակատեղւոջ որ կոչէր Սալմին, ի կողմն արևմտից ի սահման լերինն որ կոչէր Նիմու, որ է մերձ Լճակի գաւառին այնմիկ։

Եւ գայն ևս յորժամ եհաս Սգրիպպաս զի մրրիկն վնասակար ի վերայ հեթանոսացն միայն էր, հեծաւ ի վերայ ջորւոջն իւրում երկու մանկամբք, և գաղտ գնաց ի բանակ հաւատացելոցն՝ թողեալ զհեթանոս դունդն. և մերձ եղեալ առ Լաւրենտիոս, և իջեալ

գնայր ՚ի կաղս և աղաղակէր. Ողջոյն քեզ երաշխաւորդ իմ, և ողջոյն քո օրհնեալ ժողովրդեանդ, ծառայ Քրիստոսի, ողորմեայ ինձ, զի ուրայայ զկուռս, և ընդ ձեզ դնեմ զանձն իմ վասն Քրիստոսի: Եւ սուրբքն ուրախացեալք կոչեցին զնա յօժարութեամբ, և եկեալ անկաւ յոտն Լաբրենտիոսի: Եւ Լաբրենտիոս գոհանալով զԱստուծոյ յարոյց զնա և համբուրեաց և կնքեաց խաչիւն Քրիստոսի. և առժամայն հաստատեցան անդամք նորա և ողջացաւ, և եկն ՚ի զօրութիւն և ՚ի միտս իւր, և պատմեաց զահաւոր տեսիլ դիշերոյն, և զլուսեղէն պատկաց վկայիցն: Սէն Լաբրենտիոս ցնա. Նոյն այրն հրեղէն զոր տեսեր դու, նա յառաջապոյն պատմեաց ինձ զի փրկելոց էին և կոչելոց ՚ի կեանս: Եւ աղաղակեցին ամենայն սուրբ դունդքն, Թէ և մեք զնոյն լուսեղէն պատկն զոր տեսեր դու՝ որ բաշխեր սուրբ վկայիցն, տեսաք զի եկեալ յերկնից եկաց ՚ի վերայ խորանիդ քո և այլոցդ ՚ի դասէ քումմէ:

Եւ Սիքինպաս գոհացեալ մեծ յօժարութեամբ ասէր. Սքաւեցէք զԱստուած, զի մի կորուսցէ զնա ՚ի մեզ իմ զոր գործեցի: Եւ Լաբրենտիոս աղաղակեաց և ասէ. Մի երկնչիր եղբայր Սիքինպաս, Քրիստոս ՚ի ձեռն խաչին իւրոյ և մկրտութեան սրբոյ ընկէցէ զամենայն յանցանս քո: Եւ ասէ ցնա. Խոստովանիմ և դաւանիմ զամենայն խորհուրդսդ Քրիստոսի, և յանձն առնուս զմկրտութիւնն սուրբ: Եւ նա ասէ. Յօժարութեամբ մեծաւ խոստովանիմ և հաւատամ ՚ի բոլոր սրտէ ՚ի Տէր Յիսուս Քրիստոս. զի ՚ի մանկութենէ ընծեռեցեալ է իմ զգիտութիւն Աստուածդւոյ, գիտեմ և զոր առայ Քրիստոս. Եթէ ոչ ծնայր ՚ի Կոյս և ՚ի Հոգւոյ՝ ոչ մարդ յարքայութիւնն Աստուծոյ. և Թէ՝ Ամենայն որ խոստովանի զիս առաջի մարդկան, խոստովանեցայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս. և Թէ՝ Որ ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի: Հաւատամ զՔրիստոս Աստուած ճշմարիտ և Տէր ամենայնի, Հարեր և ամենասուրբ Հոգւոյն. և հաւատամ յամենայն նոր խորհուրդս հաւատոցն:

Եւ գոհացան յոյժ յօժարութեամբ զՔրիստոսէ՝ հաւնեցեալ զօրէն սուրբ: Յայնժամ հրամայեաց Լաբ-

ըեղեխս քահանային որ ընդ նմա էր՝ զի օծցէ զԱգ-
րիպպաս առաքն ձիթ ումն. և օծեալ և մկրտեաց զնա ի
Տէր, և ինքեաց առաքն մեռանուն. և ողջունեցին զնա,
և հաղորդեցուցին սրբոյ պահուելն եանն անարատ մարմ-
նոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ և արեան։ Եւ վաղ-
վաղակի գուշակեաց Լաւրենտիոս թէ վաղիւն կատա-
րեալց են ընթացք մերոց ընկերացս, և ի միասին կա-
պիմք ես և Ագրիպպաս վասն սիրոյն Քրիստոսի, և տա-
նիմք ի տանջանս մեծամեծս։

Եւ առաջանայն ահա երեք աւր ի հեթանոս գըն-
դէն ի հետաստանել եկեալ կային, և աղաղակեալ
հարցանէին թէ ըմբռնեալ ունէ ոք ի նոցանէ, կամ
սպանեալ զԱգրիպպաս եպարքոսն և մանկունք ընդ
նմա, զի կորեան յերեկ։ Իսկ Ագրիպպաս ինքնին ե-
լեալ գոչեաց և ասէ. Ահաւասիկ ես առ եմ, եր-
թայք ասացէք ցՈմիսա, թէ ես այսուհետև որշե-
ցայ ի կայսերէն և ի ձէնջ. զի դուք ընկերք էք առ-
ւանդի, որոց ընդ նմա կորուստն է պատրաստեալ։
Ալ ես ծառայ եմ Քրիստոսի և հաղորդ Լաւրենտիո-
սի և ընկերացս նորա։ Եւ դարձան սրբքն և պատմեցին
թէ Ագրիպպաս անդ է, և քրիստոնեայ եղեալ է. և
առաջանայն աղաղակեաց Ոմիսա և ասէ. Վայ է մեզ
ի քէն, Ջիսուս Նազովրեցի, և յաղանդոյն զոր ուսու-
ցեր աշակերտաց քոց. զի զընտիրս և զմեծամեծս հե-
թանոսաց ի քեզ ձգեալ որսաս։ Երկնուստ ի կուռս,
զի թէ ոչ դարձցի Ագրիպպաս, ճաամ յԱստուծոյ մինչև
պառնապէս զնորա վախճանն արարիցէ և զամենայն
քրիստոնէից։ Եւ ասեն զօրքն ցնա. Տէր, ճնապատ և
հանդիպատ այսօր, և ի վաղիւն արասցուք զոր և
կամիս։

Եւ ի գիշերին տեսանէին սուրբքն լոյս յերկինէ զի
իջանէր ի վերայ վիայիցն որ էին ի վերայ գագաթան
լերինն կատարեալ. և նորահաւատքն առեալ էս հա-
ստատէին, և զոհանային Ագրիպպաս և իւրքն։ Եւ ասէ
Լաւրենտիոս ընդ Ագրիպպաս, թէ Եւ հինդ հարիւրեղ
ընդ մեզ վկայեցաք էք. և զամենայն ինչ առաջ նմա զոր
լինելոց էր։ Եւ իւրն այդ եղև, եկեալ հասին հեթա-
նոս զօրն ի վերայ սուրբ գնդին Հռոմոյ, և իջեալ
պատեցին և կալան զնոսա. և սկսաւ Ոմիսա հեգա-

թեամբ ողջել զԱգրիպպաս և զԼաւրենտիոս և զամենայն զօրն զի դարձեալ ’ի կուռս. և խոստանայր աւետել. Եղբարք և որդիք իմ, դարձարուք յաստուածն, զի Թողութիւնք ըստ ինչ գործեցիք ապաստամբութեամբն, նաև բազում ձկրտս ընկալջիք. ապա թէ ոչ կատարիք չարաչար տանջանօք իբրև զնոքա որ կոբեանն. զի ես բազմապատիկ փառս և աթոռս պատուոյ առից ձեզ յարքայէ՝ եթէ լսէք ինձ դառնալ: Սաղակեաց Ագրիպպաս և ասէ ցնա. Ընդէր եղբարս կոչես քեզ զեղբարս Քրիստոսի, և որդիս զորդիսն երկնաւոր Հօրն: Զեր եղբարք դևքն են, որք էք որդիք սատանայի, զորս ուրացաք մեք, դաւանելով զՔրիստոս, զորոյ և վկայեմք զՀշմարտութիւն նորա կենօք և մահու. խոստումնդ ձեր ընդ ձեզ լիցի ’ի կորուստ և կայսերն ձեր, վաստակաւորք սատանայի: Նոյնպէս և ամենայն սուրբ գունդն Հռոմայեցի աղաղակէին. Մի աշխատիր խաբէութեամբ, ով Դոմիտա, զի մեք քրիստոնեայք ենք, և պարտիմք վասն նորա մեռանել որ վասն մեր մեռաւ. և բազում բանս վկայականս համարձակ խօսեցան:

Եւ բարկացեալ Դոմիտա՝ հրամայեաց զօրացն իւրոց առնուլ զձկնս իւրեանց և կոտորել զնոսա: Եւ սուրբքն վախճաեամբ եղեալ գնացին ’ի գազաթն լերինն որ կոչէր Եհմոս, և կացին անդ. զի ասէին թէ կամիմք մօտ լինել երանն մեր որ նահատակեցան՝ կատարել զընթացս մեր. և մինչ եղեալ ազօթէին, հասին նոցա հեթանոսքն, և անդ կոտորեցին զամենեսեան սրով: Եւ յինջանեէն իւրեանց՝ կալեալ կապեցին զԱգրիպպաս և զԼաւրենտիոս և բերին առաջի Դոմիտիանէ, և նա բազում բանիւք ջանայր պատրել զնոսա: Եւ նոքա աղաղակէին. Հաւատամք և դաւանեմք զՔրիստոս, որ պատրաստեաց զմեզ լինել վկայս իւր և եղբարս՝ ընդ այլ վկայեալ եղբարցն մերոց, որ յերկինս են. և բազում յանդիմանութեամբ խրատէին զնա: Իսկ նա ետ դնել զնոսա ’ի շղթայս ծանրագոյն, և հրամայեաց հազարապետին՝ որում անուն էր Մարդենիոս, զի այնպիսի կապանօք մերկ և հետիոտս տարցէ զԼաւրենտիոս առ կայսրն Մինչև ’ի Հռոմ:

Եւ Լաւրենտիոս ետ ողջոյն Ագրիպպայ և ասէ.

Բրիտաս զօրացուսյէ զքեզ հաճեցրել վասն նորա ժուժկալութեամբ: Եւ ասէ Ագրիպպաս. Այժմ. Բրիտաս արժանի արասյէ զմեզ տեսանել զիմաստնս յաղագաստ իւր:

Եւ գրեաց Դամիաս առ կայսր զամենայնն, և վասն եպարքոսին Աստուց Ագրիպպայ թէ որպէս և նա քրիստոնեայ եղև: Եւ առեալ հազարապետն զԼաւրենտիոս անտեսում կապանօք՝ եւ՛ի Ձանապարհ այլ ևս ընկերօքն սրբովք. և բազում ողորմութիւն առնէր հազարապետն՝ եւ՛ի վերայ Լաւրենտիոսի և ընկերացն, զի տեսանէր՝ եւ՛ նա բազում աքանչելիս:

Եւ Դամիաս և այլ չարքն առեալ կապեալ զԱգրիպպաս եկին առ մեծ դունդ բանակին որ՝ի դաշտին Նատեալ կային. և իբրև տեսին զօրքն զեպարքոսն իբրեանց զԱգրիպպաս կապեալ՝ զարմացան և զարհուրեցան յոյժ, թէ որպէս փոխեցաւ՝ի ջերմութենէ կառավարութեանն, և դնաց առ Բրիտաս՝ ընդ որ հակառակէր կռօքն: Եւ Դամիաս բազում ասս միջնորդս առ Ագրիպպաս յղէր, թէ՝ևս դարձցի առ նոսա վերստին: Իսկ սուրբն անշարժ մնաք հաստատուն կայր՝ի Բրիտաս, և ամօթով դարձուցանէր զնոսա յետս:

Եւ եկեալ Դամիաս՝ի հարաւակողմն լերինն Սէշմոյ՝ խորհէր թէ որպէս տանջեսցէ զԱգրիպպաս, և խորհեցան ընդ նա այլ և ծերքն և առեն. Կապեսցի Ագրիպպաս ձեռս յետս, և վէմ մի մեծ՝ի վերայ միջացն կապեսցի, և շղթայիւք՝ի պարանոց նորա, և կապեսցի մերկ՝ի վերայ իշոյ, և մի ընդ Ձանապարհ տարցեն զնա, այլ ընդ խուռն մացառս դժուարինս, զի պատառեսցի և խոշեսցի ամենայն մարմին նորա, մինչև՝ի բարձր տեղին որ կոչի Հարդումոյ, և արարեալ այնպէս՝ տարան զԱգրիպպաս՝ի տեղին յայն մեծ տանջանօք, մինչ զի զգեստին շունչն ընչեր, զի հոսեր ասիրենն յոտից և՛ի մարմնոյն նորա, և՛ի հարուածոյ փշոցն և քարանցն՝ պատառ պատառ միանգամ և մերթ նորա ձեռքն և զգլուխն և քարամբքն: Եւ տարեալ՝ի տեղին՝ արկին զնա՝ի վերայ երեսացն, և քարն մեծ կայր կապեալ՝ի վերայ միջացն՝ի վերոյ, և ինքն գլխիվայր անկեալ էր. և սկսաւ աղօթել. Օգնեա ինձ Բրիտաս Տէրդ իմ, զի մի ասիցեն ուր է Աստուած նորա: Յայն-

ժամ հրամայեաց դատաւորն լարիւք ևս այլ կապել զնա. և կեայր այնպէս չարաչար դառնութեամբ անառաջ և առանց ըմպելոյ:

Եւ՝ ի գիշերին ետես զՀրեղէն քերովբէն՝ որ նախ ահաւորապէս եկն առ նա, զի հեզութեամբ երևեալ ողջոյն եառ նմա, քանզի ոչ կարէր ննջել՝ ի դառնութենէն, և ծագեալ լուսաւորեաց զտեղին. և մերձեցեալ յուցեալ զնիզակին՝ փշրեաց զկապանսն և ասէր. Ոտ՛ար լեր ընդ կապանս, ով Սգերնպաս, զի ես եմ որ եկի յառաջագոյն սպանանել զքեզ. ահա այժմ եկի օգնել քեզ. զի կամի դատաւորն յոյժ տանջել զքեզ, այլ մի երկնչիր, զի ոչ թողից զքեզ մինչև նա յամօթ լցցի: Եւ ետ՝ ի նա իբրև պատուհաս և ասէ. Կեր զայս և զօրացիր, և այլ ոչ քաղցուցուս և ոչ ծարաւիցիս մինչև յետին կիւրակէ: Եւ իբրև եկեր զպատուհասն Սգերնպաս, լուսաւորեցաւ միտքնորա, և զօրացաւ և եղև ողջ յամենայն տանջանացն:

Եւ զի անկաւ տարաժամ մահ՝ ի տեղին յայն՝ ի զօրքն ամենայն, ասէ հրեշտակն. Խնդրեա զոր ինչ կամիս և տացէ քեզ Աստուած. և ազօթեաց զի խաւիսանեցի տարաժամ մահս այս՝ ի տեղւոջիս քումմէ վասն մարտիրոսաց եղբարցն քոց: Եւ տուրքն միով ազօթեաց, և ննջեաց մինչև յայգն: Իսկ՝ ի պատահանացն քաղուեալ զնեան տեղին յայնմանէս երկու ուղք երկայնիք և սպիտակք և ահաւորք, որք ունէին խնչաս երկայնս և հրեղէնս, և եկեալ փութով եքանէին յինջևանացն, և առաջակէին և ասէին. Չի՞ ե՛ր ընդ մեզ և ընդ քեզ, Սգերնպաս, որպէ՞ս անօրինի, զի եկիր խաւիսանել զմեզ՝ ի գործոց յոյժ վերայ առեալ էր մեզ իշխանութիւն: Եւ ասէ Սգերնպաս. Ոչ ես խաւիսանեմ զձեզ, այլ Քրիստոս է որ հալածէ զձեզ յայսմ ինջևանացս:

Նակ նոքա չկիք եղեալք հեռացան և այլ ոչ երևէին. և ոչք ի հուանդութեան էին և մերձ ի մահ վաղ- վաղակի ողջացան դիւրութեամբ։ Իբրև տեսին այլ ամենայն հեթանոսքն՝ ասէին ցդատաւորն. Ճշմարիտ ոչ ունի և զարմացման որ ինչ եղև ձեռամբն Սգ- ղիտպայ։ Ասէ Դամնաս. Մի մոլորիք, ով խաւարամիտք, զի տալոթութիւն է աղանդոյն Նազովրեցւոց։ Եւ հրա- մայեաց քերել զՍգղիտպաս առաջի իւր. իբրև եառ զնա արձակեալ ի կապանացն՝ բարկացաւ, և հրամա- յեաց քննել յամենայն ժողովն, թէ ով արձակեաց զնա. և ամենայն զինուորքն եկեալ պատմեցին թէ հրեշտակ յերկինից եկեալ արձակեաց զՍգղիտպաս։ Եւ չար դատաւորն ասաց. Զայդ ամենայն սուտ- թեամբ պատմէք և ի նանիր. և աղաղակեալ բազում բանիւք սպառնայր Սգղիտպայ և ատիպէր դառնալ ի հաւատոցն։ Եւ ասէ Սգղիտպաս. Զամենայն ժամա- նակս իշխանութեանն իմոյ չէի հանդուցեալ ի նմանէն զնա որպէս ի յայսմ դիշերի. և յոյժ յանդիման- եաց զմոլորութիւն կուռցն։

Եւ հրամայեաց դատաւորն կուտել ի ներքոյ Սգ- ղիտպայ քարինս բազումս, և երկաթի շղթայիւք կա- պել զոտս և զձեռս նորա յերկուց կողմանց, և վերա- յուցանելով հարկանէր սաստիկս ի վերայ սրտիցն քարանցն, և մեծ վիմի՝ զոր ոչ կարէին զօրաւոր ոքք շարժել, հրամայէր թաւալեցուցանել և դնել ի վե- րայ նորա, զի մանրեսցին ամենայն ոսկերք նորա մինչև մեռցի չարաչար. և արարին այնպէս։ Եւ յանկարծա- կի վիմն զոր ի վերայ նորա թաւալեալ էին՝ պատա- ռեցաւ և ելան ձայն մեծ, և թռուցեալ մանրուածք քարին կատարեցին յանհաւատից քան այլ։ Եւ էջ հրեշտակ տէրն յերկինից, և եկաց զկապանս սրբոյն և կացոյց ի վերայ ոտից իւրոց, և անյայտ եղև առժա- մայն. և նա գոհանայր զՔրիստոս և աղօթէր։

Եւ ահաւասիկ տէրն խրատել զնոսա. և Դամնա աղա- ղակեաց և ասէ. Ճշմարիտ ես հաս աղանդն Նազովրե- ցւոց չարակենցաղիս Սգղիտպայ. և հրամայեաց խոչել զնա ի վերայ փայտի և խեղդամահ առնել. և ա- րածեալ ի ծառ մի երկնղի՝ եդին զգլուխ սրբոյն ի հերձեալ տեղիս ծառոյն, և փայտ մի մեծ ոլորակեալ

’ի վերայ գլխոյն, և քարինս մեծամեծս կախեցին զոտսն. և իբրև մերձ եղև ’ի մահ փայլատակեաց կայծակն և եհար զծառն և ձեղքեաց յերկուս, և ընկէց յարմկոյս և յայսկոյս, և առեալն զինուորքն կուռացեալք հարան և անկան յերկիր. և Սգրիպպաս ողջ մնաց: Եւ մատուցեալ Սգրիպպաս յարոյց զնոսա և բժշկեաց, և նոքա հաւատացին ’ի Քրիստոս. և եկեալ նոքաւ ’ի բանակն՝ քարոզէին և վկայէին զՔրիստոս. և ետ գառաւօրն կախել զնոսա ’ի միասին ոտք էին ոտք տան և հինգ:

Եւ հրամայեաց ժողովել բազում փայտ և վառել. և առնուլ Թանձրագոյն կտաւ և Թանալ և օծանել ձիթով և նաւթիւ ծծմով և ձիթով զկտաւն. և ետ պատել կտաւովն զՍգրիպպաս որպէս մեռեալ, և արկանել զնա ’ի հնոսն բովբարեալ: Եւ արարեալ այնպէս, պատեցին զտուրբն վառոդքն և արկին զնա ’ի հնոսն. և խակոյն երևեցաւ նմա ’ի մէջ հրոյն քերովբէն հրեղէն, և անջատեաց զհնոսն ’ի սրբոյն, և զբազում այրեաց ’ի կռապաշտից, այս վաթսուն և հինգ:

Եւ տուրբն արձակեալ ’ի հրեշտակէն եկաց ’ի վերայ ոտից և չէր լինչ վնասեալ ’ի հրոյն: Իբրև տեսին զնա հինգ հարիւր այրն որ էին յիւրոց զօրացն՝ զի կայր ’ի մէջ հրոյն կանգուն որպէս հրեղէն, և փայլէր ընդ հրեշտակին, եկեալք առ նա ցնծութեամբ ողջոյն տային և առնէին. Եւ մեք հաւատամք ’ի Քրիստոս Սգրիպպաս՝ զուշակեալ նմա զկնեալոցն, և վերացաւ յերկինս:

Եւ ժողովեալ իշխանք զօրուն հեթանոսաց՝ առեն ցՈսիմեա, եթէ՝ Ո՞չ տեսանես զի զոր լինչ հնարէս զոտ առնջանս Սգրիպպայ՝ ’ի յաոնէ մեզ լինի և կռոցն ’ի տուել հուն. չէ բաւական զոր նախ կրեցաք ’ի զօրանէ՝ կոտորեալք սրով և քարեղէն կարկտիւ, երեք հազարքն և այլք բազումք. և ’ի տարաժամ մահն մեռա

նել զոր հազար այր, և այլք բազումք ՚ի յոլով տեղիս, մինչ զի և կէաս ՚ի մէնջ պակասեաց, այլ և մեծ եպարքոսն մեր հաւատայեալ ամօթ եղև մեզ. Թուի Թէ ամենեքեան մեք սատակելոց եմք, և այսպէս լինելոց. և յոլով բանս մարգարէական խօսեցան։ Եւ բարկացեալ դատաւորն հրամայեաց սպանանել զՀինդ հարիւրսն, եթէ ոչ զարձցին ՚ի Քրիստոսէ յետս։

Եւ նոքա սկսան դառնալ և վկայել զՔրիստոս համարձակութեամբ Սրտառած Աշմարիտ, և զսուրբն Սիքիսիա՝ հայր իւրեանց կոչէին։ Եւ Դոմիտա հրամայեաց տապարօք հարկանել զնոսա. և առեալ զահձայն զհինդ հարիւր և տան և հինդ այրն՝ հանին ՚ի սպանուածն ՚ի քանակէն։ Եւ աղաչեցին սուրբքն զդատաւորն հինգ ևս հանցեն զնոսա ՚ի վեր ՚ի գագաթն՝ ուր կոտորեալ էին նախնի սուրբքն, և անդ զինքեանս կոտորեցեն։ Եւ իբրև եկին անդ՝ տեսին լուսաւոր այր մի մեծ յոյժ, որ բարձեալ էր պահս լուսեղէնս և կոչէր զնոսա, և բաշխեալ տայր նոցա, յորդորելով և քաջալերելով ՚ի Քրիստոս և ասէր. Ես եմ Միքայէլ սպասաւորն Աստուծոյ, որ կամ յերկինս առաջի Նորա, որ և ոչ Թողում զհալածիչսդ ձեր մինչև առնից վրէժ ձեր. և գահիճքն զձայնն լսէին՝ բայց զտեսիլն ոչ տեսանէին։

Իսկ վկայքն ուրախութեամբ մատեան ՚ի մահ։ Եւ իբրև կոտորեցին զինուորքն զամենեսեան զսուրբսն և եկին առ Ադրիպպաս սպանանել և զնա, տեսին Թուր ջրջապատեալ զնովաւ, և յոյժ խռովեցան ահիւ. և դարձան յետս առնել և դողութեամբ զարհուրեալ և ահաբեկք, և պատմեցին ընկերացն զահաւոր տեսիլն և զբարբառն սուրբ զոր լսեան։

Իբրև լսաւ զայս չարասիրտ դատաւորն զի չէր սպանեալ զՄադրիպպաս, առաքեաց և եւս բերել զՄադրիպպաս առ ինքն. և սուրբն աղօթեալ առ մարմնոյ սրբոցն՝ գնաց առ դատաւորն և եկաց առաջի. և վերակայեաց դարձեալ բարիւք զՔրիստոս. և երեսաց մարդմանէ դատաւորն բանակաւն ՚ի տեղւոջէն և տապար դարձեալ շղթայիւք հետի զինեալ իւր ընդ հետ ծեալն զսուրբն. և նա մեծ տանջանօք երիթայր ընդ նոսա ՚ի վերայ երեսաց իւրոց ՚ի քարշ և ասէր. Բա-

ւի է ինձ զի խոնարհ արարեր զիս, որպէս ուսայց զիւրասունս քո։

Եւ գնացեալ ՚ի կողմն լերինն Խլէին ՚ի գեօղն Եիկօր, և ՚ի գիշերին արկեալն զԱգրիպպաս. և յոյժ նախատեալ սիրտն որպէսզի զԱգրիպպաս դարձցի ՚ի փառն առաջին։ Եւ սուրբն խօսեալ առտուածայինն բանս ընդ կինն՝ անարգեաց զնացս զնոսան։ Եւ կինն վառեր զԹանկերն զի եփեսցէ հաց, և ասէ ցսուրբն. Թէ էր իմ իշխանութիւն՝ ՚ի յայս Թանկս այրէի զքեզ։ Ասէ սուրբն. Յերեկեան աւուրդ յայլ մեծ հուր արկին զիս պնդէ ընկերքն քո և փրկեցայ, ծնացեալ անկիզ Քրիստոսէ Տէրամբ իմով։ Ասէ կինն. Եթէ Աչմարիտ զայդ յոյս ունիս ՚ի Քրիստոս քո, արի մնա այժմ ՚ի Թանկիս այս։ Եւ սուրբն կնքեալ զինքն խաչիւն սրբով՝ յիշեաց զՔրիստոս, և եմուտ եկաց ՚ի մէջ Թանկին, և առժամայն շինչաւ Թանկերն, և լցաւ յոչ գոյից Թանկերն՝ ջուր. և կինն անկեալ ետուր սրբոյն զղջացաւ և հաւատաց ՚ի Քրիստոս։ Եւ ելեալ սուրբն ՚ի Թանկէն կնքեաց խաչիւ զկինն՝ և բացան աչք ոչ ոյց նորա, և եռեւս զկրեշտանկն կացեալ մերձ ՚ի սուրբն, և առժամայն խոնարհեաց կինն ամենայն ընտանեօքն զսուրբ մկրտութիւնն. և Ագրիպպաս առեալ զկինն մկրտեաց ՚ի Թանկերն՝ որ էր լցեալ ջրովն՝ ամենայն ընտանեօքն իւրովք, և մնաց Թանկեր ջրովն լի նոյնպէս։ Եւ ապա ննջեաց սուրբն և հանգեաւ յաշխատութենէն, զի եռեւս զկրեշտանկն Աթոռոջ զի ասէր, եթէ՝ Վաղիւն կատարելոց ես ՚ի Քրիստոս, այլ ազօթեա ՚ի վերայ աշխարհի՝ զի Թագաւորաց պատրաստ կայ յերկինս։

Եւ յարուցեալ զոհանայր և ազօթէր խնդութեամբ վանն աշխարհի և մարդիան, զի դարձցին ՚ի Աչմարիտ հաւատս, և ասէր. Տէր, փրկեա զամենեսեան ՚ի չարէ, և Թող զմեզ իմ զբազումն՝ զոր դարձեցի յանդեպս. և որ ոք խնդրէ ՚ի քէն անուամբդ և մարմնով մերով զՔաղաքութիւն՝ լուիցես և տացես նոցա, բազմեալ ՚ի մէնջ զբժշկութիւնս ամենայն ախտից հոգւոց և մարմնոց, ներկարծեալ յոսկերաց իմոց և յոսկերաց այլոց ընկերաց մերոց՝ վկայից քոց. և ՚ի հոգին ուր կան նշխարքն նոցա զնարկս Հոգւոյդ սրբոյ և զբարձումն ամենայն պատահարաց, և զօգնութիւն ամե-

նայն մարդկան. և որ ոք կատարէ զկնշատակս մեր, հատո նոցա զմեծ քո բարիսդ յերկինս և յերկրի հաւ ընդունելի, կամ որ նուիրէ ինչ յանուն մեր քեզ՝ տուր նոցա զտղայութիւն քո անապատ:

Ուրեմն լուաւ կինն զայր աղօթէր տուրբն, առեալ մա նուկ մի այտահար մատոյց, և աղաչէր զտուրբն զի բժշկեսցէ զնա. և տուրբն խոյանկնքեալ զամենայն զգա յարանս նորա և զնկրան՝ կոչեաց զանուանն Քրիստոսի, և մկրտեալ զնա բժշկեաց նոյնժամայն. և դէմն ելեալ արտաքոյ տանն աղաղակէր և ասէր. Վայ ինձ Սգրիպպա՛, ի քէն, զի երբեմն հալածիչ էիր քրիստոնէից, և այժմ զդեա հալածես ի նոցանէ: Եւ ատտեաց նմա տուրբն, և մնաւկն ողջացաւ:

Եւ ուրեմն այդ եղև՝ ածին կապեալ զտուրբն առ դա տաւորն. և յետ հարցափորձելոյն ընդ յերկար, և որոյն պինդ կալոյ ի հաւատս՝ ետ բերել Վոմիսա անմոռ զտաւրակ մի և ձի մի առեղի և խրոխտ յոյժ, և կապել ետ հասո պարանոք զտուրբն Սգրիպպաս ընդ երկուսեան՝ երկաթի շղթայիւք, և այնպէս գոլով ընդ տուրբն ի մէջ երկուցն՝ ձիոյն և ցլոյն, թողին ի դըժտաւրակն վայրս և կարծէին թէ առժամայն մեռա նիցին. և եղև և ձին առաւել հեզայեալք՝ ոչ շարժէ լին, այլ որպէս բանաւորք կային զգուշութեամբ: Յայնժամ նախ հազիւ առնոյն բազմութիւնն կապել ընդ որոյն կարացին, եկեալ տեսոյք ձիոյն և եզինն արձակել՝ երբեմն զքաջ մղեալս տալոյն զնոսա ի տուն իւրեանց, և առնոյն բազմութիւնն աղաղակէր. Մեծ է Աստուածն Սգրիպպայ. և յամօթ լեալ Վոմիսա՝ փոխեցաւ անտի, և հարցափորձեալ այլոք բանիւք և պնդագոյն եդիտ զտուրբն:

Եւ ապա հրամայեաց նոյն դատաւորն քաջ և զօ րեղ առն միոյ որ կոչէր Ջենոբ, զի գլխատեսցէ զտուր բըն. և այնն գոչեալ ասէր. Երկնչիմ առնել զայդ, զի մի ընդ առաջինան կորեայցէ: Սակ տուրբն Սգրիպպաս. Եկ այր գու, մի երկնչիր, ոչ պատահէ քեզ չար, զի և գու որդի լուսոյ լինելոց ես. քանզի և ես բազում կատուրեցի զտուրբ վկայեն, և նոքիմբք կոչեցայ առ Քրիստոս: Եւ անկեալ տուրբն ի ծունկս ի վերայ պարսպի միոյ՝ աղօթեաց և ասէ. Տէր, ընկալ զոգի

ծառայիս քո. և խոնարհեցուցեալ զպարանոցն, ընկալաւ սրով զիատարուժին. և նոյնժամայն յայտնապէս երևեցաւ, զի հրեշտակն այրն բազմութեամբ երկնաւոր զօրաց տանէր զհոգի սրբոյն. զորոց և զձայն բարբառոյն լսան բազումք՝ ի հեթանոսացն՝ նոյնպէս այրն ոլ գլխատեաց զառաքեալն եռես զբերոզէն հրեշտակն, և լուաւ զաքանչելի բարբառն. և առեալ զարիւն սրբոյն օծանէր զինքն, և հաւատաց՝ ի Քրիստոս նոյնժամայն և մկրտեցաւ. և զամենայն ժամանակս իւր պատուեաց զառաքեալն և զբեաց զվկայութիւնն և զնշխատակս նորա. որ և ինքն Ջենոբիոս չարչարանօք կատարեալ վկայ եղև Քրիստոսի՝ յետ սրբոյն։

Իսկ զօրք անօրէնին Դոմետիոսի սփռեցան երթալ՝ ի տեղիս իւրեանց. և հասեալ՝ ի գեօղն՝ եհան նոցա ցառուն՝ ի հրեշտակէն սրբոյ, և լուան բարբառ և պատուն մեծ։ Եւ եղև կայծակունք և այրեցաւ գառուն՝ ի վերայ զօրուցն. և շրջապատեալ հուրն յամենայն կողմանց՝ և զամպարիշտն այրեաց ամենայն երիվարօքն իւրեանց և զինուորօք, իբրև ասս հազարս. և այլքն՝ հազիւ փրծեալ երթեալ առ մեծ գեօղ պատուն՝ տանջէին իբրև հրով բոլբոջեալք։ Իսկ հեթանոսք բնակիչ գեղջն ոչ կատարեցաւ սուրն, մինչ ան տարաժամ մահուամբ սատակիլ. որոց քարոզեր հաւատացեալ կինն հաւատալ՝ ի Քրիստոս, և առնուլ զամարին սրբոյ վկային և Թաղել պատուով՝ ի գերեզմանի. և պատմեաց նոցա զամենայն սքանչելիսն որ եղեն. և ժողովեալ ամենայն գեղջէին՝ մեծ պատուով Թաղեցին զսուրբն՝ ի տեղւոջն ուր պահեցաւ։

Եւ երևեցան երկու ամք սակ զարհուրելիք յոյժ և չարակերպք, ոլք ունելով նիզակս՝ ելանէին՝ ի գեղջէն և աղաղակելով ասէին. Ով Աքրիպպաս, և յետս մահու խոստանես վերդ և հալածես. և նոյնժամայն գայր գարեաց տարաժամ մահն։ Որոլ յոյժ հաստատեալ նորահաւատքն մկրտեցան՝ ի Թոնիկն ջրալից, և առաքեն պատուէին զսուրբն, և այնչափ, բժշկութիւնք սկսան լինել՝ ի նըմին անդէն, և անթիւք եկեալ բժըշկէին արագ. բայց մնացեալ հեթանոսքն դարձան տրտմութեամբ և զարմացմամբ։ Իսկ հաւատացեալքն լսեալ փառաւորէին զՔրիստոս. և ոլք կատարեցան

և պահեցան ՚ի տեղիս տեղիս ՚ի ժամանակին յայնմիկ, լուսեղէն նշանօք փառաւորեցան և այլ սքանչելեօք։

Իսկ Լաւրենտիոս այլ ևս ընկերօք գնացեալ ՚ի Հռոմ և կացեալ առաջի կայսերն՝ վկայեաց զՔրիստոս սի աստուածութիւնն. և զանազան և սոսկալի տանջանօք առեալ զկատարումն սպանաւ ՚ի կայսերէն ընդ այլոց սրբոցն և պահեցաւ ՚ի Քրիստոսէ։

Վկայարանուշիւն Սրբոյն Կոստանդեայ
և որոց չինի նմա գառնանալ և իւրեանց վկայիցն։

Ի ժամանակս Թագաւորութեանն Դիոկղետիա-
նոսի ամպարշտի՝ բազում էր մոլութիւն հեթանոսա-
ցին. և ոչ միայն նոքա ոչ Հանդուցեալ զԱստուած՝ խոր-
հուրդ անձանց իւրեանց գործէին, այլ և զամենայն
մարդիկ հրապուրէին հաւանել անարժան իւրեանց
պաշտամանն. և որք ընդ նոսա հաւանէին՝ մանաւանդ
՝ի փառաւոր մարդկանէ, ոչ միայն պատիւս ընդունէ-
ին ՝ի Թագաւորէն՝ այլ և ՝ի մեծագոյն զինուորու-
Թեանն պերճանային։ Եւ որ Աստուած ամենակալ
և ՝ի նոսին Բանն և ՝ի սուրբ Հոգին խոստովանէին,
՝ի խոշտանգս և ՝ի տանջանս մատնէին, անդադար զար-
տուն և զպատիւ փառաց ընդունէին. բայց նա մարդ՝
հարուածոք տանջանօք զմարմինս իւրեանց մաշէին։

Յայնմ ժամանակի նախ և միայն քաջ Քրիստո-
սեան Բրիտաոսի, որում անուն էր Կաղիստրատոս, ՝ի Հռոմի
քաղաքի, յանձին կալեալ զյաղթութեան պատիւն,
զսաստիկ նահատակութեան յաղթութեանն նշան կան-
գնեաց Հաւատացեալոց ՝ի Տէր։ Բանզի այս իսկ Կալե-
ստրատոս զինուորեալ էր ՝ի գնդին որ կոչէր Բզկե-
տան[1]. վասն զի սոքա էին զկնի Աւգոստեայոց գըն-
դին՝ որ էր ՝ի Բզկետոսն, զորս ակամայ տարան ՝ի

1. Թուի Բազկեզան Բիւթանացւոց։

*Հռոմէ ըստ տիւրենայ[1] օրինի: Ա.յլ կալիստրատոս էր
՝ի Քղկեդոնացւոց յաշխարհին, յազատ ազգէ, բա-
րեբարոյ և լցեալ աստուածային իմաստիւք. և նորին
նախահաւն Ադրոս լեալ էր յներսաղէմ յաւուրս
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, առ Պիղատոսիւ
դատաւորիւ: Ա.յս Ադրոս տեսեալ զՔրկինն ՝ի խաչին,
զմեռանելն և զթաղելն ՝ի դերեզմանի, և զյարու-
թիւնն ՝ի մեռելոց, և հաւատաց և մկրտեցաւ յաւուր
սրբոյ Պենտակոստէին, յինչման առնլը Հոգւոյն ՝ի
սուրբ Ա.ռաքեալսն, և ընդ Վաւիլեացիսն հաւանեալ
եղև. և եկեալ ՝ի քաղաքն իւր ուսուցանէր զորդիս
իւր և զմեռանոնս յաւուրս ՝ի Տէր Յիսուս Քրիստոս. և
նոքա ուսանելով ՝ի միմեանց՝ եղեն ուսումնապահք
խրատու հաւատն իւրեանց, մինչև յերանելին Կալի-
ստրատոս: Սա միայն էր քրիստոնեայ ՝ի գնդին իւրում.
որ և ամենայն ժամու փառաւորէր զՏէր ՝ի ձեռն բա-
նից Հոգւոյն սրբոյ:*

*Նոքա ՝ի միում գիշերի յարուցեալ Կալիստրատոս
աղօթս մատուցանէր Ա.ստուծոյ. և ահանք ՝ի գինուո-
րակցաց իւրոց խմացան զայն, և սկսան ասել ցնա. Ո՞ր
է վայելուչ քեզ միայոյ մանկաբարոյ լինել ՝ի մէջ
մեր ամենեցուն. արդ հաւանեաց և Ե՛կ ՝ի պատկերն
Ա.րամազդայ, և ամ լիցեանն և արիւն, և ցայտեա
՝ի վերայ նորա, և լեր ընդ մեզ սիրելի աստուածոյն.
ապա Թէ ոչ մեզ մեղ մի գներ, զի Հարկ է մեզ պատ-
մել զօրավարին մերոյ զայդ ամենայն: Նոքա սուրբն
Կալիստրատոս պատասխանի ետ և ասէ. Եղբարք, զի՛
ելից զձեզ սատանայ. ոչ ուրեք ՝ի ձէնջ փնտռեցի, և
ոչ նեղեցի զոք ՝ի ձէնջ. ՝ի պատերազմի ընդ ձեզ եմ.
յանուանապրի Հաւատուն՝ Թերևս նախազոյն կար-
գեալ եմ քան զձեզ. ՝ի հանդիսի ոչ որոշիմ, ՝ի գնդի
Հաւատուն ընդ ձեզ անցանեմ. նոքա արդ զինչ ունիք
չարախօսել վասն իմ՝ ոչ գիտեմ: բայց զի յանձնա
մարդասիրութենէն Յիսուսի Քրիստոսի եմոյ, և յաղա-
փառ պաշտամանէն որոշել զիս ոչ կարիք, գիտեմ; ոչ
միայն գուք, այլ և ոչ բազումք երկրի զձեզ: Զայս վե-
կայեալ ինձ Քրիստոս՝ որ վկայեաց առաջի Պոնտա-*

1. Ա.յսինքն՝ քան հրահանգի նորընծայ վկայուցոյ:

ցաղ Պիղատոսի, որում ակնատես եղեալ է Որդւոյ Հաւն իմ։

Իբրև լսեան զայս՝ յարուցեալ ընդ առաւօտն պատմեցին Պրեսխնտինոսի զօրավարին, եթէ՝ Ահ ահի՛ն Թուղթ գինուորաց քոց, որ են ընդ իշխանութեամբ քո, ապաստանեալ յաստուածոցն պաշտամանէ, և Թագաւոր և Աստուած կոչէ զմին որ անուանեալ կոչի Քրիստոս, և խոստովանի զնա խաչեցեալ. այլ և աղօթս և պահս զանձամբ առեալ է, և զամենայն խոզէնի ոռնիկ և ըզհաց՝ կարօտեցոց բաշխէ, և ինքն ի վեր անգամ յաւուր ոչ ուտէ աշուհ մի՛ ի ջուր Թանալով. քայց զի մի զբազումս ապստամբեցուսցէ՛ ի վառեալ վիճակացս գնդէ, վասն այնորիկ պատուեցաք առաջի քո պայծառ իշխանութեան Թանդ։ Իսկ Պրեսխնտինոս ասէ. Ո՞վ է նա, և կամ զինչ անուն նորա։ Եւ նոքա ասեն. Բռնուս մլքիայ[1], որ Թագաւորին Կալիստրատոս։ Եւ հրամայեաց զօրավարն ածել զնա առաջի իւր. և ասէ ցնա Հռոմայեցի լեզուաւ, քանզի ոչ լսէր զօրավարն յունարէն, զի Հռոմայեցիք ոչ կարեն վաղվաղակի խօսել յունարէն, վասն Հարստութեանն լեզուին։ Եւ ասէ ցնա. Կիւդ դիկուռնդ սոկիէ տուէ, փրոիր ատ. կէլէրիոս դիկէ[2]. որ Թագաւորի. Զինչ ասեն ընկերք քո վասն քո, արագ ասա։ Ա.յս պատմութիւն՝ի Հռոմայեցի լեզուէ գրեցաւ. և այսպէս իսկ խոսեցան ընդ իմաստութեամբ Թագաւորեցին և եռուն ցմեզ. և մեք նոյնպէս առաքեցաք ընդ ամենայն տեղիս՝ որք զՔրիստոս առաջի աչաց ունին Հաւատովք սրբութեամբ։

Պատասխանի եւ Կալիստրատոս և ասէ. Զինչ և ունիցին վասն իմ ասել, ո՛ տէր իմ, ասացեն. քանզի ես ոչ ինչ գիտեմ զանձին խիղճ։ Պրեսխնտինոս ասէ ցբարեխօսն. Զինչ գիտէք վասն Կալիստրատոսի Բունի մէլեկի[3]։ Իսկ նոքա ասեն. Հրամայեսցէ քո առաւել պայծառ իշխանութիւնդ գմա, զի զոհեսցէ մեծ առատութեամբ Աստուածոյն, և գոցես զբարեխօսս կամ

1. Անունն Bonus miles *քառատառականին, որ Թագաւորի բառէ էր կազմուած, որպէս և յունական անուանն Կալիստրատոս։*

2. Quid dicunt socii tui, propter te, celerius dic.

3. Boni militis.

*դրա: Իսկ զօրավարն ասէ. Ջո՛հեա, կալիստրատէ, աստուծոյն Աւրամազդայ: կալիստրատոս ասէ. Ես պատարագ օրհնութեան մատուցանեմ մեծին Աստուծոյ՝ որ արար զերկինս և զերկիր և զամենայն ինչ իմաստութեամբ իւրով. որ ստեղծ զմարդն ի հողոյ, և եդ զյաւիտենական և զանանց սահմանն. զի ոչ գիտեմ զձեռագործ աստուածս, այլ գնամ որպէս ասաց: Բանզի գրեալ է. Ամենայն կուռք հեթանոսաց դեւք են, այլ Տէր զերկինս արար. և զի՝ կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են, ձեռագործք են որպէս մարդկան: Աւդ ես, ո՛ տէր կոմն, գործոց ձեռաց մարդկան երկիր ոչ պագանեմ: քայց եթէ զինուս լեալ եմ քեզ և ընդ ձեռամբ քո եմ՝ ի պատերազմի և ի գոմարտակի և յամենայն սպասաւորութեանն հնազանդեալ եմ քեզ. միթէ և ոչ այժմ իմոյ սպասաւորութեան իշխանութիւն ունիս, քան լսցի: Պրեսիմնաս ասէ. Այո, ով կալիստրատէ, Քարտաւաթեան ոչ լինչ են պէտք, այլ վասն հաւանութեան մեզ է քան. վասն որոյ հաւանեալ զոհեա, զի մի չարաչար կորուսանել զքեզ հարկաւորեսցես զիս: Քայց կարծեմ եթէ գիտես իսկ դու, զի յորժամ ընթանեմ զոք ի մարդկանէ, յառաջագոյն քան զառանձնանալ իմոյ հալեմ զնա: կալիստրատոս ասէ. Քո մտքին չէզդ և սպառնալդ՝ ժամանակեայ է. իսկ լալումն և կրձտումն առանձնոյ՝ յաւիտենական: Զի եթէ ես ուրացայց զՏէրն իմ Յիսուս Քրիստոս առաջի մարդկան, փակեացէ զիս արտաքոյ տանուտէրն, և անդէ ելցէ լալումն աչաց և կրձտումն առանձնոյ:

Յայնժամ հրամայեաց զօրավարն պրկել զնա և հարկանել բզօք, մինչև փոխեցան ուժ այր: Եւ մինչդեռ հարկանէին, ասէ սուրբն կալիստրատոս. երդում և հաստատեցի պահել զդառաստանս արդարութեան քո, Տէր: Նուաղեցաք յոյժ, այլ կեցո զիս քան քանի քում, և մի տացես կորուսչին և բառնալ զուխս գազանին խնդալ ի վերայ իմ. այլ զօրացո զիս, Քրիստոս, և լեր ինձ լեզու՝ առ ի պատասխանել ինձ, և բժիշկ առ ի յոյնացուցանել զվէրս իմ. զի բազում տանջանք ունին զմարմինս իմ վասն այսմ չարչարանացս:*

Իսկ յորժամ եառեալ զօրավարն զարիւն նորա զի առաքեալ խաղայր՝ի վերայ երկրի, հրամայեաց դադարել՝ի հարկանելոյ զինա. և ասէ ցնա. Ջոհեա, կալ լուտրատէ, աստուածոյն, զի ապրեսցիս յառաջնիկայ տանջանացն. քանզի երդնում՝ի Ճառապայթաբեր Աստեղին, և յամենայն աստուածոյն ժողովս, եթէ ոչ հաւանեսցիս ինձ մնակոտոր արարից զքեզ, և զմարմին քո շունք կերիցեն, և առիւծք լիզեսցեն զարիւն քո: Կալլուտրատոս ասէ. Յուսամ՝ի Թագաւորն երկնից Աստուածն, զի հանցէ զիս՝ի բերանոյ առիւծուց և՝ի ձեռաց շանց զիմաւօրութիւն իմ; զի մի ես միայն օրհնեցից զնա յայսմ գնդին քո. զի ահն ունիմ յառաջադէմ լինելոյ երթալ առ նա, և յաղթութեան նշանակ ունելով՝ի վերայ բանաստիւնն, որ յարուցեալ զքեզ՝ի վերայ իմ: Յայնժամ հրամայեաց զօրավարն ծեծել և արկանել՝ի նեղջոյ նորա, և պրկել զսուրբն յորայս, զի քանգեսցեն զուսա նորա և զկերս խեցեաւն. և ձագար եդին՝ի բերան նորա և հրամայեաց ջուր ածորով արկանել ընդ բերան նորա: Իսկ քաջ նահատակն Քրիստոսի արիապէս ընկալաւ զտանջանսն: Եւ յարուցեալ ասէ. Աստուած Աբրահամու, Սահակայ և Յակովբայ, զօրացո զիս առ՝ի հնարապետութիւնն բանաստիւնն, և տրկեա զիս՝ի նմանել, զի մի կորուսցէ զիս և մի գայթ տեղի՝ի վերայ իմ:

Զօրավարն ասէ. Ջոհեա, կալլուտրատէ, աստուածոյն, ապա թէ ոչ բառնամ զքեզ՝ի կենացս, զի մի կորիցեն ոմանք՝ի գնդէս յայսմանէ վասն քո: Սուրբն Կալլուտրատոս ասէ. Ընտրժան և անամօթ, փութաս մատնիչել վասն հօտին աստանդայի հօր քո, չգիտեալ եթէ այս հօտ Քրիստոսին իմոյ է: Բայց յուսամ՝ի Թագաւորն երկնից՝ի տէրն իմ Յիսուս Քրիստոս, թէ պէտ և կարի յոյժ մըկիս վասն բանաստիւնն, սակայն ես զերեցից զնա և յաւիտեանից՝ի Թուղց զօրաց քոց և լուսաւորեցից զնոսա և հաստատեցից զհաւատացեալսն Քրիստոսի՝ի մէջ քաղաքիս այսորիկ: Իսկ զօրավարն ասէ. Ո՛յ անսուրբ և երկից Թշուառական, ահաւասիկ հրամանս իմ սաստիկ է առաջի աչաց քոց. նոյնժամայն հրամայէ իշխանութիւնս իմ ընկենուլ

զքեզ ՚ի քուրձ, և կնքել[1] զբերան նորա, և տանել ընկենուլ զքեզ ՚ի մէջ ծովուն. զոր զիարդ կարես հաստատել զեկեղեցի Քրիստոսի, և կամ ե՞րբ լուսաւորեսցես ՚ի Թուոյ գնդէ զօրականացն իմոց: Եւ հրամայեաց բերել քուրձ կտաւի և ընկենուլ զնա ՚ի ներքս. և կնքեաց կապարով զբերան քրձին, և եա՚ի ձեռս նաւավարաց. և տարեալ նաւավարացն ՚ի մէջ ծովուն, իբրև ասպարիսօք քառասուն, և ընկեցին զնա ՚ի ծովն. և զօրավարն կայր յեզր ծովուն, և ընկեցին զնա ՚ի ծովն. և իբրև եկին նաւավարքն, խակ քուրձն էջեալ կուսէր ՚ի փապարս վիմաց. և մինչդեռ ՚ի ներքս կայր Կալիստրատոս, աղօթս մատուցանէր ասելով. Աստուած անեղական և անքննին, անհաս և անպատում, որոյ աշխոյժ փառաց անպատմելի է, յորմէ դողայ և սարսէ ամենայն ինչ, որոյ սպառնալիքդ հալեն զլերինս, որոյ անուանակոչութենիւնդ պատառէ զանդունդս, յորմէ դողայ ծով՝ հանդերձ գետովք և կիտասովք, որ քննեցեր զսիրտն Յովնանու և ընկալար զաղօթս նորա յորժամ էջ յերկիր, որոյ փականք իւր էին իբրև աղիք յաւետենից, և հաներ զկեանս նորա յապականութենէ. և զիմ զմեղաւորի և զպատասխանդ ընկալ զաղաչանս, և եկեսցեն աղօթք իմ ՚ի տաճար սուրբ փառաց. և փրկեա զիս ՚ի նեղութենէս յայսմանէ, զի ծանեալ ՚ի մանկութենէ զպօրծս իմ: Դու գիտես, Տէր, զի ցանկացայ հաստատել զեկեղեցի քո ՚ի մէջ քաղաքիս այսորիկ. զործակից լեր ինձ ՚ի բարի, զի սուրբ է անուն քո յաւիտեանս:

Եւ յետ մատուցանելոյ նորա զաղօթս, դիպեալ քուրձն ՚ի կիրճս վիմայ՝ պատառեցաւ, և ընկալաւ զնա ձուկն մի դլխին, և եբեր զնա ՚ի խորոյն յատին ծովուն. և եղեալ զնա ՚ի վերայ աւազոյն, փախստեայ անդրէն դարձաւ ՚ի ծովն: Խակ իբրև տեսին զնա զօրականքն և զօրավարն՝ զարհուրեցան յոյժ: Բայց կապալիստրատոս սաղմոսէր և ասէր. Եկի ես ՚ի խորս ծովու, և սահանք ընկղմեցին զիս, այլ ոչ աշխատեցայ աղաղակել, քանզի լուար ձայնի աղօթից իմոց. պատասխանեալ զքուրձն իմ և սիրեցեր զիս ուրախու-

1. Յօր. փնէլ... փնէաց:

թեամբ։ Յայնժամ անկան առաջի երանելոյն կալուածատիրացն քառասուն և ինն վկայութիւնք ասելով. Սգաստէմք զքեզ, ծառայ Աստուծոյ բարձրելոյ, վրկեա զմեզ յունայնութենէ աշխարհիս այսորիկ, զի և մեք քրիստոնեայք եմք, զի արդարև մեծ է Աստուածն քրիստոնէից, որ եհան զքեզ յայնպիսի անգնդոց, կարող է նա և՛ ի պատերազմի օգնել՝ ումմէ և կամի, զի նա միայն է Աստուած։ Սուրբն կալեալ տարաւոս ասաց. Տէրն իմ Յիսուս Քրիստոս ապրեցուսցէ զձեզ, և յայսմ հետէ սեպհիք զարքայութիւնն երկնից։

Եւ աղօթեաց այսպէս. Տէր, որ բնակեալդ ես յաւիտեան՝ ի լոյս անմատոյց, նայեաց՝ ի վերայ հօտիս այսորիկ որ՝ ի քեզ՝ և պահեա զսոսա, զի ողորմած ես հանապազ և յաւիտեանս։ Իսկ Պրեսինտիոս ասէ. Երդուեալ յարեգակն՝ ի թագաւորն, մեծաւ կասխարդութեամբ լի է սա, զի զծոմն եհերձ, և զսոսա պատրեաց։ Եւ ասէ ցնա. Ես զքո կախարդութիւնդ յանդիմանեցից. ներեա ինձ և գիտասցես թէ ուլ է Պրեսինտիոս, և ուլ է Աստուածն զոր դուն պաշտես։ Եւ նստեալ յատենի, հրամայեաց բերել ցուպս, և եռ կարպաս հարկանել զքառասուն և ինն այրն։ Իսկ նոքա ասեն. Տէր Յիսուս, զայս վասն քո չարչարիմք, օգնեա մեզ, Աստուած փրկիչ, և տուր մեզ համբերութիւն. պահեա և զհաւիտս մեր Կալեստրատոս, զի կատարելապէս ուսուցէ զմեզ, զի երբև զանբաւ անաւուն եմք՝ ի գիտութենէ կամացդ քոյ. հաձեաց ընդ փրկութիւն մեր, զի օրհնեալ է անուն քո յաւիտեան։

Իսկ յետ այսորիկ հրամայեաց անարժան զօրավարն դնել զնոսա՝ ի բանդի, զի զմտաւ ինչ ածցէ վասն նոցա, քանզի յոյժ տրտմեալ էր՝ զի կտրոյս չիսուն այրն՝ ի Թուսց զօրականացն։ Եւ երբև մտին նոքա՝ ի բանդին, սկսաւ սուրբն Կալեստրատոս աղօթիւք հաստատել զքառասունն և ինն այրն. որոց անուանքն են այսոքիկ. Ակակիոս, Դոմնատիոս, Բիբիանոս, Բասիլիսկոս, Բեմարքոս, Գորթէոս, Գերմանէս, Սգայոս, Անթիմոս, Սրապաէոս, Անիկատոս, Բիտաղիոս, Գրիգորիոս, Գէորգէոս, Գիդանդիոս, Գենադէոս, Դոմնիանոս, Դուղկիմիոս, Դոմետիանոս, Դեզաղիոս, Դաղմա

տիոս, Եսեբիոս, Եսապրիոս, Եղսինդիոս, Եստոլիոս, Եսարեաոս, Եսապրիոս, Թարասիմիդէս, Թէոդոտոս, Թերասիոս, Լիսիմաքոս, Լամբլիխիկոս, Լիսինոս, Կոստանդինոս, Կանդիտիանոս, Հեղիադէս, Հիւսինքոս, Հեղոդորոս, Մենոս, Մելինոս, Մարդինոս, Մարկիանոս, Նիկատիոս, Նիկոպոլայոս, Ողոմբրիոս, Ուրիպէոս, Ողիսէոս, Փասանթէոս. սոքա ամենեքեան անկան առաջի սրբոյն Կալիստրատոսի, և խնդրեին զպիտուքիւնն Քրիստոսի: Իսկ սուրբ վկայն Քրիստոսի տարածեաց զձեռս իւր յերկինս, այսպէս ասելով. Աստուած, որ զամենայն ինչ արարեր, որ ամենայնիմաստ հզօրդ ես, որ յանթիւ զօրաց հրեշտակաց օրհնեա, որ անլթարիւց արարչդ ես, Աստուած հարցն մերոց, հայեաց՝ ի գոյն իսկ՝ ի հօտս յայսմ, եւ հասիր՝ ի մէջ մեր: Կատարեա, Տէր, զանուանս խոստումիցդ, թէ՝ Ուր երկու կամ երեք ժողովեալ են յանուն իմ, անդ եմ ես՝ ի մէջ նոցա: Լուր մեզ, Թագաւոր յաւիտենից. ցրուեա, Տէր, զբոց քանատարկուին. անցո, Տէր, զչնոց հրոյն՝ առ՝ ի չարձրանալ քան զքառասունն և զինն կանգունն, որպէս զի տեսցեն ամենայն հեթանոսք զփառս քո, և փառաւորեսցեն զքեզ Թագաւոր յաւիտենից: Տուր ինձ, Տէր, խոստումն և գիտուքիւն, որպէս զի հաւատացուցեալ մատուցից առաջի քո զծառայքս քո, զի օրհնեալ է անուն քո յաւիտեանս:

Եւ ամենեցուն միաբան ասացեալ զամէնն, յարուցեալ մի ոմն՝ ի նոցանէ՝ որում անուն էր Դադմատիոս՝ առ սուրբն Կալիստրատոս. Աղաչեմ զքեզ, տէր իմ Կալիստրատոս, քրիստոնեացս զմեզ, և ուսո մեզ զբանն Աստուծոյ, զի մի երբէք երկմտեսցուք. ցոյց մեզ զոյդն մեր և զառյատա օգնականութիւնն. պատմեա մեզ զամենայն խոստումն Աստուծոյ, որպէս զի և մեք ընտրհօքն Քրիստոսի փառաւորիցք եղիցուք ընդ քեզ. քանզի ոչ երբէք հարցն մեր ուսուցին մեզ զհանապարհս արդարութեանն: Յայնժամ ասէ ցնոսա սուրբն Կալիստրատոս. Որդեակք իմ և եղբարք սիրելիք, տացէ ձեզ Տէր ընտրհս և օգնականութիւն, և Աստուածն իմ ածցէ՝ ի լոյս գիտութիւնդ ձեր. Աստուածն երկնից և երկրի լցուսցէ զձեզ ամենայն բա-

բուԹեամբ. զի գիտեմ ես ԹԷ յոյժ ցանկուԹիւն ունիք լսել զպատուիրանս Աստուծոյ: Եւ արդ որ ծառայել էք արդարուԹեան, լցուցէք զձեզ Տէր և արբեցուցէ և զմայլեցուցէ ամենաբարի բաւականուԹեամբ շնորհօք Հոգւոյն սրբոյ, և ամենայն յուսով զոր ունիք առ Տէր Քրիստոս: Բայց սակայն, սիրելիք իմ, ես տրտում եմ և տպէտ առ անհաս խորուԹիւն խորհրդոյն Աստուծոյ, բայց խրատանչիւր ոք ՚ի ձէնջ զինչ և կամիցիք՝ հարցէք, և աղօԹս արարէք ՚ի վերայ իմ, զի յուսամ ՚ի Տէրն Յիսուս Քրիստոս՝ ԹԷԹ և աղօԹիւք ձերովք տացի ինձ Տէրն բան ՚ի բանալ բերանոյ իմոյ՝ հանդգնակուԹեամբ, իբրև զԹարգման յայտնապէս խօսել զխորհուրդ տնօրինուԹեանն Քրիստոսի: Յայնժամ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆ ՍՈՒՐԲ ԳԻՐՔ ԼԻՆԻ: Հայր և Որդի, անախտ ծնուն և անքննելի. Բան ՚ի սրտե Հօր, և ՚ի Հօրէ անբաժանելի. ծնուն անտրտնջելի՝ իբրև լոյս յարեգականէ. որդի, և ոչ արարած և ոչ ստեղծուած, և ոչ ՚ի խոնարհուԹեան և ոչ ծառայ. այլ խակաւից և էակից և անակզբնակից: Միշտ ՚ի ծոց Հօր, ըստ սրբոյն ՅովՀաննու աւետարանչին, որ ասէ. Խակզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն. նա էր ՚ի սկզբանէ առ Աստուած: Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչ ինչ որ ինչ եղև: Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան և լոյ-

սէն՝ի խաւարի անդ լուսաւոր էր, և խաւար նմա ոչ էրև հասու։ Եւ, ԶԱստուած՝ ոչ ոք եահս երբեք, բայց Միա ծինն որ՝ի ծոց Հօր, և սուրբ Հոգին՝ի Հօրէ բղխեալ և յառաջ եկեալ. բայց ոչ ծնունդ նորին զՆանն, այլ բղխումն և ծագումն միշտակայ լուսոյն. ոչ արարած և ոչ խոնարհ քան զՀայր և զՈրդի, այլ զուգակից և հաւասարակից Հօր և Որդւոյ։ Ամենայն էութիւն Հօր՝ Որդւոյ է. բայց զի ոչ է ծնօղ, այլ ծնունդ. և ամենայն էութիւն Որդւոյ՝ Հոգւոյն սրբոյ է, բայց զի ոչ է ծնունդ, այլ բղխումն և ոչ բղխօղ, այլ բղխեցեալ. և միութեամբ աստուածութեամբ ընդ Հօր և ընդ Որդւոյ հաւասարապատիւ, և միփառք և միաստուածութիւն երրորդութեանն, միանախնձն միշտին ջենաւորութիւն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն. եթէ ոք անձինք կատարեալք, միհնութիւն և թագաւորութիւն, միկամք, և միխորհուրդ։ Ամենայնիւ սա է, ամենայնիւ լոյս է, ամենայնիւ լուր է, ամենայնիւ կեանք է. և այլովք ամենայն անուանակոչութեամբք՝ զոր հոլեղինաք ըստ մերում տկար իմաստից կոչեմք։ Մի են և զոյգ և հաւասար. բայց զի Հայր է, և նորին ծնունդ Բանն. և բղխումն նորին Հոգին սուրբ, անձամբք երիւք կատարելովք։

Այլ սուրբ և զուգական երրորդութիւնն՝ կամեցաւ և հաստատեաց զամենայն ինչ։ Հայր՝ի ձեռն Բանին Հոգւով սրբով արար զերկինս և զերկիր, և բարժանեաց զերկինս հրով և զերկիր ջրով. արար և զլոյս. ընդ որում գոյացոյց և զերկնային զօրսն. և մեկ նեաց զՄուրան՝ի ջուրց, և ձգեաց զպղպջակ հաստատութեանդ։ Եւ զերկիր զարդարեաց բուսովք և սերմնկովք, և զհաստատութիւնն արեգակամբ և լուսնիւ և աստեղօք. զերկիր չորքոտանեօք և սողնովք և կոյերկրի և ջրոյ՝ զշունչ կենդանութեանն։ Եւ նոքա հաստատեաց զամենայն ինչ զօրութեամբ ահեղ աստուածութեանն իւրոյ, որ կախեաց զերկինս զօդնչէ, և զերկիր եդ՝ի վերայ ոչնչի, և զամենայն տարերս գոյացոյց յոչնչէ, յեւոյ աստեղծ զմարդն՝ի հողոյ, ըստ պատկերի անմահութեան իւրոյ, և անճնիշխանութեամբ տիրել ամենայն արարածոց՝ որ էն՝ի ներքոյ

երկինից: Եւ քնաւեցոյց յանձեղուածեան զրախտին փափկութեան, և զոյգն օրհնադրութեամբն՝ի մեծ ծագոյն ևս փառս խոստացաւ վերածել: Իսկ սատանայ՝ հրեշտակ էր յերկինս նախասահեղծ. և վասն զի հպարտութիւն ինն եբեր՝ի միտս իւր ներանձնութեամբ՝ ընդդէմ ամենակալին Աստուծոյ, ընդվզեաց և անկաւ՝ի փառաց իւրոց: Եւ նախանձեալ ընդ մարդոյն, խորամանկութեամբ բազմատուածութիւն սերմանեալ՝ի ձեռն պաղծոյն Ջաշտկման, և ցանկութեամբ աստուածութեանն զրկեաց զինա՝ի փառացն և եհան յաստուածատուռն զրպարտանէն: Այլ վասն զի պատկեր էր անմահին Աստուծոյ, ոչ զօրեաց ջնջել և ապականել միանգամ. այլ անձնիշխանութեամբ և պատրանօք մատեաւ ընդ ազգի մարդկան, և պէս պէս չարեօք պղծեաց, եղծայրատպանութեամբք, անօրէն խառնակութեամբք. ոչ հնազանդեցան ազգն առաջին՝ քարոզութեան արդարոյն Նոյի, վասն այնորիկ եղծան ջրհեղեղեան. և միայ միայն Նոյ և որդիք նմա՝ ոգիք ուղիղ: Յետ այնորիկ աշտարակաշինութեամբն բարժանեցան լեզուք նոցա՝ի ցեղս ցեղս, եօթանասուն և երկու՝ ընդ ամենայն երկիր, և ապա՝ի կռապաշտութիւն յորդորեաց զնոսա սատանայ. պատրկել պաշտամամբք յամենայն ինչ, որպէս արդ տեսանէք, զոր բարձեալ Տէր և կորուսեալ՝ի միջոյ. և անդ նոքօք զնախասերմանեալ զբազմաստուածութիւն սկզբնաւորեաց, զոր ասէր ցնոսա, թէ՝ Աստուածք լինջիք, զմարդիկ՝ի մատն պաշտամանեն. և էին ամենայն երկիր՝ի մեծ մեղս:

Այս որս զԹագեալ ողորմութիւն մեծին Աստուծոյ՝ ընտրեաց զնախահարսն՝ զԱբրահամ, զհաւատակ և զՅակովբ, և զնոցին զաւակսն առ ինքեան ժողովրդ սեպհական. զորս եհան յԵգիպտոսէ՝ի ձեռն Մովսէսի. և ետ նոցա օրէնս. որ և զնոսա խոստացեալ սատանայ, ոչք արարչին զորէն յանապատին և պղծեցան՝ի գարշելիսն. և զարձեալ ողորմեալ ետ նոցա քահանայս և մարգարէս, որք և նոցա ոչ հաւանեցան յայդմանէ սատանայէ. ոչ հարուածովք և ոչ գերութեամբք և ոչ հրեշտակացն վերահոչութեամբք, որոնք ոչ խլատեցան և ուղղեցան. և ամենայն երկիր խոստացեալ

միաբան զկին սատանայի որսացեալք ի նմանէ ի նո-
ւիրն չար կամեն: Իսկ ազնուագոյնն Աստուած ոչըն-
դեալ ի վերայ ազգի մարդկան, առաքեաց զՄիածին
բանն իւր յաշխարհս, որ սրբեալ զկոյսն Մարիամ՝
բնակեցաւ ի նմա, և յղացաւ անապական՝ առանց
սերման առն, և առանց ախտի ցանկութեանց ինքեան
առեալ անապական մարմին, ըստ հրեշտակապետին
Գաբրիէլի՝ որ ասէր. Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ, և
զօրութիւն Բարձրելոյն հովանի լինի ի վերայ քո. զի
որ ծնանելոյն է՝ի քէն՝ սուրբ է, և Որդի Աստուծոյ.
և կոչեացեն զանուն նորա Յիսուս, զինա փրկեսցէ զժո-
ղովուրդ իւր՝ի մեղաց իւրեանց: Որ յղացեալ անա-
պական և ծնեալն անապական, ի խանձարուրս պա-
տեցաւ, և եղեալ ի մսուր յանբանից որպէս զմարդ.
՝ի մոգուց պատուեցաւ պատարագօք խորհրդականօք,
՝ի հովուաց փառաւորեցաւ, որք ընդ հրեշտակս եր-
գէին. Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խա-
ղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն: Թլփատեցաւ
իբրև զմարդ. ՝ի տաճարն ընծայեցաւ իբրև զմարդ.
խոկ ծերունին Սիմէոն հայցէր իբրև յԱստուծոյ. հա-
լածեցաւ յԵգիպտոս. և անդ զկռապաշտութեան քա-
ղաքն դարձոյց յաստուածպիտութիւն. դարձաւ ան-
տի և բնակեցաւ ի Գալիլեա ի քաղաքն Նազարէթ:

Արդ մի՛ոք ի ձէնջ զայնմ ակղեալ ասիցէ թէ ի կու-
սէն աւր սկիզբն Քրիստոս. զի ըստ մարմնոյ ի կուսէն
երևեցաւ, իսկ ըստ աստուածութեան հաւասար է
Հօր, որպէս յառաջն ասացի. և մի՛ոք ասասցէ՝ յերկ-
նուստ բերել զմարմինն, զի ի կուսէն աւր. և ոչ եթէ
լոկ Աստուած էր կամ լոկ մարդ, այլ Աստուած և
մարդ. Աստուած՝ մարմնոյն, և մարդ՝ աստուածու-
թեամբն, ոչ շփոթեալ և կամ փոխեալ: Եւ քան-
զի աւր Աստուած. Տէր ասացաւ զինս սկիզբն Հան-
պարհաց ի գործս իւր, յառաջ քան զանդունդս լի-
նել, յառաջ քան զաղբիւրս ջուրց, յառաջ լոկ քան
զամենայն բլուրս ծնաւ զինս. յորժամ պատրաստէր
զերկինս իւր՝ ընդ նմա էի, ես էի ընդ որում ուրախա-
նայր: Սակայն վասն մարմնոյն ասէ, զանգի խորհուրդ
մարմնաւորութեանն Քրիստոսի յառաջ քան զլինելն
աշխարհի էր. բայց ի կուսէն ստեղծ անապական՝

Ա.րդ նոյն ինքն միածինն Բանն Հօր, որ մարմնացաւ ՚ի սրբոյ Կուսէն, լուեալ ամն երեսուն. և ապա վկրտի ՚ի Յովհաննէ ՚ի Յորդանան գետ. և ընդ ելանելն ՚ի ջրոյն՝ բանի նման երկինք, և տեսը Հոգին էջ տեսլեամբ աղաւնոյ ՚ի վերայ նորա. և Հայր ՚ի բարձանց վկայեաց ՚ի վերայ տեսանելի մարմնոյն, Թէ՝ Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ. զոր Յովհաննու տեսեալ զարհուրեցաւ, և հրաժարեր վկրտել. առ որ ասէր Տէրն. Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւնս: Որպէս վկայեաց անտի Յովհաննէս որդի քահանայապետին Զաքարիայ ՚ի վերայ Քրիստոսի և ասէ. Ա.հա Քրիստոս գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի. քանզի Քրիստոս ՚ի ծննդենէն անտանեցաւ, զոր հրեշտակն քարոզեաց Մարիամու. և Քրիստոս ՚ի յօծմանէ տեսը Հոգւոյն որ էջն ՚ի Յորդանան ՚ի նմանութիւն աղաւնոյ: Յետ այսոսիկ փորձեցաւ ՚ի սատանայէ, և յաղթեաց փորձողին երիւք օրինակօք, զի գքառասուն օր անտուաղ եկայ. և մտախտութեան և հպարտութեան և ագահութեան և ընչասիրութեան որով յաղթ եղեալ զմարդկն՝ Աստուածն միաբոլոր ՚ի նմա: Ելջեցաւ այլ ևս ամն երիս, և աւետարանեաց զարքայութիւնն երկնից: Կուրաց տեսանել հնարհեաց, կիսաղս գնացոյց, զտկտուս սրբեաց, զղես հալածեաց, զեղէտն՝ խօսող մատնեաց, զմեռեալ յարոյց, և զայլ ամենայն ցաւս և զհիւանդութիւնս բժշկեաց. և այլ ևս բազում զօրութիւն և մեծամեծս արար: Եւ ոչ ընկալան զնա և ոչ հաւատացին նմա, որպէս ասէ սուրբ աւետարանիչն Յովհաննէս, եթէ՝ Ի նա՛ւ իւրան եկն և իւրքն զնա ոչ ընկալան. և ամենայն իրօք չոգան մարդկիկ զՏեառ ոչընդէմ և զտին զոչինչ:

Յոկ Տէրն մեր Յիսուս Քրիստոս վասն այնորիկ եկն ՚ի չարչարանս՝ զի լուծցէ զգօրութիւն սատանայի: Ի վերայ յովհանակի նորոյ նաւեալ՝ եմուտ Յերուսաղէմ. որ և զսկսեալն իւր զՎազար կոչեալ էր չորեքօրեայ ՚ի թաղմանէ. զժոխոյ կործանումն յառաջ աւետարանեաց, վասն այնորիկ և մանկունքն Հրէից ոտով զգետինս տարածեալ ընդ առաջ ելեալ երգէին. Ովսաննա ՚ի բարձունս, օրհնութիւն որդւոյ Դաւթի, խաղաղու-

*Թիւն յերկիւնս և փառք ի բարձունս: Որ և յառաջ
խոկ զայս ի Թաւիթեանէ լերինն գյարուԹեանն իւրոյ
վերհուրդս տայաւ աշակերտաց յառաջագոյն՝ վկայուԹեամբ
Մովսեսի և Եղիայի: Եւ եկեալ յԵրուսաղէմ ի մեծ
աւուր Զատկին՝ հին օրինաւոր սովնին, յորում և զտաս
աշակերտացն լուաց, և սուրբ խորհրդոյն հաղորդս
արար, զմարմին և զարիւն իւր բաշխեաց աշակերտաց
իւրոց. և եկեալ ի խաչն, քևեռեցաւ ի վերայ նորա
յանօրէնն Հրէիցն, և հատատեաց զբարբառ մարգա-
րէիցն որ վասն նորա յառաջաձայնեալ քարոզեցին:
Խոկ ի խաչելուԹեանն նորա՝ արեգակն խաւարեցաւ,
վէմք պատառեցան, երկիր շարժեցաւ, վարագոյր տա-
ճարին ցեղաւ յերկուս. և ի նոյն ժամու յորում եւ
Աղամ ի դրախտէն, ի նմին ժամու եւմբ զաւազակին
ի դրախտն, ասելով ցնա. Այսօր ընդ իս իցես ի դր-
ախտին: Իջ ի դժոխս միայն, և եւ անտի սատակ
բազմուԹեամբ. արձակեաց զհաւատեալսն ի սատանայէ,
և զնա կապեաց անլոյծ կապանօք ի խաւարն, և ըզ-
գանձս խաւարինս աճ ի լոյս. յարեաւ ի մեռելոց
յաւուր երրորդի՝ նովին անապական մարմնովն, համ
բարձաւ յերկինս, նովին մարմնով նստաւ ընդ աջմէ
Հօր. և գայ նովին մարմնով դատել զամենայն ազա-
նաց:*

*Խոկ յայնժամ, ով եղբարք, ոտքումբք էին ոք ի
մեղուԹեան էին պատեալք. բայց այժմ ի ձեռն
խաչին Քրիստոսի վերացան ի փառս անձառս: Խոկ ո՞ր
ուրացի զնա առաջի մարդկան՝ մատնեալ լինի ի ձե-
ռս դժոխոց: Բայց դուք ով կարծէք եԹէ սակաւք են
հաւատացեալքն ի Քրիստոս, և բազումք են որ երկիր
պաշտանեն ձեռագործս, զի յառամ ի տէր Յիսուս
Քրիստոս՝ եԹէ այնչափ բազմացի հաւատս մեր, մին-
չև առաւելապէս հեղձի ի վերայ ամենայն երկրի: Խոկ
դուք յայս հաւատս հաստատեալքդ, սիրելիք իմ, զոր
ուսուցի ձեզ մեծմուԹեամբ սրտիւ՝ ետրեւ հարատևեա
եղբարց:*

*Խոկ յորժամ կատարեաց սուրբն զվերոյ բանիցս,
յարուցեալ Հեզեկիոս հարցանէր զնա և ասէր. Ա-
ղաչեմ զքեզ, ասէր իմ Կաղնատրաաէ, յորժամ վախ-
ճանի մարդ՝ զնացէ լինիցի ոգի նորա, ուր Երթայ, կամ*

զինչ գործէ, կամ ուր բնակէ, ի տանջանս եթէ ի հանգստեան: Սուրբն կալևատրատոս ասէ. Որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց, նոյնպէս և մեզ պարտ է յառնել և կալ առաջի աթոռի նորա, և իւրաքանչիւր ոք ի մէնջ պատասխանի տալոց է ըստ գործոց իւրոց, ըստ բարեաց և ըստ չարեաց՝ յաւուրն վճռից խնդրութեանն. իսկ դրախտն պատրաստեալ է արժանեաց իւրոց: Իսկ յորժամ գայ հասանել օր վախճանին ի վերայ մարդոյն, դան հրեշտակք առ մարդն. յորժամ տեսանեն զհոգի մարդոյն թէ արդար է՝ խընդան, և առնուն սաղմոսիւք և օրհնութեամբ և տանին ընդ արևելս, և անցուցանեն ընդ վէց պարսունակս. ընդ շաբաթուան կարիսի և ձեան, ընդ վտակս անձրևաց, և ընդ ամենայն շաբաթուանց տեղիս, և ընդ այս չարութեանն՝ որ են յօդս. և հանեն զնա յեօթներորդ պարսունակին, և կացուցանեն զնա դէմ յանդիման փառացն Աստուծոյ, և երկրպագէ Աստուծոյ յեօթներորդ պարսունակին՝ ի ներքոյ հաստատութեանն. ըստ ժողովողին, եթէ՝ Մարմինն դարձցի ի հող ուստի առեղծաւ, և հոգին դարձցի առ Աստուած որ ետ զնա: Եւ դարձեալ հոգին ի ձեռն տեսլութեան հրեշտակացն Աստուծոյ տեսանէ զդրախտն, և ըստ բարի գործոց իւրոց զհատուցումն, և յուսով հանդերձելոցն զուարճանայ: Բայց առանց մարմնոյ ոչ կարէ առնուլ զհատուցումն. և անդէն լինելով փառաւորէ զԱստուած՝ լուռ բերանով. և տեղիք կայանացն են ի ներքոյ հաստատութեան՝ ի վերոյ քան զարեգակն[1]: Բանզի յորժամ մեռաւ Քրիստոս և էջ ի դժոխս, հոգւովն ծածկեալ զաստուածութիւնն, քանզի անբաժանելի միաց աստուածութիւնն ի մարմնի նոյն և հոգւոյն. և իբրև աւարեաց զդժոխս և ազա-

1. Եթէ արդարև արբոյն Կալևատրատեայ էջ վարդապետութիւնս այս և եթէ գրուած առ նահան գոլցին՝ որ յետոյ յինչ ի կարդի պատմութեանս, և եթէ յայլմէ ուրեք պատահատեալ, և եթէ էր խակ արբոց և հարց ոմանց յաւաջին դարս դնել յայսպիսի կարծիս, այլ և յօդուածոց ոչ էր հաւանելի, որպէս վկայէ առաքն Յուսաբնոս յՒ դարու՝ որ ինքնին խակ վկնպատ էր յայսմ մասին. խակ առաքն ևկեղեցի ոչ ընդունի. և բանք Առաքելոց և գաւանութիւնք մերոյս խակ և այլոց եկեղեցեաց ցուցանեն՝ զի այժմէն խակ վայելեն

տեաց զՀոգիան որ ՚ի բանդի էին, և աւանդեաց զնո-
սա ՚ի ձեռս Հօր, և բնակեցոյց զնոսա յօդս՝ ՚ի նեղբոյ
հաստատութեանդ, ՚ի տեղւոջ որ զերապանցեալ ի
քան զիշխանութիւնս սատանայի և օդոյս չարու-
յըն. քանզի օդային չարութիւնքն պատերազմին վա-
րըն Հոգւոցն, և վասն այնորիկ ՚ի ձեռն Հրեշտակաց
աւանդին Հոգիքն, և ելանեն ՚ի վերապոյման քան զը-
կայանան բանտարկութիւն և զօրաց խրոց: Այդ որպէս
բարի Հոգին ՚ի ձեռն բարի Հրեշտակաց աւանդին,
նոյնպէս և մեղաւորին ՚ի ձեռն չար Հրեշտակաց. և ոչ
ԷԹԷ չար են Հրեշտակք, քանզի չար միայն բանտար-
կուն է, և ՚ի չար կամս նորա Հաւանեալ դիքն. այլ
վասն չարապուծաց մարդկան և աղտեղի գնացիցն՝ և
Հրեշտակք նոցա չար անուանին: Այսպէս իմացարուք.
մի վինուոր առաքի ՚ի Թագաւորէն ՚ի գործ Թուի և
՚ի պատուարութիւն բարեաց և առաքինեաց, և ՚ի
սպանուին և ՚ի տանջուին չարապուծաց. արդ նոյն է
և մի, Հրեշտակք ոմա՝ բարիք, և նոցա՝ չար, վասն գոր-
ծոց իւրեանց. այնպէս և Հրեշտակ բարիք են և մար-
գասէրք, և մարդասիրին Աստուծոյ կամակատար պաշ-
տօնեայք, տուրբք և անարատք: Այդ յորժամ վախ-
ճանի մեղաւորն, առնու զՀոգի նորա Հրեշտակն, և
տանի սգով և տրտմութեամբ, ամաչեցեալ ՚ի գործոց
նորա. յայնժամ գան ՚ի վերայ նորա կաքաւելով օգա-
յին դևքն, պատերազմ յարուցանելով և իւրեանց
անուանելով զնա, ծափ զծափի Հարկանեն և վազեն.
սակայն Հրեշտակն Հարկանելով զնոսա յետս և մեր-
ժելով ՚ի նոսա, անցուցանէ ընդ նոսա, և Հանէ յեօթ-
նեերորդ պարսնակն՝ ՚ի նեղբոյ ջրամած Հաստատու-
թեանդ, և կացուցանէ զնա յանդիման փառացն Աս-
տուծոյ, և երկրպագէ ամօթով առաջի Աստուծոյ,

աւրբք զերանելոյն և զաստուա-
ծառիս կեանս, որպէս և անզիջ
մեղաւորք՝ զաւանջանս. Թէպէտ և
վկայարար Հաստուցումն երկո-
ցուն խոկ լինիցի ՚ի կատարածի
աշխարհիս՝ յարութեամբ մարմ-
նոցն: Ապա ընդունայնք և անբն-
դունակք են պարսանիւք և փեղի

ինայրանոց յիշատակեալք յերկո-
րածին բանսդ, զոր միայն իրրև
առանդ Հնութեան և նախնեաց
Թարգմանութեան Թողեք, որպէս
և զայլսն, շատ Համարելով զազգա-
րարութիւնս՝ յորջորջութեան մեր
և ընդհանրացեալոյ:

*տպէս և գրեալ է՝ի սաղմոսին. Ջամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն և երկիր պագցեն առաջի քո, փառաւորացուսցեն զանուն քո յաւիտեան. և՝ի ձեռն հրեշտակին սեամանէ զտեղի դատաստանին և զհատուցումն գործոց իւրոց, և տրամեալ ազգ հանապազ զկորուստ անձին իւրոյ. քանզի յոյժ համարձակ՝ի մարմնոյն, առաւել իմաստնանայ և սեամանէ զհանդերձեալսն իբրև թէ առաջի աչաց: Բայց մինչև՝ի դատաստանն՝ ոչ վարձս ընդունին հոգիքն և ոչ տանջանս. բայց՝ի գործոցն իւրեանց գիտելով եթէ զինչ ընդունելոց են, և ինքեանք առ ինքեանս խնդան և տրտմին, և առհասուն ձայնիւ օրհնեն զՍուրբ անհոգութեամբ: Բայց արդարքն յոյժ փափագմամբ ցանկան տեսանել զօր հատուցմանն. իսկ մեղաւորքն՝ի գործս իւրեանց հայելով՝ սգան և ողբան, գիտելով թէ որպիսի տանջանաց կրելոց են յաւուրն դատաստանի: Բայց առաւածուստ բարեբարութենէն երկայնմտութենէն և հանդիստ պարգևեալ է երկոցունց կողմանցն մինչև յօրն վերջին յարութեան: Բայց քրիստոնէից մեծ յոյս կայ և յետ մահուան. զի թէ իցեն ուրեք ծնօղք կամ եղբարք կամ որդիք կամ ազգակիցք և կամ քնաւ՝ի քրիստոնէից ևս բարեգործութիւնք, և աղօթս մատուցեն և պատարագս և ողորմութիւնս ետուն իւրեանց, և զառաքս բարեխոս ունելով՝ կատարեն՝ի մեծի հանդիսեան առնել զայն որ ակն ունէր տանջանաց. զի Հաշտն Սուրբ և Թագաւ զմեզ ննջեցեալսդ, ՝ի ձեռս զենանանն Քրիստոսի՝ որ՝ի վերայ սրբոց սեղանոյն զենեալ լինի՝ի փրկութիւն և՝ի կեն դանութիւն և՝ի քաւութիւն կենդանեաց և մեռելոց: Արդ, եղբայրք, մի խաբիք՝ի սիրտս ձեր, եթէ՝ի ժամու վախճանին ընկալաւ արդարն զվարձս արդարութեան իւրոյ, և կամ մեղաւորն զդատաստան հատուցմանն. քանզի զիարդ մարթի այդմ լինել. քանզի մարմինքս մեր աստէն միայն, և հոգին լոկ լինի՝ի յաոաջ սացեալ տեղին. զի եթէ ոչ յարութիւն լիցի և մարմինք մեր՝ի գերեզմանաց յարիցեն և կացցեն առաջի ահաւորատենին, և ընկալցին իւրաքանչիւր ըստ գործս իւր, միթէ հնար էր մեղուցեալ մարմնոյս կրնչել, և հոգւոյն միայն դատել. թերևս պատճառս

յոդևցէ՝ ի մարմինն հանելով զչնաս մեղացն. արդ ոչ արդարոցն հնար է վարձս ընդունել, և ոչ մեղաւորացըն տանջանս, մինչև յօրն այն՝ զորմէ Պօղոս ասէ, եթէ՝ փող հարկանի և մեռեալք յարիցեն ի քրիստոնեայ ականս։ Զի որպէս մեռաւ Քրիստոս, և յարեաւ նոյն անապականն մարմնով. զի ոչ եթէ յետ յարութեանն եղև անապական, քաւ լիցի, այլ ի նմանէ անապական զգեցաւ զմեղուցեալ մարմինն Ադամայ, և զապականութիւնն ընկղմեաց աստուածութեամբն, և նոյնին աստուածացեալ մարմնովն մեռաւ և յարեաւ. որպէս առուգիս լուեալ ուսաւ Ակտոս հաւն իմ յերուսաղէմ՝ ի տուրբ առաքելոցն, որ և աջօք իւրովք եառ զնա ի խաչին, և ի գերեզմանի եդեալ և ի յաղմանէն յարուցեալ. և յորժամ եկն առ աշակերտան ի վերնատունն՝ յորում զիերահաւատութիւնն Թումայի ընդ, եառ զնա Ակտոս հաւն իմ. և յէջս տուրբ Հոգւոյն յաւուրն Պենտակոստէին հաւատաց և մկրտեցաւ ի տրջոց առաքելոցն։ Արդ և ես ի նորա աւանդութենէ ուսայ զայս, և ի տրջոց աւետարանչացն և յառաքելոցն, և յառաջադոյն մարգարէիցն։ Արդ զոր ուսուցանեմն ձշմարիտ աւետ ի Քրիստոս և ոչ սուտ, զի որպէս յարեաւ Քրիստոս՝ և մեք յարիցուք նոյնին մարմնով անապական, և կացցուք առաջի բեմին Քրիստոսի, և վայելեցուք յիւրաքանչիւր գործոց պտուղս, արդար և անաչառ հատուցմամբ բըն Քրիստոսի։ Այլ և զայս ևս ծանուցանեմ ձեզ, եղբարք, զի յորժամ ի մեռելոց յառնեն, այնուհետև ոչ է քաւութիւն և կամ թողութիւն մեղաց, և ոչ բանիւ թեհաուութիւն, քանզի փակի դուռն արքայութեանն այնոցիկ՝ որք ոչ մտին առաջի ի մարմնի։ Նակ այնուհետև զայս առնեն դիտելով, եղբարք, նախանձաւորք լինուք գործոց բարեաց, և փութայուք մտանել յառաջ քան զփակել դրանն։

Պատասխանի ետ Դամետիանոս և ասէ. Զինչ ասես, տէր իմ Կալիստրատէ. իսկ ապա որ մեղանչեն՝ յայսմ աշխարհի առնեն ի գատին, և ի առնուն զհատուցումն աստ, այլ առնեայն անդ միայ՝ գատաստանին աւուրն։ Սուրբն Կալիստրատոս ասէ. Այսուաճ երկայնամիտ է և բազումողորմ, ոչ կամի զմահ մեղա-

ւոլի ու զղջանայ ՚ի վերայ մեղաց իւրոց, և ծանուցեալ զայնցանս իւր խոստովանեսցի և անկցի պաղատանօք առաջի Աստուծոյ, լացցէ և առասցէ արտի մնօք. Աստուած, քաւեա զմեղաւորս, և այնուհետև արդարապարծութենէնս արասցէ. Թէպէտ և բազում իցեն մեղքն, կարող է ջնջել ՚ի ձեռն աղօթից և պահոց և ողորմութեան. Թողու նմա բարեգութն Աստուած, որ անոխակալն է, որ կամի զի ամենայն մարդ կեցցէ և ՚ի գիտութիւն ճշմարտութեանն եկեսցէ: Այլ եթէ ոք շաղախեսցի ՚ի մեղս բազում յոլով ժամանակս, հայհոյեսցէ զԱստուած, յափշտակեսցէ և զրկեսցէ զտրթա և զայրիս հեղձուսցէ, տատ երդնուլով և անգամանելով, վաշխս և տոկոսս յաւելուլով, և յանխրատութենէն մեծանայցէ և գանձեսցէ իւր կորուստ, ՚ի վերայ այսր ամենայնի և ՚ի հնութիւն շաղախեսցի, և յաղտեղի պղծութիւնն պէսպէս պատնըկութեանց. իսկ մարդասէրն Աստուած հայեցեալ ՚ի նա եթէ յերկար կարելով յապաղէ ՚ի վերայ չարեաց իւրոց, յայնժամ տացի նմա յիշատակարան չարեաց իւրոց, կեա անդարձ լինելոյ ՚ի չարեացն, և կեանք այնպիսւոյն կորնչեն և եղիցին ՚ի յափշտակութիւն, և մարմինք նորա ապականեսցին, և միայն զչար գործն առեալ չարաչս եղեալ ՚ի կենդանութենէ, ոչ յիւրում երկրի թաղեալ. ոչք նորա եղիցին ՚ի յափշտակութիւն, և կեանք նորա անհետ եղիցին: Այս բարժին պերճացելոցն ՚ի մեծութիւն իւրեանց որ յանխրատութենէ, ոչք ոչ գնացին ըստ պատուիրանացն Աստուծոյ: Իսկ եթէ աղքատ իցէ և ՚ի նոյն չար ձանապարհ գնասցէ, աշխատի չարաչար թշուառասցեալ լի մեղօք ՚ի կեանս իւր, և ոչ լինի նմա գործակից աստուածային զօրութիւն. քանզի ատէ Աստուած զչարագործս՝ որ ոչ դառնան ՚ի չար ձանապարհաց իւրեանց. և գտանի այնպիսին վերկալեալ ՚ի մեծութենէ և ամենայն բեաց կենդանեացն, այլ և հարկաւոր պէտք մարմնոյն ոչ յաջողի նմա: Եւ եթէ յերկարեսցի ևս յողորմել կեանս իւր, և ոչ պարապեսցի աղօթից և գործեսցէ զարդարութիւն, եղկելի է նա քան զամենեսեան. զի վաղվաղակի հասանէ նմա վիշտք և տառապանք անհնարինք, նեղութիւնք անմխիթարելիք, և ամենայն

պատճառք կենցաղոյս ոչ յաջողեցի նմա. այլ ցմոլք
և հոգք և այլ ևս բազում աշխատանք պատահեն
նմա, և ծախեն զմտալին նորա ելբև վիժ, և ելբև
զքարթ ծծեն զարիւն նորա. և՛ ի գարշելի ցաւս ան-
կանի, յուրկութիւն և՛ ի բորոտութիւն, և ցանկացի
զէթ աւուրն պարենի և ոչ գտցէ, և աճեցայն ատելի
և արհամարհելի լինի, ծառը և այգին, գարշանք և
կատականք տեսողաց. ոյոգայթք եկեսցեն նմա ուստի
ոչ գիտիցէ և պատահարք անակնեսնելիք. բազումք
իսկ անձանց առնեն զաւ, և անողորմ խողխողեն զին-
քեանս՝ սակս անհանդուրժելի ցաւոցն, և չարապէս
ջնջի յիշատակ նորա՛ ի կենցաղոյն երեմն: Այս լինի
աղքատի՝ որ՛ ի պէտս մեղս շահախի, և ոչ զգու-
շանայ պատուիրանաց Աստուծոյ: Բայց է և այլ ինչ
երկոցունց կողմանցն՝ որք յաղքատութեան և՛ ի մե-
ծութեան կեան չարագործութեամբ. զի թէ ատ
նելոյ աղնուագոյնն Աստուած և բազմժամանա-
կեայ առատութեամբ, և ըստ պատշաճի յաձախ
յաջողութիւն ընծայէ յամենայն կողմանց, առողջու-
թիւն մարմնոյ, անդոյ քաջապատրաստութիւն, անեանց
շահեկանութիւն, յարգանք և մեծարանք՛ ի մեծա-
մեծաց և՛ ի փոքունց, և ամենևին անհոգք յերկար և
փառաւոր կեանք, ծերութիւն շքով և պատուով՛ ի
փառս և՛ ի գովութիւն, և վախճան երանելի, և թա-
ղումն մեծ և երևելի. և արդ որ յայսպիսի կեանս
կեայ, և ոչ գնայ՛ ի պատուիրանս Աստուծոյ, որ լոյս
են և լոյս տան աչաց, և զամենայն ժամանակս վայրե-
նաբարութեամբ և խոտորելի գործովք պղծեացէ
զինքն, և ոչ գոհասցի զԱստուծոյ և փառաւորեսցէ զնա
բարի գործովք, և ծանիցէ զտուիչն բարեաց, և եր-
կիցէ՛ ի նմանէ, որպէս արժան և օրէն է, այլ յար և-
րախտահատոյց լինի Աստուծոյ, և ընտրեալ բարիս
յԱստուծոյ արժանս իբր հանարեցի, ապի ինչ ուրա-
խասցի այնպիսին, քանզի առաւել տանջելոյ է՛ ի պե-
հենին, քան մեծատանն որ լուաւ յԱբրահամէ, թէ՝
Ընկալար զբարիս քո՛ ի կեանս քո, և վիշ մեծ է ընդ
մեզ և ընդ ձեզ: Ա՛յլ և Դաւիթ ասէ. Հաստ դրա-
ցեաց մերոց եօթնապատիկ՛ ի ծոյս նոցա՝ զնախատինս
իւրեանց զոր նախատեցին զքեզ, Տէր. և դարձեալ.

Տեսի զամպարիշան վերացեալ բարձրացեալ որպէս զմայրն Լիբանանու. անցի՝ և ոչ էր, խնդրեցի՝ և ոչ գտաւ տեղի նորա. զի կատարումն նորա Հայի յատաւկն է ժողովոց, ըստ առաքողին: Այս է բաժին ամենայն մարդոյ մեղաւորի, եթէ մեծատուն իցէ եթէ աղքատ. որ վայելեսցէ՛ի բարիսն Աստուծոյ, և ոչ արասցէ ըզկամն նորա: Այլ և կայ վասն նոցա Հարուածք՛ի վերոյ աշխատին, կամ յարձակումն թշնամեաց կամ մահտարաժամ կամ սով կամ կարկուտ կամ այլ պէսպէս Հարուածք վասն մեղաց Համօրէն մարդկան, որպէս ջրհեղեղն և հուրն Սոդոմացւոց: Գանգի յորժամ բարկացուցանէ մեղաւորն զարարիչն իւր՝ յայնժամ աստուածային յաւուրն գան՛ի վերայ նորա, իբրև ականջ յաշխարհութիւն մեղաց:

Եւ արդ քանզի դուք նորահաւատք էք և ոչ էք ընթերցեալ զԳիրս տերեաս. քանզի կայ՛ի գիրս Թագաւորութեանն վասն Աքաաբու և Նզաբելի, վասն զի նոքա աստիկ բարկացուցին զամենեցուն արարիչն Աստուած, կռապաշտութեամբ և զրկմամբ և յափըշտակութեամբ. զմարգարէս նորա սպանանէին, զսեղանս նորա կործանեցին, մի միայն մարգարէ մնաց՝ Հեղիաս անուն, նահանձեցաւ վնասանձ Աստուծոյ ամենակալի, և աղօթիւք իւրովք սանձեաց զքնութիւնա տանց՝ զի մի տացէ անձրեւ, և արգելաւ ցօղ յերկինից, զի ցայս երկրի մի երևեսցի՛ի բնութենէ իւրմէ. քանզի բանն Աստուծոյ եղև և զահմանս յափշտակեցաւ զԳիրս տեառն Աստուծոյ և ինքն Հուր յերկինից, ընթերցեալ զԳիրս տերեաս. քանզի կայ՛ի գիրս Թագաւորութեանն վասն Աքաաբու և Նզաբելի, վասն զի նոքա աստիկ բարկացուցին զամենեցուն արարիչն Աստուած, կռապաշտութեամբ և զրկմամբ և յափըշտակութեամբ. զմարգարէս նորա սպանանէին, զսեղանս նորա կործանեցին, մի միայն մարգարէ մնաց՝ Հեղիաս անուն, նահանձեցաւ վնասանձ Աստուծոյ ամենակալի, և աղօթիւք իւրովք սանձեաց զքնութիւնա տանց՝ զի մի տացէ անձրեւ, և արգելաւ ցօղ յերկինից, զի ցայս երկրի մի երևեսցի՛ի բնութենէ իւրմէ. քանզի բանն Աստուծոյ եղև և զահմանս յափշտակեցաւ տեառն Աստուծոյ և ինքն Հուր

և կոտրեաց զսուտ մարգարէին Բահաղու՝ ուժ հաւրինբ և յիսուսայր, և ցածոյց զբարկութիւնն. և ապա բացաւ դուռն ողորմութեանն Աստուծոյ՝ ի վերայ աշխարհի: Իսկ այսպիսի հարուածք վասն մեղաց մարդկան լինին. քանզի խրատին՝ Թէպէտ և ոչ իմանան. զի ոչ առնէ Աստուած անպատրաստ զամպարիշտս՝ զի արդար է և հզօր, և ոչ առժամայն կորուսանէ. զի ողորմած է և երկայնամիտ, ներէ՝ ի վերայ չարեաց մարդկան, զի Թերևս դարձցին յապաշխարութիւն: Իսկ որ անդառնալի ճնան՝ ի չարին՝ կորուսանէ բնաւին, իբրև զՈրբոամ և զԲաասա և զԱքաաբ, զԹագաւորան Իսրայէլի, որք ապիրատ ընդհեցան անարգութեամբ: Իսկ որ դառնան՝ ի չարեաց և ապաշխարեն՝ Թողութիւն ընդունի, իբրև Մանասէի Թագաւորի Յուդայ, և Նաբուգոդոնոսորայ ազգային Բաբելացւոց: Իսկ որ նախատէ զԱստուած՝ կորուսանէ զնա Աստուած. իբրև զԱենեքերիմ և զՆաւոքոդոնոսոր զԹագաւորն Ասորեստանեայց: Արդ այսպէս խրատէ Աստուած, զոմանս աստ, և զոմանս՝ ի հանդերձեալսումն: Եւ արդ մեք, եղբարք, հետևեցուք առաքինութեանն՝ զի փառաւորեցուք ընդ Քրիստոսի աստ և՝ ի հանդերձեալսումն:

Պատասխանի ետ Աբեաոս[1] և ասէ. Ես իմ կայ Լաստրաոս, ըստ Թուոյ աւուրց վախճանէ Աստուած զաշխարհս՝ եԹէ ըստ հանդիպմանն. և կամ, զի՞արդ յանկարծակի մեռանին մարդիկ կամ՝ ի ծովոյ կամ՝ ի ծառոյ կամ՝ ի ծովու կամ՝ ի գետոյ կամ՝ ի հրոյ, կամ յայլ պատահարաց հրաժարեն կեանք մարդկան, կամ ընկեր զընկեր սպանանէ, կամ՝ ի դիւէ կամ յանկարծակի մեռանի. արդ իբրև մեռանի մարդ կամ՝ ի մանկութեան կամ՝ ի ծերութեան, լցեալ լինի օրաԹիւն, և կամ այնք որ՝ ի պատերազմունս անկանին. քանզի ահաւանիկ բազումք անկան՝ ի զօրաց մերոց՝ ի պատերազմին Պարսից: Սուրբն Կալիստրատոս ասէ. Ուսարաք և վասն այդորիկ, եղբարք. քանզի՝ ի սկզբանն աստ Աստուած ցԱդամ. Հող էիր և՝ ի հող դարձցիս. և նոյն ժամայն էլ հրամայեաց մահու՝ ի վերայ ամենայն մարդկան՝ ի ծննդենէ մինչև՝ ի ծերութիւն. և ոչ է-

1. Ալ օր. Եաբէթոս:

թէ՝ ի բնութենէ, որպէս և այլ կշռաւածք կարկեալ
են անախալ, եթէ այսպէս է և մահ. այլ սորա պի-
տութենն միայն՝ ի ձեռս Աստուծոյ է, որ տէրն է կե-
նաց և մահու. և ոչ եթէ կարկեալ է, որպէս առաջի,
ամենեցուն հատանել՝ ի ծերութենն. զի բազում ան-
գամ հայր՝ ի մանկութեան մեռաւ, և որդիքն՝ ի խո-
րին ծերութենն հասին. և որդիքն՝ ի մանկութեան
հարցն առաջի մեռան, որպէս՝ ի սկզբանն եղև. զի Ա-
դամ եկաց ամն ինն հարիւր և երեսուն, և Սէթ որ-
դի նորա՝ ինն հարիւր տասն և երկուս. իսկ միւս որ-
դին չև ևս հասեալ՝ ի հարիւր ամ, սպանաւ՝ ի Կայե-
նէ եղբօրէ իւրմէ: Այլ մահ սահմանեալ է. այլ են
որ երկարակեացք լինին վասն արդար գործոց, և է
որ կարձէ Աստուած վասն առաւելութեան մեղաց.
է որ արտաստաց ողորմի և յաւելու՝ ի կեանս, որպէս
Եզեկիայի, և է որ այրեաց և որբոց աղօթիւք՝ յա-
ւելու, և է որ ծնօղաց վասն որդւոց արտաստաց, և
որդւոց՝ վասն ծնօղաց դարձուցին՝ ի մահուանէ. և
բազում աշխարհի պիտոյից յաւելու՝ ի կեանս մարդ-
կան, յաւելու և պակասեցուցանէ: Այլ և հարուածք
մահու գան վասն մեղաց, երբեմն սրով, երբեմն հրով,
երբեմն ջրով, և այլովք հարուածովք և պէսպէս ցա-
ւովք: Այլ եթէ ոք հակառակի՝ եթէ այր և կին է հա-
սեալ օրն ոչ մեռանի, և սակս այնորիկ լինքնին կա-
րծեն մտանել՝ ի ծով մրրկեալ, կամ՝ ի գետ յարու-
ցեալ, կամ՝ ի լեառն բքացեալ, կամ՝ ի դաշտ տապա-
ծեալ, կամ՝ ի մէջ գաղանաց, կամ՝ ի վիհս անդնդոց
ընկեալ, և այլ ամենայն հարուածք՝ ի մահ ածեալ
կեանս մարդոյ, վասն այնորիկ Տէրն ասաց. Յաղօթս
կացէք՝ զի մի ընկնիք՝ ի փորձութիւն. զի պարտ է յա-
ճեռնայն ժամ յաղօթս կալ անձանձրոյթ և ասել. Մի
տանիր զմեզ՝ ի փորձութիւն, այլ փրկեա՝ ի չարէն,
վասն զի քոյդ արդարդ՝ ի չարէն լինիմք. զի՝ ի քո-

վանգական կեանս մեր դնէ զորագլխի մահու, ՚ի պեառս, ՚ի ծովս, ՚ի լերինս, ՚ի դաշտս, ՚ի հուր, ՚ի մարդոյ չա-րէ, ՚ի յինքեան խեղդմանէ, ՚ի նեղլստուԹենէ, որպէս Յուդասայ և Սգիտոփէլ. և յայլ ևս բազում դնէ զորագլխիս մահու, և լինի մահն՝ յորում ըմբռնեցաւ՝ օրհաս: Բայց պարտ է առ ՍատուածՅ յաղԹել կալ հանապազ՝ զի պահեցէ ՚ի չար պատահարաց, և ընդունելոյ վախճան բարի: Գոն և այլ մահք, Թէ զորմովք քար ընկենոյի առ ՚ի չգիտելոյ, կամ ՚ի ծառոյ, կամ ՚ի ձիոյ, կամ եզն հարկանէ, կամ երԹայ ՚ի վերայ սուսերի, կամ գազանի պատահէ, կամ օձ խածանէ, և լինի չար պատահարք. և այս վասն այնորիկ լինի՝ զի հպարտանայ մարդ ՚ի զօրուԹիւն անձին իւրոյ, և ՍատուածՅ Թողացուցանէ զնա օգնականուԹիւնն, և նա ծաղրելոյ եղեալ՝ պատահէ առնեայն մահաբեր որոգայԹիւ. վասն որոյ պարտ է արԹուն կալ և աղաչել զՍատուածՅ. զի որ աղաչէ զՍատուածՅ բարերով սրտիւ, լինի նմա բարւոյ պատճառք որոգայԹին, ըստ Պօղոսի, Թէ՝ Սրսացէ ընդ փորձուԹեանն և զելն, զի համբերել կարասցուք: Սրդ ոչ գիտաԹիւնն լինչ նախատես ևս կայ սատանայի, այլ սակաւ լինչ գիտէ զժամ մահու մարդոյն. ԹէպԷտ և գիտէ՝ հանապազ կայ ՚ի չարի մարդոյն. և եԹէ ոչ ժամանէր ողորմուԹիւնն Սատուածոյ առնեայն մարդոյ, կորնչեսցէր զամենեսեան առ հասարակ. և վասն այնորիկ ասէ Տէրն. Զգոյշ լերուք, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտուԹեամբ և արբեցուԹեամբ և հոգովք աշխարհականօք, և յանկարծակի հասանիցէ ՚ի վերայ ձեր օրն այն, զի իբրև զորոգայԹ հասանիցէ ՚ի վերայ ամենեցուն որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի: ՍրԹուն կացէք և յամենայն ժամ աղօԹս արարէք, զի արժանի լինիցիք զերծանել յայնմ ամենայնէ որ լինելոցն է և կալ առաջի որդւոյ մարդոյ: Սյլ պատերազմաց մահ յայտնի է և ոչ ՚ի ծածուկ, զի ամենայն որ սուր առնու և երԹայ ՚ի պատերազմ՝ կամ տպատանէ կամ մեռանի, այլ եԹէ ամբողջ ինայ՝ Սատուածոյ նախախնամուԹիւնն պատահէաց: Սրդ ամենայն ժամանակ կենաց մարդոյն օրհաս է, և ամենայն որոգայԹ դիպի նմա ՚ի կենդա-

նուէիեան իւրում. և եթէ խոնարհի մարդն և անկա-
նի առաջի Աստուծոյ՝ փրկի՛ւ նոցանէ. զի Թէպէտ և
մարմինն զիւրն պահանջէ, սակայն հոգին խնդալով
երթայ առ արարիչն իւր, ըստ որում օրինակի յառա-
ջադոյն ասացի:

Ա՛յլ մեք, եղբարք, հաստատուն կացցուք, քանզի
հաւատամ՛ի Քրիստոս եթէ յուսով նորա ամենայն
հնարագիտութեանց բանաստիւնն յաղթեացուք, և
առցուք զինչսանակ յաղթութեան: Լուարուք ինձ, եղ-
բայրք իմ, եթէ դէպ լինիցի ինձ յառաջադոյն վախ-
ճանել, և քանզի դուք հաւատարիմք էք, կամիմ զի
գիտիցէք, զի բազում անգամ մարտեաւ ընդ իս սա-
տանայ՛ի մանկութենէ իմմէ. բայց յուսամ՛ի Տէր
եթէ այժմ յաղթահարեցի չինէն. զի յոլով տուեալ
է իմ ոգւոմնութիւն, պերճանայի՝ իբրև թէ զա-
մենայն աշքայութիւն ստացեալ եմ: քանզի յորժամ
առնէ մարդ ոգւոմնութիւն, ոչ ասէ թէ յոյմէ եաւ ինձ
Աստուած՝ յայնմանէ կարկառեսցի, այլ իբրև թէ զնա
ինչ տուեալ հպարտանայ, ասելով թէ մեծ ինչ գործ
գործեցի, մանաւանդ զի հրաման ունիմք գարման
առնել աղքատաց. այլ մեք այնպէս ասացուք, զի զոր
առնէ աչն, մի գիտասցէ ձախն, այսինքն՝ զբարւոյ կող-
ման արգասիս՝ մի կողոպտեսցէ ձախակողման բանա-
կիսն: Իսկ դուք զգոյշ լերուք, սիրելիք, զի այս
ամենայն՛ի բանսարկուէն է, զի ամենայն բարեաց
հակառակ է. քանզի բազում անգամ հնարեցաւ գո-
ղանալ զինաս իմ: յորժամ աւետանէր զի արտասուօք
աղաչէի զԱստուած օգնական լինել, զբազեցուցանէր
զինաս իմ: քանզի յայնժամ յուզելով զամենայն հո-
գս կենացս արկանէր՛ի միտս, և յորդորէր՛ի յոյսդ
մունս. իսկ ես արհամարհեալ զայն, վասն որոյ ոչ կա-
րաց գողանալ ընդդիմացողն. և քանզի ոչ միայն որ
յեկեղեցիս սաղմոսեն և աղօթեն՝ զայն միայն հաճարի
Աստուած, այլ և զբայլ ոսկոյ և զնոտ գարշապարաց
ոչք մտանեն ամբողջ հաւատով՛ի տաճար Աստուծոյ՝
հաճարի Աստուած. և զոր ինչ կամի խնդրել մարդն՝
յառաջագոյն գիտէ, և շնորհէ զինդրուածսն որ ըստ
կամաց նորա լինին. և ուր ուրեք լոյծ մարդ և ծունր
դնէ և խնդրեսցէ բոլորով սրտիւ իւրով՝ ասէ Աստուած

որ տալոյն է, և չետուիվ զինդրուածոն. քանզի Թէ ասես՝ Ողորմեայ ինձ Աստուած, գիտէ որպէս ասացեր, և զպատակեալս ձայնիցն Հանդէպ: Նակ ուրեմն, սիրելիք, ոչ ինչ շահի Թշնամին՝ յորժամ կամի յաւիշտակել զինուս մեր, և խորհուրդս բազմապիսիս արկանէ ընդ աղօթիցն: Նակ զայս ամէն որ ոչ գիտէ՝ի մարդկանէ, եՀԹէ մարդ՝ի մեզ անդանդաղ է և անաչխատ, և փոյթ՝ի յանցանս. նակ՝ի յաղօթիցն Թուլացեալ ծուլանայ և լուծանի, և ձանձրացեալ նիրհէ, և կարծէ Թէ բնութեանն են կիրք և ոչ բանսարկուին գիւտք: Այլ զայս իմացարուք, եղբարք, զի այն ամենայն՝ չարին են ազդմունք, յորոց պարտ է փախչել, և մտադիւր մընել աերմնեՀեամբ փառաւորել զԱստուած՝ որ արար զերկինս և զերկիր, զծով և զամենայն որ է՝ի նոսա:

Պատասխանի ետ Կիւրիմաքոս և ասէ. Ստրպարձեր իմ Կալիստրատէ, զերկինս և զերկիր, զծով, զլուսին և զաստեղս Աստուած արար: Սուրբն Կալիստրատոս ասաց. Ո՞չ ասացի ձեզ Թէ մինչդեռ ունիք կամ աղօթէք՝նիրհէք. ոչ՝ի միտ առէք զոր յառաջն ասացի՝ի Հարցմանէ եղբօրն Բեմարքոսի: Բայց աղէ դուք ասացէք. զինչդ ունայք՝ի Հարցն ձերոց, կամ զինչ պաշտիք զձեռագործն զոր աստուածս անուանէնէք: Պատասխանի ետուն Կիւրիմաքոս և ասէ. Մեք այսպէս ունաք, Թէ երկինք ինքնին եղեալ են, այնպէս և երկիրս, և արեգակն աստուած է աստուածոց, զի նա ամենայն լոյս. և աստեղք՝ պատկերք աստուածոց են:

Սուրբն Կալիստրատոս ասէ. Ունարուք և վանն այդպիսիկ, եղբարք, զի մի գայթակղեցուսցէ զձեզ աստանոյ. այս ամենայն որ տեսանելիքս են, երկինս՝ երկիր՝ միայնոյն՝ անակզբանն՝ անեղին՝ արուեստ Երրորդութեանն՝ և միայնոյ աստուածութեանն ստեղծուած է, քանզի նա հինեցոյց զերկինս և զերկիր. զի զերկինս ձգեաց իբրև խորան և պրկեաց զնոսա իբրև զխեցիս, և զհաստատութիւն ջրայարկ պղպջակին՝ հաստատեաց բանիւ իւրով՝ կամարաձև իբրև զգունդ բոլորին, և զերկիր՝ի վերայ ջուրց կացոյց, և զջուրս՝ի վերայ ոչնչի. և երկիր գոլով և սարսեխ կիրեսաց նորա. քանզի զպատատուածս հաստատութեանդ և՝ի վերայ անհուն լայնութեան յորձանացն Ովկիանոսի,

որ ընդ ինքեամբ ունի զամենայն տարերս, զվերինս և զներքինս, նմանապէս և զաստեղս՝ արար և եդ՝ի կամարձև հաստատութեանդ՝ի լուսաւորութիւն գիշերոյ։ Իսկ արեգակն անդադար իմն հրամանաւ տարեկ զընթացս իւր. քանզի եւանէ՝ի կողմանէ դըրանցն արևելից, և գնայ ընդ հարաւ թաւալմամբ իբրև զանիւ, մինչև գայ հասանել յարևմուտս. և մըտանէ ընդ դրունս արևմտից, և այնուհետև տարըրա-նայ խաւար՝ի վերայ ամենայն երկրի ձգմամբ գիշերոյ. և մեռեալ՝ի ներքոյ անհուն աղխից հարաւոյ՝ առ հաստատութեամբն ներքնով, ընթանայ ընդ աջակողմ՝ մինչև գայ հասանէ՝ի դրունս արևելից, և ծագէ զխաւարն լոյս արեգական։ Նոյնպէս և լուսինն կատարէ զընթացս իւր նոյնիսկ օրինակաւ. ամէ և պակասէ՝ մերձենալով յարեգակնն և հեռանալով յերեսաց ժամանակի։ Եւ զիարդ ձշմարիտ է ուսումն ձեր՝ թէ աստուած է արեգակն. եթէ աստուած էր՝ զիարդ հնազանդէր հրամանի և ծառայէր մեզ. կամ զիարդ ընդ կարեօք անկեալ, երբեմն ամպով ծածկի և երբեմն խաւարի. նմանապէս և լուսինն, նոյնպէս և աստեղք լուսոյ հրամանին զընթացս կատարեն. նոյն օրինակ խաղան յարևելից և գնան մինչև՝ի մուտս արեւու, և դառնան ընդ աջակողմ հիւսիսոյ՝ ոչ մուտ ներով ընդ դրունս երկնից, այլ ինքեամբ՝ի հաստատութեան շրջելով՝ զամենայն ընթացս տունջեան ըստ իւրաքանչիւր կարգի կատարեն, մինչև հասանեն յարեւելս ընդ հարաւ, որով երևին մեզ շաւիղք գնացից նոցա։ Բայց բազումք առասպելաբանեալ ասեն զերկինս ինչ մեծ շրջանակին, որոյ ընդունայն են բանքն. քանզի անշարժ է հաստատութիւնն, այլ բազումք յաստեղաց ընթանան շուրջանակի. և կէսք զեռաստեղաք՝ զիւրեամբք շրջեցուցանեն զաստեղս, որպէս հիւսիսային աստեղքն, որ յոմանց ալքաստրս կոչին, իսկ յոմանց հեփտաստղրոն, իսկ յերկրագործաց՝ սայլ, և՝ի նաւավարաց բազմոյն, քանզի ոչք այլափոխին՝ի գնացս, այլ անդէն շրջանակին։ Բայց այլ աստեղք ժամանակ ինքեանց ունելով՝ գգնացս կատարեն. որպէս արուսեակն և մոգարոյնն և ալաւաստնքն և հայկն, իւրաքանչիւր ժամանակին ծառայեն՝ որպէս կար-

պեցան. որպէս և գրեալ է. Ձլուսին և զաստեղս զորս դու հաստատեցեր. իսկ հաստատութիւն ասելով մարգարէն, ոչ ևթէ զի անշարժ կացեն՝ ասէ զանշարժութեանէն, այլ հաստումն կոչի, զի անյաղթ հրամանն անսխալ ծառայեն առաջի ւրբեանց Աստուծոյ: Եւ արդ, եղբարք իմ՝ի քաց ընկեցէք զընդունայն վարդապետութիւնն, զի զամենայն արարածս Աստուած արար. և պատուեաց միայն զմարդն պատկերաբար իւրով, և զամենայն ինչ հնազանդ արար՝ի ներքոյ ոտից նորա. և արժան է մարդոյն Քանաչել զինա, զի վանդորա ամենայն արարածք յոչընչէ հաստատեցան. վանդորա արեգական անսխալ ընթացքն կատարէ, և լուսին զընթացս իւր ըստ հրամանին իւրոյ. վանդորա ամենայն ծերք աստեղաց կարգեցան, զորս ընդունայնախոհքն աստուածս անուանեցին, և կենդանեաց անուանս՝ի վերայ եդին, որպէս խոյն և ցուլն, այծեղջիւրն և կոյսն և լուծն և որ ասցին նմանք են. ուստի և հարցմունս ինչ առնեն, և զլուծիւն և զսուլ՝ի նոցանէ առնուլ խոստանան. այլ և բախտս և սահմանս կենաց մարդկան նոքօք ասեն լինել, զի խաբեցեն զմարդիկ մեծի բանիւք. այլ նոքա կարգեալ են ժամանակաց յայտնիչք և՝ի նշանս Հանապարհին նաւորդաց ծովու: Վասն մարդոյ գետք և աղբիւրք, և ամենայն ծաղիկ խոտոյ և անկոյ՝ բանիւ երևեցան՝ի վերայ երկրի, և մարդն միայն՝ի վերայ երկրի պատուեցաւ պատկերաւ անմահին և բարեբարին Աստուծոյ արարչին իւրոյ. և հաւանեալ պատրանաց, անկաւ ընդ մեղօք և եղև մահկանացու, և չարաբարոյ արուածոյիւքն, ստուտ և ընդ վայր փողաքշանօքն: Եւ արդ, եղբարք, մեծ ջան է՝ի վերայ երկրիս այսոցիկ ապրեցուցանել մարդոյ զանձն իւր: Բայց մեք Հնազանդութեամբ առնուլ զնշան յաղթութեան՝ի պատերազմիս ուր է կռիւ բանաւորիւն, և ընդդիմացուք քաջապէս չար մարտնչողին, և յաղթող գտեալ անօրինէն գոռոզին, և նա պարտեսցի՝ի մէնջ անկանդնելի բեկումամբ, և մեք զերծեալք՝ի խաբէութենէ կենցաղոյս՝ ընկալցուք զանեռատես փառսդ պսակն՝ի Տեառնէ մերմէ և փրկչէն Յիսուսէ Քրիստոսէ, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ իբրև ասաց զայս՝ լռեաց ՚ի խօսելոյ, քանզի ե-
րեկոյ էակ էր, և զգիշերն բազմադակ յաղօթս եկաց
մինչև յառաւօտն: Բայց էր ումն ատենական զգիր,
նեղել մերձ ՚ի բանդն, մատուցեալ խօսից սրբոյն Կա-
լիստրատոսի և նշանագրելոյ ՚ի քարտիսի՝ եւս մեզ. և
մեք կարգեցաք ձգմարտիւ զպատմութիւնն խտրդրոյս:
Եակ ՚ի վաղիւն նստեալ զօրավարն Պրեսինտիոս յա-
թոռ դատաստանի, հրամայեաց զնոսա ածել առաջի
իւր. և ածին զնոսա ՚ի մեծ հրապարակն, յորում
կանգնեալ կային բազում պատկերք կռոց. անդր ժո-
ղովեցան և զկնատուրք զօրուն և ամենայն թիւ զօրա-
կանացն: Զօրավարն ասէ. Ձինչդ է, Կալիստրատէ,
խրատեցեր զքեզ և զհրապուրեալսդ ՚ի քէն զզօրա-
կանսդ թողուլն, զոհել աստուածոցն և հրաժա-
րել ՚ի տանջանաց: Սուրբն Կալիստրատոս ասէ. Ես
վասն իմ զայս հաստատեալ ունիմ պատասխանի, զի
ոչ ինչ հաւանեցուսցէ զիս հեռանալ ՚ի Քրիստոսէ
յուսոյն իմմէ. այլ վասն զոցա՝ ինքեանք եակ հասա-
կալից են, ցդոսա հարց: Զօրավարն ասէ. Դուք զինչ
ասէք, որ պատրեալ հաւանեցայք շաղակրատիդ այդո-
րիկ: Պատասխանի եառուն և ասեն. Ո՛ անարժան դո-
և անուանի. եթէ կամեցիս ունել զմեզ ՚ի գնդի հա-
մարու՝ ոչ ընդդիմացուք. բայց վասն պաշտամանս մե-
ծոյ, հաւատամք ՚ի Քրիստոս երկինի և երկրի, յՈ-
րում ամենայնի, և ՚ի ծնունդն նորա Յիսուս Քրիս-
տոս և ՚ի սուրբ Հոգին, զի նա է Աստուած երեքեան
Ճնակաւն, Երկրորդութիւն և մի աստուածութիւն և մի
զօրութիւն, անարատին այնմիկ և իմաստոյ, որ էն և
է և կայ յաւիտեան, որպէս ուստի մեզ վարդապետեաց
մեր Կալիստրատոս: Եակ նա հրամայեաց տանջել զնո-
սա դաժան դառապանօք. և յետ տանջելոյն՝ հրամա-
յեաց կապել զոսա և զձեռս նոցա, և քարշել զամե-
նեսեան ՚ի լճակն, և ասէ ցնոսա. Ցոհեցէք աստուա-
ծոյն, ապա թէ ոչ հեղձնոյք ՚ի ջուրսդ: Եակ նոքա
ասեն. Մեք հաւատամք ՚ի Քրիստոս Աստուած, զոր
զինչ կամիս արա: Եակ իբրև հանդերձեցան անկանել
՚ի մեծ լիճն, որոյ անուն էր Ովկիանոս, սուրբն Կա-
լիստրատոս եկաց յաղօթս ասելով. Աստուած յաւի-
տենական որ անհատդ ես և ամենակալ, որ հաստա-

սեյեր զերկինս իշխանութիւն ամենայն քո անշարժ յաւիտեան, և զերկիր՝ ի պատուանդան ոտից քոց. նայեա՛ ի հօտս այս, և լեր ընդ մեզ. և տպերցո զմեզ յապականութենէս, և շնորհեա սոցա զքուրս զայս՝ ի սկզբան վերստին ծննդեանն. արժանի արա լուա նալ զլուացուածն յաւիտենական և սուրբ, ի քոց ընկենուլ զհին մարդոյն զընդունայնութիւն, և զգեցուցանել զնորոգութիւն, և զաժխն առնուլ ընդ աշխատեցոյն՝ ի խաչ քո. պարգեւեա մեզ, Տէր, հասանել՝ ի շաբաթարանս քո, ի ձեռն լուացմանն այսորիկ, ի զօրձակցութիւն գոլով մեզ Հոգւոյդ քո սրբոյ՝ ի քուրս այս. զի փառաւորեալ է անուն Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա իջցէ սարկաւագն միաբան զամէնեսեան, ընկենոյն զնոսա կապեալս՝ ի ջրակայն. և նոյնժամայն լուծանի կապանք սրբոցն, և գնացեալ՝ ի վերայ ջուրցն ելլեն՝ ի յաւազանն՝ պայծառացեալ՝ ի շնորհաց Հոգւոյն սրբոյ: Իջրև ելլեն՝ ի ջրոյն, եկն ձայն յերկինից և ասէ. Քահանայապետութիւդ, սիրելիք իմ, զի ես ընդ ձեզ եմ, ուրախ լերուք զի ահա պատրաստեցի ձեզ տեղի յարքայութեան իմում, ցնծայիք զի զանուանս ձեր գրեցի՝ ի գրի իմում՝ ի գալստեան կենաց: Եւ եղև պատուհան անհնարին և շարժուն մեծ, մինչև անկան պատկերք կռոցն և փշրեցան: Իսկ իջրև տեսաք զոյն որ ծագեաց՝ ի վերայ սրբոցն, և լուաք զերանելոցն ձայնն և զշարժուն և զխորտակումն կռոցն, հաւատացաք՝ ի զօրականացն սրբ հարիւր և հինգ: Յայնժամ երկիւղիւ մեծաւ ընդունեալ անօրէնն Պրեխնտինոս, և հրամայեաց տանել զնոսա՝ ի բանտ: Իջրև մտին նոքա՝ ի բանդն, դարձեալ ուսուցանէր զնոսա սուրբն Կալիստոս և ասէր. Սէր եղբարք, ահաւասիկ կոչեաց զմեզ Տէր առ ինքն. և քանզի ես՝ ի մանկութենէ իմմէ ընկալայ զվկրտութիւն, և զձեզ այժմ կոչեաց. արդ արիք, յաղօթս կացցուք: Եւ համբարձեալ զձեռս իւր սկսաւ ասել. Տէր, Տէր, որպէս զի պատչէլի է անուն քո յաւիտեան, որ յառաջ քան զամենայն անսահմանն բանիւ քո հաստատեցեր զամենայն. որ անապատիան և անեղութիւդ և անվախճան գանձուց տէրդ ես, պահեա զՀօտս զայս, ապրեցուցանելով՝ ի բերանոյ ա-

ուխծուն, և հատ զտոտս ՚ի յատկենական փրկու-
թիւն. և արժանի արս զմեզ վախճանել խոստովա-
նութեամբ քո. զերծս զմեզ ՚ի մեղսասէր կենցաղոյս՝
անբիծս և անարատս. մոյծ զմեզ ընդ նեղ դուռնն ՚ի
տառնջ Թագաւորական, զի օրհնեսցուք սուրբ ան-
հանգիստ ձայնիւք զամէնօրհնեալ անուանդ Հօր և Որ-
դւոյ և Հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ։

Իսկ անօրէնն և ամպարիշտ զօրավարն Պրեսկենտէ-
նոս խորհեցաւ ընդ Վերոնի Փողարի, և առաքեաց ՚ի
բանդին և կոտրեաց զնոսա, զի էին Թուով յիսուն
զօրականքն Քրիստոսի։ Եւ կատարեցան սուրբքն յամ
սեանն Հուի, որ օր քսան և եօթն էր։ Իսկ մեք զի-
նուրբս ոչք հաւատացաք ՚ի տեսլեան սքանչելեացն
և միտեցաք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ,
եկաք ՚ի գիշերն գաղտ, և բարձաք զնշխարս սրբոյն և
եդաք ՚ի վայելուչ տեղւոջ։ Վասն որոյ զմեզ արժանի
արար Տէր՝ հաստատել եկեղեցի ՚ի Հռոմ յանուն
սրբոյն. և շինեցաք անուամբ սրբոյն Կալիստրատոսի
քաւարան մեղուցելոյ և ժողովեցաք միաբանութեան
հրեշտակաց և մարդկան. ՚ի փառաբանութիւն և
յերկրպագութիւն ամենասրբ Երրորդութեանն,
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Վկայաբանութիւն Սրբոյն Թէոկղէի Կալիոպիա։

Թէոկղէա էր կին ոմն խնամատուն վարուք, ազգաւ ազատ, կեցեալ ընդ առն իւրում ամս բազումս, և ոչ էր ծնեալ որդի. և մօտ ՚ի մեռանել առն՝ յղացաւ և ծնաւ որդի, և կոչեաց զանուն նորա Կալիոպիա. և մեռաւ այր նորա և եղեւ նմա ստացուածս բազումս. և ուսաւ մանուկն զամենայն խնամատուԹիւն գաւառին Պամփիլացւոց։ Եւ եղև ՚ի ժամանակին յայնմիկ բազ մացաւ ուսումն կռապաշտուԹեանն, զոհել և երկիր պագանել կռոցն։ Եւ եղև գաւառին վանն պատանեկին, եԹէ քրիստոնեայ է։ Իսկ երանելի մայր նորա Թէոկղէա ետ ոսկի և արծաԹ և հանդերձս և ծառայս, և աղաչեաց զնաւավարսն զի առցեն և փախչիցեն ՚ի գաւառէ անտի. և նաւեցին ՚ի Պամփիլ քաղաք Լիկիացւոց։ Եւ հրաժարեալ նորա ՚ի Մաքսիմիանոսէ գաւառէ, քանզի մաքսաւորուԹեան կարգ էր պատանեկին և տարեկան կռոց։ Եւ իբրև եաԹե երանելի պատանեաւն ՚ի խորհուրդս եմուտ ինքեան և պահս քարոզեաց ծառայից իւրոց քաւանտուրս. և եկին առնա հարցանել և ասել. Տօնք տարեկանաց մերոց են արդ, եկ ընդ մեզ և ուրախ լեր այսօր։ Եւ նա ասէ ցնոսա. Ո՞րպէս կարեմ ընդ ձեզ հաւասարել, զի դուք զոհեալ ուտէք և պիղծ կերակուրս, և ես պահեմ քաւանեըսրդս։

Եւ եղև այս յակառջս գաւառին, և հրամայեաց

ածել զառաջեաւ իւրում: Մաքսիմիանոս դատաւորն ասէ. Կալէոպիա, ամենայն երկիրս լի է քեւ. ասէն, եթէ ինքն մոլորեալ է և զբազումս մոլորեցուցանէ: Կալէոպիա ասէ. Պատք էք մոլորեալ, որ առաջնորդ խաւարի էք. զի Թոզեալ է ձեր զԱստուած և երկիր պաղանէք քարեղինաց: Մաքսիմիանոս ասէ. Ամենա- Թիւն հասակի քո սահակեցուցանէ զքեզ, և ածէ 'ի վերայ քո Թշնամանս: Եւ դարձեալ ասէ ցնա. Յորմէ՞ ազգէ ես: Կալէոպիա ասէ. Յազգէ եմ Պամփիլացւոց, մեծաց խորհրդոց առաջնորդ եմ ես: Մաքսիմիանոս ասէ. Այս ինձ, հայր և մայր ունիս: Կալէոպիա ասէ. Մայր ունիմ, և հայր իմ բազում ամ է զի կատարեալ: Մաքսիմիանոս ասէ. Աստուածոլքն իմոլք, եթէ հաւանեայիս ինձ և պաշտեայես զաստուածսն իմ, միաբոր դուստր ունիմ ես, զայն տաց քեզ 'ի կնու- Թիւն: Կալէոպիա ասէ. Ո՛վ անօրէն, կամիս զիս այնու խաբել. զանդղ դուստրն քո 'ի կնութիւն առնում ես, և հաւանիլ ինձ հոգալ զամենայն իրս մարմնոյ, և տալ փոխանակ ընդ դստերն քո. առաւել քան զքոյդ ունի մայր իմ, հարիւր աղջիկ՝ որ կան 'ի տպատանդան: Զայս գիտացիր զի զհոգս զայս զոր առեղծ Քրիստոս 'ի պատկեր իւր, հաւատամ Աստուած եթէ այսպէս առանց արատոյ կարող է պահել զիս որ աբարն: Մաքսիմիանոս դատաւոր ասէ. Ելք այսու ես բանիւ զրպռես զիս եթէ արագ արագ վախճանեցայց:

Եւ հրամայեաց զնա ձեռս յետս կապել և առնել չարաչար: Կալէոպաս ասէ. Քրիստոս, զոհանամ զքէն, զի վասն անուան քո անարգեցայ: Մաքսիմիանոս ասէ. Հաւանեա ինձ և տեսանես զդատաւն քո և զմայրն քո, և մի մերժիր 'ի տապուածոց քոց: Կալէոպաս ասէ. Ոչ եմ մերժեալ 'ի զատաւէ իմմէ, այլ Տէառն է երկիր լեր իւրով. այլ վասն մօրն զոր ասես եթէ տեսանես. Որ պատուէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի, այս է ձայնն տէրունական: Այլ վասն իշխանութեան՝ ասէ. Լաւ է չարչարել ընդ ժողովրդեան Աստուծոյ՝ քան առ ժամանակ մի վայելել 'ի մեղս:

Դատաւորն ասէ. Յանեցէք կայծակուն 'ի ներքոյ

անուցէ, և ընկեցէք ՚ի վերայ դորա: Յայնժամ պատանեակն վերատուեալ՝ ասէ. Ցրիստոս, վաղ եկեսցէ առ իս ողորմելի՛ն քո: Եւ վաղվաղակի էջ առ նա հրեշտակ Աստուծոյ, և թօթափեաց զկայծակունս. և կամէին ընկել զանիւան և ոչ կարացին: Յայնժամ հրամայեաց դատաւորն արձակել զնա անտի և արկանել ՚ի բանդ:

Եւ գիտակ եղև մօր նորա, և յառաջեալ արտաքս մուրհակս ազատել զամենայն ստացուածս իւր. և կոչեալ մինչև հինգ հարիւր այր, և զոսկի և զարծաթ իւր և զհանդերձս պատուականս բաշխեաց աղքատաց, և զապարանս յեկեղեցիս. և ինքն միայն գիմեալ ՚ի գեօղն Կիւլիկեցւոց առ երանելի՛ն որդին իւր. և իբրև եհես գնա՝ անկաւ առ ոտս նորա և երկիր եպագ նմա, Յոկ երանելի՛ն կայր կապեալ ընդ այլեսն ՚ի բանտին, և ոչ կարաց յառնել և տալ ողջոյն մօր իւրոյ, այլ զայս միայն ասաց. Բարի եկիր, Հիմարիտ վկայ Ցրիստոսի: Եւ էր ընդ մօր նորա հինուն այր. և կացեալ երանելո՛յն յաղօթս և բացան դրունք բանտին, և ելին ամենայն կապեալքն ՚ի բանդէ անտի ՚ի գիշերին յայնմիկ. և անկաւ ահ մեծ ՚ի վերայ բանտապանացն. և ծնաւցին ՚ի բանտին Կալիտոս և մայր նորա միայն, և ահ մեծ անկաւ ՚ի վերայ քաղաքին. ձայն եղև առ նոսա և ասէ. Դուք էք որդիք Աստուծոյ, նահատակք Ցրիստոսի, և սրբեցէք այսօր զքաղաքս ՚ի կռապաշտութենէ, որ թողէք զաշխարհս և զամենայն ստացուածս ձեր, և վասն Ցրիստոսի չարչարիք:

Եւ լուեալ զայս Մաքսիմիանոսի՝ հրամայեաց զնա խաչել. ՚ի հինգշաբաթուջ հանին զնա ՚ի խաչ: Յոկ մայր նորա գիտացեալ եթէ խաչեցին զնա, տուեալ գահձին երկուս գահեկանս, և աղաչէր զնա զի գլխիկ վայր խաչեսցէ, և մի նման Ցրիստոսի. և յաւուր ութաներորդ աւանդեաց զհոգին: Ձայն եղև յերկնից և ասէ. Նկայք առ իս, քաղաքացիք Ցրիստոսի և ժառանգորդք արքայութեանն. ամօթ քո պատրաստեալ է, զի նստցիս ընդ աջմէ Աստուծոյ: Եւ եղև շարժումն մեծ. երկեաւ երկիւղ մեծ դատաւորն, զի խաւարեցաւ արեգականն, և եղև խաւար ՚ի վերայ երկրի երեք ժամ մի, և դարձաւ անդրէն ՚ի լոյս:

Եւ առեալ երանելոյ մօրն կաղնոպէայ զսուրբ նշխարան՝ հանդերձ հեզասիւքն ի խաչէ անտի, և պատեալ զպարանոցաւ որդւոյն իւրոյ. և այնպէս ա֊ նդեաց զՀոգին երանելի մայրն. և եկին եղբարք և առին զսուրբ նշխարան և թաղեցին յայրի միջ. և օրհնեցին զՄատուածՙ, փառաւորելով զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, յաւիտեանս. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Կիրակոսի և մօր նորա Ցուղիտայ։

Սովորութիւն է յար թշնամւոյն մարդկան՝ ընդ բարի սերմանն ցորենոյ սերմանել որոմն. վասն որոյ պարտ է արթուն լինել մանկանց եկեղեցւոյ զի կա-
րասցեն զգուշութեամբ պահել զսուրբ եկեղեցի, զի մի խառնեսցի ժանտ սերմն ընդ միտս աստուածպաշտութեան սերմանն, այլ բուսցին ըստ Աստուծոյ ամէն-
ցեան բարեպաշտութեամբ և բազմապատիկ հատուցցեն Տեառն զպտուղ հոգևոր արդեանցն. զի որք բարեպաշտութեամբ զՀետ սրբոցն ընթանայցեն փութաթաւուր անձամբք՝ գոյեն զՀշմարտութիւնն։ Արդ զայս ասեմք առ քո աստուածպաշտութիւնդ, սիրելի եղբայր, և 'ի ձեռն գրոյ պատմեմ զիմ կրսերութիւնս[1]. զի Թէպէտ և Յկոնիոն քաղաքի աստ խօսեալ էր զբանեալն և զբարեյաղթ մարտիրոսին Յուղիտայ[2], պատմեմ քեզ և զբարւոք խոստովանութիւնն որ 'ի Քրիստոս, եթէ ուստի էին և կամ որպէս վարեցան 'ի կեանցդաղումն, և կամ որպէս վկայեցին։ Քանզի գտանի առ ոմանս և մանաւանդ առ անհմուտս և վայրենաբարոյ աշխարհականս՝ որք բերեն վկայութիւնս իմն որ բազում հակառակութիւն ունի առ Հշմարտութիւնն, և դիմադարձութիւն բարւոք գործեցելոցն,

1. Մի օր. և 'ի յեռն գրոյդ պարտ էմ երկրորդիւնդ։

2. Մի օր. վէրն Ցուղիտայն։

և՝ ոչ կարդաւորութիւն ինչ կայ և ոչ ուղղութիւն յիմացուածս բանիցն զոր ասեն. և զայսպիսի սուեղծաբանութիւն առեալ՝ի ձեռն՝ սուտքութիւն ոչ ինչ գտանես՝ի նոսա և ոչ գիտութիւն: Զանգի արդարոն՝ի հարցն ասաց վասն ումանց՝ որ ինքնակամ բանիւք ասացեալ է, որպէս զուղիղ զգուծս ումանց խափանել շոգմոգութեամբ և շատխօսութեամբ իւրեանց. արդարև բազմապատիկ արժանի են յիշելոյ այսպիսի գրոյ՝ որ զնաբանութիւնս նոցա խափանէ: Եւ կարծեմ, ոլ աստուածասէրը, եթէ Մանիքեցւոցն են այսպիսի շաղփաղփութիւնք. քանզի այս յայտ իսկ է յօրինակացն, և նոյն իսկ յառաջաբանէն՝ի գրելոցն հերձուածողացն: Այն՝ զի հեթանոսաց գայթակղութիւն և յիմարութիւն զխաչն Քրիստոսի համարեալ:

Բայց ես փութապէս յոյժ ինդրով ջանացայ գտանել ըստ քո հրամանի՝ զվկայութիւնս նոցա. թերևս արդեօք կարացից գտանել Ձշմարտապէս զտոյգ նահատութեան նոցա պատմութիւն. վասն որոյ ոչ հեղգացայ հարցանել զբազումս, ստուգել և քննել վասն նոցա, և զբնակիչս տեղւոյն հայցել՝ զի եթէ գիւրիք ինձ ազ ասացեն զՁշմարիտն վասն վկայութեան նոցա: Իսկ այժմ Մարկիանոս ումն քրիստոնեայ և քրիստոսասէր արիւրեն և գալիր նուիրապետ[1] եղեալ թագաւորին Յուստինոսի և առեալ՝ի նմանէ զգօրավարութեան[2] պատիւ, և Ձնոյն երևելի այր՝ որ էր նորա աթոռակից յաշխարհն և յերկրի Սուրացւոց, և այսպէս յաղագս արբոյն խնդիր արարեալ, որպէս յոմանց ծերոց լսեալ՝ եթէ տոհմակից էին նոցա՝ի գաւառէ Վիկոնացւոց գեղեցիկ ծաղկին և յաղթող վիպին Քրիստոսի Յուղիտա. անակնածելի վարուք կեայր, և զՔրիստոս բարեպաշտութեամբ փառաւորէր և զիշատակս նորա հանապազ ունէր յինքեան. բայց և այլ ևս տոհմակից նորա պատուով գոյծէին զայս:

Եւ էր ինքն երանելին Յուղիտա՝ի Թագաւորական տոհմէ. և իբրև սկսան գառնաչունչ հոգւովք հալածանաց ընդ՝ի վերայ քրիստոնէից և խախտել զսուրբ եկեղեցիս Քրիստոսի, ՝ի ժամանակս Դոմետիանոսի

1. Մի օր. նուէրապետ:

2. Մի օր. զօրաւորութեան:

գատաւորի, որոյ եկեալ՝ի գաւառն Լիկոնացւոց, այր գաղանաբարոյ և յոյժ կամակից արիւնահեղութեան սուրբ վկային: Այս այնուհետեւ փախստական եղեալ սուրբն Յուղիտա հանդերձ երկու նաժշտաւ և երեմնեաւ մանկամբ միով՝ քարեյաղթ վկային Կիրակոսի,՝ի Իկոնիոն քաղաքէ[1] որ է մայր քաղաքաց Սուրացւոց երկրին, ուր և ամուսնացեալ էր Յուղիտա: Այլ թողեալ նորա զամենայն զկեանս իւր, զշարժուն և զանշարժուն զրազմապատիկ զստացուածս՝ եկն փախստական՝ի Սելևկիա, որ է և նա մայր քաղաք ազգին Սուրացւոց, և գտեալ և անդ բազում խռովութիւնս քրիստոնէից: Զանգի Աղեքսանդրոս անն առեալ՝ի Դիոկղետիանոսէ ամպարիշտ թագաւորէ զգաւառութեան իշխանութիւն, և եկեալ՝ի քաղաքն Սելևկիա՝ ընկալեալ զարքունական հրամանն, և հրամայեաց տուեալ ամենայն փութով՝ խոշտանգանօք և տանջանօք չարչարել զայնոսիկ որք ոչ զոհիցեն մոտի կռոցն զոր աստուածս անուանեն. և խորհեալ երանելին Յուղիտա զոր յաստուածային գիրս գրեալ է, եթէ տուք տեղի բարկութեան, որպէս զի մի յանկարծակի ընդունեցի. և անտի ևս փախստական գնաց՝ի Տարսոն քաղաք, որ է մայր քաղաքաց առաջին նահանգին Կիլիկեցւոց: Եւ որպէս թէ՝ի յուզմանէ ուրուք հասեալ՝ի վերայ նորա լուրք և ժպիրհ գաւառին Աղեքսանդրէի, ըստ բազմապատիկ չարութեանն Դոմետիանոսի[2] առաւելեալ ևս չարութեամբ, և ընդունեալ զբարեյաղթող վկայն Յուղիտա, և զինքեան զոլդին ունելով՝ի գիրկս իւր՝ զգեղեցիկ տղայն, զաստուածակոչ վկայն զսուրբն Կիրակոս, և կալեալ զնա անօրէնութեան սպասաւորքն ըստ գուշակելոց օրինակին. և Թողեալ զնա նաժշտաւորն՝ փախեան, և կացեալ՝ի հեռաստանէ հայէին՝ի նա՝ տեսանել զինչ լինիցի: Եւ կացուցեալ զնոսա առաջի Թագաւորական բեմին Աղեքսանդրէի՝ հարցանէին զանուն և զբախտ և զաշխարհ: Համարձակեալ այնուհետեւ առաջի գաւառին՝ զԲրիստոս անուն՝ի կնէ արկեալ ասէր. Քրիստոնեայ եմ: Եւ զրամեալ

1. Մի օր. *՝ի Լիկոնիա փոխէ:* 2. Մի օր. *Դեկիոսիանոսէ:*

դատաւորին Աղեքսանդրի բազում սպառնալիօք առեալ երանելւոյն Յուլիտայ։ Բայց ըստ կամաց իւրոց ոչ ինչ կարաց գործել։

Ապա հրամայեաց առիւծել, և դալար արջառաջլոք յանխնայ հարկանել, և զմանուկն հանել՝ի գըրկաց մօրն. և նա յորդաբուղխ արտասուօք գլաել եդեալ[1] վասն գթոյ մօրն. դարձեալ հայէր՝ի նա երանելի մայրն լի Հգնութեամբ, Յայնժամ տարան զնա առ դատաւորն, և զմայրն ըստ հրամանի առաքելոյն դժնեայ անողորմ հարկանէին. և նա ոչ ինչ տայր պատասխանի, բայց բազում համարձակութեամբ ասէր. Քրիստոնեայ եմ՝ և իբրև զանշունչ ընդունէր զչարչարանսն, և նոքին ձայնիւ առաւելս աղաղակէր, թէ՝ Քրիստոնեայ եմ՝ և դատաւորին առեալ՝ի բերան իւր զմանուկն սկսաւ գգուել, եդեալ՝ի վերայ ծնկաց իւրոց, կամէր համբուրել և նորա՝ի մայրն հայեցեալ աքսոտելով առաւել ևս կեղէր զնշխանն, և զգլուխն իւր՝ի նմանէ՝ի բաց դարձուցանէր, և ձեռօք իւրովք հակառակէր ընդ նորա, և եղկագամբք որպէս Հիրաւնամբ իւիք մազլցէր զերեսս դատաւորին. և իբրև ձագատատրակի քաղցրածայն զատացեալն՝ի մօրէն ասել, թէ՝ Քրիստոնեայ եմ։ քանզի սովորութիւն է տղայական բնութեան այսպիսի անակնածութեամբ յանդուգն պատկել[2]. մինչև զայրանալ դատաւորին յոյժ իբրև ըզվայրենի գազան. քանզի ոչ է խիկ արժան զնոսա մարդիկ անուանել ոչ՝ի մարդկապէս գործոց օտար էին։ Բարկութեամբ սրտմտեալ, իբրև զարիւնարբու գազան, կալեալ զոտից մանկանն՝ի բարձրաւանդակ բեմէ անտի զարկուցեալ զսուրբ մանուկն, և զանդիւն բաշխեալ նի մոյ առեալ գլուխն՝ Հեղքաւ[3] ամենայատկի մարտիրոսին այսպիսի խոստովանութեամբ։ Եւ այնպէս ջարդեալ գլուխն, մինչև՝ի ցնդմանէ արեանն լցաւ բեմն ուր նստէին. և՝ի ձեռս Աթոռոյ աւանդեաց զհոգին աստուածազգեաց մանուկն. քանզի հոգիք արդարոց՝ի ձեռին Աթոռոյ են։

Եւ իբրև եառես զայն սուրբն Յուլիտա՝ խնդութեամբ

1. Մի օր. գլաւ եղեալ։
2. Մի օր. պոպզել։
3. Մի օր. Հեղհեղոյ։

լև եղեալ ասէր. Գոհանամ զքէն, Քրիստոս, զի արժան արարեր զորդին իմ կատարել և հասանել անթառամ պսակացն: Եւ զայս լուեալ դատաւորն առաւել ևս զայրացեալ յինքեան, հրամայեաց զինա կախել և ուժգնապէս քերել, և՝ ի կաթսայէցն որ լի էին եռանդմամբ ձիթով՝ առնուլ և արկանել զնովաւ:

Եւ քարոզքն աղաղակէին հրամանաւ բռնաւորին. Ողորմեա անձին քում և զոհեա աստուածոցն, զի մի՛ իբրև զորդին քո մեռանիցիս, նակ սուրբ աղախինն Քրիստոսի բազում համարձակութեամբ ասէր. Ես զիւաց ոչ զոհեմ, քանզի զՔրիստոս պաշտեմ զՄիածին որդին Աստուծոյ՝ որով զամենայն արար, և զՏէր Աստուած Հայր ամենակալ, և ընթանամ զհետ տըղայոյն իմոյ աստուածակերտ մանկանն, զի նոքաւ հանդերձ արքայութեանն արժանի եղէց:

Եւ քարոզքն զաղաչէին հրամանատ բռնաւորին զհամարձակութենէն և զանփոփոխելի խոստովանութենէն որ՛ի Քրիստոս, եհատ՛ի վերայ նորա վէիս՝ որով զգլուխ նորա բառնալ, և զմարմին նորա և զորդւոյ նորա ընկենուլ՛ի տեղի մի մնհատարատաց: Եւ դահճացն հաստատեալ զայն՛ի բերան երանելոյն Յուլիտայ, և առեալ տարան՛ի տաղտկալի տեղին կատարել զհրամանն բռնաւորին: Նակ սուրբն աղաչեալ զդահիճսն զի թողացուցեն նմա տակաւ մի յաղօթս կալ, և խոնարհեալ դահճացն յաղաչանս նորա՝ տակաւ մի թողացուցին նմա. և նորա ծունր կրկնեալ տակ այսպէս. Գոհանամ զքէն, Քրիստոս, որ կոչեցեր զորդին իմ յաուաջ քան զիս կատարել, և արժանաւորեցուցեր զառաջանալ կեաց և զընդունայնութեան կեանս թողուլ, և յաւիտենական կենաց ընդ սուրբս քո արժանի արարեր. արա և զիս զաղաչին քո արժանի մեծի պարգևացդ, զի մոլոր՛ի թիւս և՛ի համար իմաստնոց կուսանաց, ՛ի յաւիտենական յանմահ հարսանիսդ. և օրհնեալ անձն իմ զՀայր ամենակալ Աստուած արարիչ ամենայն, և զամենասուրբ Որդիդ և զՀոգիդ կենդանատար, այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից:

Եւ դահիճն ձգեալ զսուրն եհատ զգլուխ երանելոյն ապտաքոյ քաղաքին. և ընկենոյին զպատուականն

մարմին նորա՝ ուր էին նշխարք քարեյաղթ վկային Քրիստոսի:

Եւ կատարեցաւ աղախինն Քրիստոսի Յուղիտա և մեծափառ որդի նորա Կիրակոս, որ օր Հնգետասան էր հրոտից անոյ: Եւ ՚ի վաղիւ անդր եկեալ աղախնայք նորա ՚ի գիշերի և բարձին զնշխարս նոցա և եդին յայրի միում ՚ի սահմանս Տարսոն քաղաքի, մինչև ՚ի ժամանակս բարեպաշտ Թագաւորին Կոստանդիանոսի. և մեռեալ աղախնայցն յառաջ քան զլսելն տուրք վկային Քրիստոսի, և Հշմարտութեանն ՚ի լոյս եկեալ, և եկեղեցեաց Քրիստոսի Հաստարձակութեամբ պայծառացեալ: Այս յայտնեցան նշխարք տուրք վկային ցուցանելով զտեղին ՚ի ընդհաց տուրք Հոգւոյն. և ամենայն Հաւատացեալք փափաքելի յօժարութեամբ առնին ՚ի տուրք նշխարացն վկային ՚ի բժըշկութիւն անձանց:

Եւ արդ զայս ամենայն գրեալ Հշմարտութեամբ նշանակեցի աստուածասէր անձին քում, զի աւանդեսցես Հաւատարիմ մարդոց, զի շինեսցին միտք ամենայն Հշմարտից, և մի Հայեսցին ընդ մանիքեական շաղփաղփանան գրոյն այնորիկ, այլ այսմ Հշմարտութեան Հաւանել ՚ի Քրիստոս: Ի ժամանակս բարեպաշտ Թագաւորին մերոյ Յուստիանոս և որդւոյ Հայրապետին մերոյ Յոհաննու, բարեպաշտոն մոգք և Հըշմարտասէր նախանձու խնդիր արարին վանս վկայութեանն սրբոյն Գեորգեայ և երանելւոյն Կիրակոսի, զոր մանիքեացւոց մոտացածին բանիւք էր ստեղծեալ. և գտեալ զնա ոչ ուղղապէս, առաքեցին զոմն Թէոդորոս մեծ եպիսկոպոս և զՅովնան այր երևելի յաշխարհէն Սուրացւոց, և զՄարկիանոս ոմն քրիստոսասէր տրիբուն և դպիր և նուիրապետ Թագաւորին, որք եկեալ Հասին ՚ի գաւառն Լիկոնացւոց, և մեծաւ աշխատութեամբ խնդիր արարեալ ՚ի գաւառին ուր նոքայն վկայեցին, և Թագաւորական իշխանութեամբ քննութիւն արարեալ. վասն որոյ գտեալ զտեղին, յորում այս առաջին վկայաբանութիւնս որ գրեալ էր ՚ի քրիստոսասիրաց, որք ախանատես եղեալ էին վկայութեան և չարչարանաց և մահու նոցա, որ եղև ՚ի Թագաւորութեանն Դիոկղետիանոսի և ՚ի գաւառ-

րուեթեանն Աղեքսանդրի. զոր եդեալ պահէին ՚ի պա-
հարանի սրբուեթեան, ՚ի սահմանս Տարսոն քաղաքի.
զոր բերեալ աստուածասէր թագաւորին և բարե-
պաշտ հայրապետին, և աղօթս արարեալ գոհացան
զմարդասիրէն Աստուծոյ վասն գիւտի Ձեմարիտ վկա-
յութեանս այսորիկ, որ ՚ի ժամանակս վերջինս
ընտրեցեալ Աստուծոյ առաջին վկայաբանութիւնն
նոցա. և ՚ի բաց ընկեցեալ զմանիքէական սուտ ստեղ-
ծաբանութիւն, գրեցին և առաքեցին ամենայն եկե-
ղեցեաց Ձեմարիտ վկայաբանութիւնս զայս. ՚ի Քրիս-
տոս Յիսուս ՚ի Տէր մեր. որում փառք յաւիտեանս.
ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Կոստանդեայ։

Ի ժամանակս Դեկեայ կայսեր և Վաղերիանոսի, ՚ի բազում քաղաքաց յարիշտակէին զքրիստոնեայսն ՚ի մայրաքաղաքին բիւթանացւոց[1] և արկանէին ՚ի բանտ. և ամենայն զգուշութեամբ պահէին և քարշէին յատեան. զի եթէ հաւանեացին ուրել ՚ի պիղծ կերակրոցն՝ առանց տանջանաց արձակեացեն յիւրաքանչիւր գաւառ[2]։ Բազում երկիւղ այնուհետև կայր ՚ի վերայ քրիստոնէիցն յառաջագոյն առացեալ քաղաքին, ոմանք ՚ի լերինս, ոմանք ՚ի յապարակս թաքչէին։ Նահատակք առաքինիք և պետանի ծառայք Աստուծոյ՝ քաջալերութեամբ ՚ի քաղաքին ընդէին մեծաւ ուրախութեամբ, ասելով, թէ զինարդ արժանի լինիցին փառաւորել զԱստուած խոստովանութեամբ նորա մարդասիրութեան[3]։

Ոմն ՚ի նոցանէ որում անուն էր Կոստատոս, յոյժ զարդարեալ հաւատիւ և գեղեցկութեամբ և բանիւ, և վայելուչ[4] յամենեսեան երևեալ, և աստուածպաշտութեամբ՝ որ գլուխ է ամենայնի, և եռանդուն հաւատով, մատչէր առ բանտապետն և առ զինուորսն,

1. Մխա օր. զբրիսպանէայս, և աթէնն ՚ի Նիկոմիդա մայրաքաղաք Բիթանացոց։

2. Մխա օր. իերակրոց նոցա,... որ. յայնցին իւրաքանչիւր օրինիւր գաւառս։

3. Մխա օր. նորա մարդասիրութեամբն։

4. Մխա օր. և պիտա և ճիշտ բնութեամբ վայելուչ։

*տուեալ նոցա ինչս բազումս, զի ընտրհեացեն նմա կա-
լանաւորաց եղբարցն որ ի բանտին էին՝ դարման տա-
նել, և իւրաքանչիւր ումեք զարժանն խնամոյ հատու-
ցանել: Եւ առեալ համարձակութիւն՝ ոչ դադարէր
մատանելոց առ նոսա. և այնպէս յորդորէր զքաջասիրտ-
սըն և զյօժարսն՝ ի վկայութիւն Տեառն. աղաչէր
յիշել զինքն անպակաս. իսկ զվատասիրտսն և զվհա-
տեալսն՝ քաջալերէր և մխիթարէր մի երկնչել, այլ
առաւել ուրախանալ. և ասէր թէ բազումք ի մարդ-
կանէ ոչ հեշտեաւ ինչ, այլ մեծաւ աշխատութեամբ և
տառապանօք ելին ի կենաց յայսցանէ, և ոչ աստ ի
ժամանակեայ կեանս հանդստեան ինչ պատահեցին,
և անդ հանդերձելոցն ոչ ժամանեցին և ոչ եղեն
արժանի: Իսկ որ վասն Աստուծոյ ձգնեալ՝ բազում և
մեծամեծ բարեաց առիթ լինին և ի ժամանակիս և
ի հանդերձելումն, այս ևրաց այսպիսի գործելոց վասն
հաւատոց նահատակութեան:*

*Յառաջ եղեալ այնուհետև բղեաշխն նահանգին
այնորիկ, և հրապարակաւ յատենի նստեալ, հրամա-
յեաց զառաջեաւ ածել զծառայն Աստուծոյ: Եւ
իբրև եկին կացին առաջի, ասէ ցնոսա բղեաշխն. Ա-
սացէ իւրաքանչիւր ոք ի ձէնջ զանուն իւր և զազգ-
իւր և զպատիւ իւր և զաշխարհ[1]: Իսկ երանելին կո-
դրատոս անյապաղ աստուածպաշտութեամբն և ծա-
րաւի ցանկութեամբն նոյնժամայն երիթայր վաղվա-
ղակի հասանել առ Տէր. և յառաջ մատուցեալ քան
զբազմսն ամենայն, վասն զի յետոյ կայր ամենեցուն,
և առանց ուրուք բանի հարկանելոյ յառաջ վազէր[2],
երկուցեալ՝ թէ գուցէ ոք ի յառաջագոյն ձեռնարկ-
ելոց ի ձգումն՝ վատասրտեալ ի տանջանացն ուրա-
նայցէ. վասն զի տեսանէր զոմանս ի բեզբարցն գու-
նատեալս և ընդարմացեալս ի բազմատարիկ տանջա-
նացն, գուցէ թուլագոյնս[3] խոհրդոյն. զինքն յա-
ռաջ մատուցանէր յօդնակարանութիւն, որպէս զքաջ
նահատակ և զպատուաշէն Քրիստոսի. և նախ քան*

1. Ա՛ետ օր. և զպէպ ի-ուդ ըզ-պարի- և ազ-ի, և զաշխարհ:
2. Ա՛ետ օր. յառեան վազէր:
3. Ա՛ետ օր. և գոգցես էին ընդ-լսգոյնս խոհրդով:

զամենեսեան պատասխանի տուեալ ասէր. Քրիստոնեայք կոչիմք, այս է մեր անուն. իսկ պատիւ մեր ամենեցուն[1] և ազատութիւն՝ մի է, ծառայք եմք Յիսուսի Քրիստոսի երկնաւոր Թագաւորին և աներևոյթ Թին Աստուծոյ. և քաղաք մեր է երկնաւորն Երուսաղէմ, յորում բնակեցուցանէ Քրիստոս զմեերիմ զօրականան իւր. ահա լուար զամենայն. Իսկ բդեաշխին զարմացեալ ընդ առնն հաստատութենն, ասէ ցդունապանան. Յառաջ ածէք զամբարհաւաճն զայն, զինչ արդեօք օգտիցէ նորա[2] ժպրհութիւն յանդերձ նութեանն: Եւ նա ինքնին յայսկոյս և յայնկոյս առեալ զերդարան՝ յօժարութեամբ եկաց առաջի, և ինքեալ զինքն՝ ասէ ցբդեաշխին. Ինքնակամ յօժարութեամբ կամ առաջի քո, ով բդեաշխ, յառաջամարտիկ եղեալ հօրն քումմատանայի. ես պատրաստ եմ առ ամենայն հնարս՝ որ'ի վերայ իմ գան'ի քէն: Այդ արա զինչ և կամիս, զի գիտասցես'ի նմին իսկ'ի փորձ ձոյն՝ եթէ Քրիստոսի զինուորքն անյաղթք են: Բանզի զի առեալ մեր զինիք նորա, կամք ահաւասիկ պատրաստք պատերազմել ընդ մեքենայս քո:

Եւ բդեաշխին ասէ. Այս ինձ, ով աղաչուր դու, նախ զանուն քո և զբանի: Կոդրատիոս ասաց. Լուար յառաջագոյն թէ քրիստոնեայք եմք, այլ զբանիս մեք ոչ գիտեմք, քանզի ծառայք եմք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Բդեաշխին ասէ. Չէ արժան քեզ զանձն քրիստոնեայ կոչել, վասն զի սպանանէ զքեզ հրամանն Թագաւորին. այլ զի տեսանեմ զքեզ այր իմաստուն և զեղեցիկ, ուստի և կարծեմ թէ'ի մեծամեծաց տոհմէ լցեալ. Հաւանեա ինձ և ես զբեզնից վասն քո առ Թագաւորն, և եղիցի քեզ առնել դառաւորական իշխանութեան, միայն թէ զաստուածոյն զոհասցիս: Կոդրատիոս ասաց. Մի խժաբաներ[3], ով բդեաշխ, չէն բազում աստուածք, այլ մի Աստուած Հայր, յորմէ ամենայն ինչ, և մի Տէր Յիսուս Քրիստոս՝ որով ամենայն և մեք նովաւ: Բդեաշխն ասաց.

1. Մխա օր. այս է անուան և պատիւ ամենեցուն մեր, ազատութիւնս մեր է:

2. Մխա օր. օգտիցէ զնա յանդգնութիւն ժպրհութեանն:

3. Մխա օր. մի խոպոպանիր:

են և բազում աստուածք, այլ Թագաւոր երկոտասան աստուածք են, որոց հաւանել պարտիս և երկիր պահանել: Նակ տուրըն Կոդրատիոս պատասխանի առնէր զսիմերական[1] բանն. Զէ բարիք բազմաթագաւորութիւնն, մի Թագաւոր լիցի: Ռզեաշին ասէ. Զմիւսըն ևս չտեսեր, այլ ընդ այդ տուն ևեթ նայեցար: Կոդրատիոս ասաց. Զոր: Ռզեաշին ասաց. Զոր վասն Պխէդոսին ասէ Ովմերոս, Թէ՝ Ժողովեաց զամպս, խռովեաց զծով ամենայն հողմովք, ամպովք ծածկեաց, ահագին որոտաց Հայր աստուածոյն 'ի վերուստ, եկն Պխէդոսն և շարժեաց զերկիր և զՏրովայացւոց[2] քաղաքն, և զնաւս Ա.քայեցւոց: Եատ և վասն Ա.լամանդոյ ասաց, Թէ որչափ քաջութիւնս արար. տեսանէս զմեծութիւն նոցա: Կոդրատիոս ասաց. Որ քան ասաց վասն նոցա Ովմերոս՝ ձշմարիտ ասաց Թէ տուտ: Ռզեաշին ասաց. Ճշմարիտ: Կոդրատիոս ասաց. Որ վասն արուագիտութեան և շնութեան և ամենաչիղճ և դարշելի մոլար անասնակութեանն ասաց[3], պարտ է հաւատալ իբրև ձշմարիտ ասացելոց, որ աստուածոց չվայելէ այլ մոլեկանաց և պղծոց: Ես վասն ձեր ամաչեմ, զի Թողեալ զԱստուած՝ նման դիւաց պղծոց երկիր պագանէք[4]. և եԹէ կամիս 'ի ձերոց խակ բանաստեղծաց հաւանեցուցանեմ՝ Թէ և դուք են գարշելիք: Ռզեաշին ասէ. Դու լուտալ սկսար, և երկնչիմ Թէ դուցէ յասիցէ ինձ Թագաւորն, վասն զի Թոյլ եատ քեզ իմով իշխանութեամբս[5] այսպէս բարբառել. այլ արդ բառնամ վաղվաղակի զայդպիսի հանդգնակութիւնդ քո: Կոդրատիոս ասաց. Զիմ հանդգնակութիւնս քո և ոչ Թագաւորին[6] քո և ոչ այլ ոք կարացէ բառնալ յինէն:

Յայնժամ ռզեաշին հրամայեաց մեքենացուցանել զինա և պրկել 'ի վերայ տախտակի, և հարկանել զբքովք և հարցանել, Թէ՝ Ասա զանուն քո: Եւ նորա ոչ տուեալ պատասխանի. ասէ ցդունապանն ռզեաշին. Զինչ կո

1. Ասէ օր. զմէրլեան բանն:
2. Ասէ օր. զՏուրոյոյ:
3. Ասէ օր. անասնակ մոլորութեանն:
4. Ասէ օր. նմանութեան պղծոց դիւոց երկիր պագանէք:
5. Ասէ օր. իմով երկայնմտութեանս այսպէս:
6. Ասէ օր. ոչ քո և ոչ թագաւորն քո:

էն։ Եւ նոքա ասեն. Կոդրատիոս, այլ ևս՝ի մեծէ տոհմէ է[1]։ Բռեաշէնն ասէ. Խնայեցէք՝ի զա, և կանչեցէք զդա՝ի փայտէդ. ասէ ցնա. Ո՛վ այր դու, զինչ արարեր զայդ, Թշնամանել եաուր զպատիւդ քո։ Եւ կոչեաց զնա Հուպ առ ինքն և ասէ ցնա. Կամեաց Հաւանել մեզ, մի զպատիւ քո և զազգն անարգեր կրօնից քրիստոնէից՝ յոր պատրեալ ես։ Կոդրատիոս ասաց. Ընտրեցի ընկեցիկ լինել՝ի տան Աստուծոյ մանաւանդ քան բնակել յարկս մեղաւորաց։ Բռեաշէնն ասէ. Հաւանեա ինձ և զոհեա աստուածոցն, մի պատուակից և ես մեծի Հռովմայեցւոց ծերակուտին, զի մի լիցի զմի ոք՝ի հարապուրծաց մեոցիս։ Ձհրամանս Թագաւորաց և զմեծ սինկղիտոսին գիտես Թէ քանի բիւրք են արանց քաջաց, հաստատեցին զմի ոք կեալ՝ի քրիստոնէից[2]։ Կոդրատիոս ասաց. Երանելի է այր որ ոչ գնաց՝ի խորհուրդս անպատշաճաց և՝ի Հանապարհս մեղաւորաց ոչ եկաց, և յանթառս ժանտից ոչ նստաւ։ Բռեաշէնն ասաց. Մի այլաբաներ զբեզ խաբեալ, ոյ Կոդրատիէ. քանզի միապէս՝ի վերայ ամենայն քրիստոնէից կայ հրամանս այս, Թէ աղքատ ոք իցէ և եթէ մեծատուն, եթէ գձուձ և եթէ պատուական, ոչ յոք խնայէ առեանս։ Կոդրատիոս ասաց. Այսպէս է, քանզի և աստուածեղէնն գիրն ասէ, եթէ՝ Ոչ ծառայ և ոչ ազատ, ոչ մեծատուն և ոչ տըղանանկ, ոչ խուժ և ոչ սկիւթացի, ոչ ելլենացի և ոչ Յուդայեան, քանզի ամենեքին մի եմք՝ի Տէր։ Այլ աղաչեմ զքեզ, զհրաման Թագաւորացդ քոց և զսինկղիտոսին կատարեացես գիս. քանզի ես քրիստոնեայ եմ և աղբ իմ և պատիւ իմ առ Տեառն իմում[3] որ ազքանչ պահէ զպայծառութիւն իմ, և ոչ առ մարդկան՝ որ այսօր է և վաղիւն ոչ ևս է։ Բռեաշէնն ասէ. Հաւանեա ինձ և զոհեա, և վայելեա՝ի բարութիւն կեանս և՝ի պայծառութիւն լուսոյ այսորիկ։ Եւ զայս ասացեալ արտասուեաց բռեաշէնն մեծաւ հառաչանօք, և վարշամակաւն ջնջէր զերեսս։ Իսկ քաջն Կո-

1. Մխա օր. այլ ևս ոչ ունի զտոհմն զոր կալ՝ի դէսպոտէին։
2. Մխա օր. որ հաստատէին զի եաս է։
3. Մխա օր. առ Տէր իմոհամ է։

դրատիոս ասաց. Մի՛ ինձ զդժնդակ վիշապին զխորատանկութիւնն և զբեւեռայ մարդասպանի առաջի արկաներ զարտասուս. գայլ յափշտակող, ոչ կարես յափշտակել զծառայս Աստուծոյ։ Մաքսիմոս դատաւորն ասաց. Ա՛յ չար այր, տէր իմ մեծ ծաւալեալ ողոր մի քեզ և դու թշնամանես զնա։ Կոդրատիոս ասաց. Ջինքն լայցէ և զօր ծննդեան իւրոյ, քանզի ես ոչ եմ լալոյ արժանի. այլ դու ոմն ես որ առաջի նորա բառնա. քանզի և ահա այժմ յամպարիշտ և՛ ի մեռոյ նորա. շատ է մեզ բդեաշխէդ, ապա եթէ և դու կամիս դատել՝ Տէր խափանեսցէ զքեզ։ Աստերիոս վաճառապետն ասաց. Ի բախտ քո երդուեալ, տէր իմ բդեաշխ, եթէ զդա այդպէս թողուս՝ ոչ ակնածէ զինքնակալ թագաւորն թշնամանել և զաստուածն հայհոյել, և ածել՛ի վերայ մեր վտանգ մեծ։ Կոդրատիոս ասաց. Բարւոք ասաց աստուածեղէն գիրն. Ընդէր ամբարհաւաճեցան հեթանոսք և ժողովուրդք խորհեցան՛ի մտատիս. յանդիմանեն եղեն թագաւորք երկրի և իշխանք ժողովեցան՛ի միասին զՏեառնէ և զօծեալ նորա. քանզի և ահա այժմ յամպարիշտ և՛ ի մեռոյ նորա դատի Քրիստոս։ Ադեաշխեն ասէ. Մերկացուցէք զամբարհաւաճդ զայդ և դարձեալ հարէք զի հնազանդեսցի տերանց մերոց թագաւորաց։

Իսկ երանելին՛ի տանջանսն զոհանայր զՏեառնէ և ասէր. Փառք քեզ, Տէր Աստուած իմ Յիսուս Քրիստոս, զի արժանի արարեր զիս զանարժանս և զմեղաւորս վասն քո տալբ անուանդ զայս չարչարանս կրել. զի և ես թուականէ եղէց ծառայից գոյ. զոհանամ զքէն, Տէր, և առաջի անկեալ աղաչեմ զքեզ Աստուած իմ, կատարեա զընթացս իմ անուամբ քով արքով, կնքեա զխոստովանութիւնս իմ ընտրօք տալբ Հոգւովդ. պարգեւեա ինձ միտս հանճարեղս և անխոտորնակ հաւատս. խնամատարացո զիս անչափ խնամատարութեամբդ քով. պահեա զիս աջով քով, բարձրեալ. այժմ է ժամանակ փրկութեան և օգնութեան. այժմ է ժամանակ խոստմանց քոց, ընկալ զաղաչանս իմ, զի և յիս փառաւորեսցի տալբ անունդ քո. կատարեա զնկատումս իմ, յաջողեա զյօժարութիւնս իմ, մատո զիս առ Հայրն քո. խոստովանեա զիս առաջի նորա, Տէր իմ Յիսուս Քրիստոս։

Իակ գահՃայն յօգնեալ՝ի հարկանելն, և հինգ անգամ փոխեալ, ՚ի վեր քան զԹիզ յարեաւ ոմն արբոյ վկային, և արիւնն իբրև զգետ ի վերայ մարմնոցն։ Ասէ ցնա բզեաշխն. Հաւատա գոնեա այժմ յաստուածն։ Իակ երանելին Կոդրատոս ասաց. Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են, գործք ձեռաց մարդկան. բերան ունին և ոչ խօսին, ականջս ունին և ոչ լսեցեն, ունչս ունին և ոչ հոտոտեացեն, ձեռս ունին և ոչ շօշափեցեն, ոտս ունին՝ և ոչ գնան, և ոչ բարբառեացեն կոկոտդք՝ նոցա. նման նոցա եղիցին արարիչք նոցա և ամենայն յուսացեալքն ՚ի նոսա։ Պղծեաց բզեաշխն ասաց. կարծեմ խաբել վմեզ, զի այդպէս խաւարային խօսիս, հաւանեա ինձ և զոհեա աստուածոցն։ Սուրբն Կոդրատոս ասաց. Որովհետև լոյս քեզ խաւար թուի և ճշմարտութիւնն մոլորութիւն, պայծառ և յայտնի քանիւ լոյր. գիտութիւն լեցի քեզ, եթէ զաստուածս քո ես ոչ պաշտեմ, և հրամանի կայսեր և սինկղիտոսին ոչ հաւանիմ. արդ զոր ինչ կամիս առնել՝ արա վաղվաղակի, և յուզարկեա զիս առ երկնաւոր Թագաւորն։ Բզեաշխն ասաց. Մեծ անամօթութիւն ասկանէ ՚ի քեզ Հակառապիսն քո. աստուածոցդն, զի ոչ խնայեցից ՚ի քեզ, այլ նոր օրինակ տանջանօք և դառն մահուամբ սատակեցից զքեզ։

Եւ այնուհետև տարաժամեալ աւուրն՝ հրամայեաց զամենայն կալանաւոր քրիստոնեայսն ՚ի բանտ արկանել։ Տանէին ընդ նոսա զերանելին Կոդրատոս, և մանր խեցի տարածեալ և զսուրբն ՚ի վերայ պրկել, և վիմ մի մեծ ՚ի վերայ լանջաց նորա դնել, և զոտս նորա ՚ի կոճեղս սինդել ընդ երս ծակս, և շղթայս ՚ի պարանոց նոց նորա արկանել. և լինէր ՚ի բազում աւուրս։ Իակ երանելին Կոդրատոս իբրև արդարև քաջ նահատակ, բարեպաշտութեամբ և ժուժկալութեամբ համբերէր զառն և անողորմ տանջանացն, և ոչ փոխէր ՚ի հաւատսն Քրիստոսի։ Եւ յոմ արարեալ բզեշխին ՚ի նէ կիսացեալ քաղաքն՝ հրամայեաց և զսուրբ վկայն պինդ իբր տանել. մտեալ ՚ի քաղաքն ետ ածել զսուրբսն

1. Մխա օր. խոյրեօ... Պերենիս։

զառաջեաւ: Իսկ սուրբքն գային մեծաւ ուրախու-
թեամբ, ընդ որս և երանելին Կոդրատոս, իբրև զա-
ռաքինի զօրավար պանծացեալ յիւր զօրութենն՝ ի
Հակառամարտ մռեալ փայլուն սպառազինօք, խոժոռս
հայի՝ ի պատերազմին ահանալին, ահագին՝ երեսս ցու-
ցանելով պակուցանէր զգունդս թշնամեացն. այնպէս
և նա իբրև զգեղեցիկ ինչ և զպատուական զարդ ըզ-
կապանան զինուքեամբ առնեալ՝ հրձուէր և ուրախա-
նայր, և առաջի կացեալ. մինչև զարմանալ Հելլենա-
ցւոց փիլիսոփայիցն ընդ քրիստոնէից ժուժկալու-
թեան և համբերութեան, և ասեն. Արդարև մեծ են հա-
ւատք քրիստոնէից և առաքինակայ յոյսնոցա. վասն որոյ
և զայս համբերեալ չարչարանօք և վշտօք, և քա-
զումք՝ ի նոցանէ հաւատացին՝ ի Տէր:

Եւ իբրև կացուցին զսուրբն առաջի իշխանին, հրա-
մայեաց յառաջածել զսուրբն Կոդրատոս. և կացեալ
նորա առաջի ասեն, ասէ ցնա բռնաւորն. Ջո՞հեա
աստուածոցն, Կոդրատէ: Եւ սուրբն Կոդրատոս
ասաց. Ծառայ եմ Քրիստոսի, որ ասաց մարգարէին.
Աստուածք որ զերկինս և զերկիրս ոչ արարին՝ կորն-
ցեն: Բռնաւորն ասաց. Հաւանեալ պարտ է հրամանաց
թագաւորացն և ոչ Քրիստոսին՝ զոր ասեն[2] Աստուած:
Կոդրատոս ասաց. Ես թագաւորին իմում Քրիստոսի
հաւանիմ և ոչ մարդկան, որ ոչ գիտեն զԱստուած.
աղօթս վասն նոցա առնել գրեալ է մեզ՝ այլ զոհել
նոցա ամենևին ոչ. քանզի զինչ օգուտ առնէք[3] դուք
կայսերն՝ եթէ զոհէք պիղծ կուռցն, այլ և բազում ևս
վնասէք և նախ զանձինս: Բռնաւորն ասաց. Եթէ ա-
զօթս առնես վասն թագաւորին՝ պարտ է և հրամա-
նաց նորա լսել և հնազանդ լինել, քանզի գրեալ է
ձեզ՝ հաւատալ զկայսերն կայսեր և զԱստուածոյն
Աստուածոյ: Կոդրատոս ասաց. Ջամենայն պատշաճա-
կան պարտան որ յերկրի՝ որ ինչ պարտ էր՝ լցի կայսեր,
փութամ և Աստուծոյ իմոյ ընտրել զամենայն բարե-
պաշտութիւնս որ՝ ի նա: Մեզ քրիստոնէիցս հրա-
մայեաց թագաւորն կամ զոհել կամ մեռանել. և մեք

1. Մխա օր. խոշոռս հայէր՝ ի պա-
պէրպմողն, և ահագին:

2. Մխա օր. որ ասէն:
3. Մխա օր. ինչ առնէք:

պատրաստ եմք վասն խոստովանութեանն որ ի Քրիստոս, ոչ միանգամ մեռանել այլ բիւր անգամ։ Բզեաշխէն ասաց. Տեսանե՞ս թէ արչաւք քրիստոնէից բազմութիւնք զոհեցին աստուածոյն։ Կոզրատիոս ասաց. Ես առաւել քան զնոսա ամենեսեան լաւագոյն և իմաստագոյն եմ՝ եթէ ոչ զոհեմ։ Բայց սակայն ունիս որ զոհեցինն, կամիմ տեսանել զնոսա։ Յայնժամ բզեաշէն հրամայեաց ածել զնոսա առաջի նորա. և իբրև եկին ուրացեալքն՝ պշուցեալ ընդ նոսա զայրացին ցասմամբ երանելին Կոզրատիոս, ասէ ցնոսա. Չէք և ամենաթշուառք, վասն որոյ անցիր՝ այդչափ վաղվաղակի սատանայի մատնեցիք զձեզ, լքեալ զկարգն ձեր և ուրացեալ զՏէր Յիսուս Քրիստոս՝ որ վասն մերոյ փրկութեան փրկանք եղեալ գնեաց զմեզ արեամբն իւրով. ոչ ուսարուք զմեռելոց յարութիւն և զխնամոցամ դալստեան Քրիստոսի՝ հանդերձ փառօք և հրեշտակական զօրութեամբ, դատել զարդարս և զմեղաւորս, և տանել զարդարն ի կեանն յաւիտենից, և զմեղաւորն ի հուրն յաւիտենից և ի խաւարն արտաքին՝ ուր որդն ոչ վախճանի, և լալուծն և կրճտումն ատամանց։ Զինչ պատասխանի տայցէք ի վերայ տանգի աւուրն այնորիկ, յորժամ զօրք հրեշտակաց երկիւղիւ և զօրութեամբ կայցեն առաջի, սակայն տեսանել զմեզ և զահապին սաստին։ Բացէք զաչս սրտից ձերոց և ծանեարուք, թէ ուստի անկեարուք. զյաւիտենից Թագաւորն Յոզէք և անպիտան ծառայ[2] վաճառեցաք, որ զՏէրն իւր արտաքոյ գտեալ՝ հարկանէ զծառայակիցն իւր և սպանանէ, զոր Տէրն եկեալ կտրեսցէ ընդ մէջ և զմասն նորա ընդ անհաւատս դիցէ։ Գիտացէք թէ զինչ գործեցիք յաւժամանակեայ տանջանաց երկուցեալք և ի յաւիտենից տանջանաց զձեզ մատնեցիք. զուք ձեզին տեսջիք զվերնեսն զոր ոչ աչք տեսին, և լսելեացն ձեզ յարդար գաւառէին. ոչ լուարուք ձայն որ ասաց, թէ՝ Մի երկնչիք յայնցանէ որ սպանանեն զմարմին և զոգի ոչ կարեն սպանանել, այլ երկերուք մանաւանդ յայնմանէ որ կարող է զմարմին և զոգի կորուսանել ի գեհենի։

1. Մխա օր. վասն որոյ յանցիր։ 2. Մխա օր. անպիտան ծառայ։

Ձայս լսելն առաց երանելին Կոդրատոս, միաբան ամենեքեան ձայնիւ մեծաւ աղաղակէին հանդերձ արտասուօք և ասէին. Երկեաք, տէր, ՚ի տանջանաց և խաբեցաք լսելն զանբան անասունս, և լսելն զոչխարս ՚ի մէջ գայլոց օձառելք [1]. ածին փակեցին զմեզ մեղքն մեր, կամեցեալ մեր կեալ զժամանակեայ կեանս, և մեռաք զյաւիտենականին. և զինչ գործեացուք այսու հետև Թշուառականքս՝ ոչ գիտեմք: Ասէ երանելին Կոդրատոս լցեալ մեծաւ ուրախութեամբ ՚ի վերայ դարձի նոցա, և առեալ զարտասուս նոցա՝ ասէ ցնորս. Բանքերեցարուք, եղբարք, քանզի ազնուագոյնք և ողորմած Տէր մեր Յիսուս Քրիստոս, անոխակալ և գթած. հանդերձ բազում արտասուօք անկեալ ընդ ոտն նորա, կայէք և այժմ հաստատուն ՚ի խոստովանութիւնն Քրիստոսի, և իւրով արեամբն իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ սրբեսցի ՚ի մեղաց. Թէ մարմնով երբեմն հեղ քեցարուք, այլ այժմ արի խորհրդովք յաղթեցէք:

Ասէ նոցա կանգն բարձեալ լայնի մեծ ժամն, և ընկեցեալ զինքեանս յերեսս ՚ի վերայ երկրի, և հոգ ՚ի գլուխ եղեալ՝ ծեծէին քարամբք զիւրեանց խրձս, և այնչափ եղև ոսկալն տեսիլն՝ մինչև ոչ զքրիստոնեացն սպառ [2] ընդ նոսա այլ և զնոսին ասէին զհեթանոսն և զանաղտսիմ զինուորսն, մինչև կարծել Թէ անշունչ քարինքն լան և ողբան ընդ նոսա. քանզի ամենայն քաղաքն հիացեալ ընդ ձայն կանչանէին, ժողովեցան ՚ի տեղին բազմութիւն արանց և կանանց և մանկտւոյ, Հրէից և հեթանոսաց և քրիստոնէից՝ որք ՚ի Թագաւորեան էին, մինչև ընտլ զհրապարակն և զփողոցսն և զտանիսն բազմութեամբն: Ասէ բդեաշխն բարկացեալ ընդ այն, հրամայեաց կախել զերանելին Կոդրատոս և քերել, և ջահս մատուցանել ՚ի կողս նորա: Ասէ քաջն Կոդրատոս անփոյթ արարեալ զտանջանսն՝ մեծաւ համարձակութեամբ քաջալերէր զինոսա և ասէր. Ա՛յդպէս բարիք է, եղբարք, աղօթեցէք յերկար առ Տէր, քանզի ողորմած է՝ լսէ ձեզ: Եւ նոցա առացեալ, Թէ՝ Ձեմք արժանի աստուանել

1. Մեռա օր. էէր՝ զնաք ՚ի գայլոց ծփեցաք:

2. Մեռա օր. ոչ էր ինոպոնէայն ոչինչ:

զսուրբ անուն Քրիստոսի, վասն զի ի հնամանեցեալք գնա։ Ա.յլ զօրացուցանէր գնոսա սուրբ վիպոյն և ասէր. Կարդացէք, եղբարք, կարդացէք, բարեբար է Տէրն մեր և Աստուածն. մերձենայ առ այնոսիկ որ կարդան առ նա ի յօդնականութիւն. մի յուսահատիք, եղբարք, մատ առ խս եկայք, և քաջալերեցարուք և յուսացարուք ի Տէր։ Եւ նոցա ընթացեալք անկան առաջ ի նորա ուժգին հառաչանօք. լայնն և ամենայն բազմութիւնն որ ի տեսարանն էին[1]։

Իակ սուրբն Կոդրատիոս զաչս ի յերկինս համբարձեալ պոչէր հանդերձ արտասուօք և ասէր. Տէր Աստուած մեծ և ահաւոր, բարեբար և ամենագութ, որ զԱհածին ոդիսդ քո զՏէր մեր Յիսուս Քրիստոս ճապեցեր մեզ արեգակն արդարութեան, և լուսաւորեցեր զմեզ յառաջագոյն գխաւարեալքս, և նովաւ գքեզ հաշտեցուցեր ընդ մեզ, և նովաւ կոչեցեր զմեզ յառաջագոյն գխաւարեալքս ի կոչումն սուրբ, ոդորմած, գթած, երկայնամիտ և բազմոդորմ և ճշմարիտ, որ զանց առնես զմեղսք, և ջնջես զամբարտաւանութիւնս մեր. վասն առաւել մարդասիրութեան քո, Տէր, արտասանմն արա գնախաչարն և զմարգապետն, զբարեխաւեացն և գնախանձոտն սատանայ, գնայրն կռոց և զառաջնորդն խաւարի. և ընկալ զոդորակաւանքս քո՝ որ առ սակաւս ի գթեցին որոգայթիւքն սատանայի, և այժմ ապաւինեցան ի քո ամենազօր բարերարութիւնդ. մի բարկանար նոցա որպէս ապստամբաց. այլ գնոսա գթպէտ և յամառեալ՝ կայծին անփոխ[2]. և եթէ հաշտութեամբ ընդունիս գնոսա՝ ընկալ և գնոսա մեղաւորիս պատարագս, և արժանի արա գնոսա խառնիլ յերկնաւոր և ճշմարիտ գունդն քո, և ցոյց նոցա նշան ի բարութեան, գի ոչ գարշեցար այլ ողորմեցար և ընկալար զապաշխարողան։ Տէր Յիսուս Քրիստոս, լուր ինձ ծառայի քում և փոխանակ ընդ նոցա առ գնոսա, գի փառաւորեսցի սուրբ անունն քո յաւիտեան։ Եւ ամենայն եղբարքն միանգամայն ձայնիւ մեծաւ առաքեալ զամէնն, յանկարծակի

1. Միւս օր. ոչ ի պեան էին։

2. Միւս օր. ընդդէմ և յամբ, առանց նոցին անփոփոխ։

պատմեալքն չինչան, և ձեռք դահճացն լուծան և ամպ լուսոյ ի վերայ սրբոցն երևեալ և խաւար առաւիկ, և ծուխ դժնեայ ի վերայ բազեչխին և հեթանոսացն տարածեցաւ. մինչև յահէ անտի հիանալքն դեշխին յատենի անդ և ամենեցունն որ ընդ նոսա. քանզի կարծեցին թէ քաղաքն կործանեալց է։ Եւ յետ բազում լուալեան եղելոյ՝ հրեշտակաց ձայն լսելի եղև, որք օրհնէին և փառաւորէին զԱստուած, մինչև ամենայն քրիստոնէիցն հաւատալ՝ եթէ մեծ ուրախութիւն եղև յերկինս ի վերայ դարձելոցն յապաշխարութիւն։ Եւ յետ երկուց ժամուց անցանելոյ, առ սակաւ սակաւ խաւարն լուծանէր, և տեսանէին հեթանոսքն զլոյսն որ զսրբովքն. իսկ որք յամպարշտութիւնն էին, սկսան մեծաւ ձայնիւ և լալով պոչել առ Սբսաւած և ասել. Մեղաք, Տէր, քահեա զմեզս մեր. անօրինեցաք հաշտեա ընդ մեզ։ Եւ ի միոս իւր եղեալ բազեաչին՝ հրամայեաց զամենեսեան զնոսա արկանել ի բանտ, և պահել զգուշութեամբ։ Եւ հրամայեաց զերանելին Կոդրատոս իջուցանել ի փայտէն և պահել ընդ նոսա, քանզի զայնչափ ժամանակս կախեալ կայր առաքինի նահատակն. և ըզգուշանալ հրամայեաց նմա առաջին օրինակաւն. իսկ բազմութիւն քաղաքին երթայր զկնի սրբոցն։

Եւ ի միւսում աւուրն նստեալ յատենի բազեաչին՝ հրամայեաց ածել զնոսա զառաջեաւ, և հարցեալ և քննեալ Հնմարտութեամբ, և գիտացեալ զընդդիմանալն նոցա և զանխոնարհ յօժարութիւնն, հրամայեաց կապել զամենեսեան և յիւրաքանչիւր գաւառ տանել, և կենդանւոյն այրել։ Եւ սուրբքն երթային մեծաւ ուրախութեամբ փառաւորելով զԱստուած և գոհանալով ի վերայ անակնկալ վրկութեանն։ Իսկ զերանելին Կոդրատոս հանդերձ ընկերօք ոմանօք հրամայեաց յառաջագոյն տանել Աթենս պոնտոն. և բազմութեան սրբոցն ըստ հրամանին իշխանին երթեալ յիւրաքանչիւր գաւառ՝ կատարեցան ի Քրիստոս։

Եւ բազեչխին եկեալ ի քաղաքն Նպատացւոց և գտեալ գարշելի կուռն, հրամայեաց զառաջեաւ ածել զսուրբ վկայն. և նորա յառաջ քան զամենեսեան ա-

ծ[ին զերանելին Կոդրատոս։ Ասէ ցնա բզեաշխին. Ջո-
հեա այսուհետև աստուածոյն և քուժի՛ն հանդերձէ-
լոյ քեզ տանջանացդ՝ եթէ տակաւին յամառիս։ Կոդ-
րատոս ասաց. Պրիտոնեայ եմ և ոչ զոհեմ դիւաց։
Եւ առեալ բզեշխին զամենայն մարմինս նորա քան-
ցեալ՝ զարմանային և ասէր. Ա՛յլ զինչ ևս մատուցից
բռնամահիս այսորիկ։ Իսկ զօրականացն տարակու-
սեալ՛ի պատասխանւոյ, քանզի տեսանէին եթէ ոչ ևս
կարէր զօրել մարմին նորա տանջանացդ, նա հրամա-
յեաց բերել քուրձ և արկանել զնա՛ի ներքս, և լի-
նել խորափիտ մի և անդ ընկենուլ, և անտի տուամբք
ծեծել զնա. և յետ ժամու մոյ հրամայեաց հանել
զնա՛ի քրձէն, քանզի համարէր թէ մեռաւ։ Իսկ նո-
րա յարուցեալ եկաց առաջի նորա. ասէ ցնա բզեաշխին.
Ջի՞ ևս զգացեր տանջանացդ։ Իսկ սուրբ նահատակն
զոհանայր զԱստուծոյ և ասէր. Փառք քեզ, Տէր Յի-
սուս Քրիստոս. քանզի նեռք տղայոյ եղէն վէրք նո-
ցա, և տկարացաւ՛ի նոսա զօրութիւն նոցա. զու ես
որ զօրացուցեր զին, Աստուած իմ, ՛ի փառս քոյոյ զօ-
րութեանդ։ Եւ բարկացեալ բզեաշխին ասէ ցնա. Ջա-
մենայն անդաման քո յօշոյշ արարից, թշուառական,
թէ և՛ի կախարդութիւն քո վստահես։ Կոդրատոս
ասաց. Օրհնեալ է Տէր Աստուած իմ։ Հրամայեաց
բզեաշխին դարձեալ տանել յատաջագոյն՛ի կեսարիա
Պաղեստինացւոց. և իբր անդր երթեալ՝ զԱստուած
օրինաւին և անդր դոյծեաց առ դարշելի դևան։ Հրա-
մայեաց և զերանելին Կոդրատոս զառաջեաւ ածել,
և հարցանէր զնա եթէ զինչ կամիցի. և գիտացեալ
զհաստատութիւն սրբոյ վկային՝ ասաց. Եատացիր այ-
սուհետև տանջանաւքդ զոր կրեցեր, և մատուցեալ զո-
հեա աստուածոյն։ Իսկ երանելին Կոդրատոս ասաց.
Վասն զի խաղացեր ընդ իս տանջանաւքս այսորիւք, կարճ
ծեսցէս արդեաւք եթէ հաւանիցիմ քեզ։ Յայնժամ
հրամայեաց բզեաշխն պրկել զնա՛ի վերոյ քարանցին,
և դնել՛ի վերայ ձեռաց և ոտից նորա վէմս մեծա-
մեծս և հարկանել զնա քրքռիլք յերկաթս։ Իսկ երա-
նելին՛ի տանջանացն սաղմոսէր և ասէր. Բազում ան-
գամ մարտեան ընդ իս՛ի մանկութենէ իմմէ, և ինձ
ոչ զօրեցին.՛ի վերայ ոլին իմոյ հարկանէին մեզա-

ւորք։ Եւ իբրև կատարեաց զսաղմոսն, բդեաշխեն ասաց. Ծեծեսցի յերկար՝ վասն զի ոչ զգաց։ Կոդրատիոս ասաց. Հայր, հայր զմարմինս, զոր հանգուցիս տանջել. քանզի զոգիս՝ որպէս ոչ գիտես՝ ուրախ առնես։ Բդեաշխեն ասաց. Զարի գևի տիրեցեր, ոլոթշուառական։ Կոդրատիոս ասաց. Ի փրկչէն իմ Քրիստոս երդուեալ, և առաւել չարչի, և ոչ միոյ միայն և այլ ամենայն զօրութեան նորա տիրեալ է Ցիսուսիս Քրիստոսիս Տերամբ իմով. նմա փառք յաւիտեանս։ Եւ բազմութեան եղբարցն առաքեալ զամէնեան։

Բարկացեալ յոյժ բդեաշխեն և ծողեալ զերանելին Կոդրատիոս, հրամայեաց զերկուս ոմանս ի նոցանէ առնել և կախել և քերել, զՍատոռնինոս և զՈւսփինոս, և կախել վնասա զմիօջէ փայտէ։ Յայնժամ քերեցին եղնգամբք՝ մինչև ակօսն նեղբին ամդամբ նոցա վայրկեան. իսկ նոքա ի տանջանն այլ ինչ ոչ բարբառէին, բայց միայն աղաչէին զտուրբն Կոդրատիոս և զամենայն մօտակաց եղբարսն՝ աղօթս առնել վասն նոցա։ Ցմէնէ և ինքեանք իսկ երանելին Կոդրատիոս կային և ասէին. Տէր Ցիսուս Քրիստոս, որդի Աստուծոյ բարձրելոյ, առաքեա և մեզ զառ ի քէն օգնականութիւնդ և պաշտպան լեր խոնարհ ծառայից քոց, Աստուած մեր, և տուր մեզ համբերութիւն և յաղթութիւն մինչև ի նպատ։ Եւ յետ բազում ժամուց երբև ոչինչ եւս ումն պատասխանի, զանգն ի սաստիկ տանջանացն խոսել իսկ ոչ կարէին, յայնժամ բդեաշխեն հրամայեաց առնուլ և տանել ի պոզոտայն որ հանէ Յելեսպոնտոն, և անդ սրով սպանանել. և այսպէս երանելեացն վախճանեալ։ Այլ աստուածասէրն ի մի վայր ժողովեալք եւս ումն ոսկի գահճայն և առին զնշխարս նոցա և բերեալ յիւրաքանչիւր քաղաք, հանդերձ մեծաւ պատուով եդին ի պահարանի։

Իսկ զերանելին Կոդրատիոս հրամայեաց զՀետ երթալ նորա, հանդերձ այլովք և՝ յԱթոդոմինիդա. և մտեալ ի մեհեանն Ապողոնի բռնադատէր զտուրբն զոհել զարշելի կռոցն. ասաց և յերանելին Կոդրատիոս. Հաւանեա այսուհետև, այր դու, և ի մոլորութենէդ յայդմանէ ի քաց լեր. ընդէր ծանրանաս զպատիս քո և զապիլ. ծանիր զաստուածն և կեաց,

և հրամայեցից բժշկաց դարմանել զքեզ. մատիր առ Աթկղեպիոս, և նա բժշկէ զքեզ, երկիր՝ի մեծէն Աստղոմէն և՝ի դևից հեռակէ և՝ի թագաւորէն առեղնեցուն Աբրամազդայ, և յանձառուոյն Աբեայ[1], և՝ի ծովապետէն Պիսիդոմէն. ոչ արդեօք նաւեցեր ուրեք և ծանեար զնորա ահն. երկիր պապ արեգական. միթէ և նա մեռաւ որպէս և դու հայհոյես, կամ թէ ջուկ յերկինս։ Երանելին Կոդրատիոս ասաց. Ես երկիր պատանեմ Աչմարտին և աներևութին Աստուծոյ, և Միածնի որդւոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ փրկչի. և երկնչիմ՝ի սպառնալեաց նորա, և սարսեմ յամենազօր աստուածութենէ նորա, և ոչ ուրանամ զանուն անձառ զօրութեան նորա. մեռելոտի կուռց ոչ հաւանիմ, և՝ի դիւաց ոչ երկնչիմ. զպատճս ձեռաց մարդկան արհամարհեմ, այլ զքեզ իսկ՝ որ զժամանակէս իշխանութիւնդ ունիս։ Քանզի ես յետ աւուրց տասանց երթամ առ Տէրն իմ, և դու չարաչար պատնութեամբ վախճանեսցիս. քանզի ոչ պիտացեր զՀնչմարտին Աստուած, որպէս սահման և եղբայր Քեզ լիարայ, հաղորդ պարշելի դիւաց, անմտապոյն քան զխոզ, մոլեկան շուն, արիւնարբու վիշապ, վայրենապոյն քան զպատանս մարդակերս[2]. ոչ ամաչես առաջի այդչափ բազմութեանդ՝ որք ոչ ինչ Քաշակեն. խոհակերք պարկեշտապոյնք են քան զքեզ, որք յանուանի ծառայք են մարդկան, զի նոքա առանին զենուն պարկեշտութեամբ՝ի վայելս մարդկան՝ և ոչ դիւաց. դուք քարանց զոհէք, և դուք ձեզէն երդիծանիք։ Աստ եկեսցէ՝ի մէջ ընդունիչ զոհին ձերոյ, և երեսեսցի և խնդրեսցէ ինքնին, և ընկալցի և կերիցէ. ասացեն քարեղէն աստուածքն ձեր, զինչ կամի եթէ զոհեսցէ ոք նմա. այծ եթէ արջառ, եթէ հաւ[3]. ամաչեցէք, որդիք ամօթոյ, զի դուք մոլեկանք էք, և կարծէք զինեզ լինել մոլեկանաց։

Եւ զայս ասացեալ նորա, հրամայեաց բզեաշխին զահ Քայն քայեալ և աղաչուր ցանել՝ի վերայ վիրաց նորա, և մազեղէն խորպով շփել և շողացուցանել երե-

1. Միւս օր. յանձառոյ նորա։
2. Միւս օր. մարդաւէբս։
3. Միւս օր. այծ էին հաւ էին ուխտ... աղ ցանել։

կաճ և մատուցանել՝ ի կողս նորա։ Իսկ երանելին Կոդրատիոս քաջութեամբ հաճելեկը ցաւոցն և յաղթութ կայր հեզիկ և ընթացուն միայն շարժէին. և ձայն ոչ ոք լսէր առնելին՝ ի նմանէ։ Եւ իբրև վաստակեցան դահիճքն՝ հրամայեաց իջուցանել զնա։ Ի վաղիւ անդր յաւաջապոյն հրամայեաց տանել յԵլեսոնաման՝ անօթի։ և զկնի այնր չորս արարեալ քոռեշխին և հասեալ՝ ի Ոլինդակս գետ, պատահեաց անդ նմա իշխանն հանդերձ ամբոխիւ և առակաւ՝ ի պատճառս գուշութեան, այլ ձշմարտութեամբ վասն ծառային Աստուծոյ. զի ցանկայր տեսանել զերանելին նահատակն, քանզի հաճեաւ նահատակութեան նորա եհաս յԱթիա և յամենայն երկիրն. և հրամայեաց քզեաշխն յաւաջնիկայ գեօղն տանել զնա, որ կոչէր Տաձարագիւղ. և անդ ապուցեալ, և ընդ առաւօտն յաւետն նստեալ՝ հրամայեաց զաւաջեաւ ածել ըզսուրբն Կոդրատիոս. և ամբոխն ամենայն շուրջ պատեալ՝ հայէր ընդ նահատակութիւն սրբոյ վկային։ Իսկ երանելին յարեան թաթաւեալ՝ զուարթ երեսս ցուցանէր քաջութեանն, ըստ գրեցելումն թէ՝ Սրտի բերկրեցեալ երեսք զուարթ են։ Դարձեալ բերեալ լինէր՝ ի դահճացն, քանզի յաւաւելութենէ տանջանացն ոչ ևս զօրէր գնալ. այլ և՝ ի ձանապարհին այլև բերէին։ Եւ իբրև եկաց առաջի քզեշխին, ասէ ցսուրբն. Խնայեայր, ով Կոդրատիէ, և եթէ չէ՞ ևս ցաւէիր և՝ ի փոխելութենէդ։ Եւ երանելին ձայնիւ մեծաւ ասէ ցնա. Ի մանկութենէ իմմէ զքաւտաւնամ[2], և յորովայնէ մօր իմոյ՝ Քրիստոսի ծառայ եմ։

Ցայնժամ քզեաշխն ետ բերել երկաթի կրակարան և դնել՝ ի վերայ հրատի մինչև եղև հանգոյն հրոյ, և հրամայեաց զսուրբն՝ ի վերայ դնել։ Իսկ երանելին Կոդրատիոս ասաց. Ի քաց կացէք յինէն, արբանեակք սատանայի, ես ինձէն իսկ ելանեմ։ Եւ արարեալ յինքեան զՔրիստոսի կնիքն՝ ել՝ ի վեր. և նոքա սկսին՝ ի վերայ կրակարանին ձիւթ և ձէթ։ Իսկ սուրբն Կոդրատիոս սաղմոսէր և ասէր. Աստուած, յօգնել ինձ նայեա, և, Տէր, յընկերել ինձ փութա.

1. Մխա օր. յապէտ ընթաքէալ։ 2. Մխա օր. ՚ՂԳասպ էմ։

ամաչէացեն և պատկառեացեն որք խնդրէին զոչխ իմ, դարձցին յետս և ամաչեացեն՝ որք կամին ինձ չար։ Եւ կատարեալ զաղէման ասէ ցբդեաշխան. Հուրս քո այս լոյծ է, և երկաթ կրակարանիս կակղապոյն է քան զխիրտ քո։ Եւ իբրև բազում ժամք անցին՝ ի վերայ, և հուրն ամենևին ոչ մերձենայր՝ ի տուրքն Աստուծոյ, հրամայեաց բդեաշխն բառնալ զնա՝ ի կրակարանէն, և տակաւ ի տրտաքս քան զգեօղն տանել՝ ի բարձրա- բանդակ տեղի մի ինչ և անդ գլխատել։ Եւ մինչ տա- նէին զերանելին Կոդրատիոս, սաղմոսէր և ասէր. Օրհնեալ է Տէր, որ ոչ ետ զմեզ յորս առաքանց նո- ցա։ Եւ մօտակայ եղբարքն սաղմոսէին և երթային ընդ նմա մինչև՝ ի տեղին՝ ուր հանդերձեալ էր կատա- րել։ Եւ հասեալ՝ ի վայր անդր և գոհացեալ զԱստու- ծոյ, և կացեալ յաղօթս՝ ի բազում ժամս՝ այնպէս երանութեամբ կատարեալ զընթացս իւր՝ ի Քրիստոս։ Եւ եղբարցն առեալ զտուրբ մարմին նորա եդին զգե- ղեցկութեամբ՝ ի տեղւոջ պատշաճի։ Հանապազ փառա- ւորեացուք զՀայր և զՈրդի և զտուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վկայաբանութիւն Սրբոյն Վիճիկիանոսի հայրիշրաւորեան։

Եւ ասեն այլք այս Վիճիկիանոս էր յաւուրս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զինուորեալ հարկաբաւական. որ և մերձ էր՛ի ժամանակի խաչելութեանն, որ և հրամանաւ խոցեաց զկողն Յիսուսի, և տեսեալ զինչ ինչ եղեալ՝ զարեգակն խաւարեալ և զկնի սակաւ ետուն և զկարապետն հերձեալ, հաւատաց՛ի Տէր, որ բանիւք զկուրծս իւր և ասէր մեծաձայն. Արդարև որդի Աստուծոյ է սա։ Եւ յետ ժամանակի թողեալ զկենդանութիւն՝ խոտամբելութեան զինքն տալ[1], խոկալ՛ի յիշատակարանս Տեառն. և լսէր՛ի տուրբ առաքելոյն զբարեբար հրամանս Տեառն։ Ամենևին զինքն նուիրեր Աստուծոյ, առնէր ողորմութիւնս, ՛ի բարեպաշտութիւն անձին իւրոյ առաջնորդէր, և ՛ի բարեպաշտութիւն կրթէր զինքն. տուրբ պահէր զհետս երկնականն վարուք. և ամենայն քրիստոսական առաքինութեամբ զարդարեալ և հանգերութեամբ զուարթացեալ պարկեշտ ձևով և մեղմ հայեցուածովք. հանդարտ իմանալեօք և խոնարհ մտօք, անցեալ մարմնով և անխռով անձամբ։ Երթեալ՛ի գամիրս՝ պատերազմականքն զինքն՛ի խոնարհ և՛ի միանձնական վարս ամն քսանևութ. և զբազումս դարձուցանէր յաստուածպաշտութիւնն և յարդարութիւնն, խոտո-

1. Մի օր. համբերութեամբ պայր զինք խոյս պիտպոխարան։։

նէր զկոն կուռոյն, սերմանելով զաստուածպաշտու-
Թիւն Տեառն։

Ա.յս ամենայն եկեալ հասեալ՝ի լսելիս դատաւո-
րին, հրամայեաց ածել զնա դատաւորն. և իբրև ա-
ծին՝ ասէ դատաւորն Ոկտաւիոս. Ձինչ անուն է քո։
Եւ նա կատարեալ մտօք և բարեխոհմ առ Աստուած
ասէ. Քրիստոնեայ եմ. քանզի, ասէր, պարտ է զբար-
ւոք ընտրհացն Քրիստոսի խոստովանել զանուն։ Ոկ-
տաւիոս դատաւորն ասէ. Եւ ոչ որ յառաջ քան զքեզ
օգտեցաւ յանուանէդ յայդմանէ. արդ աստ զինչ ա-
նուն է քո։ Եւ սրբոյն պատասխանի տուեալ ասէ.
Վինկիանոս [1] անուն է իմ։ Դատաւորն ասէ. Յորմէ՞
գաւառէ ես։ Վինկիանոս ասէ. Ի Սիւրացւոց եմ։
Ոկտաւիոս ասէ. Ծառայ ես թէ ազատ։ Վինկիա-
նոս ասաց. Ծառայ էի յառաջ մեղաց, և մարդասէրն
Քրիստոս մատակարարութեամբն իւրով և
երկրպագելի խաչին և կողոյն կրկին շնորհօք՝ զիս ա-
զատեաց, ոի անգամ ջրով, և այժմ արեամբ՝ եթէ
կատարեցայց՝ի յաստղարխի մարտիրոսութեան։ Դա-
տաւորն ասէ. Վասն որոյ հրաց եկեալ ես այսր։ Վին-
կիանոս ասաց. Քաղաքացի էի և զինուորեցայ ընդ
աշխարհիս այսորիկ [2], և այժմ զինուորեցայ՝ի Քրիս-
տոս։ Դատաւորն ասէ. Ո՞ արժանի արար զքեզ թո-
ղութեան՝ի հարկաց քաղաքի, և՝ի զինուորութենէն
ո՛ ազատեաց զքեզ։ Վինկիանոս ասաց. Վասն հարկաց
քաղաքին՝ ազատէցի յոյժ զեղջատս իմ, և առեալ զըս-
տացուածն իմ՝ թողութիւն արարին, և տային ինձ
յաման դահեկանս հարիւր. զոր առեալ իմ ծախէի՝ի
պէտս աղքատաց և յօգնականութիւն կարօտելոց։ Եւ
այժմ ազատեցի զձեր իմ Յիսուս Քրիստոս, զՀշմարիտ
և զերկնաւոր թագաւորն, և լուծեալ զիս՝ի կապա-
նաց աշխարհիս այսորիկ, և զերծուցեալ՝ի մարմնա-
կան զինուորութենէս շնորհեաց ինձ կրօնաւորական
կեանս [3], զի խաղաղութեամբ վարեցայց աստ և փա-
ռաւորեցի անուն նորա յիս՝ի մեղաւորս։

Դատաւորն ասէ. Ազատ և մեծ և փառաւոր ոմն էս

1. Մի օր. միշա՝ Վինկինոս։ հին այսորէ։
2. Մի օր. զինուորեցայ աշխար- 3. Մի օր. հոգեւոր կեանս։

դու. Հնազանդ լեր այսուհետև Թագաւորացն և զո-
հեա աստուածոցն և ձաշակեա՝ ի զոհից. և վարկ[1]
պարձեալ զնոյն խաղաղական կեանս քո, զի մի՛ մա-
շեսցիս առ սակաւ սակաւ տանջանօք։ Ղևնկիանոս
ասաց. Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել՝ որք ընդ-
դէմ միմեանց խորհիցին. քանզի իմ Աստուածն լու-
սաւորութեան և հանդարտութեան և ժուժկալու-
թեան և անընդունելութեան և արդարութեան և խոնար-
հութեան, և ամենայն առաքինութեան աստուածա-
կան վարուց առաջնորդ և տուիչ է. իսկ քո աստուած-
քըն զհակառակն խորհին, ցանկացող են ամենայն
պոռնկութեան և խառնութեան, շիտակութեան, ար-
ծաթսիրութեան, և ամենայն առաքինութեան ընդ-
դէմ են կռոցն հնարք. արդ զինչդ կարեմ զկռոցն
գործ կատարել, և խոկալ յԱստուծոյ իմոյ պատու-
իրանաց։ Պատասխան ասէ. Արդէս գուդ ասես, այ ան-
սուրբ, եթէ ընդդէմ խորհին աստուածքն մեր և աս-
տուածն քո՝ զինչդ հեթանոսութիւն օգնէ Թագա-
ւորաց և պատուոյ, և հեթանոսութիւն բարձրա-
նայ և փառաք բազմացեալ[2], իսկ քրիստոնէութիւնն
խոնարհեալ պակասեալ անպատուութեամբք։ Ղևն-
կիանոս ասէ. Ցեսանե՞ս, զի հեթանոսութիւն ընդ-
դէմ է քրիստոնէութեան. համբերութեան արդե-
լիչ, զգաստութեան վնասիչ, աստուածպաշտութեան
խափանիչ, հաւատոյ օտարացուցիչ, առաքինութեան
լուծիչ, մտաց խաւարիչ, աչաց կուրացուցիչ, ամենայն
բարեգործութեան և խրատուց քանդիչ, շատերու-
թեան գործակից, անընդունելութեան խափանիչ, արծաթ-
սիրութեան ցանկացուցիչ, խոնարհութեան հեռա-
ցուցիչ, ամբարտաւանութեան առաջնորդ, արդու-
թեան անձին աղտեղացուցիչ, զեղս խորհրդոց քնա-
նել, և փառաք բազմացեալ[2], իսկ քրիստոնէութիւնն
խոնարհեալ պակասեալ անպատուութեամբք։ Ղևն-
կիանոս ասէ. Ցեսանե՞ս, զի հեթանոսութիւն ընդ-
դէմ է քրիստոնէութեան. համբերութեան արդե-
լիչ, զգաստութեան վնասիչ, աստուածպաշտութեան
խափանիչ, հաւատոյ օտարացուցիչ, առաքինութեան
լուծիչ, մտաց խաւարիչ, աչաց կուրացուցիչ, ամենայն
բարեգործութեան և խրատուց քանդիչ, շատերու-
թեան գործակից, անընդունելութեան խափանիչ, արծաթ-
սիրութեան ցանկացուցիչ, խոնարհութեան հեռա-
ցուցիչ, ամբարտաւանութեան առաջնորդ, արդու-
թեան անձին աղտեղացուցիչ, զեղս խորհրդոց քնա-
նել, պատերազմաց գործակից. ոչ քանիւք և ոչ
գործօք կրօնիւք և ոչ խորհրդով ամիտիկ զմարդ,
այլ ամենևին՝ ի մոլորութիւն և ի մեռ կացուցանէ[3]։
Արդ եթէ հրամայես՝ ասեմ և քրիստոնէութիւնս և։

1. Մի օր. վարեա։
2. Մի օր. և հեթանոսութիւնն բարձրանայ և փառաք բազմանայ։
3. Մի օր. այլ ամենևին մոլեան և այլմոլոր կացուցանէ։

Ոկոտաւխոս գաւառացին ասէ. Բազում խնդութեամբ ոչինչ բարձրագոյն բարբառեցար. այլ մատուցեալ զոհեա աստուածոյն և Ձաշակեա՛ի մսոյն, և Թողութիւն առնէ քեզ աստուածն քո. քանզի տեսանեմ զքեզ ամենևին նուազ և գունատ և անզօր, և տանջանաց ոչ կարողանաս համբերել, գուցէ եթէ սկսեալ՛ի քեզ գան տանջանօք ոչ կարասցես ժուժել, այլ ամօթով՛ի հարկէ զայդ առնես։ Ոչինչ կիանաս ասաց. Թէ արդարև զայդ ասիցես գու, մանաւանդ լեր քրիստոնեայ և յանձն առնու Թագաւորն քո. վասն զի մեծ աստուած արդարութեամբ ծանեաւր, ապա եթէ հարկանել կամիցի զքեզ Թագաւորն քո՝ ոչ մերձենայն՛ի քեզ տանջանք. զի եթէ կարի տկար իցես՝ միայն լեր հաւատացեալ, քանզի ոչ զօրանայ ամպարշտութեան տանջանացն՛ի վերայ բարեպաշտութեանն Քրիստոսի։

Ոկոտաւխոս գաւառացին ասէ. Սէրք ուռն և գաւառացիս գոլա փշրեցէք, և սրով զլեզու գոլա հատէք. վասն զի հայհոյէ գաստուածն և արհամարհէ զինքս նախալ զԹագաւորէն։ Եւ գահձայն արարեալ զհրաման տուաւ գաւառացին ասէ. Տուեալ եմ քեզ իշխանութիւն՛ի վերայ աստուածոյն։ Եւ առեալ սուրբն Աստուծոյ փայտատ և մանրեաց զաստուածն նոցա, և զսեղանս նոցա և զպատկերս նոցա քարեղէնս և զբրնկարանս

1. Մի օր. Ե գէթ յոյժ ի այդպիսի փանջանս ընկալեալ։

նոցա ելհել. և վաղվաղակի դևքն որ մեռեալ էին՝ ի կուռս՝ վազեցին, և ոմն՝ ի նոցանէ հարաւ՝ ի վերայ իշխանին[1], և մին՝ ի բանդապետն, այլ դևք յայլ զօրականան. և էին ամենեքեան՝ ի մեծ նեղութեան և՝ ի մելսուեթեան[2]՝ ի միասին, հաջէին յանդիմանեալք և ասէին. Չի ածէք այսր զսուրբդ Աստուծոյ Ղևոնկիանոս, զի վաղ յառաջ քան զժամանակն հալածեացէ՝ ի բնակութենէս: Եւ անկեալք առ ոտս սրբոյն Ղևոնկիանոսի և ասեն. Գիտեմք զքեզ, ով ես սուրբդ Ղևոնկիանէ, ծառայ Աստուծոյ բարձրելոյ: Եւ սկսաւ երանելին սաստել նոցա և ասել. Որպէս պատճառանօք բնակեալ էիք՝ ի զոհարանս յայսոսիկ: Նոքա ասեն. Գոտաք զարդարեալ պատկերս քարեղէն՝ յորս ոչ էր անուանն Քրիստոսի և ոչ նշան խաչին՝ ի վերայ՝ որում նոքա երկիր պագանեն. և գոտաք զզոհարանն և զիստակն նարան յանուն մեր, բնակեցաք աստ. քանզի ուր Աստուած ոչ անուանի և նշան խաչին ոչ կայ՝ ի վերայ՝ այն մեր բնակարանն է. վասն այսորիկ աղաչեմք զքեզ, սուրբդ Աստուծոյ, մի հալածեր զմեզ յանդունդս:

Ղևոնկիանոս ասաց ցբազմութիւնն որ մերձ կային. Ձինչ կամիք. կամիք ունել զնոսա Աստուածս և պաշտել զնոսա. տեսանէք զդատաւորն ձեր փրկեալ զօրութեամբն Քրիստոսի և անկեալ յոտս իմ: Եւ բազմութիւնն աղաղակէր և ասէր. Մեծ է աստուածն քրիստոնէից, աղաչեմք զքեզ սուրբդ Աստուծոյ Ղևոնկիանէ, մի Թողուր զդևսդ բնակել՝ ի քաղաքիս մերում, ՝ի կուռսս և յապականութիւն մարդկան: Եւ զայս լուեալ երանելոյն Ղևոնկիանոսի, ամբարձեալ զաչս իւր յերկինս և սկսաւ ասել այսպէս. Տէր իմ Յիսուս Քրիստոս ըստ բազում ողորմութեանդ քում և մարդասիրութեանդ՝ արա յիս զգթութիւն մարդասիրութեան քո. գիտեմ զի յամենայն ժամ լսես ինձ, և հաւատամ զի յառաջ քան զինդրելն իմ առաջ՝ մանաւանդ զփրկութեան ինդիրն. և այժմ վասն բազմութեան մերձաւորացս և անարժան ծառայի քո և փառաց քոյոյ աստուածութեանդ՝ հրամայեա սիրգ

1. Մի օր. հարաւ յիշխանն: ջնին, հասաւ էին, և գնաց յանդիման
2. Մի օր. մելքիսուէթեան... հա- եղեալ ասէին:

Հոգւոյս ելանել՝ի մարմնոց յայսցանէ, քանզի գոր ձեռաց քո եմ։ Եւ զայս առաքեալ սրբոյն գոչեցին զևքն մինչև ելանել մարդկան՝ի քաղաքէն՝ որ զսիրտ Հոգիան ունէին. և աղաղակեալ Տարեալ զնոսա յերկրէ և գոչէին մեծաձայն և ելին այսքն, և սրբեցան մարդիկն՝ի ժամէն յայնմանէ, և եղև ուրախութիւն՝ի քաղաքին յայնմիկ. և քաղուէք Հաւատայինն՝ի Տէր[1]։

Եւ պարապեալ սրբոյն Վինկիանոսի առաւ ժամանակ մի. և գարձեալ անամօթն սատանայ Թիւրեաց զնոր գառաւոլին, և պատերազմէր ընդ ծառային Աստուծոյ Վինկիանոսի։ Եւ հրամայեաց ածել զնա. և՝ի մատնելն նորա առ գառաւոլն. Խնայսիր եթէ ամենայն քաղաքս հեռացաւ՝ի զոհիցն վասն քո կապարդութեանդ. և եթէ լսեր մի այդ Թագաւորին մահապարտ եմք ես և քաղաքս։ Եւ Ամփոդիոս բանտապետն առ գրառաւորն. Որ եւս մեզ զիրկութիւնս զայս և զերախտաւոր քաղաքիս՝ գարձեալ տանջել հրամայես։ Գառաւորն առ. Աւաչօք արար կախարդեալ զմեզ։ Ամփոդիոս առ. Մեծ է Աստուածն քրիստոնէից, և ոչ լինի նմա առաջօք ինչ և նենգութեամբ։ Մի Թերահաւատեր՝ի նմանէ, և խորհիր ընդ ծառայն նորա, զի մի և քեզ ինչ լինիցի քեզ։ Ակտաւիոս գառաւորն առ. Հրամայեմ հատանել զերդս քո՝ զի մի խօսեցի, այլ Թշուառական։ Վինկիանոս առ. Գոհանամք զքէն Քրիստոս, զի ցուցեր և այլ պատերազմող վասն բարեպաշտութեանդ։

Եւ մինչդեռ հատանէին զերդս բանտապանին, յոր գոց եհան երանելին Վինկիանոս առ Աստուած. և վաղվաղակի եղև ձայն Տեառն՝ի վերայ գառաւորին, և լուծեալ եղ՝ի յաչաց լուսոյն. և տեսանելով զնա բանտապետին տեսանելով զլոյս, աղաղակեաց բանտապետն և առ. Ողորմեա ես զու Քրիստոս, և ուղիղ գառաստանք քո։ Գառաւորն առ. Եղբայր Ամփոդիոս, հաւանեցո զսէր իմ Վինկիանոս՝ զի արագիկ ազօթս վասն իմ՝ զի շատ անիրաւեցայ՝ի ծառայէն Աստուծոյ։ Ամփոդիոս բանտապետն առ. Ա՛յ ամե-

1. Մի օր. յաւելու՝ի բազմու- հինգ հազար ընդ այր ընդ և կին։
ցինն հաւատացին՝ի Տէր ոգի։ էէ՝

նաեւ շուտաւ այր, ոչ ասէի քեզ եթէ մի խորհիր յար
՚ի վերայ ծառային Աստուծոյ, քանզի Աստուած մեր
անյապաղեթ է. որպէս տեսեր զիս զանարժան լեզու և
անհատ խօսեալ[1]: Դատաւորն ասէ. Եղբայր Աբրոդի-
ոէ, ոչ միայն զայս իմ կորուսի, այլ և սիրտ իմ յա-
րատար տանջի: Ղեւկիանոս ասէ. Եթէ կամեցիս զի
ողորմեսցի[2] արագ սպան զիս. զի յետ մահուան իմոյ
աղաչեցից զՏէր իմ Յիսուս Քրիստոս և բժշկեսցէ
զքեզ. քանզի այլապէս համարձակութիւն ունիմ առ
Տէր իմ:

Եւ վաղվաղակի վէիւ մահու եղ ՚ի վերայ նորա,
որով սպանանել զնա. և եկաց սուրբն յաղօթս իբրև
ժամ մի: Այսպէս կատարեցաւ սուրբն Աստուծոյ,
հառեալ սրով զգլուխն, և զհոգին յանձնեաւ Տեառն
խաղաղութեամբ: Եւ վաղվաղակի չոքաւ դատաւորն
՚ի մարմին երանելոյն, և անկեալ յերեսս՝ յոտուց հա-
նեալ ասէր. Աեղայ, Տէր, մեղայ, և զանօրէնութիւնս
իմ ես ինձէն դիտեմ: Եւ վաղվաղակի եռես և բժշկե-
ցաւ ՚ի ժամէն յայնմանէ: Եւ առ զնշխարս սուրբ
սրբոյն և պատեաց ՚ի կտաւս սուրբս և եդ ՚ի հանգըս-
տարանի, և հաւատաւ ՚ի Քրիստոս պարապեաց, քա-
հանայիցն բարեպաշտութեամբ օրհնել զԱստուած[3]:

Ա.յս եղև ՚ի գաւիթս, յառաջ քան զուրբ կաղան-
դայն օգոստոս ամսոյ, ՚ի դատաւորութեանն Ակտա-
ւեայ, և թագաւորութեան մերոյ Յիսուսի Քրիստո-
սի. ընդ որում փառք և պատիւ Հօր և Որդւոյ և
Հոգւոյն սրբոյ. այժմ միշտ և յաւիտեանս:

1. Մի օր. որպէս փեսայ ելիս ան-
արգիան ընդառաջ և անհամ խօսելով:

2. Մի օր. ել ողորմիցիմ, այլ
սպան:

3. Մի օր. հաւատացեալ Քրիստոս-
՚ի Քրիստոս, և պարապեր փառաւորելով-
զաստուած հինգ ամաւ:

Վ.ԽԶ ԱՌԱՋՆՈՑ ՀԱՏՈՐՈՑՆ

ՅԱՆԿ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԵԱՆՑ Ի ՀԱՏՈՐԻՍ

Վկայաբանութիւն Սրբոյն Աբդայի եպիսկոպոսի և Ոմմզդա-
նայ և Սաինի և Բենիամինի Սարկա-
ւագի 1
» Սրբոյն Աբդլմեհէի 6
» Սրբոյն Աբրհատոսի և կնոջ նորա Անի-
տուէայ 26
» Սրբոյն Ամաճագինեայ եպիսկոպոսի . . 46
» Սրբոյն Ակակիոսի վկայի 68
» Սրբոյն Ակեփսիմեայ և Աբիթալեայ և Յով-
սեփայ 89
» Անդրէի Չօրաւարի և զօրաց նորա . . 103
» Սրբոյն Անթիմոսի եպիսկոպոսի . . . 113
» Սրբոյն Անտիոքի՝ անարծաթ բժշկին . . 135
» Սրբոյն Ապոլոնի Հիներորի 138
» Սրբոյն Աքեպսիմայ և Փիլիմոնի 144
» Սրբոյն Ափրաատայ 146
» Սրբոյն Բաբելայ եպիսկոպոսի 149
» Սրբոյն Մեծին Բաբելայ 158
» Սրբոյն Բագարատայ Տուռնենայ եպիսկո-
պոսի 167
» Սրբոյն Բասայ և որդւոց իւրոց . . . 180
» Սրբոց Վկայիցն Բասասի, Եւաեբի, Եւ-
սեբի և Բասլի 188
» Երանելի եպիսկոպոսին Բարդիշոյ . . . 193
» Սրբոյ առաքելոյն Բարդողոմէոսի . . . 200
» Սրբոյն Բարղամոս 212
Պատմութիւն վարուց Հայրապետաին Բարսղի 220
Վկայաբանութիւն Սրբոյն Գենադիոսի Պենեվենտոյ եպիսկո-
պոսի 246
» Սրբոյն Գեորգեայ զօրավարին 252
» Սրբոյն Գաբրիաայ և Սամնայ . . . 273

Պատմութիւն վարուց Սրբոյն Գրիգորի առաուածաբանի . 278
Այլ պատմութիւն Սրբոյն Գրիգորի առաուածաբանի . . 283
» Սրբոյն Գրիգորի սքանչելագործի . . . 317
Վկայաբանութիւն Սրբոյն Դեմետրիոսի 332
» Սրբոյն Դիոմիդեայ բժշկապետի . . . 350
» Սրբոյն Երենիոսի եպիսկոպոսի . . . 357
» Սրբոյն Երմոնի Կուսի 360
» Սրբոյն Եւգինեայ Կուսի 371
» Սրբոց մարտիրոսացն Եւգինիոսի, Վաղինոսի, Կանտիտոսի, Ակիւզաոսի և Մակարիոսի 390
» Սրբոյն Եւդոքսեայ և Թոմիլի և Նունի և Մակարայ 414
» Սրբոյն Եւստաթէի 422
» Սրբոց Վկայիցն Եւստռատիոսի, Եւգինոսի, Աքսենտիոսի, Մարդարիոսի և Ովրեստի 435
» Սրբոյն Եփիմեայ կուսին 476
» Սրբոց Եօթն Մանկանց 491
» Սրբոյն Թարղեայ 503
Պատմութիւն վարուց Սրբոյն Թեկղեայ 513
Վկայաբանութիւն Սրբոյն Թէոդոսիաեայ քահանային . . 532
» Սրբոյն Թէոդոսի զինուորին Գրիսաոսի 545
» Սրբոյն Թէոդոսի Կեսարացւոյ . . . 550
» Սրբոյն Թէոդոսի Սատաոնեցւոյ . . 569
» Սրբոյն Թէոպոնդոսի եպիսկոպոսի և Թէոնէայ կախարդի 582
» Սրբոյն Թէոփիլոսի և Պատրոնիկէի կնոջ նորա 594
» Սրբոյն Ինդոսի և Գոմնայի 599
» Սրբոյն Լաւրենտիոսի և ընկերաց նորա . 634
» Սրբոյն Կալիոտրատոսի և քառասուն և ինն վկայիցն 656
» Սրբոյն Կալիոպէայ վկայի 687
» Սրբոյն Կիրակոսի և մօր նորին Յուղիտայ 691
» Սրբոյն Կոդրատոսի 698
Սրբոյն Վենիամոսի Տարեդարձք . 715

5826

2014